ՆԻԿՈԼԱՑ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱԲԱԲԿԱՆ
ԵՐԿԲՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ
**«ԱՐՄԵՆ ԵՎ ԲԵՐՍԱԲԵ ՋԵՐԵՋԵԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»**
(ԱՄՆ)

THIS PUBLICATION WAS MADE POSSIBLE BY
**«ARMEN AND BERSABE JEREJIAN
FOUNDATION»** Inc.
(USA)

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

NIKOLAY HOVHANNISYAN

HISTORY OF THE ARAB COUNTRIES

IV

THE EPOCH OF INDEPENDENCE AND SOVEREIGNTY 1918–2005

Jordan, Kuwait, Mauritania, Morocco, Oman, Palestine Autonomy, Saudi Arabia, Sudan, Syria

YEREVAN 2007

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

IV

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ
1918–2005 թթ.

Հորդանան, Մավրիտանիա, Մարոկկո. Պաղեստինի Ինքնավարություն, Սաուդյան Արաբիա, Սիրիա, Սուդան, Քուվեյթ, Օման

ԵՐԵՎԱՆ 2007

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 93/99
ԳՄԴ 63.3(5Արաբ)
Հ 854

Խմբագիր՝ **Վահան Բայբուրդյան**
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր


Հովհաննիսյան, Նիկոլայ
Հ 854 **ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ:** Հատոր IV. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան. 1918–2005 թթ./.– Եր.: Զանգակ–97, 2007 – 768 էջ + 36 կավճ.:

Սույն IV՝ վերջին հատորում ընդգրկված են Հորդանանը, Սավրիտանիան, Սարոկկոն, Պաղեստինյան Ինքնավարությունը, Սաուդյան Արաբիան, Սիրիան, Սուդանը, Քուվեյթը և Օմանը՝ ինը պետություններ:
Հիշեցման կարգով նշենք, որ III հատորում լուսաբանվել է արաբական տասը պետությունների՝ Ալժիրի, ԱՄԷ-ի, Բահրեյնի, Եգիպտոսի, Եմենի, Թունիսի, Իրաքի, Լիբանանի, Լիբիայի և Կատարի նորագույն պատմությունը՝ 1918–2005 թթ.. Ժամանակագրական առումով IV հատորում ներառնված արաբական երկրների պատմությունը նույնպես ընդգրկում է 1918–2005 թթ.: Նույնն են նաև քննարկվող հարցերի շրջանակները: Պահպանվել է նաև երկրների դասակարգման այբբենական սկզբունքը:

Հ $\frac{0503000000}{0003(01)–2007}$ 2007 թ. 203367 ԳՄԴ 63.3(5Արաբ)

ISBN 978–99941–1–342–2 SUC091-183

© Ն. Հ Հովհաննիսյան. 2007 թ.
© «Զանգակ–97». 2007 թ





Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան

Ա ծավավստակ և լայն ճանաչում ունեցող գիտնական է, արևելագետ, միջազգայնագետ, պատմաբան, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Հայաստանում առաջին ակադեմիական արևելագիտական կենտրոնի՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի հիմնադիր ու կազմակերպիչներից մեկը: Անգնահատելի է նրա ներդրումը հայ արևելագիտության ձևավորման և զարգացման բնագավառում: 1995–2006 թթ. գլխավորելով այդ ինստիտուտը՝ նա բացառիկ դեր է կատարել գիտական այդ կենտրոնի վերականգնման ու վերածննդի, նոր և գլխավոր ուղղությունների սահմանման, երիտասարդ արևելագետ կադրերի պատրաստման և հայ արևելագիտությանը նոր շունչ հաղորդելու գործում: Նա իրավամբ համարվում է հայ արաբագիտական դպրոցի հիմնադիրը, որով անցել են բազմաթիվ՝ այսօր արդեն ճանաչում ունեցող մասնագետներ, այդ թվում և արտասահմանյան տարբեր երկրներից:

Պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական հետաքրքրություններն ընդգրկում են հիմնականում չորս բնագավառ:

Առաջին՝ արաբական երկրների, Մերձավոր և Միջին Արևելքի պատմություն, քաղաքականություն, ազգային–ազատագրական շարժումներ, գաղափարախոսություն, իսլամ, հայ–արաբական պատմական և միջպետական հարաբերություններ:

Երկրորդ՝ Մերձավոր և Միջին Արևելքում միջազգային և տարածաշրջանային հարաբերություններ, միջարաբական հարաբերություններ և դիվանագիտություն:

Երրորդ՝ հայոց ցեղասպանության՝ արմենոցիդի հիմնախնդիրներ, ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգ:

Չորրորդ՝ Ղարաբաղյան հիմնախնդիր, էթնոքաղաքական հակամարտություններ:

Այդ հիմնախնդիրների ուսումնասիրությանն են նվիրված նրա 400–ից ավելի գիտական աշխատությունները, այդ թվում՝ մոտ 50 մենագրական ուսումնասիրություններ, որոնք հրատարակվել են աշխարհի տարբեր երկրներում և տարբեր լեզուներով: Նա Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի, «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի (Փարիզ), Ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտությունների միջազգային ակադեմիայի (Մոսկվա), Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի (Գերմանիա), Սիրիայի արաբական գիտության պատմության ընկերության (Հալեպ) Ցեղասպանության ուսումնասիրության միջազգային ասոցիացիայի և այլ ընկերությունների անդամ է: Քեմբրիջի Միջազգային կենսագրական կենտրոնը 2004 թ. նրան ընտրել է «Տարվա միջազգային գիտնական», մտցրել Քեմբրիջի «Կապույտ գրքի» մեջ և ճանաչել «Աշխարհի առաջատար գիտնական», իսկ 2005 թ՝ «XXI դարի ականավոր գիտնական»:

Բազմաթիվ միջազգային գիտաժողովների մասնակից և կազմակերպիչ է, դասախոսություններով հանդես է եկել տարբեր երկրների համալսարաններում և գիտական կենտրոններում 1989 թ. Բրիտանական ակադեմիայի հրավերով հետազոտական աշխատանքներ է կատարել Մեծ Բրիտանիայում, 1993–1994 թթ., որպես Ֆուլբրայթի մրցույթի հաղթող, աշխատել է ԱՄՆ–ի Ջորջ Վաշինգտոնի համալսարանում, 1995 թ՝ Մերիլենդի համալսարանում:

Պարգևատրվել է ՀՀ գիտությունների ակադեմիայի Գովեստագրով և Պատվոգրով, Մովսես Խորենացու մեդալով, ՀՀ Կառավարության «Հայոց Մեծ եղեռն» ոսկեզօծ մեդալով, Ֆրիտյոֆ Նանսենի հուշամեդալով և այլ պարգևներով:

Գլուխ առաջին

ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՇԻՄՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՀՈՐԴԱՆԱՆ

ԱԼ–ՄԱՄԼԱՔԱ ԱԼ–ՀԱՇԻՄԻՅԱ ԱԼ–ՈՒՐԴՈՒՆԻՅԱ
ԱԼ-ՈՒՐԴՈՒՆ

Աշխարհագրական դիրքը — գտնվում է Արևմտյան Ասիայի Մերձավոր Արևելք տարածքում

Սահմանները — սահմանակից է Իրաքին, Իսրայելին, Սաուդյան Արաբիային, Սիրիային և Արևմտյան Ափին

Տարածությունը — 92 հազար 300 քառ. կմ

Բնակչությունը — 5 մլն 760 հազար (2005 թ)

Մայրաքաղաքը — Ամման 1 մլն 800 հազար (2003 թ)

Ազգային կազմը — արաբներ՝ 98 տոկոս, հայեր՝ 1 տոկոս, չերքեզներ՝ 1 տոկոս

Կրոնը — իսլամ, սունիներ՝ 92 տոկոս, քրիստոնյաներ (հույն ուղղափառ և կաթոլիկներ, ուղղափառ ղպտիներ, հայ առաքելականներ, բողոքականներ)՝ 6 տոկոս, մյուսներ՝ շիա մուսուլմաններ և դրուզներ՝ 2 տոկոս

Լեզուն — արաբերեն՝ պաշտոնական, տարածված է նաև անգլերենը՝ որպես խոսակցական լեզու

Պետական կարգը — սահմանադրական միապետություն

Գործադիր իշխանությունը — պատկանում է պետության ղեկավարին՝ թագավորին՝ Աբդալլահ II–ին (1999 թ. փետրվարի 7–ից), կառավարության ղեկավարին՝ վարչապետին՝ Մարուֆ ալ–Բախիտին (կաբինետը գլխավորում է 2005 թ նոյեմբերի 24–ից)

Օրենսդիր իշխանությունը — պատկանում է երկպալատանի Ազգային ժողովին՝ Մաջլիս ալ–Ումմա, որը բաղկացած է սենատից՝ Մաջլիս ալ–Այան և Ներկայացուցիչների պալատից՝ Մաջլիս ալ–Նուվաբ: Ազգային ժողովն ընտրվում է չորս տարի ժամանակով: Վերջին ընտրությունները կայացել են 2003 թ., իսկ հաջորդը տեղի կունենա 2007 թ.

Դատական իշխանությունը — հիմնված է իսլամական օրենքի՝ շարիաթի, և ֆրանսիական կոդեքսի վրա: Բարձրագույն դատական մարմիններն են Վճռաբեկ դատարանը և Գերագույն դատարանը

Վարչական բաժանումը — կազմված է 12 նահանգներից՝ մուհաֆազաներից

Անկախությունը — 1946 թ մայիսի 25՝ բրիտանական մանդատի վերացում

Ազգային տոն — 1946 թ մայիսի 25

Սահմանադրությունը — ընդունվել է 1952 թ. հունվարի 1–ին

Քաղաքական կուսակցությունները — գործում են մեկ տասնյակից ավելի քաղաքական կուսակցություններ՝ Ալ–Աջյալ, Ազգային, Արաբական երկրի, Արաբական առաջադիմական Բաաս, Սահմանադրական ազգային և այլ պարտիաներ. Իսլամական գործողությունների ճակատ և այլն


Ազգային դրամը — Հորդանանյան դինար

ՀՆԱ–ն՝ համախառն ներքին արդյունքը՝ ըստ շնչի՝ 4800 ԱՄՆ դոլար (2005 թ.)

Արդյունաբերությունը — ֆոսֆատի արդյունահանում, դեղագործություն, նավթավերամշակում, ցեմենտի, պոտաշի և անօրգանական քիմիանյութերի արտադրություն. թեթև արդյունաբերություն, տուրիզմ

Գյուղատնտեսություն — ցորեն, գարի, ցիտրուսներ, ձիթապտուղ. արմավ, բանջարաբոստանային կուլտուրաներ. անասնապահություն՝ ոչխարաբուծություն, այծաբուծություն, թռչնաբուծություն

Անդամակցություն միջազգային կազմակերպություններին — ՄԱԿ, Արաբական պետությունների լիգա, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն, Միջազգային աշխատանքի կազմակերպություն, Միջազգային արժութային ֆոնդ, Իսլամական կոնֆերանս կազմակերպություն, ՅՈՒՆԵՍԿՕ, Համաշխարհային առևտրական կազմակերպություն և այլն


ՀՈՐԴԱՆԱՆ
ԼԻԲԱՆԱՆ
ՍԻՐԻԱ
Սիրիական
ԻՐԱՔ
Դամասկոս
Իրբիդ
Ամման
Ալ-Մաֆրաք
ԱՐԵՎԱԿԱՆ ԱՓ
Երուսաղեմ
ՀՈՐԴԱՆԱՆ
ՄԵՌՅԱԼ ԾՈՎ
ԻՍՐԱՅԵԼ
Հարաք
Անապատ
Պետրա
Մաանց
ՍԱՈՒԴՅԱՆ
ԱՐԱԲԻԱ
Ակաբա
Ակաբայի ծոց
Սինայի թերակղզի
36°
38°
30°

I. ԱՆԴՐՀՈՐԴԱՆԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՑՏՆՎԵԼԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ (1918–1928 թթ.)

1. Անհայտությունից էմիրություն

«Անդրհորդանան» անվան ներքո, ի տարբերություն հարևան արաբական մյուս պետությունների՝ Սիրիայի, Միջագետքի (Իրաքի) կամ Եգիպտոսի, պատմության մեջ երբեք հայտնի չի եղել որևէ ինքնուրույն պետական կազմավորում, որը, բնականաբար, չի ունեցել իր որոշակի աշխարհագրական և պետական սահմանները: Նա եղել է տվյալ տարածքում պատմության ընթացքում տարբեր անվանումներով գոյություն ունեցած կազմավորումների՝ թագավորությունների և կայսրությունների կցորդը, լավագույն դեպքում՝ նրանց բաղադրամասը, առանց որևէ ինքնուրույն նշանակության: Դրանցից ամենահայտնին թերևս արաբական նաբաթիա ցեղի կողմից մ.թ.ա. VI դարում հիմնված թագավորությունն էր, որը հենց այդ ցեղի անունով էլ պատմության մեջ մտել է որպես Նաբաթիական թագավորություն: Նրան մեծ հռչակ բերեց նրա Պետրա ժայռակոփ և վարդագույն քարակերտ հոյակապ մայրաքաղաքը, որը թագավորության մայրաքաղաքն էր մ.թ.ա. 312 — մ.թ. 63 թթ., և որի՝ մինչև օրս բավականին լավ պահպանված առանձին շինություններն ու կառույցներն ուղղակի ապշեցնում են այցելուին իրենց գեղեցկությամբ ու կատարելությամբ:

Այդ տարածքի հյուսիսային մասը մ.թ.ա. IV–III դարերում մտավ Սելևկյան թագավորության Սիրիական մարզի մեջ: Հենց Սելևկյանների շրջանում մեծ ծաղկում ապրեցին Ֆիլադելֆիան՝ բիբլիական Ռաբատ Ամմոնը, և մերօրյա Ամմանը, Ջիրասան, որն այսօր հայտնի է Ջարաշ անունով և իրեն է ձգում ինքնատիպ պատմական հուշարձաններով:

Եթե Նաբաթիայի հյուսիսային մասը մտավ Սելևկյանների պետության մեջ, ապա նրա հարավային մասը կարողացավ պահպանել իր ան-

կախությունը: Դեռ ավելին՝ մ.թ.ա. I դարում Նաբաթիական թագավորությանը հաջողվեց իր տիրապետությունը հաստատել այն տարածքների վրա, որոնք կազմում են ժամանակակից Սիրիայի և Հորդանանի մի մասը: Այդ պետությանը ծանր հարված հասցրեց ամենազոր Հռոմեական կայսրությունը, որին հաջողվեց մ.թ. 105–106 թթ. գրավել Պետրան և վերջ դնել Նաբաթիական թագավորության գոյությանը. Սակայն դրանով ամեն ինչ չավարտվեց· Նրա մի մասը՝ Հորդանան գետից արևելք ընկած հատվածը, մի կարճատև միջոցում՝ մ.թ. III դարում, մեծ ծաղկում ապրեց Պալմիրյան թագավորության կազմում: Հետագայում՝ V–VI դարերում, նա հայտնվեց Ղասանյանների պետության տիրապետության տակ, որը Բյուզանդական կայսրության վասալն էր:

Իրադրությունը կտրուկ փոխվեց VII դարում, երբ այդ ամբողջ տարածքները հայտնվեցին բարձրացող մի նոր հզոր պետության՝ Արաբական խալիֆայության կազմում, և նրա բոլոր բնակիչները՝ արաբական ցեղերը, ընդունեցին իսլամ:

Եթե մինչև VII դարը պայմանականորեն կարելի է համարել դեգերումների դարաշրջան, երբ որպես տիրակալներ մեկը մյուսին հաջորդում էին տարբեր պետություններ՝ Նաբաթիական, Սելևկյան և Պալմիրյան թագավորությունները, Հռոմեական և Բյուզանդական կայսրությունները, ապա VII դարից սկսած մինչև մեր օրերը Անդրհորդանանը դառնում է արաբական պետական և քաղաքական աշխարհի անբաժան մասը:

Այդուհանդերձ, այդ երկու՝ միմյանցից տարբեր պատմական դարաշրջանների համար ընդհանուրն այն էր, որ «Անդրհորդանան» երկրանուն և առանձին պետական կազմավորում գոյություն չի ունեցել: Եվ պատահական չէ, որ բրիտանական «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա. 1969–1970» հրատարակության մեջ նշվում է, որ «դարեր շարունակ ոչինչ չէր լսվում այդ երկրի (Անդրհորդանանի — Ն Հ.) մասին. դա սովորաբար կազմում էր Սիրիայի մի մասը, և որպես այդպիսին նա ընդհանրապես կառավարվում էր Եգիպտոսի կողմից: XVI դարից սկսած՝ նա մտցվեց Դամասկոսի օսմանյան վիլայաթի կազմի մեջ և մնաց լճացման վիճակում մինչև Մեծ Պատերազմի բռնկումը 1914 թ.»:

Դրանից հետո քաղաքական դեպքերը զարգացան զարմանալի արագությամբ, որի արդյունքում ամբողջ Արաբական Արևելքում ստեղծվեց բոլորովին նոր իրողություն, որը նպաստավոր եղավ Անդրհորդանանի՝ որպես պետական նոր կազմավորման հանդես գալու համար:

Արաբական, այդ թվում և Անդրհորդանանյան (Հորդանանյան) տարածքների ազատագրումը, որոնք մտնում էին Դամասկոսի վիլայաթի կազմի մեջ, օսմանյան տիրապետությունից սկսվեց 1917 թ.. Այն իրագործեցին անգլիական զորքերը և արաբական ապստամբական բանակը, որը գլխավորում էր Հիջազի կառավարիչ Հուսեյնի որդի էմիր Ֆեյսալը: 1917 թ. հուլիսի 6–ին Ֆեյսալի զորքերը, որոնց մեծ աջակցություն ցույց տվեց անգլիական նավատորմը, գրավեցին Աքաբա նավահանգիստը, որը գտնվում է նույնանուն ծոցի ափին: Շարունակելով հարձակումը՝ նրանք մտան Վադի Մուսա:

Անգլիական և արաբական ապստամբական բանակի հարձակումները նոր թափով սկսվեցին 1918 թ. աշնանը: 1918 թ. սեպտեմբերի 19–ին նրանք հարձակման անցան Նաբլուսի մոտ՝ Ռաֆաթի և Արարայի շրջաններում: Այստեղ ռազմական գործողություններին առաջին անգամ մասնակցեց դեռևս 1916 թ. ստեղծված Արևելյան կամ Հայկական լեգեոնը, որը բաղկացած էր սիրիացի արաբներից և հայերից, ընդ որում՝ վերջիններս կազմում էին մեծամասնություն: Ճակատամարտը տևեց 12 ժամ, որի ընթացքում հայ և սիրիացի զինվորները ցուցաբերեցին իսկական հերոսություն: Թուրքական բանակը Նաբլուսի տակ պարտություն կրեց և փախուստի դիմեց[1]:

Անգլիական զորքերը գրավեցին Նաբլուս և Նազարեթ քաղաքները: Իսկ արաբական 15–հազարանոց հեծելազորը գրավեց Մաանը և, մեծ երթ կատարելով ու ճանապարհին բազմաթիվ բնակավայրեր ազատագրելով, հասավ Անդրհորդանանի հյուսիսային սահմանները և մտավ Դերաայի շրջան. Դրանով փաստորեն ավարտվեց օսմանյան տիրապետությունից այն բոլոր տարածքների ազատագրումը, որտեղ կազմավորվեց ապագա Անդրհորդանանը՝ որպես էմիրություն, որը հետագայում, ինչպես ցույց կտրվի, վերանվանվեց Հորդանանի թագավորություն:

2. Անդրհորդանանի էմիրության կազմավորումն անգլիական մանդատի ներքո

Օսմանյան լծից ազատագրված Անդրհորդանանը սկզբնական շրջանում Սիրիայի հետ միասին անցավ էմիր Ֆեյսալի կառավարման ներքո: Ինչպես բազմիցս նշվել է, արաբները Սիրիա ասելով հասկանում

1 Այդ մասին տես նաև սույն աշխատության II հատորը:

էին ոչ միայն բուն Սիրիան, այլև Պաղեստինը, Հորդանանը և Լիբանանը, այսինքն՝ պատմաաշխարհագրական Սիրիան: Եվ երբ 1918 թ. հոկտեմբերի 5–ին Ֆեյսալի հրամանով Դամասկոսում ստեղծվեց արաբական կառավարություն Ալի Ռիզա ալ–Ռիկաբիի գլխավորությամբ, ենթադրվում էր, որ նրա իրավասությունները տարածվելու էին նաև Անդրհորդանանի վրա:

Բոլորովին այլ դիրք գրավեց Անգլիան: 1918 թ. հոկտեմբերի 24–ին Մերձավոր Արևելքում անգլիական ուժերի գլխավոր հրամանատար Ֆելդմարշալ Ալլենբիի հրամանով Սիրիան և Պաղեստինը բաժանվեցին հարավային, հյուսիսային և արևելյան գոտիների: Հարավային գոտու մեջ մտցվեց Պաղեստինը՝ Անդրհորդանանով հանդերձ, և այդ տարածքն անցավ անգլիական ռազմական իշխանությունների ուղղակի կառավարման տակ: Դա համապատասխանում էր արաբական տարածքների բաժանման վերաբերյալ «Սայկս–Պիկոյի» անգլո–ֆրանսիական գաղտնի համաձայնագրի՝ այսպես կոչված «Շագանակագույն գոտուն»: Ֆեյսալը և սիրիական ազգայնականները բողոքեցին Անգլիայի այդ քայլի դեմ: Սիրիական կոնգրեսի կողմից 1919 թ. հուլիսի 2–ին ընդունված «Դամասկոսի ծրագրում» կոնգրեսն արտահայտվեց Բալֆուրի դեկլարացիայի և Պաղեստինում հրեական տուն ստեղծելու անգլիական քաղաքականության դեմ և հանդես եկավ հօգուտ միասնական ու անբաժան Սիրիայի՝ պահանջելով «չանջատել նրանից սիրիական հայրենիքի հարավային մասը, որը հայտնի է Պաղեստին անունով»: 1920 թ. մարտի 8–ին Սիրիական Գլխավոր կոնգրեսը կատարեց հաջորդ քայլը. Նա Դամասկոսում գումարված իր նիստում Սիրիան և Իրաքը հռչակեց անկախ թագավորություններ: Ֆեյսալը հռչակվեց Սիրիայի, իսկ նրա ավագ եղբայր Աբդալլահը՝ Իրաքի թագավոր: Կոնգրեսի որոշման համաձայն՝ «Սիրիական միասնական թագավորությունը» ստեղծվում էր նրա «բնական սահմաններում»: Այդ ասելով հասկացվում էին բուն Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը և Անդրհորդանանը (Հորդանանը):

Անգլիան և Ֆրանսիան, անտեսելով անկախության վերաբերյալ արաբների արդարացի պահանջները, 1920 թ. ապրիլի 25–ին Սան–Ռեմոյում գումարված կոնֆերանսում համաձայնության եկան արաբական երկրների մանդատի բաժանման հարցի շուրջը: Անգլիան ստացավ Պաղեստինի և Միջագետքի մանդատը: Դրանով Պաղեստինը և այն տարածքը, որի վրա այնուհետև ձևավորվեց Անդրհորդանանը, վերջնականապես անջատվեցին Սիրիայից, դուրս բերվեցին արաբական իրավա-

սության շրջանակներից և դրվեցին բրիտանական տիրապետության ներքո:

Ֆրանսիան չճանաչեց Սիրիական կոնգրեսի որոշումը Սիրիայի անկախության և Ֆեյսալին նրա թագավոր հռչակելու վերաբերյալ և ռազմական ուժի գործադրումով Ֆեյսալին գահընկեց անելով՝ ստիպեց նրան հեռանալ Սիրիայից:

Դամասկոսի գրավումը և Ֆեյսալի գահընկեց լինելն ուղղակի ազդեցություն ունեցան Անդրհորդանանի վրա: Ստանալով իր եղբոր՝ սիրիական գահից զրկվելու լուրը՝ Աբդալլահը 1920 թ. նոյեմբերին զորք հավաքեց Սիրիա ներխուժելու, ֆրանսիացիներին այնտեղից արտաքսելու և իր եղբորը գահի վրա վերահաստատելու համար: Նրա զորքերը 1921 թ. հունվարին Հիջազից մտան Հորդանան գետի արևելյան տարածքները, որոնք բրիտանական մանդատի մասն էին կազմում, և որտեղ շատ չանցած ծնավորվեց Անդրհորդանանը: Նույն թվականի ապրիլին Աբդալլահը Ամմանում կազմեց իր կառավարությունը:

Դա անհանգստացրեց ոչ միայն Ֆրանսիային, այլև Անգլիային: Վերջինս նախընտրեց հարցին տալ քաղաքական լուծում և ինչ–որ չափով բավարարել արաբական պահանջները, սակայն բրիտանական հովանավորության ներքո: Դրա հիմքերը դրված էին դեռևս մինչ այդ՝ մինչ Ֆեյսալին գահընկեց անելը և Աբդալլահի զորահավաքն ու Արևելյան Հորդանան ներխուժելը:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ արաբական տարածքների մեծ մասը հայտնվեց բրիտանական տիրապետության ներքո, անգլիական իշխանությունները հետագայում Անդրհորդանան կոչված տարածքը բաժանել էին երեք տեղական վարչական շրջանների: Հյուսիսային կամ Աջլունի շրջան՝ Իրբիդ կենտրոնով, Կենտրոնական կամ Բալքայի շրջան, որի կենտրոնը գտնվում էր Սալթում, և Հարավային շրջան՝ իր «Մոաբիտյան արաբական կառավարությամբ», որը տեղակայված էր Կարակում: Այդ երեք շրջաններից յուրաքանչյուրում տեղական վարչական կենտրոններին կից գործում էին բրիտանական «խորհրդականները», որոնք օժտված էին ամենալայն լիազորություններով և հանդիսանում էին իրական կառավարողները:

Այսպիսով՝ ստեղծվել էր բավականին բարդ իրադրություն՝ անգլիական տիրապետության տակ գտնվող անդրհորդանանյան տարածք՝ երեք վարչական շրջաններով և բրիտանական «խորհրդականներով», Աբդալլահի կողմից մոբիլիզացված բանակ, որը արդեն ներխուժել էր

Արևելյան Հորդանան, և Ամմանում Աբդալլահի կողմից ստեղծված արաբական կառավարություն:

Այսպիսի պայմաններում անգլիական կառավարությունը, չցանկանալով ավելի բարդացնել խիստ լարված իրադրությունը և դիմել ռազմական գործողությունների, գերադասեց գնալ քաղաքական զիջումների, որոնք, սակայն, չէին սասանում կամ հարցականի տակ դնում նրա գաղութային տիրապետությունը:

Արաբական Արևելքում կուտակված խնդիրները լուծելու նպատակով, բրիտանական կառավարությունը 1921 թ. մարտի 12–24–ը Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում գումարեց կոնֆերանս, որը ղեկավարում էր Մեծ Բրիտանիայի գաղութների նախարար Ուինստոն Չերչիլը: Այդ կարևոր գործը Չերչիլին հանձնարարելը բացատրվում է ոչ միայն և ոչ այնքան այն հանգամանքով, որ նա կայսրության գաղութային նախարարն էր, այլև նրանով, որ այդ տորին՝ պահպանողականը, մինչև ուղն ու ծուծը համակված էր գաղութային մենտալիտետով, և նրա քաղաքական իդեալը Բրիտանական կայսրության՝ որպես աշխարհի ամենամեծ գաղութային կայսրության, հզորության պահպանումը և հետագա ընդլայնումն էր: Եվ նա մինչև իր երկարամյա կյանքի վերջը հավատարմորեն ծառայեց այդ իդեալին:

Կահիրեի կոնֆերանսում ընդունված որոշումներից կարևորները երկուսն էին, որոնք վերաբերում էին պետական նոր կազմավորումների ստեղծմանը և անգլիական տիրապետությանը: Ըստ այդմ՝ կոնֆերանսը որոշեց. առաջին՝ անգլիական հսկողության ներքո ստեղծել Իրաք պետություն և նրա թագավոր նշանակել Հուսեյնի երրորդ որդուն՝ Ֆեյսալին, որը մինչ այդ ֆրանսիացիների ռազմական գործողությունների հետևանքով զրկվել էր Սիրիայի գահից: Դրա համար անհրաժեշտ էր նրա ավագ եղբորը՝ Աբդալլահին, «համոզել», որպեսզի նա հրաժարվի Իրաքի գահից, որը նրան տրվել էր Դամասկոսում 1920 թ. մարտին գումարված Սիրիական Գլխավոր կոնգրեսի կողմից: Աբդալլահն առանց դժվարության համաձայնվեց այդ առաջարկության հետ: Երկրորդ՝ Կահիրեի կոնֆերանսում Աբդալլահին առաջարկվեց Անդրհորդանանի էմիրի պաշտոնը, որը վերջինս ընդունեց առանց տատանման: Կոնֆերանսում Մեծ Բրիտանիայի գաղութների նախարար Ու. Չերչիլը և Աբդալլահը համաձայնության եկան հետևյալի շուրջը. Ու. Չերչիլը Մեծ Բրիտանիայի կառավարության անունից Աբդալլահին ճանաչում էր Անդրհորդանանի էմիր և պարտավորվում նրան տալ դրամական նպաստ՝ սուբ-

սիդիա, իսկ Աբդալլահը պարտավորվում էր ճանաչել բրիտանական մանդատը և ենթարկվել բրիտանական գլխավոր կոմիսարին: 1921 թ. ապրիլին Մեծ Բրիտանիան Աբդալլահին պաշտոնապես ճանաչեց Անդրհորդանի ղեկավար կամ կառավարիչ (ruler):

1923 թ. սեպտեմբերին Ազգերի լիգան հաստատեց բրիտանական մանդատը Անդրհորդանանի վրա:

3. Քաղաքական և սոցիալ–տնտեսական իրավիճակը Անդրհորդանանում բրիտանական տիրապետության հաստատումից հետո (1923–1928 թթ.)

Թեև Անդրհորդանանի էմիրության գլուխ նշանակվեց Աբդալլահը Հաշիմյան ընտանիքից, սակայն փաստական ամբողջ իշխանությունն Անդրհորդանանում կենտրոնացված էր Մեծ Բրիտանիայի գլխավոր կոմիսարի ձեռքում: Անգլիան, դիմելով Անդրհորդանանը Պաղեստինի կազմից դուրս բերելու քայլին, հետապնդում էր որոշակի ռազմաստրատեգիական նպատակներ՝ ապահովել իր տիրապետող դիրքերը Միջերկրական ծովից մինչև Պարսից ծոց, Անդրհորդանանը դարձնել զորավոր հենակետ և այն վերածել պատվարի Անգլիայի արաբական տիրույթներում ֆրանսիական ազդեցության տարածման դեմ:

Իր տիրապետությունն ամրապնդելու նպատակով Անգլիան ձեռնամուխ եղավ ոստիկանական ուժերի կազմավորմանը, որոնք անգլիական զորքերի հետ միասին պատժիչ ֆունկցիաներ էին կատարում և ճնշում անհնազանդության յուրաքանչյուր դրսևորում: Իսկ Անդրհորդանանում իրոք կուտակվել էր մեծ դժգոհություն՝ կապված անգլիական գաղութային տիրապետության հաստատման հետ: Բազմաթիվ էին ցեղերի զինված ապստամբությունները, իսկ 1923 թ. նրանք ընդհուպ մոտեցան Ամմանին, սակայն պարտություն կրեցին:

Դժգոհության մյուս աղբյուրը տնտեսական ծանր վիճակն էր, մասնավորապես անգլիական և տեղական իշխանությունների հարկային քաղաքականությունը: Անգլիական մանդատային իշխանությունները էմիրի հետ միասին փորձեցին «բարելավել» հարկագանձման համակարգը, բայց դա արվեց այնպիսի ձևով, որ բնակչությունն ըստ էության ոչինչ չշահեց, ուստի և պայքարը, այդ թվում և զինված, շարունակվեց:

Անդրհորդանանը, ինչպես օսմանյան լծի տակ գտնվող արաբական մյուս երկրները, տնտեսապես խիստ հետամնաց երկիր էր: Գյու-

ղատնտեսությունը վարվում էր ամենաարխայիկ ձևով: Գյուղում տիրապետող էին ֆեոդալական ցեղային հարաբերությունները: Կալվածատեր–ցեղապետի ձեռքում էին կենտրոնացված հողային հիմնական տարածությունները, լավագույն արոտավայրերը և ջրի աղբյուրները: Գյուղացիների մեծ մասը հողազուրկ էր և սովորաբար շատ ծանր պայմաններով հողը վարձակալում էր կալվածատիրոջից, որը մեծ մասամբ նույն շեյխ–ցեղապետն էր: Զգալի թիվ էին կազմում նաև քոչվոր անասնապահները, որոնց վիճակը առանձնապես չէր տարբերվում ֆելլահների վիճակից:

Ժամանակակից առումով արդյունաբերական ձեռնարկություններ Անդրհորդանանում չկային: Կային առանձին արհեստանոցներ և տնայնագործական մանր ձեռնարկություններ, որոնք հիմնականում զբաղված էին գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ:

Անգլիան բնավ շահագրգռված չէր Անդրհորդանանի տնտեսական զարգացմամբ և այդ ուղղությամբ ոչ մի քայլ չէր ձեռնարկում: Փոխարենը նրան մտահոգում էր երկրում իր տիրապետության հետագա ամրապնդման հարցը, որի համար անհրաժեշտ էր նախ և առաջ անդրհորդանանյան ռազմական ուժերը դնել անգլիացիների հսկողության տակ, ինչպես նաև ընդլայնել Անգլիայի իրավասությունը ֆինանսաբյուջետային հարցերում: 1924 թ. օգոստոսին անգլիական գլխավոր կոմիսարը պաշտոնական նոտայով էմիր Աբդալլահից պահանջեց Մեծ Բրիտանիային տրամադրել անսահմանափակ վերահսկողություն անդրհորդանանյան ռազմական ուժերի և ֆինանսների վրա: Էմիրը զիջեց: Անգլիացիները ձեռնամուխ եղան տեղացիներից Արաբական լեգեոնի ստեղծմանը անգլիական սպա Պիկի հրամանատարությամբ: Արաբական լեգեոնը սերտորեն համագործակցում էր անգլիական օկուպացիոն ուժերի հետ: Հենց նրանց համատեղ գործողություններով հնարավոր եղավ 1927–1928 թթ. ճնշել մի շարք ժողովրդական ելույթներ՝ ուղղված բրիտանական տիրապետության և նրա կամակատար տեղական իշխանությունների քաղաքականության դեմ:

4. Հաշիմյան տոհմը արաբական թագավորների մատակարար

XX դարի 10–20–ական թվականներին Հաշիմյան ընտանիքը բացառիկ դերակատարություն ունեցավ արաբական երկրների քաղաքական կյանքում: Այդ ընտանիքը նրա նահապետի՝ Մեքքայի շերիֆ և Հի-

ջազի կառավարիչ Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմիի գլխավորությամբ ղեկավարեց արաբական մեծ ապստամբությունն օսմանյան տիրապետության դեմ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և իր կարևոր ներդրումն ունեցավ Օսմանյան կայսրության տապալման և օսմանյան լծից արաբական երկրների ազատագրության գործում:

Մեծ Բրիտանիան իր բոլոր քաղաքական ծրագրերը և նրանց իրագործումը կապում էր Հաշիմյան տոհմի հետ՝ նրան իր կողմը գրավելով զանազան խոստումներով, որոնց մեջ ոչ վերջին տեղն էին գրավում նրա ներկայացուցիչներին արաբական երկրների թագավորներ և էմիրներ դարձնելու խոստումները:

Հաշիմյան տոհմի մեծ հեղինակությունը և ազդեցությունը կապված էին այն իրողության հետ, որ այն ուղղակիորեն սերում էր Մուհամմադ մարգարեից և այդ պատճառով նրան էր վստահված Մեքքայի և Արաբիայում գտնվող մուսուլմանական մյուս սրբավայրերի պաշտպանի և հովանավորի բարձր պարտականությունը: Այդ հանգամանքն առանձնահատուկ և մենաշնորհյալ կարգավիճակ էր տալիս այդ տոհմին և ապահովում նրա գերակայությունը արաբական այլ ազնվական տոհմերի նկատմամբ: Դա միաժամանակ Հաշիմյան տոհմի քաղաքական ազդեցության գլխավոր աղբյուրներից մեկն էր հանդիսանում:

Եվ ստացվեց այնպես, որ Հաշիմյան տոհմը դարձավ արաբական երկրներին թագավոր մատակարարող միակ տոհմը:

Հաշիմյան կլանից առաջինը թագավոր հռչակվեց նրա տոհմապետ, Մեքքայի շերիֆ և Հիջազի կառավարիչ Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմին: Այդ պատմական իրադարձությունը տեղի ունեցավ 1916 թ. նոյեմբերի 2–ին, երբ Մեքքայում գումարված ցեղապետների, հոգևոր–կրոնական առաջնորդների և երևելիների համաժողովը Հուսեյն իբն Ալիին հայտարարեց «Արաբական երկրների թագավոր»: Նա այն անձնավորությունն էր, ով, ինչպես նշվել է, նախապատրաստեց և գլխավորեց 1916 թ. հունիսին սկսված արաբական մեծ ապստամբությունն ընդդեմ օսմանյան տիրապետության, որին ամենագործունյա ղեկավար մասնակցությունն ունեցան նրա չորս որդիները՝ Ալին, Աբդալլահը, Ֆեյսալը և Զայդը: Դա չտեսնված չափով նպաստել էր նրա հեղինակության բարձրացմանն արաբական աշխարհում, և որպես այդպիսին՝ նա իրականում ոչ մի մրցակից չուներ: Դրա շնորհիվ մեծ հեղինակություն էին վայելում նաև նրա որդիները, հատկապես առաջին երեքը:

Այսպիսով՝ Հուսեյն իբն Ալին 1916 թ. նոյեմբերի 2–ին հռչակվեց ոչ թե արաբական այս կամ այն երկրի վեհապետ, այլ բոլոր արաբական երկրների՝ Արաբական թերակղզում գտնվող իշխանապետությունների՝ Նաջդի, Ասիրի, Եմենի, Միջագետքի՝ Իրաքի, Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինի՝ ներառյալ ապագա Անդրհորդանանի կամ Հորդանանի, վեհապետը: Մեքքան հայտարարվեց նորաստեղծ թագավորության մայրաքաղաք: Կազմվեց թագավորության առաջին կառավարությունը, որը գլխավորեց Հուսեյնի ավագ որդին՝ Ալին, արտաքին գործերի նախարարի պաշտոնը գրավեց Հուսեյնի երկրորդ որդին՝ Աբդալլահը, իսկ նրա երրորդ որդին՝ Ֆեյսալը. զբաղեցրեց ներքին գործերի նախարարի պաշտոնը: Փաստորեն կառավարությունն իրենից ներկայացնում էր յուրատեսակ Հաշիմյան ներընտանեկան կաբինետ:

Սակայն Հուսեյն իբն Ալին երկար չվայելեց Արաբական երկրների թագավոր լինելու փառքը. Նրա և արաբական ավագանու այդ քայլը, որը նախօրոք համաձայնեցված չէր դաշնակիցների՝ Անգլիայի և Ֆրանսիայի հետ, առաջացրեց վերջիններիս խորը զայրույթը: Նրանք հրաժարվեցին Հուսեյնին ճանաչել որպես Արաբական բոլոր երկրների կամ արաբական ազգի թագավոր. Դա չէր մտնում նրանց քաղաքական ծրագրերի մեջ: Անգլիան և Ֆրանսիան բնավ չէին ցանկանում, որ Օսմանյան կայսրության փլատակների վրա բարձրանար մի նոր կայսրություն, որպիսին կարող էր դառնալ Արաբական երկրների թագավորությունը Հուսեյնի գլխավորությամբ: Այսպիսով՝ ստեղծվեց մի իրադրություն, երբ հարաբերությունները մի կողմից Լոնդոնի և Փարիզի, մյուս կողմից՝ Մեքքայի միջև կարող էին մտնել փակուղի:

Բայց քանի որ պատերազմը դեռևս շարունակվում էր, դա չէր համապատասխանում երկու կողմերի շահերին, և նրանք նախընտրեցին դիմել փոխզիջումների: Անգլիան և Ֆրանսիան համաձայնվեցին Հուսեյնին ճանաչել ոչ թե «Արաբական երկրների թագավոր», այլ միայն ու միայն «Հիջազի թագավոր». որի մասին նրանք պաշտոնապես տեղյակ պահեցին Հուսեյնին 1917 թ. հունվարի 3–ին: Վերջինս չուներ այլընտրանք, և ընդամենը երկու ամիս զբաղեցնելով Արաբական բոլոր երկրների թագավորի գահը՝ համաձայնվեց իջնել այդ գահից և բարձրանալ Հիջազի գահին՝ դառնալով նրա թագավորը: Նա այդ գահի վրա մնաց մինչև 1924 թ.: Իհարկե, դա այն չէր, ինչ Արաբական բոլոր երկրների թագավոր լինելը, բայց ստացածն էլ արհամարհելի չէր, եթե, բացի այլ գործոններից. հաշվի առնենք, որ Հիջազի տարածքը կազմում է 388 հազար

500 քառակուսի կիլոմետր, որի վրա այդ ժամանակ բնակվում էր 600 հազար մարդ.

Անգլիան և Ֆրանսիան, Հուսեյնին ճանաչելով որպես Հիջազի թագավոր, միաժամանակ նրան ճանաչեցին որպես իրենց դաշնակից Օսմանյան կայսրության դեմ մղվող պատերազմում:

Դրանով դրվեց արաբական երկրներում Հաշիմյան դինաստիայի՝ որպես արքայական դինաստիայի հաստատման սկիզբը:

Հուսեյնը Հիջազի գահի վրա մնաց մոտ ութ տարի՝ 1916–1924 թթ.: Այդ ընթացքում նրա հարաբերությունները մշտապես լարված էին հարևան Նաջդի և հարակից տարածքների կառավարող Իբն Սաուդի հետ, որը ձգտում էր Արաբական թերակղզում գտնվող բոլոր տարածքների միավորմանը իր տիրապետության ներքո և այդ բնագավառում հասավ տպավորիչ հաղթանակների: Նրա այդ քաղաքականությունը հակասում էր Հիջազի շահերին և սպառնալիք ներկայացնում նրա գոյության համար: Վաղ թե ուշ նրանք ընդհարվելու էին:

Սաուդյանների և Հաշիմյանների միջև հարաբերություններն ավելի սրվեցին, երբ Հուսեյնը 1924 թ. մարտի 6–ին իրեն հայտարարեց խալիֆա այն բանից հետո, երբ քեմալական դեկրետով Թուրքիայում վերացվեց խալիֆայությունը: Իբն Սաուդը և նրա կողմնակիցները հրաժարվեցին ճանաչել Հուսեյնին որպես խալիֆա, այսինքն՝ աշխարհի բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդ, և նրան հայտարարեցին «ինքնակոչ խալիֆա»:

1924 թ. սեպտեմբերի սկզբներին Իբն Սաուդը պատերազմական գործողություններ սկսեց Հիջազի դեմ և սեպտեմբերի 7–ին գրավեց Թաիֆը, իսկ 26–ին ընդհուպ մոտեցավ Հիջազի մայրաքաղաք Մեքքային: Ռազմական պարտությունը ծանր դրության մեջ դրեց Հուսեյնին և հաշիմյաններին: Ստեղծված պայմաններում մեքքայական ցեղային ավագանին չգտավ այլ ելք, քան հարկադրել Հուսեյնին հրաժարվել գահից հօգուտ իր ավագ որդու՝ Ալիի: Հուսեյնը հնազանդվեց և 1924 թ. հոկտեմբերի 5–ին հրաժարվեց գահից. Ալիին դարձավ Հիջազի նոր թագավորը: Նա շարունակեց պատերազմը սաուդյանների դեմ, սակայն նրա սեփական ուժերը բավարար չէին կանգնեցնելու սաուդյան զորքերի հարձակումը, իսկ դրսից՝ անգլիացիներից և իր երկու եղբայրներից՝ Աբդալլահից ու Ֆեյսալից սպասվող օգնությունն այդպես էլ տեղ չհասավ: 1924 թ. հոկտեմբերի 26–ին Ալին ստիպված էր Մեքքան հանձնել Իբն Սաուդին. Հետագայում՝ 1925 թ. դեկտեմբերին, սաուդյան զորքերը

20336

գրավեցին նաև Հիջազի մյուս երկու կարևոր կենտրոնները՝ Մադինան և Ջիդդան, որով ավարտվեց Հիջազի գրավումը և վերածումը Սաուդյան Արաբիայի նահանգներից մեկի: Ալին 1925 թ. զրկվեց գահից, ինչը միաժամանակ նշանակում էր հաշիմյան հազարամյա տիրապետության վերջը Հիջազում:

Իրադարձությունները միանգամայն այլ կերպ զարգացան Իրաքում և Անդրհորդանանում: 1921 թ. Հաշիմյան դինաստիան հաստատվեց նաև այս երկու արաբական երկրներում:

Ինչպես նշվել է, 1921 թ. մարտին Կահիրեում կայացած կոնֆերանսում, որը գլխավորում էր Մեծ Բրիտանիայի գաղութային նախարար Ու. Չերչիլը, որոշվեց ստեղծել Իրաքի թագավորություն, և նրա գահը հանձնվեց Հուսեյնի երրորդ որդուն՝ Ֆեյսալ իբն Հուսեյն ալ–Հաշիմիին: Նա Իրաքի գահին նստեց մինչև իր մահը, որը տեղի ունեցավ 1933 թ.: Նրան փոխարինեց որդին՝ Ղազի I–ը, որը 1939 թ արկածի զոհ դարձավ: Գահն անցավ նրա որդուն՝ Ֆեյսալ I–ի թոռանը՝ Ֆեյսալ II–ին: 1958 թ. հուլիսի 14–ին Իրաքում տեղի ունեցած հեղափոխությունը վերացրեց միապետությունը, Հաշիմյան դինաստիան տապալվեց, իսկ երիտասարդ թագավորը՝ Ֆեյսալ II–ը, սպանվեց: Այսպիսով՝ Իրաքի գահի վրա Հաշիմյաններն ունեցան միայն երեք թագավոր:

Հիջազից հետո Իրաքը դարձավ երկրորդ արաբական երկիրը, որտեղ Հաշիմյան դինաստիան և՛ հաստատվեց, և՛ տապալվեց:

1921 թ. Կահիրեում կայացած վերոնշյալ կոնֆերանսը նորաստեղծ Անդրհորդանան էմիրության միապետի՝ էմիրի գահին նստեցրեց Հաշիմյան կլանի մեկ այլ անդամի՝ Հուսեյնի երկրորդ որդուն՝ Աբդալլահին: Այսպիսով՝ 1921–1924 թթ արաբական երեք կարևոր երկրների՝ Հիջազի, Իրաքի և Անդրհորդանանի գահերին նստած էին համապատասխանաբար Հաշիմյան կլանի նահապետ Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմիին, որին փոխարինեց նրա ավագ որդին՝ Ալին, և նրա մյուս երկու որդիները՝ Ֆեյսալ իբն Հուսեյնը և Աբդալլահ իբն Հուսեյնը: Հուսեյնի՝ իբրև ծնողի համար դա երջանկության գագաթնակետն էր, իսկ Հաշիմյան կլանի համար՝ նրա հզորության գագաթնակետը, որին նա այնուհետև երբեք չհասավ:

Աբդալլահը, որը գրավեց Անդրհորդանանի էմիրի գահը, ծնվել էր 1882 թ. Մեքքայում, սակայն մանկության և պատանեկության շրջանն անց էր կացրել Օսմանյան կայսրության մայրաքաղաք Ստամբուլում: Օսմանյան սուլթան Աբդուլ Համիդ II–ը չէր վստահում Մեքքայի շերիֆ և

Հիջազի կառավարիչ Հուսեյն իբն Ալիին, այդ պատճառով էլ նրան 1891 թվականից պարտադրել էր ապրել Ստամբուլում, որտեղ նա գտնվում էր խիստ հսկողության տակ: Ըստ էության նա գտնվում էր յուրատեսակ պատանդի վիճակում, ինչն ընդունված էր և լայնորեն կիրառվում էր արևելյան բռնակալություններում:

Ստամբուլում Հուսեյնի հետ էր գտնվում նաև նրա ընտանիքը, այդ թվում և Աբդալլահը, որտեղ էլ վերջինս ստանում է իր կրթությունը: Այդ վիճակը պահպանվեց մինչև 1908 թ երիտթուրքական հեղափոխությունը և Աբդուլ Համիդ II–ի գահընկեց լինելը, որից հետո Հուսեյնն իրավունք ստացավ իր ընտանիքի հետ հեռանալ Ստամբուլից և վերադառնալ հայրենի Մեքքա:

Աբդալլահը վաղ հասակից ներգրավվում է քաղաքական գործունեության ոլորտը, որի նկատմամբ նա դրսևորում է մեծ հետաքրքրություն և տաղանդ: 1912–1914 թթ նա Օսմանյան կայսրության մաջլիսի՝ պառլամենտի անդամ էր և ներկայացնում էր Մեքքան: Դա հնարավորություն է տալիս նրան մոտիկից ծանոթանալու օսմանյան կառավարման մեքենային, մեթոդներին և արքունիքում տիրող բարքերին, ինչը հետագայում նրան շատ օգտակար եղավ և իր դերը խաղաց նրա հակաթուրքական դիրքորոշման մեջ: Նա դառնում է օսմանյան տիրապետության համոզված հակառակորդ և իր երեք եղբայրների հետ միասին անվերապահորեն պաշտպանում իր հորը՝ Հուսեյն իբն Ալիին, օսմանյան տիրապետության դեմ արաբական ապստամբության նախապատրաստման և իրականացման գործում: Երբ 1916 թ. Հուսեյնը դարձավ Հիջազի թագավոր և կազմեց իր կառավարությունը, բնավ էլ պատահական չէր, որ արտաքին գործերի նախարարի պորտֆելը հայրը վստահեց հենց Աբդալլահին:

Եղբայրներից յուրաքանչյուրն ուներ իր հակումները և նախասիրությունները: Ալին, որը եղբայրներից ամենամեծն էր, ավելի հակում ուներ պետական կառավարման հարցերի նկատմամբ և զբաղեցրեց կառավարության ղեկավարի պաշտոնը: Ֆեյսալը, որը Աբդալլահի կրտսերն էր, նախապատվությունը տալիս էր ռազմական գործերին, և նրան վստահվեց արաբական ապստամբ զինված ուժերի ղեկավարությունը: Իսկ Զայդը, որը եղբայրներից ամենակրտսերն էր, դեռևս չէր ձևավորվել և հստակորեն չէր դրսևորում իր հակումները: Այդ պատճառով էլ նա հիմնականում օգնում էր իր հորը և եղբայրներին՝ կատարելով նրանց հանձնարարությունները: Ինքը՝ Աբդալլահը, բանակցություններ վարելու վարպետ էր, տիրապետում էր դիվանագիտական արվեստի նրբություն-

ներին, խուսանավելուն և ի հարկին զիջումների դիմելուն, գիտեր գաղտնիք պահելը և իր մտքերը կիսել միայն անհրաժեշտ անձնավորությանհետ: Ուստի արտաքին գործերը մշտապես գտնվել են Աբդալլահի ուշադրության ու հետաքրքրությունների կենտրոնում և վարույթում:

Ահա այսպիսի կենսափորձով և նախասիրություններով օժտված Աբդալլահ իբն Հուսեյն ալ–Հաշիմին բարձրացավ Անդիորդանանի գահին:

Աբդալլահի այդ ունակությունները հայտնի էին բրիտանացիներին, որոնց հետ նա իր հոր հանձնարարությամբ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գաղտնի բանակցություններ էր վարում օսմանյան տիրապետության դեմ ապստամբություն բարձրացնելու և Մեծ Բրիտանիայի հետ դաշնակցային հարաբերություններ հաստատելու հարցի շուրջը: Այդ հանգամանքը, կասկածից դուրս է, իր որոշակի դերը խաղաց այն բանում, որ Անդրիորդանանի վեհապետի թեկնածուի հարցում Մեծ Բրիտանիայի ընտրությունն ընկավ Աբդալլահի վրա:

Առաջ անցնելով ասենք, որ իր տարբերություն Հիջազի և Իրաքի, որտեղ Հաշիմյան դինաստիան չկարողացավ երկար ժամանակ պահպանել իր գոյությունը և տապալվեց, Անդրիորդանանում, որը 1946 թ. վերակոչվեց Հորդանանի, Հաշիմյան դինաստիան կարողացավ պահպանել իր դիրքերը և մինչև օրս շարունակում է իր ձեռքում պահել երկրի ղեկը՝ որպես կառավարող արքայական դինաստիա:

5. Անդրիորդանանի կարգավիճակի հստակեցումը, պետական սահմանների ճշգրտումը և անգլո–անդրիորդանանյան 1928 թ. պայմանագիրը

Չնայած այն հանգամանքին, որ 1921 թ Կահիրեում գումարված կոնֆերանսում որոշվել էր Անդրիորդանանն առանձնացնել անգլիական ենթամանդատային Պաղեստինից և կազմավորել որպես առանձին միավոր՝ դարձյալ որպես անգլիական ենթամանդատային տարածք, իսկ Ազգերի լիգայի խորհուրդը 1922 և 1923 թթ ընդունել էր համապատասխան որոշումներ, այդուհանդերձ, Անդրիորդանանը որոշ իմաստով կախված էր օդում, քանի որ չկար նրա հետ կնքված որևէ պայմանագիր, որն իրավաբանորեն ձնակերպեր նրա հարաբերությունները Մեծ Բրիտանիայի հետ: Իսկ առանց դրա հստակ չէր նաև նրա կարգավիճակը, որովհետև մանդատն ինքնին վերցրած որոշ իմաստով ընդհանուր հաս-

կացողություն էր, որը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պահանջում էր հստակեցում՝ նրա և մանդատատեր պետության փոխհարաբերությունների հարցում, և մանդատի գործադրության կամ իրականացման համապատասխան ձևի կիրառում: Անհրաժեշտ էր սահմանել ենթամանդատային երկրի և մանդատատեր երկրի իրավունքներն ու պարտականությունները, այսինքն՝ լուծել կարգավիճակի հարցը: Մի դեպքում մանդատը կարող էր իրականացվել հանրապետական վարչակարգ հաստատելու ձևով՝ պրեզիդենտի գլխավորությամբ, ինչպես դա իրագործվեց Ֆրանսիայի կողմից «իր» ենթամանդատային տարածքները հանդիսացող Սիրիայում և Լիբանանում: Մեկ այլ դեպքում դա կարող էր լինել թագավորություն՝ իր միապետով, ինչպես Իրաքը, որտեղ թագավորի կողքին մշտապես կանգնած էր բրիտանական գլխավոր կոմիսարը, առանց որի թագավորը ոչինչ չէր կարող անել, և դրա վերաբերյալ կնքվել էր հատուկ պայմանագիր Մեծ Բրիտանիայի և Իրաքի միջև:

Տիպաբանորեն մանդատային կառավարման երկրորդ մոդելին էր պատկանում Անդրհորդանանը՝ իր միապետ–էմիրով: Սակայն դա ամրագրված չէր համապատասխան պայմանագրով:

Այդ հարցը քննարկման առարկա դարձավ Անդրհորդանանի և Մեծ Բրիտանիայի միջև և իր որոշակի լուծումը ստացավ 1923 թ.: Ապրիլ ամսին բրիտանական կառավարությունը հայտարարեց, որ ինքը պատրաստ է Անդրհորդանանը ճանաչել որպես ինքնավար էմիրություն, իսկ Աբդալլահին՝ նրա էմիր, եթե Անդրհորդանանում հաստատվի սահմանադրական վարչակարգ և Մեծ Բրիտանիայի հետ ստորագրվի հատուկ պայմանագիր, որտեղ կամրագրվեն վերջինիս տիրապետող իրավունքները: Աբդալլահը համաձայնվեց այդ տեսադրույթի հետ, և 1923 թ. մայիսի 15–ին Մեծ Բրիտանիայի և Անդրհորդանանի միջև ստորագրվեց համապատասխան պայմանագիր. Մեծ Բրիտանիան ճանաչում էր Անդրհորդանանը որպես ինքնավար էմիրություն՝ էմիր Աբդալլահի ղեկավարության ներքո· Անդրհորդանանը պարտավորվում էր իր քաղաքականությունը մշակել, համաձայնեցնել և կոորդինացնել Մեծ Բրիտանիայի հետ և թույլատրել բրիտանական զինված ուժերի գտնվելը Անդրհորդանանում: Մեծ Բրիտանիան պարտավորվում էր շարունակել սուբսիդիա տրամադրել Անդրհորդանանին և ապահովել նրա անվտանգությունը:

Անդրհորդանանը գտնվելու էր բրիտանական վերահսկողության ներքո, և նրա էմիրը պարտավոր էր բոլոր հարցերը նախօրոք համաձայնեցնել բրիտանական գլխավոր կոմիսարի հետ, որի նստոցը Երուսաղեմն էր:

էմիր Աբդալլահն այնքան էր խանդավառված այդ պայմանագրով, որ գիտակցաբար, թե անգիտակցաբար, 1923 թ. պայմանագրով սահմանված «ինքնավարությունը» շփոթում էր «անկախության» հետ և չէր խորշում օգտագործել «անկախություն» եզրը: Սակայն միայն նա չէր, որ այդպես էր վարվում: Անգլիական մի շարք հրատարակություններում, այդ թվում և մեր կողմից արդեն նշված «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա. 1969–1970» հանրագիտարանային բնույթի հրատարակության մեջ ուղղակի գրված է. «1923 թ. մայիսի 15–ին Բրիտանիան պաշտոնապես Անդրհորդանանը ճանաչեց որպես **անկախ** սահմանադրական պետություն՝ էմիր Աբդալլահի կառավարման ներքո»: Դա, իհարկե, չէր համապատասխանում իրականությանը, քանի որ Անդրհորդանանը հանդիսանում էր Ազգերի լիգայի կողմից արդեն հաստատված բրիտանական ենթամանդատային երկիր, իսկ նրա էմիրը՝ Աբդալլահը, պարտավոր էր բոլոր հարցերը համաձայնեցնել բրիտանական գլխավոր կոմիսարի հետ: Ընդ որում՝ բրիտանական այդ հրատարակության մեջ տրված վերոնշյալ բնութագրության մեջ կա ակնհայտ հակասություն, քանի որ «անկախության» մասին բառերին անմիջապես հաջորդում են **«with British tutelage»** բառերը, որը նշանակում է «բրիտանական խնամակալությամբ» կամ «բրիտանական խնամակալության ներքո», այսինքն՝ անկախություն բրիտանական խնամակալության ներքո, ինչն անհեթեթություն է:

Այդուհանդերձ, 1923 թ պայմանագրով որոշակի հստակեցում մտցվեց Անդրհորդանանի կարգավիճակի մեջ, և գծվեցին այն շրջանակները, որոնց սահմաններում կարող էր «ինքնուրույն» գործել Աբդալլահը՝ որպես Անդրհորդանանի էմիր:

Աբդալլահի կարևոր քայլերից մեկը հանդիսացավ երկրի մայրաքաղաքի հարցի լուծումը: Նա Ամմանը հռչակեց Անդրհորդանանի մայրաքաղաք և կառավարական հաստատությունները Սալթից տեղափոխեց այդ փոքրիկ քաղաքը: Ամմանը պատմական տարբեր շրջաններում կրել է տարբեր անուններ՝ մ.թ.ա. XIII դարում կոչվել է Ռաբբաթ Ամմոն, որից և մակաբերվում է Ամման անվանակոչումը: Հետագայում այդ տարածքը նվաճած եգիպտոսի տիրակալ Պտղոմեոս II Ֆիլադելֆուսն այն իր հունական անունով կոչեց Ֆիլադելֆիա: Նա այդ անունով մտնում էր Նաբաթիական թագավորության կազմի մեջ մինչև մ.թ. 106 թ., երբ Հռոմը նվաճեց այդ թագավորությունը, և Ֆիլադելֆիան հայտնվեց Հռոմի տիրապետության տակ և ինը այլ քաղաքների հետ կազմեց Դեկապոլիս՝

Տասը քաղաքների լիգա կամ միություն: Վերջին անգամ քաղաքն իր անունը փոխեց և կոչվեց Ամման՝ Ղասանյանների տիրապետության շրջանում: Այդ անունը պահպանվում է մինչև օրս: Երկար ժամանակ դա մի փոքր գյուղ էր և ոչնչով աչքի չէր ընկնում մինչև 1887 թ., երբ այնտեղ բնակություն հաստատեցին Կովկասից արտագաղթած չերքեզները, որոնք բազմամարդ դարձրեցին այդ բնակավայրը և նրան որոշ աշխուժություն հաղորդեցին: Ամմանի զարգացմանը նպաստեց նաև Հիջազի երկաթուղու կառուցումը, որը Դամասկոսը միացրեց Մադինային, և Ամմանը դարձավ դրա կայաններից մեկը ու կարևոր կենտրոն Մեքքա և Մադինա մուսուլմանների ուխտագնացության ճանապարհին:

Այդուհանդերձ, երբ Ամմանը 1921 թ. Աբդալլահի որոշումով դարձավ նորաստեղծ էմիրության կենտրոնը, նա շարունակում էր մնալ հետամնաց գյուղաքաղաք: Այնտեղ անգամ չկար որևէ շինություն, որը գոնե հեռավոր կերպով հիշեցներ պալատ և իբրև այդպիսին ծառայեր էմիրին՝ որպես կեցության վայր: Այդ պատճառով էլ Աբդալլահը Սալթից Ամման տեղափոխվելուց հետո սկզբնական շրջանում հաստատվեց երկաթուղային կայարանում:

Աբդալլահի և նրա թիկունքում կանգնած բրիտանական մանդատային իշխանությունների առջև ծառացած մյուս կարևոր խնդիրը Անդրհորդանան էմիրության սահմանների ճշգրտման հարցն էր:

Սահմանների հարցը զուտ անդրհորդանանյան հարց չէր: Այդ հարցն իր ողջ բարդություններով կանգնեց համարյա արաբական բոլոր երկրների առջև, որը թեև իր արդարացումը չունի, բայց ունի իր բացատրությունը, որը գալիս է արաբների պատմությունից, ավելի ստույգ՝ այդ պատմության յուրահատկություններից: Արաբական խալիֆայության շրջանում արաբներով բնակեցված բոլոր շրջանները թեև կրում էին տարբեր անուններ՝ Սիրիա, Միջագետք–Իրաք, Լիբանան, Եգիպտոս, Պաղեստին և այլն, և այլն, այդուհանդերձ, չէին համարվում տարբեր երկրներ, այլ կազմում էին մեկ արաբական պետություն, որը կոչվում էր խալիֆայություն: Հետևաբար այդ շրջանների միջև չկային և չէին էլ կարող լինել բաժանարար սահմաններ՝ պետական սահմանների իմաստով: Օսմանյան տիրապետության շրջանում նրանք շարունակում էին մնալ տարածաշրջաններ, որոնք կոչվում էին վիլայաթներ, այսինքն՝ նահանգներ, ինչպես, ասենք, Դամասկոսի, Հալեբի, Բաղդադի, Մոսուլի և այլն, որոնք նույնպես չէին հանդիսանում նրանց միջև պետական բաժանարար գծեր: Դրան պետք է ավելացնել ևս մեկ կարևոր հանգամանք՝

քոչվորական ցեղերի առկայությունը և դրա հետ կապված արաբական ավանդույթն առ այն, որ նրանք անընդհատ գտնվում էին շարժման մեջ և իրենց գոյությունը կարող էին պահպանել մի վայրից մյուսը ազատորեն տեղափոխվելու միջոցով՝ փնտրելով արոտավայրեր և ջրի աղբյուրներ: Նրանց համար անհասկանալի էր, անըմբռնելի և անընդունելի ինչ–որ սահմանների գոյությունը, առավել ևս դրանք առանց համապատասխան թույլտվության հատելու արգելքը:

Բայց երբ Առաջին համաշխարհային պատերազմից հետո արաբական մեկ միասնական պետության փոխարեն, որին ձգտում էին արաբները, ձևավորվեցին բազմաթիվ արաբական պետություններ և պետական կազմավորումներ, անմիջապես հառնեց պետական սահմանների հարցը, որի շրջանակներում գտնվող տարածքը պատկանում էր միայն ու միայն տվյալ արաբական պետությանը, ուստի և արաբական մյուս պետությունների քաղաքացիները, այդ թվում՝ ցեղերը և ցեղային միությունները, այլևս չէին կարող հատել դրանք հենց այնպես, առանց պաշտոնական թույլտվության՝ վիզայի, և երբ ցանկանային: Այդ պահից արաբական պետությունների միջև ծագեց սահմանների հաստատման և ճշգրտման հարցը, որին նրանք պատրաստ չէին: Ծայր առան վեճերը արաբական համարյա բոլոր երկրների միջև սահմանների հարցի շուրջը, որը մինչև այժմ իրեն զգացնել է տալիս: Ընդ որում՝ նրանցից յուրաքանչյուրը բերում էր իր «պատմական» անհերքելի ապացույցները: Եվ տվյալ դեպքերում, ինչպես միշտ է պատահում, իր փաստարկների մեջ «իրավացի» էր լինում այն պետությունը, որն ավելի ուժեղ էր, կամ որը վայելում էր օտարերկրյա որևէ ուժեղ կամ ազդեցիկ պետության աջակցությունն ու հովանավորությունը:

Ահա այս շրջանակներում պետք է դիտարկել նաև Անդրհորդանանի սահմանների ճշգրտման խնդիրը: Այստեղ խոսքը վերաբերում էր Անդրհորդանանի հարավային սահմաններին՝ Մաանի շրջանին և Աքաբային: Այդ տարածքները արաբների տիրապետության տակ անցան 1918 թ., երբ Ֆեյսալի արաբական ապստամբական բանակը անգլիական զորքերի օժանդակությամբ դրանք ազատագրեց օսմանյան տիրապետությունից, որի տակ նրանք արաբական այլ տարածքների հետ միասին գտնվում էին համարյա 400 տարի: Դրանից անմիջապես հետո Մաանը և Աքաբան միացվեցին Հիջազի թագավորությանը, որի թագավորն էր Ֆեյսալի և Աբդալլահի հայրը՝ Հուսեյն իբն Ալին: Դա դիտվեց մի-

անգամայն բնական: Այսպիսով՝ այդ երկու շրջանները 1918–1924 թթ. գտնվում էին Հիջազի Հուսեյն թագավորի տիրապետության տակ:

Սակայն դա այնքան էլ դուր չէր գալիս Անգլիային, որը նախընտրում էր այդ երկու շրջանները տեսնել Անդրհորդանանի կազմում, որը գտնվում էր բրիտանական մանդատային տիրապետության ներքո, քան թե Հիջազի կազմում, որն անկախ էր Անգլիայից, և որի թագավոր Հուսեյնը դեռևս վերջնականապես չէր հրաժարվել արաբական թագավորություն ստեղծելու և նրա վեհապետը դառնալու գաղափարից, ինչին կտրուկ դեմ էր Անգլիան:

Աբդալլահը, տեղի տալով բրիտանական հորդորներին, որոնք շատ հաճախ բացահայտ ճնշման բնույթ էին կրում, այդ հարցը բարձրացրեց իր հոր՝ Հիջազի թագավոր Հուսեյնի առջև, երբ վերջինս 1924 թ. մարտ ամսին այցելեց Անդրհորդանան. Հուսեյնը, անսալով որդու, որի հարկի տակ էր գտնվում, խնդրանքներին, համաձայնվեց, որ Մաանան և Աքաբայի ծոցի ափում գտնվող Աքաբա նավահանգիստ–քաղաքը մտցվեն Անդրհորդանանի կազմի մեջ Դիմելով այդ զիջմանը, Հուսեյնը, սակայն, հրաժարվեց իր որոշումը ձևակերպել որևէ պայմանագրով և դրան տալ գրավոր իրավական բնույթ: Այսինքն՝ դա բանավոր համաձայնություն էր, որին տրվեց ներընտանեկան համաձայնության բնույթ, որ ձեռք էր բերվել հոր և որդու միջև:

Հուսեյնի այդ քայլը դժվար թե կարելի է համարել պատահականություն կամ «մոռացկոտության» արդյունք. Մենք համոզված ենք, որ դա արված էր միտումնավոր կերպով, որով Հուսեյնն իր ձեռքերը վերջնականապես կապված չէր համարում տարածքային հարցում, ցանկացած պահի կարող էր իր որոշումը փոխել և Անգլիայի համար բարդություններ ստեղծել ու նրան տհաճություններ պատճառել: Հիջազի թագավորը Անգլիային, ինչպես նաև Ֆրանսիային, ներել չէր կարող. որ նրանք դրժեցին պատերազմի տարիներին արաբներին տրված խոստումները արաբական երկրների անկախության և արաբական միասնական պետություն ստեղծելու վերաբերյալ, չթողեցին. որ նա դառնա Արաբական երկրների թագավոր, ստիպեցին, որ նա բավարարվի միայն Հիջազի թագավորը լինելով, իսկ արաբական երկրները մանդատի ձևով բաժան–բաժան արեցին և իրենց տիրապետությունը հաստատեցին:

Այդ հարցը բոլորովին այլ բնույթ կրեց, երբ 1924 թ. սեպտեմբերին սկսվեց պատերազմ Նաջդի և Հիջազի միջև, որի արդյունքում Հիջազը պարտվեց, իսկ Հուսեյնը կորցրեց իր գահը: Թագազուրկ Հուսեյնը, լքե-

լով Մեքքան և ընդհանրապես Հիջազը, կանգ առավ Աքաբայում: Ստեղծված պայմաններում շատ արագ գործեց Անգլիան: Նա մի կողմից Հուսեյնին արտաքսեց Աքաբայից Կիպրոս, իսկ մյուս կողմից կանխեց Սաանի և Աքաբայի գրավումը սաուդյանների կողմից: Անդրհորդանանյան զորքերը անգլիացիների աջակցությամբ մտան Հիջազ և գրավեցին Սաանն ու Աքաբան, որոնք էմիր Աբդալլահի դեկրետով դարձան Անդրհորդանանի անբաժան մասը: Ելնելով նախորդ դառը փորձից՝ Սաանի և Աքաբայի անցումը Անդրհորդանանին ձևակերպվեց պայմանագրով, որը կնքվեց Անդրհորդանանի և Հիջազի միջև 1925 թ. հունիսի 5–ին: Իբն Սաուդը, որն արդեն կրում էր Նաջդի և Հիջազի թագավորի տիտղոսը, հարկադրված էր հաշտվել այդ նոր իրողության հետ. Իսկ էմիր Աբդալլահին մնում էր կատարել վերջին ձևականությունը՝ անդրհորդանանյան դրոշը բարձրացնել Սաանի վրա, ինչն էլ նա կատարեց 1925 թ. հուլիսի 16–ին՝ Սաան իր այցելության ժամանակ:

Ավարտելով այս հարցի քննարկումը՝ հարկ է նշել, որ Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը՝ կանխել Սաանի և Աքաբայի անցումը Սաուդյան Արաբիային, պայմանավորված էր ստրատեգիական բնույթի հանգամանքներով: 1920–ական թվականների սկզբներից Մեծ Բրիտանիան ձեռնամուխ եղավ Մերձավոր Արևելքում իր գաղութային, քաղաքական և ռազմական համակարգի կառուցմանը, որը պետք է ապահովեր նրա գաղութային տիրապետության անսասանությունը ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող այդ տարածաշրջանում: Անդրհորդանանին, որը գտնվում էր բրիտանական տիրապետության տակ և ամեն առումով նրանից մեծապես կախվածության վիճակում էր գտնվում կարևոր տեղ էր հատկացված այդ համակարգի ստեղծման և ամրապնդման շղթայում: Մինչդեռ Սաուդյան Արաբիան չէր գտնվում բրիտանական ազդեցության ոլորտում և բացահայտ պայքար էր մղում Արաբական թերակղզու բոլոր տարածքները միավորելու և միասնական պետություն ստեղծելու համար, որն իր մի ծայրով ուղղված էր բրիտանական գաղութային նկրտումների դեմ: Այդ պատճառով Անգլիան շահագրգռված էր Անդրհորդանանի որոշ տարածքային ընդարձակման մեջ, որն ինքնաբերաբար նշանակում էր բրիտանական ազդեցության հետագա ընդլայնում և ամրապնդում: Իսկ եթե հաշվի առնենք, որ Սաանը գտնվում էր ստրատեգիական նշանակություն ունեցող Հիջազի երկաթուղու ավարտամասում, իսկ Աքաբան Աքաբայի ծոցի միջոցով ապահովում էր ելք դեպի Կարմիր ծով, ապա հասկանալի կդառնան Սա-

ան ը Աքաբան Անդրհորդանանի կազմում տեսնելու բրիտանական քաղաքականության դրդապատճառները:

Էմիր Աբդալլահին և անգլիական մանդատային իշխանություններին, վերոնշյալ խնդիրների հետ միասին, մեծապես հուզում էր նաև երկրի ներսում կայուն իրավիճակ ստեղծելու հիմնախնդիրը:

Աբդալլահը և Անգլիան, ինչպես արդեն նշվել է, ծեռնամուխ եղան ոստիկանական ուժերի կազմավորմանը, որոնք անգլիական զորքերի հետ միասին պատժիչ ֆունկցիաներ էին կատարում և ճնշում անհնազանդության ամեն մի դրսևորում: Իսկ Անդրհորդանանում, իրոք, կուտակվել էր մեծ դժգոհություն՝ կապված անգլիական գաղութային տիրապետության հաստատման հետ: Բազմաթիվ էին ցեղերի անհնազանդության դեպքերը, որոնք երբեմն զինված ելույթների բնույթ էին կրում: 1923 թ. դժգոհ ցեղերի զինված ջոկատները շարժվեցին մայրաքաղաք Ամմանի վրա, սակայն նրանց դիմավորեցին ոչ թե էմիրի կամ անգլիական մանդատային իշխանությունների ներկայացուցիչները, այլ զինված ուժերը, ը անկազմակերպ ցեղային զինված խմբերը պարտություն կրեցին:

Ներքին անվտանգության և բնակչությանը հնազանդ պահելու գործում բացառիկ դերակատարում ստանձնեց Արաբական լեգեոնը՝ անգլիական սպա Պիկի հրամանատարությամբ, որին տեղացիները կոչում էին «Պիկ փաշա»: Այն համալրվում էր տեղացիներից, առաջին հերթին՝ քոչվոր բեդվիններից. Նրա համալրումը, զինումը, մարզումը իրականացնում էին անգլիացիները: Հետագայում Պիկին կամ «Պիկ փաշային» Արաբական լեգեոնի հրամանատարի պաշտոնում փոխարինեց անգլիական գեներալ Ջոն Բագոտ Գլաբը, որը նույնպես հորդանանցիների կողմից կոչվում էր «Գլաբ փաշա»: Գլաբի երկարատև հրամանատարության շրջանում ավելի մեծացավ Արաբական լեգեոնի դերը Անդրհորդանանի կյանքում:

Արաբական լեգեոնն իր վերահսկողությունը սահմանեց առաջին հերթին քոչվորական ցեղերի վրա, որոնք համարվում էին հասարակության ամենաանհնազանդ խավը: Նրա պարտականությունների մեջ էր մտնում հետևել ցեղերի տեղաշարժերին, միջամտել միջցեղային հարաբերություններին, կանխել բախումները նրանց միջև և ի հարկին ռազմական ուժի գործադրմամբ նրանց պահել հնազանդության մեջ: Արաբական լեգեոնի օգնությամբ և անդրհորդանանյան–անգլիական համատեղ գործողությունների արդյունքում հնարավոր եղավ 1927–1928 թթ.

ճնշել մի շարք ելույթներ՝ ուղղված բրիտանական տիրապետության և Աբդալլահի ու տեղական իշխանությունների քաղաքականության դեմ:

Էմիր Աբդալլահը միաժամանակ ձգտում էր Արաբական լեգեոնի միջոցով ամրապնդել պետական իշխանությունն ամբողջ երկրում և բարձրացնել իր հեղինակությունը:

Այդ բոլորը՝ բրիտանական վերահսկողության սահմանումը անդրհորդանանյան ռազմական ուժերի, ֆինանսների, հարկերի գանձման և ծախսերի, բյուջեի և տնտեսության վրա, ստեղծեցին նոր իրադրություն, որը պահանջում էր դրանց պայմանագրային ձևակերպումը: Դրանում շահագրգռված էր առաջին հերթին Անգլիան, բայց դրանում իր շահագրգռվածությունն ուներ նաև էմիր Աբդալլահը:

1928 թ. փետրվարի 20–ին Անգլիայի և Անդրհորդանանի միջև ստորագրվեց սպասվելիք պայմանագիրը, որն իր բնույթով գաղութային, անհրավահավասար պայմանագիր էր: Այն, ի տարբերություն 1923 թ. պայմանագրի, ավելի համապարփակ էր, և նրանում ավելի հստակ էին ձևակերպված կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Բացի դրանից, 1923 թ պայմանագիրը կնքելիս Անդրհորդանանի ստեղծումը՝ որպես ինքնավար և ենթամանդատային կազմավորում, պայմանավորված էր այդ պայմանագրի ընդունումով: Մինչդեռ 1928 թ. պայմանագիրը կնքելու ժամանակ արդեն ավարտվել էր Պաղեստինի կազմից Անդրհորդանանի դուրս գալու գործընթացը, և Անդրհորդանանն արդեն որոշ չափով կայացել էր որպես էմիրություն:

1928 թ. պայմանագրի առաջին և ամենակարևոր կետերից մեկը վերաբերում էր Անդրհորդանանում օրենսդիր և վարչական իշխանությունների իրականացման հարցին: Այդ կապակցությամբ պայմանագրում ամրագրված էր, որ «օրենսդրական և վարչական իշխանությունը, որը վստահված է Նորին Բրիտանական Մեծությանը՝ որպես Պաղեստինի մանդատատեր երկրի, ենթամանդատային տարածքի այն մասում, որը հայտնի է Անդրհորդանան անվամբ, կիրագործվի Նորին բարձրության էմիրի կողմից»: Օրենսդիր և վարչական իշխանությունը «զիջելով» էմիրին՝ Անգլիան, ըստ պայմանագրի, չափազանց լայն իրավունքներ էր ստանում Անդրհորդանանի վրա իր տիրապետությունն ամրապնդելու ուղղությամբ: Մասնավորապես, Անդրհորդանանի էմիրը պարտավորվում էր արտաքին քաղաքականության, ֆինանսների, հարկերի, օտար քաղաքացիների իրավասության և խղճի ազատության հարցե-

րում ղեկավարվել Ամմանում բրիտանական ռեզիդենտի և նրա պետի՝ Երուսաղեմում բրիտանական գլխավոր կոմիսարի, «խորհուրդներով»:

Մեծ Բրիտանիան մեծ լիազորություններ էր ձեռք բերում նաև զինվորական բնագավառում: Անգլիան իրավունք էր ստանում Անդրհորդանանում տեղադրել իր զորքերը, որոնք կոչված էին նրա անվտանգությունն ապահովելու: Ըստ որում՝ Անդրհորդանանը պարտավորվում էր իր վրա վերցնել անգլիական զորքերի պահպանման հետ կապված ռազմական ծախսերի մի մասը: Անգլիան կարող էր ազատորեն իր զորքերը տեղաշարժել Անդրհորդանանի տարածքով, երկրում պահեստավորել ռազմական տեխնիկա, զինամթերք, պահեստային մասեր, վառելանյութ և անգլիական բանակի համար այլ անհրաժեշտ նյութեր ու իրեր: Նա իր վրա էր վերցնում նաև անդրհորդանանյան բանակի, որը պետք է հավաքագրվեր տեղական բնակչությունից, ստեղծման, զինման և մարզման «հոգսը»:

Ակնհայտ է, որ անգլո–անդրհորդանանյան պայմանագիրն իր բնույթով անհրավահավասար էր և կոչված էր ամրապնդելու Անգլիայի գաղութային դիրքերը:

Պայմանագիրը միանշանակ չընդունվեց անդրհորդանանցիների կողմից: Էմիրի անմիջական շրջապատը, որը բաղկացած էր ֆեոդալական և ցեղային ավագանու սերուցքից, 1928 թ պայմանագիրն ընդունեց գոհունակությամբ, քանի որ այն ամրապնդում էր նրա դիրքերը էմիրության կառավարման համակարգում: Շեյխերի և բեդվինական ցեղապետների այն շերտը, որը չէր պատկանում վերնախավին, պայմանագիրն արտաքուստ ընդունեց զուսպ, բայց ներքուստ՝ վրդովմունքով: Մտավորականությունը, որը թեև սակավաթիվ էր, և միջին խավերին պատկանող անդրհորդանանցիները պայմանագիրն ընդունեցին անթաքույց դժգոհությամբ: Ինչ վերաբերում է ժողովրդական զանգվածներին՝ քաղաքաբնակ անդրհորդանանցիներին, որոնց մեջ զգալի էր արհեստավորների և առևտրականների տեսակարար կշիռը, ֆելլահներին և անասնապահ քոչվոր բեդվինական գյուղական բնակչությանը, ապա անհրավահավասար պայմանագրի ստորագրումը Մեծ Բրիտանիայի հետ առաջացրեց նրանց խոր վրդովմունքն ու դժգոհությունը: Երկրում, նրա տարբեր քաղաքներում և գյուղական վայրերում ծայր առած բողոքի շարժումը գլխավորեց դեռևս 1927 թ. հիմնված ժողովրդական կուսակցությունը, որի հիմնադիր–ղեկավարն էր Նաջի փաշա ալ–Ազիմին: Կուսակցությունը անդրհորդանանցիներին դիմեց կոչով՝ ուղղված պայ-

II. ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ: ՄԱՆԴԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՇԻՄՑԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ (1928–1946 թթ.)

1. Իրադրությունը Անդրհորդանանում 1930–ական թվականներին

1930–ական թվականներին երկրի տնտեսական զարգացման մեջ էական փոփոխություններ տեղի չունեցան, և Անդրհորդանանը շարունակում էր մնալ տնտեսապես հետամնաց երկիր: Այդ իրադրությունը խորապես անհանգստացնում էր Անդրհորդանանի առաջադիմական ուժերին, աշխատավորությանը, մտավորականությանը և նոր սաղմնավորվող ազգային բուրժուազիային, որոնք 30–ական թվականներին թեև վեհերոտ, բայց, այնուամենայնիվ, իրենց դժգոհությունն էին հայտնում և որոշակի պահանջներ ներկայացնում: Այդ առումով ուշագրավ են Ազգային կոնգրեսի գործադիր կոմիտեի կողմից 1933 թ. առաջադրած պահանջները՝ նպաստել ազգային տնտեսության զարգացմանը, հարկատու դարձնել օտարերկրյա արդյունաբերական ու առևտրական ընկերություններին և այլն:

1930–ական թվականներին շարունակվում էր Անգլիայի դիրքերի հետագա ամրապնդման գործընթացը: Դա իրագործվում էր նախ և առաջ անհնազանդ բեդվիններին հնազանդեցնելու և նրանց վրա բրիտանական վերահսկողություն սահմանելու միջոցով: 1930 թ. էմիր Աբդալլահը բեդվինական շրջանների կառավարումը փոխանցեց անգլիական բանակի սպա Ջոն Բագոտ Գլաբին: Վերջինս 1931 թ. ստեղծեց «Անապատի պահազոր» ոստիկանական ուժերը, որոնք հավաքագրվում էին բեդվիններից, այդ թվում և հարևան արաբական երկրների բեդվիններից. Նա հիմնականում իրականացնում էր պատժիչ գործողություններ բեդվինների շրջաններում, ճնշում անհնազանդություն ցուցաբերած բեդվինների ելույթները, վերահսկում քարավանային երթուղիները. ջրի աղբյուրները և այլն: Գլաբ փաշան այդ բոլորի հետ միասին լայնորեն կիրառում էր նաև ցեղապետներին կաշառելու և այդ ուղիով նրանց հնազանդ պահելու տակտիկան: Ընդհանրապես բեդվինների հարցը շատ սուր էր դրված Անդրհորդանանում և կարևոր տեղ էր գրա-

վում ոչ միայն անգլիական մանդատային իշխանությունների, այլև էմիրի ներքին քաղաքականության մեջ: Բավական է նշել, որ բեդվիններով բնակեցված շրջաններն առանձնացվել էին որպես հատուկ գոտի և 1929 թ. դրվել էին Բեդվինների վերահսկողության խորհրդի կառավարման ներքո, որը գլխավորում էր էմիր Աբդալլահը: 1930 թ. այդ տարածքը անցավ Գլաբի հսկողության տակ, իսկ 1933 թ. նա պաշտոնապես դարձավ բեդվինական շրջանների կառավարիչ: Օգտվելով իրեն տրված լայն լիազորություններից՝ նա, ինչպես նշվեց, վերահսկողություն սահմանեց արոտավայրերի և ջրի աղբյուրների օգտագործման, ցեղերի տեղաշարժերի և քարավանային ուղիների վրա և կաշառքներով ու խոստումներով իր կողմը գրավեց մի շարք ցեղապետների: Ջուգահեռաբար Գլաբը դիմում էր խիստ պատժիչ միջոցների անհնազանդ ցեղերի և շեյխերի նկատմամբ՝ այդ նպատակով օգտագործելով «Անապատի պահազորի» ջոկատները:

Գլաբի ֆունկցիաները միայն դրանով չէին սահմանափակվում: Բրիտանական իշխանությունների կողմից 1930 թ. գործուղվելով Անդրհորդանան՝ Գլաբը միացավ Արաբական լեգեոնին և գրավեց բարձր դիրք նրա հրամանատարության մեջ, իսկ 1938 թ. դարձավ նրա գլխավոր հրամանատարը: Այսպիսով՝ իր ձեռքում կենտրոնացնելով «Անապատի պահազորի» և Արաբական լեգեոնի հրամանատարությունը և դառնալով բեդվինական շրջանների կառավարիչ, բրիտանական գեներալ Ջոն Բագոտ Գլաբ փաշան վերածվեց Անդրհորդանանի ամենազոր ու ամենաազդեցիկ անձնավորությանը, առանց որի գիտության ու համաձայնության էմիր Աբդալլահը ոչինչ չէր կարող անել:

Բրիտանական մանդատային իշխանությունները, իրենց ձեռքում կենտրոնացնելով վերահսկողական ամբողջ լծակները, միաժամանակ որոշ չափով մեղմացրին իրենց քաղաքականությունը և մասամբ ընդլայնեցին անդրհորդանանյան իշխանությունների իրավասությունները: Նրանք 1934 թ մի համաձայնագիր ստորագրեցին Անդրհորդանանի հետ, որով վերջինիս իշխանություններն իրավունք էին ստանում հյուպատոսական ներկայացուցչություններ բացել արաբական երկրներում և հյուպատոսական գործառույթներ իրականացնել: Այդ քայլը, իհարկե, չէր սասանում բրիտանական մենաշնորհը Անդրհորդանանի արտաքին քաղաքականության բնագավառում: Նախկինի պես նա պահպանում էր իր վերահսկողությունը էմիրության արտաքին քաղաքականության վրա, որը ամրագրված էր 1923 և 1928 թթ. պայմանագրերով.

Այսուս «զիջումը» տեղի ունեցավ կառավարության հարցում: Անդրհորդանանն ըստ էության կառավարություն չուներ նրա դասական իմաստով: Այդ գործառույթը դրված էր 1929 թ. ստեղծված Օրենսդիր ժողովի վրա: Մեծ Բրիտանիան 1939 թ. մայիսին համաձայնվեց, որ Օրենսդիր ժողովը վերափոխվի կաբինետի, այսինքն՝ վերակազմավորվի կառավարության՝ իր համապատասխան նախարարներով ու բյուրոկրատական ապարատով, որոնցից յուրաքանչյուրն ուներ գործունեության և պատասխանատվության իր կոնկրետ ոլորտը:

1930–ական թվականներին բրիտանական մանդատային իշխանությունների գործունեության մեջ զգալի տեղ էր գրավում ստրատեգիական բնույթի ճանապարհների կառուցումը, որը Անգլիան իրականացնում էր իր դիրքերն ամրապնդելու և զորքերի արագ տեղաշարժն ապահովելու նպատակով: Դա շատ կարևոր էր ճանապարհազուրկ այդ երկրի համար, որից, բնականաբար, օգտվում էր նաև Անդրհորդանանը: 1926–1935 թթ. կառուցվեց 1200 կմ երկարությամբ ճանապարհ, իսկ 1936–1941 թթ. կառուցվեց Բաղդադ–Հայֆա ավտոմոբիլային մայրուղին: Միաժամանակ «Իրաք պետրոլեումը», որտեղ տիրապետող էր անգլիական կապիտալը, 1932–1934 թթ. Անդրհորդանանի տարածքի վրայով կառուցեց Կիրկուկ–Հայֆա նավթամուղը: Այս և նման շինությունների, ինչպես նաև ռազմական օբյեկտների շինարարության ու ճշիչ ապարատի պահպանման ծախսերի ամբողջ բեռն ընկած էր բնակչության ուսերին, որից գանձվող անուղղակի հարկերը 1939–1940 թթ. կազմում էին Անդրհորդանանի բյուջետային հասույթների մոտ 77 տոկոսը:

Այս շրջանում նկատվում է որոշ աշխուժացում Անդրհորդանանի հասարակական–քաղաքական կյանքում, որի արտահայտություններից էր նաև զանազան գաղտնի խմբակների, ընկերությունների և միությունների առաջացումը: Կազմակերպվում էին նաև քաղաքական կուսակցություններ: 30–ական թվականներին գոյություն ունեին և գործում էին Հիզբ ալ–Իսթիկլյալ և Հիզբ ալ–Շաաբ կուսակցությունները: Ձևավորվում էին նաև արհմիութենական կազմակերպություններ, թեև նրանք զրկված էին լեգալ գործելու իրավունքից:

Անդրհորդանանի քաղաքական կյանքի զարգացման վրա զգալի ազդեցություն ունեցավ Պաղեստինում ծավալված ազգային–ազատագրական շարժումը, մասնավորապես 1936–1939 թթ. հուժկու հակաիմպերիալիստական ելույթները: Անդրհորդանանի բնակչությունը լայն աջակցություն և օգնություն էր ցույց տալիս պաղեստինցիներին: Շատ

հաճախ անդրհորդանանցի բեդվինների զինված ջոկատներն անցնում էին սահմանը, միանում պաղեստինյան իրենց եղբայրներին և զենքը ձեռքներին պայքարում անգլիական գաղութարարների դեմ: Իսկ երբ այդ պայքարն ընդունեց պարտիզանական պատերազմի ձև և տարածվեց նաև Անդրհորդանանի վրա, շատ անդրհորդանանցիներ ուղղակիորեն մասնակցեցին այդ պարտիզանական շարժմանը, որի կարևոր կենտրոններից մեկը Աջլունի լեռնային շրջանը դարձավ:

Անդրհորդանանցիների մասնակցությունը պաղեստինյան ազգային–ազատագրական շարժումներին վկայում էր, որ Անդրհորդանանն ավելի ու ավելի էր ներգրավվում համաարաբական քաղաքական իրադարձությունների մեջ, և ակտիվանում էր նրա դերակատարումը արաբական աշխարհում:

2. Անդրհորդանանը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ (1939–1945 թթ.)

Երբ 1939 թ. սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը, էմիր Աբդալլահը հայտարարեց, որ Անդրհորդանանը կանգնած է իր դաշնակցի՝ Մեծ Բրիտանիայի կողքին և պատրաստ է կատարել անգլո–անդրհորդանանյան պայմանագրերից բխող իր բոլոր պարտավորությունները: Նա պաշտոնապես հայտարարեց, որ Մեծ Բրիտանիայի տրամադրության տակ է դնում իր բոլոր կարողությունները: Անդրհորդանանի բոլոր ցամաքային, ջրային ուղիները և կապի հանգույցներն անցան անգլիացիների տնօրինության տակ:

Անգլիան և Անդրհորդանանը, բավարար չնկատելով գոյություն ունեցող պայմանագրերով սահմանված համագործակցությունը և պարտավորությունները, 1941 թ. հունիսի 19–ին եկան համաձայնության առ այն, որ 1928 թ. անգլո–հորդանանյան պայմանագիրը լրացվի ևս մեկ կարևոր հոդվածով: Այդ հավելյալ հոդվածը Անգլիային թույլ էր տալիս Անդրհորդանանում պահել, կազմավորել և վերահսկել «այնպիսի քանակությամբ զորք, որքան որ բրիտանական կառավարության կարծիքով անհրաժեշտ կլինի երկրի պաշտպանության համար»: Դա նշանակում էր, որ պատերազմական իրադրության սրացման կամ վտանգի մեծանալու դեպքում Մեծ Բրիտանիան առանց Անդրհորդանանի ղեկավարության լրացուցիչ համաձայնության կարող էր ամբողջ Անդրհորդանա-

նը ներգրավել պատերազմական գործողությունների մեջ՝ մոբիլիզացնելով նրա մարդկային և նյութական ռեսուրսները:

Անդրհորդանանը պատերազմին ուղղակի մասնակցություն չունեցավ, և նրա տարածքում պատերազմական գործողություններ չծավալվեցին, ինչպես Եգիպտոսում և Լիբիայում կամ Սիրիայում ու Լիբանանում: Այնտեղ ռազմական գործողություններ չծավալվեցին նաև իրաքյան տարբերակով[2]:

Սակայն Անդրհորդանանը, այդուհանդերձ, յուրահատուկ ձևով իր մասնակցությունն ունեցավ պատերազմի մերձավորարևելյան թատերաբեմում:

Անգլիան իր ռազմական հակառակորդների դեմ օգտագործեց Արաբական լեգեոնը, որի հրամանատարը, ինչպես նշվել է, բրիտանական գեներալ Ջոն Գլաբն էր: Արաբական լեգեոնը մասնակցեց 1941 թ. մայիս ամսին սկսված անգլո–իրաքյան պատերազմին: Իրաքի ազգային–հայրենասիրական ուժերը երկրի վարչապետ Ռաշիդ Ալի ալ–Գայլանիի և իրաքյան բանակի չորս գնդապետների՝ այսպես կոչված «Ոսկյա քառակուսու» գլխավորությամբ, որոնց ձեռքում էր կենտրոնացված իրաքյան բանակի հրամանատարությունը, ձգտում էին, օգտվելով բարենպաստ միջազգային իրադրությունից, ազատագրվել բրիտանական տիրապետությունից և նվաճել լիակատար անկախություն, որը հանգեցրեց պատերազմի Մեծ Բրիտանիայի և Իրաքի միջև: Պատերազմի սկզբում անգլիական զորքերը Հաբբանիայի շրջանում, որտեղ գտնվում էր բրիտանական ռազմաօդային բազան, հայտնվեցին ծանր դրության մեջ: Անգլիան ստիպված էր դիմել շուտափույթ քայլերի նրանց օգնելու համար: Այդ նպատակով նա օգտագործեց նաև Արաբական լեգեոնը, որը Գլաբ փաշայի գլխավորությամբ նետվեց Իրաք: Արաբական լեգեոնի մի զորախումբ, կազմված 350 զինվորներից, անգլիական առաջին հեծյալ բանակի և էսսեքսի հետևակային գնդի հետ միասին, որոնք միավորվեցին գեներալ–մայոր Կլարկի հրամանատարության ներքո, շարժվեցին Բաղդադի և Հաբբանիայի ուղղությամբ: Իսկ Արաբական լեգեոնի մեկ այլ ռազմական ջոկատ, անցնելով Ջազիրան, Սամարայի մոտ հատեց Մոսուլի երկաթուղին: Կլարկի հրամանատարության ներքո գտնվող զորքերից մի ռազմաջոկատ, որի մեջ էին նաև Արաբական լե-

2 Այդ մասին մանրամասն տես սույն աշխատության III հատորի համապատասխան գլուխները:

գեոնի մարտիկները, մայիսի 18–ին հասավ Հաբբանիա և միացավ անգլիական կայազորին: Նրանք մայիսի 19–ին գրոհեցին Ֆալուջայի վրա և 22–ի երեկոյան գրավեցին ստրատեգիական նշանակություն ունեցող այդ կարևոր քաղաքը: Դա զգալիորեն վատացրեց իրաքյան զորքերի դրությունը: Շարունակելով հարձակումը՝ Կլարկի զորքերը մայիսի 28–ին ընդհուպ մոտեցան Բաղդադին. Դա կանխորոշեց պատերազմի ելքը: Իրաքի բանակը պարտություն կրեց, և Անգլիային հաջողվեց վերականգնել իր տիրապետությունը Իրաքում, որում իր նշանակալի լուման ներդրեց նաև անդրհորդանանյան Արաբական լեգեոնը: Դա նրա առաջին մարտական մկրտությունն էր ոչ թե բեդվին ցեղերի դեմ ուղղված պատժիչ գործողություններում, այլ լուրջ պատերազմական թատերաբեմում:

Մասնակցելով Իրաքի հակաբրիտանական զինված ելույթի ճնշմանը՝ էմիր Աբդալլահը ոչ միայն իր հավատարմությունն էր դրսևորում իր դաշնակցի՝ Մեծ Բրիտանիայի նկատմամբ, որը պատերազմի սկզբնական փուլում հայտնվել էր բավականին բարդ դրության մեջ, այլև հետապնդում էր իր ուրույն, նեղ դինաստիական շահերը:

Իրաքում, ինչպես նշվել է, թագավորում էր նույն Հաշիմյան դինաստիան, որի հիմնադիրը Աբդալլահի կրտսեր եղբայր Ֆեյսալն էր: Պատերազմի նախօրեին Իրաքում մեծ վտանգ կախվեց Հաշիմյան դինաստիայի գլխին, որը սերտորեն կապված էր բրիտանական իշխանությունների հետ և հանդիսանում էր նրա հենարանը Իրաքում. Եվ երբ Ռաշիդ Ալի ալ–Գայլանին ու չորս հրամանատարները ապրիլ ամսին գրավեցին իշխանությունը, ապա իրաքյան զորքերը շրջապատեցին գահի խնամակալ Աբդուլ Իլլահի պալատը: Թագավորը՝ Ֆեյսալ I–ի թոռ Ֆեյսալ II–ը, մանկահասակ էր, ընդամենը 5 տարեկան, և այդ պատճառով էլ հաստատվել էր խնամակալություն մինչև նրա 18 տարեկան դառնալը: Աբդուլ Իլլահը կարողացավ կանացի շորերով ծպտված փախուստ տալ: Հնգամյա Ֆեյսալին նույնպես հաջողվեց հեռանալ Բաղդադից և մոր հետ հաստատվել Իրաքի հյուսիսային շրջաններում: Այսպիսով՝ Հաշիմյան դինաստիայի գոյությունը Իրաքում դրված էր հարցականի տակ, որը, բնականաբար, չէր կարող չանհանգստացնել Անդրհորդանանի էմիր Աբդալլահ իբն Հուսեյն ալ–Հաշիմիին: Նա հասկանում էր, որ Հաշիմյան դինաստիայի տապալումն Իրաքում կթուլացներ նաև նրա դիրքերը Անդրհորդանանում և ամբողջ Արաբական Արևելքում. Համաձայնվելով Արաբական լեգեոնն ուղարկել Իրաք՝ ընդդեմ

Ռաշիդ Ալի ալ–Գայլանիի և ապստամբ իրաքյան բանակի՝ Աբդալլահը պայքարում էր նաև Իրաքի գահի վրա Հաշիմյան դինաստիայի մնալու համար: 1941 թ. դա հաջողվեց, և մանկահասակ Ֆեյսալ II–ը մեծանալով նստեց գահի վրա: 1958 թ. Իրաքում տեղի ունեցած հեղափոխության ժամանակ Հաշիմյան դինաստիան այդուհանդերձ տապալվեց, իսկ Ֆեյսալը II–ը սպանվեց: Բայց Աբդալլահը դա չտեսավ, որովհետև մինչ այդ՝ 1951 թ., Աբդալլահն ինքն արդեն սպանված էր:

Արաբական լեգեոնի երկրորդ մարտական մկրտությունը տեղի ունեցավ 1941 թ. հունիսին Սիրիայում և Լիբանանում վիշիականների դեմ ծավալված պատերազմական գործողությունների ժամանակ: 1941 թ. գարնանը դրությունն այստեղ խիստ լարվել էր: Ֆրանսիայի պարտությունից հետո Վիշի քաղաքում հաստատված ֆրանսիական նոր կառավարությունը մարշալ Պետենի և Լավալի գլխավորությամբ համագործակցում էր հիտլերյան Գերմանիայի հետ: Սիրիայի և Լիբանանի ֆրանսիական մանդատային իշխանությունները պաշտպանում էին Վիշիի կառավարությանը և կատարում նրա հրահանգները: Լուրջ մտավախություն կար, որ Սիրիան և Լիբանանը կարող են վերածվել գերմանական և իտալական ֆաշիստների հենակետի Արաբական Արևելքում: Անգլիան և նրա հետ համագործակցող «Ազատ Ֆրանսիան», որի գլուխ կանգնած էր գեներալ Շառլ դը Գոլը, չէին կարող դա թույլ տալ:

1941 թ. հունիսի 8–ին Արաբական լեգեոնը բրիտանական և գեներալ դը Գոլի կողմից ղեկավարվող ազատֆրանսիական զորքերի հետ համատեղ ներխուժեց Սիրիա և Լիբանան: Մոտ երկու շաբաթ տևած ռազմական գործողությունների ընթացքում դաշնակից զորքերը պարտության մատնեցին ֆաշիստական Գերմանիայի հետ համագործակցող ֆրանսիական զորքերին: Վերջիններս հարկադրված էին հեռանալ, և Սիրիան ու Լիբանանն անցան դաշնակիցների՝ Անգլիայի ու «Ազատ Ֆրանսիայի» տիրապետության տակ:

1942 թ. Արաբական լեգեոնը հայտնվեց Սինայի թերակղզում: Գերմանական զորքերը գեներալ Ռոմելի ղեկավարությամբ լուրջ հաջողությունների էին հասել Եգիպտոսում: Նրանք մոտեցել էին ալ–Ալամայնին: Անգլիական ռազմական հրամանատարությունը պատրաստվում էր այստեղ տալ վճռական ճակատամարտ: Սակայն նա մտահոգ էր և կանխարգելիչ քայլերի դիմեց իր թիկունքն ամրապնդելու ուղղությամբ: Արաբական լեգեոնի տեղադրումը Սինայում, այսինքն՝ պատերազմի եգիպտական թատերաբեմում, պետք է դիտարկել բրիտանական այդ մարտավա-

րության շրջանակներում: Բարեբախտաբար, գերմանացիները պարտություն կրեցին ալ–Ալամայնում և նահանջեցին, ինչը հնարավորություն ընձեռեց անգլիական և ամերիկյան զորքերին ներխուժել Հյուսիսային Աֆրիկա և գերմանա–իտալական զորքերին դուրս շպրտել այնտեղից: Արաբական լեգեոնն այստեղ նույնպես պետքական եղավ և մասնակցեց Հյուսիսային Աֆրիկայի ազատագրման գործողություններին:

Բացի պատերազմական գործողություններից, Արաբական լեգեոնի զորամասերի վրա դրվել էր նաև Անդրհորդանանի և Մերձավոր Արևելքի երկրներում՝ Կահիրեից մինչև Թեհրան, կամուրջների, երկաթուղագծերի, նավթամուղների պահպանման խնդիրը: Պատերազմի ժամանակ Արաբական լեգեոնի թիվը հասավ 3 հազարի.

Այս ամենը հանգեցրեց ռազմական ծախսերի խիստ աճին: Նախապատերազմյան շրջանի համեմատ Անդրհորդանանի բյուջեում ռազմական ծախսերն աճեցին մոտ 7 անգամ: Դրանք ծածկելու և դրամ հայթայթելու գլխավոր աղբյուրը դարձավ ուղղակի հարկերի բարձրացումը, ինչը խիստ վատացրեց աշխատավորական մասսաների տնտեսական վիճակը: Չդիմանալով ծանր հարկերին՝ գյուղացիները զանգվածաբար լքում էին հողերը, որը մի կողմից հանգեցրեց մշակելի հողատարածությունների կրճատմանը և անասունների գլխաքանակի անկմանը, մյուս կողմից՝ աղքատության աճին և անգամ սովի առաջացմանը: Երկիրը հայտնվեց տնտեսական չափազանց ծանր վիճակում, որի պատճառով խիստ ուժեղեցան հակաիմպերիալիստական տրամադրությունները: Ժողովուրդը դժգոհ էր նաև էմիրի քաղաքականությունից, որը հլու հնազանդ կատարում էր անգլիացիների բոլոր հրամանները և պահանջները:

Այդ շրջանում նկատվեց որոշ ակտիվացում տարածաշրջանային գործերում Անդրհորդանանի մասնակցության հարցում: Անդրհորդանանի պատվիրակությունը 1939 թ. մայիսին մասնակցեց Պաղեստինի հարցին Լոնդոնում Անգլիայի նախաձեռնությամբ գումարված կլոր սեղանի կոնֆերանսին, որը համարվում է Անդրհորդանանի առաջին ինքնուրույն դեբյուտը միջազգային ասպարեզում:

Անդրհորդանանը 1943 և 1944 թթ. մասնակցեց նաև Արաբական լիգայի ստեղծմանը նվիրված արաբական կոնֆերանսներին: Դրանք նախապատրաստական աշխատանքներ էին, որի արդյունքում 1945 թ. մարտին հիմնվեց Արաբական պետությունների լիգա միջարաբական ռեգիոնալ կազմակերպությունը: Անդրհորդանանը Եգիպտոսի, Սիրիա-

յի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Լիբանանի և Եմենի հետ միասին դարձավ նրա հիմնադիր անդամը:

3. Բրիտանական մանդատի վերացումը, Անդրհորդանանի ձևական անկախության հռչակումը և վերածումը Հորդանանի Հաշիմյան թագավորության (1946–1948 թթ.)

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նոր փուլ սկսվեց համաշխարհային պատմության մեջ, որն այս կամ այն չափով իր անդրադարձն ունեցավ մեր մոլորակի բոլոր մայրցամաքների, տարածաշրջանների և երկրների վրա: Բացառություն չէին նաև Արաբական Արևելքը և նրա օրգանական մասը կազմող Անդրհորդանանը:

Անդրհորդանանի պարագայում դա իր արտահայտությունը գտավ անգլիական մանդատի վերացման և անկախ պետություն դառնալու փաստի մեջ, որը, իրոք, պատմական նշանակություն ունեցող երևույթ էր:

Հորդանանի նորագույն պատմությանը նվիրված արևմտյան, մասնավորապես, անգլիական, ինչպես նաև արաբական պատմագիտական ուսումնասիրությունների մեջ այն միտքն է արտահայտված, որ Անդրհորդանանն աստիճանաբար է գնացել դեպի անկախություն: Եվ այդ կապակցությամբ նաև այն տեսակետն է առաջադրվել, իբր դա արվել է ոչ առանց Անգլիայի աջակցության՝ մատնանշելով մասնավորապես անգլո–անդրհորդանանյան պայմանագրերն ու համաձայնագրերը, որոնցից յուրաքանչյուրն ընդլայնել է Անդրհորդանանի իրավասությունները և մի աստիճան է հանդիսացել նրա անկախության ճանապարհին: Այլ կերպ ասած, Անգլիային վերագրվում է Անդրհորդանանին անկախ պետություն դարձնելու առաքելություն:

Այդ տեսակետը, հասկանալի պատճառներով, տեղ չի գտել և չէր էլ կարող գտնել խորհրդային արաբագետների և արևելագետների գրչին պատկանող աշխատություններում: Նրանք, ընդհակառակը, պնդում են, որ Անգլիան ամեն ինչ արել է Անդրհորդանանը, ինչպես նաև մյուս գաղութային և ենթամանդատային երկրները պահելու իր տիրապետության ներքո:

Մեր ժամանակներում պահանջվում է նորովի, ավելի լայնախոհ և չքաղաքականացված մոտեցում ցուցաբերել այդ հարցերը քննարկելիս: Կարծում ենք, որ ոչ մի հիմք չկա գունազարդելու, առավել ևս իդե-

ալականացնելու բրիտանական քաղաքականությունն Անդրհորդանանում: Նա իրոք հետապնդել է իր քաղաքական, ռազմական և տնտեսական գաղութային նպատակներն այդ երկրում և մանդատի ներքո սահմանափակել Անդրհորդանանի ինքնիշխանությունը: Բայց մյուս կողմից չի կարելի չնկատել, որ Անգլիան կամա թե ակամա իր մի շարք քայլերով, այդ թվում և Անդրհորդանանի հետ կնքված պայմանագրերով, քայլ առ քայլ զիջումներ է կատարել և ընդլայնել անդրհորդանանյան իշխանությունների իրավասությունների շրջանակները, ինչն առարկայականորեն նպաստել է անդրհորդանանյան էմիրության՝ որպես պետական կազմավորման կայացմանը, ապա և հասունացմանն անկախ պետություն դառնալու համար:

Իհարկե, սխալ կլիներ այդ հարցը քննարկելիս աներեսել հակագաղութային, ազգային–ազատագրական պայքարը և շարժումները Անդրհորդանանում, որոնց ազդեցությունը և ճնշումը մշտապես զգում էին բրիտանական մանդատային իշխանությունները: Դա շատ կարևոր գործոն էր, որն անհնար է հաշվից դուրս նետել: Այդուհանդերձ, հարցը տեսական դաշտում քննարկելիս անհրաժեշտ է հրաժարվել միակողմանի գնահատականներից և հաշվի առնել վերոնշյալ բոլոր հանգամանքները: Հարցի ճիշտ պատասխանը պետք է փնտրել այդ շրջանակներում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված միջազգային նոր իրադրության պայմաններում 1946 թ մարտի 22–ին Լոնդոնում Անգլիայի և Անդրհորդանանի միջև կնքվեց բարեկամության և դաշինքի պայմանագիր, որը գալիս էր փոխարինելու 1928 թ. կնքված անգլո–անդրհորդանանյան պայմանագիրը:

Նոր պայմանագրով Անգլիան հրաժարվում էր Ազգերի լիգայի կողմից Անդրհորդանանի կառավարման համար ստացած մանդատից և Անդրհորդանանը ճանաչում որպես անկախ պետություն: Նա դառնում էր բագավորություն: Ճանաչելով Անդրհորդանանի անկախությունը՝ Մեծ Բրիտանիան միաժամանակ իրավունք էր ստանում իր զորքերը պահել Անդրհորդանանում, սպաներ նշանակել անդրհորդանանյան բանակում, որոնք պետք է «կազմակերպեին և վարժեցնեին արաբական բանակը», շարունակել դրամական օգնություն ցույց տալ էմիրին և Արաբական լեգեոնին, որը շարունակում էր մնալ անգլիական գեներալ Գլաբ փաշայի հրամանատարության ներքո, կառուցել բազաներ և զանազան զինվորական օբյեկտներ և այլն: Անգլիան էմիր Աբդալլահին ճանաչում էր որպես թագավոր:

1946 թ. ապրիլի 2–ին էմիրը վավերացրեց այդ պայմանագիրը:

1946 թ. մայիսի 25–ին Անդրհորդանանի Օրենսդիր խորհուրդը էմիր Աբդալլահին հռչակեց որպես թագավոր, իսկ Անդրհորդանան էմիրությունը վերանվանվեց Հորդանանի Հաշիմյան Թագավորության.

Մայիսի 25–ը պաշտոնապես հանդիսանում է Հորդանանի անկախության օր և յուրաքանչյուր տարի նշվում է որպես ազգային տոն:

1947 թ. փետրվարի 1–ին թագավորի հրամանով գործողության մեջ դրվեց Հորդանանի՝ որոշ փոփոխությունների ենթարկված սահմանադրությունը, որը շատ բաներով 1928 թ. սահմանադրության կրկնությունն էր. Թագավորը համարվում էր Հորդանանի միապետը՝ օժտված ամենալայն գործադիր և օրենսդիր լիազորություններով: Նա էր նշանակում կառավարությունը, որն անմիջականորեն պատասխանատու էր թագավորի առջև: Միապետն օգտվում էր վետոյի իրավունքից երկրին վերաբերող առանցքային քաղաքական, տնտեսական, ֆինանսական–բյուջետային և կենսական կարևոր նշանակություն ունեցող բոլոր հարցերում: Թագավորն էր պատերազմ հայտարարում և անհրաժեշտության դեպքում մտցնում արտակարգ դրություն: Պառլամենտը, որը կոչվում էր Ազգային ժողով, կազմված էր երկու պալատից՝ Դեպուտատների պալատից և Սենատից: Նրա իրավունքները շատ սահմանափակ էին, նա զրկված էր կառավարության և ընդհանրապես պետական ապարատի վրա հսկելու իրավունքից: Թագավորը ցանկացած ժամանակ կարող էր ցրել պառլամենտը, փոփոխության ենթարկել կառավարության կազմը: Քոչվորները և կանայք, ինչպես նախկինում, զրկված էին ընտրելու իրավունքից:

Նորաստեղծ Հորդանան պետությունն անկախությունը ստանալուց հետո իր առաջին քայլերը կատարեց միջազգային ասպարեզում. 1947 թ. նա պայմանագրեր ստորագրեց Թուրքիայի և Իրաքի հետ: Նույն թվականին Հորդանանը պաշտոնապես դիմեց Միավորված ազգերի կազմակերպությանը՝ անդամ դառնալու խնդրանքով, սակայն մերժում ստացավ: ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդում այդ հարցի քննարկման ժամանակ Խորհրդային Միությունը օգտագործեց վետոյի իր իրավունքը և դեմ քվեարկեց: Հորդանանի թեկնածությունը չպաշտպանեց նաև ԱՄՆ–ը, որը գտնում էր, որ Հորդանանի անկախության կարգավիճակը լիարժեք չէ:

Կրկին վերադառնանք անկախության հարցին և այն խնդրին, թե ինչով է բացատրվում մանդատից հրաժարվելու և Անդրհորդանանին 1946 թ. անկախություն շնորհելու Անգլիայի քաղաքականությունը:

Վերնում մենք արդեն լուսաբանեցինք այդ հարցի ընդհանուր դրույթները և տեսական մոտեցումները: Այժմ հարկ է դրան ավելացնել նաև ավելի կոնկրետ փաստարկում՝

Առաջին՝ դա ազգային–ազատագրական շարժումների հետևանքով Արաբական Արևելքում ստեղծված նոր իրադրությունն էր: Անգլիան հարկադրված էր հաշվի առնել այդ հանգամանքը և հրաժարվել գաղութատիրության կառավարման հին, արդեն իր դարն ապրած բացահայտ ձևերից և դիմել նոր ու ավելի նուրբ, քողարկված ձևերի: Եվ բրիտանական կառավարությունն ընտրեց իր նախկին գաղութների, ենթամանդատային տարածքների և պրոտեկտորատների հետ երկկողմանի պայմանագրեր կնքելու տակտիկան: Դա մի կողմից հնարավորություն էր տալիս Անգլիային ձևականորեն հռչակել տվյալ երկրի անկախությունը՝ նրան փոխանցելով կառավարման մի շարք ֆունկցիաներ, մյուս կողմից՝ պահպանել իր դիրքերը, հատկապես ռազմական, ինչպես նաև քաղաքական և տնտեսական ոլորտներում՝ դրանց տալով երկկողմանի համաձայնության տպավորություն՝ կողմերը իբր թե հանդես են գալիս իրավահավասար գործընկերներ: Անգլիան «համատեղ պաշտպանության» պայմանագրեր կնքեց նաև Եգիպտոսի հետ՝ 1946 թ. հոկտեմբերին, Իրաքի հետ՝ 1948 թ. հունվարին, իսկ հետագայում՝ 1960–ական թվականներին, նա պրոտեկտորատից հրաժարվելու մասին մի շարք համաձայնագրեր ստորագրեց նաև Ծոցի արաբական երկրների՝ Արաբական Միացյալ Էմիրությունների, Կատարի, Բահրեյնի և Քուվեյթի հետ:

Երկրորդ՝ իր դերը խաղաց ՄԱԿ–ի և նրա կազմում Խնամակալության խորհրդի ստեղծումը: Անգլիական ղեկավարությունը մտավախություն ուներ, և ոչ առանց հիմքի, որ ՄԱԿ–ի խնամակալության տակ կարող է անցնել ենթամանդատային Անդրհորդանանը, որը չէր համապատասխանում նրա շահերին: Այդ անցանկալի քայլը կանխելու համար Անգլիան գերադասեց 1946 թ. պայմանագրով հրաժարվել մանդատից և ճանաչել Անդրհորդանանի անկախությունը՝ պահպանելով իր գերակայող դիրքերն ու զանազան արտոնությունները:

Երրորդ՝ կար նաև մի շատ կարևոր հանգամանք: Պատերազմի ժամանակ և նրա ավարտից հետո էմիր Աբդալլահը անգլիացիների դրդմամբ բազմիցս հանդես էր գալիս «Մեծ Սիրիա» ստեղծելու ծրագրով, որի մեջ պետք է միավորվեին Սիրիան, Պաղեստինը, Հորդանանը, Լիբանանը, ապա նաև Իրաքը: Աբդալլահը հավակնում էր դառնալ արաբական այդ միացյալ պետության ղեկավարը: Եվ եթե նկատի ունենանք,

որ Իրաքում նույնպես կառավարող էր Հաշիմյան դինաստիան, ապա պարզ կդառնար, որ ապագա «Մեծ Սիրիան» անխուսափելիորեն կդառնար Անգլիայից կախման մեջ գտնվող միապետություն՝ Հաշիմյան դինաստիայի կառավարման ներքո:

Այդ ծրագիրը պաշտպանություն էր գտնում Իրաքի մի շարք քաղաքական ուժերի կողմից: Սիրիայում և Պաղեստինում նույնպես կային որոշ ուժեր, որոնք «Մեծ Սիրիա» ծրագրի կողմնակիցներ էին: Սակայն Սիրիայում ավելի ուժեղ և ազդեցիկ էին այդ ծրագրի հակառակորդները: Լիբանանի հասարակության ամենալայն շրջանները և տարբեր քաղաքական կուսակցությունները նույնպես դեմ էին, որ ստեղծվի նման սիրիական պետություն, և չէին կարող հաշտվել այն մտքի հետ, որ Լիբանանը պետք է Հաշիմյան միապետության մասը դառնար: Լիբանանում միայն մի քաղաքական կուսակցություն գոյություն ուներ, որը բացահայտ կերպով հանդես էր գալիս հօգուտ «Մեծ Սիրիայի» և Լիբանանը նրա մեջ ներգրավելու ծրագրի: Դա կրում էր Սիրիական ազգային սոցիալական կուսակցություն անունը, որը 1949 թ. պետական հեղաշրջման անհաջող փորձ կատարեց: «Մեծ Սիրիայի» ակտիվ հակառակորդներ էին Եգիպտոսը և Սաուդյան Արաբիան, որոնց կառավարող դինաստիաները կտրուկ դեմ էին, որ ստեղծվի մի նոր արաբական պետական կազմավորում՝ Հաշիմյան դինաստիայի գլխավորությամբ: Այդ նոր պետական միավորումը կուժեղացներ Հաշիմյանների դիրքերը արաբական աշխարհում, ինչը չէին կարող հանդուրժել Եգիպտոսը և Սաուդյան Արաբիան:

Այդ նախագծի ամենակատաղի հակառակորդների մեջ էին սիոնիստական ուժերը և Ֆրանսիան: Սիոնիստները չէին կարող թույլ տալ, որ Պաղեստինը, որի տարածքում նրանք պայքարում էին ստեղծել իրենց հրեական պետությունը, «Մեծ Սիրիայի» մաս կազմի: Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա նա ուներ իր հատուկ մոտեցումը: Հայտնի է, որ Սիրիան երկար ժամանակ գտնվել էր ֆրանսիական մանդատի ներքո և դեռ նոր էր ազատագրվել ու հռչակել իր անկախությունը: Չնայած այդ հանգամանքին, Ֆրանսիայում գտնում էին, որ իրենք ունեն հատուկ շահեր այդ երկրում և Սիրիան համարում էին իրենց ազդեցության ոլորտում գտնվող երկիր: Ուստի նրանք ոչ մի պարագայում չէին համաձայնվի, որ Սիրիան անցնի իրենց մշտական ախոյան Անգլիայի հովանավորության ներքո գտնվող ապագա միասնական Հաշիմյան թագավորության տիրապետության տակ:

Ինչպես տեսնում ենք, անգլո–հաշիմյան «Մեծ Սիրիա» ծրագրի շուրջն առաջացել էր հակասությունների մի բարդ հանգույց, որը շոշափում էր բազմաթիվ պետությունների շահերը և դարձել էր լարվածության նոր աղբյուր Արաբական Արևելքում:

«Մեծ Սիրիա» ծրագրի հակառակորդների փաստարկներից ամենակարևորներից մեկն այն էր, որ Անդրհորդանանն ինքը անկախ պետություն չէր, հետևաբար նա չէր կարող միավորել և ղեկավարել այն երկրները, որոնք իրենց համարում էին անկախ, համենայն դեպս ավելի անկախ, քան Անդրհորդանանն էր: 1946 թ. մանդատի վերացումը և Անդրհորդանանի ձևական անկախության հռչակումը կոչված էին, ըստ անգլիական մտայնության, վերացնելու «Մեծ Սիրիայի» ստեղծման ճանապարհին կանգնած այդ կարևոր խոչընդոտներից մեկը:

1946 թ. անգլո–անդրհորդանանյան պայմանագիրը չգոհացրեց Հորդանանի բնակչության ճնշող մեծամասնությանը և քաղաքական ուժերի մեծ մասին: Նրանք շատ լավ տեսնում էին Անդրհորդանանի անկախության անկատար լինելը և Անգլիայի ազդեցիկ դիրքերի պահպանումը: Ուստի նրանք հանդես էին գալիս հանուն իսկական անկախության: Վերոնշյալ պայմանագիրը չգոհացրեց նաև արաբական երկրներին և չամրապնդեց Անդրհորդանանի դիրքերը արտաքին, այդ թվում արաբական աշխարհում: Հաշվի առնելով այդ ամենը՝ Աբդալլահը 1947 թ. դիմեց Անգլիային նոր պայմանագիր կնքելու առաջարկով:

Անգլո–հորդանանյան նոր պայմանագիրը ստորագրվեց 1948 թ. մարտի 15–ին Ամմանում Կիրկբրայդի և Աբու ալ–Հուդայի կողմից, որն իր բնույթով սկզբունքորեն չէր տարբերվում 1946 թ. պայմանագրից: Անգլիան պահպանում էր իր ռազմական բազաները և ռազմական ուժերը Հորդանանի որոշակի վայրերում՝ Ամմանում և Մաֆրակում, վերահսկում էր հորդանանյան բանակը և այլն: Նորությունն այն էր, որ ստեղծվում էր «Անգլո–հորդանանյան համատեղ պաշտպանության խորհուրդ»՝ հավասար ներկայացուցչության սկզբունքով, ավելի որոշակիորեն էին սահմանվում անգլիական ռազմական ծառայողների իրավունքները: Անգլիան համաձայնվում էր իր ռազմական ուսումնարաններում Հորդանանի համար ռազմական մասնագետներ պատրաստել:

Այսպիսով՝ 1946 և 1948 թթ. պայմանագրերի ստորագրումով Անգլիան երեք նպատակ էր հետապնդում:

Առաջին՝ վերջնականապես վերացնել Հորդանանի անկախության հարցում եղած թերահավատությունը և այդ երկիրը ներկայացնել որ-

պես իրավահավասար գործընկեր, որն ինքն է անկախորեն ընդունում որոշումներ և լուծում իր առջև կանգնած խնդիրները, այդ թվում և «Մեծ Սիրիայի» ծրագրի հարցում. Երկրորդ՝ բարձրացնել Հորդանանի թագավոր Աբդալլահի հեղինակությունը որպես համաարաբական մասշտաբի պետական գործիչ՝ ընդունակ ղեկավարելու ապագա միասնական արաբական պետությունը՝ «Մեծ Սիրիայի» շրջանակներում: Եվ, երրորդ, հող նախապատրաստել Պաղեստինի և Հորդանանի միավորման համար՝ որպես առաջին քայլ ավելի ընդարձակ «Մեծ Սիրիա» ծրագրի իրագործման ճանապարհին:

III. ՀՈՐԴԱՆԱՆԸ ՕԱՆՐ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ (1948–1970 թթ.)

1. Պաղեստինի մանդատի վերացումը և բաժանումը հրեական ու արաբական պետությունների

Հորդանանի Հաշիմյան թագավորության՝ որպես անկախ պետության հռչակումը և ձևավորումը ժամանակագրական առումով համընկավ Արաբական Արևելքում հարաբերությունների արտակարգ սրացման հետ, որի միջուկը կազմում էր Պաղեստինը, ավելի կոնկրետ Պաղեստինի տարածքում հրեական պետության կազմավորման խնդիրը: Պաղեստինյան ընջուկն այդ ժամանակ իրենից ներկայացնում էր հակասությունների մի բարդ հանգույց, որի մեջ ներգրավված էին երեք գլխավոր ուժեր, որոնցից յուրաքանչյուրը հետապնդում էր իր ուրույն քաղաքական, տնտեսական և ռազմական նպատակները.

Առաջինը Մեծ Բրիտանիան, ԱՄՆ–ը և Խորհրդային Միությունն էին: Պաղեստինի մանդատը պատկանում էր Մեծ Բրիտանիային, ուստի նա անմիջականորեն էր ներգրավված նոր ձևավորվող կոնֆլիկտի մեջ: Իսկ ԱՄՆ–ը և ԽՍՀՄ–ը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո դարձել էին աշխարհի ամենահզոր պետությունները, որոնք ձգտում էին իրենց դիրքերն ամրապնդել աշխարհի բոլոր մասերում: Նման քաղաքականության հայեցակարգում նրանք չէին կարող անտեսել աշխարհաքաղաքական առումով մի այնպիսի կարևոր տարածաշրջան, ինչպիսին Արաբական Արևելքն էր: Եվ այդ պահից սկսած նրանք մխրճվում են

արաբական կամ մերձավորարևելյան կոնֆլիկտի մեջ, որը շարունակվում է մինչև օրս:

Երկրորդը հրեական սիոնիստական շարժումն էր, որի գլխավոր քաղաքական նպատակը ամեն գնով Պաղեստինում հրեական անկախ պետություն ստեղծելն էր՝ իր գրպանում որպես ծննդյան վկայական ունենալով Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Բալֆուրի 1917 թ. նոյեմբերի դեկլարացիան Պաղեստինում «Հրեական տուն» ստեղծելու մասին:

Երրորդը՝ արաբական պետությունները, որոնք ոչ մի կերպ համաձայն չէին արաբական աշխարհի սրտում՝ Պաղեստինում, ստեղծել հրեական անկախ պետություն: Նրանց շարքերում առանձնահատուկ նախանձախնդրություն էր դրսևորում Հորդանանը և նրա թագավորը Աբդալլահը՝ գտնելով, որ Հորդանանը և Պաղեստինը պատմականորեն և աշխարհագրական առումով կազմում են միևնույն պաղեստինյան տարածքի երկու բաղադրամասերը:

Անգլիան, ինչպես նշվեց, Պաղեստինի մանդատը ստացավ 1920 թ.: Բալֆուրի 1917 թ. նոյեմբերի դեկլարացիան դարձավ մանդատի տեքստի բաղկացուցիչ մասը, և Անգլիան պարտավորվեց Պաղեստինում ստեղծել այնպիսի քաղաքական և տնտեսական պայմաններ, որոնք ապահովեն հրեական ազգային տան ստեղծումը: Ելնելով այդ սկզբունքից՝ Անգլիան խրախուսում էր հրեաների ներգաղթը Պաղեստին և սերտորեն համագործակցում սիոնիստական կազմակերպություններին և գործիչների հետ: Աստիճանաբար սկսեց փոխվել Պաղեստինի ազգագրական կազմը հօգուտ հրեաների, որոնք Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին արդեն կազմում էին մոտ 600 հազար մարդ: Նրանց ձեռքում կենտրոնացավ Պաղեստինի հողերի զգալի մասը: Սիոնիստները, չբավարարվելով «հրեական տնով», բացահայտ կերպով արդեն դնում էին անկախ պետություն ստեղծելու հարցը:

Անգլիական այս քաղաքականությունը խիստ լարեց հարաբերությունները հրեաների և արաբների միջև՝ վտանգավոր իրադրություն ստեղծելով Պաղեստինում:

1939 թվականից նկատվում է որոշ փոփոխություն անգլիական քաղաքականության մեջ: Անգլիան հրաժարվում է մերկապարանոց սիոնիստամետ քաղաքականությունից և արտաքնապես հաշվի առնում արաբ բնակչության շահերը: Մասնավորապես Անգլիան հայտարարեց, որ հրեաների ներգաղթը կսահմանափակվի, իսկ 1944 թ. սկսած՝ ընդ-

հանրապես կդադարեցվի: Նա հայտարարեց նաև, որ կսահմանափակվի ու կդադարեցվի նաև արաբական հողերի բռնագրավումը, իսկ 10 տարի անց կվերացվի մանդատը, և կստեղծվի արաբա–հրեական միասնական պետություն: Այդ փոփոխությունն արդյունք էր այն բանի, որ Անգլիան հարկադրված էր որոշ չափով հաշվի առնել և սիրաշահել արաբներին: Անգլիան վախենում էր, որ իր ոչնչով չքողարկված պաշտպանությունը սիոնիստական ծրագրերին կարող է հարցականի տակ դնել նրա տիրապետությունն ամբողջ Արաբական Արևելքում: Նա ձգտում էր նաև որոշակի շրջանակների մեջ դնել սիոնիստների գործողությունները և նրանց պահել իր հսկողության տակ: Իր դերը խաղաց նաև ԱՄՆ–ի ակտիվացումը պաղեստինյան հարցում և ԱՄՆ–ի կառավարող շրջանների կապերի ամրապնդումն ու խորացումը սիոնիստական գործիչների հետ, մանավանդ Երկրորդ համաշխարհային պատերազմի և հետպատերազմյան առաջին տարիներին.

Անգլիական այս նոր կողմնորոշումը առաջացրեց սիոնիստների խոր դժգոհությունը, և նրանք ոչ միայն ուժեղացրին տեռորը արաբ բնակչության դեմ, այլև պայքար ծավալեցին անգլիացիների դեմ: Այսպիսով՝ կարելի է ասել, որ անգլիական քաղաքականությունը Պաղեստինում ձախողում կրեց և մտավ փակուղի. Եվ Անգլիան 1947 թ. պաղեստինյան հարցը դրեց ՄԱԿ–ի քննարկմանը:

ՄԱԿ–ում պաղեստինյան հարցի շուրջը տեղի ունեցան բուռն քննարկումներ, որոնց ընթացքում առաջադրվեցին նրա լուծման տարբեր տեսակետներ:

Ի վերջո, ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեան 1947 թ. նոյեմբերի 29–ին ընդունեց 181/II բանաձևը. ըստ որի Պաղեստինը բաժանվում էր երկու մասի. և ստեղծվում երկու՝ արաբական և հրեական պետություններ: Պաղեստինի տարածքի 56 տոկոսը հատկացվեց հրեական պետությանը, իսկ 43 տոկոսը՝ արաբական պետությանը: Ալ–Կուդսը՝ Երուսաղեմը, և Բեթղեհեմն իրենց շրջակայքով դարձան առանձին վարչական միավոր՝ հատուկ միջազգային կարգավիճակով: Նրանք դրվում էին ՄԱԿ–ի խնամակալության տակ: Տարածքների պատկերն ըստ էթնիկական կազմի հետևյալն էր. նախատեսվող հրեական պետությունում բնակվում էին 498 հազար հրեա և 407 հազար արաբ, իսկ արաբական պետությունում՝ 725 հազար արաբ՝ 10 հազար հրեա: Ինչ վերաբերում է Երուսաղեմին, ապա այն ունենալու էր 105 հազար արաբ և 100 հազար հրեա

բնակչություն: Այսպիսով՝ բաժանման պահին Պաղեստինում ապրում էին 1 մլն 237 հազար արաբ և 603 հազար հրեա:

Այս բանաձևի օգտին քվեարկեցին ՄԱԿ–ի անդամ–պետությունների ճնշող մեծամասնությունը. այդ թվում՝ ԽՍՀՄ–ը, ԱՄՆ–ը, Ֆրանսիան և այլն, դեմ քվեարկեցին արաբական պետությունները, իսկ Անգլիան ձեռնպահ մնաց:

ՄԱԿ–ի որոշման մեջ միաժամանակ նշվեց, որ անգլիական մանդատը Պաղեստինի վրա պետք է վերացվի ոչ ուշ, քան 1948 թ. օգոստոսի 1–ը:

1948 թ. մայիսի 13–ին անգլիական կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ մայիսի 14–ին դադարեցվում է մանդատի գործողությունը Պաղեստինում, այսինքն՝ վերացվում է Պաղեստինի մանդատը: 1948 թ. մայիսի 14–ին Յիշուվին՝ Պաղեստինում հրեական համայնքի Ազգային Խորհրդի 13 անդամներից բաղկացած ժողովրդական վարչությունը (ադմինիստրացիան), հայտարարեց «1948 թ. մայիսի 15–ից Պաղեստինում «Իսրայել» անվամբ հրեական պետություն ստեղծելու մասին»: Սիոնիզմի ականավոր ղեկավարներից մեկը՝ Դավիդ Բեն Գուրիոնը, դարձավ Իսրայելի առաջին վարչապետը:

2. 1948 թ. արաբա–իսրայելական առաջին պատերազմը և Արևելյան Պաղեստինի կցումը Հորդանանին: Աբդալլահը «Ամբողջ Պաղեստինի թագավոր»

Առաջինը նորահռչակ Իսրայել պետությանը ճանաչեց Խորհրդային Միությունը, որին անմիջապես երկրորդեց ԱՄՆ–ը:

Ինչ վերաբերում է արաբական պետություններին, ապա նրանք դեռևս 1947 թ. նոյեմբերին մնրժել էին ՄԱԿ–ի որոշումը Պաղեստինը բաժանելու և նրա տարածքում երկու պետություն կազմավորելու վերաբերյալ: 1948 թ. մայիսի 15–ին, Արաբական պետությունների լիգայի որոշման համաձայն, Եգիպտոսի, Հորդանանի, Իրաքի, Սիրիայի և Լիբանանի զորքերը մտան Պաղեստին և հարձակողական գործողություններ սկսեցին Իսրայելի դեմ:

Հորդանանի թագավոր Աբդալլահը նշանակվեց արաբական զորքերի գլխավոր հրամանատար:

Ինչպիսի՞ն էր պատերազմող կողմերի ռազմական ուժերի փոխհարաբերակցությունը:

Պաղեստինում գործող արաբական ռազմական ուժերի թիվը կազմում էր 26 հազար մարդ, որից 7 հազարը եգիպտական զորքերն էին, 5 հազարը՝ հորդանանյան, 4 հազարը՝ իրաքյան, 4 հազարը՝ պաղեստինյան, 4 հազարը՝ սիրիական և 2 հազարը՝ լիբանանյան: Հետագայում այդ թիվն աճեց և հասավ 35 հազարի:

Իսրայելական զորքերի թիվը կազմում էր 30 հազար զինվոր, որը հետագայում հասավ 60 հազարի:

Արաբա–իսրայելական առաջին պատերազմը սկսվեց 1948 թ. մայիսի 15–ին և ավարտվեց 1949 թ. հունվարի 7–ին, որի ընթացքում ՄԱԿ–ի միջնորդությամբ չորս անգամ համաձայնություն ձեռք բերվեց կրակի դադարեցման մասին, և ըստ այդմ համարվում է, որ պատերազմն անցել է չորս փուլով: Թեև պատերազմը տևել է 1948 թ. մայիսի 15–ից մինչև 1949 թ. հունվարի 7–ը, մոտ ինը ամիս, սակայն բուն մարտական գործողությունները ընդհանուր առմամբ կազմել են չորս ամիս:

Մեր խնդրի մեջ չի մտնում ռազմական գործողությունների նկարագրությունը, ուստի կբավարարվենք նշելով միայն, որ պատերազմական գործողությունները տարբեր ճակատներում ընթանում էին փոփոխակի հաջողություններով, որի արդյունքում Պաղեստինի արաբների համար հատկացված տարածքները բաժան–բաժան արվեցին արաբական երկրների և Իսրայելի միջև, ինչը իսկական ողբերգության վերածվեց պաղեստինցի արաբների համար: Պատերազմի ընթացքում արաբական զորքերը գրավեցին Պաղեստինի կենտրոնական և արևելյան մասերը, իսկ Իսրայելը՝ մնացած տարածքները:

Ըստ արաբական պետությունների միջև ձեռք բերված նախնական համաձայնության՝ նախատեսվում էր Պաղեստինում ստեղծել միասնական քաղաքացիական վարչություն կամ կառավարություն, որը ենթակա էր լինելու ոչ թե որևէ արաբական պետության, այլ Արաբական պետությունների լիգային: Սակայն Աբդալլահն Անգլիայի պաշտպանությամբ առաջին օրվանից եռանդուն քայլեր ձեռնարկեց արաբական զորքերի կողմից Պաղեստինի գրաված տարածքները Հորդանանին կցելու համար[3]: Գրաված տարածքները կառավարելու համար նշանակվեց հատուկ գեներալ նահանգապետ, որն անմիջապես ենթակա էր հոր-

3 Հետագայում հրատարակված մի շարք աշխատություններում նշվում էր Աբդալլահի գաղտնի հանդիպումների մասին սիոնիստական ղեկավարների, ի մասնավորի՝ Գոլդա Մեիրի, ապա նաև Իսրայելի կառավարողների հետ. Այդ մասին տես Dilip Hiro, Essential Middle East, New York, 2003, p. 8:

դաշնային միապետին: Վերջինս իրեն նվիրված պաղեստինյան զանազան խմբավորումներից ստեղծեց Պաղեստինյան բյուրո:

Աբդալլահի այդ անջատողական և արաբական երկրների հետ չհամաձայնեցված քայլերը առաջացրին Եգիպտոսի, Սիրիայի և արաբական մյուս պետությունների դժգոհությունը: Արաբական պետությունների լիգան Եգիպտոսի նախաձեռնությամբ, ի հակակշիռ Աբդալլահի քայլերի, 1948 թ. սեպտեմբերին հայտարարեց Ղազայի շրջանում համապաղեստինյան կառավարություն ստեղծելու մասին: Վարչապետ նշանակվեց Ահմեդ Հիլմին, իսկ պաղեստինյան Ազգային խորհուրդը կամ պառլամենտը գլխավորեց Հաջ Ամին ալ–Հուսեյնին, որոնք դեմ էին Պաղեստինի ազատագրված մասերը Աբդալլահի տիրապետության տակ դնելուն:

Աբդալլահը չճանաչեց Հիլմիի կառավարությունը և շարունակեց Պաղեստինի գրաված մասերը իր թագավորությանը միացնելու քաղաքականությունը: 1948 թ. դեկտեմբերի 1–ին Երիկոյում գումարվեց պաղեստինցիների կոնգրեսը, որին ներկա էր մոտ 2 հազար պաղեստինյան գործիչ: Կոնգրեսը կոչ արեց Աբդալլահին անհապաղ անհրաժեշտ քայլերի դիմել իր ղեկավարությամբ միավորելու Հորդանանի երկու՝ Արևելյան և Արևմտյան ափերը և ստեղծել մեկ միասնական արևբական պետություն: Կոնգրեսը Աբդալլահին հռչակեց «ամբողջ Պաղեստինի թագավոր»: Հորդանանի պառլամենտը հավանություն տվեց այդ որոշմանը և որպես առաջին քայլ՝ Հորդանանի կառավարության կազմի մեջ մտցրեց երեք պաղեստինցի:

1949 թ. սկզբներին հունական Հռոդոս կղզում զինադադարի համաձայնագրեր կնքվեցին արաբական պետությունների և Իսրայելի միջև: Փետրվարի 24–ին Իսրայելը զինադադարի պայմանագիր ստորագրեց Եգիպտոսի, մարտի 23–ին՝ Լիբանանի, ապրիլի 3–ին՝ Հորդանանի և հուլիսի 20–ին՝ Սիրիայի հետ:

Պատերազմի ընթացքում արաբները տվեցին 18 հազար հինգ հարյուր զոհ, որից 16 հազարը՝ պաղեստինցիներ, իսկ վիրավորների թիվը կազմում էր 14 հազար մարդ: Իսրայելի կորուստը կազմում էր 6 հազար սպանված:

Իսրայելի հետ զինադադարի համաձայնագրի ստորագրումից հետո Աբդալլահը ավելի արագ թափով տարավ Արևելյան Պաղեստինի բռնակցման՝ աննեքսիայի գործը: 1948 և 1949 թթ. ընդունված դեկրետներով հորդանանյան քաղաքացիություն էր տրվում այդ բանը ցանկացող

բոլոր պաղեստինցիներին, որոնք հորդանանցիներին համահավասար իրավունքներ էին ձեռք բերում: 1949 թ դեկտեմբերին պաղեստինյան ականավոր գործիչները դիմեցին Աբդալլահին՝ «Պաղեստինի մնացած մասը միավորել Հորդանանի հետ»:

Արաբական երկրները հակառակ էին Աբդալլահի այդ, այսպես կոչված. «պաղեստինյան» քաղաքականությանը. Դրությունն ավելի սրվեց, երբ լուրեր տարածվեցին, որ Հորդանանի և Իսրայելի միջև ընթանում են գաղտնի բանակցություններ: Արաբական պետությունների լիգայի խորհուրդը 1950 թ. ապրիլի սկզբներին այդ հարցը դարձրեց հատուկ քննարկման առարկա, որին մասնակցեց նաև Հորդանանի ներկայացուցիչը: Այստեղ հաջողվեց հասնել այն բանին, որ Հորդանանը հայտնեց իր համաձայնությունը և հավատարմությունը Արաբական պետությունների լիգայի ընդունած որոշումներին ու բանաձևերին, որոնք արգելում էին արաբական որևէ պետության՝ բանակցություններ վարել Իսրայելի հետ կամ բռնակցել Պաղեստինը:

Բայց դա չխանգարեց Աբդալլահին իր համաձայնությունը հայտնել երևելի պաղեստինցիների պահանջի հետ՝ Պաղեստինը Հորդանանի հետ միավորելու հարցում: Ըստ այդմ՝ հորդանանյան կառավարությունը 1950 թ. ապրիլի 11–ին անցկացրեց պառլամենտական ընտրություններ Հորդանան գետի արևելյան և արևմտյան ափերում՝ Հորդանանում և Պաղեստինի արևելյան շրջաններում, որոնք գտնվում էին Աբդալլահի տիրապետության տակ: 1950 թ. ապրիլի 23–ին նորընտիր պառլամենտը, որ բաղկացած էր հավասար քանակով հորդանանցիներից և պաղեստինցիներից, որոշում ընդունեց Պաղեստինի արևելյան շրջանները և Հորդանանը միավորել մեկ միասնական պետության՝ Հորդանանի թագավորության մեջ: Ապրիլի 24–ին Աբդալլահը պաշտոնապես իրականացրեց պառլամենտի այդ որոշումը, որը մերժեցին արաբական երկրները, բայց որը նույն օրը ճանաչեց Մեծ Բրիտանիան: Հաշիմյան Իրաքը միակ արաբական երկիրն էր, որն աջակցեց Հորդանանին: Միացյալ Պաղեստինյան–հորդանանյան պետությանը կցվեց նաև Երուսաղեմի արևելյան մասը՝ «Հին քաղաքը»: Իսկ նրա արևմտյան մասը գրավեց Իսրայելը: Ղազայի շրջանը՝ մոտ 378 քառ. կմ, անցավ Եգիպտոսի վարչական տիրապետության տակ:

Այսպիսով՝ ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի 1947 թ. նոյեմբերի 29–ի որոշմամբ արաբական պետության ստեղծման համար հատկացված 11.1 հազ. քառ. կմ տարածքը 1948–1949 թթ. պաղեստինյան պատե-

րազմի հետևանքով հիմնականում գրավվեց Հորդանանի (5 հազար 949 քառ. կմ) և Իսրայելի (5 հազար 750 քառ. կմ) կողմից: Դրանով ՄԱԿ–ի որոշմամբ Իսրայելին հատկացված Պաղեստինի տարածքի 56 տոկոսի փոխարեն Իսրայելը գրավեց 74 տոկոսը:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ ՄԱԿ–ի պատմական որոշումը կենսագործվեց մասնակիորեն, միայն նրա այն մասով, որը վերաբերում էր անկախ հրեական պետության ստեղծմանը: Իսկ ինչ վերաբերում է արաբական անկախ պետության ստեղծմանը, ապա այն մնաց թղթի վրա: Դրանում իրենց մեղքի բաժինն ունեն ինչպես Իսրայելը, այնպես էլ արաբական երկրները, առաջին հերթին Հորդանանը:

3. Հորդանանի թագավոր Աբդալլահ իբն Հուսեյն ալ–Հաշիմիի սպանությունը 1951 թ.

Արաբա–իսրայելական պատերազմից հետո, երբ արևելյան Պաղեստինը կցվեց Հորդանանին, այդ պետությունն այլևս այն չէր, ինչ էր մինչ այդ: Այդ պահից սկսած՝ Պաղեստինի մի մասում արաբական անկախ պետություն ստեղծելու հիմնախնդիրը սերտորեն առնչվում է ոչ միայն Իսրայելի, այլև Հորդանանի հետ: Պաղեստինցի արաբների հարցը դառնում է Հորդանանի ներքին և արտաքին քաղաքականության էական բաղադրամասը և ազդեցիկ գործոն:

Արևելյան Պաղեստինի կցումը Հորդանանին վերջինիս առաջ նոր խնդիրներ դրեց: Հորդանանում հանգրվանեցին մոտ կես միլիոն պաղեստինյան փախստականներ, որոնք փախստականների էին վերածվել Իսրայելի ագրեսիվ գործողությունների և արաբական պաղեստինյան պետության համար հատկացված տարածքի մի մասը գրավելու հետևանքով: Նրանց միացան նաև այսպես կոչված «տնտեսական փախստականները», մոտ 200 հազ. մարդ: Դրանք այն պաղեստինցիներն էին, որոնք բնակվում էին սահմանամերձ շրջաններում, և որոնց հողերը Հորդանանի և Իսրայելի միջև ստորագրված զինադադարի պայմանների համաձայն անցան Իսրայելի տնօրինության տակ:

Հորդանանի թույլ զարգացած տնտեսությունն ի վիճակի չէր կլանելու այդ հավելյալ աշխատուժը, որի պատճառով խիստ ավելացավ գործազուրկների թիվը: Դրությունը բարդանում էր նրանով, որ 1948–1949 թթ. պատերազմի ժամանակ տուժեց նաև հորդանանյան տնտեսությունը: Երկիրը չէր կարողանում իրեն ապահովել հացով և այլ

անհրաժեշտ սննդամթերքներով: Այս բոլորի հետևանքով վատացավ Հորդանանի ընդհանուր տնտեսական վիճակը:

Հարյուր հազարավոր պաղեստինցիների հայտնվելը Հորդանանում, բացի տնտեսականից, ունեցավ նաև քաղաքական հետևանքներ:

Պաղեստինցիներն ունեին քաղաքական ու հակաիմպերիալիստական պայքարի հարուստ փորձ և քաղաքական ու կուլտուրական առումով ավելի զարգացած էին, քան բուն հորդանանցիները: Նրանց ներկայությունը դրականորեն ազդեց Հորդանանի տեղական բնակչության քաղաքական ինքնագիտակցության զարգացման վրա և նպաստեց նրանց քաղաքական պայքարի ակտիվացմանը:

Արևելյան Պաղեստինի կցումը Հորդանանին վատացրեց նրա հարաբերությունները արաբական երկրների հետ: Աբդալլահը նախկինի պես վարում էր Անգլիայի հետ ամենասերտ հարաբերություններ պահպանելու և ընդհանրապես արևմտյան պետությունների հետ հարաբերությունները զարգացնելու քաղաքականություն: 1949 թ. հունվարի 31–ին ԱՄՆ–ը վերջապես ճանաչեց Հորդանանը: 1951 թ. փետրվարի 27–ին Հորդանանը ԱՄՆ–ի հետ համաձայնագիր կնքեց «Տրումենի ծրագրի» 4–րդ կետով օգնություն ստանալու մասին: Հորդանանը պաշտպանեց ՄԱԿ–ի քաղաքականությունը Կորեայի վերաբերյալ, ինչը նշանակում էր ԱՄՆ–ի և արևմտյան մյուս պետությունների քաղաքականության պաշտպանություն Կորեայի 1950–1953 թթ. պատերազմի ժամանակ:

Հորդանանում կուտակվել էր հսկայական դժգոհություն Աբդալլահի քաղաքականությունից: Սկսում են ձևավորվել ընդդիմադիր քաղաքական կազմակերպություններ և կուսակցություններ: Հորդանանի հայտնի քաղաքական գործիչ Սուլեյման ան–Նաբուլսիի նախաձեռնությամբ 1950 թ. աշնանը ստեղծվեց Ազգային–սոցիալիստական կուսակցությունը, քաղաքական ասպարեզում հայտնվեցին նաև այլ կուսակցություններ ու կազմակերպություններ:

Դժգոհությունը համակել էր Հորդանանին միացված պաղեստինյան շրջաններում: Պաղեստինցիները, որոնք ավելի ազատամիտ էին, բողոքում էին ազատությունները սահմանափակելու և բռնություններ կիրառելու հորդանանյան կառավարության քաղաքականության դեմ: Նրանք բացահայտորեն դեմ էին արտահայտվում պաղեստինյան շրջաններում հաստատված վարչական կառավարման մեթոդներին, մասնավորապես նրանց զայրացնում էր այն պարագան, որ պաղեստինյան

շրջանների վարչական ապարատից վտարվում էին պաղեստինյան պաշտոնյաները և նրանց փոխարեն նշանակվում հորդանանյան ծագում ունեցող պաշտոնյաներ: Սակայն Աբդալլահը և նրա հավատարիմ քաղաքական շրջապատը, փոխանակ լսելու դժգոհների ձայնը և համապատասխան ուղղումներ ու շտկումներ մտցնելու, վարում էր ամեն տեսակի բողոքները և դժգոհությունների դրսևորումները ճնշելու քաղաքականություն:

Դժգոհության մյուս աղբյուրը լարված հարաբերություններն էին Հորդանանի և Արաբական պետությունների լիգայի միջև, որ ստեղծվել էր Աբդալլահի քաղաքականության հետևանքով: Նա վարում էր բացահայտ արևմտամետ քաղաքականություն և անտեսում Արաբական պետությունների լիգան և նրա ընդունած որոշումները: Եվ հորդանանցիները չէին կարող հաշտվել արաբական երկրներից ու նրանց շահերն արտահայտող Արաբական պետությունների լիգայից Աբդալլահի մեկուսացման քաղաքականության հետ:

Ընդհանուր դժգոհության արտահայտություն պետք է համարել այն պարագան, որ բողոքի ձայներ լսվեցին նաև պառլամենտում, որը չլսված բան էր Հորդանանում. Պառլամենտի մի շարք դեպուտատներ պահանջեցին Հորդանանում անցկացնել առաջադիմական բարեփոխումներ, որոնք միտված լինեին քաղաքական և քաղաքացիական ազատությունների և ընդհանրապես դեմոկրատիայի ընդլայնմանը: Նրանցից ոմանք դատապարտեցին Արաբական լեգեոնի ղեկավար Գլաբ փաշայի գործունեությունը Հորդանանում՝ նրան համարելով «Հորդանանի բռնակալ», որը միջամտում էր Հորդանանի ներքին գործերին և պաշտպանում առաջին հերթին Մեծ Բրիտանիայի շահերը:

Երկրում հասունանում էր լուրջ քաղաքական ճգնաժամ, որի արագացման համար խթան հանդիսացավ կառավարության ներկայացրած բյուջեի մերժումը պառլամենտի կողմից և դրան հաջորդած Աբդալլահի 1951 թ. մայիսի 3–ի որոշումը՝ ցրել պառլամենտը: Հաշիմյան միապետն ավելին չհասցրեց անել:

Աբդալլահը սովորություն ուներ ամեն ուրբաթ օր աղոթքի գնալ Արևելյան Երուսաղեմում գտնվող Ալ–Աքսա մզկիթը, որը մուսուլմանական աշխարհի ամենահեղինակավոր կրոնական կենտրոններից մեկն է: 1951 թ. հուլիսի 20–ի առավոտյան՝ ուրբաթ օրը, նույնպես Հորդանանի Հաշիմյան միապետ Աբդալլահ իբն Հուսեյն ալ–Հաշիմին իր թոռան՝ 16–ամյա Հուսեյնի հետ գնաց Ալ–Աքսա մզկիթ՝ առավոտյան ուրբաթօր-

յա աղոթքի: Բայց այս անգամ նրան վիճակված չէր մզկիթ մտնել և իր աղոթքն անել՝ արտասանելով «Բիսմիլլահ ռահման ռահիմ»՝ «Հանուն գթառատ և գթասիրտ Ալլահի» ավանդական բառերը: Երբ նա մոտենում էր մզկիթին, մզկիթի շուրջը հավաքված ամբոխի միջից առաջացավ մի երիտասարդ և ուղղակի կրակելով Աբդալլահ թագավորի վրա՝ տեղնուտեղը սպանեց նրան: Այնուհետև նա երկրորդ փամփուշտն արձակեց, այս անգամ նրա թոռան՝ Հորդանանի ապագա թագավոր Հուսեյնի վրա: Գնդակը, սակայն, կպավ նրա կրծքի վրա ամրացված մետաղյա մեդալին և ոչ մի վնաս չպատճառեց նրան:

Ահաբեկիչը Շուքրի Աշու անունով երիտասարդ պաղեստինցի էր, որն անմիջապես ձերբակալվեց: Դատավարության ժամանակ ի հայտ եկան փաստեր, որոնք վկայում էին այն մասին, որ Աբդալլահի սպանությունը դավադրության արդյունք էր. և Շուքրի Աշուն միայնակ չէր գործել, այլ ունեցել էր համախոհներ: Նրանցից ոմանք գտնվում էին եգիպտոսում, և եգիպտական կառավարությունը հրաժարվեց նրանց հանձնել հորդանանյան իշխանություններին:

Գոյություն ունի երկու վարկած Աբդալլահ թագավորի սպանության պատճառների վերաբերյալ:

Մի տեսակետն այն է, որ միապետի սպանությունը բողոքի նշան էր ընդդեմ Աբդալլահի «Մեծ Սիրիա» ստեղծելու քաղաքականության, որը, ինչպես նշել ենք, խորը դժգոհություն էր առաջ բերել արաբական երկրներում: Ի պաշտպանություն այս կարծիքի մատնանշվում է նաև այն պարագան, որ եգիպտոսի կառավարությունը հրաժարվեց դավադրության մեջ մեղադրվող անձանց հանձնել հորդանանյան կողմին:

Իսկ երկրորդ վարկածն այն է, որ դա արդյունք էր պաղեստինյան հարցում Աբդալլահի քաղաքականության, որի հետևանքով նա Պաղեստինի տարածքի մի մասը բռնակցեց իր թագավորությանը: Շատ պաղեստինցիներ դա համարեցին դավաճանություն, իսկ Աբդալլահին՝ դավաճան, որը գաղտնի գործարքների մեջ էր մտել սիոնիստների, ապա նաև Իսրայելի ղեկավարների հետ և բռնակցելով արևելյան Պաղեստինը Հորդանանին՝ դրանով իսկ արգելակեց նախատեսվող անկախ արաբական պաղեստինյան պետության ստեղծումը: Նրան համարելով «բրիտանական լակեյ» («Lackey of the British»)՝, մեղադրում էին, որ նա, բրիտանացիների և սիոնիստների հետ գործարքի մեջ մտնելով, «իր հարցերը լուծեց ի հաշիվ արաբների (իմա՝ պաղեստինցիների — Ն. Հ.)»:

Այսպես պատմության գիրկն անցավ Անդրհորդանան–Հորդանանի ստեղծման, կազմավորման և կայացման բարդ ու հակասություններով լեցուն դարաշրջանը, որն իր վրա կրում է նրա առաջին էմիր և թագավոր Աբդալլահ իբն Հուսեյն ալ–Հաշիմիի գործունեության անջնջելի կնիքը:

4. Թալալի կարճատև թագավորության շրջանը և Հորդանանի 1952 թ. սահմանադրությունը

Սպանված Աբդալլահի փոխարեն, ժառանգականության վերաբերյալ Հորդանանում հաստատված կարգի համաձայն, գահն անցավ նրա ավագ որդուն՝ Թալալ իբն Աբդալլահ ալ–Հաշիմիին, որը ծնվել էր Մեքքայում 1909 թ.: Նա պաշտոնապես հորդանանյան գահին բարձրացավ 1951 թ. սեպտեմբերի 6–ին: Երեք օր անց՝ 1951 թ. սեպտեմբերի 9–ին, Թալալի ավագ որդին՝ արքայազն Հուսեյնը, հայտարարվեց թագաժառանգ: Գահակալության և ժառանգականության ինստիտուցիոնալ հարցերը կարգավորելուց հետո 42–ամյա Թալալը ձեռնամուխ եղավ թագավորության գործերի մեջ խորամուխ լինելու և կարգավորելու ոչ դյուրին խնդրին: Նա իր հորից, որի գործունեության ոչ միայն ականատեսն էր եղել, այլև մոտիկից հետևել նրա կառավարման մեթոդներին և ծանոթ էր պալատական գաղտնիքներին ու խարդավանքներին, ժառանգել էր բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց մասին հիշատակվեց վերևում: Դրանք իրենց լուծումն էին պահանջում, որոնց համար անհրաժեշտ էր և՛ ժամանակ, և՛ քաղաքական կամք:

Չնայած Թալալի մտավոր կարողությունների մասին եղած աննպաստ կարծիքներին, այդուհանդերձ, փաստերը վկայում են այն մասին, որ նա լավ էր հասկանում, թե ինչ էր ժառանգել հորից, և ինչ պետք է աներ կամ, ավելի ճիշտ, ինչ չպետք է աներ: Նա առաջին օրվանից գիտակցում էր, որ սխալ կլինի նույնությամբ, առանց որևէ փոփոխության շարունակել իր հոր քաղաքականությունը, որի նկատմամբ հորդանանցիները և պաղեստինցիներն արդեն կորցրել էին հավատը, և որը Հորդանանին կանգնեցրել էր փակուղու առջև:

Թալալը սկսեց որոշ փոփոխություններից ներքին քաղաքականության մեջ: Աշխուժացավ հասարակական–քաղաքական կյանքը: Սկսեցին լույս տեսնել դեմոկրատական և ընդդիմադիր ուժերի հրատարակությունները, ինչպես՝ խաղաղության կողմակիցների օրգան

«Ալ–Ֆաջր ալ–Ջադիդը» («Նոր արշալույս»), Ազգային–սոցիալիստական կուսակցության օրգան «Ալ–Միսակը» («Խարտիա» կամ «Ծրագիր») և այլն: Ընդհանրապես նրա ներքին քաղաքականությանը սկզբնական շրջանում բնորոշ էր որոշ մեղմացում՝ համեմատած նախկին միապետի կոշտ և բռնության վրա խարսխված քաղաքականության:

Թալալի թերևս ամենամեծ ծառայությունը եղավ Հորդանանի նոր սահմանադրության ընդունումը, որը գործողության մեջ դրվեց նրա հրամանով 1952 թ. հունվարի 1–ին: Դա անկախ Հորդանանի առաջին սահմանադրությունն էր, որտեղ հաշվի էին առնված նոր ժամանակների պահանջները և նոր իրողությունները: Այն ընդհանուր առմամբ բնութագրվում է որպես լիբերալ սահմանադրություն: Նրանում հստակ սահմանված էին անհատի ազատությունները, իշխանության տարբեր ճյուղերի, այդ թվում և թագավորի, պառլամենտի, կառավարության ու նախարարների իրավունքներն ու պարտականությունները:

Սահմանադրությունում ամրագրված էր. «Հորդանանի Հաշիմյան Թագավորությունը անկախ, անբաժան և ինքնիշխան պետություն է», որտեղ «իշխանությունը պատկանում է ժողովրդին»: Իսլամը հայտարարվում էր պետական կրոն, իսկ արաբերենը՝ պաշտոնական լեզու:

Բավականին հանգամանորեն էին սահմանված անհատի ազատությունները և իրավունքները: Բոլոր հորդանանցիները համարվում էին իրավահավասար, և արգելվում էր որևէ խտրականություն՝ ռասայական, կրոնական կամ լեզվական տարբերությունների հիման վրա: Բոլորին երաշխավորվում էին աշխատանքի և կրթության հնարավորություններ: Երաշխավորվում էր անհատի ազատությունը բնակության վայրի և սեփականության հարցերում, ոչ մի հորդանանցի չէր կարող արտաքսվել: Սահմանվում էր մամուլի և կարծիքների ազատություն: Ըստ օրենքի կարող էին ստեղծվել ընկերություններ և կազմակերպություններ, ազատորեն հիմնվել դպրոցներ, տարրական կրթությունը ձրի էր և պարտադիր, իսկ տարբեր կրոնների նկատմամբ սահմանվում էր հանդուրժողականություն:

Օրենսդիր իշխանությունը, ըստ սահմանադրության, պատկանում էր Ազգային ժողովին և թագավորին: Ազգային ժողովը բաղկացած է երկու պալատներից՝ Սենատից և Ներկայացուցիչների պալատից:

Սենատի անդամներին նշանակում էր թագավորը նախկին և ներկա վարչապետներից, նախարարներից, դեսպաններից, գեներալի կոչում ունեցող պաշտոնաթող զինվորականներից, դատական բարձրա-

գույն ատյանների ներկայացուցիչներից և այլն: Նրանք չէին կարող լինել թագավորի ազգականներից, պետք է 40 տարեկանից բարձր տարիք ունենային և նշանակվում էին 4 տարի ժամանակով, իսկ Սենատի նախագահը՝ 2 տարի ժամանակով:

Ներկայացուցիչների պալատի անդամներն ընտրվում էին գաղտնի քվեարկությամբ ընդհանուր ընտրությունների միջոցով՝ 4 տարի ժամանակով: Նրա նախագահն ընտրվում էր յուրաքանչյուր տարի՝ փակ գաղտնի քվեարկությամբ: Նա պետք է լիներ հորդանանյան քաղաքացի՝ 30 տարեկանից բարձր տարիք ունեցող. Նրա անդամ չէին կարող լինել թագավորի մերձավոր ազգականները: Ներկայացուցիչների պալատի անդամները չեն կարող զբաղվել բիզնեսով:

Ազգային ժողովի նստաշրջանը հրավիրում է թագավորը՝ յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1–ին: Նա իրավունք ունի որոշակի պայմաններում ցրել Ազգային ժողովը: Վերջինս որոշումներն ընդունում է ձայների մեծամասնությամբ, եթե ներկա է անդամների երկու երրորդը: Պառլամենտի նստաշրջանները բաց են՝ հրապարակային, միայն առանձին հարցերի քննարկման դեպքում, կառավարության կամ առնվազն հինգ դեպուտատների առաջարկությամբ, կարող են լինել գաղտնի նիստեր:

Կառավարության ներկայացրած առաջարկությունները Ներկայացուցիչների պալատը ուղարկում է Սենատ: Վերջինիս հավանությանն արժանանալուց հետո այն ուղարկվում է թագավորի հաստատմանը: Եթե պալատներից մեկը մերժում է օրենքը, ապա հրավիրվում է Սենատի և Ներկայացուցիչների պալատի համատեղ նիստ, որտեղ որոշումներն ընդունվում են ձայների երկու երրորդի մեծամասնությամբ. Թագավորը նույնպես իրավունք ունի մերժել և չհաստատել պալատի հաստատած որոշումը: Այդ դեպքում այն ուղարկվում է երկու պալատների համատեղ քննարկմանը, որտեղ որոշման համար անհրաժեշտ է ձայների երկու երրորդի հավանությունը:

Սահմանադրության մեջ հատուկ բաժին է հատկացված թագավորին, նրա գահ բարձրանալուն, իրավունքներին ու պարտականություններին: Նա է պետության ղեկավարը: Հորդանանի թագավոր կարող է լինել միայն Աբդալլահ իբն Հուսեյնի դինաստիայի արական սեռի ժառանգորդը, որի 18 տարին, ըստ լուսնային տոմարի, գահ բարձրանալու պահին լրացել է: Այլ կերպ ասած՝ Հաշիմյան դինաստիայի գահակալական իրավունքներն ամրագրված են երկրի հիմնական օրենքով: Բայց եթե

գահը ժառանգել է մի թագաժառանգ, որի 18 տարին դեռևս չի լրացել, ապա հաստատվում է Խնամակալական խորհուրդ, որը կառավարում է երկիրը մինչև թագաժառանգի 18 տարին լրանալը՝ ըստ լուսնային կամ մուսուլմանական տոմարի:

Գահ բարձրանալով թագավորը տալիս է երդում՝ հարգել և կիրառել սահմանադրությունը և հավատարիմ մնալ ազգին: Նա հաստատում է օրենքները, դրանք գործողության մեջ դնում և կիրառում. Նրան է պատկանում պատերազմ հայտարարելու, հաշտություն կնքելու և պայմանագրեր ստորագրելու իրավունքը: Բայց նրա ստորագրած պայմանագրերը պետք է հաստատի Ազգային ժողովը:

Թագավորը Հորդանանի զինված ուժերի գլխավոր հրամանատարն է: Նա է նշանակում պառլամենտական ընտրությունները, վարչապետին, հաստատում մահվան դատավճիռները, շնորհում զինվորական և քաղաքացիական բարձրագույն աստիճաններն ու կոչումները:

Կառավարության անդամների կամ նախարարների գործունեությունը դրված է որոշակի շրջանակների մեջ: Նրանց արգելվում է լինել որևէ ընկերության անդամ, աշխատավարձ ստանալ որևէ ընկերությունից, մասնակցել որևէ ֆինանսական և առևտրական գործարքի: Նախարարների խորհուրդը պատասխանատու է Ներկայացուցիչների պալատի առջև: Այդ պալատն է վստահություն կամ անվստահություն հայտնում կառավարությանը: Անվստահություն հայտնելու դեպքում կառավարությունն ամբողջապես հրաժարական է տալիս: Նոր վարչապետը պարտավոր է իր ծրագիրը ներկայացնել Ներկայացուցիչների պալատին և ստանալ վստահության քվե:

Եվ, վերջապես, Խնամակալական խորհուրդը 1952 թ. օգոստոսին հատուկ որոշում ընդունեց Հորդանանում կիրառվող տիտղոսների մասին, որոնց զգալի մասը գալիս էր դեռևս վաղ միջնադարից կամ օսմանյան տիրապետության շրջանից: Այդ որոշման համաձայն՝ վերացվեցին «փաշա» և «բեյ» տիտղոսները, և դրանց փոխարեն գործածության մեջ դրվեց «ալ–սայիդ»՝ «պարոն», տոհմիկ արաբական եզրը՝ որպես միմյանց դիմելու հարգալից ձև:

Հետագայում թեև մի քանի անգամ սահմանադրության մեջ մտցվեցին փոփոխություններ, սակայն 1952 թ. սահմանադրության ատաղձը պահպանվեց:

Թալալի կարճատև թագավորության ընթացքում փոփոխություններ տեղի ունեցան նաև արտաքին քաղաքականության ոլորտում: Նա

ձգտում էր աստիճանաբար թուլացնել Հորդանանի կախվածությունը բրիտանական իմպերիալիզմից: Դրա դրսևորման ձևերից մեկը եղավ Հորդանանի մերձեցումը ԱՄՆ–ի հետ, նրանից աջակցություն ստանալը՝ ի հակակշիռ բրիտանական ազդեցության:

Ավելի առարկայական եղան փոփոխություններն արաբական երկրների հետ հարաբերությունների ոլորտում: Թալալը հրաժարվեց Եգիպտոսի և Սիրիայի հետ իր հոր առճակատման քաղաքականությունից և բարելավեց Հորդանանի հարաբերություններն այդ երկրների, ինչպես նաև Արաբական պետությունների լիգայի հետ: Թալալը միացավ արաբական կոլեկտիվ անվտանգության պակտին, որի առանցքը Եգիպտոսի և Սիրիայի համագործակցությունն էր: Դա միանգամից բարելավեց Հորդանանի հարաբերություններն իր հարևան այդ երկու արաբական երկրների հետ:

Թալալի թագավորության շրջանը իր վրա կրում էր հակասական գործողությունների կնիք: Ներքին քաղաքականության մեջ դրսևորված որոշ մեղմացումը շատ կարճ տևեց: 1951 թ. վերջերից հորդանանյան հետադիմությունը ուժեղացրեց իր հարձակումները դեմոկրատական ուժերի վրա, արգելվեց խաղաղության կողմնակիցների շարժումը, նրա շատ ղեկավար գործիչներ ձերբակալվեցին, իսկ «Ալ–Ֆաջր ալ–Ջադիդը» փակվեց:

Դեպքերի զարգացմանը և թագավորի քաղաքականությանն ակնդետ հետևում էր Անգլիան: Վերջինս մտահոգված էր Թալալի բացահայտ հակաանգլիական դիրքորոշմամբ և ամերիկյան ազդեցության ուժեղացմամբ: Նա դա չէր կարող հանդուրժել:

Խնամքով նախապատրաստվեց Թալալի գահընկեց անելու գործընթացը՝ պատրվակ բռնելով նրա «մտավոր հիվանդությունը», որը, իբր, անկարող էր դարձնում նրան երկրր ղեկավարի բարձր պարտականություններն իրականացնելու համար: Դրան նախապատրաստվեցին կառավարությունը և Ազգային ժողովը, որոնց համատեղ ջանքերով իրականացվեց ընդամենը մեկ տարի գահի վրա նստած 43–ամյա Թալալի տապալումը:

1952 թ. օգոստոսի 11–ին կայացավ Հորդանանի կառավարության արտակարգ նիստը, որը որոշեց Թալալին գահընկեց անելու հարցը Ազգային ժողովի քննարկման դնել, քանի որ, ըստ սահմանադրության, որը գործողության մեջ էր դրել հենց ինքը՝ Թալալը, այդ իրավունքը պատկանում էր Հորդանանի պառլամենտին: Եվ 1952 թ. օգոստոսի 11–ին Հոր-

դանանի Ազգային ժողովը միաձայն որոշեց գահընկեց անել Թալալ իբն Աբդալլահ ալ–Հաշիմիին՝ «առողջական վիճակի» պատճառով:

Հորդանանում փաստորեն տեղի ունեցավ պալատական հեղաշրջում. Թագազուրկ թագավորին «տեղավորեցին» Ստամբուլի հոգեբուժարաններից մեկում, որտեղ նա մնաց 20 տարի և հոգին ավանդեց 1972 թ՝ 63 տարեկան հասակում:

5. Իրադրությունը Հորդանանում Հուսեյն իբն Թալալ ալ–Հաշիմիի թագավորության առաջին տարիներին: Քաղաքական պայքարի սրումը (1952–1956 թթ.)

Թալալին գահընկեց անելուց հետո Հորդանանի թագավոր հռչակվեց նրա ավագ որդի Հուսեյն իբն Թալալ ալ–Հաշիմին:

Հուսեյնը թեև հռչակվեց թագավոր, սակայն հոր մահից անմիջապես հետո չնստեց գահի վրա և երկրի ղեկավարությունը չվերցրեց իր ձեռքը, քանի որ նրա 18 տարին դեռևս չէր լրացել: Սահմանադրության համաձայն ստեղծվեց Խնամակալության խորհուրդ, որը կատարում էր թագավորի, այսինքն՝ պետության ղեկավարի ֆունկցիաները: Հուսեյնի 18–ը լրացավ 1953 թ մայիսի 2–ին, և հենց այդ օրն էլ նա գահ բարձրացավ ու Հորդանանը կառավարեց որպես նրա թագավոր ուղիղ 46 տարի՝ մինչև 1999 թ. փետրվարի 7–ը: Նա գահի վրա իր երկարակեցությամբ գերազանցեց իր պապին՝ Աբդալլահին, որի գահակալության տարիները կազմում են 30 տարի՝ 1921–1951 թթ.:

Հուսեյն իբն Թալալը ծնվել էր 1935 թ. Ամմանում և ստացել բավականին լավ դաստիարակություն ու կրթություն: Նա ավարտել էր Ալեքսանդրիայի Վիկտորիա քոլեջը, այնուհետև մասնավոր քոլեջ Հարրոուում և Սանդերստում, ապա Բրիտանական Ռազմական ակադեմիան՝ արաբական ավանդական սովորույթները զուգակցելով եվրոպական, առաջին հերթին անգլիական մեթոդների հետ, սակայն մշտապես երկու ոտքով ամուր կանգնած մնալով արաբական գետնի վրա:

Թագավորի փոփոխությունը հանդարտություն չբերեց երկրին: Պայքարը դեմոկրատացման և ազգային անկախության ամրապնդման համար, ընդհակառակը, ավելի մեծ ծավալներ ընդունեց: Հուսեյն իբն Թալալը հարկադրված էր հաշվի առնել այդ հանգամանքը և որոշ չափով մեղմացնել իր ներքին քաղաքականությունը: Դա նախ և առաջ իր արտացոլումը գտավ նոր վարչապետի թեկնածության հարցում: Վար-

չապետ նշանակվեց Ֆավզի ալ–Մուլքին, որը նույնպես ավելի մեղմ քաղաքականության կողմնակից էր: Նրա կառավարության կազմում նախարարական պաշտոններ գրավեցին նաև ընդդիմության ներկայացուցիչները, բանտերից ազատվեցին մի շարք քաղաքական գործիչներ և ընդդիմադիրներ: Հասարակությունն ընդհանուր առմամբ գոհունակությամբ ընդունեց վարչապետի հայտարարությունն առ այն, որ ինքը թույլ չի տա կիրառել «Երկրի պաշտպանության մասին օրենքը», որն իր բնույթով հետադիմական օրենք էր՝ ներծծված հակադեմոկրատիզմի ամենադաժան գաղափարներով: Օրենքն իրավունք էր տալիս հորդանանյան իշխանություններին, այդ թվում և վարչապետին, առանց դատարանի որոշման և որևէ հիմնավորման ձերբակալել և բանտ նետել ամեն մեկին, ով «կհամարվեր» վտանգավոր կամ անվստահելի: Նա կարող էր բանտարկվել անորոշ ժամանակով:

1954 թ. մայիսին Հորդանանի դեմոկրատական ուժերը ստեղծեցին Ազգային ճակատ, որի ծրագիրը պարունակում էր երկրի ազգային–ազատագրական ուժերի բոլոր գլխավոր պահանջները՝ 1948 թ. անգլո–հորդանանյան պայմանագրի վերացում, անգլիական զորքերի դուրսբերում Հորդանանից, հրաժարում ամերիկյան «օգնությունից», ազգային տնտեսության հովանավորում, Հորդանանում ազգային դեմոկրատական իշխանության հաստատում, առաջադիմական բարեփոխումների կիրառում և այլն:

Այդ բոլորը դուր չէր գալիս Հորդանանի ավանդական ցեղային ֆեոդալական ավագանուն, բոլոր հետադիմական ուժերին, որոնք դրա մեջ սպառնալիք էին տեսնում իրենց տիրապետությանը: Ստեղծված պայմաններում 1954 թ. մայիսի 2–ին հրաժարական տվեց Ֆավզի Մուլքիի կառավարությունը: Նա հարկադրված էր դիմել այդ քայլին Հորդանանի հետադիմական ուժերի ճնշման ներքո, որոնք դժգոհ էին Ֆավզիի մեղմ քաղաքականությունից և պահանջում էին ավելի կտրուկ քայլերի դիմել երկրի հայրենասիրական և դեմոկրատական ուժերի նկատմամբ: Թագավորը կառավարություն կազմելը հանձնարարեց Թաուֆիկ Աբու ալ–Հուդային, որը պատկանում էր Հորդանանի հետադիմական քաղաքական գործիչների էլիտային:

Հենց նրան հանձնարարվեց անցկացնել պառլամենտական ընդհանուր ընտրությունները, որոնք առաջինն էին Հուսեյնի թագավորության շրջանում: Ընտրությունները տեղի ունեցան 1954 թ. հոկտեմբերի 16–ին: Պառլամենտական ընտրություններն ընթացան ահաբեկման, ճն-

շումների և կեղծիքի պայմաններում, և ամեն ինչ արվեց, որպեսզի ապագա պառլամենտում հետադիմական ուժերն ապահովեն իրենց մեծամասնությունը՝ մի կողմից, և հնարավորություն չտրվի երկրի ընդդիմությանն իր ներկայացուցիչներն ունենալ Հորդանանի բարձրագույն օրենսդիր մարմնում՝ մյուս կողմից:

Ընտրությունների ժամանակ կատարված կեղծիքները և ալ–Հուդայի կառավարության անսքող հակադեմոկրատական քաղաքականությունը բողոքի հուժկու ալիք առաջացրին երկրում: Հորդանանում տեղի ունեցան զանգվածային ցույցեր ընդդեմ կառավարության հակադեմոկրատական քաղաքականության: Բողոքի ալիքն ուղղվեց նաև թագավորի դեմ՝ նրան պատասխանատու համարելով ընտրությունները կեղծիքի պայմաններում անցկացնելու համար: Կառավարությունը ստիպված մարտական պատրաստականության վիճակում դրեց զորքերը: Շատ վայրերում բախումներ տեղի ունեցան զորքերի և ցուցարարների միջև, իսկ Ամմանում ժողովրդական խավերը բարիկադներ կառուցեցին և հերոսաբար դիմադրում էին ոստիկանական ուժերի գրոհներին: Կառավարությունը հարկադրված էր երկրի տարբեր շրջաններում մտցնել արտակարգ դրություն:

Ժողովրդի համառ պայքարի շնորհիվ և հակառակ բռնություններին ու սարսափի մթնոլորտին՝ Ազգային ճակատի երկու թեկնածուներ ընտրվեցին պառլամենտի անդամ, որը պետք է դիտել դեմոկրատական ուժերի հաջողությունը:

Սակայն պայքարը դրանով չավարտվեց: Ամբողջ 1954–1955 թթ. չէին դադարում գործադուլները, ցույցերը և հակաիմպերիալիստական ելույթները, որոնք ավելի ուժեղացան 1955 թ., երբ Անգլիան, Թուրքիան և Իրաքը սկսեցին ճնշում գործադրել Հորդանանի վրա՝ նրան Բաղդադի ագրեսիվ պակտի մեջ ներգրավելու համար. Այդ նպատակով 1955 թ. նոյեմբերի 4–ին պաշտոնական այցով Հորդանան այցելեց Թուրքիայի պրեզիդենտ Ջալալ Բայարը: Իսկ Իրաքը Բաղդադի պակտին միանալու համաձայնության դիմաց Ամմանին առաջարկեց տնտեսական օգնություն:

Հորդանանի թագավորի և կառավարության դիրքորոշումը Բաղդադի պակտին միանալու հարցում հստակ չէր, ավելի շուտ տատանողական էր, այդ պատճառով էլ բանակցությունները ձգձգվում էին: Նրանց նոր լիցք հաղորդելու և Հորդանանի իշխանությունների վրա նոր ճնշում գործադրելու նպատակով 1955 թ. Ամման այցելեց Մեծ Բրիտա-

նիայի բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ Գ. Թեմպլերը, որը տվեց իր դրական արդյունքները: Հորդանանի կառավարությունն իր պատրաստակամությունը հայտնեց միանալու Բաղդադի պակտին: Ի նշան բողոքի՝ դեկտեմբերի 13–ին կառավարության 4 նախարարներ իրենց հրաժարականը ներկայացրին և դուրս եկան կառավարության կազմից: Դեկտեմբերի 15–ին իր գրաված պաշտոնից ազատվեց Հորդանանի բանակի կայսերական գլխավոր շտաբի պետ գեներալ Սաիդ ալ–Մուֆթին, որը կտրուկ դեմ էր Բաղդադի ռազմական պակտին միանալուն, և նրա փոխարեն շտաբի պետ նշանակվեց Հազզա ալ–Մաջալին, որը Բաղդադի պակտին միանալու մոլի կողմնակից էր: Նա հայտարարեց, որ շուտով Հորդանանը կմիանա Բաղդադի պակտին: Սակայն այլ կերպ էին մտածում Հորդանանի ազգային–հայրենասիրական ուժերը և ժողովրդական ամենալայն զանգվածները: 1955 թ. դեկտեմբերի 16–ին սկսվեցին հզոր ցույցեր, որոնք իրենց թափով և ծավալներով ավելի շատ ապստամբության բնույթ էին կրում: Ալ–Մաջալիի կառավարությունը տապալվեց, և դեկտեմբերի 20–ին թագավորը վարչապետի պաշտոնում նշանակեց Իբրահիմ Հաշիմիին: Սակայն դա չկայունացրեց իրադրությունը, և 1956 թ. հունվարի 9–ին նրա կառավարությունը հրաժարական տվեց: Հորդանանի նոր վարչապետի պաշտոնը վստահվեց Սամիր Ռիֆաիին, որն աչքի էր ընկնում իր պահպանողական հայացքներով: Նա ավելի սաստկացրեց բռնությունները, ձերբակալվեցին մի շարք քաղաքական կուսակցությունների ղեկավարներ ու գործիչներ:

Դժգոհությունը համակեց նաև Արաբական լեգեոնի որոշ սպաների, որոնք դեմ էին Բաղդադի պակտին և պահանջում էին հեռացնել Գլաբ փաշային: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ այդ իրադարձությունների ընթացքում իրեն շատ ագրեսիվ էր պահում Գլաբ փաշան, որը փորձում էր իր տնօրինության տակ գտնվող Արաբական լեգեոնն օգտագործել Հորդանանում մեծ թափ առած հակաիմպերիալիստական շարժումները ճնշելու համար: Տեղի էին ունենում զինված բախումներ լեգեոնի և հայրենասիրական ուժերի միջև, որի ընթացքում զոհվեցին հարյուրավոր հայրենասերներ և ձերբակալվեցին ազատագրական շարժման երկու հազար մասնակիցներ: Դժգոհությունն ավելի խորացավ և վերածվեց զայրույթի, երբ թագավորը Գլաբ փաշային նշանակեց Արտակարգ զինվորական տրիբունալի նախագահ, և նա սկսեց դատել լեգեոնի այն մարտիկներին, որոնք հրաժարվել էին կրակել ժողովրդական ցույցերի մասնակիցների վրա:

Հորդանանյան դժգոհ զինվորականները ստեղծեցին «Ազատ սպաներ» կազմակերպությունը՝ Ալի Աբու Նուվարի գլխավորությամբ: Նրանք պահանջեցին Հորդանանի թագավոր Հուսեյնից հեռացնել Գլաբին Արաբական լեգեոնի հրամանատարի պաշտոնից: Մինչ այդ նրանց հաջողվել էր իրենց ազդեցությունը տարածել լեգեոնի մի շարք զորախմբերի վրա, կապեր հաստատել երկրի ընդիմադիր հայրենասիրական ուժերի հետ և ապահովել նրանց աջակցությունը: Ստեղծված պայմաններում թագավորը հարկադրված էր նահանջել և բավարարել նրանց պահանջը: 1956 թ. մարտի 2–ին Գլաբ փաշան հեռացվեց Արաբական լեգեոնի և Արտակարգ ռազմական ատյանի նախագահի պաշտոնից: Հորդանանյան բանակը փաստորեն անցավ հայրենասիրաբար տրամադրված սպաների հրամանատարության տակ: 1956 թ. մայիսին գեներալ մայոր Աննաբի փոխարեն թագավորը հորդանանյան բանակի շտաբի պետ նշանակեց Ալի Աբու Նուվարին, որը պայքարում էր օտարերկրյա ազդեցությունը Հորդանանի բանակի և կառավարության վրա վերացնելու համար: Այդ նույն ժամանակ Հորդանանի վարչապետի պաշտոնում նշանակվեց Սաիդ ալ–Մուֆթին:

Թագավորը, զգալով, որ շատ էր չափն անցել, մասնավորապես Բաղդադի պակտին միանալու հարցում, անհրաժեշտ համարեց շտկել դրությունը և ավելի շատ ապավինել չեզոքության քաղաքականությանը: Դրա արտահայտությունը հանդիսացան Հուսեյն թագավորի այցը Սիրիա, որը տեղի ունեցավ 1956 թ. ապրիլին, և նրա բանակցությունները սիրիական պրեզիդենտի հետ, որը հանգեցրեց լարվածության մեղմացմանը նրանց միջև: Դեռ ավելին՝ համաձայնություն ձեռք բերվեց Հորդանանի և Սիրիայի միջև տնտեսական միասնություն ստեղծելու վերաբերյալ:

Այդ կարևոր փոփոխություններից հետո բանտից ազատվեցին քաղաքական բանտարկյալները, վերացվեց գրաքննությունը և այլն:

6. Սուլեյման ալ–Նաբուլսիի կառավարությունը և նրա առաջադիմական քաղաքականությունը

1956 թ. հոկտեմբերի 21–ին Հորդանանում տեղի ունեցան պառլամենտական ընտրություններ, որոնց ակտիվորեն մասնակցում էին նաև Ազգային ճակատի մեջ միավորված Ազգային–սոցիալիստական, Բաաս և կոմունիստական կուսակցությունները: Ճակատը ստեղծվել էր

Ազգային–սոցիալիստական կուսակցության և նրա առաջնորդ Սուլեյման ալ–Նաբուլսիի նախածեռնությամբ, որն իրենց ներկայացնում էր ընտրական բլոկ: Ընտրություններում տպավորիչ հաղթանակ տարավ Ազգային ճակատը, որը պառլամենտում շահեց 16 տեղ, և Ազգային–սոցիալիստական կուսակցության ղեկավար Սուլեյման ալ–Նաբուլսին դարձավ Հորդանանի վարչապետ: Պառլամենտի անդամ ընտրվեցին նաև կոմունիստական կուսակցության երկու թեկնածուները, որոնք ընտրություններին մասնակցում էին Ազգային ճակատի ընդհանուր ընտրական ցուցակով.

Սուլեյման ալ–Նաբուլսիի կառավարությունը ներքին քաղաքականության բնագավառում կիրառեց մի շարք դեմոկրատական միջոցառումներ՝ արտոնվեց դեմոկրատական պարբերականների հրատարակումը, առաջադիմական կազմակերպությունները ստացան լեգալ գործելու իրավունք, սկսվեց պետական ապարատի զտումը հետադիմական տարրերից, ավարտվեց հորդանանյան բանակի հրամանատարության արաբականացումը և այլն: Այդ կարևոր միջոցառումների շարքում, այդուհանդերձ, հարկ է առանձնացնել Արաբական լեգեոնի, որն իրականում հանդիսանում էր Հորդանանի բանակը, հրամանատարության արաբականացման հարցը: Լեգեոնից հեռացվեցին բոլոր անգլիական սպաները, և նրանց տեղը գրավեցին հորդանանցի սպաները: Դա կարևոր քայլ էր Հորդանանի անկախության ամրապնդման ճանապարհին:

Մեծ փոփոխություններ տեղի ունեցան նաև արտաքին քաղաքականության բնագավառում: Հորդանանը հանդես եկավ Եգիպտոսի պաշտպանությամբ 1956 թ. հոկտեմբերին անգլո–ֆրանս–իսրայելական եռյակ ագրեսիայի ժամանակ: Ալ–Նաբուլսիի կառավարությունը հոկտեմբերի 31–ին խզեց դիվանագիտական հարաբերությունները Ֆրանսիայի հետ, վերահսկողություն սահմանեց Հորդանանում գտնվող անգլիական ռազմական բազաների վրա, նոյեմբերի 1–ից արգելեց անգլիացիներին օգտվել այդ բազաներից և հայտարարեց ընդհանուր զորահավաք: 1956 թ. նոյեմբերի 11–ին ստեղծվեց հասարակական անվտանգության կազմակերպություն, որի շարքերը համալրեցին 18 տարին լրացած բոլոր տղամարդիկ: Ալ–Նաբուլսիի կառավարությունը, հաշվի առնելով, որ Իսրայելը՝ որպես Եգիպտոսի դեմ եռյակ ագրեսիայի մասնակից, կարող էր հարձակում գործել նաև Հորդանանի վրա, որը պաշտպանում էր Եգիպտոսին, համաձայնվեց, որ Իրաքի, Սաուդյան Արաբիայի և Սիրիայի ռազմական ուժերը ժամանակավորապես տեղա-

կայվեն Հորդանանում՝ նրա պաշտպանությունն ամրապնդելու նպատակով:

Մեծ նշանակություն ունեցավ նաև 1957 թ. հունվարի 19–ին Եգիպտոսի, Սիրիայի և Սաուդյան Արաբիայի հետ Հորդանանի ստորագրած համաձայնագիրը, որով նա ֆինանսական օգնություն էր ստանալու այդ երկրներից: Նրանք պարտավորվում էին Հորդանանին առաջիկա տաս տարիների ընթացքում յուրաքանչյուր տարի որպես ֆինանսական օգնություն տրամադրել 12 մլն 800 հազար ֆունտ ստեռլինգ: Դա հնարավորություն էր տալիս Հորդանանին հրաժարվել անգլիական ֆինանսական սուբսիդիայից, որի շնորհիվ վերանում էր Անգլիայից Հորդանանի կախվածության մի կարևոր լար ևս:

Նաբուլսիի կառավարության ամենամեծ հաջողությունը պետք է համարել 1948 թ. անգլո–հորդանանյան պայմանագրի չեղյալ հայտարարելը, որը պաշտոնապես տեղի ունեցավ 1957 թ. մարտի 13–ին: Նույն տարվա հուլիսի 2–ին անգլիական վերջին զինվորը հեռացավ Հորդանանից: Դա հորդանանյան ազգային–ազատագրական շարժման, բոլոր հայրենասեր ուժերի խոշոր հաղթանակն էր:

Սակայն Սուլեյման Նաբուլսիի գլխավորած կառավարությունը չկարողացավ կենսագործել իր բոլոր կանխագծումները: Դրան դիմադրում էր ներքին հետադիմությունը: Հարաբերությունները սրվեցին թագավորի և վարչապետի միջև, որի պատճառներից մեկն էլ այն էր, որ ալ–Նաբուլսին մտադիր էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել Խորհրդային Միության հետ և բացասական դիրք էր գրավել «էյզենհաուերի դոկտրինայի» նկատմամբ:

Հորդանանի հետադիմական ուժերը, վայելելով Անգլիայի և ԱՄՆ–ի աջակցությունը, 1957 թ. ապրիլի 10–ին կատարեցին պետական հեղաշրջում: Սուլեյման Նաբուլսին հեռացվեց վարչապետի պաշտոնից. Կառավարական ճգնաժամը տևեց երկու շաբաթ, որի ընթացքում չէին դադարում բողոքի ցույցերն ու ելույթները: Նորանշանակ վարչապետ Ֆախրի ալ–Խալիդին թագավորական պալատը պաշտպանելու համար Ամման մտցրեց բեդվինական զորամիավորումներ, որոնք հայտնի էին իրենց հավատարմությամբ Հաշիմյաններին: Արաբական լեգեոնից հեռացվեցին մի շարք սպաներ, որոնք աչքի էին ընկնում իրենց դեմոկրատական հայացքներով: Սաուդյան թագավորի հրամանով Հորդանանում գտնվող սաուդյան զորքերը դրվեցին Հուսեյն թագավորի տրամադրության տակ:

Սակայն ժողովրդական հուզումները շարունակվում էին. պարզ դարձավ, որ իրեն վարկաբեկած ալ–Խալիդիի կառավարությունն անկարող է հանդարտեցնել երկիրը, և վերջինս հեռացավ քաղաքական ասպարեզից: Հուսեյն թագավորը 1957 թ. ապրիլի 24–ին վարչապետի պաշտոնը վստահեց Իբրահիմ Հաշիմին: Հետադիմությունը տոնում էր իր հաղթանակը: Հորդանանում մտցվեց արտակարգ դրություն, իսկ խոշոր քաղաքներում՝ պարետային ժամ, փակվեցին դեմոկրատական և առաջադիմական թերթերը, կասեցվեց քաղաքական կուսակցությունների գործունեությունը, և նրանք ենթարկվեցին բռնությունների ու հալածանքների, բազմաթիվ առաջադիմական գործիչներ, այդ թվում և սպայական կազմից, ձերբակալվեցին ու բանտ նետվեցին: Գլխավոր շտաբի պետի պաշտոնից ազատ արձակվեց գեներալ Ալի Աբու Նուվարը: Հալածանքներից չխուսափեցին անգամ պառլամենտի անդամները: Նրանցից շատերը, որոնք դեմոկրատական հայացքների տեր էին և պաշտպանում էին Սուլեյման ալ–Նաբուլսիի կառավարության առաջադիմական քաղաքականությունը, զրկվեցին դեպուտատական մանդատներից և անձեռնամխելիությունից ու բանտ նետվեցին: Պետական պաշտոններում վերականգնվեցին բոլոր այն հետադիմական գործիչները, որոնք ալ–Նաբուլսիի կառավարության ժամանակ հեռացվել էին իրենց պաշտոններից:

Այսպիսով՝ դեմոկրատական այն մեծ նվաճումները, որ ձեռք էին բերվել Սուլեյման ալ–Նաբուլսիի կառավարության ժամանակ, վերացվեցին:

Փակվեցին Հորդանանի սահմանները, և կրկին վատացան նրա հարաբերությունները հարևան արաբական երկրների հետ: 1957 թ. մայիսին սիրիական զորքերը, որոնք տեղակայված էին Հորդանանում և գտնվում էին եգիպտա–սիրիա–հորդանանյան համատեղ հրամանատարության ներքո, Հորդանանի պահանջով դուրս բերվեցին երկրից: Սահմանափակվեց նաև եգիպտա–հորդանանյան դիվանագիտական հարաբերությունների ոլորտը: Բնականաբար, օրակարգից հանվեց Խորհրդային Միության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցը: Փոխարենը ավելի սերտացան հարաբերությունները Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ, որի կառավարությունը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ նշված էր որ նա «պատրաստ է պաշտպանել Հորդանանի անկախությունը» և լրացուցիչ ռազմաօդային ուժեր նետեց Հորդանան: Միաժամանակ նա որպես օգնություն 20

մլն դոլար հատկացրեց Հորդանանին: Ֆինանսական օգնություն ցույց տվեց նաև Անգլիան:

Նախկին վարչապետ Սուլեյման ալ–Նաբուլսին ենթարկվեց տնային կալանքի:

7. Հաշիմյան երկու միապետությունների՝ Հորդանանի և Իրաքի միավորումը և Արաբական ֆեդերացիայի ստեղծումը

XX դարի երկրորդ կեսից արաբական աշխարհում տիրապետող քաղաքական և ազգային զանազան հայեցակարգային համակարգերի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում արաբական միասնության գաղափարը: Նա՝ որպես գաղափարախոսություն, համազոր մրցակից չուներ, և արաբական երկրներում չկար որևէ ուժ, որը փորձեր հանդես գալ միասնության գաղափարի դեմ: Հանուն արաբական միասնության էին հանդես գալիս բոլոր ուժերը՝ աջերը և ձախերը, ազգայնականները և դեմոկրատները, կոմունիստները և իսլամիստները, ցեղային–ֆեոդալական վերնախավը և զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող բուրժուական խավերը, միապետականները և հանրապետականները:

Հասկանալի է, որ տարատեսակ այդ ուժերը, որոնք քաղաքական դաշտում գրավում էին միմյանց հակադիր և ծայրահեղ դիրքորոշումներ, միանման բովանդակություն չէին դնում «արաբական միասնություն» հասկացության մեջ: Հանդես գալով հանուն արաբական միասնության՝ արաբական հասարակության վերոնշյալ քաղաքական ուժերը, սոցիալական խավերը և կուսակցությունները միանգամայն այլ նպատակներ էին հետապնդում: Դա շատ լուրջ խոչընդոտ էր արաբական միասնության ճանապարհին, մանավանդ երբ խոսքը գնում էր պետական մակարդակով միավորման մասին: Այդ պատճառով էլ 1950–1990–ական թվականներին պետական մակարդակով միավորման փորձերի ժամանակ նկատվում էին նույնատիպ պետությունների միավորման փորձեր և ոչ թե համընդհանուր միավորման և մեկ միասնական արաբական պետություն ստեղծելու ձգտում, թեև տեսականորեն դա չէր ժխտվում, և դա էր համարվում արաբական միասնության շարժման վերջնական նպատակը:

Առաջին լուրջ քայլը, ավելի ճիշտ փորձը եղավ 1958 թ. փետրվարի 1–ին Արաբական Միացյալ Հանրապետության (ԱՄՀ) կազմավորումը՝ Եգիպտոսի Հանրապետության և Սիրիայի Հանրապետության միավոր-

ման հիմքի վրա: Արաբական այդ երկու պետությունները տիպաբանորեն նման էին միմյանց, գոնե այնքանով, որ երկուսն էլ պաշտոնապես իրենց հայտարարել էին սոցիալիստական ուղիով ընթացող երկրներ, որոնց վերջնական նպատակը արաբական սոցիալիզմի կառուցումն էր:

ԱՄՀ–ի ստեղծումը, որի մեջ միավորվել էին արաբական երկու ամենաառաջատար և զարգացած երկրները, ալեկոծեց ողջ արաբական աշխարհը և առաջ բերեց միավորման աննախադեպ ալիք:

Բայց դարձյալ, ինչպես հաճախ է լինում արաբական աշխարհում, այդ միտումը դրսևորվում էր տարբեր կերպ: Պետությունների այն խումբը, որը տիպաբանորեն մոտ էր կանգնած ԱՄՀ–ի մեջ միավորված Եգիպտոսին և Սիրիային, դեմ չէին միանալ նրան կամ ստեղծել նմանատիպ մեկ այլ կազմավորում: Բայց այն պետությունները, որոնք իրենց կառուցվածքով և քաղաքական կողմնորոշումներով հեռու էին ԱՄՀ–ից կամ ուղղակի հակադիր էին նրան, ԱՄՀ–ի ստեղծումն ընկալեցին որպես սպառնալիք իրենց գոյությանը: Ուստի նրանք ոչ միայն չէին պատրաստվում և չէին կարող միանալ նրան, այլ, ընդհակառակը, ձգտում էին իրենք միավորվել մեկ պետության շրջանակներում՝ ի հակադրություն ԱՄՀ–ի: Այս վերջին հանգամանքը կարծում ենք հարկ է նկատի ունենալ, երբ խոսք է գնում Արաբական ֆեդերացիայի ստեղծման մասին:

Ի պատասխան Եգիպտոսի և Սիրիայի միավորման և ԱՄՀ–ի կազմավորման՝ երկու շաբաթ անց՝ 1958 թ. փետրվարի 14–ին, հայտարարվեց Իրաքի և Հորդանանի միավորման և Արաբական ֆեդերացիայի (ԱՖ) ստեղծման մասին: Հռչակման հետ կապված պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ Հորդանանի մայրաքաղաք Ամմանում, ուր ժամանել էր Իրաքի պատվիրակությունը Իրաքի թագավոր Ֆեյսալ II–ի գլխավորությամբ: Այդ մասին հայտարարեցին և համապատասխան փաստաթղթերը ստորագրեցին Հորդանանի թագավոր Հուսեյն I–ը և Իրաքի թագավոր Ֆեյսալ II–ը: Ֆեյսալը դարձավ Արաբական ֆեդերացիայի ղեկավարը, որն օժտվում էր լայն լիազորություններով: Նա միաժամանակ հանդիսանում էր ֆեդերացիայի ռազմական ուժերի հրամանատարը: Ստեղծվեցին միացյալ պառլամենտ և կառավարություն, որը գլխավորեց Իրաքի հայտնի պետական գործիչ, բրիտանական դրածո Նուրի Սաիդը: Ֆեդերալ կառավարությունն էր տնօրինում արտաքին քաղաքականության, պաշտպանության և այլ կարևոր հարցեր: Ֆեդերացիայում տիրապետող դիրքեր գրավեցին Իրաքի ղեկավարները, մի երկրի, որը մտնում էր Բաղդադի ագրեսիվ ռազմական բլոկի մեջ:

Ֆեդերալ մարմինների ստեղծման հետ միասին պահպանվում էին յուրաքանչյուր երկրի կառավարական մարմինները: Ֆեյսալ II–ը մնում էր Իրաքի, իսկ Հուսեյն I–ը՝ Հորդանանի թագավոր, յուրաքանչյուր երկիր ուներ իր կառավարությունը, պառլամենտը և այլն[4]:

Արաբական ֆեդերացիայի ստեղծումով իրականացվեց Հաշիմյան երկու միապետությունների միավորումը և մի նոր պետության ստեղծում, որի մասին երազում էին Հուսեյն իբն Ալի–ալ Հաշիմին և նրա երկու որդիները՝ Հորդանանի թագավոր Աբդալլահ I–ը և Իրաքի թագավոր Ֆեյսալ I–ը: Նրանց այդ երազանքը իրականություն էր դառնում նրանց թոռների թագավորության շրջանում:

Հուսեյն I–ը և Ֆեյսալը II–ը հասակակիցներ էին, երկուսն էլ ծնվել էին 1935 թ., երկուսն էլ արքայական գահին բարձրացան 1953 թ., երբ բոլորեց նրանց 18 տարին: Դրանով ավարտվում են ընդհանրությունները նրանց ճակատագրում: Ֆեյսալ II–ը թագավորեց ընդամենը 5 տարի և սպանվեց 23 տարեկան հասակում: Իսկ Հուսեյն I–ի նկատմամբ ճակատագիրն ավելի բարեհաճ գտնվեց: Նա թագավորեց մինչև 1999 թ. և, հաջողությամբ խուսանավելով մահափորձերից ու պետական հեղաշրջումներից, կյանքն ավարտեց մահիճում:

Հորդանանցիները, ինչպես և արաբական մյուս երկրների բնակչությունը, դեմ չէին միավորմանը: Սակայն Հորդանանի դեմոկրատական ուժերը դժգոհ էին, որ ֆեդերացիայում տիրապետող դիրքեր գրավեց արաբական երկրների և ժողովուրդների կողմից մերժվող Բաղդադի պակտի անդամ Իրաքը, որտեղ գոյություն ունեցող ռեժիմը կոչվում էր «սև ռեժիմ»: Բացի այդ, շատ սերտ էին Իրաքի հարաբերություններն արևմտյան պետությունների, մասնավորապես Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ–ի հետ, ինչն այդ տարիներին, երբ լայն ծավալ և մեծ թափ էին ստացել ազգային–ազատագրական շարժումները, հակասում էր արաբական աշխարհում տիրող քաղաքական տրամադրություններին և անընդունելի էր արաբների համար:

Արաբական ֆեդերացիայի ստեղծումը դժգոհությամբ ընդունեցին նաև Եգիպտոսը, Սիրիան, Եմենը, որը նույնպես հայտարարել էր ԱՄՀ–ին միանալու մասին, Սաուդյան Արաբիան և արաբական մի շարք այլ երկրներ:

4 Արաբական ֆեդերացիայի մասին տես նաև III հատորի «Իրաքյան Հանրապետություն» գլուխը:

Այսպիսով՝ 1958 թ. արաբական միասնության շարժման հիմքի վրա ձևավորվեցին երկու նոր պետական կազմավորումներ՝ ԱՄՀ–ն և ԱՖ–ն, որի արդյունքում, սակայն, արաբական աշխարհը ոչ թե ավելի միասնական դարձավ, այլ, ընդհակառակը, ավելի խորացավ նրա պառակտումը:

Պարադոքսը կայանում է նրանում, որ, այդուհանդերձ, երկուսն էլ, թե՛ ԱՄՀ–ն և թե՛ ԱՖ–ն, կենսունակ չգտնվեցին և ի վերջո կազմալուծվեցին ու դադարեցին գոյություն ունենալ:

Առաջինը քայքայվեց և թատերաբեմից անհայտացավ Արաբական Ֆեդերացիան, որը գոյություն ունեցավ ընդամենը հինգ ամիս: 1958 թ. հուլիսի 14–ին Իրաքում տեղի ունեցած հեղափոխությունից հետո Իրաքում տապալվեց միապետությունը, հռչակվեց հանրապետություն, որից անմիջապես հետո Իրաքը հայտարարեց Ֆեդերացիայի կազմից դուրս գալու մասին, և այն դադարեց գոյություն ունենալուց. Սպանվեցին Ֆեյսալ II–ը, Նուրի Սաիդը, Աբդուլ Իլլահը և այլ բարձրաստիճան պալատականներ: Հորդանանը նույնպես մեկ զոհ ունեցավ: Դա Արաբական Ֆեդերացիայի վարչապետի տեղակալ Իբրահիմ Հաշիմն էր:

Իրաքյան հեղափոխությունը խուճապի մատնեց արևմտյան տերություններին և արաբական հետադիմությանը: Չգտնելով կանխել հակաիմպերիալիստական պայքարի նոր ալիքի բարձրացումը և պահպանել իրենց դիրքերը՝ 1958 թ. հուլիսի 15–ին ԱՄՆ–ի ծովային հետևակը ափ իջավ Լիբանան, իսկ հուլիսի 16–ին՝ Անգլիան Հուսեյն I–ի խնդրանքով իր զորքերը մտցրեց Հորդանան: Լիբանանի և Հորդանանի բոլոր առաջադիմական ուժերը հանդես եկան ընդդեմ անգլո–ամերիկյան ինտերվենցիայի: Դա բողոքի ալիք բարձրացրեց արաբական բոլոր երկրներում, Ասիայում, Աֆրիկայում: Դրությունը խիստ լարվեց Հորդանանում: Հորդանանյան իշխանությունները բացահայտեցին զինվորականների դավադրություն՝ ուղղված թագավորի և կառավարության դեմ: Ի պաշտպանություն թագավորի և հորդանանյան վարչակարգի հանդես եկան հորդանանյան ցեղախմբերը և շեյխերը, որոնք իրենց հավատարմությունը հայտնեցին Հուսեյն I–ին և, ի պաշտպանություն նրա և նրա վարչակարգի, 1958 թ. օգոստոսի 11–ին մայրաքաղաք Ամմանում կազմակերպեցին մեծ շքահանդես:

Դավադրության մասնակիցներից 13–ը մահապատժի ենթարկվեցին:

ԱՄՆ–ի և Անգլիայի քաղաքականությունը և ռազմական ինտերվենցիան Լիբանան և Հորդանան խստորեն դատապարտեցին Ասիայի և

Աֆրիկայի չմիավորված երկրները, Խորհրդային Միությունը և սոցիալիստական մյուս երկրները: Նրանց ջանքերով ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի արտակարգ նստաշրջանը 1958 թ. օգոստոսի 21–ին ընդունեց բանաձև, որը դատապարտեց ԱՄՆ–ի և Անգլիայի գործողությունները և պահանջեց ձեռք առնել բոլոր միջոցները, որոնք ապահովեին նրանց զորքերի շուտափույթ դուրսբերումը Լիբանանից և Հորդանանից. Վերջ ի վերջո նրանք հարկադրված էին զիջել: Անգլիական զորքերի դուրսբերումը Հորդանանից ավարտվեց 1958 թ. նոյեմբերի 2–ին:

8. Հորդանանը 1958–1967 թթ.

Ֆեդերացիայի փլուզումից հետո հորդանանյան կառավարությունը, որը գլխավորում էր Հազզա ալ–Մաջալին, ներքին քաղաքականության բնագավառում երկրի ազգային, հայրենասիրական, առաջադիմական և դեմոկրատական ուժերի նկատմամբ որդեգրեց դաժան կուրս: Ստեղծվեցին ներքին Անվտանգության խորհուրդ և Պետական անվտանգության ատյան, որոնք, օժտվելով արտակարգ լիազորություններով, հետապնդում էին առաջադեմ և դեմոկրատական գործիչներին և խիստ գաղտնիության պայմաններում քննարկում կարևոր քաղաքական գործերը: Սկսվեց հորդանանցիների բարեհուսության ստուգում: Երկրում հաստատվեց հեղձուցիչ մթնոլորտ: Պաշտպանության, ներքին անվտանգության, ոստիկանության ուժեղացման և դավադրությունների դեմ պայքարի համար նախատեսված ծախսերը 1960–1961 թթ. կազմում էին Հորդանանի պետական բյուջեի ծախսերի կեսից ավելին:

1960 թ. օգոստոսի 29–ին Հազզա ալ–Մաջալին սպանվեց, սակայն նրա ներքաղաքական կուրսը պահպանվեց ընդհուպ մինչև 1962 թ. կեսերը:

Ավելի ընդլայնվեց Հորդանանի համագործակցությունը արևմտյան երկրների, առաջին հերթին ԱՄՆ–ի հետ, որը մեծացրեց իր դրամական օգնությունը Հորդանանին, որը տարեկան կազմում էր 50 մլն դոլար: Հուսեյն I–ը 1960 թ. հոկտեմբերին այցելեց ԱՄՆ և հանդիպեց ու բանակցություններ վարեց ԱՄՆ–ի պրեզիդենտ Էյզենհաուերի հետ, իսկ 1961 թ. փետրվարին երկու երկրների միջև կնքվեց առևտրական համաձայնագիր:

Ինչ վերաբերում է հարաբերություններին արաբական երկրների հետ, ապա դրանք շարունակում էին մնալ լարված: Ճիշտ է, 1959 թ.

օգոստոսի 16–ին վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները ԱՄՀ–ի հետ, որոնք խզվել էին դեռևս 1958 թ. հուլիսին, բայց, այդուհանդերձ, նրանք մնում էին չկարգավորված: Հատկապես անհանգիստ էր հորդանանա–սիրիական սահմանի վրա, որտեղ սովորական բնույթ էին կրում ռազմական բախումները: Իսկ երբ Սիրիան 1961 թ սեպտեմբերին դուրս եկավ ԱՄՀ–ի կազմից, որը նշանակում էր ԱՄՀ–ի փլուզում, Հորդանանը շտապեց անմիջապես ճանաչել կատարված իրողությունը: Հորդանանյան թագավորի հապճեպությունն այդ հարցում աննկատ չմնաց Կահիրեում:

Հորդանանը շարունակում էր մնալ մեկուսացված արաբական աշխարհում: 1958 թ. հուլիսյան հեղափոխությունից հետո հարաբերությունները խզված էին մնում նաև Իրաքի Հանրապետության հետ: Հաշիմյան դինաստիայի տապալումը Իրաքում և նրա թագավորի՝ Ֆեյսալ II–ի սպանությունը խորը վերք էին բացել Հուսեյնի սրտում և նա դա չէր կարողանում մոռանալ: Հորդանանա–իրաքյան հարաբերություններում որոշ դրական փոփոխություններ նկատվեցին միայն 1960 թ. կեսերից, ինչը հանգեցրեց դիվանագիտական հարաբերությունների վերականգնմանը Հորդանանի թագավորության և Իրաքի Հանրապետության միջև:

Արաբական երկրների հետ Հորդանանի լարված հարաբերությունների մյուս կարևոր աղբյուրը շարունակում էր մնալ պաղեստինյան հարցը: Հուսեյն թագավորը 1960 թ փետրվարին առաջարկեց հորդանանյան քաղաքացիություն շնորհել բոլոր պաղեստինցիներին, որոնք հաստատվել էին Հորդանանում, բայց դա առանձնակի հաջողություն չունեցավ: Մյուս կողմից դա լարվածություն առաջացրեց Հորդանանի և պաղեստինյան դիմադրության շարժման ղեկավարության ու արաբական որոշ երկրների միջև, որոնք հորդանանյան միապետի այդ քայլի մեջ տեսան պաղեստինցիներին հորդանանցիների մեջ տարրալուծելու մտադրություն: Սինչդեռ արաբական երկրները, հատկապես ԱՄՀ–ն, կանգնած էին պաղեստինյան անկախ կառավարություն ստեղծելու դիրքերում և չէին պաշտպանում Հորդանանի դիրքորոշումը:

1962 թ. հունվարի 28–ին իր առաջին կառավարությունը կազմեց Վասֆի Թելը, որը հանդես եկավ ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում որոշ փոփոխություններ մտցնելու առաջարկությամբ: Մասնավորապես նա արտահայտվեց զանազան ռազմական և քաղաքական խմբավորումներին Հորդանանի մասնակցության դեմ և հայտարարեց, որ Հորդանանը կմասնակցի միայն Արաբական պետու-

թյունների լիգայի շրջանակներում գործող և կնքվող քաղաքական ու ռազմական համաձայնագրերին: Վարչապետի այդ հայտարարությունը նշանավորում էր Հորդանանի իշխանությունների մտադրության մասին վերադառնալ արաբական համերաշխության և համագործակցության դաշտ: Դա խոսում էր այն մասին, որ Հորդանանն արտաքին քաղաքականության բնագավառում ցանկանում էր առաջնայնությունը տալ արաբական խնդիրներին և կարևորում արաբական երկրների հետ համագործակցության անհրաժեշտությունը: Վարչապետը միաժամանակ շեշտեց արաբական ազգային–ազատագրական շարժումները Հորդանանի կողմից պաշտպանելու փաստը, մասնավորապես Ալժիրում մեծ թափ առած հակաֆրանսիական հակագաղութային պայքարը:

Վասֆի Թելն ընդգծեց նաև Խորհրդային Միության հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը: Այս անգամ հորդանանյան ցեղային–ֆեոդալական ավագանին չկարողացավ խանգարել կառավարությանը իրագործել իր ծրագիրը, և, իրոք, 1963 թ. օգոստոսի 20–ին դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Հորդանանի և ԽՍՀՄ–ի միջև, իսկ 1965 թ. մարտին երկու երկրները ստորագրեցին նաև համաձայնագիր կուլտուրական և տեխնիկական համագործակցության վերաբերյալ:

Զգալի դրական փոփոխություններ տեղի ունեցան նաև ներքին քաղաքականության բնագավառում: Կառավարությունը հայտարարեց քաղաքական կուսակցությունների գործունեությունը թույլատրելու և ընտրական օրենքում փոփոխություններ մտցնելու իր մտադրության մասին՝ նպատակ ունենալով կանանց տրամադրել ընտրական իրավունք: Թույլատրվեց քաղաքական վտարանդիների վերադարձ Հորդանան:

Սակայն նախատեսվող այդ միջոցառումների կենսագործումը որոշ ժամանակով հետաձգվեց 1963 թ. գարնանը բաասականների կողմից Հորդանանում պետական հեղաշրջման փորձ կատարելու պատճառով: Ընդհանրապես պետք է նշել, որ այդ շրջանում շատ ակտիվացել էին բաասականների գործողությունները արաբական աշխարհում, և նրանք փորձում էին պետական հեղաշրջումների միջոցով զավթել իշխանությունն այս կամ այն արաբական երկրում: 1963 թ. փետրվարին նրանք կարողացան գրավել իշխանությունը Իրաքում, իսկ մարտ ամսին՝ նաև Սիրիայում: Հերթը հասավ Հորդանանին: Հորդանանյան բաասականները իրաքյան և սիրիական բաասականների աջակցությամբ փորձեցին պետական հեղաշրջում կատարել նաև Հորդանանում, տա-

պալել թագավորին և գրավել իշխանությունը: Սակայն Հուսեյն I–ը կարողացավ եռանդուն հակաքայլերի օգնությամբ և ժողովրդական ամենալայն զանգվածների ու քաղաքական տարբեր հոսանքների աջակցությամբ խափանել այդ դավադրությունը:

Դրանից հետո Հորդանանում, իրոք, կիրառվեցին մի շարք դեմոկրատական բնույթի միջոցառումներ՝ ընդլայնվեցին բանվորական արհմիությունների իրավունքները, բանվորներին տրվեց վճարովի արձակուրդի իրավունք, մտցվեցին զանազան նպաստներ: 1963 թ. օգոստոսին տնային կալանքից ազատվեց նախկին վարչապետ Սուլեյման ալ–Նաբուլսին, իսկ 1965 թ. ապրիլին Հորդանանի պառլամենտը ներում շնորհեց բոլոր քաղաքական բանտարկյալներին ու փախստականներին, որի արդյունքում բանտերից ազատվեցին ավելի քան 1500 քաղաքական բանտարկյալներ:

Զգալի տեղաշարժեր տեղի ունեցան նաև արտաքին քաղաքականության բնագավառում: Հորդանանը, շարունակելով պահպանել սերտ հարաբերություններ արևմտյան երկրների հետ, միաժամանակ հարկ համարեց շտկումներ մտցնել արաբական երկրների հետ իր փոխհարաբերություններում, ավելի ակտիվորեն մասնակցել համաարաբական գործընթացներին և ինտեգրացմանը: 1964 թ. հուլիսին Հորդանանը ճանաչեց Եմենի հանրապետական վարչակարգը և վճռական քայլեր կատարեց հարաբերությունները ԱՄՀ–ի հետ բարելավելու ուղղությամբ: ԱՄՀ–ի փոխպրեզիդենտ մարշալ Ամերը այցելեց Հորդանան, իսկ Հորդանանի թագավոր Հուսեյն I–ը՝ ԱՄՀ: Նույն թվականի սեպտեմբերին հորդանանյան միապետը մասնակցեց Ալեքսանդրիայում գումարված արաբական երկրների ղեկավարների գագաթնաժողովին: Մինչ այդ Հորդանանն իր ստորագրությունը դրել էր Արաբական միասնական շուկա ստեղծելու համաձայնագրի տակ: Հորդանանն արաբական այն ինը երկրների շարքում էր, որոնք 1965 թ. խզեցին դիվանագիտական հարաբերությունները Արևմտյան Գերմանիայի հետ, երբ վերջինս ճանաչեց Իսրայել պետությունը և նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց:

Հորդանանի կառավարությունը մշակեց, իսկ պառլամենտն էլ հաստատեց երկրի տնտեսական զարգացման յոթնամյա պլան (1964–1970 թթ.), որով նախատեսվում էր արդյունաբերական նոր ձեռնարկությունների, ջրանցքների և ոռոգման ցանցերի կառուցում, ավտոճանապարհների, կապի միջոցների և տուրիզմի զարգացում:

Սակայն երկրի բնականոն զարգացումը և նախատեսված ծրագրերի իրագործումն ընդհատվեց 1967 թ. արաբա–իսրայելական պատերազմի պատճառով:

9. 1967 թ. հունիսյան պատերազմը և նրա հետևանքները Հորդանանի համար

Չնայած Իսրայելի և արաբական երկրների միջև զինադադարի կամ կրակի դադարեցման վերաբերյալ կնքված բազմաթիվ համաձայնագրերի՝ լարվածությունը նրանց միջև երբեք չէր թուլանում: Ռազմաքաղաքական ճգնաժամը նրանց հարաբերություններում կրում էր կայուն բնույթ, և նոր պատերազմի վերսկսման վտանգը մշտապես կախված էր նրանց գլխին: Այդ զինադադարները և ՄԱԿ–ի ու նրա Անվտանգության խորհրդի մեծաթիվ որոշումները չէին կարող ապահովել կայուն խաղաղություն, որովհետև մնում էր չլուծված մերձավորարևելյան կոնֆլիկտի միջուկի՝ պաղեստինյան հիմնախնդրի, պաղեստինյան արաբական պետության ստեղծման հարցը: Այդ պատճառով էլ զինադադարների միջև ընկած ժամանակահատվածները չի կարելի համարել խաղաղության ժամանակահատվածներ:

Դրությունը կրկին սրվեց 1966 թ. վերջերին և 1967 թ. սկզբներին: Առանձնապես անհանգիստ էր սիրիա–իսրայելական սահմանը: Անհանգիստ էր նաև իսրայելա–հորդանանյան սահմանը, մանավանդ նրա այն հատվածներում, որտեղ կենտրոնացված էին մեծաքանակ պաղեստինյան փախստականներ:

Սիրիայում հաստատված բաասական վարչակարգը, մտավախություն ունենալով, որ Իսրայելը քայլեր է ձեռնարկում տապալելու «սոցիալիստական» կողմնորոշում ունեցող այդ վարչակարգը, 1966 թ. նոյեմբերին պաշտպանության վերաբերյալ պայմանագիր ստորագրեց Եգիպտոսի հետ: Դրությունն ավելի սրվեց, երբ 1967 թ. գարնանը՝ ապրիլ ամսին, իսրայելցիները փորձեր կատարեցին մշակել սիրիա–իսրայելական ապառազմականացված գոտում գտնվող արաբական վարելահողերը, որոնք համարվում էին վիճելի տարածքներ: Սիրիայի կառավարությունն այդ մասին տեղյակ պահեց Եգիպտոսի պրեզիդենտ Նասերին՝ միաժամանակ հայտնելով, որ Իսրայելը զորքեր է կենտրոնացնում իսրայելա–սիրիական սահմանի վրա: Նասերի հակադարձ քայլերն իրենց երկար ուշացնել չտվեցին: Նա 1967 թ. մայիսի 16–ին հավաստի-

ացրեց սիրիական կառավարությանը, որը ինքը մենակ չի թողնի Սիրիային և կօգնի նրան, այնուհետև իր զորքերը տեղակայեց արևելյան Սինայում, որտեղ 1956 թ. Սուեզյան պատերազմից հետո գտնվում էին ՄԱԿ–ի խաղաղարար ուժերը, և մայիսի 18–ին պահանջեց, որ այդ ուժերը հեռանան: ՄԱԿ–ն անմիջապես բավարարեց Եգիպտոսի պրեզիդենտի պահանջը: Դրանից հետո դեպքերը զարգացան արտակարգ արագությամբ: Մայիսի 22–ին եգիպտական զորքերը տեղակայվեցին Տիրանի նեղուցի ափին գտնվող Շարմ ալ–Շեյխ նավահանգստում, շրջափակման ենթարկեցին նեղուցը և փակեցին մուտքը դեպի իսրայելական էյլաթ նավահանգիստը:

Իսրայելն իր հերթին համապատասխան միջոցների էր դիմում իր ռազմական ուժերը տարածաշրջանում ամրապնդելու համար:

Ակնհայտ էր, որ պատերազմը հեռու չէր, անգամ օրերի հարց էր:

Իրադարձությունների զարգացմանը ակնդետ հետևում էր նաև Հորդանանի Հուսեյն I թագավորը: Նա հասկանում էր, որ եթե սկսվի պատերազմը, ինքը չի կարող մնալ կողմնակի դիտորդի դերում, մանավանդ որ իր երկրում գտնվում էին հարյուր հազարավոր պաղեստինցի արաբ գաղթականներ, որոնք նրան չէին ների. եթե նա գրավեր չեզոք դիրք սպասվող պատերազմի պարագայում: Տեսնելով պատերազմի մոտեցող վտանգը և հաշվի առնելով երկրում տիրող հակաիսրայելական տրամադրությունները՝ Հուսեյն I–ը 1967 թ. մայիսի 30–ին մեկնեց Կահիրե և բանակցություններ վարեց պրեզիդենտ Գամալ Աբդել Նասերի հետ: Նա առաջարկեց Եգիպտոսի և Հորդանանի միջև կնքել փոխադարձ պաշտպանության պայմանագիր, որն անմիջապես ընդունեց Նասերը: Պայմանագիրը ստորագրվեց մայիսի 30–ին: Համաձայն դրա՝ Հուսեյն I–ը հորդանանյան բոլոր ռազմական ուժերը դնում էր եգիպտական հրամանատարության տակ: Այդ պակտին միացավ նաև Իրաքը.

Պատերազմը սկսվեց 1967 թ. հունիսի 5–ին, որի մեջ անմիջականորեն ներգրավվեցին մի կողմից Եգիպտոսը. Սիրիան և Հորդանանը՝ ունենալով արաբական մյուս երկրների բարոյական և քաղաքական աջակցությունը, իսկ մյուս կողմից՝ Իսրայելը: Իսրայելի տրամադրության տակ կար 260 մարտական ինքնաթիռ և 1100 տանկ, իսկ Եգիպտոսն ուներ 434 ինքնաթիռ և 1200 տանկ, Հորդանանը՝ 28 ինքնաթիռ և 287 տանկ. Սիրիան՝ 90 ինքնաթիռ և 750 տանկ: Սովորաբար, երբ խոսք է գնում պատերազմող կողմերի ունեցած ռազմական տեխնիկայի մասին, դրա մեջ մտցնում են նաև Իրաքի ռազմական ներուժը, քանի որ նա

ակտիվորեն օգնում էր Հորդանանին և Սիրիային: Իրաքն ուներ 110 ինքնաթիռ և 200 տանկ:

Այսպիսով՝ ակնհայտ էր արաբական երկրների գերազանցությունն Իսրայելի նկատմամբ զենքի ժամանակակից այնպիսի կարևոր տեսակների հարցում, ինչպիսին ավիացիան և տանկային ուժերն էին:

Սակայն...

1967 թ. հունիսի 5–ի առավոտյան իսրայելական ռազմական ուժերը օդից և ցամաքից սկսեցին իրենց հարձակումները: Նրանք ռմբակոծեցին եգիպտական բոլոր 17 օդանավակայանները և շարքից հանեցին եգիպտական օդային ուժի երեք հինգերորդը: Իսկ Սինայի թերակղզում եգիպտական բանակը կորցրեց 550 տանկ: Նույն օրը իսրայելական ռազմական ուժերը ծանր հարված հասցրեցին սիրիական և հորդանանյան օդային ուժերին, որոնք չհասցրեցին օդ բարձրանալ:

Եգիպտական ռազմաճակատում իսրայելական զորքերը հունիսի 6–ին գրավեցին Ղազայի շրջանը, որը 1948 թ. արաբա–իսրայելական պատերազմից հետո գտնվում էր եգիպտական վարչական կառավարման ներքո, այնուհետև, մինչև հունիսի 8–ը գրավելով Սինայի թերակղզու մեծ մասը, հունիս 9–ին դուրս եկան Սուեզի ջրանցքի գոտի: Ծովամարտում իսրայելցիներին հաջողվեց գրավել եգիպտական Շարմ ալ–Շեյխը և վերացնել Տիրանի նեղուցի շրջափակումը:

Իսրայելական ռազմական հաջողությունների հասան նաև հորդանանյան ռազմաճակատում, թեև այստեղ Հորդանանին օգնում էին Իրաքի և Սաուդյան Արաբիայի զորքերը: Հորդանանյան զորքերը փորձեցին հարձակողական գործողություններ ծավալել Իսրայելի դեմ: Բայց դա նրանց չհաջողվեց: Իսրայելցիները հակահարձակման անցան Հորդանան գետի Արևմտյան ափում և Արևելյան Երուսաղեմում, որը ստիպեց հորդանանյան զորքերին նահանջել: Նրանց գլխավոր մտահոգությունը դարձավ թույլ չտալ, որ իսրայելական զորքերը գրավեն Հորդանան գետի արևելյան ափի տարածքը, որը հանդիսանում է բուն Հորդանանի սիրտը:

Իսրայելական զորքերը մինչև հունիսի 7–ը գրավեցին համարյա ամբողջ Արևմտյան Հորդանանի ափը՝ ներառյալ Արևելյան Երուսաղեմը, Բեթղեհեմը, Հեբրոնը, Ջենինը և Նաբլուսը: Իսկ սիրիական ռազմաճակատում նրանք հունիսի 10–ին գրավեցին ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Գոլանի բարձունքները:

Պատերազմը տևեց 1967 թ. հունիսի 5–10–ը և պատմության մեջ մտել է հունիսյան կամ վեցօրյա պատերազմ անունով. Նա ավարտվեց արաբական երկրների պարտությամբ և նոր շոշափելի տարածքային կորուստներով: Իսրայելը օկուպացրեց Հորդանան գետի արևմտյան ափը, Ղազայի շրջանը, Արևելյան Երուսաղեմը՝ Բեթղեհեմի հետ միասին, Սինայի թերակղզին և Գոլանի բարձունքները:

Այդ կարճատև պատերազմի ընթացքում Հորդանանը կորցրեց 2 հազար մարդ և տվեց 5 հազար վիրավոր: Դրան պետք է ավելացնել պաղեստինցիների կորուստները՝ 4000 սպանված և 1000 վիրավոր: Իսկ Իսրայելի կորուստները կազմում էին 778 սպանված և 2558 վիրավոր[5].

Պատերազմում կրած ռազմական պարտությունը և Արևմտյան ափի կորուստը ծանր անդրադարձան Հորդանանի տնտեսական և քաղաքական կյանքի վրա: Արևմտյան ափը Հորդանանի կարևոր տնտեսական կենտրոններից մեկն էր, որը տալիս էր ազգային եկամտի մոտ 40%–ը. Նախքան պատերազմը՝ 1966–1967 թթ., այստեղ արտադրվում էր ամբողջ Հորդանանի բանջարեղենի 65 տոկոսը, մրգերի 60 տոկոսից ավելին, ձիթապտղի 80 տոկոսը, հացահատիկի 35 տոկոսը, այստեղ էր կենտրոնացված անասունների գլխաքանակի 35 տոկոսը: Միաժամանակ Արևմտյան ափում գտնվում էր Հորդանանի արդյունաբերական ձեռնարկությունների, ֆիրմաների և առևտրական ընկերությունների զգալի մասը: Պատերազմի հետևանքով Հորդանանը զրկվեց այդ բոլորից: Պատերազմը պատճառ դարձավ պաղեստինցի գաղթականների նոր ալիքի: Գաղթականների թիվն ավելացավ մոտ կես միլիոնով, որի ճնշող մեծամասնությունը, ավելի քան 250 հազ. մարդ, ներխուժեց Հորդանան՝ ի հավելումն այնտեղ գտնվող 700 հազար պաղեստինցի գաղթականների: Հետամնաց և թույլ զարգացած Հորդանանի տնտեսությունը, որը զրկվեց Արևմտյան ափի համեմատաբար զարգացած և բարեբեր շրջաններից, ի վիճակի չէր կլանելու այդ բավականին հոծ բազմությունը և նրանց ապահովելու աշխատանքով ու ապրուստի միջոցներով: Պաղեստինյան նոր գաղթականների մուտքը Հորդանան նպաստեց գործազրկության աճին, կյանքի թանկացմանը և սոցիալական դժգոհության ուժեղացմանը Հորդանանում:

Դրությունն ավելի էր վատանում նաև այն պատճառով, որ ի տես իսրայելական սպառնալիքների՝ Հորդանանը ստիպված էր մեծացնել

5 Եգիպտոսի կորուստները կազմում էին 11500 սպանված և 15000 վիրավոր, իսկ Սիրիայինը՝ 700 սպանված և 3500 վիրավոր:

ծախսերը երկրի պաշտպանունակության ամրապնդման համար: 1969 թ. նրանք կազմեցին բյուջետային հատկացումների մոտ կեսը, և դա արվում էր ի հաշիվ սոցիալ–տնտեսական հատկացումների կրճատման: Ճիշտ է, 1967 թ. օգոստոսին արաբական երկրների ղեկավարների Խարտումում կայացած կոնֆերանսում, որին մասնակցում էր նաև Հորդանանի թագավոր Հուսեյնը, որոշվեց յուրաքանչյուր տարի Հորդանանին որպես օգնություն տրամադրել 40 մլն ֆունտ ստեռլինգ, որ պետք է տրամադրեին Սաուդյան Արաբիան, Լիբիան և Քուվեյթը, սակայն դա չէր կարող լուծել Հորդանանի առջև կանգնած ծանր սոցիալ–տնտեսական պրոբլեմները:

IV. ՀՈՐԴԱՆԱՆՑԱՆ–ՊԱՂԵՍՏԻՆՑԱՆ ԹՆՋՈՒԿԸ՝ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՑՈՒՆ–ԵՐԵՎԱԿԱՑԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ–ԱՊԱՀԱՐՋԱՆ (1970–1988 թթ.)

1. 1970 թ. «Սև սեպտեմբերը»

1967 թ. պատերազմից հետո, երբ Հորդանանը կորցրեց Արևմտյան ափը, որը գրավեց Իսրայելը, բոլորովին նոր իրադրություն ստեղծվեց ոչ միայն Արաբական Արևելքում, այլև հորդանանա–պաղեստինյան հարաբերություններում: Արևմտյան ափը այն տարածքն էր, որի վրա, ըստ ՄԱԿ–ի 1947 թ. նոյեմբերյան բանաձևի, պետք է ստեղծվեր Պաղեստին արաբական պետությունը: 1948 թ. արաբա–իսրայելական պատերազմի արդյունքում նա անցավ Հորդանանի տիրապետության տակ, ապա և միացվեց նրան, թեև ավելի ճիշտ կլիներ օգտագործել «բռնակցել» բառը: Եվ հենց այդ ժամանակ էր, որ Հորդանանի թագավոր Աբդալլահ I–ը հռչակվեց «համայն Պաղեստինի թագավոր»: Այդուհանդերձ, այն մնում էր արաբական տիրապետության տակ: Մինչդեռ 1967 թ. պատերազմից հետո նա փոխեց իր «տիրոջը»՝ անցավ օտար՝ հրեական տիրապետության տակ:

Կորցնելով պաղեստինյան տարածքը՝ Հորդանանը շարունակում էր դեռ որոշ իմաստով մնալ նաև պաղեստինյան երկիր–պետություն, քանի որ նրա տարածքում կենտրոնացվել էր պաղեստինյան փախստականների ամենահոծ զանգվածը, որը վերածվեց գործոնի: Եվ եղավ մի

պահ, որ պաղեստինյան գործոնը դարձավ վերին աստիճանի որոշիչ և առանցքային Հորդանանի ներքաղաքական կյանքում՝ անգամ սպառնալիքի տակ դնելով նրա՝ Հորդանանի ինքնությունը և քաղաքական գոյությունը որպես Հորդանան պետական կազմավորում:

Ահա այդ պարագան հիմք է տալիս արձանագրելու, որ 1967 թ. պատերազմից և տարածքային կորուստներից հետո ոչ միայն արմատականորեն նոր իրադրություն ստեղծվեց տարածաշրջանում, այլև Հորդանանը դադարեց լինելուց այն երկիրը, ինչ էր մինչ այդ:

Հորդանանա–պաղեստինյան հարաբերությունները մտան նոր փուլ, և ձևավորվեց հորդանանա–պաղեստինյան քննուկը:

Հորդանանում պաղեստինցիների հոծ զանգվածի կենտրոնացումը առաջ բերեց և՛ սոցիալ–տնտեսական դժվարություններ, և՛ քաղաքական բարդություններ Հորդանանի իշխանությունների համար: Պաղեստինցիները Հորդանանի տարածքում ստեղծեցին իրենց ճամբարները, զինված ուժերը և պարտիզանական՝ ֆիդայական ջոկատները, որոնք անընդհատ հարձակումներ էին գործում Իսրայելի վրա: Նրանք ազատորեն զենք էին կրում, ստեղծել էին զինամթերքի պահեստներ և փաստորեն չէին ենթարկվում հորդանանյան իշխանություններին: Նրանք դարձել էին պետություն պետության մեջ: Տուրք տալով էքստրեմիստական որոշ հայացքների, մերժելով պաղեստինյան պրոբլեմի քաղաքական կարգավորման ուղին և հաշվի չառնելով Իսրայելին հարևան երկրում տիրող կոնկրետ քաղաքական իրադրությունը՝ պաղեստինյան ղեկավարությունը ելնում էր այն տեսակետից, որ, ինչպես ասված էր Պաղեստինի ժողովրդական խորհրդի 7–րդ նստաշրջանի որոշման մեջ, «Իսրայելին հարևան բոլոր արաբական տարածքները հանդիսանում են պաղեստինյան պայքարի օրինական դաշտ, և արաբական տարածքի որևէ մաս պաղեստինյան դիմադրության առաջ փակելու ամեն մի փորձ հանդիսանում է դավաճանություն պաղեստինյան ժողովրդի և արաբական ազգերի նպատակներին»: Հորդանանում փաստորեն հաստատվեց երկիշխանություն՝ հորդանանյան և պաղեստինյան:

Նրանց միջև հարաբերությունների լարմանը նպաստում էր նաև Իսրայելի քաղաքականությունը: Իսրայելական ուժերը, օգտագործելով Հորդանանի տարածքից պաղեստինցիների, պաղեստինյան պարտիզանական ջոկատների և ֆիդայիների անընդմեջ հարձակումները իսրայելական բնակավայրերի և զանազան օբյեկտների վրա, նույնպես փոխադարձաբար անընդհատ հարվածներ էին հասցնում Հորդանա-

նում տեղակայված պաղեստինյան ուժերին ու ճամբարներին: Իսրայելական այդ ռազմական հարձակումները, որի ժամանակ օգտագործվում էին նաև զենքի ծանր տեսակներ, միաժամանակ մեծ զոհեր և վնասներ էին պատճառում Հորդանանի խաղաղ բնակչությանը, որն իր հերթին առաջ էր բերում Հորդանանի բնակչության, նրա սոցիալական տարբեր խավերի խոր դժգոհությունը պաղեստինցիների և նրանց գործողությունների նկատմամբ: Իսրայելցիները, իրենց այդ քայլերը ներկայացնելով որպես պատասխան հարվածներ «պաղեստինյան տարածքներին», դրանով իսկ ձգտում էին հորդանանցիներին թշնամացնել պաղեստինցիների հետ.

1967–1970 թթ. Հորդանանի կառավարությունը փորձեր էր կատարում պաղեստինցիների գործողությունները Հորդանանում դնել որոշակի շրջանակների մեջ, հասնել այն բանին, որ նրանք հարգեն հորդանանյան օրենքները և իշխանությունները, և ինչ–որ ձևով վերահսկողություն սահմանել նրանց վրա՝ կանխելու այն քաոսային վիճակի հետագա խորացումը, որ արդեն հաստատվել էր Հորդանանում, և որն արդեն սպառնում էր նրա ազգային անվտանգությանը: Հուսեյն թագավորը և արքայական պալատը, հորդանանյան կառավարող վերնախավը լրջորեն անհանգստացած էին իշխանության պահպանման և իրենց հետագա ճակատագրի հարցով: Պետք է նկատի ունենալ, որ պաղեստինյան դիմադրական և պարտիզանական շարժումը միատարր չէր, նրա շարքերում կային էքստրեմիստական և արմատական բնույթի հոսանքներ և ուժեր, որոնք բացահայտորեն հանդես էին գալիս հորդանանյան միապետության դեմ՝ հորդանանյան իշխանությունների տապալման կամ դրանք իրենց ենթարկելու պահանջներով:

Հորդանանյան իշխանությունների, այդ թվում և Հուսեյն I–ի բոլոր փորձերը՝ իրենց վերահսկողության տակ դնել պաղեստինցիների գործողությունները, վերջացան անհաջողությամբ: Ընդհակառակը, այդ տարիներին եղան բազմաթիվ բախումներ հորդանանյան բանակի զորամիավորումների և պաղեստինյան զինված ջոկատների միջև:

Պարզ էր, որ այդպես երկար շարունակվել չէր կարող: Վճռական բախումը նրանց միջև անխուսափելի էր:

Լարվածությունը հորդանանյան–պաղեստինյան հարաբերություններում իր գագաթնակետին հասավ 1970 թ. օգոստոսի վերջերին և սեպտեմբերի սկզբներին, մանավանդ այն բանից հետո, երբ Պաղեստինի Ժողովրդական խորհուրդը լիազորեց Պաղեստինի ազատագրության

(ՊԱԿ) Կենտկոմին «Ամբողջ հորդանանա–պաղեստինյան տարածքը բոլոր միջոցներով վերածել համընդհանուր ժողովրդական հեղափոխության հենարանի»: Դա նշանակում էր, որ պայքարի սուր ծայրն ուղղվում էր նաև հորդանանյան ռեժիմի դեմ: Պաղեստինի ժողովրդական խորհրդի այդ որոշումը Հորդանանի թագավոր Հուսեյն I–ը հենց այդպես էլ ընկալեց և դա կանխելու համար դիմեց կտրուկ միջոցների: Նա երկրում մտցրեց արտակարգ դրություն, կազմեց զինվորական կառավարություն գեներալ Դաուդի գլխավորությամբ և մարշալ Հաբիս ալ–Մաջալիին նշանակեց երկրի զինվորական նահանգապետ: Վերջինիս հրամանով 1970 թ. սեպտեմբերի 17–ին հորդանանյան բանակի զորամասերը շրջապատեցին Ամմանը:

Հորդանանյան բանակը, որը կազմված էր հիմնականում տեղացի բեդվիններից, հավատարիմ էր Հուսեյն I–ին: Բանակը 1967 թ. պատերազմի ժամանակ մեծ կորուստներ էր կրել, բայց Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ–ի ամենալայն ռազմական օգնության շնորհիվ կարողացել էր վերականգնել իր մարտունակությունը: Նրանք հորդանանյան բանակը համալրել էին ռեակտիվ կործանիչներով, ժամանակակից տանկերով և հրթիռներով: Հորդանանի բանակը զինելու առաջարկությամբ Հուսեյն I–ին դիմել էր նաև խորհրդային կառավարությունը, սակայն Հորդանանի թագավորը մերժել էր այդ առաջարկությունը:

Հորդանանի բանակը թագավորի հրամանով ռազմական գործողություններ սկսեց պաղեստինցիների դեմ Ամմանում և երկրի հյուսիսային շրջաններում՝ պաղեստինյան զինված ջոկատների դեմ լայնորեն օգտագործելով ավիացիան, տանկերը, հրետանին և զենքի այլ տեսակներ: 1970 թ սեպտեմբերի 15–25–ը կատաղի մարտեր էին ընթանում հորդանանյան կանոնավոր բանակի և պաղեստինյան զինված խմբավորումների միջև Զոհվում էին հազարավոր մարդիկ, քանդվում տները և շինությունները: Կոնֆլիկտին, ի պաշտպանություն պաղեստինցիների, միջամտեց Սիրիան: Սեպտեմբեր 19–ին Սիրիայում տեղակայված Պաղեստինյան ազատագրության բանակը 200 տանկերի ուղեկցությամբ Սիրիայից ներխուժեց Հորդանան, նրա հյուսիսային տարածքը և գրավեց Իրբիդը: Ակնհայտ էր, որ առանց Սիրիայի համաձայնության և աջակցության Պաղեստինի ազատագրության բանակը չէր կարող նման ռազմական գործողություններ ծավալել: Այդ պատճառով էլ դա համարվում է Սիրիայի միջամտություն Հորդանանի ներքին գործերին և մասնակցություն հորդանանյան–պաղեստինյան քաղաքացիական պատե-

րազմին: Հորդանանի թագավորը ստեղծված պայմաններում դիմեց ԱՄՆ–ին՝ պահանջելով միջամտել քաղաքացիական պատերազմին, սակայն Վաշինգտոնը մերժեց: Բայց նա Իսրայելի հետ միասին մեծ օգնություն ցույց տվեց Հորդանանին՝ կասեցնելու պաղեստինյան–սիրիական զորքերի առաջխաղացումը: Նրանց օգնությունը հնարավորություն տվեց Հուսեյնին հորդանանյան ավիացիան ամբողջությամբ նետել հյուսիս՝ Իրբիդի շրջան՝ պաղեստինյան–սիրիական ուժերի, մասնավորապես տանկերի դեմ, որոնք օդից ոչ մի պաշտպանություն չունեին: Սիրիայի ռազմաօդային ուժերի հրամանատար գեներալ Հաֆիզ Ասադը, որը դեմ էր Հորդանան Սիրիայի ինտերվենցիային, հրաժարվեց սիրիական ռազմական ինքնաթիռները տրամադրել պաղեստինցիներին և օդային մարտեր սկսել Հորդանանի հետ: Իրբիդի շրջանում տեղի ունեցած եռօրյա կատաղի մարտերից հետո հորդանանյան ուժերին հաջողվեց ստիպել սիրիական զինված ուժերին հեռանալ Հորդանանից: Դրանում մեծ դերակատարում ունեցավ հորդանանյան ավիացիան:

Սեպտեմբերյան ռազմական կոնֆլիկտը Հորդանանում և Սիրիայի միջամտությունը ալեկոծեցին ողջ արաբական աշխարհը, որը, դեռ ուշքի չեկած 1967 թ. պատերազմում կրած ծանր պարտությունից, մխրճվել էր նոր արյունահեղ եղբայրասպան պատերազմի մեջ:

Արաբական պետությունների լիգայի և արաբական լիդերների, մասնավորապես Նասերի ակտիվ միջամտության շնորհիվ 1970 թ. սեպտեմբերի 27–ին վերջապես հաջողվեց համաձայնագիր ստորագրել Հորդանանի կառավարության և ՊԱԿ–ի ղեկավարության միջև, որը կոչված էր դադարեցնել կրակը և կարգավորել փոխհարաբերությունները նրանց միջև:

Սակայն որոշ ժամանակ անց արյունալի բախումները վերսկսվեցին. Պաղեստինյան զինված մարտիկներն ամրացան պաղեստինյան փախստականների ճամբարներում և դրանք վերածեցին իրենց հենարանների՝ շարունակելով զինված պայքարը հորդանանյան իշխանությունների դեմ: 1970 թ. ընթացքում և 1971 թ. առաջին կեսին պաղեստինյան բոլոր ռազմական բազաները, որոնք հաստատվել էին Հորդանանում, վերացվեցին: 1971 թ. հուլիսին վերացվեց պաղեստինյան դիմադրական վերջին կենտրոնը Աջլունում: ՊԱԿ–ն իր բոլոր քաղաքական և ռազմական կառույցներով ստիպված էր հեռանալ Հորդանանից և հաստատվել Լիբանանում:

Այդպես ավարտվեց այն արյունալի էպոպեան, որ պատմության մեջ մտել է «Սև սեպտեմբեր» անունով: Այդ արյունալի բախումների կամ եղբայրասպան պատերազմի ընթացքում սպանվեց մոտ 20 հազար պաղեստինցի[6]: Քիչ չէին նաև հորդանանցիների զոհերը.

2. Միացյալ Արաբական Թագավորություն ստեղծելու Հորդանանի թագավոր Հուսեյն I–ի ծրագիրը

1970–1971 թթ. արյունալի իրադարձություններից և պաղեստինյան ռազմական ջոկատներն ու ղեկավարությունը Հորդանանից արտաքսելուց հետո Հուսեյն թագավորը գտնում էր, որ Պաղեստինի դիմադրության շարժումը թուլացել էր թե՛ ռազմականապես և թե՛ քաղաքականապես և այլևս իր համար կոնկրետ վտանգ չէր ներկայացնում:

Միաժամանակ նա, տուրք տալով իր պապի՝ Աբդալլահ I–ի գաղափարական որոշ դրույթներին, այն համոզմունքն ուներ, որ Հորդանանը կոչված էր հատուկ դեր խաղալ պաղեստինյան պրոբլեմի լուծման մեջ: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ Հուսեյնը մեծ դերակատարում է ունեցել պաղեստինյան հարցի և մերձավորարևելյան կոնֆլիկտի վերաբերյալ ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի 1967 թ. նոյեմբերի 22–ի Նո. 242 բանաձևի ընդունման գործում, որը կողմերին առաջարկում էր վերադառնալ մինչև 1967 թ. հունիսի 5–ի պատերազմը գոյություն ունեցած սահմանները:

Ղեկավարվելով այդ նկատառումներով՝ Հուսեյն I–ը 1972 թ. մարտի 15–ին հանդես եկավ «Միացյալ Արաբական Թագավորություն» ստեղծելու առաջարկությամբ, որը ստացավ «Հուսեյնի պլան» անվանումը:

«Հուսեյնի պլանով» նախատեսվում էր Հորդանանի Արևելյան և Արևմտյան ափերը միավորել մեկ պետության մեջ, որը կոչվելու էր «Արաբական Միացյալ Թագավորություն»:

Նախատեսվող թագավորությունը բաղկացած էր լինելու երկու մասից կամ շրջանից՝ Պաղեստինյան, որի մեջ մտնելու էին Արևմտյան ափը և պաղեստինյան բոլոր այն տարածքները, որոնք կազատագրվեն իսրայելական օկուպացումից, և Հորդանանյան, որի մեջ մտնելու էր Արևելյան ափը, այսինքն՝ բուն Հորդանանը:

---

6 Որոշ տվյալներով՝ սպանվածների թիվը հասնում էր 30 հազարի:

Հորդանանի թագավորը դառնում էր պետության՝ Արաբական Միացյալ Թագավորության ղեկավար և իրականացնելու էր գործադիր ու օրենսդիր իշխանությունը: Ստեղծվում էր կենտրոնական կառավարություն, որի իրավասության շրջանակներում էին գտնվելու բանակի և ռազմական ուժերի, արտաքին քաղաքականության և ֆինանսների հարցերը: Թագավորը դառնում էր Արաբական Միացյալ Թագավորության զինված ուժերի գլխավոր հրամանատար:

Հորդանանյան և Պաղեստինյան շրջաններում ստեղծվում էին նրանց տեղական՝ հորդանանյան և պաղեստինյան կառավարման մարմիններ, այդ թվում՝ կառավարություններ՝ Նախարարների խորհուրդ, և օրենսդիր մարմիններ՝ պառլամենտներ: Նրանք տնօրինելու էին տեղական բնույթի՝ տնտեսական, կրթական, մշակութային, առևտրական և նման այլ հարցեր:

Ամմանը դառնում էր թագավորության, իսկ Երուսաղեմը՝ Պաղեստինյան շրջանի մայրաքաղաքը:

Ահա այսպիսին էր Միացյալ Արաբական Թագավորություն ստեղծելու «Հուսեյնի պլանի» հիմնական բովանդակությունը:

Հուսեյն իբն Թալալ ալ–Հաշիմիի «Արաբական Միացյալ Թագավորության» պլանը չպետք է շփոթել նրա պապի՝ Աբդալլահ իբն Հուսեյն ալ–Հաշիմիի միասնական Հորդանան պետության ստեղծման հետ: Աբդալլահն ուղղակի Հորդանանին կցեց Պաղեստինի այն հատվածը, որը ՄԱԿ–ի որոշման համաձայն հատկացված էր Պաղեստին պետություն ստեղծելու համար: Եվ բռնակցելով նա դա չպահպանեց որպես ինքնուրույն կազմավորում: Պաղեստինյան հատվածը կամ Արևմտյան ափը՝ Երուսաղեմով հանդերձ, տարրալուծվեց Հորդանանի կազմում, որը հանդիսանում էր ունիտար պետություն և կոչվում էր Հորդանանի Հաշիմյան թագավորություն:

Իսկ «Հուսեյնի պլանի» պարագայում Պաղեստինը հանդես էր գալիս որպես առաջարկվող միացյալ թագավորության բաղկացուցիչ իրավահավասար մաս՝ իր ներքին վարչական սահմաններով և կառավարման մարմիններով՝ պահպանելով նաև իր աշխարհագրական անվանումը:

Արաբական Միացյալ Թագավորության պլանը որոշ իմաստով կարելի է համարել ֆանտաստիկ, քանի որ Հուսեյնի տիրապետության տակ տվյալ պահին գտնվում էր ապագա միացյալ թագավորության միայն մի՝ հորդանանյան շրջանը: Իսկ ինչ վերաբերում էր նրա երկրորդ

բաղադրամասին՝ Պաղեստինին, ապա նա ոչ միայն Հուսեյնի, այլև արաբների տիրապետության ոլորտում չէր գտնվում և օկուպացված էր Իսրայելի կողմից, որը հենց նոր էր պատերազմի դաշտում տարած հաղթանակի արդյունքում գրավել այն և բնավ էլ մտադիր չէր կամավոր, հենց այնպես զիջել արաբներին, ավելի կոնկրետ՝ Հորդանանին:

Այս բոլորից հետևում է, որ Արաբական Միացյալ Թագավորությունը կարելի էր ստեղծել միայն Արևմտյան ափը նվաճելու ուղիով, այսինքն՝ պատերազմի միջոցով, որին ոչ միայն Հորդանանը, այլև արաբական ոչ մի պետություն պատրաստ չէր:

Մյուս կողմից խիստ հարցական էր, թե արդյոք պաղեստինցիները համաձայն կլինեին կազմել մեկ պետության մաս, որի ղեկավարը լինելու էր Հորդանանի միապետը, որին ընդամենը մեկ տարի առաջ նրանք փորձում էին տապալել:

«Հուսեյնի պլանը» դարձավ միջարաբական հարաբերությունների լարվածության սրման և տարաձայնությունների խորացման նոր աղբյուր: Դրա դեմ հանդես եկավ ՊԱԿ–ը՝ այդ պլանի իրագործման մեջ տեսնելով պաղեստինյան ժողովրդի ինքնուրույն գոյության և իր անկախ պետությունն ունենալու վերացման միտում և պաղեստինյան հարցը հօգուտ Հորդանանի շահերի լուծելու ցանկություն:

Հորդանանի միապետի ծրագիրը խիստ քննադատեցին և մերժեցին արաբական պետությունները, հատկապես կոշտ դիրքորոշում գրավեցին Սիրիան և Իրաքը, որոնք խստորեն դատապարտեցին այդ պլանը: Իրաքը Հուսեյնի առաջարկությունը բնութագրեց որպես դավաճանություն պաղեստինյան գործին: 1972 թ. մարտի 15–ին, այսինքն՝ հենց այն նույն օրը, երբ Հուսեյնը պաշտոնապես հայտարարեց Արաբական Միացյալ Թագավորություն ստեղծելու իր առաջարկությունը, Բաղդադում կայացավ Բաաս կառավարող կուսակցության համաարաբական և ռեգիոնալ ղեկավարության և Իրաքի հեղափոխական հրամանատարության խորհրդի համատեղ նիստը, որի ժամանակ քննարկվեց հորդանանյան միապետի առաջարկությունը: Նիստում ընդունված բանաձևում նշվում էր, որ Հուսեյնի պլանը կապիտուլյանտական պլան է, նպատակ ունի հաշտություն կնքել թշնամու՝ Իսրայելի հետ և դավաճանություն է արաբական ազգի ու Պաղեստինի ժողովրդի շահերին: Իրաքը կոչ արեց արաբական բոլոր երկրներին դատապարտել Հորդանանի դիրքորոշումը և ընդդիմանալ նրա քաղաքականությանը:

Արաբական երկրներում ուշադրություն դարձվեց այն հանգամանքի վրա, որ նման պլանի հանդես գալը, առավել ևս իրագործումը հնարավոր էր, եթե նախնական համաձայնություն լիներ Իսրայելի հետ, վերջինիս կողմից Արևմտյան ափը Հորդանանին զիջելու հարցի շուրջը: Սակայն նման կասկածները պաշտոնապես փարատեց Իսրայելի վարչապետ Գոլդա Մեիրը, այն նույն Գոլդա Մեիրը, որի հետ Հուսեյնի պապը՝ Աբդալլահը, 1947–1948 թթ. գաղտնի բանակցություններ էր վարում: Գոլդա Մեիրը 1972 թ. մարտի 16–ին շտապեց ցրել նման պատրանքները: Ելույթ ունենալով Իսրայելի պառլամենտում՝ կնեսետում՝ նա հայտարարեց. «Թագավորը (Հորդանանի — Ն. Հ.) որպես իր սեփականություն է դիտում այն տարածքները, որոնք չեն գտնվում նրա վերահսկողության տակ: Հուսեյն թագավորի կողմից հայտարարված պլանը չի կարող Իսրայելի հետ համաձայնության հիմք ծառայել: Նրանք, ովքեր ցանկանում են կեղծ տպավորություն ստեղծել, թե իբր պլանը մեզ հետ համաձայնեցված է կամ նախօրոք քննարկվել է մեզ հետ, ուղղակի ծիծաղելի են»:

Միացյալ Արաբական Թագավորության ստեղծման «Հուսեյնի պլանը», հանդիպելով Պաղեստինի ազատագրության կազմակերպության և արաբական երկրների դիմադրությանը և Իսրայելի կտրուկ ընդդիմությանը, մնաց թղթի վրա և շուտով մոռացության տրվեց:

1973 թ. հոկտեմբերին, ինչպես արդեն նշվել է, բռնկվեց չորրորդ արաբա–իսրայելյան պատերազմը, որը՝ ի տարբերություն 1967 թ. հունիսյան պատերազմի, ընթացավ միայն եգիպտական և սիրիական ճակատներում: Հորդանանը, որի միապետը մինչ այդ հանդես էր եկել Արաբական Միացյալ Թագավորության ստեղծման պլանով, պատերազմի մեջ չմտավ: Թվում էր, թե դա հարմար պահ էր այդ ծրագրի իրականացման համար այն առումով, որ սկսվել էր պատերազմ Իսրայելի հետ և պետք էր պատերազմել Պաղեստինի օկուպացված տարածքներն ազատագրելու համար՝ որպես գլխավոր պայման նման նոր պետություն ստեղծելու համար:

Սակայն Հուսեյն I–ը, ելնելով նախորդ պատերազմի դառը փորձից, ցուցաբերեց զգուշավորություն և իր երկիրը չտարավ դեպի պատերազմ: Կարծում ենք, որ նրա մտավախությունը և մտահոգությունը միանգամայն հիմնավորված էին: Սակայն նա քաղաքական, բարոյական և նյութական աջակցություն ցույց տվեց Եգիպտոսին և մանավանդ Սիրի-

ային: Հորդանանյան մի բրգադ մասնակցեց Գոլանի բարձունքներում մղվող ճակատամարտին.

Հուսեյն թագավորի քաղաքականության մեջ դրսևորվող այդ զիգզագները դժգոհության պատճառ էին դառնում երկրի ներսում: Այդ հողի վրա 1974 թ. ընթացքում Հորդանանի ներքաղաքական կյանքում տեղի ունեցան մի շարք կարևոր իրադարձություններ: Փետրվարին խռովություն բռնկվեց Հորդանանի բանակի 40–րդ զրահատանկային բրիգադում: Ապստամբած 700 զինվորներ և սպաներ պահանջում էին աշխատավարձի բարձրացում, վարչապետի և գլխավոր շտաբի պետի հեռացում իրենց պաշտոններից և այլն: Այդ պահանջների մի մասը թագավորը բավարարեց: Միաժամանակ նա բանտից ազատեց մի շարք սպաների, այդ թվում և բարձրաստիճան, ինչպես նաև լուծարքի ենթարկեց դեռևս 1972 թ. ստեղծված Արաբական ազգային միության՝ երկրի միակ լեգալ քաղաքական կազմակերպության, գործադիր կոմիտեն:

3. Ապահարզան

1970–ական թվականներին նկատվում է Հորդանանի քաղաքականության ակտիվացում միջարաբական թատերաբեմում: Հորդանանը մասնակցում է արաբական երկրների ղեկավարների կոնֆերանսներին և համաարաբական այլ գործողությունների:

Դրանց շարքում իր նշանակությամբ առանձնանում է 1974 թ. հոկտեմբերին Մարոկկոյի մայրաքաղաք Ռաբատում կայացած արաբական պետությունների և կառավարությունների ղեկավարների համաժողովը, որն ընդունեց շատ կարևոր որոշում Պաղեստինի հարցի վերաբերյալ, որն անմիջականորեն շոշափում էր նաև Հորդանանի շահերը: Արաբական գագաթի ժողովը, որին մասնակցում էր նաև Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը՝ նրա գործադիր տնօրեն Յասիր Արաֆաթի գլխավորությամբ, որոշեց ՊԱԿ–ը ճանաչել որպես «Պաղեստինյան ժողովրդի միակ, օրինական ներկայացուցիչ»: Դա նշանակում էր, որ Հորդանանը զրկվում էր Պաղեստինի ժողովրդի անունից հանդես գալ կամ ներկայացնել նրա շահերը: Հորդանանը արաբական մյուս երկրների հետ քվեարկեց հօգուտ այդ բանաձևի: Այդ պահից սկսած պաղեստինյան գրավյալ տարածքները հետ վերադարձնելու վերաբերյալ բանակցությունների պատասխանատվությունը Հորդանանից անցնում էր ՊԱԿ–ին:

Հուսեյն I–ը միանգամայն ճիշտ վարվեց, որ պաշտպանեց Ռաբատի բանաձևը, որը նրանից, անշուշտ, պահանջում էր քաղաքական կամք՝ հրաժարվելու նախկին քաղաքականությունից, որը ոչինչ, բացի բարդություններից ու դժվարություններից, Հորդանանին չբերեց. Նա ընդունեց Պաղեստինի արաբ ժողովրդի կամքը՝ ունենալ իր սեփական և անկախ պետությունը: Դրանով նա ազատվում էր շատ ծանր բեռից և նախապայմաններ ստեղծում պաղեստինցիների հետ հարաբերությունները կարգավորելու համար. Դա դրականորեն ազդեց նաև արաբական մի շարք երկրների հետ Հորդանանի հարաբերությունների վրա:

Հորդանանի կողմից ՊԱԿ–ի ճանաչումը որպես Պաղեստինի միակ օրինական ներկայացուցիչ դրեց Հորդանանի և արաբական Պաղեստինի անջատման, կարելի է ասել՝ ապահարզանի գործընթացի սկիզբը, որը թեև կատարվեց քաղաքակիրթ ձևով, բայց բավականին երկար տևեց և ավարտվեց 14 տարի անց՝ 1988 թ..

Հորդանանն աստիճանաբար կիրառեց անջատմանն ուղղված քայլեր: Հարցի բարդությունը կայանում էր նրանում, որ Արևմտյան ափը Իսրայելի կողմից գրավելուց հետո Հորդանանը չխզեց կապերը Արևմտյան ափի պաղստինյան ներկայացուցիչների հետ: Նրանք շարունակում էին մնալ Հորդանանի պառլամենտի և կառավարության անդամ, և Հորդանանի կառավարությունը երկար ժամանակ Արևմտյան ափի վարչական աշխատողներին վճարում էր աշխատավարձ:

1974 թ. նոյեմբերի 23–ին կազմավորվեց Հորդանանի նոր կառավարությունը, որի կազմում պաղեստինցիների թիվը նշանակալիորեն կրճատվեց: Նոյեմբերի 30–ին թագավորը հայտարարեց սենատի նոր կազմը, որը նախկինի համեմատությամբ խիստ փոփոխության ենթարկվեց: Մասնավորապես խիստ կրճատվեցին Արևմտյան ափի ներկայացուցիչներին հատկացվող տեղերը:

Համաձայնվելով ՊԱԿ–ի նոր կարգավիճակի հետ՝ Հորդանանը, սակայն, անտարբեր չէր Պաղեստինի կոնֆլիկտի լուծման հարցի նկատմամբ: Դրա վկայություններից մեկն էր հանդիսանում Հորդանանի բացասական դիրքորոշումը 1978 թ. Քեմփ Դևիդում կնքված եգիպտա–իսրայելական համաձայնության հանդեպ: Հուսեյն I–ը, հավատարիմ այն սկզբունքին, որ ՊԱԿ–ը Պաղեստինի արաբ ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչն է, և միայն նա իրավունք ունի հանդես գալու պաղեստինցիների անունից, արաբական մյուս պետությունների ղեկավարների հետ միասին դատապարտեց եգիպտա–իսրայելական գոր-

ծարքը՝ գտնելով, որ դա չի մոտեցնում մերձավորարևելյան կոնֆլիկտի լուծմանը և նպաստում է տարածաշրջանի ապակայունացմանը:

1978 թ. թագավորի հրամանով Հորդանանում ստեղծվեց Ազգային խորհրդատվական խորհուրդ, որը ժամանակավորապես փոխարինելու էր հորդանանյան պառլամենտը՝ Ներկայացուցիչների պալատը: Նման խորհրդի ստեղծումը բացատրվում էր այն հանգամանքով, որ հնարավոր չէր պառլամենտական ընտրություններ անցկացնել, քանի որ պառլամենտի տեղերի կեսը պատկանում էր Իսրայելի օկուպացիայի տակ գտնվող Արևմտյան ափի պաղեստինցիներին, իսկ ամբողջ Հորդանանի Հաշիմյան թագավորությունում մտցված էր ռազմական դրություն, և ի զորու էին արտակարգ դրությանը հատուկ օրենքները:

Ազգային խորհրդատվական խորհուրդը գործեց մինչև 1984 թ. հունվարը, երբ նա թագավորական հրովարտակով լուծարվեց: Թագավորը հասկանում էր, որ այդպես շարունակել չի կարելի և դիմեց ինչ–որ միջանկյալ, կոմպրոմիսային քայլի: Չցանկանալով իր թագավորության կապերը խզել Արևմտյան ափի, այսինքն՝ արաբական Պաղեստինի ընտրախավի՝ էլեկտորատի հետ՝ Հուսեյն I–ը 1984 թ. վերջերին Ամմանում գումարեց նախկին՝ Իններորդ պառլամենտի արտակարգ նստաշրջան, որին հրավիրվեցին 1967 թ. պառլամենտական ընտրությունների ժամանակ ընտրված բոլոր պատգամավորները, այդ թվում և Արևմտյան ափից: Նրանք, իհարկե, բոլորը չկարողացան մասնակցել: Ոմանք արդեն մահացել էին, ոմանք էլ, գտնվելով Իսրայելի օկուպացրած Արևմտյան ափում, չկարողացան ժամանել Ամման: Ներկա գտնվող պառլամենտականները քվերակությամբ մահացածների և Արևմտյան ափից մասնակցել չկարողացած դեպուտատների փոխարեն ընտրեցին նոր անդամներ այն հաշվով, որ պահպանվի նախկին հարաբերակցությունը Արևելյան և Արևմտյան ափերի պառլամենտականների միջև, այսինքն՝ 30–ական դեպուտատներ Արևելյան և Արևմտյան ափերից: Դա կոչվեց Հորդանանի Տասներորդ պառլամենտ: Զգուշավորության դրսևորում հանդիսացող այս հեռատես քայլը խոսում էր այն մասին, որ Հուսեյնը կողմնակից չէր այնպիսի քայլերի, որոնք կարող էին ցնցումներ առաջացնել կամ ավելորդ լարվածություն մտցնել հորդանանյան–պաղեստինյան հարաբերություններում:

Վերջապես՝ 1988 թ. կատարվեցին բաժանմանն ուղղված վերջին կարևոր քայլերը: 1988 թ. հուլիսի 28–ին Հուսեյն I–ը հայտարարեց, որ այդ օրվանից ինքը դադարեցնում է Արևմտյան ափում զարգացման

ծրագրերի իրականացումը, որի համար նա հատկացրել էր 1 մլրդ 300 մլն ամերիկյան դոլար: Նա իր այդ քայլը բացատրում էր նրանով, որ դա հնարավորություն կտա ՊԱԿ–ին՝ զբաղվելու այդ հարցերով, որն իր հերթին կնպաստեր ՊԱԿ–ի պատասխանատվության բարձրացմանը Արևմտյան ափի խնդիրների նկատմամբ: Հուլիսի 30–ին հորդանանյան միապետը կատարեց ևս մեկ քայլ, որը կարևոր էր ոչ միայն ՊԱԿ–ի, այլև Հորդանանի համար: Նա լուծարեց պառլամենտը, որի ընտրությունները կատարվել էին դեռևս 1967 թ.,ապրիլին՝ մինչև հունիսյան պատերազմը: Իսկ դա նշանակում էր, որ ավարտվում էր Արևմտյան ափի ներկայացուցչությունը Հորդանանի Հաշիմյան Թագավորության օրենսդիր մարմնում, որը հանդիսանում էր երկու ափերի օրենսդիր մարմինը: Վերացավ նրանց կապող ևս մեկ օղակ:

1988 թ. հուլիսի 31–ին Հուսեյն I–ը պաշտոնապես հայտարարեց, որ դադարեցվում, ավելի ճիշտ խզվում են վարչական–կառավարական և իրավական բոլոր կապերը Արևմտյան ափի հետ: Դա վերջին ակորդն էր բաժանման գործընթացում:

Այդ օրը ապահարզանն իրավաբանորեն ուժի մեջ մտավ:

Այդ օրվանից հորդանանյան–պաղեստինյան հարաբերություններն ընակոխեցին նոր փուլ:

V. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՐԴԱՆԱՆՈՒՄ. ԱՆՑՈՒՄ ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ (1989–1999 թթ.)

1. Պառլամենտական նոր ընտրություններ և ռազմական դրության վերացումը

Արևմտյան ափից տարանջատվելը Հուսեյն I–ին և Հորդանանի իշխանություններին հնարավորություն տվեց կենտրոնանալ Հորդանանի ներքաղաքական և տնտեսական զարգացման հարցերի վրա: Այդ բնագավառում տարիների ընթացքում կուտակվել էին բազմաթիվ և տարաբնույթ խնդիրներ, որոնց լուծումն անհետաձգելի էր դարձել: Դրանցից էին կախված Հորդանանի ապագան և զարգացման հեռանկարները:

Այդ խնդիրների մեջ առաջնային նշանակություն էին ձեռք բերում վերադարձը պառլամենտական կյանքին, ռազմական դրության և դրա հետ կապված արտակարգ օրենքների վերացումը և դեմոկրատական ազատությունների հաստատումը:

Հորդանանում վերջին անգամ պառլամենտական ընտրությունները տեղի էին ունեցել 1967 թ. ապրիլին: 22 տարի անց՝ 1989 թ. նոյեմբերի 8–ին, կայացան նոր ընտրություններ, որոնք անցկացվեցին ամբողջ Հորդանանի տարածքում, և որին մասնակցեցին միայն Հորդանանի քաղաքացիները: Ներկայացուցիչների պալատի անդամների թիվը 60–ից հասցվեց 80–ի, իսկ սենատինը՝ 30–ից 40–ի: Դա եղավ միայն Հորդանանի օրենսդիր մարմինը:

1989 թ. պառլամենտական ընտրություններին և Օրենսդիր բարձրագույն մարմնի կազմավորմանը հաջորդեց Հուսեյն I–ի նոր և վերին աստիճանի կարևոր դեկրետը Հորդանանում ռազմական դրությունը վերացնելու մասին, որի պայմաններում Հորդանանն ապրում էր արդեն 22 տարի՝ 1967 թվականից ի վեր: Այդ կապակցությամբ թագավորական դեկրետում ասված էր. «Շարունակելու համար Հորդանանի ազատականացման գործընթացը և վերահաստատելու մեր խորը նվիրվածությունը մարդու իրավունքներին և քաղաքացիների արժանապատվությանը՝ մենք որոշում ենք, որ ռազմական օրենքները վերացած են»: Ռազմական դրությունը և դրան համապատասխան օրենքները մտցվել էին 1967 թ. հունիսյան պատերազմում պարտություն կրելուց հետո, երբ սպառնալիք էր ստեղծվել երկիր անվտանգության համար, առաջացել էր ներքին մեծ լարվածություն, և Հորդանանի Հաշիմյան թագավորությունը կորցրել էր Արևմտյան ափը: Այժմ ստեղծվել էր նոր իրադրություն: Հորդանանը, ճանաչելով ՊԱԿ–ին որպես Պաղեստինի միակ օրինական ներկայացուցիչ, այլևս պատասխանատվություն չէր կրում Արևմտյան ափի համար: Ապահարզանից հետո վերացել էր ներքին լարվածությունը: Հորդանանի առջև կանգնել էին դեմոկրատական ազատությունները վերականգնելու և ընդլայնելու կարևոր խնդիրները: Այդ պատճառով էլ Հուսեյն թագավորը ռազմական դրության հետ կապված օրենքները սկզբում՝ 1989 թ., սառեցրեց, իսկ 1992 թ. ապրիլին պաշտոնապես վերացրեց:

Մնում էր լուծել ևս մեկ կարևոր հարց՝ կուսակցությունների լեգալացման և նրանց գործունեության վերականգնման հարցը: Կուսակցությունների վերացման մասին օրենքն ընդունվել էր դեռևս 1957 թ., և

1989 թ. ընտրություններն անցան այդ օրենքի պայմաններում, այսինքն՝ արգելված էր նրանց մասնակցությունը: Սակայն դա լոկ ձևական բնույթ էր կրում, քանի որ ընտրապայքարին մասնակցող դեպուտատները հանդես էին գալիս այս կամ այն գաղափարախոսություն ներքո, որից դժվար չէր կռահել, թե նրանք ինչպիսի քաղաքական ուժեր են ներկայացնում: Այդ պատճառով էլ 1989 թ. ընտրություններին մասնակցում էին բոլոր երանգներին պատկանող ուժերը, որոնք իրենցից ներկայացնում էին ծայրահեղ աջերից մինչև ծայրահեղ ձախեր: Իշխանություններին հայտնի էր այդ իրողությունը, սակայն նրանք ոչ մի խափանիչ քայլ չձեռնարկեցին նրանց դեմ, այլ ապահովեցին նրանց բոլորի ազատ մասնակցությունը ընտրություններին: 1989 թ. պառլամենտական ընտրությունները համարվում են Հորդանանում կայացած ընտրություններից ամենաազատը և արդարը:

Վերջապես՝ 1992 թ ապրիլին պաշտոնապես վերացվեց կուսակցությունների գործունեությունն արգելող օրենքը, և կուսակցություններն ստացան ազատ գործելու իրավունք: Հաջորդ ընտրություններին, որոնք կայացան 1993 թ., կուսակցություններն արդեն ազատորեն մասնակցեցին և բացահայտորեն ներկայացրեցին իրենց ընտրական ծրագրերը՝ համաձայն իրենց քաղաքական ուղղվածության:

1992 թ. կուսակցությունների արգելման մասին օրենքի վերացումից հետո քաղաքական ասպարեզում անմիջապես հայտնվեցին մի շարք կուսակցություններ. Դրանց մի մասը վաղուց էր հիմնված, իսկ մյուս մասն էլ նոր էր կազմավորվում: Բայց դրանք բոլորն էլ համարվեցին հիմնված նոր օրենքի ընդունումից հետո հայտ ներկայացնելու և իշխանությունների կողմից արտոնություն ստանալու օրվանից: Ըստ այդմ՝ 1992 թ. դեկտեմբերի 7–ին հիմնվեց Իսլամական գործողության ճակատը, 1993 թ. հունվարի 18–ին՝ Հորդանանի կոմունիստական կուսակցությունը, 1993 թ. հունվարի 18–ին՝ Հորդանանյան Արաբական սոցիալիստական Բաաս կուսակցությունը, նույն թվականի հունվարի 24–ին՝ Հորդանանի ժողովրդական դեմոկրատական կուսակցությունը և այլն:

Դրանով նաև նշանակալի քայլ կատարվեց Հորդանանում բազմակարծություն հաստատելու ուղղությամբ:

1993 թ. օգոստոսին Հորդանանի պառլամենտը հատուկ ուղղում մտցրեց ընտրական օրենքում՝ նշելով, որ 1993 թ. ընտրությունները պետք է կայանան դրան համապատասխան: Այդ ուղղումով ընտրական համակարգում մտցվեց «մեկ մարդ – մեկ քվե» սկզբունքը, որը մինչ այդ

բացակայում էր: Նրանով սահմանվեց նաև պառլամենտի դեպուտատների համամասնություն՝ ըստ ազգային և կրոնական պատկանելության: Ըստ այդմ՝ Ներկայացուցիչների պալատի 80 տեղերը բաշխվում էին հետևյալ կերպ. 71 տեղ հատկացվում էր մուսուլմաններին, որից 6–ը՝ բեդվիններին, 3–ական՝ չերքեզներին և չեչեններին, իսկ մնացած 9–ը տեղը տրվում էր քրիստոնյաներին:

Հուսեյն I–ի քաղաքական բարեփոխումների շարքում կարևոր տեղ էր գրավում նաև Ազգային ուխտի («National Charter») ընդունումը, որին կարգավորիչ դերակատարում էր վերապահված Հորդանանի պետական, քաղաքական և հասարակական կյանքում: Միապետի հրամանով 1990 թ. ապրիլին ստեղծվեց վեց մարդուց կազմված թագավորական հանձնաժողով, որին հանձնարարվեց մշակել ուղեցույց քաղաքական ուժերի գործունեության վերաբերյալ: Հանձնաժողովը ներկայացրեց իր առաջակությունները, որը ստացավ Ազգային ուխտ անվանումը: 1991 թ. հունիսին այն դրվեց քննարկման, որին մասնակցում էին հորդանանյան 2000 ականավոր և հեղինակավոր գործիչներ: Այդ կարևոր փաստաթուղթը արժանացավ նրանց հավանությանը և դրվեց գործողության մեջ:

Ազգային ուխտը նախատեսում էր կառուցողական երկխոսություն օրենսդիր և գործադիր մարմինների, որոշումներ ընդունողների և քաղաքական ու ինտելեկտուալ էլիտայի միջև, որոնք վերաբերում են իշխանության, իրավունքների և պարտականությունների հարցերին: Նրանում ամրագրված էր, որ քաղաքական կուսակցությունները կարող են գործել որպես այդպիսին սահմանադրության շրջանակներում, առանց օտարերկրյա ֆինանսական ֆոնդավորման, և նրանք պետք է արտացոլեն Հորդանանի մշակութային պլյուրալիզմը՝ բազմազանությունը: Հատուկ շեշտված էր հորդանանյան առաջնորդների պատասխանատվությունը անսանձ ազատությունների դրսևորման, ինչպես նաև այնպիսի խմբավորումների գործունեության դեմ, որոնք ոչ մի սահման չեն ճանաչում:

Ազգային ուխտը սահմանադրության հետ միասին դարձավ Հորդանանի ներքին քաղաքական կյանքի խաղի կանոնների ու նորմերի սահմանման հիմնական փաստաթուղթը: Նա կարևոր դերակատարում ունեցավ հորդանանյան քաղաքական կյանքում լարվածության մեղմացման, հորդանանյան հասարակության տարբեր խավերի համախմբման և համագործակցության հաստատման գործում:

Քաղաքական նոր իրադրության հաստատման, նոր կանոնների ու նորմերի գործողության մեջ դնելու պայմաններում տեղի ունեցան 1993 և 1997 թթ պառլամենտական ընտրությունները Հորդանանում:

1988–1998 թթ. ընթացքում Հուսեյն թագավորի քաղաքական ռեֆորմների կիրառման, պառլամենտական կյանքի վերականգնման և քաղաքական վարքի նոր կանոնների հաստատման շնորհիվ դրականորեն փոխվեց Հորդանանի պատկերը:

2. Տեղաշարժեր Հորդանանի տնտեսական և սոցիալական ոլորտներում 1980–1990–ական թվականներին

Հորդանանում դեռևս 1970–ական թվականների կեսերից նկատվեց սոցիալ–տնտեսական զգալի առաջընթաց: 1975 թ. ավարտվեց եռամյա պլանի կատարման ժամկետը, և երկիրը ձեռնամուխ եղավ սոցիալ–տնտեսական զարգացման 1976–1980 թթ., իսկ ապա նաև 1981–1986 թթ. հնգամյա պլանների կատարմանը: Այդ ժամանակամիջոցում նշանակալիորեն զարգացավ արդյունաբերությունը: Մասնավորապես կառուցվեցին և շարք մտան մի շարք նոր արդյունաբերական ձեռնարկություններ, այդ թվում՝ պողպատյա խողովակների գործարանը ալ–Զարկայում, կոշիկի, ներկերի, մրգահյութերի, կահույքի, բրդյա գործվածքների, հրուշակեղենի և այլ գործարաններ ու ֆաբրիկաներ, պոտաշի արտադրության կոմբինատը, ընդլայնվեց նավթազտիչ գործարանը և այլն: Դրա հետ միասին աճեց էլեկտրաէներգիայի, ցեմենտի, ֆոսֆատների արտադրությունը: Մեծ թափ ստացավ շինարարությունը, կառուցվեցին նոր ճանապարհներ, բազմաթիվ հյուրանոցներ, վարչական շենքեր և առանձնատներ: Փոխվեց Ամմանի ճարտարապետական տեսքը: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ 1975 թ. Լիբանանում սկսված քաղաքացիական պատերազմի հետևանքով Բեյրութը կորցրեց Մերձավոր Արևելքի բանկային կենտրոնի իր դիրքերը, և այդ գործառույթը մասամբ տեղափոխվեց Ամման, որն աստիճանաբար վերածվեց տարածաշրջանային կարևոր ֆինանսաբանկային կենտրոնի: Դրա հետևանքով կտրուկ աճեց տնտեսության սպասարկման ոլորտը:

Որոշ տեղաշարժեր նկատվեցին նաև գյուղատնտեսության բնագավառում, թեև պետք է նշել, որ այդ տարիներին, օրինակ՝ 1985 թ., գյուղատնտեսությունն ապահովում էր երկրի պահանջների ընդամենը

մեկ երրորդը, և Հորդանանը հարկադրված էր յուրաքանչյուր տարի մեծ քանակությամբ հացահատիկ ներմուծել:

Տնտեսական տեղաշարժերը նպաստեցին ժողովրդի զբաղվածության աճին: Երկրի տնտեսական զարգացման պահանջները բավարարելու համար Հորդանանը հրավիրում էր նաև օտարերկրյա մասնագետների: 1982 թ. երկրի տնտեսական սեկտորում աշխատում էր մոտ 120 հազար օտարերկրացի:

Տնտեսական զարգացմանը մեծապես նպաստեց արաբական երկրների կողմից Հորդանանին ցույց տրվող ֆինանսական օգնությունը: Բաղդադում 1978 թ. տեղի ունեցած արաբական երկրների ղեկավարների կոնֆերանսի որոշմամբ Հորդանանը, սկսած 1979 թ., յուրաքանչյուր տարի որպես օգնություն էր ստանում 1,25 մլրդ դոլար, որը տրամադրում էին Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Լիբիան, Ալժիրը, Իրաքը, ԱՄՀ–ն և Կատարը:

1980 թ. ընդունվեց օրենք սոցիալական ապահովագրության մասին: Նույն տարում ընդունվեց օրենք տեղական ինքնակառավարման մասին, որով զգալի չափով ընդլայնվում էին տեղական մարմինների իրավունքները, կանանց տրվեց տեղական մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունք:

Սակայն 1983 թ. նկատվում է տնտեսական զարգացման տեմպերի դանդաղում, որի հետևանքով արդեն 1985 թ. երկրի տնտեսության մեջ ստեղծվեց լարված դրություն: Դա բացատրվում է Մերձավոր և Միջին Արևելքում տնտեսական իրավիճակի ընդհանուր վատթարացմամբ, նավթի համաշխարհային գների անկմամբ, որի հետևանքով կրճատվեց արաբական երկրների կողմից Հորդանանին տրվող ֆինանսական օգնությունը. Իր դերը խաղաց նաև ֆոսֆատների համաշխարհային գների անկումը, որը հանգեցրեց նրա արտահանումից ստացվող եկամուտների կրճատմանը. Եվ ընդհանրապես, 1983 թ. սկսած կրճատվում է Հորդանանի արտահանությունը, և աճում ներմուծումը. որի հետևանքով տարեցտարի մեծանում են պետական բյուջեի դեֆիցիտը և սղաճը:

1980–ական թվականների վերջերից և 1990–ական թվականներից սկսվեց նոր փուլ Հորդանանի սոցիալ–տնտեսական զարգացման բնագավառում, որը համարվում է տնտեսության կառուցվածքային փոփոխությունների, ազատականացման և սեփականաշնորհման փուլ: Հորդանանի կառավարությունը դրա հետ է կապում երկրի տնտեսության առողջացման և հետագա զարգացման հույսերը.

Նպաստավոր և արտոնյալ պայմաններ ստեղծվեցին ներքին և օտարերկրյա կապիտալի ներհոսքի և տնտեսության մեջ ներդնելու համար· 1995 թ. ընդունվեց կարևոր օրենք հարկերի կրճատման և կապիտալ ներդրումների խրախուսման մասին: 1997 թ. գործողության մեջ դրվեց ապահովագրական օրենքը, կարգավորվեց մրցակցային դաշտը, սկսվեց արդյունաբերության մեջ նոր տեխնոլոգիաների ներդրման գործընթացը: Անհրաժեշտ քայլեր ձեռնարկվեցին տնտեսության վերափոխման՝ դիվերսիֆիկացիայի ուղղությամբ այն հաշվով, որ նվազի երկրի տնտեսության կախվածությունը ֆոսֆորի, պոտաշի, ընդհանրապես հանքարդյունաբերության արտադրությունից: Եվ դա տվեց իր դրական արդյունքները: 1990–ականների կեսերից նկատելիորեն աճեց արդյունաբերական արտադրությունը, հատկապես մեծ ծավալներ ընդունեց արտահանումը: 1985–1995 թթ. արտահանումն աճեց մոտ 300 տոկոսով: Տպավորիչ էր համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճը, որ 1992 թ. կազմեց 16,1 տոկոս՝ ամենաբարձրը Մերձավոր և Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանում: Նրա աճը պահպանվեց նաև հետագա տարներին:

Հորդանանի տնտեսության մեջ կառուցվածքային ռեֆորմներ կիրառելու քաղաքականության մեջ կարևոր տեղ էր հատկացվում տնտեսության մասնավորեցմանը կամ սեփականաշնորհմանը, և ձգտումը նվազեցնել պետության ուղղակի մասնակցությունը արտադրական սեկտորում: Մինչև 1992 թ., երբ սկսվեց մասնավորեցման գործընթացը, պետական սեփականություն էր համարվում լեռնահանքային ոլորտը՝ ֆոսֆորի և պոտաշի արտադրությունը, և այսպես կոչված հանրային սեկտորը, որի մեջ հորդանանյան տնտեսագետները մտցնում են էլեկտրականությունը, ջուրը, հաղորդակցության միջոցները, հասարակական տրանսպորտը, երկաթուղին և ավիացիան: Մինչև 1992 թ պետական սեկտորի բաժինը ՀՆԱ–ի մեջ առանձնապես շատ չէր. այն կազմում էր ընդամենը 14 տոկոս: Իսկ մասնավոր սեկտորի ձեռքում գտնվում էր ամբողջ շինարարությունը, թեթև արդյունաբերության, ֆինանսական գործունեության, բիզնեսի և ծառայությունների մեծ մասը:

Սեփականաշնորհումն իրականացվել է երկու փուլով: Առաջին փուլում, ընդհուպ մինչև 1999 թ., սեփականաշնորհվել են հեռակապի, տուրիզմի, էներգետիկայի, հանքային արդյունաբերության, արդյունաբերության և տրանսպորտի մի շարք ձեռնարկություններ: Երկրորդ փուլում պետք է իրագործվի Հորդանանի մի շարք խոշոր ընկերությունների

ու կորպորացիաների, ինչպես՝ «Նաշիոնալ Պետրոլեում Կորպորեյշընի», «Արաբ Պոտաշ Կոմպանիի», «Ջորդան Ֆոսֆեյտ Մայնս Կոմպանիի», «Ռոյալ Ջորդան էյըրլայնի», «Փոստալ Սեյվինգս Ֆոնդի» սեփականաշնորհումը: Նախատեսվում է նաև Աքաբայի նավահանգստի սեփականաշնորհումը:

Հորդանանի տնտեսության վերակառուցման, ռեֆորմների ու զարգացման բաղկացուցիչ մասն է կազմում տնտեսական ազատ գոտիների ստեղծումը: Արդեն գործում են Ամմանի և Զարքայի ազատ գոտիները:

Հորդանանն այն սակավաթիվ արաբական և ընդհանրապես արևելյան երկրներից մեկն է, որն ունի աղքատության վերացման կամ թեթևացման պետական ծրագիր: Աղքատության, թերասնության և դրա հետ կապված մահացության բարձր աստիճանը Հորդանանի առջև կանգնած ամենալուրջ հիմնախնդիրներից մեկն է, որի հաղթահարման համար պահանջվում են պետական մարմինների և հասարակական–բարեսիրական կազմակերպությունների ու մասնավոր սեկտորի համատեղ ջանքերը, որը, բարեբախտաբար, առկա է և ինչ–որ չափով կիրառվում է Հորդանանում: Աղքատության և անապահով սոցիալական խավերի մեջ Հորդանանում մտնում են հետևյալ սոցիալական խմբերը՝ աղքատության շեմից ցածր գտնվող խավերը, գործազուրկները, որևէ արտոնությունից չօգտվողները, անաշխատունակներն ու հաշմանդամները և պաղեստինյան գաղթականները: Աղքատության տարբեր սանդղակների վրա գտնվողները և սոցիալական անապահով խավերը բավականին ստվար թիվ են կազմում, մանավանդ եթե հաշվի առնենք, որ դրանց մեջ մտցնում են նաև պաղեստինցիներին: Հուսեյն թագավորը և Հորդանանի կառավարությունը, գտնելով, որ տնտեսական վերակառուցումը և բարեկարգումը ընթանում են հաջող և արդեն տվել են իրենց առաջին դրական արդյունքները Հորդանանի տնտեսության առողջացման և զարգացման բնագավառում, 1990–ական թվականների վերջերին անհրաժեշտ համարեցին և հնարավոր գտան զբաղվել աղքատության մեղմացման և վերացման հարցերով: Կառավարությունը մասնավոր սեկտորի և հասարակական զանազան կազմակերպությունների հետ միասին 1997 թ. սկզբներին մշակեց միջոցառումների մի ամբողջ ցանկ: Այնուհետև, կառավարությունը Տնտեսական վերակառուցման ծրագրի շրջանակներում պատրաստեց մի փաստաթուղթ, որը կոչվեց «Սոցիալական արդյունավետության փաթեթ» («Social Productivity

Package»): Նրանում աղքատության և գործազրկության թեթևացումը համարվում է որպես ստրատեգիական նպատակ ու խնդիր: Նրա իրագործման համար առաջարկվում է երկու ուղի:

Առաջին ուղին, որի իրականացմանը կառավարությունը ձեռնամուխ եղավ 1998 թ., նպատակ ուներ կրճատել աղքատ գրպանների, այսինքն՝ այն մարդկանց թիվը, որոնց գրպանները դատարկ էին, և ամենաէական սոցիալական կարիքները բավարարել կարճ ժամկետում: Նախատեսվում էր. առաջին՝ ավելացնել Ազգային օգնության ֆոնդի կողմից կատարվող կանխիկ դրամական փոխանցումները և այլ տիպի օգնությունն այն հաշվով, որ դրանից օգտվեն որքան հնարավոր է ավելի շատ խավեր, երկրորդ՝ վերապատրաստել ու աշխատունակ դարձնել գործազուրկներին, երրորդ՝ ոչ մեծ՝ միկրոֆինանսական օգնություն տրամադրել փոքր ձեռներեցությանը այն հաշվով, որ նա ապահովի որոշակի եկամուտ աղքատ շրջանների աղքատ ընտանիքներին, չորրորդ՝ երկրի հետամնաց և չզարգացած շրջաններում զարգացնել ֆիզիկական և սոցիալական ենթակառույցները:

Երկրորդ ուղին նախատեսում է երկարաժամկետ՝ վեցամյա ստրատեգիական նպատակ՝ բարձրացնել սոցիալական արդյունավետությունը աղքատության և գործազրկության պատճառները վերացնելու ճանապարհով: Պահանջվում է կենտրոնանալ կրթության, առողջապահության, տեղեկատվության և տեխնոլոգիաների սեկտորների վրա: Առանց այդ հարցերը կարգավորելու, որը բավականին մեծ ժամանակ է պահանջում, անհնար է խոսել աղքատության նվազեցման և գործազրկության վերացման մասին. Եվ որպեսզի ապահովվի այդ ստրատեգիական նպատակի իրագործումը, կառավարությունը նպատակահարմար գտավ համապատասխան բաժիններ կամ օղակներ ստեղծել Պլանավորման, Աշխատանքի և Սոցիական զարգացումների նախարարությունների կազմում: Նրանց վրա դրված է նաև աշխատանքների համակարգման և ակտիվացման պատասխանատվությունը:

Բնականաբար, այդ բոլորը գոհունակությամբ է ընդունվում երկրի բնակչության, նրա տարբեր սոցիալական խավերի կողմից:

Հորդանանը նշանակալի հաջողությունների հասավ նաև գլոբալ և ռեգիոնալ տնտեսական ինտեգրացման հարցում: Դարավերջին՝ 1999 թ. հունվարի 1–ին, Հորդանանը և Եվրոպական Միությունը համաձայնագիր ստորագրեցին Գործընկերության և Ազատ առևտրի վերաբերյալ. որը նախատեսում է 12 տարվա ընթացքում առևտրական արգելքների

աստիճանաբար վերացում և առևտրի ազատ գոտիների ստեղծում Եվրոպական Միության հետ: Կողմերը պայմանավորվեցին քաջալերել եվրոպական կապիտալի ուղղակի ներդրումը Հորդանանի տնտեսության մեջ, Հորդանանի արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի համար ապահովել ազատ մուտք եվրոպական շուկաները և տրամադրել այլ դյուրություններ:

Ավելի խորացավ և նոր բովանդակությամբ հարստացավ հորդանանյան–ամերիկյան տնտեսական համագործակցությունը, որն իր արտացոլումը գտավ 1997 թ. հուլիսին Ներդրումների վերաբերյալ Հորդանանի և ԱՄՆ–ի միջև ստորագրված պայմանագրի մեջ: Կողմերը պարտավորվեցին խրախուսել և փոխադարձաբար ապահովել ներդրումները, նպաստել «նրանց միջև տնտեսական մեծ կոոպերացիան», թույլատրել կապիտալի ազատ շարժ և այլն: Հորդանանը հետագայում նման պայմանագրեր կնքեց նաև Գերմանիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Շվեյցարիայի, Թուրքիայի, Եգիպտոսի, Թունիսի, Եմենի, Մալայզիայի, Ինդոնեզիայի և այլ երկրների հետ:

Այդ բոլորի հետևանքով սկսվեց Հորդանանի տնտեսական զարգացման վերելքը, նրա տնտեսության առողջացման և արդիականացման գործընթացը, սոցիալական դրության նշանակալի բարելավումը, և լուրջ նախադրյալներ ստեղծվեցին համաշխարհային տնտեսության մեջ Հորդանանի ինտեգրացման համար:

3. «Խաղաղության թագավորը»

Պատմագիտական գրականության մեջ որոշ հետազոտողներ, ինչպես նաև միջազգային պետական և քաղաքական շատ գործիչներ, Հուսեյն իբն Թալալ ալ–Հաշիմիին անվանում են «Խաղաղության թագավոր» («King of Peace»)՝ նկատի ունենալով նրա մեծ ներդրումը Մերձավոր Արևելքում կոնֆլիկտների լուծման և խաղաղության գործընթացի մեջ: Իհարկե, բոլորը չէ, որ կիսում են այդ տեսակետը, մանավանդ որ կան նրա արտաքին քաղաքականությունը խիստ քննադատողներ նույնպես: Համենայն դեպս, վերապահումով կարելի է ընդունել Հուսեյնի թագավորին «շնորհված» այդ կոչումը, որը, կարծում ենք, ավելի շատ կարող է վերաբերել նրա 1990–ական թվականների գործունեությանը:

Հորդանանի արտաքին քաղաքականությանը 1980–1990–ականներին բնորոշ էր մեծ ակտիվություն, մանավանդ միջարաբական հարա-

բերություններում: Հորդանանը արաբական բոլոր կարևոր խորհրդակցությունների և հանդիպումների մշտական մասնակիցներից էր և ընդունված որոշումների կիրառման կողմնակից: Նա դատապարտեց 1978 թ. սեպտեմբերյան քեմպդևիդյան համաձայնագիրը, եգիպտա–իսրայելական 1979 թ. մարտյան հաշտության պայմանագիրը և խզեց դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի հետ վերջինիս սեպարատիստական կուրսի պատճառով:

1980–1988 թթ. իրաքա–իրանյան պատերազմի ժամանակ Հորդանանը անվերապահորեն և հետևողականորեն պաշտպանում էր Իրաքին՝ նրան տրամադրելով նաև ռազմական և տնտեսական օգնություն:

Յուրահատուկ դիրքորոշում գրավեց Հորդանանը 1990 թ. օգոստոսին Քուվեյթ Իրաքի ներխուժման ժամանակ: Քուվեյթի գրավումն Իրաքի կողմից նոր և վտանգավոր իրադրություն ստեղծեց: Ձևավորվեց միջազգային կոալիցիա՝ ԱՄՆ–ի գլխավորությամբ, որի բանակները պատրաստ էին պատերազմական գործողություններ սկսել Իրաքի դեմ, եթե վերջինս իր զորքերը դուրս չբերեր Քուվեյթից: Հուսեյն I–ը փորձեց այդ կոնֆլիկտի լուծման համար գտնել ինչ–որ արաբական լուծում՝ առաջարկելով դա համարել «ներարաբական ընտանեկան վեճ», սակայն նրան չպաշտպանեցին Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան և արաբական մի քանի այլ երկրներ, ինչպես նաև ԱՄՆ–ը: Դրանից հետո սկսված պատերազմի ժամանակ Հուսեյնի դիրքորոշումն իրաքանպաստ էր, որը բացատրվում է այն հանգամանքով, որ Հորդանանը մեծապես կախված էր իրաքյան նավթից և շատ մեծ տեղ էր գրավում նրա տնտեսական հարաբերություններում:

Դրանից հետո Հորդանանը մեծ ջանքեր գործադրեց բարելավելու համար իր հարաբերությունները ինչպես արաբական երկրների, այնպես էլ Վաշինգտոնի հետ: Դրա շնորհիվ նա դարձավ 1991 թ. հոկտեմբերին Մադրիդում ԱՄՆ–ի և Խորհրդային Միության նախաձեռնությամբ գումարված Մերձավոր Արևելքի խաղաղությանը նվիրված համաժողովի մասնակից: Քանի որ Իսրայելն առարկում էր այդ կոնֆերանսին ՊԱԿ–ի մասնակցությանը առանձին պատվիրակությամբ, Հուսեյնը համաձայնվեց, որ ստեղծվի միասնական հորդանանա–պաղեստինյան պատվիրակություն, որն ընդունվեց մասնակիցների կողմից: Եվ այդ պատվիրակության կազմում պաղեստինյան առաջնորդները մասնակցեցին կոնֆերանսին և հնարավորություն ունեցան հանդես գալ ու իրենց տեսակետները ներկայացնել:

Հուսեյնը հասկանում էր, որ ժամանակները փոխվել են, և ստեղծվել են նոր իրողություններ, որոնք անտեսել հնարավոր չէր: Նա գտնում էր, որ եկել է ժամանակը կարգավորելու հարաբերությունները Իսրայելի հետ: Մանավանդ որ արաբական առաջատար երկիրը՝ Եգիպտոսը, Իսրայելի հետ դեռևս 1978–1979 թթ. կնքել էր երկու պայմանագիր, իսկ 1993 թ. օգոստոսին հայտնի դարձավ Օսլոյում իսրայելա–պաղեստինյան գաղտնի բանակցությունների մասին, որին այնուհետև հաջորդեց 1993 թ. սեպտեմբերին Վաշինգտոնում կնքված պայմանագիրը Իսրայելի և ՊԱԿ–ի միջև Պաղեստինյան ինքնավարություն ստեղծելու մասին:

Դա Հորդանանին տվեց գործողությունների որոշ ազատություն: 1994 թ. հոկտեմբերի 25–ին Հորդանանի թագավոր Հուսեյնը և Իսրայելի վարչապետ Իցակ Ռաբինը Վաշինգտոնում ստորագրեցին համաձայնագիր, որով վերջ էր տրվում պատերազմական դրությանը երկու երկրների միջև: 1994 թ. հուլիսի 26–ին Հուսեյնը և Իցակ Ռաբինը Արաբա Վալիում՝ հորդանանա–իսրայելական սահմանի մոտ, Աքաբայից 38 կմ հյուսիս, ստորագրեցին Հաշտության պայմանագիր, որին որպես վկա ներկա էր ԱՄՆ–ի պրեզիդենտ Կլինտոնը: Պայմանագիրը հաստատեց երկու երկրների պետական սահմանները՝ հիմք ընդունելով 1922 թ Պաղեստինի մանդատի դեմարկացիոն գիծը: Ըստ այդմ՝ Իսրայելը Հորդանանին զիջեց 381 քառ. կմ տարածք, իսկ Հորդանանը Իսրայելին՝ 300 քառ. կմ:

Հուսեյնի թագավորության շրջանում Հորդանանի արտաքին քաղաքականության մեջ մշտապես մեծ և կարևոր տեղ են գրավել հարաբերությունները արևմտյան պետությունների, հատկապես ԱՄՆ–ի և Մեծ Բրիտանիայի հետ: Դրան զուգահեռ Հորդանանը վերջին տարիներին զգալիորեն ընդլայնել է իր քաղաքական և տնտեսական կապերը նաև Ֆրանսիայի, ԳՖՀ–ի և Ճապոնիայի ու այլ երկրների հետ: Նրա արտաքին քաղաքականությունն ընդհանուր առմամբ ունեցել է արևմտյան կողմնորոշում:

VI. ՀՈՐԴԱՆԱՆԸ 1999–2005 թթ.

1. Հուսեյն I–ի մահը: Աբդալլահ II–ը Հորդանանի նոր գահակալ

1998 թ. հայտնի դարձավ, որ Հուսեյն I–ը տառապում է անբուժելի հիվանդությամբ՝ ավշագեղձերի (լիմֆատիկ) քաղցկեղով: Եվ նա

որոշեց նախքան այս կյանքին հրաժեշտ տալը կարգի գցել թագավորական դինաստիական գործերը, առաջին հերթին ժառանգորդի հարցը:

Գոյություն ունեցող կանոնի համաձայն՝ Հաշիմյան դինաստիայում գահը ժառանգաբար ուղղակի անցնում է արական գծով ժառանգորդին, որը սովորաբար լինում է թագավորի ավագ որդին: Այդ սկզբունքը պահպանվում է 1921 թվականից, երբ գահի վրա նստեց Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմիի որդին՝ Աբդալլահը (1921–1951 թթ.), և Հաշիմյանները հաստատվեցին որպես թագավորող դինաստիա: Աբդալլահին հաջորդեց նրա ավագ որդին՝ Թալալ իբն Աբդալլահը (1951–1952 թթ.), իսկ վերջինիս՝ նրա ավագ որդին՝ Հուսեյն իբն Թալալ ալ–Հաշիմին (1953–1999 թթ.):

Սովորաբար թագաժառանգ ի ծնե համարվում է գահակալի ավագ որդին: Եվ իրոք, այդ իրավունքը պատկանում էր Հուսեյն I–ի ավագ որդուն՝ Աբդալլահին, որը ծնվել էր 1962 թ.. Սակայն 1965 թ. Հուսեյն I–ը փոփոխություն մտցրեց 1952 թ. սահմանադրության մեջ և թագաժառանգ նշանակեց իշխան Հասանին՝ իր կրտսեր եղբորը: Առաջին հայացքից տարօրինակ թվացող այդ քայլը բացատրվում է նրանով, որ այդ տարիներն անձամբ Հուսեյնի համար շատ ծանր ժամանակներ էին, երբ սաստկացել էին նրան տապալելու, պետական հեղաշրջում կատարելու փորձերը, որոնց հետևում, ինչպես նշվում է որոշ աղբյուրներում, կանգնած էին Եգիպտոսը, Սիրիան, պաղեստինցիները և արաբական այլ ուժեր, որոնք դժգոհ էին Հուսեյնի քաղաքականությունից: Նկատի առնելով ստեղծված իրադրությունը և վախենալով, որ իրեն սպանելուց հետո գահը կանցնի երեխային՝ ընդամենը երեք տարեկան իր ավագ որդուն, և ժառանգության հարցում Հաշիմյան դինաստիայի ներսում և երկրում կարող է իրենից հետո երկպառակություն առաջանալ՝ թագավորը դիմեց մի այնպիսի ծայրահեղ քայլի, ինչպես օրինական թագաժառանգին՝ իր որդուն, գահից զրկելը և նրա փոխարեն իր եղբորը թագաժառանգ նշանակելն էր: Նա փաստորեն դինաստիական շահերը՝ գահը Հաշիմյանների ձեռքում պահելը, վեր դասեց իր նեղ անձնական շահերից:

Հուսեյնը ժառանգորդի հարցին կրկին անդրադարձավ իր մահվանից երկու շաբաթ առաջ: Նա վերանայեց 1965 թ. ընդունված իր որոշումը և կրկին փոփոխություն մտցնելով սահմանադրության մեջ՝ 1999 թ. փետրվարի 6–ին՝ իր մահվանից քիչ առաջ, իր ավագ որդուն՝ Աբդալլահին, նշանակեց թագաժառանգ, որը պետք է նրան փոխարիներ

նրա մահից հետո. Իսկ նրա եղբայրը՝ Հասանը, որ 34 տարի կատարել էր թագաժառանգի պարտականությունները, զրկվեց ժառանգորդի կարգավիճակից:

Մահամերձ թագավորի նոր որոշման շարժառիթը մասնագետները փնտրում են հետևյալ երեք պատճառների մեջ: Առաջին՝ Աբդալլահն այլևս նախկին 3–ամյա անօգնական երեխան չէր, այլ արդեն 37–ամյա հասուն տղամարդ: Երկրորդ՝ փոխվել էր իրադրությունը Հորդանանի ներսում և շուրջը: Նա դարձել էր կայուն երկիր, հարաբերությունները հարևան արաբական երկրների և պաղեստինցիների հետ ընդհանրապես կարգավորվել էին, և պատմության գիրկն էին անցել Հաշիմյան դինաստիան բռնությամբ տապալելու և նրա միապետին ժամանակից շուտ այն աշխարհ ուղարկելու փորձերն ու դրանց դրդապատճառները. Երրորդ՝ ինչպես նշում են որոշ հետազոտողներ, որոնք մոտ են կանգնած եղել թագավորական ընտանիքին և լավատեղյակ են նրանում տիրող մթնոլորտին, մատնացույց են անում, որ Հուսեյնը դժգոհ էր իր եղբոր՝ Հասանի պահվածքից և պետական գործերը վարելուց, հատկապես իր հիվանդության շրջանում:

Հուսեյն իբն Աբդալլահ ալ–Հաշիմին վախճանվեց 1999 թ. փետրվարի 7–ին: Այդ նույն օրը Աբդալլահ իբն Հուսեյն ալ–Հաշիմին հռչակվեց Հորդանանի Հաշիմյան թագավորության թագավոր՝ ստանալով Աբդալլահ II անվանակոչումը: Նա չորրորդն էր այդ դինաստիայից, որ նստեց Հաշիմյան գահին.

2. Հորդանանի ներքին և միջազգային դրությունը (1999–2005 թթ.)

Աբդալլահ II–ը, ինչպես և նրա հայրը, իր կրթությունը ստացել էր անգլիական ուսումնական հաստատություններում: Ավարտելով անգլիական էլիտար մասնավոր դպրոցները՝ նա այնուհետև ուսանում է բրիտանական Ռազմական ակադեմիայում: 1984 թ. նա ընդունվում է Օքսֆորդի համալսարան, որն ավարտելուց հետո որոշ ժամանակ ուսումնառում է Վաշինգտոնի Ջորջթաունի համալսարանում:

Աբդալլահը սիրում էր ռազմական գործը և երկար տարիներ իրեն նվիրում է այդ բնագավառին, ստանում գեներալի զինվորական կոչում և 1994 թ. նշանակվում Հորդանանի հատուկ ուժերի հրամանատար:

Թագավոր դառնալու պահին նա քաղաքացիական և պետական աշխատանքի փորձ համարյա չուներ, որն ընդգծվում էր հատկապես

հանգուցյալ թագավորի արտակարգ ընդունակությունների ֆոնի վրա, որը պետությունը կառավարելու, խուսանավելու, կրիտիկական դրություններից հաջողությամբ դուրս գալու արտակարգ վարպետ էր:

Նրա այդ թերությունները փոխհատուցվում էին երկու հանգամանքով: Աբդալլահ II–ը, ի տարբերություն իր հոր, ստացել էր մի այնպիսի պետություն, որն արդեն կայացել էր. ուներ մշակված և գործող մեխանիզմներ, համապատասխան փորձառու պետական ապարատ, կայուն սոցիալ–քաղաքական և տնտեսական դրություն և զարգացման արդեն մշակված հեռանկարներ: Կայուն էր նաև Հորդանանի միջազգային դրությունը, համենայն դեպս նրա առջև կանգնած չէին այնպիսի սուր խնդիրներ, որոնք կային 1950–1980–ական թվականներին, երբ երկիրը բազմիցս հայտնվում էր ճգնաժամային վիճակում, իսկ Հուսեյն I–ի քաղաքական ճակատագիրը և կյանքը մազից էին կախված լինում: Հորդանանի նոր միապետն այդ առումով գտնվում էր անհամեմատ ավելի բարենպաստ դրության մեջ: Այուս պարագան այն էր, որ Աբդալլահ II–ը իր հորից ժառանգեց նաև բանիմաց և պետական կառավարման հարցերում հմտացած խորհրդատուներ, որոնք ազատորեն կողմնորոշվում էին ներքին և արտաքին քաղաքականության մեջ: Նրանք եղան նրա կարևոր օգնականները, որոնց կարիքը Աբդալլահ II–ը զգում էր հատկապես գահակալման առաջին շրջանում:

Միապետի փոփոխությունից հետո արմատական փոփոխություններ տեղի չունեցան Հորդանանի ներքին քաղաքականության բնագավառում. երկիրը շարունակեց ընթանալ տնտեսական վերակառուցման, դիվերսիֆիկացիայի և սեփականաշնորհման ուղիով, նույնիսկ ավելի արագ տեմպերով, քան մինչ այդ էր: Ներքին կյանքում գլխավոր խնդիրներից մեկը հայտարարվեց պայքարը աղքատության և կոռուպցիայի դեմ: Այս վերջին պարագան արդեն նորություն էր, քանի որ մինչ այդ պայքարը կաշառակերության դեմ չէր տարվել պետական մակարդակով: 2005 թ. դեկտեմբերին հանդես գալով կառավարական հայտարարությամբ՝ Հորդանանի վարչապետ Մարուֆ ալ–Բախիտը ընդգծեց, որ կառավարությունն իր ուշադրությունը կկենտրոնացնի երեք կարևոր խնդիրների վրա՝ քաղաքական ռեֆորմների իրականացման, աղքատների ու թշվառների դրության բարելավման և կոռուպցիայի դեմ պայքարի: Դրանց պետք է ավելացնել նաև գործազրկության հարցերը, որոնք միասին վերցրած կազմում են XXI դար ոտք դրած Հորդանանի առջև կանգնած ամենաբարդ խնդիրները:

2005 թ. տվյալներով Հորդանանի աշխատուժը կազմել է 1 մլն 460 հազար մարդ, որից գյուղատնտեսության մեջ զբաղված էր 5%–ը, արդյունաբերության մեջ՝ 12,5%–ը, իսկ սպասարկության ոլորտում՝ 82,5%–ը: 2004 թ. պաշտոնական տվյալներով գործազրկության մակարդակը կազմել է 12,5%, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ 30%: Բնակչության 30%–ը 2001 թ. գտնվում էր աղքատության սահմանագծից ներքև:

Խոսելով նշված ժամանակահատվածում Հորդանանում տիրող սոցիալ–տնտեսական վիճակի մասին՝ չի կարելի հաշվից դուրս նետել գաղթականներին, որոնք հիմնականում պաղեստինցիներ էին: Նրանց թիվը 2005 թ. հասնում էր 1 մլն 796 հազարի, որը, անշուշտ, ազդում էր երկրի ընդհանուր դրության վրա՝ ավելի սուր բնույթ տալով գոյություն ունեցող պրոբլեմներին, հատկապես սոցիալական և տնտեսական ոլորտներում:

Հորդանանի կառավարությունը երկրի առջև կանգած սոցիալ–տնտեսական խնդիրները ձգտում է լուծել մի կողմից սեփական ուժերով, ռեֆորմների կիրառման քաղաքականության միջոցով, իսկ մյուս կողմից՝ միջազգային տնտեսական և ֆինանսական կազմակերպությունների օգնությամբ, տարբեր երկրների հետ տնտեսական համագործակցության ընդլայնման և խորացման ուղիով: Նա սերտորեն համագործակցում է Համաշխարհային բանկի ու Միջազգային արժութային ֆոնդի հետ: 2000 թ. Հորդանանը դարձավ Համաշխարհային առևտրի կազմակերպության անդամ, 2001 թ. դեկտեմբերին ԱՄՆ–ի կոնգրեսը վավերացրեց Հորդանանի հետ ազատ առևտրի վերաբերյալ համաձայնագիրը և ավելացրեց ամերիկյան ֆինանսական օգնությունը նրան: Դարձյալ 2001 թ. Հորդանանը կարևոր համաձայնագիր ստորագրեց Եվրոպական Միության հետ առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ: Վերոնշյալ քայլերի շնորհիվ նշանակալիորեն աճեց արտադրությունը տնտեսության բոլոր ոլորտներում, ինչն ունեցավ իր դրական անդրադարձը բնակչության սոցիալ–տնտեսական դրության վրա:

Բայց եթե Հորդանանի կառավարությունը և Աբդալլահ II–ը բավականին ակտիվ են գործում սոցիալ–տնտեսական ոլորտում, ապա նույնը չի կարելի ասել քաղաքական ոլորտում: Թագավորը հատկապես հապաղում դրսևորեց պառլամենտական ընտրությունների հարցում: Պառլամենտական ընտրությունները Հորդանանում վերջին անգամ տեղի էին ունեցել 1997 թ.՝ Հուսեյն I–ի օրոք: Հաջորդ ընտրությունները,

ըստ սահմանված օրենքի, պետք է տեղի ունենային 4 տարի անց՝ 2001 թ.: Սակայն Աբդալլահ II–ը հետաձգեց ընտրությունները, որը որոշ մտավախություն առաջացրեց հորդանանյան հասարակական և քաղաքական ուժերի մոտ: Բարեբախտաբար, մռայլ կանխատեսումները չարդարացան, և 2003 թ. նոյեմբերին կայացան նոր պառլամենտական, ինչպես նաև տեղական ընտրությունները: Դրանք անցան հարթ ու խաղաղ, առանց որևէ բարդությունների:

2000–ականների սկզբներից Հորդանանում իրենց գործունեությունը ակտիվացրին իսլամական ֆունդամենտալիստները, ինչպես նաև զանազան ահաբեկչական կազմակերպություններ: Իսլամական ծայրահեղականներն ակտիվացել էին դեռևս 1990–ականներին և քիչ գլխացավանք չպատճառեցին Հուսեյն I–ին, որին միայն մեծ ջանքերի շնորհիվ հաջողվեց ինչ–որ չափով զսպել նրանց: Իսկ ինչ վերաբերում է ահաբեկչական գործունեությանը, ապա այն վտանգավոր չափեր ընդունեց 2000 թ. սկսված պաղեստինյան ինթիֆադայի երկրորդ փուլից հետո:

Արաբերեն «ինթիֆադա» բառը թարգմանաբար նշանակում է «դողացնել», «ցնցել»: Տվյալ դեպքում ավելի ճիշտ է «ցնցելը»: Իսկ քաղաքական իմաստով այդ բառով տվյալ պարագայում հասկացվում է «Պաղեստինյան ապստամբություն իսրայելական օկուպացիայի դեմ»: Արևմտյան ափում և Ղազայի շրջանում ծավալված ինթիֆադան մեծապես հուզեց նաև հորդանանաբնակ պաղեստինցիներին, որոնց թիվը հասնում էր, ինչպես նշվեց, մոտ մեկ միլիոն ութ հարյուր հազարի: Նրանք կցանկանային, որ Հորդանանը ներգրավվի այդ պայքարի մեջ, սակայն Աբդալլահ II–ը չգնաց այդ ուղիով: Նա հավատարիմ մնաց Իսրայելի հետ 1994 թ կնքված Հաշտության պայմանագրին, և հետևելով իր հոր քաղաքականությանը, նախընտրեց հանդես գալ միջնորդի դերում և հաշտեցնել կողմերին: Եվ բնավ էլ նրա մեղքը չէր, որ դա նրան չհաջողվեց: Աբդալլահի այդ դիրքորոշումն առաջացրեց պաղեստինյան որոշ շրջանակների դժգոհությունը, որի հիման վրա աշխուժություն ցուցաբերեցին ահաբեկիչները: Ամենամեծ ահաբեկչական գործողությունը կատարվեց Ամմանում 2005 թ. նոյեմբերի 9–ին: Այդ լավ կազմակերպված ահաբեկչության ընթացքում միաժամանակ պայթեցվեցին մայրաքաղաքի երեք բարձրակարգ հյուրանոցներ, և զոհվեց մոտ 60 մարդ, իսկ վիրավորների թիվը հասնում էր 115–ի. Դրա պատասխանատվությունն իր վրա վերցրեց Ուսամա Բեն Լադենի կողմից հիմնադրված

«ալ–Կաիդա» հայտնի ահաբեկչական կազմակերպության Իրաքում հաստատված մի խմբավորում, որի ղեկավարն է հորդանանցի Աբու Մուսա ալ–Զարքավին:

Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա պետք է նշել, որ հետհուսեյնյան շրջանում այդ բնագավառում նս ցնցումներ տեղի չունեցան:

Երբ Աբդալլահը գահ բարձրացավ, նրա խորհրդականները, որոնք նաև Հուսեյնի խորհրդականներն էին եղել, խորհուրդ տվեցին նոր գահակալին արտաքին քաղաքականության մեջ մեծ տեղ հատկացնել ԱՄՆ–ի և Իսրայելի հետ հարաբերություններին և ձգտել պահել դրանք այն բարձր մակարդակի վրա, որ հաստատվել էին Հուսեյն I–ի օրոք: Եվ Աբդալլահը հետևեց այդ խորհրդին: Հորդանանի հարաբերությունները ԱՄՆ–ի, ինչպես նաև Իսրայելի հետ այսօր շարունակում են մնալ բարձր մակարդակի վրա, կողմերը համագործակցում են տարբեր բնագավառներում, մշտապես տեղեկատվություն փոխանակում և այլն:

Աբդալլահ II–ը կարևոր տեղ է հատկացնում նաև հարաբերություններին արաբական երկրների հետ: Նա նորմալ կապեր էր պահպանում Իրաքի հետ՝ ընդհուպ մինչև ԱՄՆ–ի գլխավորած կոալիցիոն ուժերի ներխուժումն Իրաք և Սադամ Հուսեյնի տապալումը 2003 թ.: Բարելավվեցին հարաբերությունները նաև Սիրիայի հետ Հաֆիզ Ասադի մահից հետո, երբ նրան փոխարինեց Բաշար Ասադը:

Հորդանանի համար կարևոր է համագործակցությունը Արաբական պետությունների լիգայի շրջանակներում: Հատկանշական է, որ Արաբական պետությունների լիգայի անդամ պետությունների գագաթի հերթական համաժողովը 2001 թ. մարտին տեղի ունեցավ Հորդանանի մայրաքաղաք Ամմանում: Աբդալլահ II–ը նախաձեռնություն ցուցաբերեց և այստեղ փորձեց հաշտեցնել Իրաքին և Քուվեյթին, որոնց միջև հարաբերությունները խզվել էին Քուվեյթի դեմ Իրաքի 1990–1991 թթ. իրագործած ագրեսիայից հետո: Թեև դա հորդանանյան միապետին չհաջողվեց, բայց արաբական պետությունների ղեկավարները՝ թագավորներն ու պրեզիդենտները, բարձր գնահատեցին նրա փորձերը: Արաբական պետությունների լիգայի այդ գագաթնաժողովում Աբդալլահ II–ը մեկ տարի ժամանակով ընտրվեց Լիգայի անդամ պետությունների ղեկավարների խորհրդի նախագահ:

Հորդանանն այսօր Արաբական Արևելքի երկրների շարքում իր ուրույն տեղն է գրավում և ունի իր սեփական դերակատարումը. Նա

կարևոր գործոն է մերձավորարևելյան անվտանգության ապահովման և խաղաղության պահպանման համակարգում:

3. Միջպետական հարաբերությունները Հորդանանի Հաշիմյան Թագավորության և Հայաստանի Հանրապետության միջև (1991–2005 թթ.)

Հայ–հորդանանյան շփումները վաղեմի պատմություն ունեն: Հայերը Պաղեստինի և Հորդանանի տարածքներում հայտնվել են շատ հին ժամանակներից: Դրա խոսուն վկայություններից են Երուսաղեմում դեռևս վաղ միջնադարում կառուցված հայկական վանքերն ու մատուռները, այդ թվում և Ս. Հակոբյանց վանքը և VII դարում Երուսաղեմի հայոց պատրիարքության հիմնումը: Բացի վանական միաբանությունից, գոյություն է ունեցել նաև հայ աշխարհիկ համայնք, որը, կապված պատմական և քաղաքական իրադարձությունների հետ, մերթ ստվարացել է, մերթ էլ խիստ նվազել: Ներկա հայ համայնքը հիմնականում ձևավորվել է 1915 թ. ցեղասպանությունից հետո, երբ երիտթուրքերի կողմից բռնի տեղահան արված արևմտահայերի մի հատված հանգրվանեց Պաղեստինում, որի կազմից, ինչպես նշվել է, 1922 թ. անջատվեց և որպես ինքնուրույն պետական միավոր ստեղծվեց Անդրհորդանանը: Դրան համապատասխան երկփեղկվեց նաև նախկին Պաղեստինի հայ համայնքը: Մի մասը, որը գլխավորապես բնակվում էր Երուսաղեմում, ինչպես նաև Հայֆայում, Յաֆայում, մնաց Պաղեստինի կազմում, իսկ մյուս մասը՝ Հորդանանի կազմում՝ հիմնական բնակավայր ընտրելով Ամմանը, Իրբիդը, Զարկան և այլն: Սակայն նրանք կրկին միավորվեցին 1948–1949 թթ արաբա–իսրայելական պատերազմից հետո, երբ Հորդանանն իրեն կցեց նախկին Պաղեստինի մի մասը՝ Հորդանան գետի արևմտյան ափը, և Երուսաղեմի արևելյան մասը կամ Հին Քաղաքը: Երուսաղեմի արևելյան մասում է գտնվում Հայոց պատրիարքությունը, որը տնօրինում է մոտ 15 քառ. կմ տարածք իր վանքերով, եկեղեցիներով և վանքապատկան օժանդակ շինություններով: Դա հին քաղաքի չորս թաղամասերից մեկն է, որը կոչվում է Հայկական թաղամաս:

Արաբա–իսրայելական 1948 թ առաջին պատերազմը զգալի վնասներ հասցրեց նաև հայ համայնքին: Մոտ 1500 հայ գաղթականներ, որոնք հարկադրված լքել էին իրենց տներն ու բնակավայրերը, ապաստան գտան Հին Քաղաքում, այսինքն՝ Արևելյան Երուսաղեմում՝ վայելե-

լով Երուսաղեմի հայ միաբանության հոգածությունը: Այդ շրջանում Երուսաղեմի հայ միաբանությունը կարևոր դեր էր խաղում համայն Հորդանանի հայության սոցիալական և մշակութային կյանքում:

Պատրիարքարանն ունի հին ձեռագրերի պահոց, որտեղ գտնվում են 4 հազար խիստ արժեքավոր հին ձեռագրեր, գործում է Գալուստ Կյուլպենկյանի գրադարանը՝ 60 հազար կտոր գրքով: Նա ունի իր տպարանը և հրատարակում է «Սիոն» ամսագիրը: Բավականին լավ հիմքի վրա է դրված կրթության գործը: Պատրիարքությանը կից գործում են երկու դպրոց՝ ժառանգավորաց, որը կրոնական է և կոչված է կրոնական կադրեր պատրաստելու, և Ս. Թարգմանչաց, որն աշխարհիկ բնույթի է և բաղկացած է մանկապարտեզից և երկրորդ բաժնից: Իր ոչ մեծ դպրոցն ուներ նաև Երուսաղեմի հայ կաթոլիկ համայնքը:

Այդ շրջանում, երբ Արևմտյան ափը և Արևելյան Երուսաղեմը մտնում էին Հորդանանի կազմի մեջ, հայերի թիվը հասնում էր մոտ 3 հազարի:

Դրությունը կրկին փոխվեց 1967 թ. հունիսյան պատերազմից հետո, երբ Իսրայելը օկուպացրեց Արևմտյան ափը, Ղազայի շրջանը և Արևելյան Երուսաղեմը:

Դրանից հետո հայերի թվաքանակը Հորդանանում նվազեց և այսօր կազմում է մոտ 2–2,5 հազար, որի հիմնական մասը կենտրոնացված է Ամմանում: Այստեղ էլ գործում է Հեթումյան վարժարանը, որն ամենախոշորն է Հորդանանում գործող հայ դպրոցներից, ինչպես նաև հայ կաթոլիկների ու հայ բողոքականների դպրոցները: Հեթումյան վարժարանը փաստորեն հանդիսանում է հորդանանահայ համայնքի մշակութային կենտրոնը, որտեղ կազմակերպվում են զանազան ձեռնարկներ, համերգներ, դասախոսություններ և այլ բնույթի հանդիպումներ: Այստեղ ժամանակին հաճախ հանդես էին գալիս նաև մայր հայրենիքից՝ Խորհրդային Հայաստանից ժամանած արտիստական խմբերը, հասարակական գործիչները, գիտնականները: Զգալի է նաև մարզական միությունների, մանավանդ Հայ երիտասարդաց միության և հայրենակցական միությունների դերը համայնքի կյանքում:

Հորդանանի հայերը զբաղված են զանազան արհեստներով, առևտրով, կան նաև որոշ թվով ծառայողներ, որոնք պաշտոնավարում են պետական հիմնարկներում և մասնավոր ընկերություններում, բժիշկներ, դեղագործներ, ուսուցիչներ և այլն:

Այնուհանդերձ, այդ տարիներին, երբ դեռ գոյություն ուներ Խորհրդային Միությունը, ուղղակի միջպետական հարաբերություններ, կապեր կամ շփումներ Հորդանանի և Հայաստանի միջև դեռևս գոյություն չունեին և չէին էլ կարող ունենալ:

Հորդանանի և Հայաստանի միջև պետական մակարդակով հարաբերությունների հիմքը դրվեց 1991 թ. Հայաստանի անկախության հռչակումից հետո· 1991 թ. դեկտեմբերի 28–ին Հորդանանի Հաշիմյան թագավորությունը պաշտոնապես ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը և նրա անկախությունը՝ պատրաստակամություն հայտնելով դիվանագիտական հարաբերություններ հաստատել երկու երկրների միջև: Հորդանանի թագավոր Հուսեյն I–ը, տեղյակ պահելով այդ մասին Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը, միաժամանակ «հայ ժողովրդին ցանկանում էր երջանկություն ու բարգավաճում և երկու երկրների միջև բարեկամության ու համագործակցության հարաբերություններ զարգացնելու պատրաստակամություն հայտնում»:

Հայաստանի կառավարությունը երախտագիտությամբ ընդունեց Հորդանանի կառավարության այդ որոշումը: Հայաստանի պրեզիդենտ Լևոն Տեր–Պետրոսյանը 1992 թ. հունվարի 15–ին պատասխան շնորհակալական ուղերձ հղեց Հորդանանի թագավար Հուսեյն I–ին, որում ասված էր. «Խնդրում եմ, Ձերդ արքայական գերազանցություն, ընդունեք Հայաստանի Հանրապետության կառավարության և անձամբ իմ ամենասանկեղծ շնորհակալությունը Հայաստանի Հանրապետության ճանաչման կապակցությամբ:

Առիթից օգտվելով՝ ուզում եմ հույս հայտնել, որ Հայաստանի Հանրապետության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կնպաստի մեր երկրների միջև համագործակցության զարգացմանը՝ ի շահ համընդհանուր խաղաղության, հայ և հորդանանյան ժողովուրդների բարեկամական կապերի հետագա ամրապնդման»:

1992 թ. հունվարի 15–ին Ռուսաստանում Հորդանանի դեսպանության առաջին քարտուղար Ջահի ալ–Սամադին այցելեց Մոսկվայում Հայաստանի ներկայացուցչին և նրա հետ ունեցած զրույցի ժամանակ կրկին հավաստելով, որ Հորդանանը ճանաչել է Հայաստանի անկախությունը՝ հույս հայտնեց, որ դրան կհաջորդի առևտրական, տնտեսական և մշակութային կապերի հաստատումը երկու երկրների միջև: Նա միաժամանակ բարձր կարծիք հայտնեց հորդանանյան հայերի մասին՝ նշե-

լով, որ «նրանք որոշակի տեղ են գրավում Հորդանանի գործարար շրջաններում և անգամ թագավորի շրջապատում»:

Հորդանանյան դիվանագետը գոհունակությամբ նշեց, որ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են հորդանանցի ուսանողներ՝ ընդգծելով, որ, «ի տարբերություն մյուս նախկին հանրապետությունների, Հայաստանում նրանց նկատմամբ դրսևորում են բարյացակամ վերաբերմունք»:

Հայաստանի անկախության ճանաչման հետ միասին Հորդանանը, ինչպես նշվեց, պատրաստակամություն հայտնեց նաև դիվանագիտական հարաբերություններ հաստատել նրա հետ, որին անմիջապես հաջորդեց ՀՀ արտաքին գործերի նախարարության նամակը Մոսկվայում Հորդանանի դեսպանությանը: Հայաստանի արտաքին գործերի գերատեսչությունը, Հայաստանի կառավարության անունից շնորհակալություն հայտնելով Հորդանանին՝նրա այդ քայլի համար, նշում էր, որ «Հայաստանի Հանրապետության կառավարությունը համոզված է, որ Հայաստանի Հանրապետության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը համապատասխանում է մեր երկու կողմերի շահերին և կնպաստի միջազգային համագործակցության ու համընդհանուր խաղաղության ամրապնդմանը»:

Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին պաշտոնապես համաձայնագիր ստորագրվեց 1996 թ. հուլիսի 18–ին: Նրանում ասված էր, որ «Հորդանանի Հաշիմյան Թագավորությունը և Հայաստանի Հանրապետությունը, ցանկանալով զարգացնել բարեկամական հարաբերությունները և համագործակցությունը երկու երկրների միջև, համաձայնվեցին դիվանագիտական հարաբերություններ հաստատել երկու երկրների միջև՝ հիմնված խաղաղ գոյակցության, միմյանց ինքնիշխանությունը հարգելու և միմյանց ներքին գործերին չմիջամտելու, ինչպես նաև հավասարության և փոխշահավետության սկզբունքների վրա, դեսպանների մակարդակով»:

Սակայն մինչև օրս նրանք դեսպանություններ չեն բացել համապատասխանաբար Ամմանում և Երևանում: Սիրիայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչի վրա դրվեցին Հորդանանում Հայաստանը ներկայացնելու պարտականությունները: Հայաստանում համանման հանձնակատարություններ է իրականացնում Մոսկվայում Հորդանանի դեսպանությունը: Հետագայում՝ 2003 թ.

ապրիլի 11–ին, Հորդանանի քաղաքացի Իբրահիմ Սուլեյմանը Հայաստանի կողմից նշանակվեց Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս Հորդանանի մայրաքաղաք Ամմանում, և նրա հյուպատոսական գործունեության տարածք համարվեց Հորդանանի Հաշիմյան թագավորությունը: Նրա թեկնածությունն արժանացել էր Հորդանանի թագավոր Աբդալլահ II–ի հավանությանը: Սակայն նա այդ պաշտոնում մնաց մոտ մեկ տարի:

Հայաստանի և Հորդանանի ներկայացուցիչների և պատվիրակությունների միջև պարբերաբար տեղի են ունենում հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում են երկու կողմերին հետաքրքրություն ներկայացնող տարբեր հարցեր:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը 1992 թ. դեկտեմբերի 9–ին դիմեց Հորդանանին՝ նրա կառավարությանը տեղյակ պահելով, որ Հայաստանի կառավարությունը հանդես է եկել նախաձեռնությամբ՝ բարեկարգել Երևանում XVIII դարում կառուցված մզկիթը, որը վկայում է հայերի կողմից քրիստոնեական և մահմեդական սրբավայրերի նկատմամբ եղած հարգանքի մասին, և նրան կից ստեղծել իսլամի, արաբական մշակույթի և հայ–արաբական միջնադարյան կապերի ուսումնասիրության կենտրոն: Այնուհետև ՀՀ ԱԳ նախարարության նամակում ասվում էր. «Նկատի ունենալով Հորդանանի մեծ հեղինակությունը արաբա–իսլամական աշխարհում՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը դիմում է Ձեզ խնդրանքով հնարավորության չափով աջակցել այս կարևոր գործին, որը կնպաստի քրիստոնյա և մահմեդական ժողովուրդների մշակութային կապերի ամրապնդմանը, աշխարհով մեկ սփռված իսլամական ճարտարապետական կոթողների պահպանմանը և հայ–արաբական կապերի հետագա զարգացմանը»:

1993 թ. սեպտեմբերի 6–8–ը Ամմանում տեղի ունեցան բանակցություններ Հորդանանի քաղաքացիական օդագնացության վարչության և Հայաստանի կառավարությանն առընթեր քաղաքացիական օդագնացության գլխավոր վարչության պատվիրակությունների միջև: Կողմերը ստորագրեցին մտադրությունների վերաբերյալ արձանագրություն և նախաստորագրեցին միջպետական պայմանագիր երկու երկրների միջև օդագնացության ոլորտում համագործակցություն հաստատելու վերաբերյալ: Հայկական կողմը հորդանանյան կողմին առաջարկեց նաև լրջորեն քննարկել համատեղ ձեռնարկության ստեղծման հնարա-

վորությունը ԱՄՆ–Հայաստան հորդանանյան ինքնաթիռներով թռիչքներ կատարելու համար: Քննարկվեց նաև հայ մասնագետների և ՀՀ ավիաընկերությանը պատկանող ինքնաթիռները Հորդանանում օգտագործելու հնարավորությունը:

Հորդանանը կարևորում է առևտրատնտեսական հարաբերությունների և գիտական կապերի զարգացումը Հայաստանի հետ: Այդ մասին հայկական կողմին 1994 թ. հուլիսի 20–ին տեղյակ պահեց Դամասկոսում Հորդանանի դեսպանը: Նա, մեծ հետաքրքրություն ցուցաբերելով Հայաստանի արդյունաբերության և գիտության վերաբերյալ, ընդգծեց, որ «շատ ոլորտներում լայն հնարավորություններ կան մեր երկու երկրների միջև առևտրատնտեսական և գիտական կապերի զարգացման համար»: Ուշագրավ է, որ Հորդանանը մտադիր էր Հայաստանից մասնագետներ հրավիրել Հորդանանում նավթի որոնման աշխատանքներին մասնակցելու համար:

Թեև այդ համաձայնագրերը բոլորը չէ, որ կենսագործվում էին, այդուհանդերձ, դրանք վկայում են այն մասին, որ Հայաստանի և Հորդանանի միջև կան տարբեր ոլորտներում համագործակցության զգալի հնարավորություններ, որոնք բարենպաստ պայմանների դեպքում կարող են կյանքի կոչվել: Դա կապված է նաև համապատասխան իրավական դաշտի ստեղծման հետ, որը քննարկման առարկա դարձավ 1997 թ մարտի 15–16–ը ՀՀ արտաքին գործերի նախարարի և նրա գլխավորած պատվիրակության Ամման այցելության ընթացքում: Նա հանդիպումներ ունեցավ Հորդանաի վարչապետ Կաբարիտի և արտաքին գործերի նախարար Քամիլ Նասերի հետ: Կողմերը, քննարկելով երկու երկրների միջև հարաբերությունների զարգացման հեռանկարները, համաձայնության եկան «ստեղծել իրավական դաշտ համագործակցությունը խրախուսելու համար»:

Այցի ընթացքում երկու երկրների արտաքին գործերի նախարարները ստորագրեցին արձանագրություն Հայաստանի և Հորդանանի արտաքին գործերի նախարարությունների միջև կոնսուլտացիաներ անցկացնելու վերաբերյալ: Նրանք ստորագրեցին նաև համապատասխան արձանագրություն երկու երկրների՝ Հայաստանի և Հորդանանի կառավարությունների մտադրությունների մասին:

Հայաստանի և Հորդանանի ղեկավարներն առիթը բաց չեն թողնում ընդգծելու երկու երկրների և ժողովուրդների հարաբերությունների բարեկամական բնույթը: Այդ մոտեցումը շատ հստակ կերպով է ար-

տահայտված Հորդանանի թագավոր Աբդալլահ II–ին Հայաստանի Հանրապետության պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանի հղած զանազան ուղերձներում և ընդհակառակը· Ուշագրավ է նաև այդ տեսանկյունից ՀՀ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանի 2005 թ. տարեվերջի՝ դեկտեմբերի 14–ի շնորհավորական նամակը Հորդանանի իր գործընկերոջը՝ արտաքին գործերի նախարար Աբդուլ Իլլա Խատիբին, որում Հայաստանի արտաքին գործերի նախարարը վստահություն է հայտնում, որ նրա «պաշտոնավարումը ոչ միայն նորանոր հաջողություններ կապահովի թագավորության արտաքին հարաբերությունների ասպարեզում, այլև մեծապես կնպաստի հայ և հորդանանցի ժողովուրդների դարավոր բարեկամության առավել զարգացմանը և խորացմանը»:

Հայ–հորդանանյան բարեկամական հարաբերությունները նոր հնարավորություններ և հեռանկարներ են բացել նաև մայր հայրենիքի և հորդանանահայ համայնքի միջև կապերն ավելի ամրապնդելու և բազմաբովանդակ դարձնելու համար, որի արդյունքներն արդեն առկա են:

Գլուխ երկրորդ

ՄԱՎՐԻՏԱՆԻԱՅԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՎՐԻՏԱՆԻԱ

ԱԼ–ՋՈՒՄՀՈՒՐԻՅԱ ԱԼ–ԻՍԼԱՄԻՅԱ ԱԼ–ՄՈՒՐԻՏԱՆԻՅԱ

ՄՈՒՐԻՏԱՆԻՅԱ

Աշխարհագրական դիրքը — գտնվում է Հյուսիսարևմտյան Աֆրիկայում
Սահմանները — հյուսիս–արևելքում՝ Ալժիրը, հյուսիս–արևմուտքում՝ Արևմտյան Սահարան. արևելքում և հարավ–արևելքում՝ Մալին. հարավ–արևմուտքում՝ Սենեգալը, արևմուտքում՝ Ատլանտյան օվկիանոսը
Տարածքը — 1,030,700 քառ. կմ
Բնակչությունը — 3,086,859 (2005 թ)
Մայրաքաղաքը — Նուակշոտ 670 հազ. (2005 թ.)
Պետական կարգը — հանրապետություն (իսլամական)
Պետության ղեկավարը — պրեզիդենտ
Գործադիր իշխանությունը — պետության ղեկավարը՝ պրեզիդենտը՝ 2005 թ օգոստոսի 3–ից էլի Ուլդ Մուհամմադ Վալը: Պրեզիդենտն ընտրվում է ժողովրդի կողմից վեց տարի ժամկետով. Վերջին ընտրությունները կայացել են 2003 թ , իսկ հաջորդը տեղի կունենա 2009 թ.
Կառավարության ղեկավարը՝ վարչապետը, որին նշանակում է պրեզիդենտը
Կաբինետը՝ Նախարարների խորհուրդը
Օրենսդիր իշխանությունը — երկպալատանի պառլամենտը՝ կազմված Սենատից՝ Մաջլիս ալ–Շույուխ, և Ազգային ժողովից՝ Մաջլիս ալ–Վաքանի
Դատական իշխանությունը — Գերագույն դատարանը, Վճռաբեկ դատարանը և ստորին աստիճանի դատարանները: Դատական համակարգը՝ իսլամական օրենքի՝ շարիաթի և ֆրանսիական քաղաքացիական օրենքի համադրում
Վարչական բաժանումը — 12 շրջաններ և 1 մայրաքաղաքային շրջան
Անկախության օրը — 1960 թ. նոյեմբերի 28–ը (անկախացում Ֆրանսիայից)
Ազգային տոնը — Նոյեմբերի 28–ը՝ Անկախության օրը
Սահմանադրությունը — ընդունվել է 1991 թ. հուլիսի 12–ին
Պետական կրոնը — իսլամ

Պաշտոնական լեզուն — արաբերենը, գործածական են նաև տեղական լեզուները՝ պուլաար, հասսանիյա, սոնինկե, վոլոֆ, ինչպես նաև ֆրանսերենը

Էթնիկական կազմը — մավրեր՝ արաբա–բերբերներ, նեգրոիդներ՝ թուկուլեր, ֆուլբե, վոլոֆ, բամբարա և այլք

Քաղաքական կուսակցությունները — լեգալացվել են 1991 թ. սահմանադրությամբ՝ Գործողություն հանուն փոփոխության, Արդարության և դեմոկրատիայի ալյանս, Դեմոկրատական և սոցիալական հանրապետական կուսակցություն, Վերածնունդի և համաձայնության մավրիտանական կուսակցություն, Ազգային միավորում հանուն դեմոկրատիայի և զարգացման, Ժողովրդական ճակատ և այլն

Ազգային դրամը — Մավրիտանական ուգիյա

ՀՆԱ–ն՝ ըստ շնչի — 1800 ԱՄՆ դոլար (2004 թ.)

Բնական հարստությունները — երկաթահանք, գիպս, պղինձ, ֆոսֆատ, ալմազ, ոսկի, նավթ, ծուկ

Արդյունաբերությունը — լեռնահանքային, թեթև, սննդի, նավթազտիչ և արհեստագործական–տնայնագործական արտադրություն

Գյուղատնտեսությունը — արմավ, կորեկ, սորգո, բրինձ, ցորեն, գարի, եգիպտացորեն, անասնապահություն՝ խոշոր և մանր եղջերավոր անասուններ, ուղտեր, ձիեր

Մասնակցություն միջազգային կազմակերպություններին — ՄԱԿ, Արաբական պետությունների լիգա, Իսլամական կոնֆերանս կազմակերպություն, Ինտերպոլ, Միգրացիայի միջազգային կազմակերպություն, ՅՈՒՆԵՍԿՕ, ՅՈՒՆԿՏԱԴ, Աֆրիկյան միասնության և այլն


ՄԱՎՐԻՏԱՆԻԱ
ԱԼԺԻՐ
ՄԱԼԻ
ՍԵՆԵԳԱԼ
ՄԱՎՐԻՏԱՆԻԱ
Ս ա հ ա ր ա
Ատլանտյան օվկիսոս
Արեւմտյան Ամահրա
Աքշարի ավազուտներ
Վարաձի ավազուտներ
Ջուֆի ավազուտներ
Սաքեթյրի ավազուտներ
Նուաքշոթ
Աքար
Ատար
Սեն-Լուի
Ռոսսո
Ռոսսո
Մաուկթիտա
Ատար
Ալեգ
Ուադան
Կաեդի
Ալեգ
Ուադան
Կաեդի
Ալեգ
Ուադան
Կաեդի

I. ՄԱՎՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԷԹՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մավրիտանիան արաբական աշխարհի ծայրագավառ

Արաբական յուրաքանչյուր երկիր, ինչպես նշվել է, ունի իրեն բնորոշ յուրահատկություններ ու տարբերություններ, որոնք ներառնում են ինչպես առօրյա կյանքի, կենցաղի և սովորույթների ոլորտները, այնպես էլ աշխարհագրական միջավայրը, քաղաքական մշակույթը, էթնոքաղաքական իրադրությունը, լեզվամշակութային իրողությունները և այլ գործոններ: Դրանք, իհարկե, այնպիսի կամ այն աստիճանի տարբերություններ և առանձնահատկություններ չեն, որ հարցականի տակ դնեն տվյալ երկրի արաբական բնույթը կամ արաբական աշխարհին նրա պատկանելու իրողությունը, բայց մյուս կողմից ճիշտ չէր լինի նաև անուշադրության մատնել տարբերությունների առկայությունը նրանց միջև, որը կարող է միայն գործին վնասել:

Արաբական երկրների շարքում զարգացման իր յուրահատկություններով և էթնիկական առանձնահատկություններով հատկապես առանձնանում է Մավրիտանիան: Այդ առանձնահատկությունները վերաբերում են քաղաքական կյանքին և իրողություններին, «մավր» էթնիկական ընդհանրության առաջացմանը, կրոնական գործոնին և ընդհանրապես այդ երկրի՝ որպես հասարակության հասունության ու զարգացման աստիճանին:

Մավրիտանիան գտնվում է արաբական աշխարհի ծայրամասում՝ հանդիսանալով նրա պերիֆերիան: Նրանից արևմուտք այլևս արաբական տարածքներ չկան, այլ անմիջապես Ատլանտյան օվկիանոսն է: Սա, անշուշտ, աշխարհագրական փաստ է, որի նշանակությունը, սակայն, չի սահմանափակվում միայն դրանով:

Մավրիտանիայի՝ արաբական աշխարհի պերիֆերիա լինելու հանգամանքը վեր է ածվել նաև քաղաքական իրողության: Նա ոչ միայն աշխարհագրական, այլ նաև քաղաքական առումով է արաբական աշխարի պերիֆերիան՝ ծայրագավառը:

Ի տարբերություն Արաբական Արևելքի, որը XX դարի 20–ական թվականներից սկսած իրենից ներկայացնում էր մի իսկական եռացող կաթսա, որտեղ տեղի էին ունենում փոթորկոտ քաղաքական իրադարձություններ, որոնք մի ծայրով ուղղված էին օտարերկրյա գաղութային տիրապետությունների դեմ, իսկ մյուս ծայրով կապված էին այդ տարածաշրջանի արաբական մի շարք երկրների. առաջին հերթին Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի, Լիբանանի, Հորդանանի, Սաուդյան Արաբիայի ներքաղաքական զարգացումների հետ, Մավրիտանիան զերծ էր նման զարգացումներից և իրենից ներկայացնում էր համեմատաբար «խաղաղ անկյուն»:

Արաբական Արևելքի երկրներում տեղի ունեցող քաղաքական բուռն զարգացումների և ցնցումների ալիքները չէին հասնում Մավրիտանիա և համապատասխան արձագանք չէին գտնում այնտեղ: Եվ դրա պատճառը պետք է փնտրել ոչ միայն արաբական աշխարհի հայտնի քաղաքական կենտրոններից նրա աշխարհագրական հեռավորության մեջ, որի հետևանքով արաբական առաջատար երկրներում ընթացող քաղաքական կամ տնտեսական գործընթացները իրենց համարժեք ներգործությունը չէին ունենում Մավրիտանիայի վրա, այլ նաև մավրիտանական հասարակության անբավարար քաղաքական հասունության մեջ: Մավրիտանիան իր քաղաքական և սոցիալ–տնտեսական զարգացման մակարդակով ընդգծված կերպով հետ էր մնում արաբական մյուս երկրներից, այդ թվում ոչ միայն Արաբական Արևելքի երկրներից, ինչպես Եգիպտոսը, Լիբանանը, Սիրիան կամ Իրաքը, այլ նաև Արաբական Մաղրիբի այնպիսի երկրներից, ինչպես Թունիսը, Ալժիրը և Մարոկկոն:

Սակայն թող այն տպավորությունը չստացվի, թե Մավրիտանիան մեկուսացված էր արաբական աշխարհից ու նրանում ընթացող գործընթացներից և փակված էր սեփական տան չորս պատերի ներսում: Դա, իհարկե, այդպես չէր: Խոսքը արաբական աշխարհում ընթացող գործընթացների հետ համատեղ ընթանալու, արաբական երկրների հետ նրա շփումների ծավալների ու խորության, սոցիալ–տնտեսական շերտավորման և Մավրիտանիայի քաղաքական ու տնտեսական զարգացումների ու հասունության աստիճանի մասին է: Այդ տեսակետից Մավ-

րիտանիան շատ պարամետրերով տարբերվում էր արաբական մյուս երկրներից, մասնավորապես Արաբական Արևելքի պետություններից՝ նրանց զիջելով իր զարգացման մակարդակով:

2. Մավր–Մավրիտանիա

Մավրիտանիայի ուշադրության արժանի մյուս առանձնահատկությունը գտնվում է էթնո–ռասայական ոլորտում: Նրա բնակչությունը հստակորեն բաժանվում է երկու ռասաների՝ եվրոպական և նեգրական՝ եվրոպոիդների և նեգրոիդների:

Եվրոպոիդները մավրերն են, որոնց անունով էլ երկիրը կոչվում է Մավրիտանիա: Մավրերը՝ որպես նոր էթնիկական հանրություն, ձևավորվել են երկու տարբեր էթնիկական խմբերի՝ արաբների և բերբերների խառնվելու և ձուլման հիմքի վրա:

Բերբերները Մավրիտանիայի հնաբնակներից են, որոնք այնտեղ հաստատվել են դեռևս մեր թվարկությունից առաջ: Դրանք մարտնչող քոչվոր ցեղեր էին, որոնք երկրի հյուսիսային մասերից աստիճանաբար շարժվելով դեպի հարավ՝ դուրս մղեցին տեղաբնիկ նեգրերին և արդեն մ.թ VIII դարում գրավեցին ու հաստատվեցին Մավրիտանիայի հյուսիսային և կենտրոնական հատվածներում: Նեգրերը նահանջելով հաստատվեցին Մավրիտանիայի հարավային օազիսային շրջաններում՝ Սենեգալ գետի, որը Մավրիտանիայի միակ գետն է, հովտում և մեծ մասամբ դարձան բերբերների ստրուկները:

XIII դարի կեսերից սկսվում է արաբական ցեղերի ներթափանցումը Մավրիտանիա, որն իր շարունակությունն ունեցավ նաև հետագա դարերում, ընդհուպ մինչև XV դարը: Նրանց մեջ առանձնանում է բանի հասան ցեղը, որը Մավրիտանիա է ներխուժել հարևան Մարոկկոյից: Բանի հասան ցեղը, որը մտնում էր արաբական մաքիլ ցեղային համադաշնության մեջ, կարողացավ աստիճանաբար իրեն ենթարկել բերբերներին և դառնալ Մավրիտանիայի տիրապետող էթնիկական խումբը:

Բերբերների վերաբերմունքը տարբեր եղավ նոր ներխուժողների նկատմամբ, և այդ տեսակետից նրանց կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խմբի մեջ մտնում էին բերբերական այն ցեղերը, որոնք հենց սկզբից հաշտվեցին կատարված նոր իրողության հետ, անցան արաբների կողմը և օգնեցին նրանց իրենց տիրապետությունը հաստատելու Մավրիտանիայի վրա: Բերբերական այդ ցեղերը ստացան արտոնյալ

վիճակ և իրենց իրավունքներով ու գրաված դիրքով հավասարվեցին արաբ մարտիկներին: Այդ պատճառով էլ նրանք համարվեցին «արաբական ցեղեր»: Երկրորդ խումբը կազմեցին բերբերական այն ցեղերը, որոնք, ճիշտ է, չանցան արաբների կողմը և որպես մարտիկներ չմասնակցեցին արաբների նվաճողական գործողություններին, բայց իրենց զենքը վայր դրեցին և գերադասեցին զբաղվել խաղաղ գործունեությամբ: Նրանք ընդունեցին իսլամ և իրենց համար պատվավոր համարեցին իսլամի խաղաղ քարոզչությունը բնակչության մեջ կամ առևտրական գործունեությունը: Եվ վերջապես՝ երրորդ խումբը կազմում էին զենագա կոչվող բերբերական ցեղերը, որոնք չհաշտվեցին արաբների տիրապետության հաստատման հետ և զենքը ծեռքներին կատաղի դիմադրություն էին ցույց տալիս արաբներին: Նրանց ռազմական դիմակայությունը տևեց երկար ժամանակ՝ երբեմն ընդունելով երկարամյա պատերազմի բնույթ, ինչպես 1644–1674 թթ. արաբա–բերբերական պատերազմը: Այդ պատերազմը նշանավոր էր նրանով, որ բերբերները ոչ միայն պարտություն կրեցին, այլև դա եղավ բերբերների վերջին լուրջ դիմադրությունը արաբներին, որոնք կարողացան կոտրել բերբերների դիմադրությունը և իրենց տիրապետությունը հաստատել Մավրիտանիայում: Նրանց ենթակա դարձան նաև նեգրերը:

Դարերի ընթացքում տեղի ունեցավ արաբների և բերբերների մերձեցում, խառնակում և ծուլում, որի արդյունքում ձևավորվեց էթնիկական մի նոր ընդհանրություն՝ մավր ժողովուրդը:

Պատմագիտական գրականության մեջ այդ երևույթը դարձել է պատմաբանների և հատկապես ազգագրագետների հատուկ քննարկման առարկա: Այդ առումով ուշագրավ է Յու. Վ. Լուկոնինի տեսակետը: Նա գտնում է, որ «500–ամյա զարգացման ընթացքում Մավրիտանիայում անհետացան մաքուր արաբական և մաքուր բերբերական ցեղերը... Արաբ–հասանների[7] և բերբերների խառնվելու գործընթացը XIX դարի վերջին հանգեցրեց մի ժողովրդի կազմավորմանը, որը գիտության մեջ հայտնի է «մավրեր» անվան ներքո»:

Այդ ֆենոմենը մոտավորապես նույն կերպ է սահմանվում նաև զանազան տեղեկատվական կամ հանրագիտարանային գրականության մեջ: Վկայակոչենք դրանցից միայն մեկը, որտեղ ասված է. «Մավ-

7 Խոսքն այստեղ բանի հասան արաբական ցեղի մասին է, որն իրագործեց Մավրիտանիայի նվաճումը և արաբականացումը:

րեր՝ Մավրիտանիայի խաչավորված արաբական և բերբերական ցեղերի սերունդները»[8]:

Բացի «Մավր» (Maur) էթնոնիմից, տարածված և գործածական է նաև նրա «Մուր» (Moor) տարբերակը:

Մավրերի անունով, ինչպես նշվեց, երկիրը անվանվեց Մավրիտանիա: Այդ առումով նա տարբերվում է արաբական մի շարք երկրներից, մասնավորապես այն երկրներից, որոնց պաշտոնական անվանման մեջ առկա է «արաբական» հորջորջումը, ինչպես՝ Եգիպտոսի Արաբական Հանրապետություն, Սիրիայի Արաբական Հանրապետություն, Լիբիայի Արաբական Ժողովրդական Դեմոկրատական Սոցիալիստական Մեծ Ջամահիրիյա և այլն:

Դա հարցի մի կողմն է: Հարցի մյուս կողմն այն է, որ մավրերը, ինչպես նշվեց, ոչ մաքուր արաբներ են և ոչ էլ մաքուր բերբերներ: Չնայած այդ հանգամանքին, Մավրիտանիան համարվում է արաբական երկիր և կազմում է արաբական աշխարհի մի մասը: Ընդ որում՝ մավրերի քանակն աստիճանաբար նվազում է: 1960–1970-ական թվականներին նրանք կազմում էին Մավրիտանիայի բնակչության 75%-ը, իսկ 1980 թ նրանց թիվը նվազեց և իջավ 65%-ի: Այդ միտումը պահպանվում է մինչև օրս, և դեմոգրաֆների հաշվարկումներով հեռու չէ այն ժամանակը, երբ մավրերի ու նեգրերի, այսինքն՝ եվրոպոիդների և նեգրոիդների թվաքանակը կհավասարվի:

Այդ երևույթն ունի երկու գլխավոր պատճառ. բնական՝ կապված ծնելիության հետ, և միգրացիոն: Նեգրերի ծննդաբերությունն անհամեմատ ավելի բարձր է, քան բերբերներինը, և դրա հետևանքով յուրաքանչյուր տարի կրճատվում է տարբերությունը նրանց թվաքանակի միջև՝ հօգուտ նեգրերի: Ինչ վերաբերում է միգրացիային՝ էթնիկական տեղաշարժերին, ապա այստեղ կարևոր նշանակություն ունի այն պարագան, որ դարեր ի վեր Մավրիտանիան, ի տարբերություն Հյուսիսային Աֆրիկայի մյուս արաբական երկրների, շատ սերտ հարաբերություններ է պահպանում հարավային հարևան աֆրիկյան երկրների հետ, որոնց բնակչությունը հիմնականում սևամորթներ են: Ավանդության համաձայն՝ նրանք համեմատաբար ազատ ելևմուտք ունեն Մավրիտանիա, մանավանդ որ նրանցից շատերը ազգակցական և ցեղային կապե-

8 Տե՛ս Современная Мавритания. Справочник. Приложения, Москва, 1987, с. 139

րով կապված են միմյանց հետ, կատարվում են ամուսնություններ, գալիս են ժամանակավոր և մշտական աշխատանքի և այլն:

Եզրակացնելով կարելի է ասել, որ այդ առումով, այսինքն՝ էթնոռասայական կազմի տեսանկյունից, Մավրիտանիան կարող է վերածվել յուրատեսակ էթնոդուալիստական երկրի:

3. Կրոն՝ իսլամ, ոգիներ և թալիսման

Մավրիտանիան, ինչպես որ էթնիկական առումով երկու՝ եվրոպեոիդ և նեգրոիդ ռասաների երկիր է, կրոնական առումով նույնպես ունի իր առանձնահատկությունները, որոնք բխում են նրա բնակչության՝ երկու տարբեր ռասաների պատկանելու իրողությունից և այդ ռասաներին պատկանող բնակչության ավանդական հավատալիքներից ու զարգացման տարբեր մակարդակներից:

Մավրիտանիայում տիրապետող կրոնն իսլամն է, որը դավանում է բնակչության ճնշող մեծամասնությունը: Սկզբում դրանք արաբներն էին, որոնք իրենց հետ բերեցին և տարածեցին այդ կրոնը Մավրիտանիայում, և բերբերները, իսկ հետագայում՝ XIX դարից, երբ ավարտվեց արաբների և բերբերների միաձուլումը և մավրեր էթնիկական ընդհանրության առաջացումը, իսլամը դարձավ նրանց բացարձակ մեծամասնության կրոնը:

Իսլամ ընդունած և արաբացած բերբերական առանձին ցեղապետներն այնքան հեռուն գնացին նոր կրոնը ընդունելու իրենց մղումների մեջ, որ անգամ կրում էին «շերիֆներ» տիտղոսը, որը կրելու իրավունքը վերապահված էր միայն նրանց, ովքեր ուղղակի գծով սերում էին Մուհամմադ մարգարեի տոհմից: Բերբերական այդ ցեղապետների հավակնությունները, մեղմ ասած, անհիմն էին:

Իսլամը որպես իրենց կրոն է ընդունում նաև Մավրիտանիայում բնակվող նեգրերի մեծամասնությունը, որոնց իսլամացման գործընթացն առանձնապես մեծ ծավալներ ընդունեց մավրերի կազմավորումից հետո:

Մավրիտանիայում տիրապետող է իսլամի սուննի ուղղությունը, որը ներկայացված է նրա մալիքիական մազհաբով: Իսկ այդ մազհաբն աչքի է ընկնում սուննիզմի և նրա դոգմաների հետևողական պաշտպանությամբ:

Իսլամը Մավրիտանիայում լայնորեն ներկայացված է նաև սուֆիզմով՝ իր միստիկական գաղափարաբանությամբ, ասկետական կենցաղով և պահվածքով: Մավրիտանիայում սուֆիզմը ներկայացված է եղբայրություններով կամ օրդեններով, որոնց մեջ ամենագլխավորը Կադիրիյա եղբայրությունն է իր երեք ճյուղերով՝ սիդիյա, ֆադիլիյա և գուդֆիյա: Դրանք մեծ հեղինակություն են վայելում գյուղական բնակչության և բեդվին քոչվորների շրջանում: Իսկ քաղաքային բնակչության շրջանում ավելի մեծ ազդեցություն ունի Շադիլիյա եղբայրությունը: Այդ բոլոր եղբայրությունների գլուխ կանգնած են շեյխերը, որոնք իրենց խորհուրդներով և հորդորներով բավականին մեծ ազդեցություն են վայելում բնակչության շրջանում ու օգտվում որոշակի իշխանությունից:

Իսլամի սպասարկուները շատ մեծ թիվ են կազմում՝ մի քանի տասնյակ հազար մարդ, որոնք կարգավորում են ոչ միայն մուսուլմանների հոգևոր և կրոնական կյանքը, այլև նրանց դատական, կրթական, անգամ վարչական գործառույթները: Գյուղական վայրերում և քոչվորների շրջանում շատ մեծ է մարաբուտների՝ ուղղափառ իսլամի սպասարկուների դերը, որոնք աչքի են ընկնում իրենց ասկետիզմով և նվիրվածությամբ սուննայիին:

Տիրապետող իսլամի կողքին, որը դրսից ներմուծված կրոն էր, իրենց գոյությունն են պահպանում նաև տեղական զանազան հեթանոսական հավատքներ և պաշտամունքներ, որոնք համարվում են ավանդական, քանի որ դարերի խորքից են գալիս և հանդիսանում են աբորիգենների յուրահատուկ կրոնը: Դրա գլխավոր կրողներն են նեգրոիդական ռասայի տարբեր խմբավորումները, որոնք մավրերի կողմից դուրս են մղվել իրենց նախկին բնակավայրերից և հաստատվել հիմնականում Մավրիտանիայի հարավային շրջաններում, որոնք սահմանակցում են Սենեգալին և Մալիին: Նրանք մշտական շփման մեջ են գտնվում սահմանի այն կողմում գտնվող, այսինքն՝ Սենեգալում և Մալիում բնակվող իրենց ռասայական ազգակիցների հետ, ինչը հավանաբար հանդիսանում է Մավրիտանիայի նեգրական բնակչության կողմից իր հավատալիքներին հավատարիմ մնալու ազդակներից մեկը:

Տեղական ավանդական պաշտամունքներին հետևողների թիվը մեծ չէ: Դրանք հիմնականում սոնինկե, վոլոֆ և բամբարա նեգրական խմբավորումներն են: Բայց տվյալ դեպքում թվաքանակի հարցը երկրորդական է: Ավելի կարևոր է այն հանգամանքը, որ պահպանվել են ավանդական կրոնական պատկերացումները, և կան դրանց կենդանի

հետևորդները. որի շնորհիվ Մավրիտանիայի կրոնապաշտամունքային երփներանգն ավելի գունեղ է:

Եթե դասակարգման ենթարկենք Մավրիտանիայում տարածված ավանդական պաշտամունքային պատկերացումները, ապա կարող ենք ասել, որ դրանք բաժանվում են մի քանի խմբերի:

Ամենատարածվածը տեղական աստվածություններն են, որոնց պանթեոնը բավականին հարուստ է: Այդ աստվածությունները կապված են հիմնականում բնության և նրա տարբեր ուժերի հետ: Ավանդական հավատալիքների մեջ շատ կարևոր տեղ է գրավում նախնիների, ինչպես նաև հողի, ջրի, անտառի և բնության այլ առարկաների պաշտամունքը: Նեգրոիդական առանձին խմբեր պաշտում են երկնային պիտոնը, որը նրանց համար մարմնավորում է ծիածանը: Լայն տարածում ունի ոգիների պաշտամունքը՝ ծառերի, ճանապարհների, կենդանիների՝ կրիայի, օձի, կոկորդիլոսի: Նրանց «սիրաշահելու» համար կատարվում են զոհաբերություններ: Տարածված է նաև կախարդների հավատամքը, որոնք, նեգրերի պատկերացումների համաձայն, կարող են մարդկանց պատժել իրենց անեծքներով կամ կերպարանափոխվելով որևէ կենդանու՝ մեծ չարիք պատճառել նրանց: Այդ հանգամանքը պարտադրում է նրանց զգուշավորություն ցուցաբերել կախարդների նկատմամբ, չփորձել նրանց զայրացնել կամ նրանց դժգոհությունը հարուցել:

Սակայն այստեղ հետաքրքիրն այն է, որ բնության ու շրջապատի վերաբերյալ անիմիստական պատկերացումները պահպանվել են նաև Մավրիտանիայի այն ժողովուրդների մեջ, որոնք վաղուց ընդունել են իսլամը և իրենց համարում են մուսուլման, այսինքն՝ հավատում են միաստվածությանը («Չկա աստված, բացի Ալլահից»), ընդունում մուսուլմանների սուրբ գիրքը՝ Կորանը, և նրա դոգմաները: Նկատի ունենք ոչ միայն նեգրերի այն հատվածին, որ իսլամ է ընդունել, այլև մավրերի առանձին խմբերի:

Մավրերի մոտ հատկապես ուժեղ է թալիսմանի պաշտամունքը: Նրանք հավատացած են, որ թալիսմանի շնորհիվ իրենք կարող են իրենց ապահովագրել զանազան վտանգներից, հիվանդություններից, մասնավորապես օձի խայթոցից, չար աչքից և այլն: Հավատքն առ թալիսման այնքան ուժեղ է, որ նրանցից շատերը սովորաբար տարբեր իրերից և առարկաներից պատրաստված մի քանի թալիսման են կրում: Իսկ ոմանց համար թալիսմանի դերակատարում ունեն թղթի վրա գր-

ված համապատասխան աղոթքները: Դրանք հավանաբար այն մավրիտանացիներն են, որոնք գրաճանաչություն ունեն:

Վերջապես նշենք, որ բոլոր մավրերի համար սուրբ ծառ է հանդիսանում արմավենին, և նրանց սուրբ պարտականությունն է պահպանել և խնամել արմավենին: Խստիվ արգելվում այն կտրելը: Արմավենու ծառը կտրելը շատ խոշոր հանցանք է համարվում և հավասարեցվում է 70 մարգարեների սպանությանը:

Տեղական բնակչության մեջ աննշան չափով տարածված է նաև քրիստոնեությունը: Սակայն Մավրիտանիայում քրիստոնեության հիմնական հետևորդները այնտեղ զանազան պատճառներով հաստատված եվրոպացիներն են:

Այսպիսին են ընդհանուր գծերով Մավրիտանիային բնորոշ քաղաքական, ռասայական, էթնիկական և կրոնապաշտամունքային առանձնահատկությունները, որոնց իմացությունն անհրաժեշտ է Մավրիտանիայի պատմության, այդ թվում և նորագույն պատմության առանցքային հարցերի վերաբերյալ ճշգրիտ պատկերացում կազմելու համար:

II. ՄԱՎՐԻՏԱՆԻԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՑԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1918–1960 թթ.)

1. Ֆրանսիական գաղութային տիրապետության հաստատումը

Մավրիտանիայի գաղութացման գործընթացը որոշ իմաստով հար և նման է արաբական, ինչպես նաև աֆրիկյան մյուս երկրների գաղութացմանը: Ինչպես հայտնի է, այդ գործում առաջնության առումով պիոներները հանդիսացել են պորտուգալացիները, որոնց անվեհեր նավաստիները համարձակորեն ակոսել են համաշխարհային օվկիանոսի ջրերը և հաստատել Պորտուգալիայի տիրապետությունը աշխարհի զանազան երկրներում:

Նույն բանը կրկնվեց նաև Մավրիտանիայում, որտեղ 1445 թ հայտնվեցին պորտուգալացիները: Նրանք հանդիսացան առաջին եվրոպացիները, որոնք շփում հաստատեցին տեղացիների հետ: Պորտուգալացիներն Արգին կղզում, որը գտնվում է Մավրիտանիայի հյուսիսային մասում, հաստատեցին իրենց առևտրական հենակետը և սկսեցին

Մավրիտանիայից արտահանել գումիարաբիկումը՝ ակացիայի խեժը, որից ստանում են ռետին և ռետինային իրեր: Այդ կղզին նրանք օգտագործում էին նաև որպես ծկնորսական հենակետ:

Բայց պորտուգալական մենաշնորհ ազդեցությունը երկար չտևեց և չէր էլ կարող տևել: Շուտով՝ XVII դարի սկզբներին, Մավրիտանիայում մեկը մյուսի հետևից հայտնվեցին հոլանդացիները, անգլիացիները և ֆրանսիացիները. որոնք ուժեղ մրցակցության մեջ մտան ոչ միայն պորտուգալացիների հետ, այլև իրար միջև: Եվրոպացի առևտրականները հիմնականում մրցակցում էին գումիարաբիկումի համար Սենեգալ գետի հովտային շրջաններում: Ֆրանսիացիները, ընդարձակելով իրենց առևտրի ոլորտը, նրա մեջ ներգրավեցին նաև ստրկավաճառությունը, որը նույնպես մեծ շահույթ էր բերում: Դրան մասնակից դարձան նաև մավրիտանցիները, որոնք իրենց սեփական ստրուկներին վաճառում էին ֆրանսիական առևտրականներին հրացանների, հագուստի, շաքարի և այլ ապրանքների դիմաց:

Պորտուգալացիների դիրքերն աստիճանաբար թուլացան և շուտով նրանք կորցրեցին իրենց ազդեցությունը և հեռացան երկրից: Հերթը հասավ հոլանդացիներին, որոնք նույնպես կորցրեցին իրենց դիրքերը և 1727 թ. վերջնականապես դուրս մղվեցին Մավրիտանիայից: Ասպարեզում մնացին ֆրանսիացիները, որոնք օրեցօր ամրապնդում էին իրենց ազդեցությունը Մավրիտանիայում, և անգլիացիները:

Այդ ընթացքում կարևոր փոփոխություններ տեղի ունեցան նաև բուն Մավրիտանիայում: XVIII դարի սկզբներին նա բաժանվեց մի քանի էմիրությունների, որոնց մեջ ամենաշահավորները Թրարզայի, Բրակնայի, Ադրարի և Տագանտի էմիրություններն էին: Նրանց միջև որևէ կապ չկար, և նրանք գոյություն ունեին մեկուսի՝ մեկը մյուսից անջատ: Դրանից օգտվեցին ֆրանսիացիները, որոնք ամեն կերպ նպաստում էին լարվածության առաջացմանը նրանց միջև: Եվ XIX դարի սկզբներին, ոչ առանց ֆրանսիացիների աջակցության, քաղաքացիական պատերազմ սկսվեց նրանց միջև: Պատերազմը թուլացրեց էմիրություններին և նվազեցրեց նրանց դիմադրողական ներուժը՝ ընդդեմ օտարերկրացիների: Այդ հանգամանքից գերազանց կերպով օգտվեցին ֆրանսիացիները: Ֆրանսիան 1814 թ. Փարիզում եվրոպական երկրների հետ կնքեց պայմանագիր, որով Մավրիտանիայի նկատմամբ տարածքային իրավունքներ էր ձեռք բերում:

Հաջորդ կարևոր քայլը Մավրիտանիան ֆրանսիական գաղութի վերածելու ճանապարհին հանդիսացավ 1857 թ. ֆրանս–անգլիական պայմանագիրը, որի արդյունքում անգլիացիները նույնպես հեռացան Մավրիտանիայից: Այսպիսով՝ մեկը մյուսի հետևից Մավրիտանիայից դուրս մղվեցին պորտուգալացիները, հոլանդացիները և անգլիացիները, և Մավրիտանիան ամբողջությամբ անցավ Ֆրանսիայի ձեռքը:

Մավրիտանիայում ֆրանսիական գաղութային տիրապետության հաջորդ հանգրվանը հանդիսացավ 1903 թ. ֆրանսիական պրոտեկտորատի հաստատումը Թրարզա և Բրակնա էմիրությունների և հարակից մի շարք այլ տարածքների վրա: Դրան հաջորդեց կարևոր նշանակություն ունեցող ևս մեկ քայլ, որը միանգամայն տրամաբանական էր: 1904 թ. ֆրանսիական կառավարությունը Մավրիտանիան համարեց որպես Սենեգալից անջատ և առանձին միավոր՝ պրոտեկտորատի կարգավիճակով: Եվ այդ կարգավիճակով նա դրվեց ֆրանսիական գլխավոր դելեգատի իշխանության ներքո, որի նստավայրը Սենեգալի գետաբերանում գտնվող Սեն Լուի քաղաքն էր:

XX դարի սկզբներին Ֆրանսիան Մավրիտանիայում իր դիրքերն ամրապնդելու և արտաքին միջամտությունից ապահովագրելու տեսանկյունից հասավ նոր հաջողության: Նա Իսպանիայի հետ 1912 թ. կնքեց պայմանագիր ազդեցության գոտիների բաժանման վերաբերյալ՝ ըստ որի Իսպանիան Մավրիտանիան ճանաչում էր որպես ֆրանսիական ազդեցության գոտի և հրաժարվում քաղաքական ու տնտեսական հավակնություններից նրա նկատմամբ: Դրանով իսկ Մավրիտանիան ամբողջապես անցավ Ֆրանսիայի տիրապետության տակ, որն իր ազդեցությունը չէր կիսում որևէ պետության հետ:

Մավրիտանիայում դեռևս XVII դարի վերջերից, երբ արաբները վերջնականապես հաղթող դուրս եկան բերբերների դեմ մղված պայքարում, հաստատվել էր յուրահատուկ սոցիալական եռաստիճան սանդղակ: Սանդղակի գագաթում գտնվում էին արաբները, իսկ մավր էքզոհաորության ծնավորումից հետո՝ նրա բարձրագույն խավը: Միջին մասում գտնվում էին բերբերները, որոնք բաժանված էին երկու խմբի: Առաջին խումբը կազմում էին զավիյաները՝ կրոնաբանները և քարոզիչները, իսկ երկրորդ խումբը՝ նստակյաց հողագործները և անասնապահները. Սանդղակի երրորդ և ամենաստորին աստիճանը զբաղեցնում էին սևամորթները, որոնք նույնպես բաժանվում էին երկու խմբի՝ նախկին ստրուկների, որոնց անվանում էին հարատանի, և աբիդների՝ ստրուկների:

XX դարի 10–ական թվականները հանդիսացան Մավրիտանիայում առկա դիմադրողական կենտրոնների վերացման, երկրի «խաղաղեցման» և նրա բոլոր մասերում ֆրանսիական իշխանության տարածման և ամրապնդման ժամանակաշրջան:

Հերթական՝ սկզբունքային բնույթի փոփոխությունը Մավրիտանիայի կարգավիճակում տեղի ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո: 1920 թ. դեկտեմբերի 4–ին Ֆրանսիայի գաղութային նախարարության որոշումով Մավրիտանիան վերածվեց գաղութի և կոչվեց «Մավրիտանական գաղութ»՝ «Colonie de la Mauritanie»: Նրա մայրաքաղաքը հայտարարվեց Սեն Լուի դյու Սենեգալը:

Այսպիսով՝ Ֆրանսիան 250 տարիների ընթացքում կարողացավ ներթափանցել Մավրիտանիա, հերթականությամբ դուրս մղել իր բոլոր եվրոպական մրցակիցներին, հաղթահարել տեղացիների դիմադրությունը, իր տիրապետությունը հաստատել և XX դարի 20–ական թվականներին Մավրիտանիան վերածել իր գաղութի:

2. Մավրիտանիան ֆրանսիական գաղութային համակարգում

Պրոտեկտորատի կարգավիճակ ունեցող Մավրիտանիայի վերածումը գաղութի նախադեպը չունեցող երևույթ էր համաշխարհային գաղութային համակարգի պատմության մեջ: Պրոտեկտորատը ավելի բարձր կարգավիճակ է, որի վերացմանը հաջորդող քայլը, ինչպես վկայում է նաև արաբական երկրների պատմական փորձը, սովորաբար լինում է քաղաքական և պետական անկախությունը: Սինչդեռ Մավրիտանիայի պարագայում տեղի ունեցավ հակառակը: Նա ավելի բարձր մակարդակից՝ պրոտեկտորատից, իջեցվեց ենթակայության առումով ավելի ստորին կարգավիճակի՝ գաղութի, դրանից բխող իր բոլոր հետևանքներով: Այդ հետադարձ ընթացքը հավանաբար կարելի է բացատրել երկու հանգամանքով:

Առաջին՝ դա իրականացվեց մի այնպիսի պատմական դարաշրջանում, երբ իմպերիալիզմի գաղութային համակարգը համաշխարհային մասշտաբով վերելք էր ապրում և ամենուր ամրապնդում էր իր դիրքերը: Անգլիան և Ֆրանսիան՝ աշխարհի այդ երկու ամենամեծ գաղութատեր պետությունները, Առաջին համաշխարհային պատերազմից դուրս եկան հաղթանակած և ընդարձակեցին իրենց գաղութային տիրույթները Ասիայում և Աֆրիկայում, այդ թվում՝ այդ երկու մայրցամաք-

ների արաբական հատվածներում: Նրանք, իրենց ձեռքին գործիք դարձնելով Ազգերի լիգան, գաղութային ժողովուրդների ճակատագիրը տնօրինում էին այնպես, ինչպես իրենք էին ցանկանում: Այդպիսի իրադրության մեջ Ֆրանսիայի համար որևէ դժվարություն չէր ներկայացնում պրոտեկտորատի կարգավիճակ ունեցող Մավրիտանիան վերածել դասական գաղութային երկրի:

Երկրորդ՝ Մավրիտանիայում հակաիմպերիալիստական և հակագաղութային կազմակերպված և ուժեղ պայքարի բացակայությունը: Մավրիտանիան սոցիալական և տնտեսական առումով թույլ զարգացած երկիր էր, որտեղ, ինչպես արդեն նշել ենք, բնակչության քաղաքական հասունության մակարդակը դեռևս ցածր էր: Այստեղ գոյություն չունեին քաղաքական կուսակցություններ ու կազմակերպություններ, չկար ձևավորված և կազմակերպված հակագաղութային շարժում՝ ընդունակ դիմակայելու և հուժկու հակահարված տալու ֆրանսիական գաղութային իշխանություններին, ինչպես դա տեղի էր ունենում այդ նույն 1920–ական թվականներին Սիրիայում և Լիբանանում, որտեղ ծավալվել էր հակաիմպերիալիստական պայքար ընդդեմ ֆրանսիական, և Իրաքում կամ Եգիպտոսում՝ ընդդեմ բրիտանական գաղութարարների:

Այդ «բարենպաստ» պայմաններում Ֆրանսիան կարողացավ առանց որևէ բարդությունների Մավրիտանիան իջեցնել գաղութի մակարդակի:

Դրանից հետո ֆրանսիական իշխանությունները սկսեցին Մավրիտանիան գաղութային համակարգի մեջ ներգրավելու գործընթացը, այդ թվում՝ նրա կարգավիճակի իրավական հաստատումը:

Արդեն նշվեց, որ Ֆրանսիայի գաղութային նախարարության 1920 թ. դեկտեմբերի 4–ի դեկրետով լույս աշխարհ եկավ Մավրիտանիա գաղութը: Այդ նույն դեկրետով Մավրիտանիան մտցվեց Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկայի (ՖԱՖ) մեջ՝ վեց այլ ֆրանսիական գաղութների՝ Սենեգալի, Ֆրանսիական Սուդանի, Գվինեայի, Փղոսկրի Ափի, Դահոմեայի և Նիգերի հետ միասին: ՖԱՖ–ը ֆեդերատիվ՝ դաշնային կառույց էր:

ՖԱՖ–ը նման էր մի բուրգի, որի վերևում գտնվում էր գեներալ նահանգապետը (կառավարիչը), որի նստավայրը Դակարն էր Սենեգալում: Նրան նշանակում էր Ֆրանսիայի պրեզիդենտը, և նա օժտված էր ամենալայն լիազորություններով: Նա էր գլխավորում խիստ կենտրոնացված վարչական ապարատը: Նրան կից գործում էր Մեծ խորհուրդը, որը գեներալ նահանգապետի խորհրդատուն էր և չուներ գործադիր լիազո-

րություններ: Նրա բոլոր անդամներին նշանակում էր գեներալ նահանգապետը: 1925 թ. սկսած՝ նրա կազմում որոշակի փոփոխություններ տեղի ունեցան. նա ներկայացնում էր դաշնության գլխավոր ուժերին և նրանց շահերը: Գեներալ նահանգապետն ուներ իր տեղակալները ՖԱՖ–ի անդամ բոլոր յոթ գաղութներում: Նրանք գրավում էին բուրգի հաջորդ աստիճանը, և նրանց կից նույնպես գործում էին նման վարչական խորհուրդներ, որոնք ունեին խորհրդատվական կարգավիճակ և զուրկ էին գործադիր իշխանության ֆունկցիաներից: Կառույցի հաջորդ աստիճաններում գտնվում էին այսպես կոչված տարածաշրջանային ասամբլեաների ղեկավարները՝ «կոմանդանտները»: Այդ ասամբլեաները գաղութային վարչության օղակներից մեկն էին: Դրանից հետո գալիս էին շրջանների, կանտոնների և գյուղերի գլխավորները կամ ղեկավարները:

Ահա այսպիսի տեսք ուներ գաղութային կառավարման բուրգը, որը խիստ կենտրոնացված էր Այդ համակարգում առանցքային դերակատարում ուներ կոմանդանտը, որը սովորաբար լինում էր եվրոպացի, բայց նրա ապարատում կամ վարչությունում նրա ենթակաները հավաքագրվում էին տեղացի աֆրիկացիներից: Նրա պարտականությունների մեջ մտնում էր հարկերի հավաքը, տվյալ գոտում խաղաղության և անվտանգության ապահովումը, վարչական, այդ թվում և վերևից՝ Դակարից եկող որոշումների կատարումը և այլն:

Մավրիտանիայում հաստատված վարչական կառավարման համակարգը, որը նման էր դաշնության անդամ մյուս գաղութներում հաստատված համակարգին, ուներ նաև որոշ տարբերություններ:

Մավրիտանիայում, ի տարբերություն մյուս գաղութների, տեղական ասամբլեաների մեծ մասն ուներ զինվորական կոմանդանտներ, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ Մավրիտանիայի մի շարք շրջաններում դեռևս խաղաղ չէր. և դրսևորվում էին ֆրանսիական գաղութային իշխանություններին անհնազանդության միտումներ, որոնց գլուխ կանգնած էին տեղական առաջնորդները: Այդ պատճառով էլ այդ շրջաններում ֆրանսիական գաղութային իշխանությունները ասամբլեաների կոմանդանտ էին նշանակում զինվորականներին:

Մյուս կարևոր տարաբերությունը կայանում էր նրանում, որ Մավրիտանիայում վարչական կառավարման համակարգում նշանակալի էր տեղական առաջնորդների դերը: Նման երևույթ չկար ՖԱՖ–ի անդամ մյուս գաղութներում: Բայց հարցը միայն դա չէր, այլ այն, որ տեղական

առաջնորդների որոշ մասնակցությունը վարչական կառավարմանը հակասում էր գաղութների ուղղակի կառավարման Ֆրանսիայի սկզբունքային քաղաքականությանը: Ֆրանսիան այդ քայլին դիմում էր մտածված կերպով և հարկադրաբար՝ նպատակ ունենալով տեղական առաջնորդներին սիրաշահելով իր կողմը գրավել և նրանց միջոցով հասնել խաղաղության հաստատմանը և Մավրիտանիայի հնազանդեցմանը: Այսպես, օրինակ՝ այն բանից հետո, երբ Թրարզայի շեյխ Սիդիյան զգալի աջակցություն ցույց տվեց ֆրանսիական իշխանություններին և պաշտպանեց նրանց քաղաքականությունը, Մավրիտանիայում ֆրանսիական իշխանությունները Բութիմիլիտում գտնվող Իսլամական ուսումնասիրությունների դպրոցը դրեցին նրա կառավարման ներքո: Իսլամական դատավորները՝ կադիները, մտցվեցին պետական հաստիքների մեջ՝ համապատասխան վճարումներով պետական գանձարանից: Ուշագրավ է նաև մի հանգամանք. բոլոր այն դեպքերում, երբ տեղական առաջնորդները ստանում էին որևէ նշանակում, անհրաժեշտ էր մավրիտանացիների ավանդական ծերակույտի՝ ջամաայի հավանությունը:

Կառավարական այս համակարգը ավելի շատ կիրառվում էր Մավրիտանիայի հյուսիսային շրջաններում, իսկ հարավային շրջաններում, որտեղ հիմնական բնակչությունը սևամորթներն էին, իրականացվում էր ուղղակի կառավարում՝ առանց որևէ զիջումների տեղական առաջնորդներին:

Չնայած ֆրանսիական գաղութային իշխանությունների ծեռնարկած այդ քայլերին՝ Մավրիտանիայի որոշ շրջաններում անհնազանդությունը շարունակվում էր, որը հաճախ վերածվում էր զինված բախումների տեղացիների և ֆրանսիական գաղութային ուժերի միջև: Հատկապես անհանգիստ էր Ադրարի էմիրությունում, որի էմիր Այդան 1920–ական թվականներին ղեկավարում էր իր ցեղակիցների ապստամբությունը և խրախուսում ապստամբական շարժումները Մավրիտանիայի մյուս շրջաններում, հատկապես Հյուսիսային Մավրիտանիայում: Այստեղ ուժեղ էին շեյխ Մա ալ–Այնինի և նրա հետնորդների դիրքերը: Մա ալ–Այնինը XX դարի սկզբներին մեկ անգամ չէ, որ ապստամբել էր ֆրանսիական իշխանությունների դեմ: 1920–ական թվականներին ֆրանսիական գաղութային իշխանությունների դեմ ապստամբական շարժումը ղեկավարում էին նրա որդիները: 1924 թ. մարտին Ադրարի էմիր ալ–Այդայի և Մա ալ–Այնիի որդիների միացյալ ուժերը հարձակվեցին Պորտ Էտյենի վրա, 1925 թ. ապրիլին պարտության մատնեցին ֆրանսիական մի զորաջո-

կատ Թրեյֆինի մոտ և սպառնացին Սեն Լուիին, որը համարվում էր Մավրիտանիայի վարչական կենտրոնը: 1930–ական թվականներին ապստամբական շարժումը վերսկսվեց Ադրարում, ինչպես նաև Հյուսիսային Մավրիտանիայում: Մարտերից մեկի ժամանակ 1932 թ. մարտին սպանվեց Ադրարի էմիր Այդաո: Ֆրանսիական զորքերին հաջողվեց 1932 թ. օգոստոսի 18–ին Մուտուսնիի մոտ պարտության մատնել մավրիտանական ապստամբներին: Դրանից հետո խոշոր հակաֆրանսիական ապստամբություններ տեղի չեն ունենում, թեև երկրի զանազան շրջաններում շարունակում էին երկար ժամանակ մնալ դիմադրական շարժման առանձին օջախներ: Մավրիտանիայի նորագույն պատմությանը նվիրված աշխատություններում, որոնք այնքան էլ հարուստ չեն, ընդունված է փաստել, որ դիմադրական վերջին կենտրոնը վերացվել է 1955 թ., երբ Մավրիտանիայի Ռիգայբատ շրջանի ցեղապետները դադարեցրին պայքարը և անձնատուր եղան ֆրանսիական իշխանություններին:

Վերադառնալով Մավրիտանիայում հաստատված ֆրանսիական գաղութային կառավարման համակարգին՝ նշենք, որ այդ համակարգն արդեն շատ թե քիչ ավարտուն տեսք ուներ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին:

Մավրիտանիան Երկրորդ համաշխարհային պատերազմ մտավ, ինչպես և ՖԱՖ–ի մյուս երկրները, որպես ֆրանսիական գաղութ: Ֆրանսիան մեծ փորձությունների ենթարկվեց պատերազմի ժամանակ, որն իր համարժեք անդրադարձն ունեցավ Մավրիտանիայի և ֆրանսիական գաղութային մյուս երկրների դրության վրա: Պատերազմն սկսվելուց անմիջապես հետո Ֆրանսիայի կառավարությունը որոշում ընդունեց գաղութների ողջ մարդկային և նյութական հնարավորությունները դնել Ֆրանսիայի տրամադրության տակ: Գաղութների բնակչության 18–35 տարեկան տղամարդիկ զորակոչվեցին բանակ: Սակայն Ֆրանսիան 1940 թ. պարտություն կրեց, և Վիշիում հաստատված ֆրանսիական կառավարությունը, որը համագործակցում էր ֆաշիստական Գերմանիայի հետ, վերահսկողություն հաստատեց իր մի շարք գաղութների, այդ թվում և ՖԱՖ–ի մեջ մտնող երկրների՝ ներառյալ Մավրիտանիայի վրա: Վիշիական կառավարությունը 1940–1942 թթ.՝ իր կառավարման տարիներին, ամենախստագույն միջոցների կիրառումով ռազմական կարիքների համար իր ձեռքում կենտրոնացրեց ողջ պարենը, տարբեր ապրանքներ և նյութական միջոցներ, փորձում էր պարտադիր զինվորագրում անցկացնել, կիրառում հարկադրական աշխատանք և այլն: Նա

ցանկանում էր կուտակված պաշարները, պարենն ու մթերքները դուրս բերել Մավրիտանիայից և այլ գաղութներից՝ Ֆրանսիայի և հիտլերյան Գերմանիայի կարիքների բավարարման համար: Սակայն դա նրան չհաջողվեց, որովհետև բրիտանական և ամերիկյան ռազմանավերը շրջափակման ենթարկեցին ՖԱՖ–ի մեջ մտնող երկրները:

Վիշիականները փոփոխություն մտցրեցին Մավրիտանիայում և ՖԱՖ–ի անդամ մյուս երկրներում իրենց ներքին քաղաքականության մեջ՝ ծուլման քաղաքականությունից անցնելով ռասայական խտրականության քաղաքականության: Խտրականությունը դրսևորվում էր ամենուր՝ խանութներում, գնացքներում, ավտոբուսներում, հյուրանոցներում և այլն: Այդ հանգամանքը, ինչպես նաև հարկադրական աշխատանքի կիրառումը և զորակոչումը, պարենի և անասունների բռնագրավումը, խիստ վատացրին երկրի տնտեսական վիճակը՝ դժգոհություն ու բողոք առաջացնելով տեղական բնակչության շրջանում, որն իր մի սուր ծայրով ուղղված էր տեղական առաջնորդների դեմ, որոնք համագործակցում էին վիշիականների հետ: Դժգոհության այդ դրսևորումները խստորեն պատժվում էին Մավրիտանիայի վիշիական իշխանությունների կողմից, իսկ նրանց, ովքեր համարձակվում էին իրենց համակրանքը դրսևորել դըգոլականների նկատմամբ, ուղղակի գնդակահարում էին:

1942 թ. դեկտեմբերին վիշիականները անգլո–ամերիկյան ուժերի կողմից դուրս մղվեցին Հյուսիսային Աֆրիկայից, այդ թվում և Մավրիտանիայից: Այդ տարածքներն անցան գեներալ դը Գոլի կողմից գլխավորած Ազգային ազատագրության ֆրանսիական կոմիտեի իշխանության տակ: Պատերազմը հիտլերյան Գերմանիայի դեմ և Ֆրանսիայի ազատագրման համար շարունակվում էր, և Մավրիտանիան իր որոշակի ներդրումն ունեցավ այդ գործում: Մավրիտանացիները դըգոլական զորքերի շարքերում մարտնչում էին ֆաշիստական և նրանց հետ համագործակցող ուժերի դեմ, նյութական և հումքային ներուժը տրամադրում հաղթանակի համար: Եվ ոչ միայն Մավրիտանիան:

Պատերազմի այդ փուլում կարևոր իրադարձություն տեղի ունեցավ ՖԱՖ–ի մեջ մտնող գաղութային երկրների, այդ թվում և Մավրիտանիայի կյանքում: Ազգային ազատագրության ֆրանսիական կոմիտեն կամ Ազատ Ֆրանսիան 1944 թ. հունիսին Կոնգոյի մայրաքաղաք Բրազավիլում հրավիրեց ՖԱՖ–ի՝ Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկայի դաշնության մեջ մտնող յոթ գաղութային երկրների կոնֆերանս, որտեղ քննարկվեցին հետպատերազմյան շրջանում գաղութային կառավարման

համակարգում փոփոխություններ մտցնելու հարցը: Կոնֆերանսն արտահայտվեց հօգուտ գաղութների ավելի մեծ վարչական ազատության, որը, սակայն, չէր նշանակում անկախություն, քանի որ ընդունված որոշման մեջ արձանագրված էր պահպանել միասնությունը Ֆրանսիայի հետ դաշնային սահմանադրության միջոցով: Կոնֆերանսը խորհուրդ տվեց վերացնել հարկադրական աշխատանքը, թույլատրել արհեստակցական միությունների ստեղծումը և նրանց գործունեությունը, նպաստել կրթության արագ տարածմանը գաղութային երկրներում և մտցնել ընդհանուր ընտրական իրավունք:

Ֆրանսիական գաղութների պատմության մեջ առաջին անգամ էր նման որոշում ընդունվում, որը որոշ աղբյուրներում փորձ է արվում բացատրել ի նշան Ազատ Ֆրանսիայի երախտագիտության ՖԱՖ–ի անդամ գաղութներին՝ պատերազմի ժամանակ վերջիններիս ներդրած ջանքերի համար: Հազիվ թե նման բացատրությունը կարելի լինի համարել համոզիչ: Մեր կարծիքով՝ Ազատ Ֆրանսիայի և նրա ղեկավար դը Գոլի նման քայլի դրդապատճառները պետք է փնտրել պատմական այն նոր իրողությունների մեջ, որոնք պատերազմի ավարտին արդեն որոշակիորեն ուրվագծվում էին: Դա մասնակի փոփոխությունների անհրաժեշտությունն էր գաղութային համակարգում, որը հնարավորություն կտար Ֆրանսիային առանձին զիջումների գնով պահպանել իր տիրապետությունը գաղութներում: Դրա մասին է վկայում նաև կոնֆերանսում ընդունված որոշումն առ այն, որ ՖԱՖ–ի անդամ գաղութները պարտավորվում էին ֆրանսիական բլոկից դուրս չփնտրել որևէ փոփոխություն իրենց կարգավիճակում և սկզբունքորեն պաշտպանում էին միածուլման գաղափարը:

Այդուհանդերձ, Բրազավիլում կայացած կոնֆերանսը և նրանում ընդունված որոշումները նշանակալի երևույթ էին Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկայի դաշնության մեջ միավորված գաղութների, ներառյալ Մավրիտանիայի քաղաքական կյանքում, որն առանձին ակտիվությամբ աչքի չէր ընկնում: Նա նշանակալի երևույթ էր հեռանկարի առումով:

3. Մավրիտանիան անկախ պետության վերածվելու ճանապարհին (1946–1960 թթ.)

Հետպատերազմյան տարիները նշանավորվեցին մի շարք կարևոր իրադարձություններով, որոնք անդրադարձան ինչպես բուն

Ֆրանսիայի, այնպես էլ ֆրանսիական գաղութների, այդ թվում նաև Մավրիտանիայի հետագա քաղաքական ճակատագրի վրա:

Պատերազմում թուլացած Ֆրանսիան մտահոգ էր սեփական ապագայով՝ իր կորցրած նախկին քաղաքական ազդեցությունն ու դիրքերը վերականգնելու և միջազգային հարաբերություններում կրկին կարևոր դերակատարում ունենալու հիմնախնդիրներով: Նա որոնումների մեջ էր, և նրա քաղաքական էլիտան հասկանում էր, որ եկել է փոփոխությունների դարաշրջանը ինչպես բուն Ֆրանսիայում, այնպես էլ գաղութների հետ ունեցած փոխհարաբերություններում: Փարիզում հստակ գիտակցում էին, որ այլևս անհնար է անփոփոխ պահպանել գաղութների կարգավիճակը: Միայն թե ամբողջ հարցն այն էր, թե ինչպիսի փոփոխություններ էին անհրաժեշտ և ինչ տեմպերով:

Ֆրանսիական Չորրորդ Հանրապետության կառավարությունը հեռու էր գաղութներից հրաժարվելու և նրանց քաղաքական անկախություն շնորհելու մտքից: Ուրեմն, խնդիրն այն էր, որ գտնել մի այնպիսի ձև, որը մի կողմից՝ ցույց տար, որ ինչ–որ զիջումներ են արվում գաղութներին, և ընդլայնվում են նրանց իրավունքները, իսկ մյուս կողմից՝ պահպանել, թեկուզ և փոփոխված ձևով, ֆրանսիական գաղութային համակարգը: Փարիզը մտադիր էր այդ քաղաքականությունը իրականացնել առանց հապաղելու, դանդաղորեն, քայլ առ քայլ, որը գիտական գրականության մեջ սովորաբար համարվում է «զարգացման տանջալից ուղի»:

Փոփոխությունների կամ բարեփոխումների կիրառման տեսանկյունից անկյունաքարային նշանակություն ունեցավ 1946 թ. ընդունված Ֆրանսիայի նոր սահմանադրությունը: Նա հռչակեց Ֆրանսիական Միություն ստեղծելու մասին՝ կազմված բուն Ֆրանսիայից և անդրծովյան տարածքներից: Անդրծովյան տարածքներ հայտարարվեցին բոլոր գաղութները: «Ֆրանսիա — անդրծովյան տարածքներ» կառույցի ստեղծումը համարվեց ֆրանսիական գաղութային համակարգի կարևոր և սկզբունքային բնույթի ռեֆորմ, որը կոչված էր ամրապնդել մետրոպոլիայի և գաղութների կապերը և վճռական դեր խաղալ նրանց ինտեգրացման գործընթացում:

1946 թ., ի շարս այլ գաղութների, անդրծովյան տարածք հայտարարվեց նաև Մավրիտանիան: Նա և մյուս գաղութները համարվում էին ինտեգրված Ֆրանսիական Միության մեջ: 1946 թ. սահմանադրությամբ Արևմտյան Աֆրիկայի՝ ՖԱՖ–ի բոլոր բնակիչները համարվեցին Ֆրան-

սիայի քաղաքացիներ: Ֆրանսիական քաղաքացիություն ստացան նաև Մավրիտանիայի բնակիչները: Վերացվեցին հարկադիր աշխատանքը և այլ սահմանափակումներ:

Ֆրանսիական վարչությունը, որը գտնվում էր Մավրիտանիայի կենտրոնում՝ Սեն Լուիում, պահպանեց իր իրավասությունները քրեական օրենսդրության, հասարակական ազատությունների, քաղաքական և վարչական կազմակերպությունների հարցերում:

Նորություններից մեկն էլ այն էր, որ մտցվեց ընտրական ներկայացուցչության համակարգ, որը Մավրիտանիայում և ՖԱՖ–ի մյուս գաղութներում կիրառվում էր երեք մակարդակներով՝ տարածքային, դաշնային՝ ՖԱՖ–ի շրջանակներում, և ազգային: Վերջինս թույլատրում էր գաղութներին ներկայացուցչություն ունենալ Ֆրանսիայի պառլամենտում՝ Ազգային ժողովում:

Ներկայացուցչության առաջին աստիճանը տարածքայինն էր: Յուրաքանչյուր տարածքում, այսինքն՝ գաղութային երկրում, հիմնվեց Գլխավոր խորհուրդ, որը 1952 թվականից սկսեց կոչվել Տարածքային ասամբլեա: Նա օժտվեց բյուջեի հարցում վերահսկողության իրավունքով և միայն այդքանը: Իսկ մնացած բոլոր հարցերում՝ տնտեսական, կրթական, առողջապահական և այլն, նա իրականացնում էր միայն խորհրդատվական լիազորություններ:

Մավրիտանիայում ստեղծված Գլխավոր խորհուրդը կամ Տարածքային ասամբլեան բաղկացած էր 24 անդամներից, որոնցից 8–ը եվրոպացիներ էին, իսկ 16–ը՝ մավրիտանացիներ: Նրանք բոլորն էլ ընտրովի էին:

Երկրորդ աստիճանը դաշնայինն էր: Յուրաքանչյուր տարածք, այսինքն՝ երկիր, ուներ 5 ներկայացուցիչ ՖԱՖ–ի կամ դաշնային Մեծ խորհրդում, որի նստավայրը Դակարն էր: Այդ 5 ներկայացուցիչներն ընտրվում էին Տարածքային գլխավոր խորհրդի կողմից: Սենեգալի մայրաքաղաք Դակարում գործող Մեծ խորհուրդը իրավասություններ ուներ ամբողջ ՖԱՖ–ի բյուջետային, քաղաքական, վարչական, ծրագրավորման և այլ հարցերում: Այլ կերպ ասած՝ նա համարվում էր վերադիր տարածքային մարմինների, այդ թվում և Տարածքային գլխավոր խորհրդի նկատմամբ:

Ներկայացուցչության երրորդ աստիճանը կոչվում էր ազգային: Ամեն մի տարածք իր ներկայացուցիչներն էր ուղարկում Ֆրանսիայի պառլամենտ՝ Հանրապետության խորհուրդ և Ազգային ժողով:

Ահա այսպիսին էր տարածքային, դաշնային և ազգային եռաստիճան ներկայացուցչության ընդհանուր պատկերը:

Գաղութային համակարգում մտցված ռեֆորմներից ուշադրության է արժանի նաև 1946 թ. սահմանափակ բնույթի ընտրական համակարգի կիրառումը: Դա համընդհանուր ընտրական օրենք չէր և աչքի էր ընկնում զանազան սահմանափակումներով: Ընտրելու իրավունք տրվեց պետական պաշտոնյաներին, գրանցված սեփականատերերին, վետերաններին, տեղական ասոցիացիաների, կոոպերատիվների և արհեստակցական միությունների անդամներին: Այդպիսի ընտրական ցենզի կիրառման արդյունքում Մավրիտանիայում 1946 թ. կայացած ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք ունեցողների թիվը կազմում էր մոտավորապես 10 հազար մարդ: Հետագայում աստիճանաբար ընդլայնվեց ընտրական իրավունքից օգտվողների ցանկը: 1947 թ. ընտրական իրավունք տրվեց գրագետներին, որոնք արաբական և ֆրանսիական կրթություն ունեին: 1951 թ. նման իրավունք ստացան տանուտերերը և այն կանայք, որոնք ունեին առնվազն երկու երեխա: Իսկ 1956 թ. Մավրիտանիայում վերջապես մտցվեց ընդհանուր ընտրական իրավունք:

1946 թ. սահմանադրությամբ ընդլայնվեցին Մավրիտանիայի իրավունքները մի հարցում նս: Մինչ այդ Մավրիտանիան հանդես չէր գալիս որպես առանձին ընտրական միավոր, այլ միացված էր Սենեգալին: Եվ Սենեգալն ու Մավրիտանիան միասին տալիս էին ընդամենը մեկ սենատոր ֆրանսիական սենատին: 1946 թ հետո Մավրիտանիան անջատվեց Սենեգալից և ստացավ Ֆրանսիայի Ազգային ժողովին մեկ ներկայացուցիչ ընտրելու իրավունք:

Ֆրանսիայի Ազգային ժողովում Մավրիտանիայից ընտրված առաջին դեպուտատը եղավ Հորմա Ուլդ Բաբանան:

Այդ ռեֆորմները, ինչքան էլ որ նրանք սահմանափակ լինեին և քննադատության ենթարկվեին, այդուհանդերձ, առաջընթաց քայլ պետք է համարել: Մավրիտանիան նման կարգավիճակ չուներ ոչ 1903–1920 թթ., երբ ֆրանսիական պրոտեկտորատ էր, և ոչ էլ 1920 թ հետո, երբ վերածվեց գաղութի:

Այդ փոփոխությունները որոշ տեղաշարժեր առաջացրին Մավրիտանիայի քաղաքական կյանքում և բնակչության ազգային քաղաքական մտածելակերպում: Դրա առաջին դրսևորումներից մեկը եղավ քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների ձևավորումը ու քաղաքական ասպարեզում նրանց հայտնվելը: 1946 թ ձևավորվեց

Մավրիտանական համածայնություն կուսակցությունը, որը հանդիսացավ Մավրիտանիայի պատմության մեջ առաջին քաղաքական կուսակցությունը: Նրա հիմնադիրը և ղեկավարն էր Հորմա Ուլդ Բաբանան, որը ծագումով բերբեր էր: Մավրիտանիայում այդ առաջին քաղաքական կուսակցության կազմավորման գործում մեծ էր «Աֆրիկյան սոցիալիզմի» հիմնադիր և գաղափարախոս Լեոպոլդ Սենգորի դերը, որն այդ տարիներին մեծ հեղինակություն էր վայելում ողջ «Սև մայրցամաքում»: Պատահական չէր, որ Մավրիտանական համածայնությունը և նրա ղեկավար Հորմա Ուլդ Բաբանան նույնպես տուրք էին տալիս «աֆրիկյան սոցիալիզմի» գաղափարներին: Մասնակցելով 1946 թ. ընտրություններին՝ այդ կուսակցությունն առաջ էր քաշում երկու գլխավոր պահանջ՝ ընթանալ անկախության նվաճման ուղիով և վերացնել տեղական ցեղապետերի իշխանությունը: Նրա առաջնորդը՝ Հորմա Ուլդ Բաբանան, բավականին հեշտությամբ հաղթանակ տարավ իր մրցակցի նկատմամբ, որին պաշտպանում էին ֆրանսիական ադմինիստրացիան և կղերական շրջանները:

1947 թ. Մավրիտանիայի քաղաքական դաշտում հայտնվեց նս մեկ քաղաքական կուսակցություն՝ Մավրիտանական առաջադիմական միությունը. Նա հանդես էր գալիս Մավրիտանիայի ինքնակառավարման պահանջով, որին պետք էր հասնել աստիճանաբար, էվոլյուցիոն ճանապարհով.

Այդ երկու քաղաքական կազմակերպություններն էլ դեռևս թույլ էին և հեռու էին դասական իմաստով քաղաքական կուսակցություն լինելուց:

1951 թ. տեղի ունեցած ընտրությունների ժամանակ հիմնական պայքարն ընթացավ այդ երկու կուսակցությունների միջև: Այս անգամ Մավրիտանական համածայնության առաջնորդ Հորմա Ուլդ Բաբանան պարտություն կրեց և հաղթանակեց Մավրիտանական առաջադիմական միության ղեկավար Սիդի Մուխթարը, որը և դարձավ Մավրիտանիայից ընտրված դեպուտատ Ֆրանսիայի Ազգային ժողովում:

Հորմա Ուլդ Բաբանայի պարտությունը բացատրվում էր նրանով, որ նա «սոցիալիստական» գաղափարների պաշտպան էր 1946–1951 թթ. մշտապես գտնվում էր Փարիզում և թուլացրել էր կապը մավրիտանացիների հետ:

Մավրիտանական առաջադիմական միությունը հաղթանակ տարավ նաև 1952 թ. կայացած Մավրիտանիայի Տարածքային ասամբլեայի ընտրությունների ժամանակ՝ նվաճելով 24 տեղերից 22–ը:

1956 թ. ֆրանսիական կառավարությունն ընդունեց նոր որոշումներ, որոնք ավելի էին խորացնում բարեփոխումներն անդրծովյան երկրների կառավարման համակարգում: Ստեղծվեցին մարզային և տեղական ներկայացուցչական խորհուրդներ, և ընդլայնվեց Տարածքային ասամբլեաների իշխանությունը ընդհուպ մինչև այն, որ յուրաքանչյուր տարածք ինքն էր որոշելու իր ներքին քաղաքականությունը՝ Ֆրանսիային թողնելով արտաքին քաղաքականության, պաշտպանության, տնտեսական օգնության և բարձրագույն կրթության հարցերի տնօրինությունը:

Ֆրանսիական կառավարության կողմից 1956 թ ընդունված որոշումների մեջ կարևոր էր նաև Կառավարական խորհրդի հիմնումը, որն իրականացնում էր գործադիր մարմնի՝ կառավարության ֆունկցիաներ: Մինչ այդ նման ֆունկցիաներ Մավրիտանիայում և մյուս տարածքներում իրագործում էր Ֆրանսիայի կողմից նշանակված գաղութային բարձրագույն պաշտոնյան: Կառավարական խորհուրդը, որը կազմված էր 3–6 նախարարներից, փաստորեն անդրծովյան տվյալ տարածքի կառավարությունն էր: Սակայն նրանք ոչ թե նշանակվում, այլ ընտրվում էին Տարածքային ասամբլեայի կողմից՝ նրանում մեծամասնություն կազմող կուսակցության առաջարկությամբ:

1957 թ. կայացան Տարածքային ասամբլեայի ընտրությունները, որի ժամանակ հաղթանակ տարավ Մավրիտանական առաջադիմական միությունը՝ 34 դեպուտատական տեղերից հաղթելով 33–ում. Մուխթար Ուլդ Դադահը նշանակվեց Կառավարական խորհրդի փոխնախագահ, որը հավասարազոր էր վարչապետի պաշտոնին:

Մուխթար Ուլդ Դադահը Մավրիտանիայի միակ իրավաբանն էր և սերում էր ֆրանսիամետ հայտնի կղերական ընտանիքից: Նրան վիճակված էր հետագա տարիներին կարևոր դեր խաղալ Մավրիտանիայի քաղաքական և պետական կյանքում:

Այդ ընթացքում կարևոր իրադարձություններ էին ծավալվում բուն Ֆրանսիայում: Հերթական անգամ քաղաքական խոր ճգնաժամի մեջ հայտնված Ֆրանսիան կարողացավ հաղթահարել այն 1958 թ.՝ հռչակելով հինգերորդ հանրապետության ստեղծումը՝ գեներալ Շառլ դը Գոլի գլխավորությամբ: Այդ ճգնաժամի գոյացման մեջ մեծ էր գաղութային հարցը, ավելի ստույգ՝ Ֆրանսիայի հետագա հարաբերություններն իր աֆրիկյան և մյուս գաղութների հետ: Այդ հարցերի լուծման բանալին տվեց 1958 թ. ֆրանսիական նոր սահմանադրությունը, որը նախատեսում էր ստեղծել Ֆրանսիական Համագործակցություն, իսկ նրա անդամ

անդրծովյան տարածքներին առաջարկում երեք տարբերակ՝ լիակատար ինտեգրում Ֆրանսիային, տվյալ պահին գոյություն ունեցող կարգավիճակի պահպանում՝ համապատասխան ներկայացուցչությամբ ֆրանսիական պառլամենտում, և անդամակցություն Ֆրանսիական Համագործակցությանը՝ ինքնավար հանրապետության կարգավիճակով: Նոր սահմանադրությունը հավանության արժանացավ 1958 թ. սեպտեմբերին կայացած հանրաքվեի ժամանակ, որին մասնակցել և հավանություն էին տվել Ֆրանսիայի հետ միասին նաև Մավրիտանիան և ֆրանսիական մյուս անդրծովյան երկրները:

Մավրիտանիան ընտրեց երրորդ տարբերակը և հենվելով ֆրանսիական սահմանադրության դրույթների վրա՝ 1958 թ. նոյեմբերի 28–ին հռչակվեց Մավրիտանիայի Իսլամական Ինքնավար Հանրապետություն՝ Ֆրանսիական Համագործակցության կազմում: Տարածքային ասամբլեան վերանվանվեց Սահմանադիր (Օրենսդիր) ժողովի:

Մինչ այդ՝ 1958 թ. մայիսին, տեղի էր ունեցել Մավրիտանական համաձայնության և Մավրիտանական առաջադիմական միության միավորումը և նոր քաղաքական կուսակցության՝ Մավրիտանական վերախմբավորման կուսակցության ստեղծումը: Նրա նախագահ ընտրվեց Սիդի Մուխթար Նդիայեն, իսկ գլխավոր քարտուղար՝ Մուխթար Ուլդ Դադահը: Նորաստեղծ այդ քաղաքական կազմակերպությունը համարվում էր Դադահի կուսակցությունը, որը 1959 թ. կայացած ընտրությունների ժամանակ հաղթեց և գրավեց Օրենսդիր ժողովի դեպուտատական բոլոր 40 տեղերը: Դադահը դարձավ Մավրիտանիայի Իսլամական Ինքնավար Հանրապետության վարչապետ:

Մավրիտանիային շատ քիչ բան էր բաժանում լրիվ անկախությունից:

III. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ ԵՎ ՄԱՎՐԻՏԱՆԻԱՅԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ (1960–1965 թթ.)

Մավրիտանիայի անցումը ինքնավար հանրապետությունից անկախ հանրապետության ընթանում էր բավականին լարված իրադրության պայմաններում: Այդ հարցում կային երկու տարբեր մոտեցումներ:

Առաջինը՝ երկրի ներսում կային ուժեր, որոնք կողմնակից էին Մավրիտանիայի միավորմանը Մարոկկոյի հետ, որն անկախ էր հռչակվել դեռևս 1956 թ.: Քաղաքական այդ միտումի և նրան հետևող ուժերի արտահայտիչը հանդիսացավ Արաբական ազգային վերածննդի մավրիտանական կուսակցությունը՝ Ալ–Նահդա ալ–վաթանիյա ալ–մուրիտանիյա, որը քաղաքական ասպարեզում հայտնվեց 1958 թ հուլիսին, երբ անջատվեց Մավրիտանական վերախմբավորման կուսակցությունից և ձևավորվեց որպես առանձին կուսակցություն: Նրա ղեկավարները էին Բույաջի Ուլդ Աբիդինը և Ահմադ Բաբա Ահմադ Միսքեն: Այդ կուսակցությունը դատապարտում էր գաղութատիրությունն իր բոլոր դրսևորումներով և պահանջում Մավրիտանիայի միավորումը Մարոկկոյի հետ: Մարոկկոյի հետ միավորման պահանջով հանդես էին գալիս նաև առանձին քաղաքական գործիչներ և մավրիտանական տեղական առաջնորդներ:

Մարոկկոն իր կողմից նույնպես նպաստում էր քաղաքական կրքերի բորբոքմանը Մավրիտանիայում՝ բացահայտորեն հավակնություններ ներկայացնելով Մավրիտանիայի նկատմամբ: Մարոկկոյի ղեկավարությունը և կառավարող ալ–Իստիկլալ՝ Անկախություն կուսակցությունը դեռևս 1956 թ. հրապարակ էին նետել «Մեծ Մարոկկոյի» ծրագիրը և հրատարակել այսպես կոչված «Մեծ Մարոկկոյի» քարտեզը, որի մեջ մտնում էին հարավային և հարավարևմտյան Ալժիրը, իսպանական տարածքները հյուսիսարևմտյան Աֆրիկայում, Ֆրանսիական Սուդանը (Մալիի Հանրապետությունը) և Մավրիտանիան:

Մավրիտանական մի շարք հայտնի գործիչներ, դժգոհ Դադահի քաղաքականությունից, որը դեմ էր Մավրիտանիան Մարոկկոյին միացնելու ծրագրին, 1958 թ հեռացան Մավրիտանիայից և հաստատվեցին Մարոկկոյում՝ այնտեղից շարունակելով իրենց պայքարը հօգուտ «Մեծ Մարոկկո» ծրագրի. Դրանց մեջ էր Մավրիտանական համաձայնության ղեկավար Բաբանան, որը, հաստատվելով Մարոկկոյում, քարոզչություն ծավալեց Մավրիտանիան Մարոկկոյին միացնելու օգտին՝ պատճառաբանելով, որ դա կարող է մավրերին պաշտպանել սևամորթ բնակչության ոտնձգություններից: Մարոկկոյում հաստատվեց նաև Թրարզայի ազդեցիկ էմիրը:

Մարոկկոն իր քարոզչությունը և դիվանագիտական գործունեությունն ավելի ակտիվացրեց 1960 թ. ամռանը, երբ Մավրիտանիայի ղեկավարությունը բարձրացրեց Մավրիտանիայի անկախության հարցը:

Գործը հասավ այնտեղ, որ Մարոկկոն 1960 թ. օգոստոսի 20–ին Մավրիտանիայի հարցը պաշտոնապես ներկայացրեց Միավորված ազգերի կազմակերպության քննարկմանը: Հարցը քննարկվեց 1960 թ. նոյեմբերին ՄԱԿ–ի Քաղաքական կոմիտեում, որի ժամանակ աֆրիկյան մի շարք երկրներ պաշտպանեցին Մավրիտանիայի անկախության իրավունքը և հանդես եկան ընդդեմ Մարոկկոյի քաղաքական հավակնությունների: ՄԱԿ–ը որևէ բանաձև չընդունեց այդ հարցի վերաբերյալ:

Նահդա կուսակցությունը, դժգոհ այս ամենից, 1960 թ. մայիսին Նուակշոտում կազմակերպեց ելույթներ, որոնց ընթացքում եղան զինված բախումներ ցուցարարների և կառավարական ռազմական ուժերի միջև. եղան նաև մարդկային զոհեր: Դադահի կառավարությունը ճնշեց այդ ելույթները, արգելեց վերոնշյալ կուսակցության գործունեությունը, իսկ նրա մի շարք ղեկավարներ և ակտիվ գործիչներ ձերբակալվեցին:

Շուտով հերթը հասավ Մավրիտանական ազգային միությանը, որը մեծ ազդեցություն ուներ Մավրիտանիայի հարավում՝ Սենեգալ գետի հովտում, որը հիմնականում բնակեցված էր սևամորքներով: Այս կուսակցությունը, ի տարբերություն Նահդայի, հանդես էր գալիս Մավրիտանիան «Մեծ Մալիի» մեջ մտցնելու պահանջով: Ծրագրվում էր, որ դա պետք է լինի դաշնային կառույց, որի մեջ պետք է միավորվեին Մավրիտանիան, Մալին և հարակից հարավային աֆրիկյան այլ երկրները:

Սակայն այս պարագայում գործը չհասավ բախումների և բռնությունների: Տեսնելով, թե ինչ կատարվեց Նահդայի հետ՝ Մավրիտանական ազգային միության ղեկավարությունը, վախեցած այդ դեպքերից և անսալով Դադահի կոչերին հանուն միասնության, ինքնալուծարքի ենթարկվեց:

Մավրիտանիայի քաղաքական ապագայի նկատմամբ մյուս մոտեցումը, որի արտահայտիչներն էին Դադահի գլխավորած կուսակցությունը և նրա շուրջը համախմբված տարբեր ուժերը, որոնք կազմում էին մեծամասնություն, կանգնած էին Մավրիտանիայի անկախության դիրքերում: Այդ նույն դիրքերում էր կանգնած 1960 թ. փետրվարին կազմավորված Մավրիտանական մուսուլմանների սոցիալիստական միությունը: Նա, թեև կանգնած էր Դադահին ընդդիմադիր դիրքերում, այնուհանդերձ, դատապարտում էր Մավրիտանիան գրավելու կամ բռնակցելու Մարոկկոյի քաղաքականությունը և վճռականորեն հանդես գալիս «Մեծ Մալիի» ծրագրի դեմ՝ երկու ծրագրերն էլ համարելով Մավրիտանիայի անկախության դեմ ուղղված դավադրություն:

Այդ երկու միտումների և նրանց թիկունքում կանգնած ուժերի միջև մղվող պայքարում հաղթող դուրս եկավ երկրորդ ուղղությունը՝ Դադահի գլխավորությամբ, որը և շարունակեց գլխավորել Մավրիտանիայի անկախացման քաղաքականությունը:

1960 թ. փետրվարին Մուխթար Ուլդ Դադահը՝ որպես Մավրիտանիայի Իսլամական Ինքնավար Հանրապետության վարչապետ, պաշտոնապես տեղեկացրեց Ֆրանսիայի կառավարությանը, որ իր երկիրն արդեն հասունացել է քաղաքական լիակատար անկախության համար և պահանջեց նրան տրամադրել լրիվ անկախություն:

Փարիզը գիջեց, և բանակցություններ սկսվեցին երկու երկրների միջև այդ կարևոր հարցի շուրջը, որոնք ավարտվեցին Մավրիտանիայի համար հաջողությամբ: Կողմերը 1960 թ. հուլիսի 26–ին հայտարարեցին իրենց համաձայնության մասին՝ 1960 թ. նոյեմբերին Մավրիտանիան ճանաչել որպես անկախ պետություն: Մավրիտանիան պարտավորվեց համագործակցել Ֆրանսիայի հետ տարբեր ոլորտներում և նրա հետ կնքել մի շարք համաձայնագրեր:

1960 թ նոյեմբերի 28–ին Մավրիտանիան հռչակվեց անկախ պետություն և պաշտոնապես կոչվեց Մավրիտանիայի Իսլամական Հանրապետություն (ՄԻՀ): Նրա մայրաքաղաքը դարձավ Նուակշոտը:

Դա պատմական կարևոր իրադարձություն էր Մավրիտանիայի և համայն արաբական աշխարհի համար: Ձախողվեցին Մավրիտանիան «Մեծ Մարոկկոյի» կամ «Մեծ Մալիի» մեջ մտցնելու բոլոր փորձերը, և քաղաքական քարտեզի վրա հայտնվեց ևս մեկ նոր անկախ արաբական պետություն:

Նորաստեղծ հանրապետության առջև, ինչպես նման պայմաններում սովորաբար լինում է, կանգնած էին մի շարք դժվարագույն խնդիրներ, որոնց մեջ տվյալ պահին ամենակարևորը անկախ Մավրիտանիայի առաջին սահմանադրության ընդունումը և դրա հիմքի վրա երկրի օրինական բարձրագույն օրենսդիր, գործադիր և դատական, ինչպես նաև տեղական մարմինների կազմավորումն էր:

Մավրիտանիայի Իսլամական Հանրապետության առաջին սահմանադրությունը ընդունվեց և գործողության մեջ դրվեց 1961 թ. մայիսի 20–ին, որը երկրում հաստատեց պրեզիդենտական կառավարման համակարգ:

Սահմանադրությունը Մավրիտանիան հռչակեց հանրապետական, անկախ, ինքնիշխան, անբաժան, դեմոկրատական, սոցիալական

պետություն: Իսլամը հայտարարվեց երկրի պաշտոնական կրոն, սահմանադրությամբ երաշխավորվում է խղճի և այլ կրոնների ու դավանանքների ազատությունը, բոլորն օրենքի առաջ համարվում են հավասար: Սահմանվեցին ընդհանուր, ազատ, հավասար և գաղտնի ընտրություններ:

Պետության ղեկավարը պրեզիդենտն է, որն ընտրվում է ուղղակի և ընդհանուր ընտրություններով հինգ տարի ժամանակով: Նա միաժամանակ երկրի վարչապետն ու զինված ուժերի գլխավոր հրամանատարն է: Նա է որոշում ու իրականացնում երկրի քաղաքականությունը, նշանակում և լուծարում կառավարությունը և նախարարներին, պետական և զինվորական պաշտոնյաներին, գործադրում օրենքները, ապահովում ներքին անվտանգությունը, բանակցություններ վարում և պայմանագրեր ստորագրում օտար պետությունների հետ:

Մավրիտանիայի բարձրագույն օրենսդիր մարմինը Ազգային ժողովն է, որն ընտրվում է հինգ տարի ժամանակով: Պառլամենտական ընտրություններին կարող են մասնակցել 25 տարեկանից բարձր բոլոր քաղաքացիները:

Սահմանադրությունը պարունակում է հատուկ հոդված տեղական կառավարման մարմինների վերաբերյալ, որոնք ստեղծվում են շրջանների և կոմունաների մակարդակներով: Նրանց աշխատանքները գլխավորում են նահանգապետները, շրջանային ժողովները և տեղական խորհուրդները:

Նոր սահմանադրության հիման վրա տեղի ունեցան ընտրություններ, և 1961 թ. օգոստոսի 28–ին Մուխթար Ուլդ Դադահն ընտրվեց անկախ Մավրիտանիայի առաջին պրեզիդենտ: Նա միաժամանակ գլխավորեց Մավրիտանիայի կառավարությունը:

Դադահի առջև կանգնած էր ներքին միասնության՝ կոնսոլիդացիայի կարևոր խնդիրը՝ որպես մավրիտանական պետության ամրապնդման և նրա առջև կանգնած քաղաքական ու սոցիալ–տնտեսական հիմնախնդիրների լուծման գրավական: Այդ նպատակով նա կարողացավ կարգավորել հարաբերությունները ընդդիմադիր կուսակցությունների, այդ թվում նաև Նահդայի հետ, թեև նրան հայտարարել էր անօրինական և արգելել նրա գործունեությունը: Ընդդիմադիր կուսակցությունները դրականորեն արձագանքեցին Դադահի կոչերին՝ հույս ունենալով մասնակցել երկրի կառավարմանը և դրանով իսկ որոշ չափով ամրապնդել իրենց դիրքերը և ազդեցությունը երկրի ներսում:

Դադահն իր նոր կառավարությունը կազմելիս իր կաբինետում երկու նախարարական տեղ հատկացրեց նախկին ընդդիմության ներկայացուցիչներին: Նահդայի առաջնորդ Բույաջի Ուլդ Աբիդինը նշանակվեց տրանսպորտի և կապի, իսկ Մավրիտանական ազգային միության ղեկավար Ուլդ Քաթրին՝ արդարադատության նախարար: Դադահն իր կառավարության կազմում ընդգրկեց նաև երկու սևամորթների: Ազգային ժողովի նախագահ ընտրվեց նույնպես սևամորթ: Ազգային ժողովի 30 դեպուտատներից ինը ևս սևամորթներ էին:

Դրան հետևեց հաջորդ կարևոր քայլը: 1961 թ. հոկտեմբերին պաշտոնապես հայտարարվեց քաղաքական չորս կուսակցությունների՝ Մավրիտանական վերախմբավորման, Նահդայի, Մավրիտանական ազգային միության և Մավրիտանական մուսուլմանական սոցիալիստական միության միավորման և Մավրիտանական ժողովրդական կուսակցության ստեղծման մասին: Այդ նույն թվականի դեկտեմբերի 25–ին Մավրիտանական ժողովրդական կուսակցությունը կազմավորվեց որպես Մավրիտանիայի միակ քաղաքական կուսակցություն. Միավորման նախաձեռնությունը գալիս էր պրեզիդենտ Դադահից, որը վերոնշյալ երեք կուսակցություններին դրեց այնպիսի պայմանների մեջ, որ նրանք հարկադրված էին միավորվել Մավրիտանական վերախմբավորման կուսակցության հետ: Դադահը դարձավ նորաստեղծ Մավրիտանական ժողովրդական կուսակցության գլխավոր քարտուղարը և որպես այդպիսին ստանձնեց նրա ղեկավարությունը.

Այդ քայլերի շնորհիվ Դադահին հաջողվեց զգալիորեն ամրապնդել իր դիրքերը երկրի կառավարման համակարգում և ավելի շատ լիազորություններ կենտրոնացնել իր ձեռքում: 1964 թ. Մավրիտանիայի ժողովրդական կուսակցությունը Մավրիտանիան հռչակեց որպես միակուսակցական պետություն, իսկ Ազգային ժողովը, 1965 թթ. փոփոխություն մտցնելով սահմանադրության մեջ, Մավրիտանիայի ժողովրդական կուսակցությունը (ՄԺԿ) պաշտոնապես հաստատեց որպես պետության միակ լեգալ քաղաքական կուսակցությունը: Պրեզիդենտ Դադահն իր այդ քայլը փորձում էր արդարացնել այն պատճառաբանությամբ, որ Մավրիտանիան դեռևս քաղաքականապես պատրաստ չէ արևմտյան բազմակուսակցական համակարգի համար:

ՄԺԿ–ն գոյություն ունեցավ մինչև 1978 թ. և այդ ընթացքում ունեցավ մի շարք համագումարներ, որտեղ քննարկվում էին Մավրիտանիայի պետական շինարարության, սոցիալ–տնտեսական զարգացումների,

արտաքին քաղաքականության և այլ հարցեր, որոնք խորհրդատվական բնույթ ունեին, որովհետև վերջին խոսքը պատկանում էր պրեզիդենտին: Սակայն սկզբնական շրջանում ՄԺԿ–ի հանձնարարականներն ընդունվում էին ի կատարումն: Դրանցից պետք է առանձնացնել երկու կարևոր հարց: Առաջինը վերաբերում էր տեղական ավանդական առաջնորդների համակարգին, որը գալիս էր շատ հնուց և լայն լիազորություններ ու արտոնություններ էր տալիս տեղական առաջնորդներին ու նրանց զավակներին: Այդ համակարգի գոյությունը խոչընդոտում էր համընդհանուր պետական համակարգի հաստատմանը և ամրապնդմանը. ՄԺԿ–ի համագումարներից մեկում քննարկվեց իր դարն ապրած այդ համակարգի վերացման հարցը, և նախանշվեցին դրա իրագործման ուղիները: Մյուս կարևոր հարցը վերաբերում էր ստրկության վերացմանը: Ստրկությունը Մավրիտանիայում գոյություն ուներ թե՛ բացահայտ և թե՛ քողարկված ձևով: Մավրիտանիայի միակ քաղաքական կուսակցությունը որոշում ընդունեց վերացնել Մավրիտանիայում ստրկությունը:

Դադահը դեռևս 1960 թ. Մավրիտանիայի անկախության վերաբերյալ Ֆրանսիայի հետ բանակցությունների ժամանակ պարտավորություն էր ստանձնել նրա հետ կնքել մի շարք պայմանագրեր: Ի կատարումն այդ պայմանավորվածության՝ Մավրիտանիայի կառավարությունը 1961 թ. Ֆրանսիայի հետ ստորագրեց համագործակցության վերաբերյալ մի շարք պայմանագրեր և համաձայնագրեր: Դրանք նպատակաուղղված էին, ինչպես նշված էր այդ համաձայնագրերում, «ներդաշնակել Ֆրանսիայի և Մավրիտանիայի քաղաքականությունը ֆինանսական, տնտեսական և մշակութային հարցերում»: Ֆրանսիան պարտավորվում էր Մավրիտանիային տեխնիկական օգնություն ցույց տալ ռազմական ոլորտում: 1962 թ. փետրվարին ստորագրվեցին համաձայնագրեր, որոնք գլխավորապես վերաբերում էին առևտրի բնագավառում արտոնություններ՝ պրեֆերենցիաներ տրամադրելուն: Ֆրանսիան Մավրիտանիայի անունից դրամական հաշիվ բացեց: Մավրիտանիան թեև պահպանում էր սեփական դրամ հատելու իրավունքը, բայց մնում էր ֆրանկի գոտում: 1962 թ. մայիսին Մավրիտանիան Ֆրանսիայի, Սենեգալի, Մալիի, Նիգերի, Փղոսկրի Ափի, Վոլտայի, Դահոմեի հետ միասին հիմնեց Արևմտյան Աֆրիկյան դրամական միությունը: Իսկ 1963 թ. սեպտեմբերին Մավրիտանիան դարձավ Համաշխարհային բանկի և Միջազգային արժույթի հիմնադրամի անդամ:

Անկախության հռչակումից հետո Մավրիտանիան դիմեց ՄԱԿ–ին՝ նրան անդամակցելու խնդրանքով: Սակայն նրա խնդրանքը մերժվեց, որովհետև Խորհրդային Միությունը՝ որպես ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի հինգ անդամներից մեկը, օգտվեց վետոյի իր իրավունքից և 1960 թ. դեկտեմբերին կայացած քվեարկության ժամանակ դեմ քվեարկեց: Այդուհանդերձ, Մավրիտանիան հաջորդ տարի՝ 1961 թ. հոկտեմբերին, Խորհրդային Միության դաշնակից Մոնղոլիայի հետ միասին ընդունվեց ՄԱԿ–ի անդամ. Այս անգամ Խորհրդային Միությունը հասկանալի պատճառով չգործադրեց վետոյի իր իրավունքը:

1962–1963 թթ. սրվեցին հարաբերությունները Մավրիտանիայի և Մալիի միջև: Մավրիտանական կառավարությունը Մալիին մեղադրում էր Մավրիտանիայի դեմ Մալիի տարածքից քայքայիչ գործունեություն ծավալելու մեջ՝ ի նպաստ Մարոկկոյի: Մալիի կառավարությունը ժխտում էր այդ մեղադրանքները: 1962 թ. հուլիսին ընդհարումներ տեղի ունեցան երկու երկրների սահմանների երկայնքով: Մալիի և Մավրիտանիայի պատվիրակությունները մի շարք հանդիպումներ ունեցան և համակողմանիորեն քննարկեցին վիճելի հարցերը: 1963 թ. փետրվարին Մավրիտանիայի պրեզիդենտ Դադահը և Մալիի պրեզիդենտ Կեյթան հանդիպեցին Մալիում և ստորագրեցին համաձայնագիր սահմանները ճշգրտելու վերաբերյալ:

Մավրիտանիան, հասկանալի է, մեծ տեղ էր հատկացնում հարաբերությունների զարգացմանը արաբական երկրների հետ: 1964 թ. հոկտեմբերին Մավրիտանիային ճանաչեց Եգիպտոսը: Նա օգնություն էր ցույց տալիս Մավրիտանիային ուսուցիչներ պատրաստելու, բարձրագույն կրթության համակարգ ստեղծելու, մավրիտանական ուսանողներին Կահիրեում ուսուցանելու, ռադիոհաղորդումների կազմակերպման և այլ ասպարեզներում:

Մավրիտանիան որպես իր արտաքին քաղաքականության կուրս հռչակեց բլոկներին չմիանալու քաղաքականությունը և անդամակցեց չմիավորված երկրների շարժմանը:

Այդ ժամանակահատվածում նախնական քայլեր ձեռնարկվեցին նաև տնտեսական զարգացման բնագավառում: 1963 թ. ընդունվեց չորսամյա զարգացման պլան, որտեղ շեշտը դրվում էր լեռնահանքային արդյունաբերության՝ երկաթի, պղնձի, ոսկու և գիպսի արտադրության, գյուղատնտեսության և ենթակառույցների՝ երկաթուղու և ավտոճանապարհների զարգացման վրա: Դրա համար անհրաժեշտ ֆինանսական

միջոցները տրամադրում էր Համաշխարհային բանկը, նշանակալի էին նաև Ֆրանսիայի կողմից տրվող վարկերը:

Որոշ տեղաշարժեր կատարվեցին նաև սոցիալական ոլորտում: Արդեն նշվեց ստրկության վերացման և ավանդական իշխանապետերի իրավունքների սահմանափակման մասին: Սոցիալական ոլորտում այդ կարևոր միջոցառումներին անհրաժեշտ է ավելացնել նաև Ազգային ժողովի կողմից աշխատավորների ճնշման տակ ընդունված Աշխատանքային կոդեքսը, որը բանվորների և ծառայողների իրավունքների պաշտպանության որոշակի երաշխիքներ է տալիս:

IV. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՎՐԻՏԱՆԻԱՑՈՒՄ (1966–1978 թթ.)

1. Ներքաղաքական հակասությունները և բարդությունները

1966 թ. օգոստոսին Մուխթար Ուլդ Դադահը երկրորդ անգամ ընտրվեց Մավրիտանիայի պրեզիդենտ: Նա ընտրվեց առանց որևէ մրցակցության՝ որպես միակ թեկնածու: Այդ նույն սկզբունքը կիրառվեց հաջորդ՝ 1971 և 1976 թվականների պրեզիդենտական ընտրությունների ժամանակ, երբ Դադահը տանում էր «փայլուն» հաղթանակներ:

Նման պրակտիկան առաջացնում էր մավրիտանացիների խորը դժգոհությունը, մանավանդ Դադահի կողմից իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու և բացահայտ դիկտատորական հակումներ դրսևորելու ետնախորքի վրա:

Արդեն նրա առաջին պրեզիդենտության վերջին շրջանում լարվածություն առաջացավ քաղաքական խմբավորումների միջև, որի նախածեռնությունը պատկանում էր նախկին ընդդիմությանը: Նրանք այլևս չէին կարող հանդուրժել Դադահի և նրա կողմից ղեկավարվող Մավրիտանական ժողովրդական կուսակցության՝ ոչնչով չսահմանափակված իշխանությունը: Նրանց ճանաչված ղեկավարները՝ Սուլեյման Ուլդ Շեյխ Սիդիյան, Սիդի Մուխթարա Նդիայեն և Բու Ուլդ Աբիդինը, հայտարարեցին իրենց մտադրության մասին՝ ստեղծել Մավրիտանական ժողովրդական կուսակցությունից անկախ մի նոր քաղաքական կազմա-

կերպություն, որը նրանք անվանեցին Ազգային դեմոկրատական ճակատ: Նրանք չէին թաքցնում, որ այն լինելու էր ՄԺԿ–ին ընդդիմադիր կուսակցություն: Սակայն իշխանություններն արգելեցին նոր կազմակերպության ստեղծումը՝ դա համարելով «հակաօրինական»: Նրանք ոչ միայն արգելեցին Ազգային դեմոկրատական ճակատի հիմնումը, այլև Ազգային ժողովն ընդունեց օրենք Մավրիտանիան միակուսակցական պետություն համարելու վերաբերյալ: Օրենսդրական այդ ակտի օգնությամբ Դադահը և նրա կողմնակիցները ձգտում էին ապագայում ընդհանրապես կանխել ՄԺԿ–ից անկախ և նրան հակադիր որևէ կուսակցության ստեղծումը:

Այդ ընթացքում բազմիցս վերակազմավորվեց կառավարությունը: Դադահը կառավարության կազմից հանում էր բոլոր այն նախարարներին, ովքեր կասկածվում էին ընդդիմության հանդեպ համակրանք ունենալու մեջ:

Ներքաղաքական նոր բարդություններ առաջացան մավրերի և բնիկների միջև հակասությունների սրման հետևանքով: Հակասությունների հիմքը դրվեց Մավրիտանիայի անկախացումից հետո, որոնք ավելի խորացան և շարունակվեցին XX դարի ողջ 60–80–ական թվականներին: Դա կապված էր այն իրողության հետ, որ անկախացումից հետո Մավրիտանիայի տեղաբնիկ սևամորթ հաապուլաար, սոնինկե և վոլոֆ ժողովուրդների մեծաքանակ խմբեր, անցնելով Սենեգալ գետը, հարավից շարժվեցին Մավրիտանիայի հյուսիսային շրջանները: Դա ինքնին վերցրած անհանգստացրեց մավրերին, արաբներին ու բերբերներին: Սակայն դա հարցի մի կողմն էր: Հարցի մյուս՝ ավելի կարևոր կողմն այն էր, որ այդ եկվորների մեջ զգալի թիվ էին կազմում ֆրանսիական կրթություն ունեցողները և ֆրանսերեն լեզվին տիրապետողները: Նրանք, հաստատվելով Սենեգալ գետից հյուսիս, դարձան պետական ապարատի գրագիրներ, գրասենյակային աշխատողներ, քարտուղարներ, վարչական ապարատի աստիճանավորներ և մավրիտանական բանակի զինվորներ, այսինքն՝ ներթափանցեցին պետական կառավարման ապարատ և այնտեղ համապատասխան պաշտոններ գրավեցին:

Այդ հանգամանքը խիստ անհանգստացրեց մավրերին, որոնք որդեգրեցին մավրիտանական հասարակության արաբականացման քաղաքականություն և սկսեցին ճնշում գործադրել կառավարության վրա: Մավրիտանական հասարակությունը պառակտվեց երկու հատվածների: Մի կողմում այն ուժերն էին, որոնք կարծում էին, որ Մավրիտանիան

պետք է լինի արաբական երկիր՝ մավրիտանական դիմագծով, իսկ մյուս կողմում՝ այն ուժերը, որոնք այն տեսակետն էին պաշտպանում, որ Մավրիտանիայում տիրապետող և գերակա դերակատարումը պետք է պատկանի ոչ մավր ժողովուրդներին:

Հարաբերություններն ավելի սրվեցին, և սևամորթ տեղացիների մտավախությունն ավելի խորացավ՝ կապված Մավրիտանիայի արաբականացման հետ, երբ կառավարության 1966 թ. որոշումով հասանիյա արաբերենի ուսուցումը համարվեց պարտադիր միջնակարգ դպրոցներում, իսկ 1968 թ. որոշումով հասանիյա արաբերենը, ինչպես նաև ֆրանսերենը, հայտարարվեցին Մավրիտանիայի պաշտոնական լեզուներ: Կառավարության այդ քայլը մեծ հուզումներ առաջացրեց երկրում: Լեզվի հարցը վերածվեց քաղաքական հարցի: Սկսվեցին գործադուլներ և ցույցեր, որոնց մասնակցում էին ուսանողները, մտավորականությունը և արհմիությունների անդամները: Անհնազանդության և բողոքի անընդհատ ցույցերը էին տեղի ունենում 1968–1971 թվականների ընթացքում: Դրանք բոլորը դաժանորեն ճնշվեցին Դադահի հրամանով: Նա, լեզուների շուրջը ծագած խնդիրը համարելով ռասայական հարց, արգելեց երկրում նման հարցերի քննարկումը:

Հակասությունը այդ երկու տեսակետների և նրանց հետևորդների միջև մշտական լարվածություն էր պահպանում երկրի ներսում, և այդ հողի վրա առաջանում էին ընդհարումներ, տեղի էին ունենում զինված բախումներ, որոնք իրենց գագաթնակետին հասան 1989 թ. ապրիլ ամսին, որի մասին կխոսվի հետագա էջերում:

Այդ հարցը, բնականաբար, հնարավոր չէր բռնությամբ լուծել, ուստի մավրիտանական հասարակության մեջ ուժեղանում էր նրանց թիվը, որոնք կանգնած էին հակադիր կողմերի միջև երկխոսություն ծավալելու դիրքերում՝ պնդելով, որ հարցի լուծումը պետք է փնտրել Մավրիտանիայում պլյուրալիստական՝ բազմակարծության վրա հիմնված հասարակություն կառուցելու շրջանակներում:

Սևամորթների դժգոհությունն էր հարուցում նաև այն հանգամանքը, որ թեև պաշտոնապես վերացվել էր ստրկությունը, բայց այսպես կոչված «սև մավրերը» շարունակում էին համարվել ստրուկների դասակարգին պատկանող սոցիալական խավ: Նրանք պահանջում էին կառավարությունից հետևողական լինել իր որոշումներում և նախկին ստրուկներին վերաբերվել որպես լիարժեք քաղաքացիների:

1960–1970–ական թվականներին լուրջ խնդիրներ ծագեցին նաև իշխանությունների և արհեստակցական միությունների փոխհարաբերություններում կառավարության քաղաքականության մեղքով: Մավրիտանական կառավարությունն ամեն կերպ քաջալերում էր արհմիութենական շարժման պառակտումը և նպաստում արհմիութենական կազմակերպությունների տրոհմանը տարբեր հատվածների, որը 1969 թ. վերածվեց իրականության: Մավրիտանական արհմիութենական կազմակերպությունը բաժանվեց երկու թևի: Մի թևը հանդես էր գալիս արհմիութենական կազմակերպությունը Մավրիտանական ժողովրդական կուսակցության հետ միավորելու օգտին, իսկ մյուս հատվածը պայքարում էր անկախ տրեյդյունիոնիստական՝ արհեստակցական շարժման, արհեստակցական միությունների անկախության պահպանման համար: Մավրիտանական ժողովրդական կուսակցությունը, որի ղեկավարն էր պրեզիդենտ Դադահը, հաշվի չառնելով երկրորդ թևի դիրքորոշումը, 1972 թ. արհմիությունները միավորեց ՄԺԿ–ին, որի պատասխանը եղավ բողոքի մեծ ալիքի բարձրացումը և գործադուլային աննախընթաց շարժումը Մավրիտանիայում: Հատկապես հիշատակության է արժանի երկաթահանքերի հանքափորների երկու ամիս տևած գործադուլը: Գործին միջամտեց բանակը, որը դաժանությամբ ճնշեց այդ գործադուլը, որի ընթացքում սպանվեցին տասնյակ գործադուլավորներ:

Բայց այդ պայքարի օրերին Մավրիտանիայում ոչ պաշտոնական կերպով առաջացավ արհմիութենական նոր շարժում, որը դեմ էր արհմիությունների ինտեգրացմանը երկրում միակ և կառավարող կուսակցությանը: Այդ շարժման հիմքի վրա 1973 թ. ձևավորվեց ընդհատակյա ձախակողմյան նոր կուսակցություն, որը ոմանք համարում են մարքսիստական: 1974 թ. ձևավորվեց մեկ այլ ընդհատակյա կուսակցություն ևս, որը կոչվում էր Մավրիտանական արդարության կուսակցություն: Նրա գլխավոր պահանջներից մեկը դարձավ քաղաքական ազատությունների տրամադրումը:

Դադահը և նրա գլխավորած կառավարությունը հայտնվեցին ծանր դրության մեջ: Պրեզիդենտը լավ էր հասկանում ձախակողմյան ուժերի նետած մարտահրավերի ամբողջ վտանգավորությունը և հարկադրված դիմեց հակաքայլերի, որոնք պետք է ապահովեին ժողովրդական լայն խավերի աջակցությունը: Նրա որոշումով 1974 թ. ազգայնացվեց երկաթի արդյունահանման ընկերությունը, որը պատկանում էր օտարերկրյա՝ ֆրանսիական, բրիտանական և իսպանական կապիտա-

լին, դուրս եկավ ֆրանկի գոտուց և գործողության մեջ դրեց մավրիտանական ազգային դրամը՝ ուգիյան: Ստեղծվեց Ազգային բանկ, որը պետք է հսկողություն սահմաներ դրամական շրջանառության և ֆինանսական գործարքների վրա: Ազգային վալյուտայի կուրսն ապահովելու համար Մավրիտանիային վարկեր տրամադրեցին Ալժիրը, Լիբիան և Ջաիրը:

Բայց ընդհանուր առմամբ ներքաղաքական դրությունը Մավրիտանիայում շարունակում էր մնալ լարված ընդհուպ մինչև 1978 թ. պետական հեղաշրջումը:

2. Մավրիտանիայի արխայիկ սոցիալական կառուցվածքը: Դադաիզմը մավրիտանական ազգի «հայր»

Մավրիտանիան հետամնաց և չզարգացած երկիր էր: Սոցիալ–տնտեսական հետամնացության հաղթահարմանը, բացի այլ գործոններից, խոչընդոտում էր նաև պատմական այն ժառանգությունը, որը ստացավ Մավրիտանիան անկախության հետ միասին:

Մավրիտանական հասարակությունը տիպաբանորեն պատկանում է այն հասարակություններին, որոնք սոցիալական կառուցվածքի առումով դասվում են արխայիկ սոցիալական համակարգ ունեցող երկրների շարքը: Այդ մասին են վկայում առկա և ուսումնասիրողին մատչելի, այդ թվում և վիճակագրական տվյալները:

Երբ խոսք է գնում Մավրիտանիայի սոցիալական կառուցվածքի և տնտեսական բնութագրի մասին, ապա մասնագիտական գրականության մեջ նա բնութագրվում է որպես «քոչվորական և կիսաքոչվորական երկիր»: Որոշ աղբյուրներում նշվում է, որ քոչվորները և կիսաքոչվորները կազմում են երկրի բնակչության մոտ 90%–ը: Հնարավոր է, որ այդ թիվը մի փոքր չափազանցված է, սակայն դա առանձնապես չի տարբերվում 1966 թ. մավրիտանական պաշտոնական վիճակագրական տվյալներից, որոնց համաձայն՝ Մավրիտանիայի բնակչության երեք քառորդը կամ 75%–ը, անկախության նվաճումից վեց տարի անց դարձյալ քոչվորներ էին: Եթե դրան ավելացնենք կիսաքոչվորներին, ապա պատկերը տոկոսային հարաբերակցությամբ համարյա կմոտենա վերոնշյալ 90%–ին:

Քոչվորական և կիսաքոչվորական խավի տիրապետող գոյությունը հանդիսանում է մավրիտանական հասարակության արխայիկ կա-

ռուցվածքի պահպանման հիմքը և սնուցման կայուն աղբյուրը: Դրա վրա բարձրանում է արխայիկ կառուցվածքին համապատասխան ավանդական առաջնորդների ինստիտուտը՝ արխայիկ սոցիալական խավը՝ որպես կառավարող կամ տիրապետող սոցիալական դաս: Դրա մեջ մտնում են ցեղերի շեյխերը և ցեղապետները, ֆրատրիաների առաջնորդները, տեղական խորհուրդների՝ մաջլիսների ավագները, կրոնական առաջնորդները և այլն. Եվ եթե հաշվի առնենք նաև նրանց ընտանիքի անդամներին, մասնավորապես ավագ որդիներին, որոնք ժառանգում են շեյխությունն իրենց հայրերից, ապա կստացվի, որ ավանդական ղեկավարության ինստիտուտը՝ որպես սոցիալական խավ, բավականին մեծաքանակ է և ազդեցիկ:

Մավրիտանիայի անկախության նվաճումից հետո պաշտոնապես վերացվեց ավանդական ղեկավարության ինստիտուտը: Սակայն դա ձևական բնույթ էր կրում, քանի որ տեղերում իշխանությունը շարունակում էր մնալ նախկին առաջնորդների՝ ցեղապետների և շեյխերի ձեռքում: Դա պետք է բացատրել ոչ միայն նրանով, որ մավրիտանական իշխանությունները, որտեղ ներկայացված են նաև ավանդական ղեկավարների ներկայացուցիչները, հետևողական չեն շեյխերի իշխանությունը արմատախիլ անելու հարցում. այլև այն հանգամանքով, որ հասարակության սոցիալական կառուցվածքը, քոչվորականից նստակյացին անցնելը և կառավարման ավանդական ձևերը հնարավոր չէ արմատական փոփոխության ենթարկել դեկրետով և մի գիշերվա ընթացքում: Դա երկարատև պատմական պրոցես է, որը սովորաբար իրականացվում է աստիճանաբար, էվոլյուցիոն ճանապարհով:

Նույնը պետք է ասել նաև մավրիտանական արխայիկ սոցիալական կառուցվածքի մյուս բաղադրատարրի՝ ստրկության մասին: Այն դեպքում, երբ աշխարհի ժողովուրդների ճնշող մեծամասնությունը ստրկությանը հրաժեշտ է տվել վաղուց՝ դարեր առաջ, Մավրիտանիայում այն պաշտոնապես գոյություն ուներ մինչև XX դարի կեսերը, իսկ պաշտոնապես նրա վերացումից հետո այն դեռևս շարունակում է իր գոյությունը քողարկված ձևով մարդկանց հոգեբանության, մտածելակերպի և կենցաղի մեջ:

Այդ ամենը լուրջ խոչընդոտ է մավրիտանական հասարակության, սոցիալական հարաբերությունների և տնտեսության վերակառուցման ու արդիականացման ճանապարհին:

Մավրիտանական հասարակության արխայիկ սոցիալական կառուցվածքի և նրա արդիականացման դժվարությունների մասին է խոսում նաև վարձու աշխատանքի ցածր մակարդակը: XX դարի 60–ական թվականների վերջերին Մավրիտանիայում աշխատավարձ ստացող ընդամենը 20 հազար մարդ էր հաշվվում, որոնք հիմնականում օտարերկրյա կապիտալին պատկանող լեռնահանքային արդյունաբերության ոլորտում աշխատող բանվորներ էին: Եթե հաշվի առնենք, որ 1966 թ. Մավրիտանիայի բնակչությունը կազմում էր ընդամենը 1,1 մլն մարդ, ապա կստացվի, որ այդ ժամանակ Մավրիտանիայի բնակչության ընդամենը 2 տոկոսն էր վարձու աշխատող: Իսկ դա շատ ցածր ցուցանիշ է, որը խոսում է այն մասին, որ կապիտալիստական հարաբերությունները Մավրիտանիայում գտնվում են իրենց ծնավորման սաղմնային վիճակում. Մինչդեռ արխայիկ սոցիալական կառուցվածքին գլխավոր մահացու հարված հասցնողը վարձու աշխատանքի վրա հիմնված կապիտալիստական հարաբերությունների զարգացումն է:

Արխայիկ սոցիալական կառուցվածք ունեցող երկրներում սովորաբար շատ ցածր են ուրբանիզացիայի աստիճանը և քաղաքային բնակչության տոկոսը: Այդ ճշմարտությունը հաստատվում է նաև Մավրիտանիայի օրինակով: Նուակշոտը, որը 1960 թ. պաշտոնապես դարձավ անկախ Մավրիտանիայի մայրաքաղաքը, 60–ական թվականների վերջերին ուներ ընդամենը 15 հազար բնակչություն և համարվում էր երկրի ամենախոշոր քաղաքը, թեև դա, ըստ էության, մի ոչ մեծ գյուղ էր: Համարյա նույնքան բնակչություն ուներ էթիեն նավահանգիստը, իսկ Ատարը և Կաեդին ունեին 10–հազարական բնակիչ: Ճիշտ է, հետագայում քաղաքային բնակչության թիվը բավականին արագ թափով աճեց, բայց դա ոչ թե տնտեսական, հատկապես արդյունաբերության արագ զարգացման արդյունք էր, այլ 60–ական թվականների վերջերից մինչև 70–ական թվականների կեսերը տևած այն սարսափելի երաշտի, երբ սովամահ գյուղական բնակչությունը, լքելով գյուղական վայրերը, փորձում էր սովից փրկություն որոնել քաղաքային վայրերում:

Մավրիտանիայի իշխանությունները հասկանում էին արխայիկ կառուցվածքը վերափոխելու անհրաժեշտությունը: Նրանք դա փորձում էին անել տնտեսական զարգացման մի քանի ծրագրերի ընդունման և իրականացման ուղիով, որոնց մասին մենք արդեն հիշատակել ենք: Բայց դրանք համապարփակ, բոլոր գործոնները հաշվի առած ծրագրեր չէին, և նրանց իրականացումն ընթանում էր դանդաղ:

1975 թ. օգոստոսին Նուակշոտում գումարվեց ՄԺԿ–ի VII համագումարը, որը Մավրիտանիայի նորագույն պատմության մեջ մտել է երկու առումով:

Առաջին՝ համագումարն ընդունեց կուսակցական նոր ծրագիր, որը դրվեց Մավրիտանիայի պետության, հասարակության և սոցիալ–տնտեսական հարաբերությունների զարգացման հիմքում: Ծրագիրը գլխավոր խնդիրը համարեց «իսլամական սոցիալիզմի կառուցումը՝ երկրի առանձնահատկությունների հաշվառումով», և Մավրիտանիան «ազատ, արդարացի և ծաղկող պետության վերածելը»: Նրանում խոսք չկար արխայիկ սոցիալական կառուցվածքի վերացման մասին: Բայց երբ նշվում էր սոցիալիստական հասարակություն կառուցելու անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով նրա առանձնահատկությունները, ապա սխալ չի լինի, եթե ասենք, որ այդ առանձնահատկությունների մեջ նկատի ունեին նաև արխայիզմի առկայությունը և նրա վերացման պատմական անհրաժեշտությունը: Ավելացնենք նաև, որ հաստատվեց Մավրիտանիայի սոցիալ–տնտեսական զարգացման 1976–1980 թթ պլանը, որը կարևոր փուլ պետք է հանդիսանար Մավրիտանիան զարգացած երկրի վերածելու ճանապարհին:

Երկրորդ՝ կառավարող կուսակցության բարձրագույն մարմինը՝ համագումարը, պրեզիդենտ Դադահին 1975 թ. հայտարարեց «Մավրիտանական ազգի հայր»: Պատմությանը հայտնի են բազմաթիվ դեպքեր, այդ թվում և նորագույն շրջանից, երբ այս կամ այն պետության ղեկավարն իր արտակարգ ծառայությունների համար կոչվել է տվյալ ազգի հայր: Սակայն դա տեղի չի ունեցել որևէ պետական, կառավարական, օրենսդիր, դատական կամ կուսակցական մարմնի որոշումով, այլ, որպես կանոն, ժողովրդի կողմից և ինքնաբուխ կերպով: Մինչդեռ Մավրիտանիայի պրեզիդենտի պարագայում այլ կերպ եղավ: Դա նրան շնորհվեց պետության կառավարող կուսակցության կողմից, որի ղեկավարը՝ գլխավոր քարտուղարը, հենց ինքը՝ նույն Դադահն էր: Ստացվում է, որ ինքն իրեն մի ամբողջ ազգի հայր հռչակեց՝ առանց վերջինիս գիտության ու համաձայնության:

Բնությունը խստորեն պատժում է բոլոր նրանց, ովքեր կոպտորեն խախտում են իր կանոնները: Վաղ թե ուշ վրա է հասնում հատուցման ժամը: Դրանից չխուսափեց նաև Մուխթար Ուլդ Դադահը:

3. 1978 թ. պետական հեղաշրջումը և Դադահի տապալումը

Դադահի պրեզիդենտության վերջին տարիները բուռն տարիներ եղան ոչ միայն ներքին զարգացումների տեսանկյունից, այլ նաև արտաքին հարաբերությունների ոլորտում: Դադահի կառավարությունն այս բնագավառում ունեցավ ինչպես հաջողություններ, այնպես էլ խոշոր վրիպումներ և սխալներ

1969 թ. վերջապես Մարոկկոն ճանաչեց Մավրիտանիայի անկախությունը, և նրանց միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ: Դրանում որպես միջնորդ դրական դերակատարում ունեցավ Ալժիրի պրեզիդենտ Հուարի Բումեդիենը, որի ջանքերի շնորհիվ հաջողությամբ ավարտվեցին բանակցությունները Մարոկկոյի թագավոր Հասան II–ի և Մավրիտանիայի պրեզիդենտ Դադահի միջև: Դրան հաջորդեցին երեք պետությունների՝ Ալժիրի, Մարոկկոյի և Մավրիտանիայի ղեկավարների երկու հանդիպումները 1970 և 1973 թթ., որի արդյունքում զգալիորեն ամրապնդվեց համագործակցությունը մաղրիբյան այդ երեք երկրների միջև:

Միջարաբական հարաբերությունների ոլորտում Մավրիտանիայի մեծ հաջողությունը պետք է համարել նաև այն, որ 1973 թ. նոյեմբերին նա դարձավ Արաբական պետությունների լիգայի անդամ: Դրանով իսկ Մավրիտանիան դուրս եկավ այն քաղաքական մեկուսացումից, որի մեջ հայտնվել էր արաբական աշխարհում: Նա ավելի ակտիվորեն ներգրավվեց ներարաբական գործերի մեջ և դրա շնորհիվ զգալիորեն ամրապնդեց իր դիրքերը միջարաբական հարաբերությունների ոլորտում:

Կարգավորվեցին և ընդլայնվեցին Մավրիտանիայի հարաբերությունները նաև սոցիալիստական երկրների՝ Խորհրդային Միության, Բուլղարիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Չինաստանի և աֆրիկյան մայրցամաքի մի շարք երկրների հետ:

Այդ բոլորով հանդերձ, Դադահը արտաքին քաղաքականության բնագավառում թույլ տվեց մի կարևոր սխալ, որն այլ կերպ, քան արկածախնդրություն, չի կարելի անվանել: Խոսքը Մավրիտանիայի մասնակցությունն էր Արևմտյան Սահարայի համար 1970–ական թվականների կեսերին ծավալված պատերազմին:

Արևմտյան Սահարան իսպանական գաղութ էր, որից Իսպանիան որոշեց հրաժարվել 1975 թ.. Անմիջապես նրան տիրանալու հավակնորդներ հանդես եկան Մարոկկոն, Մավրիտանիան և Ալժիրը: Շուտով

ասպարեզ իջավ Արևմտյան Սահարայի ազատագրության ժողովրդական ճակատը, որն ավելի շատ հայտնի է ՊՕԼԻՍԱՐԻՕ անվանումով: Նա հանդես էր գալիս հանուն Արևմտյան Սահարայի անկախության և պարտիզանական զինված պայքար ծավալեց մարոկկոյական և մավրիտանական ուժերի դեմ: Մարոկկոն հավակնում էր Արևմտյան Սահարայի տարածքի երկու երրորդին, իսկ Մավրիտանիան՝ մեկ երրորդին:

1975 թ. նոյեմբերին Մադրիդում Իսպանիայի, Մարոկկոյի և Մավրիտանիայի միջև կնքվեց պայմանագիր, որի համաձայն Իսպանիան Արևմտյան Սահարայի վարչական կառավարումը փոխանցեց Մարոկկոյին և Մավրիտանիային: Պայմանագրով Մարոկկոն ստանում էր Արևմտյան Սահարայի երկու երրորդը՝ հյուսիսային մասում, իսկ Մավրիտանիան՝ մեկ երրորդը՝ երկրի հարավային մասում:

ՊՕԼԻՍԱՐԻՕ–ն, որին ՄԱԿ–ը ճանաչել էր Արևմտյան Սահարայի բնակչության միակ օրինական ներկայացուցիչը, համաձայն չլինելով այդ գործարքի հետ, սկսեց զինված պայքարը մարոկկոյական և մավրիտանական զորքերի դեմ, որոնք ներխուժել էին Արևմտյան Սահարա:

Դադաիի այդ արկածախնդրական քայլը և մասնակցությունը պատերազմական գործողություններին շատ ծանր նստեցին Մավրիտանիայի վրա:

Մավրիտանիայի բանակը, որ մինչ այդ կազմված էր 1700 զինվորից, ավելացավ մոտ 10 անգամ և հասավ 17 հազարի: Պետական բյուջեի այլ ծախսերը կրճատվեցին, և 1975–1977 թթ. ռազմական ծախսերն ավելացան մոտ 70 տոկոսով: Աճեցին հարկերը, և մտցվեց լրացուցիչ հատուկ հարկ, որը կոչվում էր «ազգային պաշտպանության ջանքերին օժանդակող հարկ», բարձրացան առաջին անհրաժեշտության մթերքների և ապրանքների գները: Մավրիտանիան ստիպված էր դիմել նաև օտարերկրյա փոխառությունների: Այդ բոլորը հանգեցրեց բնակչության դրության կտրուկ վատացմանը և դժգոհության կուտակմանը:

Պատերազմը պառակտեց մավրիտանական հասարակությունը: Նրա մի մասը կողմնակից էր գրավել Արևմտյան Սահարայի հարավային մասը, որը Մավրիտանիան վերանվանեց Տիրիս ալ–Ղարբիյա, և միացնել Մավրիտանիային: Մյուս մասը գտնում էր, որ պետք է ճանաչել Արևմտյան Սահարայի անկախությունը: Իսկ սնամորթները ընդհանրապես չէին ցանկանում որևէ մասնակցություն ունենալ այդ պատերազմին՝ գտնելով, որ դա միջարաբական պատերազմ է և իրենց չի վերաբերում: Ընդհանուր առմամբ, բնակչության մեջ տիրապետող էր այն մտայ-

նությունը, թե ինչու Մավրիտանիան պետք է իր սահմանափակ նյութական, տնտեսական, ֆինանսական, և մարդկային ռեսուրսները «ծախսի անմարդաբնակ և արժեքից զուրկ անապատների վրա»:

Մավրիտանիայի դրությունը ծանրանում էր նաև նրանով, որ նա միայնակ, իր սեփական ուժերով չէր կարող հաղթանակի հասնել: Այդ պատճառով նա համաձայնվեց, որ մարոկկոյական զորքերը տեղակայվեն Մավրիտանիայում: Դա անհասկանալի և անընդունելի էր մավրիտանացիների համար, որոնք լավ էին հիշում, որ Մարոկկոն ոչ վաղ անցյալում հավակնություններ ուներ Մավրիտանիայի նկատմամբ և ձգտում էր այն մտցնել «Մեծ Մարոկկոյի» կազմի մեջ:

Մավրիտանական կառավարությունը ստիպված ռազմական օգնություն խնդրեց նաև Ֆրանսիայից: Վերջինս Մավրիտանիայում գտնվող ֆրանսիական բնակչության անվտանգությունն ապահովելու պատրվակով ռազմական, առաջին հերթին՝ ռազմաօդային օժանդակություն ցույց տվեց Մավրիտանիային: Չնայած այդ ամենին՝ չէր հաջողվում ընկճել ՊՕԼԻՍԱՐԻՕ–յին և հասնել հաղթանակի: Ընդհակառակը, արևմտասահարական բավականին լավ զինված և մարտնչող պարտիզանական ուժերը նույնիսկ սպառնում էին Նուակշոտին: Նրանք 1976 թ. երկու անգամ գրոհեցին մայրաքաղաքի վրա և հրթիռային հարվածներ հասցրեցին նրան:

Հարկ է նշել, որ ՊՕԼԻՍԱՐԻՕ–ին պաշտպանում և ռազմական օգնություն էր ցույց տալիս Ալժիրը: Դա հանգեցրեց ալժիրա–մավրիտանական հարաբերությունների կտրուկ վատթարացմանը: Իսկ Մավրիտանիային օժանդակում և ֆինանսական օգնություն էին ցույց տալիս Սաուդյան Արաբիան, Աբու Դաբին և Քուվեյթը, որոնք ցանկանում էին Մավրիտանիայի միջոցով զսպել հեղափոխական գաղափարներով զինված ՊՕԼԻՍԱՐԻՕ–ին. Սաուդյան Արաբիայի կողմից Մավրիտանիային 1976–1978 թթ տրամադրված օգնությունը երկու անգամ գերազանցում էր Մավրիտանիայի պետական բյուջեն:

Պրեզիդենտ Դադահը, որը 1976 թ. նորից վերընտրվել էր պրեզիդենտի պաշտոնում, հասկանում էր, որ ինքը հայտնվել է եթե ոչ ծուղակում, ապա անհուսալի դրության մեջ, և ելք էր որոնում ստեղծված ծանր իրադրությունից: 1977 թ. նա վերակազմավորեց կառավարությունը, իսկ 1978 թ.՝ նաև վարչական ապարատը: Բայց այդ քայլերը ոչնչով չկարողացան բարելավել բնակչության ծանր դրությունը և լիցքաթափ անել

լարված ներքաղաքական մթնոլորտը: Փոփոխություններ տեղի չունեցան նաև պատերազմի դաշտում:

Դադաիի դրությունն ավելի էր ծանրանում այն պատճառով, որ նա չէր վստահում զինվորականներին՝ նրանց մշտապես կասկածելով պետական հեղաշրջում կազմակերպելու մտադրությունների մեջ: Եվ երկրի պրեզիդենտը հայտնվեց քաղաքական մեկուսացման մեջ:

Դադաիը ստեղծված պայմաններում, երբ այլընտրանք չուներ, հարկադրված էր դիմել զինվորականների օգնությանը: 1978 թ. փետրվարին նա գնդապետ Մուստաֆա Ուլդ Սալիհին նշանակեց բանակի հրամանատար: Նա անհայտ մարդ չէր Մավրիտանիայի քաղաքական և զինվորական շրջանակներում, և նրա հարաբերությունները Դադաիի հետ հարթ չեն եղել: Դեռևս 1960 թ. Դադաիը Սալիհին շնորհազրկել էր ֆրանսիացիների հետ ունեցած կապերի համար և նրան թողել էր սպայական պահեստային կորպուսում: Սակայն 1977 թ նա կրկին վերադառնում է ակտիվ ծառայության և նշանակվում երրորդ զինվորական շրջանի հրամանատար Ատարում: Այդուհանդերձ, նրանց հարաբերությունները մնում էին սառը, անգամ լարված: Եվ այդ պայմաններում Մուստաֆա Սալիհին բանակի հրամանատարությունը հանձնելը խոսում էր այն ծանր դրության մասին, որի մեջ հայտնվել էր Դադահն իր ներքին քաղաքականության և Արևմտյան Սահարայում անհաջող պատերազմի հետևանքով:

1978 թ. հուլիսի 10–ին Մավրիտանիայում տեղի ունեցավ զինվորական պետական հեղաշրջում, որն իրագործեց մավրիտանական բանակի հրամանատար գնդապետ Մուստաֆա Ուլդ Սալիհը: Նրա զինակիցները եղան երիտասարդ սպաները, որոնց ենթակա զորքերը պաշտպան կանգնեցին գնդապետին: Հեղաշրջման ժամանակ ոչ մի զոհ չեղավ, այդ պատճառով էլ նա Մավրիտանիայի նորագույն պատմության մեջ մտել է որպես անարյուն հեղաշրջում: Պրեզիդենտ Դադահը, որն ավելի քան 18 տարի իր ձեռքում էր պահում Մավրիտանիայի ղեկը, ձերբակալվեց և բանտ նետվեց[9]: Դադահի վարչակարգը դադարեց գոյություն ունենալուց:

9 Նա բանտից ազատվեց միայն 1979 թ օգոստոսին՝ ֆրանսիական կառավարության ճնշման ներքո, և աքսորվեց Ֆրանսիա:

V. ՄԱՎՐԻՏԱՆԻԱՆ XX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ (1978–2005 թթ.)

1. Պետական հեղաշրջումների շարքը և իշխանության անցումը զինվորականների ձեռքը (1978–1984 թթ.)

1978 թ. հուլիսյան հեղաշրջումից և Դադահի տապալումից հետո Մավրիտանիան թևակոխեց քաղաքական անկայունության փուլ, որի ամենաբնորոշ գիծը պետական հեղաշրջումների և հեղաշրջումների փորձերի առատությունն էր: 1978–1984 թթ. Մավրիտանիայում կատարվեցին հինգ պետական հեղաշրջում և պետական հեղաշրջումների մի քանի փորձ, և այդ բոլորը մավրիտանական զինվորականների կողմից:

Տապալելով և ձերբակալելով Դադահիին՝ իշխանությունը գրաված զինվորականները լուծարեցին պրեզիդենտական պետական կառավարման բոլոր մարմինները, նախ և առաջ Ազգային ժողովը, ինչպես նաև Մավրիտանական ժողովրդական կուսակցությունը. Ստեղծվեց կառավարման մի նոր մարմին, որը կոչվեց Ազգային վերածննդի զինվորական կոմիտե (ԱՎԶԿ), որը նախագահի կարգավիճակով գլխավորեց Մուստաֆա Ուլդ Սալիհը: Կոմիտեն բաղկացած էր 20 հոգուց և իր ձեռքում կենտրոնացրեց ողջ իշխանությունը ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդիր: Դա կենտրոնամետ, չափավոր մարմին էր, որը, սակայն, չէր թաքցնում իր ֆրանսամետ և մարոկկոյամետ լինելու հանգամանքը:

ԱՎԶԿ–ի առջև կանգնած էր երկու գլխավոր խնդիր՝ դուրս գալ Արևմտյան Սահարայի համար մղվող պատերազմից և լուծել երկրի սոցիալ–տնտեսական ծանրագույն խնդիրները, որոնք սերտորեն փոխկապակցված էին: Սակայն դրանք հեշտությամբ լուծվող խնդիրներ չէին և դարձան մեկը մյուսին հաջորդող պետական հեղաշրջումների գլխավոր պատճառները:

Հանրահայտ է, որ ուզածդ պատերազմից դուրս գալը դյուրին խնդիր չէ: Դրա համար անհրաժեշտ են ներքին և արտաքին բարենպաստ պայմաններ: Մավրիտանիայի պարագայում դրությունը բարդանում էր այն պատճառով, որ թե՛ երկրի ներսում և թե՛ երկրից դուրս կային ուժեր, որոնք ամեն կերպ արգելակում էին նրա հեռանալը Արևմտյան Սահարայից:

Պատերազմից դուրս գալու կապակցությամբ երկրի ներսում ձևավորվել էր երեք տեսակետ: Մի տեսակետն այն էր, որ Մավրիտանի-

ան չի կարող հենց այնպես հեռանալ, և գտնում էր, որ Արևմտյան Սահարայի մավրիտանական հատվածում, որը կազմում էր երկրի մեկ երրորդը, պետք հանրաքվե անցկացնել պատերազմից դուրս գալու և Արևմտյան Սահարայից Մավրիտանիայի հեռանալու հարցի վերաբերյալ: Երկրորդ տեսակետի կողմնակիցներն առաջարկում էին Մարոկկոյի հետ համատեղ մշակել Արևմտյան Սահարայի հարցի կարգավորման և այնտեղ խաղաղություն հաստատելու պլան: Իսկ երրորդ տեսակետն արտահայտում էր մավրիտանական այն ուժերի դիրքորոշումը, որոնք գտնում էին, որ պետք է ուղղակի կապեր հաստատել ՊՕԼԻՍԱՐԻՕ–ի հետ և այդ ուղիով հասնել կոնֆլիկտի կարգավորմանը:

Առաջին տեսակետին, այսինքն՝ հանրաքվե անցկացնելուն, դեմ էր ՊՕԼԻՍԱՐԻՕ–ն, և դա հասկանալի է, քանի որ նա պայքարում էր Արևմտյան Սահարայի անկախության համար: Վերապահ լինելով նաև երկրորդ տեսակետի նկատմամբ՝ նա կողմնակից էր երրորդ տեսակետին՝ ուղղակի բանակցություններ Մավրիտանիայի և ՊՕԼԻՍԱՐԻՕ–ի ղեկավարության միջև:

ՊՕԼԻՍԱՐԻՕ–ի ղեկավարությունը՝ Ազատագրության ազգային ճակատը, անսպասելիորեն դիմեց մի քայլի, որը կոչված էր հեշտացնել մավրիտանական նոր ղեկավարության համար ճիշտ որոշում ընդունելը: Պետական հեղաշրջումից երկու օր անց՝ 1978 թ. հուլիսի 12–ին, Ազգային ազատագրության ճակատը միակողմանիորեն դադարեցրեց պատերազմական գործողությունները մավրիտանական ռազմաճակատում՝ վստահ լինելով, որ Մուստաֆա Ուլդ Սալիհի գլխավորած Ազգային վերածննդի զինվորական կոմիտեն ըստ արժանվույն կգնահատի նրա այդ քայլը:

ԱՎԶԿ–ն հայտնվեց ծանր դրության մեջ ոչ այնքան ներքին, որքան արտաքին գործոնի, արտաքին ուժերի դիրքորոշման պատճառով: Արևմտյան Սահարայից Մավրիտանիայի հեռանալուն դեմ էին Մարոկկոն, Ֆրանսիան և Սենեգալը, որոնք բացահայտ ճնշում էին գործադրում նրա վրա՝ սպառնալով նրան չդիմել նման քայլի, այսինքն՝ պատերազմից դուրս չգալ: Իսկ եթե Մավրիտանիան դուրս չգար պատերազմից և չհեռանար Արևմտյան Սահարայից, ապա դա կսրեր նրա հարաբերությունները ոչ միայն ՊՕԼԻՍԱՐԻՕ–ի, այլև Ալժիրի հետ, որն ակտիվորեն քաղաքական և ռազմական օգնություն էր ցույց տալիս ՊՕԼԻՍԱՐԻՕ–ին: Ստեղծված պայմաններում ԱՎԶԿ–ն, նրա ղեկավար Սալիհը և վերջինիս համախոհները որդեգրեցին խուսանավելու քաղա-

քականությունը, որը որոշ սրամիտներ անվանեցին «պատերազմից դուրս գալու ցանկություն՝ առանց հաշտության պայմանագիր կնքելու»: Նման քաղաքականությունը առաջացրեց ոչ միայն վերոնշյալ երեք երկրների և ՊՕԼԻՍԱՐԻՕ–ի դժգոհությունը, այլև խոր տարաձայնություններ առաջացրեց ԱՎՋԿ–ի շարքերում:

Դրությունը լարված էր մնում նաև սոցիալ–տնտեսական հարաբերությունների ոլորտում: Արդեն նշվել է այն ծանր հետևանքների մասին, որ պատերազմն ունեցավ Սավրիտանիայի և նրա բնակչության տնտեսական դրության վրա: Նոր ղեկավարությունը ընդունեց Սավրիտանիայի տնտեսության վերականգնման ծրագիր, բայց դա որևէ շոշափելի արդյունքների չհասցրեց: Եվ ոչ միայն այն պատճառով, որ դա իրատեսական նախադրյալների վրա չէր հիմնված, այլ նաև այն պատճառով, որ Մուստաֆա Ուլդ Սալիհին և նրա գլխավորած կոմիտեին շատ ժամանակ չէր հատկացված իշխանության գլուխ մնալու համար:

1979 թ. ապրիլի 6–ին Սավրիտանիայում նոր պետական հեղաշրջում իրագործվեց, որը գլխավորեցին երկու գնդապետներ՝ Ահմադ Ուլդ Բուսեիֆը և Մուհամմադ Խունա Հայդալլահը: Նրանք ցրեցին Ազգային վերածննդի զինվորական կոմիտեն և նրա փոխարեն ստեղծեցին Ազգային փրկության զինվորական կոմիտե (ԱՓԶԿ), որը, ինչպես նրա նախորդը, ամբողջ իշխանությունը կենտրոնացրեց իր ձեռքում: Մայիս ամսին Ահմադ Ուլդ Բուեսիֆը ինքնաթիռի արկածից զոհվեց: Հայդալլահը զբաղեցրեց վարչապետի պաշտոնը, իսկ մեկ այլ գնդապետ՝ Մուհամմադ Լուլիճ, նշանակվեց Սավրիտանիայի պրեզիդենտ:

Սավրիտանիայի նոր ղեկավարության առաջնահերթ խնդիրը դարձյալ մնում էր պատերազմից դուրս գալը: Այդ հարցն ավելի հրատապ դարձավ այն բանից հետո, երբ ՊՕԼԻՍԱՐԻՕ–ի ղեկավարությունը, ծանոթացած մավրիտանական ղեկավարության ծգծգումների քաղաքականությունից, 1979 թ. հուլիսին հրաժարվեց կրակի դադարեցման իր որոշումից և հայտարարեց պատերազմական գործողությունները վերսկսելու իր մտադրության մասին: ԱՓԶԿ–ի ղեկավարությունը լավ էր հասկանում, թե ինչ է սպասում իրեն պատերազմը վերսկսելու դեպքում, մանավանդ այն պարագայում, երբ երկրի տնտեսությունը կրախի էր մատնված: Սթափ կերպով գնահատելով իրադրությունը՝ ԱՓԶԿ–ն 1979 թ. օգոստոսի 5–ին վերջապես հաշտության պայմանագիր ստորագրեց ՊՕԼԻՍԱՐԻՕ–ի հետ: Մավրիտանիան հրաժարվեց իր բոլոր պահանջներից և դուրս եկավ Արևմտյան Սահարայի գրաված տա-

րածքներից, որը կազմում էր այդ երկրի ընդհանուր տարածքների մեկ երրորդը: ՊՕԼԻՍԱՐԻՕ–ն իր հերթին հայտարարեց, որ որևէ պահանջ չունի Սավրիտանիայի նկատմամբ:

Այդ առնչությամբ ծառանում էր Մարոկկոյի հետ հարաբերությունների հարցը, քանի որ Սավրիտանիան նրա հետ կնքել էր համատեղ պաշտպանության համաձայնագիր: Մավրիտանիան չեղյալ հայտարարեց այդ համաձայնագիրը, որովհետև այն ուղղված էր Արևմտյան Սահարայի դեմ, և պահանջեց Մարոկկոյից զորքերը դուրս բերել Մավրիտանիայից, որոնք Մարոկկոն մտցրել էր պատերազմի ընթացքում՝ Մավրիտանիան ՊՕԼԻՍԱՐԻՕ–ի հարձակումներից պաշտպանելու համար: Միաժամանակ Սավրիտանիան դիվանագիտական հարաբերությունները վերականգնեց Ալժիրի հետ, որը պաշտպանում էր Արևմտյան Սահարային: Նշենք, որ օգոստոսի 5–ի պայմանագիրը կնքվեց Ալժիրում՝ նրա ակտիվ ջանքերի շնորհիվ:

Այսպիսով՝ մոտ երեք տարի տևած պատերազմը Մավրիտանիային ոչինչ չբերեց, բացի մարդկային զոհերից, տնտեսության քայքայումից, ներքաղաքական ապակայունացումից և մավրիտանական հասարակության երկպառակությունից: Հաշտության պայմանագրի ստորագրումը կենսական անհրաժեշտություն էր Մավրիտանիայի համար: ԱՓՋԿ–ի պատմական ծառայությունը կայանում է նրանում, որ նա երկիրն ազատեց անիմաստ, արկածախնդրական պատերազմի ծանր բեռից և նոր հնարավորություններ ստեղծեց նրա տնտեսական, սոցիալական, քաղաքական, կրթական և մշակութային զարգացման համար:

Այդ հնարավորությունների իրականացման համար անհրաժեշտ էր ներքին համախմբվածություն և միասնական քաղաքական կամքի դրսևորում, որը, ինչպես շուտով ակնհայտ դարձավ, բացակայում էր Մավրիտանիայում: Հայդալլահի կառավարության դեմ հենց սկզբից կարելի է ասել թշնամական դիրք գրավեց Մավրիտանիայի հարավի սնամորթ բնակչությունը: Հայդալլահը բնիկ Արևմտյան Սահարայից էր, սակայն սնամորթների կողմից ընկալվում էր հյուսիսցի արաբ: Նրա նկատմամբ անբարյացակամ դիրք գրավեցին նաև բոլոր մավրիտանական մարոկկոյամետ քաղաքական խմբավորումները, որոնք Հայդալլահին չէին ներում, որ նա հաշտության պայմանագիր էր կնքել ՊՕԼԻՍԱՐԻՕ–ի հետ, դուրս եկել պատերազմից և լքել Մարոկկոյին: Եվ Հայդալլահը դիմեց վճռական գործողությունների:

1980 թ. հունիսին նա, որ արդեն գնդապետի աստիճանից հասել էր գեներալ լեյտենանտի աստիճանի, կատարեց թվով երրորդ պետական հեղաշրջումը Մավրիտանիայում: Հայդալլահն իրեն հայտարարեց Մավրիտանիայի պրեզիդենտ և այդ պաշտոնից հեռացրեց Մուհամմադ Լուլիին, իսկ Ահմադ Սալամ Ուլդ Սիդիին՝ ԱՓՋԿ–ի նախագահի տեղակալի պաշտոնից: Նա վերածնեց կառավարությունը՝ նրանից վտարելով ինչպես մարոկկոյամետ խմբավորմանը պատկանող գործիչներին, այնպես էլ նրանց, ովքեր ՊՕԼԻՍԱՐԻՕ–ի հետևողական կողմնակիցներն ու պաշտպաններն էին: Նա սիրում էր ընդգծել, որ Արևմտյան Սահարայի կոնֆլիկտում ինքը գրավում է չեզոք դիրք:

Հայդալլահն իրագործեց նաև մի շարք այլ կարևոր միջոցառումներ, որոնց նպատակն էր ամրապնդել իր դիրքերը և ընդլայնել իր սոցիալական հենարանը: Մասնավորապես պետք է նշել Հայդալլահի որոշումը պաշտոնապես ստրկությունը վերացնելու մասին, թեև պետք է նշել, որ նախկինում ևս նման որոշումներ ընդունվել էին, բայց չէին կենսագործվում: Դիմելով այդ քայլին՝ Հայդալլահը ձգտում էր բարելավել իր հարաբերությունները երկրի սևամորթ բնակչության հետ, որոնք ստրկության հիմնական մատակարարողներն էին: Նա ձեռնարկեց նաև որոշ քայլեր երկրի ազատականացման ուղղությամբ: Կազմվեց նոր սահմանադրության նախագիծ, որը նախատեսում էր քաղաքական ազատություններ, բազմակուսակցականություն և դեմոկրատական ազատություններ՝ նպատակ ունենալով Մավրիտանիան վերածել դեմոկրատական պետության: Այդ խնդիրների իրագործման համար 1980 թ. դեկտեմբերին կազմվեց քաղաքացիական կառավարություն, և վարչապետի պաշտոնը հանձնարարվեց Ահմադ Ուլդ Բնեյջարային: Դա առաջին քաղաքացիական կառավարությունն էր այն ժամանակվանից ի վեր, երբ զինվորականները եկան իշխանության գլուխ Մավրիտանիայում: Իսկ պահպանողական և իսլամիստական տարրերին հանգստացնելու և նրանց աջակցությունը ստանալու համար Հայդալլահի նախաձեռնությամբ և ԱՓՋԿ–ի որոշումով շարիաթը հայտարարվեց Մավրիտանիայի օրենսդրության հիմք և գործադրվեց բոլոր բնագավառներում՝ բացառությամբ բանկային և ապահովագրական համակարգի:

Հայդալլահի վարչակարգն իր առջև ծառացած խնդիրների մեջ ամենակարևորներից մեկը համարեց սոցիալ–տնտեսական հարցերի լուծումը: 1979 թվականից, երբ Հայդալլահը և նրա կողմնակիցները վերցրեցին իշխանությունը, մինչև 1981 թ., երբ պետական հեղաշրջման

փորձ կատարվեց, կառավարությունն իր տնտեսական քաղաքականության մեջ առաջնայինը համարեց խնայողության ռեժիմի հաստատումը, պետական և վարչական ապարատի աշխատանքների բարելավումը, պայքարը կաշառակերության, ունեցվածքի կողոպուտի, պետական միջոցների վատնման դեմ և այլն: ԱՓՋԿ–ն որոշում ընդունեց ագրարային ռեֆորմ կիրառելու մասին, որի հիմքում դրվեց «Ռեֆորմ՝ ի շահ նրանց, ովքեր աշխատում են հողի վրա» սկզբունքը:

Բայց նախագծված քաղաքական և տնտեսական փոփոխությունների իրագործումն ընդհատվեց, իսկ այնուհետև ընդհանրապես հնարավոր չեղավ կենսագործել: 1981 թ. մարտի 18–ին Մավրիտանիայում պետական հեղաշրջման փորձ կատարվեց, որի իրագործողն էին Անկախություն կուսակցությունը և նրա թիկունքում կանգնած մավրիտանական նախկինները, որոնք զրկվել էին իշխանությունից և ապաստան գտել արտասահմանյան տարբեր երկրներում. Նրանք դժգոհ էին Հայդալլահի նախագծված դեմոկրատական փոփոխություններից, ինչպես նաև այն բանից, որ Մավրիտանիան դուրս էր եկել Արևմտյան Սահարայի պատերազմից, լքել Մարոկկոյին և լավ հարաբերություններ հաստատել Ալժիրի, Լիբիայի և Իրաքի հետ: Խոռվարարները լուծարված Ազգային վերածննդի զինվորական կոմիտեի փոխնախագահ Սիդիի և Մավրիտանիայի ռազմաօդային ուժերի նախկին հրամանատար Աբդելկադրի գլխավորությամբ փորձեցին տապալել Հայդալլահի կառավարությունը, որը ձախողվեց: Նրանք ձերբակալվեցին և մահապատժի ենթարկվեցին:

Թեև պետական հեղաշրջման այդ փորձը ձախողվեց, այդուհանդերձ, անհետևանք չանցավ: Հայդալլահը հրաժարվեց Մավրիտանիայի քաղաքական ազատականացման քաղաքականությունից և որդեգրեց ավելի կոշտ քաղաքականություն: 1981 թ. ապրիլին լուծարվեց քաղաքացիական կառավարությունը, և ձևավորվեց վեց զինվորականներից բաղկացած նոր կառավարություն, որի ղեկավար ԱՓՋԿ–ն նշանակեց գնդապետ Մաավիյա Ուլդ Սիդի Ահմադ Թայային:

1982 թ. փետրվարին տեղի ունեցավ Հայդալլահին տապալելու նս մեկ փորձ: Այս անգամ հեղաշրջումը գլխավորում էին Մուստաֆա Սալիհը, որը գլխավորել էր 1978 թ. պետական հեղաշրջումը, տապալել պրեզիդենտ Դադահին, և նախկին վարչապետ Ահմադ Բնեյջարան: Այդ հեղաշրջումը նույնպես հաջողություն չունեցավ:

Հայդալլահը հասկանում էր, որ այդ հեղաշրջումների փորձերն անհնար է կանխել միայն զենքի ուժով և մահապատիժներով, և որ անհ-

րաժեշտ են նաև այլ միջոցներ: Եվ 1982–1983 թթ. նա որդեգրեց բնակչության քաղաքական դաստիարակության քաղաքականությունը: Մավրիտանիայում մտցվեցին այսպես կոչված Մասսաների դաստիրակության կառույցներ: Դա ընդհանրապես նորություն էր Մավրիտանիայի քաղաքական պրակտիկայում: Այդ կառույցների նպատակն էր բարձրացնել մավրիտանացիների քաղաքական, կրթական և կուլտուրական մակարդակը, նրանց լայնորեն ներգրավել հասարակական կյանքի մեջ, ներարկել ազգային և հայրենասիրական գաղափարախոսություն և այլն: Հայդալլահը հույս ուներ, որ դա կծառայի իրեն որպես քաղաքացիական հենարան: Նա միաժամանակ այն հույսն էր փայփայում, որ դրա շնորհիվ իրեն կհաջողվի վերացնել ռազմական վարչակարգը և այն փոխարինել քաղաքացիական վարչակարգով, իսկ ինքը դառնար քաղաքացիական և ընտրովի պրեզիդենտ.

Վերոնշյալ կառույցի ստեղծման հետ միասին Հայդալլահը շարունակեց ազգային համաձայնության իր նախկին քաղաքականությունը: Մի շարք քաղաքական գործիչներ, որոնք բանտերում էին հայտնվել Դադահին տապալելուց հետո, ազատ արձակվեցին:

Հայդալլահը դիմեց նաև մի համարձակ քայլի: 1984 թ. նա պաշտոնապես ճանաչեց Արևմտյան Սահարայի տարածքում կազմավորված Արաբական Սահարայի Դեմոկրատական Հանրապետությունը: Դա առաջացրեց Մարոկկոյի և նրան համակիր ուժերի դժգոհությունը: Մարոկկոն իր զորքերը կենտրոնացրեց Մավրիտանիայի սահմանի մոտ, որը լուրջ սպառնալիք էր նրան: Հայդալլահի քայլից իրենց դժգոհությունը արտահայտեցին նաև Ազգային փրկության զինվորական կոմիտեի մի շարք անդամներ: Նրա գլխին կանգնեց քաղաքական մեկուսացման վտանգը: Դրությունն ավելի լրջացավ 1983 թ. սկսված ծանր երաշտի պատճառով, որի հետևանքով խիստ կրճատվեցին հացահատիկային բույսերի ցանքատարածությունները, շեշտակի ընկավ բերքատվությունը, մեծ չափեր ընդունեց անասունների գլխաքանակի անկումը. Շատ շրջաններ կանգնեցին սովի վտանգի առջև: Սովահար գյուղացիները, լքելով իրենց գյուղական բնակավայրերը, ներխուժեցին քաղաքները, որոնք պատրաստ չէին նրանց ընդունելու համար: Մավրիտանիան կրկին հայտնվեց քաղաքական և տնտեսական ճգնաժամի մեջ: Իսկ այդ երկրում նման դեպքերումը ելքը սովորաբար գտնում են պետական հեղաշրջման և կառավարող ռեժիմի տապալման մեջ:

Հնարավոր հեղաշրջումը կանխելու համար Հայդալլահը դիմեց հակաքայլերի: Նա նորից վերակազմավորեց կառավարությունը և երկրի ընդհանուր ղեկավարությունը: 1984 թ մարտին նա ինքն իրեն նշանակեց երկրի վարչապետ՝ միաժամանակ զբաղեցնելով պաշտպանության նախարարի պաշտոնը: Նա այդ պաշտոններից ազատեց Թայային՝ նրան նշանակելով բանակի շտաբի պետի պաշտոնում: Հայդալլահի այդ քայլը, որը նախօրոք համաձայնեցված չէր ԱՓՋԿ–ի անդամների հետ, առաջացրեց վերջիններիս զայրույթը, որոնք դրա մեջ տեսան ԱՓՋԿ–ի՝ որպես կոլեկտիվ մարմնի դերի նվաստացում և նրա՝ Հայդալլահի անձնական իշխանության հաստատում: Նրանց մոտ հասունանում էր Հայդալլահից ազատվելու որոշումը:

1984 թ. դեկտեմբերի 12–ին Թայայի գլխավորությամբ տեղի ունեցավ հերթական՝ անկախության նվաճումից հետո չորրորդ պետական հեղաշրջումը Մավրիտանիայում: Հեղաշրջման պահը շատ հարմար էր ընտրված՝ Հայդալլահը գտնվում էր երկրից դուրս՝ Բուրունդիում, որտեղ ընթանում էր ֆրանսախոս աֆրիկյան երկրների և Ֆրանսիայի պետության ղեկավարների համաժողովը: Հայդալլահը տապալվեց և զրկվեց բոլոր իշխանություններից: Թայան ինքն իրեն հայտարարեց պրեզիդենտ և դարձավ նաև Ազգային փրկության զինվորական կոմիտեի նախագահ:

2. Մավրիտանիան Մաավիյա Ուլդ Սիդի Ահմադ Թայայի կառավարման տարիներին (1985–2005 թթ.)

Մավրիտանիայի նոր իշխանությունները, ինչպես նրանց բոլոր նախորդները, հանդես եկան մեծ խոստումներով: Թայան և նրա զինակիցները հայտարարեցին իրենց մտադրությունների մասին՝ վերականգնել և զարգացնել երկրի քայքայված տնտեսությունը, բարելավել բնակչության նյութական դրությունը, հաշվի առնել Մավրիտանիայի բոլոր ռասայական և էթնիկական խմբերի շահերը, հասնել ներքաղաքական դրության կայունացմանը: Նրա խոստումների մեջ նշանակալի տեղ էին գրավում նաև Մավրիտանիայի քաղաքական կյանքի դեմոկրատացման, քաղաքական ազատությունների հաստատման, կուսակցությունների լեգալացման, սահմանադրական կյանքին և քաղաքացիական կառավարմանը վերադառնալու հարցերը:

Բայց 1984 թ. իշխանությունը գրաված նոր ուժերը, ինչպես և նրանց բոլոր նախորդները, իրենց խոստումների միայն մի չնչին մասը կարողացան իրագործել:

Առաջնահերթ խնդիր համարվեցին տնտեսական ոլորտի զարգացումը, տնտեսության վերականգնումը և առողջացումը՝ շեշտը դնելով գյուղատնտեսության և ծկնարդյունաբերության առաջնահերթ զարգացման վրա: Կարևորվում էին նաև հանքարդյունաբերության, առաջին հերթին երկաթահանքի արդյունահանման զարգացումը, տնտեսական խնայողության ռեժիմի պահպանումը և խստացումը, պայքարը կոռուպցիայի դեմ և այլ անհրաժեշտ ֆինանսական ու տնտեսական քայլերի կիրառումը: Այդ խնդիրների իրականացումը դրվեց 1985–1988 թթ. տնտեսական զարգացման քառամյա ծրագրի հիմքում, որի ստրատեգիական նպատակը հայտարարվեց «մոտ ապագայում կայունացնել տնտեսությունը և պայմաններ նախապատրաստել նրա ապագա աճի համար»:

Սույն ծրագրի իրականացումը պահանջում էր լրացուցիչ ֆինանսական միջոցներ, որոնցից զուրկ էր Մավրիտանիան: Կառավարությունը ստիպված էր վարկեր ստանալու խնդրանքով դիմել Համաշխարհային բանկին և Արժույթի միջազգային ֆոնդին: Այդ խնդրանքը բավարարվեց, բայց դրա հետևանքով մեծացան Մավրիտանիայի արտաքին պարտքերը և համապատասխանաբար դրանց դիմաց վճարվող տոկոսները:

Թայան հասկանում էր, որ հնարավոր չէր ամեն ինչ թողնել ապագային, և ստեղծված ծանր դրությունը պահանջում էր անհապաղ ինչ–որ միջոցներ ձեռնարկել, հակառակ պարագային նոր իշխանությունների դիրքերը մեծապես կթուլանային: Նոր կառավարությունը բարձրացրեց տնտեսության մի շարք ճյուղերի աշխատողների և ծառայողների աշխատավարձը՝ առաջին հերթին նրանց, ովքեր համարվում էին ցածր վարձատրվողներ. Բանտերից ազատ արձակվեցին բոլոր այն քաղբանտարկյալները, ովքեր 1980–1984 թթ. ձերբակալվել էին նախորդ վարչակարգի կողմից: Ավելին չարվեց, և ժողովրդի տնտեսական դրության մեջ նշանակալի բեկում տեղի չունեցավ:

Ընդհակառակը, երկրի տնտեսությունը նոր հարվածներ ստացավ երաշտի պատճառով, որը համակել էր Մավրիտանիան 1980–ական թվականներին: Իսկ բնակչության ճնշող մեծամասնությունն իր ապրուստը հայթայթում էր գյուղատնտեսությունից և անասնապահությունից, ուստի այդ ոլորտներում տեղի ունեցող ամեն մի բացասական երևույթ

անմիջապես ազդում էր բնակչության տնտեսական վիճակի վրա: Մավրիտանիայի տնտեսությանը ծանր հարված հասցրեց նաև երկաթի համաշխարհային գների անկումը: Երկաթի հանքաքարի արտահանումը կազմում էր Մավրիտանիայի արտահանության մոտ 50%–ը:

1980–ականներին կրկին սրվեցին ռասայական հարաբերությունները. Մավրիտանիայի աֆրիկացիների ազատագրության ուժեր կազմակերպությունը 1985 թ. հրապարակեց ճնշված սևամորթ մավրիտանացիների մանիֆեստը, որը դատապարտում էր սպիտակամորթ մավրիտանացիներին երկրի սևամորթներին սիստեմատիկաբար ճնշելու համար: Թայայի կառավարության պատասխանը եղավ բռնությունների կիրառումն այդ կազմակերպության նկատմամբ, որի անդամներից 30–ը ձերբակալվեցին: Լարվածությունը նոր թափ առավ մայրաքաղաք Նուակշոտում, որի ժամանակ երկու կողմերից էլ տեղի ունեցան սպանություններ, իսկ իշխանությունները մոտ 500 սևամորթ աֆրիկացի սպաների բանակից վտարեցին:

Եթե մինչ այդ ռասայական լարվածությունը դրսևորվում էր Մավրիտանիայի ներսում, ապա 1989 թ. ապրիլին այն ընդգրկեց Մավրիտանիայի և Սենեգալի միջպետական հարաբերությունները: Սենեգալա–մավրիտանական պետական սահմանի մոտ տեղի ունեցան բախումներ, որին հաջորդեց սենեգալցիների սպանությունը մավրիտանական սահմանապահ ուժերի կողմից: Ի պատասխան դրա՝ սենեգալցիները իրենց երկրում բռնություններ կիրառեցին մավրիտանացիների նկատմամբ և սպանեցին մի քանի տասնյակ մավրիտանացիների: Դրան հաջորդեց 200 սենեգալցիների սպանությունը Նուակշոտում, ապա 100 հազար սենեգալցիների և 50 հազար սևամորթ մավրիտանացիների արտաքսումը Մավրիտանիայից: Իսկ Սենեգալը երկրից արտաքսեց 240 հազար մավրիտանացիների:

Մեծ դժվարությամբ հաջողվեց դադարեցնել միջռասայական բախումները և վերադառնալ բնականոն կյանքի:

Այդ բոլոր իրադարձությունները վկայում էին, որ երկիրը լուրջ վերափոխումների կարիք ուներ, և զինվորական կառավարությունն ի վիճակի չէր լուծել Մավրիտանիայի առջև կանգնած տնտեսական, ներքաղաքական և արտաքին քաղաքական խնդիրները: Ավելի համառորեն էին հնչում դեմոկրատացման և ազատությունների պահանջները:

Զինվորականները տեղի տվեցին, և 1991 թ. հուլիսի 20–ին Մավրիտանիայում տեղի ունեցավ հանրաքվե նոր սահմանադրության վե-

րաբերյալ, որն արժանացավ ժողովրդի ճնշող մեծամասնության հավանությանը: Նոր սահմանադրության առանձին դրույթների վերաբերյալ իրենց դժգոհությունը հայտնեցին իսլամականները և սնամորթները, բայց դա չազդեց հանրաքվեի արդյունքների վրա, և սահմանադրությունը մտավ ուժի մեջ:

1991 թ. լեգալացվեցին քաղաքական կուսակցությունները, որոնց գործունեությունն արգելված էր զինվորական իշխանությունների կողմից: 1992 թ. ապրիլին տեղի ունեցան պրեզիդենտական ընտրություններ, որոնց ժամանակ հաղթեց Մաավիյա Ուլդ Սիդի Ահմադ Թայան: Զինվորական կոմիտեն, որը 1978 թվականից ղեկավարում էր Մավրիտանիան, իր լիազորությունները վայր դրեց, և Մավրիտանիայում հաստատվեց սահմանադրական քաղաքացիական վարչակարգ՝ պրեզիդենտի գլխավորությամբ: Իրականացվեց տեղական կառավարական մարմինների որոշ ապակենտրոնացում, լեգալ գործունեության իրավունք ստացավ 16 կուսակցություն, այդ թվում և ընդդիմադիր կուսակցություններ, որոնք 1994 թ. մասնակցեցին տեղական, իսկ 2004 թ.՝ սենատի ընտրություններին:

1991 թ. սահմանադրությամբ Մավրիտանիան պրեզիդենտական կառավարման համակարգ ունեցող իսլամական հանրապետություն է: Պետության ղեկավարը պրեզիդենտն է, որն ընտրվում է վեց տարի ժամանակով, օժտված է գործադիր և օրենսդիր լիազորություններով, հանդիսանում է երկրի զինված ուժերի գլխավոր հրամանատարը: Նա է նշանակում վարչապետին:

Օրենսդիր իշխանությունն իրականացնում է պառլամենտը, որը բաղկացած է երկու պալատից՝ Սենատից՝ Մաջլիս ալ–Շույուխ, և Ազգային ժողովից՝ Մաջլիս ալ–Վաթանի: Սենատը կազմված է 56 սենատորներից, որոնց ընտրում են մունիցիպալ ղեկավարները վեց տարի ժամանակով, իսկ Ազգային ժողովը՝ 81 դեպուտատներից, որոնք ընտրվում են ժողովրդի կողմից հինգ տարի ժամանակով:

Նոր սահմանադրության ընդունումը, զինվորական իշխանության վերացումը և վերադարձը սահմանադրական և քաղաքացիական կառավարման համակարգին, քաղաքական կուսակցությունների գործունեության ազատությունը կարևոր իրադարձություններ էին, որոնք զգալիորեն աշխուժացրին քաղաքական կյանքը Մավրիտանիայում:

Աշխուժացան նաև ընդդիմադիր ուժերը, որոնք 2003 թ. հունիսի 8–ին պետական հեղաշրջման նոր փորձ կատարեցին: Դրանք այն ու-

ժերն էին, որոնք դժգոհ էին Թայայից, որ նա 2003 թ. ապրիլին ԱՄՆ–ի և նրա կողմից գլխավորած երկրների Իրաք ներխուժման նախօրյակին ձերբակալել էր Մավրիտանիայի իսլամական ղեկավարներին, իսկ մինչ այդ պաշտոնապես ճանաչել էր Իսրայելը՝ Եգիպտոսից և Հորդանանից հետո դառնալով երրորդ արաբական պետությունը, որը դիմում էր այդ քայլին: Մի ամբողջ օր մայրաքաղաք Նուակշոտում մարտեր էին ընթանում: Թայան գյուղական վայրերից օգնության հասած ուժերի աջակցությամբ կարողացավ ճնշել խռովությունը և վերականգնել իր իշխանությունը:

2003 թ. նոյեմբերի 7–ին կայացան պրեզիդենտական ընտրությունները, որոնք երրորդն էին 1991 թ. նոր սահմանադրության ընդունումից հետո: Ընտրություններն անցան բազմակուսակցականության հիմքի վրա. մասնակցում էին 12 կուսակցություններ: Կարևոր է նշել նաև, որ կիրառվեց մրցութային սկզբունքը: Պրեզիդենտի տեղի համար. բացի գործող պրեզիդենտ Թայայից, մասնակցեցին վեց թեկնածուներ, այդ թվում՝ առաջին կին թեկնածուն, որը հարատին էր, այսինքն՝ նախկին ստրուկների ընտանիքից: 2003 թ. պրեզիդենտական ընտրություններին մասնակցեց նաև Մավրիտանիայի նախկին ղեկավար Մուհամմադ Խունա Ուլդ Հայդալլահը: Հաղթեց Թայան և երրորդ անգամ անընդմեջ դարձավ պրեզիդենտ:

Թայայի կառավարման տարիներին, ինչպես նշվեց, որոշ տեղաշարժեր եղան սոցիալ–տնտեսական ոլորտում, թեև դրանք բեկում առաջ չբերեցին: Դրությունն այդ ոլորտում շարունակում է մնալ ծանր: Դրա մասին են խոսում հետևյալ պաշտոնական տվյալները: Մավրիտանիայում 2001 թ. տվյալներով աշխատուժը կազմում էր 786 հազար մարդ, որից միայն 10%–ն էր զբաղված արդյունաբերության մեջ, իսկ սպասարկության և գյուղատնտեսության ոլորտներում զբաղված էր համապատասխանաբար 40 և 50 տոկոսը. Գործազրկությունը 2004 թ. տվյալներով կազմում էր աշխատուժի 20%–ը, իսկ բնակչության 40%–ը այդ նույն թվականի տվյալներով գտնվում էր աղքատության շեմից ցածր: Եվ պատահական չէր, որ պարբերաբար լինում էին դժգոհության դրսևորումներ, որոնք երբեմն ընդունում էին շատ սուր բնույթ: Այդպես պատահեց 1995 թ. հունվարի 21–ին, երբ Նուակշոտում սկսվեցին այսպես կոչված «հացի բունտերը»: Երեք օր անընդհատ քաղցած մարդիկ թալանում էին խանութները, հրկիզում մեքենաները, կողոպտում պարենի պահեստները և ցուցադրում իրենց անհնազանդությունը երկրի իշխանություննե-

րին, որոնք չէին կարողանում իր բնակչությանն ապահովել հանապազօրյա հացով: Բուշտի մասնակիցներից շատերը ձերբակալվեցին և բանտ նետվեցին, այդ թվում և քաղաքական կուսակցությունների մի քանի ղեկավարներ, որոնց մեջ էր նաև Ահմադ Ուլդ Դադահը: Նման հուզումներ լինում էին նաև հետագա տարիներին, որոնցից հիշատակության են արժանի 2002 թ. դեպքերը, երբ երաշտը կրկին մավրիտանացիներին կանգնեցրեց սովի շեմին:

Նման իրադրությունը պարարտ հող էր հանդիսանում ընդդիմադիր ուժերի համար, որոնք գործում էին ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում, մավրիտանական քաղաքական վտարանդիության շրջաններում: Այդ ուժերը յուրաքանչյուր հարմար պահի փորձում էին պետական հեղաշրջում կատարել և տապալել գոյություն ունեցող կառավարությունը: Իսկ մավրիտանական ընդդիմադիր քաղաքական ուժերն այդ բնագավառում մեծ փորձ ունեին կուտակած:

3. 2005 թ. պետական հեղաշրջումը

2005 թ օգոստոսի 3–ի առավոտյան մավրիտանական բանակի զորամիավորումները և պրեզիդենտական գվարդիան իրենց վերահսկողությունը հաստատեցին մայրաքաղաքի՝ Նուակշոտի բոլոր կարևոր ստրատեգիական նշանակություն ունեցող օբյեկտների վրա: Շատ բան տեսած մավրիտանցիներն անմիջապես կռահեցին, որ տեղի է ունենում հերթական պետական հեղաշրջումը:

Հեղաշրջման պահը շատ ճիշտ էր ընտրված: Երկրից բացակայում էր Մավրիտանիայի պրեզիդենտ և զինված ուժերի գլխավոր հրամանատար Թայան, որը գտնվում էր Սաուդյան Արաբիայում և մասնակցում նրա թագավոր Ֆահդի հուղարկավորությանը: Նրա բացակայության պարագայում ոչ միայն բանակային միավորումները, այլև պրեզիդենտական գվարդիան, որը կոչված էր հավատարմորեն ծառայել իր պրեզիդենտին, անցան նրա հակառակորդների կողմը, ինչն էլ որոշեց պայքարի ելքը: Գործող պրեզիդենտը և նրա վարչակազմը տապալվեցին:

Այս մեթոդը՝ պետության ղեկավարի բացակայության պայմաններում պետական հեղաշրջում կատարելը, առաջին անգամ չէր, որ կիրառվում էր Մավրիտանիայում: Նույն կերպ վարվեց Թայան 1984 թ. կառավարող պրեզիդենտ Հայդալլահի հետ, երբ վերջինս պաշտոնական այցով գտնվում էր Բուրունդիում, և նրան պաշտոնանկ արեց: Հերթը հի-

մա իրեն հասավ: Պետական հեղաշրջման ղեկավար գնդապետ էլի Ուլդ Մուհամմադ Վալը տապալեց 21 տարի տևած Մաավիյա Սիդի Ուլդ Թայայի ռեժիմը:

Իսկ ո՞վ էր գնդապետ Վալը: Կար ժամանակ, երբ նա համարվում էր Թայայի ամենահավատարիմ դաշնակիցը և օգնել էր նրան Հայդալլահի դեմ ուղղված պետական հեղաշրջման կազմակերպմանը և իշխանության գլուխ գալուն: Նա հանդիսանում էր Մավրիտանիայի անվտանգության ղեկավարը:

Իշխանությունն անցավ 16 հոգուց կազմված զինվորական մարմնի ձեռքը, որն իրեն անվանեց Արդարության և դեմոկրատիայի զինվորական խորհուրդ՝ Վալի գլխավորությամբ: Խորհուրդը հանդես եկավ Մավրիտանիայի բնակչությանն ուղղված հայտարարությամբ, որտեղ հակիրճ կերպով տրված էին հեղաշրջման պատճառները. «Ազգային զինված ուժերը և անվտանգության ուժերը միաձայն որոշեցին վճռականորեն վերջ տալ մեռած իշխանության բռնակալական գործունեությանը, որից տառապում էր մեր ժողովուրդը վերջին տարիներին»: Զինված խորհրդի հաջորդ հայտարարությամբ Մավրիտանիայի ժողովրդին տեղյակ էր պահվում, որ նրա պրեզիդենտը գնդապետ էլի Ուլդ Մուհամմադ Վալն է: Վերջինս վստահեցրեց, որ սահմանվում է անցման երկու տարվա ժամանակաշրջան, որից հետո կկայանան պրեզիդենտական և օրենսդիր մարմինների ընտրություններ, և երկիրը կվերադառնա քաղաքացիական կառավարման համակարգի:

Վալի գլխավորած Զինվորական խորհուրդն ընդունեց որոշում, որով արգելվում էր բոլոր զինվորականներին և քաղաքացիական անձերին, որոնք տվյալ պահին գտնվում էին պետական ծառայության մեջ, պաշտոններ զբաղեցնել ապագա կառավարության մեջ: Հայտարարվեց սահմանադրության մեջ փոփոխություն մտցնելու մասին, որով պրեզիդենտի լիազորությունները սահմանափակվում էին երկու տարի ժամկետով: Ազատ արձակվեցին նախորդ՝ տապալված կառավարության անդամները և բարձրաստիճան պաշտոնյաները, իսկ նախկին պրեզիդենտ Թայային և նրա 300 կողմնակիցներին իրավունք տրվեց վերադառնալ Մավրիտանիա:

Այդ քայլերը թեև զգալիորեն լիցքաթափ արեցին քաղաքական լարված մթնոլորտը, սակայն հանդարտություն և ապագայի նկատմամբ վստահություն չբերեցին:

Մավրիտանիան սպասումների մեջ է:

Գլուխ երրորդ

ՄԱՐՈԿԿՈՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐՈԿԿՈ

ԱԼ–ՄԱՄԼԱՔԱ ԱԼ–ՄԱՂՐԻԲԻՅԱ
ԱԼ-ՄԱՂՐԻԲ

Աշխարհագրական դիրքը — գտնվում է Հյուսիսային Աֆրիկայում
Սահմանները — սահմանակցում է արևելքում՝ Ալժիրին, հարավում՝ Արևմտյան Սահարային, հյուսիսում՝ Միջերկրական ծովին և Իսպանիային պատկանող Սեուտային և Մելիլային, արևմուտքում՝ Ատլանտյան օվկիանոսին
Տարածքը — 446 հազ. 550 քառ կմ
Բնակչությունը — 33,241,259 (2006 թ հուլիս)
Մայրաքաղաքը — Ռաբատ՝ 1 մլն 600 հազ., մյուս խոշոր քաղաքները՝ Կասաբլանկա՝ 4 մլն, Մարակեշ՝ 1,5 մլն, Ֆես՝ 1,1 մլն (2004 թ)
Պետական կարգը — սահմանադրական միապետություն
Պետության ղեկավարը — թագավոր
Գործադիր իշխանությունը — իրականացնում են թագավորը՝ Մուհամմադ VI (գահ է բարձրացել 1999 թ հուլիսի 30–ին), վարչապետը՝ Դրիս Ժետուն՝ 2002 թ. հոկտեմբերի 9–ից, և կառավարությունը, որին նշանակում է միապետը
Օրենսդիր իշխանությունը — պատկանում է երկպալատանի պառլամենտին, որը կազմված է վերին՝ Խորհրդատուների պալատից, և ստորին՝ Ներկայացուցիչների պալատից
Դատական իշխանությունը — Գերագույն դատարանը: Դատավորները նշանակվում են Արդարադատության խորհրդի հանձնարարականով, որի նախագահն է միապետը: Դատական համակարգը հիմված է իսլամական օրենքի և ֆրանսիական ու իսպանական քաղաքացիական օրենքների համակարգի վրա
Պետական կրոնը — իսլամ 98,7%–ը՝ սուննիներ, քրիստոնյաներ՝ 1,1%–ը, հրեաներ՝ 0,2%–ը
Վարչական բաժանումը — 15 շրջաններ
Անկախությունը — 1956 թ. մարտի 2–ը (անկախացում Ֆրանսիայից)
Ազգային տոնը — թագավորի գահ բարձրանալու օրը. ներկայիս թագավոր Մուհամմադ VI գահ է բարձրացել 1999 թ. հուլիսի 30–ին, և այդ օրը նշվում է որպես ազգային տոն

ՍԱՀՄԱՆ
ՍԻՐԻԱ
ՀՈՐԴԱՆԱՆ
ՍԱՀՄԱՆ

Սահմանադրությունը — ընդունվել է 1972 թ. մարտի 10–ին և վերանայվել 1992 թ. սեպտեմբերի 4–ին

Էթնիկական կազմը — արաբ–բերբերներ՝ 99,1%

Պաշտոնական լեզուն — արաբերենը, օգտագործվում են նաև բերբերական բարբառներ և ֆրանսերենը

ՀՆԱ–ն՝ ըստ շնչի — 4200 ԱՄՆ դոլար (2005 թ.)

Արդյունաբերությունը — ֆոսֆատի արդյունահանում և մշակում, սննդի, կաշվի, տեքստիլ արդյունաբերություն, շինարարություն, տուրիզմ

Գյուղատնտեսությունը — ցորենի, գարու, ցիտրուսների, ձիթապտղի և բանջարեղենի մշակում գինու արտադրություն, անասնապահություն

Միջազգային կազմակերպությունների անդամակցությունը — ՄԱԿ, Արաբական պետությունների լիգա, Իսլամական կոնֆերանս կազմակերպություն, Առևտրի համաշխարհային կազմակերպություն, ՅՈՒՆԵՍԿՕ և այլն

I. ՄԱՐՈԿԿՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐՅԱՆ ՇՐՋԱՆԸ (1918–1956 թթ.)

1. Մարոկկոյի տրոհումը

Մարոկկոն Հյուսիսային Աֆրիկայի արաբական ամենակարևոր երկրներից մեկն է, որը նշանակալի դերակատարում ունի արաբական աշխարհում: Նա անցել է պատմական զարգացման բարդ ուղի՝ դրան բնորոշ յուրահատկություններով և առանձնահատկություններով: Այդ տեսակետից կցանկանայինք ուշադրություն հրավիրել այդ երկրի զարգացման երկու կարևոր առանձնահատկության վրա:

Առաջին՝ Մարոկկոն մինչև 1912 թ., երբ հաստատվեց ֆրանսիական պրոտեկտորատը, բացարձակ թեոկրատիկ անկախ պետություն էր՝ ավատապետությանը բնորոշ բոլոր յուրահատկություններով: **Այն Աֆրիկայի արաբական երկրների մեջ ամենաուշը կորցրեց իր անկախությունը,** ավելի ուշ, քան Եգիպտոսը, Սուդանը, Թունիսը, Ալժիրը կամ Լիբիան: Այդ հանգամանքն իր կնիքն է դրել Մարոկկոյի քաղաքական դիմագծի և սոցիալական հարաբերությունների ձևավորման վրա և մեծապես ազդել նրա բնակչության հոգեբանության և մտածելակերպի վրա: Նկատի ունենք մարոկկացիների ազատատենչությունը և իրենց անկախությունը պահպանելու ձգտումը՝ պատրաստ ամենամեծ զոհողության այդ նպատակի իրագործման համար:

Երկրորդ՝ Մարոկկոյի տրոհումը երեք կազմավորումների: Մինչև պրոտեկտորատի հաստատումը Մարոկկոն մեկ միասնական պետություն էր: Նրա միասնականությունը չպահպանվեց, երբ նա ընկավ օտարերկրյա տիրապետության տակ: Այդ առումով նա տարբերվում է մյուս արաբական երկրներից, այդ թվում և պրոտեկտորատի վերածված երկրներից, որոնցից ոչ մեկը չկոտորակվեց: Վերցնենք, օրինակ՝ Թունիսը, որը նույնպես ֆրանսիական պրոտեկտորատ էր, կամ անգլիական պրոտեկտորատ Քուվեյթը և այլ երկրներ: Բոլոր այդ դեպքերում պահ-

պանվել է նրանց տարածքային ամբողջականությունը, և նրանք որպես այդպիսին են հայտնվել այս կամ այն եվրոպական պետության գաղութային տիրապետության ներքո:

Մարոկկոյի պարագայում այդ սկզբունքը կոպտորեն խախտվեց, որը, բացի այլ հանգամանքներից, արդյունք էր այն մրցակցության և կատաղի պայքարի, որն ընթանում էր Ֆրանսիայի, Անգլիայի, Իսպանիայի և Գերմանիայի միջև Մարոկկոյին և հյուսիսաֆրիկյան մյուս երկրներին տիրանալու համար: Դա պահանջում էր խուսանավում, նրբին դիվանագիտություն և փոխզիջումների քաղաքականություն: Հենց նման քաղաքականության շնորհիվ այդ պայքարում հաղթող հանդիսացավ առաջին հերթին Ֆրանսիան:

Այդ հաղթանակն ամրագրվեց 1912 թ. մարտի 30–ին Ֆեսում Ֆրանսիայի և Մարոկկոյի սուլթան Աբդ ալ–Հաֆիզի միջև ստորագրված պայմանագրով: Այդ պայմանագիրն ուղղակիորեն պարտադրվեց մարոկկոյական սուլթանին, և դրանով Ֆրանսիան իրավաբանորեն՝ պրոտեկտորատի կարգավիճակով, ձևակերպեց իր տիրապետությունը Մարոկկոյի վրա:

Սակայն ֆրանսիական տիրապետությունը չէր տարածվում ամբողջ Մարոկկոյի վրա: Ֆրանսիական պրոտեկտորատը հաստատվեց Մարոկկոյի թեև ամենամեծ, սակայն միայն մի մասի վրա: Դրանով դրվեց Մարոկկոյի բաժանման հիմքը:

1912 թ. նոյեմբերի 27–ին համաձայնագիր ստորագրվեց Ֆրանսիայի և Իսպանիայի միջև, որով իսպանական պրոտեկտորատ էր հաստատվում Մարոկկոյի հյուսիսային և արևմտյան մասերի վրա: Իսպանական գոտու մեջ մտան Ռիֆը՝ Սահարայում, և Իֆնին: Այդպես ձևավորվեց, դարձյալ պրոտեկտորատի կարգավիճակով, իսպանական գոտին:

Սակայն այստեղ կար մի կարևոր առանձնահատկություն՝ Իսպանիան պրոտեկտորատի իր բաժինը ստացավ ոչ թե անմիջականորեն Մարոկկոյի սուլթանից, ինչպես Ֆրանսիան, այլ Ֆրանսիայից՝ որպես պրոտեկտոր: Այդ հանգամանքն իրավունք էր վերապահում Ֆրանսիային ինչ–որ չափով խառնվել իսպանական պրոտեկտորատի գործերին կամ ուղղորդել նրա քաղաքականությունը: Դա ֆրանսիական պրոտեկտորատը դարձնում էր ավելի լեգիտիմ, քանի որ նա տրվել էր Մարոկկոյի միապետի կողմից, որի իշխանությունը և իրավասությունները ձևականորեն պահպանվում էին նաև պրոտեկտորատի հաստատումից հետո:

Եվ վերջապես Տանժերն առանձնացվեց որպես հատուկ միջազգային գոտի:

Տանժերի հարցը բարձրացվեց Անգլիայի կողմից, որը, համաձայնվելով Մարոկկոյի վրա ֆրանսիական և իսպանական պրոտեկտորատի հաստատման հետ, կտրուկ դեմ էր, որ Տանժերի վրա հաստատվի ֆրանսիական կամ իսպանական տիրապետություն: Դա բացատրվում է այն կարևոր ստրատեգիական նշանակությամբ, որ ունեին Տանժերը և նրա շրջակա տարածքները: 1912 թ. Մադրիդում տեղի ունեցավ Անգլիայի, Ֆրանսիայի և Իսպանիայի ներկայացուցիչների կոնֆերանսը՝ նվիրված Տանժերի կարգավիճակին: Նրա աշխատանքները ձգձգվեցին, իսկ վրա հասած Առաջին համաշխարհային պատերազմի պատճառով երկար ժամանակով ընդհատվեցին: Տանժերի հարցին վերոնշյալ երեք պետությունները կրկին անդրադարձան միայն 1923 թ., երբ նրանց ներկայացուցիչները, դարձյալ Անգլիայի պահանջով և ճնշման ներքո, հավաքվեցին սկզբում Լոնդոնում, ապա Փարիզում: Այստեղ նրանք վերջապես հասան համաձայնության, որը հիմնված էր փոխզիջման վրա: Կողմերը համաձայնվեցին Տանժերի միջազգայնացման հետ. ինչպես պնդում էր Անգլիան: Նրանք միաժամանակ համաձայնվեցին, որ Ֆրանսիան ունենալու էր գերակայող ազդեցություն: Անգլիան և Ֆրանսիան մերժեցին Իսպանիայի պահանջը՝ ճանաչել նրա շահերի առաջնայնությունը Տանժերում:

Տանժերի կարգավիճակի վերաբերյալ կոնվենցիան Անգլիան, Ֆրանսիան և Իսպանիան ստորագրեցին 1923 թ. դեկտեմբերի 18–ին Փարիզում: Այն վավերացվեց 1924 թ նոյեմբերի 13–ին և ուժի մեջ մտավ 1925 թ. հունիսի 1–ին:

Այդ կոնվենցիայի համաձայն՝ Տանժերը հայտարարվում էր միջազգային գոտի՝ մշտական չեզոքության կարգավիճակով: Նա ձևականորեն մնում էր Մարոկկոյի սուլթանի գերշխանության ներքո, բայց իրականում հանդիսանում էր մեկ առանձին գոտի՝ օժտված օրենսդրական և վարչական ինքնավարությամբ: Նրա կարգավիճակի պահպանման վերահսկողությունը դրվում էր Միջազգային վերահսկիչ կոմիտեի վրա:

Կոնվենցիայի գործողության ժամկետը սահմանվեց 12 տարի:

Եթե ի մի բերելու լինենք, ապա կարելի է ասել, որ Մարոկկոն բաժանվեց երեք գոտու՝ ֆրանսիական, իսպանական և միջազգային: Դրանցից ամենամեծը և հիմնականը ֆրանսիական պրոտեկտորատի տակ գտնվող գոտին էր: Այդ պատճառով էլ ընդունված է ասել, որ Մա-

րոկկոն համարվում էր ֆրանսիական պրոտեկտորատ, որն իր արտացոլումն է գտել նաև մասնագիտական գրականության մեջ: Կարծում ենք, որ դա թերի է, քանի որ անտեսվում են իսպանական մասը, որը նույնպես պրոտեկտորատ էր, և Տանժերի գոտին, որը նույնպես գտնվում էր ֆրանսիական տիրապետության շրջանակներից դուրս:

Մարոկկոյի նորագույն շրջանի պատմությունը ճիշտ հասկանալու համար այն պետք է դիտարկել իր ամբողջության մեջ՝ բոլոր երեք գոտիները համատեղ:

Մարոկկոն իր այդ կարգավիճակը պահպանեց ընդհուպ մինչև իր անկախության նվաճումը, որին նա հասավ 1956 թ.:

2. Մարոկկոյում հաստատված կառավարման պրոտեկտորական համակարգը

Մարոկկոյում հաստատվեց կառավարման վերին աստիճանի բարդ, կարելի է ասել՝ բազմաշերտ և բազմահարկ համակարգ, որը հնարավորություն էր տալիս ֆրանսիական գաղութային իշխանություններին իրականացնել առնվազն երեք գործառույթ՝ իրենց ձեռքում պահել Մարոկկոյի սուլթանին՝ նրան գահընկեց չանելով և արտաքուստ չխախտելով նրա միապետի կարգավիճակը, անհատականացված քաղաքականություն վարել Մարոկկոյի սոցիալական տարբեր շերտերի նկատմամբ, որն ուղղորդված էր նրանց ծառայեցնելու Ֆրանսիայի շահերին, և ամրապնդել Ֆրանսիայի տիրապետությունը Մարոկկոյում՝ ելնելով իր քաղաքական, ստրատեգիական և տնտեսական նպատակներից:

Պրոտեկտորատի հաստատումով չվերացվեցին կառավարման միապետական համակարգը և Մարոկկոյի կառավարման ավանդական ինստիտուտները: Միապետը պահպանեց իր թագն ու գահը, աշխարհիկ և հոգևոր իշխանությունը: Սակայն դա կրում էր ձևական բնույթ, քանի որ սուլթանը զրկված էր իրական իշխանությունից: Այդ բոլոր լիազորությունները փաստորեն միապետից անցան նրա կողքին հայտնված ֆրանսիական գլխավոր ռեզիդենտին, որին նշանակում էր Ֆրանսիայի Հանրապետության կառավարությունը, և որն իրականում ոչ թե միապետի կողքին էր կանգնած, այլ նրանից վեր:

Գլխավոր ռեզիդենտի պաշտոնը նոր պաշտոն էր, որ կառավարման համակարգում հայտնվեց Մարոկկոյի վրա ֆրանսիական պրոտեկտորատի հաստատումից անմիջապես հետո: Նա էր Ֆրանսիայի պաշտո-

նական բարձրագույն ներկայացուցիչը՝ օժտված ամենալայն պետական, քաղաքացիական, վարչական, քաղաքական, տնտեսական և ռազմական լիազորություններով: Սուլթանը չէր կարող առանց գլխավոր ռեզիդենտի նախնական գիտության, հավանության և թույլտվության որևէ որոշում ընդունել և գործողության մեջ դնել: Իսկ դա նշանակում էր, որ սուլթանը զրկվել էր կառավարման ամենակարևոր գործառույթներից և դարձել ֆրանսիական պաշտոնյայի ենթակա: Այդ ճշմարտությունն ավելի է հաստատվում, եթե ավելացնենք, որ սուլթանն առանց գլխավոր ռեզիդենտի թույլտվության չէր կարող անգամ որևէ նախարարի նշանակել կամ ազատել իր պարտականություններից: Նա զրկված էր նման իրավունքներից նաև Մարոկկոյի նահանգների կամ շրջանների ղեկավարներին՝ կաիդներին և շեյխերին նշանակելու հարցում:

Սուլթանի ամենակարևոր իրավունքներից էին արտաքին հարաբերությունների վարումը, ներքին հարցերի տնօրինումը և բանակի հրամանատարությունը: Պրոտեկտորատի համակարգը ծանր հարված հասցրեց սուլթանին նաև այդ հարցերում՝ զրկելով նրան այդ գործառույթներից: Արտաքին քաղաքականության բոլոր հարցերը կենտրոնացվեցին գլխավոր ռեզիդենտի ձեռքում: Սուլթանը միայն նրա միջոցով և հավանությամբ կարող էր հաղորդակցվել օտար պետությունների հետ, որի հավանականությունը գործնականում հավասար էր զրոյի: Պատահական չէր, որ ֆրանսիական գլխավոր ռեզիդենտին համարում էին Մարոկկոյի արտաքին գործերի նախարար:

Ինչ վերաբերում է բանակին, ապա այստեղ նույնպես ղեկավարությունն անցավ գլխավոր ռեզիդենտին, որին շատերը համարում էին մարոկկոյական բանակի հրամանատար: Անգամ իր ապարատի և աշխատակազմի ընտրության հարցում սուլթանն ազատ չէր: Այդ հարցերը նույնպես տնօրինում էր գլխավոր ռեզիդենտը, և նա էր ընտրում այն մարդկանց, որոնք պետք է աշխատեին սուլթանի աշխատակազմում:

Ամեն մի երկրի կառավարման համակարգում առանձնահատուկ տեղ են գրավում օրենսդիր կառույցները: Մինչև պրոտեկտորատի հաստատումը օրենսդիր իշխանությունը պատկանում էր սուլթանին: Պրոտեկտորատի հաստատումից հետո ևս ձևականորեն օրենսդիր իշխանությունը շարունակում էր մնալ նրա ձեռքում: Բայց իրականում վիճակն այլ էր: Սուլթանի բոլոր օրենսդրական ակտերը՝ դահիրները, պետք է հաստատվեին գլխավոր ռեզիդենտի կողմից: Միայն դրանից հետո դահիրները ստանում էին օրենքի ուժ.

Փոփոխություններ տեղի ունեցան նաև կառավարման գործադիր ճյուղում: Վերակառուցվեց Մարոկկոյի գործադիր գլխավոր մարմինը՝ մախզանը: Նրա իրավասություններից դուրս բերվեցին զինվորական, ծովային և ֆինանսական նախարարությունները: Նրա կազմում պահպանվեցին երեք նախարարություններ՝ արդարադատության, խաբուսների՝ կրոնական կազմակերպություններին պատկանող հողային սեփականության, և կալվածքների: Մախզանը գլխավորում էր մեծ վազիրը, որն ի պաշտոնե հանդիսանում էր նաև ներքին գործերի նախարար: Մախզանի և նրա կազմում գործող բոլոր նախարարությունների գործունեությունը գտնվում էր գլխավոր ռեզիդենտի անմիջական վերահսկողության տակ և ուղղորդվում էր նրա կողմից:

Սակայն գլխավոր ռեզիդենտի իրավունքները միայն դրանով չէին սահմանափակվում: Ֆրանսիան չբավարարվեց սուլթանին իր իրավասություններից զրկելով, զրոյի հավասարեցնելով կառավարության իրավունքները և այդ բոլորը փոխանցելով գլխավոր ռեզիդենտին կամ դնելով նրա վերահսկողության տակ: Ֆրանսիան անչափ ընդլայնեց գլխավոր ռեզիդենտի իրավունքները՝ նրա ապարատը վերածելով իսկական կառավարական կաբինետի: Գլխավոր ռեզիդենտին կից գործում էր չորս կաբինետ՝ քաղաքական, քաղաքացիական, ռազմական և դիվանագիտական, որոնք ընդգրկում էին Մարոկկոյի պետական, քաղաքական, տնտեսական կյանքի բոլոր ոլորտները: Այդ պատճառով էլ իրականությանը լրիվ համապատասխանում է այն տեսակետը, որ Մարոկկոյի իրական կառավարիչը գլխավոր ռեզիդենտն էր, որին ենթակա էր Մարոկկոյի սուլթանը: Մինչդեռ սուլթանը ժառանգականության իրավունքով Մարոկկոյում դեռևս XVII դարում հաստատված Ալավիների դինաստիայի օրինական միապետն էր, որի լեգիտիմությունը չէր վիճարկվում մարոկկոյական որևէ ուժի կողմից:

Մարոկկոյում ֆրանսիական առաջին գլխավոր ռեզիդենտ նշանակվեց գեներալ Լիոտեյ, որն այդ բարձր պաշտոնը զբաղեցրեց 1912–1925 թթ.: Լինելով զինվորական գործիչ՝ նա դրսևորեց քաղաքացիական կառավարման արտակարգ տաղանդ: Նա երկաթյա ձեռքով հետևողականորեն իրականացնում էր Ֆրանսիայի քաղաքական նպատակները Մարոկկոյում: Եվ պատահական չէ, որ նրա անվան հետ է կապված Մարոկկոյում ֆրանսիական կառավարման պրոտեկտորական համակարգի հաստատումն ու իրականացումը:

Լիոտեն մշակեց կառավարման ոչ միայն հայեցակարգային դրույթները, այլև ստեղծեց համապատասխան մեխանիզմներ, որոնք ընդհանուր առմամբ գործում էին անխափան: Դրա փայլուն օրինակներից է կենտրոնական ապարատում և շրջանային վարչություններում պաշտոնյաների երկու՝ միմյանց զուգահեռ ծառայությունների ստեղծումը. մեկը՝ մարոկկոյական, իսկ մյուսը՝ ֆրանսիական: Թեև դրանք գործում էին զուգահեռ, սակայն ֆրանսիականն էր գլխավորը, քանի որ նա վերահսկում էր մարոկկոյական խմբի գործունեությունը և օժտված էր որոշումներ ընդունելու ու դրանք իրականացնելու լիազորություններով:

Պրոտեկտորատի հաստատումից հետո Մարոկկոյում պահպանվեց այսպես կոչված Ցեղային կազմակերպությունը՝ իր շրջանային՝ դուար, բաժանմունքներով, որոնց գլուխ կանգնած էին կաիդները՝ ղեկավարները կամ առաջնորդները: Նրանք էին տնօրինում ցեղերին վերաբերող բոլոր հարցերը, և այդ գործում նրանց օգնականներն էին շեյխերը: Սակայն այստեղ կատարվեց սկզբունքային բնույթի փոփոխություն: Մինչև ֆրանսիական պրոտեկտորատի հաստատումը կաիդները և շեյխերն ընտրվում էին, քանի որ նրանց պաշտոնները համարվում էին ընտրովի: Ընտրում էին տվյալ ցեղի կամ ցեղային միությունների անդամները, և, որպես կանոն, ընտրվում էին այնպիսի մարդիկ, որոնք վայելում էին տվյալ ցեղի անդամների հարգանքը: Նրանց իշխանությունը հիմնված էր նրանց բարձր հեղինակության վրա: Պրոտեկտորատի հաստատումից հետո այդ պաշտոնները դարձան նշանակովի: Ֆրանսիական իշխանությունները կաիդներին և շեյխերին ընտրում էին՝ ըստ նրանց հավատարմության ֆրանսիական իշխանություններին: Ընտրությունը կատարվում էր մարոկկոյական այնպիսի անվանի ընտանիքներից, որոնք հայտնի էին իրենց համակրանքով՝ հանդեպ ֆրանսիական իշխանությունները: Կաիդներ ընտրում էին նաև մարոկկոյական սպաներից, որոնք ծառայել էին ֆրանսիական բանակում և վայելում էին գլխավոր ռեզիդենտի ու նրա կաբինետի վստահությունը:

Գլխավոր ռեզիդենտ Լիոտեի քաղաքականության մեջ կարևոր տեղ էր գրավում սոցիալական հենարանի ստեղծումը ֆրանսիական գաղութային իշխանությունների համար: Այդ սոցիալական հենարանը բազմաշերտ էր և իր մեջ ներառնում էր նահանգային–շրջանային կաիդներին, աստվածաբան–ուլեմներին, պետական ապարատի պաշտոնյաներին, բերբերներին, մասնավորապես նրանց վերնախավին, մեծահարուստ հողագործներին և այլն: Նա վարում էր բավականին ճկուն քա-

ղաքականություն նրանց նկատմամբ և այդ խավերից յուրաքանչյուրին զանազան գայթակղիչ կամ շահեկան խոստումներով կապում էր իր քաղաքականության սայլին: Եվ այդ խավերի ներկայացուցիչները դարձել էին պրոտեկտորական վարչակարգի հենարանը և աջակցում էին նրա քաղաքականությանը:

Մարոկկոյի իսպանական գոտում հաստատվեց մի փոքր այլ համակարգ: Այստեղ նշանակվեց իսպանական գլխավոր կոմիսար, որի ձեռքում կենտրոնացվեց ամբողջ իշխանությունը: Սակայն իսպանական գոտում Մարոկկոյի թագավորն ուներ իր տեղապահը, որը կրում էր խալիֆա տիտղոսը: Ճիշտ է, նա կախվածության մեջ էր գտնվում իսպանական գլխավոր կոմիսարից, այդուհանդերձ, նրա ներկայությունը մշտապես հիշեցնում էր մարոկկոյական միապետի գոյության և լիազորությունների մասին:

Իսպանական գոտում հիմնականում կիրառվեց Մարոկկոյի ֆրանսիական գոտու կառավարման մոդելը՝ որոշ փոփոխություններով, որոնք հարմարեցված էին իսպանական կառավարման ավանդական մեթոդներին, որոնցում գերակշռում էին կառավարման ռազմական և քաղաքական ճնշումների մեթոդները: Այս գոտին, համեմատած ֆրանսիականի հետ, ուներ նս մեկ տարբերակիչ գիծ՝ կառավարման համակարգն աչքի չէր ընկնում կայունությամբ, որն իր հերթին բացասաբար էր անդրադառնում իսպանական գոտու քաղաքական իրադրության վրա: Դրանում իր բաժինն ուներ նաև այն հանգամանքը, որ իսպանական գաղութային իշխանություններն այդպես էլ չկարողացան իրենց համար ստեղծել հուսալի սոցիալական հենարան, որի հետ դաշնակցած կարողանային վստահորեն կառավարել և կայուն քաղաքական իրադրություն ստեղծել իրենց գոտում: Այդ հարցում իսպանացիներն ակնհայտորեն զիջում էին ֆրանսիացիներին:

Մարոկկոյում հաստատված կառավարման վերոնշյալ համակարգը գոյություն ունեցավ և գործեց մինչև 1956 թ.՝ մինչև պրոտեկտորատի վերացումը և Մարոկկոյի անկախության վերականգնումը:

3. Մարոկկոյի «յուրացումը»

Հաստատելով իրենց իշխանությունը Մարոկկոյում և ստեղծելով կառավարման համապատասխան համակարգ պրոտեկտորատի շրջա-

նակներում՝ Ֆրանսիան և Իսպանիան անցան Մարոկոյի քաղաքական և տնտեսական յուրացմանը:

Ֆրանսիական գլխավոր ռեզիդենտ Լիոտեն սիրում էր ընդգծել, որ նրա նպատակն էր երկիրը վերածել Ֆրանսիայի համար «օգտակար Մարոկկոյի»: Իսկ դա այնքան էլ հեշտ խնդիր չէր, մանավանդ եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ Մարոկկոյի բնակչությունն իր ճնշող մեծամասնությամբ դեմ էր պրոտեկտորատի հաստատմանը և շատ վայրերում, հատկապես լեռնային գոտիներում դիմադրություն էր ցույց տալիս ֆրանսիական և իսպանական գաղութարարներին, որը շատ հաճախ զինված պայքարի բնույթ էր կրում: Տեղացիների դիմադրությունը դաժանորեն ճնշվում էր ֆրանսիական և իսպանական զորքերի կողմից: Այդուհանդերձ, Ֆրանսիային, ինչպես նաև Իսպանիային մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը չհաջողվեց նվաճել ամբողջ Մարոկկոն և իրենց իշխանությունը տարածել Մարոկկոյի բոլոր շրջանների վրա:

Մարոկկոյի յուրացումը կամ նվաճումը վերսկսվեց պատերազմից հետո և գործնականում ավարտվեց 1934 թ., երբ ֆրանսիական իշխանությունները կարողացան իրենց տիրապետությունը կամ վերահսկողությունը հաստատել Մարոկկոյի դաշտային և սարահարթային տարածքների վրա՝ Ֆեսից մինչև Ատլասի լեռները՝ Մարակեշից հարավ, այնուհետև Արևմտյան Ատլասի, Մարոկկոն Ալժիրի հետ կապող Թազայի միջանցքի և հյուսիսային մի շարք լեռնային շրջանների վրա: Իսկ Իսպանիան 1921–1926 թթ. կարողացավ Ֆրանսիայի օգնությամբ ճնշել ռիֆների ապստամբությունը և վերացնել Ռիֆի Հանրապետությունը: Վերջին ակորդը հանդիսացավ 1934 թ ֆրանսիական տիրապետության հաստատումը Միջին Ատլասի և Թաֆիլատետի վրա, որով Մարոկկոյի նվաճումը և հնազանդեցումը համարվում է ավարտված:

Դրան զուգահեռ ընթանում էր Մարոկկոյի տնտեսական յուրացումը, որի շնորհիվ նա դառնալու էր «օգտակար երկիր» Ֆրանսիայի համար. Ֆրանսիական իշխանություններն իրենց այդ քաղաքականության մեջ մեծ տեղ էին հատկացնում ֆրանսիացիների ներհոսքին Մարոկկո, որոնք պետք է լայն տնտեսական գործունեություն ծավալեին: Իսկ դրա հնարավորությունը կար, քանի որ Մարոկկոն համարվում է օգտակար հանածոներով հարուստ երկիր, հատկապես մեծ են ֆոսֆորի, պղնձի, մարգանեցի, ցինկի, արծիճի, կոբալտի և երկաթի հանքերը:

Ֆրանսիացիների ներհոսքն արագացնելու համար անհրաժեշտ էր նրանց համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծել: Գլխավոր

խնդիրը համարվեց կոլոնների խավի ստեղծումը, որին որպես սեփականություն տրամադրվեցին վիթխարի հողային տարածքներ: Եվրոպական կոլոնների թիվը Մարոկկոյում 1921 թ. հասավ 160 հազարի, որից 128 հազարը ֆրանսիացիներ էին. Նրանց տրամադրվեց մոտ 1 մլն հա հող: Դրանք հիմնականում նախկին համայնքային հողերն էին, որոնք որպես «ավելցուկ» օրենսդրական զանազան ակտերի միջոցով խլվեցին մարակկոյական գյուղացիներից և բաժանվեցին եվրոպական կոլոններին: Այդ նպատակով ֆրանսիական իշխանությունները 1919 թ. ստեղծեցին Համայնքային հողերի խնամակալական խորհուրդ, որը հաստատեց տեղացիների համար հողային չափաբաժիններ: Դրանք սահմանվում էին այն հաշվով, որ արհեստականորեն ստեղծվի «ավելցուկ» հողերի համապատասխան ֆոնդ, որն այնուհետև բաժանվում էր եվրոպացիներին, առաջին հերթին ֆրանսիացիներին: Ավելորդ չէ նաև մատնանշել, որ Մարոկկոյում գտնվող բոլոր եվրոպացիները իրավական տեսակետից ենթարկվում էին ֆրանսիական գլխավոր ռեզիդենտին: Դա նշանակում էր, որ այդ կարևոր գործընթացը գտնվում էր նրա հսկողության տակ:

Մարոկկո շտապեցին ֆրանսիական բանկիրները, խոշոր ֆինանսիստները և արդյունաբերողները. որոնք շատ չանցած իրենց վերահսկողությունը սահմանեցին Մարոկկոյի տնտեսության վրա և նրա զարգացումը տարան այնպիսի ուղիով, որն առավելագույնս էր համապատասխանում Ֆրանսիայի տնտեսական շահերին: Այստեղ իրենց գործունեությունը լայնորեն ծավալեցին ֆրանսիական բանկերը, որոնց մեջ պետք է առանձնացնել «Բանկ դը Պարի է դը Պեի Բա» բանկը, որն իր հերթին կապված էր «Կոմպանի ժեներալ դյու Մարոկի» հետ: Նրանց գործունեության շառավիղը շատ ընդարձակ էր և ընդգրկում էր գյուղատնտեսությունը, լեռնահանքային արդյունաբերությունը, երկաթուղիները և նավահանգիստները, ծկնարդյունաբերությունը, էլեկտրակայանները և տնտեսության այլ ճյուղեր, որոնք առանձնահատուկ նշանակություն ունեին և շահավետ էին Ֆրանսիայի համար.

Դրան հաջորդեց հանածոների, գյուղատնտեսական մթերքների և արտադրության որոշ տեսակների արտահանումը Մարոկկոյից Ֆրանսիա, որը նույնպես գտնվում էր ֆրանսիական զանազան արդյունաբերական ու առևտրական ընկերությունների ձեռքում և կազմում էր Մարոկկոյի յուրացման ու այն Ֆրանսիայի համար «օգտակար պետության» վերածելու քաղաքականության բաղկացուցիչ մասը:

Մարոկկոյի յուրացումը, հասկանալի է, միանվագ գործողություն չէր և ժամանակի առումով սահմանափակված չէր 1910–1920–ական թվականներով, այլ մի անընդմեջ գործընթաց էր, որն իր շարունակությունն ունեցավ նաև հետագա տարիներին՝ 1930–1950–ական թվականներին՝ մինչև այն պահը, երբ Մարոկկոն ձերբազատվեց ֆրանսիական պրոտեկտորատից և դարձավ անկախ ու ինքնիշխան պետություն:

4. Ապստամբությունը Ռիֆում և Ռիֆի Հանրապետության հռչակումը

Ֆրանսիան և Իսպանիան, ինչպես արդեն նշել ենք, չկարողացան միանգամից գրավել ամբողջ Մարոկկոն և նրա բոլոր մասերում հաստատել իրենց տիրապետությունը: Նրանք սկզբնական շրջանում հիմնականում իրենց վերահսկողությունը սահմանեցին հարթավայրերում, իսկ լեռնային շրջանները մնում էին նրանց տիրապետությունից դուրս: Դրանք փաստորեն անկախ շրջաններ էին, և նրանց բնակիչները զենքը ձեռքներին պաշտպանում էին իրենց անկախությունը: Եվրոպական այդ երկու պետությունները չէին կարող դա հանդուրժել, մանավանդ որ հենց այդ լեռնային գոտիներում էին գտնվում օգտակար հանածոների հիմնական պաշարները, որոնք մեծապես հետաքրքրում էին ֆրանսիական և իսպանական արդյունաբերողներին ու ֆինանսիստներին:

Լեռնային այդ շրջանների մեջ առանձնանում էր Ռիֆի շրջանը, որն իսպանական պրոտեկտորատի մի մասն էր կազմում: 1920–ականների սկզբներին իսպանացիները դիմեցին վճռական քայլերի Ռիֆի շրջանի վրա իրենց իշխանությունը տարածելու, ազատատենչ լեռնեցիների դիմադրությունը կոտրելու և նրանց հնազանդեցնելու համար: Սակայն նրանք հանդիպեցին Ռիֆի բնակչության կազմակերպված դիմադրությանը, որը ղեկավարում էր բանի ուրիյագիլ ցեղի կադի՝ առաջնորդ Մուհամմադ իբն Աբդ ալ–Քարիմ ալ–Խաթաբին:

Առաջին վճռական ճակատամարտը ապստամբ ռիֆների և իսպանական բանակի կանոնավոր զորամիավորումների միջև տեղի ունեցավ 1921 թ. հուլիսի 21–ին Անվալի մոտ: Այն տևեց վեց օր և ավարտվեց հուլիսի 26–ին ռիֆների փայլուն հաղթանակով: Իսպանական 20–հազարանոց կորպուսը խայտառակ պարտություն կրեց և խուճապահար փախուստի դիմեց, իսկ նրա հրամանատարը՝ գեներալ Սիլվեստրեն, ինքնասպան եղավ:

Այդպես սկսվեց Ռիֆի էպոպեան:

Անվալի մոտ տարած հաղթանակի լուրը արագորեն տարածվեց ամբողջ Մարոկկոյում և մեծապես ոգևորեց ռիֆներին: Նրանց զինված ուժերը համալրվեցին հազարավոր նոր մարտիկներով: Անվալի մոտ տարած հաղթանակի ժամանակ ռիֆների ձեռքն անցավ տարբեր տեսակի մեծաքանակ զենք՝ 30 հազար հրացան, 140 թնդանոթ, մոտ 300 գնդացիր, ավտոմեքենաներ, դեղորայք և այլն: Դա կտրուկ կերպով բարելավեց լեռնեցիների ռազմական դրությունը:

Շարունակելով հետապնդել խուճապահար իսպանացիներին՝ ռիֆները 1921 թ. օգոստոսի 5–6–ը Մոնտ Առվիտի մոտ նոր հաղթանակ տարան իսպանական զորքերի նկատմամբ. Իսպանական զորքերի հրամանատարը՝ գեներալ Նավարոն, և մի շարք սպաներ գերի ընկան:

Ռիֆները, ինչպես ցույց տվեցին դեպքերը, պարզվեց, որ ոչ միայն հերոսամարտիկներ էին՝ ընդունակ հաղթական պատերազմ մղելու լավ զինված իսպանական զորքերի դեմ, այլև հեռատես քաղաքագետներ: Նրանք հասկանում էին, որ իրենց մեծ փորձություններ են սպասվում, որոնց անհնար է դիմակայել, եթե նրանք չմիավորվեն և հանդես չգան միասնական ճակատով: 1921 թ. Ռիֆի շրջանի 12 ցեղեր միավորվեցին և դիմեցին մի քաղաքական քայլի, որն անսպասելի էր ոչ միայն իսպանացիների, այլև Մարոկկոյի մյուս շրջանների, ինչպես նաև արաբական շատ երկրների համար:

1921 թ. սեպտեմբերին Աբդ ալ–Քարիմը գումարեց Ռիֆի ցեղային ավագանու հատուկ ժողով, որի ժամանակ ցեղապետներն իրենց լիակատար աջակցությունը հայտնեցին Աբդ ալ–Քարիմին և պաշտպանեցին նրա քաղաքականությունը: Հենց այստեղ ավագանին ընտրեց Ազգային ժողով՝ նրան լիազորելով հանդես գալ Ռիֆի ժողովրդի անունից:

1921 թ. սեպտեմբերի 19–ին Ազգային ժողովն իր առաջին նիստում հռչակեց Ռիֆի անկախությունը: Աբդ ալ–Քարիմ ալ–Խաթաբին ստացավ էմիրի տիտղոս և դարձավ նորաստեղծ Ռիֆ պետության՝ Ռիֆի Հանրապետության ղեկավարը՝ պրեզիդենտը: Ազգային ժողովը կազմեց Ռիֆի «Ազգային հանրապետական կառավարություն՝ ապստամբության առաջնորդ Մուհամմադ իբն ալ–Քարիմ ալ–Խաթաբի գլխավորությամբ»:

Ազգային ժողովը մեծագույն պատասխանատվությամբ մոտեցավ իր պարտականությունների կատարմանը: Նա նախապատրաստեց Ռիֆի սահմանադրությունը: Երկրի բարձրագույն մարմինը համարվեց Ազգային ժողովը, որին պատկանում էր ինչպես օրենսդիր, այնպես էլ գոր-

ծադիր իշխանությունը: Ազգային ժողովի նախագահը հանրապետության պրեզիդենտն էր, որը միաժամանակ հանդիսանում էր պաշտպանության և ներքին գործերի նախարար:

Առանձնահատուկ նշանակություն ուներ Ազգային ժողովի կողմից ընդունված «Ազգային ուխտը», որն իրենից գործողությունների մի մեծ և սկզբունքային ծրագիր էր ներկայացնում: Մասնավորապես առաջարկվում էր ճանաչել Ռիֆ պետության լրիվ անկախությունը, չճանաչել այն բոլոր պայմանագրերը, որոնք ոտնահարում էին Մարոկկոյի իրավունքները կամ կապ ունեին 1912 թ. պայմանագրի հետ, որով ֆրանս–իսպանական պրոտեկտորատ հաստատվեց Մարոկկոյի վրա, էվակուացիայի ենթարկել բոլոր իսպանացիներին Ռիֆի այն մասից, որը մինչև 1912 թ. պայմանագրի վավերացումը չէր գտնվում Իսպանիայի ազդեցության տակ, կազմել հանրապետական սահմանադրական կառավարություն: Նա պարունակում էր նաև մեկ կարևոր կետ՝ առաջարկում էր բարեկամական հարաբերություններ հաստատել բոլոր պետությունների հետ և պատրաստակամություն հայտնում նրանց հետ կնքել համապատասխան պայմանագրեր:

Կարելի է ասել, որ «Ազգային ուխտը»՝ որպես ծրագրային փաստաթուղթ, քաղաքականապես միանգամայն հասուն և գրագետ փաստաթուղթ էր, որը Իսպանիայի կողմից համապատասխան դրական արձագանքի դեպքում կարող էր նրանց միջև հարաբերությունների կարգավորման լավ հիմք հանդիսանալ:

Ռիֆի իշխանությունները կարողացան երկրում հաստատել կարգ ու կանոն, դադարեցին միջցեղային բախումները, որի արդյունքում ամրապնդվեց միասնությունը, ներքին ճակատը և համագործակցությունը ռիֆների տարբեր խմբավորումների միջև. Բոլորը հասկանում էին, որ ներքին համերաշխությունը Ռիֆի անկախության և գոյության ամենակարևոր գրավականներից մեկն էր:

Նորաստեղծ հանրապետությունում մեծ և կարևոր աշխատանքներ կատարվեցին կանոնավոր մարտունակ բանակ ստեղծելու, ստրատեգիական բնույթի ճանապարհների կառուցման և բարելավման ուղությամբ: Ռիֆի բանակում քիչ թիվ չէին կազմում նրանք, ովքեր նախկինում ծառայել էին ֆրանսիական և իսպանական բանակներում, այդ թվում և նրանք, ովքեր մարտերի ժամանակ լքում էին իսպանական և ֆրանսիական բանակը և անցնում իրենց հայրենակիցների կողմը:

Չնայած կրած պարտություններին՝ Իսպանիան չէր հրաժարվում Ռիֆը նվաճելու, հանրապետությունը վերացնելու և պրոտեկտորատը նրա վրա տարածելու իր ստրատեգիական նպատակներից: 1922–1924 թթ. նրա կողմից մի շարք փորձեր կատարվեցին պարտության մատնելու ռիֆներին, բայց անհաջող: Լեռնեցիները հաջողությամբ կարողանում էին հետ մղել բոլոր հարձակումները և արժանի հակահարված տալ իսպանական զորքերին. Իսկ 1922 թ. փետրվարին ռիֆները կարևոր հաղթանակ տարան Մելիլյա–Սեուտա ռազմաճակատի գծում: Փետրվարի կեսերին գլխովին ջախջախելով իսպանական զորքերին՝ ռիֆները նրանց հետ շպրտեցին Մելիլյա քաղաքի մոտ: Ռազմական մասնագետները գտնում են, որ ռիֆների այդ հաղթանակն իր նշանակությամբ և ծավալներով կարելի է համեմատել Անվալի մոտ տարած հաղթանակի հետ:

Այդ հաղթանակից հետո Մելիլյա քաղաքն ընկած էր ռիֆների ոտքերի առջև, և որևէ դժվարություն չէր ներկայացնում նրա գրավումը: Սակայն Մուհամմադ իբն Աբդ ալ–Քարիմը, վախենալով, որ դա կարող է առաջ բերել օտարերկրյա տարբեր պետությունների միջամտությունը, չդիմեց այդ քայլին: Հետագայում նա խոստովանեց, որ դա մեծ սխալ էր իր կողմից:

1922–1923 թթ. ընթացքում տեղի ունեցան նս մի շարք մարտեր, սակայն դրանք ավելի շատ տեղական բնույթ էին կրում և որևէ ազդեցություն չունեցան ռազմական ընդհանուր դրության վրա, որն ընդհանուր առմամբ բարենպաստ էր ռիֆների համար: Նախաձեռնությունը շարունակում էր մնալ նրանց ձեռքում:

Ռիֆների դեմ պատերազմում իսպանական զորքերի կրած ծանր և խայտառակ պարտությունները, մեծաքանակ զոհերը և ֆինանսական վիթխարի ծախսերը խորը դժգոհություն առաջացրին Իսպանիայում. որը վերածվեց հակակառավարական ելույթների: Զանգվածային ցույցեր տեղի ունեցան Մադրիդում և իսպանական այլ քաղաքներում, որի ժամանակ տիրապետող էին «Կորչի՛ զինվորականությունը» լոզունգները: Տեղի ունեցան նաև մի շարք գործադուլներ, որոնցից հիշատակության է արժանի հանքագործների գործադուլը:

Դրությունն ավելի սպառնալից դարձավ, երբ 1923 թ. օգոստոսի վերջերին ապստամբեցին Սևիլիայում, Գրանադայում և Մալատեում տեղակայված զորքերը, որոնք հրաժարվեցին մեկնել ռազմաճակատ և կռվել ռիֆների դեմ: Ստեղծված ծանր իրավիճակի պատճառով տարա-

ծայնություններ առաջացան իսպանական կառավարող վերնախավի շարքերում և բուն կառավարության մեջ: Երեք նախարարներ հրաժարական տվեցին: Նրանք բացահայտորեն հանդես եկան ռիֆների հետ պատերազմը շարունակելու իսպանական իշխող վերնախավի քաղաքականության դեմ՝ գտնելով, որ Իսպանիան չի կարող տանել այդպիսի ծանր բեռ, և պատերազմի շարունակումը կարող է կործանարար լինել Իսպանիայի համար:

Ստեղծված պայմաններում քաղաքական ասպարեզում առաջին պլանի վրա հայտնվեցին հետադիմական զինվորականները, որոնք կողմնակից էին պատերազմի շարունակմանը մինչև հաղթական վախճանը: 1923 թ. սեպտեմբերի 13–ին Իսպանիայում կատարվեց պետական հեղաշրջում, և իշխանությունն իր ձեռքը վերցրեց Բարսելոնի ռազմական օկրուգի հրամանատար գեներալ Պրիմո դը Ռիվերան, որը դարձավ Իսպանիայի դիկտատորը: Նա իր առաջին հայտարարությունների մեջ շեշտում էր, որ իր նպատակն է վրեժ լուծել ռիֆներից իսպանական բանակի կրած խայտառակ պարտությունների համար և Իսպանիայի տիրապետությունը վերահաստատել իսպանական Մարոկկոյի այն բոլոր տարածքների վրա, որոնք անցել են ռիֆների հսկողության տակ:

Ռիվերան տենդորեն նախապատրաստվում էր նոր հարձակման:

Սակայն քնած չէին նաև ռիֆները: Աբդ ալ–Քերիմը և նրա զինակիցներն ակնդետ հետևում էին իսպանական նոր դիկտատորի քայլերին, և իրենք նույնպես պատրաստվում նրան արժանի հակահարված հասցնելու համար:

Ռազմական գործողությունները վերսկսվեցին 1924 թ. փետրվարին, որոնք ծավալվեցին գլխավորապես Մելիլյայի շրջանում, որտեղ ռիֆներն ունեին ուժեղ դիրքեր: Նրանց հաջողվեց ռազմական գործողությունների առաջին օրը շրջապատել իսպանական զորախումբը և ոչնչացնել այն: Ռիֆների զինված ջոկատները վերացրեցին այդ տարածքում գտնվող իսպանական բոլոր զինվորական կետերը, անգամ խփեցին մի քանի ինքնաթիռ: Իսպանական բանակը ոչ միայն չկարողացավ կասեցնել ռիֆների առաջխաղացումը, այլև նահանջեց անկանոն կերպով: Իսպանական ռազմաճակատն այդ հատվածում կազմալուծվեց, որը տագնապալի իրադրություն ստեղծեց մայրաքաղաքում: Իսպանական հրամանատարությունը հարկադրված էր լրացուցիչ ուժեր նետել Մելիլյայի շրջանը, որը, սակայն, սպասված արդյունքները չտվեց:

Սակայն Մելիլյայի մոտ տեղի ունեցած ճակատամարտը դեռևս չէր հանդիսանում պատերազմական գործողությունների վերսկսում ամբողջ ռազմաճակատով:

Ընդհանուր հարձակումը սկսվեց 1924 թ. հունիսին, այս անգամ արդեն արևմտյան ռազմաճակատում: Այն սկսեցին ռիֆները, որոնք մի քանի ամսվա ընթացքում տանում էին մի հաղթանակ մյուսի հետևից: 1924 թ. սեպտեմբերի 1–ին նրանք արդեն իսպանական Մարոկկոյի մայրաքաղաք Տետուանի մոտերքն էին: Նրանք շրջափակման մեջ վերցրեցին այստեղ գտնվող իսպանական ռազմական ճամբարը, կտրեցին Տետուան — Տանժեր ավտոճանապարհը, և նրանց ձեռքն անցավ ռազմական մեծ ավար: Սեպտեմբերի 4–ին սկսվեց իսպանացիների համընդհանուր նահանջն ամբողջ ռազմաճակատի երկայնքով, որն այնուհետև վերածվեց խուճապային փախուստի: Ռիֆների հաղթանակը և իսպանական զորքերի ջախջախիչ պարտությունը կատարյալ էր:

Եթե ամփոփելու լինենք 1924 թ. ծավալված ռազմական գործողությունների արդյունքները, ապա պետք է արձանագրել, որ 1924 թ վերջերին ռիֆների հաղթանակների հետևանքով իսպանացիները կորցրեցին այն բոլոր տարածքները, որ նրանք նվաճել էին 1912 թ. հետո, երբ այդ տարածքները մտան Մարոկկոյի իսպանական գոտու մեջ: Մարոկկոյի իսպանական գոտու ամբողջ տարածքն անցավ Ռիֆի Հանրապետության իրավական տնօրինության տակ: Իսպանացիների ձեռքում մնաց միայն մի փոքր տարածք, որը գտնվում էր Ատլանտյան օվկիանոսի և Տանժերի երկաթուղու միջև.

Ռիֆի Հանրապետության փայլուն ռազմական հաղթանակները շատ տպավորիչ էին, և դրանք լրջորեն անհանգստացրին եվրոպական մի շարք պետությունների, առաջին հերթին Ֆրանսիային:

Ֆրանսիան ռիֆ–իսպանական կոնֆլիկտի առաջին փուլում՝ ընդհուպ մինչև 1924 թ., գրավել էր որոշ իմաստով սպասողական դիրք: Ֆրանսիայում, ինչպես նաև մյուս երկրներում, առանձնապես նշանակություն չէին տալի ռիֆների ապստամբությանը և նրանց առաջին հաջողություններին: Բոլորը հավատացած էին, որ դրանք ժամանակավոր բնույթ են կրում, և հեռու չէ այն օրը, երբ իսպանական կանոնավոր բանակը կճզմի ռիֆների դիմադրությունը և կվերացնի Ռիֆ Հանրապետությունը: Ֆրանսիայում նախընտրում էին չարախնդալ իրենց մրցակցի՝ Իսպանիայի անհաջողությունների վրա՝ հույս ունենալով, որ դա կթուլացնի նրա դիրքերը Մարոկկոյում, թեկուզ և նրա իսպանական գոտում:

Դրա հետ միասին ֆրանսիական գաղութարարները ակնկալում էին շահույթներ կորզել, առաջին հերթին՝ քաղաքական, Իսպանիայի անհաջողություններից: Այստեղ զարմանալու ոչինչ չկա, քանի որ դա միանգամայն բնականոն երևույթ է միջիմպերիալիստական հարաբերություններում, որոնք խարսխված են մրցակցության և մեկը մյուսին ասպարեզից դուրս մղելու հիմնարար սկզբունքների վրա: Պատահական չէ, որ այս փուլում ֆրանսիական իշխանություններն անգամ զենք ու զինամթերք էին մատակարարում իրենց իսպանական «գործընկերների» դեմ պատերազմող ռիֆներին:

Սակայն ռիֆների անսպասելի փայլուն հաղթանակները և Մարոկկոյի իսպանական գոտու ազատագրումը լրջորեն անհանգստացրեցին Ֆրանսիային և Մարոկկոյի ֆրանսիական իշխանություններին: Ֆրանսիական կառավարությունը մտավախ էր, որ ռիֆների հաղթանակները կարող են ազդեցություն ունենալ նաև Մարոկկոյի ֆրանսիական գոտու արաբների և բերբերների վրա, որոնք ռիֆների օրինակով կարող էին ոտքի ելնել ընդդեմ ֆրանսիական տիրապետության: Այդ մտավախությունն իր հիմքերն ուներ, քանի որ այդ ժամանակ ֆրանսիացիներին նույնպես դեռևս չէր հաջողվել գրավել և իրենց իշխանությունը հաստատել ֆրանսիական Մարոկկոյի լեռնային շրջանների վրա: Այդ շրջանների բնակչությունը, ինչպես նշել ենք, ուժեղ դիմադրություն էր ցույց տալիս ֆրանսիացիներին և հաջողությամբ հետ մղում նրանց հարձակումները: Դրա շնորհիվ ծախողվել էր ֆրանսիական գլխավոր ռեզիդենտ Լիոտեի 1920 թ. հաստատված ծրագիրը՝ երեք տարվա ընթացքում նվաճել ֆրանսիական Մարոկկոյի բոլոր լեռնային շրջանները և այնտեղ հաստատել կառավարման այնպիսի համակարգ, ինչպես Մարոկկոյի հարթավայրային շրջաններում և քաղաքներում:

1924 թ. տեղի ունեցավ արմատական փոփոխություն Ֆրանսիայի քաղաքականության մեջ՝ հանդեպ ռիֆները և Իսպանիան: Ֆրանսիան որոշեց անմիջական ռազմական մասնակցություն ունենալ ռիֆների ապստամբության գործում և համագործակցել Իսպանիայի հետ՝ կանխելու Մարոկկոյի ֆրանսիական գոտում ապստամբության տարածման հնարավորությունը:

Ֆրանսիական զորքերը մարտական գործողությունները ռիֆների դեմ սկսեցին 1924 թ. ամռանը: Նրանք գրավեցին Ուերգա գետի հովիտը: Պատահական չէր, որ նրանք իրենց առաջին հարձակման նպատակակետ ընտրել էին այդ հովիտը: Դա համարվում էր Ռիֆի հանրապե-

տության տնտեսական կարևոր կենտրոնը՝ շտեմարանը, որը ռիֆներին ապահովում էր անհրաժեշտ պարենով: Նրա գրավումը, որն անսպասելի եղավ ռիֆների համար, նպատակ ուներ Ռիֆի Հանրապետությանը դնել նյութական անելանելի դրության մեջ և այդ ճանապարհով կոտրել նրա դիմադրությունը:

Ֆրանսիայի մասնակցությունը պատերազմական գործողություններին ռիֆներին դնում էր ծանր դրության մեջ: Սակայն դա, ինչպես նաև Ուերգայի հովտի կորուստը չահաբեկեց ռիֆներին և չանդրադարձավ նրանց մարտական ոգու վրա: 1925 թ. ապրիլին ռիֆներն անցան հակահարձակման, ճեղքեցին ֆրանսիական պաշտպանությունը և առաջանալով մոտեցան ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Թազա քաղաքին ու ամրացրին իրենց դիրքերը քաղաքի մատույցներում: Քաղաքի վիճակն օրհասական էր, և 1925 թ. ապրիլի 5–ին առաջարկվեց քաղաքի բնակչությանը հեռանալ այնտեղից:

Ռիֆների հաղթանակները ծանր դրության մեջ դրեցին ֆրանսիացիներին: Գլխավոր ռեզիդենտ Լիոտեյը, որն արդեն կրում էր մարշալի զինվորական կոչում, գլուխը կորցրել էր և Փարիզից անընդհատ պահանջում էր լրացուցիչ ուժեր ուղարկել: Փարիզի առաջին արձագանքն ի նպաստ Լիոտեյի չէր. Ֆրանսիական կառավարության որոշումով նա 1925 թ. ազատվեց գլխավոր ռեզիդենտի պաշտոնից, և նրա փոխարեն գլխավոր ռեզիդենտ նշանակվեց գեներալ Պեյրուտոնը, որը հետագայում նույնպես դարձավ մարշալ: Սակայն Փարիզում հասկանում էին, որ միայն գլխավոր ռեզիդենտի փոփոխությունը բավարար չէր իրադրությունը հօգուտ Ֆրանսիայի փոխելու համար: Անհրաժեշտ էր նոր ռազմական ուժեր ուղարկել, և ֆրանսիական կառավարությունը դիմեց այդ քայլին՝ Մարոկկոյում գտնվող ֆրանսիական զորքերի թիվը հասցնելով 100 հազարի, իսկ հաջորդ տարի՝ մինչև 200 հազարի:

Ֆրանսիական կառավարությունն այդ քայլի հետ միասին առաջարկեց Իսպանիայի կառավարությանը համատեղ ռազմական գործողություններ ծավալել ռիֆների դեմ. Իսպանական կառավարությունը, որը նույնպես գտնվում էր ծանր դրության մեջ, ընդունեց ֆրանսիական կողմի առաջարկությունը, և 1925 թ. հունիսին Մադրիդում կայացավ երկու երկրների պաշտոնական ներկայացուցիչների առաջին հանդիպումը: Բանակցությունները նրանց միջև ավարտվեցին հաջողությամբ, և նրանք կնքեցին համաձայնագիր, որը պարունակում էր երկու կարևոր կետ: Առաջին՝ կողմերը պարտավորվեցին դիմել համատեղ կոորդինաց-

ված ռազմական գործողությունների, և երկրորդ՝ տնտեսական շրջափակման ենթարկել Ռիֆի շրջանը:

Իսպանիան իր հերթին ավելացրեց իր զորքերի քանակը իսպանական Մարոկկոյում՝ այն հասցնելով մոտ 100 հազարի:

Այսպիսով՝ 1925 թ. կեսերին Մարոկկոյում ռիֆների դեմ կանգնած էր 200 հազ. ֆրանսիական և 100 հազ. իսպանական լավ զինված բանակ: Ռիֆների զինված ուժերն այդ նույն ժամանակ կազմում էին ընդամենը 70 հազ. զինվոր:

Ուժերի անհավասարությունն ակնհայտ էր:

Ֆրանս–իսպանական համաձայնագրի ստորագրումից հետո՝ 1925 թ. սեպտեմբերին, սկսվեց ֆրանսիական և իսպանական զորքերի համատեղ հարձակումը Ռիֆի Հանրապետության վրա: Ռիֆի բանակը հերոսական դիմադրություն էր ցույց տալիս, սակայն հարկադրված էր նահանջել: Իսպանական զորքերը գրավեցին Ռիֆի մայրաքաղաքը՝ Աջդիրը: Ռազմաճակատի իրենց հատվածներում առաջ շարժվեցին նաև ֆրանսիական զորքերը: Հոկտեմբերի կեսերին ռիֆներն ունեցան տարածքային մեծ կորուստներ:

Այդ ընթացքում Ռիֆի ղեկավարությունը բազմիցս առաջարկություններ արեց Ֆրանսիային և Իսպանիային հաշտության բանակցություններ սկսել՝ առաջադրելով միայն մի պայման՝ ճանաչել Ռիֆի Հանրապետության անկախությունը: Սակայն Ֆրանսիան և Իսպանիան երկար ժամանակ մերժում էին բանակցությունների սեղանի շուրջը նստել Ռիֆի ներկայացուցիչների հետ: Վերջապես 1926 թ. ապրիլին Ուջդ քաղաքում՝ ալժիրա–մարոկկոյական սահմանի մոտ, բանակցություններ սկսվեցին նրանց միջև: Բայց իսպանական և ֆրանսիական պատվիրակությունները բնավ մտադիր չէին հաշտության պայմանագիր ստորագրել ռիֆների հետ: Դրա մասին են վկայում նրանց գլխավոր պահանջները՝ վերացնել Ռիֆի Հանրապետությունը և զինաթափել ռիֆների բանակը: Իսկ դա անընդունելի էր ռիֆների համար, և եռյակ բանակցությունները 1926 թ. մայիսի 5–ին ձախողվեցին:

1926 թ. մայիսի 6–ին իսպանական և ֆրանսիական զորքերը սկսեցին նոր լայնածավալ հարձակում: Ռիֆները հարկադրված էին նահանջել ամբողջ ռազմաճակատի երկայնքով: Նրանց վիճակը դարձավ հուսահատական:

Ռիֆի Հանրապետության պրեզիդենտ Մուհամմադ իբն Աբդ ալ–Քարիմ ալ–Խաթաբին, հաշվի առնելով ստեղծված անհուսալի վի-

ճակը և չցանկանալով ավելորդ զոհեր ու տառապանքներ պատճառել իր ժողովրդին, 1926 թ. մայիսի 25–ին անձնատուր եղավ: Սակայն նա գերադասեց հանձնվել ոչ թե իսպանացիներին, այլ ֆրանսիացիներին: 1926 թ. օգոստոսի 28–ին նա Իսպանիայի և Ֆրանսիայի համատեղ որոշումով աքսորվեց Ռեյունյոն կղզի:

Ռիֆների ազատագրական պատերազմի լավագույն գնահատականը տվել է ինքը՝ Աբդ ալ–Քարիմը. «Այդ պատերազմը սրբազան էր»:

Այսպես ավարտվեց Ռիֆի հերոսական էպոպեան:

Աբդ ալ–Քարիմի կապիտուլյացիան չէր նշանակում ընդհանրապես պայքարի դադարեցում: Ֆրանսիացիները և իսպանացիները դեռ շատ հեռու էին Մարոկկոն հնազանդեցնելուց և հանգիստ ու խաղաղ կառավարման անցնելուց: Մարոկկացիները մարոկկացի չէին լինի, եթե նրանք այդպես հեշտությամբ զենքերը վայր դնեին և հանձնվեին ֆրանսիացիների ու իսպանացիների ողորմածությանը:

Պայքարի այս փուլում այլևս չկար միասնական մարոկկոյական բանակ: Հիմնականում պայքարը ֆրանսիացիների և իսպանացիների դեմ մղում էին տեղական՝ տվյալ շրջանի ցեղերը, որոնք ոչ միշտ է, որ միասնական էին հանդես գալիս: Նրանք մշտապես զգում էին զենքի. զինամթերքի և պարենի պակաս: Մարոկկացիները հասկանում էին, որ հարթավայրերում և բաց դաշտերում մարտի բռնվելը ֆրանսիական և իսպանական լավ զինված կանոնավոր զորամասերի հետ հղի էր նրանց համար մեծ վտանգներով. Ստեղծված պայմաններում նրանք ընտրեցին պայքարի նոր մարտավարություն՝ նախապատվությունը տալով պարտիզանական պայքարին: Դրա հնարավորությունը տալիս էին լեռնային լանդշաֆտը, տեղանքին լավ ծանոթ լինելը և ցեղերի մարտական բարձր ոգին: Ստեղծվեց յուրահատուկ իրադրություն: Ֆրանսիացիները և իսպանացիները թեև պարտության մատնեցին Աբդ ալ–Քարիմին և վերացրին Ռիֆի Հանրապետությունը, սակայն նրանցից յուրաքանչյուրի առջև կանգնած էր իր գոտում իր տիրապետությունն ամբողջապես վերականգնելու խնդիրը: Դա նշանակում էր, որ նրանք պետք է շարունակեին պատերազմական գործողությունները, որպեսզի իրենց իշխանությունը վերահաստատեին ոչ միայն Մարոկկոյի հարթավայրային, այլև լեռնային մասերում: Պատերազմական գործողությունների ծանրության կենտրոնը տեղափոխվեց Մարոկկոյի լեռնամասային շրջանները: Իսկ այդտեղ իրենց ավելի վստահ էին զգում մարոկկացիները: Այդ պատճառով էլ պատերազմական գործողությունները փոքր ընդհա-

տումներով շարունակվեցին ընդհուպ մինչև 1934 թ.: Ֆրանսիացիները և իսպանացիները ծանր մարտեր մղելով և մեծ զոհերի գնով քայլ առ քայլ նվաճում էին ու վերականգնում իրենց տիրապետությունը լեռնային շրջաններում: Այսպես, օրինակ՝ ֆրանսիական զորքերը 1926 թ. վճռական գրոհ սկսեցին Թազա քաղաքի և նրա շրջակայքի վրա, որը կարևոր ստրատեգիական նշանակություն ուներ: Սակայն այդ շրջանի ցեղերն ինն օր համառ դիմադրություն էին ցույց տալիս ֆրանսիացիներին: Միայն վերջիններիս կողմից ավիացիան գործողության մեջ դնելուց հետո հաջողվեց կոտրել մարոկկոյական ցեղերի դիմադրությունը և գրավել Թազան ու նրա շրջակա տարածքները:

Նման համառ դիմադրության հանդիպեցին իսպանացիներն իրենց գոտում: Նրանք երկար ժամանակ չէին կարողանում կոտրել ջիբալ ցեղի դիմադրությունը Շեշաուենում: Եվ միայն 1926 թ. օգոստոսին այդ քաղաքը, որը իսպանական Մարոկկոյի կարևոր կենտրոններից մեկն էր, անցավ իսպանացիների ձեռքը:

1929 թ. ֆրանսիացիների դեմ ապստամբեցին Մարակեշում, իսկ 1930–1933 թթ. ծանր մարտեր էին գնում Ջաբալ Սագոյում: Ֆրանսիացիները կարողացան կոտրել մարոկկացիների դիմադրությունը և այդ շրջանները գրավել միայն լրացուցիչ զորքեր ու առաջնակարգ ռազմական տեխնիկա կենտրոնացնելով:

Եվ վերջապես՝ ֆրանսիացիները 1934 թ. հաղթանակներ տարան նաև Ատլասի լեռներում ու մի շարք այլ շրջաններում, որով ավարտվեց ֆրանսիական իշխանության վերականգնումը Մարոկկոյի ֆրանսիական գոտում: Համարյա այդ նույն ժամանակաշրջանում նման հաջողությունների հասան իսպանացիներն իրենց գոտում:

Փաստորեն, Ռիֆի ապստամբության ճնշումից հետո նս ութ տարի պահանջվեց, որպեսզի ֆրանսիացիները և իսպանացիներն ամբողջությամբ վերականգնեին իրենց տիրապետությունը Մարոկկոյում:

5. Տեղաշարժեր Մարոկկոյի սոցիալական և քաղաքական դաշտում 1930–ական թվականներին

Ֆրանսիական և իսպանական պրոտեկտորատի հաստատումը, եվրոպացիների, առաջին հերթին՝ ֆրանսիացիների զանգվածային ներհոսքը, արդյունաբերողների, բանկիրների, ֆինանսական և առևտրական ընկերությունների լայն գործունեության ծավալումը որոշակի տե-

ղաշարժեր առաջացրին Մարոկկոյի քաղաքական, սոցիալական և գաղափարական ոլորտներում:

Սոցիալական տեղաշարժերի մեջ առաջին հերթին պետք է նշել բանվոր դասակարգի՝ որպես ինքնուրույն սոցիալական խավի կազմավորումը: Նրա ձևավորումը հիմնականում ընթանում էր լեռնահանքային արդյունաբերության ոլորտում, որն իր հերթին խթանեց նաև արդյունաբերական այլ ճյուղերի զարգացմանը՝ նրան սպասարկող և հարակից այլ ճյուղերում: Մարոկկոյի բանվոր դասակարգը 1930–ական թվականներին դեռևս փոքրաթիվ էր, իսկ զարգացման առումով՝ հետամնաց: Նա երեկվա գյուղացին էր, որը դեռ չէր ձերբազատվել գյուղացուն հատուկ հոգեբանությունից և մտածելակերպից, որը բացասաբար էր ազդում նրա կազմակերպվածության, իր միություններն ու կազմակերպությունները ստեղծելու և վերջին հաշվով նրա պայքարի վրա: Հետագայում նա աստիճանաբար դարձավ ավելի գիտակից ու կազմակերպված և վերածվեց Մարոկկոյի կարևոր քաղաքական ուժերից մեկին, որի հետ հարկադրված էին հաշվի նստել նախ՝ ֆրանսիական և իսպանական գաղութարարները, իսկ պրոտեկտորատի վերացումից հետո՝ մարոկկոյական ազգային իշխանությունները:

Նոր իրադրության մեջ հայտնվեց գյուղացիությունը: Պրոտեկտորատի իշխանությունների կողմից կիրառված զանազան կասկածելի հողային «բարեփոխումների» հետևանքով գյուղացիական հոծ զանգվածները դարձան հողազուրկ և բառացիորեն ներխուժեցին քաղաքները՝ Ռաբաթ, Կասաբլանկա, Ֆես, Մարակեշ: Այդ քաղաքների ծայրամասերում և շուրջը սկսի նման աճում էին «բիդոնվիլները»՝ թիթեղներից պատրաստված տնակները, որոնք սովորաբար կառուցվում էին մի գիշերվա ընթացքում: Դրանք տարրական հարմարություններից զուրկ խղճուկ հյուղակներ էին, որի պատերից ներս մի կերպ պատսպարվում և իրենց գոյությունն էին քարշ տալիս գյուղերից քաղաք փախած գյուղացիները: Գյուղացիների ներհոսքը քաղաքներ և նրանց շրջակայքում բիդոնվիլների կառուցումը լրացուցիչ բարդություններ էին ստեղծում բուն քաղաքների, քաղաքային տնտեսության ու կյանքի կարգավորման, տրանսպորտի, պարենի մատակարարման և նման այլ հարցերում: Գյուղերից փախած և քաղաքներում հանգրվանած գյուղացիները լրացնում էին գործազուրկների բանակը, որն առանց այդ էլ մեծ թիվ էր կազմում:

Հարվածի իրենց բաժինը ստացան նաև արհեստավորները, որոնք իրենց ապրուստը հայթայթում էին ավանդական ապրանքների՝

հագուստի, զանազան տնտեսական իրերի և առարկաների, զարդեղենի. ոսկերչական, կաշվեղենի և կաշվե ապրանքների արտադրությամբ: Դրանք չէին կարող դիմանալ Եվրոպայից Մարոկկո ներմուծվող էժանագին արդյունաբերական ապրանքների մրցակցությանը, և շատ արհեստավորներ հարկադրված փակում էին իրենց արհեստանոցներն ու մնում առանց գործի:

Կորուստներ կրեցին տեղական մանր առևտրականները, որոնք նույնպես չէին դիմանում իրենց եվրոպացի «գործընկերների» մրցակցությանը և սնանկանում էին:

Մարոկկոյական հասարակությունում եղան նաև շահողներ: Դրանք այն խոշոր հողատերերը, ցեղապետները և խոշոր առևտրականներն էին, որոնք իրենց ճակատագիրը կապեցին ֆրանսիական իշխանությունների հետ, առաջին օրվանից համագործակցեցին պրոտեկտորատի իշխանությունների հետ՝ դառնալով նրանց սոցիալական հենարանը: Շահողների մեջ էին նաև գլխավոր ռեզիդենտի ապարատում, նրա կաբինետում աշխատանքի ներգրավված մարոկկացիները, որոնք ստանում էին լավ աշխատավարձ, օգտվում զանազան արտոնություններից, համալրում տեղացի մեծահարուստների շարքերը և հավատարմորեն ծառայում ֆրանսիական իշխանություններին:

Սոցիալական նոր շերտավորման արդյունքում մարոկկոյական հասարակության ներսում տեղի ունեցավ սոցիալական նոր բևեռացում, որը հար և նման էր զարգացման նույն մակարդակի վրա գտնվող համանման այլ երկրների սոցիալ–տնտեսական իրողություններին:

1930–ական թվականներին ակնհայտ տեղաշարժեր կատարվեցին նաև մարոկկոյական հասարակության ազգային–քաղաքական մտածելակերպում, ազգային ինքնության և գիտակցության հարցերում ու քաղաքական հայացքների համակարգում: Իսկ դա պատմական տվյալ դարաշրջանում ուներ առանցքային նշանակություն, քանի որ դրա հետ էր կապված Մարոկկոյի՝ որպես երկրի հետագա քաղաքական և ազգային ճակատագիրը: Այդ երևույթը դրսևորվեց մի շարք ազգային–քաղաքական կազմակերպությունների, կուսակցությունների և միությունների ձևավորման և նրանց քաղաքական ասպարեզ իջնելու փաստի մեջ, որն իր հերթին մեծապես խթանեց մարոկկոյական ազգային ինքնագիտակցության արթնացմանը, ազգային ինքնության հաստատմանը և մարոկկոյական հասարակության քաղաքականացմանը:

Բայց չպետք է կարծել, թե Մարոկկոյում առաջին քաղաքական կազմակերպությունները հայտնվել են անցյալ դարի 30–ական թվականներին: Դրանք ասպարեզ են իջել 20–ական թվականներին, որոնք, սակայն, Ֆրանսիայում կազմավորված և գործող զանազան քաղաքական կուսակցությունների բաժանմունքները կամ, ինչպես ընդունված էր այն ժամանակներում ասել, սեկցիաներն էին: Մարոկկոյում իրենց սեկցիաներն ունեին ֆրանսիական սոցիալիստական, ապա նաև կոմունիստական և այլ կուսակցություններ: Նրանց անդամները հիմնականում մարոկկոյաբնակ ֆրանսիացիներն էին, և նրանք գործում էին ֆրանսիացիների շրջանում: Ճիշտ է, դրանց աստիճանաբար սկսեցին անդամակցել նաև տեղաբնիկ արաբները և բերբերները: Այդուհանդերձ, վերոնշյալ սեկցիաները մնում էին որպես ֆրանսիական սեկցիաներ՝ իրենց յուրահատուկ քաղաքական նպատակներով ու խնդիրներով:

Այդ պատճառով էլ ընդունված է ասել, որ բուն մարոկկոյական քաղաքական կազմակերպությունները քաղաքական դաշտում հայտնվել են 1930–ականներին: Այդ առումով առաջնության դափնին պատկանում է Մարոկկոյական ազգային գործողության կոմիտեին, որը հիմնվել է 1934 թ.: Նա հայտնի է նաև Մաղրիբյան բլոկ անվանումով: Նրա հիմնադիրներն էին մարոկկոյական ազգային բուրժուազիայի և մտավորականության ներկայացուցիչները, որոնց հետևից գնում էին հասարակության համեմատաբար զարգացած և լուսավորյալ խավերը: Մեծ հեղինակություն էին վայելում նրա ականավոր հիմնադիրներ Ալյալ ալ–Ֆասին, Մուհամմադ ալ–Վազանին և Ահմադ Բալաֆրաջը:

Ի՞նչ էր ուզում այդ կազմակերպությունը, և ո՞րոնք էին նրա քաղաքական նպատակներն ու խնդիրները:

Նրա կողմից մշակված ծրագրային փաստաթուղթը, որը կոչվում էր «Մարոկկոյական ժողովրդի պահանջները», վկայում էր, որ այդ կազմակերպությունն իր բնույթով արմատական կազմակերպություն չէր և իր առջև չէր դնում պրոտեկտորատի վերացման և Մարոկկոյի անկախության հարցերը: Նրա պահանջներն ավելի համեստ էին և սահմանափակ բնույթ էին կրում: Կոմիտեն կամ բլոկն առաջադրում էր երեք գլխավոր պահանջ՝ սուլթանի և նրա ապարատի լիազորությունների նշանակալի ընդլայնում՝ ֆրանսիական պրոտեկտորատի պահպանման շրջանակներում, Մարոկկոյի երեք մասի բաժանվածության վերացում և վարչական ու իրավական միավորում՝ որպես մեկ պետություն, և տեղա-

կան մարոկկոյական բնակչության մասնակցություն Մարոկկոյի կառավարմանը:

Կուսակցությունը լայն աշխատանք ծավալեց հատկապես երիտասարդության շրջանում: Նրա առաջին ձեռնարկումներից մեկը գահի տոնակատարության վերականգնումն էր, որը սովորաբար մեծ ժողովրդականություն էր վայելում: Տոնակատարությունը կապված էր սուլթանի գահ բարձրանալու տարեթվի հետ: Ժողովրդի հոծ զանգվածներ մասնակցեցին այդ տոնակատարությանը՝ վկայելով իրենց հավատարմությունն ազգային ավանդույթներին և հարգանքը սուլթան Սիդի Մուհամմադ V բին Յուսուֆի նկատմամբ: Որոշ իմաստով դա մարտահրավեր էր ֆրանսիական իշխանություններին:

Կուսակցությունն իր գործունեության մեջ մեծ տեղ էր հատկացնում նաև զանազան մատչելի հրատարակությունների պատրաստմանն ու տարածմանը, մասսայական միջոցառումների կազմակերպմանը: Տեղական, հատկապես քաղաքային բնակչության մեջ մեծ աջակցություն գտավ կուսակցության կոչով սկսված ֆրանսիական ապրանքների բոյկոտի քաղաքականությունը: Իսկ երբ 1934 թ Մարոկկոյի հինավուրց մայրաքաղաք Ֆես այցելեց Մարոկկոյի սուլթանը, այստեղ տեղի ունեցան բազմամարդ ցույցեր՝ ի պատիվ սուլթանի, որի ժամանակ ցուցարարներն իրենց հարգանքն ու աջակցություն էին ցուցաբերում երկրի միապետին:

Ֆրանսիական պրոտեկտորատի իշխանությունները հաշտ աչքով չէին նայում հայրենասիրական այդ դրսևորումներին և շատ հաճախ դիմում էին բռնությունների: Այդ ցույցերի պատճառով ֆրանսիական իշխանությունները ստիպեցին սուլթանին անհապաղ թողնել Ֆեսը և մեկնել Ռաբաթ, փակեցին մի շարք թերթեր և այլն:

Այդ ընթացքում Մարոկկոյական ազգային գործողության կոմիտեն լրամշակեց իր ծրագիրը՝ այն հարստացնելով նոր և ավելի գործնական պահանջներով՝ վարչական բարեփոխումների կիրառում, մարոկկոյական կառավարության, մունիցիպալ խորհուրդների, գավառական ասամբլեաների, առևտրական և տնտեսական պալատների ստեղծում, զինվորական շրջանների վերացում, հարկային համակարգի բարելավում, ժողովների, խոսքի, միությունների ազատություն և այլն: Այդ համալրված և բոլոր գլխավոր պահանջները պարունակող փաստաթուղթը ստացավ «Բարեփոխումների ծրագիր» անվանումը, որը կուսակցությունը հանձնեց Մարոկկոյում ֆրանսիական գլխավոր ռեզիդեն-

տին և սուլթանին, իսկ ֆրանսիական ծախ կուսակցությունների դեպուտատները 1934 թ. դեկտեմբերի 1–ին այն փոխանցեցին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարություն՝ ակնկալելով ֆրանսիական իշխանությունների պատասխանը: Բայց այդ կարևոր փաստաթուղթն այդպես էլ չքննարկվեց ֆրանսիական իշխանությունների կողմից:

Մաղրիբյան բլոկ կուսակցության գործունեության մեջ կարևոր իրադարձություն հանդիսացավ նրա առաջին համագումարի հրավիրումը, որը կայացավ 1936 թ. հոկտեմբերի 25–ին Ռաբաթում. Կուսակցությունն ընդունեց առաջարկությունների մի փաթեթ, որը կոչվեց «Անհետաձգելի պահանջների» փաթեթ: Դա հիմնականում պարունակում էր կուսակցության «Մարոկկոյական ժողովրդի պահանջները» և «Բարեփոխումների ծրագիր» երկու կարևոր փաստաթղթերի բարելավված և հարստացված հիմնադրույթները: Այդ նոր փաստաթուղթը նույնպես հանձնվեց մարոկկոյական սուլթան Սիդի Մուհամմադ բին Յուսուֆին և Մարոկկոյում ֆրանսիական գլխավոր ռեզիդենտ Նոգեսին: Համագումարի որոշմամբ մի պատվիրակություն մեկնեց Փարիզ՝ «Անհետաձգելի պահանջները» Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությանը և նրա միջոցով ֆրանսիական կառավարությանը հանձնելու համար: Սակայն Փարիզում կառավարական բոլոր դռները մնացին փակ մարոկկոյական պատվիրակության առջև, չնայած որ Ֆրանսիայում իշխանության ղեկի մոտ գտնվում էր Ժողովրդական ճակատի կառավարությունը՝ սոցիալիստ Լեոն Բլյումի գլխավորությամբ: Նրա քաղաքականության մեջ այդ ժամանակ արդեն ակնհայտորեն դրսևորվում էին աջակողմյան միտումներ և ֆրանսիական հետադիմությանը զիջելու պատրաստակամություն: Արդյունքը եղավ այն, որ Լեոն Բլյումի կառավարությունը ոչ միայն ուշադրության չարժանացրեց նրան ներկայացված «Անհետաձգելի պահանջները», այլև արգելեց Մարոկկոյական ազգային գործողության կոմիտեի գործունեությունը: Դա տեղի ունեցավ 1937 թ. մարտ ամսին:

Սակայն կուսակցական գործունեության բնագավառում կուտակված փորձը զուր չանցավ: Արգելված առաջին կուսակցության փոխարեն ֆրանսիական Մարոկկոյի քաղաքական ասպարեզում հայտնվեցին երկու նոր քաղաքական կուսակցություններ՝ Ազգային շարժման կուսակցությունը և Պահանջների իրականացման ազգային կուսակցությունը: Նրանք կազմավորվեցին նախկին՝ Մաղրիբյան բլոկ կուսակցության հիմքի վրա: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ այդ երկու նոր կուսակցությունների ղեկավարները նախկին կուսակցության

առաջնորդներն էին: Ազգային շարժման կուսակցությունը գլխավորում էր Մուհամմադ ալ–Վազանին, իսկ Պահանջների իրականացման ազգային կուսակցությունը՝ Ալյալ ալ–Ֆասին, Բալաֆրաջը և Մուհամմադ Լիազիդին:

Այդ երկու նոր քաղաքական կուսակցություններն ասպարեզ իջան և իրենց գործունեությունը ծավալեցին մի այնպիսի շրջանում, երբ Մարոկկոյի ֆրանսիական և իսպանական գոտիներում նշանակալիորեն ուժեղացել էր մասսաների պայքարը իշխանությունների ռասիստական երանգ կրող քաղաքականության դեմ՝ իրենց իրավունքների, տնտեսական դրության բարելավման և դեմոկրատական ազատությունների համար: Դրանում զգալի էր այն մարոկկացիների լուման, որոնք սովորել էին Ֆրանսիայի ուսումնական հաստատություններում, աշխատել ֆրանսիական տնտեսության տարբեր բնագավառներում և ծանոթ էին դեմոկրատիայի համար ֆրանսիացիների քաղաքական պայքարին:

1937 թ հոկտեմբերի 13–ին գումարվեց Պահանջների իրականացման ազգային կուսակցության առաջին համագումար, որն ընդունեց իր ծրագրային փաստաթուղթը՝ «Ազգային պակտը»: Նա մի կողմից դատապարտում էր ֆրանսիական իշխանությունների քաղաքականությունը, որը նպատակաուղղված էր դեմոկրատական ազատությունների և մարոկկացիների իրավունքների սահմանափակմանը, ահաբեկչության, բռնի մեթոդների և ռասայական խտրականության կիրառմանը, մյուս կողմից՝ առաջադրում էր մարոկկացիների գլխավոր քաղաքական, տնտեսական և դեմոկրատական պահանջները՝ մարոկկացիների իրավունքների հարգում, դեմոկրատական ազատությունների՝ խոսքի, մամուլի, միությունների կազմակերպման ազատություն, տնտեսական կյանքի բարելավում, որն իր մեջ ներառնում էր նաև հողի և ջրի արդարացի բաժանում, ինչպես նաև օգնության ցուցաբերում տնտեսական ծանր վիճակում գտնվող և սովի շեմին հայտնված հարյուր հազարավոր մարոկկացիներին: Սակայն այդ կուսակցության ծրագրային փաստաթղթում բացակայում էին պրոտեկտորատի վերացման և Մարոկկոյի անկախության պահանջները: Դեռ ավելին՝ նա պարունակում էր հատուկ կետ առ այն, որ մարոկկացիներն իրենց պահանջների իրականացմանը ձգտում են օրենքի շրջանակներում: Այդ կուսակցությունը, ինչպես նրա նախորդը, դեմ էր կտրուկ և արմատական քայլերի: Նման մոտեցումներն էին ընկած նաև Ազգային շարժման կուսակցության քաղաքականության և գործունեության հիմքում:

Ֆրանսիական Մարոկկոյում այդ շրջանում տեղի ունեցած հակաֆրանսիական ելույթների մեջ պետք է առանձնացնել 1937 թ. օգոստոսին Մեկնեսում տեղի ունեցած հուժկու ելույթը, որը տարածվեց այլ շրջաններում, այդ թվում և քաղաքներում: Դա կապված էր ջրաբաժանման հարցում ֆրանսիական իշխանությունների խտրական քաղաքականության հետ, որը նախապատվությունը տալիս էր Մարոկկոյում հաստատված ֆրանսիական կոլոններին: Այդ ելույթը ճնշվեց ֆրանսիական զորքերի կողմից, որի ընթացքում եղան բազմաթիվ զոհեր: Մարոկկոյի ֆրանսիական իշխանությունները չվարանեցին զորք դուրս բերել նաև այդ նույն թվականի հոկտեմբերին Ֆեսում, Մարակեշում, Պորտ Լիոտեում և այլ քաղաքներում կայացած ցույցերի մասնակիցների դեմ:

Քաղաքական համանման զարգացումներից դուրս չմնաց նաև Մարոկկոյի իսպանական գոտին: Այստեղ կազմավորվել և գործում էր Ազգային բարեփոխումների կուսակցությունը, որը գլխավորում էր Աբդ ալ–Հալիկ Տորեսը: Թեև կուսակցությունը կրում էր բարեփոխումների անունը, սակայն իրականում նա չէր սահմանափակվում միայն ռեֆորմներով և պայքարի ընթացքում առաջ քաշեց Մարոկկոյի իսպանական գոտու անկախության հարցը: Դա մի քայլ առաջ էր՝ համեմատած մինչ այդ ծնավորված կուսակցությունների պահանջների: Սակայն կոչ անելով պայքարել հանուն անկախության՝ այդ կուսակցությունը նկատի ուներ ոչ թե համայն Մարոկկոն, այլ միայն նրա իսպանական գոտին:

Իսպանիայում, ի տարբերություն Ֆրանսիայի, հաստատվել էր Ֆրանկոյի ֆաշիստական դիկտատուրան, որն ավելի էր դժվարացնում իսպանական գոտու մարոկկացիների պայքարը: Չնայած այդ հանգամանքին՝ մարոկկացիները 1936–1939 թթ. մեկ անգամ չէ, որ հանդես էին եկել հանուն իրենց ազգային իրավունքների: Ընդ որում՝ նրանց ելույթները շատ հաճախ հակաֆաշիստական բնույթ էին կրում: Նման ելույթ տեղի ունեցավ 1938 թ. հունիսին իսպանական Մարոկկոյի մայրաքաղաքում՝ Տետուանում, որի ժամանակ հնչեցին «Մահ Ֆրանկոյին» կոչեր: Ավելի հուժկու և կազմակերպված էր ջիբալ ցեղային միության հակաֆաշիստական զինված ելույթը 1938 թ. մարտին ալ–Քսար ալ–Քաբիրի շրջանում, որը արյան մեջ խեղդեցին իսպանական զինվորները:

Դեպքերի զարգացումը և քաղաքական իրադրության հետագա սրումը վկայում էին այն մասին, որ Մարոկկոն՝ թե՛ ֆրանսիական և թե՛ իսպանական, գտնվում էր որակապես նոր ելույթների ու քաղաքական ցնցումների նախօրյակին: Սակայն վրա հասած Երկրորդ համաշխար-

հային պատերազմն ընդհատեց քաղաքական իրադարձությունների բնականոն զարգացումը:

6. Մարոկկոն Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939–1945 թթ.)

Հյուսիսային Աֆրիկան, ինչպես արդեն անդրադարձել ենք սույն աշխատության նախորդ հատորում, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ վերածվեց նրա կարևոր թատերաբեմերից մեկին: Ռազմական ակտիվ գործողություններ ծավալվեցին հատկապես Եգիպտոսում և Լիբիայում: Պատերազմի ջրապտույտի մեջ ներգրավվեցին նաև Ալժիրը, Թունիսը և, ավելի պակաս չափով, Մավրիտանիան: Այդ գործընթացից դուրս չմնաց նաև Մարոկկոն:

Պատերազմի շունչը Մարոկկոյում զգացվեց ավելի վաղ, որը կապված էր այն սերտ հարաբերությունների հետ, որ Իսպանիան հաստատել էր ֆաշիստական Գերմանիայի և Իտալիայի հետ: Գերմանիան և Իտալիան դեռևս 1936–1939 թթ. քաղաքացիական պատերազմի ժամանակ իրականացրել էին ռազմական ինտերվենցիա Իսպանիայի Հանրապետության դեմ: Այդ երկու ֆաշիստական պետությունների զինված միջամտությունը վճռական նշանակություն ունեցավ Իսպանիայում հանրապետական վարչակարգի տապալման գործում՝ չնայած Խորհրդային Միության և այլ երկրների դեմոկրատական ուժերի աջակցությանը և ռազմական օգնությանը հանրապետականներին: Գերմանա–իտալական ֆաշիստական ուժերի սվիններ վրա Իսպանիայում հաստատվեց ֆաշիստական դիկտատուրա՝ գեներալ Ֆրանկոյի գլխավորությամբ: Ֆրանկոն Գերմանիային ու Իտալիային էր պարտական իշխանությունը Իսպանիայում գրավելու և իր անսահմանափակ ու դաժան դիկտատուրան հաստատելու համար: Եվ նա հետագայում իր «պատրոնների» նկատմամբ ապերախտ չգտնվեց:

Գերմանիան պատերազմի նախօրեին չտեսնված ակտիվ գործողություններ ծավալեց տարբեր երկրներում՝ իր ազդեցությունն ուժեղացնելու, համակիրներ նվաճելու և այդ երկների հասարակայնության համակրանքն իր կողմը նվաճելու նպատակով: Բացառություն չկազմեց նաև Իսպանիան: Եվ եթե այլ երկրներում դա կապված էր մեծ դժվարությունների հետ, ապա Իսպանիան իր դռները լայնորեն բացեց գերմանական զանազան «առաքելությունների», «ներկայացուցիչների» և բա-

ցահայտ ու գաղտնի գործակալների առջև: Գերմանիան, ձգտելով ամրապնդել իր ազդեցությունը և դիրքերը Իսպանիայում, նպատակ ուներ ոչ միայն նրան գրավել իր կողմը կամ ապահովել նրա լոյալությունը առաջիկա պատերազմում, այլև այն վերածել գերմանական հենարանի՝ Հյուսիսային Աֆրիկա ներխուժելու համար: Իսպանիայի դերը Գերմանիայի համար այս դեպքում կարևորվում էր նաև այն հանգամանքով, որ Մարոկկոյի մի մասի վրա հաստատվել էր իսպանական պրոտեկտորատ, որը լայն հնարավորություններ էր տալիս գերմանական ուղղակի ներթափանցման համար Մարոկկոյի իսպանական գոտի, այսինքն՝ Հյուսիսային Աֆրիկա՝ օգտագործելով Իսպանիայի դիկտատոր Ֆրանկոյի բարյացակամ դիրքորոշումը Գերմանիայի և նրա ֆյուրերի՝ Ադոլֆ Հիտլերի նկատմամբ:

Ֆրանկոն իր հերթին ուներ իր սեփական քաղաքական նպատակները, այդ թվում նաև Մարոկկոյում, որին նա անմիջապես հետամուտ եղավ, երբ սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը:

Գերմանական և իսպանական ծրագրերի իրականացմանը նպաստեց նրանց համար ստեղծված այն բարենպաստ քաղաքական իրադրությունը, որն առաջացավ պատերազմում Ֆրանսիայի պարտության և 1940 թ հունիսին նրա կապիտուլյացիայի հետևանքով: Ֆրանսիայում հաստատվեց Պետեն–Լավալի գերմանական խամաճիկ վարչակարգը, որի նստավայրը ոչ թե Փարիզը, այլ Վիշի քաղաքն էր: Վիշիի կառավարությունը կատարում էր ֆաշիստական Գերմանիայի պահանջները: Նա թեև հայտարարեց, որ պահպանում է իր տիրապետությունը և բոլոր իրավունքներն իր գաղութների վրա, այդ թվում նաև Հյուսիսային Աֆրիկայում, բայց դա մնաց սոսկ հայտարարություն, քանի որ ռազմական պարտություն կրած Ֆրանսիան դրա համար նախկին ուժը և քաղաքական ազդեցությունը չուներ: Նրա գաղութները՝ ներառյալ հյուսիսաֆրիկյան, դարձան կռվախնձոր մի կողմից՝ Գերմանիայի, Իտալիայի և Իսպանիայի, իսկ մյուս կողմից՝ Անգլիայի և ԱՄՆ–ի միջև: Շուտով որպես մրցակից ասպարեզ իջավ նաև «Ազատ Ֆրանսիան», որը հռչակել էր գեներալ Շառլ դը Գոլը: Վերջինս հրաժարվեց ճանաչել Պետենի իշխանությունը, դատապարտեց նրա համագործակցությունը հիտլերյան Գերմանիայի հետ և իր գլխավոր խնդիրը համարեց Ֆրանսիայի ազատագրումը գերմանական օկուպացումից ու Պետենի ազգադավ վարչակարգի տապալումը: Դը Գոլն իր կարևոր խնդիրներից մեկը համարեց ֆրանսիական գաղութային տիրապետության պահպանումը, և այդ հողի վրա

նա սուր հակասություններ ուներ ոչ միայն Գերմանիայի և Իտալիայի, այլև Անգլիայի ու ԱՄՆ–ի հետ, որոնք երբեմն շատ սուր բնույթ էին կրում:

Ինչպիսի՞ անմիջական անդրադարձ ունեցավ Ֆրանսիայի կապիտուլյացիան Մարոկկոյի վրա: Վիշիի կառավարությունն իր իշխանությունը տարածեց Մարոկկոյի վրա և ծնականորեն պահպանեց ֆրանսիական պրոտեկտորատն ու նրա կառավարման համակարգը: Սակայն նա ի վիճակի չեղավ կանխելու «առանցքի» երկրների՝ Գերմանիայի և Իտալայի ներթափանցումը Մարոկկո: Վերջիններս Մարոկկոն վերածեցին իրենց հումքային և պարենային պահանջները բավարարող երկրամասի, որտեղից արտահանում էին արդյունաբերական հումք, գյուղատնտեսական մթերքներ, պարեն և այլ ապրանքներ՝ իրենց երկրների և բանակների պահանջները բավարարելու համար: Գերմանական ռազմանավերը լայնորեն օգտվեցին Մարոկկոյի տարածքային ջրերից: Գերմանական ռազմածովային ուժերը Մարոկկոյի ջրային տարածքն օգտագործում էին որպես հուսալի թաքստոց իրենց վերջոյա նավերի և սուզանավերի, այդ թվում և տրանսպորտային նավերի համար՝ անգլիական և ամերիկյան հարձակումներից: Իսկ գերմանական ավիացիան ազատորեն օգտագործում էր Մարոկկոյի օդանավակայանները:

«Առանցքի» երկրներն իրենց սովորության համաձայն ռազմական գործողությունները զուգորդում էին լայնածավալ քարոզչական աշխատանքների հետ: Նրանք Ֆրանսիայի դիրքերը վերջնականապես թուլացնելու և մարոկկացիներին իրենց կողմը գրավելու համար նրանց «խոստանում էին» անկախություն պատերազմից հետո: Նման խոստումները, որոնք արվում էին տակտիկական նկատառումներով, այդուհանդերձ, իրենց ազդեցությունն ունեցան մարոկկոյական որոշ խավերի վրա: Դրանց դրականորեն արձագանքեցին մտավորականության և բուրժուազիայի առանձին խմբավորումներ՝ հույս ունենալով այդ կերպ հասնել Մարոկկոյի անկախությանը. Այդ երևույթն առավել ակնհայտորեն դրսևորվեց Մարոկկոյի իսպանական գոտում: Սակայն սխալ կլիներ նրանց համարել ֆաշիստամետ ուժեր, քանի որ նրանք հանդես էին գալիս ոչ թե հօգուտ ֆաշիզմի և նրա գաղափարախոսության, այլ ձգտում էին օգտվել միջիմպերիալիստական հակասություններից և հասնել իրենց ազգային խնդիրների լուծմանը:

Մարոկկոն դարձավ Գերմանիայի ստրատեգիական կարևոր հենարանը Հյուսիսային Աֆրիկայում՝ նաև «սև» Աֆրիկա ներթափանցելու ստրատեգիական հեռահար նպատակներով:

Ստեղծված իրադրությունից վարպետորեն օգտվեց Իսպանիան: Նա 1940 թ. հունիսի 14–ին գրավեց Տանժերը: Ուշագրավ է, որ Իսպանիան այդ քայլին դիմեց Ֆրանսիայի նախնական համաձայնությամբ: Ֆրանկոն իր այդ քայլով կոպտորեն խախտեց Տանժերի վերաբերյալ միջազգային պայմանագիրը: Բայց դա եվրոպական պատմության այն ժամանակաշրջանն էր, երբ ֆաշիստական, դիկտատորական և ամբողջատիրական վարչակարգ ունեցող երկրների համար պայմանագրերն ուժ չունեցող և անարժեք թղթի կտոր էին, և միակ իսկական իրավունքը ուժն էր: Ֆրանկոյական Իսպանիան տիպաբանորեն պատկանում էր այդ երկրների շարքին:

Իսպանիան 1942 թ. դեկտեմբերին դիմեց հաջորդ քայլին՝ Տանժերի գոտին միացրեց իր տիրույթներին:

Այսպիսով՝ Տանժերի գրավումով Մարոկկոյի երեք մասերից երկուսն անցան Իսպանիայի տիրապետության տակ:

Քանի դեռ Եգիպտոսում և Լիբիայում ծանր մարտեր էին ընթանում, Անգլիան և ԱՄՆ–ը հնարավորություն չունեին անհրաժեշտ ուշադրություն դարձնել Մարոկկոյին և գերմանացիների ու Ֆրանկոյի գործողություններին այնտեղ: Սակայն նրանք մոտիկից հետևում էին Մարոկկոյում իրադարձությունների զարգացմանը և տիրող իրադրությանը, ինչը, բնականաբար, անհանգստացնում էր նրանց: 1942 թ. կեսերին պարտության մատնելով Ռոմելի զորքերին և նրանց վերջնականապես դուրս շպրտելով Եգիպտոսից ու Լիբիայից՝ ԱՄՆ–ը և Անգլիան կենտրոնացան Հյուսիսային Աֆրիկայի մյուս երկրների, այդ թվում և Մարոկկոյի խնդիրների վրա: 1942 թ. հոկտեմբերի 25–ին ԱՄՆ–ի պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտը և Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլը համաձայնագիր ստորագրեցին նույն թվականի վերջերին Հյուսիսային Աֆրիկա իրենց զորքերն ափ հանելու մասին:

Չեռք բերված համաձայնությունն իրագործվեց 1942 թ. նոյեմբերին: Ֆաշիստական զորքերը չկարողացան լուրջ դիմադրություն ցույց տալ անգլո–ամերիկյան զորքերին, պարտություն կրեցին և ստիպված էին հեռանալ Աֆրիկայից: Սակայն նրանց ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս ֆրանսիական զորքերը, որոնք հավատարիմ էին Վիշիի կառավարությանը: Հատկապես ուժեղ մարտեր էին գնում Կասաբլանկայի, Պորտ Լիոտեի և Ֆադալի շրջաններում: Մարտերն այնքան թեժ էին, որ Ազատ Ֆրանսիայի ղեկավար գեներալ Շառլ դը Գոլը, որը համագործակցում էր ԱՄՆ–ի, Անգլիայի և հակահիտլերյան կոալիցիայի մյուս երկրնե-

րի հետ, հատուկ կոչով դիմեց ֆրանսիական բանակի զինվորներին և սպաներին՝ դադարեցնել դիմադրությունը և անցնել դաշնակիցների կողմը. 1942 թ. նոյեմբերի 11–ին պատերազմական գործողությունները դադարեցին: Ֆրանսիական կորուստները բավականին մեծ էին՝ 3 հազար մարդ սպանված և վիրավորված: Նրանք ունեցան նաև ռազմական տեխնիկայի մեծ կորուստներ, մասնավորապես խորտակվեցին և վնասվեցին մի քանի տասնյակ նավեր, ոչնչացվեց 135 ինքնաթիռ և այլն:

Բավականին դժվար խնդիր դարձավ Մարոկկոյում հաստատվելիք իշխանության հարցը: Այստեղ ուժեղ մրցակցություն էր գնում մի կողմից՝ ԱՄՆ–ի, իսկ մյուս կողմից՝ ֆրանսիացիների միջև: Դրությունը բարդանում էր նրանով, որ ֆրանսիացիները միասնական չէին, թեև բոլորն էլ հասկանում էին, որ հարցը պետք է լուծել ամերիկացիների հետ, որոնք այդ ընթացքում դարձել էին ամենաազդեցիկ և թելադրող ուժը, և առանց նրանց համաձայնության հնարավոր չէր լուծել իշխանության հարցը Մարոկկոյում:

Ամերիկացիները նախապատվությունը տվեցին ծովակալ Դարլանին, որը մինչ այդ, լքելով վիշիականներին, անցել էր ամերիկացիների կողմը: Ամերիկյան հրամանատարությունը նրան նշանակեց գլխավոր կոմիսար: 1942 թ դեկտեմբերի 7–ին ծովակալ Դարլանը, ստանալով ԱՄՆ–ի և Անգլիայի համաձայնությունը, «իրեն հայտարարեց Հյուսիսային Աֆրիկայում ֆրանսիական պետության ղեկավար և բոլոր ցամաքային, օդային և ծովային ուժերի գլխավոր հրամանատար»: Սակայն ծովակալին վիճակված չէր դառնալ Հյուսիսային Աֆրիկայում «Ֆրանսիական պետության» ղեկավար. դեկտեմբերի 24–ին նա սպանվեց: Ամերիկյան հրամանատարության որոշումով նոր ղեկավար նշանակվեց գեներալ Ժիրոն, որը մինչ այդ նշանակվել էր Աֆրիկայում ֆրանսիական ուժերի հրամանատար: Նրան փոխանցվեցին Դարլանի լիազորությունները:

Թվում էր, թե խաղից դուրս էր մնացել գեներալ Շառլ դը Գոլը, որին տվյալ պահին պաշտպանում էին անգլիացիները. Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլը ԱՄՆ–ի պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտին ուղղված իր մի նամակում գրում էր, որ անհրաժեշտ է դը Գոլին համապատասխան արժանի տեղ հատկացնել Աֆրիկայում ֆրանսիական կառավարման համակարգում: Իսկ ամերիկացիները, հատկապես նրանց պրեզիդենտը, չէին համակրում և վստահում իր համառությամբ աչքի ընկնող Շառլ դը Գոլին: Հավանաբար այստեղ իր դերն էր խաղում նաև այն հանգամանքը, որ դը Գոլը երբեք չէր դառնա խաղալիք ամերիկացի-

ների ձեռքում և նրանց խոնարհ կամակատարը: Ռուզվելտն անուշադրության մատնեց Չերչիլի խնդրանքը, և գեներալ Շառլ դը Գոլը դուրս մնաց կառավարման համակարգից:

Սակայն իրադրությունը շուտով փոխվեց հօգուտ գեներալ Շառլ դը Գոլի: Այն հանգամանքը, որ նա ոչ միայն չմիացավ Պետենին, այլև բացահայտ պայքար ծավալեց նրա և Ֆրանսիայի ֆաշիստական օկուպացման դեմ, նրան մեծ հեղինակություն բերեցին: Նրա շուրջը համախմբվեցին բոլոր հայրենասերները՝ ինչպես բուն Ֆրանսիայում, այնպես էլ նրանից դուրս, այդ թվում և Մարոկկոյում: Նա լայն գործունեություն ծավալեց Հյուսիսային Աֆրիկայի ֆրանսիական գաղութներում: Նա հռչակեց «Ազատ Ֆրանսիա», որն այնուհետև վերանվանվեց «Մարտնչող Ֆրանսիայի»: Նա ձևավորեց և գլխավորեց Ֆրանսիայի ազատագրության ազգային կոմիտեն, որը 1943 թ. նոյեմբերի 3–ին վերակազմավորվեց Ֆրանսիական Հանրապետության ժամանակավոր կառավարության, որը դարձյալ նա գլխավորեց: Նա այդ ընթացքում բազմիցս եղել էր Մարոկկոյում, հանդիպել և բանակցություններ վարել տեղական ղեկավար ուժերի հետ և ձեռք բերել նրանց աջակցությունը, կազմակերպել ռադիոհաղորդումներ Ռաբաթից և այլն: Դը Գոլը դարձավ ֆրանսիական ամենահեղինակավոր և ամենաազդեցիկ քաղաքական և ռազմական ղեկավար գործիչը: Դա արդեն ընդունում էին բոլորը, և այդ իրողության հետ հարկադրված էր հաշտվել նաև ամերիկյան ղեկավարությունը: Մարոկկոյում և ֆրանսիական այլ գաղութներում և պրոտեկտորատներում այլևս հնարավոր չէր որևէ բան ձեռնարկել առանց Շառլ դը Գոլի համաձայնության:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ծավալվել էր դիվանագիտական լայն գործունեություն: Աշխարհի տարբեր մասերում տեղի էին ունենում տարբեր մակարդակների զանազան հանդիպումներ և կոնֆերանսներ, որոնք մեծ նշանակություն ունեցան հատկապես հակահիտլերյան կոալիցիայի երկրների ջանքերը միավորելու և պատերազմը հաղթական ավարտի հասցնելու գործում:

Բարձր մակարդակի նման մի հանդիպում 1943 թ. հունվարին կայացավ Մարոկկոյի Կասաբլանկա քաղաքում ԱՄՆ–ի պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտի և Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինստոն Չերչիլի միջև: Նրանք հավաստեցին, որ Միավորված ազգերի գլխավոր խնդիրն է հիտլերյան Գերմանիայի ջախջախումը: Որոշվեց ռազմական արշավը 1943 թ. Հյուսիսային Աֆրիկայում վերջնականապես ավարտելուց

հետո ռազմական գործողությունները տեղափոխել Իտալիա: Հատուկ քննարկման առարկա դարձավ երկու երկրների վերաբերմունքը ֆրանսիական ազգային–ազատագրական շարժմանը, ինչպես նաև նրանց քաղաքականությունը Աֆրիկայում ֆրանսիական գաղութային տիրապետության հանդեպ:

Մարոկկոյում կայացած Անգլիայի և ԱՄՆ–ի ղեկավարների հանդիպումն իր նշանակությունն ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմում հակահիտլերյան կոալիցիայի ռազմական գործողությունների հետագա ուղղությունների և հարվածների կանխագծման գործում: Նրանք հավաստեցին, որ պատերազմը Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի դեմ կշարունակվի մինչև նրանց «անվերապահ կապիտուլյացիան»:

Կասաբլանկայում գտնվելու ընթացքում ԱՄՆ–ի պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտը «Անֆա» հյուրանոցում հանդիպեց Մարոկկոյի սուլթան Մուհամմադ բին Յուսուֆի հետ: Այդ հանդիպմանը սուլթանը տալիս էր առանձնահատուկ նշանակություն՝ ելնելով այն իրողությունից, որ ԱՄՆ–ը արդեն այդ ժամանակ դարձել էր արևմտյան ամենաուժեղ պետությունը, որը վճռորոշ դերակատարություն ուներ առանց բացառության բոլոր հարցերի, այդ թվում և դասական գաղութատիրության վերացման հարցում: Սուլթանը մեծապես ոգևորված էր, երբ ճաշի ժամանակ Ռուզվելտը հաստատակամորեն ասաց նրան, որ «գաղութային շահագործման դարաշրջանն ավարտվում է»: Ռուզվելտը զրույցը սուլթանի հետ վարում էր մեծ տակտով՝ ընդգծելով իր հարգանքը նրա նկատմամբ. Սուլթանը դա ընկալեց որպես զրույց հավասարը հավասարի հետ: Կողմերը քննարկեցին նաև ապագայում Մարոկկոյի և ԱՄՆ–ի միջև քաղաքական և տնտեսական փոխհարաբերությունների հարցերը: Ընդսմին, ամերիկյան պրեզիդենտն անընդհատ ընդգծում էր այն օգուտները, որ Մարոկկոն կարող էր ունենալ ԱՄՆ–ի հետ համագործակցելու դեպքում: Նա առաջարկեց սուլթանին երիտասարդ մարոկկացիներ ուղարկել ամերիկյան համալսարաններ ուսանելու և մասնագիտական կրթություն ստանալու համար:

Խորհրդանշական է, որ Մարոկկոյի սուլթանը Ռուզվելտի հետ հանդիպման էր գնացել առանց այդ մասին տեղյակ պահելու Մարոկկոյում ֆրանսիական իշխանություններին, թեև դա պրոտեկտորատի պահանջներից մեկն էր: Ֆրանսիան հարկադրված էր համակերպվել սուլթանի նման պահվածքի հետ:

Սուլթանը, հասկանալի է, չէր կարող անտեսել Ֆրանսիային: Դեռ այդ ժամանակները չէին եկել: Եվ 1943 թ. օգոստոսին կայացավ նրա հանդիպումը «Մարտնչող Ֆրանսիայի» ղեկավար գեներալ Շառլ դը Գոլի հետ: Վերջինս մեծապես տպավորված էր սուլթանից՝ հատկապես առանձնացնելով նրա հպարտ պահելու հանգամանքը և իր երկիրն առաջադիմության ուղիով տանելու նրա վճռականությունը: Ֆրանսիական լիդերը հասկանում էր, որ ամեն ինչ թողնել նախկին վիճակում այլևս անհնարին է, և հարկավոր են որոշ փոփոխություններ: Ձրույցի ժամանակ Շառլ դը Գոլը, շոշափելով ֆրանս–մարոկկոյական ապագա փոխհարաբերությունների հարցը, զգուշորեն այն միտքն արտահայտեց, որ «Ֆրանսիան պատրաստ է շատ բան անել նրանց համար, ովքեր դա թանկ են գնահատում»: Դա սուլթանին ուղղված ազդանշան էր, որը վերջինս ճիշտ ընկալեց և մշտապես հաշվի էր առնում հետագայում Ֆրանսիայի հետ ունեցած իր փոխհարաբերություններում:

Պատերազմի տարիներին արմատական բնույթի զգալի տեղաշարժեր կատարվեցին մարոկկացիների ազգային ինքնագիտակցության մեջ: Նրանք ավելի հստակ ու հաստատակամորեն սկսեցին առաջադրել ֆրանսիական պրոտեկտորատի վերացման և Մարոկկոյի անկախության համազգային պահանջը: Այդ պահանջների ձայնափողը դարձավ 1944 թ. հունվարին ձևավորված մարոկկոյական նոր քաղաքական կուսակցությունը, որը կոչվեց Անկախության կուսակցություն: Նա կազմեց երկու հիմնականան մասերից բաղկացած ծրագրային փաստաթուղթ, որը հանձնվեց պրոտեկտորատի ֆրանսիական իշխանություններին և Մարոկկոյի սուլթան Մուհամմադ V–ին: Այդ քաղաքական փաստաթուղթն ուղարկվեց նաև հակահիտլերյան կոալիցիայի անդամ երկրներին:

Առաջին մասում տրվում էր ֆրանսիական պրոտեկտորատի իշխանությունների գործունեության գնահատականը, որը հիմնականում ներկայացված էր բացասական գույներով: Հիմնական միտքն այստեղ այն էր, որ Մարոկկոյում ֆրանսիական իշխանությունների հաստատած պրոտեկտորատի վարչակարգը մարոկկացիներին զրկել է սեփական երկիրը կառավարելու իրավունքից և ազատություններից, իսկ Ֆրանսիան՝ որպես մետրոպոլիա, իր ձեռքում է կենտրոնացրել ամբողջ իշխանությունը և իր ցանկացած ձևով է օգտագործում Մարոկկոյի բնական հարստությունները: Փաստաթուղթը, դատապարտելով ֆրանսիացիների այդ քաղաքականությունը, մատնանշում էր, որ հիմա ժամանակները փոխվել են, և անհրաժեշտ է հաշվի առնել ժողովուրդների ինքնորոշ-

ման և իրենց սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքը: Մատնանշվում էր նաև այն հանգամանքը, որ մարոկկացիները դաշնակիցների բանակներում կռվել են առանցքի երկրների դեմ տարբեր ռազմաճակատներում և իրենց արյունը թափել նրանց կողմից նվաճված ժողովուրդների ու երկրների ազատագրության համար:

Երկրորդ՝ հիմնական մասում ընդգծվում էր, որ հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մարոկկացիներն իրավունք ունեն պահանջելու, որ Մարոկկոյի երեք գոտիներին էլ տրվի անկախություն և միավորվելու ու մեկ միասնական անկախ պետություն ստեղծելու հնարավորություն: Անկախության կուսակցությունը, ինչպես նշված էր փաստաթղթում, առաջարկում էր սուլթանին իր ձեռքը վերցնել երկրի կառավարումը և նախապատրաստել բարեփոխումների մի փաթեթ: Նա սուլթանին առաջարկում էր նաև բանակցություններ սկսել շահագրգիռ պետությունների հետ, որպեսզի նրանք ոչ միայն ճանաչեն Մարոկկոյի անկախությունը, այլև երաշխավորեն այն:

Մարոկկոյի նորագույն պատմության պրոտեկտորյան ժամանակաշրջանում դեռևս նման համարձակ քաղաքական ծրագիր չէր առաջադրվել և ներկայացվել հասարակության դատին: Դա կարելի է բնութագրել որպես որակական նոր քայլ, որը վկայում էր այն մասին, որ ազգային–ազատագրական պայքարը Մարոկկոյում թևակոխում էր նոր փուլ.

Ուշագրավ է նաև այն փաստը, որ համարյա նույն ժամանակ համանման պահանջներ առաջադրվեցին Մարոկկոյի իսպանական գոտում.

Այդ պահանջները խանդավառությամբ ընդունեց Մարոկկոյի ժողովուրդը, որն իր պատրաստակամությունը հայտնեց սատար կանգնել նրանց:

Բոլորովին այլ եղավ ֆրանսիական իշխանությունների դիրքորոշումը· Նրանք կտրուկ դեմ էին առաջադրված պահանջներին և դիմեցին բռնությունների՝ ճնշելու ի պաշտպանություն Մարոկոյի անկախության և միավորման կազմակերպված զանգվածային ցույցերն ու ելույթները·

Անկախություն կուսակցությունը 1945 թ. մարտի 8–ին դիմեց Միավորված ազգերի կազմակերպության հիմնադիր կոնֆերանսի նախագահին՝ Մարոկկոյին ՄԱԿ–ի անդամ ընդունելու խնդրանքով, որը, սակայն, չարժանացավ դրական արձագանքի:

7. Մարոկկոն հետպատերազմյան առաջին տարիներին (1945–1950 թթ.)

Պատերազմը դեռ նոր էր ավարտվել, երբ բարձրացավ Իսպանիայի կողմից 1940–1942 թթ. Տանժերի միջազգային գոտին օկուպացնելու և իսպանական տիրույթ հայտարարելու հարցը: Քանի դեռ ընթանում էր պատերազմը, եվրոպական պետությունները հնարավորություն չունեին անդրադառնալ այդ հարցին, թեև նրանք Տանժերի գրավումը Իսպանիայի կողմից համարում էին միջազգային նորմերի և Տանժերի վերաբերյալ միջազգային կարգավիճակի կոպիտ և անթույլատրելի խախտում:

Պատերազմի կրակոցները Եվրոպայում լռեցին 1945 թ. մայիսի սկզբներին, և օգոստոսին արդեն Ալխեսիրասի տրակտատը ստորագրած պետությունները հրավիրեցին հատուկ կոնֆերանս՝ քննարկելու Տանժերի հարցը՝ նպատակ ունենալով վերականգնել նրա միջազգային կարգավիճակը:

Կոնֆերանսը տեղի ունեցավ 1945 թ. օգոստոսի 10–31–ը Փարիզում, որին հրավիրվել էին նաև ԱՄՆ–ի և Խորհրդային Միության ներկայացուցիչները: Մարոկկոյի բոլոր փորձերը՝ մասնակցել կոնֆերանսին և իր դիրքորոշումը ներկայացնել այս խնդրի վերաբերյալ, ավարտվեցին ապարդյուն:

Անգլիան, Ֆրանսիան, ԱՄՆ–ը և ԽՍՀՄ–ն ընդունեցին «Եզրափակիչ ակտ» կոչված փաստաթուղթը, որին կցվեց անգլո–ֆրանսիական համաձայնագիրը Տանժերի միջազգային կառավարման վերականգնման մասին: Այդ փաստաթղթերով նախատեսվում էր իսպանական զորքերի հեռացում Տանժերի գոտուց և Մարոկկոյի սուլթանի ինքնիշխան իրավունքների հաստատում: Սակայն սուլթանի ինքնիշխան իրավունքների վերականգնումը ձևական բնույթ էր կրում, քանի որ իրականում Տանժերում վերականգնվում էր կառավարման նախկին համակարգը: Նա կրկին դառնում էր միջազգային գոտի՝ կառավարման միջազգային համակարգով: Վերականգնված կառավարման այդ համակարգը համարվեց ժամանակավոր՝ մինչև պետությունների կողմից նոր համաձայնագրի ստորագրումը:

Ի կատարումն այդ որոշումների՝ Իսպանիան իր զորքերը դուրս բերեց Տանժերի գոտուց: Այսպիսով՝ վերականգնվեց նախկին ստատուս քվոն. Մարոկկոն մնում էր բաժանված երեք մասի:

Իսպանական զորքերի հեռանալը Տանժերից, որը նշանակում էր նաև, որ Տանժերը դադարում էր իսպանական գաղութային տիրապետության մաս կազմել, պետք է համարել կարևոր հաղթանակ:

Ազգային անկախության համար պայքարին համակրում էր նաև սուլթան Մուհամմադ V–ը, որը նույնիսկ օգնություն էր ցույց տալիս մարոկկոյական ազգային ուժերին: Նա 1947 թ. ապրիլի 10–ին այցելեց Տանժեր՝ արժանանալով տեղական բնակչության աննախընթաց ջերմ ընդունելությանը: Այստեղ նա հանդես եկավ ծրագրային ելույթով, որտեղ բացահայտորեն և համարձակ կերպով ձևակերպեց Մարոկկոյի ազատագրական շարժման երեք հիմնական պահանջները՝ Մարոկկոյի ազատություն, ինքնիշխանություն և միասնություն:

Սուլթանի տանժերյան ելույթը յուրատեսակ ազդանշան ծառայեց համամարոկկոյական հակաֆրանսիական ելույթների համար, որոնց ալիքը 1947 թ. գարնանն իր մեջ ներառեց Մարոկկոյի տարբեր շրջաններ և քաղաքներ:

Դա կարևոր պահ էր Ֆրանսիայի տիրապետության վերացման և Մարոկկոյի անկախության համար մղվող պայքարում, որին ֆրանսիական իշխանությունները պատասխանեցին ամենավայրագ բռնություններով: Շատ վայրերում, ինչպես՝ Կասաբլանկայի աշխատավորներով բնակեցված թաղամասերում, տեղի ունեցան արյունալի բախումներ, որոնց ընթացքում զոհվեցին և վիրավորվեցին հարյուրավոր բանվորներ ու արհեստավորներ:

Քաղաքական լարվածությունը չթուլացավ նաև 1948 թ., երբ կրկին Մարոկկոն համակված էր ազատագրական ելույթներով: Այս անգամ պայքարողների առաջին շարքերում ընթանում էին բանվորները, որոնց հիմնական զենքը գործադուլներն էին: Գործադուլ հայտարարեցին երկաթուղայինները, մետաղագործները, հանքափորները, անգամ պետական ծառայողները:

Բանվորների՝ պայքարի առաջին դիրքերում հայտնվելը պատահական չէր: Հետպատերազմյան տարիներին աճել էր բանվորների թվաքանակը, և նրանց թիվը 1940–ական թվականների վերջերին արդեն հասնում էր 400 հազարի: Այդ շրջանում գործադուլային շարժման կարևոր առանձնահատկություններից մեկը կայանում էր նրանում, որ այն չէր սահմանափակվում միայն տնտեսական պահանջներով՝ աշխատավարձի բարձրացում, իրավունքների հարգում, սոցիալական դրության բարելավում և այլն. այլ շատ հաճախ վերածվում էր քաղաքական

ելույթների: Մյուս առանձնահատկությունն այն էր, որ բանվորական գործադուլները և քաղաքական ելույթները կրում էին զանգվածային բնույթ, որոնց սովորաբար մասնակցում էին հազարավոր մարդիկ, իսկ Հուրիբգայի հանքափորների գործադուլին մասնակցում էր 10 հազար մարդ: Դա սարսափեցրեց ֆրանսիական իշխանություններին, որի վկայությունն էր հանդիսանում այն հանգամանքը, որ նրանք այդ քաղաքում մտցրեցին պաշարողական դրություն և դիմեցին բացահայտ ահաբեկչական գործողությունների՝ ավերվեցին հանքափորների տները, ծեծբակալվեցին և բանտ նետվեցին հարյուրավոր բանվորներ, իսկ գործադուլավորների փոխարեն հանքերն էին բռնի կերպով ուղարկվում անփորձ գյուղացիները:

Ի պաշտպանություն գործադուլավորների՝ ոտքի ելան Մարոկկոյի տարբեր շրջանների և քաղաքների բնակիչները: Նրանք կազմակերպում էին ցույցեր, պաշտպանում գործադուլավորների իրավունքները, նրանց ազգային–քաղաքական պահանջները և խստորեն դատապարտում ֆրանսիական իշխանություններին ու նրանց տեռորի քաղաքականությունը մարոկկոյական հայրենասերների դեմ: Ֆրանսիական իշխանությունները նրանց դեմ նետեցին զինված ոստիկանական ուժեր, որոնք դաժան հաշվեհարդար տեսան ցուցարարների հետ: Միայն Ուջում և Ջարադում զոհվեց և վիրավորվեց 100 ցուցարար:

Նման իրադրություն էր տիրում նաև Մարոկկոյի իսպանական գոտում: Այստեղ իսպանական իշխանություններն այնքան հեռուն գնացին, որ 1948 թ. փետրվարին անգամ թույլ չտվեցին, որ Ազգային բարեկորոգումների կուսակցության հիմնադիր և ղեկավար Աբդ ալ–Հալիկ Տորեսը ժամանի Տատուան՝ վախենալով, որ նրա այցը հակաիսպանական ցույցերի առիթ կարող է դառնալ: Այդուհանդերձ, այդ ցույցերը տեղի ունեցան, երբ Տետուանի բնակչությանը հայտնի դարձավ իսպանական իշխանությունների արգելքի մասին: Տետուանում հայտարարվեց համընդհանուր գործադուլ, որի հետևանքով մի քանի օր կյանքը կանգ առավ իսպանական գոտու մայրաքաղաքում:

Մարոկկոյում ծավալվող ազգային–ազատագրական շարժման վրա դրական ազդեցություն ունեցան արաբական երկրներում ազգային–ազատագրական պայքարի ալիքի բարձրացումը և արաբական մի քանի երկրների կողմից գաղութային լծից ազատագրվելն ու անկախության ձեռքբերումը: Նրանց օրինակը ոգևորում էր մարոկկացիներին և նրանց մղում վճռական պայքարի: Իր դերակատարումն ունեցավ նաև

1945 թ. ստեղծված Արաբական պետությունների լիգան, որի գլխավոր խնդիրներից մեկն այդ ժամանակաշրջանում արաբական երկրներում ազգային պայքարին օժանդակելն էր, նրանց քաղաքական և բարոյական օգնություն ցույց տալը, միջազգային հանրային կարծիքն ի նպաստ արաբական երկրների արդարացի պայքարի տրամադրելը:

Հարկ է նաև հաշվի առնել Մաղրիբի երկրների կողմից միասնականորեն գործելու և հակագաղութային պայքարում իրենց ջանքերը համադրելու ձգտումը: Այդ ձգտումների արդյունքում 1948 թ. Կահիրեում հիմնվեց Հյուսիսային Աֆրիկայի ազատագրության կոմիտեն, որի մեջ միավորվեցին Ալժիրի, Թունիսի և Մարոկկոյի մի շարք ազգային–քաղաքական ուժեր ու կուսակցություններ: Մարոկկոն այդ կոմիտեում ներկայացնում էր երեք կուսակցություն՝ Անկախության կուսակցությունը, Անկախության դեմոկրատական կուսակցությունը և Ազգային բարեփոխումների կուսակցությունը: Կոմիտեն 1948 թ. գլխավորեց Մարոկկոյի ազատագրական պայքարի ականավոր ղեկավար, Ռիֆի Հանրապետության նախկին պրեզիդենտ Մուհամմադ Աբդ ալ–Քարիմ ալ–Խաթաբին: Նա, ինչպես նշվել է, 1926 թ. աքսորվել էր Ռեյունիոն կղզի: 1947 թ.՝ 21 տարի անց, ֆրանսիական իշխանությունները նրան թույլատրեցին լքել այդ կղզին և բնակություն հաստատել Ֆրանսիայի հարավային մասում՝ պայմանով, որ նա չզբաղվի քաղաքականությամբ: Մուհամմադ Աբդ ալ–Քարիմը համաձայնվեց: Սակայն երբ նրան տանող նավը մտավ եգիպտական Պորտ Սաիդ նավահանգիստը, ռիֆների նախկին մարտական ղեկավարը լքեց նավը և քաղաքական ապաստան խնդրեց եգիպտական իշխանություններից: Վերջիններս բավարարեցին նրա խնդրանքը, և նա մնաց Կահիրեում, իսկ շուտով ընտրվեց Հյուսիսային Աֆրիկայի ազատագրության կոմիտեի նախագահ, ինչը նրան հնարավորություն էր տալիս շարունակել իր գործունեությունը հանուն հյուսիսաֆրիկյան արաբական երկրների, այդ թվում և իր հարազատ Մարոկկոյի ազատագրության:

Ակնհայտ էր, որ Մարոկկոյում ստեղծվել էր նոր իրադրություն, որից փորձեց օգտվել սուլթան Մուհամմադ բին Յուսուֆը: Նա գտնում էր, որ հասել է ժամը սկզբունքային փոփոխություններ մտցնել ֆրանս–մարոկկոյական հարաբերություններում այն հաշվով, որ Մարոկկոյին տրամադրվի ավելի լայն ինքնուրույնություն: Նա հարկ համարեց այդ մասին տեղյակ պահել Ֆրանսիայի ղեկավարությանը: 1948 թ. հոկտեմբերի 3–ին սուլթանը հատուկ հուշագիր հղեց Ֆրանսիայի պրեզի-

դենտ Վենսան Օրիոլին՝ ցանկություն հայտնելով այդ հարցերը քննարկել Ֆրանսիայի ղեկավարության հետ: Վենսան Օրիոլը բանակցությունների համար պաշտոնապես Փարիզ հրավիրեց սուլթան Մուհամմադ բին Յուսուֆին, և վերջինս մի պատկառելի պատվիրակության գլուխն անցած մեկնեց Ֆրանսիայի մայրաքաղաք: Փարիզում նա բանակցությունների սեղանի վրա դրեց մարոկկոյական կողմի առաջարկությունները, որոնցից ամենակարևորները երեքն էին: Սուլթանն առաջարկում էր Մարոկկոյին տրամադրել քաղաքական և տնտեսական ինքնավարություն, ընդլայնել իր՝ սուլթանի իրավունքների շրջանակները և արհեստակցական միությունների ազատության հարցը: Եթե մինչ այդ սուլթանը, այդուհանդերձ, ինչ–որ հույս ուներ, որ իր առաջարկությունները կարժանանան լուրջ ընդունելության, և տեղի կունենա ֆրանս–մարոկկոյական հարաբերությունների համակողմանի քննարկում, ապա իր առաջարկությունները ֆրանսիական կողմին ներկայացնելուց հետո շուտով համոզվեց, որ Ֆրանսիան դրան պատրաստ չէ: Բանակցությունները մտան փակուղի: Այդ բոլորի փոխարեն Ֆրանսիան համաձայնվեց ստեղծել ֆրանս–մարոկկոյական խառը հանձնաժողով, որը պետք է քննարկեր Մարոկկոյում բարենորոգումներ կիրառելու հարցը.

Այսպիսով՝ ֆրանս–մարոկկոյական բանակցությունները ձախողվեցին, և Մարոկկոյի սուլթանը դատարկածեռն վերադարձավ Ռաբաթ: Այդ լուրը խորապես ցնցեց մարոկկացիներին, որոնք կրկին փողոց դուրս եկան՝ կազմակերպելով բողոքի զանգվածային ցույցեր. Մամուլը ողողված էր հակաֆրանսիական նյութերով, որոնցում խստորեն քննադատվում և դատապարտվում էր Ֆրանսիայի գաղութային քաղաքականությունը: Կուսակցությունները կազմակերպում էին հավաքներ, որոնց ժամանակ հռետորները կոչ էին անում չդադարեցնել պայքարը Մարոկկոյի նոր կարգավիճակի, սուլթանի իրավունքների ընդլայնման և ազատությունների համար: Հակագաղութային զանգվածային ելույթների կենտրոնների վերածվեցին մայրաքաղաք Ռաբաթը և Կասաբլանկան:

Մարոկկոն եռում էր:

8. Ֆրանսիական պրոտեկտորատի վերացման պայքարի եզրափակիչ փուլը (1951–1956 թթ.)

Ֆրանսիան օրակարգի հարց դարձրեց Մարոկկոյի սուլթանին տապալելը: Դա բացատրվում է նրանով, որ սուլթան Մուհամմադ V–ը

ոչ միայն ամբողջապես անցել էր Մարոկկոյի ազգային–հայրենասիրական ուժերի կողմը, պաշտպանում էր նրանց պահանջները և պայքարը Մարոկկոյի նոր կարգավիճակի համար, որը վերջին հաշվով պետք է հանգեցներ նրա անկախությանը, այլև այն հանգամանքով, որ սուլթանը տվյալ պահին դարձել էր այդ պայքարի խորհրդանիշը և իրենով մարմնավորում էր այդ պայքարի օրինական լինելն ու հեռանկարները: Ֆրանսիական իշխանությունները հասկանում էին, որ այլևս հնարավոր չէ սուլթանին սին խոստումներով իրենց կողմը գրավել, հասնել հակաֆրանսիական գաղութային պայքարի թուլացմանը և Ֆրանսիայի դիրքերի պահպանմանն ու ամրապնդմանը: Միակ ելքը նրանք տեսնում էին սուլթանից ազատվելու մեջ: Եվ օրինական սուլթանին գահընկեց անելու հարցը դառնում է ֆրանս–մարոկկոյական հարաբերությունների մեխը և Մարոկկոյի 1950–1956 թթ. պատմության հիմնական առանցքը, որի շուրջն էին պտտվում բոլոր իրադարձությունները, քաղաքական որոգայթները և խաղերը:

Սակայն սուլթանին տապալելը դյուրին գործ չէր, քանի որ նա ուներ մեծ, կարելի է ասել՝ անառարկելի հեղինակություն Մարոկկոյում՝ նրա ֆրանսիական, իսպանական և տանժերյան գոտիներում, և վայելում էր մարոկկոյական հասարակության տարբեր խավերի հարգանքն ու աջակցությունը: Ուստի ֆրանսիական իշխանությունները դիմեցին հին և փորձված միջոցին՝ «Բաժանիր, որ տիրես» քաղաքականությանը: Նրանք իրենց առջև խնդիր դրեցին դա կատարել մարոկկացիների ձեռքով: Նրանց ընտրությունը կանգ առավ Մարակեշի փաշա ալ–Գլաուի վրա: Նա Մարոկկոյի ամենամեծ և հայտնի մեծահարուստներից էր, որը մեծ հեղինակություն էր վայելում մարոկկոյական ֆեոդալական արիստոկրատիայի, ինչպես նաև նորելուկ ձեռներեցների որոշակի շրջաններում: Նա իր հարստությունը դիզել էր և հասել նման մեծ բարձունքների ոչ առանց ֆրանսիացիների օգնության և նրանց շատ բանով էր պարտական: Ինքն էլ իր հերթին մշտապես հենարան էր ծառայել ֆրանսիական պրոտեկտորատի իշխանությունների համար Մարոկկոյում: Ալ–Գլաուին, դավաճանելով Մարոկկոյի ազգային շահերին, համաձայնվեց կատարել ֆրանսիացիների պատվերը: Նա կարողացավ իր կողմը գրավել Մարակեշի հարակից մի քանի այլ կաիդների և ցեղապետների: Այդուհանդերձ, սուլթանին տապալելը հեշտ գործ չէր, և հնարավոր չեղավ այդ հարցը լուծել մի հարվածով և անմիջապես: Դրա համար բավական երկար ժամանակ պահանջվեց:

Առաջին քայլը կատարեցին ֆրանսիական իշխանությունները, երբ Մարոկկոյում ֆրանսիական գլխավոր ռեզիդենտ Ժյուենը 1951 թ. փետրվարի 13–ին սուլթանին ներկայացրեց մի փաստաթուղթ, որը պահանջում էր նրանից դատապարտել Մարոկկոյում մեծ թափ առած ազգային–ազատագրական շարժումը, համապատասխան քայլերի դիմել այդ ուղղությամբ և ցրել կառավարությունը: Նա սուլթանին ներկայացրել էր նախօրոք պատրաստված մի քանի հրամանագրեր, որոնց տակ սուլթանը պետք է դներ իր ստորագրությունը: Այդ փաստաթուղթը կամ արձանագրությունը վերջնագրի բնույթ ուներ: Սուլթան Մուհամմադ V–ը, որն ընդհանրապես անվախ անձնավորություն էր, չենթարկվեց ֆրանսիական ռեզիդենտի ճնշմանը և հրաժարվեց ստորագրել իրեն ներկայացված արձանագրությունն ու հրամանագրերի նախագծերը: Իսկ դա նշանակում էր, որ նա շարունակելու էր պաշտպանել իր երկրի ազգային–ազատագրական պայքարը: Ժյուենը կատարեց բոլորի համար անսպասելի քայլ: Նրա հրամանով ֆրանսիական զորքերը շրջապատեցին սուլթանի պալատը և նրան երկընտրանքի առջև դրեցին՝ կա՛մ ստորագրել արձանագրությունը, կա՛մ հրաժարվել գահից:

Սուլթանը հայտնվեց ծանր դրության մեջ: Հրաժարվել գահից նշանակում էր լքել մարտի դաշտը և մարոկկոյական ազգային ուժերին: Նա լավ էր հասկանում. որ իր փոխարեն ֆրանսիացիները գահի վրա նստեցնելու էին իրենց կամակատարին, որն ամեն ինչում հլու–հնազանդ կատարելու էր նրանց կամքը: Մինչդեռ ստորագրերով արձանագրությունը և մնալով գահի վրա, այդուհանդերձ, նա շարունակելու էր ծառայել իր երկրին և օգնել ազգային ուժերին անկախության համար նրանց պայքարում: Եվ նա ընտրեց չարյաց փոքրագույնը՝ 1951 թ. մարտի 24–ին ցրեց կառավարությունը, իսկ հաջորդ օրը ստորագրեց ֆրանսիական ռեզիդենտի կողմից իրեն ներկայացված արձանագրությունը:

Սակայն ֆրանսիական իշխանությունները չբավարարվեցին միայն դրանով: Համարելով, որ իրենք տարան մեծ հաղթանակ՝ նրանք սկսեցին զանգվածային ձերբակալություններ, և բանտերում հայտնվեցին ազատագրական պայքարի և ազգային կուսակցությունների շատ ղեկավարներ ու ակտիվ գործիչներ, այդ թվում՝ Անկախություն կուսակցության գործադիր կոմիտեի անդամները, կոմունիստական և այլ կուսակցությունների ու կազմակերպությունների ակտիվիստները: Ձերբակալվածների թիվը 1951 թ. վերջերին հասավ 30 հազարի: Բայց ֆրանսիական իշխանությունների բռնությունները հակառակ արդյունքը տվեցին:

Կրկին ոտքի ելան ժողովրդական զանգվածները, որոնցից շատերը զինված էին: Նրանք համարձակորեն մարտի էին նետվում ֆրանսիական ոստիկանական ուժերի դեմ: Ֆրանսիացիները հարկադրված էին պաշարողական դրություն մտցնել Ֆեսում և Մեկնեսում, իսկ Թադլայի և Խանիֆրայի միջև ընկած շրջանը վերածվեց ռազմական գոտու:

Այդ ընթացքում ֆրանսիական ռեզիդենտ ժյուենը կազմեց Մարոկկոյի նոր կառավարություն, որի կազմը նա մի շարք հրամանագրերի հետ միասին ներկայացրեց սուլթանի հաստատմանը: Սակայն այս անգամ ժյուենին չհաջողվեց հաղթանակ «տոնել» սուլթանի նկատմամբ: Մուհամմադ V–ը հրաժարվեց հաստատել ժյուենի կազմած կառավարության կազմը և ստորագրել նրա ներկայացրած հրամանագրերը:

Այսպիսով՝ ֆրանսիական իշխանությունները, որոնք կարծում էին, թե հեշտությամբ, առանց ավելորդ գլխացավանքի կհասնեն իրենց ծրագրերի իրագործմանը, սխալվեցին: Նրանք մխրճվեցին երկարատև և արյունալի պայքարի մեջ մարոկկոյական ազգային–հայրենասիրական ուժերի հետ:

Ֆրանսիան Մարոկկոյում տարվող իր դաժան և բռնությունների վրա հիմնված քաղաքականության պատճառով որոշակի դժվարություններ ունեցավ նաև միջազգային հարաբերություններում: Մարոկկոյում ֆրանսիական ահաբեկչական քաղաքականության մասին լուրերը հասան մինչև ՄԱԿ: Վերջինս հարցը տեղում ուսումնասիրելու և ճիշտ գաղափար կազմելու նպատակով 1951 թ. փետրվարին հատուկ պատվիրակություն ուղարկեց Մարոկկո: Այն, ինչ պատվիրակության անդամները տեսան Մարոկկոյում, գերազանցեց նրանց ամենավատ կանխագուշակումները: Նրանք ամեն օր ականատես էին լինում ամենաբուռն հակաֆրանսիական ցույցերի, որոնք անընդմեջ տեղի էին ունենում Մարոկկոյի համարյա բոլոր քաղաքներում և շրջաններում: Դեռ ոչ մի անգամ ցուցարարներն այնպես միահամուռ կերպով չէին առաջադրել ազգային անկախության պահանջը, ինչպես այդ օրերին: Եվ ՄԱԿ–ի պատվիրակությունը Նյու Յորք վերադարձավ այն խոր համոզումով, որ ֆրանսիական քաղաքականությունը Մարոկկոյում մտել է փակուղի, և ազգային անկախության պահանջը վերածվել է համազգային պահանջի:

Արաբական երկրների նախաձեռնությամբ և սոցիալիստական երկրների աջակցությամբ Մարոկկոյի հարցը 1952 թ. դեկտեմբերին մտցվեց ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի քննարկմանը՝ նրան անկախություն տալու պահանջով: Սակայն դա չհավաքեց ծայների անհրաժեշտ

քանակը և մերժվեց: Գաղութային երկրները և նրանց համակիր կամ նրանցից կախման մեջ գտնվող երկրները հանդես եկան ի պաշտպանություն Մարոկկոյում ֆրանսիական գաղութային տիրապետության հետագա պահպանման:

Այուհանդերձ, Մարոկկոյի հարցի քննարկումը ՄԱԿ–ում զուր չանցավ: Այդ հարցը ստացավ միջազգային հնչեղություն, և դրա քննարկման ժամանակ Ֆրանսիայի քաղաքականությունը Մարոկկոյում գամվեց խայտառակության սյունին:

Զուգահեռաբար արագ թափով ընթանում էին սուլթանին գահընկեց անելու նախապատրաստական աշխատանքները: Եվ այստեղ Ֆրանսիան հասավ հաջողությունների: 1953 թ. ֆրանսիացիների օգնությամբ կազմվեց մի խնդրագիր՝ ուղղված Ֆրանսիայի ղեկավարությանը՝ սուլթանին տապալելու պահանջով: Այդ խնդրագրի տակ իրենց ստորագրությունը դրեցին 270 փաշաներ, կաիդներ և ցեղապետներ՝ ալ–Գլաուի գլխավորությամբ, և այն ուղարկվեց Փարիզ՝ ֆրանսիական կառավարության քննարկմանը: Դրա հետ միասին Մարոկկոյում ֆրանսիական պրոտեկտորատի իշխանությունների և անձամբ գլխավոր ռեզիդենտ Ժյուենի հրահրումով սկսվեց հակասուլթանական քարոզարշավ, որն ուղեկցվում էր բռնություններով ու հալածանքներով՝ ուղղված այն ուժերի և ազգային գործիչների դեմ, որոնք դեմ էին ֆրանսիական կառավարությանը ներկայացված պետիցիային:

270–ի պետիցիան դատապարտեցին մարոկկոյական կրոնական առաջնորդները և աստվածաբան–ուլեմները՝ թվով 318 մարդ, որոնք հատուկ այդ հարցը քննարկելու համար հավաքվել էին Տանժերում: Նրանք 1953 թ. հունիսի 6–ին հանդես եկան մի կոչով, որտեղ Մարոկկոյի բոլոր կարևոր քաղաքները և գավառները ներկայացնող կրոնական այդ առաջնորդներն ամենախիստ բառերով դատապարտում էին Փարիզ ուղարկված 270–ի պետիցիան, որը պահանջում էր տապալել լեգիտիմ սուլթանին: Նրանում ալ–Գլաուին և պետիցիան ստորագրած մյուս փաշաները և կաիդները որակված էին որպես «խամաճիկներ օտարների ծեռքում: Նրանք առանց խղճի խայթի մասնակցում են դավադրությանը, որը սպիտակ թելերով է կարված»:

Սուլթանի դեմ ուղղված դավադրության և քարոզարշավի կենտրոնը Մարակեշն էր, որի փաշան ալ–Գլաուին էր: Այստեղ կենտրոնացան բոլոր դավադիրները, այդ թվում նաև բերբերների զինված ջոկատները: Իսկ ընդհանուր առմամբ զինված դավադիրների թիվը հասնում էր 50

հազարի: Նրանց օգնելու համար ֆրանսիական իշխանությունները նրանց տրամադրության տակ դրեցին զրահամեքենաներ, ռազմական այլ տեխնիկա և զինամթերք:

Այդ բոլորը կատարվում էր սուլթանի աչքի առջև: Նա ամեն ինչ տեսնում էր և հասկանում, գիտեր, թե ուր են տանում դավադրության թելերը. Բայց նա և նրան պաշտպանող ազգային–դեմոկրատական ուժերը տվյալ պահին լավ նախապատրաստված չէին դավադիրներին արժանի հակահարված տալու համար: Ճարահատյալ սուլթանը 1953 թ. օգոստոսի 12–ին մի հուսահատ փորձ ևս կատարեց: Նա օգնության խնդրանքով դիմեց Ֆրանսիայի պրեզիդենտին՝ լուծելու Ֆրանսիայի և Մարոկկոյի հարաբերություններում առաջացած քաղաքական ճգնաժամը: Դիմում ուղարկվեց նաև ՄԱԿ–ի գլխավոր քարտուղարին՝ խնդրելով նրան միջամտել ֆրանս–մարոկկոյական կոնֆլիկտին: Բայց ապարդյուն: Սուլթանը ոչ Փարիզից և ոչ էլ Նյու Յորքից որևէ պատասխան չստացավ: Արդեն ամեն ինչ պարզ էր սուլթանի համար:

Դրանից հետո դեպքերը զարգացան կայծակնային արագությամբ: 1953 թ. օգոստոսի 14–ին սուլթանի պալատը շրջապատեցին ֆրանսիական զորքերը: Պալատի հեռախոսային կապը ֆրանսիական իշխանությունների կարգադրությամբ կտրվեց արտաքին աշխարհի հետ: Ահա այսպիսի պայմաններում Ժյուենին գլխավոր ռեզիդենտի պաշտոնում փոխարինած Գիյոմը սուլթանին ներկայացրեց հերթական վերջնագիրը: Նա պարունակում էր սուլթանին ուղղված մի պահանջ, որը հազվադեպ է պատահում միջպետական հարաբերություններում: Դա այսպես կոչված համատեղ ինքնիշխանության՝ սուվերենիտետի պահանջն էր, որով ֆրանսիացիները պահանջում էին, որ սուլթանը հրաժարվի անգամ ծնական սուվերենությունից, որը նա վայելում էր պրոտեկտորատի վերաբերյալ 1912 թ. ֆրանս–մարոկկոյական պայմանագրի համաձայն: Այժմ սուլթանից պահանջում էին, որ նա այդ սուվերենիտետը կիսի Ֆրանսիայի հետ, որը նշանակում էր, որ Ֆրանսիան ստանում էր անսահմանափակ իրավասություններ Մարոկկոյում: Վերջնագրով սուլթանից պահանջվում էր, որ նա հրաժարվի նաև օրենսդրական իրավունքներից, համաձայնվի Մարոկկոյում անցկացնել բարեփոխումներ և այլն: Այդ առաջարկությունները սուլթանին ներկայացվեցին նրան գահից զրկելու սպառնալիքների տակ:

Դավադիրներն ալ–Գլաուի գլխավորությամբ, չսպասելով սուլթանի պատասխանին Գիյոմի վերջնագրին, այդ նույն օրը՝ 1953 թ. օգոստո-

սի 14–ին, սուլթան Մուհամմադ բին Յուսուֆին գահընկեց հայտարարեցին և Մարոկկոյի նոր սուլթան հռչակեցին Մուհամմադ բին Արիֆին: Հաջորդ օրը դավադիրները նրան ընտրեցին նաև իմամ, որով նա դառնում էր նաև Մարոկկոյի հոգևոր առաջնորդը: Մուհամմադ բին Արիֆը Մարոկկոյի թագավորող Ալավիների դինաստիայից է, նրա իշխաններից մեկը:

Սուլթան Մուհամմադ բին Յուսուֆը, որը, ինչպես նշել ենք, աչքի էր ընկնում իր խիզախությամբ և անկոտրում կամքով, գահից չհրաժարվեց և իր լիազորությունները չփոխանցեց որևէ մեկին: Նա այդպիսի փաստաթուղթ չստորագրեց, այլ միայն 1953 թ. օգոստոսի 20–ին համաձայնվեց հեռանալ Մարոկկոյից և հաստատվել Եվրոպայում: Այդ օրը՝ ցերեկվա ժամը 3–ին, թագավորական պալատից ֆրանսիական տանկերի ուղեկցությամբ դուրս եկավ մի ավտոշարասյուն: Մեքենաներից մեկում գտնվում էր սուլթանը իր երկու որդիների հետ: Երեկոյան ինքնաթիռը Մուհամմադ բին Յուսուֆին՝ որպես «ֆրանսիական կառավարության հյուր», տեղափոխեց Կորսիկա կղզի: Ֆրանսիական իշխանությունները սկզբում նրան բնակեցրին Կորսիկայում, իսկ այնուհետև աքսորեցին Մադագասկար:

Ահա այսպես ֆրանսիական իշխանություններն իրենց մարոկկոյական դրածոների միջոցով իրականացրին պետական հեղաշրջում: Դա անօրինական քայլ էր, որովհետև պրոտեկտորատի վերաբերյալ 1912 թ. ֆրանս–մարոկկոյական համաձայնագիրը նման բան, այսինքն՝ լեգիտիմ սուլթանին գահընկեց անել, չէր նախատեսում և նման իրավունքներ չէր վերապահում Ֆրանսիային: Ֆրանսիական իշխանությունների քայլը միջազգային իրավունքի կոպիտ խախտում էր, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ ընդհանրապես որևէ պրոտեկտոր երկիր իրավունք չուներ իրեն ենթակա պրոտեկտորատ երկրի կառավարման համակարգում այդ բնույթի փոփոխություններ մտցնել՝ կազմակերպել պետական հեղաշրջում և տապալել կառավարող միապետին, սուլթանին կամ էմիրին:

Հարկ ենք համարում ուշադրություն դարձնել նաև մի կարևոր հանգամանքի վրա: Մուհամմադ բին Յուսուֆը պաշտոնապես չհրաժարվեց գահից և դրա վերաբերյալ ու իր՝ որպես միապետի, լիազորությունները մեկ այլ մարդու փոխանցելու մասին չստորագրեց որևէ փաստաթուղթ: Այդ հանգամանքն ավելի էր ընդգծում ֆրանսիական իշխանությունների քայլի անթույլատրելիությունը և Մուհամմադ բին Արիֆին սուլթան նշանակելու անօրինականությունը: Եվ հետագայում Մարոկկոյի ազգային ուժերն ու քաղաքական կուսակցություններն այդ պարագան

լայնորեն օգտագործում էին նոր «սուլթանին» չընդունելու, նրան չհնազանդվելու գործում և օրինական սուլթանին գահի վրա վերադարձնելու իրենց պայքարում, որը տևեց համարյա երկու տարի:

Լեգիտիմ սուլթանի տապալումից և սուլթանին երկրից վտարելուց հետո Մարոկկոն հայտնվեց բոլորովին նոր իրադրության մեջ:

Պետական հեղաշրջման միջոցով Մուհամմադ բին Յուսուֆին իշխանությունից զրկելը և Մարոկկոյից արտաքսելը չէր նշանակում մարոկկոյական դրամայի ավարտ: Ընդհակառակը, դա մի նոր դրամայի սկիզբն էր, որի հետևանքներն այդ պահին ոչ ոք չէր կարող կանխատեսել:

Ֆրանսիական իշխանությունները համոզված էին, որ իրենց հաղթանակը վերջնական է, և սուլթանին աքսորելը կհանգեցնի քաղաքական մթնոլորտի լիցքաթափմանն ու ազգային–ազատագրական պայքարի վայրէջքին: Նրանց այդ վստահությունը հիմնված էր այն իրողության վրա, որ նոր սուլթանը խաղալիք էր նրանց ձեռքին և առանց առարկության ստորագրում էր այն բոլոր օրենքները, հրամանները և կարգադրությունները, որ նրան էր ներկայացնում ֆրանսիական գլխավոր կոմիսարը: Նրանց լավատեսության գործում իր դերն էր խաղում ալ–Գլաուի փաշայի և նրա կողմնակիցների, որոնց տրամադրության տակ կար մոտ 50 հազար զինված մարտիկ, հավատարմությունը ֆրանսիական իշխանություններին և նրանց պատրաստակամությունը զենքով պաշտպանել նրանց:

Բայց շատ ժամանակ չպահանջվեց, որպեսզի հայտնի դառնար, որ ֆրանսիական իշխանությունները սխալվում էին իրենց հաշիվներում, և նրանց ծանր փորձություններ էին սպասում:

Ակնհայտ դարձավ, որ նոր սուլթանը ոչ մի հեղինակություն չի վայելում Մարոկկոյում: Նրան անգամ չհաջողվեց կազմել իր կառավարությունը, քանի որ բոլոր նրանք, ում նա առաջարկում էր մտնել իր կաբինետի մեջ, հրաժարվում էին: Նրա հեղինակությանը ծանր հարված հասցրեց սուլթանական պալատի քարտուղարների անսպասելի քայլը: Պալատի մոտ 300 քարտուղարներ ստորագրեցին մի պահանջագիր, որով պահանջում էին նոր սուլթան Մուհամմադ բին Արիֆին հեռացնել միապետի պաշտոնից՝ նրան համարելով անօրինական սուլթան:

Մարոկկոյի ժողովուրդը երբեք չհաշտվեց օրինական սուլթանին գահազուրկ անելու և Մադագասկար կղզի աքսորելու փաստի հետ: Եվ նա ոտքի ելավ ի պաշտպանություն օրինական սուլթանի՝ դա համարելով պայքար հանուն Մարոկկոյի: Գլխավոր պահանջը դարձավ հետ

կանչել Մուհամմադ բին Յուսուֆին աքսորից և նրան վերականգնել գահի վրա: Այդ նպատակով Ռաբաթում, Կասաբլանկայում, Ուջդում և Մարոկկոյի այլ քաղաքներում ու շրջաններում ժողովուրդը կազմակերպում էր ցույցեր, համարձակորեն մարտի բռնվում ֆրանսիական ոստիկանական ուժերի և զինվորների հետ, որի ընթացքում հարյուրավոր մարդիկ զոհվեցին, և տասնյակ հազարավոր հայրենասերներ բանտերը նետվեցին: Ֆրանսիական իշխանությունները դաժան բռնարարական միջոցների հետ միասին հակաֆրանսիական պայքարի մի շարք կենտրոններում պարետային ժամ մտցրեցին: Սկսեց երերալ նաև տեղական կառավարման համակարգը: Մի շարք քաղաքների և գյուղական վայրերի փաշաները, կաիդները և այլ պաշտոնյաներ հրաժարական տվեցին՝ չցանկանալով համագործակցել անօրինական սուլթանի և նրա թիկունքում կանգնած ֆրանսիական իշխանությունների հետ: Հայրենասերները, որոնք ատելությամբ էին լցված նոր «սուլթան» Մուհամմադ բին Արիֆի հանդեպ, երկու անգամ՝ 1953 թ սեպտեմբերին Ռաբաթում, իսկ 1954 թ. մարտին՝ Մարակեշում մահափորձ կատարեցին նրա դեմ: Երկու անգամ էլ նա հրաշքով փրկվեց:

Մարոկկոյի և օրինական սուլթան Մուհամմադ բին Յուսուֆի համար այդ ծանր օրերին իր բարձրության վրա գտնվեց Մարոկկոյի իսպանական գոտին: Սուլթանը, ինչպես նշել ենք, հավասարապես նաև իսպանական գոտու սուվերենն էր: Մարոկկոյի իսպանական գոտու ղեկավարությունը բացահայտորեն դատապարտեց Մուհամմադ բին Յուսուֆին գահընկեց անելը և պաշտոնապես հրաժարվեց Մուհամմադ բին Արիֆին ճանաչել որպես Մարոկկոյի նոր և օրինական սուլթան: Դա հերթական ծանր հարվածն էր, որ ստացան դավադիրները և ֆրանսիական իշխանությունները:

Սակայն Ֆրանսիան շարունակում էր համառորեն վարել իր տեռորի քաղաքականությունը՝ անընդհատ նոր համալրումներ ուղարկելով Մարոկկո և խստացնելով օրենքները: 1953 թ. դեկտեմբերի վերջերին ուժի մեջ մտավ մահապատժի մասին օրենքը, որով մահապատիժ էր սպասվում բոլոր նրանց, ովքեր ահաբեկչական քայլերի կդիմեին ֆրանսիական զինվորների և սպաների դեմ:

Բայց դա չվախեցրեց ազգային–հայրենասիրական ուժերին, որոնց պայքարը 1954–1955 թթ. նոր թափ ստացավ: Նոր «սուլթանի» դեմ երկրորդ մահափորձը կատարվեց հենց այդ օրենքի ընդունումից հետո:

Այդ ժամանակաշրջանում հակագաղութային պայքարի կարևոր առանձնահատկությունը պետք է համարել այն փաստը, որ մարոկկացիները քաղաքներում և գյուղերում ստեղծում էին զինված խմբեր և մարտի մեջ մտնում ֆրանսիական զինվորների ու ոստիկանության հետ: Նրանք, որդեգրելով պայքարի պարտիզանական մեթոդը, առաջին իսկ հնարավորության դեպքում հարձակվում էին ֆրանսիական զորաջոկատների, զինվորական պահեստների, ավտոմեքենաների ու գնացքների, անգամ զորանոցների վրա: Ֆրանսիացիներն արդեն տալիս էին մարդկային կորուստներ՝ սպանվածներ և վիրավորներ: Շատ մեծ էր երիտասարդության հոսքը պարտիզանական խմբեր: Փաստորեն, Մարոկկոյում զինված պայքար էր գնում ոչ միայն օրինական սուլթանին իր գահի վրա վերականգնելու, այլև ազատության ու անկախության համար:

Ֆրանսիական իշխանություններն ի վիճակի չէին ճնշել մարոկկացիների զինված պայքարը: Այդ պատճառով էլ շատ հաճախ քավության նոխազ էին դառնում մեկը մյուսին հաջորդող ֆրանսիական գլխավոր ռեզիդենտները. երեք տարվա ընթացում Մարոկկոյում փոխվեց հինգ ռեզիդենտ՝ Ժյուեին հաջորդած Գիյոմին փոխարինեց Լակոստը, նրան՝ Ժիլբեր Գրանվալը, իսկ ապա այդ պաշտոնում նշանակվեց Բույե դը Լատուրը: Նրանք հնարավոր ամեն ինչ անում էին մարոկկացիների դիմադրությունը ճնշելու համար, բայց ոչինչ չէր ստացվում: Այդ ռեզիդենտներից թերևս միայն Ժիլբեր Գրանվալը հասկացավ, որ բռնությունների և ահաբեկչության քաղաքականությունը դատապարտված էր ձախողման: Նա ոչ միայն հասկացավ, այլև համարձակություն ունեցավ Փարիզ իր կառավարությանը ներկայացնել մի շարք առաջարկություններ, որոնք նրա կարծիքով կարող էին նպաստել Մարոկկոյում Ֆրանսիայի դիրքերի պահպանմանը. Դրանց մեջ կարևորներից մեկը գլխավոր ռեզիդենտի առաջարկությունն էր տապալել անօրինական սուլթան Մուհամմադ բին Արիֆին: Շատ հետաքրքիր դիրք գրավեց Փարիզը: Ֆրանսիական կառավարությունը ոչ թե անօրինական սուլթանին գահընկեց արեց, այլ Ժիլբեր Գրանվալին ազատեց Մարոկկոյում ֆրանսիական գլխավոր ռեզիդենտի պաշտոնից: Բայց դա ոչնչով չօգնեց գործին:

Պայքարը շարունակվում էր և իր գագաթնակետին հասավ 1955 թ. օգոստոսի 20–ին: Այդ օրը, որը համարվում էր սուլթանին գահընկեց անելու երկրորդ տարեդարձը, ամբողջ Մարոկկոյում՝ նրա ֆրանսիական և իսպանական գոտիներում և Տանժերի միջազգային գոտում, տե-

ղի ունեցան համաժողովրդական ցույցեր և գործադուլներ: Ռաբաթում, Կասաբլանկայում, Տետուանում, Տանժերում, Մեկնեսում, Ֆեսում, Մարակեշում, Սաֆիում և այլ վայրերում կյանքը կանգ առավ: Դա իսկական ապստամբություն էր՝ իր յուրօրինակ առանձնահատկություններով: Գլխավոր պահանջը մնում էր օրինական սուլթանի վերադարձը և գահի վրա նրա վերականգնումը:

Ֆրանսիական իշխանություններն իրենց սովորության համաձայն մարոկկացիների դեմ նետեցին զինված ուժեր, այդ թվում և Հնդկաչինից Մարոկկո տեղափոխված զորամիավորումներ: Բայց ոչ նրանց գործողությունները, որոնց ընթացքում եղան բազմաթիվ զոհեր ու վիրավորներ, և ոչ էլ զանգվածային ձերբակալությունները այլևս չէին կարող կանգնեցնել Մարոկկոյի ազգային–հայրենասիրական ուժերի պայքարը և նրաց ստիպել համակերպվել ստեղծված իրադրության հետ:

Ֆրանսիան ստիպված էր նահանջել: Արյունալի դրաման մոտենում էր իր ավարտին:

II. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ, ՄԱՐՈԿԿՈՅԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԵՎ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Ֆրանսիան, սպառելով պայքարի բոլոր միջոցները և կորցնելով Մարոկկոն հնազանդեցնելու հույսը, հարկադրված էր նստել բանակցությունների սեղանի շուրջը:

Ֆրանսո–մարոկկոյական քաղաքական բանակցությունները սկսվեցին 1955 թ. օգոստոսի 22–ին ֆրանսիական էքս–լե–Բեն քաղաքում: Բանակցություններում ֆրանսիական պատվիրակությունը գլխավորում էր Ֆրանսիայի վարչապետ Էդգար Ֆորը: Նրա գլխավորած պատվիրակության մասն էին կազմում ևս չորս ֆրանսիական նախարարներ: Իսկ մարոկկոյական պատվիրակությունը կազմված էր մարոկկոյական տարբեր ազգային կուսակցությունների ներկայացուցիչներից, կաիդներից և այլ երևելի դեմքերից: Բանակցությունները տևեցին հինգ օր և հաջողությամբ ավարտվեցին նույն թվականի օգոստոսի 27–ին: Կողմերը համաձայնության եկան հետևյալ խարցերի շուրջը, որոնք առանցքային նշանակություն ունեին: Առաջին՝ սուլթան Մուհամմադ

բին Արիֆի տապալումը: Այդ կետի վերաբերյալ կար մի վերապահում՝ նրա գահընկեց անելը պետք է կատարվեր պատվավոր ձևով: Երկրորդ՝ գահական խորհրդի ստեղծում՝ կազմված երեք հոգուց, և երրորդ՝ ներկայացուցչական մարոկկոյական կառավարության ձևավորում: Նրա գլխավոր խնդիրն էր համարվում բանակցությունների հետագա վարումը Ֆրանսիայի հետ:

Էքս–լե–Բենում ձեռք բերված համաձայնագիրը համարվում էր նախնական փոխզիջում, քանի որ այն պետք է դեռ ներկայացվեր օրինական սուլթան Մուհամմադ բին Յուսուֆին և արժանանար նրա հավանությանը: Այդ նպատակով 1955 թ. սեպտեմբերի 4–ին Մադագասկար մեկնեց երկու պատվիրակություն՝ մարոկկոյական և ֆրանսիական: Մարոկկոյական պատվիրակությունը գլխավորում էր Սեֆրայի փաշա Սի Բեքայինը, իսկ ֆրանսիականը՝ գեներալ Ժորժ Կատրուն: Նա ֆրանսիայի հայտնի գործիչներից էր, որը 1940 թ. Ֆրանսիայի կապիտուլյացիայից հետո հրաժարվեց համագործակցել Պետենի և վիշիականների հետ ու անցավ գեներալ Շառլ դը Գոլի կողմը՝ դառնալով «Ազատ Ֆրանսիայի» առաջնորդներից մեկը: Ժորժ Կատրուն հատկապես մեծ ներդրում ունեցավ գաղութային վեճերը և կոնֆլիկտները հարթելու գործում: Մասնավորապես պետք է նշել նրա դերը 1943–1945 թթ. Լիբանանում և Սիրիայում ծագած կոնֆլիկտների լուծման գործում: Ուստի Ժորժ Կատրուի նման փորձառու գործչի նշանակումը Մադագասկար մեկնող ֆրանսիական պատվիրակության ղեկավար բոլորովին էլ պատահական չէր: Ֆրանսիան դրանով ընդգծում էր իր շահագրգռվածությունը հարցը սուլթան Մուհամմադ բին Յուսուֆի հետ բանակցությունների միջոցով կարգավորելու խնդրում:

Բանակցությունները Մադագասկարում սուլթան Մուհամմադ բին Յուսուֆի հետ ընթացան հաջող. սուլթանը հավանություն տվեց երկու պատվիրակությունների ներկայացրած առաջարկություններին:

Սակայն այդ ընթացքում ծագեցին մի շարք բարդություններ: Եթե մարոկկոյական հասարակության ճնշող մեծամասնությունը հավանություն էր տալիս Էքս–լե–Բենում ձեռք բերված նախնական համաձայնություններին, ապա մարոկկոյական աջակողմյան ուժերը կտրուկ դեմ դուրս եկան դրան: Համանման կոշտ դիրքորոշում գրավեցին նաև աջերը Ֆրանսիայում: Հավանաբար այդ ուժերի ճնշման տակ Մուհամմադ բին Արիֆը տեղյակ պահեց ֆրանսիական իշխանություններին, որ ինքը վճռել է հրաժարական չտալ և մնալ գահի վրա:

Էդգար Ֆորին մեծ դժվարությամբ հաջողվեց հաղթահարել ֆրանսիական աջերի դիմադրությունը, և նրա կառավարությունը սեպտեմբերի 12–ին հավանություն տվեց էքս–լե–Բենի համաձայնությանը և վարչապետի քաղաքականությանը: Հաջորդ օրը՝ 1955 թ. սեպտեմբերի 13–ին, Ֆրանսիայի պրեզիդենտ Ռենե Կոտին նամակով դիմեց Մուհամմադ բին Արիֆին՝ առաջարկելով նրան հրաժարվել գահից, իսկ հոկտեմբերի 9–ին Ֆրանսիայի Ազգային ժողովը երկարատև քննարկումներից հետո նույնպես հավանություն տվեց ֆրանս–մարոկկոյական համաձայնությանը: Անօրինական սուլթանը որոշ տատանումներից հետո հոկտեմբերի 30–ին հրաժարվեց գահից՝ հօգուտ նախկին և օրինական սուլթան Մուհամմադ բին Յուսուֆի: Բոլոր խոչընդոտները հաղթահարված էին, և 1955 թ. նոյեմբերի 5–ին ֆրանսիական կառավարությունը հանդես եկավ հատուկ հայտարարությամբ առ այն, որ նա Մուհամմադ բին Յուսուֆին այդ պահից ճանաչում է որպես Մարոկկոյի օրինական սուլթան:

1955 թ. նոյեմբերի 16–ին Մուհամմադ բին Յուսուֆը՝ արդեն որպես Մարոկկոյի գահի վրա վերականգնված սուլթան, ժամանեց Մարոկկոյի մայրաքաղաք Ռաբաթ: Ժողովուրդը նրան դիմավորեց ցնծությամբ: Քաղաքը զարդարված էր մարոկկոյական պետական դրոշներով և տոնական տեսք ուներ:

Սուլթանը ներկայացրեց իր տեսակետը Մարոկկոյի ապագայի վերաբերյալ: Նա պաշտոնապես հայտարարեց, որ Մարոկկոն պետք է լինի սահմանադրական, ազատ, անկախ և դեմոկրատական միապետություն. 1955 թ. դեկտեմբերի 6–ին Սի Բեքայիին, որը գլխավորել էր բանակցությունների համար Մադագասկար մեկնած մարոկկոյական պատվիրակությունը, սուլթանի հանձնարարությամբ կազմեց Մարոկկոյի առաջին ազգային կառավարությունը:

Մարոկկոյի կարգավիճակի հարցը դարձավ ամենաառաջնայինը: Նրա լուծումը պահանջում էր Ֆրանսիայի և Մարոկկոյի ղեկավարության ամենաբարձր մակարդակով քննարկում: Այդ նպատակով սուլթան Մուհամմադ բին Յուսուֆը ֆրանսիական կառավարության հրավերով 1956 թ. փետրվարի 13–ին մեկնեց Փարիզ: Հենց առաջին հանդիպման ժամանակ մարոկկոյական պատվիրակությունը բանակցությունների սեղանին դրեց հետևյալ պահանջները՝ Մարոկկոյին տրամադրել լրիվ անկախություն, արտաքին քաղաքականություն վարելու, սեփական ազգային բանակ և ոստիկանություն ստեղծելու իրավունք: Մարոկկոյի պահանջներից մեկն էլ նրան ՄԱԿ–ի անդամ ընդունելու հարցն էր: Բա-

նակցություններն ընդհանուր առմամբ ավարտվեցին հաջողությամբ, և 1956 թ. մարտի 2–ին ստորագրվեցին ֆրանս–մարոկկոյական համատեղ հայտարարություն և նրան կից արձանագրություն: Այդ կարևոր փաստաթուղթը, որով Մարոկկոն ճանաչվում էր անկախ ինքնիշխան պետություն, Մարոկկոյի կողմից ստորագրեց մարոկկոյական ազգային կառավարության վարչապետ Սի Բեքայիին, իսկ ֆրանսիական կողմից՝ արտաքին գործերի նախարար Կ. Պինոն:

Հիմնական փաստաթղթում՝ համատեղ հայտարարության մեջ, արձանագրված էր, որ «Ֆրանսիական հանրապետության կառավարությունը հանդիսավոր կերպով հաստատում է Մարոկկոյի անկախության ճանաչումը»: Այդ ձևակերպումն էր ամենակարևորը այդ փաստաթղթում, որով նոր էջ էր բացվում Մարոկկոյի նորագույն շրջանի պատմության մեջ: Դրա հետ սերտորեն առնչվում էր հաջորդ կարևոր որոշումը: Կողմերը չեղյալ էին հայտարարում 1912 թ. մարտի 30–ին Ֆեսում Ֆրանսիայի և Մարոկկոյի միջև կնքված պայմանագիրը, որով Մարոկկոյի վրա հաստատվել էր ֆրանսիական պրոտեկտորատ, և Մարոկկոն տրոհվել էր երեք գոտիների՝ ֆրանսիական, իսպանական և Տանժերի միջազգային գոտու: Հայտարարության մեջ ասված էր, որ Ֆեսի պայմանագիրը «այլևս չի համապատասխանում արդի կյանքի պահանջներին և այլևս չի կարող կարգավորել ֆրանս–մարոկկոյական հարաբերությունները»: Նախատեսվում էր նաև հետագայում նոր ֆրանս–մարոկկոյական պայմանագրերի և համաձայնագրերի կնքում, որոնք վերաբերելու էին քաղաքական, իրավական, տնտեսական և մշակութային տարբեր ոլորտներին. Սահմանվում էր անցման որոշ ժամանակաշրջան, որի ընթացքում Ֆրանսիային իրավունք էր վերապահվում Մարոկկոյում ֆրանսիացիների և եվրոպացիների իրավունքների պաշտպանություն: Այդ պարտականությունը դրվում էր ֆրանսիական գլխավոր ռեզիդենտի վրա, որն այդ պահից սկսած կոչվեց Մարոկկոյում Ֆրանսիայի գլխավոր կոմիսար:

Արմատական փոփոխությունները Մարոկկոյի ֆրանսիական գոտում նման պահանջների առաջադրում հարուցեցին նաև իսպանական գոտում: Իսպանական իշխանությունները չէին շտապում այդ հարցում, ինչը առաջացրեց բնակչության դժգոհությունը: Զանգվածային ցույցեր եղան Տետուանում և Լարաշում: Իսպանիայի դիկտատոր գեներալ Ֆրանկոն հարկադրված էր նահանջել: Նա պաշտոնական բանակցությունների համար 1956 թ. մարտի 13–ին Մարոկկոյի սուլ-

թանին հրավիրեց Մադրիդ: Բանակցությունները սկսվեցին ապրիլի 5–ին: Մարոկկոյի կողմից բանակցությունները վարում էր սուլթան Մուհամմադ V–ը, իսկ Իսպանիայի կողմից՝ Ֆրանկոն: Հենց այդ նույն օրը՝ ապրիլի 5–ին, Ֆրանկոն պաշտոնապես ճանաչեց Մարոկկոյի անկախությունը, այդ թվում և արտաքին քաղաքականության ու պաշտպանության հարցերում:

Այսպիսով՝ Մարոկկոյի ֆրանսիական և իսպանական գոտիները հռչակվեցին անկախ: Հերթը երրորդ՝ Տանժերի միջազգային գոտունն էր: Այս հարցում նս Մարոկկոյի ազգային կառավարությունը ցուցաբերեց նախաձեռնություն· Նրա առաջարկությամբ 1956 թ. հոկտեմբերի 8–ին Ֆադալում՝ Կասաբլանկայից ոչ հեռու, հրավիրվեց Տանժերի հատուկ կարգավիճակի մասնակից ութ երկրների՝ Անգլիայի, Բելգիայի, Իսպանիայի, Իտալիայի, Մարոկկոյի, Նիդերլանդների, Պորտուգալիայի, ԱՄՆ–ի և Ֆրանսիայի կոնֆերանսը: Հոկտեմբերի 29–ին կողմերը եկան համաձայնության և ստորագրեցին համապատասխան փաստաթուղթ, որը չեղյալ էր համարում Տանժերի միջազգային կարգավիճակը և այն դիտում որպես Մարոկկոյի անբաժան մաս, որի վրա տարածվելու էր Մարոկկոյի սուվերենիտետը, իշխանությունը և բոլոր իրավասությունները:

Այսպիսով՝ Մարոկկոյի վրա 44 տարի տևած ֆրանսիական և իսպանական պրոտեկտորատը վերացվեց, և Մարոկկոն դարձավ անկախ ու ինքնիշխան պետություն: Մարոկկոն ոչ միայն վերանվաճեց իր անկախությանը, այլև վերականգնեց իր պետական միասնությունը և ամբողջականությունը: 1956 թ նոյեմբերի 12–ին Մարոկկոն դարձավ ՄԱԿ–ի անդամ:

Դա Մարոկկոյի ժողովրդի, նրա բոլոր ազգային–հայրենասիրական ուժերի պատմական հաղթանակն էր:

Մարտի 2–ը համարվում է Մարոկկոյի անկախության օր:

III. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՐՈԿԿՈՑՈՒՄ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1956–2005 թթ.)

1. Մարոկկոն Մուհամմադ բին Յուսուֆի կառավարման վերջին տարիներին (1956–1961 թթ.)

Սուլթան Մուհամմադ բին Յուսուֆի աքսորից հայրենիք վերադառնալուց հետո սկսվեց նրա գահակալության երկրորդ փուլը: Նա ամբողջությամբ վերականգնեց պետության ղեկավարի իր բոլոր իրավունքներն ու լիազորությունները, որը խիստ կարևոր էր Ալավիների դինաստիայի դիրքերի ամրապնդման և Մարոկկոյի առջև կանգնած բազում ներքաղաքական խնդիրների, ինչպես նաև արտաքին հարաբերությունների բնագավառում մի շարք անհետաձգելի հարցերի կարգավորման տեսանկյունից:

Սուլթանը նախ և առաջ կարգավորեց ժառանգության խնդիրը գահակալության հարցում. Սահմանվեց գահը անմիջականորեն սուլթանից նրա ավագ որդուն փոխանցելու սկզբունքը, որն ընդունված էր աշխարհում գոյություն ունեցող միապետությունների մեծ մասում: Սուլթանը 1957 թ. հուլիսի 9–ին թագաժառանգ նշանակեց իր որդիներից ավագին՝ Հասանին, որն ակտիվորեն սկսեց օգնել հորը Մարոկկոն կառավարելու բոլոր հարցերում: Հայրը բարձր էր գնահատում Հասանի ունակությունները և մեծ վստահությամբ վերաբերվում նրան: Այդ բնագավառում կուտակված փորձը նրան շատ օգտակար եղավ հետագայում, երբ նա գահի վրա փոխարինեց իր հորը:

Շատ չանցած տեղի ունեցավ կարևոր փոփոխություն Մարոկկոյի միապետի տիտղոսի հարցում. Սուլթան Մուհամմադ V–ը 1957 թ. օգոստոսի 15–ին, հրաժարվելով սուլթանի անվանակոչումից, ընդունեց թագավորի տիտղոս և պաշտոնապես կոչվեց «Մարոկկոյի թագավոր»: Դա ավելի արդիական հնչեղություն ուներ և ավելի հասկանալի ու ընդունելի էր միջազգային հանրության կողմից, որի անդամն էր դարձել Մարոկկոն պրոտեկտորատի վերացումից և անկախ պետություն դառնալուց հետո:

Թագավորի կարևոր խնդիրներից մեկը դարձավ Մարոկկոյի անկախության ամբողջացման և նրա բոլոր տարածքների վերամիավորման խնդիրը: Թեև 1956 թ. հոկտեմբերի 29–ի համաձայնագրով վերաց-

վել էր Տանժերի միջազգային գոտին, և այն դարձել էր Մարոկկոյի անբաժան մասը, այդուհանդերձ, դեռևս կային որոշ չլուծված հարցեր: Պահպանվում էին Տանժերի նախկին տնտեսական և ֆինանսական համակարգը, նրա դրամական ազատ շուկա լինելը, առևտրի բնագավառում որոշակի քվոտաների կիրառման կարգավիճակը, ցածր հարկերի վճարման արտոնությունները և այլն: 1959 թ. թագավորական որոշումով Տանժերը կորցրեց իր այդ հատուկ կարգավիճակը և տնտեսապես ու ֆինանսապես ինտեգրվեց Մարոկկոյին: Դրանով ևս մեկ քայլ կատարվեց Մարոկկոյի ինքնիշխանության ամրապնդման ուղղությամբ:

Այդ բնագավառում մեծ հաջողություն պետք է համարել Իսպանիայի կողմից որոշ տարածքներ նույնպես Մարոկկոյին վերադարձնելը: Իսպանիան, ինչպես արդեն նշել ենք, 1956 թ. նույնպես ճանաչեց Մարոկկոյի անկախությունը և հրաժարվեց պրոտեկտորի իր իրավունքներից Մարոկկոյի իսպանական գոտում, որը դարձավ Մարոկկոյի անբաժան մասը: Սակայն նրա տիրապետության տակ մնացին որոշ տարածքներ, որոնք չէին մտնում իսպանական գոտու մեջ, և որոնցից Իսպանիան ոչ մի կերպ չէր ցանկանում հրաժարվել: Այդ շրջաններում ծավալված մարոկկացիների պայքարը, որը շատ հաճախ զինված բախումների էր վերածվում իսպանական գաղութարարների դեմ, և Մարոկկոյի թագավորի ու նրա կառավարության հետևողական ճնշումը Իսպանիայի վրա, ստիպեցին վերջինիս այդ տարածքները նույնպես վերադարձնել Մարոկկոյին: 1958 թ. Իսպանիան Մարոկկոյին վերադարձրեց Տարֆայի տարածքը, իսկ ավելի ուշ՝ 1969 թ.՝ Իֆնին: Հատկապես կարևոր էր Իֆնիի միացումը Մարոկկոյին: Իսպանիայի տիրապետության տակ մնացին միայն Մելիլյան և Սեուտան:

Սակայն այդ բնագավառում ամենաբարդը Մարոկկոյից ֆրանսիական զորքերի դուրսբերման հարցն էր: Երբ 1956 թ. մարտի 2–ին ստորագրվեց ֆրանս–մարոկկոյական համաձայնագիրը, որով Ֆրանսիան պաշտոնապես ճանաչեց Մարոկկոյի անկախությունը, նրանում ֆրանսիական զորքերի դուրսբերման մասին առանձին հոդված չկար: Դեռ ավելին՝ ֆրանսիացիները պահպանեցին Մարոկկոյի տարածքում իրենց զորքերի ազատ տեղաշարժման իրավունքը: Մարոկկոյում իրենց զորքերի թողնելը նրանք հիմնավորում էին այնտեղ բնակվող ֆրանսիացիների և եվրոպացիների անվտանգության և Մարոկկոյի ներքին կարգ ու կանոնի պահպանման անհրաժեշտությամբ:

Մարոկկոն հավանաբար այդ զիջումը կատարեց իր անկախությունը Ֆրանսիայի կողմից ճանաչելու դիմաց: Սակայն դրանից հետո իրադրությունը Մարոկկոյում փոխվել էր, որը պահանջում էր նոր մոտեցում այդ հարցում: Դրանում իրենց նշանակությունն ունեցան հետևյալ երկու հանգամանքները: Առաջին՝ ֆրանսիական ռազմական հրամանատարությունն իրեն Մարոկկոյում այնպես էր պահում, կարծես թե Մարոկկոն ոչ թե անկախ, այլ Ֆրանսիային ենթական պետություն է, և չէր ցանկանում հաշվի նստել նրա ինքնիշխանության հետ: Երկորդ՝ Ալժիրում մեծ թափ առած ազգային–ազատագրական պայքարը ֆրանսիական գաղութատիրության դեմ: Ֆրանսիան իր զորքերի պահպանումը Մարոկկոյում դիտում էր որպես Ալժիրի ազգային–ազատագրական պայքարը ճնշելու կարևոր գործոն՝ մշտապես սպառնալով ալժիրյան հայրենասերներին թիկունքից: Իսկ Մարոկկոն, ընդհակառակը, խորապես համակրում և քաղաքական, բարոյական ու նյութական օգնություն էր ցույց տալիս Ալժիրին ֆրանսիական գաղութային տիրապետության դեմ նրա պայքարում:

Մարոկկոն, ելնելով իր և համաարաբական շահերից, Ֆրանսիայի առջև դրեց նրա զորքերը Մարոկկոյից դուրս բերելու հարցը: Ֆրանսիան դժկամությամբ էր ընդունում Մարոկկոյի թագավորի և կառավարության չդադարող պահանջները: Մի քանի տարի տևած համառ պայքարը և բանակցությունները վերջ ի վերջո ավարտվեցին փոխադարձ համաձայնությամբ: Այդ բանակցությունների ժամանակ իրեն լավագույնս դրսևորեց թագաժառանգ Հասանը, որը 1960 թ. սեպտեմբերի 1–ին հայտարարեց, որ Ֆրանսիան համաձայնվել է մինչև 1961 թ. մարտ ամիսը Մարոկկոյից դուրս բերել իր զորքերը, իսկ ռազմական դպրոցները՝ 1963 թ. վերջերին: Եվ, իրոք, 1960 թ. աշնանը սկսվեց ֆրանսիական զորքերի դուրսբերումը, որն ավարտվեց 1961 թ. նոյեմբերին:

Ֆրանսիական զորքերի հեռացումը Մարոկկոյից ավելի ամրապնդեց Մարոկկոյի անկախությունը և ինքնիշխանությունը: Իսկ 1963 թ. դրան հաջորդեց Մարոկկոյից ամերիկյան ռազմական բազաների էվակուացիան:

Անկախության ձեռքբերումից հետո Մարոկկոյի առջև կանգնեցին շատ բարդ խնդիրներ ներքին քաղաքականության բնագավառում, հատկապես տնտեսության ոլորտում: Մարոկկոն գաղութային համակարգից շատ ծանր ժառանգություն ստացավ: Դա տնտեսապես հետամնաց երկիր էր, որին բնորոշ էին թույլ զարգացած արդյունաբերու-

թյուն և ենթակառուցվածքներ, մասնագետների անբավարարություն, կրթական ցածր մակարդակ, ցածր աշխատավարձ, սոցիալական ապահովագրության բացակայություն և այլն: Տնտեսությունում տիրապետողը օտարերկրյա կապիտալն էր, որի ձեռքում էին կենտրոնացված Մարոկկոյի ամենաեկամտաբեր ճյուղերը, առաջին հերթին լեռնահանքային արդյունաբերությունը, արտաքին մեծածախ առևտուրը և այլն.

Անկախության նվաճումից հետո սկսվեց ֆրանսիացիների և եվրոպացիների արտահոսքը Մարոկկոյից: Արդյունաբերողները և ֆինանսիստները, վախենալով նոր ստեղծված քաղաքական կարգավիճակից, իրենց կապիտալի զգալի մասը դուրս բերեցին Մարոկկոյից. Դրա հետևանքով տասնյակ գործարաններ և արդյունաբերական ձեռնարկություններ փակվեցին, իսկ նրանց տասնյակ հազարավոր աշխատողներ մնացին առանց աշխատանքի՝ լրացնելով գործազուրկների բանակը:

Նույն տրամաբանությամբ ղեկավարվեցին նաև ֆրանսիական կոլոնները, որոնց ձեռքում կենտրոնացված էին վիթխարի հողատարածքներ: Նրանք միտումնավոր կերպով դիմեցին ցանքատարածքների կրճատմանը, որն անմիջապես առաջացրեց պարենի պակաս երկրում՝ մի կողմից, և գյուղատնտեսության մեջ զբաղված աշխատավորների կրճատում՝ մեկ այլ կողմից: Դա իսկական սաբոտաժ էր, որին եվրոպական արդյունաբերողները, ֆինանսիստները և հողատերերը դիմում էին՝ ձգտելով արհեստականորեն դժգոհություն առաջացնել երկրի ներսում և այդ կերպ ճնշում գործադրել Մարոկկոյի թագավորի և իշխանությունների վրա, որոնք հետևողականորեն վարում էին Մարոկկոյի անկախության ամրապնդման քաղաքականություն: Պարենի պակասի հետ միասին բարձրացան սննդամթերքների և առաջին անհրաժեշտության ապրանքների գները: Դրությունը բարդանում էր նաև նրանով, որ թեև տեղի էր ունեցել Մարոկկոյի երեք մասերի քաղաքական միավորում, սակայն քաղաքական գործընթացներից հետ էին մնում տնտեսական գործընթացները: Դեռևս չէր իրականացվել երեք մասերի տնտեսական ինտեգրացիան և մեկ միասնական տնտեսության ու տնտեսական շուկայի կազմավորում: Դա ժամանակ և համապատասխան միջոցներ էր պահանջում:

Մարոկկոն հայտնվեց կատաստրոֆիկ վիճակում, որը իշխանություններից պահանջում էր արագ քայլերի դիմել երկրում տնտեսական դրությունը կայունացնելու և բնակչության տնտեսական վիճակը ինչ–որ չափով բարելավելու համար. թեև պետք է նշել, որ Մարոկկոյի պա-

հուստները մեծ չէին, իսկ մանրելու հնարավորություններն էլ՝ սահմանափակ: Կառավարությունը բարձրացրեց բանվորների աշխատավարձը և հսկողություն սահմանեց գների վրա՝ ջանալով կանխել նրանց խելագար աճը:

1959 թ. թագավորական դեկրետով հսկողություն սահմանվեց Մարոկկոյից կապիտալի արտահանման վրա, որով զգալիորեն կանխվեց ձեռնարկությունների և գործարանների հետագա փակումը և գործազրկության աճը: Ազգային տնտեսությունը օտարերկրյա մրցակցությունից պաշտպանելու և նրա զարգացման համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով մարոկկոյական իշխանությունները սկսեցին պրոտեկցիոնիստական քաղաքականություն վարել:

Քայլեր կատարվեցին նաև դրամական շուկան կարգավորելու և դրամական սպեկուլյացիան վերահսկելու ուղղությամբ: Այդ նպատակով շրջանառությունից հանվեց մարոկկոյական ֆրանկը, որը խարսխված էր ֆրանսիական ֆրանկի վրա, և նրա փոխարեն շրջանառության մեջ դրվեց մարոկկոյական դիրհամը: Կարևոր նշանակություն ունեցավ Մարոկկոյի տնտեսության պետական սեկտորի ստեղծումը, որի գլխավոր նպատակը արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումը խթանելն էր:

Սկիզբ դրվեց երկրի տնտեսության «մարոկկոյացմանը», որը, լինելով երկարատև գործընթաց, շարունակվեց նաև հաջորդ մի քանի տարիների ընթացքում: Դրա շրջանակներում Մարոկկոյի կառավարությունը հաստատեց Մարոկկոյի տնտեսական զարգացման 1958–1959 թթ. երկամյա պլանը: Նախատեսվում էր կապիտալ ներդրումներ գյուղատնտեսության, ոռոգման, ջրամատակարարման, էներգետիկայի, արդյունաբերության, առևտրի, կապի միջոցների, բնակարանային շինարարության բնագավառներում, մշակութային և սոցիալական կարիքների և վարչական ապարատի ծախսերի համար: Ամենամեծ կապիտալ ներդրումները նախատեսված էին գյուղատնտեսության ոլորտի, ինչպես նաև կապի ու բնակարանային շինարարության, իսկ ամենաքիչը՝ արդյունաբերության և էներգետիկայի համար:

1958–1959 թթ. երկամյա պլանի գլխավոր ստրատեգիական նպատակը պաշտոնապես համարվում էր անցումը գաղութային տնտեսությունից ազգային տնտեսության: Կարծում ենք, որ դա այնքան էլ ճիշտ հաշվարկված ծրագիր չէր, որովհետև այդպիսի կարճ ժամանակամիջոցում անհնար էր իրագործել նման վիթխարի ծրագիր:

Ավելացնենք, որ երկամյա պլանը հնարավոր չեղավ ամբողջությամբ կենսագործել: Մարոկկոյի կառավարությունը հարկադրված էր կազմել մի նոր՝ ավելի երկարատև ժամանակահատվածի համար նախատեսված տնտեսական զարգացման պլան: 1959 թ. նա հաստատեց Մարոկկոյի զարգացման 1960–1964 թթ. հնգամյա պլան:

Բայց դրա իրագործումն արդեն վիճակված չէր Մուհամմադ V–ի թագավորության շրջանում: 1961 թ փետրվարի 26–ին պրոտեկտորատի շրջանի Մարոկկոյի վերջին սուլթան և անկախ Մարոկկոյի առաջին թագավոր Մուհամմադ V–ը հանկարծամահ եղավ:

2. Սահմանադրության ընդունումը և Մարոկկոյի վերածումը բացարձակ միապետությունից սահմանադրական միապետության

Մուհամմադ V–ի մահվանից հետո Մարոկկոյի գահի վրա բազմեց նրա ավագ որդին՝ Հասանը, որը կրեց Հասան II տիտղոսը: Նրա թագադրումն անցավ շատ սահուն, առանց որևէ բարդությունների՝ ըստ ժառանգության վերաբերյալ Մուհամմադ V–ի կողմից սահմանված կարգի, համաձայն որի գահը հորից անցում էր ավագ որդուն:

Հասան II–ը հորից ժառանգություն ստացավ մի երկիր, որը կանգնած էր բազմաթիվ խնդիրների առջև: Ճիշտ է, նրա նախորդի թագավորության շրջանում որոշ տեղաշարժեր կատարվել էին, սակայն լայնածավալ և ընդգրկուն արմատական կամ որակական բնույթի փոփոխություններ դեռևս տեղի չէին ունեցել: Երիտասարդ թագավորին էր վիճակված իրականացնել կարևոր փոփոխություններ և վերակառուցումներ Մարոկկոյի պետական, քաղաքական և սոցիալ–տնտեսական կառուցվածքներում.

Հասան II–ը սկսեց պետական շինարարությունից՝ նպատակ ունենալով կառուցել արդիական պետություն: Դրա անհրաժեշտությունը զգում էր նաև Մուհամմադ V–ը, սակայն նա չհասցրեց դա իրագործել: Հիշենք նրա հայտարարությունը 1955 թ. նոյեմբերին՝ մադագասկարյան աքսորից Մարոկկո ժամանելու օրը, երբ նա հայտարարեց, որ ցանկանում է Մարոկկոն վերածել սահմանադրական միապետության: Նա այդ մասին չէր մոռանում. այդ է վկայում 1960 թ. մայիսի նրա հայտարարությունը, երբ նա կրկին հաստատեց, որ մինչև 1962 թ. վերջերը Մարոկկոն կունենա իր սահմանադրությունը:

Այդ հարցում Հասան II–ը չչեղվեց իր հոր նախագծած ուղուց և բավականին արագ կերպով համապատասխան քայլեր կատարեց Մարոկկոն բացարձակ միապետությունից սահմանադրական միապետության վերածելու ուղղությամբ: 1961 թ. հունիսին նա հրատարակեց սահմանադրական մի փաստաթուղթ, որը ստացավ «Հիմնական օրենք» անունը, թեև դա դեռևս այդպիսին չէր: Այն լրացման և հղկման կարիք ուներ, որը կատարելուց հետո՝ 1962 թ. նոյեմբերի 19–ին, պաշտոնապես հրապարակվեց որպես սահմանադրության նախագիծ: Նա դրվեց հանրաքվեի, որը կայացավ ամբողջ Մարոկկոյի տարածքում 1962 թ. դեկտեմբերի 7–ին և արժանացավ մեծամասնության հավանությանը:

Մարոկկոյի սահմանադրությունն ուժի մեջ մտավ 1962 թ. դեկտեմբերի 7–ին:

Սահմանադրության պրեամբուլայում շարադրված էին ընդհանուր դրույթներ, որտեղ մասնավորապես ասված էր, որ Մարոկկոյի թագավորությունը ինքնիշխան իսլամական պետություն է և կազմում է Մեծ Մաղրիբի մի մասը: Մարոկկոյի՝ որպես աֆրիկյան պետության գլխավոր նպատակներից մեկը աֆրիկյան միասնության իրականացումն է: Նշվում էր, որ նա հավատարիմ է այն բոլոր սկզբունքներին ու պարտավորություններին, որ վերցրել է իր վրա՝ միջազգային կազմակերպություններին անդամակցելու առնչությամբ:

Սահմանադրության «Հիմնական սկզբունքներ» բաժնում արձանագրված էր, որ «Մարոկկոն սահմանադրական, դեմոկրատական և սոցիալական միապետություն է»: Ինքնիշխանությունը պատկանում է ժողովրդին և իրագործվում անմիջականորեն հանրաքվեների միջոցով, իսկ անուղղակիորեն՝ սահմանադրական ինստիտուտների կողմից:

Բոլոր մարոկկացիները հավասար են օրենքի առջև, օգտվում են հավասար քաղաքական իրավունքներից, այդ թվում և ընտրական իրավունքից: Կարծիքի, խոսքի և տեղաշարժվելու ազատությունը երաշխավորվում էր:

Սահմանադրության հաջորդ բաժինները նվիրված էին ժառանգության, իշխանության ճյուղերի բաժանման, պետական մարմինների իրավասությունների և լիազորությունների հարցերին:

Սահմանադրության մեջ ամրագրվեց այն դրույթը, որ Մարոկկոյի գահը ժառանգաբար անցնելու է Հասան II թագավորի գծով, այսինքն՝ նրա անմիջական ժառանգներին:

Թագավորն օգտվում է չափազանց լայն լիազորություններից: Նա է նշանակում և ազատում վարչապետին ու կառավարության անդամներին և նախագահում կառավարության նիստերին: Նա իրավունք ունի հաստատել օրենքներ և օրենսդիր ակտեր, որոնք ընդունվել են պառլամենտի՝ Ներկայացուցիչների պալատի կողմից: Նրան է պատկանում նաև պառլամենտը ցրելու իրավունքը: Միապետը համարվում է Մարոկկոյի ռազմական ուժերի գլխավոր հրամանատարը: Նրա իրավասությունների մեջ է մտնում օտարերկրյա պետությունների հետ պայմանագրեր ստորագրելը և վավերացնելը: Միապետի լայն լիազորությունների մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ նա է նախագահում Արդարադատության բարձրագույն խորհրդում և օգտվում ներման իրավունքից:

Ինչ վերաբերում է պառլամենտին, ապա սահմանադրության հոդվածների համաձայն՝ նա կազմված է երկու պալատներից՝ Ներկայացուցիչների պալատից և Խորհրդականների պալատից: Ներկայացուցիչների պալատի անդամներն ընտրվում են չորս տարի ժամանակով՝ ընդհանուր քվեարկությամբ: Այլ է Խորհրդականների պալատի անդամների ընտրության կարգը: Նրա անդամների մեկ երրորդն ընտրվում է Գյուղատնտեսության, Արդյունաբերության և Առևտրի պալատների ու արհմիությունների կողմից, իսկ երկու երրորդը՝ ձահանգային և գավառական ասամբլեաների և կոմունալ խորհուրդների կողմից՝ վեց տարի ժամանակով:

Պառլամենտն է օրենքներ ընդունում և իրականացնում օրենսդրական գործունեություն, հաստատում պատերազմի մասին դեկլարացիան, ինչպես նաև արտակարգ դրության մասին կառավարության որոշումը:

Կառավարությունը պատասխանատու է թագավորի և Ներկայացուցիչների պալատի առջև, իսկ վարչապետը կարող է իրականացնել այնպիսի իրավասություններ, որոնք չեն մտնում թագավորի իրավասությունների մեջ:

Սահմանադրությունն արդարադատությունը հայտարարում է անկախ: Դատավորները նշանակվում են, և նրանց նշանակելու իրավունքը պատկանում է Արդարադատության բարձրագույն խորհրդին, որտեղ նախագահում է թագավորը:

Ահա այսպիսին էր 1962 թ. դեկտեմբերին գործողության մեջ մտած անկախ Մարոկկոյի թագավորության առաջին սահմանադրու-

թյունը: Դրանով Մարոկկոյում իրավաբանորեն հաստատվեց սահմանադրական միապետություն, որի առաջին միապետն այդ կարգավիճակով դարձավ Հասան II թագավորը: Մարոկկոյի թագավորությունը ոտք դրեց զարգացման սահմանադրական ուղին:

Մարոկկոյի ներքաղաքական կյանքում հաջորդ կարևոր քայլը եղավ պառլամենտական ընտրությունների անցկացումը, որը կայացավ 1963 թ. մայիսի 13–ին: Չնայած դրանք Մարոկկոյի պատմության մեջ առաջին պառլամենտական ընտրություններն էին, և բացակայում էր նման մեծ մասշտաբի քաղաքական միջոցառում իրականացնելու փորձը, այդուհանդերձ, ընտրություններն անցան բավականին կազմակերպված և ընտրողների լայն զանգվածների մասնակցությամբ: Ընտրություններում ամենաշատ ձայները ստացավ Սահմանադրական ինստիտուտների պաշտպանության ճակատը՝ ՍԻՊճ, որը գլխավորում էր թագավորի օգնական Սհմադ Գեդիրան: Այդ կուսակցությունը հիմնվել էր 1963 թ. համարվում էր կառավարող կուսակցություն և պառլամենտի 144 տեղերից գրավեց 69–ը: Երկրորդ տեղում էր Անկախության կուսակցությունը, որը շահեց 44 տեղ: Այդ կուսակցությունը մեծ դերակատարում է ունեցել պրոտեկտորատի վերացման և Մարոկկոյի անկախության համար մղված պայքարում և հավակնում էր լինել Մարոկկոյի առաջատար քաղաքական կուսակցությունը: Այդ կուսակցությունն ուժեղ դիրքեր ուներ Մուհամմադ V–ի ժամանակ, որը շատ հարցերում հենվում էր նրա վրա և կիսում նրա ազգային–քաղաքական գաղափարները: Սակայն նրա մահից հետո Անկախության կուսակցության դիրքերը թուլացան, որն այնուհետև՝ 1963 թ. հունվարին, դարձավ ընդդիմադիր կուսակցություն: Պառլամենտում իր ներկայացուցիչներն ունեցավ նաև Ժողովրդական ուժերի ազգային դաշինք կուսակցությունը՝ ԺՈՒԱԴ՝ շահելով պառլամենտական 28 աթոռ:

Այդ շրջանում Մարոկկոյի քաղաքական կյանքում այդ երեք կուսակցություններն էին գլխավոր դերակատարները:

Պառլամենտական ընտրություններին հաջորդեցին տեղական՝ մունիցիպալ ընտրությունները, որոնք կայացան 1963 թ. հուլիսի վերջերին: Սակայն այս անգամ ընտրությունները բոյկոտեցին Անկախության և կոմունիստական կուսակցություններն ու Ժողովրդական ուժերի ազգային դաշինքը:

3. Ներքաղաքական պայքարի սրումը և փոփոխություններ սահմանադրության մեջ (1960–1990–ական թվականներ)

Թեև Սահմանադրական ինստիտուտների պաշտպանության ճակատը պ' լամենտական ընտրություններին շահեց ամենաշատ տեղերը, բայց ր, ւանք բավարար չէին, որպեսզի նա միանձնյա կերպով կազմեր կառավարություն: Կառավարությունը գլխավորելու լուրջ հավակնություններ ուներ նաև Անկախության կուսակցությունը, որը դժգոհ էր պառլամենտական ընտրությունների արդյունքներից: Նրան համախոհ էր և պաշտպանում էր ԺՈՒԱԴ–ը.

Այսպես սկիզբ առավ միջկուսակցական պայքարը, որն այնուհետև վերածվեց ներքաղաքական պայքարի: Այդ պայքարում թագավորը ՍԻՊԵ–ի կողմն էր, որի վրա նա հենվում էր: Նա խիստ դժգոհ էր, որ իր կուսակցությունը չէր կարողացել բացարձակ հաղթանակ տանել պառլամենտական ընտրությունների ժամանակ, ինչը նրան հնարավորություն կտար կազմել կառավարություն:

Հասան II–ն անհեռատեսորեն ընդդիմության նկատմամբ դիմեց բռնությունների քաղաքականությանը: Անկախության և Ժողովրդական ուժերի ազգային դաշինքի ընդդիմադիր կուսակցությունների պառլամենտի դեպուտատները ձերբակալվեցին: Ձերբակալություններ կատարվեցին նաև նրանց անդամների շարքերում: Բռնություններն ավելի խստացան, երբ 1963 թ. հուլիսի 16–ին եղավ պաշտոնական հաղորդում թագավորի դեմ մահափորձի բացահայտման և կանխման վերաբերյալ: Դրան հետևեցին նոր ձերբակալություններ: Մահափորձի կազմակերպման մեջ մեղադրվեց ԺՈՒԱԴ–ը, և այդ հիման վրա ձերբակալվեց նրա ղեկավարությունը. Իսկ ընդհանուր առմամբ մահափորձի մեջ մասնակցելու մեղադրանքով ձերբակալվեց մոտ 5 հազար մարդ, որոնցից 102 մարդ 1963 թ. դեկտեմբերի 26–ին կանգնեց դատարանի առջև: Նրանցից 11–ը դատապարտվեցին մահվան:

Այդ բոլորը բողոքի մեծ ալիք բարձրացրեց Մարոկկոյում, որին միացան նաև համաշխարհային հասարակայնության ներկայացուցիչները: Նրանց ճնշման տակ թագավորը ստիպված էր մահվան դատավճիռը փոխարինել ցմահ բանտարկությամբ, իսկ ձերբակալվածների մի մասին էլ ազատ արձակել:

Այդուհանդերձ, թագավորի ձեռնարկած քայլերը շատ ծանր տպավորություն թողեցին, որն անդրադարձավ դեպքերի հետագա զարգացման վրա:

1964 թ. օգոստոսի 19–ին Հասան II–ը, օգտվելով սահմանադրությամբ իրեն տրված իրավունքից, գլխավորեց Մարոկկոյի կառավարությունը: Սակայն նրա բոլոր փորձերը՝ կազմել կոալիցիոն կառավարություն, ավարտվեցին անհաջողությամբ: Անկախության կուսակցությունը և ԺՈՒԱԴ–ը հրաժարվեցին մասնակցել այդ կառավարությանը: Նրանք պահանջում էին Մարոկկոյի վարչակարգի դեմոկրատացում և անհետաձգելի բարեփոխումների կիրառում՝ առաջարկելով հրավիրել պառլամենտի արտակարգ նստաշրջան և այդ հարցերը քննարկել պառլամենտի շրջանակներում. Սակայն նրանց այդ պահանջը մերժվեց:

Պայքարի մեջ մտան նաև բանվորները, արհմիությունները, երիտասարդական կազմակերպությունները. Ռեժիմի դեմոկրատացումը դարձել էր նրանց հիմնական պահանջը: Կասաբլանկայում, Ռաբաթում, Ֆեսում և Մարոկկոյի մի շարք այլ վայրերում 1965 թ. մարտ ամսին տեղի ունեցան զանգվածային ցույցեր, որոնք վերածվեցին բախումների ոստիկանական ուժերի հետ: Այդ վայրերում մտցվեց պարետային ժամ: Իսկ 1965 թ. հուլիսի 7–ին թագավորը երկրում մտցրեց արտակարգ դրություն, ցրեց պառլամենտը, կասեցվեց սահմանադրության գործողությունը, և նա իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ գործադիր ու օրենսդիր իշխանությունը: Նա իր այդ քայլը «արդարացնում» էր «Ազգային փրկության» կոալիցիոն կառավարություն կազմելու իր փորձերի ձախողումով: Ընդ որում՝ թագավորը դրա համար մեղադրում էր քաղաքական կուսակցություններին՝ Անկախության կուսակցությանը, ԺՈՒԱԴ–ին և նրանց հարող ուժերին, կազմակերպություններին ու միություններին, որոնք այնպիսի պայմաններ էին առաջադրում, անընդունելի էին թագավորի համար:

Այսպիսով՝ ակնհայտ դարձավ, որ հարաբերությունները պալատի և քաղաքական կուսակցությունների միջև սրվել էին այն աստիճան, որ հակասություններն այլևս անհնար էր լուծել բանակցությունների միջոցով: Այսպիսի իրադրության մեջ Հասան II–ը դիմեց նման կտրուկ քայլի՝ երկրում արտակարգ դրություն մտցրեց: Շատ մասնագետներ այդ քայլը համարում են վերադարձ բացարձակ միապետությանը:

Արտակարգ դրությունը Մարոկկոյում պահպանվեց 5 տարի: Այդ ընթացքում թագավորը փորձում էր ամրապնդել իր կողմնակիցների

դիրքերը, թուլացնել ընդդիմությունը և երկրում ստեղծել ավելի բարենպաստ պայմաններ իր տնտեսական և սոցիալական քաղաքականության իրականացման համար:

Բայց Հասան II–ը հասկանում էր, որ այդպես երկար շարունակել չի կարելի, և հինգ տարի անց՝ 1970 թ. հուլիսի 8–ին, նա հայտարարեց արտակարգ դրության վերացման և կառավարման պառլամենտական համակարգին վերադառնալու մասին:

Դրա հետ միասին թագավորը գտնում էր, որ անհրաժեշտ է նոր սահմանադրության ընդունում. Ի կատարումն այդ խոստման՝ 1970 թ. հուլիսի 24–ին հասարակայնության քննարկմանը ներկայացվեց սահմանադրության նոր նախագիծը:

Նոր նախագիծը հիմնարար բնույթի հարցերում ամբողջությամբ կրկնում էր 1962 թ. սահմանադրության սկզբունքային դրույթները: Մարոկկոն շարունակում էր մնալ սահմանադրական միապետություն, պահպանվում էին միապետի լայն լիազորությունները և այլն:

Փոփոխության ենթարկված մասերից հատկապես պետք է նշել պառլամենտի երկրորդ պալատի՝ Խորհրդականների պալատի վերացումը և անցումը միապալատ պառլամենտական համակարգի: Եթե նախկինում թագավորը երկրի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերը կարող էր դնել հանրաքվեի պառլամենտի երկու պալատների հետ խորհրդակցելուց հետո, ապա նոր սահմանադրության նախագծում թագավորի համար այդպիսի սահմանափակում չկար: Կարևոր էր նաև փոփոխությունը պատերազմ հայտարարելու կարգի վերաբերյալ: 1962 թ. սահմանադրությամբ պատերազմի հայտարարումը մտնում էր պառլամենտի իրավասության մեջ, իսկ նոր նախագծով պատերազմը համարվում էր հայտարարված այն բանից հետո, երբ թագավորն այդ մասին տեղյակ էր պահում պառլամենտին: Կար նաև մեկ այլ կարևոր նորամուծություն, որը վերաբերում էր սահմանադրության մեջ փոփոխություն մտցնելու նախաձեռնությանը: Հին սահմանադրությամբ այդ նախաձեռնությունը պատկանում էր վարչապետին և պառլամենտին, իսկ նոր նախագծով՝ թագավորին: Ուշադրության է արժանի նաև գահի ժառանգության հարցում առաջարկված փոփոխությունը: Նախկինում թագաժառանգ էր համարվում միայն ավագ որդին, իսկ նոր նախագծով գահաժառանգ կարող էր համարվել թագավորի տղաներից յուրաքանչյուրը:

Ակնհայտ է, որ այդ և նման այլ փոփոխությունների արդյունքում ավելի էին ընդլայնվում թագավորի իրավասությունները, և ուժեղանում նրա դիրքերը Մարոկկոյի կառավարման համակարգում:

Նոր սահմանադրության վերաբերյալ հանրաքվեն կայացավ 1970 թ. հուլիսի 24–ին և արժանացավ ընտրողների բացարձակ մեծամասնության՝ 99%–ի հավանությանը: Իսկ նույն թվականի օգոստոսի 21–ին և 28–ին երկու փուլով կայացան պառլամենտի ընտրությունները, որի ժամանակ հաղթեցին անկախականները: Այս անգամ ևս ընտրությունները բոյկոտեցին Անկախության կուսակցությունը, ԺՈՒԱԴ–ը և նրանց հարող մի քանի այլ կազմակերպություններ ու միություններ:

Սակայն պառլամենտական նոր ընտրությունները լիցքաթափ չարեցին Մարոկկոյի քաղաքական լարվածությունը: Ընդհակառակը, 1971 թ. հուլիսին նոր մահափորձ կատարվեց Հասան II–ի դեմ:

Ընդդիմությունը և հասարակայնության լայն խավերը երկրի միապետից պահանջում էին կիրառել դեմոկրատական բնույթի բարեփոխումներ և նախապատրաստել նոր՝ իսկապես դեմոկրատական սահմանադրություն: Հասան II–ը հարկադրված էր հաշվի նստել այդ պահանջների հետ և տեղի տալով աստիճանաբար, առանց հապաղելու փոփոխություններ մտցրեց սահմանադրության մեջ, որն ավելի դեմոկրատական էր, քան թե գործողը:

Նոր սահմանադրությունն ուժի մեջ մտավ 1972 թ. մարտի 10–ին, սակայն այն վերատեսման ենթարկվեց 1992 թ. սեպտեմբերի 4–ին, իսկ 1997 թ. նրանում լրացում կատարվեց, որը վերաբերվում էր պառլամենտի կառուցվածքին՝ վերականգնվեց պառլամենտի երկրորդ պալատը, և Մարոկկոյում հաստատվեց երկպալատանի բարձրագույն օրենսդիր մարմին:

4. Մարոկկոյի արտաքին քաղաքական դրությունը

Անկախության նվաճումից հետո Մարոկկոյի առջև կանգեցին մի շարք լուրջ միջազգային և տարածաշրջանային խնդիրներ, որոնք Մարոկկոյի նոր իշխանություններն ընդհանուր առմամբ լուծեցին հաջողությամբ:

1960–ականների կեսերին, ինչպես նշվեց, Մարոկկոն հասավ այն բանին, որ ֆրանսիական և ամերիկյան բոլոր զինված ուժերը հեռացան Մարոկկոյից: Չնայած այդ հանգամանքին՝ Մարոկկոն կարողացավ նոր-

մալ հարաբերություններ պահպանել Ֆրանսիայի և ԱՄՆ–ի հետ ու համագործակցել նրանց հետ ոչ միայն արտաքին հարաբերությունների ոլորտում, այլև տնտեսական, առևտրական և ֆինանսական բնագավառներում: Իսպանիայի կողմից Մարոկկոյին որոշ տարածքներ վերադարձնելը նույնպես չխաթարեց հարաբերությունները Իսպանիայի և Մարոկկոյի միջև: Մարոկկոն անկախությունից հետո տնտեսական և ֆինանսական շոշափելի օգնություն էր ստանում ԱՄՆ–ից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Բելգիայից, Իտալիայից, Քուվեյթից և այլ երկրներից:

1956 թ. նոյեմբերի 12–ին Մարոկկոն դարձավ ՄԱԿ–ի անդամ, որը նրա առջև բացեց միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալու դռները և նպաստեց նրա միջազգային դիրքերի ամրապնդմանը: 1958 թ. Մարոկկոն ընդունվեց Աֆրիկայի միասնության կազմակերպության անդամ և ակտիվորեն մասնակցեց այդ համաաֆրիկյան կազմակերպության աշխատանքներին, որի կոնֆերանսները և այլ կարևոր հանդիպումները տարբեր ժամանակներում գումարվում էին նաև Կասաբլանկայում և Ռաբաթում: Նման մի կոնֆերանս 1961 թ. Մարոկկոյի թագավոր Մուհամմադ V–ի նախաձեռնությամբ գումարվեց Կասաբլանկայում:

Մարոկկոն 1958 թ. անդամագրվեց նաև Արաբական պետությունների լիգային, որը նրան հնարավորություն տվեց բավականին ակտիվորեն մասնակցել ներարաբական քաղաքական և տնտեսական կյանքին՝ դառնալով նրա բաղկացուցիչ մասը: Նա հանդես էր գալիս արաբական երկրների անկախության ամրապնդման և արաբական երկրների զարգացումն ու առաջադիմությունն ապահովելու դիրքերից ու անվերապահորեն պաշտպանում պաղեստինյան ժողովրդի օրինական իրավունքները: 1967 թ. հունիսյան արաբա–իսրայելյան պատերազմի ժամանակ Մարոկկոն հայտարարեց, որ նա ամբողջապես կանգնած է Եգիպտոսի, Սիրիայի, Հորդանանի և Պաղեստինի ազատագրության կազմակերպության կողքին, սակայն, ի տարբերություն արաբական մի շարք երկրների, իր զորքերը չուղարկեց պատերազմի դաշտ:

Մարոկկոյում առանձնահատուկ նշանակություն էին տալիս հարաբերություններին Մաղրիբի հարևան երկրների հետ: Բայց այստեղ մարոկկոյական իշխանությունները հաճախ կոպիտ վրիպումներ էին թույլ տալիս:

Մարոկկոն ակտիվորեն պաշտպանում էր Ալժիրին նրա ազգային–ազատագրական պայքարի ողջ ընթացքում, որը հարուցում էր Ֆրանսիայի դժգոհությունը և բացասաբար էր անդրադառնում

ֆրանս–մարոկկոյական հարաբերությունների վրա: Սակայն երբ Ալժիրը հաղթանակով դուրս եկավ այդ պայքարից և դարձավ անկախ պետություն, ապա հարաբերությունները երկու պետությունների միջև սահմանային վեճի պատճառով անմիջապես սրվեցին և 1963 թ. հոկտեմբերին վերածվեցին ռազմական կոնֆլիկտի երկու հարևան եղբայրական արաբական երկրների միջև: Հարկ եղավ Աֆրիկյան միասնության կազմակերպության, հատկապես Մալիի պրեզիդենտ Կեյտայի միջնորդությունը, որ դադարեցվի պատերազմը, որի շուրջը կողմերը համաձայնության եկան արդեն 1964 թ.: Այդ կոնֆլիկտի ժամանակ Մարոկկոն խզեց դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի հետ, քանի որ նա պաշտպանում էր Ալժիրին: Սակայն ալժիրա–մարոկկոյական կոնֆլիկտը հարթելուց հետո Եգիպտոսը և Մարոկկոն 1964 թ. փետրվարի 2–ին դիվանագիտական հարաբերությունները վերականգնեցին:

Մարոկկոն ժխտական դիրքորոշում գրավեց Մավրիտանիայի նկատմամբ՝ նրա անկախության հարցում: Հավակնություններ ունենալով Մավրիտանիայի տարածքների նկատմամբ՝ Մարոկկոն հրաժարվում էր նրան ճանաչել որպես ինքնուրույն անկախ պետություն և փորձում էր իր այդ դիրքորոշումը պարտադրել մի շարք արաբական երկրների: Եվ երբ Թունիսը, անտեսելով Մարոկկոյի դիրքորոշումը, 1960 թ. ճանաչեց Մավրիտանիային, ապա Մարոկկոն նրա հետ խզեց իր դիվանագիտական հարաբերությունները: Հետագայում մարոկկոյական իշխանությունները զգացին իրենց թույլ տված սխալը և փորձեցին շտկել այն: Մարոկկոյի թագավոր Հասան II–ը 1964 թ. դեկտեմբերին պաշտոնական այցով մեկնեց Թունիս, հանդիպումներ ունեցավ Թունիսի պրեզիդենտ Հաբիբ Բուրգիբայի հետ, որի արդյունքում լարվածությունը երկու երկրների միջև հարթվեց, և դիվանագիտական հարաբերությունները նրանց միջև նույնպես վերականգնվեցին:

1960–ական թվականներից սկսած տեղի են ունենում Մաղրիբի չորս երկրների՝ Ալժիրի, Թունիսի, Լիբիայի և Մարոկկոյի պետությունների և կառավարությունների ղեկավարների, ինչպես նաև համապատասխան նախարարների կանոնավոր հանդիպումներ, որոնց շրջանակներում նրանք քննարկում և համապատասխան որոշումներ են ընդունում այդ երկրներին հուզող տարբեր բնույթի հարցերի վերաբերյալ, որոնք միտված էին նրանց միջև համագործակցության ավելի խորացմանը տնտեսության տարբեր ճյուղերի, կրթության, լուսավորության, արտաքին քաղաքականության, միջարաբական հարաբերությունների, պաղես-

տինյան հիմնախնդրի և այլ հարցերում: Նման բազմաթիվ հանդիպումներ են կայացել 1960–1990–ական թվականներին:

Մարոկկոն նոր կոնֆլիկտի մեջ ներգրավվեց 1975 թ., երբ Իսպանիան հրաժարվեց իր հավակնություններից Արևմտյան Սահարայի նկատմամբ և այդ տարածքը զիջեց Մավրիտանիային ու Մարոկկոյին: Սակայն Արևմտյան Սահարայի բնակչությունն իր ավանգարդի՝ ՊՕԼԻՍԱՐԻՕ–ի գլխավորությամբ ոտքի ելավ և պայքար ծավալեց անկախության համար՝ չցանկանալով Մարոկկոյի և Մավրիտանիայի մաս կազմել: Այդ պայքարում ՊՕԼԻՍԱՐԻՕ–ն միայնակ չէր: Նրան պաշտպանում և նյութական ու ռազմական օգնություն էին ցույց տալիս Ալժիրը և Լիբիան, որի արդյունքում ձևավորվեց մաղրիբյան թնջուկը: Այդ պատերազմը ձգձգվեց շատ երկար և մեծ վնասներ պատճառեց պատերազմի մեջ ներգրավված բոլոր կողմերին: Պատերազմի բեռին և լարվածությանը չդիմացավ Մավրիտանիան. 1979 թ. հայտարարեց, որ ոչ մի հավակնություն չունի Արևմտյան Սահարայի նկատմամբ և դուրս եկավ պատերազմից: Իսկ Մարոկկոն միայնակ շարունակեց պատերազմը՝ չհասնելով որևէ դրական արդյունքի: Եղավ մի պահ, երբ թվում էր, թե կոնֆլիկտը մոտ է իր հանգուցալուծմանը: Նման իրադրություն ստեղծվեց 1980–ական թվականներին, երբ Հասան II–ը հասկացավ, որ միայնակ այդ հարցը չի կարող լուծել և 1987 մեկնեց Ալժիր ու բանակցություններ վարեց Ալժիրի պրեզիդենտ Շադլի Բենջադիդի հետ: Դրանից հետո Ալժիրը դադարեցրեց օգնությունը ՊՕԼԻՍԱՐԻՕ–ին: Ենթադրվում էր, որ դրանից հետո ՊՕԼԻՍԱՐԻՕ–ն չի կարողանա շարունակել պայքարը. Բայց այդպես չստացվեց: Պատերազմը շարունակվեց և դրան անդրադարձավ ՄԱԿ–ը, որը մշակեց և ընդունեց Արևմտյան Սահարայում հանրաքվե անցկացնելու ծրագիր: 1988–1991 թթ. ՄԱԿ–ը մի քանի փորձեր կատարեց հանրաքվե անցկացնելու ուղղությամբ, բայց ձախողում կրեց, որովհետև կոնֆլիկտին մասնակից բոլոր կողմերը մերժեցին հանրաքվեի գաղափարը և հրաժարվեցին մասնակցել դրան: Պատերազմական գործողությունները շարունակվում են, և Արևմտյան Սահարայի հարցը մինչև օրս մնում է չլուծված: ՊՕԼԻՍԱՐԻՕ–ն այդ ընթացքում կատարեց շատերի համար միանգամայն անսպասելի քայլ՝ նա հայտարարեց Արևմտյան Սահարայի տարածքում անկախ պետություն ստեղծելու մասին:

Կարծում ենք, որ Արևմտյան Սահարայի հարցում Հասան II–ը թույլ տվեց իր ամենակոպիտ սխալը արտաքին քաղաքականության բնագավառում:

Մարոկկոյի համար մինչև օրս մնում է չլուծված նաև մի շարք այլ տարածքների հարցը, որոնք գտնվում են Իսպանիայի տնօրինության տակ: Դրանց թվին են պատկանում Մելիլայի, Սեուտայի առափնյա անկլավները, Պենոն դե Վելեզ դե լա Գոմերայի և Պենոն դե Ալհուկեմասի անկլավները և Կաֆարինասը ու Պերեջիլ կղզիները:

Ինչպես Մուհամմադ V–ը, այնպես էլ Հասան II–ը մշտապես ձգտել են ընդլայնել իրենց արտաքին կապերը: Նախապատվությունը տալով արևմտյան տերություններին, այդուհանդերձ, նրանք չէին անտեսում մյուս երկրները, հատկապես Աֆրիկայում: Նրանք զգալի տեղ էին հատկացնում նաև սոցիալիստական երկրներին, առաջին հերթին՝ Խորհրդային Միությանը:

Դիվանագիտական հարաբերությունները Մարոկկոյի և Խորհրդային Միության միջև հաստատվել էին 1958 թ. դեկտեմբերին: Երկու երկրների միջպետական հարաբերությունների զարգացման գործում բացառիկ նշանակություն ունեցավ Խորհրդային Միության Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Անաստաս Միկոյանի պաշտոնական այցը Մարոկկո 1962 թ. հունվարի 19–22–ը՝ Մարոկկոյի թագավոր Հասան II–ի հրավերով: Խորհրդային Միության ականավոր առաջնորդներից մեկի և XX դարի իր հավասարը չունեցող ամենատաղանդավոր դիվանագետի այցը Մարոկկո հիմք դրեց երկու երկրների միջև բազմակողմանի հարաբերությունների զարգացմանը և հանդիսացավ քաղաքական ու բարոյական մեծ օժանդակություն իր անկախությունը ոչ հեռավոր անցյալում նվաճած երկրի համար: Իսկ 1966 թ. հոկտեմբերին պատասխան այցով Մոսկվա ժամանեց Մարոկկոյի թագավոր Հասան II–ը:

Խորհրդա–մարոկկոյական հարաբերությունները զարգանում էին բնականոն հունով՝ ընդհուպ մինչև Խորհրդային Միության փլուզումը 1991 թ:

1970–1990–ական թվականներին, ինչպես հայտնի դարձավ հետագայում, Հասան II–ն ակտիվ դերակատարում է ունեցել պաղեստինա–իսրայելական կոնֆլիկտի խաղաղ կարգավորման գործում: Նա արաբական առաջին պետական ղեկավարներից մեկն էր, որը գտնում էր, որ արաբական երկրները պետք է ընդունեն Իսրայելի գոյությունը և հրաժարվեն այն վերացնելու գաղափարից, իսկ Իսրայելը պետք է ընդունի Պաղեստինի արաբ ժողովրդի իրավունքը՝ ունենալ իր սեփական պետությունը, և որևէ կերպ չխոչընդոտի նրա իրականացմանը:

Այդ ուղղությամբ արաբների մենտալիտետում և հոգեբանության մեջ տեղի ունեցած դրական տեղաշարժերի մեջ անուրանալի է Հասան II–ի ներդրումը:

Մարոկկոն 1991 թ. դեկտեմբերի 30–ին ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, և երկու երկրների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ, որոնք զարգանում են բարեկամության ոգով: 1993 թ. հոկտեմբերի 5–ին ՀՀ արտաքին գործերի նախարարությունը հայտնեց Մարոկկոյի Թագավորության արտաքին գործերի նախարարությանը, որ «ի ամրապնդումն և զարգացումը հայ–մարոկկոյական հարաբերությունների՝ Եգիպտոսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը նշանակվել է ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Մարոկկոյի Թագավորությունում՝ մշտական նստավայր ունենալով Կահիրեում»: Հետագայում Երևանում իր գրասենյակը բացեց Մարոկկոյի Թագավորության Պատվավոր հյուպատոսը:

Երկու կողմերն էլ բազմիցս ընդգծել են Հայաստանի և Մարոկկոյի միջև փոխշահավետ կապերի էական ամրապնդման անհրաժեշտությունը:

5. Քաղաքական կայունության և տնտեսական զարգացման ուղիով (1999–2005 թթ.)

Հասան II–ը թագավորեց մինչև XX դարի վերջը: Նա իր մահկանացուն կնքեց 1999 թ. հուլիսի 29–ին՝ 70 տարեկան հասակում՝ գահակալելով մոտ 37 տարի:

1999 թ. հուլիսի 30–ին Մարոկկոյի թագավոր հռչակվեց նրա ավագ որդին՝ 36–ամյա Մուհամմադը, որը կրում է Մուհամմադ VI տիտղոսը:

Մուհամմադ VI–ը, ստանձնելով Մարոկկոյի արքայի թագը և գահը, վստահեցրեց, որ շարունակելու է իր հոր քաղաքականությունը Մարոկկոն արդիական զարգացած պետության վերածելու ուղղությամբ: Այդ քաղաքականության իրականացման և հաջողության հասնելու գործում նրա հնարավորություններն ավելի մեծ էին, քան թե իր հոր, որն իր նախորդից որպես ժառանգություն ստացել էր անհամեմատ հետամնաց և ծանր վիճակում գտնվող երկիր: Հասան II–ը քիչ բան չարեց Մարոկկոյի հետամնացության հաղթահարման և զարգացման ուղղությամբ: Մասնավորապես պետք է նշել 1960–1990–ական թվականներին իրականացված այն միջոցառումները, որոնք «Ազգային ինստիտուտների

հիմնում և զարգացում» հավաքական անունը ստացան: Դրա մեջ մտնում էր ազգային կադրերի, այդ թվում և տեխնիկական, պատրաստումը, երկրի պետական կենտրոնական և տեղական կառավարման մարմինների, կրթության, մշակույթի և այլ բնագավառների մարոկկոյացումն ու արաբականացումը: Այդ գործընթացն իր մեջ ընդգրկեց անգամ բանակը, և կառավարությունն անհրաժեշտ քայլերի դիմեց բանակի սպայական կորպուսը, որը կազմված էր հիմնականում ֆրանսիացիներից, աստիճանաբար փոխարինել և համալրել ազգային՝ մարոկկոյական սպաներով: Ընդլայնվեց արաբերեն լեզվի գործածության ոլորտը, և այն դարձավ ֆրանսերենի հետ համահավասար կիրառվող լեզու՝ այդ թվում և պաշտոնական ոլորտում: Մեծ ուշադրություն դարձվեց լուսավորությանն ու կրթությանը: Շատ արագ թափով նոր դպրոցներ էին բացվում ոչ միայն քաղաքներում, այլև գյուղական վայրերում: Ուսուցիչների պակասը լրացնելու նպատակով տասնյակ հազարավոր մարոկկացիներ ուղարկվում էին արաբական տարբեր երկրներ՝ ուսուցիչներ պատրաստելու համար. Վերադառնալով Մարոկկո՝ նրանք նվիրվածությամբ անցնում էին աշխատանքի տեղական դպրոցներում: Անգամ տարեցներին էին սովորեցնում տառաճանաչություն, որի համար բացվել էին հատուկ դպրոցներ, և հրատարակվում էր համապատասխան գրականություն:

Նպաստավոր պայմաններ ստեղծվեցին նաև ազգային մշակույթի զարգացման համար: Իշխանությունները մեծ ուշադրություն էին դարձնում պատմական արժեքները պահպանելու գործին, խրախուսում և կազմակերպում էին երաժշտական ֆեստիվալներ, մշակութային զանազան մրցույթներ և այլն: Ռաբաթում հիմնվեց համալսարան, իսկ ապա նաև կոնսերվատորիա:

Նշված ժամանակաշրջանում՝ 1960–1990-ականներին, մարոկկոյական իշխանությունները մեծ ջանքեր էին գործադրում տնտեսության՝ գյուղատնտեսության, արդյունաբերության և տուրիզմի զարգացման ուղղությամբ՝ գտնելով, որ այդ ոլորտների զարգացումը և արդիականացումը բանալի կարող է ծառայել Մարոկկոն զարգացած երկրի վերածելու ճանապարհին: Արդյունաբերության ոլորտում ստեղծվեցին մի շարք խառը պետական–մասնավոր արդյունաբերական ձեռնարկություններ ու ընկերություններ՝ տեղական և օտարերկրյա կապիտալի հիմքի վրա: Այդ սկզբունքը կիրառվում էր նաև լեռնահանքային արդյունաբերության ոլորտում, որը հանդիսանում է Մարոկկոյի ամենակարևոր

և ամենահեռանկարային արդյունաբերական ճյուղը: Պետությունը խրախուսում և նպաստավոր ներդրումային պայմաններ է ստեղծում օտարերկրյա կապիտալի համար: Շնորհիվ այդ քայլերի՝ նկատելի հաջողություններ արձանագրվեցին ցեմենտի, տեքստիլ, սննդի, շաքարի և արդյունաբերության այլ ճյուղերում:

Պետությունը փորձեց տնտեսության զարգացման մեջ կիրառել պլանային սկզբունքը, և դրա հիման վրա կազմվեցին մի քանի երկամյա (1958–1959), եռամյա և հնգամյա (1960–1964) պլաններ և այլն: Ճիշտ է, այդ և հետագայում ընդունված այլ պլանները հետողականորեն և ամբողջությամբ չէին կիրառվում, այդուհանդերձ, դրանք իրենց որոշակի դրական դերը խաղացին Մարոկկոյի տնտեսական զարգացման բնագավառում:

Նկատելի տեղաշարժեր կատարվեցին նաև գյուղատնտեսության բնագավառում, մասնավորապես հողասակավ և հողազուրկ գյուղացիներին հողաբաժիններով ապահովելու ուղղությամբ: Բայց դրանք անբավարար էին գյուղատնտեսությունը բարձրացնելու համար, չմշակվեց ագրարային բարեփոխումների իրատեսական հայեցակարգ:

1980–1990–ական թվականներին, ինչպես նշվեց, որոշ մեղմացում նկատվեց Հասան II–ի ներքին քաղաքականության բնագավառում՝ դեմոկրատացման առումով: Դրա հիմքը դրվեց այն բանից հետո, երբ թագավորը վերացրեց արտակարգ իրադրությունը և 1990–ականների ընթացքում փոփոխություններ կատարեց սահմանադրության բնագավառում: Ընդդիմությունը ստացավ ավելի ազատ գործելու հնարավորություն, ակտիվացավ կուսակցական կյանքը, աշխուժացավ հասարակական կազմակերպությունների, միությունների և ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությունը:

Իհարկե, դեռ կային շատ ու շատ չլուծված հարցեր թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական կյանքի բնագավառներում, որոնք որպես ժառանգություն, դրականի հետ միասին, անցան նոր միապետին: Համենայն դեպս, անկասկած է, որ Մուհամմադ VI–ն ավելի լավ ժառանգություն ստացավ իր հորից, քան թե իր հայրը՝ Հասան II–ը, իր հորից՝ Մուհամմադ V–ից:

Սիա այսպիսի «հարստությամբ» Մարոկկոն և նրա նոր ու երիտասարդ թագավորը ոտք դրեցին XXI դար:

Մուհամմադ VI–ը համարվում է լիբերալ հայացքների տեր թագավոր, որի իդեալը Մարոկկոն արևմտաեվրոպական տիպի սահմանադ-

րական միապետության վերածելն է: Դրանում նրա համար որպես մոդել են ծառայում ժամանակակից Իսպանիան և նրա թագավոր Խուան Կարլոսը, որն իր նախնիների գահին վերադարձավ Իսպանիայի երկարամյա դիկտատոր Ֆրանկոյի մահվանից հետո:

Իր թագավորության համեմատաբար կարճ ժամանակաշրջանում՝ ընդամենը յոթ տարիների ընթացքում, Մուհամմադ VI–ը զգալի բան է կատարել Մարոկկոյի ներքաղաքական կյանքի ազատականացման ուղղությամբ: Մարոկկոյում հաստատվել է բազմակուսակցական, պլյուրալիստական հասարակարգ, ազատորեն գործում է ընդդիմությունը, որն ունի իր մամուլը, ակումբները, երիտասարդական միությունները, իրականացվում է խոսքի, ժողովների, խղճի, միությունների ազատություն: Այդ բոլորի համար հիմք է հանդիսանում 1990–ական թվականներին փոփոխությունների և լրացումների ենթարկված սահմանադրությունը: Լուրջ քայլեր են կատարվում Մարոկկոյում քաղաքացիական հասարակություն կառուցելու ուղղությամբ: Դրանում իրենց լուման են ներդնում XXI դարի սկզբներին ծնավորված և հասարակական ասպարեզ իջած տասնյակ ոչ կառավարական կազմակերպությունները, կանանց միությունները, երիտասարդական կազմակերպությունները:

Մուհամմադ VI–ը պահպանեց պառլամենտի՝ որպես երկրի բարձրագույն օրենսդիր մարմնի կարգավիճակը և նրա երկպալատանի կառուցվածքը: Մարոկկոյի նոր թագավորի համար լուրջ քննություն հանդիսացան նրա օրոք անցկացված պառլամենտական ընտրությունները. 2002 թ. սեպտեմբերի 27–ին կայացան Ներկայացուցիչների պալատի, իսկ 2003 թ. հոկտեմբերի 6–ին՝ Խորհրդականների պալատի ընտրությունները: Եվ նա բռնեց այդ քննությունը: Դրանք դեմոկրատական ընտրություններ էին, որոնց ազատորեն մասնակցում էին բոլոր կուսակցությունները, այդ թվում և ընդդիմադիրները: Մարոկկոյում գործում են երկտասնյակից ավելի քաղաքական կուսակցություններ, որոնք իրենց ճյուղերն ունեն ոչ միայն մայրաքաղաք Ռաբաթում և մեծ քաղաքներում՝ Կասաբլանկայում, Ֆեսում, Մարակեշում, այլև գյուղական շրջաններում:

2003 թ. սեպտեմբերին կայացան նաև տեղական ընտրությունները, որոնք նույնպես անցան դեմոկրատական հիմունքներով:

2002–2003 թթ. պառլամենտական և մունիցիպալ ընտրությունները առաջին ընտրություններն էին XXI դարում և Մուհամմադ VI–ի թագավորության շրջանում:

Մարոկկոյում գործում են նաև մի շարք աշխատավորական միություններ և ասոցիացիաներ, ինչպես՝ Աշխատանքի դեմոկրատական կոնֆեդերացիան, Մարոկկոյի բանվորների ընդհանուր միությունը, Մարոկկոյի աշխատավորների ասոցիացիան և այլն:

Թագավորը, իհարկե, պահպանում է երկրի միապետի իր բոլոր իրավասությունները, որոնք սահմանված են Մարոկկոյի հիմնական օրենքով: Նա պետության ղեկավարն է, և նրան է պատկանում գործադիր իշխանությունը: Նա է նշանակում վարչապետին և կառավարությունը: 2002 թ. հոկտեմբերի 9–ին նա կառավարության ղեկավարի պաշտոնը վստահեց Դրիս Ջիտուին: Կառավարությունը սահմանադրության շրջանակներում նույնպես օգտվում է գործադիր իշխանության գործառույթներից:

Մուհամմադ VI–ի հեռատես և ճկուն քաղաքականության շնորհիվ Մարոկկոյում հաստատվել է ներքաղաքական կայուն իրադրություն:

Իհարկե, չպետք է կարծել, թե այս ոլորտում բոլոր հարցերը Մարոկկոյում լուծված են: Երկրի կառավարման, Մարոկկոյում քաղաքացիական հասարակություն կառուցելու, աշխատավորների իրավունքների պաշտպանության, կանանց իրավունքների և այլ հարցերում դեռևս կան շատ չլուծված խնդիրներ:

Ինչ վերաբերում է սոցիալ–տնտեսական ոլորտին, ապա այստեղ խնդիրներն ավելի բարդ են, և չլուծված հարցերը՝ ավելի շատ: Այդ բնագավառում, ինչպես ցույց տրվեց, XX դարի վերջին տասնամյակներին զգալի տեղաշարժեր տեղի ունեցան: Սակայն դրանք դեռ բավարար չեն Մարոկկոն զարգացած երկիր համարելու համար: Դա հատկապես նկատվում է արդյունաբերության, մասամբ նաև գյուղատնտեսության բնագավառում: Եվ այստեղ Մուհամմադ VI–ի և մարոկկոյական կառավարության անելիքներն ավելի շատ են:

2005 թ. տվյալներով Մարոկկոյի աշխատուժը կազմել է մոտ 11 մլն մարդ: Դրանից արդյունաբերության մեջ զբաղված էր ընդամենը 15, գյուղատնտեսության մեջ՝ 40, իսկ սպասարկության ոլորտում՝ 45%–ը: Շատ բարձր է գործազրկությունը, որը դարձյալ 2005 թ. տվյալներով կազմում է աշխատուժի 10,5%–ը: Եթե այդ բոլորին ավելացնենք, որ աղքատության գծից ներքև գտնվողների թիվը 2005 թ. կազմել է մոտ 20%, ապա այս ոլորտում տիրող ծանր իրավիճակն ավելի ակնհայտ կդառնա: Մարոկկոյում դեռևս մեծ չափեր է ընդունում դեռահաս երեխաների աշխատուժի օգտագործումը, որը համարվում է ցածր վարձատր-

վող աշխատուժ: 2000 թ. պաշտոնական տվյալներով՝ Մարոկկոյի տնտեսության մեջ զբաղված էր մինչև 15 տարեկան 500 հազար երեխա:

Մարոկկոյի ամենամեծ արդյունաբերական ճյուղը շարունակում է մնալ լեռնահանքային արդյունաբերությունը, որի մեջ առաջին տեղը պատկանում է ֆոսֆորի արտադրությանը: Եկամտի ամենամեծ աղբյուրը ստացվում է այդ ոլորտից: Եկամուտների երկրորդ աղբյուրը արտասահմանում աշխատող մարոկկացիների դրամական փոխանցումներն են Մարոկկոյում գտնվող իրենց հարազատներին. Իսկ երրորդ աղբյուրը տուրիզմից ստացվող եկամուտներն են:

Մարոկկոյի տնտեսական զարգացմանը մեծ հարված է հասցնում նրա կախվածությունը էներգակիրներից և նրանց ներմուծումից: Այդ պարագան շատ է խանգարում փոքր և միջին ձեռներեցության զարգացմանը, որը բացասաբար է անդրադառնում թե՛ տնտեսության զարգացման ծավալների ու տեմպերի և թե՛ բնակչության զբաղվածության, տնտեսական դրության բարելավման ու աշխատավորների եկամուտների բարձրացման վրա:

Մարոկկոյի ժամանակակից իշխանությունները հասկանում են, որ Մարոկկոյի պայմաններում աղքատության կրճատումը և նոր աշխատատեղերի ստեղծումը հանդիսանում են առանցքային նշանակություն ունեցող երկու կարևոր հարցերը Մարոկկոյի սոցիալական անվտանգության և տնտեսական զարգացման ապահովման տեսանկյունից:

Մարոկկոյի կառավարությունը փորձում է այդ հարցերը լուծել նաև արտասահմանյան օգնությամբ: Այդ նպատակով նա 2004 թ. ընդունեց մի շարք օրենքներ, որոնք նպատակաուղղված են Մարոկկոյի տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալ ներդրումների խրախուսմանը և արտաքին առևտրի զարգացմանը: Այդ նպատակներն են հետապնդում նաև 2004 թ. Եվրոպական Միության և ԱՄՆ–ի հետ ստորագրված համաձայնագրերը ազատ առևտրի վերաբերյալ: Մարոկկոն ֆինանսական ոլորտում համագործակցում է Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային ֆոնդի, ինչպես նաև այսպես կոչված Փարիզի ակումբի հետ և ձգտում նրանց օգնությամբ կայունացնել ազգային դրամը և վերահսկողության տակ պահել սղաճը:

Մարոկկոն ընտրել է ազատ տնտեսության զարգացման ուղին և ձգտում է ինտեգրվել համաշխարհային տնտեսության մեջ՝ գլոբալիզացիայի մարտահրավերներին դիմակայելու համար:

Գլուխ չորրորդ

ՊԱՂԵՍՏԻՆ

ՖԻԼԱՍՏԻՆ

Պաղեստինին նվիրված այս գլուխը տարբերվում է ինչպես իր նախորդներից, այնպես էլ հաջորդներից, որը պայմանավորված է նախ և առաջ այն հանգամանքով, որ եթե նրանք նվիրված են արաբական կոնկրետ այս կամ այն պետության ուսումնասիրությանը, ապա Պաղեստինի պարագայում դրությունն այլ է: Ցարդ «Պաղեստին» անվան ներքո պետություն գոյություն չունի, և Պաղեստինն առաջին հերթին ընկալվում է որպես տարածք, որի սահմանները ոչ միայն հստակ չեն, այլև վիճահարույց:

Նրա տարածքի մի մասում 1948 թ. հայտնվեց հրեական Իսրայել պետությունը՝ «էրեց Իսրայել», մի մասը համարվում է «գրավյալ տարածքներ», որի մեջ մտնում են Հորդանան գետի արևմտյան ափը և Ղազայի շրջանը: 1988 թ. հռչակվեց «Պաղեստին պետությունը», որը մնաց թղթի վրա՝ չկարողանալով իր համար ապահովել համապատասխան հողային տարածք, որի սահմաններում կարողանար իրականացնել պետությանը բնորոշ իր գործառույթները: Իսկ առանց հողի կամ տարածքի, ինչպես հայտնի է, չի կարող գոյություն ունենալ որևէ պետություն: Հետագայում՝ 1993 թ., հռչակվեց «Պաղեստինյան ինքնավարությունը», որին հատկացվեց համապատասխան հողատարածք, որը մինչև օրս դեռ ամբողջապես չի անցել նրա տնօրինության տակ, և նրան դեռևս չի հաջողվում գործել որպես այդպիսին, այսինքն՝ ինքնավարություն:

Այդ բոլորի հետևանքով ստեղծվել է վերին աստիճանի բարդ իրադրություն, որի պայմաններում հաճախակի բռնկվող արաբա–իսրայելական պատերազմները և միջանկյալ ռազմական բախումները կամ «մինի» պատերազմները կազմում են պաղեստինյան քաղաքական լանդշաֆտի անբաժան մասը, իսկ «էրեց Իսրայելը» չի կարող փոխարինել Պաղեստինին:

Պաղեստին պետության և նրան բնորոշ ատրիբուտների չգոյության պարագայում անհնար է սույն գլուխը կառուցվածքային առումով


ներկայացնել այնպես, ինչպես մյուս գլուխները: Սովորաբար մյուս գլուխները շարադրելիս տրվում էին արաբական երկրների սահմանները, տարածքը, բնակչության քանակը, պետական կառուցվածքը, պետական մարմինների՝ օրենսդիր, գործադիր, դատական ֆունկցիաները, ներքին ու արտաքին քաղաքականությունը և այլ հարցեր: Տվյալ գլխի առնչությամբ, հասկանալի է, հնարավոր չէ պահպանել այդ մոդելը.

Ուստի մենք ընտրել ենք Պաղեստինի՝ որպես տարածքային երևույթի քաղաքական ասպեկտը՝ նախապատվությունը տալով «պաղեստինյան պրոբլեմի» քաղաքական էության բացահայտմանը, ներառնելով նաև հարցի միջազգային ասպեկտի, առանձին պետությունների և միջազգային կազմակերպությունների ներգրավվածության, քաղաքականության և դիրքորոշման լուսաբանությունը:

Բնականաբար, կարող է հարց ծագել, թե ինչու ենք այդ դեպքում անդրադարձել, անգամ առանձին գլուխ հատկացրել այդ հարցին: Պատասխանը միանգամայն պարզ է:

Պաղեստինյան խնդիրը մարդկությանը հայտնի ամենավտանգավոր և երկարատև խնդիրներից մեկն է, որն աչքի է ընկնում ոչ միայն արյունալի բախումներով, այլև իր բազմաշերտությամբ: Նա նման է մի շրջանի, որն առաջանում է, երբ ջրավազանում մի քար եք նետում և դիտում, թե ինչպես են նրա շուրջը օղակներ գոյանում: Ներկա տեսքով սկիզբ առնելով XIX դարում՝ պաղեստինյան կոնֆլիկտը գոյատևեց ամբողջ XX դարում և առանց կորցնելու իր սրությունը՝ թևակոխեց XXI դար: Կարող ենք ասել, որ պաղեստինյան կոնֆլիկտը իր սրությամբ, վտանգավորությամբ, ազդեցությամբ և հետևանքներով դուրս է եկել պաղեստինյան, պաղեստինա–հրեական, ներարաբական և մերձավորարևելյան շրջանակներից ու ձեռք բերել միջազգային նշանակություն: Նրանում, կամա թե ակամա, այս կամ այն չափով ներգրավված են աշխարհի խոշոր պետությունները, Միավորված ազգերի կազմակերպությունը, Եվրոպական Միության անդամ երկրները, Արաբական պետությունների լիգան, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը և այլ ուժեր ու կազմակերպություններ:

Առանց պաղեստինյան հարցի ուսումնասիրության անհնար է հասկանալ և ճիշտ գնահատել այն բարդ գործընթացները, որոնք տեղի են ունենում արաբական աշխարհում, իսկ ավելի լայն առումով՝ ստրատեգիական նշանակություն ունեցող մի այնպիսի կարևոր տարածաշրջանում, որպիսին Մերձավոր և Միջին Արևելքն է: Իրավացի էր պաղես-


ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՆԹԱՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՊԱԼԵՍՏԻՆԸ
նրա բաժանումը Հրաբակաև և Հրեական
պետությունների ըստ ՄԱԿ-ի 1947 թ. պլանի
և
1967 թ. պատերազմի արդյունքում
ԼԻԲԱՆԱՆ
ՍԻՐԻԱ
33°
Հայֆա
Նազարեթ
Իրբիդ
Նաթանյա
Նաբլուս
ՅԵՐՈՒՍԱԼԵՄԻ ԴԱՏԱՎՈՐՎԱԾ ՏԱՐԱԾՔԸ
ԹԵԼ ԱՎԻՎ
Յաֆֆա
Ալ-Ռիհա
Ռամալլահ
32°
ԱՄՄԱՆ
Երիխո
ԵՐՈՒՍԱԼԵՄ
Աշկելոն
Բեթղեհեմ
Գազա
Հեբրոն
ՄԵՌՅԱԼ ԾՈՎ
Բերսաբե
Արադ
Հիմոն
Նեգեվի անապատ
35°

տինյան շարժման երկարատև առաջնորդ Յասիր Արաֆաթը, երբ նշում էր, որ արաբա–հրեական կոնֆլիկտի միջուկը պաղեստինյան հիմնախնդիրն է: Դա սովորական խանդի դրսևորում չէր նրա կողմից, այլ իրադրության սթափ գնահատական:

Պաղեստինյան հիմնախնդիրը հանդիսանում է արաբական երկրների նորագույն պատմության անբաժան մասը, և այդ առումով Պաղեստինին անդրադառնալը, թեկուզ նրա ներկա ծնով, կարծում ենք, միանգամայն անհրաժեշտ և արդարացված է:

Ուստի անհրաժեշտ ենք համարում ներկայացնել Պաղեստինի աշխարհագրական–տարածքային որոշ պարամետրեր՝ գոնե նրա աշխարհագրական դիրքի, տարածքի, բնակչության թվաքանակի մասին ընդհանուր և նախնական պատկերացում ունենալու համար:

Այս դեպքում Պաղեստին ասելով նկատի ունենք ոչ թե պատմաաշխարհագրական, այլ անգլիական ենթամանդատային Պաղեստինը և նրա տարածքը:

Պաղեստինը գտնվում է Մերձավոր Արևելքում և սահմանակից է Սիրիային, Լիբանանին, Հորդանանին և Եգիպտոսին: Նրա ափերը ողողում են Միջերկրական ծովի ջրերը:

Պաղեստինի տարածքը 1922 թ. ենթամանդատային Պաղեստինի կազմից Անդրհորդանանը դուրս բերելուց հետո կազմեց 24 հազ. 27 քառ. կմ:

Բնակչությունը մինչև 1914 թ. կազմում էր 700 հազ. մարդ, որից արաբներ՝ 615 հազ. կամ բնակչության 92%–ը, իսկ հրեաներ՝ 85 հազ. կամ 8%–ը:

Անգլիական ենթամանդատ Պաղեստինը բաժանելու վերաբերյալ ՄԱԿ–ի 1947 թ. բանաձևով **հրեական պետությանը** կամ Իսրայելին հատկացվեց 14,1 հազ. քառ. կմ, **արաբական պետությանը**՝ 11,1 հազ. քառ. կմ:

Բնակչությունը 1947 թ. հրեական պետությունում՝ 510 հազ. արաբ և 499 հազ. հրեա, **արաբական պետությունում**՝ 549 հազ. արաբ և 95 հազ. հրեա: 2004 թ.՝ Արևմտյան ափում բնակչությունը կազմում էր 2 մլն 671 հազ. մարդ, որից արաբներ՝ 2 մլն 300 հազ. (86%), հրեաներ՝ 371 հազ. (14%), իսկ Ղազայի շրջանում՝ 1 մլն 337 հազ. 236 մարդ, որից արաբներ՝ 1 մլն 337 հազ. 236 (99%), հրեաներ՝ 500 (1%): Արևմտյան ափի և Ղազայի շրջանի ամբողջ բնակչությունը՝ 4 մլն 28 հազ.:

I. ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ԵՐԿԻՐ, ԿՐՈՆՆԵՐԻ ՕՐՐԱՆ ԵՎ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿ

Պաղեստինը գտնվում է Արևմտյան Ասիայում և գրավում է Միջերկրական ծովի արևելյան ափը: Նա հայտնի չէ ոչ իր լեռներով ու գետերով և ոչ էլ բնական հարստություններով, ինչպես նրա հարևան մյուս երկրները: Սակայն նա՝ այդ ոչ մեծ տարածքը, ավելի շատ է հայտնի աշխահին, քան այն երկրները, որոնք իրենց տարածքով մի քանի անգամ գերազանցում են Պաղեստինին, ավելի խիտ են բնակեցված, տնտեսապես ավելի են զարգացած և հարուստ են բնական հանածոներով: Դրա գաղտնիքը պետք է փնտրել այն հարուստ հոգևոր–մշակութային և կրոնական անանց արժեքների մեջ, որոնք ստեղծվել են այդ տարածքում և ոչ միայն խոր հետք թողել մարդկային քաղաքակրթությունների զարգացման վրա, այլև վճռական դեր խաղացել այդ քաղաքակրթությունների ծնավորման գործում և դարեր շարունակ, ճիշտ թե սխալ, կանխագծել մարդկության զարգացման մայրուղին:

Պաղեստինը համարվում է «մարգարեների երկիր»: Նրա հողը շատ «պտղաբեր» է եղել հուդայական, քրիստոնյա և մուսուլմանական մարգարեների հայտնության համար, որոնք մոնոթեիստական աստծո ավետաբերներն ու խոսնակներն են եղել և դարեր շարունակ լուսարձակի պես լուսավորել մարդկության՝ հատկապես նրա հավատացյալ մասի զարգացման ուղին:

Պաղեստինը միաժամանակ երեք մոնոթեիստական կրոնների՝ հուդայականության, քրիստոնեության և իսլամի հայրենիքն է: Այստեղ են նրանք ծնավորվել և այնուհետև տարածվել աշխարհով մեկ, մասնավորապես քրիստոնեությունը և իսլամը: Նրանց դոգմաների վրա են կառուցվել աշխարհի վերաբերյալ մարդկանց մտապատկերացումները: Նրանց կրոնական հիմնադրույթների վրա են խարսխվել մարդկային հասարակությունը, պետությունների տիպերը, սեփականության ձևերը, բարոյական նորմերը, քաղաքական և իրավական կառույցները:

Պաղեստինը, գտնվելով Միջերկրականի ափին և կազմելով մերձավորարևելյան աշխարհի մի մասը, պատմական տարբեր դարաշրջաններում մագնիսի նման իրեն է ծգել տարբեր նվաճողների: Այստեղ են «շտապել» բոլոր տեսակի նվաճողները, որոնք նրա գրավումը հա-

մարել են իրենց հզորությունն անառարկելիորեն փաստող վկայություն և կարևոր օղակ իրենց աշխարհակալությունը ստեղծելու ճանապարհին: Եվ երբ դիտում ենք Պաղեստինի պատմության ընթացքը հնագույն շրջանից մինչև մեր օրերը, ապա այն մեզ ներկայանում է անվերջ արշավանքների, արյունալի պատերազմների, հակամարտությունների ու բախումների մի շարան: Պաղեստինի վերածումը հակամարտության յուրատեսակ խաչմերուկի, բախումների ու պատերազմների անսպառ գեներատորի շատ ծանր է անդրադարձել ոչ միայն նրա, այլև ամբողջ տարածաշրջանի և միջազգային հարաբերությունների վրա:

Այս գործոնները հատուկ կշիռ են հաղորդել Պաղեստինին:

Իսկ ովքե՞ր են եղել Պաղեստինի բնակիչները: Այդ հարցը պատմագիտության առջև կանգնած դժվարագույն խնդիրներից մեկն է, և այն, ցավոք, մինչև օրս չունի հստակ, համոզիչ և բոլորի կողմից ընդունելի պատասխան, մասնավորապես նրա պատկանելության հարցում: Ժամանակակից գիտության տվյալները, որոնք հիմնված են գլխավորապես հնագիտական պեղումների վրա, սահմանափակվում են միայն որոշ և այն էլ մակերեսային հաղորդումներով: Այդ բնագավառին վերաբերող համաշխարհային գիտության այսօրվա մակարդակը և նրա կողմից առաջադրվող տեսակետներն ամփոփ կերպով հանգում են հետևյալին:

Գիտությանը հայտնի Պաղեստինի հնագույն բնակիչները եղել են քանաանցիները, որոնք այստեղ հայտնվել են երրորդ հազարամյակում: **Քանաան** անունը հանդիպում է մ.թ.ա. XV դարի միջագետքյան, եգիպտական և փյունիկյան գրավոր աղբյուրներում, ինչպես նաև Աստվածաշնչում: Դա երբեմն ընդգրկում է ամբողջ Պաղեստինը և Սիրիան, իսկ երբեմն էլ՝ Հորդանան գետից արևմուտք ընկած բոլոր տարածքները: Իսկ «Քանաան» եզրը ենթադրվում է, որ հավանաբար սեմական ծագում ունի, որը նշանակում է **«կարմրավուն բոսորագույն»** կամ **«կարմրավուն ծիրանագույն»**՝ կապված այն իրողության հետ, որ այդ տարածքում արտադրվում էր մեծ քանակությամբ ներկ (dye՝ անգլերեն, краска, красящее вещество, краситель՝ ռուսերեն): Դա վարկածներից մեկն է: Իսկ մյուս վարկածն այն է, որ դա կապված է **«բրդի հետ՝ ներկված ներկով (dye)»**: Այդ երկրորդ վարկածն էլ է միանգամայն հավանական, քանի որ քանաանցիները եղել են քոչվոր անասնապահ ցեղեր և ունեցել են ոչխարի մեծ հոտեր, որոնց բուրդը հավանաբար մուգ բոսորագույն է եղել:

Հայտնի է նաև, որ այդ տարածքը՝ Քանաանը, երրորդ հազարամյակում գտնվել է եգիպտոսի տիրապետության ներքո: Երկրորդ հազարամյակում Քանաանում եգիպտոսի տիրապետությունը բազմիցս վիճարկել են տարբեր ժողովուրդներ՝ ամորիները, հիթիթները և խուրիներ, որոնք ներխուժել են այդ տարածքը, բայց պարտություն կրել, իսկ նրանց մի մասն էլ ձուլվել է քանաանցիների մեջ:

Իրադրությունը փոխվեց մ.թ.ա. XIV դարում, երբ եգիպտոսը կորցրել էր իր նախկին հզորությունը և տարբեր ցեղերին դիմակայելու հնարավորությունը: Օգտվելով այդ նորաստեղծ բարենպաստ դրությունից՝ տարածաշրջան ներխուժեցին երկու նոր ցեղախմբեր՝ **հեբրյու–հապիրու հրեաները** և **ֆիլիստինները**: Առաջինները՝ հրեաները, Քանաան ներխուժեցին Միջագետքից: Իսկ ֆիլիստինները, ինչպես ենթադրվում է, համարվում էին ծովի ժողովուրդներ, որոնք Քանաան ներխուժեցին էգեյա–միկենյան շրջանից: Նրանց ֆիլիստիններ էին անվանում հույները, և նրանց անունով էլ այդ երկրամասը սկսեց կոչվել **Պաղեստին (Ֆիլիստին–Ֆիլաստին–Պալեստին)**: Սակայն հրեական աղբյուրները նշում են, որ «Պաղեստին» եզրն առաջացել է հրեական **«պելեշետ»** բառի աղավաղումից, որը նույնպես նշանակում է Պաղեստին:

Ժամանակակից գիտության մեջ ընդունված է, որ «Պաղեստին» անունը վերաբերում է Միջերկրական ծովեզրից մինչև Հորդանանի հովիտը և հարավային Նեգևից մինչև Գալիլեի լիճը՝ հյուսիսում, ընդգրկող տարածքին: Մ.թ.ա. 1230 թ. հապիրուները կամ հրեաները նվաճեցին Պաղեստինի մի մասը և հաստատվեցին նրա լեռնային շրջաններում: Հինգ տարի անց նրանք հաղթեցին քանաանցիներին, բայց չկարողացան գրավել Պաղեստինն ամբողջությամբ, որովհետև հանդիպեցին ֆիլիստինների ուժեղ դիմադրությանը:

Ֆիլիստիններն իրենց հերթին կարողացան պարտության մատնել քանաանցիներին և մ.թ.ա. 1125 թ. Պաղեստինի հարավային մասում հիմնեցին իրենց անկախ պետությունը՝ վերահսկողություն հաստատելով նաև Երուսաղեմի վրա, որը Քանաան պետության կարևոր կենտրոններից մեկն էր:

Հակամարտությունը հրեական ցեղային կոնֆեդերացիայի և ֆիլիստինների միջև Պաղեստինին տիրապետելու համար ընդունեց ձգձգվող պատերազմական գործողությունների բնույթ, որը մ.թ.ա. 1050 թ. ավարտվեց ֆիլիստինների հաղթանակով: Դրանում իր դերը խաղաց այն հանգամանքը, որ ֆիլիստինները գերազանցում էին քոչվոր հրեա-

կան ցեղախմբերին իրենց ռազմական կազմակերպվածությամբ և արդեն օգտագործում էին երկաթից պատրաստված զենքեր:

Այդուհանդերձ, հրեաներին հաջողվեց կարճ ժամանակ անց վերակազմավորել իրենց ուժերը և մ.թ.ա. 1000 թ. հիմնել իրենց միասնական պետությունը՝ **«Իսրայել»** անվան ներքո: «Իսրայել» նշանակում է «Աստծո դեմ մարտնչող»: «Իսրայել» եզրն օգտագործվում է և՛ տարածքի առումով՝ «Էրեց Իսրայել»՝ «Իսրայելի հող», և՛ պետության իմաստով՝ «Իսրայել պետություն»:

Իսրայել պետության հիմնադիր թագավորն էր Դավիդը, որին փոխարինեց նրա որդին՝ Սողոմոնը. Այս վերջինիս մահվանից հետո՝ մ.թ.ա. 922 թ., Իսրայել միասնական պետությունը տրոհվեց երկու մասի: Հյուսիսայինմասը պահպանեց իր Իսրայել անվանակոչումը, իսկ հարավայինը կոչվեց Հուդա:

Ինչպես նշել ենք, Պաղեստինը բախումների ու պատերազմների խաչմերուկն էր, և մի նվաճողին փոխարինում էր մյուսը: Մ.թ.ա. Ասորեստանը գրավեց Իսրայելը, իսկ մ.թ.ա. 586 թ. Հուդան ընկավ Բաբելոնի տիրապետության տակ: Շատ հրեաներ արտաքսվեցին Բաբելոն. Այսպիսով՝ դադարեցին գոյություն ունենալ երկու հրեական պետությունները: Բայց սրանով ամեն ինչ չավարտվեց: Մ.թ.ա. 586 թ. Պարսկաստանի թագավոր Կյուրոսը նվաճեց Բաբելոնը, և նրա տիրապետության տակ անցավ նաև Հուդան, որն իր գոյությունը պահպանում էր որպես Պաղեստինի մի շրջան: Նա թույլատրեց հրեաներին վերադառնալ Հուդա և բնակվել Պաղեստինի այդ հատվածում: Մ.թ.ա. 331 թ. Պաղեստինն անցավ Ալեքսանդր Մեծի, իսկ նրա մահից հետո՝ նրան հաջորդած Սելևկյանների տիրապետության տակ:

Մ.թ. 63–330 թթ. Պաղեստինը գտնվում էր Հռոմի տիրապետության տակ: 135 թ. հռոմեացիները դաժանորեն ճնշեցին հրեաների ապստամբությունը և արտաքսեցին նրանց Պաղեստինի Հուդա մասից: Հռոմեացիներն այդ նույն թվականին Պաղեստինը վերանվանեցին «Սիրիա Պալեստինա», այսինքն՝ «Սիրիական Պաղեստին», որի սահմաններն ավելի ընդարձակ էին և ներառնում էին հարավային Սիրիան, բուն Պաղեստինը և հարակից տարածքները Հորդանան գետի արևմտյան և արևելյան ափերին:

Նոր անվանումը վերցված էր անտիկ շրջանի հույն պատմիչ Հերոդոտոսից, որն այդ երկրամասը կոչել է «Palaistine Syria» («Philistine Syria»):

Շարունակելով Պաղեստինի՝ հակամարտությունների խաչմերուկ լինելու թեման՝ նշենք, որ այն 330–634 թթ. եղել է Բյուզանդական կայսրության կազմում, իսկ 634 թվականին այն գրավեց նոր բարձրացող Արաբական խալիֆայությունը, որի կազմում նա մնաց մինչև 1099 թ.:

Սակայն արաբական տիրապետությունը սկզբունքորեն տարբերվում էր նախորդ նվաճումներից: Արաբական նվաճումից հետո տեղի ունեցավ Պաղեստինի իսլամացում ու արաբականացում և այն դարձավ արաբական–մուսուլմանական աշխարհի մի մասը: Տարածաշրջանը վերանվանվեց Ֆիլաստին (Philastine)՝ ըստ արաբական հնչյունաբանության·

Հետագա դարերում հայտնվելով սելջուկների, Ֆաթիմյանների, խաչակիրների և մամլյուքների տիրապետության տակ՝ Պաղեստինը 1516 թ. Մերձավոր Արևելքի արաբական մյուս տարածքների հետ միասին հայտնվեց Օսմանյան կայսրության կազմում: Օսմանյան լուծը տևեց մոտ 400 տարի՝ ընդհուպ 1918 թվականը՝ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը: Այդ ժամանակ Պաղեստինի բնակչությունը հիմնականում մուսուլման և քրիստոնյա արաբներ էին: XIX դարի կեսերին Պաղեստինում բնակվում էր ընդամենը 12 հազար հրեա, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1914 թ., թեև նրանց թիվը մի փոքր աճեց, այդուհանդերձ, չէր հասնում անգամ 100 հազարի, այլ կազմում էր ընդամենը 85 հազար:

Պաղեստինի հարցը քննարկելիս անխուսափելիորեն առաջանում է նրա պատկանելության հարցը: Նրան հավասարապես հավակնում են և՛ արաբները, և՛ հրեաները: Յուրաքանչյուր կողմ ունի իր փաստարկները և ապացույցները, արաբերեն, եբրայերեն և այլ լեզուներով գրվել ու հրատարակվել է շատ հարուստ գրականություն, որոնցում նրանցից յուրաքանչյուրը փորձում է ապացուցել Պաղեստինում իր պետությունն ունենալու իր բացառիկ պատմական իրավունքը՝ զրկելով մյուս կողմին համանման իրավունքից: Եվ ստեղծվել է մի վիճակ, որը շախմատային տերմինալոգիայով արտահայտված՝ կարելի է անվանել պատային: Ըստ էության, ժամանակակից արևելագիտությունն ի վիճակի չէ այդ հարցին տալ սպառիչ պատասխան, մի այնպիսի պատասխան, որը հավասարապես ընդունելի լինի արաբների և հրեաների համար:

Այդպիսի պայմաններում քաղաքացիական իրավունք է ձեռք բերել մի նոր տեսակետ, որը, ամենայն հավանականությամբ, չի կարելի հաշվի չառնել: Տարբեր մասնագետներ այն կարծիքն են արտահայ-

տում, որ հնարավոր չէ գտնել գոհացուցիչ պատասխան, և առաջարկում են այլ լուծում, որի էությունը կայանում է նրանում, որ երկու կողմերն էլ իրավունք ունեն Պաղեստինի տարածքում ունենալ իրենց պետությունը: Մեր կարծիքով՝ այդ տեսակետը շատ հստակ կերպով է արտահայտված պաղեստինյան հարցի լավագույն ուսումնասիրողներից և գիտակներից մեկի՝ Ե. Դ. Պիրլինի «Դիմադրության 100 տարին» աշխատության մեջ, որտեղ նա գրում է. «Ո՛չ հրեաները, ո՛չ արաբները չունեն Պաղեստինում պետություն ստեղծելու բացառիկ, միայն իրենց հատուկ և իրենց պատկանող իրավունք»:

Ավելի ճիշտ կլինի ասել, որ այդ երկու սեմական ժողովուրդների պատմական զարգացման արդի փուլում երկուսն էլ ունեն այդ իրավունքը: Ինչքան էլ որ Պաղեստինը փոքր լինի տարածքային առումով, այդուհանդերձ, այդ տարածքը բավարար է, որ այնտեղ ստեղծվի երկու՝ արաբական և հրեական պետություն:

Համառոտակի այսպիսին է Պաղեստին–Ֆիլաստինի քաղաքական «դիսականը»:

II. ԲԱԼՖՈՒՐԻ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆՈՒՄ ՀՐԵԱԿԱՆ ՏՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՐՑԸ

1. Պաղեստինը սիոնիստական անուրջների իրականացման հանգրվան

XIX դարը, հատկապես նրա երկրորդ մասը, շրջադարձային եղավ հրեաների Պաղեստին վերադառնալու շարժման մեջ: Դա ազգային զարթոնքի և ինքնագիտակցության ձևավորման ու զարգացման կարևոր փուլ էր եվրոպական շատ ժողովուրդների ու ազգերի, այդ թվում և նրանց հետ ու նրանց մեջ բնակվող հրեաների համար: Եվրոպական ազատական հովերը տարածվեցին նաև Արևելյան Եվրոպայի երկրների վրա, որտեղ շատ մեծ էին հրեական կուտակումները: Հրեաները, դուրս գալով հատուկ նրանց համար ստեղծված գետոներից և հաղորդակցվելով եվրոպական ազատական մտքի հետ, նորովի մոտեցում ցուցաբերեցին իրենց ապագայի և ազգային գոյության հարցում: Նրանց մեջ հասունանում և ամրապնդվում էր իրենց սեփական երկիրը և պետությունն ունենալու գաղափարը: Եվ այդ պահից սկսած նրանք՝

հրեական գաղափարախոսները, փիլիսոփաները, մտավորականությունը, քաղաքական գործիչները, մեծահարուստները և հրեական հասարակության համարյա բոլոր խավերը, իրենց հայացքն ուղղում են Պաղեստինի կողմը՝ որպես իրենց իղձերի իրականացման միակ հանգրվան: Պաղեստին վերադառնալը դառնում է հրեական քաղաքական մտքի ալֆան և օմեգան, որը համապատասխան դրական և լայն արձագանք է գտնում հրեական զանգվածների շրջանում:

Դրա համար կային նաև որոշ նախադրյալներ: Նախ՝ հրեաներն իրենց ապրած երկրներում ենթակա էին բռնությունների, անգամ հալածանքների: Հիշենք թեկուզ հրեական պոգրոմները ցարական Ռուսաստանում: Նրանք հույս ունեին, որ վերադառնալով Պաղեստին, որտեղից նրանք արտաքսվել էին հռոմեացիների կողմից մ.թ. I–II դարերում, և այնտեղ հիմնելով իրենց ազգային պետությունը, հնարավորություն կունենան ազատվել օտար միջավայրի հալածանքներից և ազատ ապրելու իրավունքներ ձեռք բերել: Եվ երկրորդ՝ Պաղեստին վերադառնալու շարժմանը նպաստում էր հրեաների մոտ դարեր շարունակ տիրապետող «ավետյաց երկրի» գաղափարը, որի տակ հասկացվում էր Պաղեստինը: Այստեղ միստիկան և իրականությունը խառնվում էին միմյանց, որի պարագայում շատ դժվար էր ճշմարտությունը և դառը իրողությունը ջոկել մտացածին վիրտուալ իրականությունից, մանավանդ, երբ վերջինսը շատ հաճելի կերպարանքով էր ներկայանում:

XIX դարի կեսերից եվրոպական երկրներում սկսվեցին կազմակերպվել զանազան հրեական բարեգործական և ֆիլանտրոպիկ՝ մարդասիրական կազմակերպություններ, որոնց հիմնական խնդիրը հրեաներին եվրոպական երկրներից Պաղեստին տեղափոխելը և այնտեղ բնակեցնելն էր: 1864 թ. գերմանական Ֆրանկֆուրտ քաղաքում հիմնվեց «Պաղեստինը բնակեցնելու ընկերությունը»: Նման մի ընկերություն հիմնվեց ֆրանսիական բարոն Մորիս Գիրշի նախաձեռնությամբ, որը ստացավ «Հրեաների կոլոնիզացիայի ընկերություն» անվանումը: Այդ բնագավառում ակտիվ գործունեություն էին ծավալում եվրոպական տարբեր երկրներում բնակվող հրեական բանկիրներն ու մեծահարուստները, որոնց մեջ առանձնանում էր բանկիր էդմունդ Ռոտշիլդը:

Սակայն շուտով ակնհայտ դարձավ, որ նման ընկերությունները և առանձին անհատների նախաձեռնությունները բավարար չէին մի այնպիսի բարդ մտահղացման իրականացման համար, որպիսին Պաղեստինի բնակեցումն էր հրեաներով և նրա վերածումը հրեական պետության:

Այսպիսի պայմաններում հրեական արեենայում հայտնվեց մի շարժում, որը ստացավ «քաղաքական սիոնիզմ» անունը, որը երկու հասկացությունների համադրում էր: Սիոնիզմը մակաբերվում է Երուսաղեմի Սիոն սարի անվանումից, որը հրեաների համար խորհրդանիշ էր համարվում և անմիջականորեն աղերսվում նրանց նախնիների երկրի հասկացության հետ, ուր նրանք՝ հրեաները, երբ էլ որ լինի, պիտի վերադառնան: Դա «ավետյաց երկրի» տարբերակներից մեկն էր: Իսկ «քաղաքականը» տվյալ դեպքում արտացոլում էր այն նոր մոտեցումը, որ հրեական գաղափարախոսները դրսևորում էին հրեաներին Սիոն կամ «ավետյաց երկիր» վերադարձնելու ուղիների, մեթոդի կամ միջոցների հարցում: Դա չպետք է շփոթել կրոնական սիոնիզմի հետ: Նոր գաղափարախոսներին այլևս չէր բավարարում զանազան ընկերությունների և ֆիլանտրոպիկ կազմակերպությունների գործունեությունը, առանձին մեծահարուստների կողմից համապատասխան դրամ հատկացնելը կամ Պաղեստինում արաբներից հողեր գնելն ու նրանց վրա հրեաներին բնակեցնելը: Նրանք գտնում էին, որ դա բավարար չէ հրեաների կողմից Պաղեստինը յուրացնելու համար: Այդ պատճառով էլ հրեական գաղափարախոսները և սիոնիստական առաջնորդները առաջին պլանի վրա մղեցին քաղաքականությունը: Նրանք գտնում էին, որ միայն համակողմանիորեն և խորապես հաշվարկած քաղաքականության շնորհիվ է հնարավոր հասնել իրենք նպատակների իրականացմանը. Դա մի կողմից: Իսկ մյուս կողմից՝ նրանք «քաղաքական» ասելով հասկանում էին նաև ազդեցիկ պետությունների և միջազգային ուժերի քաղաքական աջակցության ապահովումը և նրանց օգնությամբ Պաղեստին հրեաների վերադարձի և այնտեղ իրենց պետությունը հիմնելու հարցի լուծումը: Դրանով նրանք այդ խնդիրը զգացական և պատմակրոնական հավակնությունների ոլորտից տեղափոխում էին քաղաքական–իրավական դաշտ և իրավական հիմք ստեղծում նախ՝ հրեաների Պաղեստին տեղափոխելու, իսկ ապա նաև նրա տարածքում հրեական պետություն ստեղծելու համար:

Դրանումն է կայանում, մեր կարծիքով, «քաղաքական սիոնիզմի» էությունը, որը, ըստ էության, որակական նոր փուլ էր հրեաների Պաղեստին վերադառնալու և Պաղեստինը յուրացնելու ոչ դյուրին քաղաքականության մեջ:

Քաղաքական սիոնիզմի յուրատեսակ մանիֆեստը հանդիսացավ ավստրիական հրեա լրագրող Թեոդոր Հերցլի 1896 թ. Բեռլինում լույս

տեսած «Der Judenstaat»՝ «Հրեական պետությունը» գիրքը: Առաջին անգամ այդ գրքում հանգամանորեն շարադրվեցին սիոնիզմի հիմնադրույթներն այնպես, ինչպես դա պատկերացնում էր Թեոդոր Հերցլը: Այդ աշխատության լույս տեսնելուց մեկ տարի անց Թեոդոր Հերցլի ամենաեռանդուն ջանքերի շնորհիվ շվեյցարական Բազել քաղաքում 1897 թ. գումարվեց սիոնիստական առաջին կոնգրեսը: Կոնգրեսի կարևոր որոշումներից մեկը բոլոր հրեաներին «Սիոնի շուրջը» համախմբելու քաղաքականության հաստատումն էր: Այստեղ հստակ կերպով տրվեց սիոնիզմի գլխավոր նպատակի սահմանումը ա. «հրեաների համար ստեղծել հանրային իրավունքով ապահովված հանգրավան Պաղեստինում», բ «օժանդակել հրեա հողագործներին և բանվորներին Պաղեստինում բնակեցնելու» և գ. «հրեաների ազգային զգացմունքի և ազգային ինքնագիտակցության ամրապնդումը և զարգացումը»:

Այդ հիմնարար սկզբունքները, աննշան փոփոխություններով, դրվեցին սիոնիզմի և սիոնիստների քաղաքականության հիմքում, որին նրանք հետամուտ եղան՝ առանց միջոցների մեջ խտրություն դնելու:

Բազելի կոնգրեսը հիմնեց Համաշխարհային սիոնիստական կազմակերպություն, որի առաջին պրեզիդենտը եղավ Թեոդոր Հերցլը: Հետագայում երկար տարիներ այն գլխավորեց Խաիմ Վեյցմանը:

Իսկ ի՞նչ էր լինելու Պաղեստինի բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմող արաբների հետ:

Բազելի կոնգրեսի գումարման պահին Պաղեստինում հրեաների թիվը հազիվ կազմում էր 20 հազար մարդ: Կոնգրեսը, անշուշտ, խթանեց հրեաների գաղթը Պաղեստին: Այդուհանդերձ, 1914 թ.՝ կոնգրեսից մոտ 20 տարի անց և Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, Պաղեստինի բնակչությունը կազմում էր մոտ 700 հազար մարդ, որից 615 հազարը արաբներն էին, և միայն 85 հազար կամ 8%–ն էր հրեա: Չնայած հրեաների համար այդ ակնհայտ անբարենպաստ իրողությանը, սիոնիստներն առաջ քաշեցին «Առանց հողի ժողովրդին տալ հող՝ առանց ժողովրդի» բանաձևը, որը նշանակում էր հրեաներին, այսինքն՝ առանց հողի ժողովրդին, տալ հող՝ Պաղեստինն առանց ժողովրդի, այսինքն՝ առանց արաբների: Իսկ ի՞նչ պետք է լիներ արաբների հետ, որոնք մոտ 2 հազար տարի ապրում էին այդտեղ առանց հրեաների: Պատասխանը մեկն է՝ նրանց բոլոր միջոցներով դուրս մղել Պաղեստինից: Այդ մասին են վկայում նաև սիոնիզմի հիմնադիր հայր Թեոդոր Հերցլի, սիոնիստական մյուս երևելի գործիչների՝ Զեև Ժաբոտինսկու, Խաիմ Վեյցմանի և այլոց

անսքող դաժան. մինչև անգամ վիրավորանքի աստիճանի հասնող հայտարարությունները Պաղեստինի արաբների հասցեին.

Կարծում ենք, որ սկզբից նեթ քաղաքական սիոնիզմի թշնամական դիրքորոշումը Պաղեստինի արաբների հանդեպ հանդիսանում է նրա ամենակոպիտ սխալներից մեկը, որի համար շատ թանկ վճարեցին թե՛ իրենք՝ հրեաները, և թե՛ արաբները:

Քանի որ Պաղեստինը XVI դարից մտնում էր Օսմանյան կայսրության կազմի մեջ, ապա հրեաների բնակեցումը և հրեական պետության ստեղծումը Պաղեստինում ուղղակի առնչություն ուներ թուրքական սուլթանի հետ: Նրանից էր կախված հրեաներին ներգաղթի իրավունք տալը: Եվ օսմանյան սուլթան Աբդուլ Համիդ II–ը խիստ բացասական դիրք գրավեց այդ հարցերում՝ արգելելով հրեաների մուտքը և հրաժարվելով անգամ լսել իր ենթակայության տակ գտնվող տարածքներում հրեական պետություն ստեղծելու մասին:

Ստեղծված պայմաններում սիոնիստները քննարկեցին հրեական պետություն ստեղծելու այլ տարբերակներ: Մասնավորապես Անգլիան առաջարկում էր հողատարածք հատկացնել հրեաներին Ուգանդայում՝ Աֆրիկայում, որը պետք է կոչվեր «Նոր Պաղեստին»: Սակայն սիոնիստների 1905 թ. կոնգրեսը մերժեց այդ առաջարկը: Սիոնիստների կողմից քննարկվեցին նաև Արգենտինայի, Սինայի և Քենիայի տարբերակները: Այսպես, օրինակ՝ սիոնիստական չորրորդ կոնգրեսը որոշեց հրեական ազգային օջախ հիմնել Արգենտինայում: Սակայն սիոնիզմի ղեկավարության մեջ այդ հարցի շուրջը համաձայնություն չկայացավ, և, ի վերջո, ուժի մեջ մնաց պաղեստինյան տարբերակը, որը կրկին հաստատվեց 1906 թ. կայացած սիոնիստական հերթական կոնգրեսի կողմից:

2. «Թեոդոր Հերցլը և հայկական հարցը»

Չակերտների մեջ վերցված վերոնշյալ վերնագրի հեղինակային իրավունքը պատկանում է արաբ պատմաբան Մարվան Բուհեյրիին: Նա այդ խորագրի ներքո 1977 թ. հրատարակել էր իր ինքնատիպությամբ աչքի ընկնող մի հոդված, որը գիտական ու քաղաքական առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում[10]:

10 Marwan Buheiry. Theodor Herzl and the Armenian Question — «Journal of Palestine Studies», vol. VII, No 1, Autumn. Beirut. 1977, p. 75–97.

1978 թ. ես հերթական անգամ գտնվում էի Լիբանանում և այդ ընթացքում ծանոթացա այդ հոդվածի ու նրա հեղինակի հետ[11]: Դա տեղի ունեցավ արևմտյան Բեյրութի Դար ալ–Հանդասա շրջանում գտնվող Պաղեստինյան ուսումնասիրությունների ինստիտուտում: Մարվան Բուհեյրին Բեյրութի Ամերիկյան համալսարանի պրոֆեսորի ընթերակա էր և Պաղեստինյան ուսումնասիրությունների ինստիտուտի գիտական աշխատող, որի գիտական հետաքրքրությունների ոլորտում էին գտնվում, ինչպես նա ասաց, արաբական երկրների նոր և նորագույն պատմության և քաղաքական սիոնիզմի հարցերի ուսումնասիրությունը:

Մեր հանդիպման ժամանակ իմ այն հարցին, թե ինչպես նրա մոտ ծագեց նման հոդված գրելու գաղափարը, նա պատասխանեց, որ դա որոշ իմաստով պատահականություն էր: «Սիոնիզմի միջազգային քաղաքականությունն ուսումնասիրելիս,— ասաց Բուհեյրին,— ես ծանոթացա Թեոդոր Հերցլի «Օրագրի» հետ, որտեղ մանրամասն խոսվում է սիոնիզմի կնքահոր դիրքորոշման մասին հայկական հարցի հանդեպ 1896 թ.: Եվ այն, ինչ ես իմացա, ուղղակի ցնցեց ինձ: Սիոնիզմի առաջնորդի վարքագիծն աննախադեպ է և իրեն զուգահեռը չունեցող ֆենոմեն, որի մասին, խորապես համոզված եմ, պետք է իմանա միջազգային հանրությունը»:

Կարելի է ասել, որ սիոնիզմի հիմնադիր առաջնորդի քաղաքականությունը հայկական հարցի նկատմամբ 1896 թ.՝ սիոնիստների Բազելի կոնգրեսի նախօրյակին, մինչ այդ անհայտ էր հայ ուսումնասիրողներին և դուրս էր մնացել նրանց տեսադաշտից: Մինչդեռ, ինչպես ցույց կտրվի ստորև, դա շատ կարևոր է ոչ միայն սիոնիզմի քաղաքականությունը հասկանալու առումով, այլև հայ–թուրքական հարաբերությունների տե-

11 Դա Լիբանանում քաղաքացիական պատերազմի օրերն էին, որը ծանր դրության մեջ էր դրել նաև լիբանանահայ համայնքին: Հայաստանի ղեկավարությունը ջանում էր օգնել հայ համայնքին, և նրա որոշումով ինձ՝ որպես ՀՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնի վարիչ և հայ–արաբական բարեկամության ընկերության նախագահ, մի քանի անգամ գործուղեցին Լիբանան՝ ապահովելու արաբական շրջանակների աջակցությունը հայ համայնքին: Ես հանդիպումներ ունեցա Լիբանանի վարչապետ Ռաշիդ Սոլհի, Առաջադիմական–սոցիալիստական կուսակցության ղեկավար Վալիդ Ջումբլատի, Ամալ կազմակերպության ղեկավար, հետագայում՝ Լիբանանի պառլամենտի նախագահ Հուսեյն Հուսեյնիի, ապա նաև այդ պաշտոններում նրան հաջորդած Նաբիհ Բերիի հետ, որը հիմա էլ է Լիբանանի պառլամենտի նախագահը, Լիբանանի տարբեր կրոնական համայնքների ու Պաղեստինի ազատագրության կազմակերպության ղեկավարների հետ: Լիբանանյան բոլոր հայրենասիրական ուժերը թիկունք կանգնեցին իրենց հայ եղբայրներին:

սանկյունից, մանավանդ 1896 թ., երբ արյունարբու սուլթան Աբդուլ Համիդ II–ը սանձազերծեց հայերի զանգվածային կոտորածներ Կոնստանդնուպոլսում և Օսմանյան կայսրության մյուս շրջաններում, որոնք խլեցին մոտ 300 հազար հայերի կյանք:

Մենք այդ հարցին անդրադառնում ենք նաև այն պատճառով, որ այդ խնդիրն անմիջականորեն կապված է Պաղեստինը յուրացնելու և հրեաների պետության վերածելու սիոնիստական հայեցակարգի հետ:

Հերցլը հայկական հարցով զբաղվեց, ավելի ճիշտ կլինի ասել՝ փորձեց հայկական հարցն օգտագործել սիոնիստական ծրագրերն իրագործելու նպատակով, երբ արդեն լույս էր տեսել նրա «Հրեական պետությունը» գիրքը, որը նրան մեծ հռչակ էր բերել սիոնիստական շրջաններում:

Հերցլի և նրա համախոհ սիոնիստների նպատակն էր, ինչպես արդեն բազմիցս նշել ենք, ապահովել հրեաների գաղթը Պաղեստին և այնտեղ հիմնել հրեական պետություն: Բայց նրանք հասկանում էին, որ սուլթան Աբդուլ Համիդ II–ը հենց այնպես այդ տարածքը չի զիջի իրենց: Դրա համար անհրաժեշտ էր սուլթանին այնպիսի մի առաջարկություն անել, այնպիսի բան խոստանալ, որը նրան հետաքրքրեր, նրա աչքում մեծ արժեք ներկայացներ և նրան դրդեր Պաղեստինի դռները բացել հրեաների առջև: Երկար մտածելուց հետո Թեոդոր Հերցլը գալիս է այն եզրակացության, որ լավագույն «նվերը» սուլթանին կլիներ հայկական հարցին այնպիսի ընթացք տալ, որը ծառայեր Օսմանյան կայսրությանը և նրա սուլթանին:

Այդ հարցում Հերցլին մեծ աջակցություն էր ցույց տալիս լեհական քաղաքական արկածախնդիր, թուրքական սուլթանի և մի շարք այլ երկրների հատուկ գործակալ Ֆիլիպ Միքայել դը Նևլինսկին: Հերցլը օժանդակություն էր ստանում նաև այլ գործիչներից:

Ի՞նչ էր մտադիր առաջարկել Թեոդոր Հերցլը թուրքական սուլթանին: Մարվան Բուհեյրին իր հոդվածում առնչվող բոլոր այդ հարցերը լուսաբանում է՝ հենվելով Թեոդոր Հերցլի օրագրային հուշագրությունների վրա, որոնք հրատարակվել են նրա մահվանից հետո[12]:

12 Մարվան Բուհեյրին ինձ հետ ունեցած զրույցի ժամանակ հայտնեց, որ սիոնիստական ղեկավարությունը շատ էր ափսոսում, որ դրանք հրատարակել է, քանի որ նրանք պարունակում են այնպիսի տեղեկություններ, որոնք վարկաբեկում են սիոնիստական շարժումը և նրա առանձին գործիչների:

Թեոդոր Հերցլը, Նելիսկու միջոցով կապի մեջ մտնելով սուլթանական պալատի հետ, մոտավորապես իմանում է այն կարևոր հարցերի մասին, որոնք այդ օրերին հուզում ու մտահոգում էին սուլթանին: Հիշենք, որ խոսքը գնում է 1896 թ. մասին, երբ ծավալվել էին հայերի զանգվածային կոտորածները: Հաշվի առնելով այդ հանգամանքը և սուլթանի մտահոգությունը՝ Թեոդոր Հերցլը երկու կարևոր առաջարկություն է անում սուլթանին: Առաջին՝ հասնել այն բանին, որ հայկական հեղափոխական կոմիտեները դադարեցնեն պայքարը սուլթանի դեմ և նրան իրենց հնազանդությունը հայտնեն, որի դիմաց սուլթանը պետք է ինչ–որ չափով կիրառեր հայերին խոստացված բարեփոխումները: Երկրորդ՝ ջանալ ներազդել եվրոպական մամուլի վրա, որը հայանպաստ դիրքորոշում ուներ և խիստ կերպով քննադատում էր Աբդուլ Համիդ II–ի բարբարոսական քաղաքականությունը հայերի նկատմամբ: Սիոնիզմի հիմնադիրը խոստանում էր սուլթանին հասնել այն բանին, որ անգլիական, ֆրանսիական, ավստրիական և եվրոպական այլ երկրների մամուլն անվերապահորեն չպաշտպանի հայերին և մեղմացնի իր դիրքորոշումը սուլթանի նկատմամբ:

Հայերի հաշվին արյունարբու սուլթանին ցուցաբերած այդ ծառայության դիմաց սուլթանը պետք է հրեաներին վարձահատույց լիներ՝ նրանց թույլատրելով հաստատվել Պաղեստինում:

Նշենք նաև, որ Թեոդոր Հերցլը խոստանում էր նաև ֆինանսական օգնություն ծանր դրության մեջ հայտնված սուլթանին և Օսմանյան կայսրությանը:

Թեոդոր Հերցլի գրառումներում, որոնք մեջբերում է Մարվան Բուհեյրին, կա տեղեկություն այն մասին, որ այդ երկու առաջարկությունները Հերցլին հուշել է սուլթանը Նելինսկու միջոցով: Ահա այդ հատվածը. «Ծառայությունները, որ նա (սուլթան Աբդուլ Համիդ II–ը — Ն. Հ.) խնդրում է ինձանից հետևյալներն են. առաջին՝ ես պետք է ազդեմ եվրոպական մամուլի վրա (Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում, Վիեննայում) այն առումով, որ հայկական հարցը լուսաբանվի թուրքերի համար ավելի բարեկամական ոգով, երկրորդ՝ ես պետք է ուղղակի համոզեմ հայ առաջնորդներին՝ ենթարկվեն նրան (սուլթանին — Ն. Հ.), որից հետո նա նրանց կանի բոլոր հնարավոր զիջումները»:

Հերցլը, անշուշտ, հասկանում էր, թե ինչպիսի հրեշավոր արարք է թույլ տալիս հայերի նկատմամբ, որոնք սուլթան Աբդուլ Համիդ II–ի զուլումի ռեժիմի անպաշտպան զոհերն էին: Եվ նա ցանկանում էր, որ իր

դավաճանական հակահայկական գործունեությունը մնա գաղտնի և հանրությանը հայտնի չդառնա, քանի որ դա կխայտառակեր սիոնիստական շարժումը և անձամբ նրան՝ Հերցլին, որը իր վրա վերցրել էր հրեաների փրկչի դերը: Այդ մասին է վկայում 1896 թ. մայիսի 22–ի նրա նամակը Լոնդոնի Մակաբեական ակումբի պրեզիդենտ Սոլոմոն Ժ. Սոլոմոնին, որտեղ նա բառացիորեն գրում է. **«Հայերը չպետք է իմանան, որ մեր մասնակցությունը պայմանավորված է մեր ազգային շահերով»:** Ամեն ինչ ասված է շատ պարզ:

Շարունակելով հայերին հանուն սիոնիստների «ազգային շահերի» զոհաբերելու իր քաղաքականությունը՝ Թեոդոր Հերցլը որոշում է մեկնել Լոնդոն և հանդիպում ունենալ հայկական ազատագրական շարժման կամ, ինչպես ինքն է գրում «հայ հեղափոխական կոմիտեների» ղեկավարների հետ, անձամբ համոզելու նրանց, որ նրանք դադարեցնեն ամեն տեսակի պայքար թուրքական արյունարբու սուլթանի դեմ և իրենց հավատարմությունը հայտնեն նրան: Նրա նպատակն էր «իր ծառայություններն առաջարկել հայերին սուլթանի հետ հաշտեցնելու գործում»: 1896 թ. հուլիսի 4–ին նա արդեն Լոնդոնում էր: Այստեղ նա խնդրում է իր բարեկամ Լյուսյեն Վոլֆին բրիտանական «մամուլում ոչ մեծ կամպանիա սկսել, որպեսզի սառեցնեն կրքերը հայկական հարցի շուրջը»: Հարցն այն է, որ 1896 թ. հայկական զանգվածային կոտորածների կապակցությամբ բրիտանական թերթերը մեծ աղմուկ էին բարձրացրել՝ ամենախիստ բառերով քննադատելով թուրքական սուլթանին: Ամենայն հավանականությամբ Լյուսյեն Վոլֆն այդ հարցում ինչ–որ հաջողության հասել էր, որի մասին վկայում է Հերցլի հեռագիրը Նևիլնսկուն, որտեղ նրան հայտնում է. «Գործերը՝ կապված հայկական հարցի հետ, սկսվել են արդյունավետ»:

1896 թ. մայիսի 13–ին տեղի է ունենում Հերցլի հանդիպումը Հնչակյան կուսակցության ղեկավար Ավետիս Նազարբեկյանի հետ վերջինիս լոնդոնյան բնակարանում, որին ներկա է լինում նրա կինը՝ Սարո Նազարբեկյանը, որը նույնպես հնչակյանների ակտիվ գործիչներից էր: Հերցլը, ինչպես ինքն է գրառել իր «Օրագրում», փորձել է համոզել Նազարբեկ ամուսիններին հաշտվել սուլթանի հետ՝ ընդգծելով, որ «իրեն կհաջողվի համոզել սուլթանին դադարեցնել ջարդերը»: Բայց Ա. Նազարբեկյանը շատ չոր և կտրուկ ասել է Հերցլին, որ ինքը «չի վստահում սուլթանին»: Իսկ Սարո Նազարբեկյանը, Հերցլի խոսքերով ասած, չէր թաքցնում իր թշնամական վերաբերմունքը Հերցլի նկատմամբ:

Այսպիսով՝ Հերցլի առաքելությունը Լոնդոն ավարտվում է անհաջողությամբ, քանի որ նրան չի հաջողվում Նազարբեկյաններին և նրանց միջոցով հայ ազատագրական շարժման մասնակիցներին համոզել դադարեցնել պայքարը թուրքական սուլթանի դեմ, հաշտվել նրա հետ և նրան հայտնել իր հնազանդությունը:

Հերցլի կրած անհաջողությունը «հայկական ճակատում» եղավ ընդհանրապես նրա արկածախնդրական առաքելության ձախողման պատճառներից մեկը: Երկրորդ հարվածը նա ստացավ հենց իրենից՝ սուլթան Աբդուլ Համիդ II–ից, որին նա հույս ուներ միամիտ երեխայի պես խաբել և ստանալ նրա համաձայնությունը հրեաներին Պաղեստինում բնակեցնելու և այնտեղ հրեական պետական կազմավորում ստեղծելու հարցում: Մարվան Բուհեյրիի բերած նյութերից, որոնք սկզբնաղբյուրներ են, տպավորությունն այնպիսին է, որ սուլթանը հենց սկզբից էլ չի հավատացել և չի վստահել Հերցլին ու սիոնիստներին: Եվ որոշ ժամանակ «մուկ ու կատու» խաղալով Հերցլի հետ, վերջապես սուլթանը որոշում է վերջակետ դնել այդ հարցում: Նա, չարժանացնելով Հերցլին անգամ աուդիենցիայի, որը Հերցլի երազանքն էր, Նելինսկուն ասում է հետևյալը «Եթե պարոն Հերցլը ձեզ համար այնպիսի բարեկամ է, ինչպես դուք ինձ համար, ապա խորհուրդ տվեք նրան՝ այլևս ոչ մի քայլ չձեռնարկի այդ ուղղությամբ: Ես չեմ կարող վաճառել անգամ մի թիզ հող, որովհետև նա պատկանում է ոչ թե ինձ, այլ իմ ժողովրդին: Իմ ժողովուրդն է ստեղծել այս կայսրությունը՝ նրա համար մարտերում չխնայելով իր կյանքը և այն ոռոգելով իր արյունով: Եվ մենք կրկին այն կոռոգենք մեր արյունով, նախքան թույլ տալը, որ այն մեր ձեռքից խլեն... Թող հրեաները իրենց պահեն իրենց միլիարդները: Երբ իմ կայսրությունը կբաժանվի մասերի, նրանք Պաղեստինը կկարողանան ստանալ ձրի»:

Ահա այսպիսի անփառունակ վախճան ունեցավ Հերցլի փորձը՝ օգտագործելով հայկական խաղաքարտը հասնել իր քաղաքական նպատակների իրագործմանը:

Հերցլն ունեցավ իր քաղաքականության շարունակողները, որոնք խանդով էին վերաբերվում հայկական հարցին: Մարվան Բուհեյրին իր հոդվածում հետևյալ հետաքրքիր փաստն է բերել, որը նույնպես արժանի է ուշադրության: Նա գրում է. «Հերցլը միայնակ չէր իր հայացքներում: Նրա մեծ հետևորդ Խաիմ Վեյցմանը իր ապագա կնոջը ուղղված նամակում հաղորդում է. «Ես երկար զրույց ունեցա Բերնշտեյնի և նրա դստեր հետ Բեռլինում: Ես նրան շշպռեցի այն բանի համար, որ նա հո-

վանավորության տակ է վերցնում հայերի գործը և ոչ թե հրեաների գործը»: Էդվարդ Բերնշտեյնը գերմանական սոցիալ–դեմոկրատական կուսակցության և II Ինտերնացիոնալի առաջնորդներից էր, հրեա, որը դատապարտում էր սուլթանի հայահալած քաղաքականությունը և հանդես գալիս հայերի պաշտպանությամբ: Եվ դրա համար նա արժանացավ հանդիմանության Համաշխարհային սիոնիստական կազմակերպության պրեզիդենտի կողմից:

Սակայն հանուն արդարության պետք է նշել, որ սիոնիստական շարժման մեջ կային գործիչներ, որոնք չէին կիսում Հերցլի հայացքները և հավանություն չէին տալիս նրա գործելակերպին սուլթանի հետ ունեցած հարաբերություններում և հայկական հարցում: «Հերցլի որոշ գործընկերներ,— գրում է Մարվան Բուհեյրին,— կասկածներ ունեին հայկական հարցում Հերցլի դիրքորոշման բարոյական լինելու վերաբերյալ»: Եվ որպես օրինակ նա նշում է Բերնարդ Լազարին, որը Հերցլի առաջին կողմնակիցներից էր: Նա, որպես բողոքի նշան ընդդեմ Աբդուլ Համիդի հետ Հերցլի կապերի, դուրս է գալիս Համաշխահային սիոնիստական կազմակերպության գործադիր կոմիտեից: Բացի այդ, Բերնարդ Լազարը 1902 թ. «Պրո–Արմենիա» հանդեսում տպում է հոդվածաշար, որտեղ անարգանքի սյունին է գամում Հերցլին և նրա համախոհներին նրանց անբարոյական պահվածքի համար:

Կարծում ենք, որ արաբ վաղամեռիկ հեղինակի աշխատությունը կարևոր ներդրում է XIX դարավերջում և XX դարի սկզբներին մերձավորարևելյան հանգույցի նոր շերտերի բացահայտման բնագավառում, որը հավասարապես ծառայում է Աբդուլ Համիդ II–ի, հայկական հարցի, սիոնիստական շարժման և նրա առանձին ղեկավարների քաղաքականության խորքային և համակողմանի ուսումնասիրությանը:

3. Բալֆուրի դեկլարացիան

Ձախողում կրելով հայկական հարցի մանիպուլյացիայով թուրքական սուլթանից Պաղեստինը ձեռք բերելու հարցում՝ սիոնիստական ղեկավարությունը, այդուհանդերձ, չհրաժարվեց Պաղեստին հրեաներին տեղափոխելու և այնտեղ հրեական տուն ստեղծելու գաղափարից: Հետագայում, հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին և նրան հաջորդած տարիներին, նրանք իրենց բոլոր ջանքերը կենտրոնացրին այդ խնդրի վրա:

Բայց այստեղ կատարվեց մի կարևոր փոփոխություն: Եթե սիոնիստական ղեկավարները քաղաքական սիոնիզմի ծնավորման սկզբներին Պաղեստինը ձեռք բերելու հարցում ամբողջ հույսը դրել էին թուրքական սուլթանի վրա և ձգտում էին նրա հետ գործարքի մեջ մտնելով իրագործել իրենց քաղաքական ծրագրերը, ապա այդ փորձերի ձախողումից հետո նրանք իրենց հայացքն ուղղեցին Մեծ Բրիտանիայի կողմը, հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և նրան հաջորդած շրջանում:

Պատերազմի ժամանակ Մեծ Բրիտանիան իր սեփական խաղն էր խաղում: Նրա և Անտանտի գծով նրա դաշնակիցների նպատակներից մեկը արաբական երկրների վրա օսմանյան տիրապետության վերացումը և իրենց տիրապետության հաստատումն էր: Եվ այստեղ նա սկսեց մի վերին աստիճանի բարդ խաղ: Մեծ Բրիտանիան 1915 թ. Հուսեյն–Մակմահոն համաձայնությամբ արաբներին խոստացավ անկախություն և արաբական անկախ պետության կազմավորում, որի մի մասն էր կազմելու Պաղեստինը: Իսկ 1916 թ. Սայքս–Պիկոյի համաձայնագրով Անգլիան և Ֆրանսիան որոշեցին վերացնել օսմանյան տիրապետությունը արաբական երկրներում, սակայն օսմանյան լծից ազատագրված տարածքները բաժանել միմյանց միջև:

Այդ երկու իրարամերժ համաձայնագրերի կողքին 1917 թ. հայտնվեց երրորդը, որը պատմության մեջ մտել է «Բալֆուրի դեկլարացիա» անունով: Նրա հայտնվելն արդյունք էր այն եռանդուն գործունեության, որ սիոնիստական ղեկավարությունը, մասնավորապես Համաշխարհային սիոնիստական կազմակերպությունը, ծավալեցին պատերազմի տարիներին՝ տեսնելով, որ Մեծ Բրիտանիան է դառնում տարածաշրջանում ամենաուժեղ պետությունը: Արդեն 1916 թ. գաղտնի բանակցություններ էին գնում Համաշխարհային սիոնիստական կազմակերպության ղեկավարության և անգլիական կառավարության ներկայացուցիչների միջև: Սիոնիստական ղեկավարությանը հաջողվեց «համոզել» բրիտանական կառավարությանը թույլատրել հրեաների ներգաղթը Պաղեստին և այնտեղ հրեական ազգային տուն ստեղծել: Դրա հնարավորությունը հայտնվեց այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ Օսմանյան կայսրությունը պարտություն է կրում պատերազմում, և նրա ջախջախումը միայն օրերի հարց է: Դրանով է նաև բացատրվում այն հանգամանքը, որ Բալֆուրի դեկլարացիան լույս աշխարհ եկավ 1917 թ. և ոչ ավելի շուտ:

Մեծ Բրիտանիան, որը Ֆրանսիայի հետ վերածնավորում էր Արաբական Արևելքի քարտեզը և մշակում բոլորովին նոր քաղաքականություն այդ տարածաշրջանում, նպատակահարմար գտավ զիջում կատարել սիոնիստներին Պաղեստինի հարցում՝ հույս ունենալով հրեաներին և նրանց ապագա տունը Պաղեստինում վերածել իր հենարանի և օգտագործել իր քաղաքական շահերի ու գաղութային տիրապետությունը ամրապնդելու համար: Սիոնիստական առաջնորդները ջանք չէին խնայում հավատացնելու բրիտանական կառավարությանը, որ իրենք հենարան կդառնան Մեծ Բրիտանիայի համար և կծառայեն նրա շահերին:

Իրականում «Բալֆուրի դեկլարացիա» կոչվածը Դավիդ Լլոյդ Ջորջի կոալիցիոն կառարության մեջ արտաքին գործերի նախարարի պաշտոնը զբաղեցնող Արթուր Ջեյմս Բալֆուրի (հետագայում՝ լորդ) 1917 թ. նոյեմբերի 2–ի նամակն էր՝ ուղղված բրիտանական ականավոր սիոնիստ լորդ Ռոտշիլդին:

Ստորև տալիս ենք Բալֆուրի դեկլարացիայի ամբողջական տեքստը՝ անգլերենից մեր թարգմանությամբ:

«Արտաքին գործերի նախարարություն
2 նոյեմբերի 1917 թ.
Հարգելի լորդ Ռոտշիլդ

Ես մեծագույն հաճույքն ունեմ Նորին Մեծության կառավարության անունից Ձեզ փոխանցելու Հրեական Սիոնիստական ձգտումների հանդեպ մեր համակրանքի հետևյալ դեկլարացիան, որը ներկայացվել է Կաբինետին և արժանացել նրա հավանությանը: Նորին Մեծության կառավարությունը բարեհաճորեն է դիտարկում Պաղեստինում հրեա ժողովրդի համար մի Ազգային տուն հիմնելը և կգործադրի իր լավագույն ջանքերը հեշտացնելու այդ նպատակին հասնելը, ընդ որում՝ ինքնին հստակորեն հասկանալի է, որ ոչինչ չպետք է արվի, որը կարող է վնաս հասցնել Պաղեստինի ոչ հրեական համայնքների քաղաքացիական և կրոնական իրավունքներին կամ հրեաների իրավունքներին և քաղաքական կարգավիճակին, որից նրանք օգտվում են որևէ այլ երկրում: Ես երախտապարտ կլինեմ Ձեզ, եթե Դուք այս դեկլարացիայի մասին տեղյակ պահեք Սիոնիստական Ֆեդերացիային:

Անկեղծորեն Ձեր՝
Արթուր Ջեյմս Բալֆուր»:

Այս նամակ–դեկլարացիայի շնորհիվ բացվեցին Պաղեստինի դռները հրեա ներգաղթողների առջև և դրվեց Պաղեստինում հրեական ազգային տուն ստեղծելու հիմքը: Նա եղավ այն փաստաթուղթը, որին Համաշխարհային սիոնիստական կազմակերպությունը և Մեծ Բրիտանիան տվեցին իրավական փաստաթղթի նշանակություն: Համաշխարհային սիոնիստական կազմակերպությունն այդ նամակը վերածեց յուրահատուկ դրոշի, որը ծածանելով ծեռնամուխ եղավ իր քաղաքական ծրագրի իրագործմանը:

Այդ նամակի բովանդակությունից այն տպավորությունն է ստացվում, որ Պաղեստինը կարծես թե ամայի և անմարդաբնակ երկիր էր: Ճիշտ է, հապաղիկ հիշատակվում էր, որ հրեական ազգային տունը հիմնելիս պետք էր այնպես անել, որ չոտնահարվեին Պաղեստինում գտնվող ոչ հրեական համայնքների իրավունքները: Բայց այստեղ չի նշվում անգամ արաբների անունը, որոնք ոչ թե համայնք էին, այլ հանդիսանում էին Պաղեստինի հիմնական բնակչությունը, և որոնց թիվը, ինչպես արդեն նշել ենք, 1914 թ., այսինքն՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, կազմում էր 615 հազար կամ 92%, մինչդեռ հրեաներինը՝ ընդամենը 85 հազար մարդ կամ մոտ 8%: Արաբների անվան անգամ չհիշատակելը, որը հավասարազոր էր նրանց անտեսմանը, կոպիտ սխալ էր, որը ապագա կոնֆլիկտների դուռ էր բացում:

Լուրջ սխալ պետք է համարել նաև այն, որ այդ բոլորը կատարվում էր արաբների թիկունքում, որին նրանք անգամ տեղյակ չէին: Հատկանշական է, որ նույն դրության մեջ էին գտնվում նաև Մեծ Բրիտանիայի դաշնակիցները. Եվ երբ այդ հարցը քննարկման առարկա դարձավ բրիտանական պառլամենտում, որի ընթացքում հարցապնդում կատարվեց, թե «հաղորդել է արդյոք կառավարությունը Պաղեստինում հրեական սիոնիստական ազգ ստեղծելու մասին դաշնակից երկրներին, հատկապես Ֆրանսիային, Ռուսաստանին, Իտալիային և այլ երկրների՝ Սրբազան Երկրում հրեական ազգային տուն հիմնելու մասին», ապա լորդ Բալֆուրը խոստովանեց, որ «տվյալ հարցի վերաբերյալ դաշնակիցներին պաշտոնապես ոչ մի տեղեկություն չի տրվել»:

Բալֆուրի դեկլարացիան, որը վրիպեց հստակորեն սահմանել արաբների և հրեաների փոխհարաբերությունները, դարձավ արաբների և հրեաների միջև ապագա կոնֆլիկտների փաստաթուղթ: Այդ առումով խիստ ուշագրավ է հետևյալ փաստը: Համաշխարհային սիոնիստական կազմակերպության առաջնորդներից մեկը՝ Էդերը, պատասխանելով

1920 թ. Յաֆայում արաբա–հրեական բախումների կապակցությամբ ստեղծված Հատուկ հանձնաժողովի նախագահ Հեյկրաֆտի հարցին, ասում է. «Պաղեստինում կարող է լինել միայն մեկ ազգային տուն՝ հրեական, և խոսք չի կարող լինել արաբների և հրեաների միջև հավասարության ու պարտնյորության մասին»:

Բալֆուրի դեկլարացիայով հրեաների ներգաղթն ու հաստատվելը Պաղեստինում և այնտեղ հրեական պետական կազմավորում հիմնելը թևակոխեց գործնական փուլ:

III. ՊԱՂԵՍՏԻՆԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՆԹԱՄԱՆԴԱՏԱԾԻՆ ՏԱՐԱԾՔ, ՀՐԵԱԿԱՆ ՏԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԱՐԱԲԱ–ՀՐԵԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ (1920–1948 թթ.)

1. Ազգերի լիգայի կողմից բրիտանական մանդատի հաստատումը Պաղեստինում և Պաղեստինի սահմանների ճշգրտումը

Երբ Բալֆուրի դեկլարացիան հայտնի դարձավ արաբական աշխարհին, այն շշմեցուցիչ ազդեցություն ունեցավ արաբների, նրանց բոլոր սոցիալական խավերի և քաղաքական ուժերի վրա: Սկզբնական շրջանում նրանք հրաժարվում էին անգամ հավատալ դրան, քանի որ նրանք Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում իրենց ճակատագիրը կապել էին Մեծ Բրիտանիայի քաղաքականության հետ առաջին հերթին՝ նրա օգնությամբ Օսմանյան կայսրությանը պարտության մատնելու հարցում: Հենց դրա համար էին նրանք 1916 թ. ապստամբել թուրքական տիրապետության դեմ և հավատարմորեն կատարել իրենց վրա վերցված պարտավորությունները: Հատկապես ծանր վիճակում հայտնվեց Մեքքայի շերիֆ և Հիջազի կառավարիչ Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմին, որը գաղտնի բանակցություններ էր վարել Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Մակ–Մահոնի հետ և համաձայնության եկել արաբների անկախության և անկախ պետություն ստեղծելու վերաբերյալ, որի անբաժան մասն էր կազմելու նաև Պաղեստինը: Իսկ այժմ նա հանձնվում էր հրեաներին, որտեղ նրանք պետք է իրենց ազգային

տունը հիմնեին: Նա, ինչպես նաև նրա որդիները, մասնավորապես էմիր Ֆեյսալը, ոչ միայն հիասթափված էին, այլև իրենց զգում էին խաբված:

Խաբված լինելու դառնությունն ավելի էր ընդգծվում, երբ արաբները հիշում էին այն խանդավառ ընդունելությունը, որ նրանք ցույց տվեցին անգլիական զորքերին, երբ վերջիններս 1917 թ. դեկտեմբերին գեներալ Ալլենբիի հրամանատարությամբ մտան Երուսաղեմ և այն ազատագրեցին օսմանցիներից: Ալլենբին, որը ոչ միայն լավ ռազմագետ էր, այլև հիանալի կողմնորոշվում էր քաղաքական հարցերի մեջ, երբ մտավ Կուդս՝ սուրբ քաղաքը, ապա նա, իբրև հարգանքի տուրք, իջավ իր նժույգից և ոտքով քայլեց մինչև իր շտաբ–կայանը: Խուռներամ բազմությունը ծափողջույններով և ուրախության բացականչություններով դիմավորեց բրիտանական գեներալին՝ անտեղյակ այն բանին, որ նրա գրպանում արդեն չկար Հուսեյն–Մակմահոն համաձայնագիրը, և այդ պահին նրա գրպանում միայն մի համաձայնագիր կար՝ Բալֆուրի դեկլրացիան: Բայց դա հետո: Իսկ այդ պահին կանայք նրան ծաղկեփնջեր էին նետում՝ որպես ազատարարի:

Հաշիմիների ընտանիքը մի փոքր անց երկրորդ հարվածը ստացավ բրիտանացիներից, երբ հայտնի դարձավ արաբական երկրները Անգլիայի և Ֆրանսիայի միջև բաժանելու վերաբերյալ 1916 թ. Սայքս–Պիկոյի համաձայնագրի մասին, ըստ որի ապագա արաբական անկախ պետության կազմից հանվում էին նաև Սիրիան ու Լիբանանը, որոնք անցնում էին Ֆրանսիային, իսկ Մրջագետքը՝ Անգլիային: Իսկ այդ համաձայնագրով Պաղեստինին այլ ճակատագիր էր կանխագծված: Նա պետք է պատկաներ ոչ թե արաբներին, այլ դրվեր «միջազգային կառավարման ներքո»:

Այսպիսով՝ արաբները միանգամից կորցնում էին Պաղեստինը, Սիրիան և Լիբանանը, ինչպես նաև Միջագետքը՝ ապագա Իրաքը:

Արաբների առաջին արծագանքները Բալֆուրի դեկլարացիայի և Պաղեստինում հրեական ազգային տուն ստեղծելու վերաբերյալ խիստ բացասական էին: 1920 թ. մարտի 8–ին Դամասկոսում կայացած Արաբական ազգային կոնգրեսը Հուսեյնի որդի էմիր Ֆեյսալին հռչակեց Սիրիայի թագավոր՝ նշելով նրա թագավորության սահմանները, որի մեջ մտնում էին բուն Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը և Հորդանանը: Ֆեյսալը, ցանկանալով ինչ–որ համաձայնության հասնել հրեաների հետ Պաղեստին նրանց ներգաղթի հարցում, բարի ոգի դրսևորեց և Խաիմ Վեյցմանի հետ հանդիպման ժամանակ համաձայնվեց աջակցել հրեա-

ների ներգաղթին Պաղեստին, սակայն մի պայմանով, որ այն՝ Պաղեստինը, պետք է դիտել որպես ավելի մեծ արաբական պետության մի մասը: Բայց երբ Փարիզի խաղաղության կոնգրեսը մերժեց արաբական նման պետություն ստեղծելու գաղափարը, Ֆեյսալը սիոնիստների ղեկավարությանն առաջարկեց Պաղեստինի փոխարեն դառնալ իր նոր պետության՝ Սիրիական արաբական թագավորության մի մասը, որը վերջիններս մերժեցին:

Արաբա–հրեական համագործակցություն չկայացավ: Արաբները չհաշտվեցին Պաղեստինում հրեական ազգային տուն ստեղծելու ծրագրի հետ, և սկսվեց մի պայքար այդ ծրագրի և բրիտանական ու սիոնիստական ուժերի դեմ, որը տևեց մոտ 30 տարի և, ծնափոխությունների ենթարկվելով, փաստորեն շարունակվում է մինչև օրս:

Պատերազմի ավարտից հետո Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի գլխավոր հոգսերից մեկը Սայքս–Պիկոյի համաձայնագրի հիման վրա ծեռք բերված պայմանավորվածությունների կենսագործումն էր: Այդ հարցի վերաբերյալ նրանք սկզբունքային համաձայնության եկան Սան Ռեմոյում 1920 թ. ապրիլի 25–ին կայացած Ազգերի լիգայի գլխավոր խորհրդի կոնֆերանսում: Այստեղ Ազգերի լիգայի կողմից Սիրիայի և Լիբանանի կառավարման մանդատը տրվեց Ֆրանսիային, իսկ Միջագետքի՝ Իրաքի, և Պաղեստինի կառավարման մանդատը՝ Մեծ Բրիտանիային:

Պաղեստինի վրա բրիտանական մանդատը Ազգերի լիգայի կողմից հաստատվեց 1922 թ. հուլիսի 22–ին և գործողության մեջ դրվեց 1923 թ. սեպտեմբերի 29–ին:

Այսպիսով՝ Պաղեստինը դարձավ բրիտանական ենթամանդատային տարածք, որը Անգլիային լրացուցիչ իրավասություններ և լծակներ էր տալիս՝ տնօրինելու նրա քաղաքական ճակատագիրն ըստ իր հայեցողության և բրիտանական կայսերական շահերին համապատասխան: Եվ նա հենց այդպես էլ վարվեց:

Նախ՝ նա 1921 թ. ապրիլի 11–ին հատուկ վարչություն մտցրեց Անդրհորդանանում, իսկ 1922 թ. հուլիսին Պաղեստինի կազմից հանեց Անդրհորդանանը և այն Ազգերի լիգայի համաձայնությամբ դարձրեց առանձին ենթամանդատային երկիր: Դրանով իսկ Պաղեստինի տարածքում կազմավորվեցին երկու ենթամանդատային միավորներ՝ բուն Պաղեստինը և Անդրհորդանանը:

Դա առաջացրեց սիոնիստական ղեկավարության խորը դժգոհությունը, քանի որ նրանք «Պաղեստինում հրեական ազգային տուն» հիմ-

նելու մասին խոսելիս նկատի ուներին նաև Անդրհորդանանը, որը պետք է կազմեր այդ տան բաղկացուցիչ մասը: Այժմ նրանք զրկվում էին այդ հնարավորությունից, և փոքրանում էին հրեական ազգային տան սահմանները, այսինքն՝ տարածքը: Պատասխանելով սիոնիստների քննադատությանը՝ Մեծ Բրիտանիայի գաղութների նախարար Ու. Չերչիլը 1922 թ. հրատարակված Սպիտակ գրքում նշում էր, որ Բալֆուրի դեկլարացիան չէր նախատեսում ամբողջ Պաղեստինի վերածում հրեական ազգային տան:

Անդհորդանանի անջատումը Պաղեստինից պատահական քայլ չէր: Մեծ Բրիտանիան ծրագրում էր Անդրհորդանանը դարձնել իր կարևոր հենարաններից մեկը:

Մյուս կողմից՝ Անգլիան Անդրհորդանանի առանձնացումը Պաղեստինից և հրեական տան տիրույթներից դրական ժեստ էր համարում արաբների հանդեպ և փորձում էր ինչ–որ չափով սիրաշահել արաբներին ու մեղմել այն բացասական ազդեցությունը, որ նրանց վրա թողել էր Բալֆուրի դեկլարացիան:

Դա Պաղեստինի վրա հաստատված մանդատի առանձնահատկություններից մեկն էր:

Մյուս առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ Մեծ Բրիտանիան համաձայնվեց Պաղեստինի վրա հաստատված մանդատի տեքստում մտցնել հատուկ կետ այն մասին, որ Պաղեստինում հիմնվելու է «հրեական ազգային տուն». մի բան, որը բոլորովին էլ պարտադիր չէր: Բալֆուրի դեկլարացիայից այդ դրույթի ինկորպորացիան մանդատի տեքստում կատարվեց ԱՄՆ–ի բացահայտ ճնշման տակ, որը սկսել էր սիրաշահել հրեաներին՝ ելնելով իր ներքին խնդիրներից և հաշվի առնելով ԱՄՆ–ում հրեական ազդեցիկ լոբբիի առկայությունը:

Մեծ Բրիտանիան, տեղի տալով ԱՄՆ–ի ճնշմանը, այդուհանդերձ, փորձում էր դա ներկայացնել որպես իր բարի կամքի դրսևորում հրեաների հանդեպ և դրանով իսկ սիրաշահել այս անգամ արդեն հրեաներին:

Այսպիսով՝ Անգլիան եթե Անդրհորդանանը Պաղեստինի կազմից դուրս բերելով և առանձին ենթամանդատային էմիրություն կազմելով սիրաշահում էր արաբներին, ապա Բալֆուրի դեկլարացիան մանդատի վերաբերյալ հիմնական տեքստի մաս դարձնելով սիրաշահում էր հրեաներին:

Այդ լարախաղացությունը մշտապես կազմել է բրիտանական արտաքին քաղաքականության ամենաէական բաղադրիչներից մեկը.

Մեծ Բրիտանիան, յուրովսանն լուծելով Պաղեստինի հարցը, ձեռնամուխ եղավ Պաղեստինի տարածքի աշխարհագրական սահմանների ճշգրտմանը: Նրա կազմից Անդրհորդանանը հանելուց հետո բրիտանական ենթամանդատային Պաղեստինի տարածքը կազմեց 10 հազ 435 մղոն կամ 27 հազ. 27 քառ. կմ:

Ահա սա այն տարածքն է, որի վրա տեղի են ունենում աշխարհացունց իրադարձություններ: Այդ դրամայի անմիջական մասնակիցները արաբները և հրեաներն են, իսկ բեմադրիչ–պրոդյուսորները՝ այս աշխարհի ուժեղները:

2. Քաղաքական և ռազմական դիմակայություն (1923–1939 թթ.)

Պաղեստինը հրեաների և արաբների միջև վերածվեց հակամարտությունների իսկական դաշտի: Օգտվելով Բալֆուրի դեկլարացիայի դրույթներից և այն հանգամանքից, որ դրանք մտցվեցին մանդատի տեքստի մեջ՝ Համաշխարհային սիոնիստական կազամակերպությունը, որին Ազգերի լիգան ճանաչեց որպես Հրեական գործակալություն, մեծ թափ հաղորդեց պաղեստինցիների ներգաղթին, որը փաստորեն զանգվածային բնույթ կրեց: Նրանց քանակը Պաղեստինում քանի գնում, այնքան աճում էր: Նրանք սկսեցին գնել հողեր և հիմնել իրենց բնակավայրերը. Սկսվեց Պաղեստինի յուրացումը հրեաների կողմից:

Դա խիստ անհանգստացնում էր արաբներին: Արաբական համընդհանուր կոնգրեսը դեռևս 1919 թ. որոշեց արգելել հողերի վաճառքը հրեաներն և դադարեցնել նրանց միգրացիան: Բայց այդ որոշումը մնաց թղթի վրա: Հրեաները գալիս ու գալիս էին՝ կարողանալով հաղթահարել կամ շրջանցել բոլոր տեսակի արգելքները:

Մանդատի հաստատումից հետո բրիտանական կառավարությունը Պաղեստինի գլխավոր կոմիսար նշանակեց Հերբերտ Սեմուելին, որը հրեա էր և մի առանձին եռանդով սկսեց իրականացնել Բալֆուրի դեկլարացիայի դրույթները: Նա ընդունեց օրենք հողեր գնելու վերաբերյալ, որը փաստորեն օրինականացնում էր հրեաների կողմից արաբների հողերը գնելու հարցը: Դրանում մեղքի իրենց բաժինն ունեին նաև պաղեստինցի արաբ խոշոր հողատերերը, որոնք բնակվում էին արաբական երկրների տարբեր մայրաքաղաքներում և չէին մշակում իրենց հողերը: Նրանք հաճույքով իրենց հողերը վաճառում էին հրեաներին: Բավական է նշել, որ Հերբերտ Սեմուելի կառավարման առաջին իսկ տարում հրե-

աներին Պաղեստին ներգաղթի 17 հազար պաշտոնական արտոնագիր տրվեց: Արաբական պաղեստինյան կոնգրեսի գործադիր կոմիտեն 1921 թ. պահանջեց բրիտանական գաղութների նախարար Ու. Չերչիլից՝ վերացնել Բալֆուրի դեկլարացիան և դադարեցնել հրեաների ներգաղթը Պաղեստին, որը, սակայն, մերժվեց:

Ահա այսպիսի պայմաններում սկսվեցին զինված բախումները արաբների և հրեաների միջև Պաղեստինի համարյա բոլոր շրջաններում:

Հրեաները ստեղծեցին իրենց ռազմական զանազան կառույցները, ինչպես՝ «Հագանան», «Իրգուն–բետը», «Շտերնը» և այլն, որոնք ակտիվորեն մասնակցում էին ռազմաքաղաքական բախումներին: Արաբները նույնպես ստեղծեցին իրենց զանազան կազմակերպությունները, որոնք, սակայն, կազմակերպական առումով զիջում էին հրեական ռազմական կառույցներին:

1929 թ. օգոստոսին տեղի ունեցավ պաղեստինյան արաբների առաջին ապստամբությունը Երուսաղեմում, որի ընթացքում սպանվեցին 133 հրեա և 116 արաբ: Դրա առիթը վեճն էր արաբների և հրեաների միջև Երուսաղեմի ալ–Աքսա մզկիթի արևմտյան պատի վերաբերյալ: Այդ պատը սուրբ է համարվում մուսուլմանների համար, սակայն հրեաները համաձայն չէին դրա հետ և գտնում էին, որ դա հին հրեական տաճարի մնացորդներն են: Բախումը հրահրվեց բրիտանացիների կողմից:

Դա լոկ առիթ էր, իսկ իրականում պատճառն արաբների մտավախությունն էր, որ եթե այդպես շարունակվի, ապա շուտով բրիտանացիների կողմից կառավարվող Պաղեստինի մի մասը կդառնա հրեական պետություն: 1930–ականների սկզբներին հրեաների թիվը Պաղեստինում արդեն հասել էր մոտ 175 հազարի.

Ներգաղթը Պաղեստին ավելի ուժեղացավ 1930–ական թվականներին, երբ Գերմանիայում իշխանության գլուխ եկան ֆաշիստները Հիտլերի գլխավորությամբ: Այդ պահից սկսված մահացու վտանգ կախվեց հրեաների գլխին: Սկսվեց նրանց փախուստը Գերմանիայից, ապա նաև Արևելյան Եվրոպայի երկրներից: Հիմնականում նրանք գալիս էին Պաղեստին: 1933 թ. Պաղեստին գաղթեց 30 հազ., 1934 թ.՝ 42 հազ., իսկ 1935 թ.՝ 62 հազ. հրեա: Դրա հետևանքով հրեաներն արդեն 1936 թ. կազմում էին Պաղեստինի բնակչության 30%–ը՝ 1914 թ. 8%–ի դիմաց:

1933 թ. հոկտեմբերին սկսվեց պաղեստինցի արաբների երկրորդ ապստամբությունը: Այս անգամ այն ուղղված էր բրիտանական գաղութային տիրապետության դեմ՝ ի տարբերություն 1929 թ. ապստամբու-

թյան, որը հիմնականում արաբա–հրեական կոնֆլիկտ էր և ուղղված էր առաջին հերթին Պաղեստինը սիոնիստների կողմից յուրացնելու քաղաքականության դեմ:

Ապստամբների հիմնական պահանջներն էին՝ Բալֆուրի դեկլարացիայի վերացում, Պաղեստին հրեաների ներգաղթի և նրանց հողերի վաճառքի դադարեցում, բրիտանական մանդատի վերացում և Պաղեստինին անկախության տրամադրում: Ապստամբական հիմնական կենտրոններն էին Յաֆան, Երուսաղեմը և Նաբլուսը, անհանգիստ և լարված դրություն էր այլ քաղաքներում ու շրջաններում: Անգլիական մանդատային իշխանությունները կարողացան լրացուցիչ ուժեր ստանալով՝ ճնշել ապստամբությունը:

Բայց, միևնույնն է, Պաղեստինը չհանդարտվեց, քանի որ ոչինչ չէր փոխվել՝ հրեաների ներգաղթը և հողերի վաճառքը շարունակվում էր, բրիտանական մանդատը գործում էր ամբողջությամբ, և արաբները գտնում էին, որ իրենց գոյությունը և Պաղեստինի պահպանումը որպես արաբական երկիր վտանգված է:

Այդ հողի վրա 1936 թ. սկսվեց Պաղեստինի արաբների երրորդ ապստամբությունը, որը տևեց մինչև 1939 թ.. Ապստամբության կազմակերպման և ղեկավարման գործում մեծ էր Երուսաղեմի մուֆթի և Պաղեստինի Բարձրագույն մուսուլմանական խորհրդի նախագահ Հաջ Ամին ալ–Հուսեյնի դերակատարումը: Նա գլխավորեց նաև Բարձրագույն արաբական կոմիտեն: Դա բավականին հեղինակավոր մարմին էր, որի ձայնին ունկնդիր էին արաբները: Դրանում իր նշանակությունն ուներ այն փաստը, որ նրանում միավորված էին պաղեստինյան համարյա բոլոր քաղաքական կուսակցությունները:

Բարձրագույն արաբական կոմիտեն 1936 թ. ապրիլին հայտարարեց ընդհանուր գործադուլ՝ ընդդեմ սիոնիստների և բրիտանացիների քաղաքականության: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ բրիտանական պառլամենտը 1936 թ. մարտին մերժել էր արաբների պահանջը՝ ստեղծել Պաղեստինում Օրենսդիր ժողով և պաշտպանել արաբ ֆելլահ վարձակալների իրավունքները: Համընդհանուր գործադուլը շատ սահուն կերպով 1936 թ. ապրիլի 15–19–ը վերածվեց զինված ապստամբության: Արաբները հրաժարվեցին հարկեր վճարելուց, փողոցներում ցույցերը վեր էին ածվում զինված բախումների բրիտանական զինվորական ուժերի հետ, լայն ծավալ ստացավ պարտիզանական շարժումը: Անգլիան ապստամբների դեմ նետեց իր զորամիավորումնե-

րը մարշալ Վեյվելի հրամանատարությամբ: Ուշագրավ է, որ անգլիական զորքերի կազմում պաղեստինցիների դեմ մարտնչում էին նաև սիոնիստական զինված ջոկատները:

Բայց դա արդյունք չէր տալիս, և բրիտանական կառավարությունը 1937 թ. նոյեմբերի 16–ին Պաղեստին ուղարկեց թագավորական հանձնաժողով՝ լորդ Փիլի գլխավորությամբ: Նրա խնդիրն էր տեղում ծանոթանալ իրադրությանը և իր առաջարկությունները ներկայացնել բրիտանական կառավարությանը:

Լորդ Փիլի հանձնաժողովի զեկուցագիրը հրապարակվեց 1937 թ. հուլիսին: Այնտեղ նշված էր, որ մանդատը դարձել է ոչ գործունյա, իսկ արաբների և հրեաների հարաբերություններն այն աստիճան են սրվել, որ նրանց հնարավոր չէ պահել մեկ կազմավորման շրջանակներում: Հանձնաժողովն առաջարկում էր Պաղեստինը բաժանել երկու մասի և ստեղծել առանձին արաբական և հրեական պետություններ: Հրեական պետությանը հատկացվում էր Միջերկրական ծովի առափնյա մասը և Գալիլեան, իսկ արաբական պետությունը պետք է կցվեր Անդրհորդանանին:

Արաբները մերժեցին այդ առաջարկությունը, և ապստամբությունը վերսկսվեց նոր թափով:

1939 թ փետրվարին Լոնդոնում հրավիրվեց այսպես կոչված «կլոր սեղանի քննարկում», որի մասնակիցներն էին Պաղեստինի, Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Իրաքի, Եմենի և Անդրհորդանանի պատվիրակությունները: Հրավիրված էր նաև հրեական գործակալության պատվիրակությունը, սակայն արաբները հրաժարվեցին նրանց հետ բանակցություններից, ուստի Անգլիան ստիպված էր նրանց հետ առանձին բանակցություններ վարել: Այդ բանակցությունների հիման վրա բրիտանական կառավարությունը 1939 թ. մայիսին հրապարակեց նոր «Սպիտակ գիրք», որն առաջարկում էր նոր լուծումներ: Նրանով Մեծ Բրիտանիան փաստորեն հրաժարվում էր Բալֆուրի դեկլարացիայից: «Սպիտակ գիրքն» արգելում էր հողերի հետագա վաճառքը հրեաներին, առաջիկա 5 տարիների ընթացքում նախատեսվում էր հրեաների ներգաղթ յուրաքանչյուր տարի ոչ ավելի, քան 15 հազ. մարդ, այսինքն՝ 5 տարվա ընթացքում՝ 75 հազ. հրեա, իսկ առաջիկա 10 տարիներին պետք է Պաղեստինում հռչակվեր միասնական անկախ արաբական պետություն:

Ակնհայտ է, որ այդ որոշումները արաբանպաստ էին, որը բացատրվում է նրանով, որ այդ ժամանակ՝ 1939 թ. մայիսին, արդեն զգացվում էր Երկրորդ համաշխարհային պատերազմի շունչը (հիշենք, որ այն

սկսվեց դրանից ընդամենը 3 ամիս անց՝ սեպտեմբերի 1–ին), և Անգլիայի համար շատ կարևոր էր իր ապագա դաշնակիցների հարցը: Այդ պահին նրա համար ավելի կարևոր էին արաբական երկրները՝ իրենց վիթխարի մարդկային և բնական ռեսուրսներով, մանավանդ նավթով, քան թե հրեաներն իրենց «ազգային տնով»:

Հրեաները, բնականաբար, մերժեցին «Սպիտակ գրքի» առաջարկած պլանը և խիստ քննադատության ենթարկեցին Մեծ Բրիտանիային՝ նրան մեղադրելով դավաճանության և հրեաներին լքելու մեջ:

Իսկ արաբները, հասկանալի է, հավանություն տվեցին բրիտանական նոր առաջարկություններին: Դրանից հետո անհնազանդ էր ապստամբությունը շարունակել, և 1939 թ. կեսերին այն ավարտվեց:

1936–1939 թթ. պաղեստինյան մեծ ապստամբության ընթացքում զոհվեցին 3232 արաբ, 329 հրեա և 135 բրիտանացի:

3. Պաղեստինը Երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում: ՄԱԿ–ի որոշումը Պաղեստինը բաժանելու վերաբերյալ և Իսրայել պետության հռչակումը (1939–1948 թթ.)

Անգլիական նոր քաղաքականությունից դժգոհ սիոնիստները տարբեր ձևերով արտահայտեցին իրենց անհամաձայնությունը 1939 թ «Սպիտակ գրքում» ամրագրված առաջարկություններին: Դժգոհ հրեաները կազմակերպում էին հակաբրիտանական ցույցեր և դատապարտում Մեծ Բրիտանիային՝ «ավանդական անգլո–սիոնիստական բարեկամությունից հեռանալու համար»: Դժգոհության արտահայտման մյուս ձևը զանգվածային գործադուլներն էին: Չբավարարվելով դրանով՝ սիոնիստական զինված ուժերը հարձակումներ էին գործում բրիտանական զորքերի, ոստիկանության և նրանց շենքերի ու կառույցների վրա: Նրանք անգամ չէին խորշում բրիտանացիների դեմ ահաբեկչական գործողություններից:

Սակայն Անգլիայի՝ պատերազմի մեջ մտնելուց հետո նրանք սթափվեցին և դադարեցրին հակաբրիտանական գործողությունները, գիտակցելով, թե հիտլերյան Գերմանիայի հաղթանակը ինչպիսի ողբերգություն կբերի հրեաներին: Եվ նրանք ամբողջ պատերազմի ընթացքում պաշտպանում էին Մեծ Բրիտանիային:

Պաղեստինի արաբները նույնպես պաշտպանում էին Մեծ Բրիտանիային, և այդ հարցում արաբներն ու հրեաները ակամայից դար-

ծան «դաշնակիցներ»: Նրանք ոչ միայն դադարեցրին հակաանգլիական գործողությունները, այլև հրաժարվեցին միմյանց դեմ ուղղված պայքարից: Այդ պատճառով էլ Երկրորդ համաշխարհային պատերազմն սկսվելուց հետո Պաղեստինում բավականին երկար ժամանակ անդորր էր:

Բայց դա չէր նշանակում, թե Պաղեստինում այդ ժամանակ ընդհանրապես ոչինչ չէր կատարվում: 1940 թ. փետրվարին գործողության մեջ դրվեց «Հողերի վաճառքի մասին» որոշումը, որը հաստատվել էր 1939 թ. հրապարակված «Սպիտակ գրքում»: Սահմանվեց Պաղեստինում հողերը հրեաներին հանձնելու երեք գոտի: Առաջին գոտում, որն ընդգրկում էր Պաղեստինի ամբողջ տարածքի 63,4%–ը, ընդհանրապես արգելվում էր հրեաներին հող վաճառել, երկրորդ գոտում, որը գրավում էր Պաղեստինի տարածքի 31,6%–ը, թույլատրվում էր վաճառքը միայն Պաղեստինում բրիտանական գլխավոր կոմիսարի հատուկ թույլտվությամբ, և միայն երրորդ գոտում, որը կազմում էր Պաղեստինի ընդհանուր տարածքի ընդամենը 5%–ը, թույլատրվում էր հողերի վաճառքն առանց որևէ սահմանափակության:

Սիոնիստները չէին հրաժարվել նաև ներգաղթի մտքից, և 1940–1945 թթ. Պաղեստին ներգաղթեց 60 հազ. հրեա, որոնցից 20 հազարը՝ անօրինական ճանապարհով: Դրա հետևանքով հրեաների թիվը Պաղեստինում հասավ ընդհանուր բնակչության թվի 31%–ին, որի տնօրինության տակ էր գտնվում Պաղեստինի ընդհանուր տարածքի 6%–ը:

Կարևոր իրադարձություն պետք է համարել նաև սիոնիստական ղեկավարների կոնգրեսը Նյու Յորքի «Բիլթմոր» հյուրանոցում, որտեղ որոշում ընդունվեց «Պաղեստինը դարձնել հրեական հայրենիք»:

Պաղեստինի արաբական մասում դրությունն ավելի կայուն էր: Դրան նպաստեց նաև ԱՄՆ–ի պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտի հանդիպումը և հանգամանալի զրույցը Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի, Սիրիայի և Լիբանանի ներկայացուցիչների հետ իր հածանավի վրա 1945 թ. փետրվարին Սուեզի ջրանցքի գոտում՝ Ղրիմի կոնֆերանսից տուն-դարձի ճանապարհին: Պաղեստինի հարցի քննարկման ժամանակ նա վստահեցրեց արաբական առաջնորդներին, որ այդ հարցի վերաբերյալ որոշում չի ընդունվի առանց հրեաների և արաբների հետ խորհրդակցելու՝ ընդգծելով, որ ինքը «ոչ մի քայլ չի ձեռնարկի, որը կարող է գնահատվել որպես թշնամական արաբների նկատմամբ»:

Սակայն 1944 թվականից, երբ ակնհայտ դարձավ, որ գերմանական բլոկի պարտությունն անխուսափելի է, և վերացավ ֆաշիզմի անմի-

ջական վտանգը, քաղաքական իրադրությունը կտրուկ փոխվեց Պաղեստինում: Դրա նախաձեռնողները եղան սիոնիստական ղեկավարները, որոնք վերսկսեցին Պաղեստին հրեաների անսահմանափակ ներգաղթի և հրեական պետություն ստեղծելու իրենց պահանջներն ու պայքարը: Նրանց պայքարի անմիջական թիրախ դարձան Պաղեստինում բրիտանական մանդատային և ռազմական իշխանությունները: Կրակի վրա յուղ լցրեց ԱՄՆ–ի նոր պրեզիդենտ Հարի Տրումենի պահանջը Անգլիայից՝ թույլատրել 100 հազ. հրեաների ներգաղթը Պաղեստին: 1944 թ. հունվարին սիոնիստական «Էցել» կազմակերպության ղեկավար Մենահիմ Բեգինը կոչ արեց հրեաներին ապստամբել անգլիացիների դեմ:

Սիոնիստական ահաբեկիչների առաջին զոհերից մեկը 1944 թ. նոյեմբերին դարձավ Մերձավոր Արևելքի հարցերի գծով բրիտանական նախարար լորդ Մոյնը, որը Ու. Չերչիլը որակեց որպես «ամոթալի ոճրագործություն»: Սիոնիստական զինված ջոկատների գործողությունների մեջ այս փուլում առանձնահատուկ տեղ էին գրավում հարձակումները երկաթուղային կայարանների վրա: Նրանք քանդում էին երկաթուղագծերը, պայթեցնում կամուրջները և գնացքները, իսկ 1946 թ. հուլիսի 2–ին պայթեցրին Երուսաղեմի «Դավիդ թագավոր» հյուրանոցը: Դա պատահական չէր ընտրված, քանի որ այդ հյուրանոցում էին գտնվում բրիտանական մանդատային կենտրոնական վարչությունը և անգլիական զորքերի շտաբը: Հյուրանոցի պայթյունի հետևանքով զոհվեց մոտ 100 մարդ. Այդ բոլորի նպատակն էր ճնշում գործադրել Անգլիայի վրա և ստիպել, որ նա փոխի իր քաղաքականությունն ու անվերապահորեն կատարի սիոնիստական ծրագրային պահանջները՝ կապված Պաղեստինի հետ:

Խիստ լարված էին մնում արաբա–հրեական հարաբերությունները: Նրանցից յուրաքանչյուրը շարունակում էր պնդել իր պահանջների վրա: Արաբներն առիթը բաց չէին թողնում վերստին հայտարարելու, որ իրենք դեմ էին Պաղեստինի բաժանմանը կամ կանտոնիզացիային[13], և Պաղեստինում հրեական տան կամ պետության ստեղծմանը. իսկ հրեաները իրենց բոլոր կոնգրեսներում պնդում էին Պաղեստինում իրենց պետությունն ունենալու պահանջի վրա և զենքը ձեռքներին պայքարում դրա համար:

13 1946 թ. աշնանը Անգլիան առաջադրեց այսպես կոչված «Մորիսոնի պլանը», որը նախատեսում էր Պաղեստինում ստեղծել չորս շրջաններ՝ կանտոններ՝ երկուսը բրիտանական, մեկը հրեական, իսկ մեկն էլ արաբական. Արաբներն ու հրեաները մերժեցին այդ ծրագիրը:

Երկուստեք անվերջ զինված բախումները, ահաբեկչական գործողությունները, քաղաքացիական և ռազմական օբյեկտների պայթեցումները և այլն. այդ բոլորը քաոսային իրադրություն էր ստեղծել Պաղեստինում: Դրությունը դարձել էր անկառավարելի: Լոնդոնում հասկացան, որ մանդատը սպառել է իրեն, դադարել է գործունյա կառուցվածք լինելուց, և բրիտանական քաղաքականությունը Պաղեստինում մտել է փակուղի: Հանգելով այդ եզրակացությանը՝ անգլիական կառավարությունը դիմեց մի քայլի, որն անսպասելի էր բոլորի համար:

1947 թ. փետրվարի 17–ին պահպանողականների կառավարությանը փոխարինած լեյբորիստական կառավարության արտաքին գործերի նախարար Էռնստ Բեվինը հայտարարեց բրիտանական պառլամենտում, որ պաղեստինյան հարցը կառավարությունը ներկայացնում է ՄԱԿ–ի քննարկմանը: Ապրիլի 2–ին բրիտանական կառավարությունը պաշտոնապես դիմեց ՄԱԿ–ին՝ Պաղեստինի հարցը մտցնել Գլխավոր ասամբլեայի օրակարգ, որն ընդունվեց վերջինիս կողմից: Գլխավոր ասամբլեան ստեղծեց Պաղեստինյան հարցի հատուկ կոմիտե, որը պետք է քննարկեր այդ հարցը և իր առաջարկությունները ներկայացներ: Երկար քննարկումներից ու վիճաբանություններից հետո, որոնք շատ բուռն բնույթ էին կրում, Պաղեստինյան հարցի հատուկ կոմիտեն ՄԱԿ–ին ներկայացրեց իր առաջարկությունները, որոնք քննարկվեցին ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի երկրորդ նստաշրջանի 128–րդ լիագումար նիստում: Նա 1947 թ. նոյեմբերի 29–ին ընդունեց 181/II բանաձևը Պաղեստինի ապագա պետական կառուցվածքի մասին, որն ավելի շատ հայտնի է «Պաղեստինի բաժանման վերաբերյալ բանաձև» անվամբ:

Քվեարկությանը մասնակցած ՄԱԿ–ի անդամ 56 պետություններից Պաղեստինի բաժանման օգտին քվեարկել էր 33 պետություն, այդ թվում՝ ԱՄՆ–ը, Խորհրդային Միությունը և Ֆրանսիան, դեմ՝ 13 պետություն, այդ թվում՝ ՄԱԿ–ի անդամ բոլոր 6 արաբական պետությունները, ձեռնպահ՝ 10 պետություն: Ձեռնպահների մեջ էր նաև Մեծ Բրիտանիան:

Այդ բանաձևով վերացվում էր բրիտանական մանդատը Պաղեստինի վրա. «Մանդատի գործողությունը Պաղեստինի վրա դադարեցվում է հնարավորինս կարճ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 1948 թ. օգոստոսի 1–ը: Անգլիական զորքերի դուրսբերումը 1948 թ. օգոստոսի 1–ից ոչ ուշ»:

Պաղեստինը բաժանվում էր երկու մասի, որտեղ պետք է ստեղծվեին երկու՝ հրեական և արաբական պետություն:

Հրեական պետությանը հատկացվում էր 14,1 հազ. քառ. կմ կամ Պաղեստինի տարածքի 56%–ը: Արաբական պետությանը տրվում էր 11,1 հազ. քառ. կմ, որը կազմում էր Պաղեստինի տարածքի 43%–ը: Բնակչության առումով պատկերը հետևյալն էր: Հրեական պետությունում տվյալ պահին արաբները կազմում էին 510 հազ., իսկ հրեաները՝ 499 հազար մարդ: Արաբական պետությունում արաբները կազմում էին 549 հազ., իսկ հրեաները՝ 95 հազ. մարդ:

ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի բանաձևով Երուսաղեմը, Բեթղեհեմը և նրանց հարակից տարածքները առանձնացվում էին որպես միջազգային գոտի և ենթակա չէին հրեական և արաբական իշխանություններին. Այդ միջազգային գոտին կազմում էր Պաղեստինի ընդհանուր տարածքի մոտավորապես 1%–ը, որտեղ բնակվում էին 105 հազ. 540 արաբ և 59 հազ. 690 հրեա.

Ահա այսպիսին էր պատկերը տարածքային և բնակչության համամասնության առումով[14]:

Դժվար չէ նկատել, որ Պաղեստինի բաժանումը կատարվել էր հօգուտ հրեաների: Նրանք, որ այդ պահին հրեական պետության, արաբական պետության և Երուսաղեմի միջազգային գոտում, այսինքն՝ ամբողջ Պաղեստինում միասին վերցրած կազմում էին համարյա 654 հազար մարդ, ստացան Պաղեստինի տարածքի կեսից ավելին՝ 56%–ը, մինչդեռ արաբների թիվը, որը Պաղեստինի այդ երեք հատվածներում միասին կազմում էր 1 մլն 164 հազ , այսինքն՝ համարյա կրկնակի անգամ գերազանցում էր հրեաներին, ստացան Պաղեստինի տարածքի կեսից էլ պակաս՝ 43%–ը:

Գլխավոր ասամբլեան, համաձայնվելով բաժանել Պաղեստինը և նրա տարածքում ստեղծել հրեական և արաբական պետություն, միաժամանակ նպատակահարմար գտավ, որ նրանց միջև հաստատվի տնտեսական և մաքսային միություն, միասնական դրամ, տրանսպորտային և կոմունիկացիոն միասնական ցանց և այլն, որը կոչված էր ապահովելու այդ երկու փոքր պետությունների կենսագործունեությունը, ինչը, իհարկե չիրականացվեց:

ՄԱԿ–ի 1947 թ. 181/II բանաձևն արժանացավ հրեաների հավանությանը, որոնք անմիջապես դիմեցին նախապատրաստական քայլե-

14 Գրականության մեջ երբեմն պատահում են փոքր շեղումներ բերված թվերից. Այդուհանդերձ դրանք ընդհանուր առմամբ մոտ են ճշմարտությանը

րի՝ այն իրագործելու համար: Արաբները, ընդհակառակը, թե՛ Պաղեստինում և թե՛ նրանից դուրս (նկատի ունենք արաբական պետություններին) կտրուկ դեմ արտահայտվեցին Պաղեստինի բաժանմանը և չճանաչեցին Գլխավոր ասամբլեայի բանաձևը: Եվ այդ փուլում, մինչև մանդատի պաշտոնական վերացումը և Գլխավոր ասամբլեայի բանաձևը գործողության մեջ դնելը, տեղի ունեցավ արաբա–հրեական դիմակայության և զինված բախումների աննախադեպ էսկալացիա: Նորից արյունահեղություն, նորից զոհեր, նորից տարբեր կառույցների ու շինությունների կործանում...

Ստեղծված պայմաններում Անգլիան ճշտեց Պաղեստինից իր զորքերի դուրսբերման ժամկետը, որը նշանակում էր նաև մանդատի պաշտոնական վերացում: Նա որոշեց այդ գործողությունը չհետաձգել մինչև 1948 թ. օգոստոսը, և 1947 թ. դեկտեմբերի 11–ին հայտարարեց, որ Պաղեստինի մանդատից ինքը կհրաժարվի 1948 թ. մայիսի 15–ին: Անգլիան այս անգամ եղավ իր խոսքի տերը, և ամեն ինչ կատարվեց նշված ժամկետներում:

Հրեական–սիոնիստական ղեկավարությունն անմիջապես գործի անցավ: 1948 թ. մայիսի 14–ին հրեական ժամանակավոր պետական խորհուրդն ընդունեց հետևյալ հռչակագիրը, որտեղ ասված էր, որ ժամանակավոր պետական խորհուրդը, «ներկայացնելով Պաղեստինում հրեական ժողովուրդը և Համաշխարհային սիոնիստական շարժումը, հռչակում է Պաղեստինում Հրեական Պետության ստեղծումը, որը կոչվելու է Մադինաթ Իսրայել (Իսրայելական պետություն), որը բաց է հրեաների ներգաղթի համար աշխարհի բոլոր երկրներից, որտեղ նրանք ցրված են»:

Իսրայել պետության ստեղծման տարեթիվն է 1948 թ. մայիսի 15–ը:

Կազմվեց կառավարություն, որի առաջին վարչապետը եղավ Դավիդ Բեն Գուրիոնը՝ սիոնիստական շարժման ականավոր ղեկավարներից ու վետերաններից մեկը: Որոշ ժամանակ անց Իսրայելի պետության պրեզիդենտ ընտրվեց Համաշխարհային սիոնիստական կազմակերպության նախկին նախագահ Խաիմ Վեյցմանը:

Իսկ արաբնե՞րը...

IV. ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԿԱՄ ԱՐԱԲԱ–ՀՐԵԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՁԵՎԱՓՈԽՈՒՄԸ: ՆԱՔԲԱ (1948–1949 թթ.)

1948 թ. մայիսի 15–ին՝ Իսրայել պետության հռչակումից հետո Պաղեստինի արաբները հայտնվեցին երկընտրանքի առջև: Նրանք, հետևելով հրեաների օրինակին և օգտվելով առիթից, կա՛մ պետք է իրենց հերթին հռչակեին անկախ Պաղեստին արաբական պետությունը՝ ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի նախանշած սահմաններում, կա՛մ ընտրեին այլ տարբերակ:

Սակայն այստեղ կար մեկ նրբություն, որը հնարավոր չէ անտեսել: Պաղեստինցի արաբներն իրենց ընտրության մեջ ազատ չէին և մեծապես կախված էին արաբական մյուս պետություններից, առաջին հերթին Անդրհորդանանից, Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից, Սաուդյան Արաբիայից և արաբական մյուս երկրներից: Դա բացատրվում է, բացի այլ հանգամանքներից, նաև այն իրողությամբ, որ պաղեստինյան հարցի ծագման առաջին օրվանից այն չէր համարվում զուտ կամ բացառապես Պաղեստինի արաբների հարց, այլ համաարաբական խնդիր: Այդ հարցը պաղեստինցի արաբների մենաշնորհը չէր, քանի որ նա հավասարապես վերաբերում էր բոլոր արաբներին: Վերոնշյալ արաբական պետությունները, ինչպես նաև արաբական մյուս երկրները, միահամուռ էին այն հարցում, որ չպետք է ընդունել Պաղեստինի բաժանման վերաբերյալ ՄԱԿ–ի 1947 թ. բանաձևը, չճանաչել Իսրայել պետության գոյության իրավունքը, և Պաղեստինը պետք է պահպանել որպես արաբական մեկ ամբողջական տարածք, որտեղ կարող էր կազմավորվել միայն ու միայն արաբական պետություն:

Եվ պատահական չէ, որ հաղթեց այս տեսակետը. Կարծում ենք, որ դա արաբների կողմից թույլ տրված ամենալուրջ սխալն էր: Չպետք է մոռանալ, որ ՄԱԿ–ի 1947 թ. նոյեմբերի 181/II բանաձևի ընդունումից հետո պաղեստինյան հարցը փաստորեն տեղափոխվեց ազգերի ինքնորոշման իրավունքի տիրույթը, որից օգտվեցին հրեաները: Իսկ արաբները բաց թողեցին այդ հարմար պահը, և փոխանակ իրենք նույնպես օգտվեին ազգերի իրենքնորոշման իրավունքից ու հռչակեին իրենց պետությունը, կանգնեցին հարցի լուծման ռազմական տարբերակի վրա:

1948 թ. մայիսի 15–ին՝ Իսրայել պետության դե յուրե կազմավորման օրը, արաբական 5 պետություններ՝ Անդրհորդանանը, Լիբանանը, Սիրիան, Եգիպտոսը և Իրաքը, պատերազմական գործողություններ սկսեցին Իսրայելի դեմ: Իսրայելին պատերազմ հայտարարեցին նաև Սաուդյան Արաբիան և Եմենը: Այդպես սկսվեց արաբա–իսրայելական առաջին կամ պաղեստինյան պատերազմը: Սկզբնական շրջանում արաբական բանակներն ունեցան որոշ հաջողություններ, բայց հետո պատերազմի ընթացքը փոխվեց հօգուտ Իսրայելի. Այստեղ իր դերը խաղաց այն հանգամանքը, որ Իսրայելի բանակն ավելի լավ էր կազմակերպված և ավելի գրագետ էր գործում, քան արաբական բանակները: Վերջիններիս անգամ չհաջողվեց կոորդինացնել իրենց ռազմական ջանքերն ու գործողությունները: Պատերազմի ընթացքում ՄԱԿ–ի միջնորդությամբ երկու անգամ զինադադար հաստատվեց, որից փայլուն օգտվեց Իսրայելը՝ համալրելով իր ռազմական ուժերը: Պատերազմն իրականում ավարտվեց 1948 թ. վերջերին Իսրայելի հաղթանակով: 1949 թ փետրվարի 24–ին Իսրայելը զինադադար ստորագրեց Եգիպտոսի, մարտի 23–ին՝ Լիբանանի, ապրիլի 3–ին՝ Անդրհորդանանի և հուլիսի 20–ին՝ Սիրիայի հետ: Ինչ վերաբերում է Իրաքին, ապա նա ընդհանրապես հրաժարվեց հրադադարի պայմանագիր ստորագրել Իսրայելի հետ:

Պատերազմի ընթացքում պաղեստինցի արաբների կորուստները կազմեցին 16 հազ. սպանված և 14 հազ. վիրավոր, ևս 2500 զոհ տվեցին պատերազմին մասնակից արաբական մյուս երկրները: Հրեաների կորուստները կազմում էին 6 հազ. սպանված:

Պատերազմի արդյունքում նոր իրողություն հաստատվեց Պաղեստինում: Ամենամեծ կորուստ կրողը եղավ Պաղեստինը, այսինքն՝ Պաղեստինի արաբները:

Իսրայելը գրավեց Պաղեստինի արաբական պետության համար հատկացված տարածքներից և իրեն միացրեց Արևմտյան Գալիլեան, Արևմտյան Նեգեևը և Երուսաղեմի մի մասը՝ Նոր քաղաքը՝ լրացուցիչ 6,6 հազ. քառ. կմ տարածք: Դրանով Պաղեստինի տարածքի 74%–ն անցավ Իսրայելին:

Արևելյան Պաղեստինը և Երուսաղեմի մյուս մասը կամ Հին քաղաքը՝ ընդամենը 5,5 հազ. քառ. կմ, գրավեց և իրեն միացրեց Անդրհորդանանը: Իսկ Եգիպտոսին անցավ Ղազայի շրջանը՝ 378 քառ. կմ:

Այսպիսով՝ ՄԱԿ–ի 1947 թ. 181/II բանաձևով արաբական Պաղեստին պետության համար հատկացված ամբողջ տարածքը բաժանվեց Իսրայելի, Անդրհորդանանի և Եգիպտոսի միջև: Իսկ դա նշանակում էր, որ արաբական պետության համար տարածք չէր մնում, և ՄԱԿ–ի վերոնշյալ բանաձևն իրականացվեց մասամբ, միայն այն մասով, որը վերաբերում էր Իսրայելին: Իսրայելը պատերազմի արդյունքում կարողացավ պահպանել իր համար հատկացված տարածքը և այն ընդարձակեց մոտ 22%–ով:

Այսպիսով՝ Պաղեստինը ոչ միայն չօգտվեց ազգային ինքնորոշման իր իրավունքից, ինչպես Իսրայելը, և չստեղծեց իր անկախ պետությունը, այլև կորցրեց ամեն ինչ: Մոտ 750 հազար պաղեստինցի արաբներ վերածվեցին գաղթականների և հեռանալով Պաղեստինից, հարկադրյալ լքելով իրենց բնակատեղիներն ու տները՝ փախան իրենց երկրից ու ապաստան գտան Լիբանանում, Սիրիայում, Իրաքում, Անդրհորդանանում, Եգիպտոսում, Քուվեյթում և արաբական մյուս երկրներում, որտեղ հիմնեցին իրենց ճամբարները:

Պատահական չէր, արաբներն իրենք 1948–1949 թթ. պաղեստինյան պատերազմն ու նրա հետևանքներն անվանեցին **նաքբա**՝ աղետ:

V. 1967 թ. ՀՈՒՆԻՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՄԲՈՂՋ ՊԱՂԵՍՏԻՆԻ ԳՐԱՎՈՒՄԸ ԻՍՐԱՅԵԼԻ ԿՈՂՄԻՑ

1. Պաղեստինյան դիմադրական շարժման կառույցների ստեղծումը

1948–1949 թթ. պատերազմում արաբական պետությունների կրած պարտությունը և Պաղեստինի տարածքի երկու երրորդի անցումը Իսրայելի տիրապետության տակ ճնշող տպավորություն թողեց արաբների վրա և ծանր հետևանքներ ունեցավ նրանց համար: Խոսքը ոչ միայն պաղեստինցի արաբների, այլ ընդհանրապես արաբների մասին է. Արաբների մի մասի մոտ առաջացավ հուսահատություն, իսկ մի մասի մոտ էլ անտարբերություն ամեն ինչի հանդեպ: Պաղեստինյան ավանդական քաղաքական կազմակերպությունները կազմալուծվեցին, նրանց շատ ղեկավարներ հեռացան Պաղեստինից և հաստատվեցին արաբական ու արտասահմանյան տարբեր երկրներում: Նրանց զգալի

մասը լքեց քաղաքական դաշտը և մոռացության տվեց քաղաքականությամբ զբաղվելը: Հեռացածների մեջ էին նաև Պաղեստինի բարձրագույն արաբական կոմիտեն և նրա ղեկավար Հաջ Ամին ալ–Հուսեյնին: Նա հաստատվեց Կահիրեում, ապա տեղափոխվեց Ղազա և փորձեց շարունակել քաղաքական գործունեությունը, բայց ոչինչ չստացվեց: Նա և նրա նմանները խայտառակ էին արել իրենց և փակուղու մեջ մտցրել շարժումը, այդ պատճառով էլ ստիպված էին հեռանալ ասպարեզից:

Պարտությունը խորապես ազդեց նաև արաբական մի շարք երկրների քաղաքական ինստիտուտների և ղեկավարների ճակատագրի վրա: Դրա հետ են կապված պետական հեղաշրջումների շարքը Սիրիայում 1949 թ., Հորդանանի թագավոր Աբդալլահ I–ի սպանությունը Երուսաղեմում 1951 թ., հեղափոխությունը և Ֆարուկ I–ի տապալումը Եգիպտոսում 1952 թ. և այլ կարևոր իրադարձություններ:

Բայց քաղաքական ասպարեզում հայտնվեց մի խավ, որին վիճակված էր առաջիկա տարիներին ակտիվ դեր խաղալ Պաղեստինի ճակատագրում: Դա առաջին հերթին մտավորականությունն էր, ուսանող երիտասարդությունը և կյանք մտնող նոր սերունդը, որոնք նոր գաղափարների կրողներն էին: Այդ նոր ուժերը շեշտը դնում էին երկու գործոնի վրա: Առաջին՝ նրանք գտնում էին, որ Պաղեստինի ազատագրումը և հարցի լուծումն անբաժանելի են արաբական միասնությունից, և այդ խնդիրը հնարավոր է լուծել միայն արաբական միասնությունն ամրապնդելու ուղիով: Երկրորդ՝ այդ ուժերը, հանդես գալով հօգուտ արաբական միասնության և մեծ տեղ հատկացնելով այդ գործոնին, միաժամանակ գտնում էին, որ պաղեստինյան դիմադրական և ազգային–ազատագրական շարժումը չպետք է տարրալուծվի համընդհանուր արաբական ազատագրական շարժման մեջ, պաղեստինցիները պետք է պահպանեն իրենց ինքնությունը, և առաջին հերթին իրենք պետք է պայքարեն իրենց հայրենիքի ազատագրության համար: Կարելի է ասել, որ նման մոտեցումը որակական նոր մակարդակ էր և պայքարի նոր փուլ:

Այս նոր մթնոլորտը, քաղաքական տրամադրությունների փոփոխությունը և նոր մոտեցումները պարարտ հող ստեղծեցին քաղաքական ասպարեզում բուն պաղեստինյան կազմակերպությունների հայտնվելու համար՝ պատրաստ իրենց վրա վերցնելու Պաղեստինի ազատագրության նախաձեռնությունը և պայքարի պատասխանատվությունը:

Որակական բնույթի այդ նոր փոփոխությունները հաշվի առնելով՝ արաբական պետությունների ղեկավարների առաջին համաժողովը,

որը գումարվեց 1964 թ. հունվարին Կահիրեում, որոշում ընդունեց ամեն կերպ օժանդակել պաղեստինցիներին, որպեսզի «նրանք իրենց վրա վերցնեն իրենց ազգային գործի և Պաղեստինի ազատագրության պատասխանատվությունը»:

Հենց այդ նույն համաժողովը, որտեղ առաջին դերը պատկանում էր Եգիպտոսի պրեզիդենտ Գամալ Աբդել Նասերին, որոշեց հիմնել Պաղեստինի ազատագրության կազմակերպություն: Դրանով դրվեց պաղեստինյան դիմադրական կառույցների ստեղծման սկիզբը: 1964 թ. մայիսի 24–ին Երուսաղեմի հորդանանյան մասում գումարվեց Պաղեստինի ազգային կոնգրեսը, որն անմիջապես որոշում ընդունեց հրավիրել Պաղեստինի ազգային խորհրդի՝ ՊԱԽ–ի առաջին նստաշրջանը: Նստաշրջանը բավականին ներկայացուցչական էր՝ նրան մասնակցում էին պաղեստինցիներ Լիբանանից, Սիրիայից, Իրաքից, Հորդանանից, Ղազայից և արաբական էմիրություններից:

ՊԱԽ–ն ընդունեց երկու կարևոր որոշում: Առաջին՝ նա հիմնեց Պաղեստինի ազատագրության կազմակերպություն՝ ՊԱԿ: Նա համարվում էր պաղեստինյան դիմադրության շարժման գլխավոր քաղաքական, մարտական և գործնական կազմակերպությունը: Նա ունի իր գործադիր կոմիտեն և նախագահը.

Երկրորդ՝ ՊԱԽ–ը հաստատեց Պաղեստինյան ազգային խարտիան: Դա ծրագրային փաստաթուղթ էր, որը սահմանում էր ՊԱԿ–ի և ընդհանրապես պաղեստինցիների գլխավոր խնդիրները: ՊԱԿ–ը պարտավոր էր ղեկավարվել Ազգային խարտիայի հիմնադրույթներով:

Խարտիան գլխավոր խնդիրը համարում էր «Դեմոկրատական և աշխարհիկ պետության հիմնում՝ բրիտանական մանդատով ստեղծված Պաղեստինում»: Միաժամանակ Խարտիայում արձանագրված էր, որ «Պաղեստինը բրիտանական մանդատի սահմաններում հանդիսանում է պաղեստինյան արաբների հայրենիքը և անբաժանելի է», «Այն հրեաները, որոնք ապրել են Պաղեստինում մինչև սիոնիստական միգրացիան, համարվում են պաղեստինցիներ», իսկ «Պաղեստինի բաժանումը և Իսրայելի հիմնումն անօրինական են»: Խարտիան բրիտանական մանդատը և Բալֆուրի դեկլարացիան հայտարարում էր չեղյալ և մերժում բոլոր այն լուծումները, որոնք ներկայացվում էին Պաղեստինի ամբողջական ազատագրության փոխարեն: Միաժամանակ նա «սիոնիզմը, որը համագործակցում է միջազգային իմպերիալիզմի հետ, համարում է ռա-

սիստական, էքսպանսիոնիստական և գաղութային շարժում, իսկ Իսրայելը՝ սիոնիստական շարժման գործիք»:

Ինչպես տեսնում ենք, Խարտիան գտնում էր, որ պաղեստինյան արաբական պետությունը պետք է ստեղծվեր նախկին բրիտանական Պաղեստին մանդատի ամբողջ տարածքի վրա, որը դիտվում էր որպես պաղեստինյան արաբների հայրենիք, իսկ Իսրայելի ստեղծումը և գոյությունը՝ անօրինական:

Պաղեստինի ազգային կոնգրեսի առաջին նստաշրջանում հաստատվեց նաև ՊԱԿ–ի կանոնադրությունը: Կանոնադրության համաձայն՝ ՊԱԿ–ի բարձրագույն մարմինը համարվեց Ազգային խորհուրդը, որն ընտրվում է Պաղեստինի ամբողջ ժողովրդի կողմից: Ազգային խորհուրդն իր հերթին նշանակում է ՊԱԿ–ի գործադիր կոմիտեի նախագահին, որն օժտված է լայն լիազորություններով: Բավական է նշել, որ նա է ընտրում գործադիր կոմիտեի անդամներին և նրանց միջև աշխատանքի բաժանում կատարում: ՊԱԿ–ի առաջին նախագահ հաստատվեց Ահմադ Շուքեյրին:

ՊԱԿ–ի մեջ համախմբվել էին պաղեստինյան զանազան կազմակերպություններ, որոնց մի մասը ստեղծվել և գործում էր մինչև 1964 թ., այսինքն՝ մինչև նրա կազմավորումը, իսկ մի մասն էլ կազմավորվեց ՊԱԿ–ի ստեղծումից հետո և անդամակցեց նրան: ՊԱԿ–ում միավորված կազմակերպությունների մեջ առաջատար դերակատարում ուներ ՖԱԹՀ–ը, որը ստեղծվել էր 1959 թ Յասիր Արաֆաթի և նրա համախոհների կողմից: ՖԱԹՀ–ը ակրոնիմ–աբրեվատուրա է, որը պետք է կարդալ հակառակ կողմից՝ Հարաքաթ աթ–թահարուրի ալ–ֆիլաստինի, որը նշանակում է Պաղեստինի ազատագրության շարժում:

ՊԱԿ–ին միացած և ազդեցիկ կազմակերպություններից հատկապես պետք է նշել Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատը, որը գլխավորում է ժորժ Հաբաշը, Պաղեստինի ազատագրության դեմոկրատական ճակատը՝ Նայիֆ Հավաթմայի գլխավորությամբ, Ահմադ Ջաբրաիլի հիմնած Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատ — Գլխավոր հրամանատարությունը, աս–Սաիկան և այլ կազմակերպություններ:

Պաղեստինյան դիմադրության շարժման կարևոր կառույցներից էր Պաղեստինի ազատագրության բանակը, որը հիմնվեց 1964 թ.՝ որպես ՊԱԿ–ի ռազմական կազմակերպություն: Բանակի զինվորների թիվը 1970–ական թվականների սկզբներին հասնում էր 8–10 հազարի: Նա

ուներ տանկային և հրետանային զորամասեր, որոնք տեղակայված էին արաբական տարբեր երկրներում: Այսպես, օրինակ՝ տանկային զորամասերը գտնվում էին Սիրիայում, իսկ հրետանային զորամասերը սկզբում տեղակայված էին Հորդանանում, իսկ հետո տեղափոխվեցին Լիբանան:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ կյանքը և այն նոր խնդիրները, որոնք կանգնած էին Պաղեստինի դիմադրության շարժմամն՝ ՊԴՇ–ի առջև, ստիպեցին պաղեստինցիներին ստեղծել իրենց տարբեր քաղաքական, ռազմական, պառլամենտական, ֆինանսական, տեղեկատվական և այլ կառույցները, որի շնորհիվ նրանց պայքարը բարձրացավ նոր մակարդակի և ընդունեց ավելի կազմակերպված բնույթ:

ՊԱԿ–ի գործադիր կոմիտեի առաջին նախագահ, ինչպես նշվեց, ընտրվեց Ահմադ Շուքեյրին (1908–1980), որն այդ վերին աստիճանի պատասխանատու պաշտոնը զբաղեցրեց մինչև 1967 թ. դեկտեմբեր ամիսը: Նա մասնագիտությամբ իրավաբան էր, աշխատել էր Արաբական պետությունների լիգայում, ծառայել Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարարությունում, ՄԱԿ–ում և այլն: Սակայն Շուքեյրին չարդարացրեց իր վրա դրված հույսերը: Նրա գործունեության մեջ և ռադիոելույթներում, որոնց նա չափազանց մեծ նշանակություն էր տալիս, մեծ տեղ էին գրավում ամբոխավարությունը, չկշռադատված հայտարարությունները, անհիմն սպառնալիքները և պոռոտախոսությունը, որի քվինք էսենցիան հանդիսացավ «Բոլոր հրեաներին ծովը թափելու» նրա հայտարարությունը: Այդ հայտարարությունները հակառակ ազդեցությունն էին ունենում և փայլուն կերպով օգտագործվում Իսրայելի կողմից:

2. 1967 թ. հունիսյան վեցօրյա պատերազմը, Պաղեստինի ամբողջ տարածքի գրավումը Իսրայելի կողմից և դրա հետևանքները

1948–1949 թթ. պատերազմից հետո, ինչպես նշել ենք, Իսրայելի և արաբական չորս պետությունների՝ Եգիպտոսի, Անդրհորդանանի, Լիբանանի և Սիրիայի միջև ստորագրվեց զինադադարի պայմանագիր, որը, բնականաբար, չէր կարող համարվել հաշտության պայմանագիր: Բաց էին մնում սահմանների և պատերազմական վիճակի ավարտման իրավական ձևակերպման հարցերը: Այդ պատճառով էլ նրան հաջորդած ժամանակահատվածը բնավ չի կարելի համարել խաղաղության շրջան:

Ձինված բախումները և հարձակումներն այդ ժամանակաշրջանը բնորոշող գլխավոր գծերն էին: Հարաբերություններն արաբների և Իսրայելի միջև ավելի սրվեցին, երբ Իսրայելը 1956 թ. Անգլիայի և Ֆրանսիայի հետ մասնակցեց Եգիպտոսի դեմ ուղղված եռյակ ագրեսիային:

1967 թ սկզբներին ակնհայտ դարձավ, որ հասունանում է նոր ռազմական կոնֆլիկտ Իսրայելի և արաբական երկրների միջև, առաջին հերթին Եգիպտոսի, Սիրիայի և Հորդանանի հետ: Հունիսի 5–ի վաղ առավոտյան Իսրայելը ցամաքից և օդից հարձակում սկսեց Եգիպտոսի, այնուհետև Սիրիայի, ապա նաև Հորդանանի վրա: Պատերազմը տևեց վեց օր և ավարտվեց Իսրայելի ռազմական հաղթանակով:

Պատերազմն ու նրա ծանր հետևանքներն անմիջական ազդեցություն ունեցան Պաղեստինի հարցի վրա: Իսրայելական զորքերը գրավեցին Ղազայի շրջանը, որը գտնվում էր Եգիպտոսի կառավարման ներքո, Արևելյան Երուսաղեմը, Բեթղեհեմը և պաղեստինյան այն բոլոր տարածքները, որոնք 1948 թ. պատերազմից հետո միացվել էին Անդրհորդանանին և հայտնի էին որպես Հորդանանի արևմտյան ափ: Իսրայելն իր վերահսկողությունը հաստատեց ամբողջ Պաղեստինի վրա՝ ներառյալ այն տարածքները, որոնք ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի 1947 թ. 181/II բանաձևով հատկացվել էին արաբներին Պաղեստին պետություն հիմնելու համար:

Նշենք նաև, որ իսրայելական զորքերը Եգիպտոսից գրավեցին նաև Սինայի թերակղզին, իսկ Սիրիայից՝ Գոլանի բարձունքները: Այդ տարածքները, որոնք անցան Իսրայելի իրավասության տակ, չորս անգամ գերազանցում էին 1949 թ. զինադադարով հաստատված Իսրայելի սահմանները: Իսրայելի կողմից գրաված տարածքներում բնակվում էր մոտ 1,5 մլն արաբ:

Այսպիսով՝ Պաղեստինի արաբները կորցրեցին ամեն ինչ:

Երկար քննարկումներից հետո ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը 1967 թ. նոյեմբերի 22–ին ընդունեց 242 բանաձևը, որը կարող էր բանալի հանդիսանալ պաղեստինյան հարցի արդար կարգավորման համար: Նա պարունակում էր հինգ կարևոր կետեր, որոնց իրագործումը կարող էր պաղեստինյան հարցը դուրս բերել փակուղուց: Բանաձևը նախատեսում էր իսրայելական զինված ուժերի դուրսբերում այն բոլոր տարածքներից, որոնք նրանք գրավել էին հունիսյան պատերազմի ընթացքում, տարածաշրջանի բոլոր երկրների ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության հար-

գում, ազատ նավարկություն միջազգային ջրային ուղիներով, փախստականների հարցի արդար լուծում և այլն:

Բանաձևը պահանջում էր վերականգնել մինչև 1967 թ. հունիսի 5–ը գոյություն ունեցած սահմանները: Եվ հետագա տասնամյակներին դա դարձավ արաբների, այդ թվում և պաղեստինցի արաբների, գլխավոր պահանջը:

Այս հանգամանքը կարևոր է շեշտել, քանի որ Պաղեստինում արաբական պետություն հիմնելու հարցն այժմ անմիջականորեն կապվում է 1967 թ. հունիսին արաբական գրավյալ տարածքները Իսրայելի կողմից արաբներին վերադարձնելու հետ: Եվ այս կապակցությամբ անհրաժեշտ ենք գտնում իսրայելական ագրեսիվ գործողությունները դատապարտելու հետ միասին նշել այն ճակատագրական սխալը, որ թույլ տվեցին արաբական երկրները և առաջին հերթին Հորդանանն ու Եգիպտոսը:

Այդ տարածքները, որոնք պաղեստինցի արաբները այսօր պահանջում են, և որոնց վրա պետք է հիմնվի նրանց պետությունը՝ Հորդանանի Արևմտյան ափը, Ղազայի շրջանը և Երուսաղեմի մի մասը, 1948 թվականից մինչև 1967 թվականը գտնվում էին արաբական երկրների՝ Հորդանանի և Եգիպտոսի տնօրինության տակ, և ոչ ոք չէր խանգարում նրանց, հենվելով ՄԱԿ–ի 1947 թ. 181/II բանաձևի վրա, հռչակել արաբական Պաղեստին պետությունը, ինչպես դա արեցին հրեաները 1948 թ. մայիսին իրենց հատկացված տարածքում: Բայց արաբական պետությունները, ղեկավարվելով իրենց եսասիրական նեղ քաղաքական շահերով, որոնց զոհաբերվեցին պաղեստինցիների ազգային շահերը, չգնացին այդ ուղիով և այդ հիանալի հնարավորությունը բաց թողեցին: Ասվածն առաջին հերթին վերաբերում է Հորդանանին, որի տիրապետության տակ էր գտնվում պաղեստինյան տարածքների հիմնական մասը, որը 1948–1949 թթ. պատերազմի արդյունքում բռնակցվել էր Անդրհորդանանին: Դրանում, կրկնում ենք, շատ մեծ է Անդրհորդանանի մեղքը, բայց պատասխանատվության իրենց բաժինն ունեն նաև արաբական մյուս պետությունները:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է մի կարևոր հավելում ևս: Պաղեստինը բաժանելու վերաբերյալ ՄԱԿ–ի 1947 թ. որոշման համաձայն՝ Պաղեստինի արաբական պետություն հիմնելու համար հատկացվել էր 11,1 հազ. քառ. կմ: 1948 թ. պատերազմի ընթացքում դրա համարյա կեսը գրավեց Իսրայելը, իսկ մյուս կեսը՝ Հորդանանը: Այժմ, երբ խոսք է գնում 1967 թ. մինչհունիսյան սահմաններին Իսրայելի վերադառնալու

մասին, դա նշանակում է, որ նրա կողմից 1948 թ. գրաված տարածքը՝ մոտ 6,6 հազ. քառ. կմ, մնում է Իսրայելին, և 1947 թ. հաստատված 14,1 հազ. քառ. կմ–ի փոխարեն նրա տարածքն անցնում է 20 հազ. քառ. կմ–ից: Իսկ եթե առաջիկայում հիմնվի արաբական Պաղեստին պետությունը, ապա նա կունենա ոչ թե 11,1 հազ քառ. կմ, ինչպես նախատեսված էր, այլ ընդամենը 5 հազ. քառ. կմ:

Սա ավելի է ակնհայտ դարձնում արաբական երկրների կողմից թույլ տրված այն կոպիտ սխալների և վրիպումների գինը, որոնց համար պետք է վճարի և վճարում է պաղեստինյան արաբ ժողովուրդը:

Հունիսյան պատերազմում արաբների կրած պարտությունը և տարածքային կորուստները ցնցեցին ամբողջ արաբական աշխարհը: Իսկ Պաղեստինի արաբ ժողովրդի համար այն վերածվեց իսկական ողբերգության: Նա, իրոք, ամբողջությամբ վերածվեց «ժողովրդի՝ առանց հողի», որը սիոնիստների երազանքն էր դեռևս այդ շարժման արշալույսին: Պաղեստինցի արաբները փախստականի կարգավիճակով իրենց գոյությունը պահպանում են արաբական տարբեր երկրներում՝ չլինելով նրանց քաղաքացիները[15]:

---

15 1982 թ փետրվարին մենք երկարատև զրույց ունեցանք ՊԱԿ–ի նախագահ Յասիր Արաֆաթի հետ, որի ժամանակ շոշափվեցին նաև հայ–պաղեստինյան հարաբերությունների մի շարք կողմեր: Նա շատ բարձր կարծիքի էր հայերի մասին և գտնում էր, որ հայերը շատ զարգացած, ինտելեկտուալ և բազմահմուտ ժողովուրդ են և շատերի, այդ թվում և արաբների համար օրինակ են ծառայում: Այդ ասելով նա ընդգծեց, «Պաղեստինցիներին համարում են արաբների հայեր, քանի որ պաղեստինցի արաբները նույնպես զարգացած են, նրանց մոտ բարձր է կրթություն, այդ թվում և բարձրագույն կրթություն ունեցողների թիվը, նրանք հմուտ են և առնվազն տիրապետում են 5–6 մասնագիտությունների, ինչպես հայերը.— Այդ ասելուց հետո, պաղեստինյան առաջնորդն արեց հետևյալ անսպասելի դիտողությունը.— ընդունելով հայերի խելոք և զարգացած լինելը՝ մենք դրա հետ միասին խուսափեցինք այն ճակատագրական սխալից, որ թույլ տվեցին հայերը. Ցեղասպանությունից փրկված և տարբեր երկրներում հաստատված հայերը դարձան իրենց հյուրընկալ երկրների քաղաքացիներ, ձեռք բերեցին անշարժ գույք և իրենց բնակավայր երկրների իստաբլիշմենթի մաս կազմեցին Դրա հետևանքը եղավ այն, որ հայերը մոռացության տվեցին իրենց երկիրը՝ Արևմտյան Հայաստանը ետ գրավելու և իրենց երկիր վերադառնալու խնդիրը: Մենք, հաշվի առնելով հայերի թույլ տված այդ սխալը, արգելեցինք պաղեստինցի փախստականներին դառնալ իրենց ժամանակավոր բնակավայր երկրների քաղաքացիներ և այնտեղ անշարժ գույք ձեռք բերել՝ Այդ պատճառով էլ պաղեստինցիների դիմադրական շարժումը երբեք չի թուլանում»: Ձեմ թաքցնում, ես ուղղակի ապշած էի նման վերլուծությունից, որին առաջին անգամ էի հանդիպում: Կարելի է համաձայնվել կամ չհամաձայնվել նման մոտեցման հետ, բայց որ դա արժանի է լուրջ ուշադրության՝ կասկածից վեր է

Պատերազմի արդյունքները համապատասխան փոփոխություններ առաջ բերեցին պաղեստինցիների քաղաքականության և պաղեստինյան հարցի լուծման մոտեցման մեջ:

VI. ՊԱԿ–Ը ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԻԱԿ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ: ՊԱՂԵՍՏԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

1. Յասիր Արաֆաթը պաղեստինյան դիմադրության շարժման ղեկավար

1967 թ. հունիսյան պատերազմից հետո ավելի ակնհայտ դարձավ Շուքեյրիի ընտրած քաղաքականության անհեռանկարային լինելը, և այդ նույն թվականի դեկտեմբերին նա ստիպված էր հեռանալ ՊԱԿ–ի ղեկավարի պաշտոնից: ՊԱԿ–ի գործադիր կոմիտեի նախագահ նշանակվեց Յահյա Համուդը, որը, սակայն, երկար չմնաց այդ պաշտոնում:

1969 թ. փետրվարին Պաղեստինի ազգային խորհրդի հինգերորդ նստաշրջանը ՊԱԿ–ի գործադիր կոմիտեի նախագահ ընտրեց ՖԱԹՀ–ի նախագահ Յասիր Արաֆաթին, որն այդ պաշտոնում մնաց մինչև իր մահը՝ 2004 թ. նոյեմբերի 11–ը:

Յասիր Արաֆաթը (1929–2004)՝ Մահմուդ Աբդուլ Ռահման Աբդուլ Ռաուֆ Արաֆաթ ալ–Քուդվան, առանձնահատուկ տեղ է գրավում պաղեստինցի արաբների ազատագրական պայքարի մեջ: Նրա գալով փոխվեց իրադրությունը ՊԱԿ–ում և ընդհանրապես պաղեստինյան դիմադրության շարժման մեջ: Նա ցուցաբերեց կազմակերպչական մեծ ունակություններ և մարդկանց իր հետևից տանելու մեծ տաղանդ: Նրա խոսքն ազդեցիկ էր, գործողությունները՝ լավ ծրագրավորված և մշակված: Նա շատ շուտով դարձավ պաղեստինյան ամենահեղինակավոր առաջնորդը, XX դարի 70–90–ական թվականների և XXI դարասկզբի արաբական աշխարհի ամենաճանաչված ղեկավարներից մեկը: Նա ստացավ ծանր ժառանգություն և իր գործունեությունը պետք է ծավալեր մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ հողը պաղեստինցիների ոտքի տակից արդեն գնացել էր, որի պատճառով պաղեստինյան կառույցները հաստատվել էին և գործում էին բուն Պաղեստինի տարածքներից

դուրս՝ մի կողմից, և մեծացել էր պաղեստինցիների կախվածությունը արաբական տարբեր երկրներից ու ուժերից, որոնք իրենք միասնական չէին՝ մյուս կողմից: Այդպիսի պայմաններում Յասիր Արաֆաթը կամ Աբու Ամարը, ինչպես ինքը սիրում էր, որ իրեն կոչեին, ցուցաբերեց ոչ միայն պայքարի անկոտրում կամք, այլև խուսանավելու և կոմպրոմիսների դիմելու մեծ հմտություն: Նրա օրոք ՊԱԿ–ը համաարաբական կառույցներում մասնակցում էր հավասարի իրավունքով՝ մշտապես ունենալով իր սեփական անկախ ձայնը: Եվ եթե այդ շրջանում ՊԱԿ–ն ունեցավ մեծ նվաճումներ, ապա դրա համար նա և Պաղեստինի արաբ ժողովուրդը մեծապես պարտական են Յասիր Արաֆաթին:

Պարտությունը արաբա–իսրայելական երրորդ պատերազմում, տարածքների կորուստը և պաղեստինցիների վերածվելը գաղթականության նպաստեցին արմատականության ուժեղացմանը Պաղեստինի դիմադրության շարժման մեջ և ռադիկալների դիրքերի ամրապնդմանը ՊԱԿ–ի շարքերում: Դա իր համապատասխան արտացոլումը գտավ Պաղեստինի ազգային խարտիայում: 1968 թ. հուլիսին Կահիրեում կայացավ Պաղեստինի ազգային չորրորդ կոնգրեսը, որը Պաղեստինի ազատագրության հարցում սկզբունքային բնույթի փոփոխություն մտցրեց իր ծարգրում: Կոնգրեսի կողմից խարտիայի 9–րդ հոդվածը ձևակերպվեց հետևյալ կերպ. «Զինված պայքարը Պաղեստինի ազատագրության միակ ուղին է»:

Շատ չանցած Յասիր Արաֆաթը նշանակվեց Պաղեստինի ազատագրության բանակի հրամանատար: Աստիճանաբար նա իր ձեռքում էր կենտրոնացնում քաղաքական և ռազմական ամբողջ իշխանությունը:

Այդ նոր իրողությունները և պաղեստինցիներին համակած զայրույթն ու հուսահատությունը պաղեստինյան որոշ ուժերի նետեցին ծայրահեղականության և ահաբեկչության դիրքերը, որոնք նրանց կողմից դիտվում էին անհրաժեշտ քայլեր պաղեստինյան կոնֆլիկտի արդարացի լուծման և կորցրած հայրենիքը վերադարձնելու ճանապարհին:

Յասիր Արաֆաթի ՊԱԿ–ի նախագահ դառնալուն հաջորդած տարիները նրա և ՊԴՇ–ի համար եղան փորձության ամենածանր տարիները: 1970 թ. սեպտեմբերին, որը հայտնի է «Սև սեպտեմբեր» անունով, իսկական պատերազմական գործողություններ սկսվեցին Հորդանանում հաստատված պաղեստինյան ռազմական ուժերի և Հորդանանի կանոնավոր բանակի միջև, որի արդյունքում հորդանանյան բանակին հաջողվեց Հորդանանից դուրս մղել պաղեստինյան զինված ուժերին և

պաղեստինյան բոլոր կառույցները: Նրանք հաստատվեցին Լիբանանում, բայց ներգրավվեցին 1975 թ. սկսված քաղաքացիական պատերազմում և 1982 թ. Լիբանան իսրայելական ներխուժումից հետո հարկադրված էին հեռանալ նաև այդ երկրից[16]: ՊԱԿ–ը, ՊԱԽ–ը և պաղեստինյան մյուս մարմիններն ու ամբողջ ղեկավարությունը 1982 թ. օգոստոսին հաստատվեցին Թունիսում:

2. ՊԱԿ–ի ճանաչումը Պաղեստինի միակ օրինական ներկայացուցիչ

Չնայած այդ և այլ ծանր հարվածներին՝ ՊԱԿ–ը քանի գնում, այնքան ավելի կազմակերպված և համախմբված ուժ էր դառնում: Պայքարի բովում նա ավելի էր թրծվում և ավելի գրագետ գործում իր համար ստեղծված ոչ սովորական պայմաններում: Նա կարողանում էր շատ հաճախ արժանի հակահարված հասցնել իսրայելական ուժերին և ապացուցել, որ կազմակերպված ուժ է, որին հավատում և վստահում է պաղեստինցի արաբների ճնշող մեծամասնությունը:

Այս փուլում ՊԱԿ–ի և պաղեստինյան դիմադրության շարժման գլխավոր նպատակը պաղեստինյան գրաված տարածքների ազատագրումն էր: «Գրաված տարածքներ» հասկացությունն աստիճանաբար բյուրեղացավ, և, ի վերջո, դրա տակ հասկացվում էին մանդատային Պաղեստինի հետևյալ տարածքները, որոնք գրավել էր Իսրայելը 1967 թ. հունիսյան պատերազմի ժամանակ՝ Արևմտյան ափը, Արևելյան Երուսաղեմը և Ղազայի շրջանը:

1974 թ. հունիսին Պաղեստինի ազգային խորհուրդը հավանություն տվեց գրաված տարածքներում պաղեստինյան պետություն ստեղծելու գաղափարին՝ այն համարելով որպես անցման մի փուլ ամբողջ մանդատային Պաղեստինն ազատագրելու ճանապարհին: Դա ավելի էր կոնկրետացնում տվյալ ժամանակահատվածում պայքարի նպատակները և նրանց իրագործման մեթոդները:

1974 թ. տեղի ունեցավ պաղեստինյան շարժման պատմության մեջ թերևս ամենակարևոր իրադարձություններից մեկը: 1974 թ. հոկտեմբերի 20–ին Մարոկկոյի մայրաքաղաք Ռաբաթում գումարված

16 Այդ մասին ավելի մանրամասն տես սույն հատորի «Հորդանան» և նախորդ՝ III հատորի «Լիբանան» գլուխները:

արաբական պետությունների ղեկավարների հերթական համաժողովը որոշեց ՊԱԿ–ը ճանաչել Պաղեստինի արաբ ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչը: Միայն նրան էր իրավունք վերապահվում հանդես գալ և խոսել Պաղեստինի արաբ ժողովրդի անունից և նրան ներկայացնել բոլոր արաբական ու միջազգային կազմակերպություններում ու ֆորումներում: Անցյալի գիրկն էր անցնում այն շրջանը, երբ այլ արաբական երկրներ կամ կազմակերպություններ փորձում էին ներկայացնել Պաղեստինի արաբ ժողովրդի շահերը, հանդես գալ նրա անունից և պաղեստինյան հարցի լուծումներ գտնել ու համապատասխան առաջարկություններ անել: Դա հատկապես վերաբերում էր Հորդանանին, որը դեռևս 1950 թ. այն, ինչ մնացել էր Արևմտյան ափից, միացրեց Արևելյան ափին, այսինքն՝ Անդրհորդանանին. Դա տեղի ունեցավ Աբդալլահ I–ի օրոք. Նրա թոռը՝ Հուսեյն թագավորը, երկար ժամանակ շարունակում էր իր պապի այդ նույն քաղաքականությունը: Նա 1972 թ. նույնիսկ հանդես եկավ Միացյալ արաբական թագավորության ստեղծման ծրագրով՝ Հորդանանի Արևմտյան և Արևելյան ափերը միավորելու հիմքի վրա. Սակայն պաղեստինյան արաբները մերժեցին այդ առաջարկությունը: Դրա դեմ դուրս եկան նաև արաբական մի շարք պետություններ, և Հուսեյն թագավորը ստիպված էր հրաժարվել իր նախածեռնությունից:

Ռաբաթի որոշումից հետո Հուսեյնը հայտնվեց բավականին ծանր դրության մեջ՝ ընդունե՞լ, թե՞ ոչ այդ որոշումը: Այդուհանդերձ, նա իր մեջ ուժ գտավ և հետագայում ՊԱԿ–ը ճանաչեց Պաղեստինի միակ օրինական ներկայացուցիչ: Դա նշանակում էր. որ Հորդանանը այլևս չէր կարող հավակնել Պաղեստինի արաբական մասին և ներկայացնել նրա ժողովրդին:

Ռաբաթի որոշմանը հաջորդեց ՄԱԿ–ի որոշումը, որը նույնպես ՊԱԿ–ը ճանաչում էր Պաղեստինի միակ օրինական ներկայացուցիչ: Յասիր Արաֆաթը մեկնեց Նյու Յորք և 1974 թ. նոյեմբերի 13–ին հանդես եկավ ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի ամբիոնից՝ ներկայացնելով իր ժողովրդի ցավերն ու պահանջները: ՄԱԿ–ում ՊԱԿ–ն ունեցավ իր ներկայացուցիչը՝ դիտորդի կարգավիճակով. Շատ չանցած սկսվեց ՊԱԿ–ի միջազգային ճանաչման գործընթացը: Մոտ 100 պետություն ՊԱԿ–ը ճանաչեց որպես Պաղեստինի միակ օրինական ներկայացուցիչ:

Պաղեստինյան դիմադրության շարժումը՝ ՊԴՇ–ն, ՊԱԿ–ի գլխավորությամբ մտնում էր զարգացման նոր փուլ:

3. Առաջին ինթիֆադան և Պաղեստինի Ազգային խորհրդի կողմից Պաղեստին պետության հռչակումը (1980–ական թվականներ)

1980–ական թվականներն աչքի են ընկնում արտակարգ ակտիվությամբ մերձավորարևելյան կոնֆլիկտի և նրա միջուկը հանդիսացող պաղեստինյան խնդրի լուծման հարցում:

Արաբա–իսրայելական հինգ պատերազմները և չդադարող ռազմական բախումները Իսրայելի և արաբական երկրների ու ՊԱԿ–ի միջև արտակարգ վտանգավոր իրադրություն էին ստեղծել, որը սպառնում էր միջազգային անվտանգությանը և խաղաղությանը: Արաբա–իսրայելական յուրաքանչյուր պատերազմի ժամանակ մազից էր կախված ԱՄՆ–ի և Խորհրդային Միության ու նրանց դաշնակիցների ուղղակի ներգրավումը պատերազմի մեջ: Բարեբախտաբար, դա տեղի չունեցավ, քանի որ ամերիկյան և խորհրդային ղեկավարությանը հաջողվում էր զսպվածություն ցուցաբերել և խուսափել անմիջական ռազմական բախումից, որը կարող էր կործանարար լինել ամբողջ աշխարհի համար:

Բայց այդպես երկար շարունակվել չէր կարող: Դա գիտակցում էին արաբական երկրներում, ԱՄՆ–ում և Խորհրդային Միությունում, ինչը մղում էր նրանց ակտիվացնել իրենց գործողությունները մերձավորարևելյան և պաղեստինյան կոնֆլիկտի խաղաղ կարգավորման ուղղությամբ: Հենց այդ շրջանակներում ծնունդ առավ «Հող՝ խաղաղության դիմաց» լոզունգը, որը դրական արձագանք գտավ միջազգային հանրության կողմից: Դրա էությունը կայանում էր հետևյալում. ա. Իսրայելը պետք է հեռանա բոլոր գրաված տարածքներից՝ պաղեստինյան Արևմտյան ափից, Ղազայի շրջանից և Արևելյան Երուսաղեմից, ինչպես նաև եգիպտական Սինայից, Սիրիային պատկանող Գոլանի բարձունքներից և Հարավային Լիբանանից, բ. արաբական երկրները պետք է ճանաչեն Իսրայել պետությունը, և գ. նրանց միջև պետք է հաստատվեն նորմալ հարաբերություններ՝ հիմնված խաղաղության և ծագող կոնֆլիկտները խաղաղ ճանապարհով լուծելու սկզբունքի վրա:

Եթե անաչառ լինենք, ապա պետք է ընդունել, որ դա բավարար հիմք էր հանդիսանում գոյություն ունեցող կոնֆլիկտները կարգավորելու համար: Բայց ամբողջ բարդությունը կայանում էր նրանում, որ արաբական որոշ պետություններ, մասնավորապես Սիրիան, Իրաքը, Լիբիան և այլն, լսել անգամ չէին ուզում Իսրայել պետության գոյության մասին և

գտնում էին, որ նրա համար տեղ չկա այդ տարածքում: Ինչպես նշել ենք, ՊԱԿ–ը նույնպես Իսրայելի գոյությունը համարում էր անօրինական:

Իսրայելն իր հերթին հստակ կամք ու պատրաստակամություն չէր ցուցաբերում բոլոր գրավյալ տարածքներից հեռանալու և Պաղեստինի արաբական պետություն ստեղծելու հարցերում: Ընդհակառակը, նա շարունակում էր լայն թափով հրեական բնակավայրեր կառուցել պաղեստինյան օկուպացված տարածքներում, որը նշանակում էր, որ նա դեռևս կանգնած էր Պաղեստինն ամբողջությամբ յուրացնելու դիրքերում:

Այդուհանդերձ, 1980–ականների սկզբներին քննարկման սեղանի վրա դրվեցին մի քանի նոր առաջարկություններ:

Առաջինը Սաուդյան Արաբիայի առաջարկությունն էր 1981 թ. օգոստոսին, որը ստացավ «Ֆահդի պլան» անվանումը: Ֆահդ իբն Աբդ ալ–Ազիզը սաուդյան թագաժառանգն էր, որը հետագայում նստեց արաբական այդ ազդեցիկ երկրի գահին: Ութ կետերից բաղկացած նրա պլանով նախատեսվում էր իսրայելական բոլոր զորքերի դուրսբերում արաբական բոլոր տարածքներից, հրեական բնակավայրերի վերացում, պաղեստինյան արաբ ժողովրդի՝ հայրենիք վերադառնալու իրավունք. Արևմտյան ափը և Ղազայի շրջանը դնել ՊԱԿ–ի վերահսկողության տակ և սահմանել անցման շրջան, ստեղծել անկախ արաբական պաղեստինյան պետություն՝ Երուսաղեմ մայրաքաղաքով, հաստատել տարածաշրջանի պետությունների խաղաղ ապրելու իրավունքը: Այս վերջին կետը փաստորեն Իսրայել պետության գոյության իրավունքի ճանաչում էր նշանակում:

Ֆահդի պլանի դեմ կտրուկ հանդես եկավ Սիրիան, որի համար անընդունելի էր ճանաչել Իսրայելի գոյության իրավունքը: Ֆեսում 1981 թ. նոյեմբերին կայացած արաբական երկրների ղեկավարների կոնֆերանսի առաջին փուլը Սիրիայի ճնշման տակ անընդունելի համարեց Ֆահդի պլանը:

1982 թ. սեպտեմբերի 1–ին իր ծրագիրը ներկայացրեց ԱՄՆ–ի պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանը, որի հիմքում դրված էր Իսրայելի անվտանգության շահերի ներդաշնակումը պաղեստինցիների օրինական իրավունքների հետ: Ռեյգանի պլանի համաձայն՝ «պետք է ճանաչել Արևմտյան ափում և Ղազայի շրջանում ապրող պաղեստինցիների ինքնակառավարումը՝ Հորդանանի հետ ասոցիացիայի շրջանակներում»: Իհարկե, նախատեսվում էր Իսրայելի անվտանգ գոյություն, որը պետք է ճանաչեին արաբական պետությունները:

Ռեյգանի պլանը մերժվեց ՊԱԿ–ի և արաբական մյուս երկրների կողմից, որովհետև նա չէր ընդունում առանձին անկախ արաբական պետության ստեղծումը Պաղեստինում, այլ այն կապում էր Հորդանանի հետ, իսկ ավելի կոնկրետ՝ կցում էր Հորդանանին:

1982 թ. տեղի ունեցավ արաբական պետությունների ղեկավարների հանդիպման երկրորդ փուլը Ֆեսում: Այս անգամ նրանք որոշ լրացումներով հավանություն տվեցին Ֆահդի պլանին, որն ավելի հավասարակշռված էր: Բայց նա անընդունելի եղավ Իսրայելի, ինչպես նաև Ռեյգանի համար: Ռեյգանը չէր ցանկանում ճանաչել ՊԱԿ–ի դերակատարումը և չէր ընդունում Պաղեստինի արաբական անկախ պետության ստեղծումը:

Վերջապես՝ 1982 թ. սեպտեմբերի 15–ին հայտնվեց խորհրդային առաջարկը՝ այսպես կոչված «Բրեժնևի պլանը»: Չի կարելի ասել, թե նա շատ էր տարբերվում Ֆեսում հաստատված Ֆահդի պլանից, քանի որ նրա հինգ կետերը հիմնականում կրկնում էին նրա դրույթները: Այստեղ դարձյալ խոսվում էր ուրիշի տարածքները զավթելու անթույլատրելիության, արաբական անխտիր բոլոր երկրներից իսրայելական զորքերի դուրսբերման անհրաժեշտության, տարածաշրջանում բոլոր պետությունների անվտանգ գոյության իրավունքի մասին և այլն:

Բրեժնևյան ուշացած պլանը նույնպես հավանություն չստացավ և արժանացավ մյուս առաջարկությունների ճակատագրին:

Այսպիսով՝ հրապարակի վրա մնաց միայն մեկ իրավական փաստաթուղթ՝ ՄԱԿ–ի 181/II բանաձևը, որի վերաբերյալ կար մեծ տերությունների կոնսենսուսը:

Ահա այդպիսի իրադրության պայմաններում սկիզբ առավ պաղեստինցի արաբների պայքարի մի նոր տեսակ, որը պաղեստինցիների ազատագրական պայքարի պատմության մեջ մտել է **ինթիֆադա** անունով:

Ինթիֆադա արաբերեն նշանակում է **ցնցում, դողերոցք:** Սակայն լայն քաղաքական իմաստով դա նշանակում է ապստամբություն: Նա սկսվեց 1987 թ. դեկտեմբերի 9–ին Ղազայի շրջանի պաղեստինյան գաղթականների Ջաբալիյա ճամբարում, երբ հազարավոր պաղեստինցիներ ցույցի դուրս եկան բողոքելու չորս պաղեստինցիների սպանության դեմ, որ իրագործել էին իսրայելցիները: Մի քանի օրվա ընթացքում այդ շարժումը տարածվեց ամբողջ Ղազայի շրջանում, իսկ ապա նաև Արևմտյան ափում և Արևելյան Երուսաղեմում: Ինթիֆադայի հիմնական մասնակիցները երիտասարդներն էին, որոնց գլխավոր զենքը քարերն

էին: Այդ յուրատեսակ ապստամբության պաշտպանությամբ հանդես եկավ ՊԱԿ–ը, որը նրան ուղղություն տալու համար 1988 թ. հունվարին ստեղծեց Ապստամբության միացյալ ազգային ղեկավարություն: Ինթիֆադային հավակնում էր ուղղություն տալ նաև Մուսուլման եղբայրների իսլամական կենտրոնը, որն այդ նպատակի համար 1987 թ. դեկտեմբերի 27–ին գրավյալ տարածքներում հիմնել էր Համաս կազմակերպությունը: **Համաս** նշանակում է **եռանդ, ջանք, ճիգ** և հանդիսանում է հարաքաթ ալ–Մուկավամաթ ալ–Իսլամի **ակրոնիմը**, որը թարգմանվում է Իսլամական դիմադրության (ապստամբության) շարժում: Նրա հիմնադիրներն էին շեյխ Ահմադ Յասինը և Մուսուլման եղբայրներ կազմակերպության վեց այլ ղեկավարներ: Նրա ներածակա նպատակն էր ազատագրել Արևմտյան ափը, Ղազայի շրջանը և Արևելյան Երուսաղեմը և հաստատել այդ տարածքների վրա իսլամական պետություն, իսկ ապագա նպատակն էր ստեղծել իսլամական պետություն նախկին բրիտանական Պաղեստինի ամբողջ տարածքում:

Ինթիֆադան շարունակվեց մոտ վեց տարի և մեծ դեր խաղաց Իսրայելի ու ՊԱԿ–ի միջև 1993 թ. սեպտեմբերին կայացած համաձայնության մեջ, որի մասին կխոսվի քիչ հետո:

Իսկ մինչ այդ ինթիֆադայի անմիջական ազդեցության տակ սկզբունքային բնույթի կարևոր որոշում ընդունեց Հորդանանի թագավոր Հուսեյնը: 1978 թ. նոյեմբերի 15–ին նա հայտարարեց Պաղեստինի և Հորդանանի անջատման մասին: Հորդանանը, ճիշտ է, ճանաչել էր ՊԱԿ–ը՝ որպես Պաղեստինի արաբ ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչ, սակայն պաշտոնապես չէր վերացրել Հորդանանի Արևմտյան և Արևելյան ափերը մեկ պետության՝ Հորդանանի մեջ միավորելու մասին Աբդալլահ I–ի 1950 թ. որոշումը: Չմոռանանք նշել, որ Արևմտյան ափը 1967 թ. հունիսյան պատերազմից հետո այլևս Հորդանանի մաս չէր կազմում, քանի որ բռնակցված էր Իսրայելին: Եվ ահա այժմ Հորդանանը պաշտոնապես հրաժարվում էր Արևմտյան ափից՝ հօգուտ Պաղեստինի արաբ ժողովրդի:

1988 թ. նոյեմբերի 15–ին Ալժիրում կայացավ Պաղեստինի բաձրագույն օրենսդիր մարմնի՝ Պաղեստինի ազգային խորհրդի 19–րդ արտակարգ նստաշրջանը, որն ընդունեց սկզբունքային բնույթի որոշումների մի ամբողջ փաթեթ:

Նա ընդունեց Պաղեստինի անկախության մասին հռչակագիր, որով ստեղծվում էր Պաղեստին պետություն այն սահմաններում, որ

հաստատել էր ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի 1947 թ. նոյեմբերի 29–ին ընդունած 181/II բանաձևը: Հաստատվեցին Պաղեստին պետության նոր դրոշը և հիմնը:

Հասկանալի է, որ այդ որոշումը խորհրդանշական իմաստ ուներ, քանի որ հռչակված պետությունը դեռևս իր տնօրինության տակ չուներ համապատասխան տարածք, իսկ պետությունն առանց հողի չի լինում: Այդուհանդերձ, նա իրենով նշանավորում էր պատմական նոր փուլ պաղեստինյան արաբների՝ որպես իրենց ինքնությունն ունեցող ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարգացման և քաղաքական հասունության մեջ: Դա նշանակում էր նաև, որ արաբական Պաղեստին պետության ստեղծման հարցը արդեն տեղափոխվում էր գործնական ոլորտ:

Դրա հետ ուղղակի կապ ունեին ՊԱԽ–ի 19–րդ արտակարգ նստաշրջանում ընդունված որոշումները ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի 1967 թ. 242 բանաձևի ճանաչման և մերձավորարևելյան կոնֆլիկտին նվիրված միջազգային կոնֆերանսներին մասնակցելու վերաբերյալ:

ՊԱԿ–ը երկար ժամանակ հրաժարվում էր ճանաչել 242 բանաձևը, որի գլխավոր պատճառն այն էր, որ նրա որոշ ձևակերպումներ հստակ չէին, որից կարելի էր եզրակացնել, որ բանաձևը պաղեստինյան հարցը դիտում էր որպես պաղեստինցի արաբ փախստականների հարց: Հասկանալի է, որ դա չէր կարող բավարարել ՊԱԿ–ին և ՊԱԽ–ին: Բայց անցած 20 տարիների ընթացքում արդեն շատ բան էր փոխվել, ավելի էր հասունացել պաղեստինյան կոնֆլիկտի լուծման հարցը՝ պաղեստինյան պետական կազմավորում ստեղծելու հիմքի վրա: Հենց արաբական անկախ Պաղեստինի հռչակումը հանդիսանում էր դրա վկայությունը: Հաշվի առնելով այդ հանգամանքները և նկատի ունենալով, որ տվյալ հարցն անհնար էր լուծել առանց Իսրայելի հետ ինչ–որ շփումներ հաստատելու ՊԱԽ–ի 19–րդ նստաշրջանը որոշում ընդունեց ճանաչել 242 բանաձևը: Իսկ դա նաև նշանակում էր, որ ՊԱԿ–ը դե ֆակտո ճանաչում էր Իսրայելը:

ՊԱԽ–ն այդ նույն նստաշրջանում որոշում ընդունեց փոխել իր ժխտական վերաբերմունքը նաև Մերձավոր Արևելքին նվիրված միջազգային կոնֆերանսների նկատմամբ և որոշեց մասնակցել դրանց: Մինչ այդ ՊԱԿ–ը և պաղեստինյան մյուս կառույցները հրաժարվում էին Իսրայելի հետ նստել բանակցությունների սեղանի շուրջը: ՊԱԽ–ի կողմից վերոնշյալ որոշման ընդունումը խոսում էր այն մասին, որ ՊԱԿ–ը չէր հրաժարվում մասնակցել մերձավորարևելյան խնդիրներին նվիրված

կոնֆերանսներին, որոնց կմասնակցի նաև Իսրայելը: Իսկ դա նշանակում էր բանակցությունների մեջ մտնել հրեական պետության հետ:

Այսպիսով՝ ինթիֆադայի սկսման պահից դեռ մի տարի էլ չէր անցել, երբ արձանագրվեց չորս կարևոր փոփոխություն՝ Արևմտյան ափի անջատում Հորդանանից, Պաղեստինի անկախ պետության հռչակում, ՊԱԽ–ի կողմից ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի 242 բանաձևի ճանաչում և Մերձավոր Արևելքին նվիրված միջազգային կոնֆերանսներին մասնակցելու պատրաստակամություն:

VII. ՊԱՂԵՍՏԻՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (1993–2005 թթ.)

1. Պաղեստինի ժամանակավոր ինքնավարության վերաբերյալ իսրայելա–պաղեստինյան համատեղ հռչակագիրը

Վերը նշված սկզբունքային բնույթի փաստաթղթերի ընդունման և դրանց համապատասխան ձեռնարկած քայլերի շնորհիվ զգալիորեն բարելավվեց քաղաքական մթնոլորտը ամբողջ Մերձավոր Արևելքում և արաբա–իսրայելական փոխհարաբերություններում:

Նոր իրադրության առաջացմանը մեծապես նպաստեցին նաև պատմական կարևոր նշանակություն ունեցող փոփոխությունները, որոնք տեղի ունեցան միջազգային հարաբերություններում: Առաջին հերթին նկատի ունենք սառը պատերազմի ավարտը: Դիմակայության և սպառնալիքների քաղաքականությանը փոխարինելու եկավ համագործակցության, կոնֆլիկտները խաղաղ միջոցներով և բանակցություններ ի սեղանի շուրջը լուծելու քաղաքականությունը, որն իր բարերար ազդեցությունն ունեցավ նաև իսրայելա–պաղեստինյան կոնֆլիկտի կարգավորման վրա:

Դրա առաջին արտահայտությունը եղավ Մերձավոր Արևելքի կոնֆլիկտների կարգավորմանը և խաղաղությանը նվիրված միջազգային կոնֆերանսի հրավիրումը, որի բացումը կայացավ 1991 թ. հոկտեմբերի 30–ին Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում: ԱՄՆ–ից և ԽՍՀՄ–ից քիչ ջանքեր չպահանջվեցին այդ կոնֆերանսը գումարելու համար: Տարիներ շարունակ կուտակված անվստահությունը դրա ճանապարհին ընկած ամենամեծ խոչընդոտներից մեկն էր: Այնուամենայ-

նիվ, նրանց հաջողվեց համոզել շահագրգիռ կողմերին ժամանել Իսպանիայի մայրաքաղաք և կլոր սեղանի շուրջը քննարկել տարածաշրջանում խաղաղություն հաստատելու հիմնախնդիրները. Կոնֆերանսին մասնակցում էին Սիրիան, Լիբանանը և Իսրայելը: Քանի որ Իսրայելն առարկում էր առանձին պաղեստինյան պատվիրակության մասնակցությանը, ուստի գտնվեց փոխզիջումային տարբերակ՝ կազմվեց հորդանանա–պաղեստինյան պատվիրակություն, որի շրջանակներում Պաղեստինի անունից հանդես էին գալիս միայն պաղեստինյան պատվիրակները:

Կոնֆերանսի համանախագահներն էին ԱՄՆ–ի պրեզիդենտ Ջորջ Բուշը (ավագ) և ԽՍՀՄ–ի պրեզիդենտ Միխայիլ Գորբաչովը:

Այդ համաժողովը նշանավորվում է նրանով, որ առաջին անգամ հակամարտող կողմերը, այդ թվում և իսրայելցիներն ու պաղեստինցիները, նստեցին քննարկման սեղանի շուրջը՝ փորձելով գտնել նրանց առջև կանգնած հիմնախնդիրների համատեղ լուծումներ:

Համաժողովը կոնկրետ արդյունքներ չարձանագրեց, և այդ առումով Մադրիդի կոնֆերանսի նշանակությունը չպետք է գերագնահատել. Այդուհանդերձ, նա դրական նշանակություն ունեցավ, քանի որ այստեղ ընդհանուր ճանաչում գտավ «Խաղաղություն՝ հողի դիմաց» սկզբունքը, և նրա մասնակիցները նպատակահարմար գտան առաջիկայում ևս շարունակել հիմնախնդիրները բանակցությունների սեղանի շուրջը կարգավորելու քաղաքականությունը:

Մադրիդի կոնֆերանսը բարենպաստ հարթակ հանդիսացավ 1990–ականներին բանակցային գործընթացը մեծապես խթանելու գործում: 1991 թ. գաղտնի բանակցություններ սկսվեցին ՊԱԿ–ի և Իսրայելի միջև Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյում: Դրանք ընթացան տասը փուլով, տևեցին մոտ երկու տարի և ավարտվեցին 1993 թ. օգոստոսի վերջերին: Բանակցություններն ընթանում էին Նորվեգիայի արտաքին գործերի նախարար Յոհան Յորգեն Հոլստի անմիջական միջնորդությամբ:

Փաստաթուղթը ստորագրելու արարողությունը նշանակվեց Վաշինգտոնում 1993 թ. սեպտեմբեր ամսին: Այդ նպատակով սեպտեմբերի սկզբներին ԱՄՆ–ի մայրաքաղաք ժամանեցին Իսրայելի վարչապետ Իցակ Ռաբինը և ՊԱԿ–ի նախագահ Յասիր Արաֆաթը: Այստեղ սեպտեմբերի 9–ին տեղի ունեցավ նամակների փոխանակություն Արաֆաթի և Ռաբինի միջև, որով Իսրայելը և ՊԱԿ–ը հայտարարում էին միմյանց ճանաչելու մասին: Ռաբինին ուղղված նամակում Արաֆաթը նշում

էր, որ «ՊԱԿ–ը ճանաչում է Իսրայելի անվտանգ և խաղաղ գոյության իրավունքը»:

Ամենակարևոր իրադարձությունը կայացավ 1993 թ. սեպտեմբերի 13–ին: Այդ օրը Վաշինգտոնում՝ Սպիտակ տան առջևի մարգագետնում, տեղի ունեցավ հիմնական փաստաթղթի ստորագրումը, որը կոչվում էր «Պաղեստինի ժանակավոր ինքնավարության սկզբունքների վերբերյալ Հռչակագիր»[17]: Այդ արարողությունը, որին ներկա էին ԱՄՆ–ի պրեզիդենտ Բիլ Կլինտոնը, Իսրայելի վարչապետ Ռաբինը, ՊԱԿ–ի նախագահ Յասիր Արաֆաթը և պաշտոնական այլ անձինք, կազմակերպված էր ամերիկացիներին հատուկ մեծ շուքով: Ներկա էին մոտ 3000 հյուրեր, ամերիկյան սենատորներ, կոնգրեսմեններ, պետական գործիչներ, բարձրաստիճան զինվորականներ, լրագրողներ և ուրիշներ: Ընդհանուր տարամադրությունը տոնական էր, և այդ ամենը ցուցադրվում էր ամերիկյան բոլոր գլխավոր հեռուստաալիքներով[18]: Փաստաթուղթը Իսրայելի կողմից ստորագրեց արտաքին գործերի նախարար Շիմոն Պերեսը, իսկ ՊԱԿ–ի կողմից՝ Մահմուդ Աբբասը, որը Յասիր Արաֆաթի մերձավոր գինակիցն էր և համարվում էր նրա հավանական փոխարինողը: Իսկ ԱՄՆ–ի պրեզիդենտ Կլինտոնն իր ներկայությամբ ոչ միայն ընդգծում էր պահի կարևորությունը, այլև հանդես գալիս յուրատեսակ երաշխավորի դերում: Ստորագրմանը հաջորդեցին փոխադարձ շնորհավորանքներ, ողջագուրումներ և այլն, և այլն:

Հռչակագրում ամրագրված էր, որ ՊԱԿ–ը և Իսրայելի կառավարությունը գտնում են, որ «ժամանակն է վերջ տալ տասնամյակներ շարունակվող հակամարտությանն ու առճակատմանը և ճանաչել միմյանց քաղաքական իրավունքները»:

Ստեղծվում էր Պաղեստինի ինքնավարություն՝ Պաղեստինյան ինքնակառավարվող սահմանափակ իշխանություն (limited self–rule) Ղազայի շրջանում և Արևմտյան ափի Երիկո քաղաքում: Հաստատվում էր, որ Ղազայի շրջանը և Արևմտյան ափը կազմում են տարածքային մեկ միավոր: Սահմանվում էր անցումային շրջան՝ ոչ ավելի, քան 5 տարի տևողությամբ, որի ընթացքում պետք է իրականացվեր նաև Ղազայի շր-

17 Այդ փաստաթուղթը նաև հայտնի է «Օսլո–1 համաձայնագիր» անվանումով:

18 Մենք այդ ժամանակ գտնվում էինք ԱՄՆ–ում և աշխատում Վաշինգտոնի Ջորջ Վաշինգտոնի համալսարանում մեր գիտական ծրագրի վրա և ականատես եղանք փաստաթղթի ստորագրման պաշտոնական արարողությանն ու հանդիսություններին, որոնք շատ տպավորիչ ու հուզիչ էին:

ջանի և Արևմտյան ափի ինտեգրացումը: Անցումային շրջանը նախատեսվում էր սկսել իսրայելական զորքերի դուրսբերումով Ղազայի շրջանից և Հեբրոնից: Կողմերը համաձայնում էին, որ բանակցությունները Պաղեստինի վերջնական կարգավիճակի վերաբերյալ պետք է սկսվեն առաջին իսկ հնարավորության պարագայում, սակայն, ոչ ուշ, քան անցումային փուլի 3–րդ տարում, այսինքն՝ 1996 թ.:

Պաղեստինյան ինքնակառավարումը չէր տարածվում Երուսաղեմի և որոշ ռազմական շրջանների վրա: Իսրայելը պահպանում էր իր ինքնիշխանությունը գրաված տարածքներում գտնվող հրեական բնակավայրերի վրա:

Այսպիսին են այդ Հռչակագրի հիմնադրույթները:

Առաջին փուլի իրականացումը սկսվեց 1994 թ. մայիսի 4–ից, երբ Կահիրեում Յասիր Արաֆաթը և Իցակ Ռաբինը ստորագրեցին 1993 թ. վաշինգտոնյան Հռչակագրի վերջնական տարբերակը, որով նախատեսվում էր տվյալ համաձայնագրի ստորագրումից հետո 24 ժամվա ընթացքում իսրայելական զորքերի դուրսբերումը Ղազայի շրջանից և Արևմտյան ափի Երիկո քաղաքից: Իսրայելական զորքերի դուրսբերումը իրականացվեց նշված ժամկետներում:

Այսպիսով՝ արաբա–իսրայելական կոնֆլիկտից 45 տարի անց Իսրայելը և Պաղեստինի ինքնավարությունը եկան համաձայնության՝ վերջ տալ դիմակայությանը և հաստատել խաղաղ համագործակցություն. Իսկ Ղազայի շրջանի ու Արևմտյան ափի Երիկո քաղաքի գրավումից 27 տարի անց այդ տարածքները վերադարձան արաբ պաղեստինցիներին: 1994 թ. հուլիսի 1–ին Յասիր Արաֆաթը մտավ Ղազա, որտեղ նա վերջին անգամ եղել էր 1967 թ : Նա Ղազա քաղաքում հաստատեց իր կառավարման կենտրոնը:

Պաղեստինյան կառավարման մարմիններն ստեղծվեցին աստիճանաբար: Սկզբում դա պաղեստինյան իշխանությունն էր (Palestinian Authority), որի պրեզիդենտն էր Յասիր Արաֆաթը: Դա միաժամանակ և՛ գործադիր, և՛ օրենսդիր մարմին էր, որին Իսրայելի կառավարությունը փոխանցեց իշխանությունը: Յասիր Արաֆաթը ստանձնեց Պաղեստինի ինքնավարության պրեզիդենտի և կառավարության նախագահի՝ վարչապետի պարտականությունները: Կառավարությունը բաղկացած էր 24 հոգուց: Յասիր Արաֆաթը՝ որպես վարչապետ, 1994 թ. հունիսին նշանակեց կառավարության մյուս 19 անդամներին՝ զբաղեցնելով նաև ներքին գործերի նախարարի պաշտոնը: Կառավարության մեջ մտավ նաև

Սհմադ Կրային, որը պաղեստինյան հիմնական բանագնացն էր Օսլոյում տարվող գաղտնի բանակցությունների ժամանակ:

Դրանով ավարտվեց Պաղեստինի ինքնավարության կազմավորման առաջին փուլը:

2. Վաշինգտոնյան կամ Օսլո–II համաձայնագիրը և Պաղեստինյան ինքնավարության կայացման գործընթացի խորացումը (1995–2000 թթ.)

Իսրայելի և ՊԱԿ–ի կողմից 1993 թ. սեպտեմբերի 13–ի կամ Օսլո–I համաձայնագրի հիմնադրույթների կատարումը հնարավորություն ստեղծեց անցնելու Պաղեստինյան ինքնավարության կայացման երկրորդ փուլին:

1995 թ. սեպտեմբերի 28–ին Յասիր Արաֆաթը և Իսրայելի արտաքին գործերի նախարար Շիմոն Պերեսը Վաշինգտոնում՝ Սպիտակ տանը, ԱՄՆ–ի պրեզիդենտ Կլինտոնի ներկայությամբ ստորագրեցին նոր համաձայնագիր Արևմտյան ափի և Պաղեստինի ինքնավարության հետագա զարգացման վերաբերյալ, որը կոչվում է նաև «Օսլո–II համաձայնագիր»: Այդ համաձայնագրով, որը բաղկացած էր 31 հոդվածից, 7 հավելվածից և 9 քարտեզից՝ ընդամենը 314 էջ, Արևմտյան ափը բաժանվում էր 3 գոտիների՝ A, B, C:

Ըստ այդմ՝ A գոտում պաղեստինյան իշխանությունն իրականացնում էր լիակատար վերահսկողություն քաղաքացիական և անվտանգության հարցերում: Այս գոտին հիմնականում բնակեցված էր արաբներով: B գոտում պաղեստինյան իշխանությունն իրականացնում էր վերահսկողություն քաղաքացիական և հասարակական կարգի պահպանման հարցերում, իսկ Իսրայելը իր վրա էր վերցնում անվտանգության պահպանման խնդիրները՝ նկատի առնելով այստեղ հրեական բնակավայրերի և ռազմական օբյեկտների առկայությունը: Ինչ վերաբերում է C գոտուն, ապա այստեղ Իսրայելն էր իրականացնում լիակատար վերահսկողություն:

Իսրայելը 1995 թ. մինչև տարվա վերջ՝ երեք ամսվա ընթացքում, իր զորքերը դուրս բերեց Արևմտյան ափի A գոտում գտնվող պաղեստինյան 6 քաղաքներից՝ Բեթղեհեմից, Ջենինից, Քալքիլյայից, Նաբլուսից, Ռամալլահից և Թուլկարմից, և B գոտու 465 գյուղերից:

Այս բոլոր քայլերը գնահատելով դրական տեղաշարժեր՝ միաժամանակ նշենք, որ ոչ բոլոր պաղեստինցիները և իսրայելցիներն էին, որ հավանություն էին տալիս Օսլո–I և Օսլո–II համաձայնագրերին՝ գտնելով, որ դա պարտություն էր իրենց համար, քանի որ տեղի էին ունեցել փոխզիջումներ, և յուրաքանչյուր կողմի պահանջները ամբողջությամբ չէին կատարվում: Յասիր Արաֆաթը և նրա կողմնակիցները սուր քննադատության ենթարկվեցին: Ծայրահեղական և կոշտ դիրք գրաված պաղեստինյան կազմակերպությունները Յասիր Արաֆաթին անգամ որպես «դավաճան» մահվան դատապարտեցին: Այդ մթնոլորտում ՊԱԿ–ի շարքերում տեղի ունեցավ պառակտում, վերոնշյալ պայմանագրերի դեմ լայն շարժում ծավալեցին Համաս, Ջիհադ և Հիզբալլահ ծայրահեղական կազմակերպությունները, որոնք հրաժարվում էին ճանաչել Իսրայելի գոյությունը:

Ծանր դրության մեջ հայտնվեց նաև Իսրայելի վարչապետ Իցակ Ռաբինը, որին քննադատում էին հրեական ծայրահեղականները. Նրան մեծ դժվարությամբ հաջողվեց հասնել Արաֆաթի հետ ստորագրված համաձայնագրերի վավերացմանը իսրայելական պառլամենտի՝ կնեսետի կողմից: Բայց դա չփրկեց նրան: 1955 թ. նոյեմբերի 4–ին նա սպանվեց հուդայական մոլագարի ձեռքից:

Իսրայելի վարչապետի սպանությունը չկանգնեցրեց Պաղեստինի ինքնավարության կայացման հետագա գործընթացը: Յասիր Արաֆաթը և վարչապետի պաշտոնում ժամանակավորապես Ռաբինին փոխարինած Շիմոն Պերեսը շարունակեցին ի կատար ածել 1995 թ. սեպտեմբերին ստորագրված Օսլո–II համաձայնագրով իրենց վրա վերցրած պարտավորությունները:

Այդ պարտավորությունների մեջ առաջնակարգ նշանակություն էր տրվում Ղազայի շրջանում և Արևմտյան ափի այն մասերում՝ քաղաքներում և գյուղերում, որտեղից իսրայելական զորքերն արդեն դուրս էին բերվել, ընտրությունների անցկացմանը: Դրանց նպատակն էր Պաղեստինյան ինքնավարության բոլոր մարմիններին՝ վերևից մինչև ներքև, ընտրությունների միջոցով օրինականություն տալը: Հատուկ ընդգծված էր, որ պաղեստինյան իրավասությունը կարող է Պաղեստինի ինքնավարության վրա տարածվել և գործել միայն ընտրությունների կայացումից հետո.

Ընտրությունները տեղի ունեցան 1996 թ. հունվարին: Դրանք առաջին ընդհանուր և ազատ ընտրություններն էին Պաղեստինում:

Հաղթեց Յասիր Արաֆաթի գլխավորած ՖԱԹՀ–ը, ինչը միանգամայն բնական էր՝ հաշվի առնելով այդ կազմակերպության և նրա ղեկավարի մեծ ծառայությունները պաղեստինյան դիմադրական շարժմանը: Ընտրությունները բոյկոտեցին Համասը և Իսլամական ջիհադը:

1996 թ. հունվարի 20–ին Յասիր Արաֆաթն ընտրվեց Պաղեստինի ինքնավարության պրեզիդենտ: Նրան դիմում էին «ռաիս», այսինքն՝ պրեզիդենտ, ինչպես Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի և արաբական այլ պետությունների պրեզիդենտներին:

Այդ ընտրությունները միաժամանակ Պաղեստինյան օրենսդիր խորհրդի՝ ՊՕԽ–ի ընտրություններ էին: Դա նոր մարմին էր, որը նախատեսված էր պաղեստինա–իսրայելական 1995 թ. համաձայնագրով, որը սահմանել էր նաև նրա կառուցվածքը, գործառույթները, իրավասությունները և պատասխանատվության շրջանակները: Օրենսդիր խորհուրդը բաղկացած էր 87 անդամներից: Ընտրությունների արդյունքում Խորհրդի անդամների բացարձակ մեծամասնությունը՝ 54 հոգի, հանդիսանում էին ՖԱԹՀ–ի ներկայացուցիչները: Մյուսները իսլամիստներ էին (4), Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատի (1), Պաղեստինի ազատագրության դեմոկրատական ճակատի (1) ներկայացուցիչները, անկախականները, որոնցից, սակայն, 11–ի համակրանքը ՖԱԹՀ–ի կողմն էր:

ՊՕԽ–ի նախագահ կամ խոսնակ ընտրվեց Ազմի Շուայբին: Նշենք նաև, որ այդ մարմինը երբեմն կոչվում էր նաև Պաղեստինյան խորհուրդ:

ՊՕԽ–ը ծնավորեց 11 մշտական կոմիտե՝ Երուսաղեմի, Հողերի և բնակավայրերի, Փախստականների, Քաղաքական, Իրավական, Տնտեսական, Բյուջետային, Ներքին գործերի, Կրթության և սոցիալական հարցերի, Բնական ռեսուրսների և էներգիայի, Մարդու իրավունքների և հասարակական ազատությունների:

Վերակազմավորվեց նաև պաղեստինյան կառավարությունը. նա այժմ կազմված էր 28 նախարարից: Յասիր Արաֆաթը պահպանեց կառավարության նախագահի՝ վարչապետի պաշտոնը: Այսպիսով՝ նա միաժամանակ հանդիսանում էր Պաղեստինի ինքնավարության պրեզիդենտ, վարչապետ, ՊԱԿ–ի նախագահ և պաղեստինյան ազատագրական բանակի գլխավոր հրամանատար:

Սկում էր կատարել ևս մեկ կարևոր քայլ, որը նախատեսված էր 1993 և 1995 թթ. համաձայնագրերով: Խոսքը վերաբերում է Պաղեստին-

յան ազգային խարտիայից օրենսդրորեն վերացնել այն բոլոր հոդվածները և հիշեցումները, որոնք վերաբերում էին ՊԱԿ–ի կողմից Իսրայելի գոյության ժխտմանը և նրա հետ խաղաղ համագոյակցության ու համագործակցության հաստատմանը: ՊԱԿ–ը այդ սկզբունքային բնույթի խնդրին կարող էր անդրադառնալ միայն ընտրություններից հետո, երբ ձևավորվեցին պաղեստինյան օրինական և իրավասու մարմինները.

Այդ հարցը բարձրացվել էր դեռևս 1993 թ. սեպտեմբերին՝ պաղեստինա–իսրայելական համաձայնագրի ստորագրման նախօրյակին, երբ ՊԱԿ–ի նախագահ Յասիր Արաֆաթը հատուկ նամակ հղեց Իսրայելի վարչապետ Ռաբինին, որտեղ նշվում էր, որ «Պաղեստինյան ազգային խարտիայի այն բոլոր հոդվածները, որոնք ժխտում են Իսրայելի գոյության իրավունքը և հակասում են ահաբեկչությունը և այլ բռնություններ դատապարտելու ՊԱԿ–ի պարտավորություններին, այս պահից սկսած դադարում են գործելուց և համարվում են ուժը կորցրած»: Սա շատ կարևոր պարտավորություն էր, որ ստանձնում էր ՊԱԿ–ի ղեկավարությունը, առանց որի Իսրայելը չէր ստորագրի 1993 թ սեպտեմբերի 13–ի համաձայնագիրը. Յասիր Արաֆաթը վստահեցնում էր Ռաբինին, որ ՊԱԿ–ը այդ փոփոխությունները պաշտոնապես կներկայացնի Պաղեստինյան ազգային խորհրդի հաստատմանը.

Սակայն մինչև 1996 թ. ապրիլ ամիսը Արաֆաթը հնարավորություն չունեցավ այդ հարցը ներկայացնել Պաղեստինյան ազգային խորհրդի քննարկմանը: Պաղեստինյան բարձրագույն այդ մարմինը դրան անդրադարձավ 1996 թ ապրիլին, երբ արդեն ետևում էին մնացել ընտրությունները Ղազայի շրջանում և Արևմտյան ափում: ՊԱԽ–ի 21–րդ նստաշրջանը, իրոք, չեղյալ համարեց Ազգային խարտիայի այն հոդվածները, որոնք չէին ընդունում Իսրայելի գոյության իրավունքը:

Սակայն Իսրայելի նոր վարչապետ Բենյամին Նաթանյահուն հայտարարեց, որ դա իրենց չի բավարարում: Նշենք, որ Ռաբինի սպանությունից հետո՝ 1996 թ. մայիսին, կայացան Իսրայելի պառլամենտական նոր ընտրությունները, որոնց ժամանակ բանվորական կուսակցությունը Շիմոն Պերեսի գլխավորությամբ պարտություն կրեց, և հաղթանակեց աջակողմյան ուժերի Լիկուդ խմբավորումը, որի ղեկավար Նաթանյահուն գլխավորեց նոր կառավարությունը: Լիկուդը և Նաթանյահուն դեմ էին Օսլոյի գործընթացին և պաղեստինյան հարցում կոշտ քաղաքականության կողմնակից էին:

Հարցը երկար ժամանակ մնաց բաց և կրկին դարձավ քննարկումների առարկա: Ի վերջո, 1998 թ. դեկտեմբերին կայացավ ՊԱԽ–ի 22–րդ նստաշրջանը՝ հատուկ նվիրված այդ հարցի քննարկմանը: Իրականում դա ՊԱԽ–ի (նրա անդամների թիվը հասնում էր 700–ի), ՊԱԿ–ի Գլխավոր խորհրդի (որի 124 անդամներից ներկա էին 88–ը) և պաղեստինյան կառավարության համատեղ նիստը էր Ղազա քաղաքում: Այդ ուժերը ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունեցին մի բանաձև, որը հավանություն էր տալիս Յասիր Արաֆաթի դեռևս 1998 թ. հունվարին ԱՄՆ–ի պրեզիդենտ Կլինտոնին ուղղված նամակին, որտեղ նա խոստանում էր Ազգային խարտիայից այն բոլոր հոդվածների վերացումը, որոնք հակասության մեջ էին գտնվում 1993 թ. Օսլո–I համաձայնագրի հետ:

Այսպիսով՝ վերացվեց ևս մեկ կարևոր խոչընդոտ Պաղեստինի ինքնավարության, իսկ հեռանկարում նաև Պաղեստինի պետության ստեղծման ճանապարհին: 1999 թ. Իսրայելի համաձայնությամբ սկսեց գործել 32 կմ երկարությամբ միջանցք, որը Արևմտյան ափի պաղեստինցիներին միացնում էր Ղազայի շրջանի պաղեստինցիների հետ: Պաղեստինի ինքնավարությունն այդ ժամանակ արդեն լրիվ տնօրինում էր Արևմտյան ափի տարածքների 9%–ը, իսկ Իսրայելի հետ համատեղ՝ ևս 23%, ինչպես նաև Ղազայի շրջանն ամբողջությամբ: Նրա տրամադրության տակ կային մոտ 40 հազ. զինված ոստիկանական ուժեր:

Դրանով կարելի է ավարտված համարել Պաղեստինի ինքնավարության կայացման երկրորդ փուլը:

3. Պաղեստինի ինքնավարության երրորդ փուլը: Նոր բարդություններ, նոր հուսախաբություններ և նոր հույսեր (2000–2005 թթ.)

Առաջին և երկրորդ փուլերի կատարումով ավարտվեց նաև անցման շրջանը: Դրան, ըստ պայմանավորվածությունների, հաջորդելու էր երրորդ փուլը, որի ժամանակ պետք է վերջնական լուծում գտներ Պաղեստինի կարգավիճակի հարցը: Խոսքն այլևս չէր գնում Պաղեստինի ինքնավարության կայացման և զարգացման, այլ այդ ինքնավարությունը Պաղեստին անկախ պետության վերածելու մասին: Պաղեստինցիները լավատեսորեն էին տրամադրված և կարծում էին, որ հեռու չէ այդ օրը:

Սակայն, դժբախտաբար, իրադարձությունների զարգացումն այլ ընթացք ընդունեց, և Պաղեստինի ինքնավարության տարածքը նորից

ընկղմվեց արյունալի բախումների, հակամարտությունների և առճակատումների հորձանուտի մեջ:

Դրա համար ազդանշան ծառայեց Իսրայելի աջակողմյան Լիկուդ խմբավորման նախագահ գեներալ Արիել Շարոնի 2000 թ. սեպտեմբերի 28–ի այցը Երուսաղեմի ժայռատաճարի բլուր, որտեղ գտնվում է մուսուլմանների ամենահեղինակավոր սրբազան կենտրոններից մեկը՝ հանրահայտ Ալ–Աքսա մզկիթը[19]: Մուսուլման արաբները հրեա Շարոնի այդ քայլը համարեցին ծանր վիրավորանք իսլամին, մուսուլմանների կրոնական զգացմունքներին և ավանդույթներին: Եվ նրանք ոտքի ելան...

Այսպես սկսվեց ինթիֆադայի երկրորդ փուլը:

Ի պատասխան Շարոնի այդ քայլի, որն ընդհանրապես բնութագրվում է սադրիչ, պաղեստինցիները հակագործողությունների դիմեցին Իսրայելի դեմ և կազմակերպեցին մի շարք պայթեցումներ Իսրայելի տարածքում, որի հետևանքով եղան զոհեր: Իսրայելն իր հերթին շատ խիստ ու կոշտ ռազմական քայլերի դիմեց՝ ճնշելու ինթիֆադան: Եվ զինված հակամարտության թափանիվը պտտվեց, հակամարտությունը խորացավ, իսկ ծավալներն էլ ընդլայնվեցին: Ինթիֆադայի ղեկավար Մարվան Բարղութին կոչ արեց պաղեստինցիներին ոտքի կանգնել և զանգվածային պայքար սկսել Իսրայելի ռազմական գործողությունների դեմ:

Դրությունն ավելի լարվեց, երբ 2001 թ փետրվարի 6–ին Իսրայելում կայացած պառլամենտական ընտրություններում հաղթեց Լիկուդը և Արիել Շարոնը դարձավ Իսրայելի վարչապետ: Այժմ նրա ձեռքում էին կենտրոնացված կառավարման բոլոր լծակները, որը նա չվարանեց գործադրել պաղեստինցիների ինթիֆադան ճնշելու համար: Նրա առաջին քայլը եղավ Պաղեստինի տարածքների շրջափակումը, խզվեց կապը, դադարեցվեց ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարումը, գործադրվեց ֆինանսական ճնշում Պաղեստինի ինքնավարության ղեկավարության վրա: 2001 թ. օգոստոսից սկսվեցին իսրայելական բանակի արշավանքներն ինքնավարության տարածքում, իսկ 2002 թ. ամռանն իսրայելական բանակն ամբողջությամբ գրավեց Պաղեստինի ինքնավարության տարածքը: Իսրայելական քաղաքացիական և զինվորական

19 Որոշ աղբյուրներ մատնանշում են, որ Արիել Շարոնն անգամ մտել է մզկիթ Հիշեցնենք, որ դա այն նույն Շարոնն է, որը մեծ պատասխանատվություն է կրում 1982 թ. Բեյրութի Սաբրա և Շատիլա արվարձանային քաղամասերում պաղեստինցի գաղթականների սպանդ կազմակերպելու համար:

իշխանությունները պաղեստինյան ահաբեկիչներին ձերբակալելու պատրվակով սկսեցին զանգվածային ձերբակալություններ և զտումներ: Պաշարման ենթարկվեց Յասիր Արաֆաթի նստավայրը, որը Ղազա քաղաքից տեղափոխվել էր Արևմտյան ափի Ռամալլահ քաղաքը: Պաղեստինի ինքնավարության պրեզիդենտը կտրվեց արտաքին աշխարհից և տնային բանտարկության ենթարկվեց: Իսրայելցիները վարում էին պաղեստինյան ենթակառույցների ոչնչացման քաղաքականություն:

Ինքնավարությունում քաոսային վիճակ էր տիրում: Եվ կրկին միջամտեցին արտաքին ուժերը, ավելի կոնկրետ՝ «միջազգային քառյակը», որը ծնավորել էին ԱՄՆ–ը, Ռուսաստանը, Եվրոպական միությունը և ՄԱԿ–ը: Հակամարտությանը վերջ տալու համար որպես հիմք նրանք առաջադրեցին իրենց պլանը, որը ստացավ «ճանապարհային քարտեզ» անվանումը. Այն նախատեսում էր իսրայելական բոլոր զորքերի դուրսբերում օկուպացված տարածքներից և Պաղեստինի պետության հիմնում: Այդ հարցի վերաբերյալ 2002 թ. հունիսի 24–ին հատուկ հայտարարությամբ հանդես եկավ ԱՄՆ–ի պրեզիդենտ Ջորջ Բուշը (կրտսեր)՝ կոչ անելով «ստեղծել անկախ Պաղեստին պետություն, որը խաղաղ կերպով կապրի Իսրայելի հետ կողք կողքի»:

Շարոնը հարկադրված էր նահանջել: Արաֆաթի պաշարումը վերացվեց, և սկսվեց ինքնավարության տարածքում հրեական բնակավայրերի վերացումը:

Հանգիստ չէր նաև Պաղեստինի ինքնավարության ղեկավարության մեջ: Սրվել էին հակասությունները ՊԱԿ–ի մեջ մտնող տարբեր ուժերի միջև: Շատերը դժգոհ էին Արաֆաթի քաղաքականությունից, նրան մեղադրում էին միանձնյա կառավարման մեթոդների մեջ, պատասխանատու համարում մեծ ծավալներ ստացած կոռուպցիայի համար և պահանջում բարեփոխումներ իրականացնել կառավարման, տնտեսական, ֆինանսական և այլ ոլորտներում: Ռեֆորմների վրա էին պնդում նաև ԱՄՆ–ը և միջազգային զանազան կազմակերպություններ: Արաֆաթը, որը վարժվել էր պատերազմի և դիմադրական շարժման պայմաններում ծնավորված ղեկավարման մեթոդներին, դժվարությամբ էր համակերպվում նոր պահանջներին և եռանդ չէր դրսևորում ռեֆորմներ կիրառելու բնագավառում: Այդուհանդերձ, նա հարկադրված էր զիջել, գոնե մի այնպիսի կարևոր հարցում, ինչպես պրեզիդենտի և վարչապետի պաշտոնները մի անձի ձեռքում կենտրոնացնելու հարցն էր: Ինչպես նշել ենք, այդ երկու պաշտոններն էլ վարում էր Արաֆաթը: 2003 թ. ապրիլի 29–ին

Մահմուդ Աբբասը, որը հայտնի է նաև Աբու Մեյզեն անունով, ընտրվեց Պաղեստինի ինքնավարության վարչապետ:

2003 թ հունիսի 4–ին Աքաբայում տեղի ունեցավ Իսրայելի վարչապետ Արիել Շարոնի և Պաղեստինի ինքնավարության վարչապետ Մահմուդ Աբբասի հանդիպումը՝ ԱՄՆ–ի պրեզիդենտ Ջորջ Բուշի ներկայությամբ: Շարոնը և Աբբասը պայմանավորվեցին իրականացնել ճանապարհային քարտեզի դրույթները և վերջ տալ բռնարարքներին:

Սակայն Իսլամական ջիհադ և Համաս կազմակերպությունները հայտարարեցին, որ իրենք չեն ընդունում ճանապարհային քարտեզը և կշարունակեն պայքարը Իսրայելի դեմ:

Իսրայելը շարունակեց հրեական բնակավայրերի վերացման գործընթացը, որը, չնայած հրեական բնակչության դիմադրությանը, առաջ էր գնում: Իսրայելի կառավարությունը 2004 թ. ընդունեց միակողմանի անջատման ծրագիր: Նա հրեական բոլոր բնակավայրերի բնակիչներին դուրս բերեց Ղազայի շրջանից և նվազեցրեց իր ռազմական ներկայությունը, սակայն իր հսկողության տակ պահեց Եգիպտոսի հետ սահմանը, օդային տարածքը, նավահանգիստները և այլ կարևոր օբյեկտներ:

Դրան զուգահեռաբար, այդուհանդերձ, շարունակվում էին երկուստեք հարձակումները: Մեծ էր զոհերի և վիրավորների թիվը:

Ահա այսպիսի իրադրություն էր տիրում Պաղեստինի ինքնավարությունում և պաղեստինա–իսրայելական հարաբերություններում, որոնք կարող էին ունենալ և՛ հետագա առաջընթաց զարգացում, և՛ հետադարձ շարժում:

Պաղեստինյան ղեկավարության մեջ հարաբերություններն ավելի սրվեցին, երբ հայտնի դարձավ Արաֆաթի հիվանդության մասին: Ո՞վ կլինի նրա փոխանորդը, ինչպիսի՞ն կլինի նրա հիմնած ՖԱԹՀ–ի ապագան, որին այդ ժամանակ արդեն լուրջ մարտահրավերներ էին նետում պաղեստինյան զանազան կազմակերպություններ: Հիվանդ Արաֆաթին բուժման նպատակով տեղափոխեցին Փարիզ: Բայց դա չփրկեց նրան: 2004 թ. նոյեմբերի 11–ին Յասիր Արաֆաթը մահացավ: Այդ լուրը ցնցեց բոլոր պաղեստինցիներին և արաբներին: Նա այդ պահին միջազգային մեծ հեղինակություն ունեցող արաբական քաղաքական և պետական գործիչներից մեկն էր: Նրա թաղումը կատարվեց Պաղեստինում, և պաղեստինյան պետական դրոշով ծածկված նրա դին ուղեկցում էին հարյուր հազարավոր պաղեստինցիներ, մարտիկներ, զինակիցներ, արա-

բական պետությունների ղեկավարներ և հասարակ մարդիկ: Նրան տրվեցին զինվորական պատիվներ:

Կարելի է ասել, որ Յասիր Արաֆաթի մահով ավարտվեց մի ամբողջ դարաշրջան Պաղեստինի դիմադրական շարժման մեջ:

Եթե նրա մահվան լուրը խոր վիշտ պատճառեց պաղեստինցիներին, ապա Իսրայելում, որտեղ նրան համարում էին համար մեկ ահաբեկիչը, այն ընդունվեց ուրախությամբ: Հույս էր հայտնվում, որ քաղաքական ասպարեզից նրա հեռանալուց հետո արմատականորեն կփոխվի իրադրությունը, և արագ թափով առաջ կգնա խնդրի կարգավորման և խաղաղության գործընթացը, ինչպես նաև բարենպաստ պայմաններ կստեղծվեն Պաղեստինի ինքնավարությունում բարեփոխումների և դեմոկրատիայի համար:

Պաղեստինի ինքնավարության ղեկավարի պաշտոնում առաջին թեկնածու դարձավ Մահմուդ Աբբասը, որը իր նախընտրական արշավում հայտարարում էր, որ կշարունակվի պայքարը Պաղեստին պետության համար, որի մայրաքաղաքը պետք է լիներ Երուսաղեմը: Միաժամանակ նա շեշտում էր, որ զինված ինթիֆադան սխալ է, և պաղեստինցիները պետք է հետապնդեն իրենց նպատակները դիվանագիտական միջոցներով:

2005 թ. հունվարի 5–ին Պաղեստինի ինքնավարության տարածքում կայացան ընտրություններ: Մահմուդ Աբբասը ստացավ ձայների 61%–ը, իսկ նրա հիմնական մրցակից Մուստաֆա Բարղութին՝ 20%–ը: Իսլամական խմբավորումները բոյկոտեցին ընտրությունները:

Այսպիսով՝ Մահմուդ Աբբասն ընտրվեց Պաղեստինի ինքնավարության պրեզիդենտ: Նրան ողջունեց ԱՄՆ–ի պրեզիդենտ Ջորջ Բուշը և պաշտոնական այցով հրավիրեց Վաշինգտոն:

Աբբասը կոչ արեց պաղեստինյան կազմակերպություններին վերջ տալ բռնություններին և հաշտության համաձայնագիր ստորագրել: Ամբողջ Ղազայի շրջանում տեղակայվեցին պաղեստինյան զինված ոստիկանական ուժեր՝ ահաբեկչական գործողությունները կանխելու համար:

2005 թ. փետրվարի 8–ին Եգիպտոսի Շարմ ալ–Շեյխ առաղջարանային քաղաքում տեղի ունեցավ Եգիպտոսի, Հորդանանի, Իսրայելի և Պաղեստինի ինքնավարության ղեկավարների հանդիպումը, որի ընթացքում Իսրայելը և Պաղեստինի ինքնավարությունը հայտարարեցին բռնություններին վերջ տալու մասին: Իսրայելը պարտավորվեց ազատ արձակել 900 պաղեստինյան բանտարկյալների և աստիճանաբար

դուրս գալ պաղեստինյան քաղաքներից: Հասկացվում էր, որ ինքիֆադան ավարտվում էր:

Շատ չանցած՝ 2005 թ. փետրվարի 20–ին, Իսրայելի պառլամենտը հավանություն տվեց Պաղեստինից Իսրայելի միակողմանի անջատմանը, որը նախատեսում էր մինչև սեպտեմբեր ամիսը հրեական 21 բնակավայրի էվակուացիա Ղազայի շրջանից և 4 բնակավայրի՝ Արևմտյան ափից: Էվակուացիան նշված վայրերից սկսվեց 2005 թ. օգոստոսի 15–ին և ավարտվեց նույն ամսվա 24–ին: 2005 թ. սեպտեմբերի 11–ին իսրայելական վերջին զինվորը հեռացավ Ղազայից, իսկ սեպտեմբերի 12–ից Ղազայի շրջանում գտնվող բնակավայրերը պաշտոնապես հանձնվեցին պաղեստինցիների կառավարմանը: Ի հավելումն՝ մեկ անցուղի բացվեց Ղազայի և եգիպտական Ռաֆահի միջև, որպեսզի այդ ուղիով Ղազան կապ պահպանի Եգիպտոսի և արտաքին աշխարհի հետ:

Ահա այսպիսի արդյունքներով ավարտվեց 2005 թվականը:

Ամփոփելով կարելի է ասել, որ այդ ընթացքում չհաջողվեց իրականացնել պաղեստինցիների գլխավոր նպատակը՝ Իսրայելի ամբողջական և վերջնական հեռացումը պաղեստինյան բոլոր տարածքներից և Պաղեստին անկախ արաբական պետության ստեղծումը: Այդուհանդերձ, հանուն արդարության հարկ է նշել, որ քիչ բան չարվեց նաև այդ ուղղությամբ: Ամենակարևորը՝ դրվեցին դրա հիմքերը, ստեղծվեցին համապատասխան կառույցներ և մարմիններ, որոնք սկսեցին գործել Պաղեստինում:

Շատ կարևոր էր նաև այն, որ պաղեստինյան հիմնախնդրի կարգավորումը պետություն ստեղծելու տարբերակով՝ միջազգային ճանաչում գտավ և այլևս առարկության չէր հանդիպում միջազգային ուժերի կողմից: Դա շատ հստակ կերպով ձևակերպվեց ճանապարհային քարտեզում, որը կազմել էր քառյակը՝ ԱՄՆ–ը, Ռուսաստանը, Եվրոպական միությունը և ՄԱԿ–ը, ներկայացրել Իսրայելին ու Պաղեստինի ինքնավարությանը և արժանացել նրանց հավանությանը:

Վստահ ենք, որ միայն այդ ուղիով և միայն այդ ձևով կարելի է հասնել պաղեստինյան հիմնախնդրի կարգավորմանը և ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի 1947 թ. նոյեմբերի 29–ին ընդունած 181/II բանաձևի հիմնադրույթների վերջնական իրականացմանը:

Վստահ ենք նաև, որ մարգարեների երկրում և համաշխարհային երեք կրոնների բնօրրանում բավականաչափ տարածք կա երկու՝ հրեական և արաբական պետության խաղաղ գոյության համար:

Գլուխ հինգերորդ

ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ

ԱԼ–ՄԱՄԼԱՔԱ ԱԼ–ԱՐԱԲԻՅԱ ԱԼ–ՍԱՈՒԴԻՅԱ
ԱԼ-ԱՐԱԲԻՅԱ ԱԼ-ՍԱՈՒԴԻՅԱ

Աշխարհագրական դիրքը — գտնվում է Արևմտյան Ասիայի Մերձավոր Արևելք շրջանում, Արաբական թերակղզում, Պարսից ծոցի և Կարմիր ծովի անմիջական հարևանությամբ

Սահմանները — սահմանակից է Իրաքին, Հորդանանին, Քուվեյթին, Օմանին, Արաբական Միացյալ Էմիրություններին և Եմենին

Տարածությունը — 1 մլն 960 հազ. 582 քառ կմ

Բնակչությունը — 26 մլն 417 հազ 599 (2005 թ)

Մայրաքաղաքը — Ռիյադ՝ 5,5 մլն (2005 թ)

Ազգային կազմը — արաբներ՝ 90%, ասիացիներ և աֆրիկացիներ՝ 10%

Կրոնը — իսլամ՝ 100%, վահաբիական իսլամ

Լեզուն — արաբերեն

Պետական կարգը — բացարձակ միապետություն՝ աստվածապետություն

Գործադիր իշխանությունը — պատկանում է թագավորին՝ Աբդալլահ բին Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդին (2005 թ. օգոստոսից)՝ Թագավորը միաժամանակ երկրի վարչապետն է:
Նախարարների խորհրդին, որին նշանակում է թագավորը և ինքը գլխավորում՝ որպես վարչապետ

Օրենսդիր իշխանությունը — Խորհրդակցական խորհուրդ՝ Մաջլիս ալ–Շուրա՝ կազմված 120 անդամներից, որոնց նշանակում է թագավորը՝ չորս տարի ժամանակով


Սահմանադրությունը — ժամանակակից հասկացությամբ սահմանադրություն գոյություն չունի. Պաշտոնապես սահմանադրությունը համարվում է մուսուլմանների սրբազան գիրքը՝ Կորանը: 1992 թ ընդունվել է սահմանադրական նորմերի փաթեթ. Դատաիրավական համակարգը և դատական իշխանությունը հիմնված են իսլամական օրենքի՝ շարիաթի վրա. Բարձրագույն դատական մարմինը համարվում է Արդարադատության գերագույն խորհուրդը

Ընտրություններ — տեղի չեն ունենում

Քաղաքական կուսակցություններ — չկան

Վարչական բաժանումը — կազմված է 13 նահանգներից

Անկախությունը — 1932 թ սեպտեմբերի 23՝ թագավորության միավորման օրը


ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ
ԻՐԱՔ
ԻՐԱՆ
ԱԱԷ
ՍՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ
ԿԱՐՄԻՐ ԾՈՎ
ՍՈՒԴԱՆ
ՕՄԱՆ
ԵՄԵՆ
ԱՐԱԲԱԿԱՆ
ԾՈՎ

Ազգային տոնը — 1932 թ. սեպտեմբերի 23–ը
Ազգային դրամը — սաուդյան ռիալ
ՀՆԱ–ն ըստ շնչի — 12 հազ. ԱՄՆ դոլար (2004 թ.)
Մասնակցություն միջազգային կազմակերպություններին — ՄԱԿ–ին, Արաբական պետությունների լիգային, Ծոցի երկրների համագործակցության խորհրդին, ՅՈՒՆԵՍԿՕ–ին, ՕՊԵԿ–ին, ՕԱՊԵԿ–ին, Իսլամական կոնֆերանս կազմակերպությանը, Ինտերպոլին, Արժութային միջազգային հիմնադրամին, ՖԱՕ–ին և այլն
Արդյունաբերությունը — նավթի արդյունահանում և մշակում, նավթաքիմիական, ցեմենտի, ամոնիակի, կաուստիկ սոդայի արդյունաբերություն, շինարարություն, պարարտանյութերի և պլաստիկատների արտադրություն, նավերի և ինքնաթիռների վերանորոգում և այլն
Գյուղատնտեսությունը — ցորեն, գարի, լոլիկ, ծմերուկ, արմավ, ցիտրուսներ **թռչնաբուծություն** և ձվի արտադրություն, կաթի և կաթնամթերքների արտադրություն

I. ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ (1918–1932 թթ.)

1. Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդը Սաուդյան կենտրոնացված պետության հիմնադիր

Սաուդյան Արաբիայի՝ որպես անկախ պետության ստեղծումը կապված է Սաուդյան տոհմի ամենաականավոր ներկայացուցչի՝ Աբդ ալ–Ազիզ Աբդ ալ–Ռահման ալ–Սաուդի անվան հետ: Պատմականորեն նրան էր վիճակված հավաքել Արաբական թերակղզում գոյություն ունեցող և խճանկար հիշեցնող զանազան մեծ ու փոքր ցեղապետություններն ու շեյխություններն իր տիրապետության ներքո և այդ հիմքի վրա ստեղծել մի նոր միասնական և կենտրոնացված աստվածապետություն, որին կանխորոշված էր բացառիկ դերակատարություն Արաբական թերակղզում, արաբական և համայն իսլամական աշխարհում:

Աբդ ալ–Ազիզ Աբդ ալ–Ռահման ալ–Սաուդը, որն ավելի շատ հայտնի է Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդ կամ պարզապես Սաուդ անունով, ծնվել է 1879 թ Արաբական թերակղզու կենտրոնական մասում գտնվող Դիրայա բնակավայրում: Սակայն նրա մանկությունն անցել է աքսորում այն բանից հետո, երբ Արաբական թերակղզում ծավալված ցեղամիջյան պայքարի ընթացքում Սաուդ տոհմը պարտություն կրեց և 1891 թ., հեռանալով Արաբիայից, հաստատվեց Քուվեյթում:

Քուվեյթում գտնվելու ընթացքում երիտասարդ Աբդ ալ–Ազիզ Սաուդն անգործության չէր մատնված: Նա ոչ միայն երազում էր վերադառնալ իր հայրենի վայրերը, այլև եռանդուն կերպով նախապատրաստվում իր այդ երազանքի իրականացման համար: Եվ դա հաջողվեց նրան:

1902 թ. 23–ամյա Սաուդը, իր զինված ցեղակիցների գլուխն անցած, ներխուժեց Կենտրոնական Արաբիա և գրավեց իր ծննդավայր Դիրայան, ինչպես նաև նրանից ոչ հեռու գտնվող Ռիյադը, որը հետագա-

յում դառնալու էր Սաուդյան Արաբիայի մայրաքաղաքը: Նա իր իշխանությունը հաստատեց ամբողջ Նաջդի վրա:

Այդ պահից սկսվում է Սաուդի հաղթարշավը: Նա կարողացավ քառորդ դարի ընթացքում պարտության մատնել իր բոլոր հակառակորդ ցեղերին, մեկը մյուսի հետևից գրավել Արաբիայի տարբեր շրջանները և դրանք միավորելով իր տիրապետության ներքո՝ ստեղծել մի նոր և ընդարձակ արաբական պետություն:

Դիրայան և Ռիյադը պատկանում էին Ռաշիդ բավականին հզոր ցեղին՝ Սաուդների ավանդական մրցակցին և հակառակորդին, որը դաշնակցում էր Օսմանյան կայսրության հետ՝ վայելելով նրա քաղաքական հովանավորությունը և ռազմական ու նյութական օգնությունը: Բայց դա չփրկեց Ռաշիդներին պարտությունից և տարածքային կորուստներից:

Դրանից հետո Աբդ ալ–Ազիզ Սաուդը հետևողականորեն, քայլ առ քայլ գրավում է նոր տարածքներ և ընդարձակում իր տիրապետության սահմանները:

Այդ ճանապարհին կարևոր հանգրվան հանդիսացավ Հասայի շրջանի նվաճումը 1913 թ., որը գտնվում էր Արաբիայի Պարսից ծոցին հարող մասում: Նա կարողացավ համեմատաբար կարճ ժամանակաշրջանում ամրապնդել իր դիրքերը Նաջդում և Հասայում: Սաուդի հաջողություններն այնքան տպավորիչ էին, և դիրքերի ամրությունն այնքան ակնառու, որ Մեծ Բրիտանիան 1915 թ. Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդին ճանաչեց անկախ Նաջդի և Հասայի կառավարող (ruler): Դա Սաուդի առաջին և կարևոր **քաղաքական** հաղթանակն էր: Նշենք նաև, որ Սաուդը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ոչ միայն չմիացավ Օսմանյան կայսրությանը, այլև չպաշտպանեց նրան: Նրա հակաօսմանյան դիրքորոշումն ակնհայտ էր և նպաստավոր էր Անտանտի երկրների, առաջին հերթին՝ Մեծ Բրիտանիայի համար: Դրանով պետք է բացատրել նաև այն հանգամանքը, որ բրիտանական կառավարությունը Սաուդին ճանաչեց անկախ Նաջդի և Հասայի կառավարող:

Իր քաղաքական ծրագրերի՝ Արաբիայում միասնական կենտրոնացված պետություն ստեղծելու հարցում հնարամիտ և խելացի Սաուդը ձեռնարկեց մի քայլ, որը սկզբնական շրջանում բոլորը չէ, որ հասկացան ու գնահատեցին: Դա իխվանների կազմակերպության ստեղծումն էր 1912–1913 թթ.՝ Հասայի գրավումից հետո: Սաուդը հասկանում էր, որ միասնական պետություն ստեղծելու ճանապարհին կան բազմաթիվ դժ-

վարություններ, որոնք հնարավոր չէր հաղթահարել սովորական միջոցներով: Նա փնտրում էր կազմակերպչական նոր կառույցներ, որոնք ի վիճակի լինեին մոբիլիզացնել Արաբիայի իր կողմնակից ցեղերին և նրանց պայքարի հանել իր հակառակորդ ցեղերի դեմ: Այդպես լույս աշխարհ եկավ իխվանների կազմակերպություն ստեղծելու գաղափարը:

Իխվան արաբերեն նշանակում է եղբայրներ կամ եղբայրություն:

Սաուդը որոշեց քոչվոր ցեղերին նստակյաց դարձնել և նրանց բնակեցնել համայնքներով ու որոշակի բնակավայրերում, նրանց սովորեցնել իսլամի դրույթները և դրա օգնությամբ հասնել այն բանին, որ քոչվորական ցեղերի սովորութային օրենքները փոխարինվեն իսլամի օրենքներով, իսկ ավանդական ցեղային կապերը՝ կրոնականով: Հարկ է ընդգծել, որ տվյալ դեպքում խոսքը վահաբիական իսլամի մասին է, որը տիրապետող է Արաբիայում[20]:

Սաուդը այդ բնակավայրերն անվանեց հիջրա, որն արաբերեն բառացի նշանակում է միգրացիա, սակայն տվյալ պարագայում դա նշանակում էր անցում անգիտակից կյանքից լուսավորյալ կյանքի: Իսկ նրա բնակիչներին էմիրը կոչեց իխվաններ՝ եղբայրներ: Նրանք դարձան անսանձ մոլեռանդներ, որոնք այրվում էին վահաբիզմը Արաբիայի ամենահեռավոր ծայրագավառներում և ընդհանրապես Արաբիայի սահմաններից դուրս տարածելու անկասելի մոլուցքով:

Եվ իխվանները դարձան Աբդ ալ–Ազիզ Սաուդի հիմնական հենարանը և գլխավոր գործիքներից մեկը նորանոր տարածքներ նվաճելու և միասնական պետություն ստեղծելու ճանապարհին: Հետագայում, հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից և Օսմանյան կայսրության անկումից հետո, ավելի մեծ թափով սկսվեց այդ գործընթացը:

Այսպիսով՝ Արաբական թերակղզում տարբեր մարզերի միավորման և միասնական պետության ստեղծման պրոցեսը գլխավորեցին Նաջդը և նրա էմիր Աբդ ալ–Ազիզ Սաուդը: Այդ շարժումն ընթացավ վահաբիզմի կրոնաքաղաքական դրոշի ներքո:

Աբդ ալ–Ազիզ Սաուդը, հենվելով 1913 թ. ստեղծված իխվանների զինված ուժերի վրա, վերջ տվեց միջցեղային պատերազմներին, թալանչիական հարձակումներին, կողոպուտին և սանձեց ցեղապետերի անջատողական նկրտումները: Դրա շնորհիվ նրան հաջողվեց որոշակի

20 Վահաբիզմի մասին ավելի մանրամասն տես սույն աշխատության II հատորը.

կարգ ու կանոն հաստատել Նաջդում և նրան միացված տարածքներում, ավելի հետևողականորեն ձեռնամուխ լինել նոր տարածքների կցմանը Նաջդին և միասնական պետության ստեղծմանը:

Էմիր Սաուդն առաջին հարվածը հասցրեց Ջաբալ Շամարի էմիր Իբն առ–Ռաշիդին՝ իր հին ախոյանին: Իխվանները գրավեցին այդ էմիրության զգալի մասը, որը միացվեց Նաջդին: 1919 թ. Սաուդի զորքերը պատերազմական գործողություններ սկսեցին Հիջազի դեմ, որի թագավոր Հուսեյնը դաշնակցում էր Անգլիայի հետ: Իխվանները ջախջախեցին Հուսեյնի զորքերը Թուրայբի օազիսում և հնարավորություն ստացան գրավել ամբողջ Հիջազը: Սակայն ակտիվորեն միջամտեց Անգլիան և ստիպեց Սաուդին իր զորքերը ետ քաշել: Հաջորդ տարի՝ 1920 թ., Սաուդը գրավեց լեռնային Ասիրը, իսկ 1921 թ. Նաջդին վերջնականապես միացվեց Ջաբալ Շամարի էմիրությունը:

Այսպիսով՝ էմիր Սաուդի տիրապետության տակ անցան զգալի տարածքներ, և ընդլայնվեցին Նաջդին ենթակա տիրույթները: Ելնելով այդ նոր իրողությունից, Նաջդի և հարակից տարածքների ցեղապետների և աստվածաբանների ժողովը Աբդ ալ–Ազիզ Սաուդին 1921 թ. հուլիսին հռչակեց «Նաջդի և կախյալ տարածքների» սուլթան, ինչպես սկսեց կոչվել այդ նոր պետական կազմավորումը:

Շարունակելով Արաբիայի էմիրությունները նվաճելու և Նաջդին միավորելու քաղաքականությունը՝ Սաուդը նոր հաջողության հասավ: 1922 թ. ամբողջ Ասիրը նույնպես գրավվեց իխվանների կողմից և միացվեց Նաջդին:

Այդ իրադարձություններին ակնդետ հետևում էր Մեծ Բրիտանիան: Նա, տեսնելով, որ չի կարողանում ձախողել Արաբիայի տարածքների միավորման գործընթացը Նաջդի գլխավորությամբ, գործողության մեջ դրեց իր զորքերը, որոնք ներխուժեցին Արաբիա Իրաքի և Անդրհորդանանի կողմից և պարտության մատնեցին Սաուդի զորքերին: Դրա շնորհիվ Անգլիային հաջողվեց 1922 թ. դեկտեմբերին Ուքայրայում ստորագրել արծանագրություն Նաջդի սուլթան Սաուդի հետ, որով հստակեցվում էին սահմանները, և ստեղծվում չեզոք գոտի Իրաքի և Նաջդի, Քուվեյթի և Նաջդի միջև: Արծանագրության պայմանների համաձայն՝ քոչվոր ցեղերը իրավունք էին ստանում ազատորեն և առանց որևէ արգելքի մտնել այդ գոտիներն իրենց անասունների հոտերն արածացնելու և ջրելու համար: Սակայն նրանց՝ Նաջդին, Իրաքին և Քուվեյթին, ըստ Ուքայրայում ստորագրված արծանագրության, արգելվում էր չեզոք գո-

տիներում կառուցել որևէ քաղաքացիական կամ ռազմական մշտական շինություն.

Ուքայրայի արձանագրության ստորագրումով Անգլիային հաջողվեց կանխել իխվանների հետագա առաջխաղացումը և ներխուժումն Իրաք ու Անդրհորդանան, որոնք հանդիսանում էին բրիտանական ենթամանդատային երկրներ:

Դրա փոխարեն Անգլիան համաձայնվեց Սաուդին ճանաչել Նաջդի, Ջաբալ Շամարի և ալ–Ջաուֆի կառավարիչ:

Աբդ ալ–Ազիզ Սաուդը իր նվաճումների, իսկ այնուհետև իր քաղաքական դիրքերն ամրապնդելու համար, բացի իխվանների զինական ուժից, օգտագործում էր նաև երկու միջոց:

Առաջին՝ նա իր քաղաքականությունը մղում էր վահաբիզմից հեռացած այլախոհ «հերետիկոսների» և «ուղիղ հավատքի դավաճանների դեմ» պայքարի դրոշի ներքո: Հաշվի առնելով Արաբական թերակղզու քոչվոր ցեղերի անդամների գիտակցական ցածր մակարդակը, կարելի է ասել, որ Սաուդի այդ «փաստարկն» իր դրական դերակատարումն ունեցավ, և արաբական զանգվածները գնացին Սաուդի հետևից՝ պաշտպանելով նրա նվաճողական քաղաքականությունը:

Երկրորդ՝ Սաուդը լայնորեն օգտագործեց արաբական քաղաքական մշակույթում լայնորեն կիրառվող և դարեր շարունակ մեծ տարածում գտած խնամիական կապեր հաստատելու ինստիտուտը: Նա ամուսնացավ պարտություն կրած ցեղապետների դուստրերի հետ: Դրա շնորհիվ նա կարողանում էր բարեկամական կապեր հաստատել իր երեկվա հակառակորդների հետ՝ մի կողմից, և նրանց իր հսկողության տակ պահել ու ուժեղացնել նրանց կախվածությունը՝ մյուս կողմից:

Աբդ ալ–Ազիզ Սաուդն ունեցավ 17 կին, որոնք միասին նրան պարգևեցին 45 որդի և 215 աղջիկ: Այդ կանանցից բոլորը չէ, որ ունեին միանման ազդեցություն Սաուդի վրա: Նրանց մեջ առավել նշանավորները մի քանիսն էին, որոնց թիկունքում կանգնած էին ազդեցիկ ընտանիքներ: Առաջինը պետք է նշել Հուսա բինթ Ահմադ ալ–Սուդայրիին՝ յոթ որդիների մորը, որոնց թվում էին Ֆահդը, Սուլթանը, Նայիֆը և Սալմանը: Նրանք բոլորն էլ հետագայում ակնառու դերակատարում ունեցան Սաուդյան Արաբիայի պետական կյանքում, իսկ Ֆահդը դարձավ Սաուդյան Արաբիայի հինգերորդ թագավորը: Ազդեցիկ ընտանիքներից էին նաև Ջոհարա բինթ Մուսաիդ ալ–Ջիլավին՝ ապագա չորրորդ թագավոր Խալիդի մայրը, Ասի ալ–Շուրայիմը՝ Սաուդյան Արաբիայի ներկա թագա-

վոր Աբդալլահի մայրը, Թարֆա բինթ Աբդուլլահ ալ–Շայխը՝ Ֆայսալի՝ Սաուդյան Արաբիայի երրորդ թագավորի մայրը:

Սակայն ամբողջ Արաբիայի վրա Սաուդի տիրապետությունը տարածելու ճանապարհին անհրաժեշտ էր հաղթահարել նս մեկ լուրջ խոչընդոտ: Խոսքը Հիջազի և նրա թագավոր Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմիի մասին է: Հակամարտությունը Սաուդների և Հաշիմիների միջև Արաբիայում տիրապետող դիրքեր ունենալու համար վաղուց էր ընթանում: Հարաբերությունները նրանց միջև ավելի սրվեցին այն բանից հետո, երբ Հիջազի թագավոր և Մեքքայի շերիֆ Հուսեյնը 1924 թ. մարտի 6–ին իրեն հռչակեց խալիֆա՝ բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդ: Սաուդը Հուսեյնին համարեց ինքնակոչ: Նաջդի սուլթանը դեմ էր նաև բոլոր արաբների թագավոր դառնալու Հուսեյնի հավակնություններին: 1924 թ. սեպտեմբերին պատերազմական գործողություններ սկսվեցին Նաջդի և Հիջազի միջև: Հաջողությունը ուղեկցեց Սաուդին, որը, գրավելով Մեքքան, Մեդինան, Ջիդան, 1925 թ. դեկտեմբերին ավարտեց Հիջազի գրավումը ու միացումը Նաջդին[21]:

Այսպիսով՝ Սաուդին հաջողվեց գրավել Արաբիայի բոլոր հիմնական մարզերը, որոնց միավորումով քաղաքական քարտեզի վրա հայտնվեց մի նոր արաբական պետություն: 1926 թ. հունվարի 15–ին նա Մեքքայում իրեն պաշտոնապես հռչակեց Հիջազի թագավոր և Նաջդի ու կախյալ երկրների սուլթան: 1926 թ. հուլիսին մահմեդականների ընդհանուր կոնգրեսը Աբդ ալ–Ազիզ Սաուդին ճանաչեց մահմեդական սուրբ վայրերի՝ Մեքքայի և Մեդինայի շերիֆ՝ հովանավոր և պահապան:

Խորհրդային Միությունը, առաջինն աշխարհում, 1926 թ. փետրվարի 18–ին ճանաչեց նորաստեղծ այդ պետությունը և պատրաստակամություն հայտնեց նրա հետ զարգացնել քաղաքական, առևտրական և մշակութային հարաբերություններ: Ջիդայում բացվեց խորհրդային դիվանագիտական ներկայացուցչություն: 1927 թ. արաբական այդ նոր պետությունը ճանաչեց նաև Մեծ Բրիտանիան: Այդ երկու պետությունների և նրանց հաջորդած այլ պետությունների կողմից «Հիջազի թագավորության, Նաջդի սուլթանության և կախյալ երկրների» ճանաչումը զգալիորեն ամրապնդեց նրա միջազգային դիրքերը:

21 Այդ մասին ավելի մանրամասն տես սույն հատորի «Հորդանան» գլուխը:

2. Հիջազի թագավորության, Նաջդի սուլթանության և կախյալ երկրների պետական և սոցիալական կառուցվածքը

Պատմության մեջ հաճախ չէ, որ հանդիպում է պետական կառուցվածք ունեցող մի այնպիսի երկիր, որի շրջանակներում նրա բաղադրամասերն ունենան տարբեր կարգավիճակ: Բացառությունների թվին էր պատկանում Արաբիայում ձևավորված նոր պետական կազմավորումը՝ «Հիջազի թագավորությունը, Նաջդի սուլթանությունը և կախյալ երկրները», որը պետականության կարգավիճակի առումով եռաստիճան մի կառույց էր:

Նրա մի մասը կամ բուրգի գագաթը Հիջազն էր, որը համարվում էր թագավորություն: Իսկ դա պատմական տվյալ ժամանակաշրջանում միապետական կառուցվածք ունեցող համակարգում համարվում էր պետության ամենաբարձր կարգավիճակը. հաջորդ՝ ավելի ցածր կարգավիճակը սուլթանությունն էր: Նման ստատուս ուներ Նաջդը, թեև նա և նրա էմիր Աբդ ալ–Ազիզ Սաուդն էին գլխավորել Արաբիայի տարբեր նահանգները և էմիրությունները մեկ միասնական պետության մեջ միավորելու շարժումը: Եվ վերջապես՝ երրորդ և ամենացածր կարգավիճակն ունեին այսպես կոչված «կախյալ երկրները», որոնք նախկին էմիրություններն էին, ինչպես՝ Հասայի, Ասիրի, Ջաբալ Շամարի և այլն:

Հասկանալի է, որ կառավարման առումով դա իրենից շատ բարդ մեխանիզմ էր ներկայացնում, և նրա ղեկավարից՝ թագավոր և սուլթան Աբդ ալ–Ազիզ Սաուդից շատ մեծ հմտություն ու կամք էր պահանջվում պահպանելու այդ պետության ամբողջականությունը և միասնականությունը, այն դարձնել կենսունակ օրգանիզմ:

Նման բազմաշերտ կառույց ունեցող պետությունը հնարավոր չէր կառավարել սովորական մեխանիզմներով և մեթոդներով: Այստեղ պահանջվում էր նոր մոտեցում: Դրանով է նաև բացատրվում այն հանգամանքը, որ Հիջազի թագավորությունը, Նաջդի սուլթանությունը և կախյալ երկրների պետությունը ձևավորվեց որպես բացարձակ աստվածապետություն, որի բացարձակ միապետը դարձավ Աբդ ալ–Ազիզ Սաուդը: Սաուդյան կլանը կամ ընտանիքը դարձավ կառավարող դինաստիա. Թագավոր–սուլթանի ձեռքում կենտրոնացվեց գործադիր, օրենսդիր, կրոնական, դատական և ռազմական ամբողջ իշխանությունը: Նա միաժամանակ երկրի հոգևոր առաջնորդը՝ վահաբիների իմամն էր և գլխավոր դատավորը: Երկիրը չուներ սահմանադրություն, և նրա սահմանադ-

րություն հռչակվեց մուսուլմանների սրբազան գիրքը՝ Կորանը: Երկրի օրենսդրությունը բխում էր Կորանի հիմնադրույթներից և հենվում շարիաթի սկզբունքների վրա: Երկրում որևէ օրենք կամ նորմ, լիներ քաղաքական, իրավական կամ հոգևոր–բարոյական, չէր կարող հակասել Կորանի հիմնադրույթներին և շարիաթի սկզբունքներին: Դրանց պաշտպանության դիրքերում կանգնած էին բացարձակ միապետը և իսլամի վահաբիական տարբերակը:

Սակայն պետության համար կենսական նշանակություն ունեցող կարևոր հարցեր քննարկելիս թագավորը երբեմն հրավիրում էր ֆեոդալական ավագանու խորհուրդ, որին մասնակցում էր նաև վահաբի հոգևորականության վերնախավը: Նրանց «խորհուրդները» միապետի համար պարտադիր չէին: Նա կարող էր դրանք հաշվի առնել կամ մերժել:

Կենտրոնական Արաբիայում կազմավորված այդ նոր պետությունը ֆեոդալական միապետություն էր: Երկրի կառավարող վերնախավը բաղկացած էր ֆեոդալներից, ցեղերի ավագանուց, շեյխերի և երևելի ուլեմներից՝ աստվածաբաններից, որոնք մեծ հեղինակություն էին վայելում երկրում: Դեռևս ուժեղ էին ցեղային հարաբերությունները և տարբեր ցեղեր և ցեղային միավորումներ, ինչպես՝ շամար, աջմա, մութեյր, աթայբա, հարբ և այլն, որոնք մեծ դեր էին խաղում քաղաքական և սոցիալական կյանքում: Թագավորը հաշվի էր նստում նրանց հետ, ձգտում լավ հարաբերություններ պահպանել ցեղապետների հետ՝ սիրաշահելով նրանց զանազան նվերներով, կաշառքով, պաշտոններ տրամադրելով: Այդ նպատակին էին ուղղված նաև, ինչպես արդեն նշել ենք, նրա ամուսնությունները երևելի և ազդեցիկ կլանների կամ ընտանիքների աղջիկների հետ:

Բնակչության զգալի մասը, իսկ օազիսներում՝ հիմնական մասը, նստակյաց էր: Սակայն մեծ թիվ էին կազմում բեդվինները՝ քոչվոր անասնապահները: Սաուդը եռանդուն գործունեություն ծավալեց բեդվիններին նստակյաց դարձնելու ուղղությամբ: Դեռևս մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, ինչպես նշվեց, Սաուդը ստեղծել էր այսպես կոչված հիջրաներ՝ բեդվինական հողագործական համայնքներ, որոնց օգնությամբ 20–30–ական թվականներին քոչվորներին դարձնում էին, անհրաժեշտության դեպքում անգամ բռնի կերպով, նստակյացներ: Նրանց բնակիչները բաժանվում էին հողագործների, անասնապահների, առևտրականների և մութավաների՝ վահաբիզմի քարոզիչների: Դա սոցիալական նոր ինստիտուտ էր, որը գլխավորում

էին բնակիչների կողմից ընտրվող և Սաուդի կողմից հաստատվող էմիրները:

Զգալի դեր էին խաղում նաև առևտրական խավը, հատկապես Հիջազում, որը թագավորության տնտեսապես առավել զարգացած շրջանն էր, և արհեստավորները: Իսկ ինչ վերաբերում է բանվոր դասակարգին և ազգային մտավորականությանը, ապա սոցիալական այդ ուժերը դեռևս գտնվում էին զարգացման սաղմնային վիճակում:

3. «Կուլտուրական վահաբիզմի» քաղաքականությունը: Իխվանների կազմակերպության ջախջախումը և երկրի հետագա կոնսոլիդացիան

Աբդ ալ–Ազիզ Սաուդը գործունյա անձնավորություն էր: Նա արդեն կուտակել էր պետության կառավարման զգալի փորձ, որը նրան հուշում էր երկրում որոշ վերափոխումներ և նորամուծություններ կատարելու անհրաժեշտությունը: Նա հասկանում էր, որ առանց «մեռյալ շրջանից» կամ միջնադարյան «անշարժության գոտուց» դուրս գալու և գեթ նվազագույն չափով XX դարի տեխնիկական և մշակութային նվաճումներին հաղորդակից լինելու հնարավոր չէր կենսունակ պետություն ստեղծել և ապահովել նրա առաջընթացը:

Սաուդյան Արաբիայում տիրապետող հանդիսացող վահաբիզմն անգամ դեմ էր երաժշտությանը և ռադիոյին, արգելում էր գինի և սուրճ խմելը, ծխախոտի օգտագործումը և այլ «ճոխություններ»: Նրա գլխավոր պահանջներից էր վերադարձը «մաքուր իսլամին» և բեդվինական ասկետ կյանքին:

Այդուհանդերձ, Սաուդն իրեն հատուկ եռանդով ու հետևողականությամբ ձեռնամուխ եղավ երկրում որոշ նորամուծություն մտցնելու և որոշ արգելքներ վերացնելու խնդրին: Իհարկե, չպետք է կարծել, թե նա մտադիր էր արմատական փոփոխություններ կատարել և երկրի դռները բացել անխտիր բոլոր նորամուծությունների առջև: Նա չէր կարող դիմել նման քայլի մի այնպիսի երկրում, որը հետամնաց էր և որտեղ շատ ուժեղ էին պահպանողականները ու ամեն տեսակի նորամուծությունների հակառակորդները: Չմոռանանք նաև, որ Սաուդը իր երկրի և նրա միջավայրի, իր դարաշրջանի զավակն էր:

Այդուհանդերձ, նա սկսեց կիրառել այսպես կոչված «կուլտուրական վահաբիզմի» քաղաքականություն, որի համաձայն այն բոլոր նո-

րամուծությունները, այդ թվում և տեխնիկական, որոնք չէին հակասում իսլամի ոգուն, համարվում էին թույլատրելի: Ցանկանում ենք ընթերցողի ուշադրությունը հրավիրել այն կարևոր հանգամանքի վրա, որ նա իր նորամուծությունները փորձում էր խցկել «կուլտուրական վահաբիզմի» հասկացության շրջանակներում և դրանք սրբագործել վահաբիզմի՝ Արաբիայում տիրապետող իսլամի այդ ուղղության անունով: Ելնելով դրանից՝ նա զարկ տվեց ավտոճանապարհների շինարարությանը, ներմուծեց ավտոմոբիլներ, կառուցեց հեռախոսային ցանց, ռադիոկայաններ, բանակը զինեց ժամանակակից զենքով, այդ թվում՝ ինքնաթիռներով, և այլն.

Սուլթանն ուժեղացրեց հսկողությունը ցեղերի և նրանց գործունեության վրա: 1927 թ. օգոստոսի 19–ի հրամանով վերացվեց բեդվինական և սովորութային իրավունքը, որը փոխարինվեց շարիաթով: Հարցն այն էր, որ համարյա ամեն մի ցեղ ուներ իր ադաթներն ու սովորութային նորմերը և առօրյա կյանքում ղեկավարվում էր դրանցով: Սաուդը, ձեռնամուխ լինելով կենտրոնացված պետության կառուցմանը, հասկանում էր, որ առանց միասնական իրավական նորմերի հաստատման և իրագործման հնարավոր չէ դրան հասնել: Այդ պատճառով էլ նա որոշեց վերացնել ցեղային և բեդվինական սովորութային իրավունքը և իրավական հարցերի կարգավորումը տեղափոխեց շարիաթի դաշտը՝ շարիաթի նորմերը համարելով ոչ միայն գերակա, այլև պարտադիր նորմեր ամբողջ երկրում: Դրան հետևեց հաջորդ քայլը, որը տրամաբանորեն բխում էր նախորդից: Շեյխերը զրկվեցին դատավորի իրավունքից, որը հանձնվեց թագավորի կողմից նշանակվող կադիներին: Փոփոխություններ մտցվեցին նաև հարկերի գանձման բնագավառում: Որոշակի շրջանակների մեջ դրվեցին նաև իխվանները:

Այս վերափոխումները և նորամուծությունները առաջացրին միապետության ամենահետադիմական և պահպանողական խավերի դժգոհությունը: Դժգոհ էին ուլեմները, որոնք վախենում էին, թե տեխնիկական նորամուծությունները. ռադիոյի, հեռախոսի կիրառումը կխարխլեն կրոնի և հոգևորականության դիրքերը: Դժգոհությունը համակել էր ցեղային ավագանուն և ֆեոդալական վերնախավի այն շերտերին, որոնք զրկվել էին ըստ իրենց հայեցողության գործելու հնարավորությունից և հարկադրված էին ենթարկվել կենտրոնական իշխանությանը:

Սակայն ամենից ավելի դժգոհ էին իխվանները: Նրանց հարստության հիմնական աղբյուրներից մեկը թալանչիական բնույթի հարձա-

կումներն էին սահմանամերձ Իրաքի, Քուվեյթի և Անդրհորդանանի վրա: Սաուդը, վախենալով հարաբերությունների սրումից Անգլիայի հետ, որից կախման մեջ էին գտնվում վերոնշյալ երկրները, արգելում էր իխվանների այդ ավազակային արշավները: Դա դարձավ գլխավոր պատճառը, որ իխվանների մեծ մասը անցավ Սաուդի հակառակորդների ճամբարը: 1927–1928 թթ. տեղի ունեցան իխվանների և դժգոհ ցեղերի հակակառավարական ելույթներ: Մի շարք քոչվոր ցեղեր դիմադրություն էին ցույց տալիս հիջրաներ ստեղծելու կառավարության քաղաքականությանը: Այդ ուղղությամբ առավելապես աչքի ընկավ հարբ ցեղը, որը ապստամբեց 1927 թ., սակայն կառավարությունը այն ճնշեց: Ցեղերի ապստամբությունը կանխելու նպատակով թագավորի կարգադրությամբ նրանցից պատանդներ էին վերցնում:

Դրությունն ավելի սրվեց, երբ ապստամբեցին իխվանները: Նրանք Մեքքայում ոչնչացրին ռադիոկայանը, մի շարք տեղերում հրդեհում էին ավտոմեքենաները, խոչընդոտում ռազմական նոր տեխնիկայի կիրառմանը զինված ուժերում և ձգտում ապավինել զենքի հին, միջնադարյան և իրենց դարն ապրած տեսակներին ու մարտավարությանը: Սաուդի բոլոր փորձերը՝ 1927–1928 թթ. ընթացքում համաձայնության գալ իխվանների ղեկավարների հետ, անհաջողության մատնվեցին: Մութեյր ցեղի իխվանները շեյխ Ֆեյսալ ալ–Դավիշի գլխավորությամբ շարունակում էին արշավել Իրաքի և Քուվեյթի սահմանամերձ տարածքների վրա, կողոպտում և սպանում էին շամար, անագա և շաֆիր ցեղերի բեդվիններին, որոնք հրաժարվում էին միանալ ապստամբներին: Սաուդը, տեսնելով, որ բանակցությունների միջոցով հնարավոր չէ տարածայնությունները հարթել, 1928 թ. ապստամբների դեմ հանեց իր 15–հազարանոց բանակը, որը պարտության մատնեց իխվաններին: 1929 թ. վերջերին նրանք կրկին ապստամբեցին, սակայն այս անգամ ևս նրանք, և այն էլ վերջնականապես, ջախջախվեցին: Խռովարարների շատ ղեկավարներ մահապատժի ենթարկվեցին, իսկ նրանց հիջրաներն ու այլ բնակավայրեր հրի մատնվեցին:

Այս բոլորը ծանր անդրադարձավ երկրի տնտեսական վիճակի վրա, որը նոր հարված ստացավ 1929–1933 թթ. տնտեսական համաշխարհային ճգնաժամի հետևանքով: Խիստ կրճատվեց ուխտագնացների թիվը Մեքքա և Մադինա, որի հետևանքով պակասեցին դրամական եկամուտները, արժեզրկվեց երկրում գործող դրամը՝ սաուդյան ռիյալը, իսկ արևմտյան տերությունները հրաժարվեցին ապրանքներ

մատակարարել և դրամական փոխառություն տրամադրել: Այս բոլորից հիմնական տուժողները հողագործները, անասնապահները և քոչվորները եղան:

Այդուհանդերձ, Սաուդին հաջողվեց ավելի ամրապնդել իր իշխանությունը երկրում և վճռական քայլ կատարել նրա տարբեր հատվածների տարբեր կարգավիճակները վերացնելու և միասնական պետական համակարգ հաստատելու ուղղությամբ:

1932 թ. սեպտեմբերի 18–ին Սաուդի հրամանով որոշում ընդունվեց «Արաբական թագավորության մասերի միավորման վերաբերյալ»: Վերացվեց երկրի հին անվանումը՝ «Հիջազի թագավորություն, Նաջդի սուլթանություն և կախյալ երկրներ», և այդ պետական կազմավորումը հռչակվեց «Սաուդյան Արաբիայի թագավորություն»: Աբդ ալ–Ազիզ Սաուդը դարձավ Սաուդյան Արաբիայի թագավոր:

Սխալ կլիներ այդ անվանափոխությունը համարել ձևական: Իրականում տեղի ունեցավ ներքին կոնսոլիդացիա և միասնական կարգավիճակի հաստատում: Նախկին թագավորությանը, սուլթանությանը և կախյալ էմիրություններին փոխարինելու եկան նահանգները, որպես միևնույն երկրի օրգանական մասեր:

Հարկ է ուշադրություն դարձնել մի յուրահատկության վրա: Երկրի նոր անվան մեջ ներառնվեց Սաուդյան տոհմի «Սաուդ» ինքնանվանումը, որը կցվեց «Արաբիա» բառին, և «Սաուդ» ու «Արաբիա» անուններին համադրումից առաջացավ նոր պետության անվանումը՝ «Սաուդյան Արաբիայի թագավորություն»:

30–ական թվականներին շարունակվում էր Սաուդյան պետության կենտրոնացման և Սաուդյան դինաստիայի դիրքերի ամրապնդման պրոցեսը: Թագավորական ընտանիքն ավելի ու ավելի էր ուժեղացնում վերահսկողությունը ցեղերի, շեյխերի, ֆեոդալական–տոհմական ավագանու գործունեության վրա: Գոյություն ունեցող օրենքների համաձայն արգելված էին քաղաքական կազմակերպությունները և միությունները, այդ թվում և արհեստակցական, գյուղացիական: Հասարակական առօրյա կյանքը խստագույնս կանոնակարգված էր Կորանի և շարիաթի դոգմաներով: Նման վիճակի պահպանմանը մեծապես նպաստում էր երկրի տնտեսական և կուլտուրական հետամնացությունը: Տնտեսական առաջընթացի ուղղությամբ 30–ական թվականներին որևէ լուրջ քայլ չկատարվեց. Սաուդյան Արաբիան շարունակում էր մնալ հետամնաց ագրարային երկիր, որտեղ տիրապետող էին ֆեոդալական

հարաբերությունները, սակայն զգալի էին նաև տոհմատիրական կարգերի, անգամ ստրկության մնացորդները:

II. ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ (1930–1940 թթ.)

1. Սաուդյան Արաբիայի միջազգային դիրքերի ամրապնդումը 1930–ական թվականներին

1930–ական թվականներին զգալիորեն ամրապնդվեցին Սաուդյան Արաբիայի միջազգային դիրքերը: Հետագա զարգացում ստացան խորհրդա–սաուդյան առևտրական, ինչպես նաև քաղաքական հարաբերությունները, որի արտացոլումը հանդիսացավ 1932 թ. Սաուդյան Արաբիայի թագավորի որդու՝ Ֆեյսալ իբն Սաուդի այցելությունը Խորհրդային Միություն: Մոսկվայում նա հանդիպեց և բանակցություններ վարեց խորհրդային ղեկավարության հետ, որը նրան ցույց տվեց ջերմ ընդունելություն: Ֆեյսալի այցելությունը Խորհրդային Միություն շշմեցուցիչ տպավորություն թողեց՝ հաշվի առնելով Սաուդյան Արաբիայի վահաբիական–մուսուլմանական բնույթը և Խորհրդային Միության սոցիալիստական աթեիստական պետություն լինելու հանգամանքը: Սոցիալիստական հասարակարգը իր աթեիստական գաղափարախոսությամբ, հասկանալի է, անընդունելի էր Սաուդյան Արաբիայի համար, որի սահմանադրությունը Կորանն էր, իսկ խորհրդային պետությունն իր ծննդյան առաջին օրվանից խրճիթների անունից պատերազմ էր հայտարարել պալատներին: Սակայն քաղաքականության մեջ ինչեր ասես, որ չեն պատահում: Միջազգային ասպարեզ վերջերս դուրս եկած սաուդյան թագավորությունը իր միջազգային դիրքերի ամրապնդման կարիք էր զգում և նա դրան ձգտում էր՝ ընդարձակելով իր կապերի ոլորտը՝ չցանկանալով կողմնորոշվել բացառապես արևմտյան պետությունների՝ Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ–ի, Գերմանիայի կամ Իտալիայի կողմը: Խորհրդային Միությունն իր հերթին ջանում էր կապերն ամրապնդել Ասիայի մի շարք երկրների հետ՝ փորձելով նրանց օգտագործել «միջազգային իմպերիալիզմի դեմ» պայքարում:

Կարգավորվեցին նաև սաուդա–անգլիական փոխհարաբերությունները, որի համար հիմք հանդիսացավ դեռևս 1927 թ. կնքված անգ-

լո–սաուդական «Բարեկամության և բարի մտադրությունների պայմանագիրը»: Անգլիան ճանաչեց Սաուդյան Արաբիայի անկախությունը, իսկ Սաուդը՝ Անգլիայի «հատուկ հարաբերությունները» Պարսից ծոցի արաբական շեյխությունների հետ: Ի զարգացումն քաղաքական այդ կուրսի՝ Սաուդ թագավորը 1930 թ. բրիտանական պրոտեկտորատ Քուվեյթի հետ ստորագրեց սահմանային վեճերը կարգավորելու պայմանագիր, իսկ 1931 թ. և 1933 թ. բարեկամության և բարիդրացիական հարաբերությունների պայմանագրեր ստորագրեց համապատասխանաբար Իրաքի և Անդրիորդանանի հետ, որոնք գտնվում էին բրիտանական մանդատային կառավարման ներքո:

Բարեկամության պայմանագրեր ստորագրվեցին նաև Գերմանիայի (1929 թ.) և Իտալիայի (1933 թ.) հետ: Իտալիան այդ ժամանակ արդեն ակտիվացրել էր իր քաղաքականությունը Արաբական Արևելքում և Կարմիր ծովի ավազանում՝ նպատակ ունենալով ամրապնդել իր դիրքերը արաբական երկրներում, այդ թվում և Սաուդյան Արաբիայում: 1934 թ., ոչ առանց նրա հրահրման, պատերազմ սկսվեց Սաուդյան Արաբիայի և Եմենի միջև Ասիր, Նաջրան և Ջիզան մարզերի համար: Սաուդյան զորքերը, պարտության մատնելով եմենցիներին, գրավեցին Թիհամի մարզը, այդ թվում և Հոդեյդա կարևոր նավահանգիստը: 1934 թ մայիսին պատերազմական գործողությունները դադարեցվեցին, և երկու երկրների միջև ստորագրվեց հաշտության պայմանագիր, ըստ որի Սաուդյան Արաբիան իր զորքերը դուրս բերեց Թիհամից և Հոդեյդայից. սակայն նրան էին մնում Ասիրը և Ջիզանը, իսկ Նաջրանը բաժանվեց երկու պետությունների միջև:

30–ական թվականների երկրորդ կեսից նկատվում է Սաուդյան Արաբիայի հարաբերությունների հետագա բարելավում արաբական երկրների հետ: 1936 թ. դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Եգիպտոսի հետ, որի հետ կնքվեց բարեկամության պայմանագիր: 1936 թ. «Արաբական եղբայրության և դաշինքի պայմանագիր» ստորագրվեց Իրաքի հետ, որին 1937 թ. միացավ Եմենը:

1930–ական թվականներին սկսվեց ամերիկյան կապիտալի ներթափանցումը Սաուդյան Արաբիա. Նրան հրապուրողը նախ և առաջ սաուդյան նավթն էր, ինչպես նաև օգտակար հանածոները՝ ոսկի, արծաթ և այլ թանկարժեք մետաղները: 1933 թ. մայիսի 29–ին Սաուդի կառավարությունը համաձայնագիր ստորագրեց ամերիկյան «Ստանդարտ օյլ կոմպանի օֆ Կալիֆոռնիա» նավթային ընկերության հետ, որով վեր-

ջինս 932 հազ. քառ. կմ տարածության վրա 66 տարի ժամանակով նավթի հետախուզման և հանույթի կազմակերպման կոնցեսիա ստացավ: 1933 թ. նոյեմբերի 6–ին ստորագրվեց «Ժամանակավոր համաձայնագիր Սաուդյան Արաբիայի թագավորության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև քաղաքական և հյուպատոսական ներկայացուցչության, դատական պաշտպանության, առևտրի և նավագնացության մասին»: Համաձայնագիրը ԱՄՆ–ի քաղաքացիների իրավունքները հավասարեցնում էր այլ օտարերկրյա պետությունների քաղաքացիների իրավունքների հետ և ընդլայնում նրանց գործունեության շրջանակները: 1933 թ. ստեղծվեց նշված նավթային ընկերության դուստր ընկերությունը՝ «Կալիֆոռնիա–Արաբիեն Ստանդարտ օյլ կոմպանին»: 1935 թ. սկսվեց նավթի հորատումը, և 1938 թ. Դամամի շրջանում հայտնաբերվեցին նավթի հսկայական պաշարներ, ու Սաուդյան Արաբիան մտավ նավթարդյունահանող երկրների շարքը: Ռաս Թանուրում սկսվեց առաջին նավթազտիչ գործարանի կառուցումը: 1939 թ. Սաուդը «Կալիֆոռնիա–Արաբիեն Ստանդարտ օյլ կոմպանիի» հետ ստորագրեց այսպես կոչված «Լրացուցիչ համաձայնագիր», որով այդ ընկերությունը նավթարդյունահանման կոնցեսիան ստացավ 207 հազ. քառ. կմ տարածության վրա՝ դարձյալ 66 տարի ժամկետով:

Այս շրջանում կնքվեցին նաև սաուդա–ամերիկյան մի շարք համաձայնագրեր Սաուդյան Արաբիային ավտոմեքենաներ, պահեստամասեր, ավտոդողեր և այլ ապրանքներ մատակարարելու վերաբերյալ.

Միաժամանակ փոփոխություններ տեղի ունեցան խորհրդա–սաուդյան հարաբերություններում: Պատերազմի նախօրյակին ԽՍՀՄ–ը և Սաուդյան Արաբիան, «ֆինանսական խնայողության նկատառումներով», հետ կանչեցին իրենց ներկայացուցիչներին, որով և ընդհատվեցին դիվանագիտական հարաբերությունները երկու երկրների միջև: Իհարկե, հարցը ֆինանսական հնարավորությունների մեջ չէր, այլ այն փոփոխությունների մեջ, որ երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին ի հայտ եկան Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականության մեջ, որոնք նպաստավոր չէին Խորհրդային Միության համար:

2. Սաուդյան Արաբիան Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939–1945 թթ.)

Սաուդյան Արաբիան չդարձավ Երկրորդ համաշխարհային պատերազմի անմիջական մասնակից: Սաուդը պաշտոնապես հայտարարեց իր երկրի չեզոքության մասին, թեև դա այնքան էլ հեշտ չէր Սաուդյան Արաբիայի համար, քանի որ նա ենթարկվում էր թե՛ Անգլիայի և թե՛ Գերմանիայի ու Իտալիայի ճնշմանը:

Թագավորը հարկադրված էր հաշվի առնել, որ իր երկիրը շրջապատված էր Անգլիայից կախման մեջ գտնվող երկրներով, ուխտավորների մեծ մասը գալիս էր Մեծ Բրիտանիայի ազդեցության ոլորտում գտնվող մուսուլմանական երկրներից, հացահատիկի հիմնական մատակարարողը անգլիական գաղութ Հնդկաստանն էր, երկրի դրամը՝ ռիյալը, կապված էր անգլիական ֆունտ ստեռլինգին, բրիտանական նավատորմը տիրապետող էր Կարմիր ծովում և Պարսից ծոցում: Այս պարագաները թելադրում էին սաուդյան միապետին լինել զգույշ: Բայց, այդուհանդերձ, պատերազմը սկսվելուց հետո Աբդ ալ–Ազիզ Սաուդը իր զորքերի մի մասը կենտրոնացրեց Իրաքի, Քուվեյթի և Անդրհորդանանի սահմանների մոտ՝ վախենալով անգլիական ներխուժումից: Անգլիան չդիմեց նման քայլի՝ հաշվի առնելով այդ հսկայածավալ երկիրն օկուպացնելու դժվարությունները, իր ռազմական ուժերի սահմանափակ լինելը, ԱՄՆ–ի նավթային կոնցեսիաների գոյությունը, ամերիկյան շահերը և այլ հանգամանքներ:

Անգլիան, որ պատերազմի ժամանակ հայտնվեց ծանր դրության մեջ, իր հերթին շահագրգռված էր լավ հարաբերություններ պահպանել Սաուդյան Արաբիայի հետ՝ կանխելու նրա թեքվելը առանցքի երկրների կողմը: Ելնելով դրանից՝ նա զգալի ֆինանսական օգնություն էր ցույց տալիս Սաուդին: Վերջին հաշվով Սաուդյան Արաբիայի չեզոքությունն ավելի ձեռնտու էր Անգլիային, քան թե Գերմանիային և Իտալիային:

Վերջիններս, խաղալով արաբների հակագաղութային տրամադրությունների հետ, հրահրում էին Սաուդյան Արաբիային հանդես գալ Անգլիայի դեմ: Դրան որպես փոխհատուցում Հիտլերը խոստանում էր Սաուդին հռչակել «բոլոր արաբների թագավոր»: Սակայն Սաուդը չգայթակղվեց նման սին խոստումներից: Դեռ ավելին՝ 1941 թ. սեպտեմբերին նա չեղյալ հայտարարեց 1929 թ. Գերմանիայի հետ կնքած բարեկամության պայմանագիրը, իսկ 1942 թ. երկրից արտաքսեց իտալացիներին:

Պատերազմը ծանր անդրադարձավ Սաուդյան Արաբիայի տնտեսական և ֆինանսական վիճակի վրա: Խախտվեցին ավանդական կապերը, սահմանափակվեց առևտուրն ու ապրանքափոխանակությունը, ուխտագնացության անկման պատճառով շեշտակի կրճատվեցին դրամական եկամուտները, գանձատունը փաստորեն դատարկվեց:

Սաուդյան Արաբիայի դժվար վիճակը իրենց շահերի համար ծառայեցրին Անգլիան և ԱՄՆ–ը: 1942 թ. Անգլիան իր տնտեսական և ֆինանսական խորհրդատուներին ուղարկեց Սաուդյան Արաբիա: Իր դիրքերի ամրապնդման համար նա սկսեց օգտագործել Մատակարարման մերձավորարևելյան կենտրոնը, որը սննդամթերքի հայթայթմամբ էր զբաղված և գտնվում էր Անգլիայի հսկողության տակ:

Իր քաղաքականությունն ակտիվացրեց ԱՄՆ–ը: Ամերիկյան քաղաքականության մեջ մեծ դեր էր խաղում նավթային գործոնը: 1942 թ. մարտին ԱՄՆ–ը իր գործերի հավատարմատարին նշանակեց Ջիդայում, իսկ 1943 թ մայիսին երկու երկրների միջև հաստատվեցին նորմալ դիվանագիտական հարաբերություններ: ԱՄՆ–ի դեսպանության կազմում մտցվեց նավթի հարցերով զբաղվող հատուկ կցորդ: Նույն 1943 թ. ամերիկյան նավթային ընկերությունը, որը վերանվանվեց «Արաբիեն–Ամերիկեն օյլ կոմպանիի» (ԱՐԱՄԿՈ), Սաուդից իրավունք ստացավ կառուցելու տրանսարաբական նավթամուղ՝ դեպի Միջերկրական ծով: 1943 թ փետրվարի 18–ին ԱՄՆ–ի պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտի կարգադրությամբ Սաուդյան Արաբիան համարվեց «կենսականորեն կարևոր Միացյալ Նահանգների պաշտպանության համար» և սկսեց օգնություն ստանալ լենդ–լիզի օրենքի հիման վրա: ԱՄՆ–ը ձեռնամուխ եղավ զենքի և ռազմական հանդերձանքի մատակարարմանը Սաուդին, և ամերիկյան ռազմական միսիան 1944 թ. անգլիական հրահանգիչների հետ միասին սկսեց վարժեցնել սաուդյան բանակը: 1944–1946 թթ. ԱՄՆ–ը ռազմաօդային բազա կառուցեց Դահրանում, որը նրա վրա նստեց 300 մլն դոլար:

Սաուդա–ամերիկյան հարաբերություններն անշեղորեն զարգանում և ընդլայնվում էին: 1945 թ. փետրվարի 14–ին տեղի ունեցավ ԱՄՆ–ի պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտի հանդիպումը Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդ ալ–Ազիզ Սաուդի հետ՝ ամերիկյան «Քուինսի» հածանավի վրա՝ Սուեզի ջրանցքում: Յալթայի կոնֆերանսի ավարտից հետո տունդարձի ճանապարհին ԱՄՆ–ի պրեզիդենտը որոշեց հանդիպել Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդ ալ–Ազիզ Սաուդի, ինչպես նաև

Եգիպտոսի, Սիրիայի և Լիբանանի ղեկավարների հետ և նրանց հետ քննարկել մերձավորարևելյան տարածաշրջանային հարցերը, մանավանդ, որ արդեն մոտ էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը:

Սաուդ թագավորի հետ Ռուզվելտի բանակցությունների ժամանակ կողմերը համաձայնվեցին, որ ամերիկյան և անգլիական նավերը ազատորեն կարող են օգտագործել Պարսից ծոցում գտնվող սաուդյան նավահանգիստները, իսկ ամերիկյան ավիացիան՝ Դահրանի ռազմաօդային բազան: Սաուդը կրկին հաստատեց ԱՄՆ–ին տրված նավթային կոնցեսիան և Տրանսարաբական նավթամուղի կառուցումը: Սակայն թագավորը պայման դրեց, որ Սաուդյան Արաբիան երբեք չպետք է օկուպացվի կամ չպետք է անջատվի նրա տարածքի որևէ մասը: Ամերիկյան պրեզիդենտը սաուդյան թագավորին տվեց նման երաշխիքներ· Միաժամանակ Ռուզվելտը հավաստիացրեց, որ ԱՄՆ–ը չի փոխի իր քաղաքականությունը պաղեստինյան հարցում՝ առանց արաբների և հրեաների հետ նախնական խորհրդակցության:

Սակայն Ռուզվելտի բոլոր փորձերը՝ ստանալ Սաուդի համաձայնությունը հրեաներին Պաղեստինում տեղավորելու հարցում, վերջացան անհաջողությամբ:

1945 թ. մարտին Սաուդյան Արաբիան պատերազմ հայտարարեց Գերմանիային: Նույն ամսին նա ստորագրեց Արաբական պետությունների լիգայի պակտն ու կանոնադրությունը և դարձավ Արաբական Լիգայի անդամ: 1945 թ. նա դարձավ նաև ՄԱԿ–ի հիմնադիր անդամ:

III. ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԱԲԴ ԱԼ–ԱԶԻԶ ԱԼ–ՍԱՈՒԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1945–1953 թթ.)

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջին տարիներին արձանագրվեցին որոշ փոփոխություններ Սաուդյան Արաբիայի սոցիալ–տնտեսական հարաբերություններում: Զգալի զարգացում ապրեցին ապրանքադրամային հարաբերությունները, խորացավ սոցիալ–դասակարգային շերտավորումը, սկսեց ձևավորվել բանվոր դասակարգը, ազգային բուրժուազիան և այլն: Դրան նպաստեց նավթից

ստացվող եկամուտների մեծացումը, որը զգալիորեն պայմանավորված էր նավթային բումով: Թագավորական բազմանդամ ընտանիքը հսկայական գումարներ էր ծախսում շքեղաշուք պալատների կառուցման, թանկարժեք ավտոմեքենաների և պերճանքի առարկաների ձեռքբերման վրա:

Սաուդյան Արաբիայում ավելի ու ավելի էին ամրապնդվում ամերիկյան կապիտալի դիրքերը: Նրան էին պատկանում նավթարդյունահանող և նավթագտիչ գործարանները, որոնցից կախման մեջ էին գտնվում նրանց սպասարկող հարյուրավոր սաուդական մանր ու միջին ընկերություններ ու ձեռնարկություններ: Հենց այս, ինչպես նաև ավտոտրանսպորտի ոլորտում սկսեց ձևավորվել սաուդյան բանվոր դասակարգը: Բանվորները գտնվում էին չափազանց ծանր վիճակում՝ շատ ցածր էր աշխատավարձը. աշխատանքային օրը հասնում էր 10–11 ժամի, տարածված էին զանազան հիվանդություններ և այլն: Եվ սաուդյան բանվոր դասակարգը ոտքի է ելնում իր շահերի պաշտպանության համար: 1945 թ. գործադուլ հայտարարեցին ԱՐԱՄԿՈ–ի նավթագործ բանվորները, որոնք պահանջում էին աշխատավարձի բարձրացում և աշխատանքի պայմանների բարելավում: Նրանց պաշտպանեցին գյուղացիները, մանր առևտրականները և մտավորականությունը: ԱՐԱՄԿՈ–ն հարկադրված էր բավարարել նրանց պահանջները: Այնուհետև գործադուլ հայտարարեցին Հուֆուֆի բանվորներն ու արհեստավորները: Թեև գործադուլավորների նկատմամբ կիրառվում էին ամենադաժան միջոցները, սակայն նրանք շարունակում էին իրենց պայքարը: 1947 թ. հոկտեմբերին կառավարությունն ընդունեց աշխատանքի մասին օրենքը, որը սահմանում էր 8–ժամյա բանվորական օր և 6–օրյա աշխատանքային շաբաթ՝ 10 և ավելի վարձու բանվորներ ունեցող ձեռնարկություններ համար: 1953 թ. ԱՐԱՄԿՈ–ի բանվորները ստեղծեցին իրենց ընդհատակյա կոմիտեն և պահանջեցին ընկերությունից այն ճանաչել որպես իրենց արհմիությունը: Գործադուլներ տեղի ունեցան նաև Ռաս Թանուրում և այլ վայրերում, որոնցից ամենախոշորը 1953 թ. հոկտեմբերի 17–ի գործադուլն էր, որին մասնակցում էր 20 հազար մարդ:

Այս շրջանում արտաքին քաղաքականության բնագավառում որոշակիորեն նկատվում էր մերձեցում Եգիպտոսի հետ: Սաուդյան Արաբիան հանդես էր գալիս «Մեծ Սիրիայի» ծրագրի դեմ, որի հետևում կանգնած էր Անգլիան: Ընդհանրապես, այս շրջանում նկատվում է անգլո–սաուդական հարաբերությունների լարվածություն, իսկ 1952–1955

թթ. ռազմական կոնֆլիկտ ծագեց մի կողմից՝ Սաուդյան Արաբիայի, իսկ մյուս կողմից Անգլիայի հովանավորությունը վայելող և նրա կողմից հրահրված Աբու Դաբիի և Մասկատի զորքերի միջև Բուրայմիի օազիսի կապակցությամբ: Դրան հակառակ, ավելի էին խորանում սաուդա–ամերիկյան հարաբերությունները: 1950 թ. ԱՐԱՄԿՈ–ն ավարտեց 1720 կմ երկարությամբ նավթամուղի կառուցումը Սաուդյան Արաբիայի Աբկայկ նավթավայրից մինչև լիբանանյան Սայդա նավահանգիստը: 1950 թ. Սաուդյան Արաբիայի և ԱՐԱՄԿՈ–ի միջև պայմանագիր ստորագրվեց, որով վերջինս պարտավորվում էր Սաուդյան Արաբիային վճարել նավթի հանույթից ստացած եկամուտների 50%–ը:

Իր կյանքի վերջում Սաուդը փորձեց ինչ–որ չափով կարգավորել նաև կառավարմական ապարատը, սակայն այստեղ նա չհասցրեց ամեն ինչ անել:

Սաուդական կենտրոնացված պետության հիմնադիր Աբդ ալ–Ազիզ Սաուդը վախճանվեց 1953 թ. նոյեմբերի 9–ին ալ–Թաիֆում:

IV. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՑՈՒՄ (1954–1975 թթ.)

1. Իշխանության համար պայքարը սաուդյան ընտանիքի ներսում (1954–1964 թթ.)

Աբդ ալ–Ազիզ Սաուդը թողեց 40–ից ավելի որդիներ և 300 թոռ: Հարց էր ծագում, թե նրանցից ով էր հաջորդելու Սաուդյան Արաբիայի հիմնադիր թագավորին, նստելու սաուդյան գահին և դառնալու սաուդյան բազմանդամ տոհմի գլխավորը կամ նահապետը: Աբդ ալ–Ազիզ Սաուդը, հավանաբար զգալով իր մոտալուտ վախճանը, մահվանից առաջ փորձեց կարգավորել այդ խնդիրը՝ շատ լավ հասկանալով, թե դա ինչպիսի կարևորություն ունի իր հիմնած ընդարձակ պետության ապագայի համար:

Նա սահմանեց, որ իրենից հետո գահին նստելու են իր որդիները՝ ըստ ավագության, իսկ թոռները, որոնց թիվը հասնում էր մի քանի հարյուրի, զրկվեցին այդ իրավունքից, քանի դեռ կենդանի էր Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդի թեկուզ մեկ որդի: Եվ այդ սկզբունքը պահպանվում է մինչև օրս:

Այդ պահին Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդի ավագ որդիներն էին Սաուդը և Ֆեյսալը, և նա որոշեց ընտրությունը կատարել նրանց միջև՝ ըստ տարիքային ավագության: Հիվանդ և անկողնին գամված Աբդ ալ–Ազիզը, որի օրերն արդեն հաշվված էին, իր մոտ կանչեց երկու եղբայրներին՝ Սաուդին և Ֆեյսալին, և նրանց երդվել տվեց Կորանի վրա, որ նրանք կկատարեն իր վերջին կամքը: Նա ավագ որդուն՝ Սաուդին, նշանակեց թագավոր, որն իրեն փոխարինելու էր իր մահվանից հետո, իսկ Ֆեյսալին նշանակեց գահաժառանգ: Բայց դրանով չսահմանափակվեց մուսուլմանների սրբազան գրքի վրա երկու եղբայրների երդման արարողությունը: Թագավոր հոր պահանջով երկու եղբայրները՝ Սաուդը և Ֆեյսալը, երդվեցին ապրել և գործել հաշտ ու խաղաղ՝ Ֆեյսալին պատվիրելով չփորձել հանդես գալ իր թագավոր եղբոր դեմ, և համատեղ ջանքերով ապահովել սաուդյան թագավորության գոյությունը, առաջընթացը և հզորացումը:

Եղբայրները երդվեցին, որ կկատարեն իրենց հոր կամքը, որից շատ գոհ մնաց թագավորը Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդը մինչև մահը հասցրեց նս մեկ կարևոր քայլ կատարել՝ նա ստեղծեց նախարարների խորհուրդ, որի նախագահ նշանակեց իր ավագ որդուն՝ Սաուդ իբն Սաուդին: Բայց դա ընդամենը մի խորհրդատվական մարմին էր և ոչ ավելին:

1953 թ. նոյեմբերի 9–ին՝ այն նույն օրը, երբ վախճանվեց Աբդ ալ–Ազիզ Սաուդը, թագավոր հռչակվեց նրա ավագ որդին՝ Սաուդ իբն Աբդ ալ–Ազիզ իբն Ռահման ալ–Ֆեյսալ ալ–Սաուդը, որն ավելի շատ հայտնի էր Սաուդ իբն Աբդ ալ–Ազիզ կամ Իբն Սաուդ, իսկ թագաժառանգ՝ երկրորդ որդին՝ Ֆեյսալը:

Սաուդ իբն Աբդ ալ Ազիզը (ծ. 1902 թ.) սկսեց օգտվել ավագության իրավունքներից, երբ 1919 թ. մահացավ նրա ավագ եղբայր Թուրքին: Նրա հայրը 1926 թ. նրան նշանակեց Նաջդի փոխսուլթան, իսկ երբ 1932 թ. կազմավորվեց Սաուդյան թագավորությունը, նա նշանակվեց փոխարքա: Նա օգնում էր իր հորը՝ Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդին թագավորությունը կառավարելու գործում՝ կատարելով նրա զանազան հանձնարարությունները: Դրանցից թերևս ամենանշանավորն այն էր, որ նա հաղթական պատերազմ տարավ Հյուսիսային Եմենի դեմ:

Նա, իհարկե, չուներ իր հոր ունակությունները և հմտությունը թագավորությունը կառավարելու գործում և նրան զիջում էր նաև իր մտավոր կարողություններով: Բայց նա բոլորին, ինչպես ցույց կտրվի քիչ անց, գերազանցում էր եսասիրությամբ, ագահությամբ, անհա-

գուրդ ծարավով հարստության ու չքեղության հանդեպ, որը սահմաններ չէր ճանաչում:

Նոր թագավորի՝ Սաուդ Աբդ ալ–Ազիզի առաջին քայլերից մեկը եղավ Սաուդյան Արաբիայում նախարարների խորհուրդի վերահաստատումը, որի վերաբերյալ նա դեկրետ ընդունեց 1954 թ. մարտի 17–ին: Ըստ այդմ՝ նախարարների խորհուրդը պատասխանատու էր թագավորի առջև: Նա ինքն էլ ստանձնեց նախարարների խորհրդի նախագահի պաշտոնը, իսկ եղբորը՝ Ֆեյսալին, նշանակեց վարչապետի տեղակալ և արտաքին գործերի նախարար: Հանդես գալով կառավարության առաջին նիստում՝ Սաուդ թագավորը շարադրեց իր քաղաքականության հիմնական նպատակները՝ կրոնի և շարիաթի ամրապնդում և հավատարմություն վահաբիզմի դոգմաներին, բանակի ուժեղացում, ինչպես նաև պայքար սովի, աղքատության և հիվանդությունների դեմ: Սակայն ժողովրդի վիճակը բարելավելու ուղղությամբ կոնկրետ ոչինչ չձեռնարկվեց: Երկրում ուժեղանում էր դժգոհությունը և աշխատավորների պայքարը իրենց իրավունքների համար: Այդ ուղղությամբ զգալի դեր խաղաց դեռևս 1953 թ. հիմնված Ազգային բարեփոխումների ճակատը, որի հիմնական ծրագրային պահանջներն էին դեմոկրատական ազատությունների ապահովում, ազգային տնտեսության և մշակույթի զարգացում, երկրի ազատագրում իմպերիալիստական կապանքներից, ագրեսիվ բլոկներին չմիանալու, ինչպես նաև բոլոր երկրների հետ, այդ թվում և սոցիալիստական, համագործակցության հաստատում:

1955 թ. նոյեմբերին հանդես եկան ԱՐԱՄԿՈ–ի բանվորները և պահանջեցին վերջ տալ բանվորական գործիչների հետապնդումներին, բարձրացնել աշխատավարձը, անվճար բնակարաններ տրամադրել և այլն: 1956 թ. ամռանը բանվորները պահանջեցին Դահրանի ամերիկյան ռազմաօդային բազայի վերացում և համապատասխան խնդրագիր ներկայացրին թագավորին: Նրանց ոչ մի պահանջ չբավարարվեց, իսկ 1956 թ. հուլիսի 11–ին թագավորն օրենք ընդունեց, որն արգելում էր գործադուլներ և ցույցեր կազմակերպել: Նա բանակի օգնությամբ դաժանորեն ճնշեց բանվորների ելույթը: Միաժամանակ նա մոլեռանդ վահաբականներից կազմակերպեց այսպես կոչված Հավատի և բարոյականության պահպանման լիգա, որն ուղղակի սպառնում, ծեծում, ծաղրուծանակի էր ենթարկում և ահաբեկում բնակչությանը: Գործադուլավորների, ցուցարարների և ընդհանրապես դժգոհների դեմ թագավորն օգտագործում էր նաև բեդվիններից կազմված այսպես կոչված Ազգա-

յին գվարդիան: Սակայն դա չէր կարող կասեցնել թագավորական ռեժիմի դեմ ուղղված պայքարը, որի մեջ մտավ նաև ուսանող երիտասարդությունը:

50–ական թվականներին մեծ թափ ստացած արաբական ազգային–ազատագրական շարժումներն իրենց ազդեցությունն ունեցան նաև Սաուդյան Արաբիայի նոր թագավոր Սաուդի քաղաքականության վրա: Սաուդյան Արաբիան չմիացավ Բաղդադի ագրեսիվ պակտին և շարունակեց եգիպտոսի հետ մերձեցման քաղաքականությունը, որի հետ 1955 թ. ստորագրեց համապատասխան համաձայնագիր: Նման համաձայնագիր Սաուդյան Արաբիան ստորագրեց նաև Սիրիայի հետ: Սաուդյան Արաբիան հստակ դիրք գրավեց եգիպտոսի դեմ 1956 թ. սանձազերծած եռյակ ագրեսիայի ժամանակ՝ հանդես գալով ի պաշտպանություն ագրեսիայի զոհի: Նա խզեց դիվանագիտական հարաբերությունները Անգլիայի և Ֆրանսիայի հետ, ֆինանսական օգնություն ցույց տվեց եգիպտոսին: Սաուդ թագավորը որոշ տատանումներից հետո 1957 թ. փետրվարին մերժեց «էյզենհաուերի դոկտրինան»: Սակայն դա չխանգարեց նրան հինգ տարի ժամանակով երկարաձգել Դահրանի ամերիկյան ռազմաօդային բազայի վարձակալման ժամկետը և լրացուցիչ տնտեսական ու ռազմական օգնություն ստանալ ԱՄՆ–ից:

Սաուդ թագավորի արտաքին քաղաքականության մեջ որոշակի բացասական երևույթներ սկսեցին դրսևորել 1957 թ. սկսած, մանավանդ 1958 թ. եգիպտոսի և Սիրիայի միավորումից և ԱՄՀ–ի կազմավորումից հետո: Սաուդյան Արաբիան անցավ արաբական աշխարհում հետադիմական ուժերին համախմբելու քաղաքականությանը:

Թագավորի ներքին ու արտաքին քաղաքականությունից երկրում կուտակված դժգոհությունն իր արտացոլումը գտավ նաև կառավարող վերնախավի մեջ:

Ահա այժմ տեղն է խոսելու Սաուդ իբն Աբդ ալ–Ազիզի բնավորության որոշ բացասական գծերի մասին, որ խոստացել էինք վերևում, որոնք անմիջական ազդեցություն ունեցան երկրում և արքունիքում իրադրության սրման վրա: Մասնագիտական գրականության մեջ Սաուդ իբն Աբդ ալ–Ազիզը բնութագրվում է որպես «նեղճակատ, հետադիմական, ծույլ և այլասերված դիկտատոր»: Թագավորական գահի հետ միասին նրան անցավ նաև տարիներ շարունակ իր հոր ջանքերով կուտակված վիթխարի հարստությունը, որը նա ծախսում էր ըստ իր հայեցողության, իր հաճույքների և քմահաճույքների համար: Եվ որպեսզի

ընթերցողը հստակ պատկերացում ունենա սաուդյան երկրորդ թագավորի անմիտ քայլերի, ցուցադրական շքեղության ու ծոխության, ֆանտաստիկ ծախսերի մասին, նպատակահարմար ենք գտնում բերել մասնագիտական գրականության մեջ լայն տարածում գտած մի քանի փաստեր:

Սաուդ իբն Աբդ ալ–Ազիզը հատուկ մոլուցք ուներ շքեղաշուք պալատների նկատմամբ, որոնց կառուցումը տասնյակ միլիոնավոր դոլարներ էին խլում: Նա իր թագավորության առաջին տարիներին, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, միայն մայրաքաղաքում կառուցեց 24 արքայական պալատ, որտեղ մեծ չափերով օգտագործվում էին ոսկեղեն, ադամանդեղեն, քանկարժեք կերպասներ և այլ հազվագյուտ իրեր սաուդյան թագավորի և նրա կանանոցի համար դրախտային պայմաններ ստեղծելու և վայելքների նպատակով: Այդ պալատներից մեկը, որը կրում էր «Նասիրիյա» անունը, թեև աներևակայելի է, բայց գրավում էր մեկ քառակուսի մղոն տարածք, որի կառուցման համար ծախսվել էր 45 մլն դոլար: Միայն այդ մեկ պալատի համար ծախսվել էր ավելի շատ, քան Սաուդյան Արաբիայի թագավորությունում ծախսվում էր կրթության, առողջապահության և գյուղատնտեսության վրա՝ միասին վերցրած: Այդ երեք կարևոր ճյուղերի համար այդ նույն ժամանակ բյուջեով նախատեսված էր 43 մլն դոլար: Բայց նրա ախորժակը չէր սահմանափակվում միայն Ռիյադով: Նա պալատներ էր կառուցում նաև երկրի այլ քաղաքներում՝ Ջիդդայում, Թաիֆում և այլուր: Դեռ ավելին՝ իր արտասահմանյան ուղևորություններից առաջ շատ հաճախ այն երկրում, ուր նա պետք է պաշտոնական այցով լիներ, սաուդյան փողերով նրա համար կառուցվում էր պալատ: Դրա վառ օրինակն էր հանդիսանում նրա այցի կապակցությամբ Կատարում կառուցված պալատը, որը մի քանի տասնյակ միլիոն դոլար էր նստել սաուդյան թագավորության վրա: Կատարի դեպքն ուշագրավ է նաև մեկ այլ առիթով: Սաուդ իբն Աբդ ալ–Ազիզի Կատար պաշտոնական այցից հետո այդ պալատը նրա հրամանով լրիվ քանդվեց, որովհետև նա գտնում էր, որ իրենից հետո այդ պալատում ուրիշ մարդ չպետք է ապրեր:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ նրա այդ պալատներն այնքան շատ էին, որ գործնականում նրանք մնում էին համարյա դատարկ, թեև նրա ընտանիքը չտեսնված արագությամբ էր աճում: Նա ուներ չորս պաշտոնական կին, 100 հարճ, 40 տղա և 100–ից ավելի աղջիկ: 1963 թ. անգլիական «Օբզերվեր» և ֆրանսիական «Լիբերասիոն»

օրաթերթերը հաղորդում տպագրեցին Իբն Սաուդի մի տարօրինակ հրամանագրի մասին, որն ամբողջ աշխարհի ծիծաղը շարժեց: Այդ թերթերի հաղորդման համաձայն՝ սաուդյան թագավորը, խճողվելով իր ժառանգների թվաքանակի հարցում և չկարողանալով իսկապես որոշել, թե քանիսն են նրանք և ովքեր են, հրաման արձակեց, որ նա իր օրինական զավակներն է համարում միայն իր առաջին քսան երեխաներին: Մնացածները, որոնց թիվն անգամ նա ստույգ չգիտեր. համարվեցին անօրինական, որոնք չէին ճանաչվում իրենց «արարողի» կողմից:

Մեր պատկերացումները Իբն Սաուդի, նրա կենցաղի և հակումների մասին, թերի կլինեն, եթե չնշենք նրա մի թուլության մասին ևս: Իբն Սաուդը շատ էր սիրում ճանապարհորդել երկրի ներսում: Նրա անձնական տրամադրության տակ կային մի քանի հարյուր թանկարժեք նորագույն ամերիկյան և եվրոպական ավտոմեքենաներ: Նա իր հետ վերցնում էր ոչ միայն իր ամբողջ ընտանիքը, այլև արքունիքը, նախարարներին, անհամար խորհրդականներին, նրանց ընտանիքի անդամներին և այլոց: Դրանց տեղափոխման համար անհրաժեշտ էին լինում տասնյակ ինքնաթիռներ և հարյուրավոր մեքենաներ: Այդ խայտաբղետ և ծիծաղաշարժ մեծաթիվ ամբոխից կազմված քարավանի հաճախակի տեղաշարժերը, նրանց սպասարկումը և այլն պահանջում էին աստղաբաշխական ծախսեր, որոնք փակվում էին պետության եկամուտներից և բացասաբար անդրադառնում երկրի տնտեսության զարգացման վրա:

Իբն Սաուդի ծախսերը պաշտոնապես սահմանված էր տարեկան 250 մլն սաուդյան ռիյալ, որը հավասար էր մոտ 50 մլն դոլարի: Դա կազմում էր պետական բյուջեի 14%–ը: Իսկ վերոբերյալ փաստերը գալիս են հաստատելու, որ Իբն Սաուդի ծախսերը ոչ մի կերպ չէին տեղավորվում այդ շրջանակներում, և նրա ձեռքը մշտապես պետական գանձարանում էր, որտեղից նա վերցնում էր այնքան, ինչքան կցանկանար:

Իբն Սաուդի նման անձնական կյանքը և ապրելաոճը, հարյուրավոր միլիոն դոլարների աննպատակ ծախսերը, մեծ ծավալներ ստացած կաշառակերությունը, ուղղակի գանձագողությունը, անգրագետ տնտեսական և սոցիալական քաղաքականությունն ի վերջո երկիրը 1958 թ. կանգնեցրին ֆինանսական կործանման եզրին: Նավթից ստացվող վիթխարի եկամուտներն իրենց նպատակին՝ տնտեսության և սոցիալական ոլորտի զարգացմանը չէին ծառայում: Բացահայտ դժգոհություն էր կուտակվել երկրի ներսում: Դժգոհության առիթ էին տալիս նաև Իբն Սաուդի արտաքին քաղաքականությունը և նրա հեռանալը արաբական աշխար-

հի ավելի առաջադեմ երկրներից՝ Եգիպտոսից ու Սիրիայից, համագործակցության սերտացումը հետադիմական արաբական երկրների հետ:

Երկիրը հայտնվել էր խոր ճգնաժամի մեջ, որն անդրադարձավ նաև սաուդյան արքունիքի և սաուդյան ներընտանեկան փոխհարաբերությունների վրա:

Սրվեց պայքարը Իբն Սաուդի և նրա եղբայրների միջև, որոնք հայտնի էին «ազատ էմիրներ» հորջորջմամբ: Խիստ լարված բնույթ ընդունեցին հարաբերությունները մանավանդ Սաուդ թագավորի և գահաժառանգ Ֆեյսալի միջև: Ֆեյսալը և սաուդյան մյուս էմիրները մտահոգ էին, որ եթե չփոխվի Սաուդի կողմից տարվող ներքին և արտաքին քաղաքականությունը, այդ թվում և նրա անձնական ապրելաոճը, որը մեծ դժգոհությամբ էին ընդունում չափավորություն և ասկետիզմ քարոզող պաշտոնական վահաբիական գաղափարախոսության հետևորդները, ապա ճգնաժամը ավելի կխորանա, և դժվար է կանխագուշակել դրա վտանգավոր հետևանքները սաուդյան թագավորության համար: 1958 թ. մարտի 24–ին Իբն Սաուդի եղբայր էմիրները վերջնագրի ձևով պահանջեցին նրանից, որ նա ամբողջ իշխանությունը հանձնի Ֆեյսալին, որը փորձառու և ճկուն քաղաքագետի համբավ ուներ: Արքունիքում հեռարահից զրկված Սաուդը հարկադրված էր գիջել և 1958 թ. մարտի 31–ի դեկրետով վարչապետի պաշտոնը զբաղեցնող իր եղբայր Ֆեյսալին փոխանցեց լրիվ պատասխանատվությունը ներքին ու արտաքին քաղաքականության բոլոր հարցերում: Ֆեյսալը դարձավ վարչապետ և զինված ուժերի գլխավոր հրամանատար: Նա փաստորեն իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ գործադիր իշխանությունը: Սակայն Իբն Սաուդը գահընկեց չարվեց: Նա մնում էր սոսկ թագավոր:

Այդ փոփոխությունը, այդուհանդերձ, լիցքաթափ չարեց, և քաղաքական պայքարը շարունակվեց: Իր նոր կարգավիճակի հետ չհամակերպված Իբն Սաուդին հաջողվեց հեռացնել Ֆեյսալին և 1960 թ. դեկտեմբերի 21–ին իրեն վերադարձնել ամբողջ իշխանությունը:

Ձանձալով ամրապնդել իր դիրքերը՝ Սաուդն առաջին անգամ կառավարության մեջ մտցրեց բուրժուազիայի ներկայացուցիչներին: Նա խոստացավ կիրառել մի շարք ռեֆորմներ, այդ թվում՝ ընդունել սահմանադրություն, որի նախագիծը մշակեցին «ազատ էմիրները»՝ Թալալը, Ֆավազը, Սաադը և Մոհսենը: Նախատեսվում էր բացարձակ միապետությունը վերածել սահմանադրական միապետության: Սակայն ռեֆորմների նախագիծը մնաց թղթի վրա, և Սաուդը 1961 թ. սեպտեմբերին

իր եղբայրներին՝ «ազատ էմիրներին», հեռացրեց կառավարությունից: Վերջիններս մեկնեցին երկրից և հայտարարեցին, որ իրենք պայքարելու են գոյություն ունեցող ռեժիմի դեմ: 1962 թ. Թալալը հայտարարեց Ազատագրության արաբական ճակատի ստեղծման մասին:

1962 թ. սեպտեմբերի 26–ին հեղափոխություն կատարվեց Եմենում, որտեղ տապալվեց միապետությունը, և հաստատվեց հանրապետական վարչակարգ: Դա սարսափեցրեց Սաուդին, որը վախենում էր, որ այդ ալիքը կարող է իր մեջ ներառնել նաև Սաուդյան Արաբիան: Եվ նա դիմեց բացահայտ ռազմական ինտերվենցիայի՝ նպատակ ունենալով վերականգնել միապետական կարգերը Եմենում: Այդ պատերազմը աջակցություն չգտավ ժողովրդի կողմից և էլ ավելի սրեց ներքաղաքական վիճակը Սաուդյան Արաբիայում: Սաուդյան էմիր Թալալը, որը գտնվում էր Կահիրեում, կոչ արեց տապալել Սաուդին և հաստատել հանրապետական վարչակարգ: Պայքարի մեջ մտան նաև ժողովրդական զանգվածները: 1963 թ. ապրիլին հակակառավարական ցույց կայացավ Խաիլում, հունիսին հուզումներ եղան Նաջդում, սեպտեմբերին գործադուլ հայտարարեցին ցեմենտի ընկերության բանվորները: Այդ նույն թվականին խոշոր հուզումներ եղան Նաջրանի, Ջիզանի և Ասիրի ցեղերի մեջ, որոնք դժգոհ էին, որ իրենց հողատարածություններում տեղադրել էին ամերիկյան ռազմական օբյեկտներ:

Այս ընդհանուր անկայուն վիճակը սրեց պայքարը թագավորական ընտանիքի անդամների միջև հանուն իշխանության: Ստեղծված ճգնաժամը լուծվեց վերնախավային, պալատական հեղաշրջման ճնով: 1964 թ. նոյեմբերի 2–ին Սաուդը գահընկեց արվեց, և Սաուդյան Արաբիայի թագավոր դարձավ նրա մրցակից եղբայրը՝ Ֆեյսալ իբն Աբդ ալ–Ազիզ ալ–Ֆեյսալ ալ–Սաուդը:

Այսպիսով՝ Սաուդը և Ֆեյսալը խախտեցին «հաշտ ու խաղաղ կառավարելու» իրենց երդումը, որ նրանք տվել էին իրենց հորը՝ ձեռքները դնելով Կորանի վրա:

Իսկ ինչ վերաբերում է գահընկեց թագավորին և նրա հետագա ճակատագրին, ապա նա աքսորվեց և հաստատվեց Եվրոպայում, որտեղ մնաց մոտ երկու տարի՝ մինչև 1966 թ.: Այդ ընթացքում հարաբերությունները խիստ սրվեցին Եգիպտոսի և Սաուդյան Արաբիայի միջև՝ կապված Եմենում միապետության տապալման և հանրապետության հռչակման հետ: Սաուդյան Արաբիան և Եգիպտոսը ներգրավվեցին Եմենում ընթացող քաղաքացիական պատերազմի մեջ: Սաուդյան Արաբի-

ան պաշտպանում էր միապետականներին, իսկ Եգիպտոսը՝ հանրապետականներին: Ահա այդ պայքարում Եգիպտոսի պրեզիդենտ Նասերը որոշեց Իբն Սաուդին որպես խաղաքարտ օգտագործել Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆեյսալի դեմ: Նա 1966 թ. տապալված թագավորին ապաստան տվեց Եգիպտոսում՝ փորձելով օգտագործել նրան և նրա համակիրներին ընդդեմ Ֆեյսալի: Սակայն դա երկար չտևեց: 1967 թ. արաբա–իսրայելական պատերազմից հետո, երբ Եգիպտոսը, Սիրիան և Հորդանանը պարտություն կրեցին, արաբական աշխարհում ուժեղացան համերաշխության և ուժերի միավորման պահանջները: Դա հասկանում էին թե՛ Նասերը և թե՛ Ֆեյսալը: Այդ պահից սկսվեց մեղմացում եգիպտա–սաուդյան հարաբերություններում և մերձեցում Նասերի և Ֆեյսալի միջև: Նման պայմաններում արդեն ավելորդ էր դառնում Իբն Սաուդի ներկայությունը Կահիրեում և նա հեռացավ Եգիպտոսից ու հաստատվեց Աթենքում, որտեղ և մահացավ 1969 թ. փետրվարին:

2. Սաուդյան Արաբիան Ֆեյսալի թագավորության շրջանում: Վարչակարգի ամրապնդումը, թագավորության դիրքերի ուժեղացումը և իսլամական միջազգային կազմակերպության ստեղծումը (1964–1975 թթ.)

Ֆեյսալը դիմեց մի շարք քայլերի իր իշխանությունն ամրապնդելու և թագավորությունը քաոսային վիճակից դուրս բերելու համար: Նա իր ձեռքում կենտրոնացրեց ողջ գործադիր, ռազմական և դատական իշխանությունը, պաշտոններից և արքունիքից հեռացրեց Սաուդի որդիներին ու կողմնակիցներին և նրանց փոխարեն նշանակեց յուրայիններին:

1965 թ մարտին, որոշ հապաղումից հետո Ֆեյսալը իր եղբորը՝ իշխան Խալիդ իբն Աբդ ալ–Ազիզին, նշանակեց գահաժառանգ, իսկ մյուս եղբորը՝ Սուլթան իբն Աբդ ալ–Ազիզին՝ պաշտպանության և ավիացիայի նախարար: Շուտով նա հաշտվեց նաև «ազատ էմիրներ» Թալալի և նրա եղբայրների հետ, որոնք ընդունեցին իրենց սխալները, հավատարմություն հայտնեցին Ֆեյսալին և իրավունք ստացան վերադառնալ Սաուդյան Արաբիա: Այդ քայլերի շնորհիվ Ֆեյսալին հաջողվեց լրիվ վերահսկողություն սահմանել թագավորական ընտանիքի և կառավարական ամբողջ ապարատի վրա:

Ի հակադրություն իր եղբորը և նրա ապրելաձևին՝ Ֆեյսալն ավելի հակված էր ասկետիկ կյանքի: Նա հրաժարվեց իր եղբոր շռայլ ու

շվայտ կյանքից ու քաղաքականությունից, որը ֆինանսական մեծ դժվարությունների առջև էր կանգնեցրել թագավորությանը, և անցավ խնայողության ռեժիմի կիրառմանը: Նա չվարանեց դիմելու անգամ արքայական ընտանիքի առասպելական ծախսերի կրճատմանը և այդ բնագավառում ընդհանրապես կարգ ու կանոնի հաստատմանը: Նրա օրինապաշտ լինելը, հավատարմությունը վահաբիզմի հիմնարար դրույթներին զգալիորեն բարձրացրին նրա հեղինակությունը:

Ֆեյսալը կարգավորեց իր հարաբերությունները ցեղային և ֆեոդալական ավագանու հետ: Շարունակելով պաշտպանել նրանց շահերը՝ Ֆեյսալը միաժամանակ սկսեց ուշադրություն դարձնել ազգային բուրժուազիայի զարգացման վրա՝ ձգտելով խթանել և նպաստավոր պայմաններ ստեղծել նրա համար: Ֆեյսալի կառավարությունը կարևոր համարեց ինֆրաստրուկտուրայի զարգացումը՝ նոր ճանապարհների և օդանավակայանների կառուցումը, նավահանգիստների ընդլայնումը, էլեկտրակայանների կառուցում և այլ անհրաժեշտ քայլեր:

Որոշ տեղաշարժեր եղան նաև գյուղատնտեսության բնագավառում՝ ոռոգման նպատակով ամբարտակ կառուցվեց Ջիզանում, պետության հաշվին տներ կառուցվեցին քայքայված և նստակյաց կյանքի անցած բեդվինների համար:

Ֆեյսալը փորձ էր անում Սաուդյան Արաբիայում կատարել մի շարք նորամուծություններ՝ գիտության և տեխնիկայի արդյունքների օգտագործում տնտեսության մեջ, ռադիոցանցի զարգացում, հեռուստատեսության կիրառում, բարքերի որոշ պարզեցում: Սակայն նա այդ հարցում շատ զգույշ էր, ուստի և վերափոխումներն ընթանում էին վերին աստիճանի դանդաղ:

Դրա հետ միասին թագավորը շատ զգայուն էր ընդդիմադիր տրամադրությունների ամեն մի դրսևորման, մանավանդ աշխատավորների հնարավոր ելույթների հարցում: Այդ բնագավառում նա իրեն դրսևորեց վերին աստիճանի դաժան միապետ, որը ոչնչի առջև կանգ չէր առնում պատժելու անհնազանդության կամ դժգոհության ամենափոքր արտահայտությունն անգամ: Իսկ ժողովրդական զանգվածները բոլոր հիմքերն ունեին խիստ դժգոհելու իրենց վիճակից՝ գտնվելով տեղական հարստահարիչների և օտարերկրյա կապիտալի ու ընկերությունների ճնշման տակ: Այս շրջանում ընդհատակի պայմաններում ձևավորվեցին կոմունիստական խմբեր, արհեստակցական, երիտասարդական և այլ առաջադիմական միություններ ու կազմակերպություններ: Նրանք

60–70-ական թվականներին հրատարակում և տարածում էին թռուցիկներ, գրքույկներ և այլ բնույթի գրականություն՝ ուղղված տիրող ռեժիմի և նրա ներքին ու արտաքին քաղաքականության դեմ: Իր գոյությունը միշտ զգացնել էր տալիս Ազգային ազատագրության ճակատը, որն առաջացավ 1958 թ. Ազգային ռեֆորմների ճակատի հիմքի վրա: Նա պահանջեց սահմանադրության ընդունում, ազատ դեմոկրատական պառլամենտական ընտրությունների անցկացում, արհմիությունների և քաղաքական կուսակցությունների ստեղծման, մամուլի, խոսքի և ցույցերի ազատություն, մի շարք հետամնաց և ոչ մարդկային սովորույթների արգելում և այլն:

Չնայած կառավարության ուժեղ հսկողությանը և խիստ օրենքներին՝ երկրում տեղի էին ունենում տարբեր բնույթի ելույթներ: 1966 թ. հուզումներ տեղի ունեցան նավթագործ բանվորների շրջանում, հայրենասիրական ուժերը պայթեցումներ կազմակերպեցին Խամիս Մաշիտում գտնվող անգլիական ռազմական բազայում, Նաջրանի օդանավակայանում: Նրանք 1966 թ. դեկտեմբերի 18–ին պայթեցրին և երկար ժամանակով շարքից հանեցին ամերիկյան «Թափլայն» ընկերությանը պատկանող նավթամուղը, իսկ դեկտեմբերի 22–ին՝ Ռիյադում գտնվող «Ջահիրադ ալ–Շարկ» առաջնակարգ հյուրանոցը: 1967 թ. իշխանությունները ձերբակալեցին անհնազանդների մի խմբի և նրա անդամներից 17–ին գլխատեցին: 1967 թ. հունիսյան պատերազմի ժամանակ մի շարք հակաիսրայելական և հակաամերիկյան ցույցեր տեղի ունեցան Ռաս Թանուրում և Դահրանում, որտեղ ցուցարարները հարձակվեցին ԱՄՆ–ի հյուպատոսության վրա: Իր համարձակությամբ բոլորին ապշեցրեց Սաուդյան Արաբիայի պաշտպանության նախարարության շենքում գտնվող ամերիկյան առաքելության ղեկավարի աշխատասենյակում կազմակերպված պայթեցումը, որն ընկալվեց որպես հարձակում երկրի պաշտպանության նախարարության վրա: Հարձակումներ էին կատարվում նաև սաուդյան բարձրագույն պաշտոնյաների շենքերի, անգամ արքայական ընտանիքի անդամների պալատների վրա: Ոգևորված այդ հաջողություններով՝ հակակառավարական ուժերը, որոնք դժգոհ էին Ֆեյսալի ներքին և արտաքին քաղաքականությունից, մահափորձ կատարեցին պաշտպանության նախարար, թագավորի եղբայր Սուլթան իբն Աբդ ալ–Ազիզի և Սաուդյան Արաբիայի Արևելյան նահանգի կառավարիչ իշխան Սաուդին Ջալուի դեմ: Այդ քայլերն ուղղակի խուճապի մատնեցին կառավարող վերնախավին և սաուդյան արքայատոհմին:

Ոմանք իրենց գնահատականների մեջ այնքան հեռուն գնացին, որ, ինչպես նշում էր եգիպտական «Ալ–Ահրամը», մայրաքաղաք Ռիյադը համեմատում էին ամրոցի հետ: Եգիպտական թերթին նման եզրակացության համար հիմք էր տվել այն հանգամանքը, որ 1966 թ. վերջերին և 1967 թ. սկզբներին թագավորական պալատի, նախարարների խորհրդի շենքի, էմիրների պալատների, ազգային գվարդիայի շտաբի և այլ կարևոր օբյեկտների անվտանգության համար ձեռք էին առնվել արտակարգ միջոցներ, նրանց շուրջը տեղադրվել էին ավազե պարկեր՝ հնարավոր հարձակումները և պայթեցումները կանխելու համար: Կառավարությունը փորձում էր երկիրը հանդարտեցնել ցույցերի կազմակերպիչներին ձերբակալելու և բանտեր նետելու միջոցով: Ռազմադաշտային դատարանները չէին հասցնում վճիռներ արձակել: Շատ հաճախ «կարգը պահպանելու» համար ցուցարարների դեմ էին հանում զորքերին, մանավանդ բեդվիններից կազմված զորամիավորումները:

Եղավ մի պահ, երբ խիստ մտահոգ արքունիքը 1967 թ. լրջորեն քննարկում էր Ֆեյսալին կառավարության ղեկավարի լիազորություններից զրկելու հարցը, որոնք պետք է փոխանցվեին էմիր Ֆահդ իբն Աբդ ալ–Ազիզին, որը թեև հայրական գծով Ֆեյսալի եղբայրն էր, սակայն ուրիշ մորից: Իսկ դա նշանակում էր պալատական հեղաշրջման նման մի բան:

1969 թ հունիսի 5–ին սաուդյան զինվորականները պետական հեղաշրջման փորձ կատարեցին, որը ձախողվեց: Անհաջողությամբ վերջացան նաև 1970 թ ձեռնարկած փորձերը: Ոստիկանական իշխանությունները դաժան հաշվեհարդար էին տեսնում դրանց մասնակիցների հետ:

Ուժեղացնելով ճնշիչ ապարատը՝ Ֆեյսալը միաժամանակ որոշ քայլերի դիմեց տնտեսության զարգացման ուղղությամբ, մասնավորապես 1970 թ. հաստատվեց տնտեսական զարգացման հնգամյա պլանը:

Ֆեյսալի թագավորության շրջանում բավականին ակտիվացավ Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականությունը: Նա, ինչպես իր նախորդը, ամենասերտ հարաբերություններ էր պահպանում ԱՄՆ–ի հետ: Սակայն դրա հետ միասին Ֆեյսալը չէր թաքցնում իր դժգոհությունը Իսրայելին անվերապահորեն պաշտպանելու ԱՄՆ–ի քաղաքականությունից: Շարունակելով այդ գիծը՝ նա սաուդյան դեսպանին հետ կանչեց ԳՖՀ–ից, երբ վերջինս դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Իսրայելի հետ.

Ֆեյսալը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում հարաբերությունների զարգացմանը արաբական երկրների հետ՝ ձգտելով հեգեմոն դիրք գրավել արաբական աշխարհում: Ֆեյսալի այդ հավակնություններն ավելի ուժեղացան 1970 թ.՝ Նասերի մահից հետո: Հենվելով նավթից ստացվող հսկայական եկամուտների վրա և օգտագործելով մահմեդական «սրբազան վայրերի» առկայությունը իր երկրում՝ սաուդյան միապետը 70–ական թվականներին աստիճանաբար ուժեղացնում էր Սաուդյան Արաբիայի դերն ու կշիռը արաբական աշխարհում: Այդ նպատակով նա ակտիվացրեց իր գործունեությունը Արաբական պետությունների լիգայում և արաբական պետությունների ղեկավարների պարբերաբար հրավիրվող կոնֆերանսներում, ուժեղացրեց իր աջակցությունը և օգնությունը, այդ թվում և ֆինանսական, Պաղեստինի դիմադրության շարժմանը, կարգավորեց սահմանային վեճերը Կատարի, Քուվեյթի և Հորդանանի հետ:

Ֆեյսալը Սաուդյան Արաբիայի դիրքերի ամրապնդման համար օգտագործեց նաև համաշխարհային մասշտաբով իսլամի ակտիվացման և քաղաքական դերի աճման պրոցեսը: Նա մեծ դեր խաղաց իսլամական պետությունների համախմբման և իսլամական զանազան միջազգային կազմակերպությունների ստեղծման գործում: Նրա նախաձեռնությամբ, ամենաեռանդուն ջանքերով և մասնակցությամբ 1969 թ հիմնվեց Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, որը հանդիսանում է իսլամական պետությունների միջազգային բարձրագույն քաղաքական մարմինը, որի շտաբ–կայանը գտնվում է Ջիդայում: Նրանում միավորվել են աշխարհի բոլոր մուսուլմանական պետությունները: Խորհրդային Միության փլուզումից հետո նրան անդամակցեցին նաև նախկին խորհրդային մուսուլմանական հանրապետությունները՝ Ադրբեջանը, Թուրքմենստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը: Այժմ այդ կազմակերպության անդամների թիվը մոտենում է 60–ի:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության կարևոր խնդիրն է «խոսքով և գործով իրականացնել իսլամական միասնությունը». Դրա տակ հասկացվում է միասնություն ոչ միայն կրոնական, այլև քաղաքական, տնտեսական, հոգևոր–մշակութային և այն բոլոր հարցերում, որոնք շոշափում են իսլամական երկրների շահերը: Իսլամական համերաշխությունն ընդգրկում է նաև արտաքին՝ միջազգային հարաբերությունների ոլորտը, միգուցե ավելի ընդգծված, քան մյուս ոլորտները:

Իսլամական միասնության և համերաշխության, իսլամական միասնական քաղաքականություն վարելու սկզբունքները խարսխված են Կորանի հիմնադրույթների վրա: Մասնավորապես շեշտվում է այն պարագան, որ իսլամական պետությունները պետք է «ենթարկվեն Ալլահի կամքին ու հրամանին, որոնք առկա են Կորանում»: Նրանց համար ուղենիշ պետք է հանդիսանա Կորանի հետևյալ դրույթը. «Եվ բոլորդ միասին ամուր բռնեցեք պարանից, որ Ալլահը ձեզ է նետել, և ձեր մեջ բաժանում չմտցնեք»:

Իսլամական այդ միջազգային կազմակերպության և իսլամի գլոբալ քաղաքականության էությունն ավելի հստակ հասկանալու տեսանկյունից առանցքային նշանակություն ունի 1981 թ. հունվարի 25–28–ը Մեքքայում կայացած Իսլամական կոնֆերանս կազմակերպության անդամ երկրների միապետների և պրեզիդենտների գագաթնաժողովը, որը համարվում է այդ կազմակերպության բարձրագույն մարմինը, և նրանում ընդունված դեկլարացիան: Այդ դեկլարացիան, ելնելով նոր խնդիրներից, հռչակեց, որ իսլամական բոլոր երկրների գլխավոր խնդիրն է «աշխատել իրենց բարգավաճման և առաջադիմության համար և մեկ անգամ ևս նվաճել բարձր դիրք համաշխարհային համակեցության մեջ»: Իսլամական վեհապետներն ի լուր աշխարհի հայտարարեցին, որ «իսլամը միակ ուղին է, որը կարող է առաջնորդել դեպի հզորություն, արժանապատվություն և բարգավաճ ու ավելի լավ ապագա»: Մեքքայի դեկլարացիան վերահաստատեց «իսլամական ազգի» վերաբերյալ հիմնադրույթը: Ասիայի, Աֆրիկայի և Եվրոպայի իսլամական պետությունների ղեկավարները նշեցին, որ իրենք հանդիսավոր կերպով հայտարարում են. «Բոլոր մուսուլմանները, որոնք կարող են տարբեր լինել իրենց լեզվի, գույնի և բնակավայրի տեսանկյունից, կազմում են մեկ ազգ՝ կապված միասին իրենց ընդհանուր հավատքով, շարժվում են մեկ ուղղությամբ, պատկանում են մեկ ընդհանուր մշակութային ժառանգության և իրականացնում են մեկ առաքելություն ամբողջ աշխարհում»:

Այս հիմնադրույթներն են դրված ժամանակակից իսլամական միասնության և համերաշխության, իսլամի գլոբալ քաղաքականության հիմքում:

Սաուդյան Արաբիայում՝ նույն Ջիդա քաղաքում են գտնվում նաև Ջարգացման իսլամական բանակի, իսլամական նորությունների գործակալության և իսլամական այլ կազմակերպությունների շտաբ–կայանները:

Սաուդյան միապետը՝ Ֆեյսալը, ձգտում էր միջազգային իսլամական կազմակերպությունների օգնությամբ բարձրացնել Սաուդյան Արաբիայի հեղինակությունն ու ազդեցությունը մուսուլմանական և այդ ուղիով նաև ամբողջ աշխարհում, ինչպես նաև ամրապնդել իսլամի միջազգային դիրքերը:

1973 թ. որոշակիորեն սրվեցին սաուդա–ամերիկյան հարաբերությունները: ԱՄՆ–ը մի կողմից ձգտում էր լավ հարաբերություններ պահպանել Սաուդյան Արաբիայի և արաբական այլ պահպանողական երկրների հետ, իսկ մյուս կողմից վիթխարի ռազմական և տնտեսական օգնություն ցույց տալիս Իսրայելին: Արաբական աշխարհի ղեկավարությանը հավակնող Սաուդյան Արաբիան չէր կարող չուժեղացնել իր հակաիսրայելական կուրսը, որն անխուսափելիորեն նրան բախման մեջ էր դնում ԱՄՆ–ի հետ: 1973 թ Ֆեյսալը բազմիցս նախազգուշացրեց ԱՄՆ–ին, որ Իսրայելին պաշտպանելու Վաշինգտոնի ամենավերապահ քաղաքականությունը վնասում է սաուդա–ամերիկյան հարաբերություններին, և պահանջեց, որ ԱՄՆ–ը ստիպի Իսրայելին կատարելու ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի 1967 թ. նո. 242 բանաձևը՝ արաբական գրավյալ տարածքներից իր զորքերը դուրս բերելու մասին: Եվ քանի որ ԱՄՆ–ի կառավարությունը հրաժարվում էր ստիպել Իսրայելին կատարել արդեն նրա իսկ կողմից ստորագրված պայմանագրերը, ապա այդ պարագան սառնություն, անգամ լարվածություն էր առաջացնում սաուդա–ամերիկյան հարաբերություններում:

Երբ 1973 թ. հոկտեմբերի 6–ին բռնկվեց արաբա–իսրայելական նոր պատերազմը, Սաուդյան Արաբիան հանդես եկավ Եգիպտոսի, Սիրիայի և Հորդանանի պաշտպանությամբ. Սաուդյան Արաբիան ավելացրեց իր ֆինանսական օգնությունը Եգիպտոսին և Սիրիային, հոկտեմբերի 9–ին իր բանակը դրեց մարտական բարձր պատրաստվածության վիճակում, իսկ հոկտեմբերի 14–ին իր ռազմական միավորումներն ուղարկեց սիրիական ճակատ: Սաուդյան Արաբիան արաբական մյուս երկրների հետ միասին հայտարարեց նավթամատակարարումը ԱՄՆ–ին և Հոլանդիային դադարեցնելու մասին: Նավթային էմբարգոյի կիրառումը մեծ հարված էր ԱՄՆ–ին, մանավանդ նրա արևմտյան դաշնակիցներին Սաուդյան Արաբիան նավթ արտահանող մյուս երկրների հետ միասին 1973–1974 թթ ընթացքում հնգակի բարձրացրեց նավթի վաճառահանման գները և այդ տարիներին նավթից Սաուդյան Արաբիայի ստացած եկամուտները կազմեցին 22,57 մլրդ դոլար: Նավթը որ-

պես զենք օգտագործելն իր դրական հետևանքներն ունեցավ պատերազմի դադարեցման հարցում՝ արաբների համար ավելի ձեռնտու պայմաններով:

Սակայն հետագայում Սաուդյան Արաբիան, որը կապված էր ԱՄՆ–ի հետ և շահագրգռված նրանից տնտեսական ու ռազմական օգնություն ստանալու մեջ, փոխեց իր դիրքորոշումը նավթային էմբարգոյի հարցում: 1974 թ. մարտի 18–ին Ֆեյսալի պնդմամբ էմբարգոն վերացվեց և նա կրկին վերադարձավ ԱՄՆ–ի հետ համագործակցելու և ամենուր պահպանողական ու հակասոցիալիստական ուժերին աջակցելու քաղաքականությանը:

Ֆեյսալին վիճակված չէր մինչև վերջ իրագործել իր մտահղացումները Սաուդյան Արաբիայում վերափոխումներ կիրառելու ուղղությամբ: 1975 թ. մարտի 25–ին Ֆեյսալը սպանվեց իր ազգականի՝ Ֆեյսալ իբն Մուսաիդի կողմից: Վերջինս գլխատվեց: Սաուդյան տրադիցիայի համաձայն՝ որդուն գլխատելը հանձնարարվեց նրա հորը, որը պետք է ցույց տար, որ գլխատվածի հայրը և նրա հարազատները ճիշտ են համարում Ֆեյսալ իբն Մուսաիդի մահապատիժը և դրա համար ոխ չեն պահում սաուդյան արքայական ընտանիքի նկատմամբ:

Կան ենթադրություններ, որ Ֆեյսալ իբն Մուսաիդին այդ քայլին էին դրդել ամերիկացիները, որոնք Ֆեյսալին ներել չէին կարող, որ նա 1973 թ. նավթի էմբարգո կիրառեց ԱՄՆ–ի նկատմամբ՝ դնելով նրան ծանր դրության մեջ:

Այսպիսով՝ Սաուդյան Արաբիայի հիմնադիր թագավորին հաջորդած նրա երկու որդիները, յուրաքանչյուրը յուրովի, ողբերգական վախճան ունեցան: Մեկը՝ Սաուդ իբն Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդը, գահընկեց արվեց իր եղբայրների կողմից և մահացավ օտարության մեջ, իսկ մյուսը՝ Ֆեյսալ իբն Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդը, սպանվեց:

V. ԵՐԿՈՒ ՀՈՍԱՆՔՆԵՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ: ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՑՈՒՄ (1975–1995 թթ.)

1. Սաուդյան Արաբիայի զարգացման վերաբերյալ երկու հոսանքների ձևավորումը: 1977 թ. զինված ապստամբությունը Մեքքայում

Սաուդյան Արաբիայի թագավորական գահին նստեց Ֆեյսալի եղբայր Խալիդ իբն Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդը, իսկ նրա մյուս եղբայրը՝ Ֆահդը, հռչակվեց թագաժառանգ:

Խալիդ իբն Աբդ ալ–Ազիզը նախքան գահին նստելը արդեն զգալի փորձ ուներ պետական կառավարման ասպարեզում: Նրա նախորդը՝ Ֆեյսալը, նրան 1962 թ. նշանակել էր վարչապետի տեղակալ, իսկ 1963 թ. նրան վստահվեց նորաստեղծ Ազգային գվարդիայի հրամանատարությունը: Երբ 1964 թ. Սաուդ իբն Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդը գահընկեց արվեց, և Ֆեյսալը դարձավ թագակիր, և երբ Խալիդի ավագ եղբայրը՝ Մուհամմադ իբն Աբդ ալ–Ազիզը հրաժարվեց գահաժառանգի իր իրավունքներից, ապա Ֆեյսալը Խալիդին նշանակեց գահաժառանգ:

Նստելով սաուդյան գահին՝ Խալիդը և նրա գլխավորությամբ սաուդյան իշխանությունները սկզբնական շրջանում զգալի ուշադրություն էին դարձնում երկրի ներքին քաղաքականության և տնտեսական զարգացման խնդիրներին: Սաուդյան Արաբիայի տնտեսության հիմքը նավթարդյունաբերությունն է: Ունենալով նավթի վիթխարի պաշարներ և նրա արդյունահանումից ու արտահանումից ստանալով մեծ եկամուտներ՝ իշխանությունները լայն հնարավորություններ ունեին երկրի տնտեսությունն իր բազմաթիվ ճյուղերով զարգացնելու համար՝ ներառյալ նաև սոցիալական ոլորտը:

Խալիդի գահակալության հենց սկզբում հաստատվեց և սկսեց իրագործվել զարգացման երկրորդ հնգամյա պլանը, որը նախատեսված էր 1975–1980 թթ. համար, որին հաջորդեց երրորդ (1980–1985 թթ.) հնգամյա պլանը: Նրանք նախատեսում էին արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի զգալի զարգացում: Եվ. իրոք, Սաուդյան Արաբիայում 70–ական թվականների կեսերից մինչև 80–ական

թվականների կեսերը կառուցվեցին բազմաթիվ նոր արդյունաբերական ձեռնարկություններ, այդ թվում՝ պողպատյա խողովակների արտադրության, ալյումինի գլանվածքի, ավտոհավաքման, կոշիկի, ապակու, ցեմենտի գործարաններ, նոր երկաթուղային և խճուղային ճանապարհներ և այլն:

Զգալի փոփոխություններ տեղի ունեցան սոցիալական ոլորտում, որոնցից ամենակարևորը 1975 թ. հոկտեմբերի 9–ի որոշումն էր երկրում հնգօրյա աշխատանքային շաբաթ և ութժամյա աշխատանքային օր սահմանելու մասին: Թագավորի հրամանով բանտերից ազատվեցին 150 քաղաքական բանտարկյալներ, որոնք ձերբակալվել և դատապարտվել էին Ֆեյսալի կողմից: Սակայն նախկինի պես արգելված էին քաղաքական կուսակցություններն ու արհմիությունները, խստորեն հետապնդվում և պատժվում էր յուրաքանչյուր առաջադիմական և ազատասիրական շարժում:

Կազմվեց նոր կառավարություն, որը գլխավորեց ինքը՝ Խալիդը: Կառավարության կազմն այժմ ավելի մեծ էր, քան նախկինում: Թագավորը կառավարության մեջ ներգրավեց ոչ միայն սաուդյան ընտանիքի անդամներին, ինչպես ընդունված էր, այլև, այսպես կոչված, «հասարակ» մարդկանց, որոնք չէին պատկանում արքայական ընտանիքին: Կառավարության մեջ 25 տեղերից 15–ը զբաղեցրին նրանք, մնացած 10–ը՝ սաուդյանները: Սակայն վերջիններս կաբինետում զբաղեցնում էին առանցքային նախարարությունները, ինչպես պաշտպանության, ներքին գործերի, արտաքին գործերի, Ազգային գվարդիայի և այլն: Գահաժառանգի հարցում Խալիդի ընտրությունն ընկավ Ֆահդի վրա այն պատճառով, որ նա գործունյա էր, իսկ ինքը՝ Խալիդը, տառապում էր սրտի հիվանդությամբ և գիտեր, որ չի կարողանա ամբողջ ժամանակը հատկացնել պետական գործերին:

Խոսելով այս շրջանում Սաուդյան Արաբիայի ներքաղաքական զարգացումների մասին՝ անհրաժեշտ է կանգ առնել երկու հոսանքների կամ զարգացման երկու միտումների ձևավորման մասին, որն ինքնին վերցրած արտակարգ երևույթ էր նման մի երկրի համար, որտեղ տիրապետող էին վահաբիական մարտնչող իսլամի հիմնադրույթները և այն ամենը, ինչ մտնում էր «պահպանողական» հասկացության մեջ:

Առաջին հոսանքը կամ միտումը ստացավ ազգայնական՝ նացիոնալիստական, կամ պահպանողական անվանումը: Նրա կողմնակիցներն էին ինքը թագավորը՝ Խալիդ իբն Աբդ ալ–Ազիզը, և նրա երկու եղ-

բայրները՝ Մուհամմադ իբն Աբդ ալ–Ազիզը և Աբդալլահ իբն Աբդ ալ–Ազիզը: Նրանք, կողմ լինելով Սաուդյան Արաբիայի զարգացմանը, միաժամանակ գտնում էին, որ դա պետք է տեղի ունենա դանդաղորեն: Նրանք այն կարծիքի էին, որ արագընթաց զարգացման համար, որը նշանակում էր նաև արագընթաց վերափոխումներ, սաուդյան հասարակությունը դեռևս հասունացած չէր, հետևաբար դեռևս պատրաստ չէր. Նրանք մտավախ էին, որ արագընթաց տնտեսական զարգացումը կարող էր լուրջ բարդություններ առաջացնել ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական և սոցիալական ոլորտներում.

Այս հոսանքի մյուս դրույթը ավանդությունների նկատմամբ ավելի մեծ հարգանք ցուցաբերելու և դրանք անաղարտ պահելու պահանջն էր: Այն ուղղակի բխում էր տնտեսական դանդաղ զարգացման դրույթից, քանի որ արագ տեմպերով տնտեսական զարգացումը և դրա հետ կապված վերափոխումներն անխուսափելիորեն հանգեցնելու էին հնուց ի վեր եկող ավանդույթների թուլացմանը, անգամ նրանց մի մասի վերացմանը: Խալիդ թագավորը և նրա կողմնակիցները վախենում էին, որ հարգանքի նվազումը ավանդույթների նկատմամբ կարող է խարխլել սաուդյան հասարակության, բեդվինական կառույցների և վահաբիական գաղափարախոսության հիմքերը: Այդ երկու դրույթները՝ տնտեսական դանդաղ զարգացում և ավելի մեծ հարգանք ավանդույթների նկատմամբ ու նրանց անաղարտ պահպանում, կազմում էին հայեցակարգային մեկ ամբողջություն:

Մյուս հոսանքի միջուկը կազմում էին թագաժառանգ Ֆահդ իբն Աբդ ալ–Ազիզը և նրա երկու եղբայրները՝ պաշտպանության նախարար Սուլթան իբն Աբդ ալ–Ազիզը և ներքին գործերի նախարար Նայիֆ իբն Աբդ ալ–Ազիզը: Այդ երեքը ոչ միայն միևնույն հորից էին՝ Աբդ ալ Ազիզ ալ–Սաուդից, այլև միևնույն մորից՝ Հուսա բինթ Ահմադ Սուդայրիից, որը Սաուդյան Արաբիայի ամենաազդեցիկ ընտանիքներից մեկից էր:

Այդ հոսանքը նացիոնալիստական հոսանքի դեմ էր և կողմնակից էր Սաուդյան Արաբիայի արագ տնտեսական զարգացմանը՝ հիմնված նավթից ստացվող վիթխարի եկամուտների վրա: Նրա կողմնակիցները համարվում էին ամերիկամետներ և ամերիկյան դպրոցի կողմնակիցներ: Իսկ տնտեսության զարգացումն արագ տեմպերով նշանակում էր նաև վերափոխումներ արագ տեմպերով, որը պետք է հանգեցներ ավանդույթների թուլացմանը: Բայց չպետք է կարծել, թե այդ երկրորդ հոսանքը, որը գլխավորում էր Ֆահդը, բացահայտորեն հանդես էր գա-

լիս ավանդույթների թուլացման կամ նրանց դերի նվազեցման պահանջով: Նման բան չկար և չէր էլ կարող լինել վահաբիական Արաբիայում: Խոսքն այն մասին է, որ տնտեսական արագ վերափոխումներն անխուսափելիորեն բերելու էին պահպանողական ավանդույթների թուլացմանը և, ի վերջո, նրանց մի մասի վերացմանը:

Թեև այդ երկու միմյանց հակադիր հոսանքները ձևավորվել էին սաուդյան արքայական ընտանիքի վերնախավի ներսում, այդուհանդերձ, նրանք իրենց արտացոլումը գտան նաև սաուդյան հասարակության մեջ:

Ահա զարգացման այդ երկու միտումները կազմում էին այն հիմնական առանցքը, որի շուրջը պտտվում էին տնտեսական և քաղաքական իրադարձությունները, այդ թվում և ներսաուդյան ընտանեկան տարածայնությունները, որոնք, այդուհանդերձ, չվերածվեցին բացահայտ բախումների, ինչպես դա տեղի ունեցավ 1960–ական թվականներին, երբ պալատական հեղաշրջման հետևանքով տապալվեց Սաուդ իբն Աբդ ալ–Ազիզը, և թագն անցավ Ֆեյսալ իբն Աբդ ալ–Ազիզին: Այս անգամ ամեն մարդ մնաց իր տեղում. Խալիդը՝ թագավոր, իսկ Ֆահդը՝ գահաժառանգ:

Սաուդյան Արաբիայում, ինչպես հարևան մյուս արաբական երկրներում, իրադրությունը պարբերաբար լարվում էր, որի պատճառները, ոչ միայն ներքին, այլև համաարաբական խնդիրներն էին՝ մանավանդ կապված արաբա–իսրայելական կոնֆլիկտի հետ: Խալիդը բավականին ուշադիր էր համաարաբական հարցերի նկատմամբ: Նա դրամական մեծ շնորհներ էր հատկացնում Պաղեստինի դիմադրության շարժմանը, ֆինանսական օգնություն տրամադրում Եգիպտոսին, Սիրիային, Հորդանանին և արաբական մյուս երկրներին: Այդուհանդերձ, երկրի ներսում կային տարբեր ուժեր, որոնք դժգոհ էին իշխանությունների ներքին և արտաքին քաղաքականությունից, որը երբեմն հանգեցնում էր բացահայտ հակակառավարական ելույթների: Դժգոհությունը համակել էր նաև զինվորականներին, որոնք 1979 թ. նոյեմբերին զինված ելույթ ունեցան Մեքքայի Մեծ մզկիթում, գրավեցին Կաաբան և փորձեցին գրավել Մուհամմադ մարգարեի գերեզմանը Մադինայում: Մինչ Խալիդ թագավորը խուսափողական դիրք էր գրավել և հույս ուներ խաղաղ միջոցներով լուծել խնդիրը, պաշտպանության նախարար Սուլթան իբն Աբդ ալ–Ազիզը գործեց արտակարգ վճռականությամբ: Սաուդյան բանակը և ազգային գվարդիան նրա հրամանատարությամբ երկու շաբաթ-

վա ընթացքում արյան մեջ խեղդեցին այդ զինված ապստամբությունը: Ապստամբության մասնակիցներից մոտ 120–ը զոհվեց, ևս 70–ը մահապատժի ենթարկվեց:

Սաուդցիների դժգոհությունն էր առաջացնում լայնորեն տարածված կոռուպցիան: 1979 թ. ապստամբեց ուտենբա ցեղը, որը գրավեց Մեքքայի մի քանի սրբավայրեր: Այդ ցեղի դժգոհության գլխավոր պատճառներից մեկը լայնորեն տարածված կոռուպցիան էր, իսկ մյուս պատճառը՝ հասարակության մեջ բարոյականության նորմերի խախտումը, որը նրանք համարում էին շեղում վահաբիական սկզբունքներից:

Արտաքին քաղաքականության բնագավառում Սաուդյան Արաբիան ակտիվացրեց իր գործունեությունը իսրայելական ագրեսիայի հետևանքների վերացման ուղղությամբ: Սաուդյան կառավարությունը հանդես եկավ Եգիպտոսի պրեզիդենտ Սադաթի սեպարատ քաղաքականության դեմ և դատապարտեց քեմպդևիդյան գործարքը: Իսկ երբ Եգիպտոսը 1979 թ. մարտին հաշտության պայամանգիր կնքեց Իսրայելի հետ, Սաուդյան Արաբիան խզեց բոլոր տեսակի հարաբերությունները նրա հետ: Դրա հետ միասին Սաուդյան Արաբիան հավատարիմ էր պահպանողական ռեժիմներին աջակցելու և առաջադիմական ռեժիմները քայքայելու իր քաղաքականությանը: Նա հատկապես ուժեղացրեց ճնշումը Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության վրա, որը հայտարարել էր սոցիալիստական հասարակություն կառուցելու իր մտադրության մասին.

Եգիպտոսի քաղաքական մեկուսացումից հետո Սաուդյան Արաբիան փորձում էր իր վրա վերցնել արաբական. ինչպես նաև մուսուլմանական աշխարհի առաջնորդի դերը, և որոշ ժամանակ դա նրան հաջողվում էր: Դրա վկայություններից մեկն էլ 1981 թ. Մեքքայում գումարված արաբական և մուսուլմանական 42 երկրների միապետների և պրեզիդենտների համաժողովն էր: Իր այդ նոր դերակատարման համար Սաուդյան Արաբիան օտագործում էր մի այնպիսի հզոր զենք, ինչպես ֆինանսական օգնությունը մուսուլմանական երկրներին: Սաուդյան Արաբիան դրա հնարավորությունն ուներ, քանի որ 1990–ական թվականների սկզբներին Սաուդյան Արաբիայում կենտրոնացված էր աշխարհի ֆինանսական ռեսուրսների մեկ երրորդը, որն ուղղակի ֆանտաստիկա է:

Զուգահեռաբար Սաուդյան Արաբիան ընդլայնում էր համագործակցությունը ԱՄՆ–ի, ինչպես նաև արևմտյան խոշոր պետությունների հետ: 1978 թ. Սաուդյան Արաբիան աշխարհում առաջին տեղը գրավեց

ԱՄՆ–ից զենք գնելու մեջ՝ առաջ անցնելով անգամ Իրանից: Բանակի զինումը նորագույն ռազմական տեխնիկայով անշեղորեն աճում էր, որի վրա ծախսվում էին վիթխարի միջոցներ: Միայն 1980 թ. Սաուդյան Արաբիան ԱՄՆ–ից գնեց 2 մլրդ դոլարի զենք: Ռազմական տեխնիկան սպասարկելու և սաուդցիներին սովորեցնելու ու վարժեցնելու համար հազարավոր ռազմական մասնագետներ էին հրավիրվում ԱՄՆ–ից և արևմտյան մյուս երկրներից: Այդ ծախսերը հնարավոր էր լինում ծածկել նավթից ստացվող եկամուտների հաշվին, որոնք 1981 թ. կազմեցին 118 մլրդ դոլար: Սակայն սաուդա–ամերիկյան հարաբերությունները միշտ չէ, որ հարթ էին ընթանում, և բոլոր հարցերում չէր, որ Խալիդն ընդառաջ էր գնում ԱՄՆ–ի կառավարության պահանջներին կամ ցանկություններին: Երբ ԱՄՆ–ի պրեզիդենտ Կարտերը 1978–1979 թթ. փորձեց ներգրավել Սաուդյան Արաբիային մերձավորարևելյան այսպես կոչված խաղաղության գործընթացի մեջ և առաջարկեց նրան միանալ կամ պաշտպանել քեմպդևիդյան համաձայնագրերը, ապա սաուդյան միապետը կտրուկ կերպով մերժեց ամերիկյան պրեզիդենտին: Դա բացատրվում է ոչ միայն այն հանգամանքով, որ համարյա ամբողջ արաբական աշխարհը դատապարտել էր Եգիպտոսին՝ նրա պրեզիդենտ Սադատին համարելով դավաճան, և խզել կապերը արաբական այդ առաջատար երկրի հետ. Նման պայմաններում, հասկանալի է, շատ դժվար կլիներ սաուդյան իշխանություններին՝ արդարացնել Իսրայելի հետ Եգիպտոսի գործարքը և միանալ այդ գործընթացին:

Կարտերին մերժելու հարցում Սաուդյան Արաբիայի համար պակաս կարևոր չէր նաև մեկ այլ հանգամանք, որը կապված էր Իրանի շահ Մուհամմադ Ռեզա Պահլավիի տապալման հետ: Խալիդը շատ լավ գիտեր, որ Իրանի շահական ռեժիմը ԱՄՆ–ի ամենակարևոր հենարաններից մեկն էր, թերևս ամենակարևոր հենարանը մերձավորարևելյան տարածաշրջանում: Եվ, այդուհանդերձ, Կարտերը չկարողացավ ապահովել շահի անվտանգությունը և կանխել Պահլավի դինաստիայի տապալումը: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Խալիդը գտնում էր, որ եթե ԱՄՆ–ը ի վիճակի չեղավ փրկելու Պահլավի դինաստիան Իրանում, ապա նա չի կարողանա փրկել Սաուդյան Տունը, այսինքն՝ դինաստիան, նաև Սաուդյան Արաբիայում:

Ահա այդ երկու պատճառներով է բացատրվում Սաուդյան Արաբիայի միապետի խիստ բացասական պատասխանը քեմպդևիդյան համաձայնագրերին միանալու Կարտերի առաջարկություններին:

Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունն ընդհանրապես խիստ մտահոգություն պատճառեց Սաուդյան Արաբիայի ղեկավարությանը և առաջին հերթին Խալիդ թագավորին: Դա բացատրվում է նրանով, որ իրանական իսլամական հեղափոխությունը համարվում է շիական հեղափոխություն: Իսկ շիաները Սաուդյան Արաբիայում տիրապետող վահաբիական իսլամի տեսանկյունից չեն համարվում ուղղափառ մուսուլմաններ: Իրանական հեղափոխության ազդեցության տակ ուժեղացան այսպես կոչված իսլամական հեղափոխական շարժումներ՝ իրենց շիական տարբերակով: Իրանական կրոնական առաջնորդները հանդես էին գալիս իրենց հեղափոխության արտահանման կոչերով, որը երբեմն մեծ արձագանք էր գտնում: Այդ կոչերին 1979 թ. արձագանքեցին անգամ շիաները Սաուդյան Արաբիայում: Դրանք գլխավորապես նավթարդյունաբերության մեջ աշխատող բանվորներն էին: Ոգևորված այաթոլլահ Խոմեյնիի կոչերից՝ Սաուդյան Արաբիայի փոքրամասնություն կազմող շիաները պահանջում էին երկրի ղեկավարությունից ավելի խստորեն կիրառել իսլամի պահանջները: Ուստի սաուդյան ղեկավարության գլխավոր խնդիրն այդ հարցում դարձավ թույլ չտալ շիական հեղափոխության հետագա ուժեղացումը և տարածումը, հատկապես այնպիսի երկրներում, որտեղ շիաները կազմում են մեծամասնություն, և իսլամի շիական տարբերակը հանդիսանում է տիրապետող տվյալ երկրում:

Մյուս կողմից, տեղի տալով իսլամական նորմերի ավելի խիստ գործադրման պահանջներին, սաուդյան իշխանությունները սկսեցին որոշ արգելքներ դնել ոչ մուսուլմանական երկրներից բանվորներ և մասնագետներ վարձելու առջև, և դա այն դեպքում, երբ երկիրը դրա մեծ պահանջարկն ուներ:

Խալիդ թագավորը, որը վերին աստիճանի կրոնական անձնավորություն էր, կրկնապատկեց իր ջանքերը և ծեռք առավ խիստ միջոցներ ուղղափառ իսլամի դրույթները Սաուդյան Արաբիայում և այլ երկրներում ավելի հետևողականորեն կիրառելու ուղղությամբ, թույլ չտալու որևէ շեղում նրա հիմնադրույթներից և կանխելու շիական հեղափոխության գաղափարների ներթափանցումը իր թագավորության մեջ: Նա իր կյանքի վերջին տարիներին ավելի ու ավելի շատ էր ընկղմվում կրոնական հայեցողության մեջ և ավելի ու ավելի մեկուսանում պետական գործերից: Դրանում իր դերը խաղաց նաև նրա հիվանդագին վիճակը՝ կապված սրտի անբավարարության հետ: Դրա հետևանքով իշխանու-

թյունն ավելի ու ավելի էր կենտրոնանում գահաժառանգի՝ Ֆահդի ձեռքում, որը դարձել էր Սաուդյան Արաբիայի փաստացի կառավարողը:

1982 թ. հունիսի 13–ին Խալիդ իբն Աբդ ալ–Ազիզը սրտի կաթվածից մահացավ:

2. «Ֆահդի պլանը»: Միապետի տիտղոսի նոր փոփոխություն: Սաուդյան Արաբիայի դիրքորոշումը իրաք–իրանյան պատերազմում և Իրաքի Քուվեյթ ներխուժման հարցում

1982 թ. հունիսի 13–ին մահացած Խալիդի փոխարեն սաուդյան գահին նստեց նրա եղբայրը՝ գահաժառանգ Ֆահդ իբն Աբդ ալ–Ազիզը:

Նա անծանոթ մարդ չէր սաուդյան քաղաքական–պետական ասպարեզում: Ինչպես Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդի մյուս որդիները, նրա տասնմեկերորդ որդին՝ Ֆահդը, նույնպես համեմատաբար երիտասարդ տարիքում ներգրավվել էր պետական կառավարման համակարգում և զբաղեցրել զանազան պաշտոններ: Նա եղավ Սաուդյան Արաբիայի առաջին կրթության նախարարը՝ 1953–1960 թթ., ապա զբաղեցրեց ներքին գործերի նախարարի պաշտոնը, որը Սաուդյան Արաբիայում սովորաբար համարվում է ամենակարևոր նախարարներից մեկը: Ֆեյսալը նրան վստահեց Նախարարների խորհրդի նախագահի տեղակալի բարձր պաշտոնը, իսկ Խալիդը 1975 թ. նրան նշանակեց գահաժառանգ: Այդ վերջին պաշտոնում նա իրեն դրսևորեց իբրև բանիմաց, եռանդուն և հմուտ գործիչ, հատկապես այն բանից հետո, երբ հիվանդ թագավորը՝ Խալիդը, աստիճանաբար հետ քաշվեց պետական գործերից, և Ֆահդը դարձավ երկրի փաստացի կառավարողը: Այսպիսով՝ գահին նստելու պահին նա ուներ բավականին բարձր հեղինակություն, և նրա՝ երկրի միապետ դառնալը միանգամայն բնականոն երևույթ էր, որը որոշ շրջանների կողմից ընդունվեց անգամ խանդավառությամբ:

Ֆահդի Սաուդյան Արաբիայի թագավոր դառնալը ավելին էր, քան սոսկ անձի փոփոխություն: Դրանով նշանավորվեց Սուդայրիի ընտանիքի դիրքերի ամրապնդումը սաուդյան կլանի ներսում: Նրա մայրը՝ Հուսա բինթ Ահմադ ալ–Սուդայրին, յոթ որդիների մայր էր, որոնց ավագը Ֆահդն էր: Յոթ եղբայրները, որոնց երբեմն անվանում էին «Սուդայրիի հրաշալի յոթնյակ», չափազանց մեծ ազդեցություն ձեռք բերեցին Սաուդյան Արաբիայում, և նրանք էին ուղղորդում երկրի քաղաքական ու սոցիալ–տնտեսական զարգացումները: Հենց Սուդայրիի այդ

յոթնյակն էր, որ հակադրվեց Խալիդի գլխավորած ազգայնական–պահպանողական հոսանքին և ձևավորեց ամերիկանամետ հոսանքը, որը կանգնած էր Սաուդյան Արաբիայի արագ զարգացման և վերափոխումների դիրքերում:

Ֆահդը սկզբնական շրջանում հիմնական գծերով շարունակեց ավանդական դարձած սաուդյան քաղաքականությունը: Նա չէր հանդուրժում ընդդիմության որևէ դրսևորում և դաժանորեն հետապնդում էր նրանց, ովքեր քննադատում էին սաուդյանների ներքին և արտաքին քաղաքականությունը, հանդես էին գալիս առաջադիմական վերափոխումների և երկրի ազատականացման պահանջներով: Նա չափազանց ուժեղացրեց անվտանգության ապարատը, ինչպես նաև բանակը, որը շատ հաճախ պատժիչ ֆունկցիաներ էր կատարում:

Ֆահդի թագավորության շրջանը համընկավ արաբական և մուսուլմանական աշխարհում կատարվող մեծ փոփոխությունների հետ, որոնք երբեմն փոթորկոտ իրադարձությունների բնույթ էին կրում: Սաուդյան իշխանություններն արագորեն արձագանքում էին դրանց: Ֆահդը մեծ ակտիվություն ցուցաբերեց միջարաբական ասպարեզում, առաջին հերթին՝ պաղեստինյան խնդրում: Նա որոշեց այդ բարդ խնդրի և արաբա–իսրայելական հակամարտության լուծումը վերցնել իր ձեռքը: Ֆահդը 1981 թ., երբ դեռևս գահաժառանգ էր, հանդես եկավ մերձավորարևելյան կոնֆլիկտը կարգավորելու բավականին լավ մշակված և համակարգված պլանով, որը ստացավ «Ֆահդի պլան» անվանումը: Դա նախատեսում էր իսրայելական զորքերի դուրսբերում 1967 թ. գրաված արաբական բոլոր տարածքներից, այդ տարածքներում հիմնված հրեական բոլոր բնակավայրերի վերացում, Պաղեստինի անկախ պետության հիմնում և տարածաշրջանի պետությունների միջև խաղաղ գոյակցության հաստատում, որը նշանակում էր արաբական երկրների հրաժարում Իսրայելի՝ որպես պետության վերացման պահանջից: Իր ժամանակի համար դրանք բավականին համարձակ պահանջներ էին, որ կարող էր ներկայացնել հավանաբար միայն Սաուդյան Արաբիան, որի հեղինակությունը և ազդեցությունը արաբական աշխարհում շատ բարձր էր և ոչ մի ուժ նրան չէր կարող մեղադրել սիոնիստների հետ համագործակցելու մեջ:

Ֆահդն իր առաջարկությունների փաթեթը 1982 թ. սեպտեմբերին ներկայացրեց Ռաբաթում կայացած արաբական պետությունների ղեկավարների խորհրդակցությանը, որն արժանացավ նրա հավանությա-

նը: «Ֆահդի պլանը» դարձավ համաարաբական ընդհանուր դիրքորոշում ամբողջ ինը տարի՝ մինչև 1991 թ. Մադրիդում Մերձավոր Արևելքում խաղաղության կարգավորմանը նվիրված կոնֆերանսը[22]:

Թեև «Ֆահդի պլանը» անմիջապես չկիրառվեց, այդուհանդերձ, նա մեծ դեր խաղաց արաբական աշխարհում մտայնությունը փոխելու, կոնֆլիկտը քաղաքական միջոցներով լուծելու և Իսրայելի գոյության հետ հաշտվելու գործում: Իսկ դա իր բարերար ազդեցությունն ունեցավ հետագայում՝ 1993 և 1996 թթ. իսրայելա–պաղեստինյան համաձայնությունների կայացման ժամանակ:

Ինչպես նշեցինք, Ֆահդը ամերիկանամետ էր և պատկանում էր ամերիկյան դպրոցին: Նստելով գահին՝ նա առաջնակարգ նշանակություն էր տալիս բազմակողմանի քաղաքական, տնտեսական, ինչպես նաև ռազմական կապերի զարգացմանն ու խորացմանը ԱՄՆ–ի հետ: 1985 թ. սաուդյան բանակում գտնվում էին 2 հազար խորհրդականներ և 4 հազար մասնագետներ, որոնց ճնշող մեծամասնությունը ամերիկացիներ էին:

1984–1985 թթ. նավթի համաշխարհային գների անկումը և նավթից ստացվող եկամուտների շեշտակի կրճատումը բացասաբար անդրադարձան Սաուդյան Արաբիայի տնտեսական և ներքաղաքական կյանքի վրա: Ռազմական զենքի գնման և ռազմական խորհրդատուներին վճարվող հսկայական ծախսերը, Պաղեստինի դիմադրական շարժմանը հատկացվող տպավորիչ դրամաշնորհները, արաբական երկրներին պարբերաբար ցույց տրվող օգնությունը, ֆինանսական աջակցությունը աշխարհի համարյա բոլոր մուսուլմանական երկրներին, այդ երկրներում մզկիթներ կառուցելու համար տրամադրվող դրամական հսկայական միջոցները և այլն այդ բոլորն առաջացրեց Սաուդյան Արաբիայի պետական բյուջեի մեծ դեֆիցիտ, որը չլսված բան էր նավթով հարուստ այդ երկրի համար: Կառավարությունը հարկադրված էր անցնել խնայողության քաղաքականության, անգամ դիմեց օտարերկրյա վարկեր վերցնելուն: Վերանայվեցին տնտեսական զարգացման նախագծերը, դադարեցվեց մի շարք գործարանների և տնտեսական օբյեկտների շինարարությունը, կրճատվեցին պետական ծախսերը և սոցիալական ոլորտի համար նախատեսված հատկացումները, դանդաղեցին տնտեսական զարգացման տեմպերը:

22 Այդ մասին ավելի հանգամանորեն տես նաև սույն հատորի IV «Պաղեստին» գլուխը:

Այս բոլորը մեծ լարվածություն ստեղծեց Սաուդյան Արաբիայում Դժգոհությունը համակել էր տարբեր խավերի, որոնք հանդես էին գալիս կառավարության քաղաքականության խիստ քննադատությամբ: Լարվածությունը պահպանվեց երկար ժամանակ՝ մինչև 1990–ական թվականների սկիզբը, երբ նավթի համաշխարհային գները կրկին բարձրացան, իսկ եկամուտները՝ ավելացան: Բայց դա հետո էր լինելու:

Իսկ այդ պահին, երբ իրադրությունը Սաուդյան Արաբիայում մնում էր շատ լարված, և երբ երկրի առջև ծառացել էին բազում քաղաքական, սոցիալական և տնտեսական խնդիրներ, պայթեց իրանա–իրաքյան պատերազմը, որը լուրջ պրոբլեմների առաջ կանգնեցրեց արաբական բոլոր երկրներին, այդ թվում և Սաուդյան Արաբիային:

Պատերազմը, որը սկսվեց 1980 թ. և շարունակվեց ութ տարի՝ մինչև 1988 թ., ուղղակի առնչություն ուներ 1979 թ. Իրանում տեղի ունեցած իսլամական շիական հեղափոխության և նրա արտահանման Իրանի կրոնապետների կոչերի հետ: Այդ առումով առաջին և ամենահարմար թեկնածուն դիտվում էր Իրանի անմիջական հարևան Իրաքը, որի բնակչության կեսից ավելին դավանում էր շիիզմ, և Իրանում հույս ունեին, որ շիաները կապստամբեն, կտապալեն Իրաքում կառավարող արաբական սոցիալիստական Բաաս կուսակցության վարչակարգը, և Իրաքը կվերածվի Իրանից հետո երկրորդ շիական իսլամական աստվածապետության: Իսկ նման հեռանկարը, ինչպես արդեն նշել ենք, լրջորեն անհանգստացնում էր Սաուդյան Արաբիային և մեծ սպառնալիք ներկայացնում վահաբիական իսլամական կարգերին: Ահա թե ինչու, երբ սկսվեց պատերազմը, ապա Սաուդյան Արաբիան արաբական երկրների մեծամասնության հետ միասին պաշտպանեց Իրաքին:

Իրաքա–իրանյան պատերազմի ժամանակ՝ 1980–1988 թթ., Սաուդյան Արաբիան Իրաքին ցույց էր տալիս նյութական, առաջին հերթին ֆինանսական օգնություն: Դա զգալի դեր խաղաց Իրաքի պաշտպանության ամրապնդման գործում: Իրաքը կարողացավ արաբական երկրների օգնությամբ դիմակայել Իրանին, և 1988 թ. պատերազմն ավարտվեց: Կողմերից ոչ մեկը չկարողացավ տանել հաղթանակ, և պահպանվեց ստատուս քվոն: Այդուհանդերձ, շնորհիվ Իրաքի, շիական իսլամական հեղափոխության առջև կանգնեցվեց պատվար: Ոչ մի երկրում չտապալվեց գոյություն ունեցող վարչակակարգը, և ոչ մի երկրում չհաստատվեց աստվածապետություն:

1986 թ., երբ խիստ բորբոքվել էին կրքերը իսլամական հեղափոխությունն արտահանելու Իրանի քաղաքականության կապակցությամբ, և սաուդյան իշխանությունները խորը տագնապ էին ապրում, Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆահդը դիմեց մի քայլի, որն անսպասելի էր շատերի համար: Նա պաշտոնապես հրաժարվեց «Նորին մեծություն» տիտղոսից, որը արքաների մենաշնորհն է, և ընդունեց նոր տիտղոս՝ «Մեքքայի և Մադինայի սուրբ մզկիթների պահապան»:

Կասկած չի հարուցում, որ այդ փոփոխությունը կապված էր իսլամական կրոնական այն տարընթացությունների հետ, որոնք տեղի էին ունենում այդ ժամանակ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում, և որոնք լուրջ մտահոգություն էին առաջացրել սաուդյան ընտանիքում ու վահաբիական իսլամական վերնախավում: Նոր տիտղոսի ընդունումով փորձ էր արվում ընդգծել այն կարևորությունը, որ Սաուդյան Արաբիայում տալիս էին ուղղափառ իսլամին և նրա սրբավայրերի անձեռնմխելիությանը և մուսուլմանական աշխարհում նրա առաջնայնության ու անվտանգության ապահովմանը:

Սաուդյան թագավորի այդ նոր տիտղոսը հավանաբար մնաց ներքին օգտագործման համար, իսկ միջազգային հարաբերություններում և այլ պետությունների հետ առօրյա փոխհարաբերություններում սաուդյան միապետին դարձյալ դիմում էին «Նորին մեծություն» ավանդական ձևով:

Սաուդյան Արաբիայի համար մեծ փորձություն հանդիսացավ Իրաքի ներխուժումը Քուվեյթ 1990 թ. օգոստոսի 2–ին, նրա բռնակցումը և Իրաքի 19–րդ նահանգ հռչակելը: Դա նախադեպը չունեցող գործողություն էր, երբ արաբական մի պետություն գրավում և բռնակցում էր մեկ այլ արաբական անկախ պետության, որն Արաբական պետությունների լիգայի և ՄԱԿ–ի անդամ էր: Դա ցնցեց ողջ արաբական և ոչ միայն արաբական աշխարհը. Ֆահդն անմիջապես չարձագանքեց Իրաքի այդ գործողությանը: Նա սպասեց մոտ մեկ շաբաթ և միայն դրանից հետո հրապարակավ ներկայացրեց Սաուդյան Արաբիայի դիրքորոշումը, որը Դիլիպ Հիրոն նույնիսկ անվանում է սպասողական և տատանողական: Մասնագետները մինչև այժմ գլուխ են կոտրում բացատրելու Ֆահդի հապաղելու պատճառները, բայց ապարդյուն: Ինչևէ, իրաքյան հարձակումից մեկ շաբաթ անց Ֆահդը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ նա դատապարտում էր Իրաքի ագրեսիան Քուվեյթի դեմ, պահանջում նրա զորքերի դուրսբերումը և Քուվեյթի անկախության վերականգնումն ու ինքնիշխանության հարգումը: Սաուդյան Արաբիան նաև համա-

ծայնվեց ընդունել Քուվեյթի էմիրին և աս–Սաբահների ամբողջ թագավորական ընտանիքին. ինչպես նաև ապաստան տվեց 400 հազար քուվեյթցի փախստականների, որոնք հարկադրված էին ամեն ինչ թողած փախչել Քուվեյթից:

Իրականում իրաքյան ագրեսիան Քուվեյթի դեմ խուճապի նման բան առաջացրեց Ռիյադում: Դա կապված էր այն իրողության հետ, որ Իրաքի պրեզիդենտ Սադամ Հուսեյնը ոչ միայն մերժեց միջազգային հանրության, ՄԱԿ–ի և նրա Անվտանգության խորհրդի անդամ մեծ պետությունների՝ ԱՄՆ–ի, Խորհրդային Միության, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի, ինչպես նաև այլ պետությունների վճռական պահանջը՝ հեռանալ Քուվեյթից, որը վերջնագրի բնույթ ուներ, այլև, ընդհակառակը, հայտարարեց, որ նպատակ ունի շարունակել իր ագրեսիան՝ ուղղված արաբական մյուս պետությունների դեմ: Նա առաջին հերթին նկատի ուներ նավթարդյունահանող և հարուստ արաբական միապետությունները, այդ թվում՝ Սաուդյան Արաբիան, Արաբական Միացյալ Էմիրությունները և այլն: Նա ուղղակի սպառնաց տապալել այդ միապետական վարչակարգերը և հասնել արաբական հարստության հավասար բաժանմանը արաբական երկրների միջև: Եվ Սադամ Հուսեյնը, որն ուներ մոտ մեկմիլիոնանոց լավ զինված բանակ, իր զորքերի մի մասը կենտրոնացրեց իրաքա–սաուդյան սահմանի վրա: Սաուդյան Արաբիան չէր կարող սեփական ուժերով դիմակայել իրաքյան հզոր բանակին, եթե վերջինս անցներ հարձակողական գործողությունների: Ուստի սաուդյան թագավոր Ֆահդը օգնության համար դիմեց ԱՄՆ–ին և արաբական երկրներին՝ պաշտպանելու Սաուդյան Արաբիան: ԱՄՆ–ի արձագանքը եղավ դրական, և ամերիկյան զորքերը տեղադրվեցին Սաուդյան Արաբիայում: Նրան օգնության ձեռք մեկնեցին նաև արաբական երկրները, որոնց զորքերը նույնպես տեղակայվեցին Սաուդյան Արաբիայում. Իրաքը, որը դեռ չէր մարսել Քուվեյթը, չհամարձակվեց բացել նոր ճակատ և ներխուժել Սաուդյան Արաբիա:

Ինչպես նշվել է, ձևավորվեց հակաիրաքյան բազմազգ կոալիցիա՝ ԱՄՆ–ի գլխավորությամբ, որը 1991 թ. փետրվարին հաջողությամբ իրագործեց «Փոթորիկ անապատում» ռազմական գործողությունը: Նա հիմնական գլխավոր հարվածը հասցրեց Սաուդյան Արաբիայի տարածքից, պարտության մատնեց Իրաքին, ազատագրեց Քուվեյթը և վերականգնեց նրա անկախությունը: Դրանով վերացավ նաև այն վտանգը, որ

կախվել էր Սաուդյան Արաբիայի և արաբական մյուս միապետությունների գլխին:

Սաուդյան Արաբիայում բոլորը չէին, որ հավանություն տվեցին ամերիկյան զորքերը Սաուդյան Արաբիայում տեղակայելուն: Շատերը քննադատում էին Ֆահդին նրա այդ քայլի համար՝ նրան մեղադրելով, որ նա առաջին սաուդյան թագավորն էր, որի ժամանակ օտար զինված ուժեր հայտնվեցին իրենց երկրում:

Եվ դա դարձավ լարվածության նոր աղբյուր սաուդյան ընտանիքի և նրան ընդդիմադիր ուժերի միջև:

3. Սաուդյան Արաբիայի պետական կառուցվածքի, մարմինների և նրանց գործառույթների սահմանադրական օրինակարգումը

Սաուդյան Արաբիան այն եզակի պետություններից մեկն էր, որտեղ պետական կառույցներն ու մարմինները, նրանց բաժանումը գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների, կառավարման ֆունկցիաների սահմանազատումը և նրանց իրավասության ու լիազորությունների շրջանակները հստակորեն սահմանված չէին օրենսդրական կամ սահմանադրական նորմերով, ինչպես դա այս կամ այն չափով ընդունված էր XIX–XX դարերում աշխարհի համարյա բոլոր երկրներում: Սաուդյան Արաբիայում այդ կարևոր գործառույթների վերաբերյալ չկային գրավոր պաշտոնական փաստաթղթեր, և դրանք կարգավորվում էին Կորանի հիմնադրույթների ու շարիաթի նորմերի, ինչպես նաև ադաթի՝ սովորույթների ու ավանդույթների համաձայն: XIX դարում և XX դարի 20–30–ական թվականներին, երբ ընթանում էր Արաբիայում սաուդյան պետության կազմավորման գործընթացը, և երբ դեռ շատ ուժեղ էին ցեղային ու բեդվինական, վահաբիական–իսլամական մենտալիտետը, հոգեբանությունը և անապատում ծնված, մեծացած ու ձևավորված արաբներին բնորոշ սովորույթները, և երբ նրանց համար անընդունելի էին եվրոպական արժեքները, այդ թվում և սահմանադրական կատեգորիաները, դեռևս հնարավոր էր պետական–կառավարական մի այնպիսի արխայիկ համակարգի գոյությունը, ինչպիսին Սաուդյան Արաբիայի համակարգն էր:

Սակայն Սաուդյան Արաբիայի՝ որպես պետության հետագա զարգացումը, ներքաղաքական, տնտեսական և սոցիալական այլ խնդիրների բազմազանությունն ու բարդացումն ավելի ու ավելի ակնհայտ էին

դարձնում կառավարման հին, ցեղային, անգամ արխայիկ մեթոդներից ու ձևերից հրաժարվելու և ինչ–որ նորամուծություններ կատարելու անհրաժեշտությունը, որոնք կարևոր քայլ էին հանդիսանալու Սաուդյան Արաբիայի պետական կառուցվածքի և մարմինների արդիականացման ճանապարհին՝ հիմնված ժամանակակից քաղաքական և իրավագիտական մտքի ու սկզբունքների վրա:

Դա էին պահանջում նաև Սաուդյան Արաբիայի առջև կանգնած արտաքին քաղաքական խնդիրները: Սաուդյան Արաբիան դարձել էր միջազգային համակեցության լիիրավ անդամ: Նա անդամ էր բազմաթիվ միջազգային, ռեգիոնալ, տնտեսական, քաղաքական, իսլամական և այլ կազմակերպությունների: Ամենօրյա հարաբերություններն աշխարհի տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների հետ նույնպես անհրաժեշտություն էին դարձնում սաուդյան պետության որոշ արդիականացումը և սահմանադրական նորմերի կիրառումը, որն ավելի հասկանալի ու կանխատեսելի կդարձներ սաուդյան քաղաքականությունը, կվերացներ այն դժվարությունները, որոնք սովորաբար հառնում էին այդ բնագավառում և ավելի կհեշտացներ հարաբերությունները և գործառույթները նրանց ու սաուդյան պետական մարմինների միջև:

Այդ հարցը հասունացել էր սաուդյան հասարակության ընդերքում: Ընդդիմադիր ուժերը, որոնք գործում էին ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում, Սաուդյան Արաբիայում վերափոխումներ կիրառելու և դեմոկրատացնելու իրենց պահանջների մեջ առաջադրում էին նաև սահմանադրության հարցը: Նույնիսկ սաուդյան ընտանիքի որոշ հեռատես անդամներ հասկանում էին դրա անհրաժեշտությունը: Ֆեյսալը եղավ առաջինը, որը հրապարակավ խոստացավ Սաուդյան Արաբիային տալ գրավոր սահմանադրություն: Սակայն երբ նա 1964 թ. տապալելով եղբորը նստեց գահին, մոռացավ իր խոստումը, իսկ 1975 թ.՝ նրա սպանությունից հետո, նրա այդ խոստումը մոռացության տրվեց: Նրան հաջորդած Խալիդը, որը սաուդյան ընտանիքում պահպանողական ուժերի պարագլուխն էր, այդ մասին չէր էլ մտածում:

Բայց այդ հարցը շարունակում էր հուզել ընդդիմադիր ուժերին, և կրկին օրակարգի հարց դարձավ իրաքա–քուվեյթյան կոնֆլիկտի ավարտից հետո: Ետքուվեյթյան ճգնաժամին հաջորդած ժամանակաշրջանի բնորոշ գծերից մեկը եղավ ընդդիմության ուժեղացումը Ֆահդի քաղաքականության դեմ: Սաուդյան Արաբիան իրաքա–քուվեյթյան կոնֆլիկտի և «Փոթորիկ անապատում» ռազմական գործողու-

թյունների հետ կապված հսկայական ֆինանսական միջոցներ ծախսեց, որը, ինչպես նաև մեծ ծավալներ ստացած կոռուպցիան, խիստ բացասական հետևանքներ ունեցավ երկրի բյուջեի, տնտեսական դրության և հասարակ մարդկանց տնտեսական վիճակի վրա: Իրադրության ընդհանուր վատթարացումը պարարտ հող հանդիսացավ Սաուդյան Արաբիայում իսլամական ֆունդամենտալիստական շարժման աշխուժացման համար, որն ուղղված էր թե՛ սաուդյան տան, և թե՛ վահաբիական կրոնական վերնախավի դեմ:

Դրան զուգահեռ ակտիվացան նաև աշխարհիկ քաղաքական ուժերը, որոնք Ֆահդից պահանջում էին բարեփոխումների կիրառում: 1991 թ. մայիսին այդ ուժերի ականավոր ներկայացուցիչ Շակիհ Աբդ ալ–Ազիզ ալ–Բազը Ֆահդին հանձնեց մի փաստաթուղթ, որը կոչվում էր «Պահանջների նամակ»: Նրա տակ կար 400 ստորագրություն, որոնք պատկանում էր Սաուդյան Արաբիայի երևելի ուլեմներին՝ աստվածաբաններին, դատավորներին և գիտնականներին: Նրանց հիմնական պահանջներն էին՝ ստեղծել Խորհրդատվական խորհուրդ՝ օժտված ներքին և արտաքին հարցերը լուծելու իրավունքներով, պետության ավելի իսլամացում, սոցիալական, տնտեսական և կրթական ինստիտուտների հիմնում, պատժել նրանց, ովքեր հարստացել են անօրինական ճանապարհով, կարծիքների արտահայտման ազատություն՝ շարիաթի շրջանակներում:

Ֆահդը ոչ միայն ընթացք չտվեց այդ պահանջներին և պատասխանի չարժանացրեց «Պահանջների նամակի» հեղինակներին, այլև սկսեց բռնություններ կիրառել իսլամական այլախոհ ուլեմների նկատմամբ Սաուդյան Արաբիայում և դադարեցրեց ֆինանսական աջակցությունը իսլամական մարտիկներին արտասահմանում: Միաժամանակ Ֆահդը և նրա եղբայրները, որոնք պատկանում էին այսպես կոչված ամերիկյան դպրոցին, ավելի սերտացրեցին հարաբերությունները ԱՄՆ–ի հետ: Ընդ որում՝ ուժեղանում էր ԱՄՆ–ի կախվածությունը սաուդյան նավթի մատակարարումից: Ամերիկյան նավթի մեկ քառորդը սաուդյան նավթն էր: Հենց նրա վաճառքից ստացված եկամուտների հաշվին Սաուդյան Արաբիան 1990 թ. օգոստոսից մինչև 1992 թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ–ից գնեց 25 մլրդ դոլար արժողության զենք:

Այդուհանդերձ, Ֆահդը գիտակցում էր, որ պետական համակարգում որոշ բարեփոխումների և սահմանադրական նորմերի կիրառումն

անխուսափելի է: Դա անհրաժեշտ էր ներքին անդորրության և անվտանգության ապահովման տեսանկյունից:

Դա էին պահանջում նաև գահաժառանգության հետ կապված հարցերը. Տարիները գնում էին, և ավելի ու ավելի պակասում էր Սաուդյան Արաբիայի հիմնադիր միապետի՝ Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդի ուղղակի ժառանգորդների՝ որդիների թիվը: 1990–ական թվականների վերջերին նրանց թիվը 30–ից էլ պակաս էր, և, հասկանալի է, մոտակա տարիներին այդ թիվն ավելի արագ է նվազելու: Մինչև այդ պահը հիմնադիր թագավորին գահի վրա փոխարինել էին բացառապես նրա որդիները: Սակայն շատացել էին Աբդ ալ–Ազիզի թոռները և ծոռները, և սաուդյան արքայազունների կամ իշխանների թիվն արդեն մոտենում էր 6 հազարի: Ուրեմն շուտով գահի վրա նստելու հերթը հասնելու էր նրանց՝ հարազատ եղբայրներից անցնելով հորեղբորորդիներին: Նույնիսկ անհնար էր երևակայել, թե այդքան հավակնորդների պարագայում ինչպիսի մրցակցություն ու պայքար կարող էր ծավալվել գահին տիրանալու համար, և ինչեր կարող էին տեղի ունենալ: Ո՞րն էր լինելու հիերարխիայի չափանիշը: Դա շատ լավ էր գիտակցում «Սուդայրիի հրաշալի յոթնյակը»՝ Ֆահդի գլխավորությամբ:

Ահա այդ հանգամանքները ստիպեցին Ֆահդին այլևս չհետաձգել սահմանադրական նորմերի կիրառումը և պետական կառավարման համակարգի կանոնակարգումը:

1992 թ. Ֆահդի հրամանով ընդունվեց երեք կարևոր օրենք՝ «Իշխանության համակարգի հիմունքները», «Խորհրդատվական խորհրդի կանոնակարգը» և «Տարածքային համակարգի կազմակերպումը»:

Դրանցից առաջինը համարվեց Հիմնական օրենք, որը մասնագիտական գրականության մեջ մյուս երկու օրենքների հետ միասին, հաճախ անվանվում է արաբերեն **«դուստուր»**, իսկ անգլերեն՝ **«constitution»**, այսինքն՝ սահմանադրություն: Իհարկե, դրանք, հատկապես «Իշխանության համակարգի հիմունքները», որը կոչվում է նաև Հիմնական օրենք, միայն պայմանականորեն կարելի է անվանել սահմանադրություն, մանավանդ եվրոպական իմաստով, քանի որ նրանում արձանագրված էր, որ Սաուդյան Արաբիայի սահմանադրությունը Կորանն է:

1992 թ. մարտին Ֆահդի կողմից հաստատված այդ սահմանադրությունը, որը գործադրության մեջ դրվեց 1993 թ., բաղկացած էր 83 հոդվածներից: Այդ փաստաթուղթը հասկանալու և գնահատելու համար բանալի է ծառայում առաջին հոդվածը, որտեղ արձանագրված են երկ-

րի համար առանցքային և հիմնարար դրույթները. «Սաուդյան Արաբիայի թագավորությունը ինքնիշխան արաբական իսլամական երկիր է, և իսլամը նրա կրոնն է: Ալլահի Գիրքը և Նրա Մարգարեի Սուննան նրա սահմանադրությունն են: Արաբերենը նրա լեզուն է, և Ռիյադը՝ նրա մայրաքաղաքը»:

Ինչպես տեսնում ենք, այդ փաստաթուղթը, որը կոչվում սահմանադրություն, բնավ չի սասանում Ալլահի Գրքի, այսինքն՝ Կորանի հիմքերը, որը շարունակում է մնալ Սաուդյան Արաբիայի իսկական սահմանադրությունը: Այժմ նրա այդ կարգավիճակը ամրագրվում էր արդեն գրավոր փաստաթղթով, որի տակ սաուդյան թագավորի ստորագրությունն էր: Ինչ վերաբերում է սուննային, ապա ուղղափառ իսլամի համաձայն՝ սուննան (արաբերեն իմաստային առումով նշանակում է «ուղի», «օրինակ» և «նմուշ») Մուհամմադ մարգարեի ասույթները և արարքներն են, որոնք գրի են առնվել հետագայում հադիսներում նրա ժամանակակիցների կողմից և ծառայում են բանալի Կորանի շատ դրույթներ ու ասույթներ հասկանալու, բացատրելու և մեկնաբանելու համար: Նա իսլամական օրենքների, իրավունքի և կանոնների աղբյուրներից մեկն է, առանց որի անհնար է հասկանալ իսլամական իրավունքը՝ շարիաթը:

Շատ կարևոր է սահմանադրության հինգերորդ հոդվածը, որտեղ շարադրված են ինչպես սաուդյան թագավորության տիպաբանության, այնպես էլ գահի ժառանգության վերաբերյալ սկզբունքները: Նրանում նշված է, որ «Սաուդյան Արաբիայի թագավորությունը միապետություն է»: Այնուհետև՝ «Կառավարումն անցնում է հիմնադիր թագավոր Աբդ ալ–Ազիզ իբն ալ–Ռահման ալ–Ֆեյսալ ալ–Սաուդի որդիներին և նրանց երեխաների երեխաներին»: Այդ կապակցությամբ նաև արձանագրված էր, որ «նրանց միջից ամենաարդարին և ազնվին կարտահայտվի հավատարմություն՝ համաձայն սուրբ Կորանի սկզբունքների և Մարգարեի ավանդույթների»: Այսինքն՝ գահի բազմաթիվ հավակնորդներից նախապատվությունը կտրվի նրան, ով արդարամտության և ազնվության տեսակետից ամենաարժանին է: Այդ նույն՝ հինգերորդ հոդվածի համաձայն՝ թագավորն ինքն է ընտրում գահաժառանգին և ազատում նրան այդ պարտականություններից:

Սահմանադրությունը հաստատեց նաև Սաուդյան Արաբիայի պետական դրոշը, որը կանաչագույն է, և նրա վրա գրված են «Չկա աստ-

վածություն, բացի Ալլահից, իսկ Մուհամմադը նրա մարգարեն է» իսլամի գլխավոր բանաձևի բառերը:

Այդ փաստաթղթում սահմանվում է, որ իշխանության աղբյուրը Կորանն է, և հիմնված է արդարության, խորհրդակցության և հավասարության վրա՝ համաձայն շարիաթի: Ըստ այդմ՝ պետական իշխանությունը կազմված է երեք ճյուղերից՝ դատական, գործադիր և կարգավորող:

Մի շարք հոդվածներ վերաբերում են ընտանիքին, իսլամական հավատի վրա հիմնված կրթությանը, ազգային կոնսոլիդացիային և միասնությանը, սեպարատիզմի կանխմանը, մասնավոր սեփականության պաշտպանությանը, սոցիալական հարցերին, մարդու իրավունքների պաշտպանությանը՝ շարիաթի շրջանակներում, և այլն: Հատուկ հոդված գոյություն ունի պետության պարտականությունների վերաբերյալ իսլամի նկատմամբ. «Պետությունը պաշտպանում է իսլամը, կիրառում է շարիաթը»: Նման պարտականություններ են դրվում նաև զինված ուժերի և յուրաքանչյուր քաղաքացու վրա, որոնց պարտքն է «պաշտպանել իսլամական կրոնը, հասարակությունը և երկիրը»:

Մի շարք հոդվածներ վերաբերում են կառավարությանը՝ Նախարարների խորհրդին, նրա կազմին և պարտականություններին: Սահմանադրությունն ամրագրեց մինչ այդ գոյություն ունեցող ավանդույթն առ այն, որ «Նախարարների խորհրդի ղեկավարը թագավորն է»: Նախարարների խորհուրդը կոչված է օգնել միապետին երկիրը կառավարելու գործում, ներքին և արտաքին քաղաքականության հարցերում: Թագավորն է նշանակում Նախարարների խորհրդի՝ վարչապետի տեղակալներին ու նախարարներին և ազատում նրանց իրենց պարտականություններից: Նա կարող է լուծարել և վերակազմավորել կառավարությունը: Թագավորը համարվում է երկրի զինված ուժերի գլխավոր հրամանատարը: Նրան է պատկանում երկրում արտակարգ դրություն, պատերազմ հայտարարելու և հաշտություն կնքելու, ներում շնորհելու իրավունքը:

Եվ վերջապես՝ սահմանադրությունը նախատեսում էր «ստեղծել Խորհրդակցական խորհուրդ» (Հոդված 68), որը գործելու էր իր կանոնադրության համաձայն:

Սիա այսպիսին է Սաուդյան Արաբիա աստվածապետության Հիմնական օրենքը՝ սահմանադրությունը, որը խարսխված է Կորանի և շարիաթի սկզբունքների վրա, որի 83 հոդվածներից և ոչ մեկը չի հակասում իսլամի հիմնարար դրույթներին:

Իր սահմանափակումներով և թերություններով հանդերձ այդ սահմանադրությունը պետք է համարել մի քայլ առաջ, քանի որ դա առաջին գրավոր փաստաթուղթն է, որը կանոնակարգում է սաուդյան պետական համակարգը, պետական մարմինների աշխատանքը և ֆունկցիաները:

Սահմանադրության 68–րդ հոդվածի համաձայն՝ 1993 թ. ստեղծվեց Խորհրդակցական խորհուրդ՝ Մաջլիս ալ–Շուրա: Դա լոկ խորհրդակցական մարմին է, որի առաջարկությունները կարող են ընդունվել կամ չընդունվել թագավորի կողմից: Ստեղծման պահին նա կազմված էր 60 անդամներից, որոնք բոլորն էլ նշանակվում էին թագավորի կողմից չորս տարի ժամանակով: Նա ունի իր նախագահը, նախագահի տեղակալը և գլխավոր քարտուղարը և կազմված է մի շարք կոմիտեներից: Նա պարտավոր է առնվազն երկու շաբաթը մեկ գումարել իր նստաշրջանները:

Ֆահդ թագավորի 1992 թ. մարտի 1–ի թագավորական դեկրետով հաստատվեց նաև Տարածքային կամ Տեղական՝ շրջանային իշխանություններ հիմնելու վերաբերյալ օրենքը, որի «նպատակն էր բարելավել վարչական աշխատանքների և զարգացման մակարդակը թագավորության շրջաններում, և երաշխավորել քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները՝ շարիաթի շրջանակներում»: Յուրաքանչյուր շրջան ունի իր էմիրը՝ նախարարի մակարդակով, որը նշանակվում է թագավորական հրամանով. Նա հաշվետու է ներքին գործերի նախարարին, որի պաշտոնը, որպես կանոն, զբաղեցնում է սաուդյան ընտանիքի որևէ ավագ անդամ, սովորաբար թագավորի եղբայրներից մեկը: էմիրը պարտավոր է տվյալ շրջանում ապահովել անվտանգությունը, կարգը և կայունությունը, իրագործել դատավճիռները, երաշխավորել քաղաքացիների ազատություններն ու իրավունքները, աշխատել շրջանի սոցիալական և տնտեսական զարգացման համար, ղեկավարել և վերահսկել տվյալ շրջանի մեջ մտնող ավելի փոքր վարչական միավորների և նրանց ղեկավարների աշխատանքները, տարեկան հաշվետվություններ ներկայացնել ներքին գործերի նախարարին և այլն: էմիրն ունի իր վարչական ապարատը, իսկ յուրաքանչյուր շրջան ունի իր խորհուրդը, որի մեջ մտնում են էմիրը, նրա տեղակալը, օգնականը, վարչական մարմինների ղեկավարները, ինչպես նաև տվյալ շրջանի բնակիչների ներկայացուցիչները:

Սաուդյան Արաբիայում տարբեր կերպ ընդունվեցին Ֆահդի վերոնշյալ երեք հրամանագրերը: Կային ուժեր՝ հիմնականում համախմբ-

ված պալատի շուրջը և կապված կառավարող վերնախավի հետ, որոնք, բնականաբար, ողջունեցին այդ նորամուծությունները: Բայց ընդդիմությունը բացասական դիրք գրավեց: Նրա համար հատկապես անընդունելի էր նախ՝ այն հանգամանքը, որ Խորհրդակցական խորհուրդը ոչ թե ընտրովի, այլ ամբողջապես թագավորի կողմից նշանակված մարմին է, և երկրորդ՝ դա իր կարգավիճակով չդարձավ իսկապես օրենսդիր մարմին, այլ մնաց իրավազուրկ խորհրդակցական մարմին:

Ընդդիմությանը լռեցնելու և նրա ձայնը հասարակությանը լսելի չդառնալու համար Ֆահդը 1994 թ. կալանքի տակ դրեց 200 քաղաքական այլախոհների: Այդ նույն ժամանակ ձերբակալվեց նաև ֆունդամենտալիստների առաջնորդներից մեկը՝ Սալման ալ–Աուդան, որի պատճառով, ի պաշտպանություն ձերբակալվածի, մեծ ցույցեր տեղի ունեցան: Ֆահդը, դժգոհ կառավարության գործունեությունից և ցանկանալով մեղմել լարվածությունը, 1995 թ. օգոստոսի 2–ին վերակազմեց կառավարությունը, որի անդամներից 16–ը զրկվեցին իրենց պաշտոններից և փոխարինվեցին նորերով: Բայց միապետի այդ քայլը չտվեց սպասված արդյունքները: Ընդդիմությունը շարունակում էր հակակառավարական ելույթները, որոնց գագաթնակետը հանդիսացավ 1995 թ. նոյեմբերի 13–ին Ռիյադի Ազգային գվարդիայի վարժական կենտրոնում կազմակերպված ռումբի պայթյունը, որի հետևանքով զոհվեց յոթ մարդ, որոնցից հինգը ամերիկյան զինվորականներ էին.

Ուժեղ լարվածություն էր առաջացել սաուդյան արքայական տան և սաուդյան հասարակության միջև Սաուդյան Արաբիայում օտարերկրյա առաջին հերթին ամերիկյան զորքերի գտնվելու կապակցությամբ, որոնք տեղակայվել էին իրաք–քուվեյթյան կոնֆլիկտի և «Փոթորիկ անապատում» ռազմական գործողության ժամանակ: Թեև Իրաքը պարտություն էր կրել, և նրա զորքերն արդեն 1991 թ. փետրվարին հեռացել էին Քուվեյթից, ամերիկյան զորքերը շարունակում էին մնալ Սաուդյան Արաբիայում, որն առաջացնում էր սաուդցիների դժգոհությունը: Նրանք պահանջում էին ամերիկյան զորքերի հեռացումն իրենց երկրից: Ի վերջո, 2003 թ ամերիկյան զորքերը հարկադրված էին հեռանալ Սաուդյան Արաբիայից և տեղակայվել հարևան Կատարում: Դրանում իր դերը խաղաց այն հանգամանքը, որ թեև Ֆահդը դեռևս կենդանի էր, և նա էր թագավորը, բայց երկրի փաստացի ղեկավարը Աբդալլահն էր, որը և դրսևորեց վճռականություն ու հաստատակամություն ամերիկյան զորքերը Սաուդյան Արաբիայից դուրս բերելու հարցում:

Այդ փաստերը վկայում էին, որ Սաուդյան Արաբիայում աճում էր դժգոհությունը Ֆահդի ներքին ու արտաքին քաղաքականության հանդեպ, որը նրանից պահանջում էր մեծ եռանդ ու ջանքեր՝ կանխելու դրության հետագա վատթարացումը: Սակայն այդ կրիտիկական պահին՝ 1995 թ. նոյեմբերին Ֆահդն ունեցավ սրտի լուրջ տագնապ և հարկադրված էր իշխանությունը փոխանցել թագաժառանգ Աբդալլահ Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդին: Թեև երեք ամիս անց Ֆահդը կրկին ստանձնեց իշխանությունը, բայց նա այլևս նախկին Ֆահդը չէր: Հիվանդությունն անընդհատ զգացնել էր տալիս, և նա ընդունակ չէր ակտիվ գործողությունների ու ստիպված էր աստիճանաբար ետ քաշվել պետական գործերից:

VI. ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ XX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ. ՊՐՈԲԼԵՄՆԵՐ, ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ (1995–2005 թթ.)

1. Աբդալլահ իբն Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդը Սաուդյան Արաբիայի վեցերորդ թագավոր

Ֆահդի հիվանդագին վիճակը շատ երկարեց, և Սաուդյան Արաբիայի դե ֆակտո կառավարողը մոտ 10 տարի թագաժառանգ Աբդալլահն էր: Թագաժառանգի, նրա իրավունքների և պարտականությունների հարցը բավականին հստակ է սահմանված 1992 թ. սահմանադրության համապատասխան հոդվածներով: Նրա թեկնածության ընտրությունը և նշանակումը պատկանում է գործող թագավորի իրավասությանը: Ըստ այդմ՝ երբ Ֆահդը 1982 թ. հունիսին նստեց սաուդյան գահին, նա անմիջապես գահաժառանգ նշանակեց իր եղբորը՝ Աբդալլահին, թեև նրանք տարբեր մայրերից էին ծնված: Նշանակված գահաժառանգը պարտավոր է ամբողջ ժամանակը նվիրել իր պարտականությունների կատարմանը և կատարել այն բոլոր առաքելությունները, որ թագավորը կվստահի կամ կհանձնարարի նրան: Եվ 10 տարի Աբդալլահը պատասխանատվության մեծ զգացումով կատարում էր իր այդ պարտականությունները:

Գահաժառանգը ստանձնում է թագավորի պարտականությունները վերջինիս մահվան դեպքում, մինչև որ կատարվի նրան հավատար-

մություն արտահայտելու և ենթարկվելու ակտը: Իսկ դա բավականին բարդ գործընթաց է: Ավանդույթի համաձայն՝ սաուդյան արքայական ընտանիքի առաջատար, ավագ կամ ղեկավար անդամներն իրենք են իրենց միջից ընտրում ապագա թագավորին: Գահաժառանգին անհրաշեժտ է սկզբում ստանալ թագավորական ընտանիքի համաձայնությունը. որն իրականացվում է կոնսենսուսի սկզբունքով: Այնուհետև այդ թեկնածությունը պետք է արժանանա հեղինակավոր վահաբիական ուլեմների՝ աստվածաբանների, ինչպես նաև սաուդյան հասարակության այլ կարևոր սեգմենտների հավանությանը: Համաձայնությունը կայացնելիս հաշվի են առնվում ապագա թագավորի այնպիսի հատկանիշներ և որակներ, ինչպիսիք են նրա իմաստնությունը, երկարատև փորձը, մեծ գիտելիքները և այլն: Միայն այդ բոլոր գործոնները հաշվի առնելուց հետո թագավորական ընտանիքի ավագ կամ առաջատար անդամները ընդհանուր համաձայնությամբ՝ կոնսենսուսով. հավանություն են տալիս նոր թագավորի թեկնածությանը, և նա հռչակվում է թագավոր:

Թվում էր, թե Աբդալլահը գահի նոր և անվիճելի թեկնածուն էր: Սակայն, ինչպես վկայում են որոշ փաստեր, սաուդյան ընտանիքում չեն բացառվել նաև այլ թեկնածուներ, որի հավանական հավակնորդներ են համարվել Ֆահդի հարազատ եղբայրները՝ Նայիֆը, Սուլթանը և Բանդարը, որոնք ոչ միայն մինուճար հորից՝ Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդից էին, այլև մինուճար մորից՝ Հուսա բինթ Ահմադ Սուդայրիից: Նրանցից որևէ մեկի թագավոր դառնալը կնշանակեր Սուդայրի ընտանիքի դիրքերի հետագա ամրապնդումը, ինչը հավանաբար արքայական ընտանիքի ոչ բոլոր անդամների համար է ընդունելի եղել, և մերժվել է:

Ֆահդը մահացավ 2005 թ. հուլիսին 84 տարեկան հասակում. Նրա անձնական հարստությունը կազմում էր 20 մլրդ դոլար, և նա համարվում էր աշխարհի ամենահարուստ մարդկանցից մեկը: Նրա մահից հետո Աբդալլահն անմիջապես ստանձնեց թագավորի պարտականությունները՝ սպասելով իրեն հավատարմություն հայտնելու պարտադիր արարողությանը: Սաուդյան թագավորական ընտանիքի և ուլեմների որոշումն ի նպաստ Աբդալլահի էր, և նա 2005 թ. օգոստոսի 1–ին հռչակվեց Սաուդյան Արաբիայի վեցերորդ թագավոր:

Ավանդության համաձայն և ըստ սահմանադրության՝ Աբդալլահը պետք է միևնույն ժամանակ դառնար Նախարարների խորհրդի նախագահ և գլխավորեր կառավարությունը: Սակայն դեռևս Աբդալլահի գահաժառանգության շրջանում որպես տարբերակ այն տեսակետն էր ար-

տահայտվել, որ անհրաժեշտ է ձևավորել արտադինաստիական կառավարություն, այսինքն՝ մի կառավարություն, որը չպետք է գլխավորեր սաուդյան թագավորը, և նա չպետք է կազմված լիներ սաուդյան ընտանիքի անդամներից, որոնց ձեռքում էին սովորաբար կենտրոնանում առանցքային նախարարությունները: Եվ որպես վարչապետ ենթադրվում էր Սաուդյան Արաբիայի նախկին և երկարաժամկետ նավթի նախարար Ահմադ Զաքի ալ–Յամանին:

Մեր ձեռքի տակ չկան համապատասխան փաստեր, որոնք թույլ տային հավաստիորեն ասել, թե ինչ է պատահել այդ տարբերակի հետ: Բոլոր դեպքերում պարզ է, որ նա մերժվել է կամ գուցե անգամ չի քննարկվել, որովհետև այն նույն օրը՝ 2005 թ. օգոստոսի 1–ին, երբ Աբդալլահը հռչակվեց թագավոր, նա միևնույն ժամանակ դարձավ նաև Սաուդյան Արաբիայի Նախարարների խորհրդի նախագահ:

2. Ազատությունների և մարդու իրավունքների հիմնախնդիրները: Գլխատում, անդամահատում, ձաղկում

Սաուդյան իրողություններին և մտածելակերպին բնորոշ յուրահատուկ սահմանադրության ընդունումը չապահովեց և չէր էլ կարող ապահովել պետական կառավարման, քաղաքական, քաղաքացիական և հասարակական կյանքի արագ, հիմնավոր և ամբողջական արդիականացում: 1992 թ. սահմանադրական ակտերը ամբողջապես ներծծված էին իսլամականությամբ, իսկ նրանց որոշ հոդվածներ կամ ձևակերպումներ, որոնք արտաքուստ նման էին կամ հիշեցնում էին միջազգայնորեն ընդունված նորմերը, ամուր կերպով կապկպված էին Կորանի և շարիաթի բազմազան հիմնադրույթներով ու արգելքներով: Այդ բանը ցցուն կերպով երևում է ժողովրդավարությանը, ազատություններին և հատկապես մարդու իրավունքներին վերաբերող հարցերում: Եթե տնտեսության կամ կոմունիկացիաների բնագավառներում Սաուդյան Արաբիայում փոփոխությունները զգալի էին, եթե ակնհայտ էր, որ բեդվինն արդեն իջել է ուղտից և նստել ժամանակակից ամերիկյան «Ֆորդ», «Կադիլակ», «Կրայսլեր» կամ ճապոնական «Միցուբիշի», «Դատսուն», «Տոյոտա» և այլ առաջնակարգ մակնիշի ավտոմեքենաներ, որոնք խորհրդանշում են զարգացման նոր մակարդակ, ապա դեմոկրատիայի և մարդու իրավունքների հարցում 1992–1993 թթ. հետո,

երբ ընդունվեցին և գործողության մեջ դրվեցին վերոնշյալ սահմանադրական ակտերը, ըստ էության ոչ մի փոփոխություն տեղի չունեցավ:

Սաուդյան Արաբիայում մինչև օրս արգելված են բոլոր տեսակի քաղաքական կուսակցությունները և արհեստակցական միությունները: Կան որոշ ընդդիմադիր կազմակերպություններ, որոնք գործում են արտասահմանում: Դրանցից հայտնի է ֆիզիկայի պրոֆեսոր Մուհամմադ Մասարիի կողմից 1996 թ. հիմնված Օրինական իրավունքների պաշտպանության կոմիտեն, որը հաստատվել է Լոնդոնում: Նա հանդես է գալիս մարդու քաղաքական, դեմոկրատական, սոցիալական և տնտեսական իրավունքների պաշտպանությամբ և պահանջում Սաուդյան Արաբիայի արդիականացում ու ժողովրդավարացում: Կոմիտեի գործունեությունը ֆինանսավորում են ընդհատակյա ընդդիմության մեծահարուստները:

Ընդդիմության շարքն է դասվում նաև Ուսամա իբն Լադինի, որն ավելի հայտնի է Օսամա բեն Լադեն հորջորջումով, շարժումը՝ Պատկանելով սաուդյան կլանին, նա տարածայնություններ ունեցավ վերջինիս հետ, հեռացավ նրանից ու գրավեց ընդդիմադիր դիրք սաուդյան կառավարող վերնախավի նկատմամբ: Նա իր գործունեությունը ծավալեց Սուդանում և Աֆղանստանում և ավելի հռչակվեց Նյու Յորքում 2001 թ. սեպտեմբերի 11–ին կատարված ահաբեկչությունից հետո, որը շշմեցուցիչ տպավորություն գործեց ամբողջ աշխարհում: Նա ընկալվում է միջազգային ահաբեկչական շարժման ոգեշնչողը, կազմակերպիչը և մեծ հեղինակություն վայելող առաջնորդը:

Բայց, կրկնում ենք, լեգալ քաղաքական կազմակերպությունները, այդ թվում և կուսակցությունները, Սաուդյան Արաբիայում արգելված են և գոյություն չունեն:

Խիստ վերահսկողության տակ են գտնվում լրագրերը և ընդհանրապես գրավոր խոսքը, որը տարածվում է անգամ կրոնական հաստատությունների վրա: Սաուդյան Արաբիայում գործող 11 հազար մզկիթներում արտասանվող ճառերը և ելույթները պարտադիր կերպով նախնական գրաքննության են ենթարկվում պետական պաշտոնյաների կողմից: Շատերի, մանավանդ այլախոհների և ընդդիմադիր ուժերին պատկանող մարդկանց համար լրատվության որոշակի պատուհան են հանդիսանում հարևան Կատարում տեղակայված ալ–Ջազիրա հեռուստատեսային արբանյակային ցանցը և ինտերնետը՝ համացանցը:

Մինչև 2003 թ. Սաուդյան Արաբիայում գոյություն չուներ ընտրական համակարգ, և երբեք ընտրություններ չեն անցկացվել: Բոլոր մարմիններում և հաստատություններում գործում էր ոչ թե ընտրության, այլ նշանակման սկզբունքը: Ինչպես արդեն նշվել է, անգամ Խորհրդակցական խորհուրդը կազմավորվեց ոչ թե ընտրության ուղիով, այլ թագավորի կողմից նրա բոլոր անդամներին նշանակելու միջոցով:

Որոշ հուսադրիչ փոփոխություն կատարվեց 2003 թ., երբ Սաուդյան Արաբիայի Նախարարների խորհուրդը հայտարարեց իր մտադրության մասին՝ մտցնել ընտրական համակարգ տեղական մարմինների ընտրությունների համար: Բայց դա շատ սահմանափակ բնույթ ունի և գործադրվեց մեծ վերապահումներով: Նա տարածվեց տեղական և նահանգային ասամբլեաների՝ խորհուրդների միայն կեսի վրա: Ընտրական իրավունք տրվեց 21 տարեկանից բարձր տղամարդկանց, իսկ կանայք այդպես էլ ընտրելու իրավունք չստացան: Ի միջի այլոց նշենք, որ դա միակ սահմանափակումը չէր կանանց հարցում: Նրանց արգելվում էր նույնիսկ ավտոմեքենա վարելու արտոնագիր և իրավունք ստանալ: Տեղական մարմինների և ներքին գործերի նախարարությունը ընտրությունների համար հաշվառումը և գրանցումը սկսեց 2004 թ. նոյեմբերին, իսկ ընտրությունները տեղի ունեցան 2005 թ. փետրվար–ապրիլ ամիսներին: Այսպիսով՝ Սաուդյան Արաբիայի պատմության մեջ առաջին անգամ կայացան ընտրություններ տեղական կառավարման մարմինների մակարդակով, և այն էլ մասամբ: Եվ չնայած այդ հանգամանքին՝ դա, այդուհանդերձ, պետք է գնահատել ըստ արժանվույն, քանի որ Սաուդյան Արաբիան ոտք էր դնում ամբողջ քաղաքակիրթ աշխարհում ընդունված կառավարման մարմինների ձևավորմանը՝ ընտրությունների միջոցով:

Մինիստրների խորհրդի 2003 թ. հոկտեմբերի որոշումով նախատեսվում էր նաև Մաջլիս ալ–Շուրայի՝ Խորհրդակցական խորհրդի անդամների մեկ երրորդի ընտրությունը: Բայց եթե տեղական մարմինների հարցում այդ որոշումը կիրառվեց, ապա Մաջլիս ալ–Շուրայի պարագայում այդ որոշումն այդպես էլ մնաց թղթի վրա: Սակայն այստեղ մի փոփոխություն կատարվեց. ընդլայնվեց նրա կազմը և հասցվեց 120–ի, որոնց բոլորին, այդ թվում և Մաջլիս ալ–Շուրայի նախագահին, նշանակեց, ինչպես և նախկինում, միապետը:

Սաուդյան Արաբիայում շատ սուր բնույթ է կրում մարդու իրավունքների հարցը, այդ թվում և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու և պատժելու հարցը, որը խիստ մտահոգում է միջազ-

գային հանրությանը: Խոսքը դեռևս վաղ միջնադարից եկող այնպիսի դաժան պատիժներ կիրառելու մասին է, ինչպես կտտանքների ենթարկելը, անդամահատելը և այլ սահմռկեցուցիչ մեթոդների կիրառումը: Սաուդյան արդարադատությունը և դատարանները օրենքով կիրառում են մահապատիժ՝ քրով գլխատելու միջոցով: Լայնորեն կիրառվում է զանազան հանցանքների համար մարմնի մասերն ամպուտացիայի ենթարկելը: Ինչպես արդեն նշվել է, 1975 թ., երբ սպանվեց Ֆեյսալ թագավորը, ապա նրա սպանողը՝ Ֆեյսալ իբն Մուսաիդը, դատարանի որոշումով գլխատվեց հարազատ հոր քրի հարվածով: Միայն 1995 թ. Սաուդյան Արաբիայում 150 դատապարտյալ մահապատժի է ենթարկվել գլխատվելու միջոցով, որի ժամանակ սովորաբար օգտագործվում է լայնաշեղբ թուրը: Դրանք ի կատար են ածվել հրապարակայնորեն՝ բազմախումբ ամբոխի և հարազատների աչքերի առջև, որը դիտավորյալ է արվում, որպեսզի դաս ծառայի մյուսների համար և սարսափի ու վախի մեջ պահի մարդկանց: Իսկ խոշոր գողության և հոմոսեքսուալիզմի համար կիրառվում է ամպուտացիան՝ կտրում են հանցապարտի ձեռքը կամ ոտքը, ավելի փոքր հանցանքների համար, ինչպես հարբեցողությունը, սեքսուալ ոտնձգությունները և այլն, ծաղկում են, ընդ որում՝ մտրակում են հրապարակայնորեն, որպեսզի ավելի ստորացնեն դատապարտյալին: Ապշեցուցիչ է, բայց փաստ է, որ մտրակի հարվածների քանակն օրենքով սահմանված չէ, և պատժի այդ տեսակի իրագործումը երբեմն վերածվում է անհեթեթության: Մտրակի հարվածների քանակը բացառապես կախված է դատավորի կամքից, ավելի ճիշտ՝ նրա քմահաճույքից: Գոյություն ունեցող փաստերը վկայում են, որ հարվածները կարող են լինել 12–ից մինչև մի քանի հազար և ընդմիջումներով տևել շաբաթներ, անգամ մի քանի ամիս:

Եվ այդ բոլորն այն դեպքում, երբ 1992 թ. սահմանադրությունը պարունակում է հատուկ հոդված՝ 28–րդ հոդվածը «Մարդու իրավունքների մասին», որտեղ գրված է. «Պետությունը պաշտպանում է մարդու իրավունքները»: Սակայն այդ բանաձևին անմիջապես հաջորդում են «համաձայն իսլամական շարիաթի» բառերը. Ստացվում է երկվություն 28–րդ հոդվածի առաջին մասը՝ «Պետությունը պաշտպանում է մարդու իրավունքները», լրիվ համապատասխանում է եվրոպական արժեքներին և միջազգային նորմերին, սակայն երկրորդ մասը՝ «համաձայն իսլամական շարիաթի», լրիվ ի չիք է դարձնում առաջին մասի դրույթները և դարձյալ առաջին պլան մղում իսլամական շարիաթի սկզբունքները:

Այդ պատճառով էլ թրատում էին մարդկանց գլուխները, կտրում ձեռքերը և ոտքերը, մտրակում ամբողջ շաբաթներ կամ ամիսներ: Իհարկե, այդ բոլորը շատ դժվար է համատեղվում «Պետությունը պաշտպանում է մարդու իրավունքները» սահմանադրական հիմնադրույթի հետ:

Սաուդյան Արաբիայում մարդու իրավունքների կոպիտ խախտումները գտնվում են միջազգային զանազան կազմակերպությունների ուշադրության կենտրոնում, որոնք խստորեն քննադատում են սաուդյան իշխանություններին մարդու իրավունքները բացահայտորեն ոտնահարելու և կտտանքներ կիրառելու համար: 2002 թ. ՄԱԿ–ի Ընդդեմ տանջանքների կոմիտեն իր ծայնը բարձրացրեց ի պաշտպանություն օրինականության և խստորեն դատապարտեց ամպուտացիան և մտրակումը որպես պատժամիջոց: ՄԱԿ–ում Սաուդյան Արաբիայի ներկայացուցիչը շատ «հեշտ» պատասխան գտավ այդ քննադատությանը: Հանդես գալով քննարկումների ժամանակ՝ նա վկայակոչեց շարիաթը և «իրավական ավանդույթները»՝ ընդգծելով, որ դրանք կիրառվում են Արաբիայում ավելի քան տասնչորս դար՝ այն պահից, երբ իսլամը ծնավորվեց և դարձավ արաբների պաշտոնական կրոնը: ՄԱԿ–ի կոմիտեի քննարկումները համարելով միջամտություն Սաուդյան Արաբիայի ներքին գործերին և իրավական համակարգին՝ սաուդյան պատվիրակը մերժեց որևէ քննադատություն սաուդյան իշխանությունների հասցեին: Այդ դեպքում նա ապավինեց Սաուդյան Արաբիայի սահմանադրության 28–րդ հոդվածին, որտեղ թեև արձանագրված էր, որ պետությունը պաշտպանում է մարդու իրավունքները, սակայն անմիջապես շեշտվում, որ դա իրականացվում է շարիաթի սկզբունքների համաձայն:

Սաուդյան Արաբիայում մարդու իրավունքների հարցին մշտապես անդրադառնում է Մարդու Իրավունքների Հսկողության (Human Rights Watch) միջազգային կազմակերպությունը, որի ուսումնասիրությունները բացահայտել են կոպիտ խախտումներ նաև մի այնպիսի հարցում, ինչպես այլ երկրներից աշխատանքի համար Սաուդյան Արաբիայում հաստատված աշխատողների իրավունքներն են: 2005 թ. Սաուդյան Արաբիայի տնտեսության տարբեր ճյուղերում ներգրավված էր 5,5 մլն օտարերկրացի: Մարդու իրավունքների հսկողության կազմակերպության 2005 թ. վերջերին ներկայացրած պաշտոնական զեկուցագրում արձանագրված է, որ այդ օտարները ենթակա են զանազան խտրականությունների և սահմանափակումների: Հատկապես նշվում են նրանց շահագործումը, ֆիզիկական և սեռական խտրականությունը և

հետապնդումները, աշխատավարձերի պարբերական չվճարումները, բուժական սպասարկման բացակայությունը, արտաժամյա աշխատանքները, հանգստյան օրերի բացակայությունը և այլն:

Առանձին հարց է կրոնական իրավունքների սահմանափակումը: Խոսքն այստեղ վերաբերում է իմիգրանտներին՝ տարբեր երկրներից ներգաղթածներին, որոնք Սաուդյան Արաբիա են գալիս աշխատանք փնտրելու նպատակով: 2005 թ. տվյալներով՝ Սաուդյան Արաբիայում ապրում էին մոտ 1,4 մլն հնդիկ, 1 մլն բանգլադեշցի, 900 հազ. պակիստանցի, 800 հազ. ֆիլիպինցի և այլն: Ամերիկյան որոշ տվյալների համաձայն՝ այստեղ ապրում են կաթոլիկական հավատին հետևող 500 հազարից միայն 1 մլն մարդ: Սաուդյան Արաբիայում թույլատրվում է քրիստոնյաներին և հինդուսներին՝ որպես կրոնական փոքրամասնություններ, մտնել երկիր որպես ժամանակավոր բանվորներ, սպասարկողներ և այլ ցածր կարգի աշխատողներ: Սակայն կրոնական փոքրամասնություններից ոչ մեկին չի թույլատրվում կառուցել իրենց եկեղեցիները և տաճարները: Անգամ արգելվում են հրապարակային աղոթքները: Այդ առանձնաշնորհումները վերապահված են միայն մուսուլմաններին:

Սաուդյան Արաբիա մուտքի վիզա ստանալու ժամանակ պարտադիր պահանջվում է նշել հայցորդի կրոնական պատկանելությունը: Սաուդյան Արաբիա չեն կարող մուտք գործել բոլոր նրանք, որոնց անձնագրերում կա Իսրայել պետության կնիքը:

Հակիրճ կերպով այսպիսին է ազատությունների և մարդու իրավունքների վիճակը XXI դար ոտք դրած աշխարհի ամենահարուստ երկրներից մեկում՝ Սաուդյան Արաբիայում:

3. Սաուդյան Արաբիայի նոր կերպարի ձևավորումը

Երբ խոսք է գնում XX դարավերջի և XXI դարասկզբի Սաուդյան Արաբիայի մասին, ապա մասնագետները միահամուռ են այն հարցում, որ Սաուդյան Արաբիան վերջին տասնամյակների ընթացքում զգալի փոփոխությունների է ենթարկվել, որոնք հիմք են տալիս խոսելու նրա նոր կերպարի մասին: Ոմանք հակված են չափազանցնելու այդ փոփոխությունները և առաջընթացը, իսկ ոմանք էլ ընդհանրապես չեն ցանկանում տեսնել այդ փոփոխությունները կամ դրանք չեն համարում այնպիսի որակական աստիճանի, որը հիմք տար խոսելու Սաուդյան Արաբիայի նոր իմիջի մասին: Չնայած այդ երկու ծայրահեղություններին, այդու-

հանդերձ, որոշակի փոփոխություններ, իրոք, Սաուդյան Արաբիայում տեղի են ունեցել և շարունակում են ունենալ, որոնք թույլ են տալիս որոշ վերապահումներով խոսել Սաուդյան Արաբիայի նոր կերպարի մասին:

Այդ փոփոխությունների հիմքերի հիմքը նավթարդյունաբերությունն է և նրանից ստացվող տասնյակ միլիարդավոր դոլարները: Սաուդյան Արաբիայի նավթային պաշարները կազմում են նավթի համաշխարհային պաշարների մեկ քառորդը՝ 25%–ը: Նա աշխարհում առաջին տեղն է գրավում նավթի արդյունահանման տեսակետից: Բյուջեի հասույթների 75%–ը և արտահանումից եկող եկամուտների 90%–ը ստացվում է նավթի արտահանումից: 1999 թ. Սաուդյան Արաբիան խթանեց նավթի համաշխարհային գների բարձրացումը, որից ստացված շահույթները 2003–2005 թթ. ընթացքում կրկնապատկվեցին: 2005 թ. նավթից ստացվող շահույթը Սաուդյան Արաբիայում օրական կազմում էր ավելի քան 500 մլն դոլար: Լինում է տարի, երբ Սաուդյան Արաբիայի նավթից ստացվող տարեկան եկամուտը անցնում է 185 մլրդ դոլարից: Իսկ 2005 թ. պետական բյուջեի ավելցուկը կազմեց 28 մլրդ դոլար: Բերված թվերը վկայում են, թե ինչպիսի հիրավի առասպելական հարստություն է տնօրինում Սաուդյան Արաբիան, որը նրա զարգացման առջև բացում է չտեսնված հնարավորություններ:

Երկրի համախառն ներքին արդյունքը՝ ՀՆԱ–ն, 2005 թ. կազմել է 264 մլրդ դոլար, որից 40%–ը ստացվել է մասնավոր սեկտորից, իսկ մեկ շնչի հաշվով կազմում է 12 հազ. 800 ԱՄՆ դոլար, որն աշխարհում ամենաբարձրներից մեկն է: Հարկ է նշել նաև սղաճի չափազանց ցածր տոկոսը և գների կայունությունը: 2005 թ. սղաճը կազմել է ընդամենը 0,4%: Այդ պատճառով էլ վերջին տարիների սաուդյան պաշտոնական վիճակագրության մեջ, որն անցկացվում է եվրոպական չափանիշներով, «Աղքատության գծից ներքև գտնվող բնակչություն» սյունակի դիմաց գրվում է «Չկա»: Իհարկե, սրանից չպետք է եզրակացնել, թե այդ բնագավառում ամեն ինչ բարվոք է, և ոչ մի պրոբլեմ չկա: Եղած պրոբլեմներից հարկ է նշել գործազրկության առկայությունը, որը 2004 թ. տվյալներով կազմել է 13%, որը, սակայն, 2005 թ. տվյալներում բացակայում է: Աբդալլահի թագավոր հռչակվելուց հետո Սաուդյան Արաբիայում ավելի բարձրաձայն սկսեցին խոսել սոցիալական պրոբլեմների առկայության մասին, որի մասին գրում են հատկապես օրաթերթերը: Նրանք շոշափում են բնակչությանը հուզող այնպիսի հարցեր, ինչպես՝ անգործությունը, աղքատությունը, մարմնավաճառությունը, թմրադեղերի օգ-

տագործումը, ընտանիքներում կիրառվող բռնությունները և այլ անարդարություններ, որից դժվար չէ եզրակացնել, որ նման պրոբլեմներ կան Սաուդյան Արաբիայում, և դրանք հուզում են բնակչությանը: Սակայն դեռևս փականքի տակ են այնպիսի թեմաների լուսաբանությունը, ինչպես տեղեկատվությունը արքայական ընտանիքի գտնվելու վայրի մասին, սաուդյանների կողմից երկիրը կառավարելու խնդիրները, կրոնական թեմաները, որոնք հանդիսանում են վահաբիական վերնախավի մենաշնորհը:

Տնտեսության ճյուղերից ամենաթույլը գյուղատնտեսությունն է: Բավական է նշել, որ ՀՆԱ–ի մեջ նրա մասնաբաժինը 2005 թ. կազմել է ընդամենը 3,3%, այն դեպքում, երբ արդյունաբերության բաժինը կազմել է 61,3%, իսկ ծառայություններինը՝ 35,4%: Նույնն է համարյա պատկերը աշխատուժի ներգրավվածության տեսակետից: Գյուղատնտեսության մեջ ներգրավված է Սաուդյան Արաբիայի աշխատուժի 12%–ը, արդյունաբերության մեջ՝ 25%–ը, իսկ սպասարկման ոլորտում՝ 63%–ը:

Նավթարդյունաբերությունը գտնվում է պետական խիստ վերահսկողության տակ: Այդ ճյուղից ստացվող միլիարդավոր դոլարները ապահովում են սաուդյան բազմահազարանոց ընտանիքի բարեկեցությունը: Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդի ուղղակի հետնորդներից շատ–շատերը, մասնավորապես նրա որդիները, ինչպես նաև բազմաքանակ էմիրները, մեծ հարստությունների տեր մարդիկ են:

Վերջին տարիներին սաուդյան իշխանությունները մեծ ուշադրություն են դարձնում մասնավոր սեկտորի զարգացմանը, խրախուսում օտար կապիտալի ներհոսքը և ներդրումը երկրի տնտեսության ոչ նավթային ճյուղերում: Դա սաուդյան տնտեսության դիվերսիֆիկացիայի կարևոր բաղադրամասերից և երկրի կախվածությունը նավթարդյունաբերությունից նվազեցնելու քայլերից մեկն է. Մասնավոր սեկտորն արդեն մուտք է գործել էլեկտրաէներգիայի արտադրության և հեռակոմունիկացիաների ոլորտը, որի տեսակարար կշիռը շեշտակիորեն աճում է Սաուդյան Արաբիայի տնտեսության մեջ: Դա անհրաժեշտ է նաև Սաուդյան Արաբիայի աճող բնակչության համար նոր աշխատատեղեր ստեղծելու տեսանկյունից, որը քաջ գիտակցում են սաուդյան իշխանությունները: Տնտեսության դիվերսիֆիկացիան արագացնելու և մասնավոր կապիտալը ներգրավելու համար Սաուդյան Արաբիան երկար տարիներ բանակցություններ էր վարում Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ՝ նրան անդամակցելու նպատակով: Ի վերջո, այդ բանակ-

ցություններն ավարտվեցին հաջողությամբ, և 2005 թ. Սաուդյան Արաբիան դարձավ ԱՀԿ–ի անդամ:

Տնտեսության դիվերսիֆիկացիայի քաղաքականությունն իրականացնելիս սաուդյան իշխանությունները երբեմն դիմում են համարձակ, նախադեպը չունեցող քայլերի: Այդ առումով վերին աստիճանի ուշագրավ է երկրի արևմտյան մասում նոր քաղաք կառուցելու ծրագիրը, որի աշխատանքները սկսվել են 2005 թ. դեկտեմբերին: Դրա համար նախատեսվել է 26,6 մլրդ դոլարի կապիտալ ներդրում: Այդ քաղաքը կոչվում է «Աբդալլահ թագավորի տնտեսական քաղաք», որը կառուցվում է Ջիդայից հյուսիս՝ ալ–Ռաբիղ արդյունաբերական քաղաքի մոտ: Պատահական չէր այդ նոր քաղաքին Աբդալլահ թագավորի անունը շնորհելը: Սաուդցիներն ընդհանուր առմամբ համակրանքով են վերաբերվում նրան և մեծ հույսեր են կապում նրա հետ երկրի վիճակը բարելավելու և զարգացնելու հարցերում. Նրան անգամ անվանում են «բարեփոխումների առաքյալ»: «Աբդալլահ թագավորի տնտեսական քաղաքը» մեծ արդյունաբերական կոմպլեքս է, որի բաղկացուցիչ մասն է լինելու աշխարհում ամենամեծ նավահանգստի կառուցումը: Նրա մյուս կարևոր մասը այսպես կոչված ինդուստրիալ արեալն է՝ նավթաքիմիական, դեղագործական և հետազոտական սեկտորներով: Նա ունենալու է ֆինանսական ֆոնդային շուկա, կրթական կենտրոն, որը կոչվում է կրթության քաղաք, տուրիզմի գոտի և այլ անհրաժեշտ սեկտորներ: Պլանի վիթխարի ծավալների մասին է խոսում այն փաստը, որ այդ քաղաքը ձգվելու է մոտ 38 կիլոմետր: Այդ կոմպլեքսը կոչված է լոկոմոտիվի դեր կատարել սաուդյան տնտեսության զարգացման գործում, հատկապես արդիականացնելու իմաստով: Սաուդյան իշխանությունները հույս ունեն նրա կառուցումով թռիչք կատարել դեպի նոր տեխնոլոգիաների դարաշրջան և առաջընթաց քայլ կատարել երկրի արդիականացման ուղղությամբ:

Սաուդյան Արաբիայի համար նորություն են արևմտյան կապիտալիստական երկրներին բնորոշ ֆոնդային բիրժաները, բանկային համակարգը, անշարժ գույքի վաճառքի համակարգը, «ակցիա» հասկացությունը, հիպոթեկային վարկերը և այլն: Դրանք արդեն շատ սաուդցիների համար դարձել են հասկանալի և մատչելի հասկացություններ: Բնակչության ավելի լայն խավեր են մասնակցում ակցիաների գնման և վաճառման գործողություններին և իրենց անձնական կապիտալը դնում շրջանառության մեջ: Դրա փայլուն օրինակն է հանդիսանում հետևյալ

փաստը: 2005 թ. դեկտեմբերին մոտ 7 մլն սաուդցի գնեց Յանբուում գտնվող սաուդյան «Ազգային պետրոքեմիկալ ընկերության» ակցիաները՝ 2 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ:

Նավթից ստացվող բարձր եկամուտների շնորհիվ ավելացան ֆինանսական հատկացումները ենթակառուցվածքների զարգացման, կրթության ոլորտի, աշխատավորների մասնագիտական ուսուցման և այլ նպատակների համար: Սաուդյան Արաբիան աչքի է ընկնում ժամանակակից առաջնակարգ ավտոմայրուղիների զարգացած ցանցով և այդ բնագավառում ոչնչով չի զիջում զարգացած արևմտյան երկրներին: Մեծ ուշադրություն է դարձվում նաև գյուղատնտեսության համակարգի զարգացմանը՝ նպատակ ունենալով զգալիորեն բարձրացնել երկիրը սեփական գյուղատնտեսական մթերքներով ապահովելու հնարավորությունները: Բայց այստեղ կան լուրջ պրոբլեմներ: Մշակովի հողատարածքները 2005 թ. կազմել են 1,6%, որը շատ ցածր ցուցանիշ է, և ոռոգվում է ընդամենը 16 հազ. քառ. կմ: Սաուդյան Արաբիան ունի նաև ջրի պրոբլեմ՝ կապված թե՛ խմելու ջրի և թե՛ ոռոգման հետ: Առայժմ նրան հաջողվում է ջանքերի մեծ լարումով բավարարել ջրի պահանջը, բայց ապագայում նրան մեծ փորձություններ են սպասվում:

Սաուդյան Արաբիան մեծ գումարներ է հատկացնում ռազմական ոլորտի զարգացմանը: Ձինված ուժերին հատկացվում է պետական բյուջեի 18%–ը, որը 2003 թ. կազմել է 18 մլրդ դոլար: Նրա բանակը զինված է ժամանակակից ամենաարդիական զենքերով, որը կազմում է սաուդցիների հպարտությունը: Սաուդյան բանակը 1920–1930 թթ. իխվանների թրերով և հնացած հրացաններով զինված բանակը չէ: Նա անճանաչելիորեն փոխվել է, և դա Սաուդյան Արաբիայի նոր իրողություններից մեկն է:

Անճանաչելիորեն փոխվել է նաև բնակչության պատկերը մարդագրական տեսանկյունից: Չնայած այդ հանգամանքին՝ մինչև օրս տարածված է այն կարծիքը, որ Սաուդյան Արաբիան քոչվորների մի կոնգլոմերատ է: Դա խիստ վրդովեցնում է սաուդյան գիտնականներին, որոնք երբեմն բացահայտորեն իրենց դժգոհությունն են արտահայտում: Ռիյադի Սաուդ թագավորի համալսարանի գրականության տեսության պրոֆեսոր Աբդ ալ–Համիդ ալ–Ղասանին ուղղակի ապշել է՝ ծանոթանալով Սաուդյան Արաբիայի մասին այն գրականության հետ, որ 1990–ականներին դասավանդում էին ուսանողներին ԱՄՆ–ի համալսարաններում: Եվ զսպելով իր զայրույթը՝ նա գրում է. «Ամերիկացիները

ոչինչ չգիտեն Սաուդյան Արաբիայի մասին: Նրանք կարծում են, որ երկիրը միայն անապատ է և բնակեցված է որոշ բեդվիններով: Նրանք չգիտեն, որ մենք ունենք քաղաքներ կամ գոյություն ունի միջին դասակարգ: Սեպտեմբերի 11–ից հետո նրանք մեզ դիտում են որպես չարի քվինտէսենցիա: Մեր ամբողջ հասարակությունը նույնացվում է ահաբեկչության հետ»: Կարելի է ասել, որ այդ տեսակետն այս կամ այն չափով տարածված է նաև մյուս ազգերի մոտ:

Բայց այդ պատկերը շատ հեռու է ժամանակակից Սաուդյան Արաբիայի իրական պատկերից:

Երկիրը 1970–ականներից սկսված մեծ փոփոխությունների է ենթարկվել: Բնակչությունը քոչվորականից անցել է նստակյաց կյանքի: Մինչև 1960–ականները բնակչության մեծամասնությունն իրոք քոչվոր և կիսաքոչվոր էր: Տնտեսության արագ զարգացման, դիվերսիֆիկացիայի, ենթակառույցների, լայնածավալ շինարարության, ուրբանիզացիայի և այլ գործոնների շնորհիվ Սաուդյան Արաբիայի բնակչությունը երկու սերնդի ընթացքում քոչվորականից վերածվեց նստակյացի: Սաուդյան Արաբիայի բնակչության ավելի քան 95%–ը 2005 թ. արդեն նստակյաց էր: Իսկ այդ թվականին Սաուդյան Արաբիայի բնակչությունը կազմում էր 26 մլն 400 հազ. մարդ: Այդ տոկոսը շատ տպավորիչ է և Սաուդյան Արաբիայի նոր պատկերի թերևս ամենացցուն արտահայտություններից մեկը: Կարելի ասել, որ մարդագրական փոփոխությունը և քոչվորականից նստակյաց կյանքի անցնելը Սաուդյան Արաբիայի համար պատմական, շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձություն է, որը խորհրդանշում է անցում մի դարաշրջանից մեկ այլ դարաշրջան:

Այդ փոփոխությունների արդյունքում արագ թափով աճեցին քաղաքները: Արդեն 1970 թ. Սաուդյան Արաբիայի բնակչության 49%–ը բնակվում էր քաղաքներում, իսկ 2005 թ. այդ թիվը հասավ մոտ 90%–ի: Ուրբանիզացիան նույնպես ժամանակակից Սաուդյան Արաբիայի նոր իրողություններից է: Արագընթաց աճ է ապրում մայրաքաղաք Ռիյադը: 1950 թ. դա մի ոչ մեծ քաղաք էր՝ 111 հազ. բնակչությամբ, կավե տներով, նեղլիկ փողոցներով, առանց շատ թե քիչ զարգացած քաղաքային տնտեսությամբ: Իսկ 2005 թ նրանում արդեն բնակվում էր 5,5 մլն մարդ: Դա ժամանակակից քաղաք է իր բոլոր նվաճումներով, առավելություններով և արատներով: Աչքի են զարնում Ռիյադի և այլ քաղաքների լայն պողոտաները, արևմտյան տիպի սուպերմարկետները, շքեղ խանութները և այլ շինություններ: Ռիյադում և սաուդյան այլ քաղաքներում գոր-

ծում են ինտերնետ սրճարաններ, Մակ Դոնալդսներ և արևմտյան տիպի այլ օբյեկտներ:

Նավթից ստացվող մեծ եկամուտները հնարավորություն տվեցին ավելի մեծ հատկացումներ կատարել առողջապահության ոլորտին՝ կառուցվեցին բազմաթիվ նոր հիվանդանոցներ, որոնք հագեցված են առաջնակարգ բժշկական տեխնիկայով, կտրուկ ավելացավ բժիշկների քանակը, որոնց մեջ զգալի թիվ են կազմում օտարերկրացիները: Ձեռնարկած միջոցառումների շնորհիվ, կարելի է ասել, արմատապես փոխվեց վիճակը հատկապես նորածինների մահացության տոկոսը կտրուկ նվազելու տեսանկյունից: 1960–ականներին յուրաքանչյուր հազար նորածինից մահանում էր 170–ը, իսկ 2005 թ. այդ թիվը նվազեց՝ կազմելով մոտավորապես 10%:

Սաուդյան Արաբիայի նոր կերպարի ձևավորման մեջ շատ էական է կրթության համակարգի ստեղծումը և զարգացումը: Սաուդյան Արաբիայում ժամանակակից առումով կրթական համակարգ գոյություն չի ունեցել: Երբ 1932 թ. Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդի ջանքերով վերջնականապես ավարտվեց Արաբիայի տարածքների միավորումը և Սաուդյան Արաբիայի թագավորության կազմավորումը, ապա դա անգրագիտության համատարած երևույթ էր: Կրթությունն անհատականացված էր, այսինքն՝ այն մատչելի չէր յուրաքանչյուրին, այլ սահմանափակված էր որոշ խավի ներկայացուցիչներով: Նրանց ընտրում և ուղարկում էին քաղաքային վայրերի մզկիթների կրոնական դպրոցներ: Այստեղ հիմնական առարկան կրոնն էր, ինչպես նաև գրական արվեստի տարրերի ուսուցումը, որը ավանդաբար մեծ համարում ուներ արաբների մոտ: Ինչ վերաբերում է գյուղական վայրերին, ապա այնտեղ դա էլ գոյություն չուներ: Հիմնադիր թագավորի նախաձեռնությամբ 1945 թ. սկսեց իրագործվել Սաուդյան Արաբիայում դպրոցներ հիմնելու ծրագիր: 1951 թ. Սաուդյան Արաբիայում արդեն գործում էր 226 դպրոց՝ 30 հազար աշակերտով:

Տարիների ընթացքում Սաուդյան Արաբիայում կատարվող քաղաքական և սոցիալ–տնտեսական փոփոխությունների հետ միասին փոփոխություն տեղի ունեցավ նաև կրթության բնագավառում: Դրանք այնպիսի բարձր աստիճանի փոփոխություններ են, որը իրավունք է տալիս խոսել Սաուդյան Արաբիայում XX դարի վերջերին և XXI դարի սկզբներին կրթական համակարգի ձևավորման և գոյության մասին: 2003 թ. պաշտոնական տվյալներով՝ գրագետ էր բնակչության մոտ 80%–ը: Ուսուցումը, որը մատչելի է անխտիր բոլոր քաղաքացիներին,

անվճար է՝ սկսած նախադպրոցական հաստատություններից, վերջացրած բարձրագույն ուսումնական հաստատություններով: Անվճար է ոչ միայն ուսուցումը, այլև դասագրքերը և աշակերտների ու ուսանողների բժշկական սպասարկումը: Պետական բյուջեի 25%–ից ավելին հատկացվում է կրթության համակարգին, որը, հաշվի առնելով բյուջեի մեծ ծավալները՝ մոտ 185 մլրդ դոլար, միանգամայն բավարար է կրթական համակարգի զարգացման համար: Կառուցվում են ժամանակակից դպրոցական հարմարավետ շենքեր, որոնք հագեցված են համակարգիչներով, ինտերնետից օգտվելու հնարավորություններով, գրադարաններով և այլն: Սաուդյան Արաբիայում գործում են 24 հազար դպրոց, բազմաթիվ քոլեջներ և այլ ուսումնական հաստատություններ, ութ համալսարան: Բնականաբար, փոխվել են նաև ուսումնական ծրագրերը և առարկաները: Իսլամի ուսուցումը պահելով հանդերձ՝ դասավանդում են նաև այնպիսի առարկաներ, որոնք ընդունված են աշխարհի շատ երկրներում: Ծրագրերը հարմարեցված են երկրի համար անհրաժեշտ մասնագետներ պատրաստելու խնդրին: Տարվում են նաև գիտական հետազոտական աշխատանքներ:

Դպրոցների դռները բացվեցին նաև աղջիկների առջև, և կրթությունը մատչելի դարձավ նաև նրանց համար: Սովորաբար դա շատ բարդ հարց է իսլամական բոլոր երկրներում, այդ թվում և Սաուդյան Արաբիայում: Բայց ակնառու փոփոխություններ տեղի ունեցան նաև այդ բնագավառում: 1960 թ. աղջիկների միայն 2%–ն էր հաճախում դպրոց, իսկ 2000 թ. 15–24 տարեկան աղջիկների և երիտասարդ կանանց 94%–ն արդեն գրագետ էր: Համալսարաններում ուսանողության համարյա կեսը աղջիկներն են: Ճիշտ է, նրանք անջատ են սովորում տղաներից, բայց, այդուհանդերձ, իգական սեռի ներկայացուցիչների զանգվածային ներգրավումը կրթական ոլորտի մեջ պետք է համարել կարևոր քայլ Սաուդյան Արաբիայում և նրա զարգացմանն ու առաջադիմությանը նպաստող գործոն:

Շատ աշակերտներ կամ ուսանողներ Սաուդյան Արաբիայից ուղարկվում են սովորելու նաև արտասահմանյան տարբեր երկրների ուսումնական հաստատություններ: Դրանք սովորաբար արևմտյան երկրներն են՝ ԱՄՆ, Անգլիա, Կանադա, Ավստրալիա, վերջին շրջանում նաև Ճապոնիա և այլուր: Այլ կերպ ասած՝ Սաուդյան Արաբիան աստիճանաբար ներգրավվում է միջազգային կրթական համակարգի մեջ և պատրաստում ազգային կադրեր՝ բժիշկներ, ինժեներներ, տնտեսագետներ,

արդյունաբերության և գյուղատնտեսության տարբեր բնագավառների մասնագետներ, որոնց կարիքը շատ մեծ է արդիականացման ուղին ոտք դրած Սաուդյան Արաբիայում:

Բայց երկիրն ունի դեռևս բազմաթիվ չլուծված քաղաքական, տնտեսական և սոցիալական խնդիրներ, որոնք լուրջ խոչընդոտ են վիթխարի հարստությունների տեր արաբական այդ երկրի արդիականացման ճանապարհին: Ուստի ճիշտ կլինի ասել, որ ժամանակակից Սաուդյան Արաբիան հիմնախնդիրների ու հակասությունների մի բարդ հանգույց է, որտեղ հնի և ավանդականի կողքին ծնավորվել ու զարգանում է նորը՝ նոր գաղափարներ, նոր ինստիտուտներ և նոր սերունդ, որը շահագրգռված է իր սեփական երկիրն արդիականացնելու և զարգացած ու առաջադիմական երկրի վերածելու մեջ:

Ապագան պատկանում է զարգացման այդ միտումին:

Գլուխ վեցերորդ

ՍԻՐԻԱԿԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍԻՐԻԱ

ԱԼ–ՋՈՒՄՀՈՒՐԻՅԱ ԱԼ–ԱՐԱԲԻՅԱ ԱԼ–ՍՈՒՐԻՅԱ
ՍՈՒՐԻՅԱ

Աշխարհագրական դիրքը — գտնվում է Արևմտյան Ասիայում՝ Մերձավոր Արևելքում

Սահմանները — սահմանակից է Թուրքիային, Իրաքին, Հորդանանին. Լիբանանին և Իսրայելին, իսկ արևմտյան կողմից ունի ելք դեպի Միջերկրական ծովը

Տարածքը — 185 2 հազ. քառ կմ

Բնակչությունը — 19 մլն 43 հազար (2005 թ.)

Ազգային կազմը — արաբներ՝ 90%, քրդեր՝ 6%, հայեր և այլք՝ 4%

Մայրաքաղաքը — Դամասկոս՝ մոտ 2 մլն 382 հազ (2003 թ.), մյուս խոշոր քաղաքներն են Հալեպը (1 մլն 950 հազ), Հոմսը (752 հազ), Լաթաքիան (417 հազ.). Համան (380 հազ)

Պետական կրոնը — իսլամ՝ 90%, այդ թվում՝ սուննի իսլամ՝ 74%, շիաներ, ալավիներ, դրուզներ և այլք՝ 16%, քրիստոնյաներ՝ հույն ուղղափառ, հույն կաթոլիկ, հայ առաքելական, մարոնի. հռոմեական կաթոլիկ և բողոքականներ՝ 10%

Պաշտոնական լեզուն — արաբերենը. գործածական են նաև քրդերենը, հայերենը, արամեերենը ինչպես նաև ֆրանսերենը և անգլերենը

Սահմանադրությունը — 13 մարտի 1973 թ.

Պետական կարգը — հանրապետություն

Պետության ղեկավարը — պրեզիդենտը ընտրվում է հանրաքվեով. 7 տարի ժամանակով

Գործադիր իշխանությունը — պետության ղեկավար պրեզիդենտը՝ Բաշար ալ–Ասադը (2000 թ. հուլիսի 17–ից), կառավարության ղեկավարը՝ վարչապետը, կաբինետը՝ Նախարարաների խորհուրդը, որը նշանակվում է պրեզիդենտի կողմից

Օրենսդիր իշխանությունը — միպալատանի ժողովրդական խորհուրդը՝ Մաջլիս ալ–շաաբ կազմված 250 դեպուտատներից, որոնք ընտրվում են չորսամյա ժամկետով

Դատական իշխանությունը — Գերագույն սահմանադրական դատարանը, Բարձրագույն դատական խորհուրդը, Վճռաբեկ դատարանը, Պետա-


ՍԻՐԻԱ
ԹՈՒՐՔԻԱ
ՍԻՐԻԱ
Միջերկրական ծով
ԻՐԱՔ
ՀՈՐԴԱՆԱՆ

կան անվտանգության դատարանը: Դատավորներին նշանակում է պրեզիդենտը 4 տարի ժամանակով

Դատական համակարգը — հիմնված է իսլամական օրենքի, քաղաքացիական օրենքի և հատուկ կրոնական դատարանների վրա

Վարչական բաժանումը — 14 նահանգներ՝ մուհաֆազաներ

Անկախությունը — 17 ապրիլի 1946 թ՝ ֆրանսիական մանդատային տիրապետությունից

Ազգային տոնը — Անկախության օրը՝ 17 ապրիլի

Քաղաքական կուսակցությունները — Արաբական սոցիալիստական վերածննդի՝ Բաաս կուսակցություն, Արաբական սոցիալիստական յունիոնիստական շարժում, Արաբական սոցիալիստական կուսակցություն, Սոցիալիստական յունիոնիստական դեմոկրատական կուսակցություն, Սիրիական կոմունիստական կուսակցություն, Ազգային առաջադիմական ճակատ

ՀՆԱ–ն ըստ շնչի — 3,400 ԱՄՆ դոլար (2005 թ.)

Արդյունաբերությունը — նավթարդյունահանում, նավթավերամշակում տեքստիլ, սննդի, ֆոսֆատի, ծխախոտի, կաշվի և կաշվեղենի, կոշիկի արդյունաբերություն, տնայնագործական արտադրություն

Գյուղատնտեսությունը — ցորեն, գարի, բամբակ, ծխախոտ, ձիթապտուղ, շաքարի ճակնդեղ, ոսպ, անասնապահություն, կաթ և կաթնամթերքներ, թռչնաբուծություն,

Անդամակցություն միջազգային կազմակերպություններին — ՄԱԿ, ՅՈՒՆԵՍԿՕ, Արաբական պետությունների լիգա, Իսլամական կոնֆերանս կազմակերպություն, Միջազգային առողջապահական կազմակերպություն, Միջազգային աշխատանքի կազմակերպություն, Միջազգային արժութային ֆոնդ, ՕԱՊԵԿ, Ինտերպոլ և այլն

I. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՍԻՐԻԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ (1918–1920 թթ.)

1. Թուրքական բանակի ջախջախումը և Սիրիայի ազատագրումն օսմանյան տիրապետությունից

Առաջին համաշխարհային պատերազմը գերմանա–ավստրիական ռազմաքաղաքական բլոկում հանդես եկած Օսմանյան կայսրության համար ունեցավ ճակատագրական վախճան: Թուրքական զորքերը չկարողացան դիմակայել Անտանտի երկրների բանակներին և 1916 թ երկրորդ կեսից պարտություն պարտության հետևից էին կրում պատերազմի բոլոր ռազմաճակատներում՝ բալկանյան, կովկասյան և արաբական.

Արաբական ճակատում հիմնական ուժը Սիրիայում և Պաղեստինում տեղակայված թուրքական չորրորդ բանակն էր, որի հրամանատարն էր Օսմանյան կայսրության ծովային նախարար Ահմադ Ջեմալ փաշան: 1916 թ երկրորդ կեսից թուրքական զորքերը արաբական ամբողջ ռազմաճակատում անցան պաշտպանության:

Նրանց դեմ կանգնած էին հիմնականում բրիտանական զորքերը, թեև նրանց հետ մարտնչում էր ֆրանսիական մի ոչ մեծ զորախումբ, որն ավելի շուտ խորհրդանշական բնույթ էր կրում, քան թե ռազմական–մարտավարական: Սակայն անգլիացիներին մեծ օժանդակություն ցույց տվեց արաբական ապստամբ բանակը՝ Հիջազի շերիֆ Հուսեյնի որդի Ֆեյսալի հրամանատարությամբ: Նրանց հետ միասին Սիրիայի ազատագրմանը մասնակցում էր Արևելյան կամ Հայկական լեգեոնը, որը կազմված էր գլխավորապես հայերից, որոնք 1915 թ. Եղեռնից հետո անցել էին արաբական երկրներ, և Սիրիայի արաբներից:

Պաղեստինում, Հորդանանում և Միջագետքում այդ ուժերի հաղթանակից հետո օրակարգի հարց դարձավ բուն Սիրիայի ազատագրու-

մը, որի սահմաններին 1918 թ. ընդհուպ մոտեցան անգլիական և արաբական բանակները: Եվ 1918 թ. նրանք հարձակման անցան թուրքական բանակի դեմ Սիրիայում:

Արաբները, ոգևորված անգլիական և արաբական զորքերի հաղթանակներից, շատ վայրերում նախքան այդ զորքերի մոտենալը ապստամբում և անցնում էին նրանց կողմը: Շատ տարածված էր նաև Սիրիայի տարբեր քաղաքներից և գյուղերից արաբների զանգվածաբար անցումը ռազմաճակատի գիծը և միանալը արաբական բանակին:

Արաբական և անգլիական զորքերը, պարտության մատնելով թուրքական զորքերին, առաջ էին շարժվում հյուսիս՝ նպատակակետ ունենալով գրավել Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսը և մյուս կարևոր քաղաքները: 1918 թ. սեպտեմբերի 30–ին՝ գիշերվա ժ. 3–ին, Ֆեյսալի արաբական զորքերը մտան Դամասկոս: Հաջորդ օրը Դամասկոս ժամանեցին արաբների դաշնակիցները՝ անգլիական զորքերը: Բոլոր տեղերում շենքերի և այլ օբյեկտների վրա գտնվող թուրքական դրոշները վայր նետվեցին, և նրանց փոխարեն Դամասկոսի վրա ծածանվեցին Հուսեյն թագավորի սև, սպիտակ և կանաչ եռագույն դրոշը: Շարունակելով հարձակումը՝ անգլիական և արաբական զորքերը հոկտեմբեր ամսին ազատագրեցին ամբողջ հյուսիսային Սիրիան: Հոկտեմբերի 11–ին թուրքերից ազատագրվեց Հոմսը, հոկտեմբերի 17–ին՝ Համան, և անգլիական ու արաբական զորքերը մոտեցան Հալեպին: Հալեպից հարավ՝ Խան Թումանի մոտ, 1918 թ. հոկտեմբերի 25–ին տեղի ունեցավ վճռական ճակատամարտ, որի ընթացքում թուրքերը գլխովին ջախջախվեցին, և Հալեպը նույնպես ազատագրվեց: Խան Թումանի մոտ ծեռք բերված հաղթանակով արաբները, ինչպես նշում է արաբ պատմաբան Ամին Սաիդը, ռևանշ վերցրեցին թուրքերից 1516 թ. Մարջ Դաբիկում կրած պարտության համար, որից հետո սկսվել էր արաբական երկրների նվաճումը օսմանցիների կողմից:

1918 թ. հոկտեմբերի 30–ին Մուդրոսում անգլիական «Ագամեմնոն» նավի վրա կնքվեց զինադադար Անտանտի և Թուրքիայի միջև, որով վերջակետ էր դրվում ռազմական գործողություններին, և օսմանյան կառավարությունը պարտավորվում էր արաբական երկրներում, այդ թվում և Սիրիայում գտնվող իր կայազորները հանձնել դաշնակիցներին: Այսպիսով՝ ավարտվեց արաբական երկրներում օսմանյան տիրապետության չորս հարյուր տարի տևած դարաշրջանը:

Սկսվեց Սիրիայի պատմության նոր փուլը՝ նորագույն շրջանի պատմությունը, որի ընթացքում գլխավոր խնդիրը դարձավ ազգային անկախության նվաճումը, ինքնուրույն պետության կազմավորումը և քաղաքական ու սոցիալ–տնտեսական զարգացումը:

2. Սիրիական ազգային առաջին կառավարության ստեղծումը և Ֆեյսալ–Ալլենբի փոխհարաբերությունները

Թուրքիայի լծից ազատվելուց հետո Սիրիայի ներքաղաքական վիճակը մնում էր խիստ լարված, որը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Դեռևս 1916 թ. մարտին Հիջազի շերիֆ Հուսեյնի և Եգիպտոսում անգլիական գլխավոր կոմիսար Մակ–Մահոնի միջև տեղի ունեցած նամակագրության շնորհիվ ձեռք էր բերվել համաձայնություն, որով Անգլիան խոստանում էր ճանաչել արաբական անկախ պետությունը, որի մեջ պետք է մտներ նաև Սիրիան: Դրա փոխարեն Հուսեյնը պարտավորվում էր կազմակերպել արաբների ապստամբությունն ընդդեմ Թուրքիայի:

Արաբները կատարեցին իրենց խոստումը՝ 1916 թ հունիսին սկսելով արաբական մեծ ապստամբությունը:

Սակայն 1916 թ մայիսին կնքվել էր Սայքս–Պիկոյի գաղտնի համաձայնագիրը արաբական տարածքները Անգլիայի և Ֆրանսիայի միջև բաժանելու մասին, ըստ որի Սիրիան և Լիբանանը անցնում էին Ֆրանսիայի տիրապետության տակ: Այդ համաձայնագրի մասին արաբներն իմացան, երբ խորհրդային կառավարությունը 1917 թ. նոյեմբերի 22–ին հրապարակեց ցարական Ռուսաստանի գաղտնի փաստաթղթերը:

Այսպիսով՝ արաբները պատերազմից հետո, հենվելով Հուսեյն — Մակ–Մահոն համաձայնության վրա, ձգտում էին ստեղծել իրենց անկախ պետությունը, իսկ Անգլիան և Ֆրանսիան, ընդհակառակը, փորձում էին իրագործել արաբական երկրների վրա իրենց տիրապետությունը հաստատելու վերաբերյալ Սայքս–Պիկոյի գաղտնի համաձայնագրերը: Դա հստակորեն դրսևորվեց 1918 թ. հոկտեմբերի 3–ին Դամասկոսում էմիր Ֆեյսալի հետ Մերձավոր Արևելքում անգլիական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ, հետագայում ֆելդմարշալ Ալլենբիի ունեցած հանդիպման ժամանակ:

Ֆեյսալը Դամասկոս ժամանեց 1918 թ. հոկտեմբերի 3–ին: Նրա մուտքը Օմայաների երբեմնի մայրաքաղաքը կազմակերպվել էր մեծ

շուքով ու հանդիսությամբ. Հուսեյնի վայելչակազմ և ասկետիկ երրորդ որդին Դամասկոս մտավ արաբական ընտիր սպիտակագույն նժույգի վրա՝ 1500 հեծյալների ուղեկցությամբ: Բնակչությունը նրան դիմավորեց արտակարգ խանդավառությամբ: Շատերին այդ պահը թվում էր պատմական և արաբական երկրների համար բախտորոշ նշանակություն ունեցող:

Այդ նույն օրը՝ 1918 թ. հոկտեմբերին 3–ին, Դամասկոս ժամանեց նաև Ալլենբին, որն անմիջապես «Օթել Վիկտորիայում» հանդիպում ունեցավ Ֆեյսալի հետ և քննարկեց Սիրիայի ապագա կառուցվածքի վերաբերյալ մի շարք կարևոր հարցեր: Բրիտանական գեներալը շտապում էր այդ հարցերն անհապաղ քննարկել էմիր Ֆեյսալի հետ, քանի որ նա հրահանգ էր ստացել բրիտանական ռազմական և արտաքին գործերի նախարարություններից՝ ամեն գնով զսպել Ֆեյսալի և նրա կողմնակիցների՝ շատ հեռուն գնացող ցանկությունները ապագա արաբական պետության վերաբերյալ: Ալլենբին տեղյակ պահեց Ֆեյսալին, որ քանի դեռ պատերազմը չի ավարտվել, իր զորքերի կողմից գրաված բոլոր տարածքները համարվում են «թշնամու օկուպացված տարածքներ», որտեղ գերագույն իշխանությունը պատկանում է Անգլիային: Այնուհետև նա Ֆեյսալին ըստ էության շարադրեց Սայքս–Պիկոյի անգլո–ֆրանսիական գաղտնի համաձայնագրի պայմանները և նրան հայտնեց, որ Լոնդոնից հրահանգ է ստացել թույլատրել ֆրանսիացիներին իրենց վերահսկողությունը հաստատելու Դամասկոս–Հոմս–Համա–Հալեպ գծից արևմուտք ընկած ամբողջ տարածքի վրա, ներառյալ Լիբանանը: Միաժամանակ Ալլենբին նշեց, որ Ֆրանսիան համարվում է հովանավորող պետություն սիրիական այն տարածքի վրա, որն ընդգրկում է Հալեպ, Համա, Հոմս և Դամասկոս քաղաքներն ու նրանց շրջակա տարածքները, բայց այստեղ կարող է ստեղծվել արաբական պետություն էմիր Ֆեյսալի գլխավորությամբ:

Ֆեյսալը պատասխանում է Ալլենբիին, որ այդ պայմաններն անընդունելի են արաբների համար, որին ի պատասխան անգլիական գեներալը խիստ տոնով շեշտում է, որ ինքը Պաղեստինում և Սիրիայում տեղակայված անգլիական զորքերի գլխավոր հրամանատարն է, և բոլորը պարտավոր են ենթարկվել իր հրամաններին: Այսպես ավարտվեց Ֆեյսալ–Ալլենբի առաջին հանդիպումը, որը խիստ հիասթափեցուցիչ եղավ արաբների համար:

Ֆեյսալը ծեռնամուխ եղավ սիրիական կառավարություն կազմավորելու խնդրին, որը հարթ չընթացավ: Երբ 1918 թ. սեպտեմբերի 30–ին Ֆեյսալի զորքերը մտան Դամասկոս, այնտեղ արդեն գոյություն ուներ այսպես կոչված «արաբական կառավարություն» Աբդ ալ–Կադր և Մուհամմադ Սաիդ ալ–Ջազաիրի եղբայրների գլխավորությամբ: Այդ «կառավարությունը» ստեղծել էին թուրքերը Ջեմալ փաշայի կարգադրությամբ իրենց կողմնակիցներից՝ նախքան Դամասկոսը լքելը: Ֆեյսալը և նրա կողմնակիցները, բնականաբար, չէին կարող հանդուրժել, որ իրենց փոխարեն իշխանությունը գրավեն թուրքական դրածոները: Այդ հարցում Ֆեյսալին էին պաշտպանում անգլիացիները, և հոկտեմբերի 1–ին Լոուրենսը այդ «կառավարությունը» հայտարարեց տապալված և էմիր Ֆեյսալի անունից Սիրիայի ռազմական կառավարիչ նշանակեց գեներալ Ալի Ռիզա ալ–Ռիկաբիին: Ալ–Ջազաիրի եղբայրները և նրանց կողմնակիցները հաջորդ օրը ապստամբեցին՝ նպատակ ունենալով վերականգնել իրենց իշխանությունը: Այդ ապստամբությունը ճնշվեց առանց դժվարությունների: Աբդ ալ–Կադրը մահապատժի ենթարկվեց, իսկ Մուհամմադ Սաիդը բանտարկվեց.

1918 թ. հոկտեմբերի 5–ին էմիրն ընդունեց դեկրետ Դամասկոսում արաբական կառավարություն ստեղծելու մասին, որի իրավասությունը տարածվելու էր ամբողջ Սիրիայի վրա: Դիմելով այդ քայլին՝ նա հաշվի էր առել Ալլենբիի այն տեղեկատվությունը, որ Անգլիան և Ֆրանսիան համաձայնվել են, որ Սիրիայի Հալեպ, Հոմս, Համա և Դամասկոս տարածքներն ընդգրկող մասում կարող է ստեղծվել արաբական պետություն էմիր Ֆեյսալի ղեկավարությամբ, սակայն Ֆրանսիայի հովանավորության ներքո:

Այդ կառավարությունը եղավ սիրիական առաջին ազգային կառավարությունը, որը գլխավորեց Ալի Ռիզա ալ–Ռիկաբին: Այդ նույն օրը Ֆեյսալը դիմեց Սիրիայի ժողովրդին՝ կոչ անելով նրան ենթարկվել այդ կառավարությանը: Ստեղծվեցին նաև Խորհրդատվական խորհուրդ, որը պետք է օրենքներ մշակեր և զբաղվեր նաև վարչական հարցերով, վճռաբեկ ատյան և այլն: Երկրի խոշոր շրջաններում նշանակվեցին նահանգապետներ, հիմնվեցին դատարաններ, իսկ քաղաքներում սկսեցին գործել քաղաքապետարաններ՝ իրենց նախագահով և ընտրովի խորհրդականներով: Կառավարության որոշումները Ֆեյսալի կողմից հաստատվելուց հետո ստանում էին օրենքի ուժ: Եվ նա ծեռնամուխ եղավ երկրի բյուջեի կազմելուն:

Նորաստեղծ կառավարության քաղաքականության սկզբունքները պարզաբանելու և ժողովրդի համակրանքն ու աջակցությունը շահելու նպատակով էմիր Ֆեյսալը շրջագայեց երկրում, եղավ տարբեր քաղաքներում և ելույթներով հանդես եկավ բնակչության տարբեր խավերի առջև: 1918 թ. նոյեմբերի 11–ին նա եղավ Հալեպում և հանդես գալով քաղաքի երևելիների ու տարբեր համայնքների ներկայացուցիչների առջև՝ հայտարարեց, որ գլխավոր խնդիրը կազմակերպված, արդարադատ և ուժեղ կառավարության ստեղծումն է, և կոչ արեց նրանց՝ պաշտպանել հոկտեմբերի 5–ին ծնավորված արաբական առաջին ազգային կառավարությունը:

Մինչ Ֆեյսալը զբաղված էր սիրիական կառավարության ստեղծմամբ, 1918 թ. հոկտեմբերի 24–ին Ալլենբիի հրամանով Պաղեստինը, Սիրիան, Հորդանանը և Լիբանանը, որոնք համարվում էին «թշնամու օկուպացված տարածքներ», բաժանվեցին երեք գոտիների՝ հարավային, հյուսիսային և արևելյան, որտեղ բարձրագույն իշխանությունը պատկանում էր անգլիական ռազմական հրամանատարությանը, քանի դեռ պատերազմը շարունակվում էր, և Թուրքիայի հետ չէր ստորագրվել հաշտության պայմանագիր: Նրան էին ենթարկվում երեք գոտիների ռազմական և քաղաքացիական իշխանությունները: Սիրիայի տարածքների մի մասը մտավ հյուսիսային, իսկ մյուս մասն էլ արևելյան գոտու մեջ: Գոտիների ստեղծումը նշանակում էր արաբական երկրների, այդ թվում և Սիրիայի բաժանում: Այդուհանդերձ, արևելյան գոտին, որի մեջ մտնում էին Սիրիան և Անդրհորդանանի մի մասը, և որտեղ արդեն գործում էր սիրիական կառավարությունը, թողնվում էր էմիր Ֆեյսալի կառավարման ներքո:

Սիրիան «թշնամու օկուպացված տարածք» հայտարարելը և գոտիների բաժանելը շատ ծանր տպավորություն գործեց արաբների, այդ թվում և սիրիացիների վրա: Վերջիններս զգացին, որ իրենք խաբված են: Այդ տեսակետը շատ հստակ է արտահայտել Ամին Սաիդը. Ահա թե ինչ է գրում արաբ հայտնի պատմաբանը. «Սիրիացիները գործնականում տեսան, որ Անգլիան խաբել և դավաճանել է իրենց: Նրանք հասկացան, որ սխալվել են՝ հավատալով մի երկրի, որը հավատարիմ չի մնում իր երդմանը և չի կատարում իր պարտավորությունները»:

3. Արաբական հարցի քննարկումը Փարիզի խաղաղության կոնֆերանսում

Արաբական երկրների բաժանումը երեք գոտիների թեև խոր հիասթափություն առաջացրեց արաբների մոտ, այդուհանդերձ, նրանց ղեկավարները հույս ունեին հասնել իրենց ազգային պահանջների իրագործմանը: Նման լավատեսությունը բացատրվում է ոչ միայն քաղաքական հարցերում նրանց անփորձությամբ, այլև այն հավատով, որ նրանք դրսևորում էին արևմտյան պետությունների զանազան դեկլարացիաների նկատմամբ: Սիրիական առաջնորդներն առանձնահատուկ հույսեր էին կապում ԱՄՆ–ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի այսպես կոչված «Տասնչորս կետերի» հետ, որոնք նա հռչակել էր 1918 թ. հունվարի 8–ին: Նրա տասներկուերորդ կետը վերաբերում էր Օսմանյան կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում և արաբների քաղաքական ճակատագրին: Նրանում ասված էր, որ «թուրքական իշխանության տակ գտնվող բոլոր ազգերը պետք է գոյության աներկբայելի երաշխիք ստանան, և նրանց ինքնավար զարգացման համար բացարձակապես անխախտելի պայմաններ ստեղծվեն»:

Արաբների մոտ լավատեսական տրամադրություններ էր առաջացրել նաև 1918 թ. նոյեմբերի 8–ի անգլո–ֆրանսիական համատեղ դեկլարացիան, որտեղ ասված էր, որ Անգլիան և Ֆրանսիան խոստանում են «թուրքերի կողմից երկար ժամանակ ճնշված ժողովուրդների լրիվ և վերջնական ազատագրում և ազգային կառավարությունների ստեղծում»: Այդ նպատակով «Անգլիան և Ֆրանսիան համաձայնվել են օժանդակել և օգնել Սիրիայում և Միջագետքում ստեղծելու տեղական կառավարություն»: Իրականում նման խոստումների միջոցով Անգլիան և Ֆրանսիան փորձում էին ցրել իրենց նկատմամբ արաբների կասկածները և կանխել նրանց հակաանգլիական և հակաֆրանսիական պոռթկումները:

Արաբները, անտեղյակ այդ ամենին և հավատ ընծայելով Վուդրո Վիլսոնի 14 կետերին ու 1918 թ. նոյեմբերի 8–ի անգլո–ֆրանսիական դեկլարացիային, մեծ հույսեր էին կապել Փարիզի խաղաղության կոնֆերանսի հետ, որը բացվեց 1919 թ. հունվարի 18–ին:

Ֆեյսալը իր հոր՝ Հիջազի թագավոր Հուսեյնի հրահանգով 1918 թ. նոյեմբերի 21–ին Բեյրութից մեկնեց Ֆրանսիա՝ նպատակ ունենալով խաղաղության կոնֆերանսին ներկայացնելու ոչ միայն սիրիական, այլև

համաարաբական պահանջներ: Մարսել հասնելուց անմիջապես հետո կոնֆլիկտներ ծագեցին Ֆեյսալի և ֆրանսիական իշխանությունների միջև: Ֆրանսիական կառավարությունը հրաժարվեց Ֆեյսալին ճանաչել որպես արաբական պաշտոնական պատվիրակության ղեկավար և պատրաստակամություն հայտնեց նրան մեծարել լոկ որպես Հուսեյն թագավորի որդի: Ֆրանսիան հրաժարվեց նաև Ֆեյսալին ճանաչել Սիրիայում ստեղծված արևելյան գոտու ղեկավար: Ֆեյսալի նկատմամբ Ֆրանսիայի դիրքորոշման իրական պատճառն այն էր, որ Ֆրանսիան Ֆեյսալին համարում էր անգլիական մարիոնետ, որի օգնությամբ Անգլիան փորձում էր թուլացնել Ֆրանսիայի դիրքերն Արաբական Արևելքում:

Անգլիայի ճնշման տակ Ֆրանսիայի պրեզիդենտ Աների Պուանկարեն Փարիզում ընդունեց Ֆեյսալին: Սակայն նա այդպես էլ պաշտոնական ճանաչում չստացավ Ֆրանսիայից և մեկնեց Լոնդոն: Այստեղ նա մնաց 1918 թ. դեկտեմբերի 10–ից մինչև 1919 թ. հունվարի 7–ը՝ արժանանալով շատ ջերմ ընդունելության: Նրան ընդունեցին Բուկինհեմի թագավորական պալատում, և անգլիական թագավորը նրան պարգևատրեց Ասպետական մեծ խաչով: Նա հանդիպում ունեցավ նաև Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջի հետ: Լոնդոնում Ֆեյսալը 1919 թ. հունվարի 1–ին անգլիական կառավարությանը ծանոթացրեց իր Հուշագրի հետ, որը նա պատրաստվում էր ներկայացնել Փարիզի խաղաղության կոնֆերանսին: Հուշագրում ասված էր, որ Ալեքսանդրետից մինչև Պարսկաստան և Հնդկական օվկիանոսն ընկած երկիրը համարվում է արաբական: Արաբների նպատակն է բոլոր արաբներին միավորել որպես մեկ ազգ: Սակայն հնարավոր չէ Սիրիան, Իրաքը, Ջազիրան, Հիջազը, Նաջդը և Եմենը միավորել մեկ կառավարության սահմաններում: Սիրիան բավականին զարգացած է և կարող է լուծել իր ներքին հարցերը և ունենալ իր կառավարությունը: Իրաքը նույնպես կարող է ունենալ իր կառավարությունը, բայց նա պետք է օգնություն ստանա «օտարերկրյա մի մեծ պետությունից»: Ինչ վերաբերում է Պաղեստինին, ապա այստեղ բնակչության մեծ մասն արաբներ են, իսկ հրեաները, ինչպես նշված էր այդ Հուշագրում, իրենց արյունով շատ մոտ են արաբներին և «սկզբունքորեն բացարձակապես նույնն են»: Պաղեստինում նս պետք է ստեղծել կառավարություն, որը նույնպես պետք է ստանա մի մեծ օտարերկրյա պետության օգնությունը: Ֆեյսալը, Իրաքի և Պաղեստինի դեպքում նշելով «օտարերկրյա մի մեծ պետության օգնության հարցը», նկատի ուներ Անգլիային:

1919 թ. հունվարին Ֆեյսալը վերադարձավ Փարիզ, իսկ հունվարի 29–ին խաղաղության կոնֆերանսին ներկայացրեց Հուշագիր, որը որոշ չափով տարբերվում էր նախորդից: Այստեղ ավելի էր ընդգծված արաբական երկրների անկախության պահանջը: Այդ Հուշագրում ասված էր. «Ես եկել եմ պահանջելու, որ Ասիայի արաբական ժողովուրդները Ալեքսանդրետ — Դիարբեքիր գծից հարավ՝ մինչև Հնդկական օվկիանոս, ճանաչվեն որպես անկախ սուվերեն ժողովուրդներ՝ Ազգերի լիգայի երաշխիքի ներքո: Հիջազը, որն արդեն սուվերեն պետություն է, և Ադենը, որը կախման մեջ է Բրիտանիայից, բացառվում են արաբական պահանջներից»:

1919 թ. փետրվարի 6–ին Ֆեյսալը հանդես եկավ Փարիզի խաղաղության կոնֆերանսում և անձամբ շարադրեց հունվարի 29–ի Հուշագրի հիմնական դրույթները: Նրա ելույթը տևեց մոտ 20 րոպե, որը արաբերենից անգլերեն էր թարգմանում Լոուրենսը: Իր խոսքի վերջում դիմելով կոնֆերանսի մասնակիցներին և նրանց հիշեցնելով Վուդրո Վիլսոնի 14 կետերն ու 1918 թ. նոյեմբերի 8–ի անգլո–ֆրանսիական դեկլարացիան, Ֆեյսալը խնդրեց Անգլիայից և Ֆրանսիայից՝ կատարել այդ դեկլարացիայով արաբներին տրված իրենց խոստումները:

Ֆեյսալի ելույթի ավարտից հետո ԱՄՆ–ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը նրան դիմեց հետևյալ հարցով. եթե Ազգերի լիգան հավանություն տա մանդատային սիստեմին[23], ապա Ֆեյսալն «ի՞նչ կցանկանար իր ժողովրդի համար, կգերադասեր մե՞կ, թե՞ մի քանի մանդատներ»: Պատասխանելով ամերիկյան պրեզիդենտին՝ Ֆեյսալն ասում է, որ «ինքը եկել է պահանջելու իր ժողովրդի անկախությունը: Անձամբ ինքը վախենում է բաժանումից: Իր սկզբունքը արաբական միասնությունն է: Դրա համար է, որ արաբները պայքարել են: Արաբները պահանջում են միայն ազատություն և դրանից պակաս ոչինչ չեն վերցնի»:

Մոտ երեք ամիս տևած վիճաբանությունները դրական արդյունքներ չտվեցին: Փարիզի խաղաղության կոնֆերանսը Ֆեյսալի պահանջները չբավարարեց: Նա Սիրիայի վերաբերյալ ոչ մի որոշում չընդունեց: Սակայն նա ընդունեց Վիլսոնի առաջարկությունը՝ արաբների ցանկությունները պարզելու և վերջնական եզրակացության հանգելու նպա-

23 Ազգերի լիգայի մանդատային սիստեմի մասին տես III հատորի «Իրաք» և «Լիբանան» գլուխները:

տակով արաբական երկրներ ուղարկել միջդաշնակցային հատուկ հանձնաժողով:

Նախքան հայրենիք վերադառնալը Ֆեյսալը 1919 թ. ապրիլի 16–ին Ֆրանսիայի զինվորական նախարարության շենքում հանդիպում ունեցավ Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյի հետ: Վերջինս, դիմելով Ֆեյսալին, ասում է. «Մեծ Բրիտանիան դուրս է բերելու իր զորքերը Դամասկոսից և Հալեպից, և ես կցանկանայի, որ մեր զորքերը փոխարինեին նրանց այդ երկու քաղաքներում»: Ֆեյսալը մերժում է Կլեմանսոյին՝ նշելով, որ «Սիրիան օտարերկրյա զորքերի կարիք չի զգում»: Ֆրանսիական վարչապետը շարունակում է ճնշում գործադրել Ֆեյսալի վրա՝ պատճառաբանելով, թե «ֆրանսիական ազգը չի կարող համաձայնվել, որ Սիրիայում նրա ներկայությունը վկայող ոչ մի բան գոյություն չունենա: Եթե Ֆրանսիան Սիրիայում չներկայացվի իր դրոշով և զինվորներով, ապա ֆրանսիական ազգը դա կհամարի որպես ազգային ծաղր և զինվորի դասալքություն պատերազմի դաշտում»: Սակայն Ֆեյսալը մնաց անդրդվելի:

Այսպիսով՝ Ֆեյսալը ծեռնունայն հեռացավ Փարիզից: 1919 թ ապրիլի 30–ին ֆրանսիական «Փարիզ» հածանավը նրան հասցրեց Բեյրութ, որտեղ նա իր առաջին ելույթն ունեցավ՝ հայտարարելով, որ «անկախությունը սովորաբար ոչ թե տալիս են, այլ վերցնում: Աշխարհը մեզ տվել է անկախություն և մեր խնդիրն է վերցնել այն և դարձնել լրիվ»:

1919 թ. մայիսի 1–ին Ֆեյսալն արդեն Դամասկոսում էր: Ժողովրդին տեղյակ պահելով, որ Սիրիա է ժամանելու միջդաշնակցային հանձնաժողով՝ Ֆեյսալը կոչ արեց սիրիացիներին ցույց տալ այդ հանձնաժողովին, որ իրենք արժանի են անկախության:

Իսկ Ֆեյսալի բացակայության ընթացքում դրությունը Սիրիայում խիստ լարվել էր, որի պատճառը ոչ միայն այն էր, որ պատմաաշխարհագրական Սիրիան բաժանվել էր մի քանի գոտիների, այլև Ֆրանսիայի ծգտումը մանդատի անվան տակ իր տիրապետությունը հաստատել ամբողջ Սիրիայի վրա: Սիրիացիներին գրգռում էր նաև Անգլիայի երկդիմի քաղաքականությունն այդ հարցում: Վախենալով ժողովրդական ելույթներից, որի դեպքում բախումն անգլիական զորքերի հետ անխուսափելի կլիներ՝ Ալլենբին զգուշացրեց Ֆեյսալին. «Որևէ չմտածված քայլ, որը ձեզ կոնֆլիկտի մեջ կմտցնի իմ զորքերի հետ, միանգամից վերջ կդնի ձեր ազգային ծգտումներին»:

1919 թ. մայիսի 9–ին Ֆեյսալը Դամասկոսի քաղաքային սրահում հանդիպեց Սիրիայի, Պաղեստինի, Լիբանանի և Հորդանանի տարբեր շրջանների արաբական ղեկավար գործիչների հետ, որոնց առջև նա դրեց իր քաղաքականությանը վստահություն տալու հարցը: Դիմելով նրանց՝ Ֆեյսալը ասաց. «Ես հարցնում եմ ազգին. արդյո՞ք ազգը պաշտպանում է ինձ խոսքով և գործով այն բոլորի համար, որ ես անում եմ երկրի ներսում և նրանից դուրս. և արդյո՞ք ազգն առանց առարկության և վիճաբանության տալիս է ինձ այն բոլորը, ինչ ես ցանկանում եմ»: Ներկաները միահամուռ դրական պատասխան տվեցին: Սիրիայի բոլոր շրջանների ղեկավարները պաշտպանեցին Ֆեյսալին և վստահեցրին նրան, որ իրենք իրենց դնում են նրա տրամադրության տակ այն պայքարում, որ նա մղում է Սիրիայի համար:

Այդ հանդիպմանը ներկա էր և ելույթ ունեցավ Սիրիայի հայ գաղթականների հոգևոր առաջնորդը: Դրանք այն գաղթականներն էին, որոնց հաջողվել էր փրկվել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանությունից: Նրանք հիմնականում բնակություն էին հաստատել Հալեպում և նրա շրջակայքում, ինչպես նաև Դամասկոսում և Սիրիայի այլ վայրերում: Տեղի արաբ բնակչությունը, չնայած որ ինքն էլ գտնվում էր ծանր պայմաններում, բարեկամական վերաբերմունք և օգնություն ցույց տվեց հայերին: Հայ գաղթականների ներկայացուցիչը Դամասկոսում կայացած վերոհիշյալ նիստում պաշտպանում է սիրիացիներին ազգային անկախության համար մղած նրանց պայքարում և ամբողջ հայության անունից շնորհակալություն հայտնում արաբներին բարի վերաբերմունքի համար: Ողջունելով արաբներին՝ հայ հոգևոր առաջնորդը հայտարարում է, որ «հայերի պատմության մեջ արաբների անունը կգրվի ոսկե տառերով»:

Ֆեյսալը շնորհակալություն հայտնեց իրեն ցույց տրված վստահության համար և նշեց, որ ապագա սիրիական պետությունը մեծ ուշադրություն կդարձնի փոքրամասնությունների հարցին, որպեսզի «վերացնի ատելությունը և կրոնական հակամարտությունը, որ ստեղծել էին թուրքերը, և դրա փոխարեն սիրո և եղբայրության սերմեր կցանի տարբեր կրոնական համայնքների միջև»:

4. Սիրիական կոնգրեսի գումարումը և «Դամասկոսի ծրագիրը»

1919 թ. մարտի 25–ին ԱՄՆ–ը, Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան համաձայնության եկան միջդաշնակցային հանձնաժողով ստեղծելու շուրջը, որի խնդիրն էր մեկնել Սիրիա և տեղում պարզաբանել ժողովրդի դիրքորոշումը Ազգերի լիգայի մանդատի վերաբերյալ: Հետագայում Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան զանազան պատրվակներով հրաժարվեցին մասնակցելու հանձնաժողովի աշխատանքներին, և վերջինս կազմվեց բացառապես ԱՄՆ–ի երկու ներկայացուցիչներից՝ Հ. Քինգից և Չ. Կրեյնից: Վիլսոնը, իմանալով, որ մյուս պետությունները հրաժարվել են Սիրիա հանձնաժողով ուղարկելուց, պետական քարտուղար Ռ. Լանսինգին հայտնում է. «Այդ դեպքում մենք առանձին կուղարկենք»:

Հանձնաժողովի Սիրիա այցելության կապակցությամբ անհրաժեշտ դարձավ համասիրիական հեղինակավոր մարմնի ստեղծումը, որը լիազորված լիներ հանդես գալու սիրիական ժողովրդի անունից և հանձնաժողովին շարադրեր իր պահանջները:

Նա պետք է ունենար մի կարևոր առաքելություն ևս: Սիրիական ազգային կառավարությունը, ինչպես նշվեց, ստեղծվեց ոչ թե սիրիական որևէ օրենսդիր մարմնի որոշումով, որն ընդհանրապես չկար, այլ էմիր Ֆեյսալի դեկրետով՝ նրա հոր՝ Հիջազի թագավոր Հուսեյնի անունից: Իսկ արևելյան գոտում պետության ստեղծման գործընթացն ավարտելու և նրա համար կայուն օրենսդրական հիմք ստեղծելու համար անհրաժեշտ էր օրենսդիր որևէ մարմնի ստեղծում, որն իրավասու լիներ ամբողջ ազգի անունից խոսելու, պետական կարևոր որոշումներ ընդունելու, կառավարության քայլերը օրենսդրորեն ամրապնդելու և նրան հանձնարարականներ տալու համար:

Նման օրգան հանդիսացավ Սիրիական գլխավոր կոնգրեսը՝ «Սութամար ալ–սուրի ալ–ամ»–ը: Նրա ընտրությունները տեղի ունեցան 1919 թ. մայիսին արաբական բոլոր երեք գոտիներում, որոնք ընդգրկում էին ամբողջ պատմաաշխարհագրական Սիրիան: Ընտրությունները անցկացվեցին Արաբական անկախության կուսակցության և Սիրիական միասնության կուսակցության նախաձեռնությամբ և ղեկավարությամբ: Նրանցից ազդեցիկը 1919 թ. փետրվարին հիմնված Արաբական անկախության կուսակցությունն էր, որի հիմնական ծրագրային պահանջը արաբական երկրների անկախության հաստատումն էր:

Կոնգրեսի աշխատանքները սկսվեցին 1919 թ. հունիսին Դամասկոսում: Հունիսի 20–ին կոնգրեսը, ստուգելով բոլոր երեք գոտիների պատվիրակների լիազորությունները և դրանք համարելով օրինական, իրեն հռչակեց ամբողջ Սիրիայի ներկայացուցչական մարմին: Նրանում ընդգրկված էին սիրիական բոլոր շրջանները, ներառյալ Պաղեստինը, Անդրհորդանանը և Լիբանանը:

1919 թ. հուլիսի 2–ին կոնգրեսն ընդունեց ծրագիր, որը ստացավ «Դամասկոսի ծրագիր» անունը: Նրանում շարադրված էին Սիրիայի անկախության, պետական կառուցվածքի, մանդատի և այլ կարևոր հարցերի վերաբերյալ հիմնադիր սկզբունքները: Անկախության հարցի վերաբերյալ ասված էր. «Մենք պահանջում ենք Սիրիայի բացարձակ քաղաքական անկախությունը»: Ծրագրում հաստատված էր, որ Սիրիան պետք է լինի դեմոկրատական սահմանադրական միապետություն՝ ապակենտրոնացման լայն սկզբունքների կիրառումով, որտեղ պետք է ապահովվեն ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքները: Սիրիական գահի համար կոնգրեսն առաջադրեց էմիր Ֆեյսալի թեկնածությունը:

«Դամասկոսի ծրագրում» մեծ տեղ էր հատկացված մանդատի հարցին: Կոնգրեսն ընդհանուր առմամբ ժխտական դիրք գրավեց մանդատի հարցում՝ նշելով. «Մենք բողոքում ենք Ազգերի լիգայի կանոնադրության 22–րդ հոդվածի դեմ, որը մեզ դասում է զարգացման միջին մակարդակի վրա գտնվող ազգերի շարքը, որոնք մանդատային պետության կարիք են զգում»: Կոնգրեսն իր ընդունած ծրագրում ընդգծեց, որ եթե Փարիզի խաղաղության կոնֆերանսը Սիրիային պարտադրի մանդատային կառավարման ձև, ապա նա կցանկանար, որ այն տրվի ԱՄՆ–ին, ԱՄՆ–ի հրաժարվելու դեպքում՝ Մեծ Բրիտանիային, սակայն ոչ մի դեպքում Ֆրանսիային: Կոնգրեսը յուրովի էր մեկնաբանում մանդատի էությունը: Նա մանդատը սխալմամբ դիտում էր ոչ թե որպես գաղութային կախվածության ձև, այլ մի ինստիտուտ, որը ստեղծվում է «տնտեսական և տեխնիկական օգնություն ցույց տալու համար, որը չի խախտելու մեր լրիվ անկախությունը»:

Կոնգրեսը Պաղեստինում սիոնիզմի ներթափանցման և հրեական տուն ստեղծելու դեմ արտահայտվեց: Նա արտահայտվեց հօգուտ միասնական և անբաժան Սիրիայի և պահանջեց, որ նրանից չանջատվեն սիրիական հայրենիքի հարավային մասը՝ Պաղեստինը, և արևմտյան մասը, որ հայտնի է Լիբանան անունով:

«Դամասկոսի ծրագիրն» իր բնույթով բավականին արմատական էր և արտահայտում էր Սիրիայի ազգային–ազատագրական պայքարի հիմնական պահանջները: Այդ ծրագիրը դարձավ կարևոր զենք սիրիական հայրենասերների ձեռքում: Ահա այս փաստաթուղթն էր, որ պետք է հանձնվեր միջդաշնակցային հանձնաժողովին և նրա միջոցով՝ Փարիզի խաղաղության կոնֆերանսին:

Հանձնաժողովը, որը պատմության մեջ ավելի շատ հայտնի է «Քինգ–Կրեյնի հանձնաժողով» հորջորջումով, Պաղեստին ժամանեց 1919 թ. հունիսի 10–ին և արաբական երկրներում մնաց 41 օր՝ մինչև հուլիսի 21–ը: Նա այցելեց Երուսաղեմ, Թել Ավիվ, Նազարեթ, Հայֆա, Բաալբեկ, Բեյրութ, Զահլե, Սայդա, Տրիպոլի, Ալեքսանդրետ, Լաթաքիա, Հոմս, Համա, Հալեպ, Դամասկոս, Ադանա, Մերսին և այլ քաղաքներ ու շրջաններ: Իրենց այցելության ընթացքում երեք գոտիներում նրանք ընդունեցին 153 քաղաքական, 41 տնտեսական և 247 կրոնական պատվիրակություն, որոնցից 7–ը՝ հայկական: Հալեպում եղած ժամանակ Քինգը և Կրեյնը այցելեցին հայ գաղթականների կենտրոնները և զրույց ունեցան նրանց հետ: Նրանք իրենց այցի ընթացքում ստացան 1863 խնդրագիր, հանդիպում ունեցան Սիրիական կոնգրեսի անդամների հետ, որոնք նրանց հանձնեցին «Դամասկոսի ծրագիրը»: 1919 թ. հուլիսի 3–ին նրանց ընդունեց էմիր Ֆեյսալը, որը շեշտեց, որ արաբները դեմ են իրենց հայրենիքի բաժանմանը:

Ամփոփելով իրենց հանդիպումների, զրույցների և ստացված խնդրագրերի արդյունքները՝ Քինգը և Կրեյնը կազմեցին մի ընդարձակ զեկուցագիր Փարիզի խաղաղության կոնֆերանսին ներկայացնելու համար, որի մի շարք կետերը համընկնում էին «Դամասկոսի ծրագրի» հիմնադրույթների հետ:

Մասնավորապես նրանք նշում էին, որ սիրիացիների ճնշող մեծամասնությունը ուզում է լրիվ անկախություն, դեմ է Սիրիայի բաժանմանը և առաջարկում էին պահպանել Սիրիայի միասնությունը, իսկ պետության ղեկավար ճանաչել Ֆեյսալին: Նրանք առաջարկում էին փոփոխություններ մտցնել Բալֆուրի դեկլարացիայում, սահմանափակել հրեաների ներգաղթը և Պաղեստինը չվերածել հրեական պետության:

Գալով մանդատի հարցին՝ Քինգը և Կրեյնը, հաշվի առնելով, որ ստացված խնդրագրերի 60%–ից ավելին համածայնվել էր մանդատն ԱՄՆ–ին տալու օգտին, իրենք նույնպես առաջարկում էին Սիրիայի մանդատը տալ ԱՄՆ–ին: Իսկ դրա անհնարինության դեպքում առաջարկ-

վում էր այն տալ Մեծ Բրիտանիային, սակայն ոչ մի դեպքում՝ Ֆրանսիային: Զեկուցագրում հատուկ մատնանշված էր, որ «ֆրանսիական մանդատը ուժով հարկադրելու ամեն մի փորձ պատերազմի կհանգեցնի արաբների և ֆրանսիացիների միջև»:

Եվ վերջապես՝ Քինգը և Կրեյնը, նկատի ունենալով Լիբանանի բնակչության որոշ խավերի ցանկությունը, նպատակահարմար էին գտնում Սիրիայից անջատել Լիբանանը և նրա մանդատն առաջարկել Ֆրանսիային:

1919 թ. հուլիսի 21–ին Քինգը և Կրեյնը Ստամբուլի վրայով վերադարձան Փարիզ՝ ավելի քան վստահ, որ ապահովված է ԱՄՆ–ի մանդատի հաստատումը Սիրիայի վրա:

Բայց նրանց բացակայության ընթացքում կարևոր փոփոխություններ էին տեղի ունեցել: ԱՄՆ–ում ուժեղացել էին մեկուսապաշտների՝ իզոլյացիոնիստների դիրքերը, որոնք դեմ էին ԱՄՆ–ի մասնակցությանը եվրոպական գործերին: Նրանց ազդեցության տակ ԱՄՆ–ի սենատը հավանություն չտվեց ԱՄՆ–ի մասնակցությանը Ազգերի լիգային՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Դրա հետևանքով ինքնաբերաբար վերացավ ԱՄՆ–ի մանդատը Սիրիայի վրա հաստատելու կամ չհաստատելու հարցը: Այդ պատճառով էլ «Քինգ–Կրեյնի հանձնաժողովի» զեկուցագիրն այլևս քննարկման առարկա չդարձավ:

Սակայն այդ փաստաթուղթը ներկայացնում է որոշակի արժեք և ծառայում է որպես աղբյուր Սիրիայի նորագույն պատմության մի կարևոր ժամանակահատվածի պատմության, անգլո–ֆրանս–ամերիկյան փոխհարաբերությունների ուսումնասիրության և Մերձավոր Արևելքում 1919–1920 թթ. ամերիկյան քաղաքականությունը հասկանալու համար:

5. Արևմտյան Սիրիայի օկուպացումը Ֆրանսիայի կողմից (1919–1920 թթ.)

Անգլո–ֆրանսիական հակամարտությունը Արաբական Արևելքում ազդեցիկ դիրքերի համար և Ֆրանսիայի բացահայտ ձգտումն իր տիրապետությունը Սիրիայի վրա հաստատելու համար 1919 թ. աշնանը թևակոխեց իր նոր հանգրվանը: Երկու կողմերն էլ զգում էին, որ անհրաժեշտ են զիջումներ: Եվ վերջապես՝ նրանք նախնական համաձայնության եկան Սիրիայի հարցում: Անգլիան, Մոսուլի և մի շարք այլ հարցերի վերաբերյալ հասնելով Ֆրանսիայի զիջմանը, իր հերթին նրան զի-

ջում կատարեց Սիրիայի հարցում: Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջը 1919 թ. սեպտեմբերի 13–ին մի հուշագիր հղեց Ֆրանսիայի վարչապետ Ժ. Կլեմանսոյին Սիրիայի խնդիրը կարգավորելու մասին. Հուշագրում ասված էր, որ անհապաղ քայլեր պետք է ձեռնարկվեն բրիտանական զորքերը Սիրիայից և Կիլիկիայից էվակուացնելու համար, որը պետք է սկսվի նոյեմբերի 1–ից: Բրիտանական կայազորները Սիրիայում Սայքս–Պիկոյի սահմանած գծից արևմուտք և Կիլիկիայում պետք է փոխարինվեն ֆրանսիական զինված ուժերով, իսկ Դամասկոսի, Հոմսի, Համայի և Հալեպի կայազորները՝ արաբական ուժերով:

Ֆրանսիային լրիվ չէր բավարարում այդ հուշագիրը, հատկապես նրա այն մասը, որ արևելյան գոտին՝ Դամասկոսից Հալեպ ընկած տարածքը, մնալու էր արաբների տիրապետության տակ: Ֆրանսիան, ինչպես բազմիցս նշել ենք, ձգտում էր օկուպացնել ամբողջ Սիրիան: Այդուհանդերձ, նա համաձայնվեց վերցնել այն, ինչ իրեն տալիս էին:

1919 թ. սեպտեմբերի 13–ին Անգլիայի և Ֆրանսիայի միջև ձեռք բերված համաձայնությունը Արևմտյան Սիրիայում և Կիլիկիայում գտնվող բրիտանական զորքերը ֆրանսիական զորքերով փոխարինելու վերաբերյալ իսկական իմպերիալիստական գործարք էր, որը դրեց ֆրանսիական զորքերի կողմից Սիրիան օկուպացնելու սկիզբը: Ֆրանսիական զորքերը Արևմտյան Սիրիայի գրավումն ավարտեցին 1919 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին: Այստեղ կենտրոնացվեց մոտ 70 հազ ֆրանսիական զինվոր՝ գեներալ Գուրոյի հրամանատարությամբ, որը ստանձնեց նաև Սիրիայում Ֆրանսիայի գլխավոր կոմիսարի պաշտոնը:

Դա ազդանշան հանդիսացավ ամբողջ Սիրիայում հակաիմպերիալիստական պայքարի ծավալման համար: Պայքարի հիմնական շարժիչ ուժերն էին գյուղացիությունը, ոչ մեծաքանակ և երիտասարդ բանվոր դասակարգը, ինչպես նաև արհեստավորները, առևտրականները, մտավորականությունը և ուսանողությունը: Ազգային–ազատագրական շարժման ղեկավարությունը գտնվում էր սիրիական երիտասարդ ազգային բուրժուազիայի և հայրենասիրաբար տրամադրված ֆեոդալների ձեռքում:

Պետք է նշել, որ հակաիմպերիալիստական պայքարը սկսվել էր մինչև Սիրիայի արևմտյան շրջանները ֆրանսիացիների կողմից գրավելը: 1919 թ. փետրվարին ապստամբեցին Արևելյան լեգեոնի արաբ զինվորները, մարտին ապստամբություն բռնկվեց Հալեպում և նրա շրջակայքում: Նույն թվականի մայիսին Լաթաքիայի շրջանում սկսվեց ալա-

վիների ապստամբությունը Սալիհի իբն Ալիի գլխավորությամբ, որը տևեց մոտ երեք տարի: Ուշադրության են արժանի արաբների ապստամբությունը Ջաբալ Ամալում Սահմուդ Ֆաուրի ղեկավարությամբ, պարտիզանական ջոկատների հարձակումները ֆրանսիական կայազորների վրա Իբրահիմ Հանանոյի գլխավորությամբ և այլն:

1919 թ. նոյեմբերից հետո պայքարը, ինչպես նշվեց, նոր թափ ստացավ: Սիրիական գլխավոր կոնգրեսը 1919 թ. դիմեց ողջ սիրիական ժողովրդին զավթիչներին ամենալուրջ դիմադրությունը ցույց տալու կոչով: Ստեղծվեց Ազգային պաշտպանության ժողովրդական խորհուրդը, որն իր մասնաճյուղերն ուներ Սիրիայի համարյա բոլոր քաղաքներում և շրջաններում: Նա կամավորներից պարտիզանական ջոկատներ էր կազմակերպում և ուղարկում շրջանները, դրամ ու զենք հայթայթում և այլն: Խորհուրդը 1919 թ. նոյեմբերի 18–ին որոշեց, որ յուրաքանչյուր սիրիացի պարտավոր է իր ունեցվածքի երկու տոկոսը հատկացնել հայրենիքի պաշտպանության ֆոնդին: Սիրիական կոնգրեսը արաբ ազգը հայտարարեց «օրինակ պաշտպանության վիճակում», իսկ սիրիական կառավարությունը 1919 թ. դեկտեմբերի 21–ին ընդունեց որոշում ընդհանուր զինապարտության մասին, որով զորակոչման էին ենթարկում 20–40 տարեկան բոլոր քաղաքացիները: Դրանով դրվում էին ազգային բանակի հիմքերը:

1919 թ. խոշոր ճակատամարտ տեղի ունեցավ ֆրանսիական զինված ուժերի և սիրիացիների միջև Լաթաքիայում: Հիշատակության են արժանի սիրիական պարտիզանական խմբերի հարձակումները Ռայյակ–Հալեպ երկաթուղագծի վրա, մարտերը Տարտուսի մոտ, Հոմս–Տրիպոլի բարձրավանդակի շրջանում, Ալեքսանդրետ քաղաքում և նրա շրջակայքում: 1920 թ. հունվարին ֆրանսիական մի զորախումբ գլխովին ջախջախվեց ալ–Հուլա լճի մոտ գտնվող ալ–Ջադիդա գյուղում:

Ամբողջ Սիրիան 1919–1920 թթ. ոտքի էր կանգնել և պայքարի դրոշ բարձրացրել ֆրանսիական օկուպանտների դեմ, որոնց ոտքի տակ հողն այրվում էր:

6. Քեմալականների կոչերն արաբներին և Սիրիայում ստեղծված իրադրությունից օգտվելու նրանց փորձերի ձախողումը

Թուրքիան և նրա քեմալական ղեկավարությունն ակնդետ հետևում էին Սիրիայի վրա Ֆրանսիայի տիրապետությունը հաստատե-

լու քաղաքականությանը և Սիրիայում հակաիմպերիալիստական պայքարի ծավալմանը: Սիրիայում ստեղծված ծանր կացությունից փորձեցին օգտվել Մուստաֆա Քեմալը և նրա զինակիցները: Չմոռանանք, որ այդ ժամանակ ընդամենը մեկ տարի էր անցել Օսմանյան կայսրության կործանումից և օսմանյան չորսհարուրամյա լծից արաբների ազատագրումից հետո: Սակայն Թուրքիայում դեռևս չէին մոռացել պատմական այդ անցյալը և չէին հաշտվել արաբական երկրները, այդ թվում և Սիրիան կորցնելու մտքի հետ: Ինչպես վկայում են որոշ փաստեր, թուրքական որոշ ուժեր հարմար առիթի էին սպասում իրենց կրկին հիշեցնելու և այս կամ այն կերպ իրենց տիրապետությունը արաբական աշխարհի վրա վերականգնելու համար: Քեմալը և նրա համախոհները դեռևս չէին հրաժարվել թուրքական մեծապետական իմպերիալիստական պլաններից և փայփայում էին Օսմանյան կայսրության սահմանները վերականգնելու ցնորամիտ ծրագրերը: Այդ ծրագրերի մեջ նրանք առանձնահատուկ տեղ էին հատկացրել Անդրկովկասի, առաջին հերթին նորանկախ Հայաստանի, և Արաբական Արևելքի երկրների, մասնավորապես Սիրիայի և Իրաքի գրավմանը:

Քեմալական գործակալները վխտում էին Սիրիայում, հատկապես Թուրքիային սահմանակից Հյուսիսային Սիրիայում և նրա կենտրոնը հանդիսացող Հալեպում ու նրա շրջակայքում, Դամասկոսում և այլ վայրերում, գրգռում տեղական բնակչությանն ընդդեմ ֆրանսիացիների և անգլիացիների, քարոզում արաբների և թուրքերի միավորման իրենց վաղուց վարկաբեկած գաղափարները:

Հալեպի նահանգապետ Ջաֆար ալ–Ասկարին և մի շարք այլ գործիչներ, ինչպես Յասին ալ–Հաշիմին և այլք, կուլ տվեցին քեմալական այդ խայծը և կապեր հաստատելով քեմալականների հետ՝ բանակցությունների մեջ մտան նրանց հետ:

Թուրքական գործակալների և քեմալական քարոզների համար այդ ժամանակ ստեղծվել էր որոշ նպաստավոր հող, քանի որ արաբների մեջ խոր զայրույթ էր կուտակվել Անգլիայի և Ֆրանսիայի դեմ, որոնք խաբել էին նրանց անկախության հարցում և փորձում էին իրենց տիրապետությունը հաստատել արաբական երկրների վրա: Հուսախաբ որոշ արաբ գործիչներ հուսահատությունից և անզորությունից երբեմն դիմում էին չմտածված և անխոհեմ քայլերի՝ ցանկանալով ամեն ինչ անել, միայն թե պատժվեն իրենց եվրոպական «բարեկամները»: Քեմալականները, չարաշահելով արաբների ազատագրական այդ զգացմունքները,

ծպտվելով արաբների «բարեկամների» քղամիդով, փորձեցին Ֆրանսիայի և Անգլիայի դեմ ուղղված նրանց դժգոհությունն օգտագործել իրենց քաղաքական նպատակների և շահերի համար: Դրա մասին են վկայում այն կոչերը, որ քեմալականները լայնորեն տարածում էին Սիրիայում:

Այդ կոչերի մեջ քննարկվող հարցի տեսանկյունից առավել ուշադրության են արժանի քեմալականների երկու կոչերը: Առաջինը, որը տարածվեց Հալեպում 1919 թ. հոկտեմբերի 10–ին, կոչվում էր «Մուստաֆա Քեմալի կոչը սիրիացիներին»[24]: Այդ կոչով Մուստաֆա Քեմալը, որը գլխավորում էր թուրքերի շարժումն ընդդեմ Անտանտի երկրների և պայքարում էր Թուրքիայի ամբողջականության և վերջնական կործանումից փրկելու համար, առաջարկում էր արաբներին միավորվել թուրքերի հետ և համատեղ պայքարել եվրոպական պետությունների դեմ: Քեմալը նշում էր, թե ինչ հիմքի վրա պետք է իրականացվի այդ միավորումը: Նա առաջարկում էր նրանց միավորվել կրոնի՝ իսլամի հիմքի վրա: Եվ Քեմալը դիմում է արաբներին որպես նույն կրոնին պատկանող մարդ՝ նշելով, որ «որպես կրոնակից՝ ես աղաչում եմ ձեզ ուշադրություն չդարձնել այն տարաձայնությունների վրա, որ ծագել էին մեր միջև, և որոնք բաժանեցին մեզ»: Նա առաջարկում էր վերջ տալ թյուրիմացություններին և զենքն ուղղել դավաճան կուսակցությունների դեմ, որոնք ցանկանում են մեր երկիրը բաժանել: «Եթե դուք չլսեք,— ընդգծում է Քեմալը,— ապա կափսոսաք: Հույս մի՛ դրեք մեր կրոնի անհավատ թշնամիների խոստումների վրա»: Վերջում Մուստաֆա Քեմալը սիրիացիներին կոչ էր անում. «Եկեք ապրենք որպես կրոնակից եղբայրներ»:

Քեմալի այդ կոչն ապշեցնում է պատմական փաստերի և իրողությունների իր նպատակաուղղված խեղաթյուրումով: Դժվար թե ճիշտ կլիներ ենթադրել, թե Քեմալը և նրա համախոհները անգիտակ էին պատմությանը, այդ թվում և արաբա–թուրքական հարաբերությունների պատմությանը, որն այնքան հարուստ է թուրքական սուլթանների ու փաշաների կողմից կիրառված դաժանություններով, երբ բազմիցս հեղվել է արաբների արյունը, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երիտթուրքերի կողմից Դամասկոսում, Բեյրութում, Ալեյում կախաղան հանվեց արաբական ազատագրական շարժման ղեկավարության սերուցքը: Կրկնում ենք, դժվար թե Մուստաֆա Քեմալը՝ ապա-

24 Sե'u Documents on British Foreign Policy 1919–1939. London, 1952, 1st series, v IV p 478

գա Աթաթուրքը՝ թուրքերի հայրը, չիմանար այդ արյունալի պատմությունը, որը վերջ ի վերջո հանգեցրեց արաբների ազատագրական պայքարին ընդդեմ օսմանյան տիրապետության, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ վերածվեց **արաբական մեծ ապստամբության:** Ուրեմն մեզ մնում է հաստատել, որ Քեմալը և նրա գաղափարակիցները դիտավորյալ կերպով անտեսում և խեղաթյուրում էին արաբների հակաօսմանյան պայքարի օբյեկտիվ պատճառները: Այլ կերպ ասած, նրանք չէին ընդունում այդ պայքարի օրինականությունը: Մուստաֆա Քեմալն այդ պայքարը և այն, որ արաբներն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ապստամբեցին և իրենց զենքն ուղղեցին օսմանյան լծի դեմ, համարում է «տարածայնության արդյունք» և ծիծաղելիորեն անվանում «թյուրիմացություն»: Դարձյալ հեռանալով արաբա–թուրքական հակամարտության օբյեկտիվ քաղաքական, ազգային, լեզվամշակութային, տնտեսական և այլ պատճառներն ընդունելուց՝ Քեմալը մեղադրում է արաբական կուսակցություններին՝ նրանց գործունեությունը համարելով դավաճանական: Կորցնելով իրատեսությունը՝ նա 1919 թ.՝ Օսմանյան կայսրության փլուզումից մեկ տարի անց, դեռ շարունակում է արաբական երկրները համարել որպես Թուրքիայի մի մասը: Անհրաժեշտ ենք համարում կրկին մեջբերել նրա կոչի այդ հատվածը, որտեղ նոր Թուրքիայի առաջնորդը, դիմելով սիրիացիներին և նրանց միջոցով՝ բոլոր արաբներին. ասում է. «Եկեք մենք բոլորս մեր զենքերն ուղղենք **դավաճան կուսակցությունների դեմ, որոնք ուզում են մեր երկիրը բաժանել**»:

Քեմալն իր կոչում որպես թուրքերի հետ սիրիացիների և արաբների միավորման հիմք առաջարկում էր կրոնը՝ իսլամը, և դրանով փորձում հակաիմպերիալիստական պայքարին տալ կրոնական երանգ: Քեմալի առաջարկը՝ միավորվել և ապրել որպես կրոնակից եղբայրներ, ժամանակավրեպ էր: Ո՞վ էր նրանց խանգարում չորս հարյուր տարի ապրել որպես այդպիսին, մանավանդ, որ թուրքերն ընդունել էին արաբների ստեղծած կրոնը՝ իսլամը, սակայն, մեղմ ասած, շատ անհարգալից գտնվեցին իրենց կրոն պարգևած ուսուցիչների նկատմամբ: Թուրքերն արաբների համար ստեղծել էին այնպիսի դաժան պայմաններ, որ արաբները թուրքական վարչակարգը անվանեցին զուլում:

Մյուս կողմից՝ ժողովուրդների միավորման հիմքում դնել կրոնական պատկանելությունը, ինչպես առաջարկում էր Քեմալը, հետադիմական գաղափար էր, որը նշանակում էր դարձ դեպի միջնադարյան խա-

վարամոլությունը: Եվ նման առաջարկ արվում էր XX դարում, երբ ժողովուրդները դարձել էին ավելի լուսավորյալ. և այս կամ այն միավորումը տեղի էր ունենում ոչ թե ըստ կրոնական պատկանելության, այլ ըստ այդ ժողովուրդների առջև կանգած քաղաքական, սոցիալ–տնտեսական և ազգային խնդիրների:

Այդ նույն ժամանակ հրապարակված և տարածված Քեմալի երկրորդ կոչում հետագա զարգացում ստացան առաջին կոչի մեջ առաջ քաշված դրույթները: Դարձյալ անդրադառնալով արաբական երկրները, որը նա անվանում է «մասեր», Թուրքիային միավորելու հարցին՝ Մուստաֆա Քեմալը գրում է. «Մենք ցանկանում ենք, հակառակ Վիլսոնի սկզբունքների, միացնել այն մասերը (իմա՝ տարածքները — Ն. Հ.), որոնք պատկանում են Թուրքիային»[25]: Ամեն ինչ ասված է շատ պարզ ու հստակ: Քեմալը շարունակում է արաբական երկրները համարել Թուրքիային պատկանող մասեր և ծգտում դրանք միավորել Թուրքիային, այսինքն՝ վերականգնել թուրքական տիրապետությունը նրանց վրա. Ինչպես արդեն նշել ենք, ԱՄՆ–ի պրեզիդենտ Վիլսոնը 14 կետերից բաղկացած իր ծրագրի 12–րդ կետում նշում էր այն մասին, որ Օսմանյան կայսրության նախկին տիրույթները, այդ թվում և Սիրիան ու արաբական մյուս երկրները, պետք է ինքնորոշման իրավունք ստանան և այլևս չթողնվեն թուրքական տիրապետության տակ: Քեմալականներն այժմ հանդես էին գալիս դրա դեմ՝ հայտարարելով, որ իրենք ուզում են, հակառակ Վիլսոնի սկզբունքների, Թուրքիային միացնել նրան պատկանող արաբական երկրները: Նրանք իրենց կոչերում դրանք նույնիսկ երկիր չեն համարում, այլ դիտում են որպես Թուրքիային պատկանող մասեր:

Քեմալը և նրա հետևորդները, ինչքան էլ որ փորձեցին գունազարդվել և արաբների բարեկամների դիմակ հագնել, այդուհանդերձ, չկարողացան թաքցնել իրենց զավթողական ծրագրերը և արաբական երկրներում թուրքական տիրապետությունը վերահաստատելու իրենց ծգտումները: Դա եղավ գլխավոր պատճառը, որ թուրքական պլանները ոչ մի դրական արձագանք չգտան արաբական երկրներում և ձախողվեցին: Դրան, անշուշտ, նպաստեց նաև այն հանգամանքը, որ արաբների հիշողություններում դեռ թարմ էին թուրքական բռնության, սուլթանական զուլումի սարսափները, և շատ ուժեղ էին հակաթուրքական տրամադրությունները:

25 Նույն տեղում. էջ 568

Իր կարևոր նշանակությունն ունեցավ նաև այն հանգամանքը, որ արաբական ազգային գործիչները և առաջին հերթին Հիջազի թագավոր Հուսեյնը խիստ բացասական դիրք գրավեցին քեմալականների հետ կապեր հաստատելու արաբական առանձին գործիչների, հատկապես Հալեպի նահանգապետ Ջաֆար ալ–Ասկարիի փորձերի նկատմամբ և դատապարտեցին նրա ինքնագլուխ գործունեությունը: Այդ մասին է վկայում Հուսեյնի 1919 թ. հեռագիրը իր որդուն՝ Ֆեյսալին, որտեղ ասված է. «Հաստատ է, որ մարդիկ Հալեպից հյուսիս–արևմուտք բանակցություններ են վարում Քեմալ փաշայի հետ: Դու պետք է հասկանաս, թե ինչ կարող է լինել դրա հետևանքը»: Նա հրամայում է Ֆեյսալին հայտնել բոլոր նրանց, ում վերաբերում է, չմոռանալ իր՝ Հուսեյնի խորհուրդները և անտեսելով իր ահազանգները՝ սխալներ չգործել: Հուսեյնը նշում է, որ ինքը մի քանի անգամ նախազգուշացրել է Ջաֆար Ասկարիին:

Հուսեյնը, Ֆեյսալը և նրանց միացած արաբական ողջ ավագանին շատ լավ էին հասկանում, որ Քեմալի իշխանության հաստատումը Սիրիայի և արաբական մյուս երկրների վրա կնշանակեր դուռը փակել նրանց անկախության առջև:

Այդ բոլորը հանգեցրեց նրան, որ քեմալական քարոզչությունը ազդեցություն չունեցավ Սիրիայի վրա: Ազգային–ազատագրական պայքարը Սիրիայում ուներ իր օբյեկտիվ պատճառները և ծավալվում էր իր սեփական հիմքի վրա՝ անկախ քեմալականների գործունեությունից: Դեռ ավելին՝ այդ շարժումը վերջին հաշվով իր մի ծայրով ուղղված էր նաև քեմալականների զավթողական նկրտումների դեմ:

7. Սիրիայի թագավորության հռչակումը: Ֆեյսալը Սիրիայի թագավոր

Ֆրանսիայի և Անգլիայի գրաված դիրքը Սիրիայի ազգային խնդիրների հանդեպ երկընտրանքի առջև կանգնեցրեց սիրիական ղեկավարությանը և ազգային հայրենասիրական ուժերին: Նրանք բաժանվեցին երկու թևերի. մի թևը, որը բաղկացած էր սիրիական երիտասարդ ազգային բուրժուազիայի և մտավորականության ներկայացուցիչներից, ավելի հետևողական ու արմատական էր և կողմնակից էր հակաիմպերիալիստական պայքարի ոչ միայն շարունակմանը, այլև հետագա ուժեղացմանը: Իսկ մյուս թևը չափավորական էր և հակված էր ֆրանսիացիների հետ համաձայնության գալու ուղիով հասնել Սիրիայի առջև

կանգնած հարցերի լուծմանը: Այդ թևն արտահայտում էր Սիրիայի ֆեոդալական–ցեղային վերնախավի շահերը, որի ճանաչված ղեկավարն էր էմիր Ֆեյսալը:

Իրադրությունը պահանջում էր ակտիվ գործողություններ, և Ֆեյսալը 1919 թ. վերջերին մեկնեց Եվրոպա: Նա եղավ Լոնդոնում և հանդիպումներ ունեցավ բրիտանական արտաքին գործերի նախարար լորդ Քերզոնի հետ: Այդ հանդիպումների ժամանակ պարզվեց, որ Անգլիան հրաժարվում էր պաշտպանել Սիրիայի պահանջները, և Ֆեյսալին խորհուրդ տրվեց մեկնել Փարիզ և համաձայնության գալ ֆրանսիական կառավարության հետ հարցերը լուծելու համար:

Ստեղծված վիճակում Ֆեյսալը կարող էր կա՛մ վերադառնալ Դամասկոս, միանալ հայրենասիրական ուժերին և կազմակերպել պայքարը Սիրիայի վրա տիրապետություն հաստատելու ֆրանսիական գաղութային ձգտումներ դեմ, կա՛մ, ենթարկվելով անգլիական ճնշմանը, բանակցությունների համար մեկնել Փարիզ: Ֆեյսալը ընտրեց երկրորդ ուղին և 1919 թ. հոկտեմբերին մեկնեց Փարիզ՝ չունենալով իր թիկունքում որևէ աջակցություն: Դա իր կնիքը դրեց բանակցությունների բնույթի և ընթացքի վրա:

1920 թ. հունվարի 6–ին Ֆրանսիայի վարչապետ Ժ. Կլեմանսոն և էմիր Ֆեյսալը ստորագրեցին համաձայնագիր, որը ստացավ կապիտուլյանտական անվանումը: Հետաքրքիր է, որ Ֆեյսալին ուղեկցող նրա երկու խորհրդականները՝ Ահմադ Կադրին և Աունի Աբդ ալ–Հադին, խնդրում էին Ֆեյսալին չստորագրել այդ համաձայնագիրը՝ համոզված լինելով, որ սիրիական ժողովուրդը չի ընդունի այն: Բայց էմիրը չանսաց նրանց ծայնին և իր ստորագրությունը դրեց ֆրանսիական կողմի պատրաստած համաձայնագրի տակ:

Այդ համաձայնագրով ֆրանսիական կառավարությունն առաջարկում էր օգնություն ցույց տալ Սիրիային և «երաշխավորում էր նրա անկախությունը ամեն տեսակ ագրեսիաներից»: Ֆեյսալը ճանաչում էր Լիբանանի անկախությունը ֆրանսիական մանդատի ներքո և համաձայնվում, որ Սիրիայի Ջաբալ Դրուզ շրջանը ստանա ինքնավար իրավունքներ: Ֆեյսալը պարտավորվում էր միայն ֆրանսիական կառավարությունից խնդրել անհրաժեշտ խորհրդականներ, հրահանգիչներ և տեխնիկական մասնագետներ Սիրիայում քաղաքական և զինվորական վարչությունը կազմակերպելու համար: Ֆրանսիան համաձայնվում էր կազմակերպել սիրիական ժանդարմերիան, ոստիկանությունը և բանա-

կը: Մի կարևոր հարցում ևս Ֆեյսալը զիջեց: Նա համաձայնվեց, որ Սիրիային արտասահմանյան երկրներում ներկայացնի Ֆրանսիան:

Ֆրանսիան ծնականորեն ճանաչում էր Սիրիայի անկախությունը արևելյան գոտում, բայց իրավունք ստացավ հանդես գալ այդ «անկախության» պաշտպանի և երաշխավորի դերում:

Ինչպես տեսնում ենք, Ֆեյսալը, ստորագրելով այդ համաձայնագիրը, բոլոր սկզբունքային հարցերում զիջումներ կատարեց Ֆրանսիային: Համաձայնվելով ֆրանսիական պրոտեկտորատի հաստատմանը սիրիական պետության վրա և մանդատի հաստատմանը արևմտյան շրջաններում՝ նա նահանջեց Սիրիայի անկախության վերաբերյալ սիրիական հայրենասերների և հենց իր՝ Ֆեյսալի կողմից նախկինում պաշտպանած սկզբունքներից:

Ֆեյսալը Սիրիա վերադարձավ 1920 թ. հունվարի 13–ին. Այստեղ նրան խորը հիասթափություն էր սպասում: Սիրիացիները նրան ընդունեցին վերին աստիճանի զուսպ և սառը, իսկ որոշ շրջաններ՝ անգամ թշնամաբար: Մինչև Ֆեյսալի վերադարձը սիրիացիներին արդեն հայտնի էին դարձել Կլեմանսո–Ֆեյսալ համաձայնագրի պայմանները, որոնք սիրիական ազգային–քաղաքական գործիչների ճնշող մեծամասնության համար անընդունելի էին: Համաձայնագրի նկատմամբ խիստ բացասական դիրք գրավեց ազգային շարժման ավելի արմատական և հետևողական թևը: Անգամ չափավոր թևը չհամարձակվեց հրապարակավ հանդես գալ ի պաշտպանություն նրա: Ֆեյսալը բոլոր կողմերից քննադատություն էր լսում իր հասցեին: Անգամ նրա հայրը՝ Հիջազի թագավոր Հուսեյնը, հավանության չարժանացրեց իր որդու քայլերը Փարիզում՝ գտնելով, որ նա «Մեքքային անհայտ մի համաձայնագրով իրեն ու իր երկիրը վասալական կախման մեջ է դրել»:

Ֆեյսալը, 1920 թ. հունվարի 22–ին հանդես գալով Դամասկոսի Նադի ալ–արաբի՝ Արաբական ակումբում, փորձեց արդարանալ՝ հայտարարելով, որ ինքը նույն Ֆեյսալն է, որ ինքը չի փոխվել, և իր գերագույն նպատակն է ոչ միայն Սիրիայի, այլև բոլոր արաբական երկրների անկախության նվաճումը: Վերջում նա կոչ արեց, որ իրեն հավատան և վստահեն: Բայց դա սիրիացիներին չհանդարտեցրեց: Նրանք կազմակերպում էին ցույցեր՝ պահանջելով չեղյալ հայտարարել Կլեմանսո–Ֆեյսալ համաձայնագիրը: Ֆեյսալին իրենց դժգոհությունն էին հայտնում նաև այն բազմաթիվ պատվիրակությունները, որ այցելում էին նրան:

Քանի որ 1919 թ. դեկտեմբերին Սիրիական ազգային կոնգրեսը ցրվել էր և նիստեր չէր գումարում, Ֆեյսալը փորձեց օգտվել դրանից և համաձայնագրին հավանություն տալու և վավերացնելու հարցը դնել Երիտասարդ Սիրիա ազդեցիկ կազմակերպության գործադիր կոմիտեի առջև: Կոմիտեի փակ նիստը, հանգամանորեն քննարկելով այդ համաձայնագիրը, միաձայն որոշեց մերժել այն: Ֆեյսալը հայտարարեց, որ մերժումը նշանակում է պատերազմ Ֆրանսիայի հետ, որին ի պատասխան կոմիտեի անդամները հայտարարեցին. «Մենք պատրաստ ենք միաժամանակ պատերազմ հայտարարել Անգլիային և Ֆրանսիային, և ինչ լինելու է, թող լինի»:

Համաձայնագրի վավերացման դեմ հանդես եկան նաև սիրիական մյուս կազմակերպությունները և ականավոր ազգային քաղաքական գործիչները: Այսպիսով՝ 1920 թ. հունվարի 6–ի Ֆրանս–սիրիական համաձայնագիրը չվավերացվեց և մերժվեց:

Այդ քայլից հետո Սիրիայում, ինչպես նաև Ֆրանսիայի ու Անգլիայի հետ նրա փոխհարաբերություններում ստեղծվեց նոր իրադրություն. Պահանջվում էին նոր որոշումներ և նոր քաղաքականության որդեգրում: Եվ Սիրիայի ազգային–հայրենասիրական ուժերը գտնվեցին խնդրի բարձրության վրա, չընկրկեցին իրենց սպառող բարդությունների, անգամ վտանգների ու սպառնալիքների առջև:

Սիրիայի առջև կանգնած բախտորոշ հիմնախնդիրներին համարժեք պատասխան գտնելու համար անհրաժեշտ եղավ Սիրիական ազգային կոնգրեսի հրավիրումը:

Սիրիական ազգային կոնգրեսը բացվեց 1920 թ. մարտի 6–ին Դամասկոսում՝ Հաշիմ ալ–Աթասիի նախագահությամբ: Նրա առաջին նիստում հանդես եկավ էմիր Ֆեյսալը, որը պահանջեց լուծել Սիրիայի ապագա ազգային վարչակարգի և սահմանադրության խնդիրը: Այնուհետև հանդես եկավ Քամիլ ալ–Կասիբը, որը Ազգային պաշտպանության խորհրդի անունից կոնգրեսին առաջարկեց Սիրիայում հաստատել պառլամենտական, սահմանադրական, ապակենտրոնացված վարչակարգ, իսկ Ֆեյսալին հռչակել ամբողջ Սիրիայի թագավոր:

Հարցը նախապատրաստելու, էմիր Ֆեյսալի ճառին և Ազգային պաշտպանության խորհրդի առաջարկությանը պատասխանելու համար Սիրիական կոնգրեսը որոշեց ստեղծել 9 հոգուց բաղկացած հանձնաժողով: Վերջինս հարցը հանգամանորեն ուսումնասիրելուց հետո, մարտի 7–ին ընդունեց որոշում՝ առաջարկել Սիրիական կոնգրեսին հռ-

չակել Սիրիայի միասնությունը և անկախությունը, իսկ Ֆեյսալին հաստատել որպես Սիրիայի թագավոր:

Կոնգրեսը հավանություն տվեց հանձնաժողովի առաջարկությանը

1920 թ. մարտի 8–ին՝ ցերեկվա ժ. 3–ին, Դամասկոսի քաղաքային սրահի պատշգամբից հայտարարվեց Սիրիական ազգային կոնգրեսի որոշումը սիրիական միասնական անկախ պետության ստեղծելու և Ֆեյսալին նրա թագավոր հռչակելու մասին: Կոնգրեսի ընդունված բանաձևում ասված էր. «Մենք՝ կոնգրեսի անդամներս, որպես սիրիական ժողովրդի ներկայացուցիչներ, միահամուռ կերպով հռչակում ենք մեր հայրենիքի՝ Սիրիայի անկախությունն իր բնական սահմաններում: Եվ մենք ընտրել ենք նորին գերազանցություն Ֆեյսալին՝ նորին մեծություն Հուսեյն թագավորի որդուն՝ որպես Սիրիայի սահմանադրական թագավոր՝ Նորին Մեծություն Ֆեյսալ Առաջին տիտղոսով»: Սիրիան պաշտոնապես կոչվելու էր «Սիրիական Միասնական Թագավորություն»: Նրա կազմի մեջ մտնելու էին բուն Սիրիան, Պաղեստինը, Հորդանանը և Լիբանանը: Պաղեստինը պետք է ազատվեր սիոնիստների ազդեցությունից, և այնտեղ չպետք է ստեղծվեր հրեական տուն: Ինչ վերաբերում է Լիբանանին, ապա սիրիական միասնական պետության շրջանակներում ճանաչվում էին նրա ինքնավար իրավունքները: Կոնգրեսը հայտարարեց օկուպացիոն ռեժիմի վերացում բոլոր երեք գոտիներում: Ֆեյսալ թագավորի անունը մտցվեց խուտբայում, և ամեն ուրբաթօրյա աղոթքում բոլոր մզկիթներում հիշվելու էր նրա անունը:

Հաջորդ օրը՝ 1920 թ. մարտի 9–ին, Ալի Ռիզա ալ–Ռիկաբին կազմեց սիրիական թագավորության առաջին կառավարությունը, որը բաղկացած էր ներքին գործերի, արտաքին գործերի, պաշտպանության, առևտրի և գյուղատնտեսության, արդարադատության, ֆինանսների և կրթության նախարարություններից: Հանդես գալով կոնգրեսի առջև՝ Ալի Ռիզա ալ–Ռիկաբին շարադրեց իր կառավարության գլխավոր խնդիրները ներքին և արտաքին քաղաքականության բնագավառներում: Նա հայտարարեց, որ իր կառավարության առջև ծառացած ամենակարևոր խնդիրը Սիրիայի անկախության պահպանումն է: Նա միաժամանակ նշեց, որ անհրաժեշտ քայլեր են ձեռնարկվելու երկրի տնտեսության զարգացման ուղղությամբ, բոլորն օրենքի առաջ հավասար են լինելու, երկրում խստիվ պահպանվելու է կարգ ու կանոնը: Կառավարության որոշմամբ ստեղծվեց հատուկ կոմիտե Սիրիայի սահմանադրությունը մշակելու համար:

Սիրիայի ժողովուրդը մեծ գոհունակությամբ ընդունեց Սիրիական ազգային կոնգրեսի մարտի 8–ի որոշումները և իր պատրաստակամությունը հայտնեց նրանց կատարման համար: Շատերին այդ պահը թվում էր շրջադարձային Սիրիայի բազմադարյան պատմության մեջ:

Իսկ ինչպիսի՞ն էր Ֆրանսիայի և Անգլիայի դիրքորոշումը:

Սիրիայի վարչապետ ալ–Ռիկաբին Սիրիական ազգային կոնգրեսի որոշումների մասին անհապաղ տեղյակ պահեց Ֆրանսիայի և Անգլիայի կառավարություններին և նրանց ուղարկեց այդ որոշումների պատճենները՝ հույս հայտնելով, որ նրանք կճանաչեն Սիրիայի թագավորությունը, և իրենց միջև կհաստատվեն բարեկամական հարաբերություններ: Իսկ Ֆեյսալ թագավորն այդ մասին անձնական նամակով դիմեց ԱՄՆ–ի պրեզիդենտ Վիլսոնին, ինչպես նաև գեներալներ Ալլենբիին և Գուրոյին:

Ֆրանսիան և Անգլիան խիստ բացասական դիրք գրավեցին Սիրիայում տեղի ունեցած փոփոխությունների հարցում: Ֆրանսիական կառավարությունը լսել անգամ չէր ուզում սիրիական թագավորության և Ֆեյսալին թագավոր ճանաչելու մասին: Նոր վարչապետ Միլյերանը դեռևս մինչ այդ՝ 1920 թ. փետրվարի 11–ին, ֆրանսիական պառլամենտում հայտարարել էր, որ պատրաստվում է գրավել Դամասկոսը և Հալեպը, պահանջելով Սիրիա ուղարկել 30–հազարանոց մի նոր կորպուս: Այժմ նա իրազեկ պահեց Անգլիայի կառավարությանը, որ եթե նա Ֆեյսալին ճանաչի որպես Սիրիայի թագավոր, ապա Ֆրանսիան դա կհամարի ոչ բարեկամական ակտ իր նկատմամբ:

Անգլիան ինքը սաստիկ դժգոհ էր Սիրիական կոնգրեսի որոշումներից: Արտաքին գործերի նախարար լորդ Քերզոնը պաշտոնապես տեղեկացրեց սիրիական կողմին, որ Անգլիան չի ճանաչում Սիրիական ազգային կոնգրեսի որոշումները՝ հատուկ ընդգծելով, որ հրաժարվում է Ֆեյսալին ճանաչել որպես թագավոր և նրան շարունակում է դիտել որպես «Հաշիմյան էմիր» և արաբական ժամանակավոր կառավարության ղեկավար՝ «թշնամու օկուպացված տարածքների» հրամանատար գեներալ Ալլենբիի բարձրագույն իշխանության ներքո:

Ահա այսպիսին էր նրանց դիրքորոշումը, երբ Ֆրանսիայի վարչապետ Միլյերանը և Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջը մեկնեցին իտալական Սան–Ռեմո քաղաքը, որտեղ 1920 թ. ապրիլի 20–25–ը տեղի ունեցան դաշնակիցների գերագույն խորհրդի նիստերը: Այստեղ քննարկման ենթակա ամենակարևոր հարցը արաբական երկրների վրա Ազգե-

րի լիգայի մանդատի բաժանման հարցն էր: 1920 թ. ապրիլի 25–ին գերագույն խորհուրդը որոշեց Սիրիայի և Լիբանանի մանդատը տալ Ֆրանսիային, իսկ Պաղեստինի և Միջագետքի մանդատը՝ Անգլիային:

Այսպիսով՝ շղթան փակվեց, և Ֆրանսիայի ու Անգլիայի կողմից ամեն ինչ դրվեց իր տեղը: Ավարտվեց արաբների անկախության հարցում նրանց երկդիմի, խաբեության վրա հիմնված խաղը, և վրա հասավ ճշմարտության պահը:

1920 թ. ապրիլի 27–ին գեներալ Ալլենբին Սան–Ռեմոյում ընդունված որոշումների մասին պաշտոնապես տեղյակ պահեց Ֆեյսալին՝ հայտնելով նրան, որ Սիրիայի և Լիբանանի մանդատը տրվել է Ֆրանսիային, իսկ Պաղեստինի մանդատը՝ Անգլիային:

Դա խոր զայրույթ առաջացրեց Սիրիայում, և Սան–Ռեմոյի որոշումներին չենթարկվելը դարձավ տիրապետող տրամադրություն: Ալի ալ–Ռիկաբիի կառավարությունը, որը կողմնակից էր ավելի չափավոր քայլերի և խաղաղ գործողությունների, ընկավ:

8. Մայսալունի ճակատամարտը, Սիրիական թագավորության անկումը և Ֆեյսալի արտաքսումը

1920 թ. մայիսի 3–ին Ֆեյսալ թագավորը նոր կառավարության կազմելը հանձնարարեց Սիրիական ազգային կոնգրեսի նախագահ Հաշիմ ալ–Աթասիին: Նրա գլխավորած կառավարությունը կոչվեց Ազգային պաշտպանության կառավարություն: Մայիսի 8–ին սիրիական կոնգրեսի առջև կառավարական հայտարարությամբ հանդես եկավ նոր վարչապետը, որն իր կառավարության գլխավոր նպատակը համարեց պահպանել երկրի լրիվ անկախությունը՝ արտասահմանում իր սեփական ներկայացուցչությունն ունենալու իրավունքով, և տարածքային ամբողջականությունը՝ իր բնական սահմաններում: Նա հայտարարեց, որ իր կառավարությունը կընդդիմանա օտարերկրյա ամեն մի միջամտության, որը կարող է ոտնահարել Սիրիայի ինքնիշխանությունը: Կառավարությունը ելնում էր այն իրողությունից, որ ռազմական ընդհարումը Ֆրանսիայի հետ անխուսափելի է:

Ողջ ժողովուրդը ոտքի ելավ ի պաշտպանություն հայրենիքի: Դամասկոսում, Հալեպում և այլ վայրերում տեղի ունեցան հզոր ցույցեր, Սիրիայի արևմտյան շրջանում ակտիվացավ պարտիզանական պայքարը. Ժողովուրդը պահանջում էր կառավարությունից՝ կտրուկ միջոցների դի-

մել Սիրիայի պաշտպանությունն ամրապնդելու ուղղությամբ: Ի կատարումն այդ պահանջի՝ կառավարությունը որոշեց «անհապաղ ձեռնամուխ լինել ազգային բանակի կազմակերպմանը»: Հենվելով 1919 թ. դեկտեմբերին ընդունված զինապարտության մասին օրենքի վրա՝ Հաշիմ ալ–Աթասիի կառավարությունը սկսեց զորահավաք և ազգային բանակի զորամիավորումների կազմակերպում: Գտնվեցին աղբյուրներ բանակի ստեղծման համար ֆինանսական միջոցներ ապահովելու համար:

Ֆրանսիան ուշադրությամբ և ոչ առանց տագնապի հետևում էր իրադարձությունների զարգացմանը Սիրիայում և տենդորեն նախապատրաստվում նրա անկախությանը վերջ տալու և իր տիրապետությունը հաստատելու համար: Նա իր լավ սպառազինված բանակի զորամիավորումները կենտրոնացրեց Սիրիայի սահմանների վրա՝ պատրաստ զենքի ուժով ճնշելու սիրիացիների դիմադրությունը:

Ֆրանսիական կառավարությունը Սիրիային ներկայացրեց վերջնագրի բնույթ կրող հինգ կետից կազմված իր պահանջները, որը 1920 թ. հուլիսի 14–ին Ֆեյսալին հանձնեց գեներալ Գուրոն: Ֆրանսիական կառավարությունը պահանջում էր՝ ա. ճանաչել ֆրանսիական մանդատը, բ. ֆրանսիական իշխանությունների տնօրինությանը հանձնել Ռայակ–Հալեպ երկաթուղագիծը, Ռայակ, Բաալբեկ, Հոմս, Համա և Հալեպ կայարանները և գրավել Հալեպ քաղաքը, գ. չեղյալ հայտարարել ընդհանուր զինապարտության օրենքը, ցրել բանակը և թվական տեսակետից պահել այն մակարդակի վրա, որ կար մինչև 1919 թ. դեկտեմբերի 1–ը. դ. ֆրանսիական թղթադրամն ընդունել որպես սիրիական ազգային դրամ, և ե. պատժել բոլոր նրանց, ովքեր հակաֆրանսիական գործունեություն են ծավալում: Այս պայմաններն ընդունելու կամ մերժելու համար Գուրոն տվեց չորս օր՝ 1920 թ. հուլիսի 15–ի կեսգիշերից մինչև հուլիսի 18–ը:

Այդ պահին ի հայտ եկավ, որ Սիրիայի ղեկավարության և տարբեր քաղաքական ուժերի միջև չկա միասնական մոտեցում ֆրանսիական ուլտիմատումի հանդեպ: Չափավորների թևը գտնում էր, որ պետք է ընդունել վերջնագիրը: Այդ տրամադրություններն իրենց արտահայտությունը գտան կառավարության անդամների մեծամասնության և Ֆեյսալի դիրքորոշման մեջ: Իսկ Սիրիական գլխավոր կոնգրեսը և ժողովրդական մասսաները գտնում էին, որ ֆրանսիական պահանջները պետք է մերժել և պատրաստվել զինված դիմադրության: Կոնգրեսի անդամները կառավարությունից պահանջեցին պաշտպանել երկրի անկախությունը

մինչև վերջ՝ ընդգծելով, որ նրանք այդ հիման վրա են վստահություն հայտնել Հաշիմ ալ–Աթասիի կառավարությանը: Կոնգրեսը նաև որոշեց աշխատել մշտապես, առանց ընդմիջումների՝ կառավարության գործունեության վրա հսկողություն սահմանելու համար:

Կոնգրեսի անդամների վրա ճնշում գործադրելու նպատակով Ֆեյսալը նրանց իր մոտ հրավիրեց թեյասեղանի: Փորձելով համոզել նրանց՝ թագավորը նշում էր, որ Սիրիան ռազմական առումով թույլ է և չի կարող դիմադրել Ֆրանսիային: Կոնգրեսի անդամները չհամաձայնվեցին Ֆեյսալի պատճառաբանությունների հետ և վայելելով նրա տված թեյն ու Դամասկոսի հռչակավոր քաղցրավենիքը՝ հեռացան թագավորական պալատից՝ հայտարարելով, որ իրենք դեմ են մանդատի ընդունմանը և ֆրանսիական մյուս պահանջներին:

Ֆեյսալը և չափավորները ծնական բողոք հայտնելուց հետո արտահայտվեցին հօգուտ վերջնագրի ընդունման և նույնիսկ ծեռնմուխ եղան նրա առանձին կետերի կատարմանը. Ֆեյսալը ցրեց Սիրիական գլխավոր կոնգրեսը, ծեռնամուխ եղավ ազգային բանակի զինաթափմանը և զորացրմանը, անգամ սկսեց ճնշել ժողովրդական ելույթները:

Ֆեյսալը հուլիսի 18–ին տեղեկացրեց Գուրոյին, որ ինքը սկզբունքորեն ընդունում է ֆրանսիական վերջնագիրը, բայց խնդրեց նրա ժամկետը երկարաձգել մինչև հուլիսի 21–ը, որը Գուրոն բավարարեց:

Ֆեյսալի այդ կապիտուլյանտական քայլերը կրկին ոտքի հանեցին սիրիացիներին: Հուլիսի 20–ին հզոր ցույց տեղի ունեցավ Դամասկոսում՝ պահանջելով զինված դիմադրություն կազմակերպել ֆրանսիական ինտերվենտների դեմ: Ամին Սաիդը վկայում է, որ «ժողովուրդը ապստամբեց կառավարության դեմ և պահանջեց տապալել այն»: Հայրենասերների մի խումբ հարձակվեց Դամասկոսի ամրոցի վրա, որտեղ գտնվում էր զենքի ու զինամթերքի պահեստը, գրավեց ու ժողովրդին բաժանեց զգալի քանակությամբ զենք: Ապստամբները փորձեցին ներխուժել նաև արքայական պալատ, բայց դա նրանց չհաջողվեց: Ֆեյսալի կրտսեր եղբայր Զայդը արքայական գվարդիայի գլուխն անցած՝ ճնշեց սիրիական հայրենասերների ելույթը: Միայն այդ օրը զոհվեց 200 մարդ:

Հուլիսի 21–ին հայտնի դարձավ, որ ֆրանսիական զորքերը շարժվում են դեպի Դամասկոս, թեև նախորդ օրը սիրիական կառավարությունը վերջնականապես ընդունել էր վերջնագրի բոլոր պայմանները և այդ մասին հեռագրով տեղյակ պահել գեներալ Գուրոյին: Ֆրանսիական զորքերը գրավելով Շթորան, Զահլեն, Մաջդ ալ–Անջարը և Վադի Հաբիբը,

առաջ էին շարժվում դեպի Սիրիայի խորքերը և ծգտում գրավել նրա մայրաքաղաքը: Բոլորին պարզ դարձավ, անգամ կառավարության տատանվող անդամներին և Ֆեյսալին, որ Ֆրանսիան անպայման ուզում է օկուպացնել Սիրիան և վերջ դնել սիրիական թագավորությանը:

Ֆեյսալը, զգալով, որ իր թագավորության գլխին մահացու վտանգ է կախվել, երկրի պաշտպանության հրաման արձակեց: Հանդես գալով Օմայաների հռչակավոր մզկիթում՝ նա ժողովրդին կոչ արեց պաշտպանել հայրենիքը: Ցավոք, Ֆեյսալը շատ մեծ ուշացումով դիմեց այդ քայլին, որի հետևանքով Սիրիան պետք է պատերազմեր անհամեմատ ավելի անբարենպաստ և վատ պայմաններում:

Ֆեյսալի մանիֆեստը լայն արձագանք և աջակցություն գտավ երկրում, հատկապես Դամասկոսում: Հազարավոր սիրիացիներ մեկնեցին Դամասկոսից 28 կմ արևմուտք գտնվող Մայսալունի լեռնանցքը՝ պաշտպանելու մայրաքաղաքը: Սիրիական կամավորների թիվը հասնում էր 4–5 հազարի: Նրանց կողքին էին նաև արաբներ Հիջազից և Իրաքից: Մայսալուն եկան նաև սիրիական կանոնավոր բանակի փոքր զորախմբեր Սիրիայի պաշտպանության նախարար Յուսիֆ Ազմայի գլխավորությամբ, որոնք չէին հասցրել զորացրվել սիրիական բանակը ցրելու վերաբերյալ Ֆեյսալի արձակած օրենքից հետո:

Մայսալունի ճակատամարտը սկսվեց 1920 թ. հուլիսի 24–ի վաղ առավոտյան: Վատ զինված և անկազմակերպ սիրիացիների դիմաց կանգնած էր լավ զինված ֆրանսիական ընտիր բանակը, որի տրամադրության տակ կային ինքնաթիռներ, տանկեր, զրահամեքենաներ, ծանր հրետանի և ռազմական այլ տեխնիկա: Հուլիսի 24–ի առավոտյան ֆրանսիական ծանր հրետանին սկսեց ռմբակոծել սիրիացիների պաշտպանական առաջավոր դիրքերը՝ նպատակ ունենալով ահաբեկել սիրիացիներին, փախուստի մատնել նրանց և արագորեն շահել ճակատամարտը: Մարտի մեջ մտան նաև տանկերն ու ինքնաթիռները: Սակայն սիրիացիները չընկրկեցին ֆրանսիական զորքերի ահեղ կրակի առջև և հերոսաբար ընդունեցին մարտահրավերը: Ճակատամարտը տևեց 4 ժամ: Մայսալունը ծածկվել էր դիակներով: Պատերազմի դաշտում ընկան 1200 հայրենասերներ, այդ թվում՝ պաշտպանության նախարար Յուսիֆ Ազման: Ճակատամարտն ավարտվեց ավելի լավ զինված ֆրանսիական զորքերի հաղթանակով: Կեսօրին նրանց այլևս դիմադրող չկար: 1920 թ. հուլիսի 25–ին նրանք մտան Դամասկոս, իսկ մինչև ամսվա վերջը գրավեցին Հալեպն ու մյուս քաղաքները և ավար-

տեցին Սիրիայի գրավումը: Դամասկոս ժամանեց տարածաշրջանում ֆրանսիական զորքերի հրամանատար գեներալ Գուրոն: Նա առաջին հերթին այցելեց միջին դարերում խաչակիրների դեմ հաղթական պատերազմներ մղած Սալահ ալ–Դինի գերեզմանին և հայտարարեց. «Սալա՛հ ալ–Դին, մենք, այնուամենայնիվ, վերադարձանք»:

Ֆրանսիացիներն անմիջապես ձեռնամուխ եղան Ֆեյսալին գահընկեց անելուն, սիրիական թագավորության վերացմանը և ֆրանսիական մանդատի հաստատմանը: Ֆեյսալը, որը դիտում էր Մայսալունի ճակատամարտը և ականատես եղավ սիրիացիների պարտությանը, ճակատամարտից հետո չվերադարձավ Դամասկոս, այլ կանգ առավ մայրաքաղաքից 15 կմ հարավ գտնվող Կիսվա գյուղում, որտեղից հետևում էր դեպքերի հետագա զարգացմանը Դամասկոսում: Նա մի փորձ ևս արեց ֆրանսիացիների հետ համաձայնության գալու և իր գահը պահպանելու համար: Ֆրանսիացիների հետ կապեր հաստատելու և նրանց մտադրությունները պարզելու համար նա Դամասկոս ուղարկեց Նուրի Սաիդին: Վերջինս Ֆեյսալին տեղյակ պահեց, որ ֆրանսիացիների հետ ժամանակավոր համաձայնություն է ձեռք բերվել այն մասին, որ նրանք պատրաստ են համագործակցել հին կառավարության հետ: Հուլիսի 25–ին Ֆեյսալը Ալա ալ–Դին ալ Դուրուբիին նշանակեց սիրիական նոր կառավարության ղեկավար և երեկոյան վերադարձավ Դամասկոս:

Սակայն հուլիսի 26–ին ֆրանսիական գեներալ Գոյբետը սիրիական կառավարության անդամների հետ հանդիպման ժամանակ արեց մի հայտարարություն, որը ոչ մի հույս չթողեց սիրիական թագավորության պահպանման հարցում: Նա Սիրիայում տեղի ունեցած դեպքերի համար մեղադրեց Ֆեյսալին և ֆրանսիական կառավարության անունից պահանջեց սիրիական կառավարությունից գահընկեց անել Ֆեյսալին, վճարել 10 մլն ֆրանկ ռազմատուգանք, ցրել սիրիական բանակը և այն վերածել ոստիկանության, ֆրանսիական բանակին հանձնել նրա բոլոր զենքերը, զինամթերքը, դիմադրության կազմակերպման ղեկավարներին և այլն: Ալ–Դուրուբիի կառավարությունը լրիվ ընդունեց այդ պահանջները: Ֆեյսալը փորձեց բողոքել Գուրոյին, սակայն վերջինս ոչ միայն չընդունեց այդ բողոքը, այլև պահանջեց, որ նա իր ընտանիքով հեռանա Դամասկոսից: Նրան հայտնեցին, որ դա Ֆրանսիայի Հանրապետության կառավարության որոշումն է: 1920 թ. հուլիսի 28–ի առավոտյան ժամը 5–ին Ֆեյսալը հեռացավ Դամասկոսից և մայրաքաղաքի Հիջազյան կայարանից գնացքով մեկնեց Դերաա՝ Դամասկոսից մոտ 80

կմ հարավ, որը Հաուրանի կենտրոնն էր: Հուլիսի 29–ին ալ–Դուրուբին ֆրանսիական զինվորական իշխանությունների հանձնարարությամբ հեռագրեց Ֆեյսալին՝ պահանջելով նրանից անհապաղ հեռանալ Դերաայից և Մաանի վրայով մեկնել Հայֆա:

1920 թ. օգոստոսի 1–ին Ֆեյսալն ընդմիշտ հեռացավ Սիրիայից:

Այսպիսով՝ սիրիական թագավորությունը շատ կարճ կյանք ունեցավ: Նա գոյատևեց ընդամենը 4 ամիս և ընկավ ֆրանսիական գաղութարարների հարվածների տակ: Սիրիան զրկվեց իր անկախությունից և վերածվեց ֆրանսիական ենթամանդատային երկրի:

Բոլորովին այլ կերպ դասավորվեց Ֆեյսալի ճակատագիրը: Նա անգործ չմնաց և 1921 թ. դարձյալ զբաղեցրեց թագավորի պաշտոն: Այս անգամ անգլիացիները նրան նշանակեցին հարևան Իրաքի թագավոր:

II. ՍԻՐԻԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐՔՈ (1920–1939 թթ.)

1. Մանդատային կառավարման մարմինները և նրանց իրավասությունները

Սան–Ռեմոյում 1920 թ. ապրիլին կայացած կոնֆերանսում թեև որոշվեց Սիրիայի և Լիբանանի մանդատը հանձնել Ֆրանսիային, սակայն մանդատային իշխանությունների իրավունքները և պարտականությունները սահմանող հատուկ փաստաթուղթ դեռևս գոյություն չուներ: Ազգերի լիգան ստեղծեց հատուկ հանձնաժողով, որը մշակեց և 1921 թ. օգոստոսին հրապարակեց Սիրիայի, Լիբանանի, Իրաքի և Պաղեստինի մանդատային կառավարման նախագիծ: Սիրիայի և Լիբանանի մանդատը Ազգերի լիգայի խորհուրդը վերջնականապես հաստատեց 1922 թ. հուլիսի 24–ին:

Մանդատի վերաբերյալ Ազգերի լիգայի որոշումով Սիրիայում ամբողջ իշխանությունը հանձնվեց Ֆրանսիային: Ֆրանսիան պարտավոր էր երեք տարվա ընթացքում մշակել Սիրիայի սահմանադրությունը, իրավունք էր ստանում Սիրիայում և Լիբանանում պահել իր ռազմական ուժերը, տեղացիներից ստեղծել միլիցիա, օգտագործել նավահանգիստները, երկաթուղիները, կապի միջոցները: Մանդատային ուժերի պահպանման ամբողջ ծախսերը դրվում էին Սիրիայի և Լիբանանի վրա:

Նրանք զրկվում էին արտաքին քաղաքականություն վարելու իրավունքից, որը լիովին հանձնվում էր Ֆրանսիային: Անգամ Սիրիայի և Լիբանանի քաղաքացիների դիվանագիտական և հյուպատոսական պաշտպանությունն իրականացնելու էր Ֆրանսիան: Ազգերի լիգայի որոշումն արգելում էր Ֆրանսիային Սիրիայի տարածքը կամ նրա մի մասը զիջել կամ հանձնել որևէ օտար պետության: Սիրիայի և Լիբանանի պաշտոնական լեզուները համարվեցին ֆրանսերենը և արաբերենը:

Սիրիայի փաստացի և անսահմանափակ կառավարողը դարձավ ֆրանսիական գլխավոր կոմիսարը: Նրան էր պատկանում վերահսկողության և վետոյի բացարձակ իրավունքը: Նրա լիազորությունները սահմանվեցին ֆրանսիական հանրապետության 1920 թ. նոյեմբերի 23–ի դեկրետով, որտեղ արձանագրված էր, որ «Ֆրանսիան իր վերահսկողությունը տեղական իշխանությունների վրա իրականացնում է իր լիազոր ներկայացուցչի միջոցով, որը կոչվում է Ֆրանսիական հանրապետության գլխավոր կոմիսար Սիրիայում և Լիբանանում»: Նրա լիազորությունները շատ լայն էին: Նա կազմակերպում էր ենթամանդատային երկրի ղեկավարումը, հաստատում կամ մերժում տեղական կառավարությունների որոշումները, Սիրիային ներկայացնում արտասահմանում, տեղական կառավարություններին կից նշանակում իր ներկայացուցչին՝ դելեգատին, հանդիսանում արբիտր և այլն: Նրա նստավայրը Բեյրութն էր:

Գլխավոր կոմիսարն ուներ կառավարման հատուկ ապարատ: Վարչական գործերում նրա առաջին օգնականը գլխավոր քարտուղարն էր, ազդեցիկ դիրք ուներ հետախուզության՝ հատուկ ծառայության բաժինը: Գլխավոր կոմիսարիատն ուներ ֆինանսների, արդարադատության, կրթության, օրենսդրության, հասարակական աշխատանքների, գյուղատնտեսության, մաքսերի, փոստի և հեռագրի, հողերի, վակուֆների, առողջապահության և հնագիտության բաժիններ: Դրանց պետք է ավելացնել այն հրահանգիչներին, որոնց գլխավոր կոմիսարը նշանակում էր առևտրական նավատորմում, անասնաբուծության, մոնոպոլիաների և հանքերի, կոնցեսիոն ընկերությունների վերահսկողության և այլ ծառայություններում: Գլխավոր կոմիսարի այդ մեծածավալ ապարատը կազմված էր բացառապես ֆրանսիական պաշտոնյաներից: Տեղացիների առջև նրա դռները փակ էին: 1923 թ. հուլիսի 7–ի դեկրետով գլխավոր կոմիսարը իրավունք ստացավ կազմել խառը դատարաններ, և Սիրիայի ու Լիբանանի դատարաններում նշանակվեցին ֆրանսիական դատա-

վորներ: Գլխավոր կոմիսարի զինվորական լինելու դեպքում նա միաժամանակ համարվում էր Սիրիայում և Լիբանանում գտնվող ֆրանսիական ռազմական ուժերի գլխավոր հրամանատար: Իսկ գլխավոր կոմիսարի քաղաքացիական անձ լինելու պարագայում նշանակվում էր նաև առանձին գլխավոր հրամանատար, որը ենթակա էր գլխավոր կոմիսարին:

Ահա այսպիսին էին մանդատային իշխանությունների կառավարման կառուցվածքը, Ֆրանսիայի ներկայացուցչի՝ գլխավոր կոմիսարի իրավունքներն ու լիազորությունները Սիրիայում և Լիբանանում: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ դա մի իսկական կառավարություն էր, որի ձեռքում էին կենտրոնացված կառավարման և ղեկավարման բոլոր լծակները:

2. Ֆրանսիայի սոցիալ–տնտեսական քաղաքականությունը ենթամանդատային Սիրիայում

Սիրիան տնտեսապես թույլ զարգացած և հետամնաց երկիր էր: Նրա տնտեսությունը շատ ծանր հարված էր ստացել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և գտնվում էր ճգնաժամային վիճակում, որից դուրս գալու համար նա կարիք ուներ օգնության:

Սիրիայի տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, որտեղ զբաղված էր բնակչության 75%–ը: Նվաճելով Սիրիան՝ Ֆրանսիան իր առջև խնդիր էր դրել Սիրիան վերածել գյուղատնտեսական մթերքների արտադրության և ֆրանսիական արդյունաբերության հումքային բազայի ու ապրանքների վաճառահանման շուկայի, որտեղ պետք է ազատ գործեին ֆրանսիական մոնոպոլիստական ընկերությունները: Այդ նպատակով մանդատային իշխանությունները մի շարք փորձեր արեցին ընդարձակելու ցանքատարածությունները և ավելացնելու գյուղատնտեսական հիմնական կուլտուրաների՝ ցորենի և գարու արտադրությունը: Նրանք ձգտում էին Սիրիան վերածել «ֆրանսիական Եգիպտոսի»՝ Ֆրանսիայի տեքստիլ արդյունաբերությունն ազատելու ամերիկյան բամբակի ներմուծումից:

Մանդատային իշխանությունները որևէ փոփոխություն չմտցրեցին ագրարային հարաբերություններում: Նրանք պահպանեցին ֆեոդալական–ցեղային հարաբերությունները և ամեն կերպ խրախուսում էին խոշոր հողատիրությունը՝ ցանկանալով խոշոր կալվածատերերից իրենց համար ստեղծել սոցիալական հենարան: Այդ նպատակով նրանք

անցկացրին հողային կադաստրի ճշգրտում՝ հողահաշվառում, որը երբեմն անվանվում է նաև «հողային ռեֆորմ»: Դա հանգեցրեց գյուղացիների զգալի մասի հողազրկմանը և ֆելահների այն հողամասերի բռնագրավմանը, որոնց վերաբերյալ սեփականության իրավունքը նրանք չէին կարողանում հիմնավորել համապատասխան փաստաթղթով: Կալվածատերերը մանդատային իշխանությունների հետ կապեր հաստատելու շնորհիվ հաջողացնում էին իրենց անվամբ ստանալ հողային սեփականության փաստաթղթեր և տիրանալ գյուղացիների հողային բաժիններին: Պետական, ինչպես նաև թուրքական սուլթանին պատկանող հողերի զգալի մասը նույնպես տրվեց կալվածատերերին: Հողային սեփականությունը կալվածատերերի ձեռքում կենտրոնացնելն իրականացվում էր նաև հողերի բռնի զավթման և քոչվորներին պատկանող հողերը գնելու ուղիով: Այդ միջոցառումների արդյունքում տեղի ունեցավ կալվածատերերի հողային սեփականության ընդլայնում և գյուղացիական զանգվածների հողազրկում: Դամասկոսի շրջանում հողերի 60%–ը պատկանում էր խոշոր հողատերերին, 15%–ը՝ միջին և 25%–ը՝ մանր հողատերերին: Համայի նահանգում 164 գյուղերի հողային ֆոնդի 80%–ը պատկանում էր ֆեոդալական հինգ ընտանիքների: Իրենց խոշոր հողատարածքներով հայտնի էին Ազմի, Բարազի, Քիլանի, Թեյֆուր, Շիշակլի և այլ ընտանիքներ:

Մանդատային իշխանությունների քաղաքականության հետևանքով նրանց տիրապետության տարիներին՝ 1918–1945 թթ., մանր հողատերերի տեսակարար կշիռը 25–ից իջավ 15%–ի.

Սիրիայի հողատարածության զգալի մասը կազմում էին մուսուլմանական մզկիթներին և բարեգործական հաստատություններին պատկանող վակֆ հողերը, որից բավականին մեծ եկամուտ էր ստանում մուսուլման հոգևորականության վերնախավը: Այդ եկամուտները 1921 թ կազմել են 5,3 մլն ֆրանկ, իսկ հինգ տարի անց՝ 1926 թ., նրանք համարյա եռապատկվեցին՝ հասնելով 13,1 մլն ֆրանկի:

Հողազուրկ և սակավահող գյուղացիները հարկադրված էին չափազանց ծանր պայմաններով հողը վարձակալել ֆեոդալներից: Գյուղացիության 75%–ը վարձակալներ էին, որոնք հողատիրոջը, որը նույն կալվածատերն էր, վճարում էին բերքի 50–80%–ը: Ֆելահների համար ծանր հարված եղավ բնահարկի՝ աշարի փոխարինումը ֆիկսացված դրամական հարկով:

Ֆրանսիական մանդատային տիրապետության տարիներին զգալիորեն ընդարձակվեցին ցանքատարածությունները, որոնք եթե 1922 թ. կազմում էին 650 հազ. հա, ապա 1938 թ. հասան 876 հազ. հա: Բայց դա չլուծեց Սիրիան գյուղատնտեսական ապարանքներ արտահանող երկրի վերածելու խնդիրը: Պատկերն ավելի ամբողջական կդառնա, եթե ավելացնենք, որ գյուղատնտեսական արտադրանքը Սիրիայում ֆրանսիական տիրապետության տարիներին այդպես էլ չհասավ նախապատերազմյան 1913 թ. մակարդակին:

Ավելի ծանր էր վիճակը արդյունաբերության ոլորտում: Մանդատային իշխանությունների տնտեսական և դրամաֆինանսական քաղաքականությունը չէր նպաստում արդիական ֆաբրկագործարանային արդյունաբերության առաջացմանը և զարգացմանը: Մանդատային տարիներին Սիրիայում այդպես էլ չստեղծվեցին մեքենաշինական, մետաղագործական կամ քիմիական արդյունաբերության ճյուղեր: Շատ թե քիչ զարգանում էր թեթև, տեքստիլ, սննդի, գյուղատնտեսական հումքի վերամշակման արդյունաբերությունը: Դամասկոսում, Հալեպում, Հոմսում և մյուս քաղաքներում կային գործվածքային, մանվածքային, ցեմենտի, օճառի, ասֆալտի, գարեջրի, պահածոների ոչ մեծ գործարաններ, որտեղ աշխատողների թիվը մեծ չէր: Արդյունաբերության ոլորտի զարգացման ցածր մակարդակի մասին է խոսում այն փաստը, որ 1928–1945 թթ. Սիրիայում կազմվել էր միայն յոթ բաժնետիրական արդյունաբերական ընկերություն, որոնց ընդհանուր կապիտալը կազմում էր ընդամենը 19 մլն սիրիական լիրա, իսկ կապիտալ ներդրումները արդյունաբերության բնագավառում այդ նույն ժամանակ կազմել են 40 մլն սիրիական լիրա, որը շատ փոքր թիվ է: Ձգտելով ամեն կերպ արգելակել սիրիական ազգային արդյունաբերության ստեղծումը և զարգացումը, մանդատային իշխանությունները 1929 թ. մերժեցին սիրիական արդյունաբերական բանկ ստեղծելու սիրիական գործարարների առաջարկությունը: Եվ միանգամայն բնական է, որ նման քաղաքականության արդյունքում արդյունաբերության բաժինը Սիրիայի ազգային եկամտի մեջ 1944 թ. կազմել է ընդամենը 10%:

Սիրիայի տնտեսության մեջ ավանդաբար նշանակալի է եղել տնայնագործական–արհեստագործական արտադրության կշիռը: Սակայն մանդատի տարիներին բաց դռների քաղաքականության հետևանքով սիրիական շուկան ողողվեց ֆրանսիական, ինչպես նաև անգլիական, ամերիկյան և ճապոնական էժանագին արդյունաբերական ապ-

րանքներով, որոնք ծանր հարված հասցրեցին սիրիական տնտեսության այդ ճյուղին: Չդիմանալով եվրոպական էժանագին ապրանքների մրցակցությանը՝ տնայնագործական արդյունաբերությունն աննախադեպ անկում ապրեց, տասնյակ հազարավոր արհեստավորներ և բանվորներ մնացին առանց աշխատանքի: Մրցակցության չդիմացող սիրիական արդյունաբերական ձեռնարկությունները փակվում էին, իսկ գործազուրկների թիվը՝ աճում:

Ֆրանսիական մոնոպոլիաների ձեռքը որպես կոնցեսիաներ անցան սիրիական երկաթուղիները, էլեկտրակայանները, ծովային տրանսպորտը, քաղաքային տրանսպորտը, հեռախոսը, իսկ «Ռեժի» ընկերությունն իր մենաշնորհը հաստատեց ծխախոտի մշակման, արտադրության և վաճառահանման վրա:

Դեռևս 1919 թ. հիմնված Սիրիայի և Լիբանանի բանկը ստացավ թղթադրամներ հատելու մենաշնորհ: Ֆրանսիացիները շրջանառությունից հանեցին հնչուն ոսկյա դրամը, այն տարան Ֆրանսիա, իսկ դրա փոխարեն շրջանառության մեջ դրեցին արժեզրկված ֆրանսիական դրամը, որը մի նոր ծանր հարված էր Սիրիայի տնտեսությանը: Արժեզրկվեցին նաև սիրիական բանկնոտները: Դա մեծ հարված էր սիրիական ազգային բուրժուազիային, բանվորներին, արհեստավորներին և աշխատավորական մնացած խավերին:

Գյուղացիները և բանվորները գտնվում էին նյութական վերին աստճանի ծանր վիճակում. Լաթաքիայի նահանգի յոթ գյուղերի ուսումնասիրությունից պարզվել էր, որ գյուղացու խրճիթում չէր եղել ոչ մի կահկարասի, կենսական բոլոր պահանջմունքները՝ ուտելը, քնելը, հանգիստը, կատարվել են ուղղակի գետնի վրա, գյուղացիների մոտ 95%–ը քնել է ցերեկային հագուստով: Համանման պայմաններում էին գտնվում Սիրիայի մյուս նահանգների գյուղերի բնակիչները:

Ծանր էին բանվորների աշխատանքային պայմանները: Գոյություն չուներ աշխատանքային պաշտպանության օրենք, աշխատանքային օրը տևում էր մինչև 14 ժամ: Աշխատանքի միջազգային բյուրոյի ներկայացուցիչների ստուգումները ցույց են տվել, որ ֆրանսիական մանդատի շրջանում սիրիական շատ բանվորների աշխատանքային օրը սկսվել է արևածագին և ավարտվել մայրամուտին: Իսկ ստացված աշխատավարձն այնքան ցածր էր, որ նա հազիվ էր բավարարում նրանց պահանջների կեսը բավարարելու համար: Տնտեսական ծանր պայմանները մանդատի տարիներին շատերին ստիպում էին լքել իրենց

հայրենիքը և աշխատանք փնտրել այլ երկրներում: Այդ հողի վրա միայն 1926–1933 թթ. Սիրիայից արտագաղթել է մոտ 62 հազար մարդ:

Ֆրանսիական մանդատային տիրապետության տարիներին վատ էր կազմակերպված բժշկական սպասարկումը, առողջապահական համակարգ որպես այդպիսին գոյություն չուներ: Բավարար ուշադրություն չէր դարձվում նաև կրթությանը: Մանդատային Սիրիայում բնակչության մեծամասնությունն անգրագետ էր:

Սիա այսպիսին էին ֆրանսիական մանդատային իշխանությունների քաղաքականության արդյունքները սոցիալ–տնտեսական ոլորտում:

3. Սիրիան առանձին մանր պետությունների տրոհելու Ֆրանսիայի քաղաքական խաղերը (1920–1924 թթ.)

Ֆրանսիան, օկուպացնելով Սիրիան և Ազգերի լիգայից ստանալով նրա կառավարման մանդատը, ծանր հարված հասցրեց սիրիացիների ձգտումներին՝ ունենալ ոչ միայն անկախ, այլև միասնական ու անբաժան պետություն: Ֆրանսիան այդ ժամանակ չէր ցանկանում պահպանել Սիրիան որպես մեկ միասնական պետություն: Ղեկավարվելով «Բաժանի՛ր, որ տիրես» սկզբունքով՝ նա ձեռնամուխ եղավ Սիրիայի մասնատմանը առանձին մանր պետությունների: Դրանով նա ձգտում էր թուլացնել սիրիացիներին, նրանց ազգային–հայրենասիրական ուժերին, և թույլ չտալ, որ նրանք միավորվեն ու միասնական ճակատով հանդես գան ֆրանսիական տիրապետության դեմ:

1920 թ. սեպտեմբերի 1–ին ֆրանսիական գլխավոր կոմիսար գեներալ Գուրոյի ղեկրետով Սիրիայի կազմից անջատվեց և որպես առանձին պետություն հռչակվեց Լիբանանը:

Նույն օրը Լաթաքիայի և Տարտուսի սանջակների միավորման հիման վրա ստեղծվեց Ալավիների ավտոնոմ մարզը, որը 1922 թ. հուլիսին ստացավ պետության կարգավիճակ:

1920 թ. սեպտեմբերին ստեղծվեց ևս երկու պետություն՝ Դամասկոսի և Հալեպի: Դամասկոսի պետության ղեկավար նշանակվեց Հակի ալ–Ազըմը, իսկ Հալեպինը՝ թուրքական բանակի նախկին գեներալ Քամիլ ալ–Կուդսին:

Շարունակելով Սիրիայի տրոհման քաղաքականությունը՝ ֆրանսիական գլխավոր կոմիսարի մի նոր դեկրետով 1921 թ. օգոստոսին

ինքնավարության կարգավիճակ տրվեց Ալեքսանդրետի սանջակին՝ Հալեպի պետության շրջանակներում: Նա ուներ իր կառավարման մարմինները, բյուջեն, և այստեղ պաշտոնական լեզուներ համարվեցին արաբերենը, ֆրանսերենը և թուրքերենը: Թուրքերենի պաշտոնական լեզու ճանաչելը կապված էր այն հանգամանքի հետ, որ այստեղ բավականին մեծ թիվ էր կազմում թուրք ազգաբնակչությունը:

Օրակարգի հարց դարձավ Ջաբալ Դրուզը: Տեղական ֆեոդալական վերնախավի և ֆրանսիական գլխավոր կոմիսարի միջև երկու տարի տևած բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք բերվեց նաև նրա ստատուսի վերաբերյալ: 1921 թ. մարտի 4–ին ստորագրվեց համաձայնագիր, որով Ֆրանսիայի հովանավորության ներքո Ջաբալ Դրուզում ստեղծվում էր «ազգային կառավարություն», որն այնուհետև հանգեցրեց Ջաբալ Դրուզ պետության ստեղծմանը: Դրա վերաբերյալ դեկրետ Գուրոն ստորագրեց 1922 թ. ապրիլին, որի ղեկավար նշանակվեց Սալիմ Աթրաշը.

Այսպիսով՝ Սիրիայի տարածքի վրա ֆրանսիական մանդատի ներքո ստեղծվեցին հինգ պետություն՝ Լիբանանի, Դամասկոսի, Հալեպի, Ալավիների և Ջաբալ Դրուզի, և Ալեքսանդրետի ինքնավար մարզը:

Սիրիայի բաժանումը հինգ պետության և մեկ ինքնավար մարզի քաղաքական վարչական, տնտեսական կամ կոմունիկացիաների առումով բնավ էլ արդարացված չէր: Այդ «պետությունների» միջև առաջացան մաքսային արգելքներ, զանազան տնտեսական և վարչական դժվարություններ: Եվ շատ չանցած Ֆրանսիան հարկադրված էր վերանայել իր քաղաքականությունը և գտնել նրանց միավորման նոր մոդել: Այդպես լույս աշխարհ եկավ Սիրիական ֆեդերացիայի գաղափարը: Ֆրանսիական գլխավոր կոմիսարը հարկադրված էր 1922 թ. հունիսի 28–ի դեկրետով Դամասկոսի, Հալեպի և Ալավիների պետությունները միավորել և ստեղծել Սիրիական ֆեդերացիա, որի պրեզիդենտ «ընտրվեց» Սուբհի Բարաքաթը: Սակայն նա նույնպես երկար կյանք չունեցավ, և ֆրանսիական նոր գլխավոր կոմիսար Վեյգանը 1924 թ. լուծարքի ենթարկեց Սիրիական ֆեդերացիան: Դամասկոս և Հալեպ պետությունները միավորվեցին և ստեղծվեց Սիրիա պետությունը՝ Դամասկոս մայրաքաղաքով, իսկ Ալավիների պետությունը չցանկացավ միանալ այդ նոր պետական կազմավորմանը: Այս իրավիճակը պահպանվեց ընդհուպ մինչև 1936 թ., երբ Ալավիների պետությունը և Ջաբալ Դրուզը ծնականորեն միացան Սիրիային: Սակայն 1939 թ. նրանք կրկին դար-

ծան ինքնավար, և միայն 1942 թ. տեղի ունեցավ նրանց վերջնական միավորումը և միասնական Սիրիա պետության ստեղծումը:

4. 1925–1927 թթ. համասիրիական ապստամբությունը

Ֆրանսիական մանդատի հաստատումը և կառավարման նոր համակարգի հաստատումը, զուգակցված երկրի տնտեսական վիճակի վատացման հետ, Սիրիայում առաջ բերեցին հակաիմպերիալիստական պայքարի նոր ալիք: 1920 թ. օգոստոսին ապստամբեց Հաուրանի շրջանի գյուղացիությունը: Միայն հոկտեմբեր ամսին ֆրանսիացիներին հաջողվեց ճնշել այն: Դրան հաջորդեց ապստամբությունը Հալեպի և Լաթաքիայի շրջաններում: Լաթաքիայում ապստամբությունը ղեկավարում էր Սալիհ Ալին, իսկ Հալեպի շրջանում՝ Իբրահիմ Հանանոն: Այդ վայրերում պայքարն ընդունեց պարտիզանական շարժման ձև: Ֆրանսիական իշխանություններին միայն 1921 թ. վերջերին մեծ զոհերի գնով հաջողվեց ճնշել Հյուսիսային Սիրիայում ծավալված ապստամբությունը: 1921 թ. հակաֆրանսիական ելույթներ տեղի ունեցան Կունեյտրայի շրջանում, Ջաբալ Դրուզում, Դեյր ալ–Զորում և այլ վայրերում: Իրենց նշանակությամբ կարևոր էին 1922 թ. ապրիլին Դամասկոսում տեղի ունեցած հակաիմպերիալիստական ելույթները, որոնց ակտիվորեն մասնակցեցին սիրիական բանվորները, իսկ 1922 թ. հուլիսին կրկին ապստամբեցին Ջաբալ Դրուզի գյուղացիները Սուլթան ալ–Աթրաշի գլխավորությամբ: Ելույթներ տեղի ունեցան նաև Սիրիայի այլ վայրերում:

Այս շրջանում Սիրիայի քաղաքական կյանքում տեղի ունեցած նորություններից պետք է համարել քաղաքական նոր կուսակցությունների և կազմակերպությունների ծնավորումը, որոնք զգալի դեր խաղացին Սիրիայի հասարակական և քաղաքական կյանքում: Տարբեր բուրժուա–նացիոնալիստական կազմակերպություններ 1921 թ. Ժնևում գումարեցին այսպես կոչված Սիրիա–պաղեստինյան կոնգրես, որն ընտրեց մշտական գործադիր կոմիտե: Նա փաստորեն կատարում էր քաղաքական կուսակցության ֆունկցիաներ: Նրա հիմնական պահանջը մանդատի վերացումն էր, որին նա ձգտում էր հասնել ոչ թե պայքարի, այլ Ազգերի լիգային և եվրոպական պետություններին զանազան խնդրագրեր և դիմումներ ներկայացնելու ուղիով:

1924 թ. սկզբներին լիբանանահայ մի խումբ մարքսիստներ Հարություն Մադեյանի նախաձեռնությամբ հիմնեցին «Սպարտակ» կոմունիս-

տական կազմակերպությունը, որն իր բաժանմունքներն ուներ Բեյրութում, Զահլեում, Հալեպում և Մուսա լեռան շրջանում: Նրա ակտիվ գործիչներից էին Հայկազուն Բոյաջյանը (Զահլեում), Մասիս Փանոսյանը, Սեդրակ Հայկազյանը և Ստեփան Քաֆաֆյանը (Հալեպում), Հակոբ Տեր–Պետրոսյանը և Արամայիս Փանոսյանը (Մուսա լեռան շրջանում) և այլք:

1924 թ. հոկտեմբերի 24–ին արաբ մի խումբ մարքսիստներ՝ Ֆուադ Շիմալին, Յուսուֆ Յազբեքը, Ֆարիդ Թահամեն և Իլյաս Կաշմաին, հիմնեցին Լիբանանի կոմունիստական կուսակցությունը. այն միաժամանակ համարվում է Սիրիայի կոմունիստական կուսակցության հիմնադրման տարեթիվ: Դա բացատրվում է նրանով, որ այդ շրջանում թե՛ սիրիացիները, թե՛ լիբանանցիները անօրինական էին համարում Լիբանանի անջատումը Սիրիայից և նախկինի պես այն համարում էին սիրիական տարածք: 1925 թ. մայիսին տեղի ունեցավ «Սպարտակ» կազմակերպության միավորումը կոմունիստական կուսակցության հետ: Կուսակցությունն ակտիվ պայքար ծավալեց աշխատավորների իրավունքների պաշտպանության, մանդատի վերացման և Սիրիայի քաղաքական անկախության նվաճման համար:

1925 թ. փետրվարին Սիրիայում ֆրանսիական նոր գլխավոր կոմիսար Սառայլի դեկրետով վերացվեց ռազմական դրությունը, և թույլատրվեց քաղաքական կուսակցությունների լեգալ գործունեությունը: Դրանից առաջին հերթին օգտվեց սիրիական ազգային բուրժուազիան: 1925 թ. փետրվարին սիրիական ազգային գործիչները Աբդ առ–Ռահման Շահբանդերի գլխավորությամբ հիմնեցին Հիզբ ալ–Շաաբ՝ ժողովրդական կուսակցությունը: Նրա մեջ մտան սիրիական համարյա բոլոր ականավոր ազգային գործիչները: Կուսակցությունն ընդունեց ծրագիր, որի հիմնական պահանջներն էին՝ Սիրիայի անկախության, ինքնիշխանության և ազատության ճանաչում, անձի, մամուլի և միությունների ազատություն և կառավարման դեմոկրատական ձևի հաստատման իրավունք, ազգային արդյունաբերության պաշտպանություն, ժողովրդական կրթական համակարգի բարելավում և այլն: Նա ամենաազդեցիկ սիրիական կուսակցություններից մեկը դարձավ: Սակայն նա կողմնակից էր կոմպրոմիսների և հակված էր պահպանելու Ֆրանսիայի տիրապետող տնտեսական և ռազմական դիրքերը Սիրիայում:

Սիրիայի ազգային–ազատագրական պայքարի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում 1925–1927 թթ. համազգային ապստամբությունը, որը շատ հաճախ անվանվում է ազգային–ազա-

տագրական պատերազմ՝ նկատի առնելով նրա թափը, մասշտաբները, պայքարի մեթոդները, զանգվածային բնույթը և այլ հանգամանքներ:

Ապստամբության գլխավոր պատճառը Ֆրանսիայի կողմից Սիրիային քաղաքական անկախությունից զրկելն էր: Սիրիայի ազգային ուժերը հանդես էին գալիս Սիրիայի քաղաքական անկախության, միասնական պետություն ստեղծելու, Սահմանադիր ժողով գումարելու պահանջներով: Ապստամբությունը սկսվեց 1925 թ. հուլիսի 18–ին Ջաբալ Դրուզում՝ Սուլթան ալ–Աթրաշի գլխավորությամբ: Ապստամբները լրիվ ազատագրեցին Ջաբալ Դրուզը՝ պարտության մատնելով ֆրանսիական չորսհազարանոց զորամիավորումը: Այս հաղթանակը ցնծությամբ ընդունվեց ամբողջ Սիրիայում և համասիրիական ապստամբության ազդանշան ծառայեց:

1925 թ. օգոստոսի 23–ին հրապարակվեց Սուլթան ալ–Աթրաշի մանիֆեստը՝ ուղղված բոլոր սիրիացիներին, որով նա կոչ էր անում նրանց զենքի դիմել օտար տիրապետությունը վերացնելու համար. Մանիֆեստում կոնկրետ կերպով շարադրված էին հետևյալ պահանջները. ա. Սիրիական արաբական միասնական պետության լրիվ անկախության ճանաչումը՝ նրա առափնյա և ներքին մասերով, բ. ազգային կառավարության ստեղծում, սահմանադիր ժողովի գումարում երկրի հիմնական օրենքը մշակելու համար, գ. օկուպացիոն բոլոր զորքերի դուրսբերում Սիրիայից և ազգային բանակի ստեղծում, և դ. ֆրանսիական հեղափոխության սկզբունքների և մարդու իրավունքների հաստատում հանուն ազատության, հավասարության և եղբայրության:

Մանիֆեստում ամրագրված էին սիրիացիների հիմնական պահանջները, որոնք տվյալ պատմական ժամանակահատվածում հանդիսանում էին առանցքային: Խնդիրն այն էր, որ ապստամբությունը դուրս գար Ջաբալ Դրուզից և ընդգրկեր ամբողջ Սիրիան, այդ թվում և Դամասկոսը:

Սուլթան ալ–Աթրաշը և դրուզների մյուս ղեկավարները նպատակահարմար գտան քաղաքական ընդհանուր ճակատ կազմել Դամասկոսի ազգային քաղաքական գործիչների հետ, որոնց գլխավորում էր ալ–Շաաբ կուսակցության ղեկավար Շահբանդերը, ինչը դրական արձագանք գտավ վերջինիս կողմից: 1925 թ. օգոստոսի 21–ին ալ–Շաաբ կուսակցության ղեկավարների գաղտնի խորհրդակցության ժամանակ որոշվեց միանալ դրուզներին և ակտիվորեն մասնակցել ապստամբությանը: Սկսվեց ապստամբության նախապատրաստումը Դամասկոսում:

Այդ նպատակով ալ–Շաաբ կուսակցության ղեկավարներ Շահբանդերը, Ջամիլ Մարդամը և Սաիդ ալ–Դին Մուայադը 1925 թ. օգոստոսի 23–ին Ջաբալ Դրուզի Քաֆի ալ–Լիհա գյուղում հանդիպեցին Սուլթան Աթրաշի և շեյխ Համդիի հետ, որի ժամանակ որոշում ընդունվեց ապստամբների գործողությունների միավորման մասին: Հանդիպման մասնակիցները որոշում ընդունեցին համաձայնեցված գործողությունների մասին և պայմանավորվեցին առանց փոխադարձ համաձայնության սեպարատ հաշտություն չկնքել ֆրանսիացիների հետ: Որոշվեց, որ ապստամբները Ջաբալ Դրուզից կհարձակվեն Դամասկոսի վրա, իսկ Հիզբ ալ–Շաաբը կնախապատրաստի ապստամբությունը Դամասկոսում:

Այդ ընթացքում ապստամբությունն արդեն տարածվել էր Դամասկոսի շրջակա տարածքներում, և ապստամբները մշտապես հարձակումներ էին գործում մայրաքաղաքի արվարձանների վրա: Բուն Դամասկոսում ստեղծվել էր տագնապալից դրություն: Ֆրանսիական ռազմական իշխանությունները, վախենալով մայրաքաղաքում ապստամբության բռնկումից, կատարեցին մի շարք ձերբակալություններ և պաշարողական դրություն մտցրեցին:

1925 թ. օգոստոսի 24–ին ապստամբական ջոկատները, թվով 1500 մարդ, ուղղակի շարժվեցին Դամասկոսի վրա: Սակայն ֆրանսիացիները նախօրոք իմացել էին այդ մասին, և ապստամբները զրկվեցին հանկարծակիությունից օգտվելու հնարավորությունից: Ֆրանսիական հրետանին և ռազմաօդային չորս միավորումներ ռմբակոծում էին ապստամբների դիրքերը: Կատաղի մարտեր էին գնում, սակայն ապստամբները Դամասկոսից եկած նոր ուժերի ճնշման տակ հարկադրված էին նահանջել:

Այսպիսով՝ Դամասկոսը գրոհով գրավելու փորձն ավարտվեց անհաջողությամբ, որի գլխավոր պատճառն այն էր, որ այդ գրոհին զուգընթաց Դամասկոսում, ինչպես պայմանավորված էր, ապստամբություն չբարձրացվեց: Դրանում մեղքը ալ–Շաաբ կուսակցության և նրա ղեկավարներինն էր, որոնք հույսը դրել էին դամասկոսցիների տարերային ելույթների վրա և ըստ էության ոչինչ չէին արել ապստամբությունը մայրաքաղաքում նախապատրաստելու համար:

Սակայն ապստմաբությունը շարունակվում է, և զինված սիրիացիները հարձակումներ են գործում Հալեպում, Ալեքսանդրետում և այլ վայրերում, Դամասկոս–Դերաա երկաթուղագծի ու Դամասկոս–Բաղդադ ավտոճանապարհի վրա:

Ֆրանսիացիները որոշեցին նոր ուժերով հարձակվել ամբողջ Ջաբալ Դրուզի վրա, որը փաստորեն դարձել էր ապստամբության միջնաբերդը: Նրանք այստեղ կենտրոնացրին 10 հազար զինվոր, տանկեր, հրետանի, ռազմաօդային նավատորմի ստորաբաժանումներ, ռազմամթերք և այլն: Ֆրանսիական զորքերը գեներալ Գամելենի հրամանատարությամբ 1925 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին մարտական լայն գործողություններ ծավալեցին Ջաբալ Դրուզում, բայց այդպես էլ չկարողացան հասնել հաջողության և կոտրել ապստամբների դիմադրությունը: Նրանք, երկյուղ կրելով շրջապատման վտանգից, հարկադրված էին նահանջել:

Ապստամբությունը ծավալվում էր՝ իր մեջ ներառելով Համան, այնուհետև Հոմսը, Հալեպը, ապա Հաուրանիի, Դեյր ալ–Զորի, Ջազիրայի՝ Սիրիական անապատի, շրջանները և այլ վայրեր. Ապստամբներն ընտրեցին պայքարի պարտիզանական ձևը՝ անընդհատ հարձակումներ գործելով ֆրանսիական կայազորների և զորամիավորումների վրա: 1926 թ. երկրի մեծ մասը գտնվում էր ապստամբների հսկողության տակ:

Ապստամբության ղեկավարները զգալի աշխատանք տարան ֆրանսիական զինվորների շրջանում՝ կոչ անելով նրանց եղբայրանալ ապստամբների հետ: Ֆրանսիական իշխանությունները նրանցից շատերին ֆրանսիական բանակում քայքայիչ աշխատանք տանելու համար ձերբակալեցին և բանտ նետեցին:

Ֆրանսիական իշխանությունները միաժամանակ, ձգտելով երկպառակություն մտցնել ապստամբների շարքերում, փորձեցին թշնամություն հրահրել տարբեր կրոնական համայնքների և ժողովուրդների միջև. Նրանք ձգտում էին միմյանց դեմ լարել քրիստոնյաներին, մանավանդ մարոնի և մուսուլմաններին՝ մի կողմից, և հայերին ներգրավել պատերազմի մեջ ընդդեմ սիրիացիների՝ մյուս կողմից: Սակայն այդ ծրագրերը ձախողվեցին մեծ չափով շնորհիվ արաբ և հայ դեմոկրատական ուժերի գործունեության: Սիրիահայերը. որոնց թիվն այդ ժամանակ հասնում էր մոտ 100 հազարի. հավատարիմ մնացին իրենց երկրորդ հայրենիքին՝ Սիրիային՝ խորացնելով եղբայրական կապերն իրենց արաբ եղբայրների հետ, որով նոր էջ բացվեց հայ–արաբական հարաբերություններում: Հայերը ստեղծեցին ապստամբներին աջակցող հեղափոխական կոմիտե. որը լայն բացատրական աշխատանք էր տանում հայերի շրջանում, կատարում նյութական միջոցների հանգանակում, դեղորայք բերում և առաքում դրանք ապստամբներին: Երբ 1925

թ. օգոստոսին ապստամբները մոտեցան Դամասկոսին, ֆրանսիական իշխանությունները փորձեցին զենք բաժանել մարոնիներին, հույներին ու հայերին և նրանց դուրս բերել ընդդեմ ապստամբների: Սակայն հայերը հրաժարվեցին զենք վերցնել և դուրս գալ իրենց հյուրընկալ արաբ ժողովրդի դեմ: 1925–1927 թթ. ապստամբության ժամանակ ֆրանսիական իշխանություններին չհաջողվեց սիրիահայերին ներգրավել եղբայրասպան պատերազմի մեջ: Ընդհակառակը, հայ ժողովուրդը և նրա դեմոկրատական ուժերը աջակցում էին ապստամբներին:

1925 թ. վերջերին ապստամբության խոշոր կենտրոնի վերածվեց Դամասկոսն օղակող Ղուտայի օազիսը: Հուժկու ապստամբություն բռնկվեց Դամասկոսում: Քաղաքի մեծ մասն անցավ ապստամբների ձեռքը: Ֆրանսիական իշխանությունները երկու օր անընդհատ հրետանային և օդային ռմբակոծման էին ենթարկում Դամասկոսը, որի ընթացքում զոհվեցին հազարավոր քաղաքացիներ:

Թեև Դամասկոսի ապստամբությունը ճնշվեց, սակայն 1926 թ. ընթացքում շարունակվում էին հակաֆրանսիական ելույթները: Ֆրանսիական նոր գլխավոր կոմիսար Անրի դը Ժուվենելը, որն այդ պաշտոնը ստանձնեց 1925 թ. նոյեմբերին, հարկադրված էր դիմել որոշ զիջումների: 1926 թ. մայիսին նա համաձայնվեց ստեղծել սիրիական ազգային կառավարություն և խոստացավ հրավիրել Սահմանադիր ժողով, մշակել սահմանադրություն, ներում շնորհել և այլն: Սակայն, ինչպես շուտով պարզվեց, դա արվել էր ապստամբների շարքերը կազմալուծելու, սիրիական ազգային բուրժուազիային իր կողմը գրավելու, ժամանակ շահելու և ապստամբությունը ճնշելու համար զինվորական նոր ուժեր կենտրոնացնելու նպատակով: Դրան նպաստեց նաև ապստամբության ճնշումը Մարոկկոյում, որը հնարավորություն տվեց ֆրանսիացիներին Մարոկկոյից լրացուցիչ ուժեր նետել Սիրիա և 1926 թ. գարնանից անցնել ընդհանուր հարձակման: 1926 թ. ընթացքում նրանք մեկը մյուսի հետևից ճնշեցին ապստամբական կենտրոնները: 1927 թ. գարնանն ապստամբությունն արդեն պարտություն էր կրել: Ապստամբության ականավոր ղեկավարներից մեկը՝ Սուլթան Աթրաշը, իր փոքր զորախմբով հեռացավ Ջաբալ Դրուզից Անդրհորդանան, իսկ հետո՝ Նաջդ:

Երկու տարի տևած ապստամբությունը թեև պարտվեց, սակայն անհետևանք չանցավ: Մասսաները ձեռք բերեցին հակաիմպերիալիստական պայքարի հարուստ փորձ, որը հետագայում մեծ հմտությամբ օգտագործեցին ազգային–ազատագրական պայքարում: Մյուս կողմից՝

մանդատային իշխանություններն ընդունեցին, որ միայն զենքի օգնությամբ, առանց որոշ զիջումների, հնարավոր չէ պահպանել իրենց տիրապետությունը Սիրիայում:

5. Սահմանադիր ժողովի գումարումը և սիրիական սահմանադրության ընդունումը: Ֆրանս–սիրիական հարաբերությունների հետագա սրումը (1927–1934 թթ.)

Ապստամբության պարտությունից հետո Սիրիայի ազգային–հայրենասիրական ուժերը չհրաժարվեցին իրենց հիմնական քաղաքական պահանջներից: Դեռ ավելին՝ Սիրիայի անկախության և միասնության պահանջներին ավելացան նորերը՝ սահմանադիր ժողովի գումարում, սահմանադրության ընդունում, քաղաքական ներում, դեմոկրատական իրավունքների հաստատում և այլն:

Ֆրանսիայում, ինչպես նշվեց, հասկանում էին, որ պետք է զիջումների գնալ և համագործակցության եզրեր գտնել սիրիական բուրժուական–վաճառատիրական վերնախավի հետ: Այդ նոր քաղաքականության կիրառումը հանձնարարվեց ֆրանսիական նոր գլխավոր կոմիսար Անրի Պոնսոյին, որի դեկրետով վերացվեց ռազմական դրությունը, և քաղաքական բանտարկյալների մեծ մասը ներում ստացավ: Ձգտելով իր կողմը գրավել ֆեոդալական և բուրժուական վերնախավին՝ Անրի Պոնսոն 1927 թ. վերջերին արտոնեց Քութլա ալ–վաթանիյա՝ Ազգային բլոկի ստեղծումն ու գործունեությունը, որն իր բնույթով բուրժուական–վաճառատիրական ռեֆորմիստական խմբավորում էր: Այն ստեղծվել էր արգելված ալ–Շաաբ կուսակցության փոխարեն, և նրա ղեկավարներն էին Հաշիմ ալ–Աթասին և Շուքրի Քուաթլին: Թեև նրա ծրագիրը պարունակում էր անկախության և Սահմանադիր ժողովի գումարման մասին պահանջ, սակայն նա դեմ չէր, որ Ֆրանսիային Սիրիայում տրվեն քաղաքական և տնտեսական արտոնություններ: Իսկ ինչ վերաբերում էր մանդատի հարցին, ապա Քութլա ալ–վաթանիյան առաջարկում էր մանդատը փոխարինել ֆրանս–սիրիական պայմանագրով: Հետագայում այդ պահանջները տարբեր ձևափոխումներով մեկ անգամ չէ, որ առաջադրվում էին սիրիական կողմից:

1928 թ. փետրվարին հրաժարական տվեց Ահմադ Դումուդի կառավարությունը, որը իշխանության գլուխ էր գտնվում ավելի քան քսան ամիս և մասնակցել էր ապստամբության ճնշմանը: Սիրիական ժողովր-

դի ատելությանն արժանացած այդ կառավարության հրաժարականը սիրիական հայրենասերները համարեցին իրենց հաղթանակը: Գլխավոր կոմիսար Անրի Պոնսոյի հրամանով 1928 թ. փետրվարի 4–ին սիրիական նոր կառավարության ղեկավար նշանակվեց Թաջ ալ–Դինը:

Ֆրանսիական մանդատային իշխանությունները զիջման դիմեցին նաև Սահմանադիր ժողովի հարցում: 1928 թ. ապրիլի 24–ին կայացան նրա ընտրությունները, որում հաղթեցին Քութլա ալ–վաթանիյայի՝ Ազգային բլոկի ներկայացուցիչները: Սահմանադիր ժողովի առաջին նիստը բացվեց հունիսի 9–ին, և նրա նախագահ ընտրվեց Հաշիմ ալ–Աթասին:

Սահմանադիր ժողովը կազմեց սահմանադրությունը մշակող հանձնաժողով, որի աշխատանքները գլխավորում էր 1925–1927 թթ. ապստամբության ղեկավարներից մեկը՝ Իբրահիմ Հանանոն: Երկու ամիս անց հանձնաժողովը ներկայացրեց սահմանադրության նախագիծը, որը բաղկացած էր 115 հոդվածներից:

Սահմանադրությունը չէր ճանաչում ֆրանսիական մանդատը և Սիրիան հռչակում էր անկախ և միասնական հանրապետություն: Նա լայն լիազորություններ էր տալիս հանրապետության նախագահին, այդ թվում՝ ազգային բանակի կազմավորման, միջազգային պայմանագրերի կնքման, ներում շնորհելու և այլ հարցերում:

Ֆրանսիական իշխանությունները չճանաչեցին Սահմանադիր ժողովի որոշումները և նրա կողմից հաստատված սահմանադրությունը: Գլխավոր կոմիսարը պահանջում էր սահմանադրությունից վերացնել բոլոր այն հոդվածները, որոնք հակասում էին մանդատի դրույթներին՝ նշելով, որ Ֆրանսիան իրավասու չէ առանց Ազգերի լիգայի թույլտվության նման փոփոխություններ կատարել Սիրիայի կառավարման համակարգում:

Կոնֆլիկտը հանգեցրեց նրան, որ ֆրանսիական գլխավոր կոմիսարը 1928 թ. օգոստոսի 11–ին ցրեց Սահմանադիր ժողովը: Մոտ երկու տարի տևած բանակցություններից հետո, երբ հնարավոր չեղավ համաձայնության գալ սիրիական ազգային ուժերի հետ, Պոնսոն 1930 թ. մարտի 14–ին միակողմանիորեն հռչակեց Սիրիայի սահմանադրությունը՝ նրա 115 հոդվածներին ավելացնելով 116–րդ հոդվածը, որը ուժի մեջ էր թողնում ֆրանսիական մանդատը և դրանից բխող Ֆրանսիայի բոլոր իրավունքները: Թեև Սիրիան հռչակվում էր հանրապետություն, սակայն լրիվ մնում էր ենթակա ֆրանսիական իշխանություններին:

Գլխավոր կոմիսարի միակողմանի գործողությունները բողոքի մեծ ալիք բարձրացրեցին Սիրիայում: Նորից ցույցեր և գործադուլներ սկսվեցին, մասսաները պահանջում էին կենսագործել Սահմանադիր ժողովի ընդունած սահմանադրությունը՝ առանց 116–րդ հոդվածի: Ազգային բլոկը հայտարարեց, որ ինքը երբեք չի հրաժարվի Սահմանադիր ժողովի կազմած սահմանադրությունից և կոչ արեց չճանաչել սահմանադրությունն արատավորող 116–րդ հոդվածը:

1931 թ. դեկտեմբերին գլխավոր կոմիսարը որոշում ընդունեց անցկացնել պառլամենտական ընտրություններ: Այդ զիջմանը նրանք դիմեցին մի կողմից՝ սիրիական հայրենասիրական ուժերի ճնշման տակ, իսկ մյուս կողմից՝ հույս ունեին ընտրություններից հետո Սիրիայում կազմել մի կառավարություն, որը կհամաձայնվեր ֆրանսիական մանդատի վերացման դիմաց Ֆրանսիայի հետ կնքել մի այնպիսի պայմանագիր, որը մանդատի ձևական վերացումից հետո էլ կապահովեր Ֆրանսիայի տիրապետող քաղաքական, ռազմական և տնտեսական դիրքերը Սիրիայում: Ընտրությունների նկատմամբ վերահսկողություն սահմանելու և ապագա պառլամենտում իր կողմնակիցների հաղթանակն ապահովելու նպատակով գլխավոր կոմիսար Պոնսոն իր նստավայրը Բեյրութից տեղափոխեց Դամասկոս: Ընտրություններն անցկացվեցին երկու փուլով՝ 1931 թ. դեկտեմբերի 21–ին և 1932 թ. հունվարի 5–ին՝ խիստ վերահսկողության և հայրենասիրական ուժերի դեմ ուղղված հալածանքների պայմաններում: Ընտրությունների նախօրեին Դամասկոսում, Հալեպում, Համայում և Հոմսում մարտական պատրաստության վիճակում դրվեցին ֆրանսիական զորքերը: Բռնությունների կիրառման, սպառնալիքների, իսկ մի շարք վայրերում՝ ընտրությունների արդյունքները կեղծելու հետևանքով ֆրանսիացիներին հաջողվեց պառլամենտում ապահովել իր կողմնակիցների՝ բուրժուականալվածատիրական այն դեպուտատների հաղթանակը, որոնք կողմնակից էին համագործակցելու ֆրանսիական մանդատային իշխանությունների հետ: Նրանք պառլամենտում շահեցին 52, իսկ Ազգային բլոկը՝ 17 տեղ.

Հենց ֆրանսիամետ դեպուտատների շարքերից պառլամենտի 1932 թ. հունիսի 7–ի նիստում Մուհամմադ Ալի ալ–Աբիդը ընտրվեց Սիրիայի պրեզիդենտ, իսկ Սուբհի ալ–Բարաքաթը՝ պառլամենտի նախագահ: 1932 թ. հունիսի 14–ին վարչապետի պաշտոնը հանձնվեց Հակի ալ–Ազմին, որի կառավարության մեջ մտան նաև Ազգային բլոկի երկու ներկայացուցիչներ:

Շուտով քննարկման առարկա դարձավ ֆրանս–սիրիական պայմանագիր կնքելու հարցը: Ֆրանսիացիները փորձեցին սիրիացիներին պարտադրել պայմանագրի իրենց տարբերակը: Դա ծնականորեն վերացնելու էր մանդատային ռեժիմը, սակայն պահպանելու էր Ֆրանսիայի քաղաքական, ռազմական և տնտեսական տիրապետող դիրքերը: Ավելացնենք նաև, որ ֆրանսիական իշխանությունները վճռականորեն դեմ էին միասնական Սիրիա ստեղծելու գաղափարին:

Բնականաբար, այդ տարբերակն անընդունելի էր սիրացիների համար: 1933 թ. փետրվարի 17–ին Հալեպում կայացած Քութլա ալ–վաթանիյայի համագումարը որոշեց չընդունել գլխավոր կոմիսարի առաջարկած պայմանագրի նախագիծը, պաշտպանել երկրի միասնության և ինքնորոշման իրավունքը և ետ կանչել 17 վաթանիստ դեպուտատներին պառլամենտից, իսկ իր երկու նախարարներին՝ կառավարությունից: Քութլա ալ–վաթանիյայի այդ քայլերն ուղեկցվեցին բողոքի ցույցերով ընդդեմ պայմանագրի ֆրանսիական նախագծի: Սիրիայում հայտարարվեց համընդհանուր գործադուլ:

1933 թ. աշնանը ֆրանսիական կառավարությունը Պոնսոյի փոխարեն Սիրիայում գլխավոր կոմիսար նշանակեց կոմս դը Մարթելին: Նա 1933 թ. հոկտեմբերին պահանջեց, որ սիրիական կառավարությունն ընդունի Ֆրանսիայի կողմից ներկայացված պայմանագիրը: Պայմանագրի նախագծում ասվում էր, որ Սիրիան հասել է որոշ առաջադիմության, և դա պարտավորեցնում է Ֆրանսիային պայմանագիր ստորագրել Սիրիայի հետ մանդատը վերացնելու, Սիրիան ինքնիշխան պետություն հռչակելու և Ազգերի լիգայի անդամ դարձնելու համար: Սակայն նրանում արձանագրված էր նաև, որ Սիրիայի արտաքին հարաբերությունները պետք է վարի Ֆրանսիան, հոգա նրա պաշտպանությունն ու անվտանգությունը և այդ նպատակով նրան ռազմական օգնություն պետք է ցույց տա: Ֆրանսիական մանդատը Սիրիայի վրա պահպանվելու էր, մինչև որ նա դառնար Ազգերի լիգայի անդամ: Ֆրանսիայի ցամաքային և օդային ուժերը մնալու էին Սիրիայում: Ջաբալ Դրուզը և Լաթաքիան վարչականորեն և ֆինանսապես համարվում էին անկախ և ինքնուրույն շրջաններ:

Հակի ալ–Ազմի գլխավորած սիրիական կառավարությունը հնազանդորեն ստորագրեց այդ պայմանագիրը: Նրա այդ քայլը համարվեց դավաճանություն և առաջ բերեց ժողովրդի ցասումը: Հակակառավա-

րական և հակաֆրանսիական ցույցեր էին տեղի ունենում Դամասկոսում և Սիրիայի մյուս քաղաքներում ու շրջաններում:

Դը Մարթելը 1933 թ. նոյեմբերի 21–ին պայմանագիրը վավերացման համար ներկայացրեց սիրիական պառլամենտին: Հարցը քննարկելու ժամանակ պառլամենտի շենքը շրջապատեցին ֆրանսիական զինվորները: Դա մի փորձ էր դեպուտատների վրա ճնշում գործադրելու համար: Դը Մարթելը հույսը դրել էր նաև պառլամենտում մեծամասնություն կազմող չափավոր համարվող դեպուտատների վրա: Սակայն Սիրիայի պառլամենտը չկարողացավ անտեսել այն հուժկու համազգային շարժումը, որ ծավալվում էր Սիրիայում, և 46 ձայնով մերժեց ֆրանս–սիրիական պայմանագիրը:

Ի պատասխան՝ դը Մարտելը ցրեց պառլամենտը և կասեցրեց սահմանադրությունը:

6. Հակաիմպերիալիստական պայքարի վերելքը: Ֆրանս–սիրիական Բարեկամության և օգնության պայմանագրի ստորագրումը (1934–1939 թթ.)

Դը Մարտելի կիրառած միջոցները հակառակ արդյունքը տվեցին Սիրիայում ուժեղացավ պայքարը ֆրանսիական իշխանությունների դեմ, մանավանդ մեծ թափ ստացավ գործադուլային շարժումը: 1934 թ. ընդհանուր գործադուլ տեղի ունեցավ Դամասկոսում, Հալեպում և այլ վայրերում: Գործադուլ արեցին տպագրիչները, տեքստիլագործները, երկաթուղայինները, տրամվայի աշխատողները, իսկ 1935 թ. նրանց միացան ծխախոտագործները: Այդ գործադուլները շատ հաճախ ուղեկցվում էին ցույցերով: 1934 թ. Դամասկոսում անցկացվեց արհմիությունների անլեգալ կոնֆերանս, որտեղ հիմնվեց հեղափոխական արհմիությունների ֆեդերացիա:

1934 թ. մարտի 16–ին ալ–Ազմի կառավարությունը հարկադրված էր հրաժարական տալ, և գլխավոր կոմիսարը հանձնարարեց Թաջ ալ–Դինին կազմել նոր կառավարություն: Ֆրանսիասեր Թաջ ալ–Դինին վարչապետ նշանակելը մեծ դժգոհությամբ ընդունվեց վաթանիստների և նրանց հետևից գնացող սիրիական լայն զանգվածների կողմից, որոնք Հալեպում և այլ վայրերում հակակառավարական մեծ ցույցեր կազմակերպեցին: Դրանք ավարտվեցին արյունալի բախումներով և ձերբակալություններով: Դրան հետևեց Հալեպի ընդհանուր գործադու-

լը, որին մասնակցում էին 17 հազար տեքստիլագործներ, ինչպես նաև այլ ձեռնարկությունների արաբ և հայ աշխատավորներ, որոնք ցույցի էին դուրս եկել «Մենք ուզում ենք հաց, հող և ազատություն» և «Մահ իմպերիալիզմին» լոզունգների ներքո: Հալեպի ընդհանուր գործադուլին միացան նաև Դամասկոսի, Հոմսի և Համայի աշխատավորները:

Հակակառավարական և հակաիմպերիալիստական ցույցերը չէին դադարում ամբողջ 1935 թ.: 1935 թ. փետրվար–մարտ ամիսներին ընդհանուր բոյկոտի արշավ սկսվեց ծխախոտի «Ռեժի» ֆրանսիական ընկերության դեմ: Բոյկոտի շարժումը տարածվեց նաև տրամվայի և էլեկտրական լուսավորության ընկերությունների դեմ: Պայքար սկսվեց նաև ծանր հարկերի դեմ:

Սիրիայում ազգային–ազատագրական պայքարի հզոր ալիք բարձրացավ 1936 թ. սկզբներին: Հունվար–փետրվար ամիսներին Սիրիայում տեղի ունեցավ համընդհանուր գործադուլ, որը սկսվեց 1936 թ հունվարի 19–ին և տևեց մոտ 50 օր: Տեղի էին ունենում նաև հակաֆրանսիական ցույցեր: Ամբողջ Սիրիան ոտքի էր կանգնել: Ֆրանսիական իշխանությունները զանգվածային ձերբակալություններ էին կատարում, ցուցարարների դեմ զինված ջոկատներ հանում և դիմում ամեն տեսակի սպառնալիքների: Ֆրանսիական իշխանությունները հակաիմպերիալիստական շարժումը գլխատելու համար ձերբակալեցին սիրիական մի շարք ականավոր գործիչների, այդ թվում՝ Ջամիլ Մարդամին, Սաադալլահ ալ–Ջաբրին, Նաիմ Անթակին և ուրիշների: Բայց նրանք, այդուհանդերձ, անզոր գտնվեցին ճնշել այդ ցույցերը և ստիպել աշխատավորներին դադարեցնել գործադուլը:

Դը Մարթելը հարկադրված էր բանակցություններ վարել սիրիական պատվիրակության հետ: 1936 թ. փետրվարի 20–ին սիրիական պատվիրակությունը դը Մարթելին հանձնեց հուշագիր, որտեղ նշված էր, որ սիրիական կողմը պատրաստ է բանակցելու հետևյալ պայմաններով. կիրառել 1928 թ. սահմանադրությունն առանց որևէ սահմանափակումների և վերականգնել պառլամենտական ռեժիմը, որից հետո միայն կարելի է բանակցություններ վարել երկու երկրների միջև պայմանագիր կնքելու վերաբերյալ: Գլխավոր կոմիսարը մերժեց այդ պահանջները, և համընդհանուր գործադուլն ու ցույցերը շարունակվեցին:

Դը Մարթելի պահանջով Թաջ ալ–Դինի կառավարությունը, որը չէր վայելում ժողովրդի համակրանքն ու աջակցությունը, 1936 թ. փետրվարի 22–ին հրաժարական տվեց: Կազմվեց ժամանակավոր կառավա-

րություն Մուհամմադ Աթա ալ–Այուբիի գլխավորությամբ: Քութլա ալ–վաթանիյան նրա նկատմամբ գրավեց ընդդիմադիր դիրքորոշում: Ալ–Այուբիի կառավարությունը զինվորական իշխանությունների օգնությամբ աշխատում էր խափանել գործադուլն ու ցույցերը: Բայց դա նրանց չհաջողվեց, և փետրվարի 28–ին մեծ բազմություն հավաքվեց Օմայաների մզկիթում, որտեղ բանախոսները կոչ էին անում սիրիացիներին շարունակել գործադուլը: Վերջապես Ֆրանսիան համաձայնվեց բանակցություններ սկսել Սիրիայում այդ ժամանակ ամենաազդեցիկ քաղաքական կազմակերպության՝ Քութլա ալ–վաթանիյայի ներկայացուցիչների հետ:

Ֆրանս–սիրիական բանակցությունները սկսվեցին 1936 թ. փետրվարի 28–ին Բեյրութում, և մարտի 1–ին համաձայնություն ձեռք բերվեց ապագա պայմանագրի հիմնական կետերի վերաբերյալ: Համաձայնությունը ստորագրել էին Հաշիմ ալ–Աթասին և դը Մարթելը:

Ֆրանսիան առաջիկա պայմանագրով պետք է հայտարարեր, որ սիրիացիները կօգտվեն այնպիսի իրավունքներից, որոնցից օգտվում են իրաքցիներն անգլո–իրաքյան 1930 թ. պայմանագրով, չի ցանկանում պահպանել Սիրիայի մասնատված վիճակը, կողմ է Սիրիայի միասնությանը, որը համապատասխանում է Սիրիայի սահմանադրությանը և Ազգերի լիգայի կանոնադրությանը, վերականգնել պառլամենտական կարգը՝ ժողովրդական ազատ ընտրությունների հիման վրա: Կողմերը համաձայնվեցին, որ բանակցությունները երկու կողմերի պատվիրակությունների միջև կընթանան Փարիզում, ուր կմեկնի սիրիական բարձր մակարդակի պատվիրակություն:

Այդ օրը՝ 1936 թ. մարտի 1–ին, ավարտվեց հունվարին սկսված համասիրիական գործադուլը, որը հանդիսանում է Սիրիայի անկախության համար մղված պայքարի պատմության ամենափայլուն էջերից մեկը:

Գլխավոր կոմիսարն իր հերթին չեղյալ հայտարարեց արտակարգ օրենքները, իսկ ֆրանսիական զորքերը դուրս բերվեցին քաղաքներից ու վերադարձան զորանոցները:

Սիրիական պատվիրակությունը, որը գլխավորում էր Քութլա ալ–վաթանիյայի ղեկավար Հաշիմ ալ–Աթասին, ֆրանս–սիրիական պայմանագիր կնքելու նպատակով բանակցությունների համար Փարիզ մեկնեց 1936 թ. մարտի 26–ին: Ֆրանսիական պատվիրակությունը ղեկավարում էր դը Մարթելը:

Բանակցությունները սկսվեցին ապրիլին և այնքան էլ հարթ չէին ընթանում, քանի որ Ֆրանսիան չէր ցանկանում բավարարել սիրիական կողմի բոլոր պահանջները, հատկապես անկախության և միասնության վերաբերյալ: Ֆրանսիական կառավարությունը, հակառակ մարտի 1–ի համաձայնության, դեմ էր Ջաբալ Դրուզի և Լաթաքիայի վերամիավորմանը Սիրիայի հետ: Սիրիական կողմը, բնականաբար, չէր կարող անտեսել Ֆրանսիայի ժխտական վերաբերմունքը այդ առանցքային հարցերի նկատմամբ: Ահա այդ պատճառով էլ բանակցություններում մինչև 1936 թ. հունիս ամիսը առաջընթաց չարձանագրվեց: Դրությունը փոխվեց, երբ 1936 թ. հունիսին Ֆրանսիայի պառլամենտական ընտրություններում հաղթանակեց ժողովրդական ճակատը, որի մեջ մտնում էին սոցիալիստները, կոմունիստները և ռադիկալները՝ սոցիալիստ Լեոն Բլյումի գլխավորությամբ, որը և գլխավորեց նոր կառավարությունը: Դրանից հետո բանակցություններն ավելի հաջող ընթացան, և 1936 թ. սեպտեմբերի 9–ին Սիրիայի և Ֆրանսիայի միջև նախաստորագրվեց (парафирование) «Բարեկամության և օգնության պայմանագիրը»: Ֆրանսիան ճանաչում էր Սիրիայի անկախությունը և պարտավորվում էր երեք տարվա ընթացքում՝ մինչև 1939 թ., հրաժարվել մանդատից և օժանդակել Սիրիային՝ որպես անկախ պետություն անդամակցելու Ազգերի լիգային: Ֆրանսիան ճանաչում էր նաև Սիրիայի միասնությունը, ըստ որի Լաթաքիան և Ջաբալ Դրուզը միավորվում էին Սիրիային: Դրա հետ միասին Ֆրանսիան իրավունք էր ստանում Սիրիայի տարածքում ունենալ իր ռազմական բազաները, իսկ Լաթաքիայի և Ջաբալ Դրուզի շրջաններում հինգ տարի ժամանակով պահելու իր զորքերը: Ֆրանսիական ռազմական ուժերը կարող էին ազատ շարժվել Սիրիայի տարածքով, իսկ ռազմանավերը՝ մտնել Սիրիայի ցանկացած նավահանգիստը: Ֆրանսիական ռազմական առաքելությունը իրավունք էր ստանում հսկել սիրիական բանակը, որը պետք է բաղկացած լիներ միայն մեկական հետևակային և հեծելազորային դիվիզիաներից: Պատերազմի դեպքում Ֆրանսիան կարող էր օգտվել սիրիական բազաներից, նավահանգիստներից, հաղորդակցության ճանապարհներից: Սիրիան պարտավորվում էր միայն Ֆրանսիայից հրավիրել ռազմական խորհրդականներ և այլ մասնագետներ: Արտաքին քաղաքականության հարցերում սիրիական կառավարությունը պետք է խորհրդակցեր ֆրանսիական կառավարության հետ: Ֆրանսիացիները պահպանում էին իրենց

կոնցեսիոն իրավունքները, իսկ սիրիական դրամը կախված էր մնում ֆրանսիական ֆրանկից:

Պայմանագիրը ենթակա էր վավերացման երկու երկրների պառլամենտների կողմից:

Չնայած սահմանափակումներին՝ ֆրանս–սիրիական պայմանագիրը կարևոր քայլ էր Սիրիայի անկախության նվաճման և տարածքային ամբողջականության հաստատման ճանապարհին: Ֆրանսիան պաշտոնապես հրաժարվում էր մանդատից և սկզբունքորեն ճանաչում Սիրիայի անկախությունը: Սիրիան ձևականորեն դառնում էր անկախ պետություն: Այդ պատճառով էլ այն ընդհանուր առմամբ գոհունակությամբ ընդունվեց Սիրիայում: Փարիզից վերադարձող սիրիական պատվիրակությանը դրոշներով զարդարված Դամասկոսում ընդունեցին մեծ խանդավառությամբ: Մամուլը նշում էր, որ ամբողջ Սիրիան խանդավառ է պայմանագրից: Պայմանագիրը մեծ գոհունակությամբ ընդունվեց նաև ամբողջ Արաբական Արևելքում: Դամասկոսը հեղեղվել էր արաբական երկրներից ստացված շնորհավորական հեռագրերով:

Իրենց հրճվանքն էին արտահայտում նաև սիրիահայերը, որոնք ունեին իրենց արժանի լուման սիրիական ազգային–ազատագրական պայքարում: Պայմանագրի ստորագրման կապակցությամբ Սիրիահայ ժողովրդական ճակատի կենտրոնական վարչության սիրիահայերին ուղղված կոչում ասվում էր, որ «Սիրիայի կատարյալ ազատագրումն ու առաջադիմական ծգտումները միմիայն հրճվանք են ներշնչում հայ ժողովրդի գիտակից զանգվածներին: Պետք է գործնականապես փաստենք մեր տեղացի եղբայրներին, թե հայ ժողովուրդն այս երկրի անկախության դեմ ոչ մեկ ծգտում ունի պաշտպանելիք: Հայ բանվորն ու աշխատավորը միմիայն երկրի ընդհանուր շահերին նվիրված իրենց արաբ եղբայրների հետ ձեռք–ձեռքի, հավաքաբար, երկրի առաջադիմության, աշխատավորության շահերի պաշտպանության գործակցելու պատրաստ են»: Սիրիայի հայության ներկայացուցիչները ջերմորեն ողջունեցին սիրիական ժողովրդին ձեռք բերված հաղթանակի առթիվ:

Հայության այդ խոհեմ քայլն աննկատ չմնաց և բարձր գնահատվեց արաբ քաղաքական և ազգային գործիչների կողմից: Սիրիայի արդարադատության նախարարը այցելեց Հալեպի հայոց առաջնորդարան և իր գոհունակությունը հայտնեց Հալեպի հայությանը նրա անկեղծ արաբանպաստ դիրքորոշման առթիվ: Հալեպի և Դամասկոսի հայ

առաջնորդարաններն այցելեցին և հայերին շնորհակալություն հայտնեցին նաև Քութլա ալ–վաթանիյայի ղեկավարները:

Սիրիան, համաձայն պայմանագրի պահանջների, ձեռնամուխ եղավ պայմանագրի վավերացմանը: 1936 թ. նոյեմբերի 30–ին կայացան սիրիական պառլամենտի նոր ընտրությունները, որի ժամանակ հաղթանակեց Քութլա ալ–վաթանիյան: Նրա ղեկավար Հաշիմ ալ–Աթասին ընտրվեց Սիրիայի հանրապետության պրեզիդենտ, իսկ Ջամիլ Մարդամը գլխավորեց սիրիական կառավարությունը:

1936 թ. դեկտեմբերի 22–ին դը Մարթելը և սիրիական նոր կազմավորված սահմանադրական կառավարության ներկայացուցիչները ստորագրեցին ֆրանս–սիրիական պայմանագիրը: 1936 թ. դեկտեմբերի 27–ին սիրիական նորընտիր պառլամենտը վավերացրեց այդ պայմանագիրը:

Դրանով Սիրիան անցավ ճանապարհի իր մասը: Հերթը Ֆրանսիայինն էր:

Թվում էր, թե ֆրանս–սիրիական պայմանագրի ստորագրումից հետո նպաստավոր պայմաններ կստեղծվեն Սիրիայի անկախության ամրապնդման ուղղությամբ: Բայց այդպես չստացվեց, որովհետև պայմանագրի ստորագրումից հետո Ֆրանսիան բացահայտ և քողարկված ձևով ձգտում էր Սիրիան կախման մեջ պահել: Փարիզում որոշ հետադիմական և կայսերապաշտ ուժեր կարծում էին, որ Ֆրանսիան չափազանց մեծ զիջումներ է արել Սիրիային: Օգտագործելով 1936 թ. պայմանագիրը չվավերացնելու սպառնալիքը՝ ֆրանսիացիները Սիրիայից ձեռք բերեցին մի շարք զիջումներ: Սիրիական կառավարությունը հարկադրված երկարացրեց Սիրիայի և Լիբանանի բանկի գործունեության ժամկետը, կոնցեսիա շնորհեց ֆրանսիական նավթային ընկերություններին նավթի պաշարների հետազոտման համար, պարտավորվեց ընդլայնել Սիրիայի առևտուրը Ֆրանսիայի հետ և այլն: Ֆրանսիան ձեռք բերեց քրիստոնյա փոքրամասնություններին հովանավորելու իրավունք: Ֆրանսիական իշխանությունները խոռովություններ էին հրահրում Լաթաքիայում, Ջազիրայում, Ջաբալ Դրուզում և Սիրիայի այլ ծայրամասերում՝ ջանալով պահպանել նրանց ինքնավար կարգավիճակը և արգելակել սիրիական կենտրոնացված պետության ստեղծումը: Ֆրանսիան հասավ այն բանին, որ սիրիական կառավարությունը հարկադրված էր ճանաչել Լաթաքիայի, Ջաբալ Դրուզի և Ջազիրայի լայն ինքնավա-

րությունը, որը նահանջ էր սիրիական միասնական և կենտրոնացված պետություն ստեղծելու սկզբունքից:

Ի լրումն այս բոլորի՝ 1937–1939 թթ. ընթացքում իրագործվեց Ալեքսանդրետի սանջաքի բռնի անջատումը Սիրիայից և միացումը Թուրքիային: Դա մի անօրինական ակտ էր, որի դեմ վճռականորեն հանդես եկան բոլոր սիրիացիները և քաղաքական ուժերը: Դրա դեմ ակտիվորեն պայքարում էր սանջաքի բնակչության մեծամասնությունը՝ 77%–ը կազմող արաբները, հայերը, քրդերը և չերքեզները, մինչդեռ թուրքերը կազմում էին ընդամենը 23%–ը: Սակայն Ֆրանսիան, ղեկավարվելով իր իմպերիալիստական շահերով, ձգտելով սիրաշահել Թուրքիային մոտեցող Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին և ձեռք բերել նրա աջակցությունն իր մերձավորարևելյան քաղաքականության իրականացման բնագավառում, սիրիական տարածքի անբաժան մասը կազմող Ալեքսանդրետի սանջաքը 1939 թ. հունիսի 23–ին կնքված ֆրանս–թուրքական պայմանագրով պաշտոնապես զիջեց Թուրքիային: Դա տիպիկ իմպերիալիստական գործարք էր:

Սիրիայի տրոհման դեմ բողոքի հուժկու շարժում ծավալվեց Սիրիայում: Պառլամենտն ընդունեց հատուկ որոշում, որտեղ ասված էր. «Ալեքսանդրետի սանջաքի փոխանցումը Թուրքիայի գերիշխանությանն ապօրինի է և իրավական հիմքից զուրկ, և Սիրիական հանրապետությունը պահպանում է իր սուվերեն իրավունքներն այդ տարածքի վրա»: Սանջաքում բնակվող արաբների, քրդերի, չերքեզների և քեմալականներին չհամակրող թուրքերի մեծ մասը, իսկ հայերն ամբողջովին հեռացան սանջաքից և բնակություն հաստատեցին Սիրիայի և Լիբանանի տարբեր մասերում:

Այդ նույն տարիներին Ֆրանսիայում ուժեղացան հետադիմական ուժերի դիրքերը, որոնք հասան այն բանին, որ ֆրանսիական պառլամենտը 1939 թ. հունվարին հրաժարվեց վավերացնել 1936 թ. ֆրանս–սիրիական պայմանագիրը: Դա նշանակում էր, որ ուժի մեջ մնաց մանդատային ռեժիմը, և Ֆրանսիան լրիվ կերպով պահպանեց դրանից բխող իր իրավունքները: Լաթաքիան և Ջաբալ Դրուզը նորից անջատվեցին Սիրիայից: Ի նշան բողոքի՝ Սիրիայի պրեզիդենտ Հաշիմ ալ–Աթասին և Ջամիլ Սարդամի կառավարությունը հրաժարական տվեցին: Գլխավոր կոմիսարի հրամանով ցրվեց պառլամենտը, և վերացվեց սահմանադրությունը: Ամբողջ իշխանությունը կենտրոնացվեց ֆրանսիական գլխավոր կոմիսարի ձեռքում: Կառավարության փոխարեն

ստեղծվեց այսպես կոչված Դիրեկտորների խորհուրդ՝ Բահիջ ալ–Խատիբի գլխավորությամբ, որն աշխատում էր գլխավոր կոմիսարի անմիջական հսկողության տակ:

III. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՍԻՐԻԱՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄԸ (1939–1946 թթ.)

1. Սիրիան Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբում (1939–1941 թթ.)

Սիրիան անմիջական պատերազմի թատերաբեմ չդարձավ, սակայն պատերազմն ուղղակիորեն անդրադարձավ նրա քաղաքական և տնտեսական վիճակի վրա: Երկրում մտցվեց ռազմական դրություն, և սկսեցին գործել ռազմական օրենքները Ֆրանսիական կառավարության 1939 թ. սեպտեմբերի 2–ի որոշմամբ Սիրիան հայտարարվեց ռազմական գոտի, և Սիրիա ուղարկվեցին նոր ռազմական միավորումներ: Ոստիկանությունը և անվտանգության օրգանները դրվեցին բանակի հսկողության տակ, սահմանվեց խիստ գրաքննություն, արգելվեցին ցույցերը, առաջադիմական կազմակերպությունները, փակվեցին մի շարք թերթեր, ձերբակալվեցին ու բանտ նետվեցին բազմաթիվ արաբ և հայ առաջադիմական գործիչներ: 1940 թ. հուլիսին հետադիմական ուժերի զոհը դարձավ սիրիական ականավոր ազգային գործիչ Աբդ ալ–Ռահման Շահբանդերը:

Պատերազմի տարիներին խիստ վատացավ Սիրիայի տնտեսական վիճակը: Նա փաստորեն տնտեսական մեկուսացման ենթարկվեց արտաքին աշխարհից, կրճատվեց նրա արտահանումը և ներմուծումը: Երկրում զգացվում էր ամենաանհրաժեշտ ապրանքների պակաս, որի հետևանքով խիստ բարձրացան արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների գները: Պատերազմի հետևանքով առաջացած դժվարություններն իրենց ամբողջ ծանրությամբ ընկան աշխատավորների ուսերին: Ֆրանսիական իշխանությունները մտցրին մթերքների նորմավորում, բայց դա էլ չթեթևացրեց վիճակը: Ժողովուրդը քաղցած էր, և

նրան սով էր սպառնում: Այս հողի վրա ծայր առան մասսայական դժգոհություններ:

Երկրորդ համաշխարհային պատերազմում Ֆրանսիան պարտություն կրեց և 1940 թ. հունիսի 21–ին Կոմպյենյան անտառում ֆաշիստական Գերմանիայի հետ ստորագրեց հաշտության պայմանագիր. Ֆրանսիան անցավ ֆաշիստական Գերմանիայի տիրապետության տակ, և նա Վիշի քաղաքում նրա հետ համագործակցության պատրաստ մի շարք քաղաքական և զինվորական գործիչներից կազմեց կառավարություն, որի ղեկավարները եղան մարշալ Պետենը, Լավալը, Դառլանը, Վեյգանը և այլք: Այդ կառավարությունը չընդունվեց ֆրանսիական ժողովրդի կողմից, իսկ Վիշի անունը դարձավ Ֆրանսիայի ազգային շահերի դավաճանության խորհրդանիշ:

Ֆրանսիական հայրենասերների մի խումբ՝ գեներալ Շառլ դը Գոլի գլխավորությամբ չճանաչեց Ֆրանսիայի կապիտուլիացիան և հրաժարվեց համագործակցել վիշիականների ու գերմանական նացիստների հետ: Նրանք հայտարարեցին Ազատ Ֆրանսիայի ստեղծումը՝ նպատակ ունենալով շարունակել պայքարը գերմանական օկուպանտների դեմ: Անգլիան 1940 թ. հունիսի 28–ին գեներալ Շառլ դը Գոլին ճանաչեց Ազատ Ֆրանսիայի ղեկավար՝ խոստանալով նրան քաղաքական աջակցություն և ռազմական օգնություն:

Ֆրանսիայի կապիտուլյացիայից և Վիշիում նոր կառավարության կազմավորումից հետո, որը ֆաշիստական Գերմանիայի խամաճիկն էր, Լևանտում՝ Սիրիայում և Լիբանանում, ֆրանսիական քաղաքացիական և ռազմական իշխանությունները որոշեցին շարունակել պատերազմը և դիմադրել գերմանա–իտալական ոտնձգություններին, որոնք ուզում էին հաստատվել Արաբական Արևելքում, այդ թվում և Սիրիայում ու Լիբանանում: Լևանտում ֆրանսիական ուժերի գլխավոր հրամանատար Միթելհաուզերը, որն այդ պաշտոնում 1940 թ. մայիսի 18–ին փոխարինել էր գեներալ Վեյգանին, հայտարարեց, որ «Լևանտի բանակը կշարունակի պայքարը դաշնակիցների (իմա՝ Անգլիայի — Ն. Հ.) կողմում». Նույն ոգով արտահայտվեց գլխավոր կոմիսար Պյուռո: Սակայն այն բանից հետո, երբ 1940 թ. հունիսի 25–ին հրապարակվեց Վիշիի կառավարության պաշտպանության նախարար գեներալ Վեյգանի հրամանը ֆրանսիական գաղութներում ֆրանսիական գլխավոր հրամանատարներին, որտեղ նա պահանջում էր ընդունել և կատարել Գերմանիայի հետ կնքված հաշտության պայմանները, Միթելհաուզերը և Պյուռո փոխեցին

իրենց դիրքորոշումը և ենթարկվեցին Վեյգանի հրամանին: Նրանք հայտարարեցին, որ դադարեցնում են պատերազմական գործողությունները Գերմանիայի դեմ:

Ֆրանսիայի կապիտուլյացիան և Լնաանտի ֆրանսիական իշխանությունների կողմից Վիշիի կառավարությանը ենթարկվելը ծանր հետևանքներ ունեցան Սիրիայի և Լիբանանի համար: Անգլիան տնտեսական բլոկադայի ենթարկեց Սիրիան, 1940 թ. հունիսին փակվեցին Սիրիայի սահմանները Պաղեստինի և Լիբանանի հետ: Անգլիան դադարեցրեց նավթի, սննդամթերքի և այլ անհրաժեշտ ապրանքների մատակարարումը Սիրիային, որտեղ ներքաղաքական վիճակը խիստ սրվեց:

1940 թ հուլիսի 1–ին հրապարակվեց անգլիական կառավարության դեկլարացիան, որտեղ նշված էր, որ «Նորին մեծության կառավարությունը հայտարարում է, որ ինքը թույլ չի տա, որ որևէ թշնամի պետություն օկուպացնի Սիրիան կամ Լիբանանը կամ նրանց օգտագործի որպես բազա հարձակվելու Մերձավոր Արևելքի երկրների վրա, որոնց նա կոչված է պաշտպանելու»: Անգլիան օտարերկրյա պետություն ասելով նկատի ուներ Գերմանիան և Իտալիան:

Ժողովրդական մասսաները խիստ դժգոհ էին ֆրանսիական իշխանությունների քաղաքականությունից: 1941 թ. մի շարք հակաիմպերիալիստական ելույթներ տեղի ունեցան Դամասկոսում, Հալեպում, Հոմսում և այլ վայրերում: Իսկ 1941 թ. փետրվարի վերջերին հայտարարվեց համընդհանուր գործադուլ: Փակվեցին գործարանները, արհեստանոցները, խանութները և շուկաները, շարունակվում էին ցույցերը: Սիրիայի նոր գլխավոր կոմիսար գեներալ Դենցը նրանց դեմ հանեց ոստիկանական ուժերին և փորձեց բռնությամբ ճնշել ցույցերը, որի ժամանակ եղան բազմաթիվ զոհեր ու վիրավորներ: Բայց դա ոչ մի արդյունք չտվեց, և Դենցը ցուցարարների ու գործադուլավորների դեմ նետեց ֆրանսիական կանոնավոր զորքը: Դամասկոսի փողոցներում հայտնվեցին տանկեր ու զրահամեքենաներ: Ազգային բլոկը նորից առաջադրեց Սիրիային անհապաղ անկախություն տալու պահանջը, որը մերժվեց ֆրանսիացիների կողմից:

Սակայն նրանք, այնուամենայնիվ, հարկադրված էին դիմել որոշ զիջումների: 1941 թ. ապրիլին վերացվեց Դիրեկտորների խորհուրդը, և ստեղծվեց նախարարություն՝ Խալեդ ալ–Ազմի գլխավորությամբ: Ստեղծվեց նաև կոնսուլտատիվ խորհուրդ և պետական խորհուրդ, որը պետք է մշակեր օրենսդրություն. Պետական խորհրդի նախագահ նշա-

նակվեց Աբդ ալ–Ազմը: Բայց Ֆրանսիան շարունակում էր իր ձեռքում պահել երկրի կառավարման բոլոր օղակները և լծակները:

Սիրիայի ազգային–հայրենասիրական ուժերը շատ լավ գիտեին, որ Ֆրանսիան չի ցանկանում անկախություն տալ Սիրիային: Այդ պատճառով էլ նրանք պատերազմից որևէ սպասելիք չունեին: Պատերազմը, որը երկու համաշխարհային իմպերիալիստական ուժերի բախումն էր, իր էությամբ խորթ էր սիրիացիների համար: Պատահական չէր, որ չնայած ֆրանսիական մանդատային իշխանությունների բազմաթիվ կոչերին և Լևանտում ֆրանսիական ուժերի հրամանատար գեներալ Վեյգանի՝ Սիրիայում կատարած շրջագայություններին՝ նրանց չհաջողվեց ֆրանսիական բանակի համար տեղացիներից կամավորներ ցուցակագրել:

1941 թ. գարնանը խիստ սրվեց միջազգային իրադրությունը Սիրիայի շուրջը: Ավելի որոշակիորեն դրսևորվեցին գերմանական, ինչպես նաև իտալական ֆաշիստների հավակնությունները Սիրիայի վրա իրենց հսկողությունը հաստատելու և Սիրիան Մերձավոր Արևելքում իրենց զավթողական պլանների համար օգտագործելու խնդրում. Իր խաղաքարտերը բացեց նաև Թուրքիան, որը, չբավարարվելով Ալեքսանդրետի սանջաքի զավթումով, այժմ ձգտում էր իր տարածքներին միացնել նաև Հյուսիսային Սիրիան՝ Հալեպի ամբողջ շրջանը, և գրավել Բաղդադի երկաթուղագիծը: Ավելացնենք նաև, որ Սիրիան ձգտում էր Իրաքից անջատել և իրեն կցել ամբողջ Մոսուլի շրջանը:

2. Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի զորքերի մուտքը Սիրիա 1941 թ. և գեներալ Կատրուի դեկլարացիան

1941 թ. հունիսի 8–ին անգլիական և Ազատ Ֆրանսիայի զորքերը՝ դըգոլականները, անգլիական գեներալ սըր Վիլսոնի և ֆրանսիական գեներալ Ժորժ Կատրուի գլխավորությամբ անցան հարձակման և Լևանտ մտան Պաղեստինից, Անդրհորդանանից ու Իրաքից: Նրանք այդ քայլին դիմեցին կանխելու Սիրիայի և Լիբանանի զավթումը ֆաշիստական Գերմանիայի կողմից և նրանց վերածումը գերմանական հենակետի Մերձավոր Արևելքում: Անգլիան լավ էր հասկանում, որ արաբական երկրներից հետո հերթը հասնելու էր Հնդկաստանին, իսկ գերմանացիները չէին թաքցնում իրենց այդ մտադրությունը: Գերմանական հայտնի

դիվանագետ ֆոն Հենտիգը 1941 թ. մայիսի սկզբներին հայտարարեց, որ Սիրիան կամուրջ է հանդիսանում դեպի Հնդկաստան:

Թեև վիշիականները ցույց տվեցին ուժեղ դիմադրություն, դաշնակիցներին հաջողվեց կոտրել Դենցի զորքերի դիմադրությունը և մեկը մյուսի հետևից գրավել Սիրիայի ու Լիբանանի քաղաքները: 1941 թ. հունիսի 21–ին նրանք գրավեցին Դամասկոսը, հուլիսի 3–ին՝ Պալմիրան, Դեյր ալ–Զորը, Թել Քոչեկը: Հուլիսի 13–ին լրիվ ավարտվեց Սիրիայի և Լիբանանի գրավումը Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի կողմից:

Գեներալ Դենցը դեռևս հուլիսի 12–ին հաշտություն էր խնդրել, և հուլիսի 14–ին Ակրում կնքվեց հաշտության պայմանագիր, որով դաշնակից զորքերը օկուպացրին ամբողջ Սիրիան և Լիբանանը, իսկ վիշիականները հեռացան այնտեղից: Վիշիական բանակում ծառայող սպաների և զինվորների մի մասը միացավ Ազատ Ֆրանսիայի բանակին և մնաց Լևանտում: Նրանց միացան նաև սիրիական երիտասարդներից շատերը:

Վիշիական զորքերի պարտությունից հետո Սիրիան և Լիբանանը Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի տրամադրության տակ դրեցին իրենց նավահանգիստները, երկաթուղային և խճուղային ճանապարհներն ու զորանոցները:

Պատերազմական գործողությունները սկսվելու հենց նույն օրը՝ 1941 թ. հունիսի 8–ին, Լևանտում Ազատ Ֆրանսիայի ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Կատրուն Ազատ Ֆրանսիայի և նրա ղեկավար գեներալ Շառլ դը Գոլի անունից հրապարակեց դեկլարացիա՝ ուղղված Սիրիայի և Լիբանանի ժողովրդին, որտեղ ասված էր. «Սիրիայի և Լիբանանի ժողովուրդ: Ես գալիս եմ վերջ դնելու մանդատային ռեժիմին և ձեզ հռչակելու ազատ և անկախ: Դուք այսպիսով, այս պահից սկսած, ինքնիշխան անկախ ժողովուրդներ եք»: Այնուհետև նշելով, որ սիրիացիների և լիբանանցիների գործն է, թե նրանք մի պետություն կկազմեն, թե առանձին պետություններ՝ Կատրուն հայտարարում էր. «Բոլոր դեպքերում ձեր անկախ և սուվերեն ստատուսը կերաշխավորվի մի պայմանագրով, որը կորոշի մեր փոխադարձ հարաբերությունները»: Կատրուն հայտարարեց, որ բանակցությունները պայմանագիր կնքելու համար կսկսվեն, հենց որ դրա հնարավորությունը ստեղծվի:

1941 թ. հունիսի 8–ին հրապարակվեց անգլիական կառավարության հայտարարությունը Կատրուի դեկլարացիան պաշտպանելու վերաբերյալ.

Ազատ Ֆրանսիան հարկադրված էր հրապարակել վերոնշյալ բովանդակությամբ դեկլարացիա: Դա այն անհրաժեշտ քայլն էր, որի օգնության նա ձգտում էր իր կողմը գրավել Սիրիայի և Լիբանանի բնակչությանը և ապահովել նրանց աջակցությունը վիշիականների դեմ մղվող պատերազմական գործողությունների ժամանակ:

Դաշնակից զորքերի մուտքը և Կատրուի դեկլարացիան Սիրիայի և Լիբանանի ժողովուրդներն ընդունեցին գոհունակությամբ: Դա ազատեց նրանց ֆաշիստական վտանգից և հեռանկարներ բացեց անկախության ձեռքբերման համար: Սակայն այդ տոնական տրամադրությունները երկար չտևեցին, քանի որ Ազատ Ֆրանսիան չէր շտապում իրականացնել իր խոստումները, որը սիրիացիների խիստ դժգոհություն առաջացրեց: Նրանք ոչ մի կերպ չէին հաշտվում անկախություն տալու հետաձգման հետ: Հաշվի առնելով այդ հանգամանքը և ջանալով կանխել իրադրության հետագա վատթարացումը՝ Կատրուն, որը սկսեց կոչվել Լևանտում ֆրանսիական գլխավոր դելեգատ, 1941 թ. սեպտեմբերի 27–ին կրկին հավաստեց հունիսի 8–ի դեկլարացիան և Սիրիան ձևականորեն հռչակեց անկախ պետություն: Խալեդ ալ–Ազմի կառավարությունը հրաժարական տվեց: Կատրուն փորձեց նոր կառավարություն կազմել՝ բանակցություններ վարելով Հաշիմ ալ–Աթասիի և նրա կողմնակիցների հետ, սակայն վերջիններս հրաժարվեցին մասնակցել մի կառավարության, որը, նրանց կարծիքով, գործիք էր լինելու գլխավոր դելեգատի ձեռքում: Դրանից հետո Կատրուն Սիրիայի պրեզիդենտ նշանակեց շեյխ Թաջ ալ–Դինին, իսկ վարչապետ՝ Հասան ալ–Հաքիմին: Հատկանշական է, որ ալ–Հաքիմի կառավարության մեջ չմտավ Քութլա ալ–վաքանիայի և ոչ մի ներկայացուցիչ:

Սիրիայի անկախությունը ձևական էր, և փաստացի ամբողջ իշխանությունը շարունակում էր մնալ դրգոլական ֆրանսիական իշխանությունների ձեռքում: Ահա թե ինչու Սիրիայում սկսվեց պայքար երկրի ձևական անկախությունն իրական անկախության վերածելու համար: Ֆիլիպ Հիթթին նշում է, որ Սիրիային տրված անկախությունն անվանական էր, «շատ քիչ փոփոխություն կար անձնավորությունների և առավել քիչ՝ մեթոդների միջև»: Դժգոհության մյուս աղբյուրն այն էր, որ նոր պրեզիդենտը և կառավարությունը ոչ թե ընտրվեցին, այլ նշանակվեցին գլխավոր դելեգատի կողմից: Այլ կերպ ասած՝ պահպանվեց ֆրանսիական գլխավոր կոմիսարի պրակտիկան:

Սիրիական ազգային–ազատագրական ուժերի հիմնական պահանջը դարձավ սահմանադրության վերականգնումը և վերադարձը սահմանադրական կյանքին: Երկրում կուտակված դժգոհությունն իր արտացոլումը գտավ բազմաթիվ հակաֆրանսիական ելույթների մեջ, որոնք տեղի ունեցան ամբողջ 1942 թ. և 1943 թ. սկզբներին: 1942 թ. Հոմսում և Համայում ընդհարումներ տեղի ունեցան ֆրանսիական զորքերի և բնակչության միջև: Այդ նույն թվականին մայիսմեկյան մեծ հավաքույթ տեղի ունեցավ Դամասկոսում: Սիրիայում ծավալվել էր իսկական համազգային շարժում: Դրան ակտիվորեն մասնակցում էին նաև սիրիահայ աշխատավորները և առաջադիմական ուժերը Նրանք հետևողականորեն պաշտպանում էին սիրիացիների հակաֆաշիստական և հակաիմպերիալիստական պայքարը: Հայաստանի պաշտպանության սիրիահայ կոմիտեի հայտարարության մեջ ասված էր. «Մենք չենք մոռանում մեր պարտքը Սիրիայի՝ մեր երկրորդ հայրենիքի հանդեպ»: 1942–1943 թթ. Սիրիայի տարբեր մասերում գումարվում էին արաբների և հայերի համատեղ հավաքույթներ, որի ժամանակ ընդգծվում էր երկու ժողովուրդների նպատակների նույնությունը:

Ֆրանսիական իշխանությունները դիմում էին բացահայտ ճնշումների և արգելում ցույցերն ու ելույթները. սահմանվեց խիստ գրաքննություն, արգելվեց մի շարք թերթերի հրատարակությունը, իսկ 1943 թ. մարտին կառավարության որոշումով մի քանի շաբաթով փակվեցին դպրոցները:

Այսպիսով՝ Սիրիայում կրկին սկսվել էր մի իսկական համազգային շարժում՝ հանուն Սիրիայի իրական անկախության:

3. Սահմանադրության վերականգնումը և պառլամենտական ընտրությունները: Շուքրի Քուաթլին Սիրիայի անկախ հանրապետության առաջին պրեզիդենտ

Ստեղծված պայմաններում Ազատ Ֆրանսիան հարկադրված էր զիջել: Սահմանադրության վերականգնման և ընտրությունների անցկացման վրա պնդում էր նաև Մեծ Բրիտանիան: Որոշ տատանումներից հետո Ազատ Ֆրանսիայի ղեկավարությունը 1943 թ. մարտի 25–ին որոշեց վերականգնել 1930 թ. մայիսի 14–ի Սիրիայի սահմանադրությունը և անցկացնել պառլամենտական ընտրություններ. Դա արդեն

լուրջ հաղթանակ էր, որը մեծ գոհունակությամբ ընդունեցին ժողովրդական զանգվածները և տարբեր երանգների քաղաքական ուժերը:

Թեև գերիշխող ընդհանուր տրամադրությունն այն էր, որ Սիրիան պետք է լինի հանրապետություն, այդուհանդերձ, սիրիական որոշ շրջաններ, գլխավորապես կալվածատիրական–ֆեոդալական և ցեղային ավագանու ճամբարից, եղան առաջարկություններ առ այն, որ Սիրիայում պետք է հաստատվի միապետություն: Այդ տեսակետը բացահայտորեն ներկայացրեց նրանց շահերի արտահայտիչ «Ալիֆ բա» թերթը: Նա գրում էր, որ Սիրիայի երջանկությունը միապետական վարչակարգի մեջ է, և «արաբները, որոնք իրենց թագավորությունը կորցրեցին 400 տարի առաջ, դրանից հետո ապրել են ծանր ստրկության պայմաններում: Վերջապես նրանք կրկին գտան ճշմարիտ ուղին: Նրանց արքաները թագավորում են Եգիպտոսում, Իրաքում, Սաուդյան Արաբիայում և Եմենում»: Այդ շրջանակները և նրանց ձայնափողը հանդիսացող վերոնշյալ թերթը գտնում էին, որ ճիշտ կլինի, եթե Սիրիան նույնպես գնա այդ ուղիով:

Բայց այդ տեսակետը մնաց նեղ շրջանակների ցանկությունը, որը ոչ մի պաշտպանություն չգտավ սիրիական հասարակության կողմից:

Ընտրություններն անցկացնելու համար 1943 թ. մարտի 25–ին Սիրիայում ստեղծվեց ժամանակավոր կառավարություն՝ Աթա ալ–Այուբիի գլխավորությամբ:

Ընտրությունները երկաստիճան էին: 1943 թ. հուլիսի 10–11–ը տեղի ունեցավ ընտրությունների առաջին փուլը, իսկ հուլիսի 26–ին՝ երկրորդը:

Պառլամենտական ընտրություններում հաղթեց Ազգային բլոկը՝ Քութլա ալ–վաթանիյան՝ Շուքրի Քուաթլիի գլխավորությամբ: Պառլամենտի դեպուտատներ ընտրվեցին նաև չորս հայեր, մեկը՝ Դամասկոսից, երեքը՝ Հալեպից:

1943 թ. օգոստոսի 17–ին բացվեց Սիրիայի նորընտիր պառլամենտի առաջին նիստը, որը Սիրիայի պրեզիդենտ ընտրեց սիրիական ազգային շարժման խոշոր գործիչներից մեկին, Քութլա ալ–վաթանիյայի ազգային–քաղաքական խմբավորման ղեկավար Շուքրի Քուաթլիին: Ֆարիս ալ–Խուրին ընտրվեց պառլամենտի նախագահ, իսկ մի քանի օր անց Սաադալլահ ալ–Ջաբրին կազմեց անկախ Սիրիայի առաջին ազգային կառավարությունը: Նա Շուքրի Քուաթլիի զինակիցներից և սիրիական ազգային–ազատագրական շարժման ականավոր դեմքերից մեկն էր:

Այդ բոլորը սիրիական ազգային–հայրենասիրական ուժերի մեծ հաղթանակն էր, որն աննախադեպ գոհունակությամբ ընդունվեց բոլոր սիրիացիների կողմից: Ամենուր՝ քաղաքներում և գյուղական շրջաններում, փողոցներում թե հանրային վայրերում, տեղի էին ունենում տոնախմբություններ և զանազան բնույթի տոնական հավաքներ, որոնց ժամանակ պատրաստակամություն էր հայտնվում կրծքով պաշտպանել նորաստեղծ հանրապետությունը:

Դրանց շարքերում էին նաև Սիրիայի հայերը: 1943 թ. դեկտեմբերի 5–ին Դամասկոսի թեմի փոխանորդ գերաշնորհ Եփրեմ արքեպիսկոպոս Տոհմունին այցելեց Սիրիայի հանրապետության նորընտիր պրեզիդենտ Շուքրի Քուաթլիին և նրան շնորհավորելով ու փոխանցելով հայության «հավատարմության զգացմունքները»՝ նշում է, որ հայ ժողովուրդը Սիրիայի ամենաանկեղծ և հավատարիմ քաղաքացին պիտի մնա և «ամեն առիթով ցույց պիտի տա իր հավատարմության զգացումները՝ գործով իսկ, եթե հարկ լինի նաև իր կյանքով»:

Պրեզիդենտն իր պատասխան խոսքում նշում է, որ ինքը չափազանց զգացված է հայերի հավատարմությունից և ընդգծում. «Մեր հարգանքը և վստահությունը հայերի հանդեպ համոզմունքի ուժ ունի.— Վստահեցնելով հայոց պատվիրակությանը, որ հայերը Սիրիայում կօգտվեն այն նույն իրավունքներից, որ օգտվում են Սիրիայի արաբները՝ պրեզիդենտ Շուքրի Քուաթլին ավելացնում է,— իսկ եթե մի օր որևէ մեկն ուզենա ոտնահարել հայերի իրավունքներն այս երկրների (ինա՝ Սիրիայի և Լիբանանի — Ն. Հ) մեջ, ես այդ բանին արգելք պիտի լինեմ՝ ի հարկին արյանս գնով»:

Այսպիսով՝ սահմանադրության վերականգնումը, պառլամենտական ընտրությունների անցկացումը, հանրապետության պրեզիդենտի ընտրությունը և ազգային կառավարության կազմումը նշանակում էին լուրջ և պատմական նշանակություն ունեցող իրադարձություն:

4. Ֆրանսիական մանդատի վերացումը և Սիրիայի անկախության ու ինքնիշխանության ամբողջացումը (1944–1946 թթ.)

Սիրիայի կառավարության առջև կանգնած էին մի շարք բարդ խնդիրներ, որոնց լուծումից էր կախված Սիրիայի հետագա քաղաքական ճակատագիրը: Դրանց մեջ տվյալ ժամանակահատվածում ամենագլխավորները երկուսն էին՝ Սիրիայի պաշտոնական ազատագրումը ման-

դատային տիրապետությունից, որի համար անհրաժեշտ էր սահմանադրությունից վերացնել այն հոդվածը, որ վերաբերում էր Ֆրանսիայի՝ որպես մանդատատեր պետության իրավունքներին, և Սիրիայի կառավարման բոլոր ֆունկցիաների փոխանցումը սիրիական ազգային կառավարությանը:

Սիրիական կառավարությունն առաջինը ծեռնամուխ եղավ երկիրը մանդատային ռեժիմի կապանքներից ազատելուն: Իրավաբանորեն դրա համար անհրաժեշտ էր սահմանադրությունից վերացնել ֆրանսիական մանդատին վերաբերող 116–րդ հոդվածը:

Ֆրանսիան ճնշում էր գործադրում սիրիական կառավարության վրա և ամեն ինչ անում, որ նա չդիմի այդ քայլին: 1943 թ. նոյեմբերի 4–ին Ազատ Ֆրանսիայի բարձրագույն մարմինը համարվող Ազատագրության կոմիտեն հրապարակեց մի հայտարարություն, որտեղ ասված էր, որ մինչև Սիրիայի և Լիբանանի հարաբերությունները Ֆրանսիայի հետ պարզորոշ ու հստակ չսահմանվեն, Ֆրանսիան հրաժարվում է նրանց փոխանցել որևէ իշխանություն, որ իրեն շնորհվել է մանդատի միջոցով:

Սիրիական կառավարությունը չենթարկվեց Ֆրանսիայի ճնշմանը: Շուքրի Քուաթլին Կատրուի հետ հանդիպման ժամանակ նրան ասաց, որ սիրիացիները «մանդատային ռեժիմը հաստատվելու առաջին օրվանից երբեք չեն ճանաչել մանդատը»:

Սիրիական կառավարությունը ֆրանսիական մանդատի վերացման հարցը 1943 թ. նոյեմբերի վերջերին մտցրեց սիրիական պառլամենտի քննարկմանը: 1943 թ. նոյեմբերի 28–ին սիրիական պառլամենտի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը, քննարկելով այդ հարցը, պառլամենտին ներկայացրած իր զեկուցագրում և հանձնարարականում նշում էր, որ սիրիական սահմանադրության 116–րդ հոդվածը, որը պարտադրել էր Ֆրանսիան, իրավունք է տալիս ֆրանսիական իշխանություններին միջամտել Սիրիայի ներքին գործերին, օրենսդրությանը: Հանձնաժողովը, ընդգծելով, որ դա անհամատեղելի է սիրիական պետության ինքնիշխանության հետ, պահանջեց վերացնել այդ հոդվածը, որը նշանակում էր կառավարման մանդատային համակարգի վերացում: Հանձնաժողովն առաջարկեց նաև հրավիրել պառլամենտի հատուկ նստաշրջան և այնտեղ երդում տալ սահմանադրության միայն 1–115 հոդվածներին: Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի այդ երկու առաջարկություններն էլ հավանության արժանացան դեպու-

տատների կողմից, և որոշվեց 1944 թ. հունվարին հրավիրել պառլամենտի հատուկ նստաշրջան՝ փոփոխության ենթարկելու սահմանադրությունը և երդում տալու այդ փոփոխված տարբերակին:

Սիրիական պառլամենտի հատուկ նստաշրջանը բացվեց 1944 թ. հունվարի 24–ին: Այդ օրը պառլամենտի նիստում Սիրիայի պրեզիդենտ Շուքրի Քուաթլին և պառլամենտի անդամները հավատարմության երդում տվեցին սահմանադրության միայն 1–115 հոդվածներին: Դա նշանակում էր, որ 116–րդ հոդվածը չեղյալ էր հայտարարվում, և մանդատի վերացումը սիրիական պառլամենտի կողմից ստանում էր օրենսդրական ուժ:

1944 թ. օրենսդրական ակտն ուներ պատմական նշանակություն: Այն Ֆրանսիային զրկում էր Սիրիայի վրա իր տիրապետությունը պահպանելու, նրա ներքին գործերին միջամտելու և նրան իր կամքը թելադրելու իրավական հիմքից:

Այուս կարևոր հարցը Ֆրանսիայի կողմից իշխանությունը, կառավարման բոլոր ֆունկցիաները Սիրիային, ինչպես նաև Լիբանանին փոխանցելու հարցն էր, որից հետո միայն կարելի էր խոսել Սիրիայի իսկապես անկախ և ինքնիշխան պետության մասին: Այդ հարցի շուրջը դեռևս 1943 թ. դեկտեմբերի 21–ին Դամասկոսում սկսվել էին ֆրանս–սիրիա–լիբանանյան բանակցություններ: Բանակցությունները տևեցին երկու օր և դեկտեմբերի 23–ին հրապարակվեց համատեղ հայտարարություն, որտեղ ասված էր, որ ֆրանսիական իշխանությունները 1944 թ. հունվարի 1–ից Սիրիայի և Լիբանանի կառավարություններին են փոխանցում բոլոր այն իրավասությունները՝ օրենսդրական և կառավարման իրավունքի հետ միասին, որ ֆրանսիական իշխանություններն իրականացնում էին Ֆրանսիայի անունից:

1944 թ. հունվարից սկսվեց ֆրանսիական իշխանությունների կողմից կառավարման ֆունկցիաների փոխանցումը: Սիրիային փոխանցվեցին այսպես կոչված «Ընդհանուր շահերի» սպասարկությունը, որի մեջ մտնում էին մաքսային վարչությունը, հսկողությունը կոնցեսիաների և մենաշնորհների վրա: Սիրիայի կառավարությանը փոխանցվեցին նաև ծխախոտի՝ Ռեժիի մենաշնորհի, Դամասկոսի տրամվայի, Հալեպի, Հոմսի և Համայի էլեկտրական ընկերությունների, փոստի և հեռագրի, երկաթուղիների, առևտրի և արդյունաբերության սեփականությունների, հնությունների պահպանման սպասարկությունները: Դրա

հետևանքով սիրիական կառավարությունն ինքը սկսեց իրականացնել երկրի ներքին կառավարման ֆունկցիաները:

Մնում էր ևս մեկ կարևոր հարց՝ հատուկ զորամասերի կամ ազգային բանակի հանձնումը Սիրիային, ինչպես նաև Լիբանանին:

Հատուկ զորամասերը Սիրիայի ազգային բանակն էր, որ հավաքագրվում էր արաբներից, ինչպես նաև չերքեզներից, քրդերից և հայերից: Նրանք գտնվում էին ֆրանսիական սպաների հրամանատարության ներքո և ենթարկվում ֆրանսիական ռազմական ուժերի հրամանատարությանը: Առանց ազգային բանակի խոսք չէր կարող լինել Սիրիայի կատարյալ անկախության մասին, ուստի և սիրիական կառավարությունը պաշտոնապես Ֆրանսիայի առջև դրեց հատուկ զորամասերն իրեն հանձնելու պահանջը: 1944 թ. սկզբներից Սիրիայում լայն շարժում սկսվեց ի պաշտպանություն այդ պահանջի: Ֆրանսիան զանազան պատրվակներով հրաժարվում էր դրականորեն լուծել այդ հարցը: Սիրիայում ծայր առան մասսայական ցույցեր՝ «Երկիրն առանց բանակի չի կարող գոյություն ունենալ» լոզունգի ներքո: Սիրիական կառավարությունը դիմեց գործնական քայլերի ազգային բանակ ստեղծելու ուղղությամբ: 1945 թ. հունվարին որոշում ընդունվեց պետական բյուջեում համապատասխան հատկացումներ կատարել այդ նպատակի համար: Միաժամանակ սիրիական պառլամենտը որոշում ընդունեց այլևս չվարկավորել ֆրանսիական խորհրդականներին և մասնագետներին, ինչը նշանակում էր, որ նրանք պետք է հեռանային իրենց գրաված պաշտոններից: Սիրիայում ստեղծվել էր լարված մթնոլորտ: Դամասկոսում, Հալեպում և այլ վայրերում 1945 թ. հունվար–փետրվար ամիսներին եղան ցույցեր՝ ուղղված ֆրանսիացիների դեմ: Որոշ հետադիմական տարրեր հակաիմպերիալիստական պայքարի շարքերը պառակտելու նպատակով դարձյալ փորձեցին թշնամություն հրահրել մուսուլմանների և քրիստոնյաների, այդ թվում և արաբների ու հայերի միջև: Սակայն այդ փորձերը ձախողվեցին: Հալեպի Նոր գյուղի հայաշատ շրջանում արաբները ու հայերը համատեղ ցույց կազմակերպեցին, որի ժամանակ շեշտվում էր հայերի և արաբների անխախտ բարեկամությունը և միասնական ճակատով հանդես գալու անհրաժեշտությունը:

Ստեղծված պայմաններում ֆրանսիական գլխավոր դելեգատ Բեյնեն, որն այդ պաշտոնում էր նշանակվել 1944 թ. փետրվարին, իր կառավարության անունից 1945 թ. մայիսի 18–ին ներկայացրեց նոր առաջարկություններ: Ֆրանսիան համաձայն էր հատուկ զորամասերը փոխանցել

Սիրիային, եթե վերջինս երեք պայմանագիր կնքեր Ֆրանսիայի հետ: Դրանցից առաջինը պետք է ապահովեր ֆրանսիական մշակութային հիմնարկների անկախությունը, երկրորդը՝ Ֆրանսիայի տնտեսական իրավունքները, իսկ երրորդը վերաբերում էր ռազմաստրատեգիական հարցերին: Ֆրանսիան պահանջում էր, որ իրեն իրավունք տրվի ունենալ ռազմածովային և ռազմաօդային բազաներ և Սիրիայում ու Լիբանանում պահպանել ֆրանսիական ռազմական հրամանատարությունը.

Սիրիական կառավարությունը մերժեց այս պահանջները՝ որպես անհամատեղելի Սիրիայի անկախության և սուվերենության հետ:

Ֆրանսիան, առանց Սիրիայի և Լիբանանի կառավարությունների գիտության և համաձայնության, լրացուցիչ ռազմական ուժեր տեղափոխեց Լևանտ: Դրանով նա ուզում էր ահաբեկել Սիրիային ու Լիբանանին և ստիպել նրանց ընդունել իր պահանջները: Սակայն Սիրիան չընկրկեց այդ ճնշման առաջ: 1945 թ. մայիսի 6–ին Սիրիայի արտաքին գործերի նախարար Ջամիլ Մարդամը բողոքի նոտա հղեց Ֆրանսիային, որտեղ ասված էր, որ ֆրանսիական նոր զորքերի ժամանումը Սիրիա, առանց վերջինիս կառավարության գիտության, անհամատեղելի է Սիրիայի անկախության հետ:

Սիրիական կառավարությունն անհրաժեշտ համարեց ֆրանսիական իշխանությունների անօրինակ գործողությունների և սիրիա–ֆրանսիական նոր դիմակայության մասին տեղյակ պահել նաև միջազգային հանրությանը:

Հաշվի առնելով ֆրանսիական սպառնալիքները՝ սիրիական պառլամենտը 1945 թ. մայիսի 19–ին ընդունեց օրենք ազգային պաշտպանության մասին, որը կառավարությանն իրավունք էր տալիս կատարել զորահավաք և ստեղծել ազգային սպայական կորպուս: Կառավարությունը թույլատրեց նաև կամավորների ցուցակագրում, որը չտեսնված խանդավառություն առաջացրեց երկրում: Միաժամանակ ամրապնդվեցին ոստիկանական ուժերը, որոնք տվյալ պահին երկրի միակ ազգային զինված ուժերն էին:

Երկրում նոր թափ ստացավ ազգային–ազատագրական պայքարը: Մայիսի 20–ին ամբողջ Սիրիայում հայտարարվեց համընդհանուր գործադուլ: Բազմամարդ ցույց տեղի ունեցավ Դամասկոսում, որի ժամանակ ֆրանսիական զորքերը կրակ բացեցին ցուցարարների վրա: Մայիսի 20–ին արյունալի ընդհարումներ տեղի ունեցան Հալեպում: Ֆրանսիական զինվորական իշխանությունները Հալեպ մտցրեցին զրա-

համեքենաներ, որոնք փողոցները ցուցարարներից մաքրում էին՝ նրանց վրա կրակելով: Եղան բազմաթիվ զոհեր ու վիրավորներ: Դամասկոսում, Հալեպում, Համայում, Հոմսում, Դեյր ալ–Զորում, Ջաբալ Դրուզում և այլ վայրերում զինված մարտեր էին ընթանում ֆրանսիական զորքերի և սիրիական հայրենասիրական ուժերի միջև: Դա մի համաժողովրդական զինված պայքար էր, որի ժամանակ արաբների կողքին մարտնչում էին նաև չերքեզներ ու հայեր: Չերքեզները մեծ ցույց կազմակերպեցին ի պաշտպանություն Սիրիայի անկախության: Հայերը որպես կամավորներ զանգվածաբար մտնում էին սիրիական նորաստեղծ զորամիավորումներ, Դամասկոսում, Հալեպում ու այլ վայրերում զենքը ձեռքներին մարտնչում հանուն Սիրիայի ազատության: Նրանց այդ հայրենասիրական դիրքորոշումը բարձր գնահատեց Հալեպի նահանգապետ Իհսան Շարաֆը: 1945 թ. մայիսի 21–ին ընդունելով հայ պատվիրակությանը՝, նա «խորին շնորհակալություն հայտնեց հայերին վերջին դեպքերի առթիվ որդեգրած ընթացքի առթիվ»: Հայերը նման դիրք գրավեցին նաև Դամասկոսում. Այստեղ Տոհմունի սրբազանի նախագահությամբ տեղի ունեցավ Դամասկոսի թեմական և քաղաքական խորհուրդների համատեղ նիստ, որից հետո պաշտոնապես հայտարարվեց, որ «սիրիահայ ժողովուրդը՝ որպես սիրիական հպատակ, գիտակից իր պարտականությանը, իր բովանդակ գործակցությունն ու զոհողությունները կբերե հասարակաց դատին, բոլոր սիրիացիների կողքին»:

Ֆրանսիական ռազմական իշխանությունների բռնություններն իրենց նպատակին չհասան, և Սիրիան չհանդարտվեց: Մայիսի 27–ին ֆրանսիացիները ռմբակոծեցին Համան: Այստեղ հրապարակվեց «Պատերազմական դեկլարացիա»՝ ուղղված Ֆրանսիայի դեմ: Քաղաքագլուխը մի քանի օր ռազմական գործողությունների ամփոփագիր էր հրապարակում: Ֆրանսիացիները ստիպված տանկեր մտցրեցին այդ քաղաքը:

Այդ նույն օրը՝ մայիսի 27–ին, հակաֆրանսիական ցույց սկսվեց Հոմսում, որը վերածվեց զինված ապստամբության. Փողոցներում բարիկադներ էին կանգնեցվում, զինված բնակչությունը հարձակումներ էր գործում ֆրանսիական գրասենյակների վրա և մարտի բռնվում ֆրանսիական գումարտակի հետ:

Ապստամբությունը մեծ թափ ստացավ Ջաբալ Դրուզում: Ապստամբները Սուլթան Աթրաշի գլխավորությամբ իսկական մարտեր էին մղում ֆրանսիացիների դեմ. Նրանք գերի վերցրեցին Ջաբալ Դրուզում

գտնվող բոլոր ֆրանսիական սպաներին և Ջաբալ քաղաքը ազատագրեցին ֆրանսիացիներից: Քաղաքի բոլոր ձեռնարկությունների վրա բարձրացվեցին սիրիական դրոշներ: Ֆրանսիական բանակում ծառայող մոտ երկու հազար դրուզ զինվորներ իրենց զենքով, ռազմամթերքով և մի քանի զրահամեքենաներով անցան ապստամբների կողմը:

Մեծ հաջողությունների հասան ապստամբները Դեյր ալ–Զորի շրջանում: Մոտ 15 հազար հայրենասերներ մայիսի 31–ին ազատագրեցին այդ ամբողջ շրջանը: Նոր և կարևոր հաղթանակի հասան ապստամբները Հալեպում՝ ստիպելով ֆրանսիական զորքերին հեռանալ Հալեպի հռչակավոր ամրոցից:

Կատաղի մարտեր էին գնում Դամասկոսում: Ֆրանսիացիները որոշեցին այդտեղ տալ վճռական ճակատամարտը՝ հույս ունենալով, որ մայրաքաղաքում հաջողության հասնելու դեպքում դա իր ազդեցությունը կունենա ապստամբական մյուս կենտրոնների վրա: Ֆրանսիացիները Դամասկոսի ռմբակոծումը սկսեցին 1945 թ. մայիսի 29–ին՝ առավոտյան ժամը 6:50–ին: Քաղաքի ռմբակոծումը կատարվում էր զենքի բոլոր տեսակներից՝ գնդացիրներից, ականանետներից և ծանր հրետանուց: Նրանց միացավ նաև ավիացիան, քաղաք ներխուժեցին տանկեր ու զրահամեքենաներ: Չնայած ուժեղ դիմադրությանը՝ նրանց հաջողվեց գրավել Դամասկոսի քաղաքապետարանի, ապա նաև սիրիական պառլամենտի շենքերը: Զինվորներն իրենց գրաված վայրերում կողոպտում և թալանում էին խանութները, կրակում և սպանում էին, ով հանդիպեր. հիվանդանոցներում տեղ չկար վիրավորների համար:

Բայց Դամասկոսի բնակչությունը և ոստիկանությունը չընկրկեցին ֆրանսիացիների առջև: Ոչ մի տուն կամ թաղամաս ֆրանսիացիներին չէր հաջողվում գրավել առանց դիմադրության և զոհերի: Պայքարի էին ելել բոլորը՝ թե՛ մեծ, թե՛ փոքր,·ով կարող էր զենք կրել, արաբը և հայը, մուսուլմանը և քրիստոնյան: Դամասկոսի կաթողիկոսական փոխանորդ արքեպիսկոպոս Տոհմունին մայիսի 30–ին հանդիպեց Սիրիայի ներքին գործերի նախարար Թակրի Ասալիհին և պառլամենտի 5 անդամների ներկայությամբ հայտարարեց, որ «ինքը և իր հոտը՝ իբրև հավատարիմ և հարազատ սիրիացիներ, պատրաստ են ծառայելու երկրի շահերին՝ հանձն առնելով ամեն տեսակ զոհողություններ»: Այնուհետև հայ եպիսկոպոսը նրանց տեղյակ է պահում, որ «ինքը՝ իբրև 65 տարեկան մի հովիվ, պատրաստ է հայերի առջևից ընթանալու այդ երկրի շահերի պաշտպանության և պահպանման համար կազմված ու կազմվելիք ու-

ժերի մեջ»: Վերջում նա խնդրում է նախարարին և դեպուտատներին հայերի այդ կեցվածքի մասին տեղյակ պահել Սիրիայի պրեզիդենտ Շուքրի Քուաթլիին և կառավարությանը: Հայերը կամավորագրվում են սիրիական բանակին և մասնակցում Դամասկոսի պաշտպանությանը:

1945 թ. մայիսյան ապստամբության օրերին ամբողջ Սիրիայում եղան բազմաթիվ զոհեր: Միայն Դամասկոսում, որը երեք օր անընդհատ ռմբակոծման էր ենթարկվում, զոհվեց 400 և վիրավորվեց 1500 մարդ: Զգալի էին զոհերը նաև Հալեպում, Հոմսում, Համայում, Ջաբալ Դրուզում, Դեյր ալ–Զորում, Կամիշլիում և այլ վայրերում:

Ամբողջ աշխարհի առաջադեմ հասարակությունը դատապարտեց Ֆրանսիային՝ Սիրիայի դեմ նրա ագրեսիվ գործողությունների համար: Ի պաշտպանություն Սիրիայի հանդես եկան Իրաքը, Եգիպտոսը, Լիբանանը և արաբական մյուս երկրները: Կոնֆլիկտին վճռականորեն միջամտեց Անգլիան, որը 1945 թ. մայիսի 31–ին վերջնագիր ներկայացրեց Ֆրանսիային՝ պահանջելով դադարեցնել կրակը: Ֆրանսիան հարկադրված էր նահանջել: Կրակը ամբողջ Սիրիայում դադարեցվեց և ֆրանսիական զորքերի փոխարեն Դամասկոս և մի շարք այլ քաղաքներ մտցվեցին անգլիական զորքերը՝ Սիրիայում կարգ ու կանոնը վերականգնելու և արյունահեղությունը դադարեցնելու պատրվակով:

Մայիսյան իրադարձությունները համոզիչ կերպով ցույց տվեցին, որ Ֆրանսիան ի վիճակի չէ զենքի ուժով Սիրիային պարտադրել անիրավահավասար պայմանագիր և թելադրել իր կամքը: Եվ նա ստիպված էր կրկին նահանջել: Ֆրանսիական կառավարությունը 1945 թ. հուլիսի 8–ին հայտարարեց, որ պատրաստ է 45 օրվա ընթացքում հատուկ զորամասերը փոխանցել Սիրիային և Լիբանանին: Եվ, իրոք, Ֆրանսիան այս անգամ իր խոսքի տերը եղավ:

Դեռևս մայիսյան արյունալի իրադարձությունների ժամանակ՝ 1945 թ մայիսի 20–ին, սիրիական կառավարությունն առաջ քաշեց օտարերկրյա՝ ֆրանսիական և անգլիական բանակների էվակուացիայի հարցը: Քանի դեռ այդ բանակները չէին դուրս բերվել Սիրիայից, խոսք չէր կարող լինել Սիրիայի անկախության ամբողջացման մասին. Հետագայում սիրիական կառավարությունը բազմիցս պաշտոնապես պնդեց իր այդ պահանջի վրա: Սակայն Ֆրանսիան և Անգլիան զանազան պատրվակներով չէին ցանկանում բավարարել սիրիական կողմի օրինական պահանջը: Իսկ 1945 թ. դեկտեմբերի 13–ին նրանք ստորագրեցին Մերձավոր Արևելքի վերաբերյալ համաձայնագիր, որով զորքերի

էվակուացման հարցը փոխարինվեց զորքերի վերախմբավորման և Մերձավոր Արևելքը ազդեցության գոտիների բաժանելու հարցով: Սիրիական կառավարությունը 1945 թ. դեկտեմբերի 31–ին պաշտոնապես բողոքեց այդ համաձայնագրի դեմ: Համաձայնագրի ստորագրումը խոր վրդովմունք առաջացրեց երկրում: Հուզումներն ընդգրկեցին Դամասկոսը, Հալեպը, Հոմսը, Համան և այլ քաղաքներ ու շրջաններ: Տեղի էին ունենում բողոքի միտինգներ, ցույցեր ու գործադուլներ: Սիրիական կառավարությունը, տեսնելով, որ երկկողմանի բանակցությունների միջոցով հնարավոր չէ հասնել հարցի դրական լուծմանը, 1946 թ. փետրվարի 4–ին Լիբանանի կառավարության հետ միասին, որի առջև նույնպես կանգնած էր օտարերկրյա զորքերի դուրսբերման հարցը, դիմեցին ՄԱԿ–ին՝ քննարկելու այդ խնդիրը: ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը 1946 թ. փետրվարի 14–ից ձեռնամուխ եղավ Սիրիայի և Լիբանանի գանգատի քննարկմանը:

Սիրիան և Լիբանանը պահանջում էին, որ Անվտանգության խորհուրդը որոշում ընդունի անգլիական և ֆրանսիական զորքերի անհապաղ էվակուացիայի վերաբերյալ:

Անվտանգության խորհրդում Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ–ի մեքենայությունների պատճառով հնարավոր չեղավ համապատասխան որոշում ընդունել: Այդուհանդերձ, զորքերի դուրսբերման սկզբունքը ոչ մի պետություն ի վիճակի չեղավ վիճարկել: Այդ հանգամանքը, ինչպես նաև ավելի ու ավելի ծավալվող արաբական ազգային–ազատագրական շարժումը, Սիրիայի և Լիբանանի կայուն դիրքորոշումը, որը հենվում էր արաբական պետությունների, սոցիալիստական և Ասիայի ու Աֆրիկայի երկրների, համաշխարհային առաջադեմ հասարակության աջակցության վրա, վերջ ի վերջո ստիպեցին Ֆրանսիային և Անգլիային նահանջելու և իրենց զորքերը դուրս բերելու Լևանտի երկրներից: 1946 թ. ապրիլի 17–ին օտարերկրյա վերջին զինվորը հեռացավ Սիրիայի տարածքից: Այդ օրը, որը կոչվում է «Յաում ալ–ջալա'ի»՝ «էվակուացման օր», համարվում է Սիրիայի ազգային տոն:

Այսպիսով՝ հաղթանակով պսակվեց Սիրիայի ազգային–ազատագրական, բոլոր հայրենասեր և բոլոր կրոններին ու ազգություններին պատկանող ուժերի պայքարը ֆրանսիական տիրապետության վերացման և Սիրիայի անկախ ու ինքնիշխան պետության համար պայքարը: Դրանով նոր փուլ սկսվեց Սիրիայի պատմության մեջ:

IV. ՍԻՐԻԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒՆՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ (1946–1958 թթ.)

1. Իրադրությունը Սիրիայում անկախության նվաճումից հետո և 1948 թ. պառլամենտական ընտրությունները

Անկախ Սիրիայի զարգացումն ընթացավ բավականին բարդ ու հակասական պայմաններում, որոնք շատ հաճախ երկիրը կանգնեցնում էին լուրջ ճգնաժամի առջև. Այդ շրջանիո, զարգացման դրական միտումների հետ միասին, բնորոշ էին քաղաքական վայրիվերումները, ներքաղաքական պայքարի սրումը, սոցիալ–տնտեսական անհետաձգելի լուծում պահանջող բազում խնդիրների ծագումը, օտարերկրյա ուժերի զորավոր ներազդեցությունը Սիրիայի պետական, սոցիալական, տնտեսական, ներքին և արտաքին քաղաքականության վրա, երևույթներ, որոնք ներքաղաքական անկայունության մշտական աղբյուր էին հանդիսանում:

Անկախության նվաճումից հետո առաջին շրջանում՝ 1946–1948 թթ., Սիրիայում ընդհանուր առմամբ նկատելի էր դեմոկրատական շարժման վերելք և զգալի քայլեր կատարվեցին հատկապես աշխատավորների տնտեսական վիճակի բարելավման ուղղությամբ: Սիրիական պառլամենտը 1946 թ. հունիսի 11–ին ընդունեց Աշխատանքային օրենք, որը սահմանեց 8–ժամյա բանվորական օր, աշխատավարձի մինիմում և վճարովի արձակուրդ: Որոշ չափով բարձրացվեց բանվորների աշխատավարձը, և կազմակերպվեցին նոր արհմիություններ: Նշանակալի էր նրանց դերը Աշխատանքային օրենքի դրույթները կենսագործելու հարցում: Նրանք շատ հաճախ կազմակերպում էին գործադուլներ և ստիպում ձեռնարկատերերին պահպանել Աշխատանքային օրենքի դրույթները աշխատավարձի կամ աշխատանքային օրվա տևողության վերաբերյալ: Ծխախոտագործների և էլեկտրակայանների աշխատողների արհմիությունների շնորհիվ էր, օրինակ, որ բարձրացվեցին նրանց աշխատավարձերը: Նկատելիորեն աշխուժացավ նաև գյուղացիական շարժումը:

Այս ժամանակահատվածում իրենց գործունեությունն ակտիվացրին քաղաքական կուսակցությունները, ազատությունից էր օգտվում

մամուլը, տեղի էին ունենում զանազան հավաքույթներ ու հանդիսություններ: Կառավարությունը զգալի ուշադրություն էր դարձնում կրթության և առողջապահության զարգացմանը:

Սակայն այդ դրական միտումները, հատկապես երկրում ծավալված դեմոկրատական շարժումը, վախեցրեցին անկախությունից հետո իշխանության գլուխ եկած բուրժուակալվածատիրական բլոկին: 1947 թ. սկսած՝ Սիրիայի կառավարությունը սկսում է ուժեղացնել հսկողությունը արհմիությունների վրա, սահմանափակել նրանց իրավունքները, ձերբակալում գործադուլ կազմակերպողներին, ավելի հաճախ են դառնում Աշխատանքային օրենքի խախտումները: Այդուհանդերձ, կառավարության ներքին քաղաքականության մեջ արմատական փոփոխություն տեղի չունեցավ, և երկրում գործում էին պառլամենտական կյանքի նորմերը:

1948 թ. ապրիլին Սիրիայում անցկացվեցին պառլամենտական ընտրություններ, որի ժամանակ հաղթեցին բուրժուակալվածատիրական Ազգային կուսակցությունը և ժողովրդական կուսակցությունը: Նրանց ներկայացուցիչներից կազմվեց սիրիական կառավարությունը: Տեղի ունեցան նաև պրեզիդենտի ընտրություններ, և Շուքրի Քուաթլին կրկին ընտրվեց Սիրիայի պրեզիդենտ:

Դժվար է ասել, թե ինչպես կզարգանային հետագա դեպքերը, եթե չլիներ 1948 թ. արաբա–իսրայելական պատերազմը, որին Եգիպտոսի, Անդրհորդանանի, Լիբանանի և Իրաքի հետ մասնակցեց նաև Սիրիան: Սիրիական զորքերի թիվը, որոնք պատերազմի մեջ մտան Իսրայելի դեմ, հասնում էր 7 հազարի: Դրանք նախկին տեղական ուժերն էին, այդ թվում և ոստիկանական, որոնք դեռևս չէին հասցրել դառնալ կանոնավոր բանակային զորամիավորումներ: Այդ պատերազմում, ինչպես նշել ենք, Սիրիան և արաբական մյուս պետությունները պարտություն կրեցին: Սիրիան՝ վերջինն արաբական երկրներից, Իսրայելի հետ զինադադարի համաձայնագիր կնքեց Հռոդոս կղզում 1949 թ. հուլիսի 20–ին:

Սիրիայի մասնակցությունը և պարտությունը արաբ–իսրայելական առաջին պատերազմին խիստ բացասական հետևանքներ ունեցավ Սիրիայի ներքաղաքական վիճակի վրա: Կրած պարտության համար բոլորը մեղադրում էին սիրիական կառավարությանը: Պրեզիդենտ Շուքրի Քուաթլին պաշտոններից հեռացրեց սիրիական բանակի շտաբի պետ գեներալ Աթֆահին, նրա առաջին տեղակալ Աբդ ալ–Վահաբ ալ–Հաքիմին, պաշտպանության նախարար Ահմադ Շարաբաթին և

պարտություն կրած առաջին բրիգադի բոլոր սպաներին: Նա շտաբի պետ նշանակեց գնդապետ Հուսնի Զաիմին:

Պատերազմը, ինչպես սովորաբար լինում է, ծանր անդրադարձավ Սիրիայի քաղաքական ու տնտեսական դրության վրա: Վատացավ ժողովրդական զանգվածների նյութական վիճակը: Պատերազմի ժամանակ Սիրիայում մտցվեց ռազմական դրություն, որից օգտվելով՝ իշխանությունները զգալիորեն սահմանափակեցին դեմոկրատական ազատությունները և ուժեղացրին հսկողությունը հասարակական ու քաղաքական կյանքի վրա: Իսկ արաբական բանակների պարտությունը, ինչպես և արաբական մյուս երկրներում, առաջացրեց սիրիացիների խորը զայրույթը, որոնք դժգոհ էին իրենց երկրի ղեկավարության քաղաքականությունից: Ինչ վերաբերում է քաղաքական կուսակցություններին, ապա նրանք ջլատվել էին ներքին հակասություններից:

Երկրում սկսվեցին բողոքի ցույցեր՝ ուղղված սիրիական պրեզիդենտի, կառավարության և կառավարող ամբողջ վերնախավի դեմ:

Դա ֆրանսիական մանդատի կապանքներից ազատագրված և անկախ Սիրիայի առաջին լուրջ քաղաքական ճգնաժամն էր:

2. Զինվորական հեղաշրջումները և բանակի դերի աճը Սիրիայի պետական–քաղաքական կյանքում (1949–1954 թթ.)

Սիրիայում կուտակված դժգոհությունից և ստեղծված անկայուն իրադրությունից օգտվեցին զինվորականները: 1949 թ. մարտի 30–ին Սիրիայի բանակի շտաբի պետ, գնդապետ Հուսնի Զաիմը պետական հեղաշրջում կատարեց: Այդ ժամանակաշրջանից սկսած՝ ուժեղանում է բանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում: Պրեզիդենտ Շուքրի Քուաթլին, վարչապետ Խալիդ ալ–Ազմը և կառավարության անդամները հեռացվեցին իրենց գրաված պաշտոններից և ձերբակալվեցին: Նոր իշխանությունների հրամանով ցրվեց պառլամենտը, արգելվեցին քաղաքական կուսակցությունները, ցույցերը, միտինգները, մտցվեց ռազմական գրաքննություն: Հուսնի Զաիմը հունիսին կազմակերպեց «հանրաքվե» և ընտրվեց Սիրիայի պրեզիդենտ: Իրականում Սիրիայում հաստատվեց ռազմական դիկտատուրա:

Հուսնի Զաիմը, որը ծագումով քուրդ էր Հալեպից, ժամանակին ծառայել էր թուրքական բանակում, այնուհետև ծառայության անցել ֆրանսիական մանդատային իշխանությունների կողմից Սիրիայում

ստեղծած Հատուկ զորամասերում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նա անցավ Վիշիի կառավարության կողմը, որը համագործակցում էր գերմանական նացիստների հետ: Իսկ երբ Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի զորքերը 1941 թ. հունիսին պարտության մատնեցին վիշիական զորքերին Սիրիայում, Հուսնի Զաիմը ձերբակալվեց և բանտ նետվեց: Հետո բախտը ժպտաց նրան, և կրկին ծառայության անցավ սիրիական բանակում՝ հասնելով մինչև սիրիական բանակի շտաբի պետի պաշտոնին: Նա 1949 թ. հուլիսի 20–ին Հռոդոսում Իսրայելի հետ ստորագրեց հրադադարի համաձայնագիր:

Հուսնի Զաիմը շատ մոտ հարաբերությունների մեջ էր Դամասկոսում ամերիկյան դեսպանության հետ: Նրա արտաքին քաղաքականությունը բացահայտորեն ամերիկանամետ էր: Միաժամանակ Հուսնի Զաիմը սկսեց վարել Արևմտյան Գերմանիայի հետ մերձեցման և Ֆրանսիայի հետ կապերն ամրապնդելու քաղաքականություն: Նրա իրագործած հեղաշրջումն իր ուղղվածությամբ ընկալվեց որպես հակաբրիտանական, որի դիրքերն ու ազդեցությունը շատ էին ուժեղացել Սիրիայում ֆրանսիացիների հեռանալուց հետո:

Հուսնի Զաիմը սիրիացիների համակրանքը շահելու համար զանազան խոստումներ տվեց, մասնավորապես՝ իրականացնել բարենորոգումներ, սահմանափակել խոշոր հողատիրությունը, պաշտպանել աշխատավորների շահերը և այլն:

Սակայն նա ոչինչ չհասցրեց անել:

1949 թ. օգոստոսի 14–ին Սիրիայում տեղի ունեցավ երկրորդ զինվորական հեղաշրջումը, որն իրագործեցին անգլիամետ սպաները՝ գնդապետ Սամի Հինաուիի գլխավորությամբ, որին աջակցում էր ժողովրդական կուսակցությունը: Հուսնի Զաիմը ձերբակալվեց և մահապատժի ենթարկվեց:

Սամի Հինաուի առաջին քայլերից մեկը եղավ չեղյալ համարել իր նախորդի կողմից ամերիկյան «Թափլայն» նավթային ընկերության հետ կնքված պայմանագիրը Սիրիայի տարածքով դեպի Միջերկրական ծով նավթամուղ կառուցելու վերաբերյալ: Նա չեղյալ հայտարարեց նաև Ֆրանսիայի հետ Հուսնի Զաիմի կնքած համաձայնագիրը, որով երկարաձգվում էր սիրիական դրամ հատելու վերաբերյալ ֆրանսիական կոնցեսիայի ժամկետը:

Ձգտելով իր իշխանությանը տալ լեգիտիմության բնույթ և ամրապնդել իր դիրքերը՝ Սամի Հինաուին 1949 թ. նոյեմբերին թույլատրեց

անցկացնել պառլամենտական ընտրություններ, թեև դրանք տեղի էին ունեցել 1948 թ. ապրիլ ամսին: Պառլամենտական ընտրություններում հաղթանակեց ժողովրդական կուսակցությունը, որն օժանդակել էր Սամի Հինաուիին ռազմական հեղաշրջում կատարելու և իշխանության գլուխ գալու գործում: Այդ կուսակցության ղեկավար Հաշիմ ալ–Աթասին ընտրվեց Սիրիայի պրեզիդենտ: Սիրիական նոր կառավարությունը հանդես եկավ ի պաշտպանություն «Մեծ Սիրիայի» ծրագրի, որի գաղափարը վաղուց էին փայփայում անգլիացիները: Նախատեսվում էր Սիրիան, Լիբանանը, Հորդանանը և Պաղեստինը միավորել մեկ պետության մեջ, որին այնուհետև միանալու էր Իրաքը: «Մեծ Սիրիայում» փաստորեն տոն տվողը լինելու էր Հորդանանում և Իրաքում թագավորող Հաշիմյան դինաստիան, որը սերտորեն կապված էր Մեծ Բրիտանիայի հետ: Սամի Հինաուիի խումբը չհասցրեց գործնական քայլերի դիմելու իր ծրագրերի իրականացման համար:

1949 թ. դեկտեմբերի 19–ին Սիրիայում տեղի ունեցավ երրորդ ռազմական հեղաշրջումը, որն իրականացրեց փոխգնդապետ Ադիբ Շիշակլին: Սամի Հինաուին տապալվեց և մահապատժի ենթարկվեց. Ադիբ Շիշակլին դարձավ սիրիական բանակի շտաբի պետ Նա անմիջապես վերացրեց այն արգելքները, որ իր նախորդը դրել էր ամերիկյան և ֆրանսիական մոնոպոլիստական ընկերությունների առջև: Ներքին քաղաքականության բնագավառում Ադիբ Շիշակլին սկզբնական շրջանում ավելի զգույշ քաղաքականություն էր վարում: Նա միանգամից բացահայտ զինվորական դիկտատուրա չհաստատեց: Թեև ձևականորեն, սակայն որոշ չափով վերականգնեց նախկին ազատությունները: 1950 թ. սեպտեմբերի 5–ին ընդունվեց նոր սահմանադրություն, որտեղ արձանագրված էին, որ աշխատավորներն ունեն աշխատանքի, սոցիալական ապահովության, կրթության և առողջապահության իրավունք: Արտոնվեց Սիրիական բանվորների կոնգրեսի և այլ կազմակերպությունների գործունեությունը: Ամրապնդելով իր դիրքերը՝ Ադիբ Շիշակլին 1951 թ. նոյեմբերի 29–ից — դեկտեմբերի 2–ը կատարեց թվով չորրորդ հեղաշրջումը: Պրեզիդենտ Հաշիմ ալ–Աթասին հեռացվեց իր պաշտոնից, և Սիրիայում կրկին հաստատվեց բացահայտ ռազմական դիկտատուրա: Մի շարք դեկրետներով լուծարքի ենթարկվեցին բոլոր քաղաքական կուսակցությունները և կազմակերպությունները, իսկ պետական ծառայողների, արհմիությունների անդամների, անգամ ուսանողների և

սոցիալական այլ խավերի համար քաղաքական գործունեությունը հայտարարվեց արգելված բնագավառ:

Սակայն Սիրիայի աշխատավորները և դեմոկրատական ուժերը ներքաղաքական անկայուն, սոցիալ–տնտեսական ծանր և ռազմական դիկտատուրայի պայմաններում շարունակում էին պայքարը երկրի քաղաքական անկախության ամրապնդման և իրենց տնտեսական ու քաղաքական իրավունքների համար: Նրանք հանդես էին գալիս ԱՄՆ–ի, Անգլիայի և Ֆրանսիայի կողմից Մերձավոր և Միջին Արևելքում ռազմական բլոկներ ստեղծելու քաղաքականության դեմ: Երկրի մի շարք վայրերում տեղի էին ունենում մասսայական ցույցեր և գործադուլներ, որոնց ժամանակ աշխատավորները հանդես էին գալիս գործարանները փակելու և բանվորներին փողոց նետելու քաղաքականության դեմ, պահանջում տնտեսական վիճակի բարելավում: Դրանցից առավել աչքի ընկնողը Հալեպի 1952 թ. հունվարի 19–ի համընդհանուր գործադուլն էր և զանգվածային ցույցը, որը ճնշելու համար Շիշակլին նրանց դեմ նետեց մոտ 4 հազար զինվոր: Շարժումն ընդդեմ Շիշակլիի դիկտատուրայի ուժեղանում էր: Մեծ ցույց Շիշակլիի ռազմական վարչակարգի դեմ կազմակերպեցին Դամասկոսի համալսարանի ուսանողները: Փորձելով կանխել դեպքերի հետագա վտանգավոր զարգացումը՝ դիկտատորը 1953 թ. հուլիսի 10–ին գործողության մեջ դրեց նոր սահմանադրություն ու անցկացրեց պառլամենտական և պրեզիդենտական ընտրություններ: Սակայն այդ բոլորն այն աստիճանի ծնական բնույթ էր կրում, որ չկարողացավ վերացնել ռազմական դիկտատուրայի գլխին կախված վտանգը:

Շիշակլիի ռեժիմի օրերը հաշվված էին: 1953 թ. վերջերին նրա դեմ դուրս եկավ Ջաբալ Դրուզի բնակչությունը՝ Սուլթան ալ–Աթրաշի գլխավորությամբ, իսկ 1954 թ. փետրվարի 25–ին ապստամբեցին Հալեպում և նրա շրջակայքում տեղադրված զորամասերը, որոնց միացավ Լաթաքիայի, Հոմսի և Համայի բնակչությունը: Ադիբ Շիշակլիի ռեժիմը փլվեց, և նա փախավ Սիրիայից[26]:

Սիրիական պառլամենտի 1954 թ. փետրվարի նիստում Սիրիայի պառլամենտի նախագահ Մամուն Կուզբարին ընտրվեց Սիրիայի ժա-

26 Փախուստ տալով Սիրիայից՝ Շիշակլին բնակություն հաստատեց Լիբանանում, ապա Սաուդյան Արաբիայում և Ֆրանսիայում: 1960 թ. նա հաստատվեց Բրազիլիայում, որտեղ սպանվեց մի վրիժառու դրուզի կողմից այն բանի համար, որ Շիշակլին Ջաբալ Դրուզը ռմբակոծելու հրաման էր տվել:

մանակավոր պրեզիդենտ, սակայն նա այդ պաշտոնում մնաց ընդամենը երկու օր: Նա, չհասկանալով ստեղծված իրադրությունը, ժողովրդին դիմեց կոչով՝ պահպանել հանգստություն և չկազմակերպել ցույցեր ու միտինգներ: Դա առաջ բերեց ապստամբների դժգոհությունը. Ապստամբ զորքերի հրամանատարության պահանջով Սամուն Կուզբարին 1954 թ. փետրվարի 26–ին հրաժավեց իր պաշտոնից, իսկ պառլամենտը ինքնալուծարքի ենթարկվեց: Երկու օր անց՝ փետրվարի 28–ին, Հաշիմ ալ–Աթասին վերականգնվեց Սիրիայի պրեզիդենտի պաշտոնում: Դրանով ավարտվեց թվով հինգերորդ պետական հեղաշրջումը Սիրիայում:

Ի տարբերություն նախորդների՝ այն առաջադիմական բնույթ էր կրում և հաղթանակով պսակվեց շնորհիվ ժողովրդի, նրա հայրենասիրական ուժերի, զինվորների և առաջադեմ սպայական կազմի միասնության:

1954 թ. աշնանը անցկացվեցին պառլամենտական ընտրություններ, որոնք համարվում են ամենադեմոկրատականը երբևիցե Մերձավոր Արևելքում կայացած ընտրությունների մեջ: Այդ ընտրությունների ժամանակ հաղթեցին Սիրիայի անկախության պահպանման ու ամրապնդման և արևմտյան ռազմական բլոկներին չմիանալու կողմնակից թեկնածուները: Նոր կառավարությունը սկսեց վարել երկրի սուվերենության և հանրապետական կարգի ամրապնդման կուրս: Սկսեցին ազատ գործել քաղաքական կուսակցությունները, բանվորներն ստացան գործադուլներ կազմակերպելու և իրենց միությունները ստեղծելու իրավունք: Ազատ էր նաև մամուլը:

Սիրիական կառավարությունը, որը 1955 թ. փետրվարից գլխավորեց Սաբրի Ասալին, կտրուկ կերպով հանդես եկավ թուրք–իրաքյան ռազմական պակտի դեմ՝ ընդգծելով, որ Սիրիան, չնայած իր վրա գործադրվող ճնշմանը, չի միանա դրան: Սիրիական ժողովուրդը լիովին պաշտպանեց իր կառավարության դիրքորոշումը:

1955 թ. օգոստոսին Սիրիայի պրեզիդենտ ընտրվեց Շուքրի Քուաթլին: Սիրիական նոր կառավարության առաջին քայլերից մեկը եղավ 1955 թ. հոկտեմբերի 20–ին Եգիպտոսի, իսկ 27–ին Սաուդյան Արաբիայի հետ պայմանագրերի ստորագրումը: Դրանց կնքումն անհրաժեշտ էր դարձել, որովհետև արևմտյան պետությունները ճնշում էին գործադրում Սիրիայի վրա և պահանջում նրանից միանալ թուրք–իրաքյան պայմանագրին, որը հետագայում վերածվեց Բաղդադի պակտի, սպառնալով նրա դեմ կիրառել զանազան, այդ թվում և ռազմական սանկցիաներ:

Եգիպտոսը և Սաուդյան Արաբիան հայտարարեցին, որ Սիրիայի դեմ ագրեսիան նրանք կդիտեն որպես ագրեսիա իրենց դեմ:

Սիրիան իր հերթին պաշտպան կանգնեց Եգիպտոսին 1956 թ. անգլո–ֆրանս–իսրայելական եռյակ ագրեսիայի ժամանակ: Նա խզեց դիվանագիտական հարաբերությունները Անգլիայի և Ֆրանսիայի հետ և իր ամբողջ զինված ուժերն ու հնարավորությունները դրեց Եգիպտոսի տրամադրության տակ: Սիրիան հայտարարեց ընդհանուր զորահավաք, իսկ Դամասկոսի մոտ 5 հազար ուսանողներ իրենց պատրաստակամությունը հայտնեցին մտնել եգիպտական բանակ և զենքը ձեռքին պայքարել ագրեսորների դեմ: Սիրիական հայրենասերները պայթեցրին և շարքից հանեցին Սիրիայի տարածքով անցնող և անգլիական նավթային ընկերություններին պատկանող նավթամուղը՝ զրկելով ագրեսորներին ստրատեգիական կարևոր հումքից:

3. Տնտեսական նշանակալի տեղաշարժեր (1946–1957 թթ.)

Անկախության շրջանում՝ հատկապես զինվորական դիկտատուրաների վերացումից և կառավարման պառլամենտական ձևին վերադառնալուց հետո, սիրիական կառավարությունը սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել երկրի տնտեսական զարգացման հարցերին. Ընդարձակվեցին մշակվող հողատարածությունները, որը պայմանավորված էր նաև նրանով, որ համաշխարհային շուկայում բարձրացել էին գյուղատնտեսական մթերքների գները, և բարենպաստ իրադրություն էր ստեղծվել գյուղատնտեսական ապրանքների վաճառահանման համար: Այդ քաղաքականության արդյունքում Սիրիայում մշակվող հողատարածքները, որոնք անկախության նախօրյակին՝ 1946 թ., կազմում էին 2,3 մլն հեկտար, 1957 թ. կրկնապատկվեցին՝ հասնելով 4,6 մլն հեկտարի: Գյուղատնտեսության մեջ սկսեցին ավելի մեծ չափերով օգտագործել գյուղատնտեսական մեքենաներ՝ տրակտորներ, կոմբայններ և այլն: Եթե 1948 թ. Սիրիայում կար ընդամենը 300 տրակտոր, ապա 1957 թ. գյուղատնտեսության մեջ արդեն օգտագործվում էր 4 հազար տրակտոր: Զգալի ուշադրություն էր դարձվում նաև ջրառոգման համակարգի զարգացմանը:

Կառավարությունը ձգտում էր նպաստավոր պայմաններ ստեղծել ազգային արդյունաբերության զարգացման համար: Նա արտոնյալ պայմաններով վարկեր էր տրամադրում սիրիական արդյունաբերական

ընկերություններին, կառուցվող արդյունաբերական ձեռնարկություններն ազատում զանազան հարկերից: Արգելվեց ստեղծել նոր արդյունաբերական ընկերություններ, եթե նրանցում բաժնետոմսերի 50%–ից ավելին չէր պատկանում սիրիական ազգային կապիտալին: Բարձր մաքսեր սահմանվեցին ներմուծվող այնպիսի արդյունաբերական ապրանքների համար, որոնք կարող էին մրցել տեղական արդյունաբերության հետ և արգելք հանդիսանալ նրա զարգացման համար: Եվ վերջապես՝ Սիրիան ձեռնամուխ եղավ օտարերկրյա կապիտալին պատկանող ձեռնարկությունների ազգայնացմանը: Արդեն 1957 թ. վերջին պետության սեփականությունը դարձան երկաթուղիները, էլեկտրակայանները, ծխախոտի ընկերությունները, նավահանգիստները և այլն: Սիրիան ազգայնացրեց նաև էմիսիոն բանկը, որը գտնվում էր օտարերկրյա կապիտալի ձեռքում, և ինքը սկսեց հատել իր սեփական դրամը այնպիսի ծավալներով, որոնք պայմանավորված էին երկրի տնտեսության զարգացման պահանջներով: Դա միաժամանակ կարևոր քայլ էր Սիրիայի տնտեսական անկախության ամրապնդման ճանապարհին:

Սիրիայի տնտեսական հետամնացությունը հաղթահարելու ծրագրերը կառավարությունը զգալիորեն կապում էր ֆինանսական ներքին կուտակումների, արաբական երկրներից ստացվող տարատեսակ օգնության և Խորհրդային Միության ու սոցիալիստական մյուս երկրների տնտեսական համագործակցության հետ: Այդ շրջանում հատկապես կարևորվում էր տնտեսական համագործակցությունը ԽՍՀՄ–ի հետ: Երկու երկրների միջև տնտեսական համագործակցության հիմքը դրվեց 1955 թ. նոյեմբերի 16–ին Դամասկոսում ստորագրված առևտրի և վճարումների համաձայնագրով: Խորհրդային Միությունը սկսեց Սիրիային մատակարարել արդյունաբերական մեքենաներ, սարքավորումներ, մարդատար և ապրանքատար ավտոմեքենաներ, տրակտորներ, դեղորայք: Իսկ դրա դիմաց Սիրիան ԽՍՀՄ–ին մատակարարում էր գյուղատնտեսական ապրանքներ՝ բամբակ, բուսական յուղ, չոր մրգեր, ծխախոտ, բուրդ, կաշի, ինչպես նաև կտորեղեն ու այլ ապրանքներ: Խորհրդային–սիրիական հարաբերությունների հետագա զարգացմանը նպաստեց 1956 թ. նոյեմբերին Սիրիայի պրեզիդենտ Շուքրի Քուաթլիի այցելությունը Մոսկվա և նրա բանակցությունները խորհրդային ղեկավարության հետ:

Խորհրդա–սիրիական համագործակցության հետագա խորացման վկայությունը հանդիսացավ 1958 թ. դեկտեմբերի 28–ին Դամասկո-

սում ստորագրված համաձայնագիրը Խորհրդային Միության և Սիրիայի միջև տնտեսական և տեխնիկական համագործակցության մասին: Խորհրդային Միությունը պարտավորվում էր տեխնիկական օգնություն ցույց տալ Սիրիային, ապահովել նախագծային աշխատանքների կատարումը, մեքենաների մատակարարումը, ազգային կադրերի պատրաստումը և այլն: Խորհրդային Միությունը Սիրիային արտոնյալ պայմաններով տրամադրեց վարկ, որը պետք է մարվեր սիրիական ավանդական ապրանքների մատակարարումով: Այս բոլորը նպաստավոր պայմաններ էին ստեղծում սիրիական անկախ ազգային տնտեսության զարգացման համար:

Սիրիան, անշուշտ, կարևորում էր տնտեսական համագործակցությունը նաև արևմտյան երկրների հետ, սակայն քաղաքական լարվածությունը նրանց միջև խանգարում էր նրանց հնարավորությունների լրիվ օգտագործումը:

V. ՍԻՐԻԱՑԻ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ, ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՑԱԼ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՓԼՈՒԶՈՒՄԸ (1958–1961 թթ.)

1956 թ. վերջերին և 1957 թ. սկզբներին ուժեղացավ արևմտյան տերությունների, մասնավորապես ԱՄՆ–ի, և նրա հրահրանքով գործող Թուրքիայի ճնշումը Սիրիայի վրա, որը բացահայտ սպառնալիքի բնույթ էր կրում: Նրանց դուր չէր գալիս Սիրիայի անկախ քաղաքական կուրսը և Խորհրդային Միության ու սոցիալիստական մյուս երկրների հետ համագործակցության զարգացումն ու ընդլայնումը: 1957 թ. հունվարին ԱՄՆ–ը հրապարակ նետեց այսպես կոչված «էյզենհաուերի դոկտրինան», ըստ որի ԱՄՆ–ի կառավարությունը միակողմանի իրեն իրավունք էր վերապահում միջազգային կոմունիզմի սպառնալիքի դեմ պայքարի պատրվակով միջամտել Մերձավոր և Միջին Արևելքի ուզածդ պետության ներքին գործերին: Սիրիան և արաբական երկրների ճնշող մեծամասնությունը մերժեց այդ դոկտրինան: Ի պատասխան դրա՝ ԱՄՆ–ը անցավ Սիրիայում հակակառավարական դավադրություններ կազմակերպելու քաղաքականությանը՝ հենվելով սիրիական հետադիմության վրա: Նման մի դավադրություն բացահայտվեց 1957 թ. օգոստոսին: Դա-

վադիրները նպատակ ունեին տապալել Սիրիայի օրինական կառավարությունը, որը վայելում էր ժողովրդի և դեմոկրատական ուժերի լրիվ աջակցությունը, և հաստատել մի ռեժիմ, որը երկրի զարգացումը կտաներ արևմտյան տերություններին ձեռնտու ուղիով: Դավադրության ծախողումը ավելի սաստկացրեց հակասիրիական արշավը: ԱՄՆ–ը Միջերկրական ծով՝ սիրիական ափերի մոտ ուղարկեց իր 6–րդ նավատորմը, իսկ պետական քարտուղարի օգնական Լլոյդ Հենդերսոնը Ստամբուլում խորհրդակցություն անցկացրեց Թուրքիայի, Իրանի և Հորդանանի հետ՝ Սիրիայի դեմ ռազմական ինտերվենցիա կազմակերպելու համար: Այդ նպատակով ԱՄՆ–ը արագացրեց ռազմական տեխնիկայի մատակարարումը Թուրքիային, իսկ վերջինս իր զորքերը կենտրոնացրեց սիրիա–թուրքական սահմանի վրա: Ճնշումն ուժեղացնելու նպատակով Իսրայելն իր հերթին սկսեց ռազմական բախումներ հրահրել սիրիա–իսրայելական սահմանի վրա: Ստեղծված պայմաններում խորհրդային կառավարությունը 1957 թ. սեպտեմբերի 5–ին նոտաներ հղեց ԱՄՆ–ին, Անգլիային և Ֆրանսիային՝ ընդգծելով, որ նրանց գործողությունները ծառայում են ոչ թե խաղաղության պահպանմանը, այլ լարվածության և պատերազմների հրահրմանը:

Խորհրդային կառավարությունը 1957 թ. հոկտեմբերի 19–ին լրջորեն նախազգուշացրեց նաև թուրքական կառավարությանը՝ ընդգծելով, որ Սիրիայի նկատմամբ վարվող նրա թշնամական քաղաքականությունը հղի է մեծ վտանգներով հենց իր՝ Թուրքիայի համար: Հօգուտ Սիրիայի պաշտպանության՝ հուժկու շարժում սկսվեց արաբական երկրներում: Իսկ եգիպտական զորքերը ժամանեցին Լաթաքիա՝ սիրիական զորքերին օգնելու համար:

Հակաիմպերիալիստական ուժեղ շարժում ծավալվեց Սիրիայում: Սիրիական ժողովուրդը չընկրկեց իմպերիալիստական ճնշման առջև: Երկրում կազմավորվեցին աշխարհազորներ, որոնք սիրիական բանակի հետ միասին պաշտպան կանգնեցին երկրի անկախությանը: Երկրի օրինական կառավարությունը տապալելու և Սիրիայի դեմ ռազմական ինտերվենցիա սանձազերծելու ամերիկա–թուրքական ծրագրերը ձախողվեցին:

Սիրիայի կառավարությունը դեռևս 1956 թ. հունիսին որոշում էր ընդունել բանակցություններ սկսել Եգիպտոսի հետ միավորվելու հարցի շուրջը, որը հավանության արժանացավ սիրիական պառլամենտի կողմից: Հօգուտ միավորման հանդես եկան Բաաս և կոմունիստական

կուսակցությունները, բոլոր առաջադիմական և դեմոկրատական ուժերը: Պաշտպանելով միավորման գաղափարը՝ նրանք միաժամանակ շեշտում էին, որ այն պետք է իրագործվի դեմոկրատական հիմքի վրա, և հաշվի առնվեն յուրաքանչյուր երկրի քաղաքական, տնտեսական ու մշակութային զարգացման յուրահատկությունները:

Սիրիայի և Եգիպտոսի միավորման դեմ էին Սիրիայի Ազգային ու ժողովրդական կուսակցությունների և «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության անդամների մեծ մասը:

1950–ական թվականներին ընդհանրապես արաբական ժողովուրդների մոտ ուժեղանում է միասնության ձգտումը, որն իր արտացոլումը գտավ կառավարությունների և տարբեր կուսակցությունների ծրագրերում: Այդ միտումն ավելի ուժեղացավ արևմտյան տերությունների կողմից արաբական երկրների վրա գործադրվող ճնշման հետևանքով: Այսպիսի մթնոլորտում արագացավ Սիրիայի և Եգիպտոսի՝ մեկ պետության մեջ միավորվելու պրոցեսը: Միավորման կողմնակից էին ժողովրդական զանգվածները և առաջադիմական–դեմոկրատական ուժերը: Նրանք հույս ունեին, որ երկու առաջատար արաբական երկրների միավորումը կօգնի դիմակայելու իմպերիալիստական ճնշմանը, նրանց տնտեսական ներուժի միավորմանը և սոցիալ–տնտեսական առաջադիմությանը. Միավորման կողմնակից էին նաև բուրժուական և կալվածատիրական խավերը, որոնք վախեցած էին Սիրիայի դեմոկրատական ուղիով զարգանալու հեռանկարից: Նրանք հույս ունեին Եգիպտոսի հետ միավորվելով ընդհատել այդ պրոցեսը՝ Սիրիայի հետագա «ծախացումը», և ամրապնդել իրենց իշխանությունը Սիրիայում: Այս ուժերը նույնպես հույս ունեին Եգիպտոսի օգնությամբ դիմակայելու արևմտյան տերությունների սպառնալիքներին: Միավորման ուղղությամբ հատկապես մեծ ակտիվություն էր ցուցաբերում սիրիական Բաաս կուսակցությունը:

1957 թ. նոյեմբերին Դամասկոսում տեղի ունեցավ Սիրիայի պառլամենտի և Եգիպտոսի Ազգային ժողովի պատվիրակության համատեղ նիստը. Ընդունված որոշման մեջ կոչ էր արվում երկու երկրների կառավարություններին՝ գործնական քայլերի դիմելու Սիրիան և Եգիպտոսը ֆեդերալ հիմունքների վրա միավորելու ուղղությամբ: Սակայն հետագայում որոշվեց միավորումն իրականացնել ոչ թե ֆեդերալ, այլ ուղղակի միավորման՝ ունիտարիզմի սկզբունքի հիման վրա: Դա Նասերի պայմաններից մեկն էր, որի հետ ստիպված էր համակերպվել սիրիական Բաասը: 1958 թ. փետրվարի 1–ին երկու երկրների կառավարու-

թյունները որոշեցին Սիրիան և Եգիպտոսը միավորել և ստեղծել Արաբական Միացյալ Հանրապետություն՝ ԱՄՀ: Նույն տարվա փետրվարի 21–ին Եգիպտոսում և Սիրիայում միաժամանակ անցկացվեց հանրաքվե միավորման և պրեզիդենտի ընտրման հարցի շուրջը: Ժողովուրդը հավանություն տվեց ԱՄՀ–ի ստեղծմանը: ԱՄՀ–ի պրեզիդենտ ընտրվեց Գամալ Աբդել Նասերը, որը միակ թեկնածուն էր: 1958 թ. մարտի 5–ին ընդունվեց ժամանակավոր սահմանադրություն, որը ԱՄՀ–ն բաժանում էր երկու շրջանի՝ հյուսիսային, որը կազմում էր Սիրիան, և հարավային՝ Եգիպտոսը: Ստեղծվեց 600 հոգուց կազմված Ազգային ասամբլեա, որից 400–ը Եգիպտոսի, իսկ 200–ը Սիրիայի ներկայացուցիչներն էին: ԱՄՀ–ի մայրաքաղաքը դարձավ Կահիրեն: Սիրիացիները և եգիպտացիները հռչակվեցին ԱՄՀ–ի քաղաքացիներ: Մարտի 6–ին կազմվեց ԱՄՀ–ի առաջին կառավարությունը, որը բաղկացած էր 14 սիրիացիներից և 20 եգիպտացիներից: Ստեղծվեցին գործադիր խորհուրդներ յուրաքանչյուր շրջանի համար, որի մեջ մտան այսպես կոչված նահանգային նախարարները: Սակայն օրենսդիր և գործադիր իշխանությունը կենտրոնացվեց ԱՄՀ–ի պրեզիդենտ ձեռքում: Նա ուներ մի քանի փոխպրեզիդենտներ: Սիրիական պետական գործիչներից այդ պաշտոնը զբաղեցրին Ակրամ Հաուրանին և Սաբրի Ասալին: Միավորումից հետո Եգիպտոսում գործող օրենքները աստիճանաբար տարածվեցին Սիրիայի վրա՝ առանց հաշվի առնելու վերջինիս յուրահատկությունները և ավանդույթները: Պրեզիդենտական դեկրետով 1958 թ. մարտի 12–ին լուծարքի ենթարկվեցին բոլոր քաղաքական կուսակցությունները, այնուհետև ընդունվեց որոշում, որն արգելում էր արհմիություններին զբաղվել քաղաքական գործունեությամբ, կազմակերպել գործադուլներ առանց իշխանություններին նախօրոք տեղեկացնելու, իսկ գործադուլավորները կարող էին ձերբակալվել և բանտ նետվել: Դա ծանր հարված էր Սիրիայի դեմոկրատական ուժերին, և այդ իմաստով կարելի է ասել, որ սիրիական բուրժուակալվածատիրական շրջաններին և Բաաս կուսակցության աջ ղեկավարությանը հաջողվեց լուծել իրենց գլխավոր խնդիրներից մեկը՝ կասեցնել Սիրիայի դեմոկրատացման հետագա պրոցեսը և վերացնել արմատական սոցիալ–տնտեսական և քաղաքական վերափոխությունների հնարավորությունները երկրում: Դա, հասկանալի է, առաջացրեց աշխատավորների և դեմոկրատական–առաջադիմական բոլոր ուժերի խոր դժգոհությունը:

Միավորումից հետո Եգիպտոսը փաստորեն իր վերահսկողությունը հաստատեց սիրիական բանակի վրա: Շատ հայրենասեր սիրիական սպաներ հետապնդվում կամ էլ բանակից ազատ էին արձակվում: Որոշ սիրիական սպաներ ծառայության տեղափոխվեցին Եգիպտոսի խուլ վայրերը, ոմանք էլ աստիճանազրկվեցին և նշանակվեցին երկրորդական պաշտոնների: Նրանց փոխարեն Սիրիայում գտնվող զորքերի հրամանատարներ նշանակվում էին եգիպտացի սպաներ:

Սիրիական բանակում տերուտնօրեն դարձան եգիպտական զինվորական հրահանգիչները: Նման վերաբերմունքը սիրիական բանակի նկատմամբ նրա դժգոհության պատճառ դարձավ: Շուտով դժգոհությունը համակեց նաև սիրիական կալվածատերերին և բուրժուազիային:

1958 թ. սեպտեմբերի 4–ին և 17–ին ընդունվեց երկու օրենք Սիրիայում ագրարային հարաբերությունների կազմակերպման, խոշոր հողատիրության սահմանափակման և բռնագրաված հողերը հողազուրկ և սակավահող գյուղացիների միջև բաժանելու մասին: Այս օրենքները պարունակում էին առաջադիմական տարրեր: Սակայն դժբախտությունն այն էր, որ դրանք հար և նման էր Եգիպտոսում ընդունված ագրարային ռեֆորմին և բնավ հաշվի չէին առնում Սիրիայի յուրահատուկ հողային, կլիմայական, ջրային և այլ առանձնահատուկ պայմանները և հողօգտագործման ավանդական ձևերը: Սիրիական կալվածատերերը սկսեցին տարբեր ձևերով ու ուղիներով վիժեցնել ագրարային ռեֆորմի կիրառումը: Այդ ռեֆորմը չէր կարող գոհացնել նաև սիրիական գյուղացիությանը, քանի որ նրա հետևողական կիրառման դեպքում անգամ հող կարող էին ձեռք բերել հողագործ գյուղացիների միայն 1/3–ը: Այս բոլորը լարված հարաբերություններ ստեղծեցին ագրարային հատվածում, և շատ գյուղացիներ հարկադրված էին լքել գյուղերը և գնալ քաղաքներ կամ արաբական այլ երկրներ:

Ծանր վիճակ ստեղծվեց նաև սիրիական առևտրաարդյունաբերական բուրժուազիայի համար: Սիրիայի տնտեսական զարգացումը ավելի ու ավելի էր համակերպվում եգիպտական բուրժուազիայի շահերին: Եգիպտական ապրանքները ողողեցին սիրիական շուկան, որը դժվարին դրության մեջ դրեց սիրիական արդյունաբերությունը: Փակվեցին բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ և արհեստանոցներ, կրճատվեց արդյունաբերական արտադրանքը, ձախողվեց մի շարք տնտեսական ծրագրերի իրագործումը:

Շուտով սրվեցին հարաբերությունները ԱՄՀ–ի եգիպտական ղեկավարության և Բաաս կուսակցության միջև: Վերջինս հույս ուներ միավորման շնորհիվ դառնալ ԱՄՀ–ի առաջատար ուժը և իր սկզբունքները տարածել նաև Եգիպտոսի վրա: Բայց ոչ միայն այդպես չստացվեց, այլև Սիրիայում ստեղծված փակուղու համար սիրիացիները պատասխանատու համարեցին Բաաս կուսակցությանը: Վերջինիս հեղինակությունը երկրում խիստ ընկավ:

Սիրիայում ստեղծված ծանր իրադրությունը չէին կարող չտեսնել Կահիրեում: Նասերը վերահսկողությունը Սիրիական շրջանի վրա ուժեղացնելու նպատակով, ներքաղաքական վիճակը ուսումնասիրելու և համապատասխան քայլերի դիմելու համար 1959 թ. հոկտեմբերին եգիպտական փոխպրեզիդենտ Աբդ ալ–Հաքիմ Ամերին ուղարկեց Դամասկոս: Սակայն դա դրական արդյունքներ չտվեց, քանի որ սիրիական շրջանի գործադիր խորհուրդը ամբողջությամբ ենթարկվեց Ամերին: Եգիպտական վերահսկողությունը Սիրիայի վրա ավելի ուժեղացավ: Դրա արտահայտություններից մեկը եղավ 1960 թ. մարտյան որոշումը ԱՄՀ–ի երկու շրջանների համար միասնական Ազգային ասամբլեա ստեղծելու մասին: Նրա կազմ մտան 385 եգիպտական և ընդամենը 70 սիրիական դեպուտատ: Իսկ 1961 թ. օգոստոսի դեկրետով վերացվեցին եգիպտական ու սիրիական շրջանների գործադիր խորհուրդները և ստեղծվեց ԱՄՀ–ի մեկ կենտրոնական կառավարություն:

Ստեղծված իրադրությունը խիստ մտահոգում էր սիրիական բոլոր քաղաքական ուժերին: Սիրիական բուրժուակալվածատիրական շրջանները կանգնեցին Եգիպտոսի հետ դաշինքը խզելու ուղու վրա: Այդ պրոցեսն արագացավ այն բանից հետո, երբ 1961 թ. հուլիսին ԱՄՀ–ում ընդունվեցին մի շարք դեկրետներ: Դրանք շոշափում էին արդյունաբերողների բավականին մեծ շերտի շահերը, որոնք խիստ բացասաբար, նույնիսկ կարելի է ասել՝ թշնամաբար ընդունեցին այդ դեկրետները: Նախատեսվում էր ազգայնացնել սիրիական այն ձեռնարկությունները և ընկերությունները, որոնց բաժնետոմսերի շուկայական արժեքը գերազանցում էր 270 մլն սիրիական լիրան: Միաժամանակ այդ դեկրետները որոշ չափով ընդլայնում էին բանվորների իրավունքները, նախատեսում էին ազգայնացված ձեռնարկություններում ստացվող շահույթի 25%–ը հատկացնել բանվորներին, արգելվում էր բանվորներին և ծառայողներին կամայական աշխատանքից հեռացնելը, բանվորները և ծառայողներն իրենց ներկայացուցիչներն էին ունենալու արդյու-

նաբերական ձեռնարկությունների կառավարման խորհուրդներում, մտցվում էր 7–ժամյա բանվորական օր, սահմանվում էր առաջադիմական հարկի նոր չափանիշ:

Սիրիական բուրժուազիան և կալվածատերերը, հենվելով բանակի վրա և շահագործելով սիրիացիների դժգոհությունը եգիպտական քաղաքականությունից, 1961 թ. սեպտեմբերի 28–ին կատարեցին հեղաշրջում:

Ռազմական հեղաշրջումը ղեկավարեց փոխպրեզիդենտ Հայդար Կուզբարին: Սիրիական բանակի զորամիավորումները 1961 թ. սեպտեմբերի 28–ի առավոտյան գրավեցին Դամասկոսը, ձերբակալեցին մարշալ Ամերին, որը դարձել էր Սիրիայի փաստական կառավարողը, և ԱՄՀ–ի առաջին բանակի հրամանատար Ֆեյսալին, որոնք երկուսն էլ հաջորդ օրն ինքնաթիռով ուղարկվեցին Կահիրե: Ստեղծվեց Բարձրագույն հեղափոխական ղեկավարություն, որն իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ իշխանությունը: 1961 թ. սեպտեմբերի 28–ի երեկոյան պաշտոնապես հայտարարվեց ԱՄՀ–ի կազմից Սիրիայի դուրս գալու և Սիրիական Արաբական Հանրապետություն ստեղծելու մասին: Նասերը որոշ տատանումներից հետո 1961 թ. հոկտեմբերի 5–ին ընդունեց ԱՄՀ–ի կազմից Սիրիայի դուրս գալը[27]:

Սիրիայի տարբեր քաղաքներում և գյուղերում տեղի ունեցան աշխատավորների ցույցեր՝ ի պաշտպանություն անկախ Սիրիայի: Սիրիա–եգիպտական միության լուծարքի պաշտպանությամբ հանդես եկան սիրիական երևելի քաղաքական գործիչները:

ԱՄՀ–ի փլուզումը ծանր հարված էր արաբական միասնության գաղափարին: Նա ապացուցեց, որ զգացական, էյֆորիայի վրա հիմնված մոտեցումը արաբական միասնության գաղափարին իրատեսական չէ և անհեռանկար է: Այդ են ապացուցում հետագայում պետական մակարդակով միավորման այն բոլոր փորձերը, որոնցից և ոչ մեկը չպսակվեց հաջողությամբ: Դրանում իր դերն է խաղում նաև արաբական երկրների զարգացման անհամաչափությունը, որը նրանց առջև դնում է տարբեր քաղաքական, ռազմական և տնտեսական խնդիրներ: Կարծում ենք, որ ավելի հեռանկարային է և կիրառման համար ավելի մատչելի արաբական համերաշխությունը՝ խարսխված յուրաքանչյուր արաբական պետության ինքնուրույնության պահպանման վրա:

27 ԱՄՀ–ի վերաբերյալ տես նաև III հատորի Եգիպտոսին նվիրված գլուխը

VI. ՍԻՐԻԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՈՒՌՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ (1960–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

1. Դրությունը Սիրիայում ԱՄՀ–ի կազմից դուրս գալուց հետո

Հեղաշրջումից հետո Սիրիայում իշխանությունն անցավ բուրժուակալվածատիրական ուժերի ձեռքը: 1961 թ. սեպտեմբերի 29–ին կազմվեց սիրիական կառավարություն, որը գլխավորեց Մամուն Կուզբարին, որի կազմի մեջ մտան բացառապես արդյունաբերողները, ֆինանսիստները, առևտրականները և կալվածատերերը: 1961 թ. նոյեմբերի 12–ին գործողության մեջ դրվեց ժամանակավոր սահմանադրությունը, որում ամրագրված էր, որ Սիրիան սահմանադրական պառլամենտական հանրապետություն է: Երկրում օրենսդիր իշխանությունը հանձնվեց Սահմանադիր ժողովին, որի կարևոր խնդիրներից մեկը համարվեց Սիրիայի մշտական սահմանադրության մշակումը:

Երկրի առջև կանգնած հրատապ քաղաքական և տնտեսական խնդիրների վերջնական լուծման համար սիրիական կառավարությունը որոշեց անցկացնել հանրաքվե սահմանադրության և Սահմանադիր ժողովի ընտրությունների վերաբերյալ, որոնք տեղի ունեցան 1961 թ. դեկտեմբերի 1–ին: Նորընտիր բարձրագույն օրենսդրական մարմնում դեպուտատական տեղերի 2/3–ը գրավեցին սիրիական բուրժուազիայի և կալվածատերերի ներկայացուցիչները: Սահմանադիր ժողովի 1961 թ. դեկտեմբերի 12–ին կայացած առաջին նիստում նրա նախագահ ընտրվեց Մամուն Կուզբարին: Այդ նույն նիստում Սիրիայի Արաբական Հանրապետության պրեզիդենտ ընտրվեց նախկին ժողովրդական կուսակցության ղեկավարներից մեկը՝ Նազիմ ալ–Կուդսին: Վարչապետի պաշտոնը ստանձնեց նույն կուսակցության մեկ այլ ղեկավար՝ Սարուֆ ալ–Դավալիբին: Նրա կառավարությունը ներքին քաղաքականության մեջ սկսեց վարել այնպիսի կուրս, որը լիովին համապատասխանում էր առաջին հերթին բուրժուազիայի և կալվածատերերի շահերին: 1962 թ. փետրվարին ընդունվեց օրենք, որով ապազգայնացվեցին բոլոր այն արդյունաբերական ձեռնարկությունները, բանկերը և ընկերությունները,

որոնք ազգայնացվել էին ԱՄՀ–ում 1961 թ. հուլիսին ընդունված դեկրետներով: Մասնավոր կապիտալի գործունեության համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին: Հերթը հասավ նաև ագրարային ռեֆորմի վերաբերյալ օրենքին: 1962 թ. փետրվարի 28–ի դեկրետով նրա մեջ փոփոխություններ մտցվեցին, որոնք հնարավորություն էին ստեղծում կալվածատերերին ոչ միայն պահել իրենց հողատարածությունները և ընդարձակել դրանք, այլև գյուղացիներից հետ խլել ռեֆորմի շնորհիվ կորցրած հողակտորները: 1962 թ. ընթացքում գյուղացիներից խլվեց և նախկին տերերի տնօրինությանն անցավ մոտ 30 հազ. հա հող:

Նման քաղաքականությունը խոր դժգոհություն առաջացրեց երկրում: Դամասկոսում, Հալեպում և այլ վայրերում տեղի ունեցան բողոքի գործադուլներ: Իրադրությունն ավելի էր սրվում նաև այն պատճառով, որ նոր իշխանությունները չվերացրին կուսակցությունների, արհմիությունների և մամուլի ազատությունը սահմանափակող օրենքները: Լարվածություն առաջացավ նաև արաբական միասնության հարցի շուրջը: Սիրիայում դեռևս բավականին ազդեցիկ էին այն ուժերը՝ յունիոնիստները, որոնք արաբական միասնության կողմնակից էին: Թեև ալ–Դավալիբիի կառավարությունը հայտարարում էր, որ ինքը ձգտում է արաբական միասնության իրականացմանը, սակայն գործնական ոչ մի քայլի չէր դիմում այդ ուղղությամբ:

Սիրիայում կառավարությունը ոչ ճիշտ դիրքորոշում ունեցավ նաև բանակի հարցում: Նա բանակից հեռացրեց բոլոր այն սպաներին, որոնք ԱՄՀ–ի բանակում բարձր հրամանատարական պաշտոններ էին գրավել: Դրա հետևանքով աշխատավորների դժգոհությանն ավելացավ նաև բանակի դժգոհությունը:

1962 թ. մարտի 28–ին Դամասկոսում տեղի ունեցավ հերթական զինվորական հեղաշրջումը գնդապետ Աբդ ալ–Քերիմ Նահլաուիի գլխավորությամբ: Սիրիական բանակի հրամանատար Զահր ալ–Դինի հրամանով ցրվեց Սահմանադիր ժողովը, ձերբակալվեցին վարչապետ ալ–Դավալիբին և պառլամենտի նախագահ Կուզբարին, իսկ պրեզիդենտ Նազիմ ալ–Կուդսին հրաժարական տվեց: Իշխանությունը կենտրոնացվեց զինվորական գլխավոր հրամանատարության ձեռքում:

Սակայն այս հեղաշրջումը հանդարտություն չբերեց Սիրիային: Դամասկոսում, Հալեպում, Լաթաքիայում, Հոմսում և այլ վայրերում տեղի էին ունենում ցույցեր, որոնց ժամանակ առաջադրվում էին տարբեր պահանջներ: Մի մասը դեմ էր երկրի կառավարումը զինվորականների

ձեռքում կենտրոնացնելուն և հանդես էր գալիս հօգուտ սահմանադրական կյանքին և քաղաքացիական կառավարմանը վերադառնալուն: Հասարակության մյուս մասին մտահոգողը արաբական միասնությունն էր, և դրա կողմնակիցները առաջադրեցին եգիպտա–սիրիական միասնությունն անհապաղ վերականգնելու պահանջը. Իսկ բանվորները, գյուղացիները և ուսանողությունը պահանջում էին նաև աշխատավորների տնտեսական վիճակի բարելավելում, աշխատավարձի բարձրացում, քաղաքացիական ազատությունների ապահովում և ագրարային ռեֆորմի կիրառում:

Ստեղծված ծանր պայմաններում բուրժուակալվածատիրական շրջանները և բանակի հրամանատարությունը դիմեցին որոշ կոմպրոմիսի. Դրանում ակտիվ դեր խաղաց նախկին պրեզիդենտ Շուքրի Քուատլին. Նրա նախաձեռնությամբ 1962 թ. ապրիլի 2–ին Հոմսում տեղի ունեցավ գլխավոր հրամանատարության, Հալեպի զինվորական հրամանատարության և Սիրիայի հարավային զինվորական հրամանատարության ներկայացուցիչների հանդիպումը, որոնք քննարկեցին Սիրիայի առջև կանգնած հրատապ հարցերը: Նրանք համաձայնության եկան ստեղծել Սիրիայի ռազմական ուժերի ընդհանուր հրամանատարություն՝ կազմված այնպիսի բարձրաստիճան հրամանատարներից, որոնք նախկինում երբեք չեն մասնակցել ռազմական հեղաշրջումներին, կազմել ժամանակավոր կառավարություն և անցկացնել հանրաքվե Եգիպտոսի հետ միասնության հարցի վերաբերյալ: 1962 թ. ապրիլին վերականգնվեցին Նազիմ ալ–Կուդսի պրեզիդենտական իրավունքները, իսկ ապրիլի 16–ին Ահմադ Բաշիր ալ–Ազմին կազմեց ազգային կոալիցիոն կառավարություն: Սիրիական բանակի հրամանատար գեներալ Զահր ալ–Դինը նույնպես մտավ կառավարության մեջ՝ զբաղեցնելով պաշտպանության նախարարի պաշտոնը:

Բաշիր ալ–Ազմիի կառավարությունը 1962 թ. մայիսին սկսեց ագրարային ռեֆորմի կիրառումը՝ 1958 թ. օրենքի հիման վրա, կոնֆիսկացվեցին և գյուղացիներին բաժանվեցին զգալի հողատարածություններ: Ազգայնացվեցին որոշ արդյունաբերական ձեռնարկություններ, իսկ 1962 թ. մայիսի 24–ի օրենքով ազգայնացվեցին սիրիական և արաբական բանկերը: Չնայած այս վերջին հանգամանքին՝ սիրիական բուրժուազիան և կալվածատերերը դժգոհ էին կառավարության քաղաքականությունից, մանավանդ ագրարային ռեֆորմի և արդյունաբերական ձեռնարկությունների ազգայնացման հարցում: 1962 թ. սեպտեմբերին

13–ին կայացավ Սահմանադիր ժողովի արտակարգ նստաշրջանը, որն իրեն հռչակեց պառլամենտ և սիրիական հայտնի քաղաքական գործիչ Խալիդ ալ–Ազմին հանձնարարվեց կազմել սիրիական նոր կառավարություն: Պառլամենտի նախագահ ընտրվեց Սաիդ Ղազին: Նոր կառավարության ամենանշանակալի քայլը պետք է համարել նրա որոշումը՝ չեղյալ հայտարարել այն բոլոր արտակարգ օրենքները, որոնք ընդունվել էին վերջին ամիսների ընթացքում:

Բաաս կուսակցությունը, որի երեք անդամներ մտել էին Խալիդ ալ–Ազմի կառավարության մեջ, կրկին բարձրացրեց ԱՄՀ–ի, այսինքն՝ Եգիպտոսի հետ Սիրիայի միավորման հարցը: Կառավարությունը Բաաս կուսակցության ճնշման տակ թեև հայտարարեց, որ Սիրիան դեմ չէ Եգիպտոսի հետ ֆեդերատիվ սկզբունքներով միավորվելուն, սակայն իրականում գործնական քայլերի չէր դիմում: Դա հանգեցրեց պայքարի սրմանը Խալիդ ալ–Ազմի կառավարության ներսում: Կառավարությունը դիմեց մի շարք ճնշիչ քայլերի Բաասի նկատմամբ: Ի պատասխան դրա՝ ուժեղացան հակակառավարական ելույթները: Երկրում կրկին ստեղծվեց անկայուն քաղաքական իրավիճակ:

2. Բաաս կուսակցությունը: 1963 թ. մարտի 8–ի բաասական հեղաշրջումը

Այդպիսի պայմաններում քաղաքական արենայում կրկին հայտնվեցին զինվորականները, որոնք գեներալ Հարիրիի գլխավորությամբ 1963 թ. մարտի 8–ին կատարեցին նոր պետական հեղաշրջում: Հեղաշրջման հետևում կանգնած էր բաասական սպաների գաղտնի Զինվորական կոմիտեն, որը ստեղծել էին Հաֆիզ Ասադը, Սալահ Ջադիդը և Մուհամմադ Ումրանը: Իշխանություն գլուխ եկավ Բաաս կուսակցությունը:

Աշխատության նախորդ էջերում բազմիցս հիշատակվել է Բաաս կուսակցությունը, և նկատի առնելով հետագա տասնամյակներում նրա կարևոր դերակատարումը Իրաքում, Սիրիայում, ինչպես նաև արաբական մի շարք այլ երկրներում և ընդհանրապես արաբական քաղաքական ասպարեզում՝ անհրաժեշտ ենք համարում հակիրճ անդրադառնալ այդ կուսակցության հիմնական սկզբունքներին ու գաղափարախոսությանը:

Կուսակցության հիմնադիրն է սիրիացի քրիստոնյա քաղաքական գործիչ Միշել Աֆլաքը (1910–1989 թթ), որն իր բարձրագույն կրթությունը ստացել էր Փարիզի Սորբոնի համալսարանում: Ֆրանսիայի մայրա-

քաղաքում՝ քաղաքական մտքի և պայքարի միջազգային կարևոր կենտրոններից մեկում, նա շփվում է ծախակողմյան գործիչների հետ և ծանոթանում սոցիալիստական զանազան ուսմունքների հետ, որոնք զգալի ազդեցություն են թողնում նրա աշխարհայացքի ձևավորման վրա: 1934 թ. նա Փարիզից վերադառնում է Դամասկոս և զբաղվում ուսուցչությամբ՝ միջնակարգ դպրոցներում դասավանդելով պատմություն: Դամասկոսում նա իր ուսուցիչ գործընկերոջ՝ Սալահ Բիթարի հետ 1940 թ. կազմակերպում է մի խմբակ, որը կոչվում էր Արաբական վերածննդի շարժում: Ֆրանսիական մանդատի վերացումից հետո Աֆլաքը և Բիթարը սիրիական իշխանություններից արտոնագիր են ստանում և 1946 թ. հիմնում Արաբական վերածննդի կուսակցությունը: 1953 թ. տեղի ունեցավ նրա միավորումը Ակրամ Հաուրանիի Արաբական սոցիալիստական կուսակցության հետ, և 1954 թ. այն վերանվանվեց Արաբական վերածննդի սոցիալիստական կուսակցության՝ Հիզբ ալ–բաաս ալ–արաբի ալ–իշթիրաքի: Այդտեղից էլ կուսակցության կրճատ անվանումը՝ Բաաս, որն արաբերեն նշանակում է վերածունդ[28]:

Միշել Աֆլաքը դարձավ Բաաս կուսակցության առաջնորդը և գլխավոր գաղափարախոսը: Բաասի գաղափարախոսությունը, որին նվիրված են Միշել Աֆլաքի բազմաթիվ աշխատությունները, ըստ էության, էկլեկտիկ ուսմունք է, որում առկա են արաբական նացիոնալիզմի, սոցիալիզմի, հեղափոխականության, արմատականության, արաբական միասնության և արաբներին հատուկ առաքելության տարրեր. Անկյունաքարային է արաբական նացիոնալիզմի և նրա բարձրագույն դրսևորումը հանդիսացող արաբական միասնության գաղափարը, որի պատճառով բաասական գաղափարախոսությունը հաճախ անվանում են նաև պանարաբական: Բաասական գաղափարախոսության մեջ արաբական միասնությունը համարվում է ամենաառաջին քայլը, որը արաբական երկրները պետք է կատարեն իրենց առջև կանգնած ազգային, քաղաքական և տնտեսական խնդիրներն իրագործելու ճանապարհին: Հետագայում դրան ավելացավ արաբ ժողովրդի ազատության հիմնադրույթը: Միավորելով այդ երկու սկզբունքները՝ բաասական գաղափարախոսությունն առաջադրեց «Արաբ ազգի միասնություն և ազա-

28 Գրականության մեջ շատ հաճախ «Բաաս» ճիշտ գրելածևի փոխարեն հանդիպում է «ԲԱԱՍ» ձևը, որը սխալ է, քանի որ երկրորդ դեպքում դա ընկալվում է որպես հապավում՝ աբրեվիատուրա, մինչդեռ դա ընդամենը մեկ բառ է, որը նշանակում է «վերածունդ»:

տություն իր հայրենիքում» լոզունգը: Բաասական գաղափարախոսությունը գտնում է, որ «արաբ ազգն ունի հատուկ առաքելություն, որն անմահ է»: Այդ առաքելության վերջնական նպատակը գաղութատիրության վերացումը և հումանիտարիզմին աջակցելն է: Իսկ այդ պատմական առաքելությունն իրականացնելու համար Բաաս կուսակցությունը պետք է լինի նացիոնալիստական, ժողովրդական (պոպուլիստական), սոցիալիստական և հեղափոխական:

Բաասական սոցիալիզմը չպետք է շփոթել գիտական սոցիալիզմի հետ: Միշել Աֆլաքը մինչև վերջ մնաց հակամարքսիստական դիրքերում՝ մերժելով նրա բոլոր հիմնադրույթները, որոնք իրենց արտացոլումն են գտել Բաաս կուսակցության ծրագրային փաստաթղթերում: Բաասական սոցիալիզմը կտրուկ մերժում է դասակարգային պայքարի և պրոլետարիատի դիկտատուրայի մարքսիստական հիմնադրույթները: Սեփականության հարցում ևս, մանավանդ մասնավոր սեփականության և նրա ազգայնացման հարցում, կան սկզբունքային տարբերություններ բաասական և մարքսիստական գաղափարախոսությունների միջև:

Արաբական մեկ պետության փոխարեն մի քանի պետությունների կազմավորումն իր կնիքը դրեց Բաաս կուսակցության կառուցվածքի վրա: Կուսակցությունն իր ճյուղերն ունի Սիրիայում, Իրաքում, Լիբանանում, Եմենում և մի շարք այլ երկրներում: Այդ պատճառով ստեղծվեց կուսակցության Ազգային ղեկավարություն կամ հրամանատարություն, և Ռեգիոնալ՝ երկրային կամ շրջանային ղեկավարություն՝ յուրաքանչյուր արաբական երկրի համար, որտեղ գոյություն ունեն Բաասի տեղական ճյուղերը, որոնք նույնպես կրում են «կուսակցություն» անվանումը: Ազգային ղեկավարությունը պատասխանատու է համընդհանուր արաբական քաղաքականության և գաղափարական հիմնադրույթների մշակման և անաղարտության համար, իսկ երկրային կամ շրջանային ղեկավարությունը պատասխանատու է տվյալ երկրում տարվող բաասական քաղաքականության իրականացման համար:

Բաաս կուսակցությունն իր սոցիալական կազմով տարբերվում է մինչ այդ տասնամյակներ շարունակ քաղաքական ասպարեզում գործող կուսակցություններից, ինչպես՝ ալ–Շաաբ՝ ժողովրդական, Քութլա ալ–վաթանիյա՝ Ազգային բլոկ և այլն, որոնք ավանդաբար հիմնականում արաբ ֆեոդալ–կալվածատերերի, ցեղային ավագանու և խոշոր բուրժուազիայի շահերն արտահայտող և պաշտպանող կուսակ-

ցություններ էին: Պատմականորեն դրանք արդեն XX դարի կեսերին իրենց դարն ապրած կուսակցություններ էին: Եկել էին նոր ժամանակներ, և քաղաքական ասպարեզում այդ ավանդական կամ հին քաղաքական էլիտան աստիճանաբար իր տեղը պետք է զիջեր և զիջում էր նոր ուժերին կամ քաղաքական նոր էլիտային: Հենց նման սոցիալ–քաղաքական փոփոխությունների արդյունք էր նաև Բասսի քաղաքական ասպարեզ մտնելը: Դա նոր կուսակցություն էր ոչ միայն իր գաղափարախոսությամբ, այլև իր սոցիալական կազմով: Բասսն իրենից ներկայացնում էր ազգային միջին և մանր բուրժուազիայի, մանր արտադրողների, քաղաքացիական և զինվորական մտավորականության, աշխատավորների, այդ թվում և բանվորների ու գյուղացիների կուսակցություն: Դրանով է նաև բացատրվում այդ կուսակցության քաղաքական երկարակեցությունը Սիրիայում, որտեղ նա ավելի քան 40 տարի է, ինչ հանդիսանում է կառավարող կուսակցություն: Նույնն էր պարագան նաև Իրաքում մինչև ամերիկյան ներխուժումը 2003 թ.:

Այժմ կրկին վերադառնանք 1963 թ. մարտի 8–ի հեղաշրջման լուսաբանությանը: Ժամանակին վիճաբանություններ էին գնում այն հարցի շուրջը՝ արդյո՞ք մարտի 8–ի իրադարձությունները հեղափոխություն էր, թե՞ դա հեղաշրջում էր. Բասսականները դա մինչև հիմա էլ համարում են հեղափոխություն՝ **ալ–սաուրա:** Խորհրդային մասնագետները (տողերիս հեղինակը նույնպես մասնակցել է այդ վիճաբանություններին զանազան արաբագիտական գիտաժողովներում) բաժանված էին երկու մասի: Մի մասը գտնում էր, որ դա հեղափոխություն է, քանի որ այն իշխանությունից հեռացրեց ավանդական սոցիալ–դասակարգային խավերին՝ բուրժուազիային և կալվածատերերին, և երկրի կառավարումը հանձնեց սոցիալ–դասակարգային նոր ուժերին՝ մանր բուրժուազիային, մտավորականությանը և այդ խավերի շահերն արտահայտող զինվորականությանը: Նրանք իրենց գլխավոր խնդիրներից մեկը համարեցին սոցիալիստական հասարակության կառուցումը. Այս մասն ավելի հակված էր մարտի 8–ին տեղի ունեցածը համարել հեղաշրջում: Արևմտյան պատմագիտության մեջ այն հստակորեն ընկալվել է որպես միայն և միայն հեղաշրջում:

Սակայն անկախ այն բանից, թե դա հեղափոխություն կամ հեղաշրջում էր, մի բան հստակ է, որ ֆեոդալ–կալվածատերերը, ցեղային ավագանին, հին և ավանդական ուժերը մղվեցին հետին պլան, աստիճանաբար զրկվեցին անմիջականորեն երկիրը կառավարելու և իշխա-

նություն իրականացնելու հնարավորություններից, որն անցավ քաղաքական և սոցիալ–դասակարգային նոր ուժերին՝ քաղաքական նոր էլիտային:

Մարտի 9–ին Սալահ Բիթարը, որը, ինչպես նշել ենք, Բաաս կուսակցության հիմնադիր ղեկավարներից մեկն էր, նշանակվեց վարչապետ և կազմեց 20 հոգուց բաղկացած իր առաջին կառավարությունը, որից 10–ը բաասականներ էին: Ճշգրտելով իր խնդիրները՝ կառավարությունը պաշտոնապես հայտարարեց. որ նա գործելու է «արաբների միասնության և սոցիալիստական հասարակություն կառուցելու համար»: Ավելի կոնկրետացնելով իր կառավարության խնդիրներն արաբական միասնության հարցում՝ Սալահ Բիթարը նշեց. որ կառավարությունն «իր գլխավոր խնդիրը համարում է Իրաքի հետ դաշինքը»: Դա պատահական չէր, քանի որ 1963 թ. փետրվարի 8–ին՝ Սիրիայում բաասականների հեղաշրջումից մոտ մեկ ամիս առաջ, բաասականները պետական հեղաշրջում էին կատարել Իրաքում և իշխանությունը վերցրել իրենց ձեռքը: Դրա հետևանքով Արաբական Արևելքի երկու առաջատար երկրներում մեկ ամսվա ընթացքում իշխանությունն անցավ Բաաս կուսակցությանը:

1963 թ. մարտի 24–ին Սիրիայի գործադիր և օրենսդիր իշխանությունը ստանձնեց Հեղափոխական հրամանատարության ազգային խորհուրդը՝ ՀՀԱԽ–ն:

Բաաս կուսակցությունն ԱՄՀ–ի հետ անմիջական միավորման կողմնակիցների՝ յունիոնիստների ճնշման տակ ուղղում մտցրեց արաբական միասնության հարցում իր քաղաքականության մեջ և իր կարևոր խնդիրը հռչակեց ԱՄՀ–ի ու Իրաքի հետ Սիրիայի միության հիմնումը: Սիրիայի կառավարությունը մարտի կեսերին բանակցություններ սկսեց Իրաքի և ԱՄՀ–ի հետ միավորման հարցի շուրջը: 1963 թ. ապրիլի 17–ին երեք պետությունների միջև ստորագրվեց համաձայնություն դաշնային հիմունքներով միավորվելու մասին: Սակայն հետագայում նրանց միջև ծագած տարաձայնությունների պատճառով այդ համաձայնագիրը մնաց թղթի վրա և երբեք չիրագործվեց:

Արդյունքը եղավ այն, որ խիստ սրվեց ներքաղաքական վիճակը, և լարվեցին հարաբերությունները Սիրիայի ղեկավարության մեջ: Հիմնական հակասությունը յունիոնիստների և Բաասի ղեկավարության միջև էր: Յունիոնիստները պահանջում էին Սիրիայի անհապաղ միավորումը ԱՄՀ–ի հետ, մինչդեռ Բաասի ղեկավարությունը դեմ էր դրան և,

ելնելով Եգիպտոսի հետ միավորման 1958–1961 թթ. դառը փորձից, ձգտում էր այդ միավորումն իրականացնել այնպես, որ ապագա դաշնային պետության մեջ ապահովեր իր ղեկավար դերը: Իսկ յունիոնիստները լսել անգամ չէին ուզում այդ մասին և կատաղի պայքար սկսեցին Բաասի դեմ: Բաասականներն անցան հակահարձակման և ղեկավարության որոշումով սկսվեցին հալածանքները յունիոնիստների դեմ, յունիոնիստներն ազատվեցին բանակում ու կառավարության մեջ իրենց գրաված պաշտոններից: Դրանից հետո կառավարության վեց յունիոնիստ նախարարները հրաժարական ներկայացրին ու դուրս եկան կառավարության կազմից, իսկ 1963 թ. մայիսի 10–ին Սալահ Բիթարի կառավարությունը հարկադրված հրաժարական տվեց: Մայիսի 13–ին նա կրկին գլխավորեց Սիրիայի կառավարությունը, որը կազմված էր բացառապես բաասականներից և նրանց համախոհներից: Սալահ Բիթարի երկրորդ կառավարության մեջ չկար ոչ մի յունիոնիստ և Եգիպտոսի հետ անհապաղ միավորման կողմնակից:

Պայքար սկսվեց նաև զինվորական բարձրագույն ղեկավարության ներսում: 1963 թ. հուլիսի 9–ին ՀՀԱԽ–ի որոշմամբ գեներալ Զիյադ Հարիրին հեռացվեց պաշտպանության նախարարի ու բանակի գլխավոր շտաբի պետի պաշտոնից, և նրա փոխարեն նշանակվեց բաասական գեներալ Ամին Հաֆիզը: Նա հուլիսի 27–ին ստանձնեց նաև ՀՀԱԽ–ի նախագահի և սիրիական բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնները: Այսպիսով՝ բաասականներին հաջողվեց ամրապնդել իրենց դիրքերը երկրի քաղաքական համակարգում.

Մարտյան պետական հեղաշրջումից հետո զգալի փոփոխություններ տեղի ունեցան երկրի սոցիալ–տնտեսական և քաղաքական կյանքում: 1963 թ. հունիսի 25–ի դեկրետով փոփոխություններ մտցվեցին ագրարային ռեֆորմի օրենքի մեջ: Նա սահմանափակեց կալվածատերերին թողնվող հողատարածությունների առավելագույն չափերը և նրանցից վերցված հողերը բաժանվեցին հողազուրկ և սակավահող գյուղացիներին: Փոփոխություններ մտցվեցին նաև «Ագրարային հարաբերությունների կազմակերպման մասին» օրենքում, որով բարձրացվում էր բերքից գյուղացի վարձակալի հասանելիք բաժինը և պաշտպանվում նրա իրավունքները կալվածատիրոջ կամայականություններից:

Վարկաֆինանսական գործունեության վրա հսկողություն սահմանելու նպատակով 1963 թ. մայիսին կառավարությունն օրենք ընդունեց բոլոր մասնավոր բանկերն ազգայնացնելու և ազատ վալյուտային

շուկան փակելու մասին: Այս որոշումը խիստ դժգոհությամբ ընդունեց սիրիական բուրժուազիան: Նա փակեց բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ՝ անգործության մատնելով բանվորներին: Կառավարությունը նահանջեց և կրկին թույլատրեց վալյուտային ազատ գործունեությունը: Այս բոլորն ուղեկցվում էր երկրի տնտեսական վիճակի վատթարացմամբ՝ կրճատվում էր բանվորների ու ծառայողների աշխատավարձը, ու աճում՝ գործազրկությունը: Գյուղացիներն էլ դժգոհ էին, որ կալվածատերերը հաշվի չէին առնում ագրարային ռեֆորմի մեջ մտցրած փոփոխությունները, իսկ ռեֆորմի անցկացման տեմպերն էլ խիստ ընկան: Դա 1963 թ. նոյեմբերի 12–ին հանգեցրեց Սալահ Բիթարի կառավարության անկմանը: Վարչապետի պաշտոնը ստանձնեց Ամին Հաֆիզը: Նոր կառավարության մեջ նախարարական տեղերի մեծ մասը զբաղեցրին ծախ բաասականները, թեև աջերից էլ մտան նրա մեջ: Նրանց ներկայացուցիչ Մուհամմադ Ումրանը զբաղեցրեց վարչապետի տեղակալի պաշտոնը: Աջերը հանդես էին գալիս դեմոկրատական ազատություններն ընդլայնելու և քաղաքական բանտարկյալներին ներում շնորհելու Ամին Հաֆիզի քաղաքականության դեմ:

Բաաս կուսակցության ներսում ընթացող պայքարի հետևանքով նրա հեղինակությունն աստիճանաբար ընկնում էր: Զգալով այդ վտանգի հեռուն տանող հետևանքները՝ ծախ բաասականները պահանջում էին, որ կառավարության ակտիվ քայլերի դիմի ստեղծված դրությունից և մեկուսացումից դուրս գալու համար: Ամին Հաֆիզի կառավարությունը 1964 թ. ապրիլի 26–ին գործողության մեջ դրեց ժամանակավոր սահմանադրությունը, որով Սիրիան հռչակվում էր «Ժողովրդական դեմոկրատական սոցիալիստական հանրապետություն»: Ազգայնացվեցին մի քանի խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, և դրանց ղեկավարման համար ստեղծվեցին վարչական խորհուրդներ, որոնց կազմի մեջ մտան նաև բանվորների և ծառայողների ներկայացուցիչները: 1964 թ. մայիսին որոշ փոփոխություններ կատարվեցին նաև Սիրիայի պետական կառուցվածքում: Ստեղծվեց պրեզիդենտական խորհուրդ, որի նախագահ նշանակվեց Ամին Հաֆիզը, իսկ վարչապետ դարձավ Սալահ Բիթարը:

Միաժամանակ Բաասի ղեկավարությունն ուղիներ էր որոնում ազգային բուրժուազիայի հետ համագործակցելու համար, հանդես էր գալիս բոլոր դասակարգերի միասնության ու ազգային համերաշխության կոչով և ընդգծում, որ մասնավոր սեփականությունն անձեռնմխելի է: Նա բուրժուազիայի գործունեության համար նպաստավոր պայ-

մաններ էր ստեղծում, խրախուսում նրան և վարկեր տրամադրում: Ակտիվացրեց իր գործունեությունը Սիրիայում օտարերկրյա կապիտալը:

Չնայած այս բոլորին՝ սիրիական բուրժուազիան համագործակցության չէր գնում բասսականների հետ, քանի որ նա նրանց չէր վստահում: Ուստի նա անցավ հարձակման՝ որպես հիմնական զենք օգտագործելով տնտեսական կազմալուծումը: Նա չէր ցանկանում կապիտալ ներդրումներ կատարել ազգային արդյունաբերության մեջ, շահույթները երկրից դուրս էր տանում, փակեց մի շարք ձեռնարկություններ: Երկրի տնտեսական պլանների կատարումը ձախողվում էր, աճում էր գործազրկությունը, ընկնում աշխատավորների կենսամակարդակը: Սիրիական բուրժուազիան ձգտում էր տապալել բասսականների իշխանությունը: Սպառնացող վտանգը ակտիվացրեց ձախ բասսականներին, որոնք հանդես էին գալիս առաջադիմական քաղաքական և տնտեսական կոնկրետ միջոցառումներ կիրառելու, վերափոխման պրոցեսն արագացնելու պահանջով: Բասի ներսում ընթացող պայքարի հետևանքը եղավ այն, որ կուսակցության ղեկավարությունից հեռացվեց նրա հիմնադիր և աջակողմյան թևի ներկայացուցիչ Միշել Աֆլակը: Բաաս կուսակցության համաարաբական ղեկավարության գլխավոր քարտուղար ընտրվեց Սունիֆ Ռազզազը, իսկ կուսակցության սիրիական մարզային ղեկավարության գլխավոր քարտուղար՝ Ամին Հաֆիզը, որը և 1964 թ. հոկտեմբերի 4–ին դարձավ վարչապետ: Սիրիական կառավարությունը 1964 թ. վերջերին և 1965 թ. սկզբներին ազգայնացրեց նավթային և օգտակար հանածոների պաշարները, արգելեց նրանց շահագործումը օտարերկրյա ընկերությունների կողմից, ազգայնացրեց արդյունաբերական ձեռնարկությունների մի մասը: Դրա շնորհիվ ամրապնդվեց պետական սեկտորը: Սակայն դա, ինչպես և պետք էր սպասել, առաջ բերեց բուրժուազիայի խիստ դժգոհությունը: Բացի դրանից, բասսական ղեկավարության և կառավարության կողմից թույլ տրվեցին մի շարք սխալներ: Խոշոր և միջին բուրժուազիային պատկանող ձեռնարկությունների հետ միասին ազգայնացվեցին նաև մանր ապրանքարտադրողների արհեստանոցները, ինչպես նաև մանր առևտրական միջնորդների սեփականությունը: Այդ հանգամանքը դարձավ դժգոհության մի նոր աղբյուր, որից փորձեցին օգտվել խոշոր բուրժուազիան և հոգևորականությունը: Կազմակերպվեցին այսպես կոչված «Մուհամմադի ջոկատներ», որոնց կոչ արվեց ջիհադի՝ սրբազան պատերազմի դուրս գալ ընդդեմ կառավարության: Սակայն բանվորների և գյուղացիների լայն աջակցության շնորհիվ

հաջողվեց այդ դավադրությունը ձախողել: Դրանից հետո երկրում կիրառվեցին մի շարք առաջադիմական բնույթի միջոցառումներ՝ ազգայնացվեցին մի քանի ընկերություններ ևս, պետական մեծաշնորհ հաստատվեց հացահատիկի և բամբակի արտահանման վրա, ազատ արձակվեցին քաղաքական բանտարկյալները:

Սակայն դա հանգեցրեց պայքարի հետագա սրմանը Բաաս կուսակցության աջ և ձախ թևերի միջև: Ձախ թևը Սալահ Ջադիդի գլխավորությամբ պնդում էր առաջադիմական վերափոխումների հետագա ընդարձակման և խորացման վրա, իսկ աջ թևը, ընդհակառակը, ելնում էր այն բանից, որ Սիրիան առանց այն էլ շատ հեռու է գնացել, ուստի անհրաժեշտ է կանգնեցնել Սիրիայի հետագա ձախացման պրոցեսը: Ամին Հաֆիզը հարեց երկրորդ տեսակետին: Դա հանգեցրեց նրա հեռացմանը կուսակցական և կառավարական գործերից և ձախերի դիրքերի ամրապնդմանը, որի ներկայացուցիչ Յուսուֆ Զուեյնը 1965 թ. սեպտեմբերին կազմեց Սիրիայի կառավարությունը: Սիրիական Բաասի գլխավոր քարտուղար դարձավ սիրիական ձախ բաասական ղեկավար Սալահ Ջադիդը: Յուսուֆ Զուեյնը, ներկայացնելով իր կառավարության ծրագիրը, գլխավոր խնդիրները համարեց սոցիալ–տնտեսական խորը բարեփոխումների անցկացումը, սոցիալիստական հասարակության կառուցումը, ժողովրդի նյութական բարեկեցության արմատական բարելավումը և սոցիալիստական երկրների հետ Սիրիայի հարաբերությունների ամրապնդումը:

Բայց ձախերի հաղթանակը ժամանակավոր էր և երկար չտևեց 1965 թ դեկտեմբերի 21–ին Ամին Հաֆիզին հաջողվեց վերականգնել իր դիրքերը, և ձախ բաասականները, այդ թվում՝ վարչապետ Յուսուֆ Զուեյնը, փոխպրեզիդենտ Նուր ալ–Դին Աթասին և նրանց կողմնակիցները հեռացվեցին իրենց զբաղեցրած պաշտոններից: Ամին Հաֆիզը լուծարեց Բաասի սիրիական մարզային ղեկավարությունը. Իշխանությունը կրկին անցավ աջ բաասականներին, և Սալահ Բիթարը ստանձնեց վարչապետի պաշտոնը: Նրա կառավարության մեջ չմտավ ոչ մի ձախ բաասական և զինվորական: Կառավարությունը նախապատրաստեց ազգայնացված ձեռնարկությունների ապազգայնացման օրենքի նախագիծ. Փաստորեն, նա վարում էր սիրիական ժողովրդի և դեմոկրատական ուժերի պայքարի գնով ձեռք բերված առաջադիմական նվաճումների վերացման կուրս: Թվում էր, թե Սիրիան կշեղվի իր որդեգրած ուղուց: Սակայն այդ կրիտիկական պահին մեկ անգամ ևս իրենց խոսքն ասա-

ցին աշխատավորական մասսաները, սիրիական հասարակության առաջադիմական ուժերը և նրանց պաշտպանող զինվորականները:

Բաաս կուսակցության ձախ թևին հավատարիմ զինվորականները 1966 թ. փետրվարի 23–ին կատարեցին պետական հեղաշրջում: Բաաս կուսակցության համաարաբական ղեկավարությունը, այդ թվում՝ նրա առաջնորդներ Միշել Աֆլակը, Մունիֆ Ռազզազը և Սալահ Բիթարը, որոնք հանդիսանում էին աջ ուժերի ոգեշնչողները և նրանց տակտիկայի մշակողները, տնային կալանքի ենթարկվեցին, իսկ հետագայում արտաքսվեցին երկրից: Ձերբակալվեց նաև Ամին Հաֆիզը:

Իշխանության գլուխ եկան հեղափոխական դեմոկրատները: Սիրիայի Արաբական Հանրապետության պրեզիդենտ դարձավ Նուր ալ–Դին Աթասին, իսկ նոր կառավարությունը կրկին կազմեց Յուսուֆ Զուեյնը, որի մեջ, բացի բաասականներից, մտան նաև առաջադեմ գործիչները և մեկ կոմունիստ: Գեներալ–մայոր Հաֆիզ Ասադը, որի խմբավորումը վճռական դեր էր խաղացել փետրվարի 23–ի հեղաշրջման գործում, գրավեց պաշտպանության նախարարի պաշտոնը: Այս հեղաշրջումն արժանացավ բանվորների, գյուղացիների և մտավորականության ամենալայն պաշտպանությանը: Իշխանության գլուխ եկան հեղափոխական դեմոկրատները՝ այն ուժերը, որոնք կանգնած էին Սիրիայի ոչ կապիտալիստական զարգացման ուղու վրա և համոզված էին, որ միայն սոցիալիստական հասարակարգի կառուցումը կարող է պայմաններ ստեղծել Սիրիայի առաջընթացի և ժողովրդի բարեկեցության համար:

Յուսուֆ Զուեյնի կառավարությունը սկսեց վարել սոցիալ–տնտեսական վերափոխումները խորացնելու և ընդլայնելու կուրս: Ամրապնդվեց պետական սեկտորը, արագացվեց ագրարային ռեֆորմի կիրառումը, որին օժանդակելու համար 1966 թ. ապրիլի 17–ին հիմնվեց գյուղացիական միությունների ֆեդերացիա: Բարձրացվեց տնտեսության մի շարք ճյուղերի բանվորների և ծառայողների աշխատավարձը, սկսեցին շահույթների 25%–ը բաժանել ազգայնացված արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողներին: Սկսվեց նաև պետական ապարատի և բանակի զտումը աջ տարրերից: Հեղափոխությունը նրա թշնամիներից պաշտպանելու համար Յուսուֆ Զուեյնի կառավարությունը ստեղծեց ժողովրդական աշխարհազորական ջոկատներ, որոնց զենք բաժանվեց:

Յուսուֆ Զուեյնի կառավարությունը վճռական քայլերի դիմեց հարաբերությունները արաբական առաջադիմական երկրների, մասնավորապես ԱՄՀ–ի հետ բարելավելու ուղղությամբ: 1966 թ. նոյեմբերին երկու

երկրների ղեկավարները ստորագրեցին համատեղ պաշտպանության պայմանագիր: Քայլեր ձեռնարկվեցին նաև հարաբերությունները բարելավելու և զարգացնելու Իրաքի, Ալժիրի և արաբական այլ երկրների հետ:

Նոր հեռանկարներ բացվեցին խորհրդային–սիրիական համագործակցության առջև. Դրան մեծ խթան տվեցին 1966 թ. ապրիլին Մոսկվայում տեղի ունեցած բանակցությունները, որոնց ժամանակ սիրիական կառավարական պատվիրակությունը գլխավորում էր վարչապետ Յուսուֆ Զուեյնը: Կողմերը արձանագրություն ստորագրեցին Եփրատի վրա ամբարտակի և հիդրոէլեկտրակայանի կառուցման գործում Խորհրդային Միության կողմից Սիրիային տեխնիկական և տնտեսական օգնություն ցույց տալու մասին:

Այս շրջանում Սիրիայի կարևոր հաղթանակներից մեկը պետք է համարել «Իրաք պետրոլեում կոմպանիի» (ԻՊԿ) հետ ծագած վեճի դրական լուծումը: Սիրիան պահանջում էր ավելացնել այդ ընկերությանը պատկանող և նրա տարածքով անցնող նավթամուղից ստացվող վճարումները. Երկար պայքարից հետո 1967 թ մարտի 2–ին ԻՊԿ–ի ղեկավարությունը հարկադրված էր զիջել:

3. 1967 թ. հունիսյան պատերազմը և նրա հետևանքները

Սիրիայի քաղաքական կյանքում և սոցիալ–տնտեսական ոլորտում նկատվող առաջընթացը ընդհատվեց 1967 թ. հունիսի 5–ին սկսված պատերազմով՝ մի կողմից Իսրայելի, իսկ մյուս կողմից՝ ԱՄՀ–ի Հորդանանի և Սիրիայի միջև որը հայտնի է որպես «վեցօրյա պատերազմ»: Պատերազմը հանկարծակի չպայթեց. Դրան նախորդեց իրադրության աննախընթաց սրումը տարածաշրջանում: Պատերազմի վտանգը միանգամայն ակնհայտ էր և իրական:

Սիրիայում հավատացած էին, որ Իսրայելում որոշել են ամեն գնով տապալել բաասական վարչակարգը, մանավանդ այն բանից հետո, երբ 1967 թ. մայիսին Իսրայելն իր զորքերը կենտրոնացրեց իսրայելա–սիրիական սահմանի վրա. իսկ վարչապետ Էշկոլը սպառնաց որ «Դամասկոսը անհրաժեշտության դեպքում կօկուպացվի» Դա խիստ անհանգստացրեց Սիրիայի ղեկավարությանը, որը շտապեց այդ մասին տեղյակ պահել Եգիպտոսի պրեզիդենտ Գամալ Աբդել Նասերին: Հիշեցնենք. որ դեռևս 1966 թ նոյեմբերին Եգիպտոսը և Սիրիան կնքել էին պայմանագիր դաշինքի և փոխադարձ օգնության մասին: Նասերի ար-

ծագանքը եղավ շատ արագ: Նա խոստացավ օգնություն ցույց տալ Սիրիային և եգիպտական զորքեր տեղակայեց Սիրիայում:

Հարձակումը սկսեց Իսրայելը 1967 թ. հունիսի 5–ի վաղ առավոտյան՝ ռմբակոծելով եգիպտական ռազմական օդանավակայանները, և ծանր հարված հասցնելով նրա ռազմաօդային ուժերին:

Իսրայելական զորքերը հաղթանակ տարան եգիպտական և հորդանանյան ռազմաճակատներում: Երրորդ ռազմաճակատը սիրիականն էր: Այստեղ պատերազմի առաջին չորս օրերը ծանր հրետանային մարտեր էին գնում, որոնք այդ պատերազմի պատմության մեջ մտել են որպես «հրետանային դուել». Իսրայելը, որն արդեն հաղթանակել էր եգիպտական և հորդանանյան ռազմաճակատներում, իր զորքերը և ռազմական տեխնիկան կենտրոնացրեց սիրիական ճակատում: Եվ խախտելով ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի կողմից արդեն ընդունված որոշումը կրակի դադարեցման վերաբերյալ՝ պատերազմի հինգերորդ օրը՝ հունիսի 9–ին, հարձակում սկսեց Գոլանի բարձունքները գրավելու նպատակով, որը նրան հաջողվեց հունիսի 10–ի երեկոյան, երբ արդեն գործողության մեջ էր մտել հրադադարի վերաբերյալ Անվտանգության խորհրդի որոշումը:

Արաբա–իսրայելական երրորդ պատերազմում Իսրայելին հաջողվեց գրավել Սինայի թերակղզին, Երուսաղեմի արաբական մասը, Հորդանան գետի արևմտյան ափը և Սիրիային պատկանող ալ–Կունեյտրան ու Գոլանի բարձունքները: Ռազմաճակատի գիծը գտնվում էր Դամասկոսից 40 կմ հեռավորության վրա: Արաբներից գրաված տարածքը կազմեց մոտ 60 հազ. քառ. կմ:

Սիրիայի կորուստները կազմում էին 700 սպանված և 3500 վիրավոր: Սիրիան կորցրեց 58 ինքնաթիռ և 105 տանկ:

Սակայն Իսրայելին և նրան հովանավորող ԱՄՆ–ին չհաջողվեց ռազմական հաղթանակը պսակել քաղաքական հաղթանակով և հասնել իրենց կարևոր ստրատեգիական խնդիրներից երկուսի իրագործմանը՝ տապալել առաջադիմական վարչակարգերը Սիրիայում և Եգիպտոսում, որոնք իրենց հայտարարել էին սոցիալիստական, և արաբական երկրներին պարտադրել մերձավորարևելյան կոնֆլիկտի լուծման իրենց տարբերակը. Իրենց հայրենիքը ագրեսորներից պաշտպանելու համար ոտքի ելան սիրիական աշխատավորական զանգվածները, որոնցից կազմավորվեցին աշխարհազորային գնդեր, հիմնվեցին «Հայրենիքի և հեղափոխության պաշտպանության կոմիտեներ»:

Պատերազմը քաղաքական, հոգեբանական և տնտեսական ծանր ազդեցություն ունեցավ Սիրիայի վրա: Նա ալեկոծեց ողջ Սիրիան: Արաբները ցնցված էին, ոմանք հուսահատվել էին, ոմանք էլ անծնատուր եղան ծայրահեղականությանը:

Սիրիական կառավարությունը որոշ միջոցներ ձեռք առավ պատերազմի հետևանքների վերացման ուղղությամբ՝ արագացվեց ագրարային ռեֆորմի կիրառումը, մշակվեց արդյունաբերական և գյուղատնտեսական նոր ձեռնարկությունների կառուցման ծրագիր. քայլեր ձեռնարկվեցին ժողովրդի նյութական վիճակը բարելավելու ուղղությամբ: Սակայն դրանց իրագործման ճանապարհին ծագեցին լուրջ դժվարություններ այդ թվում և քաղաքական բնույթի

Ռազմական պարտությունը տարածայնությունների նոր ալիք բարձրացրեց: Նասերականները և Ակրամ Հաուրանիի հետևորդ սոցիալիստները պատերազմում կրած պարտության համար մեղադրում էին Բաաս կուսակցությանը և նրա ղեկավարությանը: Տարածայնություններ առաջացան Բաաս կուսակցության ղեկավարության ներսում՝ զարգացման հետագա ընթացքի, պատերազմի հետևանքների վերացման ուղիների և մերձավորարևելյան կոնֆլիկտի լուծման հարցի շուրջը. Սիրիան չէր ընդունում ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի 1967 թ նոյեմբերի 22–ին ընդունած 242 բանաձևը. որը նախատեսում էր կոնֆլիկտի քաղաքական կարգավորում. Իսրայելի կողմից 1967 թ գրաված հողերի վերադարձ արաբներին և տարածաշրջանի բոլոր պետությունների ինքնիշխանության ճանաչում որը տվյալ դեպքում նշանակում էր հրաժարվել իսրայելական պետությունը վերացնելու արաբական երկրների քաղաքականությունից Դրա փոխարեն սիրիական ղեկավարությունն առաջ քաշեց ժողովրդական պատերազմի թեզը: Այս հարցում տարածայնություններ ծագեցին նաև Սիրիայի և արաբական այլ երկրների, մասնավորապես ԱՄՀ–ի և Հորդանանի միջև. որոնք կողմ էին 242 բանաձևին

Տարածայնությունները Բաաս կուսակցության ղեկավարության ներսում ընթանում էին երկու թևերի միջև Քաղաքացիական կամ սոցիալիստական, որը գլխավորում էր Սալահ Ջադիդը. և. այսպես կոչված, զինվորական կամ ազգայնական. որի ճանաչված ղեկավարն էր արդեն մեծ հեղինակություն ձեռքբերած պաշտպանության նախարար. գեներալ–մայոր Հաֆիզ Ասադը Սակայն հարկ է նշել. որ թևերի այդ անվանումները և բաժանումը քաղաքական–սոցիալիստականի ու զինվորական–ազգայնականի պայմանական էր:

Ներքին տարածայնությունները հաղթահարելու բազմաթիվ փորձեր կատարվեցին, բայց ապարդյուն: Դրությունից ելք գտնելու նպատակով 1970 թ. հոկտեմբերի 30–ին Դամասկոսում հրավիրվեց Բասս կուսակցության համաարաբական X արտակարգ կոնֆերանսը:

VII. ՍԻՐԻԱՆ ՀԱՖԻԶ ԱՍԱԴԻ ՊՐԵԶԻԴԵՆՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1970–2000 թթ.)

1. Հաֆիզ Ասադ: «Սարից իջավ նա քաղաք»

Հաշվի առնելով Հաֆիզ Ասադի արտակարգ դերը Սիրիայի պետական, քաղաքական և սոցիալ–տնտեսական կյանքում, որ նա խաղացել է երեք տասնամյակ՝ անհրաժեշտ ենք համարում համառոտակի անդրադառնալ նրա անցած կյանքի ուղուն և ներկայացնել նրա քաղաքական դիմապատկերը:

Հաֆիզ Ասադը ծնվել է 1930 թ. հոկտեմբերի 6–ին Լաթաքիայի շրջանի լեռնային և համարյա աշխարհից կտրված Քուրդահա գյուղում: Լաթաքիայի շրջանը ալավիների բնակության հիմնական կենտրոնն է, որը շատ կողմերով տարբերվում է հարևան շրջանների բնակչությունից: Գլխավոր տարբերություններից մեկը կրոնականն է, ավելի ճիշտ՝ կրոնական առանձնահատկությունը: Ալավիներն այդ անվանումը ստացել են իմամ Ալիի հետևորդները լինելու պատճառով, թեև կրում են նաև երկրորդ անվանումը՝ նուսեյրիներ. նրանք իրենցից ներկայացնում են շիիզմի մի ճյուղը, որոնց ուղղափառ մուսուլմանները՝ սուննիները, անգամ մուսուլման չեն համարում: Նրանց կրոնը կազմված է զանազան տարրերից՝ սկսած միստիցիզմից՝ խորհրդապաշտությունից, նախահայրենական ավանդույթներից և ծայրահեղական շիիզմից, վերջացրած քրիստոնեական տարրերով: Այդ պատճառով էլ սուննիները նրանց չեն ընդունում որպես մուսուլմաններ: Ալավիները, այդուհանդերձ, իրենց համարում են մուսուլմաններ:

Այն ընտանիքը, որտեղ ծնվել է Հաֆիզը, տիպիկ ալավիական ավանդապաշտ ընտանիք էր՝ ամեն բանում հավատարիմ և նվիրված ալավիների դարավոր սովորույթներին: Նրա հայրը՝ Ալի Սուլեյմանը, Քուրդահայում հարգված անձնավորություն էր, փոքր հողատեր, որն իր հողակտորով և աշխատանքով ապահովում էր իր ընտանիքի բարեկե-

ցիկ և արժանապատիվ կյանքը: Ալի Սուլեյմանը ամուսնացել էր երկու անգամ: Առաջին կնոջից՝ Սադայից, նա ուներ երեք արու զավակ և մեկ աղջիկ, իսկ երկրորդ կինը՝ Նաիսիան, նրան պարգևել էր չորս որդի և մեկ դուստր: Հաֆիզը Ալի Սուլեյմանի հինգերորդ զավակն էր և Նաիսիայի առաջնեկը: Ընտանիքում հաստատված էր խիստ կարգապահություն և ենթակայության ավանդական ձևը՝ փոքրը պարտավոր էր հարգել և ենթարկվել ավագին: Ընտանիքի նահապետը հայրն էր՝ Ալի Սուլեյմանը, նա էր ամեն բանի կենտրոնը և համարվում էր ոչ միայն իր ընտանիքի, այլև ոչ մեծ Քուրդահա գյուղի սյունը: Առավոտյան, երբ երեխաները հանդիպում էին իրենց հորը՝ Ալի Սուլեյմանին, «սաբահան խեյրի»՝ «բարի լույսի» հետ միասին պարտադիր համբուրում էին նրա ձեռքը: Երեխաները նրա ներկայությամբ իրավունք չունեին նստել կամ ծխել: Հաֆիզը խստորեն հետևում էր այդ կանոնների պահպանմանը, անգամ երբ նա արդեն վաղուց դադարել էր երեխա կամ պատանի լինելուց և արդեն դարձել էր հայտնի մարդ:

Ալի Սուլեյմանը գրասեր անձնավորություն էր և միակը գյուղում, որը բաժանորդագրված էր և թերթ էր ստանում: Եվ այդ հանգամանքը որոշակի դեր խաղաց Հաֆիզի կյանքում: Հետագայում նա խոստովանել էր, որ գրքի, պոեզիայի և արաբական լեզվի նկատմամբ ունեցած իր հետաքրքրության և սիրո համար պարտական է հորը: Հայրը օգտագործելով իր բոլոր հնարավորությունները և կապերը, կարողացավ հասնել այն բանին, որ Հաֆիզը 1939–1940 ուսումնական տարում ընդունվեց Լաթաքիայի միջնակարգ դպրոցը:

Ահա այսպիսի պայմաններում է ձևավորվել Հաֆիզը, ինչը շատ խորը հետք է թողել նրա վրա և ազդել նրա բնավորության ձևավորման վրա:

Նրանց ընտանեկան կամ տոհմական անունը եղել է «Վահիշ», որը արաբերեն նշանակում է «դաժան», «վայրենի»: Բայց 1927 թ. Ալի Սուլեյմանը փոխում է իր ազգանունը և ընդունում «Ասադ» անունը, որն արաբերեն նշանակում է «առյուծ»:

1951 թ. Հաֆիզ Ասադն ավարտում է դպրոցը և մտնում Հոմսի ռազմական ակադեմիան, որն ավարտում է 1955 թ.: Նրան մշտապես ձգել է երկինքը, և նա ռազմական ակադեմիայում մասնագիտանում է որպես ռազմական օդաչու:

Հոմսի ռազմական ակադեմիան ավարտելուց հետո Հաֆիզ Ասադը շարունակում է կատարելագործվել իր ռազմական մասնագիտության՝ ավիացիայի բնագավառում: Նա որոշ ժամանակ կատարելագործ-

վում է Եգիպտոսում, իսկ 1958 թ. սիրիական օդաչուների մի խմբի կազմում մեկնում Խորհրդային Միություն և մարզվում Մոսկվայից ոչ հեռու գտնվող ավիադպրոցում: Այստեղ նա առաջին անգամ թռիչքներ է կատարում ՄԻԳ–15 և ՄԻԳ–17 ռազմական ինքնաթիռներով, որոնք ժամանակի լավագույն կործանիչներն էին աշխարհում: Նա Խորհրդային Միությունում մնում է 9 ամիս և 1959 թ. գարնանը վերադառնում Սիրիա:

Հաֆիզ Ասադը, ինչպես և մյուս բաասականները, դժգոհ էր այն վիճակից, որի մեջ հայտնվել էր Սիրիան Եգիպտոսի միավորումից և ԱՄՀ–ի կազմավորումից հետո: Հաֆիզ Ասադը և իր չորս համախոհները 1960 թ. սկզբներին ստեղծում են Բաաս կուսակցության գաղտնի Ռազմական կոմիտեն, որը բավականին ակտիվ գործունեություն է ծավալում ԱՄՀ–ի կազմից Սիրիայի դուրս գալու ուղղությամբ:

Հաֆիզ Ասադի կենսագիրները, ինչպես՝ անգլիական հեղինակ Պատրիկ Սիլն իր «Ասադ. Պայքար Մերձավոր Արևելքի համար» գրքում կամ Դերեկ Հոպվուդը, Նաոմի Ջոյ Վեյնբերգերը և Սիրիայի ժամանակակից պատմության այլ հեղինակներ, Հաֆիզ Ասադի կյանքի ուղին համարում են մի մադու զարգացման ուղի, որը «սարից իջավ քաղաք»: Բայց եթե սարից քաղաք իջնելն իրագործվում է բարձրից ներքև իջնելու ուղիով, ապա ֆիզիկայի այդ օրենքը միշտ չէ, որ քաղաքականության մեջ կրկնվում է նույնությամբ: Քաղաքականության բնագավառում սարից քաղաք իջնելը Հաֆիզ Ասադի համար դարձավ սոցիալական և քաղաքական աստիճանակարգի ամենացածր հարթակից հասնել ամենաբարձր մակարդակի: Եվ այդ ուղին նա կտրեց բավականին արագ և կարճ ժամանակամիջոցում: Բավական է նշել, որ միջնակարգ դպրոցն ավարտելուց 13 տարի անց, իսկ Հոմսի ռազմական ակադեմիան ավարտելուց 9 տարի անց նա արդեն ուներ գեներալ–մայորի զինվորական կոչում, Սիրիայի պաշտպանության նախարարն էր և Բաաս կուսակցության սկզբում՝ սիրիական շրջանային, ապա՝ ընդհանուր ազգային ղեկավարության լիդերներից մեկը:

Ահա այդ ժամանակից ի վեր սկսվում է նրա ռազմական փայլուն կարիերան՝ զուգորդված քաղաքական ամբիցիայի հետ, որը նրան ի վերջո հասցրեց Սիրիայի քաղաքական և ռազմական իշխանության բարձրագագաթին՝ հանրապետության պրեզիդենտի և զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոններին:

Դրանում մեծ դեր խաղացին նաև նրա բնատուր խելքը, աշխատասիրությունը, բարդ իրադրություններում ճիշտ կողմնորոշվելու ըն-

դունակությունները, մանրելու և զիջումների արվեստին տիրապետելու շնորհքը, զինակիցներ ընտրելու նրա հեռատեսությունը և այլ որակական հատկանիշներ:

Իր նշանակությունն ունեցավ նաև պատմական դարաշրջանը, այն հանգամանքը, որ եկել էին նոր ժամանակներ, որոնք նոր պահանջներ ու խնդիրներ էին առաջադրում, որն այլևս ի զորու չէր լուծելու նախորդ՝ իր դարն արդեն ապրող սերունդը: Տեղի էր ունենում սերնդափոխություն, երբ նոր կատեգորիայի, մտածելակերպի և որակի գործիչներ էին պետք: Իսկ դա մեծ հնարավորություններ էր ստեղծում և լայն հեռանկարներ բացում նոր սերնդի կարող ներկայացուցիչների առջև: Հաֆիզ Ասադը տիպաբանորեն, իր որակական հատկանիշներով պատկանում էր այդ նոր մտածելակերպի տեր և եռանդուն գործիչների շարքին:

2. Ուղղիչ շարժումը

Բաաս կուսակցության համաարաբական X արտակարգ կոնֆերանսն ընթանում էր սուր պայքարում մի կողմից՝ Սալահ Ջադիդի, որը նույնպես ալավի էր, իսկ մյուս կողմից՝ Հաֆիզ Ասադի կողմնակիցների միջև: Նրանց միջև տարաձայնությունները սկսվել էին վաղուց, որոնք ավելի սուր բնույթ կրեցին հատկապես 1967 թ. պատերազմից հետո: Տարաձայնությունները հիմնականում ռազմական, արտաքին և սոցիալ–տնտեսական հարցերի շուրջն էին: Դրան պետք է ավելացնել գաղափարական տարաձայնությունները: Սալահ Ջադիդի ղեկավարած հոսանքը կամ թևը գտնում էր, որ նախապատվությունը պետք է տրվի սոցիալիստական գաղափարներին, և գլխավոր նպատակը պետք է համարվի սոցիալիստական հասարակության կառուցումը: Իսկ Հաֆիզ Ասադի գլխավորած թևը առաջնայինը համարում էր ազգայնականը և գտնում, որ նախապատվելին միջարաբական համագործակցությունն է և պայքարը Իսրայելի դեմ: Նրանք երկուսն էլ հավակնում էին դառնալ երկրի ղեկավարը: Սալահ Ջադիդի հենարանը Բաաս կուսակցության ապարատն էր և առանձին կուսակցական կազմակերպությունները, մինչդեռ Հաֆիզ Ասադը հենվում էր բանակի վրա, որը նրա համար ավելի հարազատ միջավայր էր: Նա կարողացավ ռազմական ուժերի բոլոր կարևոր կառույցներում և առանցքային նշանակություն ունեցող հրամանատարական պաշտոններում նշանակել իր կողմնակիցներին և իր վերահսկողությունը հաստատել սիրիական ամբողջ բանակի վրա:

Հոկտեմբերի 30–ին սկսված բաասական համաարաբական X արտակարգ կոնֆերանսի աշխատանքներն ընթանում էին բուռն: Կողմերից ոչ մեկը չէր ցանկանում զիջել մյուսին, և այդպես՝ մինչև նոյեմբերի 16–ը: Սալահ Ջադիդի կողմնակիցները կամ կուսակցության քաղաքացիական թևը, որը կոնֆերանսում մեծամասնություն էր կազմում, նոյեմբերի 12–ին որոշում ընդունեցին Հաֆիզ Ասադին և նրա մերձակա օգնական, բանակի շտաբի պետ Մուստաֆա Թլասին ազատել իրենց գրաված զինվորական և պետական պաշտոններից և վերացնել երկիշխանությունը, որ հաստատվել էր երկրի կառավարման համակարգում: Սակայն Հաֆիզ Ասադն ու նրա զինվորական թևը աչալուրջ էին և կանխեցին Սալահ Ջադիդի կողմնակիցներին: Հեռատես Հաֆիզ Ասադի հրամանով զորքերն արդեն շրջապատել էին այն դահլիճը, որտեղ ընթանում էր կոնֆերանսը: Ջադիդականներն արդեն անզոր էին որևէ բան անել, և նրանց կողմից ընդունված որոշումները դառնում էին թղթի կտոր, որը Հաֆիզ Ասադն անտեսում էր. Նոյեմբերի 13–ին Հաֆիզ Ասադի հրամանով, որն իրեն աջակից ուներ բանակի շտաբի պետ Մուստաֆա Թլասին և մյուս բարձրաստիճան բանակային հրամանատարներին, զինվորականները գրավեցին Բաաս կուսակցության կազմակերպությունների գրասենյակները, իսկ նոյեմբերի 13–ին ձերբակալվեցին Սալահ Ջադիդը և Սիրիայի պրեզիդենտ Նուր ալ–Դին ալ–Աթասիին, որոնք բանտարկվեցին Մազզայի բանտի մեկուսարաններում, ապա նաև նախկին վարչապետ Յուսուֆ Զուեյնին և բաասական այլ ղեկավարներ. Արտաքին գործերի նախարար Իբրահիմ Մախուսին հաջողվեց փախչել և հաստատվել Ալժիրում:

Բաաս կուսակցության համաարաբական արտակարգ X կոնֆերանսն ավարտվեց 1970 թ. նոյեմբերի 16–ին պաշտպանության նախարար Հաֆիզ Ասադի և նրա կողմնակիցների հաղթանակով:

Հաֆիզ Ասադի գլխավորությամբ նոյեմբերի 16–ին ստեղծվեց Բաաս կուսակցության մարզային նոր ղեկավարություն, որտեղից վտարվեցին Սալահ Ջադիդի բոլոր կողմնակիցները: Նոյեմբերի 21–ին Հաֆիզ Ասադը դարձավ Սիրիայի վարչապետ և ձևավորեց սիրիական նոր կառավարությունը, որը համարվեց «ազգային միասնության» կառավարություն: Նա կոալիցիոն էր և կազմված էր Բաաս կուսակցության ներկայացուցիչներից, որոնք կազմում էին մեծամասնությունը, կոմունիստական կուսակցության և Արաբական սոցիալիստական միության ներկայացու-

ցիչներից: Պետության ղեկավար՝ պրեզիդենտ, ժամանակավորապես նշանակվեց Հաֆիզ Ասադի կողմնակիցներից մեկը՝ Ահմադ ալ–Խատիբը:

1970 թ. նոյեմբերի 16–ին՝ կոնֆերանսի ավարտին, Բաաս կուսակցության նորակազմ ղեկավարությունը հանդես եկավ հատուկ հայտարարությամբ՝ ուղղված բոլոր սիրիացիներին և արաբներին: Նրանում շարադրված էին Բաասի նոր ղեկավարության գլխավորած շարժման հիմնական նպատակները և խնդիրները: Դա բավականին ինքնատիպ փաստաթուղթ է, որտեղ նշված էր, որ շարժումը մնում է հավատարիմ նախկինում Բաաս կուսակցության համագումարների ընդունած որոշումներին: Սակայն հայտարարության մեջ շեշտված էր. որ նախկին ղեկավարությունը թույլ էր տվել կոպիտ սխալներ և վրիպումներ ու հետևողական չէր ընդունած կուսակցական որոշումները կիրառելու գործում: Ուստի նոր ղեկավարության խնդիրն է ուղղել նախորդ ղեկավարության սխալները: Այստեղից էլ այդ շարժման անունը՝ «Ուղղիչ շարժում»: Հետագայում Հաֆիզ Ասադը. անդրադառնալով «Ուղղիչ շարժում» տերմինին, բացատրել է, որ «ուղղիչ շարժում նշանակում է մի վարչակարգ, որն ավելի շատ հետևում է իր, քան թե այլոց քաղաքականությանը»:

Բաաս կուսակցության արտակարգ համաարաբական X համագումարի հայտարարության մեջ համառոտակի շարադրված էին այն գլխավոր և անհետաձգելի խնդիրները, որոնք նոր ղեկավարությունը պատրաստվում էր առաջիկայում լուծել: Նախատեսվում էր Սիրիայի առաջադիմական ուժերի միավորում Ազգային ճակատում, Ազգային խորհրդի՝ Սիրիայի բարձրագույն օրենսդիր մարմնի ստեղծում երեք ամսվա ընթացքում, մշտական սահմանադրության մշակում, տնտեսական ծրագրերի արագընթաց կիրառում՝ հաշվի առնելով իսրայելական ագրեսորների դեմ պայքարը շարունակելու համասիրիական խնդիրը, ժողովրդի նյութական դրության բարելավում՝ շեշտը դնելով նրա հիմնական կարիքները բավարարելու վրա: Առաջին անգամ խոսվում էր պետական ապարատի և նրա գործունեության վրա հսկողություն սահմանելու մասին, որը հանձնարարվում էր հասարակական կազմակերպություններին՝ ընդգծելով միաժամանակ նրանց դերի բարձրացման կարևորությունը: Հատուկ տեղ էր գրավում Սիրիայի ռազմական ուժերի ամրապնդման հարցը:

Հայտարարության արտաքին հարաբերություններին վերաբերվող մասում արձանագրված էր, որ Սիրիան իր կարևոր խնդիրն է համա-

րում ամրապնդել հարաբերությունները արաբական առաջադիմական երկրների, ազգային–ազատագրական շարժումների և սոցիալիստական երկրների հետ:

Վերոնշյալ մոտեցումները և հիմնախնդիրների շրջանակը կազմում են Ուղղիչ շարժման քաղաքական, հասարակական և սոցիալ–տնտեսական բովանդակությունը:

Սիրիական նոր ղեկավարությունն սկսեց կենսագործել Ուղղիչ շարժման հիմնադրույթները, առաջին հերթին՝ պետական կառուցվածքի բնագավառում:

Արդեն նշվել է, որ նոյեմբերի 16–ին ձևավորվել էր Բաաս կուսակցության մարզային նոր ղեկավարությունը, իսկ նոյեմբերի 21–ին Հաֆիզ Ասադը կազմել էր ազգային միասնության կոալիցիոն կառավարություն: Հաջորդ կարևոր քայլը հանդիսացավ պրեզիդենտ Ահմադ ալ–Խատիբի դեկրետը Սիրիայի ժողովրդական խորհրդի ստեղծելու մասին: Նա ստեղծվեց 1971 թ. փետրվարի 17–ին՝ 1966 թ. հետո առաջին անգամ, որը ստանձնեց օրենսդիր մարմնի՝ պառլամենտի ֆունկցիաներ: Նրա պարտականությունների մեջ էր մտնում նաև վերահսկողությունը գործադիր իշխանության և պետական ապարատի վրա: Ժողովրդական խորհուրդը կազմված էր 173 անդամից, որտեղ տեղերը բաշխված էին հետևյալ կերպ՝ բաասականներ՝ 87, կոմունիստներ՝ 8, ֆերմերներ՝ 36 և այլն:

Բաաս կուսակցության ղեկավարությունը Սիրիայի պրեզիդենտի պաշտոնի համար առաջադրեց Հաֆիզ Ասադի թեկնածությունը, որին 1971 թ. մարտի 2–ին հավանություն տվեց Ժողովրդական խորհուրդը և որոշեց մարտի 12–ին անցկացնել հանրաքվե:

Հանրաքվեն տեղի ունեցավ 1972 թ. մարտի 12–ին, և Հաֆիզ Ասադը, ստանալով հանրաքվեի մասնակիցների ձայների 99,9%–ը, ընտրվեց Սիրիայի Արաբական Հանրապետության պրեզիդենտ: Ապրիլի 3–ին կազմվեց սիրիական նոր կառավարություն, որը գլխավորեց Ռահման Խլեյֆաուին:

1971 թ. մայիսի 8–ին գումարվեց սիրիական Բաաս կուսակցության V մարզային կոնֆերանսը, որը հավանություն տվեց արդեն իրագործված միջոցառումներին և ստեղծեց մարզային նոր ղեկավարություն՝ Հաֆիզ Ասադին ընտրելով գլխավոր քարտուղար:

Ուղղիչ շարժման խնդիրների իրագործման ճանապարհին Սիրիայի քաղաքական կյանքի ամենակարևոր իրադարձություններից մեկը պետք է համարել Ազգային առաջադիմական ճակատի՝ ԱԱճ–ի հիմնու-

մը 1972 թ. մարտի 7–ին: Ճակատի մեջ մտան Բաաս կուսակցությունը, կոմունիստական կուսակցությունը՝ Խալեդ Բեկդաշի գլխավորությամբ, Արաբական սոցիալիստական միությունը, որը գլխավորում էր Ջամալ Աթասին, Արաբական սոցիալիստների շարժումը, որի ղեկավարն էր Ջամալ Սուֆին, և Սոցիալիստ–յունիոնիստների կազմակերպությունը, որը փաստորեն Ակրամ Հաուրանիի կողմնակիցներն էին՝ ընդամենը հինգ կուսակցություն և կազմակերպություն: Ընդունվեց ճակատի կանոնադրությունը, որը հաստատեց նրա կառուցվածքը: Նա սահմանում էր, որ ճակատի կազմում, բացի վերոնշյալ հինգ կազմակերպություններից, կարող են մտնել նաև այլ ուժեր: Կանոնադրության 4–րդ հոդվածում նշված էր, որ «Սիրիական Արաբական Հանրապետությունում պաշտոնական քաղաքական որոշումներ են համարվում Առաջադիմական ճակատի և Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցության որոշումները»: Սահմանելով ճակատի ընդհանուր գործելակերպը՝ կանոնադրության մեջ միաժամանակ շեշտվում էր, որ «ճակատի անդամներն իրենց գործունեության մեջ օգտվում են ազատությունից՝ իրենց կազմակերպությունների շրջանակներում»:

ԱԱճ–ի բարձրագույն օրգանը Կենտրոնական ղեկավարությունն է, որը «բաղկացած է նախագահից և 17 անդամներից, այդ թվում Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցությունը ներկայացնում են 9 մարդ, իսկ ճակատի մնացած անդամներին՝ 8–ական մարդ, այսինքն՝ երկուական ներկայացուցիչ ճակատի մնացած յուրաքանչյուր կազմակերպությունից»: Կանոնադրությունը միաժամանակ սահմանում է, որ ԱԱճ–ի նախագահը Սիրիայի պրեզիդենտը և Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցության գլխավոր քարտուղարն է: ԱԱճ–ի Կենտրոնական ղեկավարության նախագահ ընտրվեց Հաֆիզ Ասադը:

ԱԱճ–ի գործունեության հիմքում դրվեց նրա Խարտիան: Նրանում Սիրիայում հաստատված ռեժիմը բնութագրվեց որպես առաջադիմական՝ շեշտելով, որ ԱԱճ–ի ստեղծումը հանդիսանում է կենսական անհրաժեշտություն: Նրա գլխավոր խնդիրներից մեկը համարվեց «բոլոր ուժերի մոբիլիզացիան և ներքին ճակատի ամրապնդումը կատաղի իմպերիալիստական սիոնիստական հարձակման դեմ հանդիման, որը սպառնում է մեր հայրենիքին և մեր գոյությանը»:

Խարտիան բաղկացած է երեք մասից: Առաջին մասում՝ «ԱԱճ–ի խնդիրները ներքին ասպարեզում», նշված է, որ Սիրիայի գլխավոր խնդիրն է 1967 թ. հունիսի 5–ին օկուպացված արաբական տարածքների

ազատագրումը, պատերազմի և խաղաղության վերաբերյալ որոշումների ընդունումը, տնտեսական քաղաքականության պրոբլեմների քննարկումը, հնգամյա պլանների հաստատումը և այլն:

Խարտիայի երկրորդ բաժինը նվիրված է ճակատի խնդիրներին միջարաբական ասպարեզում: Այստեղ գլխավոր խնդիրը համարվեց արաբական միասնության հաստատումը, քանի որ «արաբական ճակատագրի միասնությունը և մասսաների ձգտումը միասնության հիմք են հանդիսանում միասնական արաբական սոցիալիստական հասարակության ստեղծման համար»: Միաժամանակ շեշտված էր, որ «ճակատը հավատում է քաղաքական, տնտեսական, ռազմական և մշակութային մարզերում արդյունավետ արաբական համագործակցության հասնելու անհրաժեշտությանը»: Խարտիայի այս բաժնում զգալի տեղ է հատկացված պաղեստինյան պրոբլեմին, մասնավորապես ասված է, որ «պաղեստինյան հարցը այժմ մեր հիմնական պրոբլեմն է»:

Եվ վերջապես՝ Խարտիայի երրորդ բաժնում խոսվում է ԱԱԵ–ի խնդիրների մասին միջազգային ասպարեզում: Այստեղ շեշտվում է, որ «գլխավոր հակասությունը կոնֆլիկտն է մի կողմից՝ մեր ազգի և մյուս կողմից՝ սիոնիզմի, Իսրայելի և միջազգային իմպերիալիզմի միջև՝ ԱՄՆ–ի գլխավորությամբ»: Խարտիայում շատ բարձր էր գնահատվում Խորհրդային Միության և սոցիալիստական մյուս երկրների դերը: Նրանում միաժամանակ հարց էր դրվում ընդլայնելու համագործակցությունը մուսուլմանական երկրների և երրորդ աշխարհի պետությունների հետ:

ԱԱԵ–ի ստեղծումից և նրա ծրագրային փաստաթղթերի ընդունումից հետո 1972 թ մարտի 24–ին կազմվեց սիրիական նոր կառավարություն Մահմուդ ալ–Այուբիի գլխավորությամբ: Նրա կարևոր խնդիրը հանդիսացավ Խարտիայում առաջ քաշված քաղաքական և տնտեսական հարցերի լուծումը և մշտական սահմանադրության նախապատրաստումը: Ահա այդ ժամանակ սուննի մուսուլմանները պահանջեցին, որ սահմանադրության մեջ հատուկ կետ մտցվի և արձանագրվի, որ Սիրիայի պետական կրոնը իսլամն է: Ազգային խորհուրդը, որը 1973 թ. հունվարի վերջերին հաստատել էր սահմանադրության նախագիծը, նման կետ չէր նախատեսում: Հաֆիզ Ասադը և նրա կողմնակիցները դրա դեմ էին: Սուննի մուսուլմանները 1973 թ. փետրվարին կազմակերպեցին մի շարք հակակառավարական ելույթներ Հոմսում և Համայում, որոնք ճնշվեցին բանակի կողմից: Եղան սպանվածներ և վիրավորներ: Հաֆիզ Ասադը հարկադրված էր նահանջել և որոշ զիջումների դիմել:

Որոշվեց իսլամը պետական կրոն հայտարարելու փոխարեն սահմանադրության մեջ կետ ավելացնել առ այն, որ «Սիրիայի պրեզիդենտը պետք է լինի մուսուլման»: Այդ փոփոխությունով հանդերձ սահմանադրության նախագիծը դրվեց հանրաքվեի և հաստատվեց 1973 թ. մարտի 12–ին:

Դրանով ավարտվեց ուղղիչ շարժման առաջին փուլը, որը հիմնականում ընդգրկեց կուսակցական, պետական, կառավարական և պառլամենտական կյանքի ոլորտը և այդ մարմինների վերակազմավորումը նոր պահանջներին համապատասխան: Այդ փուլում Հաֆիզ Ասադը հաստատվեց Սիրիայի բացարձակ լիդեր, որը զբաղեցնում էր Բաաս կուսակցության գլխավոր քարտուղարի, Սիրիայի պրեզիդենտի, Ազգային առաջադիմական ճակատի նախագահի և զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնները: Սահմանադրության ընդունումով այդ բոլոր փոփոխությունները և վերակազմավորումները ստացան սահմանադրական վավերացում:

3. 1973 թ. հոկտեմբերյան արաբա–իրայելական պատերազմը և նրա հետևանքները: Սիրիան ընդդեմ անջատողական գործարքների

Սիրիայի նոր ղեկավարության այդ միջոցառումների շնորհիվ անհրաժեշտ նախադրյալներ էին ստեղծվում առաջադիմական բնույթի սոցիալ–տնտեսական և քաղաքական վերափոխումների հետագա խորացման և երկրի ընդհանուր առաջընթացի համար:

Սակայն այդ պրոցեսին ծանր հարված հասցրեց 1973 թ. հոկտեմբերի 6–ին սկսված արաբա–իսրայելական 4–րդ պատերազմը, որը ծավալվեց երկու ճակատում՝ եգիպտա–իսրայելական և սիրիա–իսրայելական:

Պատերազմական գործողությունները սկսեցին Եգիպտոսը և Սիրիան, որը մեծ անակնկալ էր Իսրայելի համար: Սկզբնական շրջանում Եգիպտոսը և Սիրիան հասան զգալի հաջողությունների: Եգիպտական զորքերը կարողացան ճեղքել իսրայելական՝ այսպես կոչված «Բարլևի պաշտպանական գիծը» և անցան Սուեզի ջրանցքը:

Սիրիայի համար պատերազմական գործողությունները սկզբնական փուլում նույնպես դասավորվեցին բարենպաստ: Սիրիական զորքերն առաջ շարժվեցին Գոլանի բարձունքների ուղղությամբ, գրավեցին Հերմոն սարը, ապա նաև Կունեյտրան: Սակայն Եգիպտոսի պրեզիդենտ

Անվար Սադաթի սխալ դիրքորոշման, այսպես կոչված, «սահմանափակ պատերազմ» մղելու քաղաքականության, ինչպես նաև իր գործողությունները Սիրիայի հետ չհամաձայնեցնելու հետևանքով հարձակումը հետագա զարգացում չունեցավ և սպասվելիք արդյունքները չտվեց: Իսրայելը կարողացավ սիրիական ճակատում կենտրոնացնել զգալի քանակությամբ ուժեր և գրավել նոր տարածքներ: Սիրիական զորքերը, որոնց օգնության էին եկել նաև իրաքյան, հորդանանյան, քուվեյթյան և մարոկկոյական զորամիավորումներ, հերոսական դիմադրություն էին ցույց տալիս իսրայելական զորքերին: Սիրիային և Եգիպտոսին օգնում էր նաև Խորհրդային Միությունը, իսկ Իսրայելին՝ ԱՄՆ–ը:

Պատերազմի ընթացքում իսրայելական ինքնաթիռները ռմբակոծեցին սիրիական քաղաքներն ու գյուղերը, որի հետևանքով խիստ տուժեց սիրիական տնտեսությունը, մասնավորապես նավթային և էներգետիկ արդյունաբերության ձեռնարկությունները: Բայց դա չկոտրեց սիրիացիների դիմադրական ոգին, և չշեղեց երկիրը իր ընտրած ուղուց:

Պատերազմում Սիրիայի կորուստները կազմեցին 3500 սպանված և 9000 հազար վիրավոր: Սիրիան կորցրեց 160 ինքնաթիռ և, Եգիպտոսի հետ միասին, 1800 տանկ:

1974 թ. մայիսին 31–ին Մերձավոր Արևելքին նվիրված խաղաղության կոնֆերանսում, որն ընթանում էր Ժնևում, համաձայնություն ձեռք բերվեց սիրիական և իսրայելական զորքերի տարանջատման մասին, և Իսրայելը իր զորքերը դուրս բերեց 1973 թ. պատերազմի ընթացքում գրաված սիրիական բոլոր տարածքներից և 1967 թ. օկուպացրած Գոլանի բարձունքների մի մասից՝ ընդամենը 663 քառ. կմ: Նա Սիրիային վերադարձրեց նաև Կունեյտրան, որն ավերակների էր վերածվել: Այդ պատճառով 1973 թ. հոկտեմբերյան պատերազմը Սիրիայում համարում են իրենց համար հաղթական պատերազմ:

Պատերազմի ավարտից հետո Սիրիան ձեռնամուխ եղավ իրեն հասցրած վերքերի բուժմանը: Այդ գործում Սիրիային օգնության ձեռք մեկնեցին արաբական երկրները, որոնք նրան տրամադրեցին ֆինանսական և նյութական մեծ օգնություն, Խորհրդային Միությունը և սոցիալիստական մյուս երկրները, որոնց տեխնիկատնտեսական աջակցությամբ վերականգնվեցին ագրեսիայի հետևանքով ավերված գործարաններն ու ձեռնարկությունները: Շահագործման հանձնվեցին Խորհրդային Միության օժանդակությամբ կառուցվող Եփրատի հիդրոէներգետիկ հանգույցի առաջին հերթը, իսկ հանգույցի կառուցումն ամբողջու-

թյամբ ավարտվեց 1978 թ.: 1975 թ. գործարկվեց Դամիշլի–Լաթաքիա, իսկ հետագայում նաև Հոմս–Դամասկոս, Դամասկոս–Դերաա և Հոմս–Թարթուս երկաթուղագծերը: Ընդունվեցին մի շարք կարևոր օրենքներ և որոշումներ, մասնավորապես ավելացվեց բնակչության ունևոր խավերից գանձվող եկամտահարկը, արգելվեց հողերի վերավաճառքը, մոտ երկու անգամով բարձրացվեցին պետական սեկտորի բանվորների և ծառայողների աշխատավարձն ու կենսաթոշակը, մեծացվեցին հատկացումները սոցիալական ոլորտի, կրթության և առողջության զարգացման համար, օրենքներ ընդունվեցին կանանց և երեխաների իրավունքի պաշտպանության վերաբերյալ և այլն:

Միաժամանակ ակտիվացավ Սիրիայի դերը միջարաբական մարզում: Ամրապնդվեց համագործակցությունը Սիրիայի և Պաղեստինի ազատագրության կազմակերպության՝ ՊԱԿ–ի միջև, որին Սիրիան ճանաչեց Պաղեստինի ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչ:

1976 թ. հունիսին, երբ կրկին բորբոքվել էր քաղաքացիական պատերազմը Լիբանանում, սիրիական զորքերը մտան Լիբանան՝ հետագայում դառնալով միջարաբական խաղաղապահ ուժերի կորիզը: Հաֆիզ Ասադն իր միջամտությունը Լիբանանի քաղաքացիական պատերազմին բացատրում էր երկու հանգամանքով: Առաջին՝ նա գտնում էր, որ Սիրիայի և Լիբանանի միջև գոյություն ունեն հատուկ հարաբերություններ, և երկրորդ՝ Լիբանանի թեքվելը ԱՄՆ–ի և Իսրայելի կողմը արտակարգ վտանգ է ներկայացնում Սիրիայի անվտանգության համար: Սիրիական զորքերի ներկայությունը թեև որոշ չափով թուլացրեց պայքարի սրությունը, սակայն Սիրիայի համար ստեղծեց նոր բարդություններ միջազգային և արաբական մակարդակներով[29]:

1970–ական թվականների կեսերից արաբական որոշ շրջաններում ուժեղացան մերձավորարևելյան կոնֆլիկտը սեպարատիզմի՝ անջատողական հիմքի վրա կարգավորելու միտումները: Դրա ջատագովը և ակտիվ իրականացնողը եղավ Եգիպտոսի պրեզդենտ Անվար Սադաթը, որը 1977 թ. նոյեմբերին այցելեց Երուսաղեմ և հանդես եկավ իսրայելական կնեսետում: Սիրիան արաբական մի շարք երկրների հետ միասին խստորեն դատապարտեց Անվար Սադաթի կապիտուլյանտական քաղաքականությունը: Սիրիական ղեկավարությունը հանդես էր գալիս

29 Այդ հարցի լուսաբանությունը տե՛ս սույն աշխատության III հատորի Լիբանանին նվիրված գլխում:

մերձավորարևելյան կոնֆլիկտի համակողմանի, միասնական ուժերով և համաձայնեցված գործողություններով կարգավորելու օգտին և գտնում, որ հարցի մասնակի լուծումը հակասում է արաբների ազգային շահերին և ծառայում Իսրայելի ու նրա պաշտպան ԱՄՆ–ի դիրքերի ամրապնդմանը: Անվար Սադաթը պարտքի տակ չմնաց և իր հերթին խիստ քննադատեց Դամասկոսում հաստատված Հաֆիզ Ասադի վարչակարգը, կասկածի տակ վերցրեց նրա սիրիական լինելը՝ նշելով. որ այդ վարչակարգը «առաջին հերթին ալավիական է, երկրորդ հերթին՝ բաասական և միայն երրորդ հերթին՝ սիրիական»: Անվար Սադաթը 1977 թ դեկտեմբերի 5–ին խզեց դիվանագիտական հարաբերությունները Սիրիայի, ինչպես նաև Ալժիրի, Լիբիայի, Իրաքի և ԵԺԴՀ–ի հետ: Նշված պետությունները 1977 թ դեկտեմբերին Տրիպոլիում (Լիբիա) գումարեցին խորհրդակցություն, որտեղ մշակվեց ընդհանուր դիրքորոշում ընդդեմ Սադաթի կապիտուլյանտական գծի. Սիրիան, Ալժիրը, Լիբիան, ԵԺԴՀ–ն և ՊԱԿ–ը որոշեցին ստեղծել Կայունության և դիմակայության ճակատ, որը կոչված էր կազմակերպելու համաարաբական դիմադրություն ընդդեմ Իսրայելի և ԱՄՆ–ի հետ եգիպտական ղեկավարի սեպարատիստական և կապիտուլյանտական գործարքների: Սադաթը, տեսնելով արաբների ազգային շահերը, 1978 թ սեպտեմբերին Քեմփ Դևիդում՝ ԱՄՆ–ի պրեզիդենտների ամառային հանգստավայրում, կնքեց «Մերձավոր Արևելքում խաղաղության շրջանակները» համաձայնագիր, իսկ 1979 թ մարտին՝ հաշտության պայմանագիր Իսրայելի հետ: Սիրիան այդ քայլերը գնահատեց որպես դավաճանություն և դարձավ արաբական աշխարհի այն կենտրոններից մեկը, որը հետևողականորեն ձգտում էր չեզոքացնել Սադաթի կապիտուլյանտական քաղաքականության վնասակար հետևանքները արաբական երկրների համար: Նա Եգիպտոսին Արաբական պետությունների լիգայից վտարելու և այդ կազմակերպության կենտրոնատեղին Կահիրեից Թունիս տեղափոխելու, ինչպես նաև Եգիպտոսի նկատմամբ այլ սանկցիաներ կիրառելու քաղաքականության ոգեշնչողներից մեկն էր:

4. Սիրիայի ներքաղաքական դրության սրումը և «Մուսուլման եղբայրների» խռովարարական ելույթները (1979–1982 թթ.)

Սիրիայի ներքին կյանքում 70–ական թվականների երկրորդ կեսից դրսևորվեցին մի շարք բացասական երևույթներ: Չնավորվեց և իր

դիրքերն սկսեց ամրապնդել բյուրոկրատական և այսպես կոչված պարազիտային բուրժուազիան, որն ավելի ու ավելի էր պետական սեկտորն օգտագործում իր շահերի համար: Մեծ չափերի էին հասնում սպեկուլյացիան և կաշառակերությունը, ընկնում աշխատավորների կենսամակարդակը: Իսրայելական ագրեսիայի մշտական վտանգը հարկադրում էր Սիրիային ֆինանսական մեծ հատկացումներ կատարել պաշտպանունակության ամրապնդման համար, որն իր հերթին կաշկանդում էր տնտեսության մյուս ճյուղերի զարգացումը: Կառավարությունը հարկադրված որոշում ընդունեց կրճատել 1978–1980 թթ տնտեսական զարգացման համար ծախսումները և դրանք իջեցնել 1976 թ. մակարդակին:

Սիրիայում, ինչպես նաև արաբական մյուս երկրներում, նկատելիորեն ակտիվացավ իսլամը: Սրան պետք է ավելացնել նաև ԱՄՆ–ի, արևմտյան մի շարք պետությունների, ինչպես նաև արաբական պահպանողական երկրների մշտական ճնշումը Սիրիայի վրա:

Ահա այս բոլորը նպաստավոր պայմաններ ստեղծեցին Սիրիայում աջակողմյան և հետադիմական ուժերի աշխուժացման համար, ուժեր, որոնցում առաջատար դեր սկսեց խաղալ «Մուսուլման եղբայրներ» հետադիմական կրոնաքաղաքական կազմակերպությունը. Նրանց գործունեությունը մեծ թափ ստացավ 1979–1982 թթ.: «Մուսուլման եղբայրները» ձգտում էին տապալել Սիրիայում գոյություն ունեցող ռեժիմը, որը նրանք համարում էին սոցիալիստական և աշխարհիկ–աթեիստական, ստեղծել իսլամական հանրապետություն, նպաստել մասնավոր ձեռներեցության զարգացմանը, ապազգայնացնել ազգայնացված ձեռնարկությունները, կալվածատերերին վերադարձնել նրանցից բռնագրաված հողերը և այլն: Ներքաղաքական դրությունը ապակայունացնելու նպատակով նրանք երկրում ստեղծեցին սարսափի և ահաբեկման մթնոլորտ: Դամասկոսում, Հալեպում, Հոմսում, Լաթաքիայում, Համայում և այլուր «Մուսուլման եղբայրները» կազմակերպում էին տեռորիստական ակտեր, սպանում առաջադիմական քաղաքական, հասարակական և մշակույթի գործիչներին: Այդ ելույթներն ունեին նաև հակաալավիական ուղղվածություն: Միաժամանակ նրանք փորձում էին հրահրել միջհամայնքային բախումներ, մասնավորապես սուննիների և ալավիների միջև, կազմակերպում ցույցեր, գործադուլներ և այլն: Դարձյալ հրապարակ նետվեց ալավիների ոչ մուսուլման լինելու թեզը:

Կառավարությունը, Բաաս կուսակցության ղեկավարությունը և Սիրիայի մյուս ազգային ուժերը հսկայական աշխատանք կատարեցին

«Մուսուլման եղբայրների» հետադիմական էությունը բացահայտելու և ժողովրդական մասսաներին կազմակերպելու ուղղությամբ: Բայց դա շոշափելի արդյունքներ չտվեց: «Մուսուլման եղբայրները» և նրանց հետևում կանգնած ուժերը ոչ միայն չդադարեցրին պայքարը, այլև, ընդհակառակը, ավելի ակտիվ գործողությունների անցան, և ալավիներին սպանելը շատ մեծ ծավալներ ընդունեց: 1979 թ. հունիսին նրանք ներխուժեցին Հալեպի հրետանային ուսումնարանը և հանկարածակիի բերելով, մորթեցին 60 կադետների: Իշխանությունները գործեցին շատ արագ: Կառավարական զորքերը շատ վայրերում շրջափակման մեջ վերցրեցին «Մուսուլման եղբայրներին» և նրանց համակիրներին, որոնցից շատերը մահապատժի ենթարկվեցին: Դրան հաջորդեցին «Մուսուլման եղբայրների» հակակառավարական ելույթները Լաթաքիայում, իսկ 1980 թ. մարտին կրկին ալեկոծվեց Հալեպը: Այստեղ միավորվեցին ընդդիմության տարբեր ուժերը, կազմակերպվեցին գործադուլներ, ցույցեր և անկարգություններ: Գործադուլին միացան առևտրականները և խանութպանները: Վերահսկողությունը քաղաքի մի մասի վրա անցավ նրանց ձեռքը: Ստեղծվեց սպառնալից վիճակ գոյություն ունեցող վարչակարգի համար: Ասադը, որը սկզբնական շրջանում գործում էր ավելի զգույշ և խուսափում ավելորդ լարվածություն ստեղծելուց, այս անգամ գործեց արագ և վճռական: Նա իր եղբոր՝ Ռիֆաթ Ասադի հրամանատարությամբ 12–հազարանոց զորք ուղարկեց Հալեպ: Ռիֆաթ Ասադը ճնշեց ընդդիմության ուժերը, որի ժամանակ զոհվեց մի քանի հարյուր մարդ, ընդդիմության շատ ղեկավարներ և մասնակիցներ ձերբակալվեցին և բանտ նետվեցին: Իսկ 1980 թ. հուլիսին Փարիզում սպանվեց Սալահ Բիթարը, որը դարձել էր սիրիական ընդդիմության ոգեշնչողներից մեկը: Ոմանք գտնում էին, որ նրա սպանության մեջ խառն էր Դամասկոսի մատը:

Իշխանության կորուստներն էլ քիչ չէին: Ընդդիմության զոհ էին դարձել իշխանության ավելի քան 300 կողմնակիցներ: Այդ բոլորի համար սիրիական իշխանությունները մեղադրում էին նաև Իսրայելին, Իրաքին, որի հետ Սիրիայի հարաբերություններն այդ ժամանակ խիստ լարված էին, և ԱՄՆ–ին:

1980 թ. հուլիսի 7–ին ընդունվեց օրենք, որով նախատեսվում էր մահապատիժ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությանը պատկանելու համար: Ստեղծվեցին ռազմադաշտային դատարաններ, կազմակերպվեց աշխարհազոր: «Մուսուլման եղբայրները» հարված հարվածի

հետևից էին ստանում: Այդուհանդերձ, 1982 թ. փետրվարի 3–ին նրանց հաջողվեց խռովություն բարձրացնել Համայում, որը դարձել էր սունննի «Մուսուլման եղբայրների» միջնաբերդը: Դա հետադիմական ուժերի ելույթների գագաթնակետը եղավ ընդդեմ, ինչպես նրանք էին ասում, «հերետիկոս ալավիների վարչակարգի»: Համայի խռովարար ապստամբների դեմ նետվեցին սիրիական կանոնավոր բանակի զորամիավորումները՝ 12 հազար զինվոր՝ Հաֆիզ Ասադի կրտսեր եղբոր՝ Ռիֆաթ Ասադի հրամանատարությամբ: Քաղաքում գնում էին ծանր մարտեր, և սիրիական զորքերը տանկերի, հրետանու և ուղղաթիռների ուղեկցությամբ և աշխարհազորային ու ժողովրդական ամենալայն մասսաների ակտիվ աջակցությամբ կարողացան ճնշել այդ ամենավտանգավոր հակակառավարական ապստամբությունը:

Այսպիսով՝ սիրիական և արաբական հետադիմության ծրագրերը ձախողվեցին:

5. Եղբայրը եղբոր դեմ

«Մուսուլման եղբայրների» հակակառավարական հետադիմական խռովության ճնշումից հետո Սիրիայում ներքաղաքական վիճակը աստիճանաբար կայունանում էր, և կյանքը մտնում էր բնականոն հունի մեջ: Դրան նպաստեցին սիրիական ղեկավարության մի շարք միջոցառումները: 1980 թ. ապրիլին Ազգային առաջադիմական ճակատի մեջ մտան բանվորական արհմիությունների ընդհանուր ֆեդերացիան և գյուղացիների ընդհանուր ֆեդերացիան: ԱԱճ–ի ընդլայնումն ի հաշիվ սիրիական բանվոր դասակարգի և գյուղացիության նպաստեց նրա դիրքերի ամրապնդմանը, որն իր դրական դերը խաղաց աջակողմյան հետադիմական ուժերի ծրագրերի տապալման գործում: 1981 թ. նոյեմբերին տեղի ունեցան Սիրիայի Ազգային խորհրդի ընտրությունները. Նորընտիր պառլամենտը, որի կազմում սիրիահայերը ներկայացված էին մեկ դեպուտատով, հավանություն տվեց կառավարության ներքին և արտաքին քաղաքականությանը:

Թվում էր, թե տնտեսական զարգացումը և ներքաղաքական կյանքի կայունացման գործընթացը իրենց հետագա զարգացումը կունենան: Սակայն այդպես չեղավ:

Սիրիան, որը դեռ ուշքի չէր եկել «Մուսուլման եղբայրների» հրահրած խռովությունից, հայտնվեց նոր քաղաքական ծանր ճգնաժամի մեջ,

որի առիթը եղավ Ասադների ներընտանեկան հակամարտությունը պրեզիդենտի և նրա կրտսեր եղբոր՝ Ռիֆաթի միջև:

Ռիֆաթը նույնպես բասսական էր, ավարտել էր Հոմսի ռազմական ակադեմիան, ինչպես իր ավագ եղբայր Հաֆիզը, և ակտիվորեն մասնակցել երկրի քաղաքական կյանքին: 1960–ականների կեսերին Բաաս կուսակցության ներսում քաղաքացիական և զինվորական թևերի միջև սկսված պայքարի ժամանակ, որը վերածվեց հակամարտության, Ռիֆաթը նշանակվեց անվտանգության հատուկ ուժերի հրամանատար և նա, բնականաբար, պաշտպանում էր զինվորական թևին, որը գլխավորում էր իր ավագ եղբայր Հաֆիզը: Նրա զորամիավորումները մասնակցեցին 1966 թ. փետրվարի պետական հեղաշրջմանը, Սալահ Ջադիդի դեմ ուղղված պայքարին, այդ թվում՝ 1970 թ. նոյեմբերյան բախտորոշ օրերին՝ կանգելով իր եղբոր կողքին: Դրանից հետո էլ պահպանվեցին անվտանգության հատուկ ուժերը՝ նրա հրամանատարության ներքո, որոնք վերանվանվեցին Պաշտպանական գնդերի: Իրականում դրանք Սիրիայի ամենալավ և մարտունակ ուժերն էին, որոնք հիանալի էին զինված: 1975 թ Ռիֆաթ Ասադը դարձավ Բաաս կուսակցության Ազգային ղեկավարության անդամ: Նրա գնդերը, ինչպես նշվեց, վճռորոշ դեր խաղացին իսլամական ընդդիմությունը ճնշելու ժամանակ, հատկապես Համայում: Դրանից հետո նրա հեղինակությունն ավելի բարձրացավ:

Ռիֆաթ Ասադը ընտանիքի երես առած զավակն էր, ցոփ ու շվայտ կյանքի սիրահար, խաղամոլ, որն ակնհայտ թուլություն էր տածում ոգելից խմիչքների նկատմամբ: Ռիֆաթը, չարաշահելով իր եղբոր համբերությունը և օգտվելով նրա բարյացակամությունից, աստիճանաբար ամրապնդում էր իր դիրքերը երկրի կառավարման համակարգում: Իսկ իսլամական խռովությունը ճնշելուց հետո նա դարձավ համարյա անկառավարելի. Նա խտրություն չէր դնում իր հաճույքների համար միջոցներ հայթայթելու մեջ, իսկ դրանք շատ թանկ հաճույքներ էին: Երկրում բացահայտորեն խոսում էին այդ մասին: Նա արհամարհական վերաբերմունք էր ցուցաբերում բանակի հրամանատարության և գեներալների նկատմամբ: Նրանից սկսում էին ավելի ու ավելի վախենալ: Հաֆիզ Ասադի վետերան ընկերները սրտնեղած հարցնում էին. «Ի՞նչ է մտածում ռաիսը», այսինքն՝ պրեզիդենտ Հաֆիզ Ասադը:

Բայց այդ ժամանակ տեղի ունեցավ անսպասելին: 1983 թ. նոյեմբերին Հաֆիզ Ասադը սրտի ուժեղ նոպա՝ ինֆարկտ ունեցավ: Դրանից

փորձեց օգտվել Ռիֆաքը: Նա ստեղծեց վեց հոգուց կազմված ղեկավարություն, որի մեջ չմտցրեց իր եղբորը՝ երկրի օրինական պրեզիդենտ Հաֆիզ Ասադին: Նրա տրամադրության տակ էին գտնվում 55 հազարի հասնող ընտիր զորքեր՝ տանկերով, հրետանիով, ավիացիայով, ուղղաթիռներով և այլն: Փաստորեն, դա պետական հեղաշրջում էր: Ռիֆաքը քաղաքական սերտ հարաբերություններ հաստատեց Մարոկկոյի թագավոր Հասան II–ի և Սաուդյան Արաբիայի թագաժառանգ Աբդալլահ իբն Ազիզի հետ, որոնք ամերիկանամետ էին, ինչը վկայում է, թե ինչ ուղղությամբ էր զարգանալու Սիրիայի արտաքին քաղաքականությունը Ռիֆաքի հաղթանակի դեպքում:

Սիրիան հայտնվեց քաղաքացիական պատերազմի վտանգի առջև: Եվ այդ պահին ակնհայտ դարձավ, որ Ռիֆաքը Հաֆիզին չափազանց շուտ էր հաշվից դուրս նետել: Հաֆիզ Ասադն իր մեջ ուժ գտավ, հենվելով իր հավատարիմ գործընկերների և ուժերի աջակցության վրա, իր իշխանությունը վերահաստատելու երկրում, որը նա կատարեց բավականին յուրահատուկ ձևով: Հաֆիզ Ասադը փոփոխություն մտցրեց երկրի կառավարման համակարգում: 1984 թ. պրեզիդենտական դեկրետով ստեղծվեց երեք փոխպրեզիդենտի պաշտոն: Նա այդ պաշտոններում նշանակեց սուննի մուսուլման Աբդ ալ–Հալիմ Խադդամին, Զուհեյր Մաշարիկային՝ Հալեպից, և երրորդը՝ Ռիֆաք Ասադին: Սակայն Հաֆիզ Ասադին չհաջողվեց եղբորը զրկել Պաշտպանական գնդերի հրամանատարությունից: Լարվածությունն իր գագաթնակետին հասավ 1984 թ. մարտի 30–ին, երբ սիրիական բանակի զորամիավորումները, որոնք հավատարիմ էին Հաֆիզ Ասադին, և Ռիֆաքի Պաշտպանական գնդերը Դամասկոսում կանգնած էին միմյանց դեմ հանդիման՝ սպասելով համապատասխան հրամանի: Այդ պահին արդեն շատ թե քիչ ապաքինված Հաֆիզ Ասադը կատարեց հերթական անսպասելի քայլը: Նա, իր քաղաքացիական զգեստը փոխելով և հագնելով ռազմաօդային ուժերի գեներալ–լեյտենատի՝ իր սրտին այնքան մոտ և սիրելի համազգեստը, գիշերը իր ավագ որդու՝ Բասիլի հետ միասին, առանց բիկնապահների ուղեկցության, գիշերային Դամասկոսի փողոցներով, ավտոմեքենայով սուրաց դեպի Ռիֆաքի տունը, որտեղ գտնվում էր նաև նրանց մայրը: Եվ եղբայրների միջև տեղի ունեցավ շատ բուռն բացատրություն, որի ժամանակ Ռիֆաքն անգամ սպառնաց իր պրեզիդենտ եղբորը: Բայց Հաֆիզ Ասադին հաջողվեց իր իմաստուն մոր՝ Նաիսիայի աջակցությամբ ստիպել Ռիֆաքին՝ որպես կրտսերի,

ենթարկվել ավագ եղբորը: Վիճաբանության թունդ պահին Հաֆիզը բացականչեց. «Բայց այն ամենը, ինչի դուք հասել եք, իմ շնորհիվ է, և ես ձեր ավագ եղբայրն եմ, և դուք պարտավոր եք ինձ ենթարկվել»: Դա մի կարգ էր, որը խստիվ սահմանվել էր Ասադների տանը դեռևս նրանց հոր՝ Ալի Սուլեյմանի կողմից: Հաֆիզ Ասադի այդ փաստարկն իր ազդեցությունն ունեցավ, և Ռիֆաթը զիջեց: Իհարկե, միամտություն կլիներ կարծել, թե միայն դրա շնորհիվ պրեզիդենտը հասավ հաղթանակի: Ռիֆաթը լավ էր հասկանում, որ իրավիճակն արդեն փոխվել էր հօգուտ Հաֆիզի: Նրան էին պաշտպանում զինվորական և կուսակցական ղեկավարությունն ու բանակը: Եվ նա նահանջեց: Այդպես կանխվեց քաղաքացիական պատերազմը: Բայց դա դեռ չէր նշանակում դրամայի ավարտ: Այն ունեցավ իր երկրորդ արարը:

1984 թ. մայիսին Ռիֆաթ Ասադը գործուղվեց Մոսկվա և արտասահմանում մնաց վեց ամիս, որից հետո նրան թույլ տրվեց վերադառնալ Սիրիա և անցնել փոխպրեզիդենտի իր պարտականություններին: Բայց այդ ընթացքում նա արդեն զրկվել էր Հատուկ կամ Պաշտպանական գնդերի հրամանատարը լինելուց, և փոխպրեզիդենտի պաշտոնը նրան այլևս ոչ մի իշխանություն չէր տալիս: Կոտրված և հիասթափված Ռիֆաթը հեռացավ Դամասկոսից ու հաստատվեց Փարիզում: Նա Դամասկոս վերադարձավ 1992 թ.՝ մասնակցելու իր մոր հուղարկավորությանը և դրանից հետո որոշ ժամանակ ևս մնաց Սիրիայում: 1998 թ. Հաֆիզ Ասադը նրան ազատեց փոխպրեզիդենտի պաշտոնից և Ռիֆաթը աքսորվեց. Նա խստագույնս զգուշացվեց չվերադառնալ Դամասկոս: Երկու տարի անց մահացավ Հաֆիզ Ասադը, բայց դա ոչինչ չփոխեց Ռիֆաթի կարգավիճակում. մանավանդ, երբ պրեզիդենտ ընտրվեց Հաֆիզ Ասադի որդին՝ Բաշար Ասադը, Ռիֆաթ Ասադը դա համարեց ոչ սահմանադրական քայլ:

Ներքաղաքական ճգնաժամը լուծելուց հետո 1985 թ. փետրվարին կայացավ նոր ժողովրդական հանրաքվե, որը Հաֆիզ Ասադին կրկին վերընտրեց Սիրիայի պրեզիդենտ. Նրա թեկնածությունը միահամուռ ներկայցրել էին ԱԱԵ–ի մեջ մտնող բոլոր կուսակցությունները և կազմակերպությունները: Այդ նույն թվականին տեղի ունեցավ Բաաս կուսակցության 8–րդ մարզային կոնֆերանսը: Նա ներքին քաղաքականության բնագավառում վերստին հավաստեց առաջադիմական սոցիալիստական ուղիով զարգանալու կուրսը, իսկ արտաքին քաղաքականության բնագավառում ընդգծեց, որ Սիրիան կայուն կերպով կանգնած

է հակաիմպերիալիստական դիրքերում և հանդես է գալիս մերձավորարևելյան կոնֆլիկտի համապարփակ կարգավորման օգտին:

1985 թ. Սիրիայի համար նշանավոր էր նաև նրանով, որ դա 5–րդ հնգամյա պլանի (1981–1985 թթ.) ավարտման տարին էր: Հնգամյա պլանն ընդհանուր առմամբ կատարվեց հաջող: Բավականին ամրապնդվեց պետական սեկտորը, որը տալիս էր արդյունաբերական արտադրանքի մոտ 80%–ը: Իսկ ագրարային ռեֆորմի կիրառման հետևանքով մեծ թափ ստացավ կոոպերատիվ շարժումը: 1985 թ. Սիրիայում կար մոտ 4 հազ կոոպերատիվ, որում միավորվել էին 440 հազ. գյուղացիներ: Սիրիայի տնտեսությունը սկսեց որոշ աշխուժացում ապրել:

Այդուհանդերձ, 1980–ականների կեսերից նկատվում են Սիրիայի տնտեսության զարգացման դանդաղում և լճացման՝ ստագնացիայի ակնհայտ նշաններ: Դրանք արդյունք էին երկրի ներքաղաքական լարվածության, պաշտպանության համար նախատեսվող ծախսերի կտրուկ աճի, վճարումների հաշվեկշռի դեֆիցիտի, արտաքին առևտրի կրճատման: Իր բացասական դերը խաղացին նաև մի քանի տարի տևած երաշտը, արաբական երկրների կողմից Սիրիային ցույց տրվող ֆինանսական և տնտեսական օգնության կրճատումը, կառավարական և տնտեսական մարմինների անբավարար աշխատանքը: Շուկայում զգացվում էր անհրաժեշտ, այդ թվում և պարենային ապրանքների պակաս: Լուրջ թերություններ կային նաև գների քաղաքականության ոլորտում: Դա, անշուշտ, մտահոգում էր սիրիական իշխանություններին և Հաֆիզ Ասադին: Սակայն Սիրիայի ռեսուրսները և մանևրելու հնարավորությունները սահմանափակ էին և այդ պատճառով արագ փոփոխությունների հասնելու սպասելիքները մեծ չէին:

6. Սիրիայի արտաքին քաղաքական դրությունը Հաֆիզ Ասադի կառավարման վերջին տասնամյակում (1990–ական թվականներ)

Հաֆիզ Ասադը, չնայած առանձին բարդություններին, որոնք երբեմն սուր բախման բնույթ էին ստանում, իր կառավարման տարիներին ընդհանուր առմամբ կարողացավ ստեղծել ուժեղ պետական ապարատ, ամրապնդել պետական կառավարման ինստիտուտները, պահպանել սահմանադրական նորմերը, կանոնավոր կերպով անցկացնել պրեզիդենտի, ժողովրդական խորհրդի և տեղական մարմինների ընտրություններ և այլն: Սիրիան 1940–1960 թթ. անկայուն և պետական հե-

դաշրջումների խորհրդակական երկրից 1970–2000 թթ. դարձավ պետական և կառավարական ուժեղ կառույցներ ունեցող երկիր: Նշանակալի էին նաև ձեռքբերումները տնտեսության, կրթության և սոցիալական այլ ոլորտներում.

Այլ էր իրավիճակն արտաքին հարաբերությունների բնագավառում: Այստեղ ամեն բան չէ, որ հաջող էր: Գլխավոր հարցը հարաբերություններն էին Իսրայելի հետ, որը Հաֆիզ Ասադին չհաջողվեց կարգավորել: Սիրիայի տարածքի մի հատվածը մնում էր օկուպացված Իսրայելի կողմից: 1973 թ. հոկտեմբերյան պատերազմը չտվեց սպասված արդյունքները, իսկ քաղաքական ուղիով չհաջողվեց հասնել խնդրի կարգավորմանը: Նույնիսկ այն բանից հետո, երբ Եգիպտոսը, իսկ ապա նաև ՊԱԿ–ը և Հորդանանը 1990–ական թվականներին հաշտության պայմանագրեր կնքեցին Իսրայելի հետ, Սիրիան չգնաց այդ ուղիով: Ճիշտ է, 1990–ական թվականներին եղավ մի պահ, երբ նկատվեցին որոշ տեղաշարժեր սիրիա–իսրայելական հարաբերություններում: Սիրիան 1991 թ. հոկտեմբերին մասնակցեց Մադրիդում կայացած միջազգային կոնֆերանսին, որը նվիրված էր արաբա–իսրայելական կոնֆլիկտի կարգավորմանը: Իսրայելա–սիրիական բանակցությունների ժամանակ Ասադը պնդում էր, որ Իսրայելը հեռանա Գոլանի բարձունքներից՝ ի դիմաց համընդհանուր խաղաղության հաստատման: 1995 թ. վերջերին երկու երկրները համաձայնվեցին բանակցություններ սկսել 10 կետից բաղկացած մի փաստաթղթի հիման վրա: Բանակցությունները սկսվեցին 1996 թ. ԱՄՆ–ի միջնորդությամբ, սակայն Իսրայելում տեղի ունեցած իշխանափոխության հետևանքով դրանք ընդհատվեցին: Բայց այդ հարցն օրակարգից չհանվեց, մանավանդ այն բանից հետո, երբ ԱՄՆ–ի պետական քարտուղար Մադելեն Օլբրայթը 1999 թ. սեպտեմբերին հանդես եկավ ի պաշտպանություն Հաֆիզ Ասադի առաջարկության՝ Իսրայելի ամբողջական հեռացում Գոլանից և խաղաղության հաստատում Մերձավոր Արևելքում, որը նշանակում էր Իսրայելի՝ որպես պետության գոյության իրավունք: Սակայն դա հետագա զարգացում չունեցավ՝ ոչ վերջին հերթին Հաֆիզ Ասադի մահվան պատճառով:

1990–ական թվականներին շարունակում էին բարձր մակարդակի վրա մնալ սիրիա–իրանական հարաբերությունները, որոնց առջև մեծ հեռանկարներ էին բացվել 1979 թ. Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակից հետո: Դրանում իր որոշակի դերը խաղաց նաև կրոնական գործոնը: Իրանում իշխանությունն անցավ շիական

հոգևորականության ծնողը, և իսլամի շիական ուղղությունը դարձավ տիրապետող պետական, քաղաքական, ռազմարդյունաբերական, գաղափարախոսության և այլ ինստիտուտներում: Իսլամի շիական ուղղությանն են պատկանում են նաև ալավիները: Իսկ Հաֆիզ Ասադն ու Սիրիայում մի շարք այլ գինվորական, պետական և քաղաքական գործիչներ ու բանասական ղեկավարներ նույնպես ալավի էին. և այդ հիման վրա այն կարծիքն էր տիրում, որ սիրիական ղեկավարությունում տիրապետող էին շիիզմին պատկանող ալավիները: Սիրիական որոշ շրջաններում, մասնավորապես սուննիների, պահպանվում էր ալավիների իսլամ չլինելու տեսակետը: Իրանում իսլամական հեղափոխությունից հետո սկսած հարաբերություններ հաստատվեցին նրա և Սիրիայի միջև, մանավանդ որ այաթոլլահ Խոմեյնին և իրանական նոր ղեկավարությունը ճանաչեցին և ընդունեցին ալավիների իսլամական շիական բնին պատկանելու իրողությունը: Դրա շնորհիվ Սիրիան որոշ չափով դուրս եկավ քաղաքական մեկուսացումից և ֆինանսական զգալի օգնություն էր ստանում Իրանից: Եվ երբ 1980 թ. սեպտեմբերին Իրաքը ռազմական գործողություններ սկսեց Իրանի դեմ, ապա Սիրիան իրանա–իրաքյան ամբողջ պատերազմի ժամանակ՝ 1980–1988 թթ., Իրանի կողմն էր: Սիրիայի այդ դիրքորոշման մեջ իր դերը խաղաց նաև այն հանգամանքը, որ հարաբերությունները սառն էին Իրաքի և Սիրիայի միջև, չնայած երկու երկրներում էլ կառավարող էր հանդիսանում Բաաս կուսակցությունը: Մրցակցությունը հենց կուսակցական ղեկավարությունների միջև էր. և նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր ապացուցել, որ ինքն է ներկայացնում ճշմարիտ բաասական գաղափարախոսությունը և հավակնում դառնալու համապարաբական բաասական ղեկավար:

Սիրիային, ինչպես նաև արաբական բոլոր երկրներին, ցնցեց Իրաքի 1990 թ. ագրեսիան Քուվեյթի դեմ, որը դատապարտվեց նրանց մեծամասնության, այդ թվում և Սիրիայի կողմից: Պրեզիդենտ Հաֆիզ Ասադը փորձեց համոզել Իրաքի պրեզիդենտ Սադամ Հուսեյնին՝ խաղաղ ճանապարհով հեռանալ Քուվեյթից, իր զորքերը դուրս բերել արաբական եղբայրական այդ երկրից և վերականգնել նրա անկախությունը: Սակայն Սադամ Հուսեյնը մնաց անդրդվելի՝ անտեսելով Հաֆիզ Ասադի և շատ այլ երկրների ղեկավարների հորդորները: Դրանից հետո Սիրիան միացավ բազմազգ ուժերի կոալիցիային, որը գլխավորում էր ԱՄՆ–ը: Սիրիան 30–հազարանոց իր բանակն ուղարկեց Սաուդյան Արաբիա՝ պաշտպանելու նրան Իրաքի հնարավոր ագրեսիայից, որի մասին

բազմիցս հայտարարել էր Սադամ Հուսեյնը: Եվ Սիրիան բազմազգ ուժերի կազմում մասնակցեց 1991 թ. փետրվարին սկսված «Փոթորիկ անապատում» կոալիցիոն ուժերի ռազմական գործողություններին՝ ընդդեմ Իրաքի, որի արդյունքում վերջինս պարտություն կրեց, և վերականգնվեց Քուվեյթի անկախությունը:

Սիրիայի համար մեծ խնդիր դարձավ միջազգային ահաբեկչության հարցը: ԱՄՆ–ը նրան մեղադրում է այն բանում, որ նա հանդիսանում է միջազգային ահաբեկչությունը խրախուսող աղբյուրներից մեկը: ԱՄՆ–ը, նրան պաշտպանող արևմտյան այլ երկրներ և Իսրայելը մեղադրում են Սիրիային, որ նա Իրանի հետ միասին աջակցություն է ցույց տալիս և պաշտպանում Լիբանանում գործող «Հիզբ ալլահ», «Համաս», «Իսլամական ջիհադ» և այլ ահաբեկչական կազմակերպություններին: Ելնելով դրանից ԱՄՆ–ը Սիրիային մտցրեց «սև ցուցակ», որով նախատեսվում են զանազան սանկցիաներ այդ ցուցակի մեջ գտնվող երկրների դեմ: Սիրիան և նրա պրեզիդենտ Հաֆիզ Ասադը թեև հերքում էին այդ մեղադրանքները, սակայն ԱՄՆ–ը և նրան համախոհ երկրները շարունակում են պնդել իրենց տեսակետի վրա և Մերձավոր Արևելքում տեղի ունեցող ամեն մի ահաբեկչության մեջ տեսնում են սիրիական հետք:

1990–ական թվականներին Սիրիայի համար ստրատեգիական առումով ստեղծվեց ծանր իրադրություն, որը կապված էր Խորհրդային Միության փլուզման հետ: Տասնյակ տարիներ շարունակ Սիրիայի արտաքին քաղաքականության և ստրատեգիայի մեջ առանցքային տեղ էր գրավում Խորհրդային Միությունը, որը քաղաքական, տնտեսական և ռազմական օգնություն էր ցույց տալիս նրան: Այդ ստրատեգիայի հիմքում դրված էր Խորհրդա–սիրիական Բարեկամության և համագործակցության պայմանագիրը, որ 1980 թ. սեպտեմբերին ստորագրվել էր Մոսկվայում Հաֆիզ Ասադի և Լեոնիդ Բրեժնևի կողմից: Խորհրդային Միության փլուզումից հետո այդ պայմանագիրը դադարեց գործելուց, իսկ Ռուսաստանը, որը հանդես եկավ որպես ԽՍՀՄ–ի իրավահաջորդ, այլևս պատրաստ չէր նման հանձնառության համար:

Եվ այսպես՝ Սիրիան մնաց առանց իր ստրատեգիական դաշնակցի՝ աշխարհում միակ գերտերությունը հանդիսացող ԱՄՆ–ի գերակայության պայմաններում, որը այնուհետև Սիրիային մտցրեց, ինչպես նշվեց, «սև ցուցակ»՝ համապատասխան պատժամիջոցներով: Սիրիան մեծ դժվարությամբ է համակերպվում նոր իրողություններին: Դրան խանգարում էր նաև այն հանգամանքը, որը սիրիական զորքերը շարու-

նակում էին մնալ Լիբանանում, միջամտել Լիբանանի ներքին գործերին և լիբանանյան ղեկավարությունը սիրիամետ քաղաքականություն էր որդեգրել: Այդ քաղաքականության համար Սիրիան ենթարկվում էր խիստ քննադատության ոչ միայն արևմտյան, այլև արաբական երկրների կողմից, որոնք նույնպես գտնում էին, որ անհրաժեշտ է, որպեսզի լիբանանյան հակադիր ուժերը հաշտության համաձայնագիր ստորագրեն և այդ ուղիով վերջ տրվի 1975 թ. ի վեր շարունակվող քաղաքացիական պատերազմին: Ի վերջո, դա հնարավոր եղավ իրագործել 1989 թ. հոկտեմբերին, երբ քաղաքացիական պատերազմի մեջ ներգրավված կողմերը սաուդյան Թաիֆ քաղաքում ստորագրեցին քաղաքացիական պատերազմի ավարտի վերաբերյալ Ազգային հաշտության խարտիան: Սիրիան, ըստ էության, չխոչընդոտեց այդ գործընթացը:

1990–ական թվականներին կարգավորվեցին Սիրիայի հարաբերությունները Եգիպտոսի հետ, որոնք խաթարվել էին եգիպտական նախկին պրեզիդենտի քաղաքականության պատճառով, այնուհետև՝ Հորդանանի, Սաուդյան Արաբիայի և արաբական այլ երկրների հետ. Նա դուրս եկավ քաղաքական մեկուսացումից և սկսեց ավելի ակտիվ դեր խաղալ արաբական ասպարեզում:

1999 թ. կայացավ հերթական համաժողովրդական պրեզիդենտական հանրաքվեն, և Հաֆիզ Ասադը կրկին վերընտրվեց Սիրիայի Արաբական Հանրապետության պրեզիդենտ:

Դա եղավ նրա վերջին ընտրությունը:

VIII. ՍԻՐԻԱՆ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ (2000–2005 թթ.)

1. Բաշար Ասադը Սիրիայի նոր պրեզիդենտ և «Դամասկոսյան գարունը» (2000–2001 թթ.)

2000 թ. հունիսի 10–ին մահացավ Սիրիայի պրեզիդենտ Հաֆիզ Ասադը՝ այն մարդը, որը 30 տարի երկաթյա ձեռքով կառավարում էր Սիրիան: Հայտնի էր, որ նա հիվանդ է, և այդ հարցը լայն քննարկման առարկա էր դարձել դեռևս նրա կենդանության օրոք ոչ միայն սիրիական, այլև արաբական հասարակական լայն շրջանակներում: Դրա հետ զուգահեռաբար քննարկվում էր նաև այն հարցը, թե ով է հաջորդելու նրան, և արդյոք որևէ փոփոխություն կլինի Սիրիայի ներքին և արտա-

քին քաղաքականության բնագավառում: Մասնագետները համոզված էին, որ անպայման ինչ–որ փոփոխություններ կլինեն, բայց հարցն այն էր, թե դրանք ինչ բնույթի և խորության կլինեն, և արդյոք դա հիմք կտա խոսելու Սիրիայի պատմության մեջ նոր էջ բացվելու մասին:

Հաֆիզ Ասադի մահը ցնցեց սիրիացիների ճնշող մեծամասնությանը և, կասկած չկա, ուրախացրեց նրա քաղաքական հակառակորդներին Սիրիայի ներսում և նրանից դուրս:

Սգալով հանդերձ նրա մահը՝ սիրիական իշխանությունները շատ արագ կերպով լուծեցին նրա հաջորդի հարցը՝ շատ լավ հասկանալով, որ հապաղելն այդ հարցում և իշխանական համակարգում վակուումի պահպանումը կարող էր մեծ անակնկալներ մատուցել և ապակայունացնել դրությունը Սիրիայում:

Փոխարինողի հարցը 1990–ական թվականներին մեծապես հուզում էր նաև իրեն՝ Հաֆիզ Ասադին, մանավանդ կյանքի վերջին տարիներին: Եվ նա իր կենդանության օրոք որոշեց այդ կարևոր խնդրի լուծումը ինքնահոսի չթողնել, այլ պատրաստել համապատասխան թեկնածու: Նրա ընտրությունը ընկավ իր ավագ որդու՝ Բասիլի վրա, որին և սկսեց նախապատրաստել պրեզիդենտի պաշտոնի համար: Չպետք է բացառել, որ այդ ընտրությունը դարձավ Հաֆիզ Ասադի հետ նրա կրտսեր եղբոր՝ Ռիֆաթի հարաբերությունների խիստ լարման և առճակատման պատճառներից մեկը, քանի որ վերջինս ինքն էր հավակնում դառնալ Սիրիայի ղեկավարը:

Տարաբախտաբար, Բասիլը 1994 թ. ավտովթարի զոհ դարձավ: Իր ավագ որդու կորուստը շատ ծանր տարավ Հաֆիզ Ասադը, բայց չվհատվեց, և որպես իրեն փոխարինող՝ արագացված տեմպերով սկսեց պատրաստել իր կրտսեր որդուն՝ Բաշարին: Եվ դա նույնպես հայտնի էր բոլորին և ընդունվել էր Սիրիայի պետական, զինվորական և Բաաս կուսակցության ղեկավարության կողմից: Եվ երբ Հաֆիզ Ասադը մահացավ, ապա այդ ղեկավարությունը չփոխեց իր դիրքորոշումը նրան փոխարինողի հարցում, և ընտրությունը կանգ առավ Բաշար Ասադի թեկնածության վրա:

Բաշար Ասադին անմիջապես շնորհվեց գեներալ–լեյտենանտի զինվորական կոչում, և նա նշանակվեց Սիրիայի զինված ուժերի գլխավոր հրամանատար: Առաջին քայլը կատարված էր: Պետք էր լուծել նրա պրեզիդենտ լինելու հարցը: Բայց այդտեղ կար սահմանադրական խոչընդոտ, առանց որի հաղթահարման Բաշարը չէր կարող զբաղեցնել

պրեզիդենտի աթոռը: Սահմանադրության հոդվածներից մեկում ամրագրված էր, որ Սիրիայի պրեզիդենտ կարող է դառնալ սիրիական այն քաղաքացին, որի տարիքը պետք է լինի 40–ից ոչ պակաս: Իսկ Բաշարը ծնվել էր 1965 թ. և այդ պահին 35 տարեկան էր, հետևաբար իրավունք չուներ գրավել պրեզիդենտի պաշտոնը: Սիրիական ղեկավարող էլիտան 2000 թ. հունիսի 10–ին Հաֆիզ Ասադի մահից հետո բառացիորեն մի քանի ժամվա ընթացքում փոփոխություն մտցրեց սահմանադրության մեջ և իջեցվեց տարիքային սահմանափակման ստորին սանդղակը՝ 40–ից 34 տարի: Այդպիսով՝ պրեզիդենտական պալատի դռները բացվեցին Բաշար Ասադի առջև: Բաաս կուսակցության ղեկավարությունը 2000 թ. հունիսի 20–ին նրան առաջադրեց որպես պրեզիդենտի թեկնածու և հունիսի 25–ին ներկայացրեց Ժողովրդական խորհրդին՝ Մաջլիս ալ–շաաբ:

2000 թ. հուլիսի 10–ին կայացավ հանրաքվե, և Բաշար Ասադը, որը պրեզիդենտության միակ թեկնածուն էր, ստանալով քվեարկողների ձայների 97,29%–ը, ընտրվեց Սիրիայի Արաբական Հանրապետության պրեզիդենտ և իր պարտականությունների կատարմանն անցավ 2000 թ. հուլիսի 17–ին, երբ Ժողովրդական խորհրդում տեղի ունեցավ նրա պաշտոնավարության ստանձնման երդման արարողությունը: Նա դարձավ նաև Բաաս կուսակցության ղեկավարը և Ազգային առաջադիմական ճակատի նախագահ:

Այսպիսով՝ Բաշար Ասադը, ինչպես իր հայրը, շատ կարճ ժամանակամիջոցում իր ձեռքում կենտրոնացրեց Սիրիայի պետական, քաղաքական, ռազմական և կուսակցական ամբողջ ղեկավարությունը: Նրա ձեռքում էին գտնվում երկրի ղեկավարման բոլոր լծակները:

Բաշար Ասադը ծնվել է 1965 թ. Դամասկոսում: Մասնագիտությամբ բժիշկ է՝ ակնաբույժ: 1988–1992 թթ. աշխատել է Դամասկոսի զինվորական հոսպիտալում: 1992 թ. նա մեկնում է Լոնդոն՝ օֆտալմոլոգիայի մեջ կատարելագործվելու նպատակով: Իր ավագ եղբոր զոհվելուց հետո 1994 թ. վերադառնում է Սիրիա և գլխավորում Սիրիական համակարգչային ընկերությունը: Հայրը նրան աստիճանաբար ներգրավում է պետական կառավարման, այդ թվում և զինվորական ոլորտը՝ նպատակ ունենալով նրան նախապատրաստել որպես իր փոխանորդ: Նա սովորում է սիրիական բանակի գլխավոր շտաբի դասընթացներում, որն ավարտելուց հետո 1997 թ. ստանում է փոխգնդապետի զինվորական կոչում: Այնուհետև նա նշանակվում է Լիբանանի հետ Սիրիայի հա-

րաբերությունների պատասխանատու, որն այդ ժամանակ Սիրիայի արտաքին քաղաքականության ամենաբարդ բնագավառներից մեկն էր: Նրա գործունեությունը նպատակաուղղված էր Լիբանանում Սիրիայի դիրքերի հետագա ամրապնդմանը և Լիբանանում սիրիամետ ուժերի համախմբմանը: Նա այդ պաշտոնում էր, երբ մահացավ նրա հայրը, և ինքը դարձավ Սիրիայի պրեզիդենտ:

Բաշար Ասադը, 2000 թ հուլիսի 17–ին հանդես գալով ժողովրդական խորհրդում, հակիրճ կերպով ներկայացրեց իր գործունեության ծրագիրը: Նրանում պատշաճ տեղ էր հատկացված քաղաքական և դեմոկրատական հարցերին: Նա խոստացավ կիրառել քաղաքական և դեմոկրատական բարեփոխումներ, որը մեծ գոհունակությամբ ընդունվեց սիրիական հասարակության կողմից: Եվ, իրոք, նա այդ ուղղությամբ կիրառեց որոշակի քայլեր: Նա ընդառաջեց սիրիական 99 երևելի մտավորականների նամակին, որով նրանք դիմում էին պրեզիդենտին՝ վերացնել 37 տարի տևող ռազմական դրությանը Սիրիայում: Ռազմական դրությունը մտցրել էին բաասականները, երբ 1963 թ. մարտի 8–ին նրանք գրավեցին իշխանությունը Սիրիայում: Բաշար Ասադի հրամանով 2000 թ. վերջապես վերացվեց ռազմական դրությունը, և իրենց ուժը կորցրեցին բոլոր այն օրենքները, որոնք բխում էին ռազմական դրության պահանջներից: Դրա շնորհիվ երկրի ազատականացման համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին: Իրենց գործունեությունն ակտիվացրին զանազան հասարակական և քաղաքացիական կազմակերպություններ, ինչպես, օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեն, լրագրողների միությունը, արհմիությունները, ավելի աշխուժացավ մամուլը և այլն: Վերացվեց ինտերնետից, բջջային հեռախոսներից և համակարգչային տեխնոլոգիաներից օգտվելու արգելքը: Պետք է նշել, որ այդ արգելքների վերացումը յուրովի բարերար ազդեցություն ունեցավ սիրիական հասարակության մեկուսացման վերացման և հետագա արդիականացման վրա: Նվազեց գաղտնի ոստիկանության՝ մուխաբարաթի ոչնչով չքողարկված ներկայությունը հասարակության մեջ:

Ազատության հովերը որոշ չափով տարածվեցին նաև պառլամենտական գործունեության վրա: Պառլամենտականներն ավելի ազատորեն էին պառլամենտի ամբիոնից արտահայտում իրենց կարծիքն ու տեսակետները, որոնք երբեմն կարող էին չհամընկնել պաշտոնական կարծիքի հետ, ինչը նախկինում չլսված բան էր: Բանտերից ազատվեց 600

քաղաքական բանտարկյալ, որը դրական մեծ արձագանք գտավ ամբողջ երկրում: Ազատականացման ուղղությամբ այդ և այլ քայլերի կիրառման կապակցությամբ այդ շրջանը, որն ընդգրկում է 2000 թ. հուլիսից մինչև 2001 թ. փետրվարը, ստացավ «Դամասկոսյան գարուն» անվանումը՝ «Պրահայի գարնան» նմանակությամբ:

«Դամասկոսյան գարնան» վերջը համարվում է 2001 թ. փետրվարը, երբ իշխանությունները բռնություններ կիրառեցին քաղաքացիական զանազան ֆորումների և բարեփոխումների կողմնակից ակտիվիստների նկատմամբ: Իշխանությունները գտնում էին, որ նրանք խախտել էին խաղի կանոնները և իրենց պահանջների մեջ շատ հեռուն էին գնացել: Դա խոր հիասթափություն առաջ բերեց սիրիական դեմոկրատական շրջաններում, որը վերածվեց վրդովմունքի. Սակայն սխալ կլիներ դրա հիման վրա եզրակացնել, թե սիրիական իշխանությունները լրիվ նահանջ կատարեցին և կրկին վերադարձան ամբողջատիրական վարչակարգի հաստատմանը: Ազատականության տարրերը դեռևս պահպանվում են: Դրա վկայությունն է այսօր այլախոհ մտավորականների առկայությունը և գործունեությունը, ընդդիմադիր ոչ մեծ կազմակերպությունների գոյությունը, մամուլի և խոսքի որոշակի ազատությունները և այլն: Պառլամենտի անդամները դարձյալ կարող են քննադատել կառավարության քաղաքականությունը, փոփոխություններ մտցնել պառլամենտի քննարկմանը ներկայացված օրինագծերի մեջ և այլն: Եթե ի մի բերելու լինենք, ապա պետք է նշել, որ ժամանակակից Սիրիայում իշխանություններն իրենց առանձին հարձակումների կամ բռնությունների միջոցով փորձում են ընդդիմությանը և այլախոհներին դնել որոշակի շրջանակների մեջ:

Բաշար Ասադը, ստանձնելով պետության ղեկը, հիմնականում շարունակեց Հաֆիզ Ասադի արտաքին քաղաքականությունը, մանավանդ նրա կառավարման վերջին շրջանում, երբ Հաֆիզ Ասադը սկսել էր որոշակի տեղ հատկացնել փոխզիջումներին իր ընդհանրապես կոշտ արտաքին քաղաքականության մեջ: Ելնելով դրանից՝ Բաշար Ասադը պատրաստ է համաձայնության գալ Իսրայելի հետ, եթե նա Սիրիային վերադարձնի Գոլանի բարձունքները՝ համընդհանուր խաղաղության և համագործակցության դիմաց: Նա շարունակեց Իրաքի հետ մերձենալու և համագործակցելու քաղաքականությունը, որը սկսել էր նրա հայրը մահվանից առաջ: Դրա արդյունքում 2000 թ. վերջերին վերաբացվեց Սիրիայի տարածքով անցնող իրաքյան նավթամուղը, որի շնորհիվ Սի-

րիան սկսեց օրական Իրաքից ստանալ 200 հազար բարել նավթ ներքին օգտագործման համար: Իսկ դա հնարավորություն տվեց Սիրիային նույն քանակությամբ նավթ արտահանել և ստանալ կայուն վալյուտա, որի կարիքը Սիրիան շատ է զգում: Սիրիա–իրաքյան հարաբերությունների բարելավումը միայն դրանով չսահմանափակվեց: Բաղդադը հայտարարեց, որ ինքը լիովին պաշտպանում է Գոլանից Իսրայելի ետ քաշվելու վերաբերյալ Դամասկոսի պահանջը. տարածաշրջանում խաղաղության հաստատմանը և տարածաշրջանի երկրների միջև հարաբերությունների նորմալացմանը:

Բաշար Ասադի արտաքին քաղաքականության մեջ կարևոր իրադարձություն պետք է համարել նրա դիրքորոշումը 2001 թ. սեպտեմբերի 11–ին ԱՄՆ–ի դեմ Նյու Յորքում ալ–Կաիդայի կողմից իրագործած ահաբեկչության հանդեպ: Սիրիան խստորեն դատապարտեց այդ արարքը և պատրաստակամություն հայտնեց համագործակցել ԱՄՆ–ի հետ՝ մասնավորապես նրան տրամադրել հետախուզական տվյալներ: Թեև դա չհանգեցրեց հարաբերությունների արմատական բարելավմանը Սիրիայի և ԱՄՆ–ի միջև, այդուհանդերձ, Սիրիայի ղեկավարի այդ քայլը որոշ չափով հալեցրեց սառույցը: Դա միաժամանակ ազդանշան էր Վաշինգտոնին, որ Դամասկոսի դարպասները փակ չեն ԱՄՆ–ի առջև, և ալավիների իսլամ լինելը ժխտող իսլամական ֆունդամենտալիզմի դեմ պայքարում ալավի Բաշար Ասադը և Սիրիայի ալավիական մյուս ղեկավարները պակաս շահագրգռված չեն, քան աշխարհի միակ գերտերությունը:

2. Սիրիայի զարգացման տնտեսական ասպեկտը (2000–2005 թթ.)

Թեև 5–6 տարին առանձնապես մեծ ժամանակահատված չէ տնտեսության բնագավառում արմատական փոփոխությունների կամ նվաճումների համար, այդուհանդերձ, փոքր ժամանակ էլ չէ սիրիական նոր իշխանությունների տնտեսական քաղաքականության միտումները և տնտեսության տարբեր բնագավառներում ձեռք բերված նվաճումները գնահատելու համար:

Տնտեսության վերաբերյալ սիրիական պաշտոնական և վիճակագրական աղբյուրների վերլուծությունը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ 2000–2005 թթ. տնտեսության ոլորտում թռիչք կամ ճեղքում տեղի չի ունեցել: Ընդհակառակը, շարունակվում է տնտեսական զարգացման դանդաղումը, որը սկսվել էր առնվազն նախորդ տասնամյակում:

Սիրիան դասվում է զարգացող երկրների շարքը, որը փորձում է բարեփոխումների միջոցով լուծել իր տնտեսական զարգացման հարցերը: Երկար ժամանակ բասսական ղեկավարությունը ձգտում էր դրան հասնել սոցիալիստական հիմնադրույթների հենքի վրա, առաջին հերթին՝ խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների և բանկերի ազգայնացման ճանապարհով: Այդ միջոցով փորձ էր արվում լուծել այնպիսի մի դժվար խնդիր, ինչպես սոցիալական անհավասարությունը: 1990–ական թվականներին ակնհայտ դարձավ, որ զարգացման այդ ուղին՝ պետական վերահսկողությունը արտադրության, առևտրի և գների վրա, արդյունավետ չէ, և Սիրիային չի հաջողվում լուծել տնտեսական առաջընթացի հիմնախնդիրը: Սիրիայի տնտեսական զարգացումը խիստ դանդաղեց: Վերլուծությունը և համապատասխան թվերը վկայում են, որ այժմ՝ Բաշար Ասադի իշխանության օրոք իրագործվող բարեփոխումները նույնպես չեն կարողանում լուծել այդ խնդիրը, և տնտեսական զարգացման դանդաղումը շարունակվում է: Մասնագետ տնտեսագետները որպես պատճառներ նշում են հասարակական կամ պետական սեկտորի ֆիրմաների և արտադրական ձեռնարկությունների վատ ղեկավարումը և աշխատանքները, ցածր ներդրումները, արդյունաբերության և գյուղատնտեսության ցածր արտադրողականությունը և այլն:

Սիրիական տնտեսության համար մեծ մարտահրավեր է հանդիսանում այն իրողությունը, որ գործազրկությունը մնում է բարձր՝ կազմելով 20–25%, իսկ վերջին տվյալներով բնակչության մոտ 25%–ը գտնվում է աղքատության գծից ներքև:

Կառավարությունը ձգտում է կառուցվածքային փոփոխություններ մտցնել, մասնավորապես ֆինանսաբանկային համակարգում: 2001 թ. օրինականացվեց մասնավոր բանկային համակարգը, իսկ 2004 թ. արդեն գործում էր չորս մասնավոր բանկ: 2003 թ. կառավարությունը հրաժարվեց արտարժույթի փոխանակման կարգավորումից: 2004 թ. թվականի օգոստոս ամսին ստեղծվեց հատուկ կոմիտե, որը պետք է վերահսկի ֆոնդային շուկայի հիմնումը: Կառավարությունը փոփոխություններ մտցրեց հարկային և վարձակալման օրենքներում, քայլեր են ձեռնարկվում աշխուժացնել նաև առևտուրը, այդ թվում և արտաքին առևտուրը:

Սակայն ամենակարևոր նորությունը կառավարության քաղաքականության փոփոխությունն էր տնտեսության գերակա ուղղությունների ընտրության հարցում: Կառավարությունը արդյունաբերության ընդ-

լայնման փոխարեն գերակա ուղղություն հայտարարեց գյուղատնտեսական սեկտորը: Դիմելով այդ քայլին՝ նա իր առջև չորս խնդիր դրեց. ա. դադարեցնել գյուղատնտեսական մթերքների ներմուծումը, բ. հասնել գյուղատնտեսական մթերքներով երկրի ինքնաբավարարմանը, գ. նրանց արտահանման միջոցով մեծացնել եկամուտների ստացումը, և, դ. դադարեցնել գյուղական բնակչության միգրացիան: Այդ նպատակով կառավարությունը վարեց գյուղատնտեսության բնագավառում կապիտալ ներդրումների հատուկ՝ գյուղատնտեսության զարգացումը խթանող քաղաքականություն, զարգացրեց ենթակառուցվածքները, ոռոգման համակարգը, ընդլայնեց ջրովի հողատարածքները, գյուղացիներին տրամադրեց սուբսիդիաներ, աջակցեց վաճառահանման գների հարցում և այլն, և այլն: Եվ դրական արդյունքներն առկա են: Սիրիան գյուղատնտեսական շատ մթերքներ ներմուծող երկրից վերածվեց արտահանող երկրի: Այսօր նա արտահանում է բամբակ, մրգեր, բանջարեղեն, սննդամթերքի տարբեր տեսակներ և այլն:

Սիրիայի տնտեսության զարգացման ճանապարհին լուրջ խոչընդոտ են նրա արտասահմանյան վիթխարի պարտքերը, որոնց տերերը եվրոպական հիմնական կրեդիտոր՝ վարկատու երկրներն են: Սիրիան գործնականում ի վիճակի չէ վերադարձնել այդ պարտքերը: Նրա թույլ զարգացած տնտեսությունը դրա հնարավորությունը չի տալիս: Այդ պատճառով Սիրիան ընտրել է արտասահմանյան երկրներին իր պարտքերը վերածնավորելու, վերակազմավորելու ուղին՝ ձգտելով հասնել նաև նրանց ամբողջական կամ մասնակի զեղչմանը: Նման համաձայնության հասավ Սիրիան Ռուսաստանի հետ: 2005 թ. նրանք կնքեցին պայմանագիր՝ Սիրիայի համար շատ ձեռնտու պայմաններով: Ռուսաստանը համաձայնվեց չեղյալ համարել Սիրիայի պարտքերի երեք քառորդը, որը կազմում է 13 մլրդ ԱՄՆ դոլար: Դրանից հետո Սիրիան Ռուսաստանին պարտք մնաց ևս 3,6 մլրդ ԱՄՆ դոլար: Դրա կեսը Սիրիան պետք է վճարի առաջիկա 10 տարվա ընթացքում, իսկ մնացած կեսը կնստի Ռուսաստանի հաշվի վրա Սիրիայի բանկերում և կարող է օգտագործվել Սիրիայում ռուսական տնտեսական ծրագրերի ներդրման նպատակով, ինչպես նաև սիրիական ապրանքներ գնելու համար:

Սիրիայի պարտքերը չեղյալ հայտարարելու դեպքեր կան նաև արաբական դոնոր երկրների կողմից:

Այդուհանդերձ, տնտեսական զարգացման, նրա վերակառուցման, նոր տեխնոլոգիաների կիրառման, ներդրումների ծավալների մե-

ծացման, գործազրկության կրճատման, աղքատության նվազման և այլ հարցերը մնում են ժամանակակից փուլում և առաջիկա տարիներում, գուցե և տասնամյակներում Սիրիայի առջև կանգնած ամենադժվարին կենսական խնդիրները:

3. Արտաքին քաղաքական մարտահրավերները

Արտաքին քաղաքականության բնագավառում Սիրիան նշված ժամանակաշրջանում բախվեց բավականին լուրջ պրոբլեմների, որոնք ուղղակի առնչություն ունեին նրա ազգային անվտանգության հետ: Իսրայելի կողմից օկուպացված Գոլանի ազատագրման, իսրայելա–սիրիական հարաբերությունների կարգավորման խնդիրների և միջազգային ահաբեկչության մեջ մեղադրվելու հետ միասին Սիրիան կանգնեց նոր մարտահրավերների առջև: Դա առաջին հերթին կապված էր Իրաքի, ավելի ստույգ՝ Իրաքին զանգվածային ոչնչացման զենք ստեղծելու և ունենալու մեջ մեղադրելու հետ, որի նախածեռնողը և հետնողական կիրառողը եղավ ԱՄՆ–ը: Թեև միջազգային զանազան տեսչական հանձնաժողովները, որոնք բազմիցս այցելել էին Իրաք, նման զենք չհայտնաբերեցին, այդուհանդերձ, ԱՄՆ–ի պրեզիդենտ, կրտսեր Ջորջ Բուշը շարունակում էր մեղադրել Իրաքին և նրա պրեզիդենտ Սադամ Հուսեյնին նման զենք ունենալու, ինչպես նաև ահաբեկչությունը խրախուսելու մեջ մատնանշելով նաև, որ Իրաքը իբր կապ ունի ալ–Կաիդայի և նրա ղեկավար Ուսամա բին Լադենի հետ: Սիրիան արաբական մյուս երկրների հետ միասին կանգնեց ծանր ընտրության առջև: Նա պետք է կողմնորոշվեր, թե ինչ դիրք գրավել: Այդ էր պահանջում ԱՄՆ–ը նաև մյուս պետություններից: Բաշար Ասադը և սիրիական ղեկավարությունը որոշեցին ամեն գնով կանխել ԱՄՆ–ի և նրան հետևող երկրների ներխուժումը Իրաք: Սիրիան դեռևս 2002 թ. հունվարի 1–ին դարձել էր ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ՝ որպես արաբական երկրների ներկայացուցիչ, և մասնակցում էր այդ հարցի քննարկումներին: Նա նույնիսկ կողմ քվեարկեց Անվտանգության խորհրդի 1441 բանաձևին, որը շատ խիստ պահանջներ էր առաջադրում Իրաքին: Սիրիայի ղեկավարությունն իր այդ քայլը բացատրում էր նրանով, որ այդ կերպ նա ապահովեց այդ բանաձևի միաձայն ընդունումը և այդ քայլով ցանկանում էր կանխել ամերիկյան ներխուժումը Իրաք: Դա տակտիկական քայլ էր Սիրիայի կողմից, մանավանդ որ Իրաքը, որոշ տատանումներից

հետո, նույնպես իր համաձայնությունը հայտնեց այդ բանաձևին: Բայց դա չէր բավարարում ԱՄՆ–ին և նրա հետևից գնացող Անգլիային: Ակնհայտ էր, որ Ջորջ Բուշը որոշել էր ներխուժել Իրաք: Եվ երբ ԱՄՆ–ը և Անգլիան 2003 թ. ապրիլին ներխուժեցին Իրաք, ապա Սիրիան՝ միակը արաբական երկրներից, դեմ արտահայտվեց դրան՝ պաշտոնապես հայտարարելով, որ նրանց գործողություններն անօրինական են: Դա առաջ բերեց ամերիկյան ղեկավարության խորը զայրույթը: Ամերիկյան բարձրաստիճան պետական և զինվորական գործիչները մեղադրում էին Սիրիային՝ Իրաքին գաղտնի օգնություն ցույց տալու մեջ, անգամ սպառնում նրան:

Պատերազմական գոտում հայտնված հազարավոր իրաքցիներ փորձում էին ապաստան գտնել Սիրիայում, որին խոչընդոտում էին ամերիկացիները՝ ռազմական ուժեր կենտրոնացնելով և վերահսկողություն հաստատելով սիրիա–իրաքյան սահմանի վրա: Այդուհանդերձ, ինչպես վկայում են պաշտոնական տվյալները, միայն մոտ 40 հազար քրիստոնյաներ 2003 թ. կարողացել էին փախչել Իրաքից և հաստատվել Սիրիայում՝ վայելելով սիրիական իշխանությունների հովանավորությունը և օժանդակությունը: Այդ թիվն անհամեմատ ավելի մեծ է, եթե հաշվի առնենք նաև Սիրիայում ապաստան գտած մուսուլման արաբներին:

Սիրիայի բացառիկ դիրքորոշումը Իրաք ամերիկյան ուժերի ներխուժման դեմ ավելի սրեց սիրիա–ամերիկյան հարաբերությունները: Կրկին անդրադառնալով Սիրիայի դիրքորոշմանը՝ հարկ է նշել, որ Սիրիայի ընդդիմությունը չպետք է բացատրել ի սեր Իրաքի: Սիրիա–իրաքյան հարաբերությունները վերջին 40–50 տարիների ընթացքում երբեք չեն փայլել ջերմությամբ, ընդհակառակը, եղել են լարվածության պահեր, որոնք շատ հաճախ դիմակայության են վերածվել: Արդ, հանդես գալով Իրաք ամերիկյան ներխուժման դեմ՝ Սիրիան մտահոգ էր, որ Իրաքի օկուպացման և ամերիկյան տիրապետության հաստատման պարագայում խիստ կվատանար Սիրիայի աշխարհաքաղաքական դրությունը: Սիրիան կհայտնվեր ամերիկա–իսրայելական աքցանի մեջ, մանավանդ, եթե նկատի առնենք ԱՄՆ–ի և Իսրայելի խիստ թշնամական քաղաքականությունը Իրանի նկատմամբ, որի հետ Սիրիան գտնվում էր սերտ հարաբերությունների մեջ:

Դեռ չէր հաղթահարվել իրաքյան կնճիռը, երբ Սիրիան հարկադրված էր դիմակայել նոր մարտահրավերի: Այս անգամ դա եկավ Լիբանանից:

ԱՄՆ–ը կրկին Սիրիային մեղադրեց ահաբեկչությունը խրախուսելու մեջ՝ գտնելով, որ նա օգնություն է ցույց տալիս, այն էլ՝ Իրանի հետ միասին, «Հիզբալլահ» կազմակերպությանը, որը, ինչպես և Սիրիան, գտնվում էր ԱՄՆ–ի կողմից կազմած ահաբեկիչների «սև ցուցակում»: ԱՄՆ–ը գրավեց շատ կոշտ դիրք, որն արտացոլվեց 2003 թ. դեկտեմբերին պրեզիդենտ Ջորջ Բուշի ստորագրած մի փաստաթղթի մեջ, որը նրա ստորագրումից հետո ստացավ օրենքի ուժ: Այդ փաստաթուղթը կոչվում էր «Սիրիայի պատասխանատվությունը և Լիբանանի սուվերենությունը վերականգնելու ակտ»: Նրանում նախատեսվում էր Սիրիայի նկատմամբ կիրառել ամենախիստ պատժամիջոցներ, եթե Սիրիան «վերջ չտա իր օգնությունը պաղեստինյան տեռորիստական կազմակերպություններին, վերջ չտա իր ռազմական և անվտանգության ուժերի ներկայությունը Լիբանանում, չդադարեցնի զանգվածային ոչնչացման զենք ձեռք բերելու իր ջանքերը և չկատարի Իրաքի կայունացման և վերականգնման վերաբերյալ Միավորված ազգերի Անվտանգության խորհրդի որոշումների համաձայն իր վրա վերցրած պարտավորությունները»: 2004 թ. մայիսին ԱՄՆ–ը կրկին անդրադարձավ այդ հարցին, և պրեզիդենտ Բուշը խիստ դժգոհեց Սիրիայի քաղաքականությունից՝ հայտարարելով, որ Սիրիան չի կատարել վերոնշյալ օրենքի պահանջները: Ելնելով դրանից՝ նա մի շարք պատժամիջոցներ սահմանեց Սիրիայի դեմ: Ըստ այդմ՝ արգելվեց Սիրիա արտահանել որևէ իր, ապրանք, սարքավորում, տեխնիկա և այլն, բացառությամբ սննդի և դեղորայքի: Արգելվեց նաև սիրիական ինքնաթիռների թռիչքը ամերիկյան օդանավակայաններ, սառեցվեցին ամերիկյան բանկերում սիրիական պետությանը, ինչպես նաև քաղաքացիներին պատկանող ակտիվները: Այսպիսով՝ Սիրիան հայտնվեց շատ ծանր դրության մեջ:

Ի լրումն այդ բոլորի՝ Սիրիայի համար միանգամայն անբարենպաստ միջազգային պայմաններում սկսվեց հուժկու հակասիրիական շարժում Լիբանանում, որն իր բարձրակետին հասավ 2005 թ. փետրվարի 14–ին, երբ պայթեցվեց լիբանանի վարչապետ Ռաֆիկ Հարիրիի ավտոմեքենան, և նա զոհվեց: Դա ալեկոծեց ամբողջ երկիրը, և սկսվեցին հուժկու ցույցեր: Լիբանանյան քաղաքական տարբեր ուժեր վարչապետի սպանության մեջ մեղադրեցին Սիրիային, նրա անվտանգության մարմիններին: Նշվում էին այս սպանության կազմակերպիչների անունները, այդ թվում՝ Սիրիայի զինվորական հետախուզության պետ Ասիֆ Շաուկաթի, որը Լիբանանի պրեզիդենտ Բաշար Ասադի քրոջ

ամուսինն էր, ներքին գործերի նախարար Ղազի Քանաանի և այլոց անունները: Դրությունն ավելի լրջացավ, երբ Սիրիայի ներքին գործերի նախարար Ղազի Քանաանը ինքնասպանությամբ վերջ տվեց կյանքին:

Բաշար Ասադը մերժում էր Սիրիային ներկայացված մեղադրանքները՝ նշելով, որ իր երկիրը և պետական մարմինները ոչ մի մասնակցություն չեն ունեցել Ռաֆիկ Հարիրիի սպանության մեջ: Բայց դա չընդունվեց լիբանանցիների կողմից: Ցույցերը, որոնց երբեմն մասնակցում էին հարյուր հազարավոր լիբանանցիներ, շարունակվում էին, և նրանց գլխավոր պահանջը դարձավ սիրիական զորքերի դուրսբերումը և Սիրիայի հեռացումը Լիբանանից: Սիրիայի վրա մեծ ճնշում էին գործադրում ԱՄՆ–ը և այլ պետություններ, մի շարք միջազգային կազմակերպություններ, ականավոր քաղաքական գործիչներ, որոնք պաշտպանում էին լիբանանցիների պահանջը: Սիրիան հայտնվեց մեկուսացման մեջ և հարկադրված էր նահանջել: 2005 թ. մարտի 5–ին Ժողովրդական խորհրդում հանդես եկավ պրեզիդենտ Բաշար Ասադը, որը հայտարարեց, որ Սիրիան իր զորքերը Լիբանանից դուրս կբերի մինչև 2005 թ. մայիս ամիսը:

Պրեզիդենտը մնաց իր խոսքի տերը և 2005 թ. ապրիլի 26–ին՝ Լիբանան մտնելուց մոտ 30 տարի անց, ավարտվեց սիրիական բոլոր զորքերի դուրսբերումը Լիբանանից:

Կարելի է հուսալ, որ սիրիական զորքերի դուրսբերումը Լիբանանից, որը միաժամանակ ընկալվեց որպես Լիբանանի ինքնիշխանության վերականգնում, իր դրական դերը կխաղա տարածաշրջանում կայունության հաստատման և հարևան երկրների հետ Սիրիայի հարաբերությունների բարելավման հարցում:

4. Սիրիական Արաբական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերությունները (1991–2005 թթ.)

Հայ–սիրիական հարաբերությունները, որոնք հայ–արաբական քաղաքական և պատմամշակութային հարաբերությունների բաղկացուցիչ մասն են կազմում, իրենց արմատներով դարերի խորքն են գնում և ունեցել են զարգացման տարբեր փուլեր: Դրանք հետաքրքիր են իրենց բնույթով, ծավալներով և խորությամբ, բազմաշերտ են ու ընդգրկում են գործնականում բոլոր բնագավառները. Եվ եթե պատմական հետադարձ

հայացք գցենք այդ հարաբերությունների վրա, ապա կտեսնենք, որ նրանք տարբեր ժամանակներում գտնվել են տարբեր մակարդակների վրա, տարբեր կերպ ու աստիճանի են դրսևորվել:

Մ.թ.ա. I դարում հայ–սիրիական հարաբերությունները դրսևորվել են որպես միջպետական հարաբերություններ, որոնք ավարտվել են նրանով, որ Սիրիան մ.թ.ա. 80–60-ական թվականներին կազմել է Տիգրան Մեծի հայոց կայսրության մի մասը: Մ.թ. VII–VIII դարերում Հայաստանը հայտնվեց արաբական պետության՝ Օմայան խալիֆայության կազմում, որի կենտրոնը Սիրիան էր՝ Դամասկոս մայրաքաղաքով: 885–1045 թթ., երբ Հայաստանը վերականգնել էր իր անկախությունը Բագրատունյաց հարստության ներքո, Հայաստանը հարաբերակցում էր խալիֆայության հետ որպես անկախ պետություն, և այդ հարաբերություններն իրենց բնույթով միջպետական հարաբերություններ էին: Հետագայում՝ Հայաստանի անկախության կորստից և արաբական խալիֆայության անկումից հետո, Սիրիայում ձևավորվում են հայ համայնքներ՝ իրենց եկեղեցական, կրթական և հոգևոր–մշակութային կառույցներով և արաբների հետ հարաբերակցում են որպես միևնույն երկրի բնակիչներ:

Հայերի և արաբների ճակատագրերը պատմության ընթացքում մեկ անգամ ևս խաչաձևվեցին, երբ քաղաքական թատերաբեմում հայտնվեց Օսմանյան կայսրությունը. Այդ նորաստեղծ ագրեսիվ պետությունը նախ՝ նվաճեց արաբական երկրները, որը սկսվեց Սիրիայի գրավումից XVI դարում՝ 1516 թ., ապա՝ XVII դարում՝ Արևմտյան Հայաստանը: Այդ պահից հայ–սիրիական, իսկ ավելի լայն առումով՝ հայ–արաբական հարաբերությունները դիտարկվում են որպես միևնույն՝ Օսմանյան կայսրության ենթակա ժողովուրդների հարաբերություններ: Տվյալ փուլում նրանք վերածվում են բախտակից ժողովուրդների, որոնց թշնամին նույնն էր՝ օսմանյան սուլթանական տիրապետությունը: Նույնն էր նաև նրանց քաղաքական իդեալը՝ ազատագրվել օսմանյան բռնակալական լծից: Դրանից ծնվում է փոխադարձ համակրանքը և կարեկցանքը միմյանց նկատմամբ, որն այնուհետև վերածվում է համագործակցության: Հայերն ակտիվորեն ներգրավվում են արաբների քաղաքական և մշակութային կյանքի մեջ, որի կարևոր կենտրոններից մեկն էր Սիրիան. Նշանակալից էր հայերի ներդրումը արաբական Նահդայի՝ վերածննդի շարժման, այդ թվում նաև նրա գաղափարախոսության ձևավորման մեջ:

Հայ–արաբական, այդ թվում և հայ–սիրիական հարաբերություններում բացառիկ տեղ է գրավում արաբների դիրքորոշումը 1915 թ. հա-

յոց ցեղասպանության հանդեպ: Բռնի տեղահանված հայերի քարավաններն անցնում էին նախ և առաջ Սիրիայի տարածքով, նրա շրջանների, գյուղական վայրերի և քաղաքների՝ Դեյր ալ–Զորի, Մեսքենեի, Հալեպի և Դամասկոսի միջով: Հայկական կորուստները և համազգային ողբերգության ծավալներն անհամեմատ ավելի մեծ կլինեին, եթե չլիներ սիրիացիների՝ հասարակ մարդկանց, ինչպես նաև պաշտոնյաների, անձնազոհ օգնությունը անպաշտպան հայերին: Հայոց ցեղասպանության զոհերի նկատմամբ արաբների ցուցաբերած աննախադեպ մարդասիրական վերաբերմունքից ծնվեց «Արաբների անունը հայերի պատմության մեջ կգրվի ոսկե տառերով» հայկական բանածնը:

Չպետք է մոռանանք, որ երիտթուրքական ոճրագործները ծրագրել էին հայերի ցեղասպանության հետ միասին իրականացնել նաև արաբների ցեղասպանությունը: Այդ տեսակետը հաստատուն տեղ է գրավում արաբական պատմագիտության մեջ, որը հաստատվում է բազմաթիվ փաստերով: 1915–1916 թթ. կախաղաններ կառուցվեցին Դամասկոսում, Բեյրութում և Ալեյում, որոնց վրա բարձրացվեցին արաբական, այդ թվում և սիրիական ազգային և հայրենասիրական ականավոր ղեկավար գործիչները: Դա կատարվեց Ջեմալ փաշայի հրամանով, այն նույն Ջեմալի. որը Թալեաթի և Էնվերի հետ միասին կազմում էր երիտթուրքական եռապետությունը, և որն արդեն հասցրել էր իրականացնել հայոց ցեղասպանությունը, որոշակի փորձ կուտակել այդ բնագավառում և այն օգտագործեց արաբների դեմ: Իրոք որ բախտակից ժողովուրդներ:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո եղավ մի պահ՝ 1918–1920 թթ., երբ թվում էր, թե Սիրիան մոտ էր անկախության, անգամ հռչակվեց Սիրիայի թագավորություն, որը, սակայն, կարճատև եղավ: Նույն շրջանում՝ 1918–1920 թթ., ստեղծվեց Հայաստանի անկախ հանրապետությունը: Սակայն երկու պետություններն էլ գտնվում էին քաղաքական, տնտեսական և ռազմական ծանր դրության մեջ, որի պատճառով նրանց միջև չհաստատվեցին միջպետական հարաբերություններ:

1920 թ. հուլիսին սիրիական թագավորությունը ֆրանսիացիների հարվածների տակ ընկավ, և Սիրիան անցավ Ֆրանսիայի մանդատային տիրապետության տակ: Իսկ 1920 թ. նոյեմբերին խորհրդայնացվեց Հայաստանի առաջին հանրապետությունը, որը 1922 թ. մտավ Խորհրդա-

յին Միության կազմի մեջ: Այսպիսով՝ երկուսն էլ ըստ էության դադարեցին անկախ պետություն լինելուց:

Սիրիան ֆրանսիական տիրապետության ներքո մնաց մինչև 1946 թ., իսկ Հայաստանը՝ Խորհրդային Միության կազմում մինչև 1991 թ., երբ վերջինս կազմալուծվեց:

Այդ փուլում հայ–սիրիական հարաբերություններն իրականացվում էին երկու մակարդակով: Առաջին՝ սիրիահայ համայնքն ակտիվորեն մասնակցում էր անկախության համար մղվող համասիրիական շարժմանը և պայքարին, երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին, որը մշտապես բարձր է գնահատվել Սիրիայի ժողովրդի և բարձրագույն ղեկավարության կողմից: Մենք արդեն նշել ենք հայերին անկախ Սիրիայի առաջին պրեզիդենտ Շուքրի Քուաթլիի տված բարձր գնահատականը: Բայց դա միակը չէր:

Հայերի մասին նույն կարծիքին էր Սիրիայի ամենաերկարակյաց պրեզիդենտ Հաֆիզ Ասադը: 1980 թ. մենք հանդիպել ենք նրա հետ և զրուցել տարբեր հարցերի շուրջը: Այլ հարցերից բացի խոսեցինք նաև սիրիահայ համայնքի մասին: Նա իր գոհունակությունը հայտնեց հայերից՝ ընդգծելով, որ նրանք լավ և վատ օրերին միշտ կանգնած են եղել սիրիացիների կողքին: Նա հատուկ ընդգծեց հայերի մասնագիտական բարձր հմտությունը, խելացիությունը և հավատարմությունը, որը նա համարեց հայերի երեք կարևոր հատկանիշները: Այնուհետև նա ասաց. «Սիրիան հայերի երկրորդ հայրենիքն է, որին հավատարիմ են նրանք: Եվ ես՝ որպես պրեզիդենտ, ամեն ինչ կանեմ նրանց իրավունքները պաշտպանելու համար»: Ես մասնագիտության բերումով տարբեր առիթներով բազմաթիվ հանդիպումներ եմ ունեցել արաբական պետական, քաղաքական, կուսակցական ղեկավարների, այդ թվում և պրեզիդենտների ու վարչապետերի հետ: Եթե հիշողությունս չի դավաճանում, Հաֆիզ Ասադն արաբական պետությունների ղեկավարներից առաջին պրեզիդենտն էր, որն ընդգծեց իր երկրի՝ հայերի երկրորդ հայրենիքը լինելու հանգամանքը, որն ինքնին նշանակում էր, որ նա ընդունում էր, որ Հայաստանն է նրանց առաջին հայրենիք, իսկ Սիրիան՝ երկրորդը, թեև նրանք վաղուց էին հաստատվել Սիրիայում և հանդիսանում էին նրա քաղաքացիները: Ընդհանրապես, Հաֆիզ Ասադին բնորոշ էր զգայուն վերաբերմունքը ազգային և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ, որի դիմաց նա վայելում էր նրանց անկեղծ հարգանքն ու քաղա-

քական աջակցությունը, որի մասին ես հարկ համարեցի նրան հայտնել: Նա դրանից իրեն չափազանց շոյված զգաց:

Երկրորդ՝ Սիրիայի և Խորհրդային Հայաստանի միջև հաստատվել էին որոշակի շփումներ տնտեսության, առողջապահության, կրթության և այլ ոլորտներում, որոնք իրականացվում էին Խորհրդային Միություն–Սիրիա միջպետական հարաբերությունների շրջանակներում: Դրա գագաթնակետը հանդիսացավ սիրիական կառավարական–կուսակցական պատվիրակության երկօրյա այցը Հայաստան 1980 թ.՝ Սիրիայի պրեզիդենտ Հաֆիզ Ասադի գլխավորությամբ: Պատվիրակությանը ցույց տրվեց ջերմ ընդունելություն: Տեղի ունեցավ բարեկամական զրույց Հաֆիզ Ասադի և Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի միջև, որի ընթացքում շոշափվեցին նաև տնտեսական ու մշակութային ոլորտներում հայ–սիրիական համագործակցությանը և սիրիահայ համայնքին վերաբերող հարցեր:

Հայ–սիրիական շփումների բաղկացուցիչ մասն էին կազմում հարաբերությունները հասարակական՝ ոչ կառավարական մակարդակներով, որոնք այդ տարիներին ընդհանրապես մեծ զարգացում էին ստացել: Այդ գործում մեծ էր արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի ընկերությունների դերակատարումը: Դրանց մեջ իր կարևորությամբ առանձնանում էին Արաբական երկրների հետ բարեկամության խորհրդային ընկերությունը և Հայ–արաբական բարեկամության ընկերությունը[30]: Արտասահմանի հետ բարեկամության և մշակութային կապերի Հայկական ընկերության և Հայ–արաբական բարեկամության ընկերության ջանքերով 1970–ական թվականներին Հայաստանում կազմակերպվեցին Սիրիայի օրեր, իսկ 1982 թ.՝ Հայաստանի օրեր Սիրիայում:

Հայ–սիրիական հարաբերություններում նոր գլուխ բացվեց XX դարի 90–ական թվականների սկզբներին, երբ Հայաստանը 1991 թ. սեպտեմբերի 21–ին վերականգնեց իր անկախությունը և միջազգային ասպարեզում հայտնվեց որպես ինքնիշխան պետություն: Սիրիան շատ

---

30. Հայ–արաբական բարեկամության և մշակութային ընկերության առաջին նախագահն էր ՀԽՍՀ Գերագույն խորհրդային Հայաստանի մշակույթի նախարար Անդրանիկ Ծահինյանը, որին փոխարինեց Հայ անվանի գրող Ստեփան Ալաջայանը, իսկ այնուհետև՝ ընդհուպ մինչև Խորհրդային Միության փլուզումը և ընկերությունների գործունեության դադարեցումը՝ այդ ընկերությունը գլխավորում էր տողերիս հեղինակը.

արագ արձագանքեց հայերի համար պատմական նշանակություն ունեցող այդ իրադարձությանը: 1991 թ. դեկտեմբերի 28–ին Սիրիան պաշտոնապես ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, իսկ 1992 թ. մարտի 6–ին Դամասկոսում ստորագրվեց համաձայնագիր երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ: Երևանում և Դամասկոսում համապատասխանաբար բացվեցին երկու երկրների դիվանագիտական ներկայացուցչություններ՝ դեսպանների մակարդակով:

Առաջինն իր դեսպանությունը Երևանում 1992 թ. դեկտեմբերին բացեց Սիրիան, իսկ Հայաստանի դեսպանությունը Դամասկոսում գործում է 1997 թ. սեպտեմբերից: Սակայն կողմերը չբավարարվեցին միայն դրանով: Կարևորելով հարաբերությունների զարգացումը նրանց միջև՝ Սիրիան և Հայաստանը ստորագրեցին համապատասխան համաձայնագիր Հալեպում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսություն բացելու վերաբերյալ, որը գործում է 1993 թ. փետրվարից: Նա կոչված է սպասարկելու ոչ միայն Սիրիայի, այլև Իրաքի, Լիբանանի և Հորդանանի քաղաքացիներին:

Առաջին կարևոր քաղաքական փաստաթուղթը, որ ստորագրվել է Հայաստանի և Սիրիայի միջև, «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և Սիրիական Արաբական Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջև կոնսուլտացիաներ անցկացնելու մասին» 1992 թ. մարտի 30–ին Երևանում ստորագրված արձանագրությունն է: Նրանում նշված էր, որ երկու նախարարությունները համաձայնվում են պարբերաբար խորհրդաժողովներ անցկացնել՝ ելնելով երկու երկրների բարեկամական հարաբերությունների համատեղ շահերից, ձգտելով նպաստել ՀՀ–ի և ՍԱՀ–ի միջև հարաբերությունների զարգացմանը և խորացմանը՝ ի նպաստ երկու երկրների ժողովուրդների ազգային շահերի՝ կարևոր նշանակություն տալով երկու երկրների համագործակցությանը միջազգային ասպարեզում՝ համաձայն ՄԱԿ–ի կանոնադրության և սկզբունքների:

Հայ–սիրիական միջպետական հարաբերությունները միանգամից ստացան բարձր մակարդակ, որը բացատրվում է նրանով, որ այդ ժամանակ երկու երկրների ղեկավարությունն իրենց երկրների հարաբերությունները համարում էին ոչ միայն բարեկամական, այլև ստրատեգիական բնույթի: Դրա հաստատումն է հանդիսանում այն իրողությունը, որ Սիրիայի կողմից Հայաստանի Հանրապետության անկախությունը

ճանաչելուց ընդամենը չորս ամիս անց՝ 1992 թ. ապրիլի 25–27–ը, տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության պրեզիդենտ Լևոն Տեր–Պետրոսյանի և նրա գլխավորած պատվիրակության պաշտոնական այցը Սիրիա: Նրան ցույց տրվեցին պետական ամենաբարձր պատիվներ: Օդանավակայանում Հայաստանի պրեզիդենտին դիմավորեց Սիրիայի բարձրագույն ղեկավարությունը պրեզիդենտ Հաֆիզ Ասադի գլխավորությամբ: Այդ նույն օրը երեկոյան տեղի ունեցան երկու պրեզիդենտների հանդիպումը և առանձնազրույցը, որի ընթացքում Սիրիայի պրեզիդենտը բարձր գնահատեց և իր գոհունակությունը հայտնեց Սիրիայի ու Հայաստանի միջև հաստատված հարաբերությունների առթիվ: Հայ–սիրիկան միջպետական հարաբերություններին նման գնահատական տվեց նաև Հայաստանի պրեզիդենտը: Հաջորդ օրը՝ 1992 թ. ապրիլի 26–ին, շարունակվեցին բանակցությունները Հայաստանի և Սիրիայի բարձրաստիճան պատվիրակությունների միջև, որոնց ժամանակ հիմնական թեման երկու երկրների միջև համագործակցությունը խորացնելու և նրանց հետաքրքրող այլ հարցերն էին: Հաշվի առնելով հարցերի բազմազանությունը և լայն շրջանակները՝ կողմերը համաձայնվեցին ստեղծել խառը հանձնաժողով, որը պետք է մշակեր հետագա գործակցության մանրամասն ծրագիր[31]:

Հայաստանի անկախության ճանաչումից ի վեր Սիրիայի և Հայաստանի միջև ստորագրվել են մոտ 40 տարբեր բնույթի համաձայնագրեր, արձանագրություններ, հուշագրեր, որոնք կարգավորում են հայ–սիրիական միջպետական հարաբերությունները: Դրանք ընդգրկում են երկու երկրների քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական և կրթական ոլորտները, վերաբերում են տնտեսական համագործակցությանը, առևտրական հարաբերություններին, մաքսային և հարկային ոլորտներին, ներդրումներին, համագործակցությանը գյուղատնտեսության, կապի, տրանսպորտի, հեռահաղորդումների, տեղեկատվության, առողջապահության և այլ բնագավառներում: Նշանակալի է նաև միջպառլամենտական համագործակցությունը: Հայաստանի Ազգային ժողովում կազմավորվել է հայ–սիրիական պառլամենտական խումբ:

31 Լևոն Տեր–Պետրոսյանի այցի կապակցությամբ սիրիացիները, հպարտությամբ նշելով, որ նա ծնվել է Սիրիայում, սիրում էին ընդգծել, որ իրենց երկիրը՝ Սիրիան, աշխարհին տվել է երեք պրեզիդենտ՝ Հաֆիզ Ասադը՝ Սիրիայի պրեզիդենտ, Լևոն Տեր–Պետրոսյանը՝ Հայաստանի պրեզիդենտ, և Կառլոս Մենեմը՝ Արգենտինայի պրեզիդենտ:

Դրվատանքի է արժանի սիրիական իշխանությունների դիրքորոշումը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնելու հարցում: Նրանց թույլտվությամբ 1980–ական թվականներին Դեյր ազ–Զորում կառուցվել են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիր և եկեղեցի, իսկ 1996 թ.՝ Մարկադեյի քարայր անապատում, որտեղ հայտնաբերվել են գազանաբար սպանված հայերի մասունքներ. կանգնեցվեց մի մատուռ: Կարևոր իրադարձություն պետք է համարել արաբ ցեղապետների պատվիրակության ժամանումը Հայաստան, երբ հայ ժողովուրդը նշում էր Հայոց ցեղասպանության 90–ամյակը: Դրանք սիրիական արաբական այն ցեղերի առաջնորդներն էին, որոնց հայրերը և պապերը 1915 թ. օգնության ձեռք էին մեկնել Սիրիայով անցնող հայ բռնագաղթվածների անպաշտպան քարավաններին և փրկել բազմաթիվ հայերի՝ երեխաների, կանանց և ծերերի կյանք: Ուշագրավ է, որ իր բնույթով այդ եզակի պատվիրակությունը գլխավորում էր Սիրիայի գլխավոր մուսուլման հոգևոր առաջնորդ շեյխ Ահմադ Հասունին:

Հայ–սիրիական հարաբերություններում վերջին տարիներին նկատվում են որոշ միտումներ, որոնք չեն կարող մտահոգություն չառաջացնել: Կնքված առևտրական, տնտեսական և այլ համաձայնագրերը չեն կենսագործվում ողջ ծավալներով, նկատվում է որոշ պասիվություն, դանդաղկոտություն ձեռք բերված պայմանավորվածությունների կիրառման հարցերում: Դրանց մի մասը, անշուշտ, ունի օբյեկտիվ պատճառներ, որոնցից ամենակարևորը ուղիղ ցամաքային կապի բացակայությունն է երկու երկրների միջև, որը հարուցում է որոշակի դժվարություններ: Իրենց դերն են խաղում նաև Սիրիայում գործող տնտեսական և ֆինանսական որոշ օրենսդրական ակտեր, որոնք բարենպաստ չեն տնտեսական համագործակցությունը խորացնելու համար: Հավանաբար սխալ կլիներ հաշվից դուրս նետել արտաքին որոշ ուժերի, առաջին հերթին թուրքական գործոնի ազդեցությունը և այլն:

Այդուհանդերձ, հայ–սիրիական հարաբերություններն իրենց բնույթով բարեկամական են և ունեն բոլոր օբյեկտիվ պայմանները ոչ միայն այդպիսին մնալու, այլև ապագայում ավելի խորանալու և դինամիկ դառնալու համար:

Գլուխ յոթերորդ

ՍՈՒԴԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՈՒԴԱՆ

ՀՈՒՄՀՈՒՐԻՅԱ ԱԼ–ՍՈՒԴԱՆ
ԱԼ-ՍՈՒԴԱՆ

Աշխարհագրական դիրքը — գտնվում է Հյուսիսային Աֆրիկայում, Եգիպտոսի և Էրիտրեայի միջև՝ Կարմիր ծովի հարևանությամբ

Սահմանները — սահմանակից է Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությանը, Չադին, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությանը, Եգիպտոսին, Էրիտրեային, Եթովպիային, Քենիային, Լիբիային և Ուգանդային

Տարածքը — 2 մլն 505 հազ. 810 քառ. կմ

Բնակչությունը — 41 մլն 236 հազ. 378 (2006 թ. հուլիս)

Մայրաքաղաքը — Խարթում՝ 5 մլն 717 հազ (մեգապոլիս), խոշորագույն քաղաքներն են Օմդուրմանը՝ 2 մլն 104 հազ., Պորտ Սուդանը՝ 450 հազ.

Ազգային կազմը — սներ՝ 52%, արաբներ՝ 39% բեջա՝ 6% այլք՝ 3%

Կրոնը — սուննի իսլամ՝ 70%, տեղական հավատալիքներ՝ 25%. քրիստոնյաներ՝ 5%

Լեզուն — արաբերեն՝ պաշտոնական, անգլերեն, նուբիական, զանազան նեղոսական (նիլոտիկ) և նեղոսա–համիտական (նիլո–համիտիկ) բարբառներ, սուդանական լեզուներ

Պետական կարգը — հանրապետություն

Սահմանադրությունը — ընդունվել է 1973 թ., փոփոխության է ենթարկվել մի շարք անգամներ 2005 թ. ընդունվել է ժամանակավոր ազգային սահմանադրություն

Գործադիր իշխանությունը — պատկանում է պետության ղեկավարին՝ պրեզիդենտին՝ Ումար Հասան Ահմադ ալ–Բաշարին (1993 թ. հոկտեմբերի 16–ից), կառավարության ղեկավարին այդ պաշտոնը 1993 թ. հոկտեմբերի 16–ից զբաղեցնում է պրեզիդենտը՝ Ումար Հասան Ահմադ ալ–Բաշիրը, կաբինետին՝ Նախարարների խորհրդին, որը պաշտոնապես կոչվում է Ազգային միասնության կառավարություն որին նշանակում է պրեզիդենտը

Օրենսդիր իշխանությունը — պատկանում է երկպալատանի մարմնին, որը բաղկացած է Ազգային ասամբլեայից և Նահանգների խորհրդից

Դատական իշխանությունը — հիմնված է իսլամական շարիաթի և բրիտանական իրավունքի վրա: Բարձրագույն դատական իշխանությունը պատկանում է Սահմանադրական դատարանին, Ազգային գերագույն դատարանին և Ազգային վճռաբեկ դատարանին


ՍՈՒԴԱՆ
ԵԳԻՊՏՈՍ
ԼԻԲԻԱ
ՉԱԴ
ԷՐԻԹԻԱ
ՍՈՒԴԱՆ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴԱՐՖՈՒՐ
ԱՐՇՏՈՒՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔ
ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ
ԵԹՈՎՊԻԱ
ԿԵՆԳԻՅԻ ԴԵՄ. ՀԱՆՐ
ՈՒԳԱՆԴԱ
ՔԵՆԻԱ
ԿԱՐՄԻՐ ԾՈՎ

Վարչական բաժանումը — բաժանված է 25 վիլայաթների՝ նահանգների
Քաղաքական կուսակցությունները — Ազգային կոնգրեսի կուսակցություն. Սուդանի ժողովրդի ազատագրության շարժում, Ազգային դեմոկրատական միություն, որոնք մտնում են կառավարության մեջ. Գործում են նաև Ումմա և Ժողովրդական կոնգրես կուսակցությունները
Անկախությունը — 1956 թ. հունվարի 1–ը
Ազգային տոնը — անկախության օրը՝ հունվարի 1–ը
Ազգային դրամը — սուդանական դինար
ՀՆԱ–ն ըստ շնչի — 2522 ԱՄՆ դոլար (2005 թ)
Արդյունաբերությունը — նավթի արդյունահանում և մշակում, բամբակի, տեքստիլ, ցեմենտի, շաքարի, օճառի, կոշկի, դեղագործական, ռազմական և ավտոմոբիլային արդյունաբերություն
Գյուղատնտեսությունը — բամբակագործություն, ցորեն գումարաբիկ, շաքարեղեգ մանգո, պապայա, բանան, քաղցր կարտոֆիլ, քնջութ գետնընկույզ (արախիս), անասնապահություն
Անդամակցություն միջազգային կազմակերպություններին — ՄԱԿ, ՅՈՒՆԵՍԿՕ. Արաբական պետությունների լիգա, Իսլամական կոնֆերանս կազմակերպություն, Միջազգային արժութային ֆոնդ, Ինտերպոլ. Համաշխարհային առևտրի կազմակերպության (դիտորդ) և այլն

I. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ (1918–1956 թթ.)

1. Սուդանի կարգավիճակի առանձնահատկությունը

Սուդանն իր պատմության նորագույն շրջանը թևակոխեց որպես անգլո–եգիպտական կոնդոմինիում՝ համատիրություն: Դա իր նախատիպը չունեցող կառավարման մոդել էր, որը Սուդանին պարտադրվեց 1899 թ.: Չնայնաորեն դա նշանակում էր, որ Սուդանը գտնվում էր միաժամանակ և՛ Մեծ Բրիտանիայի, և՛ Եգիպտոսի համատեղ կառավարման ներքո:

Նկատի ունենալով այդ հարցի կարևորությունը Սուդանի հետագա պատմությունը ճիշտ հասկանալու և գնահատելու առումով՝ հարկ է ավելի հանգամանորեն կանգ առնել նրա էության լուսաբանման վրա:

Առաջին անգամը չէր, որ Սուդանը կամ պատմական Նուբիան հայտնվում էր եգիպտական տիրապետության տակ: Եգիպտական փարավոնները Նուբիան նվաճել են մ.թ.ա. 1500 թ., որը Եգիպտոսի մասն է կազմել մինչև մ.թ. 1000 թ.: Այդ թվականին նա ազատագրվում է եգիպտական տիրապետությունից, և կազմավորվում է Կուշի անկախ թագավորությունը: Հետագայում՝ XVI դարում, ֆունջերը նվաճում են Սուդանը և հիմնում Սենարի թագավորությունը:

Երկրորդ անգամ Սուդանը, ավելի ճիշտ՝ նրա հյուսիսային և արևելյան շրջանները, հայտնվեցին Եգիպտոսի կազմում 1820 թ.՝ Մուհամմադ Ալիի նվաճողական քաղաքականության արդյունքում:

Եվ վերջապես՝ Եգիպտոսը երրորդ անգամ Սուդանը գրավեց 1874 թ.: Եգիպտոսի խեդիվը՝ Իսմաիլ փաշան, այս անգամ որոշեց չսահմանափակվել միայն Սուդանի հյուսիսային մասերի գրավումով, այլ իր տիրապետությունը տարածել նաև նրա հարավային շրջանների վրա: Նա գրավեց Դարֆուրը և հարավային շրջանները, որոնք բնակեցված էին ոչ թե արաբներով, այլ աֆրիկյան նիլոտներով:

Երրորդ նվաճումը ճակատագրական հետևանքներ ունեցավ Սուդանի համար, քանի որ 1980–ականներին Եգիպտոսն ինքը հայտնվեց անգլիական տիրապետության ներքո: Իսկ դա հնարավորություն տվեց Մեծ Բրիտանիային իր տիրապետությունը տարածել նաև Սուդանի վրա, որը նա իրականացրեց՝ նվաճելով Սուդանը և վերացնելով մահդիական պետությունը:

Բայց անգլիական տիրապետության հաստատումը Սուդանի վրա իրավաբանական տեսանկյունից կատարվեց բավականին ինքնատիպ ձևով՝ պայմանագրային ձևով, բայց ոչ թե Սուդանի, այլ Եգիպտոսի հետ: 1899 թ. հունվարի 19–ին Անգլիան և Եգիպտոսը Կահիրեում ստորագրեցին կոնվենցիա, որի համաձայն Սուդանն անցնում էր Եգիպտոսի և Անգլիայի համատեղ տիրապետության ներքո: Նա հռչակվեց որպես Անգլո–եգիպտական կոնդոմինիում: Պայմանագիրը Անգլիայի կողմից ստորագրեց Կահիրեում անգլիական գլխավոր հյուպատոս Կրոմերը. իսկ Եգիպտոսի կողմից՝ Բուտրուս Ղալին:

Կոնվենցիայի համաձայն՝ Սուդանում ամբողջ իշխանությունը՝ օրենսդիր, գործադիր և ռազմական, պատկանում էր գլխավոր նահանգապետին: Նրա թեկնածությունն առաջադրում և երաշխավորում էր անգլիական կառավարությունը, իսկ հաստատվում էր եգիպտական խեդիվի կողմից: Թվում էր, թե դրանով պահպանվում էր հավասարությունը կողմերի միջև, բայց իրականում այդպես չէր: Խեդիվը չէր կարող և կոնդոմինիումի գոյության ավելի քան կեսդարյա պատմության ընթացքում երբեք չի առարկել կամ մերժել Անգլիայի ներկայացրած թեկնածությունը, այլ կատարել է ձևական ակտ՝ հրամանագրել է և ոչ ավելին: Խեդիվը զրկված էր գլխավոր նահանգապետին պաշտոնից ազատելու իրավունքից՝ առանց անգլիական կառավարության համաձայնության: Եգիպտական կառավարության ոչ մի որոշում Սուդանի վերաբերյալ ուժ չուներ և չէր կարող կիրառվել, եթե դրա վերաբերյալ չկար գլխավոր նահանգապետի համաձայնությունը և համապատասխան որոշումը: Նրա բոլոր խորհրդատուները և օգնականները բացառապես անգլիացիներ էին, և նրանց մեջ չկար որևէ եգիպտացի: Գլխավոր նահանգապետին կից գործող խորհուրդը նույնպես կազմված էր բացառապես անգլիացիներից: Սուդանի նահանգների ղեկավարները նույնպես անգլիացիներ էին: Միայն գլխավոր կոմիսարի ապարատում կային մի քանի եգիպտացիներ, որոնք կատարում էին երկրորդական պարտականություններ: Կոնդոմինիումի կառավարման ամբողջ ապարատը կենտրոնում և նահանգային

շրջաններում կազմված էր անգլիացիներից և անմիջապես կատարում էր անգլիական գլխավոր նահանգապետի հրամաններն ու կարգադրությունները: Պատկերն ավելի կատարյալ լինելու համար նշենք, որ կոնդոմինիումի կառավարման համակարգի ամբողջ գոյության ընթացքում գլխավոր նահանգապետ եղել են միայն ու միայն անգլիացիներ, թեև պետք է նշել, որ կոնդոմինիումի վերաբերյալ անգլո–եգիպտական համաձայնագրում գլխավոր նահանգապետի ազգային պատկանելության վերաբերյալ ոչ մի կետ կամ սահմանափակում չկար:

Օտարերկրյա պետությունները չէին կարող Սուդանում ունենալ իրենց դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսությունները:

Եգիպտոսն իրավունք ուներ Սուդանում պահել մեկ գումարտակ, որը սովորաբար տեղակայված էր Խարթումում: Սակայն նա Անգլիայի հետ հավասար կրում էր օկուպացիոն զորքերի և կառավարման ապարատի պահպանման ամբողջ ծախսերը:

Ինչպես տեսնում ենք, Սուդանի կարգավիճակն առանձնահատուկ էր: Ձևականորեն դա ո՛չ պրոտեկտորատ էր և ո՛չ էլ գաղութ: Սակայն իրականում, չնայած համատիրության վերաբերյալ կոնվենցիայի գոյությանը, Սուդանը անգլիական գաղութ էր՝ կոնդոմինիումի տեսքով կամ այդ անվանման ներքո:

Ինչո՞վ էր պայմանավորված նման կարգավիճակի լույս աշխարհ գալը, մանավանդ հայտնի է, որ դասական գաղութատիրության ամենահզոր ներկայացուցիչը ոչինչ հենց այնպես ուրիշին չէր զիջում. Անգլո–եգիպտական կոնդոմինիումը՝ որպես համատեղ տիրապետություն, միայն երևութական էր, որի օգնությամբ Անգլիան լուծում էր իր գաղութային տիրապետության ամրապնդման հետ կապված մի շարք կարևոր հարցեր: Կոնդոմինիումը լույս աշխարհ եկավ մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ չափազանց սրվել էին միջիմպերիալիստական հարաբերությունները նոր գաղութներ ձեռք բերելու հարցում, մասնավորապես Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Հրապարակ նետելով Եգիպտոսի հետ Սուդանը համատեղ կառավարելու մոդելը, որը նորություն էր գաղութային տիրապետության քաղաքականության մեջ՝ Անգլիան դրանով իսկ փորձում էր իրեն ապահովագրել մյուս գաղութատեր պետությունների մրցակցությունից և վնասազերծել նրանց ոտնձգություններից: Նա փորձում էր ցույց տալ, որ Սուդանն իր գաղութային տիրապետությունը չէ, այլ եգիպտապատկան երկիր, և Անգլիան միայն օգնում է նրան այդ

երկիրը կառավարելու հարցում: Եվ պետք է նշել, որ այդ «փաստարկը» գործեց, քանի որ ոչ Ֆրանսիան և ոչ էլ մեկ այլ եվրոպական պետություն այլևս հավակնություն չցուցաբերեցին Սուդանի նկատմամբ: Նրանք անգամ չփորձեցին Սուդանում ունենալ իրենց հյուպատոսությունը:

Մյուս կողմից՝ այդ մոդելը կարևոր էր նաև ներքին օգտագործման առումով: Նկատի ունենք անգլիացիների ձգտումը՝ օգտագործելով եգիպտական գործոնը՝ հասնել սուդանցիների հնազանդությանը և հպատակությանը անգլիական իշխանություններին: Անգլիացիները տվյալ դեպքում հաշվի էին առնում այն հանգամանքը, որ սուդանցիների ընդհանուր համակրանքը Եգիպտոսի կողմն էր, նրան դիտում էին որպես եղբայրական արաբական երկիր: Տպավորություն ստեղծելով, որ իրենք իբր Սուդանը կառավարում են Եգիպտոսի հետ համատեղ՝ անգլիացիները դրանով իսկ փորձում էին հասնել հակաբրիտանական պայքարի մեղմացմանը և իրենց տիրապետության ամրապնդմանը Սուդանում՝ շատ լավ հասկանալով, որ եթե իրենք իրենց տիրապետությունն իրականացնեն անսքող կերպով, առանց եգիպտական շղարշի, ապա դրությունն անհամեմատ ավելի ծանր կլինի:

Սակայն հանուն ճշմարտության պետք է նշել, որ այդ գործոնը միշտ չէ, որ աշխատում էր ի նպաստ բրիտանական գաղութարարների: Հակաբրիտանական ելույթները բացառություն չէին Սուդանում:

Վերջապես՝ առաջադրելով կառավարման կոնդոմինիումի մոդելը՝ Մեծ Բրիտանիան իրեն ազատեց սուվերենության հարցում ճշգրտություն մտցնելու հոգսից: Անգլո–եգիպտական համաձայնագրի տեքստում անգամ հիշատակություն չկար դրա մասին: Եթե նշվեր, թե սուվերենությունը Սուդանում ում է պատկանում, և ով է իրագործում այն, ապա դա կարող էր բարդություններ հարուցել միջազգային հարաբերությունների և ներքին քաղաքականության առումներով և դուռ բացել տարբեր ուժերի միջամտության առջև:

Այդուհանդերձ, Սուդանի կառավարումը կոնդոմինիումի անվան տակ Անգլիայի համար հեշտ գործ չեղավ, և նա ստիպված էր երբեմն դիմել զանազան մանևրների: 1924 թ. Մեծ Բրիտանիան, բախվելով լուրջ դժվարությունների երկրի ներսում, վերացրեց կոնդոմինիումը: Բայց 1936 թ. անգլո–եգիպտական պայմանագիրը կնքելիս կոնդոմինիումը վերականգնվեց: 1951 թ. հոկտեմբերին Եգիպտոսը միակողմանիորեն չեղյալ հայտարարեց կոնդոմինիումի վերաբերյալ համաձայնագիրը:

Վերջնականապես նա իր ուժը կորցրած համարվեց, երբ Անգլիան 1956 թ. հունվարի 1–ին ճանաչեց Սուդանի անկախությունը:

2. Գլխավոր նահանգապետ Լի Ստեկի սպանությունը և Ալլենբիի վերջնագիրը

Կոնդոմինիումն ուներ նաև մեկ այլ առանձնահատկություն: Սուդանի ճակատագիրը, հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, սերտորեն կապվեց, իսկ երբեմն նաև միահյուսվում էր Եգիպտոսի պատմության հետ: Եգիպտոսում տեղի ունեցող գործընթացները և կարևոր իրադարձությունները, այդ թվում և հակաիմպերիալիստական, ազգային–ազատագրական ելույթները, անմիջականորեն ներազդում էին Սուդանի վրա և համապատասխան արձագանք գտնում այնտեղ:

Սուդանի վրա ազդում էին նաև եգիպտական քաղաքական միտքը, ազգային գաղափարախոսությունը և ազգային–հայրենասիրական զգացմունքները, որոնք նպաստում էին քաղաքական մտքի արթնացմանը և խթանում ազգային զգացմունքների ու ազգային ինքնագիտակցության զարգացումը Սուդանում: Այդ հանգամանքն անհրաժեշտ է մշտապես նկատի ունենալ Սուդանի նորագույն պատմության, ի մասնավորին նրա կոնդոմինիումյան ժամանակաշրջանն ընդգրկող պատմությունն ուսումնասիրելիս:

1918–1921 թթ. տեղի ունեցան դժգոհության առաջին դրսևորումները և հակաբրիտանական ելույթները Սուդանի տարբեր շրջաններում, այդ թվում և հարավային մասերում: Մասնավորապես պետք է նշել ապստամբությունը Դարֆուրի մարզում: Սուդանում սկիզբ առած հակաիմպերիալիստական շարժումների վրա մեծ ազդեցություն ունեցավ 1919–1921 թթ. ապստամբությունը Եգիպտոսում: Դա առաջ բերեց սուդանցիների ոչ միայն համակրանքն ու կարեկցանքը Մեծ Բրիտանիայի տիրապետության դեմ ապստամբած եգիպտացիների հանդեպ, այլև սուդանցիների զինված ելույթները: Պաշտպանելով եգիպտացիներին՝ սուդանցիներն առաջադրեցին Նեղոսի հովտից անգլիացիների հեռացման պահանջը:

Քաղաքական այսպիսի մթնոլորտում ձևավորվեցին սուդանական քաղաքական, ազգային և հեղափոխական առաջին կազմակերպությունները: Դրանք, իհարկե, զանգվածային կազմակերպություններ չէ-

ին, քանի որ սուդանցիները դեռևս գտնվում էին զարգացման ցածր մակարդակի վրա, և լայն շրջաններին մատչելի չէին քաղաքական բարդ հասկացությունները, մարտավարությունը և պայքարի մեթոդները: Պատահական չէ, որ նրանք հաճախ հանդես էին գալիս կրոնական շղարշի և պահանջների ներքո: Իր բնույթով այդպիսին էր 1921 թ. սուդանական բանակի կապիտան Ալի Աբդ ալ–Լաթիֆի հիմնած Սուդանական միավորված ցեղերի ընկերությունը: Նա թեև հանդես էր գալիս Սուդանում անգլիական տիրապետության վերացման պահանջով, սակայն գտնում էր, որ Սուդանում պետք է ստեղծել նոր, միջնադարյան տիպի պետություն, որի գլուխ կանգնած լիներ Մուհամմադ մարգարեի ժառանգորդներից որևէ մեկը: Այդ պահանջը, հատկապես անգլիացիների Սուդանից հեռացման պահանջը, կարելի է ասել, բավականին լայն արձագանք գտավ երկրում. Դրա վկայությունն են հանդիսանում այն հակաբրիտանական ելույթները, որոնք տեղի ունեցան Խարթումում, Օմդուրմանում, Պորտ Սուդանում և այլ քաղաքներում ու գյուղական շրջաններում:

Սուդանի հակաիմպերիալիստական պայքարի ծնավորման պատմության մեջ կարևոր տեղ է գրավում 1924 թ գարնանը ստեղծված Սպիտակ դրոշի լիգա գաղտնի կազմակերպությունը, որի կազմակերպիչը եղավ դարձյալ նույն կապիտան Ալի Աբդ ալ–Լաթիֆը: Հարկ է նշել, որ այդ տարիներին բավականին ակտիվ էին սուդանցի սպաները, որոնք հանդիսանում էին զանազան ազգային–քաղաքական կազմակերպությունների ստեղծման նախաձեռնողները և կազմում նրանց հիմնական կորիզը: Դա բացատրվում է նրանց կրթություն ունենալու և ավելի զարգացած լինելու հանգամանքով: Զինվորականների հետ այդ կազմակերպությունների ստեղծման գործում նշանակալի դեր էին խաղում նաև մտավորականները, ուսանողությունը և բուրժուական խավերի որոշ ներկայացուցիչներ: Սպիտակ դրոշի լիգայի գլխավոր պահանջը անգլիական տիրապետության վերացումն էր: Սակայն, ի տարբերություն Սուդանական ցեղերի միասնության ընկերության, Սպիտակ դրոշի լիգան ձգտում էր անգլիական տիրապետությունը փոխարինել ոչ թե միջնադարյան պետության ստեղծումով՝ մարգարեի որևէ հետնորդի գլխավորությամբ, այլ միավորվել Եգիպտոսի հետ և այդ ուղիով թոթափել բրիտանական գաղութային լուծը:

Բրիտանական իշխանություններն աչալուրջ հետևում էին նման կազմակերպությունների գործունեությանը և ամենաբիրտ մեթոդներով ճնշում ինչպես հակաբրիտանական ելույթները, այնպես էլ ազգային

կազմակերպությունների գործունեությունը: Նրանք ձերբակալեցին և մահապատժի ենթարկեցին Սպիտակ դրոշի լիգայի հիմնադիր ղեկավարներ Ալի Աբդ ալ–Լաթիֆին և Աբդ ալ–Ֆադիլ ալ–Մազին, որից հետո լիգան դադարեցրեց իր գործունեությունը:

1924 թ. տեղի ունեցած ամենակարևոր իրադարձությունը, որը ցնցեց Սուդանը և Եգիպտոսը, Սուդանի գլխավոր նահանգապետ և Եգիպտոսի զորքերի սիրդար՝ գլխավոր հրամանատար, անգլիական գեներալ Լի Ստեկի դեմ 1924 թ. նոյեմբերի 19–ին Կահիրեում կատարված մահափորձն էր, որն իրականացրեց մի եգիպտացի:

Մինչ այդ Եգիպտոսի կառավարությունը, որը գլխավորում էր Վաֆդ կուսակցության առաջնորդ Սաադ Զաղլուլը, Անգլիայից պահանջել էր իր զորքերը դուրս բերել Սուդանից և Սուդանը միացնել Եգիպտոսին: Անգլիական կառավարությունը, հասկանալի է, մերժեց եգիպտական պահանջը, որի պատճառով Եգիպտոսում և Սուդանում հակաբրիտանական ելույթներ և անգլիական ուժերի հետ բախումներ եղան: Հենց այդ թոհուբոհի ժամանակ սպանվեց Լի Ստեկը:

Լի Ստեկի մահը անգլիական կառավարությունը փայլուն կերպով օգտագործեց Եգիպտոսում և Սուդանում թափ առնող ազգային–ազատագրական պայքարին ծանր հարված հասցնելու, հյուսիսաֆրիկյան արաբական այդ երկու երկրներում իր դիրքերն ավելի ամրապնդելու և մի շարք այլ ծրագրերի իրականացման համար:

Լի Ստեկի մահվանը հետևեց անգլիական կառավարության նոտան Եգիպտոսին, որը 1924 թ. նոյեմբերի 21–ին Եգիպտոսի վարչապետ Սաադ Զաղլուլին հանձնեց Եգիպտոսում անգլիական գլխավոր կոմիսար Ալլենբիին: Անգլիական նոտան վերջնագրի բնույթ ուներ:

Անգլիական կառավարությունը Լի Ստեկի սպանության ամբողջ պատասխանատվությունը դրեց եգիպտական կառավարության վրա և պահանջեց նրանից ներողություն խնդրել, խստորեն դատապարտել մեղավորներին, արգելել և վճռականորեն ճնշել ամեն տեսակի ժողովրդական քաղաքական ցույցերը, անգլիական կառավարությանը փոխհատուցել 500 հազ. ֆունտ ստեռլինգ, կատարել Սուդանի հարցի վերաբերյալ մի շարք պահանջներ և այլն:

Անգլիական կողմը պահանջում էր եգիպտական կառավարությունից 24 ժամվա ընթացքում Սուդանից դուրս բերել եգիպտական բոլոր սպաներին և եգիպտական բանակի զորամասերը: Եգիպտոսի կառավարությունը մերժեց իրեն ներկայացված մեղադրանքները, բայց ընդու-

նեց բոլոր պահանջները, բացի այն պահանջից, որը վերաբերում էր Սուդանին: Հոկտեմբերի 23–ին Ալլենբին տեղյակ պահեց անգլիական կառավարությանը, որ Սուդանի վերաբերյալ պահանջները կիրականացվեն Սուդանում անգլիական իշխանությունների կողմից՝ հակառակ Եգիպտոսի կամքի:

Ստեղծված պայմաններում Սաադ Զաղլուլի կառավարությունը հրաժարական տվեց, և կազմվեց նոր կառավարություն, որը գլխավորեց անգլիամետ քաղաքական գործիչ Ահմադ Զավարը: 1924 թ. նոյեմբերի 29–ին նա պաշտոնապես հայտարարեց, որ եգիպտական կառավարությունն ընդունում է նոյեմբերի 19–ի անգլիական ուլտիմատումի բոլոր պայմանները: Այդուհանդերձ, եգիպտական զորքերի դուրսբերումը Սուդանից ձգձգվում էր: Նրանք դուրս բերվեցին 1925 թ. անգլիական ուղղակի սպառնալիքի տակ: Դա հուզումներ առաջացրեց եգիպտական զորամասերում և ընդհարումներ անգլիացիների հետ: Սուդանցիները, հատկապես հյուսիսային և արևելյան շրջաններում, բացահայտորեն պաշտպանում էին Եգիպտոսին՝ նրան համարելով Սուդանի դաշնակից: Սուդանական զինվորներն իրենց հրամանատարների գլխավորությամբ անգամ փորձեցին միջամտել՝ ի պաշտպանություն եգիպտական զորքերի, և թույլ չտալ նրանց դուրս վռնդումը Սուդանից: Սուդանական մի գումարտակ ապստամբեց և զինված ընդհարումներ ունեցավ անգլիացիների հետ: Անգլիական զինված ուժերը կարողացան կոտրել նրանց դիմադրությունը և իրագործել եգիպտական զորքերի հեռացումը Սուդանից:

Եգիպտական գումարտակի հետ միասին Սուդանից հեռացան եգիպտական քաղաքացիական բոլոր պաշտոնյաները: Թեև նրանց թիվը, ինչպես նշվել է, այնքան էլ մեծ չէր, բայց նրանց հեռացումը նշանակում էր ընդհանրապես վերացնել եգիպտացիների ներկայությունը Սուդանում:

Այսպիսով՝ Մեծ Բրիտանիան փաստորեն միակողմանիորեն վերացրեց և չեղյալ հայտարարեց 1899 թ. անգլո–եգիպտական համաձայնագիրը կոնդոմինիումի վերաբերյալ. և Սուդանում հաստատվեց բրիտանական անբաժան կառավարման համակարգ. Դասական գաղութային կառավարման քղամիդը պատռվեց, և բրիտանական կառավարման համակարգը հանդես եկավ իր ողջ մերկությամբ:

3. Անցում ուղղակի կառավարումից անուղղակի կառավարման

Անգլիայի կողմից կոնդոմինիումի վերացումը միակ կարևոր իրադարձությունը չէր, որ տեղի ունեցավ 1924 թ.: Դրան հետևեց Սուդանում բրիտանական կառավարման համակարգի փոփոխությունը: 1899 թվականից ի վեր, երբ հաստատվեց կոնդոմինիումը, ընդհուպ մինչև 1924 թ.՝ Անգլիայի կողմից կոնդոմինիումի վերացումը, Մեծ Բրիտանիան Սուդանում հաստատել էր կառավարման մի համակարգ, որը ստացել էր «Ուղղակի կառավարում» անվանումը: Դրա էությունը մենք բացատրել ենք կոնդոմինիումին նվիրված բաժնում:

1924 թ. «Ուղղակի կառավարումը» փոխարինվեց «Անուղղակի կառավարումով» («Indirect Rule»), որը հաճախ անվանվում է նաև «Տեղական կառավարում» («Native Administration»): Այն հիմնված էր շեյխերի և ցեղապետների ինստիտուտը վերականգնելու և նրանց բավականին լայն լիազորություններով օժտելու վրա: Հենց այդ ինստիտուտը եկավ փոխարինելու ուղղակի կառավարման համակարգը և 1924–1936 թթ. դարձավ կառավարման գլխավոր ու առանցքային սկզբունքը Սուդանում: Այլ կերպ ասած՝ վերականգնվեց թրայբլիզմը, որին ծանր հարված էր հասցրել 1880–ական թվականներին մահդիական պետությունը:

Թրայբլիզմի վերականգնումով անգլիական իշխանությունները երկու նպատակ էին հետապնդում: Առաջին՝ իրականացնել Սուդանի վարչական ապակենտրոնացումը, և երկրորդ՝ թրայբլիզմը հաստատել որպես այլընտրանք բյուրոկրատական կառավարմանը: Այդ վերջին պարագան համարվում էր ամենագլխավորը կառավարման անուղղակի համակարգին անցնելու պատճառների մեջ: Դա բացատրվում է նրանով, որ բյուրոկրատական կառավարման պարագայում պահանջվում էր, ինչպես ենթադրում էին անգլիացիները, ավելի ու ավելի շատ սուդանցի կրթություն ունեցող աշխատողների ներգրավում կառավարման ոլորտում: Կրթված սուդանցիները քաղաքականապես ավելի գրագետ ու հասունացած էին, քան թրայբի՝ ցեղերի առաջնորդները, այդ պատճառով էլ նրանք ավելի ակտիվ էին, ավելի անհանդուրժողական բրիտանական տիրապետության հանդեպ և ավելի հեշտությամբ էին ներգրավվում ազգային–ազատագրական պայքարի մեջ, անգամ դառնում նրա ղեկավարները: Նրանց հսկողության տակ պահելը կամ իրենց կամքը թելադրելը ավելի դժվար էր անգլիական իշխանությունների համար, քան թե գործ ունենալը հիմնականում անգրագետ շեյխերի և ցեղային

առաջնորդների հետ: Հետևողականորեն հետամուտ լինելով իրենց այդ նոր քաղաքականությանը՝ բրիտանական իշխանությունները փակեցին վերապատրաստման և կրթական հաստատությունները, այդ թվում և ռազմական քոլեջները: Իրենց գործունեությունը դադարեցրին նաև սուդանցի ադմինիստրատորների վերապատրաստման դասընթացները: Պահպանվեց միայն 1902 թ. հիմնված Գորդոնի քոլեջը, որը պատրաստում էր ցածրաստիճան կադրեր, որտեղ, սակայն, մտցվեց շատ խիստ զորանոցային ռեժիմ: Այդ բոլորի փոխարեն բրիտանական իշխանությունները ամեն կերպ խրախուսում էին թրայբլիզմը և նպաստում նրա ամրապնդմանը Սուդանում: Նրանք պաշտպանում էին ցեղերին և ցեղային միություններին, ցեղապետներն իրավունք ստացան հարկեր հավաքելու և դատական իշխանություն իրագործելու ցեղերի անդամների նկատմամբ, անգամ կատարելու ոստիկանական ֆունկցիաներ: Նրանցից շատերը համապատասխան վարձատրություն էին ստանում բրիտանական իշխանություններից:

Այդ բոլորի հետևանքով Սուդանի հյուսիսի ցեղերը, նրանց շեյխերը և առաջնորդները հնազանդորեն ենթարկվում էին բրիտանական իշխանություններին և խոնարհաբար կատարում նրանց հրամաններն ու կարգադրությունները:

Անուղղակի կառավարման համակարգը նախկինի պես գտնվում էր անգլիացիների ուժեղ վերահսկողության տակ, և Սուդանի գլխավոր կոմիսարը նախկինի պես կատարում էր Սուդանի բարձրագույն կառավարողի իր ֆունկցիաները: Նրա լայն լիազորությունները, որոնք հաստատվել էին 1899 թ. համաձայնագրով, մազաչափ անգամ չկրճատվեցին: Այդ առումով անուղղակի կառավարումը իրականում շարունակում էր մնալ բրիտանական ուղղակի կառավարում:

Այդ համակարգը մտցնելով՝ բրիտանական իշխանությունները ցանկանում էին իրենց համար Սուդանում ստեղծել հուսալի սոցիալական հենարան՝ կազմված Սուդանի ֆեոդալներից, շեյխերից և ցեղապետներից.

Պակաս կարևոր չէր այդ նորամուծության քաղաքական ասպեկտը: Կյանքի կոչելով թրայբլիզմը, իրականացնելով վարչական ապակենտրոնացում և տեղերում ցեղապետներին օժտելով լայն լիազորություններով, զանազան արտոնություններով այդ խավն իր կողմը գրավելով՝ բրիտանական իշխանությունների գլխավոր քաղաքական նպատակը հուսալի պատվար ստեղծելն էր ընդդեմ Սուդանում թափ առնող

ազգային–ազատագրական, հակաբրիտանական և հակագաղութային պայքարի:

Իսկ ինչ վերաբերում է Սուդանի հարավին, ապա դրությունն այստեղ մի փոքր այլ էր: Նախ նշենք, որ պատմագրության մեջ ընդունված է այն տեսակետը, որ այդ շրջանում Սուդանն ըստ էության երկու պետություն էր միևնույն Սուդանի շրջանակներում: Այստեղ, անշուշտ, կա չափազանցություն: Բայց, այդուհանդերձ, իրողություն է, որ Հարավային Սուդանն իր էթնիկական կազմով, լեզուների օգտագործումով, կրոնական հավատալիքներով և այլ հատկանիշներով՝ զգալիորեն տարբերվում էր հյուսիսայինից:

Երբ Հյուսիսային Սուդանում մտցվեց անուղղակի կառավարման համակարգ, այն չտարածվեց հարավի վրա: Այստեղ անգլիացիները սկսեցին կիրառել այսպես կոչված Հարավային քաղաքականություն («Southern Policy»): Մինչ այդ նրանք այստեղ կիրառում էին օրենքը և կարգը պահպանելու քաղաքականություն, օգնում քրիստոնեական զանազան միսիոներական ընկերություններին տեղացիների շրջանում քրիստոնություն տարածելու և այդ ուղիով, ինչպես նշված է բրիտանական պաշտոնական Տարեկան զեկուցագրում, հարավի բնակիչներին՝ նիլոտներին և այլ աֆրիկացիների՝ «այդ վայրենիներին, սովորեցնել առողջ բանականության տարրերը, լավ վարք և հնազանդություն իշխանություններին»:

1924 թ. հետո անցնելով Հարավային քաղաքականության կիրառմանը՝ բրիտանական իշխանությունները երկու գլխավոր նպատակ էին հետապնդում: Առաջին՝ կանխել ազգային ոգու և զգացմունքների տարածմանը, որը Եգիպտոսից Հյուսիսային Սուդանի վրայով թափանցում էր Հարավային Սուդան: Երկրորդ՝ անջատել Սուդանի հարավային երեք նահանգները և դրանք բրիտանական իշխանությունների օգնությամբ աստիճանաբար ծուլելով կամ միավորելով հարևան բրիտանական աֆրիկյան տիրույթների հետ՝ այդ ուղիով հասնել Արևելյան Աֆրիկյան Ֆեդերացիայի ստեղծմանը՝ բրիտանական իշխանության կառավարման ներքո:

Այդ քաղաքականության շրջանակներում խնդիր էր դրվում այդ շրջաններից արտաքսել բոլոր եգիպտացիներին, հյուսիսային սուդանցիներին և արևմտյան աֆրիկացիներին և թույլ չտալ նրանց մուտքը և բնակության հաստատումն այնտեղ: Խորհուրդ չէր տրվում հարավցիներին այցելել Հյուսիսային Սուդան, առավել ևս այնտեղ աշխատանքի անցնել: Հարավային քաղաքականության պահանջները երբեմն հաս-

նում էին անհեթեթության: Բրիտանական իշխանությունները խորհուրդ էին տալիս և զանազան վարչական մեթոդների կիրառումով փորձում հասնել այն բանին, որ բոլոր այն հարավային սուդանցիները, որոնք դավանում էին իսլամ, ունեին արաբական անուններ, խոսում էին արաբերեն և կրում արաբական հագուստներ, հրաժարվեն այդ բոլորից: Մուսուլմաններին առաջարկում էին ընդունել քրիստոնեություն, օգտագործել անգլերեն լեզուն, անգլիական և տեղական անուններ և հագուստ: Հազվադեպ չէին այն դեպքերը, երբ հարավային սուդանցիները բրիտանական իշխանությունների ճնշման տակ հրապարակայնորեն այրում էին իրենց արաբական հագուստը: Բրիտանական իշխանություններն ամեն ինչ անում էին, որ վերացվեն իսլամական և արաբական մշակույթի հետքերը հարավում, և խզվեն կապերը Սուդանի հարավային և հյուսիսային նահանգների միջև:

Ահա այսպիսին էր բրիտանական անուղղակի կառավարման և հարավային քաղաքականության էությունը, որը ծառայում էր Սուդանում բրիտանական իշխանության ամրապնդմանը և այդ երկրի զարգացումը բրիտանական շահերին համապատասխան հունով ուղղորդելու խնդիրներին:

Մեծ Բրիտանիան Սուդանում հետապնդում էր նաև որոշակի տնտեսական նպատակներ: Սուդանը տնտեսապես հետամնաց երկիր էր, նույնիսկ համեմատած հարևան երկրների հետ: Սակայն Մեծ Բրիտանիան իր առջև խնդիր չէր դնում նպաստել Սուդանի տնտեսական զարգացմանը և առաջընթացին: Նրա նպատակն էր Սուդանը վերածել բամբակի մշակման մոնոկուլտուրայի երկրի, և այդ նպատակով լույս աշխարհ եկավ այսպես կոչված «Գեզիրայի ծրագիրը»: Գեզիրան գտնվում է Սուդանի համարյա կենտրոնական շրջանում՝ Խարթումից հարավ, Սպիտակ և Կապույտ Նեղոսի միջև: Այդ շրջանը բրիտանական կառավարությունը ցանկանում էր վերածել բամբակի մշակման ընդարձակ կենտրոնի այն հաշվով, որ նա դառնար հումքային հուսալի բազա անգլիական տեքստիլ արդյունաբերության համար և վերացներ Անգլիայի կախվածությունն ամերիկյան բամբակի ներմուծումից: Եվ այդ ուղղությամբ նա հասավ զգալի արդյունքների: Նախ ընդարձակվեցին բամբակի ցանքատարածությունները: Եթե 1924 թ. բամբակի ցանքատարածությունները կազմում էին 300 հազ. ֆեդան, ապա 1970 թ. նրանք արդեն կազմում էին 1 մլն 500 հազար: Ըստ այդմ՝ մեծացան դրանից ստացվող եկամուտները: Բամբակի մշակումից և վաճառքից պետության հասույթ-

ները 1936 թ. կազմել են 4 մլն ֆունտ ստեռլինգ, իսկ քսան տարի անց՝ 1956 թ.՝ 46 մլն ֆունտ ստեռլինգ: Բամբակագործությունը Սուդանի տնտեսության զարգացման համար որոշ իմաստով լոկոմոտիվի դերակատարում ունեցավ, քանի որ անհրաժեշտաբար նպաստեց դրա հետ կապված այլ ճյուղերի զարգացմանը, ինչպես զանազան ենթակառույցների՝ ինֆրաստրուկտուրայի, հատկապես ճանապարհների, երկաթուղիների, կապի, օժանդակ տնտեսությունների, շինարարության, ոռոգման ցանցի, ամբարտակների, ջրամբարների և այլն:

Բայց, այդուհանդերձ, դա չբերեց Սուդանի տնտեսության ընդհանուր զարգացմանը և վերելքին, որովհետև այդ շահույթների առյուծի բաժինը գնում էր անգլիական զանազան ընկերությունների և մեծահարուստների գրպանը: Իսկ Սուդանը շարունակում էր մնալ տնտեսապես հետամնաց և աղքատ երկիր:

4. Կոնդոմինիումի վերականգնումը: Անկախության համար պայքարի ավարտական փուլը և Սուդանի անկախության հռչակումը (1936–1956 թթ.)

1936 թ. օգոստոսի 28–ին Անգլիան և Եգիպտոսը ստորագրեցին դաշինքի վերաբերյալ պայմանագիր, որն իր անդրադարձն ունեցավ նաև Սուդանի և նրա կարգավիճակի վրա. Անգլիան այդ պայմանագրով որոշ զիջումներ կատարեց Եգիպտոսին, այդ թվում նաև Սուդանի հարցում, որի վերաբերյալ պայմանագիրը պարունակում էր առանձին հոդված: Պայմանագրի համաձայն՝ **վերականգնվեց Սուդանի վերաբերյալ 1899 թ. անգլո–եգիպտական կոնվենցիան, որը նշանակում էր Սուդանում անգլո–եգիպտական կոնդոմինիումի վերականգնում:** Այդ կարևոր հարցում զիջում կատարելով Անգլիան ցանկանում էր սիրաշահել ինչպես Եգիպտոսին, այնպես էլ Սուդանին՝ հաշվի առնելով այդ երկու երկրներում թափ առնող հակաբրիտանական շարժումները և միջազգային նոր իրադրությունը՝ կապված ֆաշիստական Գերմանիայի և Իտալիայի քաղաքական նկրտումների և նոր պատերազմի մոտալուտ վտանգի հետ:

Համատիրության վերականգնման հետ վերահաստատվեց Սուդանում որոշ քանակի ռազմական կոնտինգենտ ունենալու Եգիպտոսի իրավունքը: Այդ բոլորով հանդերձ որևէ փոփոխություն տեղի չունեցավ Սուդանի գլխավոր նահանգապետի լիազորությունների և իրավունքնե-

րի հարցում: Նա շարունակում էր մնալ Սուդանի անսահմանափակ կառավարողը, և այդ բարձրագույն պաշտոնը նախկինի պես զբաղեցնում էին անգլիացիները:

1936 թ. պայմանագիրը Սուդանի վերաբերյալ պարունակում էր նս մեկ նկատառում: Նրանում արձանագրված էր Սուդանի կարգավիճակի վերաբերյալ նոր պայմանագիր կնքելու հնարավորությունը: Թեև գործը դրան չհասավ, բայց այդ կետի առկայությունն ինքնին խոսում էր այն մասին, որ Մեծ Բրիտանիան գտնվում էր այնպիսի, կարելի է ասել, ծանր վիճակում, որ հարկ եղած դեպքում պատրաստ էր դիմել նոր զիջումների մի այնպիսի կարևոր հարցում, ինչպիսին Սուդանի կարգավիճակի հարցն էր:

1930–ական թվականների վերջերին Սուդանում տեղի ունեցած ամենակարևոր իրադարձություններից մեկը Սուդանի Շրջանավարտների կոնգրեսի ստեղծումն էր, որի կազմակերպչական ձևավորումն ավարտվեց 1936–1938 թթ.: Նրանում սկզբնական շրջանում ընդգրկված էին բոլոր նրանք, ովքեր տարրական, միջնակարգ և բարձրագույն դպրոցների շրջանավարտներ էին: Հետագայում նրա դռները բացվեցին ընդհանրապես բոլոր նրանց առջև, ովքեր ինչ–որ չափով գրագետ և տառաճանաչ էին: Կոնգրեսի շարքերը համալրեցին նաև առևտրականները, բանվորները, Սուդանի համատիրության կառավարման վարչության սուդանցի պաշտոնյաները, գրողներ և ազատ պրոֆեսիայի այլ գործիչներ: Շրջանավարտների կոնգրեսը 1938 թ. Օմդուրմանում կայացած համաժողովում ընդունած ծրագրում հիմնական շեշտը դնում էր սուդանցիների լուսավորության, կրթական մակարդակի բարձրացման, նոր դպրոցների կառուցման վրա՝ ընդգծելով նաև սուդանցիների նյութական բարեկեցության բարձրացման անհրաժեշտությունը: Հետագայում, ինչպես ցույց կտրվի, նրա գործունեության մեջ առաջնությունը տրվեց քաղաքական հարցերին և Սուդանի անկախության խնդրին:

Սուդանը արաբական և աֆրիկյան մի շարք երկրների հետ միասին ընդգրկվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ջրապտույտի մեջ: Նա օգտագործվեց Մեծ Բրիտանիայի և նրա դաշնակիցների կողմից որպես հենարան Իտալիայի և Գերմանիայի դեմ մղվող պատերազմական գործողություններում: Այստեղ կառուցվեցին զենքի արտադրության և վերանորոգման արհեստանոցներ, պատերազմի համար անհրաժեշտ հումքի վերամշակման գործարաններ, ինչպես նաև ռազմական օդանավակայաններ: Սուդանի մասնակցությունը պատերազմին իր դրսևորումն

ունեցավ նաև այն բանում, որ տասնյակ հազարավոր սուդանցիներ զորակոչվեցին բանակ և զենքը ձեռքներին մասնակցեցին պատերազմական գործողություններին տարբեր ռազմաճակատներում:

Ֆաշիստական Իտալիան 1940 թ. հուլիսից հարձակողական գործողություններ սկսեց Աֆրիկայում և կարողացավ գրավել անգլիական Սոմալին և Քենիայի մի մասի հետ նաև Սուդանի տարածքի մի մասը: Սակայն 1941 թ. հունվարին անգլիական, հնդկական և սուդանական զորքերն անցան հակահարձակման, և իտալական զորքերը պարտություն կրեցին ու անձնատուր եղան: Դրանից հետո Սուդանին այլևս ռազմական որևէ վտանգ չէր սպառնում: Կարելի է ասել, որ պատերազմի ժամանակ Սուդանն ունեցավ իր թեկուզ և համեստ ներդրումն անգլո–ամերիկյան զորքերի հաղթանակի մեջ:

Պատերազմի տարիներին իր գործունեությունն ակտիվացրեց Շրջանավարտների կոնգրեսը: 1942 թ. նա բրիտանական իշխանություններին՝ ի դեմս գլխավոր նահանգապետի, ներկայացրեց մի կարևոր փաստաթուղթ, որը կոչվում էր Հուշագիր: Նրանում սոցիալական զանազան հարցերի հետ միասին առաջադրվեցին Սուդանի կառավարմանը սուդանցիների մասնակցությունը մեծացնելու և պատերազմի ավարտից անմիջապես հետո Սուդանին ինքնորոշման իրավունք տրամադրելու պահանջները: Գլխավոր նահանգապետի գրասենյակը հրաժարվեց ընդունել այդ Հուշագիրը: Չնայած դրան՝ այդ փաստաթղթի բովանդակությունը հայտնի դարձավ սուդանցիներին և արժանացավ նրանց ամենալայն պաշտպանությանը: Մերժելով Շրջանավարտների կոնգրեսին վերոնշյալ պահանջների բավարարման հարցում՝ գլխավոր նահանգապետը, հաշվի առնելով ստեղծված լարված իրադրությունը, դիմեց որոշ զիջումների: Նա սկսեց Տեղական կառավարումը կամ վարչությունն աստիճանաբար վերածել տեղական կառավարման արդիական համակարգի: Իսկ ինչ վերաբերում է Կենտրոնական կառավարման վարչությանը, ապա այստեղ 1943 թ. ստեղծվեց Խորհրդատվական խորհուրդ («Advisory Council»), որը գործում էր միայն Հյուսիսային Սուդանում: Նա չուներ որևէ լիազորություններ և գլխավոր նահանգապետին կից խորհրդատվական գործառույթներ էր իրականացնում, որոնք պարտադիր չէին նրա համար: Իսկ 1948 թ. ստեղծվեց Օրենսդիր ասամբլեա, որը նույնպես զուրկ էր որևէ իրական իշխանությունից:

Շրջանավարտների կոնգրեսը որոշեց չմասնակցել Խորհրդատվական խորհրդի աշխատանքներին, բայց դա չօգնեց նրան խուսափե-

լու պառակտումից: Նրանում առաջացան տարածայնություններ անկախության հասնելու սկզբունքների, ուղիների ու մեթոդների վերաբերյալ, և արդյունքում 1945 թ. ձևավորվեցին երկու կուսակցություններ՝ Հիզբ ալ–ումմա՝ Ազգի կուսակցություն, և Հիզբ ալ–աշիկա՝ Հարազատ եղբայրների կուսակցություն:

Հիզբ ալ–ումման դեմ էր Սուդանի նկատմամբ եգիպտական հավակնություններին և գտնում էր, որ Սուդանի անկախությանը կարելի է ավելի հեշտ հասնել՝ համագործակցելով բրիտանական իշխանությունների հետ: Նա միաժամանակ գտնում էր, որ Շրջանավարտների կոնգրեսը պետք է մասնակցի Խորհրդատվական խորհրդին և Օրենսդիր ասամբլեային: Այդ խմբավորման գլխավոր լոզունգը դարձավ «Սուդանը սուդանցիներին»: Դրանում դժվար չէ նկատել նաև նրա հակաեգիպտական ուղղվածությունը:

Մյուս կուսակցությունը՝ Հիզբ ալ–աշիկան և նրա շուրջը ձևավորված խմբավորումը, կանգնած էր տրամագծորեն հակառակ դիրքերի վրա: Նա չէր վստահում բրիտանական իշխանություններին և գտնում էր, որ Սուդանի անկախության հասնելու լավագույն ուղին համագործակցությունն է Եգիպտոսի հետ: Նա որպես փաստարկ օգտագործում էր այն հանգամանքը, որ Եգիպտոսը արաբախոս և մուսուլմանական հարևան երկիր է և բրիտանական իմպերիալիզմի զոհն է, ինչպես և Սուդանը: Ելնելով այդ նկատառումներից՝ Հիզբ ալ–Աշիկան առաջ քաշեց «Նեղոսի հովտի միասնության» լոզունգը, որը նշանակում էր Եգիպտոսի և Սուդանի միասնություն: Ավելացնենք, որ այդ կուսակցությունը կտրուկ դեմ էր Խորհրդատվական խորհրդին և Օրենսդիր ասամբլեային մասնակցելուն:

Երկրում սկսվեցին հուզումներ, ցույցեր և գործադուլներ: Գլխավոր նահանգապետի 1946 թ. որոշումով Սուդանում արգելվեցին բոլոր նման ելույթները: Գլխավոր նահանգապետը հայտարարեց, որ սուդանցիները դեռևս պատրաստ չեն քաղաքական ինքնուրույնության, իսկ անկախությանը նրանք պատրաստ կլինեն առնվազն քսան տարի հետո: Բայց անգլիական իշխանությունները միաժամանակ լավ էին հասկանում, որ ոչինչ չձեռնարկել և ամեն ինչ նույնությամբ թողնել, նշանակում էր խաղալ կրակի հետ:

Անգլիան, կորցնելով բոլոր հույսերը համաձայնության գալ Եգիպտոսի հետ և այդ ուղիով լուծել Սուդանի թնջուկը, 1948 թ. միակողմանիորեն հաստատեց Սուդանի սահմանադրությունը, որը նախատե-

սում էր ստեղծել Օրենսդիր և Գործադիր խորհուրդներ: Անգլիան իրավունք չուներ նման քայլի դիմել առանց կոնդոմինիումի մյուս անդամի՝ Եգիպտոսի գիտության և համաձայնության: Սուդանցիները եգիպտացիների հետ միասին իրենց դժգոհությունը հայտնեցին Անգլիայի այդ քայլից, որովհետև նրանք պահանջում էին անգլիական զորքերի դուրսբերում Նեղոսի հովտից, այսինքն՝ Եգիպտոսից և Սուդանից. Նրանք բոյկոտեցին ընտրությունները և իրենց բողոքն արտահայտեցին ցույցերի ու գործադուլների միջոցով: Անգլիական իշխանությունները դիմեցին բռնությունների և ձերբակալեցին Հիզբ ալ–աշիկա կուսակցության ղեկավար, Խարթումի համալսարանի մաթեմատիկայի պրոֆեսոր Իսմաիլ ալ–Ազհարին:

Բայց լարվածությունը պահպանվում էր, և հակաբրիտանական ելույթները Եգիպտոսում ու Սուդանում շարունակվում էին: Ստեղծված պայմաններում եգիպտական կառավարությունը դիմեց վճռական քայլի: Եգիպտական պառլամենտը 1951 թ. հոկտեմբերի 15–ին չեղյալ հայտարարեց 1936 թ. անգլո–եգիպտական պայմանագիրը և 1899 թ. անգլո–եգիպտական կոնվենցիան, որով Սուդանում հաստավել էր անգլո–եգիպտական կոնդոմինիում: Այսպիսով՝ Եգիպտոսը միակողմանիորեն հրաժարվեց Սուդանի վրա համատիրությունից: Դրան հաջորդեց հետևյալ ցնցող քայլը: Եգիպտական պառլամենտը 1951 թ. հոկտեմբերի 15–ին հայտարարեց Սուդանը միացված Եգիպտոսին և Եգիպտոսի թագավոր Ֆարուկ I–ին հռչակեց Եգիպտոսի և Սուդանի թագավոր.

Անգլիական կառավարությունը հայտարարեց, որ ինքը չի ճանաչում եգիպտական պառլամենտի որոշումները, և ոչ միայն իր զորքերը դուրս չբերեց Եգիպտոսից ու Սուդանից, այլև լրացուցիչ զորքեր կենտրոնացրեց Նեղոսի հովտում:

Իրադրությունը կրկին փոխվեց 1952 թ. հուլիսի 23–ին Եգիպտոսում տեղի ունեցած հեղափոխությունից հետո: Ֆարուկ I–ը գահընկեց արվեց, և երկրում հաստատվեց հեղափոխական ռեժիմ, որը վճռականորեն էր տրամադրված բրիտանական կապանքներից վերջնականապես ազատվելու հարցում: Անգլիան հարկադրված էր հաշվի նստել այդ նոր իրողության հետ և աստիճանաբար կատարել Գամալ Աբդել Նասերի և եգիպտական նոր ղեկավարության բոլոր պահանջները, այդ թվում և Սուդանի հարցում:

Սուդանցիները նույնպես խանդավառությամբ ընդունեցին հեղափոխության հաղթանակը Եգիպտոսում՝ հավատացած լինելով, որ դա

կհանգեցնի նաև Սուդանի հարցի լուծմանը: Նրանց նման հույս ներշնչում էր նաև այն հանգամանքը, որ հեղափոխության ղեկավարներից Գամալ Աբդել Նասերը և Սալահ Սալիմը, ինչպես նաև գեներալ Նագիբը, որը որոշ ժամանակ զբաղեցրեց Եգիպտոսի պրեզիդենտի պաշտոնը, իրենց զինվորական ծառայության մի մասն անցկացրել էին Սուդանում և շատ լավ ծանոթ էին սուդանցիներին, նրանց պահանջներին ու զգացմունքներին: Եվ, իրոք, Եգիպտոսի հեղափոխական ղեկավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ ինքը ցանկանում է Սուդանի ժողովրդին շնորհել ինքնորոշման իրավունք, և նա պետք է որոշի՝ լինել անկախ պետություն, թե՞ միավորվել Եգիպտոսի հետ:

Եգիպտական կառավարության դեկլարացիան հիմք հանդիսացավ 1953 թ. անգլո–եգիպտական բանակցությունները վերսկսելու համար, որի արդյունքում 1953 թ. փետրվարի 12–ին Կահիրեում կնքվեց անգլո–եգիպտական համաձայնագիր: Նա նախատեսում էր Սուդանի ոստիկանության և քաղաքացիական ծառայությունների սուդանիզացիա, անգլիական և եգիպտական զորքերի դուրսբերում Սուդանից և Սուդանի նախապատրաստում ինքնորոշման համար՝ երեք տարվա ընթացքում: Այդ ժամանակահատվածում պետք է ընտրվեր ազգային պառլամենտ, և ստեղծվեր կառավարություն: Երկուսն էլ լինելու էին անցումային մարմիններ: Անցումային երեքամյա ժամանակաշրջանում բարձրագույն իշխանությունը շարունակելու էր մնալ գլխավոր նահանգապետի ձեռքում:

1953 թ. նոյեմբերին Սուդանում տեղի ունեցան պառլամենտական ընտրություններ, որոնց ժամանակ հաղթանակ տարավ Ազգային յունիոնիստական կուսակցությունը: Նա ստեղծվել էր 1952 թ. դեկտեմբերի 13–ին Հիզբ ալ–Աշիկայի, Շրջանավարտների կոնգրեսի և Նեղոսի հովտի միասնության կուսակցության միավորման հիմքի վրա: Նրա առաջնորդ Իսմաիլ ալ–Ազհարին 1954 թ. հունվարի 9–ին կազմեց Սուդանի առաջին ազգային կառավարությունը:

Ալ–Ազհարի կառավարությունը եռանդուն կերպով ձեռնամուխ եղավ Սուդանը անկախ պետություն հռչակելու իր պատմական առաքելությանը: Նա արագ թափով կիրառեց պետական ապարատի սուդանիզացիան, որի արդյունքում պաշտոնյաների մեծ մասը հավաքագրվեց սուդանցիներից: Նա ինքնուրույնաբար, շրջանցելով գլխավոր նահանգապետին, սկսեց քայլեր կատարել արտաքին քաղաքականության բնագավառում:

Անկախության ճանապարհին կարևոր իրադարձություն հանդիսացավ պառլամենտի 1955 թ. արտակարգ նստաշրջանը, որը միաձայն որոշում ընդունեց կոնդոմինիումի դադարեցման և օտարերկրյա բոլոր զորքերը Սուդանից դուրս բերելու մասին: Պառլամենտն ընդունեց հատուկ բանածն, որով պահանջում էր Սուդանին անհապաղ անկախություն տալ: Ի կատարումն պառլամենտի որոշման՝ 1955 թ. նոյեմբերին եգիպտական երկու գումարտակը և անգլիական բոլոր զորքերը հեռացան Սուդանից: Սուդանը քայլ առ քայլ մոտենում էր իր անկախությանը:

1955 թ. դեկտեմբերին պառլամենտն ընդունեց որոշում առ այն, որ Սուդանը պետք է լինի ինքնիշխան անկախ հանրապետություն:

Սուդանի անկախ պետություն հռչակելու պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ 1956 թ. հունվարի 1–ին: Այդ օրը քաղաքական քարտեզի վրա հայտնվեց նս մեկ անկախ և ինքնիշխան պետություն՝ Սուդանի Հանրապետությունը:

Դա շրջադարձային պահ էր Սուդանի պատմության մեջ.

II. ՍՈՒԴԱՆԻ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Կառավարման նոր համակարգի ձևավորման հարցն անխուսափելիորեն կանգնում է անկախություն նվաճած բոլոր երկրների առջև: Այդ առումով բացառություն չէր նաև Սուդանի նորանկախ հանրապետությունը: Սակայն, ի տարբերություն մի շարք երկրների, որոնք նախքան անկախության հռչակումն արդեն ունենում էին բավականին հստակ մշակված տեսակետ այդ առանցքային հարցի վերաբերյալ և անգամ արդեն որոշ գործնական քայլեր էին կատարած լինում այդ ուղղությամբ, Սուդանում այլ էր իրավիճակը: Այստեղ չկար հստակ պատկերացում և միասնական տեսակետ Սուդանի ապագա կառավարման համակարգի վերաբերյալ, որը պետք է փոխարիներ կոնդոմինիումից ժառանգություն ստացած համակարգը, որի հիմնասյունը բրիտանական գլխավոր նահանգապետն էր իր անսահմանափակ լիազորություններով: Այդ հարցը հնարավոր չէր մեկ օրում լուծել և պահանջում էր որոշ ժամանակ: Սուդանում դրա համար պահանջվեց մոտ 20–25 տարի, որի ընթացքում անցումային մի շրջանը փոխարինում էր մյուսին:

1955 թ դեկտեմբերին, երբ հաշված օրեր էին մնացել մինչև Սուդանի անկախության պաշտոնական հռչակումը, Սուդանի պառլամենտն ընդունեց ժամանակավոր սահմանադրություն, ըստ որի Սուդանը համարվում էր անկախ և ինքնիշխան հանրապետություն. Նա պետության ղեկավարի պարտականությունները դրեց իր կողմից ընտրված Գլխավոր հանձնաժողովի վրա, և նախագահ նշանակվեց Իսմաիլ Ազհարին: Սակայն հինգ հոգուց բաղկացած այդ հանձնաժողովի իրավունքները և լիազորությունները հստակորեն չէին սահմանված, ինչը շատ շուտով բարդություններ ստեղծեց երկրի կյանքում: Սահմանադրությամբ հինգի հանձնաժողովն էր նշանակում երկրի վարչապետին և կազմում կառավարություն պառլամենտի անդամներից:

Սուդանում չկար միասնական տեսակետ Սուդանի պետական կառուցվածքի վերաբերյալ: Տարակարծությունները համակել և բաժանել էին ինչպես հասարակությանը, այնպես էլ կառավարությանը: Դրանք ավելի ցայտուն դրսևորվեցին, երբ 1956 թ. հուլիսին Սուդանում տեղի ունեցավ իշխանափոխություն, և Իսմաիլ ալ–Ազհարի կառավարության փոխարեն երկրի ղեկն իր ձեռքը վերցրեց Սաիդ Աբդալլահ Խալիլը: Դա կոալիցիոն կառավարություն էր՝ կազմված ալ–Ումմա և Ազգային յունիոնիստական կուսակցություններից, որոնք ներկայացնում էին կրոնական տարբեր և միմյանց հակադիր ուժերի: Ալ–Ումմա կուսակցության հետևում կանգնած էին մահդիականները, իսկ Ազգային յունիոնիստական կուսակցությունը հանդիսանում էր Խաթմիյա կրոնաքաղաքական հոսանքի ծայնափողը: Կոալիցիոն կառավարության ներսում շուտով տարաձայնություններ ծագեցին Սուդանի ապագա սահմանադրական կառուցվածքի վերաբերյալ: Ալ–Ումման գտնում էր, որ Սուդանը պետք է լինի պրեզիդենտական պետություն և որպես նախագահի թեկնածու հարմար էր գտնում իր առաջնորդ Սաիդ Աբդ ալ–Ռահման ալ–Մահդիին: Իսկ Ազգային յունիոնիստական կուսակցությունը և Խաթմիյա հոսանքը դեմ էին թե՛ պրեզիդենտական կառավարման համակարգին և թե՛ ալ–Մահդիի թեկնածությանը: Նա գտնում էր, որ Սուդանը պետք է լինի պառլամենտական հանրապետություն:

Այդ հարցի շուրջը նրանք չկարողացան համաձայնության գալ, և մինչ նրանք բանավիճում էին, Սուդանի բանակի գլխավոր հրամանատար գեներալ Իբրահիմ Աբուդը 1956 թ. նոյեմբերի 17–ին կատարեց պետական հեղաշրջում: Իշխանությունն անցավ զինվորականներին, և Իբրահիմ Աբուդը, գրավելով վարչապետի պաշտոնը, կազմեց իր կառա-

վարությունը, որի մեջ ոչ մի քաղաքացիական անձնավորություն չկար: Կառավարությունը բաղկացած էր բացառապես զինվորականներից:

Նոր կառավարության առաջին քայլերից մեկը եղավ 1955 թ. սահմանադրության կախակայումը և պառլամենտի ցրումը: Կասեցնելով սահմանադրության և պառլամենտի գործունեությունը և դրա փոխարեն որևէ նոր բան չառաջարկելով՝ գեներալ Աբուդը ստացավ ոչնչով չսահմանափակված գործողությունների ազատություն:

Որոշ քայլեր կատարվեցին 1961–1963 թթ. տեղական կառավարման նոր համակարգ ստեղծելու ուղղությամբ: 1961 թ. հայտարարվեց տեղական կառավարման համակարգում այսպես կոչված «Հիմնական դեմոկրատական սկզբունքների» ներդրման մասին, իսկ հաջորդ տարի՝ 1962 թ., ստեղծվեց Կենտրոնական խորհուրդ, որը պետք է իրագործեր այդ սկզբունքները: Նրա առաջին նիստը կայացավ 1963 թ. նոյեմբերին: Այդ համակարգի հիմնական գաղափարը կայանում էր նրանում, որ նա կոչված էր սուդանցիներին սովորեցնելու և վարժեցնելու, որ նրանք են պատասխանատու երկրի ինքնակառավարման համար, որը հնարավոր է իրականացնել այնպիսի ինստիտուտների միջոցով, որոնք ավելի են համապատասխանում սուդանցու հոգեբանությանը և մտածելակերպին, քան թե արտասահմանից ներմուծված ինստիտուտներն ու կառույցները, ինչպես, ասենք՝ Վեստմինստրի, այսինքն՝ անգլիական տիպի պառլամենտները, և այնպիսի վարչակառավարական համակարգեր, որ Սուդանը ժառանգել էր մինչանկախության դարաշրջանից:

Սակայն այդ ուղղությամբ գործնական քայլեր ըստ էության չկատարվեցին: 1964 թ. տեղի ունեցավ, այսպես կոչված, քաղաքացիական պետական հեղաշրջում, և Սուդանում ծնավորվեց նոր ժամանակավոր կառավարություն Խաթիմ Խալիֆայի գլխավորությամբ: Վարչապետը պաշտոնապես հայտարարեց, որ իր կառավարությունը գործելու է 1955 թ. սահմանադրության համաձայն: Այսպիսով՝ Սուդանը մոտ 10 տարի անց կրկին վերադարձավ 1955 թ. ժամանակավոր սահմանադրությանը, որն ուներ շատ անորոշություններ և տառապում էր հստակության բացակայությամբ: Հինգի հանձնաժողովը, որը կոլեկտիվ կերպով իրականացնում էր պետության ղեկավարի ֆունկցիաները, դարձյալ գլխավորեց Իսմաիլ Ազհարին, որը նշանակվեց այդ հանձնաժողովի մշտական պրեզիդենտ:

Ընդհանուր գծերով այդ իրավիճակը պահպանվեց ընդհուպ մինչև 1969 թ., երբ մայիսի 25–ին Սուդանում տեղի ունեցավ նոր զինվորական

պետական հեղաշրջում գեներալ Ջաֆար Մուհամմադ Նիմեյրիի գլխավորությամբ: Երկրում ստեղծվեց նոր իրադրություն, որն ուղղակիորեն անդրադարձավ Սուդանի կառավարման համակարգի վրա: Ժամանակավոր սահմանադրությունը, Կենտրոնական խորհուրդը և Սահմանադիր ասամբլեան լուծարվեցին: Ստեղծվեց պետական կառավարման նոր բարձրագույն մարմին՝ Ազգային հեղափոխական խորհուրդ, որն իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ իշխանությունը: Նրա պրեզիդենտ դարձավ Ջաֆար Նիմեյրին, որը միաժամանակ կատարում էր պետության ղեկավարի ֆունկցիաները: Տեղի ունեցավ նաև երկրի անվանափոխություն՝ Սուդանի Հանրապետությունը պաշտոնապես վերանվանվեց Սուդանի Դեմոկրատական Հանրապետության: Երկրում հաստատվեց ավտորիտար վարչակարգ: Ազգային հեղափոխական խորհուրդը 1983 թ. երկրում մտցրեց շարիաթի իսլամական օրենքները, որոնց հիմքի վրա էր իրականացվում արդարադատությունը Սուդանում:

1985 թ. Սուդանում տեղի ունեցավ հերթական քաղաքական ցնցումը՝ Նիմեյրին տապալվեց և պետական հեղաշրջման հետևանքով իշխանության գլուխ անցավ գեներալ Ումար Հասան Ահմադ ալ–Բաշիրը: Նոր իշխանափոխությունը, որը թեև որոշ փոփոխություններ մտցրեց երկրի կառավարման համակարգում, սակայն, ավաղ, ինչպես նախկին բոլոր պետական հեղաշրջումները, որևէ լուրջ քայլ չկատարեց երկրի դոմոկրատացման և սահմանադրական նորմերի կիրառման ուղղությամբ: Պահպանվեց ավտորիտար վարչակարգը: Ալ–Բաշիրը դարձավ Ազգային հեղափոխական խորհրդին փոխարինած Ազգային փրկության հեղափոխական հրամանատարության խորհրդի նախագահ, Սուդանի պրեզիդենտ, վարչապետ և պաշտպանության նախարար: Ոչ մի բացարձակ միապետ չէր օգտվում այնպիսի անսահմանափակ իշխանությունից, ինչպես Սուդանի բոլոր առանցքային պաշտոնները իր ձեռքում հավաքած Ումար ալ–Բաշիրը.

Փորձեր էին արվում սահմանադրություն ունենալու ուղղությամբ: Բայց դրա հետ վարվում էին այնպես, ինչպես մի սովորական թղթի կտորի հետ: Սահմանադրությունն այդ ընթացքում առնվազն երեք անգամ կասեցվեց, լուծարվեց կամ մասամբ սառեցվեց, նորից ժամանակավորապես գործողության մեջ դրվեց և այսպես շարունակ: Նույնիսկ պրեզիդենտ ալ–Բաշիրի կողմից 2005 թ. վերջապես վավերացված սահմանադրությունը, որը թեև կոչվում էր ազգային, և որը գործում է մինչև օրս, համարվում է ժամանակավոր:

Այսպիսով՝ անկախության նվաճումից կես դար անցած ամբողջ ժամանակաշրջանում Սուդանում չի հաստատվել և չի գործել սահմանադրական կյանք, իսկ կառավարման համակարգն ընդհանուր առմամբ եղել է ոչ թե դոմոկրատական, այլ ավտորիտար, երբեմն նաև դիկտատորական:

III. ՍՈՒԴԱՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԼԵՒԱԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆԿԱՑՈՒՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1956–1985 թթ.)

1. Արտաքին և ներքին քաղաքականության հիմնախնդիրները և տարածայնությունները նրանց շուրջը (1956–1958 թթ.)

Անկախության նվաճումից հետո Սուդանի առջև կանգնեցին մի շարք արտաքին և ներքին քաղաքական խնդիրներ:

Արտաքին քաղաքականության բնագավառում գլխավոր խնդիրը համարվում էր Սուդանի անկախության ճանաչումը և անդամակցությունը մի շարք միջազգային կազմակերպություններին, որոնք Սուդանի համար ունեին առաջնային նշանակություն: Այդ հարցերը լուծվեցին համեմատաբար հեշտ և արագ: Սուդանը դարձավ ՄԱԿ–ի, Արաբական պետությունների լիգայի և Աֆրիկայի միասնության կազմակերպության անդամ. Նրա անկախությունն անմիջապես ճանաչվեց և նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին մի քանի տասնյակ արաբական, աֆրիկյան, եվրոպական և ամերիկյան երկրներ, այդ թվում՝ Եգիպտոսը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ԱՄՆ–ը, Խորհրդային Միությունը և այլն: Դրա շնորհիվ Սուդանը սկսեց աստիճանաբար ինտեգրվել միջազգային հանրությանը:

Ավելի բարդ էին ներքաղաքական խնդիրները, որոնց մեջ առանցքային էին համարվում սոցիալ–տնտեսական զարգացման, հետամնացության և աղքատության հաղթահարման, երկրի դեմոկրատացման, ազգային–էթնիկական և կրոնական պատկանելության, Սուդանի հյուսիսի և հարավի հարաբերությունների կարգավորման և նրանց միջև գոյություն ունեցող հակամարտությունն ու անջրպետը վերացնելու և նման այլ հարցեր: Այդ խնդիրները մշտական էին և հառնում էին մեկը մյուսին հաջորդող պետական հեղաշրջումների ու կառավարությունների առջև: Նրանք մինչև օրս փաստորեն չեն լուծվել, ինչը հանդիսանում

է Սուդանի ներքաղաքական կյանքի անկայունության ամենագլխավոր պատճառը:

Սուդանի առաջին ազգային կառավարությունը, որը գոյություն ունեցավ 1956 թ. հունվարից մինչև հուլիս ամիսը՝ ընդամենը կես տարի, բնականաբար, շատ բան չկարողացավ անել: Նա միայն հասցրեց անգլիացիների հեռանալուց հետո իր հսկողության տակ վերցնել նրանց կողմից տնօրինված սեփականության մի մասը, ինչպես՝ երկաթուղիները, նավահանգստային կառույցները, ոռոգման համակարգը, առանձին արդյունաբերական ձեռնարկություններ, հողերը, այդ թվում և Գեզիրեի բամբակամշակման հողատարածքները, որն առանցքային նշանակություն ուներ Սուդանի ոչ միայն գյուղատնտեսության, այլև ընդհանրապես տնտեսության համար:

Բայց դա չէր նշանակում, թե Մեծ Բրիտանիան կորցրեց իր դիրքերը Սուդանում և նրա տնտեսության մեջ: Նա շարունակում էր պահպանել իր տիրապետող դիրքերը Սուդանի ներմուծման և արտահանման, բանկային համակարգի և ֆինանսական ոլորտներում և, իհարկե, Գեզիրեի բամբակի պլանտացիաների կառավարման գործում: Իր քաղաքականությունը Սուդանում ակտիվացրեց ԱՄՆ–ը: Ամերիկյան նավթային ընկերությունները ներթափանցեցին Սուդանի նավթային շուկա, որտեղ մինչ այդ անբաժանորեն տիրապետում էր հոլանդա–բրիտանական «Ռոյալ դատչ–Շելլը»:

Այն ամենը, ինչ անգլիացիներից անցավ Սուդանի իշխանություններին, հիմք հանդիսացավ Սուդանի պետական սեկտորի ծնավորման համար, ինչն իր հերթին որոշակի բազա կարող էր դառնալ երկրի հետագա զարգացման համար, եթե իշխանությունները կարողանային վարել ճիշտ քաղաքականություն: Ալ–Ազհարիի գլխավորած կառավարության առաջին քայլերն ինչ–որ չափով հույսեր էին ներշնչում: Այդ տեսակետից ուշադրության է արժանի կառավարության կողմից հաստատված Սուդանի զարգացման հնգամյա պլանը (1956–1960 թթ.), որում մեծ տեղ էր հատկացված գյուղատնտեսության, առաջին հերթին ոռոգման համակարգի զարգացմանը, հիդրոէլեկտրակայանների կառուցմանը, բրնձի, ծխախոտի, պարենային և տեխնիկական այլ կուլտուրաների ցանքատարածությունների ընդարձակմանը: Հնգամյա պլանի կատարումը կարող էր զգալիորեն բեթևացնել բնակչության նյութական ծանր վիճակը:

Սակայն կառավարությունը չհասցրեց որևէ կոնկրետ քայլ կատարել այդ ուղղությամբ, քանի որ 1956 թ. հուլիսին ներքաղաքական պայ-

քարի արդյունքում նա հարկադրված էր իր տեղը զիջել Սաիդ Աբդուլլահ Խալիլի գլխավորած կոալիցիոն կառավարությանը: Նրա մեջ մտան ալ–Ումմա, նոր ձևավորված Ժողովրդա–դեմոկրատական և Հարավի լիբերալ կուսակցությունների ներկայացուցիչները, որտեղ, սակայն, գլխավոր դերակատարը ալ–Ումմա կուսակցությունն էր: Հենց նրա քարտուղար Սաիդ Աբդուլլահ Խալիլը զբաղեցրեց վարչապետի պաշտոնը: Նրանք միավորվել էին ալ–Ազհարիի կառավարությունը տապալելու համար: Գալով իշխանության գլուխ՝ այդ ուժերը չկարողացան պահպանել միասնությունը, և շուտով ջրի երես դուրս եկան տարաձայնությունները նրանց շարքերում, մասնավորապես ալ–Ումմայի և Ժողովրդա–դեմոկրատական կուսակցությունների միջև: Առաջին և գլխավոր տարաձայնությունը նրանց միջև ծագեց՝ կապված Եգիպտոսի հետ հարաբերությունների հարցում: 1956 թ Սուեզի ճգնաժամի և Եգիպտոսի դեմ անգլո–ֆրանս–իսրայելական ագրեսիայի ժամանակ Ժողովրդա–դեմոկրատական կուսակցությունը գտնում էր, որ Սուդանը պետք է ավելի մեծ օգնություն ցուց տա Եգիպտոսին և պաշտպանի նրան, քան թե արվում է: Նա վարչապետին մեղադրեց պասիվության մեջ: Իսկ երբ 1958 թ. սահմանային վեճ առաջացավ Եգիպտոսի և Սուդանի միջև, ալ–Ումման և վարչապետը մեղադրեցին Ժողովրդա–դեմոկրատական կուսակցությանը, որ նա շատ մեղմ դիրք է գրավել Եգիպտոսի նկատմամբ: Նրանց միջև տարաձայնությունների աղբյուր հանդիսացան, ինչպես արդեն նշվել է, նրանց տարբեր դիրքորոշումները Սուդանի ապագա սահմանադրական կառուցվածքի հարցում: Ալ–Ումման ցանկանում էր, որ Սուդանը դառնա պրեզիդենտական հանրապետություն, իսկ պրեզիդենտի պաշտոնում նա տեսնում էր նրա ռաջնորդ Սաիդ Աբդ ալ–Ռահման Մահդիին, մինչդեռ Ժողովրդա–դեմոկրատական կուսակցությունը դեմ էր դրան և կանգնած էր Սուդանը որպես սահմանադրական պառլամենտական հանրապետություն կառուցելու դիրքերում:

Տարաձայնությունները կառավարական կոալիցիայի երկու անդամների միջև լարվածություն ստեղծեցին երկրի ներսում և նպաստեցին իրադրության ապակայունացմանը:

Իրադրությունն ավելի սրվեց, երբ վարչապետը և ալ–Ումմայի ղեկավարությունը պատրաստակամություն հայտնեցին միանալու «էյզենհաուերի դոկտրինային», համաձայնվեցին ԱՄՆ–ին տրամադրել տարածքներ երկու ռազմական բազաներ կառուցելու համար: Դրա վերաբերյալ Խարթումում 1958 թ. մարտի 31–ին կնքվեց սուդանա–ամերիկ-

յան համաձայնագիր, որով նախատեսվում էր Սուդանին ցույց տալ 40 մլն ԱՄՆ դոլարի չափով տնտեսական օգնություն: Բայց տնտեսական օգնությունը Սուդանը կարող էր ստանալ, եթե Սուդանի պառլամենտը հաստատեր այդ համաձայնագիրը, որը հնարավորություն կտար ԱՄՆ–ին ռազմական բազաներ կառուցել Սուդանում:

Աբդալլահ Խալիլի կառավարությունը անգլո–սուդանական պայմանագրի հարցը մտցրեց պառլամենտ, որը նրա քննարկումն սկսեց 1958 թ. հունիսի 3–ին: Այդ լուրը բողոքի չտեսնված ալիք բարձրացրեց Սուդանում: Բոլոր առաջադիմական կուսակցությունները դեմ արտահայտվեցին պայմանագրի վավերացմանը՝ գտնելով, որ դա սպառնալիք է Սուդանի ամբողջականության ու անկախությանը: Նրանց և արհմիությունների կոչով սուդանցիները կազմակերպեցին զանազան ելույթներ ու ցույցեր, իսկ բանվորները հայտարարեցին գործադուլ: Իրադրությունն այնքան էր շիկացել, որ պառլամենտը չհամարձակվեց վավերացնել այդ պայմանագիրը:

Պարտություն կրելով ամերիկյան ճակատում՝ Խալիլի կառավարությունը ռևանշ վերցրեց սոցիալիստական երկրների հետ հարաբերությունների հարցում՝ սառեցնելով հարաբերությունները Խորհրդային Միության և սոցիալիստական մյուս երկրների հետ: Բայց դա բնավ էլ չամրապնդեց կառավարության և ալ–Ումմայի դիրքերն ու հեղինակությունը երկրի ներսում: Ընդհակառակը, ավելի խորացան հակասությունները և անջրպետը երկրի քաղաքական տարբեր ուժերի միջև:

Հարաբերությունները կրկին սրվեցին Եգիպտոսի հետ՝ կապված եգիպտա–սուդանական սահմանների և Նեղոսի ջրերի օգտագործման հետ. Գործը հասավ այնտեղ, որ Սուդանը հետ կանչեց իր դեսպանին Կահիրեից և արգելեց Եգիպտոսի ներկայացուցիչների մուտքը Սուդան: Դա արդեն չափազանց էր, ինչը ցույց էր տալիս, որ ալ–Ումման և կառավարության ղեկավար ումմայական Աբդալլահ Խալիլն արդեն անցել էին բոլոր սահմանները: Կառավարության այդ քաղաքականությունը առաջ բերեց զանգվածային ելույթներ երկրում, որը 1958 թ. հոկտեմբերին վերածվեց համասուդանական ընդհանուր քաղաքական գործադուլի:

Լարվածության և հակակառավարական տրամադրությունների ուժեղացման մեջ իր դերը խաղաց նաև երկրի տնտեսական վիճակի վատթարացումը: Դա կապված էր մի կողմից՝ կառավարության տնտեսական ոչ հետևողական քաղաքականության, մյուս կողմից՝ բամբակի

համաշխարհային գների անկման հետ, որի արդյունքում կրճատվեցին բամբակից ստացվող եկամուտները:

Կառավարությունը ակնհայտորեն կորցրեց վերահսկողությունը իրադարձությունների զարգացման վրա, որը վկայում էր նրա քաղաքականության սնանկության մասին: Նրա օրերը հաշվված էին:

2. Գեներալ Իբրահիմ Աբուդի պետական հեղաշրջումը և քաղաքական նոր իրողություններ Սուդանում (1958–1969 թթ.)

1958 թ. նոյեմբերի 17–ին Սուդանում տեղի ունեցավ զինվորական հեղաշրջում, որը գլխավորեց Սուդանի բանակի գլխավոր հրամանատար գեներալ Իբրահիմ Աբուդը: Աբդուլլահ Խալիլի կառավարությունը տապալվեց, և կազմվեց նոր կառավարություն բացառապես զինվորականներից: Գեներալ Աբուդը դարձավ երկրի վարչապետը: Նա ցրեց պառլամենտը, կասեցրեց ժամանակավոր սահմանադրությունը և արգելեց քաղաքական կուսակցությունների գործունեությունը: Երկրում հաստատվեց Աբուդի դիկտատուրան:

Ցանկանալով շահել ժողովրդի աջակցությունը՝ գեներալ Աբուդը հայտարարեց, որ իր նպատակն է երկրում վերականգնել կայունությունը և հաստատել արդար աշխատող վարչակարգ, բարելավել հարաբերությունները Եգիպտոսի, արաբական, աֆրիկյան և այլ երկրների հետ:

Սկզբնական շրջանում ժողովուրդը սպասողական դիրք գրավեց նոր վարչակարգի հանդեպ՝ դրական վերաբերվելով կայունությունը վերահաստատելու և Եգիպտոսի հետ հարաբերությունները կարգավորելու նրա խոստումներին: Վարչակարգը որոշ քայլերի դիմեց դիմեց նաև տնտեսական ոլորտում: Նա կարողացավ ավելի իրական քաղաքականություն որդեգրել բամբակի կուտակված պաշարների վաճառահանման գների հարցում, տնտեսական օգնություն ստանալու պայմանագրեր ստորագրեց ԱՄՆ–ի և Խորհրդային Միության հետ և այլն:

Սակայն շուտով ակնհայտ դարձավ, որ գեներալ Աբուդի դիկտատորական վարչակարգը հեռու է իր խոստումները կատարելուց, որի հետևանքով երկրի բոլոր առաջադիմական և դեմոկրատական ուժերը, բանվորական և գյուղացիական կազմակերպություններն ընդդիմադիր դիրք գրավեցին դիկտատորական վարչակարգի դեմ: Վերջինս չհապաղեց դիմել հակաքայլերի: Կուսակցությունների գործունեությունն արգելելուց հետո նա դիմեց ճնշումների և հալածանքների քաղաքականու-

թյանը երկրի դեմոկրատական ուժերի դեմ: Երկրում մտցվեց արտակարգ դրություն, լուծարվեցին արհմիութենական, երիտասարդական և կանանց կազմակերպությունները, սահմանվեց վերաքննություն մամուլի վրա, որոշ թերթեր փակվեցին, բազմաթիվ քաղաքական և հասարակական գործիչներ ձերբակալվեցին:

Դեմոկրատական ուժերի հակադրությունը վարչակարգին ավելի սաստկացավ, երբ հայտնի դարձավ, որ օտարերկրյա վարկերն իրենց նպատակին չեն ծառայում և չեն նպաստում երկրի տնտեսության զարգացմանն ու ժողովրդի ծանր նյութական դրության բարելավմանը: Մեծ ծավալներ էր ընդունել կոռուպցիան: Պետական պաշտոնյաները օգտվելով վերահսկողության բացակայությունից և կառավարող վերնախավին պատկանելու հանգամանքից, ստացած վարկերն ու հասարակական ֆոնդերն օգտագործում էին իրենց անձնական նպատակների համար:

Սրվեցին հարաբերությունները զինվորական սպաների և վարչակարգի քաղաքացիական ծառայողների միջև: Զինվորականներն ավելի ու ավելի էին քաղաքացիական ծառայողներին հետին պլան մղում, անգամ դուրս մղում կառավարման համակարգից. Եվ պատահական չէր, որ շատ չանցած՝ 1964 թ. հոկտեմբերին, երբ սկսվեց վարչակարգի դեմ ուղղված ապստամբությունը, քաղաքացիական ծառայողները միացան բանվորներին, ուսանողներին և ապստամբության մեջ ներգրավված մյուս ուժերին:

Ապստամբության հասունացմանը նպաստեց գեներալ Աբուդի դաժան քաղաքականությունը Սուդանի հարավի նկատմամբ. Սուդանի հյուսիսի և հարավի հարաբերությունները, ինչպես նշել ենք, Սուդանի առջև կանգնած ամենադժվար և բարդ խնդիրն էր, քաղաքական ցնցումների և արյունալի բախումների մշտական աղբյուր, որը Սուդանը ժառանգություն ստացավ կոնդոմինիումի ժամանակներից:

Գեներալ Աբուդի դիկտատորական վարչակարգը ոչ միայն ոչինչ չարեց այդ թնջուկը խաղաղ և քաղաքական մեթոդներով կարգավորելու ուղղությամբ, այլ, ընդհակառակը, փորձեց այդ հարցը «լուծել» բանակի օգնությամբ: Սուդանի հյուսիսի և հարավի կոնֆլիկտի մասին խոսելիս, անշուշտ, չի կարելի անտեսել այն տարբերությունները, որ գոյացել էին նրանց միջև պատմության ընթացքում: Հյուսիսի բնակչությունը գերազանցապես արաբներ և մուսուլմաններ են, մինչդեռ հարավի բնակիչները հիմնականում սև աֆրիկացիներ են՝ նիլոտներին պատկանող տարբեր ցեղախմբեր, որոնք հեթանոսներ են: Զգալի թիվ են կազմում

նան քրիստոնյաները, որոնք եվրոպական միսիոներների երկարատև գործունեության արդյունք են: Հյուսիսի և հարավի ժողովուրդները խոսում են տարբեր լեզուներով, դավանում տարբեր կրոններ, պատկանում տարբեր էթնիկական ժողովուրդների և ունեն տարբեր վարչակարգեր: Քաղաքականապես Սուդանի հյուսիսը մշտապես հավակնել է տիրապետող դիրքեր ունենալ հարավի նկատմամբ, որն անընդունելի է վերջինիս բնակչության համար: Հյուսիսի և հարավի միջև բաժանարար գիծն ավելի խորացնելու գործում իրենց ներդրումն են ունեցել նաև անգլիական իշխանությունները, որոնց համար ձեռնտու էր հակամարտությունը նրանց միջև: Դեռևս 1924 թ. բրիտանական իշխանությունները սահմանել էին, որ հյուսիսային սուդանցիներն իրավունք չունեին 10–րդ զուգահեռականից անցնել հարավ, իսկ հարավցիները՝ 8–րդ զուգահեռականից անցնել հյուսիս: Այդ բաժանարար գծի ստեղծումը բրիտանացիները հիմնավորում էին երկու հանգամանքով: Առաջին՝ կանխել մալարիայի և այլ տրոպիկական հիվանդությունների տարածումը հարավից հյուսիս, երկրորդ՝ թույլ չտալ հյուսիսսուդանական ցեղերի արշավանքները հարավ՝ հարավային ցեղերին ստրկացնելու նպատակով, որը նրանց համար հարստությունների մեծ աղբյուր էր հանդիսանում: Չժխտելով այդ հանգամանքները, այդուհանդերձ, գլխավորը բաժանարար գծի ստեղծման գործում քաղաքական գործոնն էր՝ մշտապես բորբոքուն վիճակում պահել հակամարտությունը երկրի հյուսիսային և հարավային շրջանների միջև և թույլ չտալ Սուդանի միավորումը, որը կդժվարացներ բրիտանական իշխանության պահպանումը Սուդանում:

Վերոնշյալ տարբերությունները և հարցերն այն հիմքն էին, որի հիման վրա Սուդանում վերջին 50 տարում՝ փոքր ընդմիջումներով, չի դադարում քաղաքացիական պատերազմը:

Առաջին քաղաքացիական պատերազմը Սուդանում սկսվեց 1955 թ. և ավարտվեց 1972 թ. խախուտ զինադադարով: Նրա արյունոտ էջերից մեկն էր գեներալ Աբուդի ռազմական գործողությունները հարավի նկատմամբ, որը խլեց տասնյակ հազարավոր մարդկանց կյանք: Այդ քաղաքականությունը հանդիսացավ գեներալ Աբուդի դեմ ապստամբության հիմնական պատճառներից մեկը և գլխավոր առիթը: Այդ ժամանակ Հարավային Սուդանում գործում էին մի շարք կազմակերպություններ, որոնցից պետք է առանձնացնել Հարավային Սուդանի ազատագրության շարժումը՝ ՀՍԱՇ, և Հարավային ազգային ճակատը: Երկուսն էլ գործում էին անլեգալ պայմաններում: ՀՍԱՇ–ը, որն ուներ նաև իր ռազ-

մական ուժերը, հանդես էր գալիս հարավային նահանգների անջատման և անկախության պահանջներով, իսկ Հարավային ազգային ճակատի հիմնական պահանջը էր Հարավի ինքնավարությունը միասնական Սուդան պետության շրջանակներում: Չնայած այդ տարբերություններին, նրանք համագործակցում էին միմյանց հետ:

1963–1964 թթ. նրանք փորձեցին ռազմական ուժով իրականացնել Սուդանից հարավային նահանգների անջատումը: Գեներալ Աբուդը նրանց դեմ նետեց Սուդանի բանակի լավագույն ուժերը, որոնք ճնշեցին հարավցիների զինված ապստամբությունը: Շատ–շատերը ձերբակալվեցին և մահապատժի ենթարկվեցին:

Սուդանական զորքերի գործողությունները հարավում, որի ժամանակ հեղվեց ժողովրդի արյունը, կատալիզատորի դեր խաղացին Սուդանի քաղաքական կյանքում և նպաստեցին հակադիկտատորական ուժերի համախմբմանը: 1964 թ. հոկտեմբերին սկսվեցին զանգվածային ցույցեր Խարթումում ու այլ շրջաններում, և համընդհանուր գործադուլ հայտարարվեց: Սուդանի բանակի հետևակային ուժերը շրջապատեցին պրեզիդենտական պալատը և պահանջեցին գեներալ Աբուդից ցրել կառավարությունը և Զինված ուժերի գերագույն խորհուրդը: 1964 թ. հոկտեմբերի 27–ին Սուդանի ընդդիմադիր կուսակցությունները՝ ժողովրդա–դեմոկրատական, կոմունիստական, Ազգային յունինիստական, ալ–Ումմա, և «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը ստեղծեցին Սուդանի Միացյալ ազգային ճակատը, որին միացավ արհմիութենական կազմակերպությունների Ազգային ճակատը: Նա ընդունեց գործողությունների Ազգային խարտիա, որի հիմնական պահանջներն էին՝ ժամանակավոր ազգային կառավարության ստեղծում, հակաժողովրդական օրենքների վերացում, քաղաքական բանտարկյալների ազատում, դեմոկրատական ազատությունների վերականգնում, տնտեսական դրության բարելավում, Հարավի հիմնախնդրի խաղաղ կարգավորում և հարաբերությունների բարելավում արաբական երկրների հետ: Ի պաշտպանություն այդ պահանջների՝ հոկտեմբերի 28–ին մեծ ցույց եղավ մայրաքաղաքում: Դիկտատորն անվարան կերպով նրանց դեմ հանեց բանակի զորամասերը, որոնք արյան մեջ խեղդեցին այդ ելույթը. սպանվեց 300 ցուցարար, իսկ վիրավորների թիվը հասնում էր հազարների: Բայց դա չվախեցրեց ընդդիմադիր ուժերին: Նրանք դիմեցին անսպասելի քայլի՝ հոկտեմբերի 30–ին կազմեցին ժամանակավոր կառավարություն, որի մեջ մտան Սուդանի հյուսիսի և հարավի ընդդի-

մադիր ժողովրդա–դեմոկրատական, կոմունիստական, Ազգային յունիոնիստական և այլ կուսակցություններն ու արհմիությունների ներկայացուցիչները՝ Խաթիմ Խալիֆայի գլխավորությամբ: Նրա առաջին քայլը եղավ գեներալ Աբուդին Սուդանի ռազմական ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնից ազատելը: Սակայն նա դեռևս շարունակում էր մնալ երկրի պրեզիդենտը: Կառավարությունը հայտարարեց իր վճռականության մասին հետևողականորեն կիրառել Ազգային միացյալ ճակատի ծրագիրը: Նահանգներում զինվորական նահանգապետները փոխարինվեցին քաղաքացիական ծառայողներով, բանտերից ազատվեցին քաղաքական բանտարկյալները, կուսակցություններին վերադարձվեց նրանց բռնագրաված գույքը, վերացվեց արտակարգ դրությունը, և կրկին գործողության մեջ դրվեց 1955 թ. որոշ չափով փոփոխված սահմանադրությունը: Նախատեսվում էր անցկացնել Օրենսդիր ժողովի ընտրություններ:

Սակայն դիկտատորը չէր ցանկանում անձնատուր լինել և հեռանալ քաղաքական ասպարեզից: 1964 թ. նոյեմբերի 8–ին նա փորձ կատարեց վերականգնել իր և իր կողմից ղեկավարվող ռազմական խորհրդի իշխանությունը, բայց անհաջող: Նրա կողմից օգնության կանչված տանկային դիվիզիան չկարողացավ մտնել Խարթում, որտեղ ժողովուրդը ոտքի էր ելել պաշտպանելու մայրաքաղաքը և փողոցները ծածկել էր բարիկադներով: Նրանց օգնության եկան Սուդանի այլ քաղաքներից և գյուղական վայրերից: Ի տես այդ վճռականության՝ տանկային դիվիզիան որոշեց չմտնել մայրաքաղաք, որը նշանակում էր, որ նա լքում էր գեներալ Աբուդին և պաշտպանում ապստամբներին:

Ապստամբությունը հաղթեց: 1964 թ. նոյեմբերի 15–ին Իբրահիմ Աբուդն ազատվեց պրեզիդենտի պաշտոնից, իսկ զինվորական խորհրդի անդամները ձերբակալվեցին: Այսպիսի անփառունակ վախճան ունեցավ գեներալ Աբուդի դիկտատուրան:

Սուդանի պատմության մեջ 1964 թ. հոկտեմբերյան ապստամբությունը մտել է որպես քաղաքացիական հեղաշրջում:

Խալիֆայի կառավարությունը սկզբնական շրջանում կիրառեց մի շարք առաջադիմական քայլեր: 1964 թ. դեկտեմբերի 2–ին ստեղծվեց Սուդանի գերագույն խորհուրդը, որի վրա դրվեցին պետության կոլեկտիվ ղեկավարի պարտականությունները: Իրականացվեց պետական ապարատի և հասարակական կազմակերպությունների զտումը նախկին վարչակարգի կողմնակիցներից, փակվեցին Աբուդի հիմնած մի քա-

նի թերթեր, սկսեցին լույս տեսնել առաջադիմական թերթեր՝ դեմոկրատական և կոմունիստական: Կառավարությունն արգելեց Անգլիային օգտագործել իր ռազմական օդանավակայանները: Լուրջ քայլեր ձեռնարկվեցին հարաբերությունները հարավի հետ կարգավորելու ուղղությամբ: Հարավային Սուդանի ներկայացուցիչները մտան կառավարության մեջ, ներում շնորհվեց հարավի քաղաքացիներին, բանտերից ազատվեցին բանտարկյալները, տեղերում ռազմականի փոխարեն հաստատվեց քաղաքացիական վարչություն, հայտարարվեց հարավի տեղական բնակչության իրավունքների հավասարություն արաբների հետ և այլն: Համաձայնություն ձեռք բերվեց 1965 թ. փետրվարի 18–ին անցկացնել Սուդանի քաղաքական ուժերի կոնֆերանս՝ նվիրված հարավի հարցին:

Սակայն այդ բոլորը, այդ թվում և ժողովրդա–դեմոկրատական և կոմունիստական կուսակցությունների հեղինակության բարձրացումը, խիստ անհանգստացրեց աջակողմյան ուժերին՝ ալ–Ումմային, Ազգային յունիոնիստական կուսակցությանը և «Մուսուլման եղբայրներին»: Նրանք դուրս եկան Միացյալ ազգային ճակատից, կարողացան պառակտել նրա շարքերը և փոփոխություններ մտցնել նաև կառավարության կազմում: Նրանք փոխեցին նաև իրենց դիրքորոշումը հարավի խնդրի նկատմամբ՝ գրավելով ավելի կոշտ դիրքորոշում. Այդ բոլորի հետևանքով դրությունը կրկին սրվեց Սուդանում, և Խալիֆան 1965 թ. փետրվարի 18–ին հրաժարական տվեց: Հետադիմությունը տոնում էր իր հաղթանակը:

Դրան հաջորդած ժամանակաշրջանում պայքարը չէր դադարում Սուդանի աջակողմյան–հետադիմական և ձախակողմյան–առաջադիմական ուժերի միջև: Վերջիններս պայքարում էին երկրի անկախության ամրապնդման, սոցիալ–տնտեսական զարգացման, աշխատավորների և ժողովրդական լայն զանգվածների իրավունքների և դեմոկրատական ազատությունների համար: Նրանց պայքարի հիմնական զենքը քաղաքի և գյուղի աշխատավորների ելույթները, ցույցերը, համընդհանուր գործադուլներն էին, որոնք շատ հաճախ ավարտվում էին արյունալի բախումներով ոստիկանական ուժերի, իսկ երբեմն նաև բանակի զինվորական մասերի հետ:

Աջակողմյան ուժերը, որոնց դիրքերը նշանակալիորեն ամրապնդվել էին, չէին կարողանում լուծել Սուդանի առջև կանգնած կենսական խնդիրները. Այդ իրողության, ինչպես նաև քաղաքական անկա-

յունության արտահայտություն էր հանդիսանում նաև կառավարությունների հաճախակի փոփոխությունը: Խաթիմ Խալիլի առաջին կառավարությանը 1965 թ փետրվարի 23–ին հաջորդեց նրա ղեկավարած երկրորդ կառավարությունը, որն աջակենտրոն էր, նրան հունիսի 10–ին փոխարինեց Մուհամմադ Ահմադ Մահջուբի կառավարությունը, որը դարձավ հետադիմական ուժերի շահերի արտահայտիչը, իսկ 1966 թ հուլիսի 27–ին Սուդանի կառավարությունը գլխավորեց ալ–Ումմա կուսակցության նախագահ Սադիկ ալ–Մահդին:

Սուդանը կրկին հայտնվեց նոր ցնցումների առջև:

3. 1969 թ. զինվորական հեղաշրջումը և գեներալ Նիմեյրիի իշխանության հաստատումը: Սուդանի անվանափոխությունը Սուդանի Դեմոկրատական Հանրապետության (1969–1985 թթ.)

1969 թ. մայիսի 25–ին զինվորականների մի խումբ գնդապետ Ջաֆար Նիմեյրիի[12] գլխավորությամբ կատարեց հեղաշրջում և իշխանությունը վերցրեց իր ձեռքը: Նա աջակցություն ստացավ քաղաքացիական որոշ ուժերի կողմից, որոնք արդեն ծանծրացել էին կառավարությունների անընդմեջ փոփոխություններից և երկրում տիրող քաղաքական խառնաշփոթ վիճակից:

Ստեղծվեց Ազգային հեղափոխական խորհուրդ՝ ԱՀԽ, որը գլխավորեց Ջաֆար Նիմեյրին: ԱՀԽ–ն դարձավ Սուդանի բարձրագույն պետական մարմինը և իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ իշխանությունը: Վերջինիս որոշմամբ վերացվեցին Պետական գլխավոր խորհուրդը և Օրենսդիր ասամբլեան, կասեցվեց սահմանադրությունը, և ցրվեց կառավարությունը: Կազմվեց նոր կառավարություն, և վարչապետ նշանակվեց Սուդանի նախկին գլխավոր դատավոր, ԱՀԽ–ի միակ քաղաքացիական անդամ Աբու Բաքր Ավադալլահը: Կառավարությունը բաղկացած էր 21 անդամներից, որից հինգը կոմունիստական կուսակցության ներկայացուցիչներն էին:

ԱՀԽ–ի որոշումով տեղի ունեցավ երկրի անվանափոխություն: Սուդանի Հանրապետությունը, ինչպես հռչակվել էր երկիրը 1956 թ. հունվարի 1–ին՝ անկախություն ստանալու պահին, վերանվանվեց Սուդանի Դեմոկրատական Հանրապետության:

---

32 Հետագայում նա ստացավ գեներալ մայորի զինվորական կոչում:

Նիմեյրիի կառավարման ժամանակահատվածը հստակորեն բաժանվում է երկու շրջանի: Առաջին շրջանն ընդգրկում է 1969–1971 թթ Այդ փուլում ընդհանուր առմամբ գերակա էին զարգացման դրական միտումները: Նիմեյրին իշխանությունը վերցնելու հաջորդ օրը հայտարարեց, որ Սուդանը որդեգրում է զարգացման սոցիալիստական ուղին, որը նա անվանեց «սուդանական սոցիալիզմ»: Ինչպես նշվել է, դա այն ժամանակաշրջանն էր, երբ նորանկախ երկրների համար մոդա էր դարձել սոցիալիզմն իրենց զարգացման ուղի հռչակելը: Այդպես արաբական, եգիպտական, թունիսյան, ալժիրյան, լիբիական, աֆրիկյան և այլ «սոցիալիզմների» կողքին հայտնվեց նաև «սուդանական սոցիալիզմը»: Հասկանալի է, որ դրա կողմնակիցներից յուրաքանչյուրը դրա մեջ իր ուրույն բովանդակությունն էր դնում, ինչը, որպես կանոն, ոչ մի ընդհանուր բան չուներ մարքսիստական սոցիալիզմի հետ:

Նիմեյրին միաժամանակ հաստատեց, որ պետությունը մեծ մասնակցություն է ունենալու երկրի տնտեսական զարգացման մեջ՝ ընդգծելով, որ դա չի խանգարելու տեղական և օտարերկրյա կապիտալ ներդրումներին, և կառավարությունը խրախուսելու է այդ քաղաքականությունը: Նա ստեղծեց իր կուսակցությունը՝ Սուդանի սոցիալիստական միությունը, որի վրա էր դրված սոցիալիստական Սուդան կառուցելու և համապատասխան վերափոխումների առաքելությունը: Չնայած նորեն դա համարվում էր կառավարող կուսակցություն, թեև, ինչպես նշվել է, բացարձակ իշխանությունը կենտրոնացված էր ԱՀՄ–ի և նրա առաջնորդ Նիմեյրիի ձեռքում:

Նիմեյրին կարևորեց հարաբերությունների զարգացումը Խորհրդային Միության և սոցիալիստական մյուս երկրների հետ: Միաժամանակ նա սառեցրեց հարաբերությունները ԱՄՆ–ի և Արևմտյան Գերմանիայի հետ՝ նկատի առնելով, որ նրանք ակտիվորեն պաշտպանում էին Իսրայելին: Կոնկրետացնելով Սուդանի դիրքորոշումը Իսրայելի և մերձավորարևելյան կոնֆլիկտի հարցում՝ Նիմեյրին հայտարարեց, որ Սուդանն ուժեղացնելու է պայքարը Իսրայելի դեմ, և դա հանդիսանալու է իր արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը: Ընդհանրապես արաբական հարցերը կարևորվում էին Սուդանի արտաքին քաղաքականության մեջ:

Նիմեյրին նախորդ վարչակարգերից ժառանգություն ստացավ նաև Սուդանի հարավի հարցը: 1955 թ. սկսված քաղաքացիական պատերազմը դեռևս շարունակվում էր: Այդտեղ դժվարությունը, որի մասին

արդեն խոսվել է, կայանում էր նաև նրանում, որ հյուսիսային սուդանցիների մոտ արմատացել էր հարավի ոչ արաբ և մեծամասամբ ոչ մուսուլման բնակչության նկատմամբ տնտեսական և քաղաքական գերազանցության մտայնությունը: Դա լուրջ խոչընդոտ էր փոխզիջումների ուղիով համաձայնության հասնելու ճանապարհին: Նիմեյրին վճռականությամբ էր համակված լուծելու հարավային երեք նահանգների հարցը: Նա առաջ քաշեց Հարավային Սուդանի թնջուկի կարգավորման իր ծրագիրը, որի հիմքում դրված էր հարավային սուդանցիներին աստիճանաբար պատասխանատվության և ինքնակառավարման համար նախապատրաստելը: Այդ առաջարկը միանշանակ ընդունելություն չգտավ հարավում: Այսպես կոչված Նեղոսի ժամանակավոր կառավարությունը մերժեց ինքնակառավարման գաղափարը և «Նեղոսի պետության» համար պահանջեց կատարյալ անկախություն: Սակայն հարավում կային տեղական ուժեր, ինչպես Ազատագրության ճակատը, որը չէր կիսում Նեղոսի ժամանակավոր կառավարության դիրքորոշումը և կողմնակից էր բանակցությունները շարունակել Խարթումի հետ ու այդ ճանապարհով հասնել հարցի լուծմանը: Չնայած այդ տարաձայնություններին՝ Նիմեյրիի վարչակարգին հաջողվեց հասնել հարավցիների հետ կրակի դադարեցմանը, որի վերաբերյալ 1972 թ. ստորագրվեց համապատասխան համաձայնագիր Ադիս Աբեբայում, որով Հարավային Սուդանը ստանում էր որոշ ինքնավարություն: Այդ համաձայնագրի ստորագրումով ավարտվեց առաջին քաղաքացիական պատերազմը Սուդանում, և հաստատվեց զինադադարի մի տասնամյա շրջան:

Դրանով, ըստ էության, ավարտվեց նաև Նիմեյրիի վարչակարգի կառավարման առաջին շրջանը, և սկսվեց երկրորդ շրջանը, որն ընդգրկում է 1972–1985 թթ.: Այդ փուլում տեղի ունեցավ բացասական բնույթի կտրուկ շրջադարձ Նիմեյրիի ներքին և արտաքին քաղաքականության մեջ: Մասնագիտական գրականության մեջ այն տեսակետն է ճանաչում գտել, որ դա կապված էր 1971 թ. կատարված արմատական բնույթի պետական հեղաշրջման փորձի հետ, որի հետևում կանգնած էին ձախակողմյան ուժերը: Թեև այն ավարտվեց անհաջողությամբ, սակայն այդ փորձն անհետևանք չանցավ և մեծ ազդեցություն գործեց Նիմեյրիի քաղաքական մտածելակերպի ու հոգեբանության վրա:

Նիմեյրին, որն ուներ միանձնյա իշխանության ակնհայտ հակումներ, 1972 թվականից անցավ կառավարման այնպիսի մեթոդների, որոնք հիմք են տալիս նրա վարչակարգն անվանել դիկտատորական:

Արտաքին քաղաքականության բնագավառում Նիմեյրին հեռացավ Խորհրդային Միության և սոցիալիստական մյուս երկրների հետ համագործակցելու քաղաքական կուրսից, սառեցվեցին կամ կասեցվեցին նրանց միջև կնքված պայմանագրերը և համաձայնագրերը: Սկսվեցին ճնշումներն ու հալածանքները առաջադիմական և դեմոկրատական ուժերի նկատմամբ, մի շարք թերթեր փակվեցին, իսկ դեմոկրատական կազմակերպությունների գործունեությունն արգելվեց: Խափանվեց նաև տնտեսական զարգացման տասնամյա (1962–1972) պլանի կենսագործումը, տնտեսական զարգացումն ընդհանրապես կանգ առավ, որն ավելի վատացրեց առանց այն էլ ծանր դրության մեջ գտնվող ժողովրդի վիճակը: 1970–ական թվականների վերջերին և 1980–ական թվականների սկզբներին երկրի բնակչության 20%–ը տառապում էր քաղցից, անմխիթար վիճակում էր գտնվում առողջապահական համակարգը, որն իրականում որպես այդպիսին գոյություն չուներ, խիստ բարձրացավ մահացությունը:

Հեռանալով սոցիալիստական երկրների հետ համագործակցելուց և որդեգրելով նոր ուղղություն ներքին քաղաքական բնագավառում՝ Նիմեյրին սկսեց ավելի ու ավելի մեծ տեղ տալ իսլամին, ավելի ստույգ՝ ֆունդամենտալ իսլամին, որն այդ տարիներին համընդհանուր աշխուժացում էր ապրում: Ապավինելով ֆունդամենտալ իսլամի դրույթներին և խաղալով ժողովրդի, հատկապես նրա հետամնաց խավի կրոնական զգացմունքների վրա՝ Նիմեյրին ցանկանում էր կանխել ամեն տեսակի հակակառավարական ելույթները, ամրապնդել իր իշխանությունը երկրի ներսում և փորձել իսլամի շրջանակներում կարգավորել նաև սոցիալական փոխհարաբերությունները և տնտեսական խնդիրները:

Նահանջը դեպի իսլամ և նրա հիմնարար դրույթներին ապավինելը ոչ բոլոր խավերի կողմից ընդունվեց գոհունակությամբ: Ընդհակառակը, նա ծառայեց սուդանական հասարակության պառակտմանը, որն ավելի խորացավ, իսկ ներքաղաքական լարվածությունն ավելի սրվեց, երբ 1983 թ. Նիմեյրին երկրում պաշտոնապես մտցրեց իսլամական օրենքը՝ շարիաթը, որը տարածվեց նաև հարավի նահանգների վրա, որտեղ բնակչության մեծ մասը սևամորթներ էին՝ հեթանոսներ, իսկ մի մասն էլ քրիստոնյաներ:

Նիմեյրիի հետադիմական ներքին քաղաքականությունը, մանավանդ շարիաթի ներդրումը, բացասաբար անդրադարձավ նաև Սուդանի հարավի իրադրության վրա: Խիստ լարվեցին հարաբերությունները

կենտրոնական իշխանության և հարավի միջև: Նիմեյրին խախտեց Ադիս Աբեբայի համաձայնագիրը, որով հարավային նահանգներին ինքնավարության որոշակի աստիճան էր շնորհվել, և հաստատվել էր զինադադար, իսկ 1983 թ. ընդհանրապես չեղյալ հայտարարեց այդ համաձայնագիրը: Դրա փոխարեն Նիմեյրին առաջ քաշեց Ֆեդերատիվ Սուդանի ստեղծման գաղափարը, որի մեջ պետք է մտնեին Հարավային Սուդանի բոլոր նահանգները, ինչն անընդունելի էր հարավային սուդանցիների համար: Ի պատասխան Նիմեյրիի այդ անհեռատես քայլի՝ հարավային սուդանցիները 1983 թ մայիսին ստեղծեցին ժողովրդի ազատագրության բանակ: 1983 թ. սկսվեց քաղաքացիական երկրորդ պատերազմը Սուդանում, որը տևեց 22 տարի և ավարտվեց 2005 թ.:

IV. ՍՈՒԴԱՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ (1985–2005 թթ.)

1. Նիմեյրիի տապալումը: Պայքար իշխանության համար Սուդանի քաղաքացիական և զինվորական վերնախավի ներսում: Գեներալ Ումար ալ–Բաշիրը Սուդանի պրեզիդենտ

Նիմեյրիի վարչակարգը հայտնվեց մեկուսացման մեջ: Դժգոհությունը համակել էր Սուդանի հյուսիսի և հարավի բոլոր խավերին: Ակնհայտ դարձավ, որ դիկտատորական վարչակարգը երկրի ներսում չուներ որևէ լուրջ և հուսալի հենարան, իսկ բիրտ ուժին ապավինելն արդեն սպառել էր իրեն:

Նիմեյրիի վարչակարգը հայտնվել էր նաև միջազգային մեկուսացման մեջ: Խիստ լարված էին հարաբերությունները հարևան երկրների հետ:

1985 թ. ապրիլի 6–ին տեղի ունեցավ նոր պետական հեղաշրջում, որն իրականացրին գեներալները՝ հենվելով բանակի վրա: Նիմեյրիի վարչակարգը տապալվեց:

Ինչպես հաճախ է պատահում, իշխանությունը գրավելն ավելի դյուրին է լինում, քան այն պահելը և երկրի առջև կանգնած խնդիրները լուծելը: Նման իրադրություն ստեղծվեց Նիմեյրիի տապալումից հետո:

Նոր ուժերը մտահոգ էին իրենց իշխանությունն ամրապնդելու խնդրով: Նրանց առաջին քայլերն ուղղված էին Նիմեյրիի վարչակարգի հիմքերն արմատախիլ անելուն: Եվ նրանք սկսեցին Սուդանական սոցիալիստական միության արգելումից, ապա և լուծարումից, որը հանդիսանում էր նախկին դիկտատորի հիմնած կուսակցությունը և ավտորիտար ռեժիմը պահպանելու գլխավոր գործիքներից մեկը: Հայտարարվեց բազմակուսակցականություն մտցնելու մասին, և թույլատրվեց մյուս բոլոր կուսակցությունների գործունեությունը, որոնք արգելված էին նախորդ վարչակարգի կողմից: Քաղաքական ասպարեզում կրկին հայտնվեցին նախկին կուսակցությունները, որոնք կարևոր դերակատարում ունեին անկախության նվաճումից ի վեր: Դրանց թվում էին ալ–Ումմա, Ազգային յունիոնիստական, կոմունիստական, Ժողովրդական–դեմոկրատական և այլ կուսակցությունները, որից հետո 1986 թ. տեղի ունեցան Սահմանադիր ժողովի ընտրություններ: Նրանում առավել ձայներ ստացան ալ–Ումմայի ներկայացուցիչները, և նրա ղեկավար Սադիկ ալ–Մահդին կազմեց կառավարություն, որն իր կուսակցական կազմով կոալիցիոն կառավարություն էր:

Սադիկ ալ–Մահդին որպես քաղաքական գործիչ աչքի չէր ընկնում իր ընդունակություններով և չկարողացավ մշակել հստակ ներքին և արտաքին քաղաքականություն: Նա չէր փայլում նաև իր վճռականությամբ: Եվ բնավ էլ պատահական չէր, որ նա շատ շուտով լրիվ կախման մեջ ընկավ իսլամական ուժերից, որոնց մեջ գերակայում էին մոլեռանդ ծայրահեղականները: Այդ ուժերը 1980–ական թվականների վերջերին միավորվեցին Ազգային իսլամական ճակատի մեջ, որը վերածվեց ազդեցիկ կազմակերպության և այդ ժամանակվանից ի վեր շարունակում է առաջատար դեր խաղալ Սուդանի քաղաքական կյանքում: Սադիկ ալ–Մահդին դարձավ Ազգային իսլամական ճակատի կամակատարը: Դա հանգեցրեց վարչապետի և նրա գլխավորած կառավարության հեղինակազրկմանը, որի անմիջական հետևանքը եղավ դարձյալ քաղաքական կայունության թուլացումը Սուդանում:

Դրան նպաստեցին նաև կառավարության անհաջողությունները հյուսիսի և հարավի միջև ընթացող քաղաքացիական պատերազմում, որը պահանջում էր հսկայական ֆինանսական միջոցներ և տնտեսական զոհողություններ: Իսկ դա անտանելի բեռ էր տնտեսապես հետամնաց մի այնպիսի երկրի համար, որպիսին Սուդանն էր, որտեղ բնակչության նշանակալի մասը գտնվում էր խրոնիկական քաղցի ճիրաններում:

Սադիկ ալ–Մահդիի կառավարությունը էթնոքաղաքական կոնֆլիկտը փորձում էր լուծել բացառապես ուժի միջոցով՝ արհամարհելով և համապատասխան տեղ չհատկացնելով հարցի քաղաքական–բանակցային կարգավորմանը: Իսկ քանի որ կառավարությունը որևէ հաջողություն չկարողացավ արձանագրել քաղաքացիական պատերազմում, դա իր հերթին ավելի նպաստեց կառավարության դիրքերի թուլացմանը:

Այդ իրավիճակից փայլուն կերպով օգտվեցին Սադիկ ալ–Մահդիի վարչակարգի հակառակորդները, որոնք 1989 թ. հունիսի 30–ին կատարեցին նոր պետական և դարձյալ զինվորական հեղաշրջում, որը գլխավորում էր գեներալ Ումար Հասան ալ–Բաշիրը: Սադիկ ալ–Մահդիի կառավարությունը տապալվեց, և երկրում հաստատվեց նոր վարչակարգ: Բայց ստեղծվեց յուրահատուկ իրադրություն· Ումար ալ–Բաշիրը չկարողացավ ամբողջությամբ իր ձեռքում կենտրոնացնել իշխանությունը և միանձնյա կառավարել երկիրը: Իշխանությունը փաստորեն կիսեցին գեներալ Բաշիրը և Ազգային իսլամական ճակատը, որը գլխավորում էր Հասան Թուրաբին: Ընդ որում՝ նրա հեղինակությունն ավելի բարձր էր, քան գեներալ Ումար ալ–Բաշիրինը: Այդ պատճառով էլ առաջին օրվանից նրանց միջև ստեղծվեցին լարված հարաբերություններ, որոնք վաղ թե ուշ պետք է հանգեցնեին առճակատման:

Սակայն ալ–Բաշիրին և Հասան Թուրաբիին միավորում էր նրանց կրոնագաղափարական ընդհանրությունը: Երկուսն էլ սուննի ֆունդամենտալիստներ էին և հարում էին եգիպտական «Մուսուլման եղբայրներ» ծայրահեղ մարտական և մոլեռանդ իսլամական կազմակերպությանը, որի իդեալը աստվածապետություն ստեղծելն է և Կորանը մուսուլմանական բոլոր պետությունների սահմանադրություն հռչակելը: Այդ պատճառով էլ 1989 թ. պետական հեղաշրջումը համարվում է նոր փուլ Սուդանի արդի պատմության մեջ, քանի որ Սուդանում առաջին անգամ հաստատվեց իր բնույթով իսլամական ծայրահեղ ֆունդամենտալիստական վարչակարգ: Եվ եթե հիշենք, որ դեռևս 1983 թ. Նիմեյրին երկրում մտցրել էր իսլամական օրենքը՝ շարիաթը, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի տիրապետող դիրքեր նվաճեց ծայահեղական իսլամը Սուդանի կառավարման համակարգում.

Իշխանությունը գրավելուց հետո Ումար Հասան ալ–Բաշիրը և Հասան Թուրաբին ստեղծեցին ժողովրդական պաշտպանության ուժեր, որոնք կոչված էին ոչ միայն ներքին օգտագործման համար, այլև

մշտապես հարձակումներ էին գործում հարավի ցեղերի վրա և ստրուկներ գերեվարում:

1993 թ. զինվորականները իշխանությունը հանձնեցին քաղաքացիական ուժերին, որը նշանակում էր Թուրաբիի դիրքերի հետագա ուժեղացում: Բայց ալ–Բաշիրին հաջողվեց զբաղեցնել Սուդանի պրեզիդենտի պաշտոնը, իսկ Թուրաբին դարձավ պառլամենտի նախագահ. Դրանից հետո տեղի ունեցան մի շարք փոփոխություններ երկրի կառավարման համակարգում: 1996 թ. վերացվեց Հեղափոխական հրամանատարության խորհուրդը, Ազգային իսլամական ճակատը վերանվանվեց Ազգային կոնգրես կուսակցության, թեև դրանից ըստ էության ոչինչ չփոխվեց, վերացվեցին նահանգային ասամբլեաները. Տեղի ունեցավ փոփոխություն նաև վարչատարածքային համակարգում, և նախկին ութ նահանգների փոխարեն ստեղծվեցին 26 նահանգներ, պրեզիդենտն իրավունք ստացավ նշանակել գործադիր իշխանության բարձրաստիճան պետական պաշտոնյաներին և այլն:

1999 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ Սուդանի XX դարի վերջին պետական հեղաշրջումը: Այն իրագործեց դարձյալ գեներալ Ումար Հասան ալ–Բաշիրը: Դիմակայությունը ալ–Բաշիրի և Թուրաբիի միջև չէր կարող անվերջ շարունակվել, և հակամարտությունը նրանց միջև այդ կերպ իր լուծումն ստացավ: Հասան Թուրաբին զրկվեց պառլամենտի նախագահի և Ազգային կոնգրես կուսակցության ղեկավարի և այլ պաշտոններից, ապա ձերբակալվեց: Երկրում մտցվեց արտակարգ դրություն, պառլամենտը ցրվեց, իսկ սահմանադրությունը կախակայվեց: Ամբողջ իշխանությունը կենտրոնացվեց ալ–Բաշիրի ձեռքում: Դրանով վերացավ յուրատեսակ երկիշխանությունը Սուդանում:

2000 թ. դեկտեմբերի 13–23–ը տեղի ունեցան Սուդանի պրեզիդենտի և պառլամենտի ընտրությունները: Քաղաքական ընդդիմությունը և նրա շահերն արտահայտող կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները հրաժարվեցին մասնակցել ընտրություններին՝ գտնելով, որ չկան ազատ և արդար ընտրություններ անցկացնելու երաշխիքներ: Այդուհանդերձ, ընտրությունները կայացան, և Ումար Հասան ալ–Բաշիրը վերընտրվեց պրեզիդենտ՝ ստանալով ընտրության մասնակիցների ձայների 86,5%–ը: Պրեզիդենտական ընտրություններին իր թեկնածությունն էր առաջադրել նաև Սուդանի նախկին դիկտատոր, գեներալ Ջաֆար Նիմեյրին, որը ստացավ ձայների ընդամենը 9,6%–ը:

Պառլամենտական ընտրություններում հաղթեց Ազգային կոնգրես կուսակցությունը, որը նախկին Ազգային իսլամական ճակատն էր: Պառլամենտի 360 տեղերից 355–ը շահեցին նրա ներկայացուցիչները:

Կազմվեց նոր կառավարություն, որը գլխավորեց պրեզիդենտը՝ Ումար ալ–Բաշիրը: Նախարարների խորհրդի բոլոր անդամներին նույնպես նշանակում է պրեզիդենտը: Կառավարության մեջ ընդգրկված նախարարների մեծ մասը պատկանում էր Ազգային կոնգրես կուսակցությանը, այսինքն՝ ֆունդամենտալ իսլամականներին:

Ահա այսպես լուծվեց իշխանության բաժանման հարցը: Սակայն միամտություն կլիներ կարծել, թե դրանով Սուդանում ավարտվեց պայքարը իշխանության համար:

2. Քաղաքացիական պատերազմի ավարտը, Սուդանի հարավի ինքնավարության հռչակումը և փոփոխություններ երկրի կառավարման համակարգում (2002–2005 թթ.)

Ումար ալ–Բաշիրը և նրա զինվորական և քաղաքական գործընկերները հասկանում էին, որ արդեն եկել էր ժամանակը ինչ–որ լուծում գտնել հարավի հարցում և հասնել քաղաքացիական պատերազմի դադարեցմանը: 1983 թ. վերսկսված երկրորդ քաղաքացիական պատերազմից արյունաքամ էր լինում երկիրը, նա ուղղակի կլանում էր երկրի մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները: Պատերազմը ցույց տվեց, որ կողմերից որ մեկը չի կարող հասնել վճռական հաղթանակի և իր կամքն ու կարգավորման իր տարբերակը պարտադրել մյուս կողմին. Պրեզիդենտ ալ–Բաշիրը լավ էր հասկանում, որ քաղաքացիական պատերազմը քաղաքական անկայունության և պետական հեղաշրջումների մշտական աղբյուր է, և եթե ինքն ուզում է ամրապնդել իր իշխանությունն ու ապահովագրել այն ապագա փորձություններից, ապա պետք է վերջ դնել քաղաքացիական պատերազմին:

Դա էին պահանջում նաև երկրի տնտեսական զարգացման, առաջադիմության և բնակչության նյութական դրության և սոցիալ–տնտեսական վիճակի բարելավման շահերը: 2004 թ. տվյալներով բնակչության 40%–ը գտնվում էր աղքատության սահմանագծից ներքև, սովը և թերասնումը սովորական երևույթներ էին, գործազուրկների թիվը հասնում էր մոտ 2 մլն և կազմում աշխատուժի մոտ 20%–ը: Տնտեսական հետամնացության ցուցիչ էր հանդիսանում նաև այն փաստը, որ XXI դարի սկզ-

բին Սուդանի աշխատուժի միայն 7% էր զբաղված արդյունաբերության մեջ այն դեպքում, երբ գյուղատնտեսության մեջ զբաղված էր 80%–ը, իսկ սպասարկման ոլորտում՝ 13%–ը. Բարձր էր երեխաների մահացությունը, իսկ կյանքի միջին տևողությունը կազմում էր մոտ 58 տարի: Ցածր էր նաև գրագիտությունը: Այստեղ հնարավոր չէ կիրառել գրագիտության ընդհանուր չափանիշները: Գրագետների ցանկի մեջ մտցվում էին բոլոր նրանք, ովքեր սոսկ կարող էին գրել և կարդալ. Նույնիսկ այդ պարագայում երկրի բնակչության գրագիտությունը 2003 թ. տվյալներով կազմում էր ընդամենը 61%, իսկ կանանցը՝ 50,5%

Հարցի կարգավորումը նույնքան անհրաժեշտ էր նաև Սուդանի հարավային շրջաններին և նրա բնակիչներին:

Հաշվի առնելով այդ բոլոր գործոնները և քաղաքական կամք դրսևորելով՝ Սուդանի կառավարությունը և Սուդանի ժողովրդի ազատագրության բանակը (ՍԺԱԲ), որը ղեկավարում էր հարավային սուդանցիների պայքարը և հանդես գալիս նրանց անունից, 2002 թ. հուլիսին կնքեցին համաձայնագիր պատերազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ: Երկու կողմերն էլ, հավատարիմ մնալով կրակի դադարեցման վերաբերյալ պայմանավորվածությանը, 2003–2004 թթ. շարունակեցին հաշտության բանակցությունները և հասան սկզբունքային համաձայնության: Դա հիմք տվեց նրանց 2005 թ. հունվարի 9–ին Քենիայի մայրաքաղաք Նայրոբիում ստորագրել Համապարփակ խաղաղության պայմանագիր (ՀԽՊ), որի համաձայն Հարավային Սուդանը ստանում էր ինքնավարություն: Վեց տարի անց պետք է անցկացվի հանրաքվե նրա անկախության վերաբերյալ՝ որոշելու՝ արդյոք Հարավային Սուդանը ցանկանում է ստանալ անկախություն և անջատվել Սուդանից, թե՞ մնալ որպես ինքնավար շրջան Սուդանի կազմում:

Այսպիսով՝ Հարավային Սուդանի կարգավիճակի հարցը, որն ամենաառանցքային հարցն էր, լուծվեց փոխզիջման հիմքի վրա: Հարավային Սուդանը և նրան ներկայացնող ՍԺԱԲ–ի ղեկավարությունը, որոնք պայքարում էին միայն անկախության համար, զիջում կատարեցին և համաձայնվեցին ինքնավարության վեցամյա շրջան սահմանելու հետ, անկախության հարցի վերջնական լուծմանը վեց տարի անց՝ 2011 թ. վերադառնալու պայմանով: Իսկ Խարթումը կամ Սուդանի կենտրոնական կառավարությունը, որը երկար տարիներ լսել անգամ չէր ուզում ոչ միայն անկախության, այլև ինքնավարության մասին, զիջում կատա-

րեց և Հարավային Սուդանին միանգամից շնորհեց ինքնավարություն՝ չառարկելով անկախության հարցի վերաբերյալ 2011 թ. հանրաքվե անցկացնելու սկզբունքին:

ՀԽՊ–ն, բացի կարգավիճակի հարցի լուծումից, նախատեսեց հարավային սուդանցիների ավելի լայն մասնակցություն երկրի կառավարմանը: Կողմերը համաձայնության եկան Սուդանում ստեղծել փոխպրեզիդենտի նոր պաշտոն՝ բացառապես Սուդանի հարավի ներկայացուցչի համար: Ի կատարումն այդ պայմանագրի՝ 2005 թ. օգոստոսի 4–ին Սալվա Կիիրը նշանակվեց փոխպրեզիդենտ, որին նույն տարվա սեպտեմբերի 20–ին փոխարինեց Օսման Թահան՝ երկուսն էլ Հարավային Սուդանից. Հարավային Սուդանն իրավունք ստացավ իր ներկայացուցիչն ունենալ նաև Սուդանի կառավարության կազմում՝ որպես վարչապետի տեղակալ: Այդ պաշտոնն ինքնաբերաբար գրավում է հարավային սուդանցի փոխպրեզիդենտը:

Համապարփակ խաղաղության պայմանագրի ստորագրումից հետո փոփոխություն տեղի ունեցավ նաև Սուդանի օրենսդիր մարմնի կառուցվածքում: Մինչ այդ Սուդանում գործում էր միպալատանի պառլամենտ, որը բաղկացած էր 360 դեպուտատներից և խարսխված էր ընտրական սկզբունքի վրա: ՀԽՊ–ի պայմանների համաձայն՝ Սուդանի բարձրագույն օրենսդիր մարմինը 2005 թ. վերակառուցվեց երկպալատանի պառլամենտի, որը բաղկացած է երկու պալատից՝ Ազգային ասամբլեայից և Նահանգների խորհրդից: Փոփոխություն մտցվեց Ազգային ընտրական օրենքի մեջ՝ Ազգային ասամբլեայի դեպուտատների թիվը 360–ի փոխարեն սահմանվեց 450, և ընդունվեց բոլոր 450 դեպուտատներին առանց ընտրության, պրեզիդենտի կողմից նշանակելու սկզբունքը: Ըստ այդմ՝ պրեզիդենտի 2005 թ. դեկրետով պառլամենտի 450 տեղերը բաժանվեցին հետևյալ կերպ. Ազգային կոնգրես կուսակցությանը հատկացվեց տեղերի 52%–ը, Հարավային Սուդանի ժողովրդի ազատագրության շարժմանը՝ 28%, հյուսիսի այլ ուժերին՝ 14% և հարավի այլ ուժերին՝ 6%: Իսկ ինչ վերաբերում է Նահանգների խորհրդին, ապա այստեղ յուրաքանչյուր նահանգ կարող է ունենալ 2 ներկայացուցիչ:

Քաղաքացիական պատերազմի երկու փուլում զոհվեց 2 մլն ավելի մարդ, և տեղահան արվեց մոտավորապես 4–4,5 մլն մարդ: Կորուստները վերաբերում էին երկու կողմին, սակայն կասկած չի հարուցում, որ դրանց մեծ մասը բաժին է ընկնում հարավցիներին՝ ոչ մուսուլման, հեթանոս և քրիստոնյա սևամորթներին:

Ահա այսպիսի թանկ գին վճարեց Սուդանը քաղաքացիական պատերազմում:

3. Ցեղասպանությունը Դարֆուրում և նրա դատապարտումը ՄԱԿ–ի ու միջազգային հանրության կողմից

Դարֆուրը Սուդանի 26 նահանգներից մեկն է, որը կազմված է 3 շրջաններից՝ Հյուսիսային Դարֆուրից, Արևմտյան Դարֆուրից և Հարավային Դարֆուրից, որոնք համապատասխանաբար սահմանակից են Լիբիային, Չադին և Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությանը: Դա մուսուլման սնամորթներով բնակեցված նահանգ է՝ մի քանի միլիոն բնակչությամբ:

Դարֆուրում հուզումները, որոնք հաճախ վերածվում էին ապստամբության, սկսվել էին դեռևս 1970–ական թվականներին, որի գլխավոր պատճառը այդ ժամանակ տնտեսական էր: Տեղական բնակչությունը մեղադրում էր Խարթումին այն բանում, որ նա խտրական քաղաքականություն էր վարում և անհրաժեշտ ուշադրություն չէր դարձնում Դարֆուրի տնտեսական զարգացմանն ու բնակչության նյութական ծանր դրությունը բարելավելու խնդիրներին: Այդ փուլում քաղաքական տեսակետից այնքան էլ հստակ չէին ձևակերպված դարֆուրցիների պահանջները, և պարզ չէր՝ նրանք ուզում են Սուդանից անջատվե՞լ, թե՞ ինչ–որ հատուկ կարգավիճակ ստանալ Սուդանի կազմում: Սադիկ ալ–Սահդիի կառավարությունն ապստամբների դեմ նետեց արաբներից կազմված զինված ոստիկանությանը՝ ջանջավիներին, և երկու կողմերի միջև սկսվեց մի երկարատև արյունալի պատերազմ, որը շատ հաճախ երկու կողմից էլ վերածվում էր զանգվածային կոտորածների: Կառավարությունը, գտնելով, որ ինքը հաղթանակել է, 1994 թ. վերջ տվեց պատերազմական գործողություններին:

Սակայն 2003 թ. պատերազմական գործողությունները վերսկսվեցին: Բայց դա արդեն սովորական պատերազմական գործողություններ չէին, այլ սարսափելի կոտորած, իսկական սպանդ, որն ամբողջ աշխարհում որակվեց որպես ցեղասպանություն: Զանգվածային սպանդ, գյուղերի ավերում, հրկիզում, բռնաբարություն, գույքի գրավում և թալան, զանգվածային տեղահանում և այլն. ահա Սուդանի իշխանությունների կողմից Դարֆուրում իրականացվող ցեղասպանության ընդհանուր պատկերը, որը հար և նման է հայոց ցեղասպանությանը, հրեական

հոլոքոստին և XX դարում այլ երկրներում կիրառված ցեղասպանություններին: 2003–2005 թթ. Դարֆուրում ցեղասպանության զոհ է դարձել 200–400 հազար մարդ և տեղահան արվել մոտ 2 մլն մարդ:

ՄԱԿ–ը, միջազգային հանրությունը, աշխարհի բոլոր պետությունները խստորեն դատապարտում են այդ ցեղասպանությունը և պահանջում Սուդանի իշխանություններից դադարեցնել ոճրագործությունը Դարֆուրում: Դրա վերաբերյալ հատուկ որոշումներ է ընդունել ՄԱԿ–ի անվտանգության խորհուրդը: Դարֆուրի ցեղասպանության հարցը քննարկման առարկա է դառնում միջազգային զանազան, այդ թվում և ցեղասպանությանը նվիրված գիտական ժողովներում: Նա քննարկման առարկա դարձավ 2005 թ. հունիսին ԱՄՆ–ի Ֆլորիդայի նահանգում Ցեղասպանության ուսումնասիրության միջազգային ասոցիացիայի կողմից կազմակերպված «Իննսուն տարի հայոց ցեղասպանությունից և վաթսուն տարի հրեական հոլոքոստից հետո» միջազգային գիտաժողովում, որին մասնակցում էին նաև Դարֆուրի և Աֆրիկայի մի քանի այլ երկրների ներկայացուցիչներ: Այդ կարևոր գիտաժողովին Հայաստանը ներկայացնում էր տողերիս հեղինակը: Գիտաժողովը խստագույնս դատապարտեց Սուդանի իշխանությունների ցեղասպանությունը Դարֆուրում: Նրա մասնակիցները, որոնք աշխարհի տարբեր երկրներից էին, և Դարֆուրի ներկայացուցիչը, այդ հարցը քննարկելիս անընդհատ անդրադառնում էին 1915 թ. հայոց ցեղասպանությանը և զուգահեռներ անցկացնում նրանց միջև՝ գտնելով շատ ընդհանրություններ հայերի նկատմամբ օսմանյան իշխանությունների և դարֆուրցիների նկատմամբ Սուդանի իշխանությունների քաղաքականության և գործադրած մեթոդների ու միջոցների միջև: Ամենակարևորն այն էր, որ բոլորը, այդ թվում և Դարֆուրի ներկայացուցիչը, ընդգծեցին, որ եթե 1915 թ. հայոց ցեղասպանությունը դատապարտված և ճանաչված լիներ միջազգային հանրության կողմից, ապա հետագա ցեղասպանությունները՝ ներառյալ Դարֆուրի, հնարավոր է, որ չլինեին: Եվ նրանք բոլորը դատապարտում էին Թուրքիայի ժխտական դիրքորոշումը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում.

Միջազգային ճնշման տակ և Աֆրիկայի միասնության կազմակերպության միջնորդությամբ 2006 թ. մայիսի 5–ին ստորագրվեց համաձայնագիր Դարֆուրում խաղաղությունը հաստատելու վերաբերյալ: Սակայն դա չի պահպանվում, և իրականում ողբերգությունը ցեղասպանության տեսքով Դարֆուրում շարունակվում է:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ Սուդանը կանգնած է շատ լուրջ հիմնախնդիրների առջև: Անկախություն ձեռքբերած բոլոր աֆրիկյան և ասիական, այդ թվում նաև արաբական երկրներն ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական խնդիրներ: Այդ առումով Սուդանը բացառություն չէ: Սուդանի յուրահատկությունը կայանում է նրանում, որ անկախությանը հաջորդած 50 տարիների ընթացքում լուրջ ձեռքբերումներ չեն գրանցվել դրանց լուծման ուղղությամբ: Այդ խնդիրները գտնվել են երկրորդ պլանում՝ առաջնությունը զիջելով էթնոքաղաքական բախումներին, իշխանության համար անվերջ պայքարին, տասնամյակներ տևած քաղաքացիական պատերազմին և սեփական ժողովրդի դեմ ցեղասպանություն իրագործելու քաղաքականությանը: Դրանք լուրջ արգելքներ են Սուդանի զարգացման ճանապարհին:

Սուդանի ապագան, նրա զարգացած և առաջադիմական երկրի վերածվելու հնարավորությունը կախված է դեմոկրատական, ժողովրդի շահերն արտահայտող և նրա հոգսերով ապրող վարչակարգի ստեղծումից, որը կկարողանա զարգացման ճիշտ ուղիներ նախագծել և կամք դրսևորել երկիրն այդ ուղիով տանելու համար:

Գլուխ ութերորդ

ՔՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔՈՒՎԵՅԹ

ԴԱՎԼԱԹ ԱԼ–ՔՈՒՎԵՅԹ
ԱԼ-ՔՈՒՎԵՅԹ

Աշխարհագրական դիրքը — գտնվում է Մերձավոր Արևելքում, Պարսից ծոցի ափերին
Սահմանները — սահմանակից է Իրաքին և Սաուդյան Արաբիային
Տարածքը — 17 հազ 820 քառ կմ, այդ թվում՝ ինը կղզիներ՝ Բուբիյան, Վարբա, Ֆայլակա և այլն
Բնակչությունը — 2 մլն 335 հազ. 648, որից 1 մլն 34 հազ 294–ը՝ Քուվեյթի քաղաքացի իսկ 1 մլն 291 հազ. 354–ը՝ օտարերկրացիներ (2005 թ)
Մայրաքաղաքը — Ալ–Քուվեյթ (1 մլն–ից ավելի), երկրորդ խոշոր քաղաքը՝ Սինա ալ–Ահմադի (մոտ 150 հազ)
Ազգային կազմը — քուվեյթցի արաբներ՝ 45%, արաբներ այլ երկրներից՝ 35%, հարավային ասիացիներ (հնդիկներ, շրիլանկացիներ, ֆիլիպինցիներ և այլն)՝ 9%, իրանցիներ՝ 4%, այլք՝ 7%
Կրոնը — պաշտոնական՝ իսլամ, դավանում է բնակչության 85%–ը, որից սուննի՝ 70%, շիա՝ 30%, հինդուսներ, պարսեր և այլք՝ 15%
Լեզուն — արաբերեն՝ պաշտոնական, գործածական է անգլերենը
Պետական կարգը — սահմանադրական միապետություն՝ էմիրություն, կառավարող դինաստիան՝ աս–Սաբահների դինաստիան
Գործադիր իշխանությունը — պետության ղեկավար էմիրը՝ Սաբահ ալ–Ահմադ ալ–Ջաբր ալ–Սաբահ (2006 թ հունվարի 29–ից), վարչապետը՝ Նասեր ալ–Մուհամմադ ալ–Ահմադ ալ–Սաբահ և կաբինետը
Օրենսդիր իշխանությունը — միպալատանի Ազգային ժողով՝ Մաջլիս ալ–Ումմա, բաղկացած 50 դեպուտատից, ընտրվում է չորս տարի ժամանակով
Դատական իշխանությունը — Վճռաբեկ բարձրագույն ատյան
Վարչական բաժանումը — կազմված է 5 մուհաֆազաներից՝ նահանգներից
Անկախությունը — 1961 թ հունիսի 19՝ բրիտանական պրոտեկտորատի վերացում
Ազգային տոնը — փետրվարի 25՝ Ազգային օր (սահմանվել է 1950 թ.)
Սահմանադրությունը — ընդունվել է 1962 թ նոյեմբերի 11–ին
Քաղաքական կուսակցություններ — չկան, լեգալ գործունեությունն արգելված է
Ազգային դրամը — քուվեյթի դինար


ՔՈՒՎԵՅԹ
ԻՐԱՆ
ԻՐԱՔ
Ալ-Շամիյա
Շատ ալ-Արաբ
Վաթբահ կղ.
Մարքաբ Հուդուդ ալ-Արթալ
Ֆաո
Բիշա հրվ.
Մութրիբա
Քասր ալ-Մաբիյա
Բուբիյան կղ.
ՔՈՒՎԵՅԹ
Բուրայշա հրվ.
Քուվեյթի ծոց
Ֆայլակա կղ.
Մութլա
Ալ-Ջահրա
Ալ-Քուվեյթ
Սալիմիյա
Հավալլի
Մինա ալ-Ահմադի
167
Ումմ-ար-Ռուուս լ.
Ալ-Ահմադի
Հուայրա
Մինաղիշ
Մինա Աբդալլահ
Բուրգան
29°
Սուբայհիյա
Արաբական թ/կղ
Մինա Սաուդ
Վաֆրահ
Ալ-Նուվիսիբ
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ

ՀՆԱ (համախառն ներքին արդյունք) ըստ շնչի — 22 հազ 800 ԱՄՆ դոլար (2005 թ.)

Արդյունաբերությունը — նավթ, նավթաքիմիա, ցեմենտ, նավաշինություն և վերանորոգում, շինարարություն և շինանյութեր, սննդի վերամշակում, ջրի աղազրկում

Գյուղատնտեսությունը — բնական անբարենպաստ պայմանները սահմանափակում են գյուղատնտեսության զարգացումը: Աշակվում են գլխավորապես բանջարեղենային կուլտուրաներ, ելակ, խոլորձ, նշանակալի է ձկան և ծովախեցիների որսը, տարածված է քոչվորական անասնապահությունը

Անդամակցություն միջազգային կազմակերպություններին — ՄԱԿ, Արաբական պետությունների լիգա. Ծոցի երկրների համագործակցության խորհուրդ, Իսլամական կոնֆերանս կազմակերպություն, ՕՊԵԿ, ՕԱՊԵԿ, Ինտերպոլ, Միջազգային արժութային ֆոնդ. Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Սննդի և գյուղատնտեսության կազմակերպություն, Առողջապահության միջազգային կազմակերպություն. ՅՈՒՆԵՍԿՕ, Առևտրի համաշխարհային կազմակերպություն և այլն

I. ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ (1918–1961 թթ.)

1. Քուվեյթի պետության կազմավորման գործընթացը և նրա սահմանների ճշգրտումը

Քուվեյթը՝ անապատային այդ փոքրիկ երկիրը, որը ոչնչով աչքի չէր ընկնում, դարեր շարունակ եղել է քոչվոր բեդվինական անասնապահական ցեղերի հանգրվան, որոնք միջցեղային բախումների հետ զուգահեռ գոյության համար մշտական պայքար են մղել բնության դաժան պայմանների դեմ: Տարբեր ժամանակաշրջաններում այն տարածքում, որը հիմա հայտնի է որպես Քուվեյթ, հաստատվել են արաբական տարբեր ցեղեր, որոնք փորձել են անասնապահության հետ միասին զբաղվել նաև առևտրով, ձկնորսությամբ, ծովի հատակից մարգարտի հանույթով և այլն: Այդ ցեղերը, սկսած XVI դարից, Քուվեյթ էին գալիս Կենտրոնական Արաբիայից, Միջագետքից, Սիրիայից և հարակից այլ տարածքներից:

XVII դարի կեսերին Արաբական թերակղզուց դուրս գալով և շարժվելով արևելյան ուղղությամբ՝ Քուվեյթում հանգրվանում է բանի խալիդ ցեղը: Նրա առաջնորդը՝ շեյխ Բարակը, սկսում է կառուցել փոքրիկ ամրոցներ, որոնք արաբերեն կոչվում են «քուտ»: Դրանք ծառայում էին ոչ միայն պաշտպանական նպատակների համար, այլ նաև որպես մատակարարման կենտրոններ և հանդերձանքի, պարենի ու այլ անհրաժեշտ իրերի պահեստարաններ: Այդ ամրոց–բերդերը կառուցվել են արաբական երկրներում ընդունված ռազմական ճարտարապետական սկզբունքով և ունեցել են պաշտպանական պատեր, աշտարակներ և այլն: Ահա այդ **«քուտ»** բառից էլ առաջացել է **«Քուվեյթ»** անունը, որը «քուտի» փոքրացուցիչն է: Այսպիսով՝ «Քուվեյթը» էթնոնիմ չէ, քանի որ երկրամասի հիմնական բնակիչները էթնիկ արաբներն են, և նրանք այդպես էլ կոչվում են՝ «քուվեյթցի արաբներ». Նույնիսկ այն դեպքում, երբ

բանավոր ասվում և գրավոր գրվում է «քուվեյթցի», միևնույնն է, դա ընկալվում է որպես էթնիկ արաբ:

Քուվեյթում հաստատված ցեղախմբերի մեջ էր նաև ալ–Սաբահ կլանը, որն այդտեղ հանգրվանել էր 1710 թ.: Դա պատկանում է անայզա ցեղային ֆեդերացիայի ամարաթ ցեղին: Նրա հետ միասին Քուվեյթում հանգրվանում են նաև այլ կլաններ՝ ալ–Խալիֆա, ալ–Ջայադ, ալ–Ջալահիմա և Սաավիդա, որի հիմքի վրա համայնք է ձևավորվում Քուվեյթում: Անհրաժեշտություն է առաջանում համայնքային կյանքը կարգավորելու համար ստեղծել համապատասխան կառավարման համակարգ, որը շատ պարզունակ էր: Համայնքի ամենաազդեցիկ երեք ընտանիքներն իրենց ձեռքն են վերցնում համայնքային գործերի կառավարումը: Նրանց մեջ էր նաև ալ–Սաբահների կլանը, որը ստանձնում է Քուվեյթի վարչական կառավարման, կարգի պահպանման և անվտանգության ապահովման գործերը: Դրանք համայնքի կյանքում ամենակարևոր հարցերն էին, որոնց տնօրինումը ալ–Սաբահ կլանի կողմից մեծապես օգնում է նրա դիրքերի, հեղինակության, ազդեցության, ապա նաև իշխանության ուժեղացմանն ու ամրապնդմանը համայնքի ներսում: Ի վերջո, դա հասցնում է ալ–Սաբահ կլանի իշխանության հաստատմանը Քուվեյթում, որը համայնքից աստիճանաբար դառնում է պետական կազմավորում, իսկ Սաբահների կլանը՝ կառավարող ժառանգական դինաստիա: Սկզբնական շրջանում դա շեյխություն էր: Քուվեյթի առաջին կառավարիչը 1756 թ. դառնում է շեյխ Սաբահ I ալ–Սաբահը:

Քուվեյթը հայտնվեց յուրահատուկ կարգավիճակում: Նա գտնվում էր արաբական աշխարհի այն մասում, որտեղ հաստատված էր օսմանյան տիրապետությունը: Բայց Քուվեյթը, ի տարբերություն արաբական հարևան մյուս երկրների, չէր գտնվում Օսմանյան կայսրության ուղղակի կառավարման ներքո: Այդ հարցի շուրջը կան տարբեր, շատ հաճախ իրարամերժ տեսակետներ, և տիրում է որոշ խառնաշփոթություն: Ռոբինսոն Գորդոնը Քուվեյթին նվիրված իր աշխատության մեջ նշում է, որ «հաճախ պարզ չէր, թե արդյոք Քուվեյթը Օսմանյան կայսրության մասն էր կազմում»:

Քուվեյթ — Օսմանյան կայսրություն հարաբերությունները գտնվում են Քուվեյթի պատմաբանների ուշադրության կենտրոնում, որոնց ուսումնասիրությունների արդյունքները վերջերս հրատարակվել են առանձին գրքով՝ «Քուվեյթ. պետականություն և սահմաններ» խորագրի ներքո՝ պրոֆ. Աբդուլլահ Յուսուֆ ալ–Ղունայմիի գլխավորությամբ:

Դրա զգալի մասը արժեքավոր փաստաթղթեր են, որոնք սակավ մատչելի են օտարերկրյա ուսումնասիրողին: Ըստ քուվեյթցի հետազոտողների՝ կարելի է խոսել միայն Քուվեյթի կրոնական ենթակայության մասին օսմանյան կառավարությանը՝ ելնելով այն իրողությունից, որ օսմանյան սուլթանը համարվում էր նաև աշխարհի բոլոր մուսուլմանների հոգևոր–կրոնական առաջնորդը: Իսկ ինչ վերաբերում է վարչական ենթակայությանը և քաղաքական տիրապետությանը, ապա, ըստ նրանց, նման բան չի եղել, այսինքն՝ Քուվեյթր օսմանյան տիրապետության տակ չի գտնվել:

Մեր կարծիքով՝ այդ երևույթը բացատրվում է, բացի այլ հանգամանքներից, նաև նրանով, որ Քուվեյթն այդ ժամանակ Օսմանյան կայսրության համար առանձնահատուկ նշանակություն չուներ: Բոլոր կողմերից շրջապատված լինելով արաբական տարածքներով, որոնք կամ ենթակա էին, կամ էլ կախման մեջ էին գտնվում Օսմանյան կայսրությունից՝ օսմանյան ղեկավարները գտնում էին, որ բնական հարստություններից զուրկ, անապատային և տարածքով փոքր Քուվեյթը, այդուհանդերձ, գտնվում էր իրենց տիրույթների սահմաններում և ազդեցության գոտում, և առանցքային դեր չէր կարող խաղալ: Հետևաբար, վարչական ենթակայության իրավական ծևակերպումը տվյալ դեպքում չուներ այն նշանակությունը, որը կարող էր ունենալ այլ երկրների դեպքում և այլ պարագաներում:

Իրադրությունը փոխվեց XIX դարի կեսերին, որը քուվեյթցի վերոնշյալ հեղինակները կապում են Օսմանյան կայսրությունում սկսված բարեփոխումների՝ թանզիմաթի քաղաքականության հետ, երբ օսմանյան կառավարությունը որդեգրեց պետական կառավարման կենտրոնացման քաղաքականությունը՝ տարածելով այն նաև արաբական վիլայաթների վրա: Ըստ այդմ՝ Իրաքը բաժանվեց երեք վիլայաթների՝ Բաղդադի, Մոսուլի և Բասրայի՝ համապատասխան սանջակներով, այսինքն՝ շրջաններով: Բասրայի վիլայաթը ներառնում էր ընդամենը երեք սանջակ՝ ալ–Ամարայի, ալ–Մունթաֆիկի և Բասրայի: Կցանկանայինք ուշադրություն հրավիրել այն իրողության վրա, որ Բասրայի վիլայաթի կազմում չէր մտցվել Քուվեյթը: Մենք այդ հանգամանքի վրա ուշադրություն ենք հրավիրում այն պատճառով, որ հետագայում՝ XX դարում, Իրաքը բազմիցս հավակնել է Քուվեյթին՝ բերելով այն փաստարկը, որ նա իբրև թե պատմականորեն կազմել է Բասրայի վիլայաթի մի մասը, իսկ քանի որ Բասրան ժամանակակից Իրաքի մի մասն է, ապա,

բնականաբար, Քուվեյթը նույնպես հանդիսանում է Իրաքի անբաժան մասը: Այդ կերպ Իրաքի կառավարողները մեկ անգամ չէ, որ փորձել են արդարացնել իրենց ագրեսիվ նկրտումները Քուվեյթի նկատմամբ, որոնք ոչ մի հիմք և արդարացում չունեն:

Վերադառնալով քուվեյթ–օսմանյան հարաբերություններին Քուվեյթի վրա օսմանյան տիրապետության հաստատման և վարչական կառավարման տեսանկյունից՝ հարկ է նշել, որ այդ հարցն ավելի ակտուալ դարձավ թանզիմաթի և նրան հաջորդող շրջանում. Այդտեղ կար մի կարևոր հանգամանք, որի վրա ուշադրություն են դարձրել անգլիական հետազոտողները: Նրանք, Քուվեյթի կարգավիճակը համարելով ինքնավար, նշում են. «Քուվեյթցիները, որպեսզի պահպանեին իրենց ինքնավարությունը, պետք է պահպանեին լավ հարաբերություններ թուրքերի հետ»: Դա արվել է բավականին հետաքրքիր ձևով: Քուվեյթը չի հայտնվել օսմանյան ուղղակի վարչության, այսինքն՝ կառավարման ներքո, սակայն նրա շեյխը՝ Աբդալլահ ալ–Սաբահը (1866–1892 թթ.) պատրաստակամություն է հայտնել հարկ վճարել օսմանյան սուլթանին, իսկ 1871 թ համաձայնվել է դառնալ Քուվեյթի կայմակամ–կառավարիչ՝ Բասրայի վալիի հովանու ներքո:

Քուվեյթի վրա իր տիրապետությունն ուժեղացնելու օսմանյան կառավարության քայլերն անհանգստացնում են քուվեյթցիներին, այդ թվում՝ ալ–Սաբահ կլանի անդամներին, առաջին հերթին՝ Քուվեյթի կառավարող շեյխ Աբդալլահի եղբորը՝ շեյխ Մուբարակ ալ–Սաբահ ալ–Սաբահին, որը Քուվեյթի պատմության մեջ մտել է «Մեծ Մուբարակ» անունով: Նա ընդհանրապես մեծ կասկածանքով էր վերաբերվում թուրքերին, չէր հավատում նրանց խոստումներին և համոզված էր, որ օսմանյան կառավարությունը պատրաստվում է գրավել Քուվեյթը· 1896 թ. նա կատարում է հեղաշրջում՝ սպանում է Քուվեյթը կառավարող շեյխ Աբդալլահին՝ իր եղբորը, իսկ մյուս եղբորն ընդհանրապես հեռացնում է ասպարեզից և ինքը դառնում Քուվեյթի կառավարող շեյխ՝ մնալով այդ պաշտոնում մինչև 1915 թ.: Մուբարակը թուրքական վտանգը կանխելու համար իր հույսերը կապում էր Մեծ Բրիտանիայի հետ և համապատասխան քայլեր է կատարում այդ ուղղությամբ, որը դրական արձագանք է գտնում Լոնդոնում: Մեծ Բրիտանիան բնավ չէր ցանկանում Օսմանյան կայսրության դիրքերի ամրապնդումը և արաբական նս մի երկրի անցումը նրա տիրապետության տակ: Նրան խիստ անհանգստացնում էր նաև այն հանգամանքը, որ իր վտանգավոր մրցակից Գերմանիայի կողմից

նախատեսված Բեռլին–Բաղդադ երկաթուղագծի վերջնակայանը լինելու էր Քուվեյթը: Երկու կողմերի մերձեցումից լույս աշխարհ եկավ 1899 թ. անգլո–քուվեյթյան գաղտնի պայմանագիրը: Անգլիան իր վրա վերցրեց Քուվեյթի անվտանգության և ամբողջականության ապահովումը, իսկ Քուվեյթը պարտավորվեց իր տարածքի որևէ մասը չզիջել, վարձակալության չտալ կամ չթույլատրել որևէ մեկին այլ կերպ տնօրինել, բացի բրիտանական կառավարությունից, հարաբերությունների մեջ չմտնել որևէ օտար կառավարության հետ, բացի բրիտանականից, և կամ նման հարաբերություններ չհաստատել առանց բրիտանական համաձայնության: Այսպես հաստատվեց բրիտանական պրոտեկտորատը Քուվեյթի վրա, որը կանխեց թուրքական տիրապետության հաստատումը և վերացրեց Քուվեյթը Բեռլին–Բաղդադ երկաթուղագծի տերմինալը դառնալու վտանգը:

Քուվեյթ պետության կազմավորման ճանապարհին կարևոր նշանակություն ունեցավ նաև անգլո–թուրքական 1913 թ. պայմանագիրը, որով օսմանյան կառավարությունը Քուվեյթը ճանաչեց որպես ինքնավար շեյխություն, իսկ շեյխ Մուբարակ I–ին՝ որպես նրա կառավարող: Սակայն այդ պայմանագիրը չվավերացվեց Թուրքիայի կողմից շուտով սկսված Առաջին համաշխարհային պատերազմի պատճառով, երբ Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ մտավ՝ անցնելով Գերմանիայի կողմը՝ ընդդեմ Մեծ Բրիտանիայի:

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց անմիջապես հետո անգլիական կառավարությունը պաշտոնապես Քուվեյթը հայտարարեց «բրիտանական պրոտեկտորատի տակ գտնվող անկախ շեյխություն»: Եվ արաբական այդ փոքրիկ երկիրը պատերազմից ավարտից հետո՝ 1918 թ., իր նորագույն պատմության շրջանը թևակոխեց այդ կարգավիճակով՝ որպես անգլիական պրոտեկտորատ:

Ալ–Սաբահ կլանը բաղկացած էր երկու հիմնական ճյուղից՝ Ջաբր և Սալիմ, որոնք հաճախ մրցակցում էին միմյանց հետ: Բայց ընդհանուր առմամբ նրանք կարողանում էին համագործակցել՝ յուրաքանչյուր ճյուղի ներկայացուցչին համապատասխան բարձր տեղ ապահովելով կառավարման համակարգում: 1921 թ. ալ–Սաբահ Ահմադ իբն Ջաբրը դարձավ Ջաբր ճյուղին պատկանող Քուվեյթի առաջին կառավարող շեյխը: Նա երկիրը կառավարեց մոտ 30 տարի՝ մինչև 1950 թ.:

1918 թ. հաջորդած առաջին տարիներին Քուվեյթի առջև ծառացավ սահմանների հարցը, և այդ հողի վրա վեճ ծագեց Նաջդի (հետա-

գայում՝ Սաուդյան Արաբիա) հետ: Երկու երկրների միջև վեճը ավելի բորբոքելու գործում ակտիվ դեր խաղաց Անգլիան, որին անհանգստացնում էր Նաջդի սուլթան Իբն Սաուդի Արաբական թերակղզու տարածքներն իր տիրապետության ներքո միավորելու քաղաքականությունը: Անգլիական ճնշման տակ Քուվեյթի շեյխ Սալիմը ներգրավվեց Նաջդի դեմ ուղղված պայքարի մեջ: Նաջդը ձեռնարկեց համապատասխան հակաքայլեր՝ ուղղված Քուվեյթի դեմ՝ տնտեսական էմբարգո սահմանեց Քուվեյթի հետ կատարվող առևտրի, այդ թվում և տրանզիտային առևտրի վրա, իսկ 1920 թ. ապրիլին իխվանները Սաուդյան Արաբիայից ներխուժեցին Քուվեյթ և պարտության մատնեցին քուվեյթյան փոքրաքանակ զորքերին:

Քուվեյթին օգնության եկան անգլիացիները, և 1920 թ. հոկտեմբերին քուվեյթյան զորքերը ջախջախեցին իխվանների զորաջոկատը: 1921 թ. հունվարին բանակցություններ սկսվեցին Նաջդի և Քուվեյթի միջև հարաբերությունները կարգավորելու շուրջը: Այդ նպատակով Նաջդի մայրաքաղաք ալ–Ռիյադ մեկնեց քուվեյթյան պատվիրակությունը թագաժառանգ Ահմադ ալ–Սաբահի գլխավորությամբ, որին Իբն Սաուդը հավաստիացրեց, որ Նաջդը հարգում է Քուվեյթի տարածքային ամբողջականությունը և նրա նկատմամբ տարածքային պահանջ չունի: Բանակցությունների շնորհիվ դրական մթնոլորտ ստեղծվեց հարաբերությունները երկու երկրների միջև կարգավորելու համար: Վերջապես Ահմադ II իբն Ջաբրին, որը շեյխ Սալիմի մահից հետո հռչակվել էր Քուվեյթի կառավարող շեյխ, հաջողվեց համաձայնության գալ Նաջդի սուլթան Աբդ ալ–Ազիզ իբն Սաուդի հետ, և 1922 թ. դեկտեմբերին Ուքայր բնակավայրում կնքվեց սաուդա–քուվեյթյան արձանագրություն երկու երկրների միջև սահմանանշման՝ սահմանների դեմարկացիայի վերաբերյալ: Դրա համաձայն Քուվեյթից հարավ ստեղծվեց այսպես կոչված սաուդա–քուվեյթյան չեզոք գոտի, որն ընդգրկում էր 5770 քառ. կմ տարածք: Կողմերը պայմանավորվեցին չեզոք գոտում չկառուցել որևէ քաղաքացիական և ռազմական մշտական շինություն: Նրանք համաձայնվեցին, որ այդ գոտին ազատ է երկու երկրների քոչվոր ցեղերի, նրանց անասնահոտերի համար՝ օգտվելու գոտու ջրային աղբյուրներից և խոտային ծածկույթից:

Դրան հաջորդեց Քուվեյթի սահմանների ճշգրտումը Իրաքի հետ, երբ 1922 թ. Իրաքում գահ բարձրացավ Ֆեյսալ I–ը: Իրաք–քուվեյթյան սահմանները ճշգրտվեցին 1923 թ՝ հիմնվելով 1913 թ. անգլո–թուրքա-

կան պայմանագրի դրույթների վրա: 1923 թ. ապրիլ ամսին Քուվեյթի շեյխ Ահմադ ալ–Ջաբրը ուղերձ հղեց Իրաքում անգլիական գլխավոր կոմիսար Պերսի Կոքսին, որտեղ ասված էր. «Քուվեյթի և Իրաքի միջև սահմանների լուծումն այն է, ինչ պահանջել էր շեյխ Սալիմը 1920 թ. սեպտեմբերի 17–ին Չեզ ուղղված ուղերձում»: Նույն ամսին Պերսի Կոքսը Քուվեյթում բրիտանական քաղաքական գործակալի միջոցով հետևյալ պատասխանն ուղարկեց շեյխ Ահմադ ալ–Ջաբրին. «Շեյխին կարող եք տեղյակ պահել, որ նրա պահանջները քուվեյթ–իրաքյան սահմանների վերաբերյալ ճանաչվում են Նորին մեծության կառավարության կողմից՝ համաձայն այն սահմանների և կղզիների, որոնք նշված էին շեյխի կողմից նրա նախորդ ուղերձում»: Այդ սահմաններն այն են, ինչ որ գոյություն ունեն նրանց միջև այսօր: Նշենք, որ բոլոր տարբերակներում Քուվեյթը դուրս է եղել Բասրայի վիլայաթից, որը հետագայում վերանվանվեց Բասրայի լիվայի:

Ինչ վերաբերում է քուվեյթ–սաուդյան սահմաններին և դրա հետ կապված չեզոք գոտուն, ապա կողմերը դրան անդրադարձան նաև հետագայում. սկզբում՝ 1961 թ., ապա՝ 1966 թ.: Այդ հարցը վերջնականապես կարգավորվեց 1966 թ.: Քուվեյթը և Սաուդյան Արաբիան համաձայնվեցին չեզոք գոտին բաժանել երկու հավասար մասերի, որոնք միացվեցին համապատասխանաբար Քուվեյթին և Սաուդյան Արաբիային: Քուվեյթի տարածքն ավելացավ 2885 քառ. կմ–ով:

Այդ ընթացքում տեղի ունեցավ մեկ այլ կարևոր փոփոխություն Քուվեյթի և նրա ղեկավարի տիտղոսում: 1965 թ. շեյխը սկսեց կոչվել էմիր, իսկ շեյխությունը վերանվանվեց էմիրության.

Ահա այսպես ավարտվեց Քուվեյթ պետության կազմավորման և նրա պետական սահմանների միջազգայնորեն ճանաչման գործընթացը:

2. Քաղաքական իրադրությունը և սոցիալ–տնտեսական վիճակը Քուվեյթում (1920–1940–ական թվականներ)

Քուվեյթը նշված ժամանակահատվածում շարունակում էր մնալ հետամնաց երկիր՝ անբարենպաստ բնակլիմայական պայմաններով: Նա նոսր բնակեցված երկիր էր: 1937 թ. նրա բնակչությունը կազմում էր ընդամենը 75 հազար մարդ: Քաղաքներ ժամանակակից առումով գոյություն չունեին: Նույնիսկ մայրաքաղաքը, որի բնակչությունն այդ տարիներին կազմում էր ոչ ավելի, քան 20 հազար, կավե տներով, նեղլիկ փո-

ղոցներով, առանց պլանի կառուցված մի անհրապույր բնակավայր էր: Նրա միակ տեսարժան վայրը նավահանգիստն էր, որտեղ կայանում էին քուվեյթյան ինքնատիպ դաու նավակները:

Տնտեսության բնագավառում տիրապետողը՝ ընդհուպ մինչև 1950–ականների սկզբները տնտեսավարման արխայիկ ձևերն ու մեթոդներն էին: «Առաջատար» ճյուղը քոչվորական էքստենսիվ անասնապահությունն էր: Բեդվինները պահում էին ուղտ, ոչխար, այծ, շուկա հանում այծի կաշի, ոչխարի մորթի, բուրդ, միս և այլն:

Քուվեյթի հնարավորությունները գյուղատնտեսության բնագավառում շատ սահմանափակ էին: Անապատների տիրապետության պայմաններում հողային տարածքների միայն 1%–ն էր մշակելի: Հողագործությամբ զբաղվում են միայն օազիսային գոտիներում, մասնավորապես Ջարայի շրջանում. Դրությունն ավելի էր բարդանում խմելու և ոռոգման ջրերի սակավության հետևանքով: Այդ պատճառով հացահատիկը, բանջարեղենը և միրգը հիմնականում ներմուծվում էին.

Անմխիթար վիճակում էր գտնվում նաև այսպես կոչված արդյունաբերությունը: Քուվեյթում ժամանակակից հասկացությամբ արդյունաբերություն գոյություն չուներ: Կար պապենական տնայնագործական–արհեստագործական արտադրություն, որի հիմնական արտադրանքը կտավի, կաշվի վերամշակման, մետաղագործական և տնային այլ իրերի արտադրությունն էր: Դրանք ներքին պահանջները բավարարելու համար էին միայն: Բնակչության մի փոքր մասի զբաղմունքն էլ ձկնորսությունն էր:

Սակայն կար գործունեության երկու բնագավառ, որ ուշագրավ էին: Դա քուվեյթյան դաու կոչված հայտնի նավակների շինարարությունն էր: Դաուներով անվախ քուվեյթցի նավաստիները ակոսում էին ոչ միայն Ծոցի ջրերը, այլև բաց ծով դուրս գալիս և նպաստում առևտրի զարգացմանը հարևան երկրների հետ: Դաուն հայտնի էր շրջակա բոլոր երկրների բնակիչներին, որոնք նույնպես օգտվում էին դրանցից: Այդ նավակների կամ, կարելի է ասել, նավերի շինարարությունը բավականին մեծ տեղ էր գրավում Քուվեյթի տնտեսության մեջ: Մյուսը բնական մարգարտի որսը կամ հանույթն էր, որով քուվեյթցիները հռչակված էին: Դա շատ ընտանիքների համար ապրուստի միջոցներ հայթայթելու միակ աղբյուրն էր: Սակայն մարգարտի հանույթը շեշտակի անկում ապրեց և մահացու հարված ստացավ, երբ 1930–ականների սկզբներին ճապոնիան անցավ արհեստական մարգարտի արտադրությանը.

Կարծում ենք, որ Քուվեյթի հետամնացության պատկերն ավելի ամբողջական կդառնա, եթե նշենք նաև, որ Քուվեյթում չկար առողջապահական համակարգ, և անմխիթար վիճակում էր գտնվում կրթական գործը: Բնակչության ճնշող մեծամասնությունն անգրագետ էր: 1937 թ. Քուվեյթում կար ընդամենը 4 տարրական դպրոց: Քուվեյթում կային ոչ մեծ թիվ կազմող գրագետ մարդիկ, նույնիսկ մտավորականներ, որոնք իրենց կրթությունը ստացել էին հարևան արաբական երկրներում՝ Եգիպտոսում, Լիբանանում, Իրաքում և այլուր:

Այս բոլորից հետո դժվար է չկիսել Քուվեյթի ժամանակակից պատմության, քաղաքականության, տնտեսության և սոցիալական հարցերի լավագույն մասնագետներից մեկի՝ Բարգես Համուդ ալ–Բարգեսի Քուվեյթի միջանկախության շրջանի տնտեսությանը տրված գնահատականը: Անդրադառնալով այդ հարցին՝ նա «Քուվեյթի ժամանակակից առաջադիմության 25–ամյա դարաշրջանը» աշխատության մեջ գրում է՝ «Քուվեյթը ոչ արդյունաբերական, ոչ էլ գյուղատնտեսական երկիր էր»: Այսպիսի կտրուկ եզրակացությունից հետո, որը ճշմարտություն է, նա, շարունակելով իր միտքը, ավելացնում է, որ Քուվեյթում չկար բավարար բարձրորակ աշխատանքային ուժ, նա մուտք չուներ բնական ջրային ռեսուրսներին, չուներ բարեբեր հողեր գյուղատնտեսական արտադրանքի համար, իսկ ծովը քուվեյթցիներին գրավում էր առևտրի, մարգարտի որսի և ձկնորսության նպատակներով:

Այսպիսին էր ընդհանուր գծերով իրադրությունը Քուվեյթում մինչև պատմական այն պահը, երբ այնտեղ նավթ հայտնաբերվեց, որը կոչված էր արմատապես փոխելու Քուվեյթի սոցիալ–տնտեսական դրությունը և այն վերածելու արդիական երկրի.

Նավթի արդյունահանումը հենց սկզբից անցավ ամերիկյան և անգլիական նավթային ընկերությունների ձեռքը: Ամերիկյան «Գալֆ օյլ կորպորեյշընը» և բրիտանական «Անգլո–պերշըն օյլ կոմպանին» միավորվելով 1934 թ. հիմնեցին «Քուվեյթ օյլ կոմպանին» (ՔՕԿ): Քուվեյթի շեյխ Ահմադ ալ–Սաբահը 75 տարի ժամանակով ՔՕԿ–ին շնորհեց կոնցեսիա և Քուվեյթի տարածքում նավթի հետախուզման և արդյունահանման մենաշնորհը: Ամերիկյան և անգլիական նավթային այդ երկու գիգանտներն իրենց ընկերությունը հիմնեցին փայաբաժինների հավասարության հիմքի վրա՝ յուրաքանչյուրին պատկանում էր ակցիաների 50%–ը: Նավթի հորատումը սկսվեց 1936 թ., և արդեն 1938 թ. Բուրգանում հայտնաբերվեցին նավթի վիթխարի պաշարներ, խփեց առաջին

շատրվանը: Սակայն 1939 թ. սկսված Երկրորդ համաշխարհային պատերազմը խանգարեց Քուվեյթի նավթի արդյունաբերական հանույթը. ՔՕԿ–ը 1942 թ. ժամանակավորապես փակեց նավթահորերը, և նավթահորատման աշխատանքները դադարեցվեցին մինչև պատերազմի ավարտը: Չնայած այդ հանգամանքին՝ արդեն պարզ էր, որ արաբական նս մեկ երկիր լրացնելու է նավթ արդյունահանող երկրների շարքը:

Ինչ վերաբերում է քաղաքական իրադրությանը, ապա այստեղ նկատվում էին որոշ տեղաշարժեր: 1930–ական թվականներին հասարակական մթնոլորտն ավելի ու ավելի էր համակվում դժգոհության զգացմունքով՝ ընդդեմ բրիտանական պրոտեկտորատի և նրան ենթակա քուվեյթյան իշխանությունների: Ճիշտ է, այդ ուժերը դեռևս փոքրաթիվ էին, բայց, այդուհանդերձ, սկսել էին որոշակի դերակատարում ունենալ Քուվեյթի ներքաղաքական և հասարակական կյանքում: Դրանք հիմնականում մտավորականներն էին[33]: Նրանց ծրագիրն այնքան էլ հստակ չէր, մանավանդ քաղաքական պահանջների հարցում: Նախ՝ չկար միասնական տեսակետ, մի մասը կողմնակից էր անկախության, իսկ մի մասն էլ կանգնած էր Քուվեյթն Իրաքի հետ միավորելու տեսակետի վրա: Սակայն նրանք միասնական էին իրենց ժխտական դիրքորոշման մեջ՝ հանդեպ բրիտանական պրոտեկտորատը:

1938 թ. հունիսին հուզումներ սկսվեցին Քուվեյթում, ինչն ընդհանրապես նորություն էր Քուվեյթի քաղաքական կյանքում: Շեյխ Ահմադ ալ–Սաբահը ստիպված էր դիմել զիջումների և համաձայնվեց ստեղծել նոր մարմիններ պետական կառավարման համակարգում: Նրա հրամանով ստեղծվեցին Օրենսդիր խորհուրդ և Խորհրդատվական խորհուրդ: Օրենսդիր խորհուրդը մշակեց սահմանադրության նախագիծ, որը պարունակում էր նաև քաղաքական պահանջներ. Գլխավորները երեքն էին՝ բրիտանական պրոտեկտորատի վերացում, կառավարող դինաստիայի եկամուտների սահմանափակում ու ազատված միջոցների հատկացում տնտեսության զարգացման համար, և առողջապահական ու կրթական համակարգի ստեղծում: Այդ պահանջներն անընդունելի էին անգլիական և քուվեյթյան իշխանությունների համար, որոնք դրանց մեջ տեսան սպառնալիք իրենց տիրապետությանը: Շեյխ Ահմադը 1939 թ. անցավ բռնամիջոցների քաղաքականության, ձերբակալեց այդ շարժման ղեկավարներին, որոնցից մի քանիսը մահապատժի են-

33 Որոշ աղբյուրներում նրանց կոչում են երիտքուվեյթցիներ.

թարկվեցին: Սակայն ընդհանուր դժգոհությունը ոչ միայն չվերացավ, այլ, ընդհակառակը, ավելի ուժեղացավ: Հաշվի առնելով այդ հանգամանքը շեյխ Սհմադն իր անգլիական խորհրդատուների գիտությամբ և հավանությամբ դարձյալ դիմեց զիջումների: Նա համաձայնվեց գործողության մեջ դնել սահմանադրությունը՝ սակայն փոփոխության ենթարկված տարբերակով: Մասնավորապես շեյխ Սհմադը սահմանադրության մեջ մտցրեց հետևյալ ձևակերպումը. «Քուվեյթը արաբական պետություն է, որը գտնվում է բրիտանական պրոտեկտորատի տակ»: Անգամ այդ սահմանադրությունն անտեսվում էր Քուվեյթում, և կառավարող ալ–Սաբահ դինաստիան նրա հետ բոլորովին հաշվի չէր նստում: Իշխանությունները հարկ չհամարեցին անցկացնել Օրենսդիր ժողովի ընտրություններ, թեև դրանք նախատեսվում էին սահմանադրությամբ: Իսկ Խորհրդատվական խորհուրդն անգործության էր մատնված: Նա բաղկացած էր ութ հոգուց, որոնք բոլորն էլ պատկանում էին կառավարող ալ–Սաբահ դինաստիային, և նրանք, բնականաբար, որևէ «խորհուրդ» չէին տալիս շեյխ Սհմադին, որը հակասեր նրանց շահերին:

Այսպիսին էր քաղաքական իրադրությունը Քուվեյթում, երբ սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Քուվեյթը, համաձայն անգլո–քուվեյթյան պայմանագրերի, հանդես եկավ Անգլիայի կողմում: Գերմանիան և Իտալիան իրենց ծրագրերում մեծ տեղ էին հատկացնում նաև Պարսից ծոցին և ձգտում էին հասնել նրա ափերին: Դա մեծ վտանգ էր ներկայացնում Ծոցի արաբական բոլոր շեյխություններին, որոնք այս կամ այն կերպ կախման մեջ էին գտնվում Անգլիայից: Վտանգը կախված էր նաև Քուվեյթի գլխին: Այդ տարածաշրջանի գրավումը նույնպես դրված էր գերմանական գեներալ Ռոմելի վրա, որը պետք է Հյուսիսային Աֆրիկան գրավելուց հետո ներխուժեր Պարսից ծոցի շրջանը:

Անգլիան կանխարգելիչ քայլեր ձեռնարկեց, այդ թվում և Քուվեյթում: Շեյխ Սհմադը համաձայնվեց, որ Քուվեթում հաստատվեն բրիտանական ուժեղացված կայազորներ, իսկ Քուվեյթի ծովախորշում կառուցվի ռազմածովային բազա: Սակայն գերմանական ծրագրերը ձախողվեցին, Ռոմելը պարտություն կրեց, և Քուվեյթն ու Ծոցի մյուս երկրների սպառնացող վտանգը վերացավ:

Պատերազմը բացասական հետևանքներ ունեցավ Քուվեյթի տնտեսական և հասարակական–քաղաքական կյանքի վրա: Անգլիան Քուվեյթի թեկուզ և սակավ տնտեսական ռեսուրսներն օգտագործեց ռազմական նպատակների համար: Քուվեյթում, ինչպես և արաբական մի

շարք այլ երկրներում, կային ուժեր, որոնք գտնում էին, որ Գերմանիայի հաղթանակը և Անգլիայի ռազմական պարտությունը կարող են բարենպաստ պայմաններ ստեղծել բրիտանական տիրապետությունից ազատագրվելու և անկախություն նվաճելու համար: Այդ հողի վրա որոշակի քաղաքական լարվածություն ստեղծվեց Քուվեյթում, այդ թվում՝ կառավարող դինաստիայի ներսում: Շեյխ Սալիմ I–ի որդին՝ ալ–Սաբահ Աբդուլլահը կասկածվում էր առանցքի երկրներին՝ Գերմանիային և Իտալիային համակրելու մեջ: Անգլիան՝ որպես պրոտեկտոր երկիր, եռանդուն քայլերի դիմեց և կարողացավ այնպես անել, որ նա զրկվեց որևէ պաշտոն գրավելուց ու դուրս մղվեց կառավարման համակարգից:

Ազգային–դեմոկրատական ուժերն իրենց դժգոհությունն էին արտահայտում բրիտանական ռազմական հրամանատարության գործունեության կապակցությամբ և բացահայտորեն քննադատում շեյխ Ահմադին՝ Մեծ Բրիտանիային անվերապահորեն պաշտպանելու համար:

1940–ական թվականների սկզբներին Քուվեյթում սկսվեց քաղաքացիական անհնազանդություն, որը հաճախ վերածվում էր ցույցերի: Իր դերը խաղաց քուվեյթյան վտարանդիության ընդգծված հակաբրիտանական և հակակառավարական դիրքորոշումը: Նրանք գործում էին Կահիրեից, հարևան Բաղդադից ու Բեյրութից և ուղղորդում Քուվեյթի ազգային–հայրենասիրական ուժերի գործունեությունը: Բայց այդ ուժերը դեռևս թույլ էին, վատ էին կազմակերպված, ասպարեզում չկային քաղաքական կազմակերպություններ, որոնք կարողանային կազմակերպված բնույթ տալ ու ղեկավարել շարժումը: Բրիտանական և քուվեյթյան իշխանություններին հաջողվեց սահմանափակել և իրենց վերահսկողության տակ վերցնել հակաբրիտանական և հակակառավարական շարժումները՝ մեծապես օգտագործելով Քուվեյթում գտնվող անգլիական զորքերի ներկայությունը: Դրանում իր որոշակի դերը խաղաց նաև Քուվեյթը արաբական աշխարհից կտրելու և մեկուսացնելու քաղաքականությունը, մանավանդ այն երկրներից, որտեղ ուժեղ էին հակաբրիտանական շարժումները: Անգլիան կիրառեց Քուվեյթը արաբական այնպիսի երկրների հետ մերձեցնելու տակտիկան, որոնք պահպանողական էին և Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ–ի հետ գտնվում էին սերտ հարաբերությունների մեջ: Դրանց թվին էր պատկանում Սաուդյան Արաբիան, և Անգլիային հաջողվեց հասնել այն բանին. որ 1942 թ. ապրիլի 20–ին Քուվեյթը Սաուդյան Արաբիայի հետ ստորագրեց բարեկամության պայմանագիր:

Պատերազմի տարիներին ձեռք բերված պայքարի փորձը իր դրական դերը խաղաց պատերազմի ավարտից հետո Քուվեյթում ծավալված ազգային–հայրենասիրական և հակաբրիտանական պայքարում:

3. Քուվեյթն անկախության շեմին (1950–ական թվականներ)

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո վերսկսվեցին աշխատանքները նավթարդյունահանման, նավթային արդյունաբերության ստեղծման, դրա հիման վրա Քուվեյթում բարեփոխումներ կիրառելու և Քուվեյթի տնտեսական զարգացումն ու առաջընթացն ապահովելու ուղղությամբ: ՔՕԿ–ը զգալի կապիտալ ներդրումներ կատարեց ոչ միայն նավթի արդյունահանման, այլև ենթակառուցվածքների ստեղծման մեջ: Կառուցվեց Միննա ալ–Ահմադի նավթային կենտրոնը, ստեղծվեցին բեռնավորման և փոխադրման միջոցներ և այլն: 1946 թ. արդյունահանվեց 800 հազ. տոննա նավթ, և նավթով բեռնավորված առաջին տանկերը մեկնեց Քուվեյթից: Սկսվեց Քուվեյթի պատմության նավթային դարաշրջանը:

1950 թ. փետրվարի 25–ին մահացավ շեյխ Ահմադ իբն Ջաբրը, որը Քուվեյթի կառավարողն էր 1921 թվականից: Նրան փոխարինեց Աբդուլլահ իբն Սալիմը, որը մշտապես լարված հարաբերությունների մեջ էր իր նախորդի հետ: Աբդուլլահի Քուվեյթի կառավարող շեյխ հռչակումով իշխանության ղեկն ալ–Սաբահ ընտանիքի Ջաբր ճյուղից անցավ Սալիմ ճյուղին:

Աբդուլլահի կառավարման տարիները համընկան Քուվեյթում նավթային բումի հետ: ՄԱԿ–ի տվյալներով նավթարդյունահանման առաջին տարում՝ 1946 թ., արդյունահանվել էր ընդամենը 800 հազ. տոննա նավթ, իսկ վեց տարի անց՝ 1952 թ.՝ արդեն 37,6 մլն տոննա: Քուվեյթում նավթային բումին նպաստեց նաև 1951–1953 թթ. քաղաքական ճգնաժամն Իրանում, որի պատճառով այդ երկրում կրճատվեց նավթի արդյունահանումը: Օգտվելով դրանից՝ ՔՕԿ–ը կտրուկ ավելացրեց նավթի արդյունահանումը Քուվեյթում: Աճը բարձր տեմպերով շարունակվեց նաև հաջորդ տարիներին, և 1955 թ. Քուվեյթը դարձավ ամենախոշոր նավթ արդյունահանող երկիրը Պարսից ծոցում: Իր առաջատար դիրքերն այդ բնագավառում նա պահպանեց մոտ 10 տարի: 1964 թ. Քուվեյթը, հատելով 100 մլն տոննայի սահմանը, նավթի արդյունահանումը հասցրեց 105 մլն տոննայի:

Նավթի արդյունահանման ածը ինչքան էլ որ կարևոր լիներ, այդուհանդերձ, պակաս կարևոր չէր, թե ինչպես էին բաշխվում նրանից ստացվող շահույթները ՔՕԿ–ի և Քուվեյթի կառավարության միջև: Սկզբնական շրջանում՝ 1946–1951 թթ., Քուվեյթը ՔՕԿ–ից ստանում էր այսպես կոչված ռոյալթի՝ վարձակալման վճար՝ կես շիլլինգ յուրաքանչյուր տոննայի համար: Ըստ այդմ՝ Քուվեյթի հասույթները 1946–1949 թթ. կազմել են 14 մլն, 1950 թ.՝ 11,2 մլն, 1951 թ՝ 16,8 մլն ԱՄՆ դոլար: Այդ թվերն ինքնին վերցրած առանձնապես մեծ բան չեն, բայց եթե նկատի առնենք այն թշվառ վիճակը, որի մեջ գտնվում էին երկրի տնտեսությունը և բնակչությունը, ապա դա փոքր գումար չէր, թեև անգլիական և ամերիկյան նավթային ընկերությունների շահույթները ոչ մի համեմատության մեջ չէին կարող գտնվել դրա հետ:

1951 թ. դեկտեմբերի 7–ին Քուվեյթը կարողացավ ՔՕԿ–ի հետ կնքել նոր կոնցեսիոն պայմանագիր, որը սահմանեց շահույթների բաժանման հավասար՝ 50:50–ի սկզբունքը: Դա արդեն լուրջ հաջողություն էր Քուվեյթի համար, թեև կոնցեսիոն պայմանագրի ժամկետը երկարաձգվեց մինչև 2026 թ.: Այդ սկզբունքը պահպանվեց մինչև 1976 թ , երբ Քուվեյթն ազգայնացրեց նավթային արդյունաբերությունը:

Իսկ ինչպե՞ս և ի՞նչ նպատակների համար էին ծախսվում այդ գումարները մինչև 50: 50–ի սկզբունքի հաստատումը և նավթարդյունաբերության ազգայնացումը:

Սկզբնական շրջանում կառավարող շեյխ Ահմադ իբն Ջաբրը ՔՕԿ–ից ստացվող վարձավճարը և հարկերը համարում էր իր անձնական սեփականությունը և ստացված գումարներն այդպես էլ տնօրինում էր: Դա առաջացրեց խիստ դժգոհություն ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Քուվեյթի կառավարող վերնախավի մեջ: Նրանք պահանջեցին շեյխից նավթային ընկերություններից ստացվող գումարները համարել պետական եկամուտ և ծախսել ըստ այդմ: Նրանք միաժամանակ պահանջեցին շեյխ Ահմադից վերականգնել Խորհրդատվական խորհուրդը, որը նա ցրել էր:

Դրությունը մի փոքր փոխվեց շեյխ Աբդուլլահի կառավարման տարիներին՝ 1950–1965 թթ.: Նա իր գլխավոր խնդիրը հռչակեց Քուվեյթի հասարակության կամ, ինչպես ինքը ձևակերպեց, ազգային ամբողջականության պահպանումը, որը կարելի էր մեկնաբանել որպես հասարակության բոլոր խավերի միջև արդարությունը և հավասարությունը պահպանելու խոստում: Միաժամանակ նա ընդգծեց, որ թույլ չի տա

որևէ միջամտություն երկրի ներքին գործերին, և խոստացավ վերափոխումներ անցկացնել Քուվեյթում:

Փոփոխություններ մտցվեցին նաև նավթից ստացվող եկամուտների օգտագործման հարցում: Եկամուտները ծախսումների տեսակետից բաժանվեցին երեք մասի: Դրանց մեկ երրորդը հատկացվեց պետական ծախսերի, մեկ երրորդը՝ ալ–Սաբահ ընտանիքի և պետական ապարատի պահպանման համար, և մեկ երրորդն էլ գրանցվեց կառավարող շեյխի անձնական հաշվին: Շեյխ Աբդուլլահն անձնական հաշիվ բացեց Լոնդոնի բանկերից մեկում:

Թեև դա մի քայլ առաջ էր՝ համեմատած ծախսերի տնօրինման նախկին կարգի հետ, երբ նավթից ստացվող բոլոր եկամուտները համարվում էին շեյխի անձնական սեփականությունը, այդուհանդերձ, դա նույնպես անարդարցի կարգավիճակ էր, որը դարձավ դժգոհության մշտական աղբյուր: Դա առաջ բերեց սոցիալական խիստ բևեռացում: Դրանից առաջին հերթին հարստացան Քուվեյթի կառավարող դինաստիայի անդամները, ցեղային ավագանին, նավթարդյունաբերության հետ կապված գործարարները և վաշխառուները: Իսկ աշխատավորական խավերը նավթային բումի նախնական փուլում շատ քիչ բան ստացան, և նրանց տնտեսական վիճակում դեռևս տեսանելի փոփոխություններ տեղի չունեցան: Դա պետք է լիներ հաջորդ տարիներին: Իսկ տվյալ ժամանակաշրջանում Քուվեյթի բնակչության կենսամակարդակն ամենացածրերից մեկն էր Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում: Անբավարար սննդի, առաողջապահական համակարգի բացակայության և կյանքի ծանր պայմանների հետևանքով Քուվեյթում շատ բարձր էր մահացությունը, իսկ կյանքի միջին տևողությունը կազմում էր 30–40 տարի:

Նավթարդյունաբերության և դրա հետ կապված հարակից ճյուղերի զարգացումը հանգեցրեց Քուվեյթի բանվոր դասակարգի ձևավորմանը: ՄԱԿ–ի տվյալների համաձայն՝ Քուվեյթի նավթարդյունաբերության մեջ 1953 թ. զբաղված էր 8–10 հազար բանվոր: Սակայն արագ զարգացող նավթարդյունաբերությանն անհրաժեշտ էին աշխատող ձեռքեր: Եվ արդեն 1950–ական թվականների վերջերին նավթարդյունաբերության մեջ զբաղված էր մոտ 35 հազար մարդ: Այդուհանդերձ, աշխատուժը չէր բավարարում, և 1950–ական թվականներին Քուվեյթ հորդեցին բանվորներ հարևան Իրաքից և Իրանից, ինչպես նաև Հնդկաստանից, Պակիստանից, Ֆիլիպիններից և այլ երկրներից:

Բանվոր դասակարգի ծնավորումն իր հետ բերեց նոր խնդիրներ Քուվեյթի երիտասարդ բանվոր դասակարգը սկսեց պայքարել ՔՕԿ–ի դեմ իր իրավունքների համար՝ պահանջելով աշխատավարձի բարձրացում և աշխատանքային պայմանների բարելավում: Նավթարդյունաբերության մեջ զբաղված բանվորի աշխատանքի տևողությունը կազմում էր 14–16 ժամ, իսկ աշխատավարձն էլ \ատ ցածր էր: Տեղացի բանվորի աշխատավարձը 5–6 անգամ ցածր էր նրա հետ կողք կողքի աշխատող եվրոպացի բանվորի աշխատավարձից և տասն անգամ ցածր ԱՄՆ–ի նավթարդյունաբերության մեջ զբաղված բանվորների աշխատավարձից: Այդ հողի վրա Քուվեյթում 1950–1952 թթ. տեղի ունեցավ գործադուլների մի ամբողջ շարք:

Բանվորների և աշխատավորական մյուս խավերի դժգոհությունն էր առաջացնում նաև այն հանգամանքը, որ կուսակցությունների և արհմիությունների գործունեությունն արգելված էր, նույնիսկ լուսավորչական բնույթի ընկերություններ չէին կարող հիմնվել, չկային պարբերականներ, չէին խրախուսվում անգամ ռադիոն, կինոն և այլն:

1950–ական թվականների կեսերին կրկին լարված իրադրություն ստեղծվեց Քուվեյթում, որի «մեղավորները» երիտասարդ վաճառականները և ցեղային արիստոկրատիան էին: Քաղաքական կյանք մտած այդ նոր սերունդը պահանջում էր փոփոխություն նահապետական ավանդույթների վրա հիմնված կառավարման համակարգի մեջ և մասնակցության իրավունք երկրի կառավարման գործում: Նման փոփոխություններին դեմ էին ալ–Սաբահ դինաստիան և ցեղային ավագանին, որոնց համար նահապետական ավանդույթների պահպանումը նշանակում էր իրենց իշխանության պահպանում: Թեև այդ հակասության վերաբերյալ նյութերը սակավ են, սակայն պետք է ենթադրել, որ պայքարը բավականին սուր բնույթ է կրել, քանի որ կառավարող շեյխ Աբդուլլահը 1953 թ. ստիպված է եղել հրաժարական տալ, և Անգլիան հանդես է եկել ի պաշտպանություն շեյխի: 1953 թ. հոկտեմբերին Քուվեյթի մայրաքաղաքի ծովախորշը անգլիական մի ռազմանավ մտավ, որը նշանակում էր զինված ուժի ցուցադրում: Ստանալով բրիտանական իշխանությունների պաշտպանությունն ու աջակցությունը՝ շեյխ Աբդուլլահը հետ վերցրեց իր հրաժարականը:

Քաղաքական պայքարը զարգանում էր վերընթաց գծով: 1954 թ. ստեղծվեց Քուվեյթի Դեմոկրատական լիգան, որի ծրագրային պահանջները դարձան բրիտանական պրոտեկտորատի վերացումը, Քուվեյթի

ներքին գործերին օտարերկրյա միջամտության արգելումը, Սահմանադիր ժողովի հրավիրումը, դեմոկրատական սահմանադրության մշակումը: Դեմոկրատական լիգան խստիվ հանդես էր գալիս Քուվեյթը Պարսից ծոցի շեյխությունների ֆեդերացիայի մեջ ներգրավելու բրիտանական ծրագրերի դեմ: Լիգայի այդ ծրագրային պահանջների հիմքի վրա 1955 թ. լայն շարժում սկսվեց Ազգային ճակատ ստեղծելու համար: Դա ինքնին կարևոր երևույթ էր, որովհետև դրանից մի քանի տարի առաջ անհնար էր պատկերացնել Քուվեյթում նման պահանջի առաջադրում: Շարժման ընթացքում Դեմոկրատական լիգայի վերոնշյալ պահանջների հետ միասին առաջադրվեց ևս մեկը, որն ուղղված էր բրիտանական իշխանություններին՝ Քուվեյթի կառավարությանը փոխանցել բրիտանական բանկերում պահվող բոլոր ավանդները: Առաջարկվում էր այդ գումարները հատկացնել բացառապես Քուվեյթի տնտեսական զարգացման համար:

Քուվեյթի ազգային–ազատագրական ուժերի համար մեծ փորձություն հանդիսացավ Եգիպտոսի դեմ 1956 թ. անգլո–ֆրանս–իսրայելական եռյակ ագրեսիան: Նրանք փայլուն կերպով բռնեցին այդ քննությունը՝ ցուցադրելով իրենց քաղաքական հասունությունը: Քուվեյթում լայն շարժում սկսվեց ի պաշտպանություն Եգիպտոսի: Տեղի ունեցավ մեծ ցույց, որի դեմ իշխանությունները նետեցին ոստիկանությանը և բանակային զորամասեր: Ցուցարարներն անվախորեն մարտի մեջ մտան նրանց դեմ՝ տալով սպանվածներ և վիրավորներ: Քուվեյթցիները բոյկոտեցին անգլիական և ֆրանսիական ապրանքներն ու նավերը, հրաժարվեցին համագործակցել նրանց պատկանող հիմնարկների և ձեռնարկությունների հետ: Դրությունը դառնում էր տագնապալի, և բրիտանական իշխանությունները լրացուցիչ ռազմանավեր բերեցին Քուվեյթ: Ազգային–հայրենասիրական ուժերը պահանջում էին իշխանություններից դադարեցնել նավթի արտահանումը Անգլիա և Ֆրանսիա: Եվ քանի որ իշխանություններն անտեսում էին այդ պահանջները, հայրենասիրական ուժերը 1956 թ. դեկտեմբերին պայթեցրին Մինա ալ–Ահմադի նավթամուղն ու գազամուղը և այլ կառույցներ: Քուվեյթի շեյխին և կառավարող վերնախավին վախ էր պատել, և նրանք անզոր էին վերահսկողություն սահմանել ազգային–ազատագրական ուժերի վրա: Այդ ճգնաժամային պահին վճռականորեն հանդես եկան բրիտանական իշխանությունները: Անգլիական զորքերը մտան մայրաքաղաք և վերահսկողու-

թյան տակ վերցրեցին բոլոր կարևոր ստրատեգիական կետերը, այդ թվում և նավթարդյունաբերական ձեռնարկությունները:

1956 թ. իրադարձությունները պետք է համարել Քուվեյթի ազգային–հայրենասիրական ուժերի մեծ հաղթանակը: Նրանք ցույց տվեցին իրենց ուժը, որը տագնապի մեջ դրեց քուվեյթյան և բրիտանական իշխանություններին: Նրանք շարունակեցին պայքարը և իրենց համարելով արաբական աշխարհի անբաժան մասը՝ ակտիվորեն հանդես էին գալիս ի պաշտպանություն համաարաբական ազգային–ազատագրական շարժումների: Նրանք իրենց համակրանքը և անվերապահ պաշտպանությունը հայտնեցին իրաքցի ազգային–ազատագրական ուժերին, որոնք 1958 թ. հուլիսի 14–ին տապալեցին միապետությունը և Իրաքը հռչակեցին հանրապետություն. Նրանց չվախեցրեցին Քուվեյթն օկուպացնելու անգլիական ծրագրերը: Քուվեյթի հայրենասիրական ուժերը 1959 թ. հանդես եկան նաև ի պաշտպանություն Օմանում մեծ թափ առած հակաբրիտանական պայքարին: Քուվեյթում տեղի ունեցան զանգվածային ցույցեր ընդդեմ բրիտանական իշխանությունների, որոնք Քուվեյթի զնդաններն էին նետել օմանցի ազգային հայրենասերներից շատերին: Այդ իրադարձությունների ժամանակ՝ 1959 թ. ապրիլին, քուվեյթցի հայրենասերները մահափորձ կատարեցին ալ–Սաբահ դինաստիային պատկանող մի գործչի դեմ: Դա ցնցեց ամբողջ Քուվեյթը:

Արդեն բոլորը հասկանում էին, որ Քուվեյթում հասունանում էին նոր և կարևոր իրադարձություններ:

II. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՔՈՒՎԵՅԹԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

1. 1899 թ. անգլո–քուվեյթյան պայմանագրի վերացումը և 1961 թ. հունիսի 19–ին Քուվեյթի անկախության հռչակումը

Ամբողջ 1960 թ և հաջորդ 1961 թ. կեսերին Քուվեյթում շարունակվում էին հակաբրիտանական ելույթները: Ազգային–ազատագրական ուժերի գլխավոր պահանջը դարձավ բրիտանական պրոտեկտորատի վերացումը և Քուվեյթի անկախության հռչակումը: Այդ պահանջի դրոշի ներքո օրեցօր ուժեղանում էր ճնշումը շեյխ Աբդուլլահի և կառավարող վերնախավի վրա: Հայրենասիրական ուժերը նրանցից պահանջում էին

այդ հարցը քննարկման առարկա դարձնել անգլիական կառավարության հետ և քաղաքական կամք ու վճռականություն դրսևորել համազգային այդ հիմնախնդրի իրականացման գործում: Եվ շեյխ Աբդուլլահն ու կառավարող վերնախավը տեղի տվեցին: Մեծ Բրիտանիայում նույնպես հասկանում էին, որ պրոտեկտորատն այլևս անհնար է պահպանել, և անհրաժեշտ են արմատական փոփոխություններ անգլո–քուվեյթյան փոխհարաբերություններում:

1961 թ. հունիսին շեյխ Աբդուլլահ ալ–Սալիմը բանակցություններ սկսեց բրիտանական կառավարության հետ պրոտեկտորատը վերացնելու և Քուվեյթի անկախությունը ճանաչելու հարցի շուրջը: Նրանց միջև տեղի ունեցավ հուշագրերի փոխանակում: Քննարկումների ժամանակ և փոխանակված հուշագրերի մեջ շեշտը դրվում էր 1899 թ. հունվարի 23–ի անգլո–քուվեյթյան պայմանագիրը վերացնելու վրա, որով հաստատվել էր բրիտանական պրոտեկտորատը Քուվեյթում: Վերջնական համաձայնությունը կողմերի միջև կայացավ 1961 թ հունիսի 19–ին: Այդ օրը Պարսից ծոցում Մեծ Բրիտանիայի քաղաքական ռեզիդենտ Վ. Լյուսը իր կառավարության անունից Քուվեյթի շեյխին ուղարկեց համապատասխան նոտա, որտեղ ասված էր, որ բրիտանական կառավարությունը, հաշվի առնելով նրա, այսինքն՝ Քուվեյթի կառավարող շեյխ Աբդուլլահի ցանկությունն առ այն, որ նրա կառավարությունը լինի միակ պատասխանատուն Քուվեյթի ներքին և արտաքին քաղաքականության գործերում, հայտնում է, որ քննարկումների ընթացքում ծեռք են բերվել հետևյալ համաձայնությունները

«ա. Չեղյալ է համարվում 1899 թ. հունվարի 23–ի համաձայնագիրը, քանի որ դա չի համապատասխանում Քուվեյթի ինքնիշխանությանը և անկախությանը:

բ. Հարաբերությունները երկու երկրների միջև կշարունակվեն սերտ բարեկամության ոգով:

գ. Անհրաժեշտության դեպքում երկու կառավարությունները կխորհրդակցեն նրանց վերաբերող հարցերի շուրջը»: Այնուհետև նշվում էր, որ բրիտանական կառավարությունը պատրաստ է օգնություն ցույց տալ Քուվեյթին, եթե վերջինս խնդրի նման օգնություն: Այդ պաշտոնական փաստաթուղթն ավարտվում էր հետևյալ կարևոր հաստատումով. «1899 թ. հունվարի 23–ի համաձայնագիրը համարվում է իր ուժը կորցրած այսօրվանից», այսինքն՝ 1961 թ. հունիսի 19–ից:

Այսպիսով՝ 1961 թ. հունիսի 19–ին՝ 62 տարի անց վերացվեց բրիտանական պրոտեկտորատը և ծնվեց մի նոր անկախ պետություն՝ Քուվեյթը: Այդ պահից սկսվում է անկախ Քուվեյթ պետության պատմությունը: Դա Քուվեյթի բոլոր ազգային–հայրենասիրական ուժերի խոշորագույն հաղթանակն էր, որը խանդավառությամբ ընդունվեց նաև արաբական բոլոր երկրներում: Նրանք շտապեցին մեկը մյուսի հետևից ճանաչել Քուվեյթի անկախությունը և դիվանագիտական հարաբերություններ հաստատել նրա հետ.

Քուվեյթի անկախությունը շատ արագ կերպով միջազգային ճանաչում ստացավ: Նա ընդունվեց ՄԱԿ–ի անդամ, դարձավ Արաբական պետությունների լիգայի անդամ և այլն: Իսկ մինչ այդ՝ դեռևս 1960 թ., Քուվեյթը մի շարք նավթ արտահանող երկրների հետ դարձել էր Նավթ արտահանող երկրների կազմակերպության՝ ՕՊԵԿ–ի հիմնադիր անդամ:

2. Իրաքյան սպառնալիքները և իրաք–քուվեյթյան ճգնաժամը

Անկախ Քուվեյթը դեռ չէր հասցրել առաջին քայլերը կատարել, երբ նրա գլխին սև ամպեր կուտակվեցին: Նա հարված ստացավ մեջքից, և այն էլ ոչ թե եվրոպական գաղութային պետություններից, այլ մերձավոր հարևան արաբական երկրից՝ Իրաքից:

Քուվեյթի անկախությունից ընդամենը վեց օր էր անցել, երբ Իրաքի Հանրապետության վարչապետ գեներալ Աբդել Քերիմ Կասեմը 1961 թ. հունիսի 25–ին Բաղդադում հրավիրեց պրես–կոնֆերանս, որի ժամանակ հայտարարեց, որ Քուվեյթն Իրաքի անբաժան մասն է և մտցվելու է նրա կազմի մեջ որպես նրա նահանգներից՝ լիվաներից մեկը: Իրաքի ղեկավարն իր տեսակետը և դրա վրա հիմնված քաղաքականությունը հիմնավորում էր նրանով, որ Քուվեյթն իբրև թե օսմանյան տիրապետության շրջանում մտնում էր Բասրայի վիլայաթի մեջ, իսկ Բասրայի վիլայաթը տվյալ պահին Իրաքի 14 լիվաներից մեկն էր:

Իրաքի հավակնություններն անհիմն էին: Մենք արդեն լուսաբանել ենք այդ հարցը և ցույց տվել, որ Քուվեյթը երբեք Բասրայի վիլայաթի մաս չի կազմել:

Այդուհանդերձ, Իրաքն իր որոշ զորամասեր կենտրոնացրեց իրաք–քուվեյթյան սահմանի վրա:

Կասեմի հայտարարությունն ամպրոպի պայթյունի ներգործություն ունեցավ Քուվեյթում: Քուվեյթցիները Իրաքի հավակնություններն իրենց երկրի նկատմամբ մի առանձին դառնությամբ ընդունեցին: Դա բացատրվում է նաև նրանով, որ երբ 1958 թ. հուլիսի 14–ին Իրաքում Կասեմի գլխավորությամբ տեղի ունեցավ հեղափոխություն, և տապալվեց Հաշիմյան միապետությունը և հաստատվեց հանրապետությունը, Քուվեյթը քիկունք կանգնեց նորահռչակ հանրապետությանն ու նրա կառավարությանը: Դա շատ ծանր ժամանակ էր Իրաքի և նրա ղեկավարության համար, քանի որ նրա գլխին կախվել էր Անգլիայի ռազմական ինտերվենցիայի վտանգը, և Իրաքը մեծապես զգում էր արաբական երկրների աջակցության ու պաշտպանության կարիքը: Եվ եթե Իրաքը կարողացավ դուրս գալ այդ ծգնաժամային իրավիճակից, ապա դրանում նշանակալի էր արաբական երկրների, այդ թվում և Քուվեյթի քաղաքական, բարոյական և նյութական աջակցությունը: Եվ երբ այժմ Քուվեյթն էր ոտք դրել անկախության ուղու վրա, և ինքն էր աջակցության ու օժանդակության կարիք զգում, Իրաքը հանդես էր գալիս Քուվեյթի անկախության վերացման և իրեն կցելու պահանջով՝ նրան իջեցնելով իր նահանգներից մեկի կարգավիճակին:

Կասեմի հայտարարության հաջորդ օրը՝ 1961 թ. հունիսի 26–ին, Քուվեյթի կառավարող շեյխ Աբդուլլահ իբն Սալիմը երկրում մտցրեց արտակարգ դրություն, և նրա հրամանով քուվեյթյան փոքրաթիվ բանակը դիրքեր գրավեց իրաքա–քուվեյթյան սահմանի երկարությամբ: Սակայն ուժերն անհավասար էին, և Քուվեյթը պատերազմի դեպքում չէր կարողանա դիմակայել Իրաքին: Այդ բանը շատ լավ էին հասկանում Քուվեյթում, և այդ պատճառով էլ շեյխ Աբդուլլահը դիմեց ՄԱԿ–ին՝ քննարկելու այդ հարցը: Նա միաժամանակ դիմեց Մեծ Բրիտանիային՝ համապատասխան օգնության խնդրանքով:

Հիշեցնենք, որ 1961 թ. հունիսի 19–ի անգլո–քուվեյթյան համաձայնագրով, որը վերացրեց բրիտանական պրոտեկտորատը, և Քուվեյթը դարձավ անկախ ու ինքնիշխան պետություն, նրա 4–րդ կետով, նախատեսված էր, որ «Նորին մեծության կառավարությունը (իմա՝ Մեծ Բրիտանիայի — Ն. Հ.) պատրաստ է օգնել Քուվեյթի կառավարությանը, եթե վերջինս դիմի նման խնդրանքով»: Հենվելով Համաձայնագրի այդ կետի վրա՝ Քուվեյթի կառավարողը օգնության խնդրանքով դիմեց անգլիական կառավարությանը: Ի պատասխան շեյխ Աբդուլլահի «արտակարգ և պաշտոնական խնդրանքի»՝ հուլիսի 1–ին անգլիական զորքե-

րը՝ թվով մոտ 6000 զինվոր, տանկերի, ինքնաթիռների և ռազմական այլ տեխնիկայի ուղեկցությամբ մտան Քուվեյթ՝ պաշտպանելու նրան Իրաքի ագրեսիայից: Ռազմական մի ոչ մեծ կոնտինգենտ ուղարկեց նաև Սաուդյան Արաբիան:

1961 թ. հուլիսի 2–ին կայացավ ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի նիստը, որը դատապարտեց Իրաքին՝ պահանջելով նրան դադարեցնել սպառնալիքները Քուվեյթի նկատմամբ: Խորհրդային պատվիրակը դատապարտեց նաև Անգլիային իր զորքերը Քուվեյթ մտցնելու համար և պահանջեց անգլիական զորքերն անհապաղ դուրս բերել, սակայն այդ առաջարկը պաշտպանություն չգտավ Անվտանգության խորհրդի երեք մշտական անդամների՝ ԱՄՆ–ի, Անգլիայի և Ֆրանսիայի կողմից և մերժվեց:

Արաբական և մի շարք այլ երկրներ նույնպես դատապարտեցին Իրաքին և հանդես եկան ի պաշտպանություն Քուվեյթի անկախության: Քննադատական ձայներ հնչեցին նաև Անգլիայի հասցեին՝ նրան կասկածելով Քուվեյթ վերադառնալու և ինչ–որ ձևով իր վերահսկողությունը հաստատելու մեջ:

Իրաքա–քուվեյթյան ճգնաժամը հատուկ քննարկման առարկա դարձավ Արաբական պետությունների լիգայում (ԱՊԼ), որն իր պատվիրակությունն ուղարկեց Քուվեյթ՝ նրանից ակնկալելով հանգամանալից հաղորդում և առաջարկություններ. ԱՊԼ–ն գործեց վճռականորեն, արագ և հարցի լուծումը վերցրեց իր ձեռքը: Կարծում ենք, որ ստեղծված պայմաններում դա հեռատես և ճիշտ քայլ էր: ԱՊԼ–ն 1961 թ. օգոստոսին որոշեց Քուվեյթ ուղարկել արաբական զինվորական կոնտինգենտ՝ կազմված արաբական տարբեր երկրների տրամադրած զորամասերից: Սեպտեմբերի 10–ին արդեն Քուվեյթում էին նրա առաջին զորամասերը: Իսկ 1961 թ. սեպտեմբերի 14–ին Կահիրեում գումարվեց ԱՊԼ–ի ընդհանուր նստաշրջանը, որը վերջնականապես հաստատեց Քուվեյթ ուղարկվելիք արաբական ռազմական ուժերի կազմը: Իրենց զորքերը տրամադրեցին Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան, Հորդանանը և Սուդանը, ստեղծվեցին Արաբական լիգայի արտակարգ ուժեր և ընդհանուր հրամանատարություն: Շատ չանցած այդ զորքերը, որոնց թիվը հասնում էր 2255–ի, ժամանեցին Քուվեյթ:

ԱՊԼ–ի գործողությունները և արաբական զինված ուժերի տեղակայումը Քուվեյթում արմատականորեն փոխեցին իրադրությունը: Վերացավ Քուվեյթում անգլիական ռազմական ուժերի հետագա գտնվելու

անհրաժեշտությունը: Ելնելով նոր իրադրությունից՝ Քուվեյթի կառավարող շեյխ Աբդուլլահը դիմեց անգլիական կառավարությանը՝ խնդրելով իր զորքերը դուրս բերել Քուվեյթից: Անգլիան բավարարեց նրա խնդրանքը, և նրա զորքերը մինչև վերջին զինվորը հեռացան Քուվեյթից: Նրանց տեղը զբաղեցրին Արաբական լիգայի արտակարգ ուժերը: Բայց նրանք նույնպես երկար չմնացին: Եգիպտոսն իր զորքերը Քուվեյթից հանեց 1961 թ. դեկտեմբերին, իսկ Հորդանանը, Սաուդյան Արաբիան և Սուդանը՝ 1963 թ. փետրվարին:

Այսպիսով՝ ձախողվեց Քուվեյթն Իրաքին միացնելու առաջին փորձը, և Քուվեյթին հաջողվեց միջազգային հանրության և արաբական երկրների ռազմական օգնությամբ ու քաղաքական աջակցությամբ պահպանել իր անկախությունը:

Քուվեյթ–իրաքյան հարաբերությունները կարգավորվեցին 1963 թ., երբ Իրաքում տեղի ունեցավ պետական հեղաշրջում, Կասեմը տապալվեց և գնդակահարվեց. Իրաքի նոր կառավարությունը 1963 թ. հոկտեմբերին հայտարարեց, որ Իրաքը ճանաչում է Քուվեյթի անկախությունը: Հարցը վերջնականապես կարգավորելու համար իրաքյան կողմի հրավերով Բաղդադ մեկնեց քուվեյթյան ինը հոգուց բաղկացած կառավարական պատվիրակությունը Քուվեյթի թագաժառանգ և վարչապետ շեյխ Սաբահ ալ–Սալիմի գլխավորությամբ: Իրաքյան պատվիրակությունը գլխավորում էր վարչապետ Ահմադ Հասան ալ–Բաքրը: Կողմերը բավականին արագ եկան համաձայնության և 1963 թ. հոկտեմբերի 4–ին ստորագրեցին համապատասխան պայմանագիր, որի լրիվ տեքստը հրապարակվել է ՄԱԿ–ի «Քուվեյթ պետության և Իրաքի Հանրապետության միջև միջազգային սահմանների դեմարկացիան» փաստաթղթերի հարուստ ժողովածուում:

Պայմանագրի առաջին հոդվածում արձանագրված էր, որ «Իրաքի Հանրապետությունը ճանաչում է Քուվեյթ պետության անկախությունը և լրիվ ինքնիշխանությունն իր սահմաններում՝ բնութագրված Իրաքի վարչապետի 1932 թ. հուլիսի 21–ի թվակիր նամակում, որն ընդունվել է Քուվեյթի կառավարողի կողմից նրա 1932 թ. օգոստոսի 10–ի թվակիր նամակով»: Կողմերը պարտավորվեցին ամրապնդել եղբայրական հարաբերությունները, հաստատել մշակութային և սոցիալ–տնտեսական համագործակցություն երկու երկրների միջև և փոխանակել տեխնիկական ինֆորմացիա: Այդ խնդիրների իրագործման համար Իրաքը և Քուվեյթը պարտավորվեցին «անհապաղ դիվանագիտական հարաբերու-

թյուններ հաստատել՝ դեսպանների մակարդակով»: 1963 թ. պայմանագիրը կարող էր դառնալ պատմական և շրջադարձային, եթե Իրաքը հավատարիմ մնար նրա դրույթներին:

Ի զարգացումն վերոնշյալ պայմանագրի՝ Քուվեյթը և Իրաքը համաձայնություն ստորագրեցին, ըստ որի Իրաքը պարտավորվում էր օրական Քուվեյթին մատակարարել 120 մլն գալոն խմելու ջուր, իսկ նոյեմբերին կնքվեց առևտրատնտեսական համաձայնագիր, որով վերացվում էին մաքսային տուրքերի գանձումը երկու երկրների միջև:

3. Մշտական սահմանադրության ընդունումը և կառավարման նոր համակարգի ստեղծումը (1961–1965 թթ.)

Իրաքի գործողությունների հետևանքով ծագած ճգնաժամը հաղթահարելուց հետո Քուվեյթի իշխանությունները ձեռնամուխ եղան անկախ Քուվեյթի կառավարման նոր համակարգի ստեղծմանը: Խնդիրն այն էր, որ պետք էր Քուվեյթը նահապետական–ցեղային կառուցվածք ունեցող երկրից վերածել արդիական պետական–հասարակական կառուցվածք ունեցող երկրի: Դա այնքան էլ դյուրին գործ չէր՝ նկատի ունենալով կառավարման բնագավառում խոր արմատներ ձգած սովորույթները, երկրի սոցիալական կառուցվածքը, որտեղ մեծ էր քոչվոր և նստակյաց ցեղերի և ցեղապետների դերը:

Կառավարող շեյխի 1961 թ. օգոստոսի 26–ի հրամանագրով որոշվեց անցկացնել Սահմանադիր ժողովի ընտրություններ, և այդ նպատակով ստեղծվեց Կազմակերպչական մարմին: Վերջինս սեպտեմբերի 16–ին ավարտեց Սահմանադիր ժողովի ընտրությունների մասին օրենքի պատրաստումը: Նրա հիմքի վրա 1961 թ. դեկտեմբերի 30–ին կայացան ընտրություններ, որի ընթացքում ընտրվեց 20 հոգուց բաղկացած Սահմանադիր ժողով: Նրա գլխավոր խնդիրը համարվեց անկախ Քուվեյթի մշտական սահմանադրության նախագծի մշակումը: Նրա նախապատրաստումն ավարտվեց և երկրի կառավարող շեյխ Աբդուլլահի հաստատմանը հանձնվեց 1962 թ. նոյեմբերին 11–ին: Նա հրապարակվեց և գործողության մեջ դրվեց 1962 թ. նոյեմբերի 16–ին: Այսպիսով՝ անկախ Քուվեյթն ունեցավ իր առաջին և մշտական հիմնական օրենքը՝ սահմանադրությունը:

Սահմանադրությունը բաղկացած է 183 հոդվածներից, որոնք ընդգրկում են երկրի պետական, քաղաքական, հասարակական կյանքի

բոլոր բնագավառները, ինչպես նաև օրենսդրական, դատական, ազատությունների, քաղաքացիության, իրավունքների և այլ ոլորտները:

Սահմանադրությունը Քուվեյթը հռչակեց որպես «Անկախ ինքնիշխան արաբական պետություն»: Մուբարակ ալ–Սաբահի ժառանգները՝ ալ–Սաբահ դինաստիան, համարվեցին Քուվեյթի կառավարող դինաստիա և Քուվեյթի կառավարողները կարող են լինել միայն այդ դինաստիայից, որոնք ուղղակիորեն սերում են Մուբարակ ալ–Սաբահից: Սահմանվեց, որ նոր էմիրի կողմից իշխանությունը ստանձնելուց հետո մեկ տարվա ընթացքում պետք է նշանակվի նրա հաջորդը, այսինքն՝ թագաժառանգը:

Սահմանադրության մեջ հստակորեն իրականացվեց իշխանության երեք գլխավոր ճյուղերի՝ գործադիր, օրենսդիր և դատական, տարանջատման սկզբունքը և յուրաքանչյուրի գործառույթների շրջանակներն ու խնդիրները:

Գործադիր իշխանությունը պատկանում է պետության ղեկավարին՝ կառավարող շեյխին կամ էմիրին, որն այն իրականացնում է Նախարարների խորհրդի միջոցով: Նա է նշանակում վարչապետին: Սակայն այդտեղ կա մի նրբություն: Սահմանադրության մեջ ամրագրված է, որ պետության ղեկավարը վարչապետին նշանակում է ավանդական խորհրդակցություններից հետո՝ խորհրդակցելով ալ–Սաբահ ընտանիքի անդամների, ցեղային ավագանու և այլ ազդեցիկ տոհմական ներկայացուցիչների հետ: Այդ ավանդույթը՝ խորհրդակցել՝ «շուրա», և նստել զրույցի՝ «մեջլիս» անել նրանց հետ, գալիս է հնուց, և ալ–Սաբահները աշխատել են պահպանել այդ կարևոր ավանդույթը: Դա լրացուցիչ ուժ ու հեղինակություն է տալիս նրանց և ծառայում նրանց իշխանության պահպանմանը:

Ըստ սահմանադրության՝ պետության ղեկավարն է նշանակում և ազատում նախարարներին պաշտոնից՝ վարչապետի երաշխավորությամբ: Նա իրավունք ունի չեղյալ համարել օրենքները, եթե նրանք արդյունավետ չեն, թույլատրել հիմնել հասարակական կազմակերպություններ և այլն. Սակայն դրանք պետք է ներկայացվեն Ազգային ժողովի հաստատմանը: Եվ ընդհանրապես ոչ մի օրենք չի ընդունվում և հրապարակվում առանց Ազգային ժողովի հավանության:

Երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը Ազգային ժողովն է՝ Մաջլիս ալ–Ումման: 1962 թ. սահմանադրությամբ նա կազմված է 50 անդամից և գործում է չորս տարի ժամանակով: Նրանք պետք է լինեն 30 տա-

րեկանից բարձր: Ընտրություններին կարող են մասնակցել միայն 21 տարեկանից ոչ ցածր, բնիկ քուվեյթցիները, որոնք ունեն գրագիտություն: Պառլամենտի նստաշրջանները պետք է տևեն յուրաքանչյուր տարի ոչ պակաս, քան ութ ամիս: Նրա գործողության ժամկետը լրանալուց հետո պետք է Ազգային ժողովի ընտրություններ կայանան երկու ամսվա ընթացքում: Պետության ղեկավարը կարող է միայն Ազգային ժողովի թույլտվությամբ հայտարարել ռազմական դրություն: Ազգային ժողովն իրավունք ունի անվստահություն հայտնել նախարարին և վերջինս պարտավոր է հրաժարական տալ: Սակայն Ազգային ժողովը չունի նման լիազորություններ վարչապետի հարցում: Նա կարող է այդ հարցը բարձրացնել պետության ղեկավարի առջև, որից հետո վերջինս կարող է կամ ազատել վարչապետին, կամ էլ լուծարել պառլամենտը և նոր ընտրություններ նշանակել:

Սահմանադրությունն ունի նաև մեկ այլ ուշագրավ հոդված: Նրանում ամրագրված է, որ արգելվում է հարձակողական պատերազմ մղել.

Սահմանադրության մեջ բավականին մեծ տեղ է հատկացված ազատություններին և մարդկանց իրավունքներին, որոնք հիմնված են հիմնականում եվրոպական պառլամենտական և քաղաքացիական արժեքների վրա: Սահմանադրությունը բոլորին հռչակում է հավասար օրենքի առջև և երաշխավորում անհատի իրավունքները, գրավոր և բանավոր խոսքի, մամուլի, կրոնական հավատի ազատությունը, թույլատրում արհմիությունների գործունեությունը. պաշտպանում անհատի սեփականության իրավունքը և այլն.

Իսկ ինչ վերաբերում է քաղաքացիական ծառայությանը, ապա սահմանադրությունը նման իրավունք տալիս է միայն բնիկ քուվեյթցիներին:

Այսպիսին է ընդհանուր գծերով Քուվեյթի սահմանադրությունը, որը գործում է մինչև օրս:

Սահմանադրության ընդունումից հետո, 1963 թ. հունվարի 29–ին տեղի ունեցան անկախ Քուվեյթի Ազգային ժողովի առաջին ընտրությունները, որի ժամանակ ընտրվեց 50 դեպուտատ: Ազգային ժողովի կազմավորումը կարևոր քայլ էր Քուվեյթում պետական կառավարման արդիական համակարգ ստեղծելու ճանապարհին:

Հետագայում, անշուշտ, եղել են փոփոխություններ, փորձեր են արվել ավելի կատարելագործել հատկապես գործադիր իշխանությունը: Նման մի կարևոր փոփոխություն տեղի ունեցավ 1965 թ.: Մենք արդեն նշել ենք, որ կառավարող ալ–Սաբահ կլան–դինաստիան բաղկա-

ցած էր երկու՝ ալ–Ջաբր և ալ–Սալիմ ճյուղերից, որոնց միջև մրցակցություն էր գնում՝ երբեմն հասնելով բարձր լարվածության: Վերջապես նրանք 1965 թ. համաձայնության եկան իշխանությունը յուրահատուկ ձևով միմյանց միջև կիսելու վերաբերյալ: Որոշվեց, որ այն ճյուղի գլխավորը, որը տվյալ պահին չի հանդիսանում երկրի կառավարողը և գահին չի նստած, հանդիսանում է թագաժառանգ: Բացի դրանից, ավանդույթ դարձավ, որ ալ–Սաբահ կլան–դինաստիայի ներկայացուցիչները գրավեն ամենակարևոր նախարարական պաշտոնները, ինչպես՝ նավթի, ֆինանսների, պաշտպանության, ներքին և արտաքին գործերի:

1965 թ. տեղի ունեցավ Քուվեյթի անվանակոչության փոփոխում: Նա համարվում էր շեյխություն կամ իշխանապետություն, իսկ նրա ղեկավարը՝ կառավարող շեյխ: Դա նույնպես պետական կազմավորման մի ձև է, սակայն պետական կազմավորումների համակարգում իր կարգավիճակով կարծես թե զիջում է սուլթանություններին, էմիրություններին, թագավորություններին: 1965 թ.՝ անկախության նվաճումից չորս տարի անց, Քուվեյթը որպես պետություն վերանվանվեց էմիրության, իսկ նրա կառավարողը՝ էմիրի: Դա, անշուշտ, ավելի բարձր կարգավիճակ է և ավելի է համապատասխանում արաբական տրադիցիային: «Շեյխ» արաբերեն նշանակում «ծերանալ», «ծեր դառնալ» և սկզբնական շրջանում ավագի, մեծի կամ տարիքավորի իմաստ ուներ: Հետագայում նա որոշ չափով վերաիմաստավորվելով՝ արաբական երկրներում ձեռք բերեց ցեղապետի, ցեղի ղեկավարի կամ առաջնորդի իմաստ: Եվ ալ–Սաբահները՝ որպես Քուվեյթի շեյխերից մեկը, հենց այդպես էլ ընկալվում էին: Մինչդեռ «էմիրը» կամ «ամիրը» արաբերեն բառացի նշանակում է «հրամանատար», «հրամայող» և իր բովանդակությամբ ավելի է համընկնում և համապատասխանում «տիրակալ» և «վեհապետ» հասկացություններին: Սիա թե ինչու Քուվեյթի ղեկավարությունը փոփոխություն մտցրեց տիտղոսի հարցում՝ ընդունելով ավելի բարձրակարգ անվանակոչություն: Այդ պահից Քուվեյթ պետության ղեկավար էմիրը ընկալվում է որպես միապետ, իսկ Քուվեյթը՝ միապետություն, որը ստացավ համապատասխան միջազգային ճանաչում: Դրա հետ միասին հարկ է նշել, որ էմիրները շարունակում էին կրել նաև «շեյխ» տիտղոսը, բայց դա արդեն չէր նշանակում պետության ղեկավար, այլ տուրք էր արաբական ավանդույթին, որով ընդգծվում էր նրա ավագ, մեծ և, ինչո՞ւ չէ, նաև ցեղապետ լինելու հանգամանքը:

III. ՔՈՒՎԵՅԹԻ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ: ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1. Տնտեսական զարգացումը և արդիականացումը

Սահմանադրության ընդունումից, գործադիր և օրենսդիր մարմինների ձևավորումից և շեյխությունն էմիրության վերածվելուց հետո սկսվեց մի ժամանակաշրջան Քուվեյթի նորագույն պատմության մեջ, որը կարելի է անվանել քաղաքական, սոցիալ–տնտեսական և կրթական–մշակութային բարեփոխումների դարաշրջան: Այդ վերափոխումները միտված էին Քուվեյթը արխայիկ–նահապետական վիճակից կամ կացութածնից վերածել ժամանակակից հասարակության, իսկ եթե ավելի հակիրճ՝ ապա արդիական երկրի: Եվ Քուվեյթի զարգացումն ընդհանուր առմամբ, չնայած առանձին շեղումներին և ընդհատումներին, ընթացել է այդ ուղիով:

Քուվեյթի սոցիալ–տնտեսական զարգացումն ուղղակիորեն կապված է նավթի, նավթարդյունահանման, նրա վերամշակման և արտահանման հետ: Նավթարդյունաբերությունը լոկոմոտիվի դեր է կատարում Քուվեյթի տնտեսության մեջ՝ իր հետևից տանելով Քուվեյթի տնտեսության բոլոր ճյուղերի զարգացումը: Նա է հանդիսանում բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմքը, տնտեսական նոր հարաբերությունների ձևավորման խթանիչը և քուվեյթյան հասարակության վերնից մինչև ներքև վերափոխելու գլխավոր լծակը: Եթե մինչև նավթի հայտնաբերումը և արդյունահանումը ջրազուրկ և հողագործության համար պիտանի հողատարածքներից խիստ աղքատ քուվեյթցիներին կերակրողը ծովն էր, որը նրանց ապահովում էր ձկնով և մարգարիտով, ապա նավթի հայտնաբերումից և շահագործումից հետո քուվեյթցիներին պահողը դարձավ նավթը:

Քուվեյթի նավթի հայտնաբերված պաշարները 2005 թ. տվյալներով կազմում են 96 մլրդ բարել, որը նավթի համաշխարհային պաշարների 10%–ն է: Նավթն է տալիս Քուվեյթի ՀՆԱ–ի կեսը, արտահանումից ստացվող եկամուտների 95%–ը և պետական եկամուտների 80%–ը:

Նավթարդյունաբերության զարգացումը մեծ վերելք ապրեց հատկապես 1960–ականների սկզբներից, երբ Քուվեյթը դարձավ նավթարդյունահանող երրորդ երկիրը աշխարհում՝ զիջելով միայն ԱՄՆ–ին և Վե-

նեսուելային: Հետագայում նս Քուվեյթը մշտապես գտնվել է նավթարդունահանող երկրների առաջին հնգյակում: Նրանից ստացվող եկամուտները Քուվեյթի նման փոքր բնակչություն ունեցող երկրի համար, կարելի է ասել, առասպելական չափերի հասան հատկապես 1973–1975 թթ., երբ մի քանի անգամով բարձրացան նավթի համաշխարհային գները: Եվ նավթադոլարները գետի նման հոսեցին Քուվեյթի գանձարանը: Այդ շահույթներն ավելի բարձրացան, երբ Քուվեյթի էմիր Սաբահ իբն Սալիմը հասարակական ուժերի ճնշման տակ 1976 թ. ազգայնացրեց «Քուվեյթ օյլ կոմպանին»: Եթե նախկինում՝ 1951 թ. սկսած, Քուվեյթը նավթից ստացվող շահույթները հավասարապես կիսում էր անգլիական և ամերիկյան նավթային ընկերությունների հետ, ապա այժմ դրանք ամբողջապես անցնում էին Քուվեյթի տնօրինության տակ: Ազգային ժողովի որոշումով կրճատվեցին նաև պետական ծախսերը, այդ թվում և միապետին հատկացվող գումարները, որոնք յուրաքանչյուր տարի կազմում էին 10 մլն քուվեյթյան դինար կամ անգլիական ֆունտ ստեռլինգ: Պառլամենտի այդ նույն որոշումով ազատված գումարները հատկացվեցին սոցիալ–տնտեսական ոլորտի զարգացմանը:

Նավթադոլարների այդ վիթխարի հոսքը Քուվեյթի տնտեսությունը, թույլ զարգացած լինելու պատճառով, ի վիճակի չէր ամբողջությամբ կլանել: Դրա մասին են վկայում մի շարք փաստեր: Երբ Քուվեյթը 1966 թ. ընդունեց տնտեսական զարգացման առաջին հնգամյա պլանը (1966–1970 թթ.), ապա դրա համար հատկացվեց ընդամենը 800 մլն դինար: Այսինքն՝ յուրաքանչյուր տարվա համար հատկացվում էր 160 մլն դինար, որը չնչին գումար էր միլիարդավոր դինարների ընդհանուր ֆոնի վրա: Բայց ավելին չէին էլ կարող հատկացնել, քանի որ հնարավոր չէր դա իրացնել: 1975 թ. Քուվեյթի նավթից ստացվող եկամուտները կազմել են 7,2 մլրդ ԱՄՆ դոլար, մինչդեռ այդ տարի Քուվեյթի բյուջեն ի վիճակի է եղել իրացնել կամ կլանել ընդամենը 2,9 մլրդ ԱՄՆ դոլար:

Այդ ավելցուկ գումարները մեծ հնարավորություններ էին ստեղծում Քուվեյթի տնտեսության դիվերսֆիկացիայի համար, որն այդ տարիներին դարձել էր գերակա գաղափար տնտեսական զարգացման և արդիականացման համադրույթի մեջ: Դրա հիմքում հետևյալ երկու մոտեցումներն էին ընկած. ա. թուլացնել Քուվեյթի տնտեսության կախվածությունը նավթից, և բ. քանի որ նավթի պաշարներն անսպառ չեն, ուստի նախքան նրա պաշարների վերջանալը պետք է հասցնել վերափոխել տնտեսությունը և զարգացնել տնտեսության այլ ճյուղեր, մասնավորա-

պես արդյունաբերական: Եվ Քուվեյթում սկսվեցին արդյունաբերական այնպիսի ճյուղերի զարգացումը, ինչպես՝ նավթաքիմիական արդյունաբերությունը, որի մեջ գլխավոր տեղը գրավում են ամոնիակի, կաուստիկ սոդայի, քլորի, գյուղատնտեսական պարարտանյութերի արտադրությունը, շինանյութերի, ցեմենտի, ալյուրի, զովացուցիչ ջրերի, թեթև արդյունաբերությունը, դաուների նավաշինությունը և այլն: Շատ կարևոր է ջրերի աղազերծման ձեռնարկությունների ստեղծումը, որն ինքնին արտադրության մի ինքնատիպ տեսակ է: Բայց հանուն ճշմարտության պետք է նշել, որ ոչ նավթաքիմիական արդյունաբերության զարգացման հնարավորությունները շատ սահմանափակ են, որի գլխավոր պատճառներից մեկը համապատասխան հումքի բացակայությունն է:

Արդյունաբերության նոր ճյուղերի զարգացումը հանգեցրեց Քուվեյթյան ազգային բազմաթիվ ընկերությունների առաջացմանը, որոնք բոլորովին նոր երևույթ էին Քուվեյթում: Քուվեյթի Ազգային նավթային ընկերության կողքին ստեղծվեցին Ազգային արդյունաբերության, Քուվեյթի ցեմենտի, Ավտոմոբիլային արդյունաբերության և առևտրի, Նավաշինության և վերանորոգման, Կոնդիցիոներների արդյունաբերության, Ծոցի մալուխի, Մելամինի արդյունաբերության, Բժշկական արդյունաբերության, ինչպես նաև Քուվեյթի ծկնարդյունաբերության, Քուվեյթի միացյալ թռչնաբուծության և այլ ընկերություններ: Այդ բոլոր ընկերությունների կապիտալը միասին վերցրած 1980–ական թվականների վերջերին և 1990–ական թվականների սկզբներին կազմել է 276 մլրդ 253 մլն 425 հազ. դինար, որի մեջ պետության չափաբաժինը կազմել է 53%–ից ավելին:

Քուվեյթի տնտեսությունը զարգանում է տնտեսական ազատականության սկզբունքների հիման վրա: Այդ հանգամանքը, ինչպես նաև դրամական վիթխարի պաշարների առկայությունը հնարավոր դարձրեցին Քուվեյթի անդամակցությունը Համաշխարհային բանկին և Արժույթի միջազգային ֆոնդին: Դա նպաստեց նաև բանկային–ֆինանսական համակարգի ձևավորմանը, որը զարգանում է այդ բնագավառում սահմանված միջազգային նորմերին և սկզբունքներին համապատասխան. Դա Քուվեյթի ամենաարդիական ոլորտներից մեկն է:

Այդ բոլոր փոփոխությունները հիմք են տվել ամերիկյան հայտնի հետազոտող, Մերձավոր Արևելքի պատմությանը և քաղաքականությանը նվիրված բազմաթիվ աշխատությունների հեղինակ Դ. Հիրոյին հաստատել, որ «Քուվեյթն արդյունավետորեն անցում է կատարում խավա-

րամոլ իշխանապետությունից դեպի լայնապրոֆիլ նավթով հարուստ պետություն»:

2. Որակական թռիչք սոցիալական ոլորտում: «Քուվեյթյան հրաշքը»

Անկախության նվաճումից հետո տնտեսական արագընթաց աճին զուգահեռ տեղի էր ունենում ոչ պակաս կարևոր որակական թռիչք սոցիալական ոլորտում: Քուվեյթում կտրուկ կերպով բարձրացավ պաշտոնապես քուվեյթյան քաղաքացիություն ունեցող բնակչության բոլոր սոցիալական խավերի բարեկեցությունը, և հաստատվեց սոցիալական ապահովագրության մի այնպիսի համակարգ, որն աշխարհում համարվում է լավագույններից մեկը. իսկ որոշ մասնագետներ նույնիսկ այն համարում են լավագույնը:

Մինչև անկախությունը յուրաքանչյուր շնչին ըստ ՀՆԱ–ի ընկնող եկամուտը կազմում էր մի չնչին գումար՝ ընդամենը 21 ԱՄՆ դոլար: 2005 թ. այն արդեն կազմում էր 22 հազ. 800 ԱՄՆ դոլար: Դրա շնորհիվ ապահովվում է բարձր աշխատավարձ բոլոր բնագավառներում: Իհարկե, այստեղ խոսքը չի գնում այդ եկամուտների կամ աշխատավարձերի հավասար բաժանման մասին: Այդպիսի բան գոյություն չունի: Տարբեր սոցիալական խմբեր տարբեր եկամուտներ ունեն, և այդ իմաստով կա սոցիալական անհավասարություն: Այդուհանդերձ, միջին աշխատավարձը և ընդհանուր կենսամակարդակը բարձր են: Պատահական չէ, որ 2004 թ. պաշտոնական վիճակագրական տվյալներում «Բնակչություն աղքատության սահմանից ներքև» գրաֆայում բացակայում է որևէ նշում, այսինքն՝ այդպիսի սոցիալական խումբ Քուվեյթում գոյություն չունի:

Տպավորիչ է Քուվեյթում գործող սոցիալական ապահովագրության համակարգը, որի հիմքում դրված է 1976 թ. ընդունված պետական օրենքը: Այդ համակարգը, ինչպես նշված է օրենքում, կոչված է «Քուվեյթի աշխատողներին երաշխավորել պատվավոր կյանք թոշակի անցնելու, մահվան, արտադրական պատահարների և անաշխատունակության դեպքերում»: Նա երաշխիքներ է տալիս նաև արտադրական պատահարների զոհերին:

Այդ բոլորը՝ բարձր աշխատավարձ և լավ մշակված սոցիալական ապահովագրություն, կազմում է մեկ ընդհանուր համակարգ, որն առատորեն ֆինանսավորվում է նավթից ստացվող եկամուտներից: Այդ

ծախսերի մի մասը հատկացվում է պետական ֆոնդերից և բյուջեից, իսկ մի մասն էլ տալիս է մասնավոր սեկտորը՝ գործարարները, ձեռնարկությունները և հաստատությունները:

Սակայն քուվեյթցիների բարեկեցությունը միայն վերոնշյալ երկու գործոններով չի չափվում: Քուվեյթում լայնորեն կիրառվում է մի քաղաքականություն, որն ամեն մի երկրում չէ, որ հանդիպում է: Խոսքը մի շարք ծառայությունների անվճար լինելու մասին է: Ամբողջովին ձրի է ուսուցումն իր բոլոր մակարդակներով՝ տարրական, միջանակարգ և բարձրագույն: Սովորողներին անվճար տրվում են հագուստ, սնունդ, դասագրքեր և գրենական պիտույքներ: Յուրաքնչյուր տարի արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատություններ են ուղարկվում հարյուրավոր քուվեյթցի ուսանողներ: Նրանք սովորում են Եգիպտոսի, ԱՄՆ–ի և Մեծ Բրիտանիայի համալսարաններում: Արտասահմանում նրանց ուսման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է պետությունը.

1965 թ. ընդունվեց օրենք պարտադիր ուսուցման վերաբերյալ: Սկսվեց ուսուցման այսպես կոչված «ետմոլլայական» շրջանը, որը բնորոշ էր Քուվեյթի պրոտեկտորատյան ժամանակահատվածին: 1962 թ. հիմնվեց առաջին համալսարանը՝ Քուվեյթի համալսարանը, որի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1966/1967 ուսումնական տարում: Այդ բոլորի արդյունքում բարձրացավ բնակչության գրագիտության մակարդակը: Նախկինում Քուվեյթը համատարած անգրագիտության երկիր էր, իսկ 2003 թ. տվյալներով բնակչության 83,5%–ը գրագետ էր: Հատկանշական է, որ կանանց մոտ նույնպես գրագիտությունը բարձր է՝ մոտ 81%:

Անվճար է նաև բժշկությունը, որը գտնվում է բարձր մակարդակի վրա: Անկախության տարիներին կառուցվել են բոլոր հարմարություններն ունեցող հիվանդանոցներ, որոնք հագեցված են բարձրակարգ ժամանակակից բժշկական տեխնիկայով: Այդտեղ աշխատում են նաև մեծ թվով արտասահմանյան մասնագետներ, որոնց հրապուրում է բարձր վարձատրությունը.

Քուվեյթում ըստ էության չկա բնակարանային խնդիր: Կառավարությունը հետևողականորեն իրականացնում է բնակարանաշինության լայն ծրագիր՝ կարիքավորներին տրամադրելով համապատասխան դրամական նպաստ: Այդ ծրագիրը կազմում է աղքատությունը վերացնելու ընդհանուր քաղաքականության բաղկացուցիչ մասը: Հարկ է նշել, որ քուվեյթցիների համար հեռախոսային տեղական խոսակցություննե-

րը նույնպես անվճար են: Սոցիալական ոլորտում կան նաև այլ արտոնություններ և դյուրություններ:

Ցանկանում ենք կանգ առնել նս մեկ հարցի լուսաբանության վրա, որը, ինչքան մեզ հայտնի է, բացառիկ երևույթ է աշխարհում:

Ինչպես վերը նշվեց, Քուվեյթում ստացվող եկամուտներն ավելի բարձր են, քան թե նրանց իրացման սոցիալ–տնտեսական հնարավորությունները, և որպես օրինակ բերվեց 1975 թ. բյուջեն, որը կազմում էր 2,9 մլրդ ԱՄՆ դոլար այն դեպքում, երբ այդ տարի Քուվեյթի ընդհանուր եկամուտները կազմել են 7,2 մլրդ ԱՄՆ դոլար:

Քուվեյթի էմիրի 1976 թ հաստատված օրենքով հիմնվեց Պահուստային ֆոնդ: Ո՞րն էր դրա էությունը, և ի՞նչ նպատակ էր հետապնդում այն:

Քուվեյթի ղեկավարությունը գտնում էր, որ նավթից ստացվող եկամուտները միայն քուվեյթցիների այս սերունդի բարեկեցությունն ապահովելու համար չեն: Երկրի հիմնական բնական հարստությունը հանդիսացող նավթը միայն այդ սերունդին չի պատկանում: Եվ հաշվի առնելով այն իրողությունը, որ նավթային պաշարները մի օր կսպառվեն, որոշվեց եկամուտների մի մասը պահել ապագա սերունդների, նրանց բարեկեցության համար: Ահա այդ նպատակով ստեղծվեց Պահուստային ֆոնդ, որը գործողության մեջ դրված 1976 թ. հուլիսի 1–ին No 106 օրենքով: Այդ օրենքի համաձայն՝ Պահուստային ֆոնդին հատկացվում է պետական ընդհանուր եկամուտների 10%–ը: Հիմնադրամի ստեղծման համար բացվեց հատուկ հաշիվ, և պետությունն անմիջապես հատկացրեց 5 մլրդ 345 մլն 800 հազ. քուվեյթյան դինար: Ֆինանսների նախարարությանը թույլատրվեց Պահուստային ֆոնդի գումարներն օգտագործել երկարաժամկետ, շահութաբեր և երաշխավորված ներդրումների համար և դրանցից ստացվող շահույթներն անընդհատ ավելացնել Պահուստային ֆոնդի մայր գումարին: Նրան թույլատրվեց այդ գործառույթները կատարել միայն ամերիկյան, եվրոպական և ճապոնական շուկաներում: Ամենայն հավանականությամբ այդ ծրագիրն իրականացվում է հաջողությամբ, որի մասին է խոսում այն փաստը, որ 1984 թ. հունիսին, այսինքն՝ օրենքը գործադրելուց ութ տարի անց, ֆոնդի գումարն արդեն անցել էր 23 մլրդ–ից:

Այդ բոլորին պետք է ավելացնել այն լայնածավալ քաղաքաշինությունը, որն իրականացվեց Քուվեյթում: Արմատապես փոխվեց մայրաքաղաքի ճարտարապետական դեմքը, կառուցվեցին ժամանակակից հիանալի շենքեր և քաղամասեր՝ իրենց ենթակառուցվածքներով: Քու-

վեյթ այցելողին ապշեցնում է անապատների մեջ բարձրացած մայրաքաղաքն իր պալատներով, առաջնակարգ հյուրանոցներով, ռեստորաններով, հարմարավետ բնակելի շենքերով, պողոտաներով և նրանցով սուրացող թանկարժեք ավտոմեքենաներով, պարտեզներով և այգիներով: Նման փոփոխությունների ենթարկվեցին նաև մյուս բնակավայրերը: Այդ բոլորը հիմք տվեց խոսելու «քուվեյթյան հրաշքի» մասին:

Սակայն Քուվեյթի իրականության մեջ կա մի խոցելի երևույթ: Քուվեյթի զարգացող տնտեսությունն անընդհատ աշխատուժի և բարձրորակ մասնագետների կարիք է զգում: Սակայն սեփական միջոցներով առայժմ չի կարողանում լուծել այդ խնդիրը և ստիպված է արտասահմանից ներմուծել բանվորական ուժ և մասնագետներ: Տարիների ընթացքում դա այնպիսի լայն ծավալներ ընդունեց, որ Քուվեյթում կուտակված օտարերկրացիներն իրենց թվաքանակով գերազանցեցին տեղական բնիկ քուվեյթցիներին: Այսօր քուվեյթցիներն իրենց սեփական երկրում կազմում են փոքրամասնություն, իսկ Հնդկաստանից, Պակիստանից, Հարավարևելյան Ասիայի տարբեր երկրներից, հարևան արաբական, մասամբ նաև եվրոպական երկրներից ժամանածներն իրենց թվաքանակով գերազանցում են տեղացիներին՝ կազմելով Քուվեյթի բնակչության 53–55%-ը: Դա իր հետ բերեց նոր խնդիրներ՝ ժողովրդագրական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, իրավական և այլն: Կառավարությունն այդ հարցի լուծման հիմքում դրեց օտարերկրացիներին քաղաքացիություն չտալու սկզբունքը: Նրանք զրկված են այն իրավունքներից և արտոնություններից, որոնցից օգտվում են տեղացիները, չեն կարող պետական ապարատում և այլ կառույցներում աշխատել և պաշտոններ զբաղեցնել, քաղաքական գործունեությամբ զբաղվել, չունեն ընտրելու և ընտրվելու իրավունք, հակառակ դեպքում Քուվեյթում իշխանությունը և երկրի կառավարումը կանցներ նրանց ձեռքը: Նրանց նկատմամբ շատ հաճախ իրականացվում է ռոտացիոն սկզբունքը, այսինքն՝ թույլ են տալիս նրանց Քուվեյթում մնալ և աշխատել վեց ամիս, երբեմն ավելի երկար ժամանակով, որից հետո նրանք պարտավոր են հեռանալ երկրից և նրանց փոխարեն նորերն են գալիս: Նրանց օգտագործում են նավթարդյունաբերության և տնտեսության այլ ճյուղերում որպես բանվորներ, ինժեներներ, տաքսու վարորդներ, ռեստորաններում սպասարկողներ, խոհարարներ, հյուրանոցների, խանութների աշխատողներ և այլն: Նրանք չեն կարող մասնավոր ձեռներեցությամբ զբաղվել առանց տեղացի գործընկերոջ մասնակցության. դա պարտա-

դիր պայման է, ընդ որում պահանջվում է, որ այդ գործում տեղացի ձեռներեցի կապիտալը պետք է կազմի ոչ պակաս, քան 51%:

Չնայած այդ սահմանափակումներին և իրավազուրկ վիճակին, այդուհանդերձ, օտարերկրացիներն ուղղակի ձգտում են ընկնել Քուվեյթ և այնտեղ աշխատանք գտնել, որովհետև աշխատավարձը շատ բարձր է, մանավանդ համեմատած իրենց երկրի հետ, որտեղ նրանցից շատերը և նրանց ընտանիքները գտնվում են տնտեսական շատ ծանր պայմաններում, իսկ ոմանք էլ կիսաքաղց կյանք են վարում: Եկողների մեջ կան մասնագետներ, որոնց ամսեկան աշխատավարձը կազմում է 4–5 հազար դինար: Թեև դա ցածր է տեղացի նույնանման աշխատողի վարձատրությունից, բայց միանգամայն բավարար է ապրելու, իր ընտանիքին և հարազատներին օգնելու, իսկ հայրենիք վերադառնալիս իր հետ բավականին գումար տանելու համար:

3. Քաղաքական զարգացումները. անցում պատերնալիզմից կառավարման ժամանակակից սկզբունքներին

Բրիտանական պրոտեկտորատի վերացումից և ինքնիշխան Քուվեյթ պետության կազմավորումից հետո վերջինիս առջև ծառացավ կառավարման համակարգի արդիականացման և միջազգայնորեն ընդունված իրավական նորմերին համապատասխան վերակազմավորելու խնդիրը: Դա բավականին բարդ հարց էր, որովհետև շոշափում էր առաջին հերթին կառավարող դինաստիայի, ալ–Սաբահ բազմանդամ ընտանիքի, ցեղային ավագանու և շեյխերի, բոլոր պահպանողական ուժերի շահերը, որոնք կառչած էին կառավարման հին՝ նահապետական–պատրիարխալ մեթոդներին:

Չնայած այն հանգամանքին, որ 1962 թ. սահմանադրությունը հռչակել էր գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքը, այդուհանդերձ, դրա իրագործման համար դեռևս որոշակի ժամանակ էր պահանջվում, մինչև որ դրանք դառնային իրենց կոչմանն արժանի և իրավական տեսակետից գործունյա մարմիններ:

Նահապետականությունից իրապես օրենսդիր մարմին դառնալու ուղղությամբ առաջինը ոտք դրեց Ազգային ժողովը, որի ընտրությունները, ինչպես նշել ենք, կայացան 1963 թ. հունվարի 29–ին: Դա այլևս 12 հոգուց կազմված նախկին Մաջլիս ալ–Շուրան՝ Խորհրդատվական խորհուրդը չէր, որ կազմվում էր էմիրի կողմից և բաղկացած էր ալ–Սաբահ

ընտանիքի անդամներից: Իրականում դա ներընտանեկան նահապետական մի մարմին էր, որը էմիրին միայն խորհուրդներ տալու իրավունք ուներ և կատարում էր նրա ցանկություններն ու պահանջները:

Սահմանադրության ընդունումից և Ազգային ժողովի առաջին ընտրություններից հետո սկսվեց նրա՝ նահապետականից պետական կառավարման մարմնի վերածվելու գործընթացը: Նա կազմավորվեց ընտրությունների հիման վրա, և նրա բոլոր 50 անդամներն ընտրվեցին որպես անհատներ: Նա դարձավ ժամանակակից ինստիտուցիոնալ պետական մարմին, որի կազմում ընդգրկվեցին սոցիալական տարբեր խավերի՝ առևտրականների և գործարարների կամ նոր ձևավորվող քուվեյթյան ազգային բուժուազիայի, քաղաքական մտավորականության, պրոֆեսիոնալ քաղաքագետների, քոչվոր ու նստակյաց ցեղերի և սոցիալական այլ խավերի ներկայացուցիչները: Դա նորություն էր Քուվեյթի պետական և քաղաքական կյանքում: Եվ նման արմատական փոփոխությունը շատ չանցած իրեն զգացնել տվեց:

Առաջին Ազգային ժողովն իր գործունեության ընթացքում՝ 1963–1967 թթ., ընդունեց մի շարք կարևոր օրենսդրական ակտեր: Նա հաստատեց պառլամենտի աշխատակարգը, որը կանոնակարգում էր նրա գործունեությունը, ստեղծեց պառլամենտական հանձնաժողովներ, ընդունեց օրենքներ միտինգների և հասարակական հավաքների վերաբերյալ: Նրա ընդունած որոշումների մեջ առանձնանում էր էմիրությունում թագավորող ալ–Սաբահ դինաստիայի ժառանգականության կարգի հաստատումը: Սովորաբար նոր էմիրի և թագաժառանգի թեկնածությունները առաջադրում է ալ–Սաբահ թագավորական ընտանիքը: Դրանք պետք է պարտադիր կերպով հաստատվեն Ազգային ժողովի կողմից, որից հետո նրանց ընտրությունը համարվում է օրինական:

1965 թ. Ազգային ժողովի և կառավարության միջև ծագեց սուր կոնֆլիկտ, որը Քուվեյթի պատմության մեջ մտել է որպես սահմանադրական ճգնաժամ: Ազգային ժողովը գտավ, որ նախարարները խախտել են սահմանադրության կարևոր հոդվածներից մեկը, և պառլամենտի 50 անդամներից 31–ը ընդդիմադիր դիրք գրավեցին կառավարության նկատմամբ: Քուվեյթի սահմանադրությունն արգելում է նախարարներին իրենց պաշտոնավարության ընթացքում զբաղեցնել այլ պաշտոններ և, թեկուզ անուղղակիորեն, զբաղվել բիզնեսով, արդյունաբերական, առևտրական և ֆինանսական գործունեությամբ: Նախարարին արգելվում է լինել որևէ ընկերության կամ նրա վարչության անդամ,

գնել կամ վաճառել պետական սեփականությունը, մասնակցել աճուրդներին: Ազգային ժողովը գտնում էր, որ նախարարները խախտել են սահմանադրական այդ պահանջը, և այդ հողի վրա պառլամենտը և կառավարությունը հակադրվեցին միմյանց: Այդ հակադրության ժամանակ ճշմարտությունն Ազգային ժողովի կողմն էր, և կառավարությունը 1965 թ. ստիպված հրաժարական տվեց, որը չլսված բան էր Քուվեյթի պատմության մեջ: Հասկանալի է, որ նման բան չէր կարող տեղի ունենալ նահապետական համակարգի ժամանակ: Էմիրը հարկադրված ընդունեց կառավարության հրաժարականը և հանձնարարեց թագաժառանգին կազմել նոր կառավարություն: Իհարկե, այն նախարարները, որոնք խախտել էին սահմանադրության վերոհիշյալ կետը, չմտան կառավարության նոր կազմի մեջ: Նա նախորդի համեմատությամբ ունեցավ նս մի կարևոր տարբերություն: Նախորդ կառավարության կազմում 15 նախարարներից 11–ը ալ–Սաբահ ընտանիքի անդամներն էին, իսկ նոր կազմում նրանց թիվը կրճատվեց մինչև չորսի:

Պատերնալիզմը կառավարման համակարգից դուրս մղելու գործում կարևոր նշանակություն ունեցան վարչական ապարատի և քաղաքացիական ծառայության վերաբերյալ ընդունված մի շարք օրենքներ և օրենսդրական ակտեր, որոնք նույնպես նորություն էին Քուվեյթի պետական պրակտիկայում, միտված էին պետական ապարատի արդիականացմանը և դուրս էին գալիս կառավարման նահապետական համակարգին բնորոշ պատկերացումներից և շրջանակներից:

1962 թ. էմիր Աբդուլլահի դեկրետով «կազմակերպվեցին նախարարություններ՝ նոր դարաշրջանին համապատասխան»: Ստեղծվեց 14 նախարարություն, իսկ հետագայում նաև նորերը, այդ թվում արտաքին գործերի, պլանավորման և այլն: 2005 թ. Քուվեյթն իր պատմության մեջ առաջին անգամ կառավարության կազմում ունեցավ կին նախարար: Դոկտոր Մասումա Մուբարակը նշանակվեց պլանավորման նախարար և վարչական գործերի զարգացման պետական նախարար:

1979 թ. դեկրետով հիմնվեց Քաղաքացիական ծառայության խորհուրդ, որի գլխավոր խնդիրն էր մշակել վարչական ապարատի աշխատանքների կազմակերպման և պետական մարմինների զարգացման վերաբերյալ քաղաքականություն: Նրա խնդիրների մեջ էր մտնում նաև քաղաքացիական ծառայության համակարգի ստեղծումը: Ի զարգացումն այդ որոշման՝ 1984 թ. ստեղծվեց Բարձրագույն կոմիտե՝ վարչապետի գլխավորությամբ, որի մեջ մտնում են մի շարք նախարարներ՝

նպատակ ունենալով արդիականացնել վարչական ապարատը և դրա համար առաջարկել համապատասխան մեթոդներ և ծրագրեր:

Այդ և այլ քայլերը, ծրագրերը և կազմակերպչական միջոցառումները, յուրաքանչյուրը մի ծանր հարված էր կառավարման պատերնալիստական համակարգին և անհրաժեշտ քայլեր էին Քուվեյթի կառավարման համակարգն արդիականացնելու և նոր ժամանակների պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Եվ Քուվեյթը դանդաղորեն, բայց հաստատակամորեն առաջ է շարժվում կառավարման համակարգը նոր ժամանակների ոգուն և սկզբունքներին համապատասխանեցնելու, վերակառուցելու և վերակազմավորելու ուղղությամբ.

Վերոնշյալ դրական տեղաշարժերով և փոփոխություններով հանդերձ, Քուվեյթի քաղաքական իրողությունների և զարգացումների պատկերը թյուր կլինի, եթե չանդրադառնանք նաև տեղ գտած զանազան բացասական երևույթներին:

1970–1990-ական թվականներին հաճախակի լարված բնույթ էին կրում հարաբերություններն Ազգային ժողովի և գործադիր մարմնի միջև: Էմիրը դժգոհ էր Ազգային ժողովի աշխատանքներից և այն հանգամանքից, որ նրանում հաճախ էին դրսևորվում այս կամ այն հարցի վերաբերյալ ընդդիմադիր տրամադրություններ, չափազանց անկախ գործելու ցանկություն: Էմիր Սաբահ իբն Սալիմը (1965–1977 թթ.), Ազգային ժողովին մեղադրելով «կանխամտածված վարքագծի մեջ», 1976 թ. օգոստոսի 29-ին ցրեց այն: Նա պառլամենտին տարօրինակ կերպով մեղադրեց այն բանում, որ նա «չափազանց շատ ժամանակ էր ծախսում օրենսդրության վրա», թեև դա է յուրաքանչյուր պառլամենտի հիմնական խնդիրներից մեկը: Ցրելով պառլամենտը էմիրը երկրում հաստատեց խիստ գրաքննություն՝ զրկելով ընդդիմությանն իր կարծիքն ազատորեն արտահայտելու հնարավորությունից: Չերբազատվելով պառլամենտական կաշկանդումներից՝ գործադիր իշխանությունն սկսեց ավելի համարձակ գործել: Քուվեյթի ժամանակակից պրոբլեմների հետազոտող Բարգես Համուդ ալ-Բարգեսը այդ ժամանակաշրջանը՝ 1976–1980 թթ., համարում է անկախ Քուվեյթի պատմության «ոչ պառլամենտական շրջան»:

Էմիրի այդ քայլը առաջացրեց երկրի դեմոկրատական ուժերի և աշխատավորական զանգվածների, անգամ կառավարող վերնախավի որոշ շերտերի դժգոհությունը, և, ի վերջո, նոր էմիր Ջաբր իբն Ահմադը (1977–2006 թթ.) 1980 թ. վերականգնեց պառլամենտական կյանքը և

Ազգային ժողովը վերսկսեց իր գործունեությունը: 1981 թ. կայացան Ազգային ժողովի ընտրություններ: Դրանից հետո նույնպես տեղի էին ունենում տարաձայնություններ և հակասություններ օրենսդիր և գործադիր մարմինների միջև: Դա իր արտահայտությունը գտավ 1985 թ. կայացած ընտրությունների ժամանակ, երբ կառավարության քաղաքականությունից դժգոհ քուվեյթցի ընտրողների զգալի մասն իր ձայնը տվեց ընդդիմադիր ուժերին, որի շնորհիվ ազգային ձախակողմյան ուժերը պառլամենտում շահեցին 5, իսկ իսլամական ֆունդամենտալիստները՝ 11 տեղ:

Ընդդիմադիր ուժերը երբեմն դիմում էին ակտիվ արտապառլամենտական գործողությունների: 1985 թ. մայիսի 25–ին անհաջող մահափորձ կատարվեց էմիր Ջաբր Ահմադի դեմ, իսկ հունիս ամսին կազմակերպված պայթյունի հետևանքով մեծ հրդեհ բռնկվեց Սինա ալ–Ահմադիի նավթային ձեռնարկություններում. Ոստիկանությունն այդ ընթացքում գործեց դաժանորեն, որն առաջ բերեց Ազգային ժողովի դժգոհությունը կառավարության գործողություններից, և վերջինս հարկադրված էր հրաժարական տալ: Հրաշքով մահից փրկված էմիրը 1985 թ. հուլիսի 3–ին ցրեց պառլամենտը, և Քուվեյթը երկրորդ անգամ թևակոխեց ոչ պառլամենտական շրջան: Կրկին մտցվեց գրաքննություն: Պառլամենտական կյանքին Քուվեյթը վերադարձավ 1992 թ.՝ արդեն 1990–1991 թթ. իրաքյան ագրեսիայից հետո.

Քուվեյթը երբեմն լուրջ խնդիրներ էր ունենում դեմոկրատիայի, ազատությունների և մարդու իրավունքների հարցում. Մենք արդեն նշեցինք գրաքննության մասին: Պակաս կարևոր չէր քաղաքական կուսակցությունների հարցը: Քուվեյթում՝ անկախության նվաճումից ի վեր պաշտոնապես արգելված են բոլոր տեսակի քաղաքական կուսակցությունները: Եղավ մի պահ, երբ թվում էր, թե այդ հարցը մոտ է իր դրական լուծմանը: 1964 թ. թույլատրվեց արհմիութենական գործունեությունը Քուվեյթում, որին հետևեց նավթագործ բանվորների, առողջապահության, մանկավարժների և լուսավորության բնագավառի աշխատողների արհմիութենական կազմակերպությունների ստեղծումը: Սպասվում էր, որ դրան կհետևի հաջորդ քայլը, և կլեգալացվեն քաղաքական կուսակցությունները: Բայց դա տեղի չունեցավ. Դրան «խանգարեց» քաղաքական կյանքի ակտիվացումը և դժգոհությունը էմիրի ներքին քաղաքականությունից, ինչը վախեցրեց կառավարող վերնախավին, որը մտածում էր, որ եթե այդ իրադրության մեջ սկսեն գործել նաև քաղաքական կուսակցությունները, ապա ընդդիմադիր ուժերի դիրքերն

ավելի կամրապնդվեն: Իշխանությունները դիմեցին բռնությունների: 1966 թ. Քուվեյթում քաղաքական գործունեության համար ձերբակալվել է մոտ 500 մարդ, որոնց մի մասը բանտ է նետվել, իսկ մի մասն էլ արտաքսվել է երկրից:

Կառավարության այդ քայլերը չէին կարող խափանել ընդհանրապես քաղաքական գործունեությունը, այդ թվում և քաղաքական զանազան խմբավորումների ընդհատակյա և անլեգալ գործունեությունը: Հակառակ արգելքներին և հետապնդումներին՝ երկրում կազմավորվել էին մի քանի քաղաքական կամ կիսաքաղաքական կազմակերպություններ, որոնց մի մասը կրոնական բնույթ էր կրում կամ հանդես էր գալիս կրոնական քողի տակ, ինչպես՝ Իսլամական սահմանադրական շարժումը: Կային, իհարկե, նաև ոչ կրոնական, աշխարհիկ կազմակերպություններ, որոնք համախմբվել էին Քուվեյթի դեմոկրատական ֆորումի մեջ: 1992 թ. պառլամենտական ընտրությունների ժամանակ Ազգային ժողովում կարողացան դեպուտատական տեղեր ապահովել Իսլամական սահմանադրական շարժումը, Քուվեյթի դեմոկրատական ֆորումը և Սալաֆի սուննի ֆունդամենտալիստական խմբավորումը: Իշխանությունները, հարկավ, գիտեին նրանց գոյության մասին, բայց չէին կարողանում խաթարել նրանց գործունեությունը կամ վերացնել դրանց:

Պատկերը համարյա նույնությամբ կրկնվեց Ազգային ժողովի 1999 թ. ընտրությունների ժամանակ. Այդ ընտրություններում սուննիները և շիաները հանդես եկան միավորված՝ ստեղծելով Ազգային իսլամական կոալիցիա, որը կարողացավ պառլամենտի 50 տեղերից շահել 20–ը: Աշխարհականները կամ, ինչպես ընդունված է ասել, լիբերալները, հանդես եկան 1997 թ հիմնված Ազգային դեմոկրատական արշավի և Քուվեյթի դեմոկրատական ճակատի շրջանակներում և շահեցին 14 տեղ: Կառավարության օժանդակությունն ու աջակցությունը վայելող ուժերը կարողացան շահել ընդամենը 12 տեղ, իսկ մնացած 4 տեղերը զբաղեցրին անկախականները: Այսպիսով՝ կառավարության կողմնակիցները Ազգային ժողովում դարձան փոքրամասնություն:

Այդ և այլ փաստերն ու իրադարձությունները, չնայած քաղաքական վայրիվերումներին, վկայում էին, որ քաղաքական իրողությունները Քուվեյթում անկախության դարաշրջանում արմատականորեն փոխվել էին և նման չէին նախորդ տասնամյակների նահապետական–պատրիարխալ կիսամեռյալ կյանքին:

IV. ՔՈՒՎԵՅԹԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ

1. Միջարաբական հարաբերությունները Քուվեյթի արտաքին քաղաքականության առաջնային ուղղություն

Քուվեյթի միջազգային իրադրությունը զգալիորեն կախված է արաբական երկրների հետ նրա հարաբերություններից կամ, ինչպես ընդունված է ասել, միջարաբական հարաբերություններից: Եվ դա միանգամայն բնական է, քանի որ նա արաբական երկիր է և կազմում է արաբական աշխարհի մի մասը: Ինչպես արաբական մյուս երկրները, այնպես էլ Քուվեյթը, հարաբերություններն արաբական երկրների հետ համարում է իր արտաքին քաղաքականության առաջնային ուղղությունը:

1961 թ. հուլիսին Քուվեյթը միացավ միջարաբական ամենակարևոր կազմակերպությանը՝ դեռևս 1945 թ. ստեղծված Արաբական պետությունների լիգային (ԱՊԼ) և Արաբական համատեղ պաշտպանության համաձայնագրին: Դրանից շատ չանցած նա ստացավ ԱՊԼ–ի աջակցությունը և ռազմական օգնությունը Իրաքի հետ ծագած կոնֆլիկտի ժամանակ, երբ Բաղդադը հանդես եկավ Քուվեյթն իրեն կցելու սպառնալիքներով: Քուվեյթն անդամակցեց ԱՊԼ–ի մի շարք կազմակերպություններին, մասնավորապես 1962 թ. նա ստորագրեց Արաբական տնտեսական միասնության, իսկ 1965 թ. նաև Արաբական միասնական շուկայի ստեղծման համաձայնագրերը:

Քուվեյթը մշտապես մասնակցում է Լիգայի անդամ պետությունների ղեկավարների տարեկան համաժողովներին և ակտիվ դեր խաղում նրա որոշումների ընդունման մեջ: 1965 թ. նա պաշտպանեց Լիգայի որոշումը խզել դիվանագիտական հարաբերություններն Արևմտյան Գերմանիայի հետ այն բանից հետո, երբ վերջինս ճանաչեց Իսրայելը:

Երբեմն Լիգան իր այս կամ այն կարևոր համաժողովն անց է կացնում Քուվեյթում: 1967 թ. Քուվեյթի մայրաքաղաքում գումարվեց Լիգայի անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների հանդիպումը, 1968 թ.՝ կրթության նախարարների համաժողովը, որը կարևոր որոշումներ ընդունեց կրթության բնագավառում արաբական երկրների համագործակցության մասին և այլն: Քուվեյթն իր արժանի լուման ունի

Լիգայի ֆինանսավորման գործում՝ 1960–1970–ական թվականներին նա երկրորդն էր Եգիպտոսից հետո:

Քուվեյթը մասնակիցն էր 1967 թ. ընթացքում Խարթումում կայացած արաբական երկրների ղեկավարների հանդիպմանը, որտեղ որոշվեց նավթային էմբարգո կիրառել ԱՄՆ–ի և Անգլիայի նկատմամբ, որոնք 1967 թ. հունիսյան արաբա–իսրայելական երրորդ պատերազմի ժամանակ պաշտպանել էին Իսրայելին: Խարթումի հանդիպման ժամանակ որոշվեց ֆինանսական լայն օգնություն ցույց տալ Եգիպտոսին, Սիրիային, Հորդանանին, ինչպես նաև Պաղեստինի ազատագրության կազմակերպությանը՝ 1967 թ. հունիսյան պատերազմի ժամանակ կրած մեծ կորուստները փոխհատուցելու, նրանց ռազմական ուժերի և տնտեսության վերականգնման համար: Ֆինանսական այդ բեռն իրենց վրա վերցրեցին Լիբիան, Սաուդյան Արաբիան և Քուվեյթը: Քուվեյթի բաժինը կազմում էր 55 մլն ֆունտ ստեռլինգ՝ ի հավելումն 135 մլն, որը նա արդեն տրամադրել էր նրանց: Զգալի է Քուվեյթի օգնությունը հատուկ պաղեստինցիներին: Նա հատկացրեց 2 մլն ֆունտ ստեռլինգ Պաղեստինի ազատագրության բանակի ստեղծման համար:

Քուվեյթն իր տնտեսական օգնությունն արաբական երկրներին իրականացնում է նաև Արաբական պետությունների լիգայի շրջանակներից դուրս: Այդ նպատակով Քուվեյթում հիմնվել են «Արաբական երկրների տնտեսական զարգացման հիմնադրամ», «Արաբական ծոցի բանկ» և այլ հաստատություններ. Պանարաբական քաղաքականության դրսևորում է հանդիսանում նաև այն փաստը, որ Քուվեյթի տնտեսության մեջ արտասահմանյան աշխատուժի ներգրավման գործում իշխանությունները նախապատվությունը տալիս են արաբական երկրներին:

1967 թ. մայիսին Քուվեյթի «Յարմուկ բրիգադը» միացավ արաբական բանակներին՝ «պաշտպանելու արաբական հայրենիքը ընդդեմ որևէ ագրեսիայի»: Այդ բավականին լավ զինված բրիգադը տեղակայվեց Եգիպտոսում: Հատկանշական է, որ երբ 1967 թ. հունիսյան պատերազմում կրած պարտությունից հետո Եգիպտոսի պրեզիդենտ Գամալ Աբդել Նասերը հրաժարական տվեց, Քուվեյթում հունիսի 11–ին տեղի ունեցավ բազմահազարանոց ցույց՝ ի պաշտպանություն Նասերի, որի ժամանակ նրանք պահանջում էին արաբական աշխարհի ճանաչված ղեկավարից հետ վերցնել իր հրաժարականը:

Քուվեյթը հստակ դիրքորոշում գրավեց պաղեստինյան հարցում՝ այն համարելով մերձավորարևելյան ճգնաժամի հիմնական խնդիրը.

Քուվեյթը պահանջում է իսրայելական բոլոր զորքերի դուրսբերումը 1967 թ. գրաված տարածքներից: Նա ՊԱԿ–ը ճանաչել է որպես Պաղեստինի միակ օրինական ներկայացուցիչը: Նա իր դռները բացեց պաղեստինյան փախստականների առջև, որոնց թիվը մի պահ հասավ մինչև 400–450 հազարի: Քուվեյթյան իշխանությունները նրանց գոյության համար ստեղծեցին տանելի պայմաններ՝ նրանցից շատերին ապահովելով աշխատանքով: Քուվեյթը արաբական մյուս պետությունների հետ միասին պաշտպանեց Պաղեստինի խնդրի կարգավորման վերաբերյալ Մարոկկոյում 1982 թ. ընդունված Խաղաղության արաբական պլանը.

2. Իրաք–քուվեյթյան 1973 թ. ռազմական բախումները

Քուվեյթի համար շարունակում էին վտանգավոր մնալ հարաբերություններն Իրաքի հետ: Քուվեյթում լավ էին հիշում Իրաքի 1961 թ. բացահայտ հավակնությունները գրավել արաբական այդ երկիրը և միացնել Իրաքին: Այդ կոնֆլիկտը, ինչպես նշվել է, մեծ դժվարությամբ հաջողվեց հարթել: Սակայն 1970–ական թվականների սկզբներին հարաբերություններն Իրաքի և Քուվեյթի միջև կրկին սրվեցին: 1970 թ. Իրաքը հանդես եկավ արաբական պաշտպանական կազմակերպություն ստեղծելու առաջարկությամբ, որի մեջ պետք է միավորվեին Իրաքը, Քուվեյթը, Սաուդյան Արաբիան և Օոցի մյուս արաբական շեյխությունները: Այդ կազմակերպության գլխավորը խնդիրը, Իրաքի ղեկավարության կարծիքով, տարածաշրջանի պաշտպանությունն էր: Նա ուղղված էր Իրանի դեմ, որը ձգտում էր իր հեգեմոնիան հաստատել Օոցի տարածաշրջանի վրա:

Քուվեյթը, Սաուդյան Արաբիան և Օոցի մյուս երկրները մերժեցին պաշտպանական կազմակերպություն ստեղծելու Իրաքի առաջարկությունը, որտեղ գլխավոր դերը պատկանելու էր Բաղդադին: Դեռ ավելին՝ Քուվեյթը դիմեց իր հարաբերությունների բարելավմանը Իրանի հետ: 1970 թ. տեղի ունեցավ Իրանի և Քուվեյթի արտաքին գործերի նախարարների հանդիպումը, որի ժամանակ քննարկվեց Պարսից ծոցում ստեղծված իրադրությունը: Կողմերը հաստատեցին, որ իրենց տեսակետները համընկնում են. Իսկ Քուվեյթի արտաքին գործերի նախարարը հայտարարեց, որ «Իրանի կառավարությունն արտահայտեց Իրանի պատրաստակամությունը պաշտպանել էմիրությունը (Քուվեյթի — Ն. Հ.) ընդդեմ Քուվեյթը բռնակցելու Իրաքի փորձերի»: Իրաքա–քուվեյթյան հարաբերություններն ավելի լարվեցին այն բանից հետո, երբ 1970 թ.

ամռանն Իրանը և Քուվեյթը համաձայնության եկան տարածքային ջրերի դեմարկացիայի հարցում, մինչդեռ Իրաքն ինքն էր հավակնում այդ տարածքային ջրերին:

1970 թ. նոյեմբերի 30–ին Իրանը, օգտվելով արաբական երկրների միջև գոյություն ունեցող հակասություններից և անհամաձայնությունից, դեսանտ իջեցրեց Ծոցում գտնվող երեք կղզիներում՝ Աբու Մուսայում, Մեծ և Փոքր Թոնբերում: Դա առաջ բերեց արաբական մի շարք երկրների՝ Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի բողոքը: Իրաքի կառավարությունը երեք կղզիների գրավումը համարեց ծանր հարված արաբ ազգին: Բողոքեց նաև Քուվեյթի կառավարությունը: Այդուհանդերձ, Իրաքը այդ երեք կղզիները համեմատաբար արագ ու հեշտ Իրանի կողմից գրավելու մեջ մեղադրեց Քուվեյթին և Ծոցի մյուս երկրներին, որոնք մերժեցին պաշտպանական կազմակերպություն ստեղծելու իր առաջարկությունը: Իրաքը Քուվեյթին մեղադրում էր նաև հարաբերությունները Իրանի հետ բարելավելու մեջ:

Սակայն հարկ է նշել, որ եթե Քուվեյթը չպաշտպանեց արաբական երկրների պաշտպանության կազմակերպություն ստեղծելու Իրաքի ջանքերը, ապա դա չէր նշանակում, թե նա հանդես էր գալիս հօգուտ երեք կղզիները Իրանից կողմից գրավելուն: Իրանի այդ քայլն անակնկալի բերեց Քուվեյթին և լուրջ մտահոգություն առաջացրեց նրա կառավարող շրջաններում: Նրանք բնավ էլ ուրախ չէին Ծոցի շրջանում Իրանի դիրքերի հետագա ուժեղացմանը: Դա ստիպեց Քուվեյթին լուրջ կերպով մտածել ստեղծված իրադրության և նրա հեռանկարների մասին և հասկանալ, որ համաձայնեցված գործողությունների բացակայությունն Իրաքի և Քուվեյթի միջև չի համապատասխանում երկու պետությունների, ինչպես նաև արաբ ազգի շահերին: Դա հասկանում էին նաև Բաղդադում, և 1971 թ. երկու կողմերն էլ որոշակի քայլեր ձեռնարկեցին հարաբերությունները կարգավորելու համար: Տեղի ունեցան պատվիրակությունների փոխայցելություններ, բանակցություններ տարբեր հարցերի շուրջ, որի արդյունքում զգալիորեն թուլացավ լարվածությունը իրաք–քուվեյթյան հարաբերություններում: Նրանց համատեղ հայտարարությունում ասված էր, որ «հարցի մանրակրկիտ քննարկումից հետո Իրաքը և Քուվեյթը դատապարտում են արաբական երեք կղզիների գրավումը Իրանի կողմից: Կողմերն անհրաժեշտ են համարում հարաբերությունների զարգացումն ու խորացումը երկու երկրների միջև, որի ժողովուրդները կապված են ընդհանուր ճակատագրով»:

Քուվեյթը 1972 թ. հանդես եկավ ի պաշտպանություն «Իրաք պետրոլիում կոմպանիի» ազգայնացնելու Իրաքի կառավարության որոշման: Համաձայնություն ձեռք բերվեց նաև համագործակցություն հաստատել երկու երկրների միջև բոլոր բնագավառներում: Թվում էր, թե ամեն ինչ ընթանում է բարեհաջող, և որևէ ամպ չի կուտակվում նրանց հարաբերությունների վրա, մանավանդ որ Քուվեյթի պատվիրակությունները Իրաքում արժանանում էին Իրաքի պրեզիդենտ Ահմադ Հասան ալ–Բաքրի և նրա տեղակալ Սադամ Հուսեյնի ջերմ ուշադրությանը:

Սակայն, ինչպես պարզվեց, Իրաքի և Քուվեյթի միջև կրկին ծագել էին տարաձայնություններ սահմանների վերաբերյալ: Դրանք հարթելու համար 1973 թ. փետրվարին քուվեյթյան պատվիրակությունը, որը գլխավորում էր արտաքին գործերի նախարար Սաբահ Ահմադ ալ–Ջաբր ալ–Սաբահը, այցելեց Իրաք և հանդիպումներ ունեցավ Ահմադ Հասան ալ–Բաքրի ու Սադամ Հուսեյնի հետ, բայց դրանք արդյունավետ չեղան:

1973 թ. մարտի 20–ին արաբական աշխարհին ցնցեց լուրն առ այն, որ սահմանային գոտում իրաքյան և քուվեյթյան զինված ուժերի միջև տեղի են ունենում ռազմական բախումներ: Դրա վերաբերյալ կար երկու իրարամերժ տեսակետ:

Իրաքի ներքին գործերի նախարարությունը 1973 թ. մարտի 21–ին տարածած իր բացատրության մեջ հավատացնում էր, թե հարձակումը կատարել է քուվեյթյան կողմը, երբ իրաքյան զորքերը կատարում էին սովորական զինավարժություններ իրաքյան սահմաններից ներս: Իրաքյան ուժերը, ինչպես նշված էր պաշտոնական հաղորդագրության մեջ, «հարկադրված էին հետ մղել քուվեյթյան զորքերի հարձակումը»: Նշվում էր նաև, որ սպանվել է երկու քուվեյթցի, իսկ երկուսն էլ վիրավորվել են: Ահա սա էր իրաքյան վարկածը:

Ըստ քուվեյթյան պաշտոնական հաղորդագրության՝ իրաքյան զորքերը 1973 թ. մարտի 20–ին առավոտյան ժամը 3:20 րոպեին, գրավել են սահմանային Սամտա պահակետը և գնդակոծել Ումմ Կասր պահակետը:

Նույն օրը գումարվեց Քուվեյթի Ազգային ժողովը, որն իր հայտարարության մեջ պահանջում էր Իրաքից անհապաղ իր զորքերը դուրս բերել Քուվեյթի տարածքից: Հայտարարության մեջ նշվում էր, որ սահմանները երկու երկրների միջև հաստատվել են 1963 թ. համաձայնության հիման վրա, որը ստորագրվել է երկու պետությունների ղեկավարների կողմից:

Քուվեյթի կառավարությունն այդ նույն օրը լրացուցիչ զինվորական ուժեր ուղարկեց, որոնք դիրքեր գրավեցին իրաք–քուվեյթյան սահմանի երկայնքով:

Ինչպես տեսնում ենք, երկու վարկածներում էլ չեն նշված ռազմական բախումների պատճառները: Լավատեղյակ աղբյուրների համաձայն՝ պատճառը պետք էր փնտրել իրաք–քուվեյթյան քաղաքական հարաբերությունների ոլորտում: Սովորաբար նշվում է երկու պատճառ: Առաջին՝ Իրաքը դժգոհ էր Քուվեյթի չեզոք դիրքորոշումից, որ նա գրավել էր Իրաքի և Իրանի միջև գոյություն ունեցող սահմանային վեճերի կապակցությամբ՝ կապված սահմանը Շատ ալ–Արաբով ճշգրտելու հետ: Իրաքը Քուվեյթին մեղադրում էր, որ նա նպաստում է Իրանի ներթափանցմանը Պարսից ծոցի շրջան: Երկրորդ՝ Իրաքը դժգոհ էր, որ Իրաքում 1968 թ. հուլիսի 17–ին տեղի ունեցած հեղաշրջումից հետո, որն իրագործել էր Իրաքի Բաաս կուսակցությունը Ահմադ Հասան ալ–Բաքրի և Սադամ Հուսեյնի գլխավորությամբ, Քուվեյթում քաղաքական ապաստան էին գտել Իրաքի նախկին պրեզիդենտ Արիֆը, վարչապետ Աբդ ալ–Ռազակ ալ–Նայիֆը և մի շարք այլ քաղաքական հակառակորդներ: Իրաքի ղեկավարությունը պահանջում էր նրանց հանձնել Իրաքին կամ էլ արտաքսել Քուվեյթից. մի բան, որը Քուվեյթի կառավարությունը հրաժարվում էր կատարել:

Ամենայն հավանականությամբ դրանց մեջ կան ճշմարտության հատիկներ, որը չի կարելի հաշվից դուրս նետել: Այդուհանդերձ, Իրաքի գործողությունների և դրանց դրդապատճառների ներքին ծալքերում, մեր կարծիքով, դարձյալ ընկած էր Քուվեյթը Իրաքին ինչ–որ ձևով միացնելու, բռնակցելու միտումը, ինչպես 1961 թ.: Ընդհանրապես, այդ գաղափարը հանգիստ չէր տալիս արագորեն միմյանց փոխարինող իրաքյան ղեկավարություններին:

Կոնֆլիկտին ակտիվորեն միջամտեցին արաբական երկրները: Եգիպտոսը, Սիրիան և Սուդանը կողմերից պահանջեցին անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և համաձայնվել կոնֆլիկտը լուծել խաղաղ ճանապարհով. Միջնորդական առաքելությամբ Իրաք և Քուվեյթ մեկնեցին Եգիպտոսի արտաքին գործերի նախարար ալ–Զայադը, ապա նաև Սիրիայի արտաքին գործերի նախարար Աբդ ալ–Հալիմ Խադամը, ինչպես նաև Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղար Մահմուդ Ռիյադը: Նրանց ջանքերը տվեցին իրենց պտուղները: 1973 թ. մարտի 25–ին Իրաքի կառավարությունը

հայտարարեց, որ ինքը պատրաստ է անմիջապես բանակցություններ սկսել Քուվեյթի պատասխանատու ներկայացուցիչների հետ: Այդ առաջարկությունը Քուվեյթի ղեկավարությանը փոխանցեց Մահմուդ Ռիյադը, որի հետ համաձայնվեց քուվեյթյան կողմը: Բանակցությունները երկու երկրների միջև տեղի ունեցան Բաղդադում 1973 թ. օգոստոսի 20–22-ը: Քուվեյթի պատվիրակությունը գլխավորում էր թագաժառանգ շեյխ Ջաբր ալ–Ահմադ ալ–Սաբահը, իսկ իրաքյանը՝ Հեղափոխական հրամանատարության խորհրդի նախագահի տեղակալ Սադամ Հուսեյնը: Կողմերը համաձայնվեցին հաստատել կայուն սահմաններ, և հարաբերությունները նրանց միջև կարգավորվեցին: Սադամ Հուսեյնը 1975 թ. անգամ հայտարարեց, թե «Իրաքը Քուվեյթի հետ ունի ամուր և եղբայրական հարաբերություններ»[34]:

3. Քուվեյթի դիրքորոշումն իրանա–իրաքյան պատերազմի նկատմամբ (1980–1988 թթ.)

Սակայն, ինչպես կտեսնենք հետո, Սադամ Հուսեյնը, որը 1979 թ փաստորեն կատարեց պետական հեղաշրջում և դարձավ Իրաքի անսահմանափակ իշխանապետը, շատ յուրովի էր հասկանում և մեկնաբանում «եղբայրական հարաբերությունները»: Համենայն դեպս, Քուվեյթը անկախ պետություն դառնալուց հետո 12 տարվա ընթացքում երկու անգամ կանգնեց իր պետականությունը և անկախությունը կորցնելու վտանգի առջև, և երկու անգամ էլ այդ վտանգը եկավ «եղբայրական» Իրաքի ղեկավարության կողմից: Նրան առաջիկայում սպասում էր երրորդ և ամենադժվարին փորձությունը:

Իսկ մինչ այդ քուվեյթ–իրաքյան հարաբերություններն արտաքնապես զարգանում էին նորմալ, և երկու երկրները համագործակցում էին տարբեր բնագավառներում: Եվ երբ 1980 թ. սկսվեց իրաքա–իրանյան պատերազմը, որը տևեց ութ տարի, Քուվեյթն արաբական մյուս երկրների հետ միասին կանգնեց Իրաքի կողմը: Նա այդ տարիների ընթացքում Իրաքին ցույց էր տալիս քաղաքական աջակցություն և, որ ավելի կարևոր է, ֆինանսական լայնածավալ օգնություն

34 Այդ հարցն ըստ էության դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից. Այդ մասին ավելի մանրամասն տես մեր աշխատությունը՝ Н. О. Оганесян. Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Ереван, 1985.

Սակայն Քուվեյթի իրաքանպաստ դիրքորոշումը ներքաղաքական լարվածություն ստեղծեց երկրում: Այդ քաղաքականությունից դժգոհ էին Քուվեյթի շիաները, որոնք պահանջում էին, որ այդ պատերազմում Քուվեյթը ոչ թե օգնի Իրաքին, այլ գրավի չեզոք դիրք: Չմոռանանք, որ պատերազմը Իրաքի և Իրանի միջև սկսվեց 1979 թ. Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունից և Իրանի Իսլամական Հանրապետության հռչակումից հետո: Իսկ Իրանում տիրապետող է իսլամի շիական ուղղությունը, որն առաջացրեց սուննիների խորը մտահոգությունը. եթե ոչ տագնապը, մանավանդ այն բանից հետո, երբ Իրանի շիա առաջնորդները բացեիբաց հանդես էին գալիս շիական իսլամական հեղափոխությունն արտահանելու և իսլամական մյուս երկրներում նույնպես համապատասխան վարչակարգ հաստատելու կոչերով:

Քուվեյթը, որի բնակչության մեծ մասը սուննի մուսուլմաններ են, և ալ–Սաբահ կառավարող դինաստիան, որը նույնպես սուննի է, բնականաբար, չէին ցանկանում Իրանի հաղթանակն այդ պատերազմում, որը ծանր հետևանքներ կունենար իրենց համար: Ահա այդ պատճառով էլ Քուվեյթը, ինչպես նշվեց, արաբական մյուս երկրների հետ միասին կանգնեց Իրաքի կողքին՝ գտնելով, որ Իրաքը տվյալ պահին միակ երկիրն էր, որը կարող էր պատվար կանգնել ընդդեմ շիական հեղափոխության ալիքի և Իրանի աննախադեպ դիրքերի ամրապնդմանը տարածաշրջանում:

Քուվեյթի շիաների դժգոհությունն իր արտացոլումը գտավ նրանց մի շարք գործողություններում: Դրանցից ամենավտանգավորը 1985 թ. մայիսի 25–ին Քուվեյթի էմիր Ջաբր իբն Ահմադ ալ–Սաբահի դեմ կազմակերպված անհաջող մահափորձն էր, երբ մի ինքնասպան պայթեցրեց ավտոմեքենան: Այդ նույն ժամանակ հրկիզվեց Քուվեյթի նավթարդյունաբերության կենտրոն Միննա ալ–Ահմադի նավթային կոմպլեքսը: Սակայն վարչակարգի հակառակորդներին ավելին անել չհաջողվեց: Քուվեյթի իշխանությունները կարողացան խիստ վերահսկողություն սահմանել երկրում և կանխել հետագա ահաբեկչական գործողությունները:

Իրաքին անվերապահորեն պաշտպանելու Քուվեյթի քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ Իրանը սկսեց հարձակումներ գործել քուվեյթյան տանկերների վրա: Քուվեյթը սեփական ուժերով չէր կարող դիմակայել իրանական հարձակումներին, ուստի նա դիմեց ԱՄՆ–ի օգնությանը: ԱՄՆ–ը, որի հարաբերությունները խիստ լարված էին Իրանի հետ, օգնության ձեռք մեկնեց Քուվեյթին: Ամերիկյան նավատորմը շատ

յուրահատուկ ձևով իր պաշտպանության տակ վերցրեց քուվեյթյան նավթային տանկերները: Նրանք սկսեցին նավարկել ամերիկյան դրոշի ներքո և շարունակել նավթի արտահանումը համաշխարհային շուկա: Իրանը չհամարձակվեց գրոհել ամերիկյան դրոշի ներքո նավարկող քուվեյթյան տանկերների վրա:

Իրանա–իրաքյան պատերազմի ընթացքում (1980–1988 թթ.) Քուվեյթի ֆինանսական օգնությունը Իրաքին կազմել է 14 մլրդ դինար: Առանց արաբական երկրների, այդ թվում և Քուվեյթի ֆինանսական և նյութական վիթխարի օգնության Իրաքը կհայտնվեր ծանր դրության մեջ:

Քուվեյթն Իրաքին ցուցաբերած այդ մեծ ֆինանսական օգնությունը. ինչպես վկայում են աղբյուրները, փորձել է օգտագործել որպես լծակ Իրաքի հետ սահմանային վեճերը վերջնականապես կարգավորելու նպատակով: Հարցն այն է, որ ոչ միայն 1961 թ., երբ Իրաքն առաջին անգամ հանդես եկավ Քուվեյթն իրեն կցելու հավակնություններով, այլև 1973 թ ռազմական բախումներիից հետո, չհաջողվեց վերջնականապես լուծել այդ խնդիրը: Քուվեյթին դա մշտապես անհանգստացնում էր: Այդ պատճառով էլ իրանա–իրաքյան պատերազմի ժամանակ, երբ Իրաքի դրությունը շատ ծանր էր, նրան 14 մլրդ դինարի օգնություն ցույց տալով հույս ուներ օգտագործել այդ հանգամանքը և հասնել սահմանային հարցի վերջնական կարգավորմանը և վերջակետ դնել Քուվեյթն անեքսիայի ենթարկելու իրաքյան հավակնություններին: Սակայն դա Քուվեյթին չհաջողվեց:

Իրանա–իրաքյան պատերազմի ավարտից հետո, որի ժամանակ Իրաքը վիթխարի նյութական, տնտեսական, ֆինանսական և մարդկային կորուստներ ունեցավ, Իրաքի պրեզիդենտ Սադամ Հուսեյնը բազմիցս անդրադարձել է պատերազմի ժամանակ արաբական երկրների կողմից Իրաքին ցույց տրված օգնությանը: Այդ հարցում նա ուներ իր ուրույն տեսակետը: Նա գտնում էր, որ Իրաքը Իրանի հետ պատերազմել է ոչ միայն իր համար, այլև արաբական բոլոր երկրների համար և իր վրա վերցրել իրանական ագրեսիային հակահարված տալու ամբողջ բեռը: Դրանով իսկ Իրաքը պաշտպանել է արաբական բոլոր երկրներին, առաջին հերթին Ծոցի երկրներին, այդ թվում նաև Քուվեյթին: Ուստի, նրա կարծիքով, արաբական միապետները, առաջին հերթին՝ նավթարդյունահանող երկրների շեյխերը, էմիրները, սուլթանները և թագավորները, պարտավոր էին բացել իրենց քսակները և օգնել Իրաքին վերացնելու նրանց բոլորի վրա կախված իրանական շիական ֆունդամենտա-

լիստական վտանգը: Այդ պատճառով նա անհրաժեշտություն չէր տեսնում երախտապարտ լինել արաբական այն երկրներին, որոնք պաշտպանել կամ օգնել էին Իրաքին իրանա–իրաքյան պատերազմի ժամանակ: Ընդհակառակը, նա համոզված էր, որ այդ երկրները պետք է իրեն և Իրաքին երախտապարտ լինեն, քանի որ Իրաքը փրկել է նրանց իրանական–շիական վտանգից:

Սադամ Հուսեյնն իր դատողությունների մեջ այնքան հեռու գնաց, որ անգամ հայտարարեց, թե արաբական նավթը միայն այն երկրներին չի պատկանում, որտեղ առկա են նրանց պաշարները: Նա գտնում էր, որ դա բոլոր արաբների սեփականությունն ու հարստությունն է, և անհրաժեշտ է այդ սեփականության վերաբաշխում կատարել արաբական երկրների միջև արդարության և հավասարության սկզբունքով:

V. ԻՐԱՔՅԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ՔՈՒՎԵՅԹԻ ԳՐԱՎՈՒՄԸ. ՄԻՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ (1990–1991 թթ.)

1. Պատերազմի պատճառները և Իրաքի դիկտատոր Սադամ Հուսեյնի արկածախնդրական քաղաքականությունը

Իրանա–իրաքյան պատերազմի ավարտին չհաջորդեց կայունություն և հուսալի խաղաղություն Ծոցի շրջանում: Այդ տարածաշրջանում կրկին սև ամպեր էին կուտակվում, որի նախածեռնողն Իրաքն էր, իսկ զոհը՝ արդեն երրորդ անգամ՝ հարևան եղբայրական արաբական Քուվեյթը:

1980–1988 թթ. իրանա–իրաքյան պատերազմից Իրաքը դուրս եկավ մեծ կորուստներով, թուլացած տնտեսությամբ և ֆինանսական մեծ պարտքերով: Իրաքի պատերազմական ծախսերը կազմում էին 100 մլրդ, իսկ արտաքին պարտքը՝ 60 մլրդ ԱՄՆ դոլար: Անհրաժեշտ էր ելք գտնել ստեղծված ծգնաժամային վիճակից դուրս գալու համար. Եվ Իրաքի պրեզիդենտ Սադամ Հուսեյնը հերթական անգամ աշխարհին մատուցեց անակնկալ, որը զարմացրեց իր ինքնատիպությամբ, դաժանությամբ և անհեռատեսությամբ: Նա որոշեց իր հարցերը լուծել Քուվեյթի հաշվին, որի հարստությունները Բաղդադում համարում էին անսպառ:

Սադամ Հուսեյնը գտնում էր, որ պահը շատ բարենպաստ էր իր ծրագրի իրագործման համար: Իրաքը, ինչպես նաև մի շարք արաբական երկրներ, համարում էին, որ Իրաքը պատերազմից հաղթանակով է դուրս եկել, համենայն դեպս, նա ութ տարի ծանր պատերազմ էր մղել և պարտություն չէր կրել: Այդ հանգամանքն ավելի էր ընդգծվում արաբա–իսրայելական պատերազմներում արաբների շարունակական պարտությունների և անհաջողությունների ընդհանուր ֆոնի վրա: Այդ առումով նրա հեղինակությունն իրոք բարձր էր արաբական աշխարհում: Իրաքն ուներ լավ զինված, արդեն մարտական փորձ կուտակած բանակ, որի թիվը հասնում էր համարյա մեկ միլիոնի: Դա աշխարհի չորրորդ բանակն էր Ռուսաստանի, Չինաստանի և ԱՄՆ–ի բանակներից հետո: Իսկ Քուվեյթի զինված ուժերը կազմում էին ընդամենը 20 հազար մարդ, որը լուրջ մրցակից չէր կարող լինել Իրաքի համար:

Սադամ Հուսեյնն իր ծրագիրն իրագործելիս հաշվի էր առել նաև մի կարևոր հանգամանք՝ Քուվեյթի ներքաղաքական անկայուն վիճակը: Էմիր Ջաբր Ահմադ ալ–Սաբահը 1986 թ. ցրել էր երկրի պառլամենտը՝ Ազգային ժողովը, որն առաջացրել էր բնակչության խորը դժգոհությունը: Իրաքի ղեկավարը հաշվի էր առել անգամ մի այնպիսի հանգամանք, ինչպիսին Քուվեյթի մարդագրական պատկերն էր: Նշված ժամանակ Քուվեյթի բնակչությունը կազմում էր 2 մլն 143 հազար մարդ. Բայց իրենք՝ բուն քուվեյթցիները, կազմում էին ընդամենը 827 հազար մարդ, մինչդեռ օտարերկրացիները, որոնք քաղաքացիություն չունեին, կազմում էին մեծամասնություն՝ 1 մլն 316 հազար մարդ:

Բաղդադի կառավարողները հավատացած էին, որ մեծամասնություն կազմող այդ օտարերկրացիները հանդես չէին գա հանուն Քուվեյթի պաշտպանության և իրենց կյանքը չէին զոհ մի երկրի համար, որն օգտագործում էր նրանց որպես աշխատուժ, սակայն հրաժարվում էր նրանց շնորհել քաղաքացիություն:

Շատ լավ, դա, այսպես ասած, Սադամի Հուսեյնի ներքին մտորումներն էին, իսկ ինչպե՞ս էր նա փորձում Քուվեյթի նկատմամբ իր պահանջները հիմնավորել, ինչպիսի՞ գործոնների վրա էր հենվում:

Քուվեյթին Իրաքի ղեկավարության ներկայացրած «մեղադրանքները» կարելի է բաժանել երեք խմբի:

Առաջին՝ նավթի գների արհեստականորեն իջեցնելու հարցը: Բաղդադը գտնում էր, որ Քուվեյթը Արաբական Միացյալ Էմիրությունների հետ միասին դիտավորյալ կերպով ավելացրել են նավթի արդյունա-

հանումն ու արտահանումը և այդ ուղիով դիտավորյալ կերպով գցել նավթի համաշխարհային գները, որպեսզի տնտեսական մեծ հարված հասցնեն Իրաքին: Սադամ Հուսեյնը մեղադրում էր Քուվեյթին Իրաքին պատկանող Հյուսիսային Ռումայլայի նավթահորերից նավթը գաղտնի կերպով Քուվեյթ ներքաշելու մեջ: Բաղդադի կարծիքով՝ Քուվեյթի այդ քաղաքականության հետևանքով Իրաքը յուրաքանչյուր տարի կորցնում է մոտ մեկ մլրդ ԱՄՆ դոլար:

Երկրորդ՝ Իրաքը պահանջում էր, որ Քուվեյթը դուրս գրի, այսինքն՝ չեղյալ համարի Իրաքի 12–14 մլրդ պարտքը Քուվեյթին: Դա այն գումարն էր, որ Քուվեյթը տվել էր Իրաքին իրանա–իրաքյան պատերազմի ժամանակ: Իրաքը, ինչպես արդեն նշել ենք, գտնում էր, որ այդ պատերազմը ոչ թե իրանա–իրաքյան, այլ արաբա–իրանյան պատերազմ էր, և ինքը պատերազմել է Իրանի հետ հանուն համայն արաբական երկրների ազգային շահերի պաշտպանության: Հետևաբար, արաբական յուրաքանչյուր երկիր պարտավոր է իր լուման ներդնել այդ գործում:

Երրորդ՝ տարածքային պահանջներ: Բաղդադը պահանջում էր, որ Քուվեյթն Իրաքին զիջի սահմանային որոշ տարածքներ և վարձակալության տա Բուբիյան և Վարբա կղզիները:

Այդ պահանջները Քուվեյթին ներկայացվեցին 1990 թ. հուլիսի կեսերին, և որպեսզի ճնշումը Քուվեյթի վրա ավելի ուժեղացնի, Իրաքը 100–հազարանոց բանակ կենտրոնացրեց քուվեյթյան սահմանի վրա:

1990 թ. հուլիսի 31–ին Իրաքի և Քուվեյթի պատվիրակները հանդիպեցին Սաուդյան Արաբիայի Ջիդա քաղաքում: Նրանց բանակցությունները շատ կարճ տևեցին և ավարտվեցին օգոստոսի 1–ին ձախողումով: Քուվեյթյան կողմը հայտարարեց, որ իրենց համար անընդունելի են Իրաքի պահանջները, Քուվեյթը չի կարող չեղյալ հայտարարել նրա պարտքը և նրան տերիտորալ զիջումներ կատարել: Իսկ Իրաքը մեղադրեց Քուվեյթին, որ իր պատվիրակությունը բանակցությունների ժամանակ չտեսավ Քուվեյթի կողմից պատրաստակամության անգամ փոքր նշույլ Իրաքին վճարելու այն վնասի համար, որ նա պատճառել է նրա տնտեսությանն իր նավթային քաղաքականությամբ:

Դա եղավ վերջին հանդիպումը Իրաքի և Քուվեյթի ներկայացուցիչների միջև բանակցությունների սեղանի շուրջը:

2. Իրաքյան բանակի ներխուժումը և Քուվեյթի գրավումը

1990 թ. օգոստոսի 2–ին՝ տեղական ժամանակով առավոտյան ժամը 2–ին, իրաքյան զորքերը ներխուժեցին Քուվեյթ և գրավեցին այն: Քուվեյթի փոքրաթիվ բանակն ի վիճակի չեղավ որևէ լուրջ դիմադրություն ցույց տալ ագրեսորներին: Թագավորական ընտանիքը էմիր Ջաբր Ահմադ ալ–Սաբահի գլխավորությամբ փախավ երկրից: Սկզբում նա հանգրվանեց Բահրեյնում, ապա տեղափոխվեց Սաուդյան Արաբիա և հաստատվեց սաուդյան թագավորների Թաիֆ ամառանոցային քաղաքում: Իրաքը ալ–Սաբահների դինաստիան հայտարարեց տապալված:

Իրաքի ագրեսիան Քուվեյթի դեմ ցնցեց արաբական երկրներին և բացասական աննախընթաց արձագանք գտավ ամբողջ աշխարհում: Այդ նույն օրը՝ օգոստոսի 2–ին, գումարվեց ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի նիստ, որն ընդունեց 660 բանաձևը՝ խստիվ դատապարտելով Իրաքի ագրեսիան և Քուվեյթի օկուպացիան: Անվտանգության խորհուրդը պահանջեց Իրաքից.

«Անհապաղ և առանց որևէ պայմանների իր զորքերը ետ քաշել դեպի այն դիրքերը, որ նրանք զբաղեցնում էին 1990 թ. օգոստոսին,

վերջ տալ Քուվեյթի օկուպացիային և վերականգնել Քուվեյթի ինքնիշխանությունը, անկախությունը և տարածքային ամբողջականությունը,

վերականգնել նաև Քուվեյթի օրինական կառավարության իշխանությունը»:

ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի բանաձևում միաժամանակ ասվում էր, որ Քուվեյթի գրավումն Իրաքի կողմից անօրինական է, և կոչ էր արվում աշխարհի բոլոր պետություններին և միջազգային կազմակերպություններին՝ չճանաչել Քուվեյթի գրավումն Իրաքի կողմից:

ԱՄՆ–ը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան սառեցրին իրենց բանկերում գտնվող Իրաքի և Քուվեյթի դրամական ակտիվները, իսկ Խորհրդային Միությունը, որը բարեկամական հարաբերություններ ուներ Իրաքի հետ և դեռևս 1972 թ. նրա հետ կնքել էր Բարեկամության և համագործակցության պայմանագիր, դադարեցրեց զենքի մատակարարումը նրան:

Շատ կարևոր էր արաբական երկրների դիրքորոշումը: Օգոստոսի 3–ին կայացավ Արաբական պետությունների լիգայի անդամ երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպումը, որը դատապարտեց Իրաքի գործողությունները: Կողմ քվեարկեցին 14–ը, դեմ՝ 1–ը, ձեռնպահ մնացին 5–ը, իսկ մեկն էլ քվեարկության ժամանակ հեռացավ:

Ինչպես տեսնում ենք, Իրաքին դատապարտող որոշումը միաձայն չէր ընդունվել: Կրկին անգամ ի հայտ եկավ արաբական երկրների ոչ միահամուռ լինելու հանգամանքը, այն էլ մի այնպիսի հարցում, որպիսին արաբական պետության անկախության և տարածքային ամբողջականության պահպանման հարցն էր:

Այդ անհամերաշխությունն ավելի ցցուն կերպով ի հայտ եկավ ԱՊԼ անդամ երկրների ղեկավարների արտակարգ գագաթնաժողովում, որը կայացավ Կահիրեում 1990 թ. օգոստոսի 10–ին: Քուվեյթի անկախությունը, ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը վերականգնելու բանաձևի օգտին քվեարկեց 12 պետություն՝ Եգիպտոսը, Սիրիան, Սաուդյան Արաբիան, Լիբանանը Մարոկկոն, Քուվեյթը, ԱՄԷ–ն, Բահրեյնը, Օմանը, Կատարը և այլն: Դեմ քվեարկեցին 3–ը՝ Լիբիան, Իրաքը և Պաղեստինի ազգային կազմակերպությունը, ձեռնպահ մնացին 3–ը՝ Հորդանանը, Սուդանը և Մավրիտանիան, իսկ Թունիսը հրաժարվել էր մասնակցել այդ վեհաժողովին:

Քանի որ Իրաքը հրաժարվեց իրագործել ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի օգոստոսի 2–ի 660 բանաձևի պահանջները, Անվտանգության խորհուրդն օգոստոսի 6–ին ընդունեց 661 բանաձևը, որով սանկցիաներ և էմբարգո էին սահմանվում Իրաքի և Քուվեյթի նկատմամբ:

Իրաքին դա ևս չսթափեցրեց և նա դիմեց հաջորդ քայլին: 1990 թ. օգոստոսին Իրաքը պաշտոնապես բռնակցեց Քուվեյթը, որը դարձավ նրա 19–րդ նահանգը: Փոխվեց նաև նրա անվանակոչումը: Նա կոչվեց «Ալ–Սադամիյա»՝ ի պատիվ Իրաքի պրեզիդենտ մարշալ Սադամ Հուսեյնի, որին իրաքյան մամուլը թմբկահարում էր որպես անգերազանցելի ստրատեգ, քաղաքական լիդեր և արաբական աշխարհի միակ հույսը:

Իրաքի գործողությունների դեմ ձևավորվեց միջազգային կոալիցիա, որի մեջ մտան 30–ից ավելի երկրներ: Այն գլխավորեց ԱՄՆ–ը: Արդեն օգոստոսի 7–ին ԱՄՆ–ը սկսեց իր զորքերը, մոտավորապես 200 հազար զինվոր, կենտրոնացնել Սաուդյան Արաբիայի Արևելյան նահանգում՝ Քուվեյթի և Իրաքի սահմաններին մոտ: Նրանց միացան նաև Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Եգիպտոսի, Սիրիայի և այլ երկրների զորքերը: Հետագայում ԱՄՆ–ը լրացուցիչ ուժեր նետեց, որից հետո նրա զորքերի թիվը հասավ 400 հազարի: Իրենց զորամիավորումներն ուղարկեցին նաև կոալիցիայի անդամ մյուս պետությունները, որից հետո նրանց ընդհանուր թիվը հասավ 780 հազարի. Կոալիցիոն ուժերի գլխավոր հրամանատար նշանակվեց ամերիկյան գեներալ Նորման Շվարցկոպֆը:

Սադամը, շարունակելով արաբական ազգի փրկչի իր դերակատարումը, փորձեց իր խաղը պարտադրել կոալիցիային: Օգոստոսի 8–ին նա ներկայացրեց իր, այսպես կոչված, «խաղաղության պլանը», որն ավելի շուտ նախածեռնություն էր, քան թե պլան: Նա նախատեսում էր իսրայելական զորքերի դուրսբերում Պաղեստինի, Սիրիայի և Լիբանանի գրավյալ տարածքներից և դրության կարգավորում Քուվեյթում ՄԱԿ–ի բանաձևերի շրջանակներում:

Այդ նախաձեռնությունը մերժվեց, և ՄԱԿ–ը կրկին վերահաստատեց իր որոշումները՝ Իրաքի զորքերի անհապաղ դուրսբերում Քուվեյթից և Քուվեյթի անկախության ու տերիտորալ ամբողջականության վերականգնում:

Դրան հաջորդած շրջանում երկու կողմերն էլ շարունակում էին ռազմական նախապատրաստությունները, քանի որ ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում, որ հարցի լուծումն այլևս հնարավոր չէր խաղաղ ճանապարհով, և միակ ելքը մնում էր ռազմական տարբերակը: 1990 թ. նոյեմբերի 28–ին ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդն ընդունեց ևս մեկ՝ 678–րդ բանաձևը, որը սկզբունքային նշանակություն ունեցավ Իրաքի դեմ պատերազմական գործողություններ սկսելու առումով: Նրանում ասված էր, որ Իրաքին ևս մեկ և վերջին հնարավորություն է տրվում ամբողջապես կատարել 1990 թ. ընդունված ՄԱԿ–ի 660 բանաձևը՝ դուրս բերել իր զորքերը Քուվեյթից և վերականգնել նրա անկախությունն ու տարածքային ամբողջականությունը: Եթե Իրաքի կառավարությունը, ինչպես նշված էր ՄԱԿ–ի բանաձևում, այդ պայմանները չկատարի մինչև 1991 թ. հունվարի 15–ը, ապա ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը լիազորում է գործադրել բոլոր անհրաժեշտ միջոցները «վերականգնելու միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը տարածաշրջանում»: Դրանով իսկ Անվտանգության խորհուրդը լիազորում էր ԱՄՆ–ի գլխավորած միջազգային կոալիցիային ուժի գործադրում, այսինքն՝ պատերազմական գործողություններ Իրաքի դեմ Քուվեյթի անկախության և տարածքային ամբողջականության և տարածաշրջանում խաղաղության ու անվտանգության հաստատման համար:

Անվտանգության խորհրդի այդ վճռորոշ բանաձևին կողմ էին քվեարկել խորհրդի անդամ 15 պետություններից 12–ը, այդ թվում՝ մշտական անդամներ ԱՄՆ–ը, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, դեմ՝ երկուսը՝ Կուբան և Եմենը, իսկ Չինաստանը ձեռնպահ էր մնացել: Չինաստանի ձեռնպահ լինելը հօգուտ բանաձևի ընդունման էր, որով-

հետև եթե Չինաստանը որպես ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ օգտվեր իր վետոյի իրավունքից և դեմ քվեարկեր, ապա բանաձևը կտապալվեր:

Այսպիսով՝ միջազգային ամենահեղինակավոր կազմակերպությունը կանաչ լույս վառեց Իրաքի դեմ պատերազմական գործողություններ սկսելու հարցում և այդ քայլը համարեց միանգամայն օրինական:

Դրան հաջորդեց ԱՄՆ–ի կոնգրեսի 1991 թ. հունվարի 12–ի որոշումը, որը լիազորում էր ԱՄՆ–ի պրեզիդենտ Ջորջ Բուշ ավագին, ՄԱԿ–ի 678 բանաձևին համապատասխան, օգտագործել ԱՄՆ–ի զինված ուժերը Իրաքի դեմ՝ Քուվեյթը օկուպացումից ազատագրելու համար:

Հունվարի 14–ին համանման որոշում ընդունեց Իրաքի պառլամենտը և անհրաժեշտ լիազորություններով օժտեց պրեզիդենտ Սադամ Հուսեյնին՝ պատերազմել և ոչ թե զորքերը դուրս բերել Քուվեյթից:

Այսպիսով՝ հունվարի 15–ին՝ ՄԱԿ–ի 678 բանաձևով սահմանված վերջնաժամկետից մեկ օր առաջ, պատերազմող կողմերն արդեն ձևակերպել էին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և ընդունել վերջնական որոշում:

Իսկ ինչպիսի՞ ռազմական ուժեր էր գործողության մեջ դրել կողմերից յուրաքանչյուրը:

Իրաքը Քուվեյթում և հարավային՝ մերձքուվեյթյան գոտում սկզբնական շրջանում կենտրոնացրել էր 545 հազար զինվոր, 4200 տանկ, 150 մարտական ուղղաթիռ և 550 մարտական ինքնաթիռ:

Կոալիցիոն ուժերը, որոնց միջուկը կազմում էին ամերիկյան զինված ուժերը, պատերազմի նախօրյակին և սկզբնական փուլում կազմում էին 780 հազար զինվոր, 4000 տանկ, 2900 մարտական ինքնաթիռ և ուղղաթիռ: ՆԱՏՕ–ի անդամ երկրները 107 ռազմանավ կենտրոնացրին Պարսից և Օմանի ծոցերում, Արաբական և Կարմիր ծովերում և Միջերկրական ծովի արևելյան հատվածում:

Հետագայում՝ պատերազմի ընթացքում, այդ թվերը երկու կողմից էլ անընդհատ փոփոխվում էին:

Կոալիցիոն ուժերի մեջ մտնում էին ԱՄՆ–ը, Արգենտինան, Ավստրալիան, Բահրեյնը, Բանգլադեշը, Բելգիան, Կանադան, Չեխոսլովակիան, Դանիան, Քուվեյթը, Եգիպտոսը, Ֆրանսիան, Գերմանիան, Հունաստանը, Մարոկկոն, Նիդերլանդները, Նոր Զելանդիան, Նիգերը, Նորվեգիան, Օմանը, Պակիստանը, Կատարը, Սաուդյան Արաբիան, Սենեգալը, Սիրիան, Արաբական Միացյալ Էմիրությունները, Մեծ Բրիտանիան,

Ճապոնիան: Թուրքիան թեև ուղղակիորեն չմասնակցեց պատերազմական գործողություններին, բայց իր տարածքում գտնվող ռազմական բազաները տրամադրեց կոալիցիայի անդամ երկրներին: Կոալիցիայի մեջ էր մտնում նաև Ռուսաստանը: Իսկ բազմաթիվ երկրներ, որոնք ձևականորեն կոալիցիայի մաս չէին կազմում, պաշտպանում էին նրա քաղաքական և ռազմական գործողությունները:

Պատերազմական գործողությունները, որոնք ստացան «Փոթորիկ անապատում գործողություն» («Operation Desert Storm») անվանումը, սկսվեցին 1992 թ. հունվարի 16–ին: Սակայն մինչև փետրվարի 24–ը գործում էր միայն ավիացիան, իսկ ցամաքային զորքերը չէին մասնակցում: Այդ ընթացքում տեղի է ունեցել ընդհանուր առմամբ 41 հազար մարտական թռիչք: Դրա շնորհիվ ծանր հարված ստացան իրաքյան ռազմական ենթակառույցները՝ ճանապարհները, օդանավակայանները, զինվորական պահեստները, ռազմական բազաները, ռազմական կենտրոնները, կապի և հաղորդակցության միջոցները, խզվեցին կապերը զորատեսակների միջև, ավերվեցին կամ մեծ վնասվածքներ ստացան բազմաթիվ քաղաքներ ու բնակավայրեր և այլն: Դա ծանր հարված էր իրաքյան ռազմական ներուժին, որը կոտրեց նրա մարտական և դիմադրողական ոգին:

Ավիացիայի այդ նախնական ավերիչ գործողությունները մեծապես հեշտացրին կոալիցիայի ցամաքային ուժերի խնդիրը:

Փետրվարի 24–ին ավարտվեց պատերազմի առաջին՝ օդային գործողությունների փուլը, և սկսվեց երկրորդ՝ ցամաքային գործողությունների փուլը: Այդ պահից ռազմական գործողությունները ստացան «Անապատի թուր գործողություն» («Opereation Desert Sabre») ծածկագիր անվանումը: Ցամաքային պատերազմը տևեց ընդամենը 100 ժամ և ավարտվեց 1992 թ. փետրվարի 28–ին: Իրաքի պարտությունը կատարյալ էր, և Սադամ Հուսեյնը հայտարարեց, որ պատրաստ է ընդունել ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի որոշումներով սահմանված հաշտության պայմանները: Փետրվարի 26–ին՝ Գրինվիչի ժամանակով 11:50–ին, ավարտվեց իրաքյան զորքերի դուրսբերումը Քուվեյթի մայրաքաղաքից, իսկ 27–ին՝ 05:30–ին, ամբողջ Քուվեյթից: Հաջորդ օրը՝ փետրվարի 28–ին, Իրաքը համաձայնվեց զենքը վայր դնել և իրեն ճանաչեց պարտված:

Վերականգնվեց Քուվեյթի ինքնիշխանությունը, անկախությունը և տարածքային ամբողջականությունը: Ալ–Սաբահ ընտանիքը վերադարձավ Քուվեյթ և վերահաստատվեցին նրա դինաստիական իրավունքները:

Այսպիսի անփառունակ վախճան ունեցավ Իրաքի ագրեսիան Քուվեյթի դեմ[35]:

3. 1990–1991 թթ. պատերազմի գնահատականի հարցի շուրջը: Ծոցի երկրորդ պատերազմը որպես մինի համաշխարհային պատերազմ

1990–1991 թթ. Քուվեյթի դեմ Իրաքի ագրեսիայի հետևանքով ստեղծված քաղաքական իրողությունը և պատերազմական գործողությունները նորագույն պատմության մեջ մտել են որպես Ծոցի երկրորդ պատերազմ (Gulf War II)՝ առաջինը համարելով 1980–1988 թթ. իրան–իրաքյան պատերազմը:

Չառարկելով նման անվանակոչման դեմ՝ կարծում ենք, որ ավելի ճիշտ կլիներ այն անվանել փոքր կամ մինի համաշխարհային պատերազմ:

Ծոցի պատերազմ ասելով, անկախ այն բանից, թե դա առաջինը, երկրորդը կամ երրորդն է, նկատի է առնվում առաջին հերթին նրա աշխարհագրական անվանումը, որը ցույց է տալիս, թե աշխարհի կոնկրետ որ մասում է տեղի ունեցել տվյալ պատերազմը: Համաշխարհային պատերազմները՝ մեծ թե փոքր, իրենց մեջ այլ բովանդակություն են պարունակում՝ որոշակի ծավալներ, պետությունների մասնակցության որոշակի թվաքանակ, ռազմաքաղաքական նպատակներ ու արդյունքներ, միջազգային իրադրության փոփոխություններ՝ հատկապես միջազգային նորմերի պահպանության և կիրառման արդյունավետության տեսակետից:

Երբ այս տեսանկյունից ենք մոտենում 1990–1991 թթ. պատերազմի գնահատականին, ապա, մեր կարծիքով, դա փոքր մասշտաբի համաշխարհային պատերազմ էր և ուներ համաշխարհային պատերազմին հատուկ բոլոր որակական ցուցանիշները:

Առաջին՝ նրանում ընդգրկված էին XX դարի վերջի աշխարհի բոլոր գլխավոր և ամենահզոր պետությունները: Նկատի ունենք ՄԱԿ–ի

35 Այս մասին տես նաև սույն հատորաշարի երրորդ հատորը՝ Ն. Հ. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն 1918–2005 թթ., հ. III, Երևան, 2006. գլուխ VIII. «Իրաքի Հանրապետություն».

Անվտանգության խորհրդի 5 մշտական անդամ պետություններին՝ ԱՄՆ–ին, Մեծ Բրիտանիային, Ռուսաստանին, Ֆրանսիային և Չինաստանին: Դրանցից առաջին չորսը քվեարկեցին հօգուտ պատերազմի ընդդեմ Իրաքի, իսկ այնուհետև տարբեր չափերով ուղղակի մասնակցություն ունեցան նրանում: Ինչ վերաբերում է Չինաստանին, ապա նա թեև բանաձևին կողմ չքվեարկեց, բայց և չօգտվեց վետոյի իրավունքից ու արգելք չհանդիսացավ պատերազմն Իրաքի դեմ սկսելու համար: Նա ոչ մի կերպ չօժանդակեց կամ չօգնեց Իրաքին: Այդքանով նա նույնպես իր ներդրումն ունեցավ Իրաքի դեմ պատերազմ սկսելու և ռազմական ուժի միջոցով քուվեյթյան ճգնաժամը լուծելու գործում:

Երկրորդ՝ բացի Անվտանգության խորհրդի այդ հզոր քառյակից, Իրաքի դեմ պատերազմում հանդես եկան աշխարհի այնպիսի զարգացած, քաղաքական մեծ կշիռ և տնտեսական հզոր պոտենցիալ ունեցող երկրներ, ինչպես Գերմանիան, Ճապոնիան, Կանադան, Ավստրալիան և այլ երկրներ, որոնք Անվտանգության խորհրդի վերոնշյալ երկրների հետ տնօրինում են ժամանակակից աշխարհի քաղաքական ճակատագիրը, ուղղորդում նրա տնտեսական զարգացումը և սահմանում արդի միջազգային հարաբերությունների նորմերը, որոնք պարտադիր են բոլորի համար: Աշխարհի այդ բոլոր ուժերն իրենց դաշնակից երկրների հետ միասին, որոնց թիվը անցնում էր 30–ից, ներգարվվել էին պատերազմի մեջ՝ օդում, ցամաքում և ջրում:

Երրորդ՝ Ծոցի շրջանում ծավալված պատերազմի համաշխարհային բնույթի ցուցիչ է հանդիսանում այն իրողությունը, որ նրան մասնակից էին մեր մոլորակի բոլոր հինգ մայրցամաքների երկրները: Եվրոպայից մասնակցում էին Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ռուսաստանը, Նիդերլանդները, Հունաստանը, Բելգիան, Նորվեգիան, Դանիան, Ասիայից՝ Ճապոնիան, Բանգլադեշը, Պակիստանը, Սիրիան, Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Իրաքը, ԱՄԷ–ն, Օմանը, Կատարը, Բահրեյնը, Աֆրիկայից՝ Եգիպտոսը, Մարոկկոն, Մավրիտանիան, Սենեգալը, Նիգերը, Հյուսիսային և Հարավային Ամերիկայից՝ ԱՄՆ–ը, Կանադան, Արգենտինան, Օկեանիայից՝ Ավստրալիան և Նոր Զելանդիան:

Այստեղ նշվեցին միայն այն երկրները, որոնք ԱՄՆ–ի կողմից ղեկավարվող կոալիցիայի անդամ էին: Բայց կոալիցիայի կողմն էին և նրան տարբեր ձևերով օգնում էին ավելի մեծ թվով երկրներ՝ ՆԱՏՕ–ի անդամ երկրներն ամբողջությամբ, մի շարք լատինաամերիկյան, աֆրիկյան և ասիական երկրներ: Եթե դրանք հաշվի առնելու լինենք, իսկ

պետք է, որ հաշվի առնենք, ապա Իրաքի դեմ հանդես եկած երկրների թիվն անհամեմատ ավելի մեծ կլինի. հանգամանք, որը խոսում է հօգուտ 1990–1991 թթ. պատերազմի համաշխարհային բնույթի օգտին:

Չորրորդ՝ կարևոր ինդիկատոր է նաև կրոնական գործոնը: Կոալիցիայի մեջ միավորվել էին և պատերազմական գործողություններին մասնակցում էին աշխարհի երկու գլխավոր կրոններին՝ քրիստոնեությանը և իսլամին պատկանող պետություններն իրենց ռազմական բոլոր միջոցներով: Իրաքի գործողությունները դատապարտեց նաև Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, որն այդ թվականներին միավորում էր աշխարհի 50–ից ավելի իսլամական երկրներ:

Հինգերորդ՝ ռասայական առումով նույնպես պատերազմը կարելի է համարել մինի համաշխարհային, քանի որ պատերազմող երկրների շարքերում մարտնչում էին սպիտակամորթները, սևերը և դեղնամորթները: Նման բան ընդհանրապես տեղի է ունենում համաշխարհային մեծ իրադարձությունների՝ հատկապես համաշխարհային բնույթի ընդհարումների և կատակլիզմների, այդ թվում և պատերազմների ժամանակ:

Վեցերորդ՝ կարևոր նշանակություն ունի նաև պատերազմի մեջ ներգրավված ռազմական ուժերի և ռազմական տեխնիկայի հարցը՝ քանակական և զենքի տեսակների կիրառման առումով: Երբ այս տեսանկյունից ենք մոտենում, ապա ակնհայտ է դառնում 1990–1991 թթ. պատերազմում դրանց՝ համաշխարհային ստանդարտներին մոտենալու իրողությունը:

Պատերազմին երկու կողմից մասնակցում էր մոտ 1,5 մլն զինվոր, սպա և ռազմական մասնագետ, որոնք գործում էին հետևակում, ավիացիայում, ծովային, տանկային, հրետանային, հրթիռային և այլ զորատեսակներում: Նրանց տրամադրության տակ կար 8200 տանկ, 2050 մարտական ինքնաթիռ, 650 մարտական ուղղաթիռ, 110 առաջնակարգ ռազմանավեր, այդ թվում՝ ավիակիրներ և զենքի այլ տեսակներ: Դրանք տպավորիչ են և իրենցից ներկայացնում են հզոր ռազմական ուժ, որի օգնությամբ կարելի է շատ լուրջ մարտական գործողություններ իրականացնել աշխարհի ուզածդ կետում: Եթե համեմատելու լինենք Առաջին համաշխարհային պատերազմի հետ, ապա այն ժամանակ պատերազմող կողմերի տրամադրության տակ չկային նման քանակի ինքնաթիռներ և տանկեր, իսկ հրթիռային զենք և ավիակիրներ ընդհանրապես գոյություն չունեին: Նույնիսկ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում կարևոր համարվող մի շարք ճակատամարտերի ժամանակ այդքան

տանկ չի մասնակցել: Նկատի ունենք գերմանական բանակի գեներալ Էրվին Ռոմելի տանկային հզոր կորպուսը, որը 1941 թ. գործում էր Լիբիայում և Եգիպտոսում, և որի վրա էր դրված Հյուսիսային Աֆրիկան գրավելու ստրատեգիական կարևոր առաքելությունը: Անգամ Երկրորդ համաշխարհային պատերազմի գլխավոր տանկային ճակատամարտում, որը տեղի ունեցավ 1943 թ. Կուրսկի մոտ, այդքան տանկ չի մասնակցել:

Այդ բոլորը հիմք է տալիս առաջ քաշելու այն տեսակետը, որ 1990–1991 թթ. Ծոցի երկրորդ պատերազմը ոչ լոկալ՝ տեղական, և ոչ էլ ռեգիոնալ՝ տարածաշրջանային, պատերազմ էր: Դա իր բնույթով, ծավալներով, մասնակից երկրների, գործողության մեջ դրված զորքերի և ռազմական տեխնիկայի քանակով դուրս է գալիս լոկալ և ռեգիոնալ համարվող պատերազմների շրջանակներից և տիպաբանորեն ընդհուպ մոտենում է «համաշխարհային պատերազմներ» հասկացությանը և ստանդարտներին: Հարկավ, վերոնշյալ որոշ ինդիկատորներով նա զիջում է Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմներին և չի կարող դրվել նրանց կողքին: Այդ պատճառով էլ 1990–1991 թթ. տեղի ունեցած Ծոցի երկրորդ պատերազմը գերադասում ենք անվանել «Սինի համաշխարհային պատերազմ»:

Կցանկանայինք ուշադրություն հրավիրել մեկ փաստի վրա, որն արտացոլում է գտել ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի 1990 թ. նոյեմբերի 28–ի 678 բանաձևում, որը խոսում է հօգուտ մեր թեզի: Այդ բանաձևը մի կողմից՝ վերջնագրային բնույթի պահանջներ ներկայացրեց Իրաքին, իսկ մյուս կողմից՝ թույլատրեց կոալիցիային ուժ գործադրել նրա դեմ: Այսինքն՝ պատերազմական գործողությունները սկսվեցին մեր ժամանակների ամենահեղինակավոր և ամենաներկայացուցչական կազմակերպության՝ ՄԱԿ–ի սանկցիայով, որը միաժամանակ սահմանեց այդ պատերազմի հիմնական խնդիրները և նպատակները: Նրանում, բացի Քուվեյթի ազատագրումից, իրաքյան զորքերի արտաքսումից, Քուվեյթի անկախության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության վերականգնումից, խնդիր էր դրվում նաև **«վերականգնել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը»:**

Հարկավ, ակնկալում ենք, որ կլինեն մեր այս տեսակետի ինչպես կողմնակիցներ, այնպես էլ չհամաձայնողներ, ինչը միանգամայն բնական երևույթ է գիտության մեջ, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է նոր մոտեցումներին, այդ թվում և ցարդ գիտության մեջ չօգտագործված «Սինի համաշխարհային պատերազմ» հասկացությանը և եզրին:

Բոլոր դեպքերում, անգամ մեր տեսակետին դեմ եղողները կհամաձայնվեն, որ 1990–1991 թթ. պատերազմը սովորական տեղական կամ ռեգիոնալ պատերազմ չէր:

Դա Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Երկիր մոլորակի վրա տեղի ունեցած ամենախոշոր պատերազմն էր:

VI. ՔՈՒՎԵՅԹԸ XX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

1. Իրաքյան ագրեսիայի հետևանքների վերացումը

Իրաքի ագրեսիան և Քուվեյթի օկուպացիան ունեցան նաև շատ ծանր սոցիալ–տնտեսական հետևանքներ: Պատերազմը կոալիցիայի վրա նստեց 82 մլրդ ԱՄՆ դոլար. որից Քուվեյթի բաժինը կազմեց 22 մլրդ: Համեմատելու համար նշենք, որ ԱՄՆ–ի բաժինը կազմում էր 18, իսկ Ճապոնիայինը՝ 13 մլրդ ԱՄՆ դոլար. Օկուպանտները մեծ վնաս հասցրին երկրի տնտեսությանը, ենթակառույցներին, արդյունաբերական ձեռնարկություններին, ուսումնական և գիտական հաստատություններին: Թալանը և կողոպուտը զանգվածային բնույթ էին կրում, թալանում էր ով կարող էր և ինչ կարողանում էր: Կողոպուտով զբաղված էին բոլորը՝ հասարակ զինվորները, սպաները և զանազան պաշտոնյաներ: Մեծ չափեր էր ընդունել մասնավոր խանութների՝ ոսկերչական իրերի, գորգերի, էլեկտրոնային ապրանքների և այլ խանութների կողոպուտը: Քանդվում էին շենքերը, բնակարանները, ձեռնարկությունները, հաստատությունները:

1991 թ. մարտին աքսորից Քուվեյթ վերադարձավ ալ–Սաբահ թագավորական ընտանիքը, Ջաբր իբն Ահմադ ալ–Սաբահը վերահաստատվեց գահի վրա և անցավ էմիրի իր պարտականություններին:

Քուվեյթի կառավարության առջև կանգնած էր ավերված տնտեսության վերականգնման բարդ խնդիրը: 1992 թ. Քուվեյթի կառավարության որոշմամբ ստեղծվեց հանձնաժողով. որի գլխավոր խնդիրը համարվեց իրաքյան ագրեսիային և Քուվեյթին հասցված նյութական և բարոյական վնասներին վերաբերող փաստաթղթերի հավաքումը: Հետագայում այդ հանձնաժողովի հիմքի վրա ստեղծվեց Քուվեյթի պետության դեմ իրաքյան ագրեսիայի վերաբերյալ փաստագրական վկայու-

թյունների հավաքման ազգային կենտրոն: Շնորհիվ Ազգային կենտրոնի քրտնաջան աշխատանքի հավաքվեցին մեծ արժեք ներկայացնող պաշտոնական բազմաթիվ փաստաթղթեր և արժանահավատ այլ նյութեր, որոնք 1995 թ. հրատարակեց Քուվեյթի ուսումնասիրության հետազոտական կենտրոնը: Այդ փաստաթղթերը վկայում են այն դաժան, անմարդկային քաղաքականության մասին, որ վարել են իրաքյան օկուպացիոն ուժերը Քուվեյթում նրա քաղաքացիների նկատմամբ՝ խախտելով մարդու իրավունքների վերաբերյալ հանրաճանաչ բոլոր միջազգային նորմերը: Այդ փաստաթղթերը իրաքյան բարձրաստիճան զինվորական և քաղաքացիական պատասխանատուների հրահանգները, կարգադրությունները և հրամաններն են, որոնցից մի քանիսը սահմռկեցուցիչ տպավորություն են գործում: Հրահանգներից մեկում կարդում ենք. «Բոլոր քաղաքական հակառակորդների՝ նախկին, թե ներկա, գլուխները կտրել»: Մեկ այլ հրամանում ասված էր, որ ցույցերի դեպքում ցուցարարների վրա զենքի բոլոր տեսակներից համազարկային կրակ բացել և չթողնել, որ քուվեյթցիները մոտենան դիակներին: Իրաքյան ագրեսիայի և օկուպացման ժամանակ զոհվել է 2000–5000 քուվեյթցի՝ գլխավորապես քաղաքացիական բնակչությունից:

Ազգային կենտրոնի հրատարակած նյութերը վկայում են, որ քուվեյթյան շարժական գույքի թալանը և նրա տեղափոխումն Իրաք բարձրացված էր պետական քաղաքականության մակադակի: Ամբողջությամբ թալանել և Իրաք էին տեղափոխել Քուվեյթի ուսումնական հաստատությունների՝ դպրոցների, քոլեջների և Քուվեյթի համալսարանի սարքավորումները, բռնագրավվել էին Քուվեյթի ավիաընկերության ունեցվածքը և բանկերում գտնվող նրա կապիտալը, անգամ կոնֆիսկացիայի էին ենթարկվել և Իրաք տեղափոխվել Քուվեյթի Կույրերի ընկերությանը պատկանող ամբողջ գույքը, Քուվեյթի մանկական քաղաքի ամբողջ սարքավորումը և այլն: Իսկ Իրաքի արդյունաբերության և սպառազինության նախարարի հրահանգներից մեկում կարգադրված էր Քուվեյթից դուրս տանել այն ամենը, ինչ հնարավոր է տանել:

Այս կերպ Քուվեյթին հասցված նյութական վնասը, որոշ տվյալների համաձայն, հասնում է 240 մլրդ ԱՄՆ դոլարի:

Քուվեյթի քաղաքացիները 162 մլրդ ԱՄՆ դոլարի հատուցման հայտ ներկայացրին Իրաքի կառավարությանը: Իր հերթին Քուվեյթի կառավարությունը նույնպես հատուցում պահանջեց Իրաքից: Քուվեյթին

հասցված վնասի փոխհատուցման համար ստեղծվեց ՄԱԿ–ի հատուկ հանձնաժողով:

Բայց դա դեռ բոլորը չէր: Իրաքը նահանջելիս դիմեց մի այնպիսի քայլի, որն իր դաժանությամբ և բարբարոսությամբ նախադեպը չուներ: Քուվեյթից պարտություն կրած իրաքյան զորքը նահանջի ճանապարհին հրդեհեց Քուվեյթի նավթահորերը: Մոտ 9 ամիս այրվում էին 500–ից ավելի նավթահորեր[36]: Քուվեյթը, բնականաբար, ի վիճակի չէր սեփական ուժերով լուծել այրվող նավթահորերի կրակը մարելու խնդիրը, որը ոչ միայն նյութական վիթխարի կորուստներ պատճառեց, այլև էկոլոգիական մեծ վնասներ հասցրեց Քուվեյթի բնությանը և մարդկանց առողջությանը: Կառավարության խնդրանքով նրան օգնության եկան մի շարք երկրներ և միջազգային զանազան կազմակերպություններ, որոնց համատեղ ջանքերով 1991 թ. վերջերին և 1992 թ. սկզբներին հաջողվեց հանգցնել կրակը: Մի որոշ ժամանակ անց նրանք կարգի գցվեցին, և սկսվեց նավթի արդյունահանումը: Հրդեհները մարելու համար Քուվեյթը ծախսեց ևս լրացուցիչ 5,2 մլրդ ԱՄՆ դոլար:

Ձեռնարկված քայլերի շնորհիվ 1994 թ. ամբողջությամբ վերականգնվեց Քուվեյթի՝ պատերազմից տուժած նավթարդյունաբերության համալիրը, և նա սկսեց աշխատել իր կարողությունների ամբողջ ծավալով: 1990–ական թթ. կեսերին նավթից ստացվող եկամուտները կազմեցին մոտ 10 մլրդ ԱՄՆ դոլար՝ գերազանցելով նախապատերազմյան մակարդակը:

Վերականգնվեցին նաև տնտեսական ամբողջ համալիրը, քուվեյթցիների սոցիալական իրավունքներն ու արտոնությունները, կրթական և առողջապահական համալիրը: Դրա հնարավորությունը տվեց նավթից ստացվող եկամուտների անշեղ աճը, որը 1999 թ. հատեց 13,5 մլրդ ԱՄՆ դոլարի սահմանը:

Պատերազմին հաջորդած տարիներին տեղի ունեցան նաև որոշ տեղաշարժեր քաղաքական կյանքում: 1991 թ. սեպտեմբերին Քուվեյթը պաշտպանական նպատակներով 10 տարի ժամանակով ռազմական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր ստորագրեց ԱՄՆ–ի հետ: ԱՄՆ–ը 5000 զինվոր տեղակայեց Քուվեյթի տարածքում, պարտավորվեց մարզել Քուվեյթի բանակը և զինել ժամանակակից

36 Որոշ տվյալներով այրվող նավթահորերի թիվը հասել է 900–ի:

ռազմական տեխնիկայով: Միաժամանակ նա իրավունք ստացավ օգտագործել Քուվեյթի նավահանգիստները և օդանավակայանները:

Ամերիկա–Քուվեյթյան ռազմական պայմանագիրը մոդել հանդիսացավ 1992 թ. նմանատիպ պայմանագրեր ստորագրելու նաև Անգլիայի և Ֆրանսիայի հետ: Այդ պայմանագրերի օգնությամբ Քուվեյթը ձգտում է պաշտպանական հուսալի ամպհովանի ստեղծել իր համար: Նրա ղեկավարությունը, այնուամենայնիվ, չէր վստահում Իրաքի ղեկավարությանը և մտավախություն ուներ նրա քաղաքականության նկատմամբ՝ հանդեպ Քուվեյթը: Այդ վախը պահպանվեց նաև այն բանից հետո, երբ 1994 թ. Իրաքը ճանաչեց Քուվեյթի անկախությունն ու ինքնիշխանությունը, և երկու երկրների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ:

2. Իրադրությունը Քուվեյթում XXI դարի սկզբներին

Քուվեյթը XXI դար թևակոխեց բավականին լարված քաղաքական մթնոլորտում, որը ձևավորվել էր դեռևս անցյալ դարի վերջերին և իր շարունակությունն ունեցավ 2000–2005 թթ.:

Ներքաղաքական լարվածության հիմնական աղբյուրը մնում էին հակասությունները կառավարության և պառլամենտի միջև: Պառլամենտականների մեծամասնությունը դժգոհ էր կառավարության քաղաքականությունից, պառլամենտը ցրելու էմիրի տակտիկայից, երկրում դեմոկրատական ինստիտուտների անբավարար զարգացած լինելուց, որի ամենացայտուն օրինակը քաղաքական կուսակցությունների լեգալ գործունեության արգելումն էր, քաղաքացիական ազատությունների և մարդու իրավունքների սահմանափակումը և այլն: Եթե սոցիալ–տնտեսական ոլորտում դժգոհության դրսևորումները հազվադեպ էին լինում կյանքի մակարդակի բարձր լինելու պատճառով, ապա դեմոկրատիայի հարցում Քուվեյթը, համեմատած տնտեսական ոլորտի հետ, դեռևս հետ էր մնում և շատ անելիքներ ուներ:

Կառավարության և պառլամենտի միջև հերթական անգամ հարաբերությունները սրվելու պատճառով էմիրը 1999 թ. ցրեց Ազգային ժողովը, թեև նրա ժամկետի ավարտմանը դեռևս մեկ տարի կար, և նշանակեց նոր ընտրություններ: Էմիրն ամենայն հավանականությամբ հույս ուներ ընտրել այնպիսի պառլամենտ, որտեղ կողմնակիցները կկազմեին մեծամասնություն, և հնարավոր կլիներ ապագայում խուսա-

փել իշխանության երկու առանցքային ճյուղերի առճակատումից: Սակայն նրա սպասումները ոչ միայն չարդարացան, այլև նոր պառլամենտում կառավարության կողմնակիցների թիվն ավելի կրճատվեց: 1999 թ. կայացած Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կառավարությանը պաշտպանող դեպուտատների թիվը 18–ից կրճատվեց 12–ի:

Այդ պառլամենը գործեց լրիվ 4 տարի, և 2003 թ. կայացան նոր ընտրություններ, որոնք դարձյալ հաղթանակ չբերեցին կառավարությանը: Նրանում տեղերը բաժանվեցին հետևյալ կերպ. իսլամականներ՝ 21, կառավարության կողմնակիցներ՝ 14, լիբերալներ՝ 3, և անկախականներ՝ 12 տեղ: Հաջորդ ընտրությունները տեղի են ունենալու 2007 թ.:

Ինչպես նշվեց, արգելված է կուսակցությունների լեգալ գործունեությունը, սակայն կան մի քանի քաղաքական խմբեր, որոնք դե ֆակտո կուսակցություններ են և համարվում են քաղաքական ճնշման խմբեր, որոնք այս կամ այն կերպ ճնշում են գործադրում իշխանության գործադիր ճյուղի վրա: 2005 թ. այդպիսի խմբեր էին հանդիսանում բեդվինների, առևտրականների, մուսուլմանական սուննի և շիա ակտիվիստների, ինչպես նաև ծախերի ու ազգայնականների խմբերը:

Քուվեյթի տնտեսության հիմնական ճյուղը XXI դարի սկզբում շարունակում է մնալ նավթարդյունաբերությունը: Նա տալիս է համախառն ներքին արդյունքի՝ ՀՆԱ–ի 50%–ը: ՀՆԱ–ի տարեկան աճը, 2004 թ. տվյալներով, կազմում է 6,8%, որը շատ բարձր թիվ է: Նա 2005 թ. կազմել է 53,31 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ըստ շնչի՝ 22 հազ 800 ԱՄՆ դոլար, որը դարձյալ աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից մեկն է[37]: ՀՆԱ–ի 0,4%–ը տալիս է գյուղատնտեսությունը, 60,5%–ը՝ արդյունաբերությունը և 39,1%–ը՝ սպասարկման ոլորտը: ՀՆԱ–ի այդ կառուցվածքում արտացոլվում է Քուվեյթի տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունը, նրա ճյուղերի անհամամասնությունը և միակողմանի զարգացած լինելու իրողությունը: Եվս մեկ առանձնահատկություն՝ 1990–ականների կեսերից Քուվեյթն ավելի շատ եկամուտներ է ստանում իր օտարերկրյա ներդրումներից, քան թե նավթի արտահանումից:

Նոր դարասկզբին տեղի ունեցավ Քուվեյթի հետագա մերձեցում ԱՄՆ–ի հետ: 2001 թ. սեպտեմբերի 11–ի ահաբեկչությունից հետո, երբ ԱՄՆ–ը հարձակման ենթարկվեց Ալ–Կաիդա ահաբեկչական կազմակերպության կողմից և տվեց մարդկային զգալի զոհեր, Քուվեյթը դարձավ

37 Այս և այլ դեպքերում երբեմն տարբեր աղբյուրներում տարբեր թվեր են բերվում:

ԱՄՆ–ի դաշնակիցը և իր հնարավորության սահմաններում զգալի օգնություն ցույց տվեց նրան: Էմիրը թույլատրեց ԱՄՆ–ին իր տարածքում տեղակայել 4000 ծովային հետևակների, օգտագործել Քուվեյթի տարածքի երկու երրորդը: Այնուհետև Քուվեյթն ԱՄՆ–ից 2002 թ. գնեց զենք, իսկ երբ ԱՄՆ–ի պրեզիդենտ Ջորջ Բուշն Իրանը և Իրաքը դասեց «չարի առանցքի» երկրների շարքը, ապա Քուվեյթը խիստ սահմանափակեց հարաբերություններն իր հարևան այդ երկու պետությունների հետ: Քուվեյթը նաև ԱՄՆ–ի կողքին էր, երբ նա նախապատրաստեց և 2003 թ. իրագործեց հարձակում Իրաքի վրա, որի արդյունքում տապալվեց Իրաքի դիկտատոր Սադամ Հուսեյնը, որն այնքան մեծ դառնություն էր պատճառել Քուվեյթին:

Քուվեյթը, չնայած քաղաքական վայրիվերումներին, որոնք երբեմն շատ վտանգավոր բնույթ էին կրում, կարողացավ պահպանել իր ինքնիշխանությունը, անկախությունը և տարածքային ամբողջականությունը: Իսկ ալ–Սաբահ ընտանիքը կարողացավ խուսափել զանազան որոգայթներից և մնալ գահի վրա ոչ թե որպես «Ալ–Սադամիյա» նահանգապետ, այլ Քուվեյթի միապետ:

3. Քուվեյթի և Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերությունները

Նախքան այդ հարցի լուսաբանությունը, անհրաժեշտ ենք համարում համառոտակի անդրադառնալ Քուվեյթի հայ համայնքի ձևավորման ուղիներին և առանձնահատկություններին:սսս

Քուվեյթի հայ համայնքն ունի մոտ կեսդարյա պատմություն: Նրա կազմավորման հիմքերը դրվել են XX դարի 50–ականների կեսերից. Դրանով նա տարբերվում է պայմանականորեն ասված դասական հայ համայնքներից, որպիսիք են Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Հորդանանի և Եգիպտոսի հայ գաղութները, որոնք ունեն մոտ հարյուրամյա պատմություն: Վերոնշյալ արաբական հայ գաղութների կազմավորվման գործընթացն սկսվել էր դեռևս XIX դարի 90–ական թվականների կեսերից՝ օսմանյան սուլթան արյունարբու Աբդուլ Համիդ II–ի հայտնի ջարդերից հետո, երբ շատ հայեր, հեռանալով իրենց հարազատ բնակավայրերից, հաստատվեցին արաբական երկրներում: Սակայն արաբական այդ երկրներում հայ համայնքները հիմնականում ձևավորվեցին 1915 թ. Հայոց ցեղասպանության և հայերի բռնի տեղահանման երիտթուրքերի քա-

ղաքականության արդյունքում, երբ բազմահազար հայեր հայտնվեցին արաբական երկրներում:

Այդուհանդերձ, արաբական երկրների դասական հայ գաղութների հիմնական տարբերությունը հետցեղասպանության դարաշրջանում՝ XX դարի 50–60–ական թվականներին ձևավորված մյուս հայ գաղութներից կայանում է նրանում, որ նրանք ձևավորվեցին անմիջապես բնօրրանից՝ սեփական հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից, բռնագաղթվածների զանգվածի հաշվին: Հայ գաղթականների այդ սերունդը, հաստատվելով Լիբանանում, Եգիպտոսում, Իրաքում, Սիրիայում կամ Հորդանանում, շարունակում էր մտովի ապրել Արևմտյան Հայաստանում՝ իր ծննդավայրում՝ որպես հայաստանցի, և վստահ էր, որ շուտով կվերադառնա իր բնօրրանը:

Քուվեյթում և արաբական այլ երկրներում հետագայում՝ XX դարի կեսերից ձևավորված գաղութները կազմավորվել են ոչ թե բնօրրանից անմիջականորեն բռնագաղթվածների հաշվին, ինչպես դասական գաղութների հայ սերունդը, այլ որպես նոր երևույթի՝ սփյուռքահայության վերարտադրության շնորհիվ: Դա տեղի էր ունենում ոչ թե Արևմտյան Հայաստանից սնվող երակի շնորհիվ, այդպիսի երակ այլևս չկար, նա կտրվել էր 1915 թ., այլ սփյուռքահայության սեփական հիմքի վրա կատարվող վերարտադրության շնորհիվ: Այդ սերունդն այլևս Արևմտյան Հայաստանից բռնագաղթածների, բռնի տեղահանվածների սերունդը չէր, այլ սփյուռքահայերի սերունդ, որը կոնկրետ հանդիսանում էր ոչ թե հայաստանցի, այլ լիբանանցի, սիրիացի կամ եգիպտացի և այլն:

Քուվեյթի հայ գաղութի ձևավորումն անմիջականորեն կապված է նավթի և դրա հետ կապված նրա տնտեսական բումի հետ, որը սկսվեց 1950–ական թվականների վերջերից և 1960–ականների սկզբներից, որն առաջացրեց աշխատուժի, առաջին հերթին՝ բարձրորակ մասնագետների մեծ պահանջ: Քուվեյթն ի վիճակի չէր սեփական ուժերով բավարարել այդ պահանջը և իր դռները բացեց այլ երկրների մասնագետների առջև՝ նախապատվությունը տալով արաբական երկրներին: Եվ օտարերկրյա մասնագետները վարարուն գետի նման հորդեցին Քուվեյթ: Շուտով նրանց թիվը գերազանցեց բնիկ քուվեյթցի ազգաբնակչությանը: Լավ վարձատրվող աշխատանքը մագնիսի նման իրեն էր ձգում օտարերկրյա աշխատուժը: Այդ հոսանքի մեջ հայտնվեցին նաև հայերը, որոնք հիմնականում Լիբանանից, Սիրիայից, Իրաքից, մասամբ նաև Եգիպտոսից ու Հորդանանից, ինչպես նաև Իրանից էին: Հաստատվելով Քուվեյթում և

լավ աշխատանք ձեռք բերելով՝ նրանք շուտով Քուվեյթ տեղափոխեցին նաև իրենց ընտանիքները: Այդպես ձևավորվեց Քուվեյթի հայ համայնքը, որի թիվը նախքան 1990–1991 թթ. իրաքյան ագրեսիան և Քուվեյթի գրավումը հասնում էր մոտավորապես 10–13 հազարի:

Քուվեյթի հայ համայնքի ձևավորումը խոսում էր նաև սփյուռքահայ կյանքի մի նոր երևույթի՝ ներքին, ներարաբական միգրացիոն շարժումների մասին: Այդ նույն սկզբունքի հիման վրա ձևավորվեցին հայ համայնքներ նաև Արաբական Միացյալ Էմիրություններում՝ Աբու Դաբիում, Դուբայում և Շարժայում, նման միտումներ են դրսևորվում նաև Սաուդյան Արաբիայում և այլ երկրներում:

Քուվեյթի համայնքը լավ կազմակերպված համայնք էր, որն ուներ իր Ազգային իշխանությունները և մարմինները, եկեղեցին, Ազգային վարժարանը՝ 900 աշակերտով, այստեղ գործում էին հայ ավանդական կուսակցությունների՝ Հայ հեղափոխական դաշնակցության, Հնչակյան սոցիալ–դեմոկրատական և Ռամկավար ազատական կուսակցությունների մասնաճյուղերը: Քուվեյթահայերը հիմնականում ներգրավված էին առևտրական, արհեստագործական, սպասարկման ոլորտներում, կային բժիշկներ, բանկային ծառայողներ, ոսկերիչներ և ադամանդագործներ, ուսուցիչներ և այլ մասնագիտությունների տեր մարդիկ[38]: Համայնքն ապրում էր իր կյանքով՝ չմեկուսանալով քուվեյթյան իրականությունից: Նա վայելում էր իշխանությունների հարգանքը, որոնք հայերի գործունեությունը տնտեսական ոլորտում գնահատում էին օգտակար և չէին խոչընդոտում նաև նրանց ազգային–մշակութային գործունեությունը:

38 1986 թ. հոկտեմբերին Ծոցի երկրներ այցելեց խորհրդային մի պատվիրակություն՝ նպատակ ունենալով նպաստել հարաբերությունների զարգացմանը Խորհրդային Միության և Ծոցի արաբական երկրների միջև: Պատվիրակությունը, որի կազմում էին նաև Լենինգրադի էրմիտաժի տնօրեն, ԽՍՀՄ և Հայաստանի գիտությունների ակադեմիաների անդամ Բորիս Պիոտրովսկին և տողերիս հեղինակը, եղավ նաև Քուվեյթում: Մեզ երկուսիս հնարավորություն ընձեռվեց հանդիպումներ ունենալ հայ համայնքի ներկայացուցիչների հետ, այցելել Ազգային վարժարան՝ որտեղ սովորում էին մոտ 900 հայ աշակերտ–աշակերտուհիներ, և որը մեզ վրա հիանալի տպավորություն թողեց: Վարժարանի տնօրինության խնդրանքով մենք ակադեմիկոս Բ. Պիոտրովսկու հետ դաս անցկացրեցինք հայոց պատմության առակայից: Ակադեմիկոս Բ. Պիոտրովսկին խոսեց հայ ժողովրդի պատմության հին շրջանի մասին, և ես նրա խոսքը ռուսերենից թարգմանում էի հայերեն, իսկ ես՝ Խորհրդային Հայաստանի պատմության և Հայաստան–Սփյուռք հարաբերությունների մասին: Ներկա էին ամբողջ աշակերտությունը և ուսուցչական կազմը, ինչպես նաև Քուվեյթի իշխանությունների ներկայացուցիչները:

Իրաքի 1990–1991 թ. ագրեսիան Քուվեյթի դեմ և Քուվեյթի գրավումը ծանր հետևանքներ ունեցան ինչպես ողջ Քուվեյթի, այնպես էլ հայ համայնքի վրա: Շատ բան փոխվեց, և այսօր նա այլևս նախկին համայնքը չէ: Շատերը ստիպված էին հեռանալ, որի պատճառով խիստ նվազեց քուվեյթահայ համայնքը: Նրա թիվն այժմ կազմում է մոտ 7 հազար մարդ: Հայ համայնքն ունեցավ նաև նյութական մեծ վնասներ: Փակվեցին և իրենց գործունեությունը դադարեցրին հայերին պատկանող մի շարք ձեռնարկություններ: Սակայն նա կարողացավ հարմարվել նոր պայմաններին և պահպանել իր գոյությունը որպես ինքնուրույն համայնք և աստիճանաբար ոտքի կանգնել: Քուվեյթում իրենց գործունեությունը վերսկսեցին ազգային և եկեղեցական մարմիններն ու հաստատությունները, Ազգային վարժարանը, որն այժմ ունի մոտ 400 աշակերտ, Ս. Վարդանանց եկեղեցին, որը Քուվեյթի միակ հայ եկեղեցին է և այլն: Մեծ ջիգ է գործադրվում հայապահպանության, հայեցի դաստիարակության և ազգային–մշակութային կյանքն աշխուժացնելու ուղղությամբ:

Իսկ տնտեսական ոլորտում հայերը, չնայած կորուստներին և վնասներին, կարողացան ընդհանուր առմամբ պահպանել իրենց դիրքերը բոլոր այն բնագավառներում, որոնք բնորոշ են նրանց հակումներին և մասնագիտություններին:

Քուվեյթը 1992 թ. ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, իսկ 1994 թ. հուլիսին նրանց միջև Մոսկվայում ստորագրվեց հուշագիր՝ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ:

Քուվեյթը որոշակի քաղաքական հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի համար, քանի որ նա կազմում է արաբների հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու և զարգացնելու Հայաստանի ստրատեգիական քաղաքականության բաղկացուցիչ մասը:


Տնտեսական առումով Քուվեյթը Հայաստանի համար կարևորվում է իր էներգակիրների հարստությամբ և ֆինանսական վիթխարի միջոցների առկայությամբ, որոնց ներդրումը Հայաստանի տնտեսության մեջ կարող է խթանել նրա հետագա զարգացումը: Չպետք է հաշվից դուրս նետել նաև այն հանգամանքը, որ հեռանկարի առումով Քուվեյթի և Պարսից ծոցի երկրների քաղաքական նշանակությունը և տնտեսական կարևորությունը գնալով աճելու է:

Հայաստանը նույնպես որոշակի քաղաքական–ստրատեգիական և տնտեսական հետաքրքրություն է ներկայացնում Քուվեյթի համար՝ որպես Ռուսաստանի և եվրոպական երկրների հետ կապող օղակ: Նա կարող է օգտակար լինել Քուվեյթի համար մասնագետներ պատրաստելու, իր կուտակված փորձը նրան փոխանցելու և այլ հարցերում:

Քուվեյթի և Հայաստանի միջև այս տարիների ընթացքում ստորագրվել են մի շարք փաստաթղթեր, որոնք վերաբերում են նրանց միջև համագործակցություն հաստատելու տարբեր ոլորտներին: 2003 թ. երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջև ստորագրվեց հուշագիր քաղաքական խորհրդակցություններ անցկացնելու մասին: Որոշ քայլեր են կատարվել տնտեսական համագործակցության ուղղությամբ: Այդ նպատակով 1992 թ. Երևան ժամանեց Քուվեյթի տնտեսական պատվիրակությունը, որը Հայաստանի իր գործընկերների հետ քննարկեց տնտեսական համագործակցություն հաստատելու հնարավորությունները և առանձնացվեցին այն ոլորտները, որոնք փոխադարձ հետաքրքրություն են ներկայացնում երկու կողմերի համար:

Առավել արդյունավետ է համագործակցությունը երկու երկրների բարձրագույն օրենսդիր մարմինների միջև: Քուվեյթի պառլամենտում ձևավորվել է «Քուվեյթ–Հայաստան» միջպառլամենտական բարեկամության խումբը, որի առաջին այցը Հայաստան տեղի ունեցավ 2002 թ. ապրիլին: Այցի ընթացքում խմբի անդամ պառլամենտականները եղան Հայաստանի Ազգային ժողովում, հանդիպումներ ունեցան հայ պառլամենտականների հետ, քննարկեցին երկու երկրների խորհրդարանների միջև համագործակցությունն ընդլայնելու հարցերը և ընդունեցին համագործակցության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր Իսկ 2005 թ. փետրվարին պատասխան այցով Քուվեյթում եղավ Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակությունը, որը գլխավորում էր Ազգային ժողովի նախագահը: Նրան ընդունեց Քուվեյթի բարձրագույն ղեկավարությունը, որի ընթացքում ընդգծվեցին երկու կողմերի միջև հաստատված հարաբերությունների բարեկամական բնույթը և կողմերի շահագրգռվածությունը դրանք ավելի խորացնելու հարցում: Այցի ընթացքում ստորագրվեց երկու երկրների օրենսդիր մարմինների միջև համագործակցության մասին համապատասխան համաձայնագիր:

Հայաստանի ղեկավարությունը, կարևորելով հարաբերությունների հետագա զարգացումը Քուվեյթի հետ, 2003 թ սեպտեմբերին իր դիվանագիտական ներկայացուցիչը՝ դեսպանի մակարդակով, նշանակեց



Հորդանանի նախկին թագավոր Հուսեյնը




Նրա որդին՝ գործող թագավոր
Աբդալլահը կնոջ հետ



Մայրաքաղաք Ամմանի գիշերային տեսարանը




Հորդանան գետը



Հորդանանի խեցեղենը






Մավրիտանիա՝ հին ու նոր ուղիներով



Մավրիտանցի սերմնացանը



Մայրաքաղաք Նուաքշոտը



Մարոկկո, Տանժեր



Մզկիթ Կասաբլանկայում



Մարոկկո. Մարաքեշի կաշեգործները



...և շուկայի մի հատվածը:



Յասիր Արաֆաթ



Տողերիս հեղինակի հանդիպումը Պաղեստինի ազատագրության կազմակերպության ղեկավարներից մեկի՝ Աբդալլահ Հաուրանիի հետ (ձախից)։



Պաղեստինի ինքնավարություն. պայքարը շարունակվում է...



«Համաս»-ի մարտիկները



Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդալլահը
և Իրանի նախագահ Ահմադինեջադը (ձախից)



Մուսուլմանների սրբազան Կաաբա տաճարը Մեքքայում



Ուղտերով մրցավազք Սաուդյան Արաբիայում



Մայրաքաղաք Ռիյադը






Սիրիայի նախագահներ հայր և որդի Հաֆիզ և Բաշար Ալ–Ասադները




Նախագահ Հաֆիզ Ալ–Ասադը Մատենադարանում
Խորհրդային Հայաստան կատարած այցի ժամանակ:



Դամասկոսի տեսարանը



Ալ-Հասիհան մզկիթը Դամասկոսում




Սուդանի նախագահ Բաշիրը



Մի տեսարան մայրաքաղաք Խարտումից



Սուդանի տղաները



Քուվեյթի էմիր Սաբահ Ալ–Ջաբրը



Բանկի շենք Քուվեյթում



Պատերազմի ժամանակ հրդեհված նավթահանքերը




Քուվեյթի ազգային թանգարանը




Օմանի մայրաքաղաք Մասկատը



Օմանի սուլթան Կաբուսը



Մզկիթ Օմանում



Կենտրոն Օմանում՝ սուզալողով զբաղվելու համար

Քուվեյթում: Երկու երկրների միջև ստորագրված փաստաթղթերի մեջ ուշադրության է արժանի նաև Իրաքում Հայաստանի զինված ստորաբաժանում տեղակայելու մասին փաստաթուղթը, որը ստորագրվեց 2004 թ. փետրվար ամսին: Ստորաբաժանումը պետք է որոշ ժամանակ տեղակայվեր Քուվեյթում, ապա այնտեղից անցներ Իրաք:

Որոշակի շփումներ գոյություն ունեն նաև մշակույթի, սպորտի և այլ մարզերում: Կան նաև բազմաթիվ առաջարկություններ գիտության, առողջապահության, կրթության և այլ բնագավառներում համագործակցությունը զարգացնելու վերաբերյալ:

Սակայն հարկ է նշել, որ արվածը կարելի է գնահատել սոսկ նախնական քայլեր: Երկու երկրների քաղաքական, տնտեսական և ֆինանսական ներուժն առայժմ ամբողջությամբ չի օգտագործվում: Դա սպասում է իր ապագային:

Գլուխ հինգերորդ

ՕՄԱՆԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆ
ՕՄԱՆ

ՍԱԼԹԱՆԱԹ ՈՒՄԱՆ
ՈՒՄԱՆ

Աշխարհագրական դիրքը — գտնվում է Մերձավոր Արևելքում. նրա ափերը ողողում են Արաբական ծովի, Պարսից և Օմանի ծոցերի ջրերը

Սահմանները — սահմանակից է Սաուդյան Արաբիային, Արաբական Միացյալ Էմիրություններին և Եմենին

Տարածքը — 212 հազ. 460 քառ. կմ

Բնակչությունը — 3 մլն 160 հազ. (2005 թ.), որից 578 հազ. ոչ օմանցիներ

Մայրաքաղաքը — Մասկատ՝ 797 հազ. (2003 թ.) մյուս մեծ քաղաքները՝ Նազվան և Մատրահ նավահանգիստը

Ազգային կազմը — արաբներ (94%), բելուջիներ, հնդիկներ, պակիստանցիներ շրիլանկացիներ և աֆրիկացիներ

Կրոնը — իսլամ՝ իբադիական իսլամ՝ 75%, սուննի և շիա իսլամ, և հինդուիզմ

Լեզուն — արաբերեն՝ պաշտոնական. գործածական են անգլերենը, բելուջերենը, ուրդուն և հնդկական բարբառները

Պետական կարգը — բացարձակ միապետություն

Գործադիր իշխանությունը — պետության ղեկավարը՝ սուլթան Կաբուս բին Սաիդ ալ–Սաիդ (1970 թ. հուլիսի 23–ից), որը նաև երկրի վարչապետն է. կառավարությունը, որին նշանակում է սուլթանը


Օրենսդիր իշխանությունը — երկպալատանի պառլամենտը՝ Օմանի մաջլիսը (խորհուրդը), բաղկացած Պետական խորհրդից՝ Մաջլիս ալ–Դավլա որը նշանակվում է սուլթանի կողմից և համարվում է վերին պալատը, և Խորհրդատվական խորհրդից՝ Մաջլիս ալ–Շուրա, որը ստորին պալատն է

Դատական իշխանությունը — Բարձրագույն դատարանը. Դատական համակարգը հիմնված է բրիտանական ընդհանուր իրավունքի և իսլամական իրավունքի վրա: Նահանգներում դատավորները կիրառում են աշխարհիկ և իսլամական՝ շարիաթի օրենքները

Վարչական բաժանումը — կազմված է 5 շրջաններից՝ մինտաքատ, և 3 նահանգներից՝ մուհաֆազա

Անկախությունը — 1650 թ. (պորտուգալացիների արտաքսումը)

Ազգային տոնը — նոյեմբերի 18–ը՝ սուլթան Կաբուսի ծննդյան օրը (1940 թ.), որը նշվում է 1970 թ–ից, երբ Կաբուսը նստեց սուլթանի գահին


ԻՐԱՆ
ԲՈՒՇԱՀՐ-ԱԲԲԱՍ
Հորմուզի նեղ.
Սուսանգադ
թկղ
Կիսաբ
ՕՄԱՆ
Պարսից ծո՛ց
Շարջա
Ալ-Ֆուջայրա
ԴՈՒԲԱՅ
Օմանի ծոց
ԱԲՈՒ ԴԱԲԻ
Շիհաս
Բուրայմի
Լիուա
Մասկատ
Ա.Մ.Է.
Ալայհան
Շամլ • 3353
Հաջար աշ-Շարքի լեռներ
Մաթրահ
Քուրայաթ
Իբրի
Համրա
Նիզվա
Սուր
Ադամ
Ռուվայֆիա
ՍԱՈՒԴՅԱՆ
ԱՐԱԲԻԱ
ՕՄԱՆ
Ռուբ ալ-Հալիի անապատ
Հալանի կղ.
Հասիրա կղ.
Հայուֆ
Հաջմա
Ռաս ադ-Դուքմ
Մասիրա ծոց
Ջավարիա
Մադրաքա հրվ.
Քուրիա-Մուրիա ծոց
Քուրիա-Մուրիա կղ-ր
ԵՄԵՆ
Մալալահ
Ադենի ծոց
ՕՄԱՆ

Սահմանադրություն — չկա
Քաղաքական կուսակցություններ — արգելված են
Ազգային դրամը — Օմանի ռիալ
ՀՆԱ–ն ըստ շնչի — 13 հազ. 100 ԱՄՆ դոլար (2004 թ.)
Գործազրկություն — 15% (2004 թ.)
Արդյունաբերությունը — նավթի արդյունահանում և մշակում, բնական գազի արդյունահանում. շինարարություն. ցեմենտի արդյունաբերություն, մետաղամշակման (պղնձի և պողպատի) ձեռնարկություններ. քիմիկատների և օպտիկական թելերի արտադրություն, տեքստիլ և պատրաստի հագուստի արտադրություն
Գյուղատնտեսություն — մշակովի հողատարածքները կազմում են Օմանի տարածքի 0,3%–ը. Մշակվում են ցորեն. գարի, եգիպտացորեն, բանջարեղեն, մրգեր՝ բանան, մանգո. խնձոր, արմավ և այլն
Անդամակցություն միջազգային կազմակերպություններին — ՄԱԿ, ՅՈՒՆԵՍԿՕ, ՅՈՒՆԿՏԱԴ, Արաբական պետությունների լիգա. Իսլամական կոնֆերանս կազմակերպություն. Ինտերպոլ, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն. Առևտրի համաշխարհային կազմակերպություն, Միջազգային արժութային հիմնադրամ և այլն

I. ՕՄԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԻՆ՝ ՕՄԱՆԻ ԵՎ ՄԱՍԿԱՏԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՕՄԱՆԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԻԲԱԴԻՅԱ

1. Անկախության նվաճման և նրա տարեթվի գնահատականի հարցի շուրջը

Օմանն անցել է երկարատև և բարդ ուղի, մինչև որ որպես պետություն հասել է ներկա կարգավիճակին: Այդ ուղին և նրա օրինաչափությունները հստակ և հանգամանորեն դեռևս չեն ուսումնասիրված, և նրա պատմությունը պարունակում է մի շարք մութ և խառնաշփոթ էջեր: Ուստի պատահական չէ, որ այդ հարցերին նվիրված գրականության մեջ կան հակասություններ, և արտահայտվել են իրարամերժ տեսակետներ:

Համաձայն պաշտոնական տեսակետի՝ Օմանն անկախ պետություն է դարձել 1650 թ., և, ըստ այդմ, նա այդ կարգավիճակով գոյություն ունի ավելի քան 355 տարի: Այդ տարեթվի համար հիմք է հանդիսացել պորտուգալական մոտ 150 տարի տևած տիրապետության տապալումը և պորտուգալացիների վռնդումը արաբական ցեղերի կողմից 1650 թ.:

Դրա կողքին մի շարք աշխատություններում, հատկապես կոլեկտիվ մենագրական ուսումնասիրություններում, տեղեկատվական և հանրագիտարանային բնույթի հրատարակություններում, այլ տեսակետներ են արտահայտվում, որոնք ակնհայտ հակասության մեջ են գտնվում Օմանում պաշտոնապես ընդունված տեսակետի հետ:

Բերենք մի քանի օրինակ: «Ամբողջ Ասիան Աշխարհագրական տեղեկատու: Պետական կառուցվածքը, բնությունը, բնակչությունը, տնտեսությունը, պատմությունը, մշակույթը» աշխատության մեջ, որը լույս է տեսել Մոսկվայում 2003 թ., հեղինակային կոլեկտիվը, անդրադառնալով Օմանի անկախության հարցին, գրում է. «VIII դարի կեսից մինչև XVIII դարը (ընդմիջումներով) Օմանն անկախ սուլթանություն

էր»: Համարյա նույնությամբ, նույն բառերով այդ տեսակետն իր արտացոլումն է գտել «Երկրների փոքր հանրագիտարանում», որը լույս է տեսել Մոսկվայում 2004 թ., որտեղ կարդում ենք. «Մ.թ. VII դարի կեսին Օմանի տարածքը մտավ Արաբական խալիֆայության մեջ, VIII դարի կեսից մինչև XVIII դարի վերջը (ընդմիջումներով) այստեղ գոյություն ուներ անկախ իմամաթ»:

Քննարկվող հարցը պատմականորեն մի փոքր այլ կերպ է լուսաբանված Լոնդոնում լույս տեսած բրիտանական «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա. 1969–70» հրատարակության մեջ: Այստեղ, ի հակադրություն նախորդ երկու աշխատությունների, նշվում է, որ «Մասկատի և Օմանի մասին քիչ բան է հայտնի մինչև 1508 թ. նրա մայրաքաղաքի գրավումը պորտուգալացիների կողմից»: Այսինքն՝ դեռևս VIII դարում կազմավորված և դրանից հետո ևս մի քանի դար գոյություն ունեցած անկախ Օմանի պետության մասին ոչ միայն ոչ մի ակնարկ չի արվում, այլև հստակորեն ասվում է, որ այդ շրջանի պատմության մասին քիչ բան է հայտնի: Դրան հետևում է հետևյալ հաստատումը. «1650 թ. նրանք (պորտուգալացիները — Ն. Հ.) դուրս մղվեցին տեղացի արաբների կողմից»: Այս տեսակետն ավելի մոտ է Օմանի պաշտոնական տեսակետին, թեև դրա հեղինակները խուսափել են այն հստակորեն ձևակերպել, որի պատճառով այստեղ նույնպես կան մի շարք հարցականներ:

Այլ է քննարկվող խնդրի հանդեպ Վիկիպեդիա հանրագիտարանի մոտեցումը: Նրա 2007 թ. հրատարակության մեջ հստակորեն մատնանշվում է, որ VIII–XVIII դարերում Օմանը բազմիցս հայտնվել է օտար տիրապետության տակ. «Օմանը, այդուհանդերձ, նվաճվել է մի քանի օտար պետությունների կողմից: Օմանը գտնվել է քարմաթների վերահսկողության տակ 931–932 և կրկին 933–934 թթ. միջև: 972–1050 թթ. Օմանը իրանական Բուիների տիրապետության տակ էր, իսկ 1053–1154 թթ. Օմանը Մեծ Սելջուկյան կայսրության մասն էր կազմում: 1154 թ. տեղական Նաիբանի դինաստիան իր վերահսկողությունը սահմանեց Օմանի վրա, և Նաիբանի թագավորները կառավարեցին Օմանը մինչև 1470 թ.»:

Ճշմարտությունը կայանում է նրանում, որ մինչև 1650 թ. եղել են առանձին, երբեմն փոքր և աննշան կազմավորումներ իրենց իմամների գլխավորությամբ. Սակայն 1650 թ. հանդիսանում է շրջադարձային տարի այն առումով, որ Օմանն ազատագրվել է օտար տիրապետությունից, և դա եղել է նրա երկու գլխավոր հատվածների՝ ծովեզրյա Մասկատի և

ներքին կամ խորքային ցամաքային տարածքների՝ բուն Օմանի համատեղ ջանքերով: Արդյունքում կազմավորվել է Օմանի միասնական պետությունը, որը կոչվել է նաև Օմանի և Մասկատի սուլթանություն: Դա այնքան է ուժեղացել և ընդարձակվել, որ XVIII դարի 30–ական թվականներին անգամ գրավել է Արևելյան Աֆրիկայի պորտուգալական մի շարք տիրույթներ, այդ թվում և Զանզիբարը:

Այս կապակցությամբ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ 1650 թ. հետո ևս կան փաստեր, որոնք վկայում են Օմանի անկախության կորստի մասին, ինչպես 1741–1743 թթ., երբ նա հայտնվեց իրանական տիրապետության տակ, որից ազատագրվելու գործում մեծ դերակատարում ունեցան Ալ–Աբու Սաիդը և նրա կլանը, որն այնուհետև դարձավ կառավարող դինաստիա: Նրան հաջողվեց, անցնելով քաղաքական բազմաթիվ փոթորիկների միջով, պահպանել իր այդ կարգավիճակը մինչև օրս:

Չպետք է հաշվից դուրս նետել նաև անգլիական ազդեցության ուժեղացումը XIX դարում: XIX դարում կատարվեցին բավականին հետաքրքիր և անսպասելի վարչատարածքային փոփոխություններ Օմանում: Նա բաժանվեց երեք մասի, և ստեղծվեցին Օմանի իմամությունը, Մասկատի սուլթանությունը և Ծովահենային ափը: Դրանք հետագայում ևս կրեցին փոփոխություն: Ծովահենային ափը 1853 թ. վերանվանվեց Պայմանագրային Օմանի, որի հիմքի վրա 1971 թ. կազմավորվեց Արաբական Միացյալ Էմիրությունները: Իսկ Մասկատի սուլթանությունը 1891 թ. դարձավ բրիտանական պրոտեկտորատ: Այդուհանդերձ, Մասկատը և Օմանը ընկալվում էին որպես մեկ ամբողջություն և նորագույն շրջան մտան որպես այդպիսին: Իսկ մինչև 1970 թ. այդ երկիրը կոչվում էր «Մասկատի և Օմանի սուլթանություն»: 1970 թ. պետությունը պաշտոնապես ընդունեց Օման սուլթանություն անվանակոչումը, իսկ Մասկատը դարձավ նրա մայրաքաղաքը:

Ահա այսպիսին է ներկայանում մեզ Օման պետության կազմավորման դարեր տևած բարդ գործընթացը:

2. Իբադիյա

Օմանի պատմությունը, այդ թվում նորագույն շրջանի պատմությունը, և նրա յուրահատկությունները հնարավոր չէ ճիշտ հասկանալ առանց հաշվի առնելու նրանում տիրապետող կրոնական առանձնա-

հատկությունը, որն իր խոր կնիքն է դրել Օսմանի պատմության, հասարակական կառուցվածքի, սովորույթների, քաղաքական մշակույթի և կյանքի այլ ոլորտների վրա:

Օսմանում տիրապետող է իսլամը: Սակայն իսլամի այն ուղղությունը, որը դավանում են Օսմանում, տարբերվում է ինչպես ուղղափառ սուննիզմից, այնպես էլ շիիզմից: Նա ստացել է արաբերեն **իբադիյա** անվանումը, իսկ ոչ իսլամական աշխարհը օգտագործում է իբադիզմ ձևը: Մուսուլմանական գրականության մեջ այն համարվում է աղանդ:

Իբադիյական իսլամը հանդիսանում է ժամանակակից Օսմանի պետական կրոնը:

Ե՞րբ և ինչպե՞ս է առաջացել այդ յուրատեսակ ուղղությունը, և ո՞րն է նրա էությունը:

Անվան ծագումը կապված է նրա հիմնադրի՝ Օսմանի ազդ ցեղի անդամ Աբդալլահ իբն Իբադի անվան հետ: Այդ աղանդը հիմնվել է Բասրայում 684 թ., երբ դեռևս շատ ակտիվ էին խմորումները մուսուլմանական աշխարհում և Մուհամմադի կողմից ձևավորված նոր իսլամի ներսում: Եվ թեև ընդամենը կես դար էր անցել Մուհամմադ մարգարեի կողմից իսլամը հիմնելուց հետո, այդուհանդերձ, արդեն նրա ներսում տեղի էին ունեցել պառակտումներ, առաջացել էին տարբեր հոսանքներ, ուղղություններ և աղանդներ: Եվ այդ գործընթացը շարունակվել է նաև հետագա դարերում: Ահա դրանցից մեկն էր իբադիյան: Նա ձևավորվել է մեկ այլ աղանդի՝ խարիջիների[39] ներսում և նրանից անջատվել 685 թ.: Նա չէր կարող համատեղվել խարիջիների հետ, որոնք համարվում էին իսլամի ծայրահեղականներ՝ էքստրեմիստներ: Վերջիններս բոլոր այն մուսուլմաններին, որոնք խարիջիական չէին, համարում էին բազմաստվածություն հետևորդներ, հետևաբար, անհավատներ:

Իբադիյան ժխտում էր խարիջիական ծայրահեղականությունը և այդ պատճառով էլ մուսուլման աստվածաբանների կողմից բնութագրվում է որպես «չափավոր պահպանողական»:

Կրոնաաստվածաբանական առումով իբադիյան հանդես է գալիս հօգուտ իսլամի և իսլամական պետության այն տեսադրույթի վերականգնման, որը գոյություն է ունեցել Մուհամմադի օրոք և նրա մահից հետո՝ 632–644 թթ.: Դա Մուհամմադին հաջորդած առաջին երկու ուղղափառ խալիֆաների՝ Աբու Բաքրի (632–634 թթ.) և Օմարի (634–644

39 Խարջիների մասին տես սույն աշխատության I հատորը:

թթ.) կառավարման տարիներն էին: Աբդալլահ իբն Իմադը և նրա հետնորդները գտնում էին, որ իսլամական պետության և իսլամի կոնցեպցիան այլասերվել և փչացել է խալիֆա Օսմանի (1644–1654 թթ.) կողմից: Այդ պատճառով իբադիյան ճանաչում է միայն առաջին երկու ուղղափառ խալիֆաներին:

Իբադիները, հատկապես նրանց ղեկավարները, ենթարկվեցին հալածանքների և արտաքսվեցին Օման, թեև նրանց հետնորդները հայտնվեցին նաև Կենտրոնական Արաբիայում, Հիջազում, Իրանում, Իրաքում, ապա նաև Հյուսիսային Աֆրիկայում, որտեղ VIII դարի 70–ական թվականներին հիմնվեց Ռուստամների իբադիյական պետությունը: 850 թ. իբադիյան դավանող Օմանի ցեղերն անջատվեցին Աբբասյան խալիֆայությունից և հիմնեցին իրենց անկախ պետական կազմավորումը Ջաբալ Ախդարում՝ Օմանում: IX դարում Օմանում հաստատվեց առաջին իմամությունը, որը օմանցիները մինչև օրս համարում են իբադիյական պետության իդեալ:

Իբադիյան, բացի իսլամի և իսլամական պետության կոնցեպցիայից, որը, ըստ նրանց, տիրապետող էր մինչև VII կեսերը, ուներ նաև մեկ կարևոր առանձնահատկություն՝ կապված պետական կառավարման, շեյխ — ցեղի անդամներ, ցեղապետ — հասարակություն փոխհարաբերությունների հետ: Դա երկրի կամ պետության ղեկավարի ընտրությունն է ըստ հասարակական կոնսենսուսի: Իբադիյան իշխանությամբ օժտում է իմամին: Նա համարվում է առաջնորդը, որին առաջադրում են (նոմինացիա) ուլեմաները՝ աստվածաբանները: Դրան հաջորդում է ցեղերի շեյխերի համաձայնությունը, որից հետո նա ստանում է հասարակության բայ'ան՝ երդում–աջակցությունը. Ահա միայն դրանից հետո իմամը հաստատվում է իր պաշտոնում և անցնում իր պարտականությունների կատարմանը:

Իբադիյայի ուսմունքը պարունակում է պահպանողական մի շարք սկզբունքներ, որոնք վերաբերում են ազատություններին, տեխնիկայի և մշակութային արժեքների օգտագործմանը և այլն: Իբադիների համար անընդունելի են ծխելը, ոգելից խմիչքներ օգտագործելը, խաղերը, անգամ երաժշտությունը, և նրանք այդ «մոլուցքներով» տարված մարդկանց վարքագիծը համարում են դատապարտելի: 1932 թ. բրիտանացիների օգնությամբ Օմանի սուլթանի գահին նստեց Սահիդ իբն Թայմուր իբն Ֆեյսալը, որը երկիրը կառավարեց մինչև 1970 թ.: Նա աչքի էր ընկնում իր պահպանողականությամբ և սվիններով էր դիմավորում ամեն մի

առաջադիմություն, որը չէր տեղավորվում իբադիյական իր պատկերացումների մեջ: Նա արգելում էր իր հպատակներն օգտագործել պատենտավորված գործարանային արտադրության դեղեր, տաբատներ, ռադիո, գրքեր, դիտել բեմադրություններ և այլն: Նա ձգտում էր Օմանը պահել նման պայմաններում մինչև 1970 թ., երբ տապալվեց իր որդու կողմից և զրկվեց իշխանությունից:

Իբադիյական մզկիթներն իրենց ճարտարապետական կառուցվածքով զգալիորեն տարբերվում են մուսուլմանական աշխարհում ընդունված մզկիթներից: Նրանք չունեն սուննիների և շիաների մզկիթների ծոխությունը, շքեղությունը, զարդանախշերը և սլացիկությունը: Իբադիյական մզկիթներն ավելի պարզ ու համեստ, ցածլիկ և գետնահար են: Նրանց կարծիքով այդ հանգամանքն ավելի է նպաստում, որ հավատացյալների ուշադրությունն աղոթքի ժամանակ չշեղվի կողմնակի առարկաներով, և նրանք կարողանան աղոթքի ժամանակ ամբողջովին կենտրոնանալ Ալլահի և մուսուլմանների սրբազան գրքի՝ Կորանի պատվիրանների վրա:

Օմանն աշխարհում միակ պետությունն է, որտեղ բնակչության 75%–ը դավանում է իբադիյական իսլամ:

II. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՕՄԱՆՈՒՄ (1918–1964 թթ.)

1. Օման–Մասկատ հակամարտությունը և Սիբի 1920 թ. համաձայնագիրը

Օմանի քաղաքական իրադրության ձևավորման և զարգացման վրա մշտապես ազդել են մրցակցությունը և հակասությունները ծովեզրյա Մասկատի սուլթանության և ներերկրյա Օմանի իմամության միջև: Մրցակցությունը գալիս էր դեռևս միջնադարից և իր հետագա զարգացումը ստացավ նաև նորագույն շրջանում: Ընդունված է, թե Մասկատը, շնորհիվ այն հանգամանքի, որ գտնվում է ծովեզերքում, հնարավորություն է ունեցել շփվել արտաքին աշխարհի հետ և ազդվել նրանից, ավելի զարգացած, առաջադիմական երկիր է, քան Օմանի իմամությունը: Նույնիսկ ոմանք փորձում են Մասկատի սուլթանությունը ներկայացնել համարյա կոսմոպոլիտական, որը, իհարկե, չափազանցություն է:

Բայց որ Մասկատն ավելի բաց երկիր էր և ավելի զարգացած, անվիճելի է: Իսկ Օմանը, ընդհակառակը, բնութագրվում է որպես ավելի պահպանողական, մեկուսացված և փակ հասարակություն, որում գլխավոր դեր էր խաղում նաև այն հանգամանքը, որ Օմանի իմամությունում տիրապետող էր իբադիյական իսլամը, և նրա բնակչությունը համարյա ամբողջությամբ այդ ուսմունքի հետևորդն էր:

Հակասությունների արմատները և պատճառները սովորաբար այդ երևույթների սահմաններում են դիտարկվում: Բայց կարծում ենք, որ այդ մոտեցման մեջ բացակայում է մի շատ կարևոր օղակ: Իբադիյական Օմանի իմամությունը ձգտում էր լինել լրիվ անկախ իր տարածքներում և որևէ կերպ կախման մեջ չգտնվել Մասկատի սուլթանությունից, որը բրիտանական պրոտեկտորատ էր: Այսինքն՝ այստեղ կար նաև քաղաքական գործոնը, որը բնավ էլ երկրորդական դեր չէր խաղում: Իսկ քանի որ Անգլիան այդ հակասությունների դրսևորման ժամանակ, որը, որպես կանոն, վերածվում էր ռազմական բախումների, մշտապես հանդես էր գալիս Մասկատի կողմից և նրան ցույց տալիս ռազմական օգնություն ու քաղաքական աջակցություն, ապա օմանա–մասկատյան հակամարտությունն ինքնաբերաբար Օմանի կողմից ընդունում էր ազգային–ազատագրական, հակաիմպերիալիստական պայքարի բնույթ: Այս տեսակետն ավելի հիմնավոր կդառնա, եթե հիշեցնենք, որ Մասկատը բրիտանական պրոտեկտորատ էր, որը չէր տարածվում Օմանի իմամության վրա: Ուստի միանգամայն տրամաբանական կլինի, եթե ասենք, որ Օմանի իմամության բացարձակ ենթակայությունը Մասկատի սուլթանությանը կնշանակեր ինչ–որ ձևով բրիտանական պրոտեկտորատի տարածում նաև Օմանի վրա: Համենայն դեպս, նման պարագայում Օմանի իբադիյական իմամությունն անուղղակիորեն կգտնվեր բրիտանական պրոտեկտորատի ազդեցության ոլորտներում, որի հետ ոչ մի կերպ չէին կարող հաշտվել իբադիայական օմանցիները և նրանց ղեկավար իմամը:

Օման–Մասկատ հակամարտությունը հերթական անգամ դրսևորվեց 1915 թ., երբ Նիզվան քաղաքի, որը համարվում է Օմանի կենտրոնը, շուրջը կենտրոնացված Օմանի ցեղերն իմամի գլխավորությամբ հարձակում գործեցին Մասկատի վրա: Նրանք ցանկանում էին, որ նրանց ղեկավարի բացառապես իրենց կրոնական առաջնորդ Օմանի իմամը: Մոտ 5 տարի տևեցին արյունալի բախումները նրանց միջև, որի ընթացքում Մեծ Բրիտանիան պաշտպանում և օգնում էր Մասկա-

տի սուլթանին: Չնայած այդ հանգամանքին օմանցիները տանում էին հաղթանակ հաղթանակի հետևից, իսկ 1919 թ. վճռական հարվածներ հասցրեցին Մասկատի սուլթանի զորքերին: Սուլթանն ունեցավ նաև տարածքային մեծ կորուստներ, և նրա իշխանության տակ մնացին Մասկատ քաղաքը և որոշ ծովեզրյա տարածքներ: Ակնհայտ էր, որ Մասկատը զենքի ուժով չէր կարող հասնել հաղթանակի: Կրկին նրան օգնության եկան անգլիացիները, բայց այս անգամ ոչ թե զենքով, այլ խորհուրդներով: Մասկատում անգլիական հյուպատոս Վինգեյտի խորհրդով Մասկատի սուլթան Թայմուր իբն Ֆեյսալը հաշտության խնդրանքով դիմեց Օմանի իմամ Աբդալլահ իբն Մուհամմադ ալ–Խալիլիին: Վերջինս ընդառաջեց, և 1920 թ. սեպտեմբերի 25–ին անգլիացիների միջնորդությամբ Սիբ բնակավայրում ստորագրվեց քաղաքական պայմանագիր Մասկատի սուլթան Թայմուր իբն Ֆեյսալի և «Օմանի ժողովրդի միջև»: Պայմանագիրը Օմանի կողմից ստորագրեց Օմանի իմամի տեղապահ և լիազոր շեյխ Իսա իբն Սալիմ ալ–Հարսին, իսկ Մասկատի կողմից սուլթանի ներկայացուցիչ, անգլիական հյուպատոս Վինգեյտը: Ըստ այդ պայմանագրի Մասկատի սուլթանը ճանաչեց Օմանի իմամության ինքնավարությունն Օմանի ներքին շրջաններում, սակայն նրա սահմանները չհստակեցվեցին: Իսկ Օմանի իմամը ճանաչեց Մասկատի սուլթանի սուվերենությունն այլ շրջանների վրա և նրա իշխանությունն արտաքին հարցերում: Օմանը ճանաչում էր նաև ցեղերի և քաղաքային բնակչության ազատ տեղաշարժվելու իրավունքը, խոստանում չխախտել խաղաղությունը և ապաստան չտալ ծովեզրյա շրջաններից փախած չարագործներին:

Պայմանագրի բովանդակությունից դժվար չէ կռահել, որ կողմերից ոչ մեկին չհաջողվեց ամբողջապես հասնել իր պահանջներին: Ուստի այն դիտվում էր հարաբերությունները ժամանակավորապես կարգավորող փաստաթուղթ: Այդ պատճառով էլ, թեև դրանից հետո երկար ժամանակ խոշոր բախումներ տեղի չէին ունենում Մասկատի և Օմանի միջև, այդուհանդերձ, դրությունը մնում էր անկայուն և կարող էր ամեն մի առիթով պայթել:

2. Իրադարձությունների հետագա զարգացումը: Սուլթան Թայմուր իբն Ֆեյսալի տապալումը 1932 թ. և Անգլիայի դիրքերի ամրապնդումը

Անգլիան շարունակում էր ամրապնդել իր դիրքերը Մասկատում՝ օգտվելով պրոտեկտորի իր արտոնություններից: Դրա վկայությունն էր 1925 թ. անգլո–օմանյան համաձայնագիրը. Դա այն ժամանակաշրջանն էր, երբ արևմտյան երկրները, առաջին հերթին Անգլիան, ԱՄՆ–ը, Հոլանդիան, Ֆրանսիան և նրանց նավթային ընկերությունները, սկսել էին արտակարգ հետաքրքրություն ցուցաբերել նավթի և աշխարհի տարբեր վայրերում գտնվող նավթային հանքավայրերի նկատմամբ: Մերձավոր Արևելքը վաղուց էր հայտնվել նրանց գործունեության ոլորտում: Այժմ նրանց տեսադաշտում արդեն հայտնվում էին նաև Ծոցի արաբական շեյխությունները, այդ թվում և Օմանը: Արևմտյան պետությունները, դեռ նավթը չհայտնաբերած, շտապում էին ապագա նավթատեր երկրներին պարտադրել զանազան համաձայնագրեր իրենց շահերն ապահովագրելու համար: Նման բնույթի մի պայմանագիր էր 1925 թ. Անգլիայի և Օմանի միջև կնքված համաձայնագիրը, որն արգելում էր Օմանին որևէ կոնցեսիա տալ ոչ բրիտանական ընկերությանը՝ առանց Լոնդոնի նախնական թույլատվության:

Զուգահեռաբար Մեծ Բրիտանիան ուժեղացնում էր իր միջամտությունը Օմանի ներքին գործերին նպատակ ունենալով իշխանության գլուխ դնել այնպիսի մարդկանց, որոնք կարողանային ապահովել անգլիական դիրքերն Օմանում: 1920–ական թվականների վերջերին և 1930–ականների սկզբներին ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում Անգլիայի դժգոհությունը Մասկատի սուլթան Թայմիր իբն Ֆեյսալից և նրա քաղաքականությունից: Լոնդոնում դեռ չէին մոռացել նրա անհաջողություններն Օմանի իմամի դեմ պայքարում, երբ անգլիական կառավարությունը հազիվ կարողացավ փրկել նրան վերջնական պարտությունից: Դրան ավելացան սուլթանի անհաջողությունները ներքին քաղաքականության բնագավառում, մասնավորապես նրա անպատասխանատու և ոչ կոմպետենտ քաղաքականությունը հարկերի և ֆինանսների հարցում, նրա թույլ տված շռայլությունները:

Հարցը հետևյալն էր: 1920 թ. Սիբի պայմանագրի կնքումից հետո սուլթան Թայմուրը չէր ցանկանում հավատարիմ մնալ նրան և կատարել նրա պայմանները, հատկապես Օմանի իմամությանը ներքին ինքնա-

վարություն տալու հարցում: Լոնդոնում լավ էին հասկանում, որ դա կարող էր հանգեցնել օմանա–մասկատյան նոր պատերազմի, որի վերսկսման մեջ Անգլիան տվյալ պահին շահագրգռված չէր: Նրան անհրաժեշտ էին ավելի կայուն և խաղաղ պայմաններ Օմանում և ընդհանրապես Ծոցի ավազանում իր քաղաքական և տնտեսական ծրագրերի իրականացման համար: Ցանկանալով կոտրել սուլթանի համառությունը Անգլիան նրան տրամադրեց վարկեր իր պարտքերը փակելու համար: Սակայն նա չկարողացավ փակել այդ պարտքերը վերնում մատնանշված պատճառների՝ ֆինանսների հարցում անպատասխանատու և ոչ կոմպետենտ քաղաքականության, թույլ տրված չպատճառաբանված և ոչ անհրաժեշտ ծախսերի, շռայլության հետևանքով: Բրիտանական քաղաքացիական ծառայողները զանազան միջոցներով փորձեցին փրկել դրությունը և իրենց տրամադրած վարկերը, բայց ոչինչ չստացվեց: Կատարված սխալները և հասցված վնասները չափազանց մեծ էին:

Դա լցրեց անգլիացիների համբերության բաժակը: Լոնդոնը 1932 թ. Թայմուր իբն Ֆեյսալին հարկադրեց հրաժարվել գահից, որը և նա կատարեց:

1932 թ. Մասկատի սուլթանի գահին նստեց նրա որդին՝ Սաիդ իբն Թայմուրը, որը գահակալեց մինչև 1970 թ.:

Նոր սուլթանը դասեր քաղեց բրիտանական միջամտությունից և իր հոր թույլ տված սխալներից: Նա առիթը բաց չէր թողնում շեշտելու իր հավատարմությունը պրոտեկտոր Անգլիային, իսկ ներքին քաղաքականության մեջ հրաժարվեց իր նախորդի անպատասխանատու քաղաքականությունից ֆինանսների հարցում, սահմանափակեց ծախսերը և արգելեց ամեն մի շռայլություն: Նա, ինչպես նշել ենք, իր հայացքներով վերին աստիճանի պահպանողական էր, և հենց այս շրջանում էր, որ նա հանդես եկավ ռադիոլսումների, գրքերի, թատերական բեմադրությունների և այլ նորամուծությունների դեմ:

1930–ական թվականներին Ծոցի երկրներում նավթի հարցում սկսվեց համաճարակի նման մի բան: Արևմտյան նավթային ընկերությունները կոնցեսիաներ էին ստանում այդ երկրներում, այդ թվում Բահրեյնում, Քուվեյթում, Պայմանագրային Օմանում: Հերթը հասավ նաև Օմանին: 1937 թ. սուլթան Սաիդ իբն Թայմուրը նավթային կոնցեսիա տվեց «Պետրոլեում Կոնսեշըն» ընկերությանը: Անգլիական կառավարությունը միաժամանակ հրահանգեց Պարսից ծոցում բրիտանական ռեզիդենտին և նրա միջոցով իր քաղաքական գործակալներին Բահրեյ-

նում, Կատարում, Քուվեյթում, Աբու Դաբիում, Մասկատում և Օմանում, ինչպես նաև իրեն ենթակա պրոտեկտորատների ղեկավարներին՝ ամեն ինչ անել կանխելու ամերիկյան նավթային ընկերությունների ներթափանցումը այդ երկրներ արգելելով նրանց կոնցեսիաներ տրամադրելը:

Չնայած տրամադրված կոնցեսիային, այդուհանդերձ, նավթի արդյունահանում չսկսվեց, մանավանդ, որ վրա հասավ Երկրորդ համաշխարհային պատերազմը, որը նոր իրադրություն ստեղծեց և խառնեց բոլոր խաղաքարտերը:

Մենք այդ հարցն արդեն լուսաբանել ենք նախորդ գլուխներում, ուստի նպատակահարմար ենք համարում այստեղ միայն նշել, որ գերմանական սպառնալիքը կանխելու նպատակով Մեծ Բրիտանիան մեծաքանակ զորքեր կենտրոնացրեց Մասկատում, ինչպես նաև Ադենում ու Բահրեյնում: Պարսից ծոցի շրջանում հայտնվեցին նաև ամերիկյան զորքերը: Բրիտանական կառավարությունը հարկադրված էր իր համաձայնությունը տալ տարածաշրջանում ամերիկյան զինված ուժերի տեղակայման վերաբերյալ, քանի որ գիտակցում էր, որ ինքը սեփական ուժերով չէր կարողանա դիմագրավել գերմանական զորքերի հաղթարշավը, որոնք 1941 թ. արդեն հայտնվել էին Լիբիայում և Եգիպտոսում ու պատրաստ էին ներխուժել Պարսից ծոց:

Գերմանական ծրագրերը ձախողվեցին, և գերմանական զինվորի ոտքը չհայտնվեց Ծոցի երկրներում, այդ թվում և Մասկատում ու Օմանում.

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո անգլիական և ամերիկյան մրցակցության կարևոր կենտրոններից մեկը կրկին դարձան Պարսից ծոցի ավազանի երկրները, այդ թվում Օմանն ու Մասկատը: ԱՄՆ–ը ձգտում էր թուլացնել Անգլիայի դիրքերը և ստանալ նավթի իր բաժինը, որին դիմադրում էին անգլիացիները: Ամերիկացիները փորձեցին հասնել հաջողության օգտագործելով Դուֆարի և Բուրայմիի օազիսի հարցերը, մասնավորապես այս վերջինը: Բուրայմիի օազիսը գտնվում էր Սաուդյան Արաբիայի և Մասկատի միջև: Սակայն նա բաժանված էր Մասկատի և Աբու Դաբիի միջև: Սաուդյան Արաբիան նույնպես հավակնում էր տիրանալ Բուրայմիի օազիսին և վայելում էր ԱՄՆ–ի աջակցությունը: Բուրայմիի հարցը դարձավ վեճի առարկա Սաուդյան Արաբիայի, Աբու Դաբիի և Մասկատի ու Օմանի միջև, որի ընթացքում Անգլիան Աբու Դաբիի և Օմանի կողմն էր, իսկ ԱՄՆ–ը՝ Սաուդյան Արաբիայի: Անգլիան իր միջամտությունը հիմնավորում էր նրանով, որ Աբու Դաբին և Մասկատը իրեն են հանձնարարել հանդես գալ նրանց անունից:

Բուրայմիի կոնֆլիկտը մեծ անհանգստություն առաջացրեց Օմանի իմամությունում, որի ղեկավարները վախենում էին, որ կոնֆլիկտի հետագա սրումը կարող է հանգեցնել նրան, որ դա դուրս կգա իր շրջանակներից և իր մեջ կներգրավի նաև իրենց: Եվ, իրոք, այդպես էլ եղավ:

3. Օմանի իմամության անկախության հռչակումը և պատերազմը Մասկատի սուլթանության ու Օմանի իմամության միջև

Օմանի իմամության ներքին գործերին սկսեցին միջամտել Սաուդյան Արաբիան, Անգլիան և կոնֆլիկտին մասնակից մյուս ուժերը: «Պետրոլեում Կոնսեշընը» ձեռնարկեց նավթի հետախուզական աշխատանքներն Օմանի ներքին շրջաններում, որոնք գտնվում էի իմամ Ղալիբ իբն Ալիի հսկողության տակ: 1951 թ. նավթի որոնման աշխատանքները սկսվեցին նաև Բուրայմիի օազիսի շրջանում, որն անհանգստացրեց Սաուդյան Արաբիային: Նա անմիջապես դիմեց զինված գործողությունների և 1952 թ. հունիսին գրավեց Բուրայմիի օազիսը: Դա մեծ անակնկալ էր Անգլիայի համար, քանի որ մինչ այդ Սաուդյան Արաբիայի թագավոր Իբն Սաուդի հետ համաձայնագիր էր կնքվել, որով սաուդյան միապետը համաձայնվել էր չխախտել Բուրայմիի գոյություն ունեցող կարգավիճակը: Անգլիան պահանջեց սաուդյան միապետից զորքերը դուրս բերել գրավյալ տարածքներից և հեռանալ Բուրայմիի օազիսից հայտարարելով, որ այդ տարածքը պատկանում է Մասկատին և Աբու Դաբիին:

Սաուդյան Արաբիան հրաժարվեց կատարել Անգլիայի պահանջները, որից հետո Բուրայմիի հետ կապված կոնֆլիկտը թևակոխեց նոր և ավելի վտանգավոր փուլ: Անգլիան որոշեց իր պահանջների կատարմանը հասնել զենքի միջոցով և այդ նպատակի համար օգտագործեց Աբու Դաբիի զորքերը, բայց հատկապես Մասկատի ռազմական ուժերը, որոնք կազմակերպվել էին նրա կողմից և գտնվում էին բրիտանական սպաների հրամանատարության ներքո: Մասկատի և Աբու Դաբիի զորքերը 1953 թ. վերջերին և 1954 թ. սկզբներին ռազմական գործողություններ սկսեցին Սաուդյան Արաբիայի դեմ Բուրայմիի օազիսում: Դա արդեն շատ վտանգավոր քայլ էր, որը կարող էր պատերազմական ավելի մեծ հրդեհի պատճառ դառնալ: Ոչ Անգլիան և ոչ էլ ԱՄՆ–ը դրան դեռևս պատրաստ չէին, մանավանդ, որ միջազգային հանրությունը, առաջին հերթին ՄԱԿ–ը, բացասական դիրք գրավեցին

Անգլիայի գործողությունների հանդեպ: Անգլիան ստիպված էր չափավորել իր ախորժակը և վերադառնալ կոնֆլիկտի կարգավորման քաղաքական տարբերակին:

1954 թ. հուլիսին կողմերը եկան համաձայնության դադարեցնել պատերազմական գործողությունները և կոնֆլիկտը կարգավորել խաղաղ ճանապարհով:

Ստեղծված պայմաններում վճռական գործողությունների դիմեց նաև Օմանի իմամ Ղալիբ իբն Ալին, որի համար անմիջական առիթ հանդիսացան Մասկատի սուլթանի հակաօմանյան գործողությունները: Բուրայմիի օազիսի համար ծավալված ռազմական գործողությունների ժամանակ Մասկատի սուլթանը կոպտորեն խախտեց Օմանի իմամության սահմանները, որը վերջինիս կողմից ընկալվեց որպես վտանգավոր քայլ, անգամ ագրեսիա: Ճիշտ է, Օմանի իմամության սահմանները 1920 թ. Սիբի համաձայնագրով իրավաբանորեն չէին հաստատված, և այդ իմաստով դրանք պայմանական սահմաններ էին, այդուհանդերձ, բոլորին, այդ թվում և Մասկատի սուլթանին քաջ հայտնի էր, որ գոյություն ունեցող սահմանները հանդիսանում են Օմանի իմամության սահմանները, որի շրջանակներում իրականացվում էր Օմանի ինքնավարությունը ներքին հարցերում: Հետևաբար, Մասկատի սուլթանի գործողությունները 1953–1954 թթ. չի կարելի այլ կերպ որակել, քան Օմանի սահմանների խախտում: Մասկատում նաև շատ լավ գիտեին, որ Օմանի իմամը և ցեղային ավագանին սահմանների և ինքնավարության հարցերում շատ զգայուն էին:

Հարկ է նշել, որ դա առաջին դեպքը չէր, երբ պայմանավորվածությունները խախտվում էին Մասկատի կողմից: 1950 թ. վերջերին Մասկատը Օմանի իմամության ներքին գործերին կոպտորեն միջամտելու ևս մեկ փորձ էր կատարել, որը Օմանի մի շարք ցեղերի ապստամբության պատճառ էր հանդիսացել: Այդ ապստամբության թափի մասին է խոսում այն հանգամանքը, որ միայն 1951 թ. դեկտեմբերին Մասկատի սուլթանը կարողացավ կոտրել ապստամբների դիմադրությունը, և այն էլ՝ Անգլիայի ռազմական օգնության շնորհիվ:

Օմանի ցեղերը չէին մոռացել այդ պատմությունը և Մասկատի սուլթանի ուխտադրուժ գործողությունները, որը խորը նստվածք էր թողել նրանց հիշողության մեջ:

Մասկատի նոր ոտնձգություններից հետո Օմանի իմամը և ցեղային ավագանին դիմեցին վճռական և արմատական գործողությունների:

1954 թ. նոյեմբերին Օմանի իմամ Ղալիբ իբն Ալիին հռչակեց Օմանի իմամության անկախությունը: Այդ մասին տեղյակ պահելով արաբական երկրների ղեկավարներին իմամը միաժամանակ դիմեց Արաբական պետությունների լիգային նրան անդամակցելու խնդրանքով: Ուշագրավ է, որ նա խնդրում էր Օմանին ԱՊԼ–ի անդամ ընդունել առանձին և դա չկապել Մասկատի սուլթանության անդամակցության հետ:

Օմանի իմամության անկախության հռչակումը դրականորեն ընդունվեց արաբական երկրներում՝ այն դիտելով հերթական հաղթանակ բրիտանական իմպերիալիզմի դեմ: Օմանի իմամության անկախությունը ճանաչեցին արաբական մի շարք պետություններ, այդ թվում՝ Եգիպտոսը, Եմենը, Սաուդյան Արաբիան, Սիրիան և այլն. Բայց նրա անկախությունը չճանաչեցին Մասկատի սուլթանը և անգլիական կառավարությունը՝ Մասկատի սուլթանության զորքերը, որոնք զինված էին բրիտանական զենքով և գտնվում էին բրիտանական սպաների հրամանատարության ներքո, 1954 թ. պատերազմական գործողություններ սկսեցին Օմանի իմամության դեմ: Նրանք գրավեցին իմամության մայրաքաղաք Նիզվանը և մյուս կարևոր կենտրոնները՝ Ռոստակը, Իբրին, Իզկին և այլ բնակավայրեր: 1955 թ. աշնանը Մասկատի տիրապետության տակ հայտնվեցին Օմանի իմամության բոլոր հարթավայրային տարածքները, և պատերազմի առաջին փուլն ավարտվեց Մասկատի հաղթանակով:

Կորցնելով բոլոր հենակետերը Օմանի հարթավայրային մասերում Օմանի ղեկավարությունը իմամ Ղալիբի գլխավորությամբ հարկադրված էր հեռանալ այդ շրջաններից և հաստատվեց երկրի լեռներում: Նա նախապատրաստական աշխատանքներ տարավ նոր ռազմական գործողությունների համար անգլո–մասկատյան ուժերի դեմ և մեկ անգամ ևս հավաստեց, որ Օմանի իմամությունը չի ցանկանում Մասկատի սուլթանության մաս կազմել:

Այդ ընթացքում Մասկատի զորքերը, համագործակցելով Աբու Դաբիի զինված ուժերի հետ, ազատագրեցին նաև Բուրայմիի օազիսի այն մասը, որը 1952 թ. գրավել էր Սաուդյան Արաբիան: Բուրայմիի օազիսը բաժանվեց Մասկատի և Աբու Դաբիի միջև:

1957 թ. սկսվեց անկախության պատերազմի երկրորդ փուլը: Օմանի իմամ Ղալիբ իբն Ալիի եղբայրը՝ Թալիբ իբն Ալին, ապստամբություն բարձրացրեց Օմանի ներքին շրջաններում, որոնք բնակեցված էին հիմնականում քոչվոր բեդվինական ցեղերով: Մասկատի սուլթան

Սաիդ իբն Թայմուրը դարձյալ օգնության համար դիմեց Անգլիային և ստանալով նրանից համապատասխան ռազմական օգնություն հարձակման անցավ ապստամբների դեմ: 1957 թ. հունիսի 20–21–ը տեղի ունեցած կատաղի մարտերի ժամանակ ապստամբները հասան մեծ հաջողությունների և ազատագրեցին մայրաքաղաք Նիզվան և հարակից տարածքները: Նույն թվականի նոյեմբերին ապստամբների պարտիզանական ջոկատները սուլթանական զորքերին պարտության մատնեցին Ջաբալ Ախդարի շրջանում: Պարտիզաններն այնքան հմտորեն էին գործում, որ 1958 թ. անգամ մահափորձ կատարեցին Մասկատի սուլթան Սաիդ իբն Թայմուրի դեմ:

Մասկատի սուլթանը, ստանալով նոր ռազմական օգնություն Անգլիայից, 1959 թ. անցավ հարձակման: Ապստամբները ծանր պարտություն կրեցին, և նրանց պայքարը վերածվեց պարտիզանական շարժման:

Մասկատի սուլթան Սաիդ իբն Թայմուրը, տոնելով իր հաղթանակը Օմանի իմամի դեմ, որի հետևանքով կարողացավ կանխել Օմանի անջատումը և նրա՝ որպես առանձին պետություն կազմավորվելը, չեղյալ հայտարարեց 1920 թ. Սիբի համաձայնագիրը և վերացրեց Օմանի իմամի պաշտոնը: Դա նշանակում էր նաև Օմանի իմամության ներքին ինքնավարության վերացում, որը հաստատվել էր վերոնշյալ համաձայնագրով:

Պարտություն կրած իմամը 1960 թ. հեռացավ Օմանից և ապաստան գտավ Սաուդյան Արաբիայում երկար ժամանակ վայելելով նրա հյուրընկալությունը, ինչպես նաև նրա և արաբական մյուս երկրների օգնությունը:

Վերոնշյալ գործողությունների արդյունքում ավելի ամրապնդվեցին Անգլիայի դիրքերը Մասկատում: Դա ավելի ակնառու դարձավ, երբ Մասկատի սուլթան Սաիդ իբն Թայմուրը 1958 թ. հաստատվեց Մասկատից հազար կիլոմետր հեռավորության վրա գտնվող Սալալահի իր պալատում: Մասկատի ամբողջ վարչական կառավարումն անցավ բրիտանական քաղաքացիական ծառայողների ձեռքը:

Անգլիացիների գործողություններն Օմանում առաջ բերեցին արաբական երկրների խորը զայրույթը: Նրանք դա համարեցին ագրեսիա Օմանի դեմ: Նրանց նախաձեռնությամբ Օմանի հարցը դարձավ միջազգային քննարկման առարկա: Եգիպտոսի և արաբական մի շարք այլ երկրների ջանքերով Օմանի հարցը մտցվեց ՄԱԿ–ի քննարկումների օրակարգ: Նրանք պահանջում էին վերջ դնել բրիտանական տիրապետությանը, բրիտանական զորքերը դուրս բերել Օմանից և ճանաչել նրա անկախությունը: Այդ հարցը, բացի առանձին հանձնաժողովներից

և կոմիտեներից, քննարկվեց նաև ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայում: Անգլիան ստիպված էր հայտարարել, որ պատրաստ է ճանաչել Օմանի ինքնավարությունը Մասկատի սուլթանության շրջանակներում, որը նշանակում էր նախկին կարգավիճակի վերականգնում: Դա մերժվեց արաբական պետությունների կողմից: ՄԱԿ–ի XVI Գլխավոր ասամբլեան 1962 թ. հունվարի 4–ին, քննարկելով այդ հարցը, ծայների մեծամասնությամբ հավանություն տվեց Քաղաքական կոմիտեի մշակած բանաձևին, որը պահանջում էր Անգլիայից զորքերը դուրս բերել Օմանից և ճանաչել Օմանի ինքնորոշման իրավունքը: Սակայն Անգլիան անտեսեց այդ բանաձևը:

ՄԱԿ–ի աջակցությունը, արաբական երկրներում լայն ծավալ ընդունած շարժումն ի պաշտպանություն Օմանի, միջազգային հանրության բարենպաստ դիրքորոշումն Օմանի խնդրի նկատմամբ նպաստեցին 1960–ական թվականների կեսերից հակաբրիտանական պայքարի վերսկսմանը Օմանում: Այդ ընթացքում կարևոր տեղաշարժեր կատարվեցին Օմանի հակաիմպերիալիստական պայքարի կազմակերպման գործում, որոնցից ամենակարևորը Օմանի ազատագրական ճակատի ստեղծումն էր: Այդ մարմինը, հաշվի առնելով նախորդ շրջանի պայքարի դասերը, 1963 թ. հունվարի 17–ին որոշում ընդունեց ստեղծել ազգային հեղափոխական հրամանատարություն, որի հիմնական լոզունգը դարձավ «Պատերազմ կամ մահ»: Օմանցի հայրենասերները 1964–1966 թթ. հասան բավականին տպավորիչ հաջողությունների: Հաջողությունները ոչ միայն ռազմի դաշտում էին, այլ նաև քաղաքական ճակատում: 1966 թ. մարտի 21–ին Մալիի ներկայացուցիչը Ասիայի և Աֆրիկայի 21 երկրների անունից ՄԱԿ–ի քննարկմանը ներկայացրեց առաջարկությունների մի փաթեթ, որը պահանջում էր Անգլիայից դադարեցնել բռնությունները Օմանի խաղաղ բնակչության նկատմամբ, ազատ արձակել բոլոր քաղաքական բանտարկյալներին և բրիտանական օկուպացիոն զորքերը դուրս բերել Օմանից: ՄԱԿ–ի անդամ երկրների մեծամասնությունը հավանություն տվեց առաջարկությունների այդ փաթեթին: Սակայն մինչև նրա իրագործումը դեռ հեռու էր:

4. Ապստամբությունը Դուֆարում (1963–1975 թթ.)

1960–ական թվականների սկզբներին ձևավորվեց ապստամբական շարժման նոր կենտրոն, որը գտնվում էր Դուֆարի շրջանում: Դու-

ֆարը Օմանին էր միացվել 1876 թ. և ինչպես ամբողջ Օմանը, այնպես էլ այդ շրջանը երկար ժամանակ գոյատևում էր աշխարհից կարծես թե մեկուսացված:

Դուֆարում 1963 թ. սկսված ապստամբական շարժումն ընթանում էր Օմանում ծավալված շարժմանը զուգահեռ երբեմն միահյուսվելով նրան, երբեմն անջատ, երբեմն էլ կրկին դաշնակցելով: Դա ազատագրական շարժում էր, որը արևմտյան որոշ հեղինակներ սխալ կերպով բնութագրում են որպես «անջատողական ապստամբություն» («secessionist rebellion»): Ապստամբությունը նախապատրաստել և գլխավորում էր Դուֆարի ազատագրության ճակատը, որի ջանքերով ապստամբությունը, անցնելով զանազան փորձությունների միջով, վերածվեց երկարատև զինված պայքարի:

Ապստամբությունն ուղղված էր առաջին հերթին օտարերկրյա՝ բրիտանական տիրապետության դեմ: Եվ քանի որ Մասկատը հանդիսանում էր բրիտանական պրոտեկտորատ, իսկ 1951 թ. Անգլիայի հետ կնքված բարեկամության պայմանագրով նա դարձել էր վերջինիս դաշնակիցը, ապա ապստամբությունն ուղղված էր նաև Մասկատի սուլթանի և նրա տիրապետության դեմ: Այդ հանգամանքն ավելի ընդգծվեց, երբ Մասկատի սուլթանը 1959 թ., ճնշելով ապստամբությունն Օմանի իմամությունում, վերացրեց իմամի պաշտոնը, իսկ Օմանն էլ զրկվեց ներքին ինքնավարությունից:

Դուֆարի ապստամբությունը հետապնդում էր նաև սոցիալ–տնտեսական խնդիրներ Ազատագրության ճակատն առաջադրեց Դուֆարի համար առաջնային նշանակություն ունեցող այնպիսի պահանջներ, ինչպես ստրկության վերացումը, պայքարը ցեղային հարաբերությունների գերակայության՝ թրայբլիզմի, և կանանց ճնշման դեմ, անգրագիտության վերացում և այլն: Սոցիալ–տնտեսական պահանջներն ավելի արմատական բնույթ ընդունեցին, երբ 1967 թ. նոյեմբերին ծախերն իշխանության գլուխ եկան Հարավային Եմենում, որն այնուհետև հռչակվեց Եմենի ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն և սերտ հարաբերություններ հաստատվեցին Դուֆարի ազատագրության ճակատի և ԵԺԴՀ–ի միջև: 1968 թ. ԵԺԴՀ–ում տեղի ունեցավ Դուֆարի ազատագրության ճակատի երկրորդ կոնգրեսը, որը սկզբունքային բնույթի փոփոխություններ մտցրեց կազմակերպության կառուցվածքում և խնդիրների մեջ: Նա որոշեց իր հեղափոխական գործունեությունը չսահմանափակել միայն Դուֆարի շրջանով, այլ ընդարձակել և տարածել ամբողջ

Օմանի և Ծոցի մնացած բոլոր երկրների վրա: Դրան համապատասխան փոխվեց նաև ճակատի անվանումը: Դուֆարի ազատագրության ճակատը 1968 թ. վերանվանվեց Օկուպացված Արաբական ծոցի ժողովրդական ճակատի: Բայց դա էլ երկար չտևեց, և երեք տարի անց՝ 1971 թ., կազմակերպութունը որդեգրեց նոր անվանում՝ Օմանի և Արաբական ծոցի ազատագրության ժողովրդական ճակատ, իսկ 1974 թ.՝ Օմանի ազատագրության ժողովրդական ճակատ (ՕԱԺճ):

Դուֆարի ապստամբները սկզբնական շրջանում հասան տպավորիչ հաղթանակների, և եղավ մի պահ, դա 1970 թ. սկզբներին էր, երբ Դուֆարի տարածքի երկու երրորդը գտնվում էր նրանց հսկողության տակ: Դրանից հետո էր, որ ապստամբներն իրենց գործունեությունը տարածեցին Օմանի վրա՝ հեռահար նպատակներ ունենալով այն տարածել Ծոցի բոլոր երկրների վրա:

Սերտորեն համագործակցելով ԵԺԴՀ–ի հետ ՕԱԺճ–ն չէր թաքցնում հեղափոխական ճանապարհով սոցիալիստական հասարակություն կառուցելու վերաբերյալ իր նպատակները: Իհարկե, դա տեղի ունեցավ ԵԺԴՀ–ի ազդեցության տակ, որը սոցիալիստական հասարակության կառուցումը հայտարարել էր իր գերագույն խնդիրը:

Դուֆարում մեծ թափ առած ապստամբական շարժումը, նրա տարածումը Ծոցի արաբական շեյխությունների վրա և հեղափոխական ճանապարհով սոցիալիստական հասարակություն կառուցելու Դուֆարի ճակատի քաղաքականությունը խորն անհանգստություն առաջացրեց Սաուդյան Արաբիայում, Իրանում, Ծոցի արաբական երկրներում, ինչպես նաև Եգիպտոսում և Հորդանանում: Ծոցի երկրների միապետների համար դա մեծ սպառնալիք էր նրանց իշխանությանը, և նրանք համախմբեցին իրենց ուժերն ընդդեմ Դուֆարի ապստամբական շարժման, որին աջակցում էին ԵԺԴՀ–ն և Իրաք, իսկ Խորհրդային Միությունը զենք էր մատակարարում:

Այդ ընթացքում կարևոր քաղաքական փոփոխություններ էին տեղի ունեցել Մասկատում և Օմանում, որի մասին ավելի հանգամանորեն կխոսվի ստորև: Նշենք, որ 1970 թ. գահընկեց էր արվել սուլթան Սաիդ իբն Թայմուրը, և տեղի էր ունեցել երկրի անվանափոխություն: Նա կոչվում էր Օմանի սուլթանություն:

Դուֆարի ապստամբությունը ճնշելու գործում Օմանի նոր սուլթանին լայնածավալ օգնություն էր ցույց տալիս Անգլիան, որն այդ նպատակով ստեղծեց հատուկ օդային ծառայություն: Դա հատուկ ավի-

ացիոն ռազմական խմբավորում էր, որը ռմբակոծում էր ապստամբների կենտրոնները: Իրանն իր զորքերը մտցրեց Դուֆար, որոնց թիվը 1975 թ. հոկտեմբերին հասավ 25 հազարի: Իրանը ապստամբների դեմ հանեց նաև ռազմական ուղղաթիռներ: Եգիպտոսը և Հորդանանն Օմանի սուլթանի տրամադրության տակ դրեցին իրենց զինվորական խորհրդականներին, իսկ Սաուդյան Արաբիան ֆինանսական օգնություն տրամադրեց: Օմանի սուլթանը կարողացավ մեծաքանակ կամավորներ հավաքագրել պակիստանցիներից: Ահա այս ուժերը, որոնց միացան նաև հորդանանյան զինված ջոկատները, 1975 թ. հոկտեմբերին համատեղ հարձակման անցան Դուֆարի ապստամբների դեմ, որոնց զինական ուժը կազմում էր 5–10 հազար մարտիկ: Ապստամբներն անընդհատ նահանջում էին, և դեկտեմբերին նրանց հսկողության տակ գտնվում էր ընդամենը 50 քառ. կմ տարածք, որը սահմանակից էր Հարավային Եմենին: Ուժերն անհավասար էին, ապստամբները դեկտեմբերին այդ փոքր տարածքն էլ կորցրեցին և պարտություն կրեցին:

Չնայած պարտությանը Դուֆարի ապստամբությունն ապարդյուն չանցավ: Մոտ 12 տարի տևած ապստամբությունը ակնառու դարձրեց Օմանում կարևոր քաղաքական և սոցիալ–տնտեսական փոփոխությունների իրագործելու անհրաժեշտությունը:

III. ՍՈՒԼԹԱՆ ԿԱԲՈՒՍԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՕՄԱՆՈՒՄ (1970–2005 թթ.)

1. 1970 թ. պետական հեղաշրջումը և սուլթանական գահի փոխանցումը Կաբուս իբն Սաիդին

Օմանի համար սկզբունքային նշանակություն ունեցող այդ գերխնդիրը հնարավոր չէր լուծել, քանի դեռ սուլթանի գահին նստած էր Սաիդ իբն Թայմուրը: Այդ խնդիրը վիճակված էր տեղից շարժել սուլթան Կաբուս իբն Սաիդին: Բայց դրա համար անհրաժեշտ էր նախ և առաջ կառավարող սուլթանին գահընկեց անել և սուլթանական գահը հանձ-

նել նրա որդուն՝ Կաբուս իբն Սաիդին: Նման պետական հեղաշրջման համար հասունացել էին բոլոր պայմանները:

Այստեղ մենք նկատի ունենք առաջին հերթին Օմանի հետամնաց լինելը: Ասել, որ Օմանը հետամնաց, չզարգացած և աղքատ երկիր էր, նշանակում է ոչինչ չասել, քանի որ դա այնքան ակնհայտ էր, որ այն նկատելու համար պետք չէր մասնագետ լինել: Նա շատ հետամնաց և աղքատ էր անգամ իր հարևան երկրների հետ համեմատած, որոնք մինչև XX դարի 60–70–ական թվականները նույնպես աչքի չէին ընկնում իրեն զարգացման մակարդակով և աղքատ երկրների շարքում գրավում էին ամենաստորին հորիզոնականները: Երկրի կյանքում չէր նկատվում որևէ տեղաշարժ կամ առաջխաղացում, և այնպիսի տպավորություն էր ստեղծվել, կարծես թե Օմանը գտնվում էր անշարժ, քարացած վիճակում: Տիրապետող էին դարերի խորքից եկող հարաբերությունները, որոնց հետևում կանգնած սոցիալական տարբեր ուժերը՝ ցեղերի առաջնորդները, արքունիքը, իբադիյական հոգևորականությունը և այլն, շահագրգռված չէին որևէ փոփոխություն մտցնել երկրում տիրող հարաբերություններում: Ամեն ինչ լուծվում էր թրայբլիզմի՝ ցեղերի և ցեղային հարաբերությունների մակարդակով և ենթակա էր այդ հարաբերություններին: Երկրում պահպանվել էին արխայիկ, իրենց դարը վաղուց ապրած երևույթներ և ոչ միայն կենցաղում: Պահպանվել էր անգամ ստրկությունը: Մարդու իրավունքների մասին ժամանակակից առումով խոսելն ավելորդ էր: Երկիրը խարխափում էր մթության ու խավարի մեջ, անգրագիտությունը համատարած բնույթ էր կրում, չկար ժամանակակից հասկացությամբ առողջապահական համակարգ, և պատահական չէր, որ համաճարակները հնձում էին մարդկանց: Ցածր էր կյանքի միջին տևողությունը, և շատ բարձր էր երեխաների մահացությունը:

Օմանը փաստորեն չուներ արդյունաբերություն, իսկ գյուղատնտեսության զարգացման համար սուլթանական իշխանությունը մատը մատին չէր խփում: Բնականաբար, Օմանը չէր բավարարում սեփական պահանջները պարենի և գյուղատնտեսական զանազան մթերքների հարցում, որին խանգարում էր նաև ոռոգման ջրի պակասը: Կառավարող սուլթան Սաիդ իբն Թայմուրն աչքի էր ընկնում իր պահպանողականությամբ և ակտիվ թշնամական դիրք էր գրավում ամեն տեսակ նորամուծությունների հանդեպ: Մենք արդեն նշել ենք նրա խիստ բացասական դիրքորոշումը գիր ու գրականության, ռադիոյի, թատրո-

նի և եվրոպական այլ նորամուծությունների դեմ, որոնք գտնվում էին փականքի տակ:

Օմանում սոցիալ–տնտեսական տեղաշարժերի համար կարող էին հիմք հանդիսանալ նավթարդյունաբերությունը և նրանից ստացվող եկամուտները. Նավթի հետախուզական աշխատանքները սկսվել էին դեռևս 1937 թ.: 1964 թ «Պետրոլեում դիվելոպմենտ» ընկերությունը, որը կապված էր բրիտանական–հոլանդական «Ռոյալ–Դատչ Շելլի», և «Պարտեքսը», որը կապված էր «Իրաք Պետրոլիում կոմպանիի» հետ, հայտարարեցին, որ հանքավայրերի փորատումը հաստատել է նավթի մեծ պաշարների առկայությունը Օմանում: Գործնականում նավթի արդյունահանումը սկսվեց 1967 թ., և այդ տարի արդյունահանվեց 2,8 մլն տոննա նավթ, իսկ հաջորդ տարի՝ 1968 թ., նավթի արդյունահանումը կազմեց 11,8 մլն տոննա, այսինքն՝ ավելացավ մոտ 5 անգամ: Օմանին հասնում էր նավթի ընդհանուր եկամուտների 50%–ը և նավթի արտահանումից ստացվող եկամուտների 12,5%–ը: Այսպիսով՝ Օմանի հասույթները կազմում էին նավթի եկամուտների 62,5%–ը, որը փոքր թիվ չէր. Բայց ամբողջ հարցն այն էր, որ սուլթան Սաիդ իբն Թայմուրն այդ բավականին մեծ գումարները նախընտրում էր կուտակել, քան թե օգտագործել տնտեսության զարգացման, ճանապարհների և երկրի ենթակառույցների կառուցման, արդիական արտադրության ստեղծման նպատակով, գյուղատնտեսության տարբեր ճյուղերի, սոցիալական ոլորտի զարգացման համար: Բավական է նշել, որ ընդհուպ մինչև 1960–ական թվականների վերջերը Օմանի բնակչության մեծամասնության համար տրանսպորտային գլխավոր միջոցը շարունակում էր մնալ ուղտը: Եթե սուլթան Սաիդ իբն Թայմուրի հայրը՝ սուլթան Թայմուր իբն Ֆեյսալը, աչքի էր ընկնում ֆինանսական միջոցները վատնելով և մսխելով. որը 1932 թ. նրան գահընկեց անելու պատճառներից մեկը դարձավ, ապա Սաիդ իբն Թայմուրն այդ հարցում իր հոր հակապատկերն էր: Նա չէր սիրում ծախսեր անել երկրի կարիքների համար, եղած գումարները հրաժարվում էր հատկացնել սարսափելի աղքատության վերացման, տնտեսության զանազան ճյուղերի, ենթակառույցների և սոցիալական ոլորտի զարգացման ու առաջընթացի համար:

Այդ բոլորի հետևանքով երկրում սոցիալական խիստ լարվածություն էր ստեղծվել: Մենք արդեն նշել ենք, որ Դուֆարի ազատագրության ճակատի գլխավոր պահանջների մեջ մտնում էին միջնադարից եկող զանազան բացասական երևույթների վերացման և հեղափոխա-

կան ճանապարհով սոցիալիստական հասարակություն կառուցելու պահանջները: Հասկանալի է, որ Օմանում ոչ բոլորն էին պաշտպանում հեղափոխական ուղիով սոցիալիստական հասարակություն ստեղծելու Դուֆարի ազատագրության ճակատի ցանկությունը, բայց որ սոցիալ–տնտեսական վերափոխումներ իրականացնելը և Օմանը արդիական երկրի վերածելու պահանջները հուզում էին երկրի բոլոր ազատատենչ, հայրենասիրական և առողջ ուժերին, կասկածից վեր էր:

Երբ խոսք է գնում Օմանի հետամնաց լինելու մասին, ապա պետք է նկատի ունենալ ոչ միայն սոցիալ–տնտեսական ոլորտը: Օմանը հետամնաց երկիր էր նաև իր պետական կառուցվածքով: Ամեն ինչ կենտրոնացված էր կառավարող ալ–Սաիդ ընտանիքի կամ դինաստիայի ձեռքում: Երկիրը չուներ սահմանադրություն, չկար իշխանության հիմնական ճյուղերի տարանջատում, երաշխավորված չէին մարդու ազատությունները, արգելված էին բոլոր տեսակի քաղաքական կազմակերպությունները, այդ թվում և կուսակցությունները: Եվ եթե կառավարող սուլթանն ու նրան շրջապատող շեյխերը և ցեղերի առաջնորդներն այդ մթնոլորտում իրենց լավ էին զգում, ապա նույնը չէր կարելի ասել բնակչության մասին: Այդ վիճակը կառավարող սուլթանից դժգոհելու կարևոր պատճառներից մեկն էր:

Մեծ Բրիտանիան՝ որպես պրոտեկտոր, հետևում էր այդ իրադարձություններին, որոնք նրան մտահոգում էին: Նա մտահոգված էր ոչ թե այն պատճառով, որ Օմանը հետամնաց էր և չէր զարգանում, այլ այն պատճառով, որ դժգոհության ալիքը քանի գնում, բարձրանում էր, և բացառված չէր, որ իրադրությունը կարող է վերահսկողությունից դուրս գալ, ինչը ձեռնտու չէր Անգլիային: Օմանը Ծոցի մյուս իշխանապետությունների հետ միասին կարևոր ստրատեգիական նշանակություն ուներ նրա համար, և նա ոչ մի կերպ չէր ցանկանում կորցնել այն: Անգլիան կասկածում էր, թե սուլթան Սաիդ իբն Թայմուրը կկարողանա կանխել իրադարձությունների իրենց համար ոչ նպաստավոր զարգացումները: Նա դրանում վերջնականապես համոզվեց, երբ Դուֆարի ազատագրության ճակատը իր վերահսկողությունը հաստատեց Դուֆարի տարածքի երկու երրորդի վրա և իր հեղափոխական ապստամբական գործողությունները տարածեց ամբողջ Օմանի և Ծոցի երկրների վրա: Դա վերջին ազդանշանը հանդիսացավ Անգլիայի համար:

1970 թ. հուլիսի 23–ին սուլթան Սաիդ իբն Թայմուրն անգլիացիների ամենաակտիվ մասնակցությամբ գահընկեց արվեց նրա միակ որ-

դու՝ Կաբուսի կողմից: Նա հեռացավ երկրից և հաստատվեց Լոնդոնում, որտեղ և երկու տարի անց՝ 1972 թ., մահացավ:

Օմանի սուլթան դարձավ Կաբուս իբն Սաիդը:

Կաբուսը ծնվել է 1940 թ. Սալալահում, որտեղ գտնվում է Մասկատի սուլթանների թագավորական պալատներից մեկը: Այստեղ՝ պալատում, նա ստացել էր մասնավոր դասեր, ապա կրթությունը շարունակել Անգլիայի Սբ Էդմունդսի քոլեջում, իսկ հետո բրիտանական Արքայական ռազմական ակադեմիայում, որն ավարտելուց հետո մի կարճ ժամանակ ծառայել է Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում տեղակայված անգլիական զորքերում: Այնուհետև երիտասարդ Կաբուսը, որն իրեն նախապատրաստում էր ապագա սուլթանի համար, ուսումնառությունը շարունակում է Լոնդոնի համալսարանում, որտեղ հատուկ ուսումնասիրում է սոցիալական հարցերը: 1965 թ. նա վերջնականապես վերադառնում է Օման և թագավորական պալատում կատարում հոր զանազան հանձնարարությունները:

Կաբուսի սուլթանի գահին նստելով սկսվում է նոր փուլ Օմանի սուլթանության նորագույն պատմության մեջ:

2. Վերափոխումները Օմանում Կաբուս իբն Սաիդի կառավարման շրջանում և Օմանի արդիականացման գործընթացը (1970–2005 թթ.)

Կաբուս իբն Սաիդի առաջին գործերից մեկը եղավ հարաբերությունների հստակեցումը Մասկատի սուլթանության և Օմանի իմամության միջև և դրա հետ կապված պետության անվանակոչման ճշգրտումը: Նա դրանք միավորեց հետաքրքիր ձևով՝ Մասկատի սուլթանությունից վերցրեց «սուլթանությունը», իսկ Օմանի իմամությունից միայն «Օման» տեղանունը, և միավորելով պետությունը կոչեց «Օմանի սուլթանություն»: Բայց նրա մայրաքաղաք հայտարարեց ոչ թե Օմանի մայրաքաղաք Նիզվան, այլ Մասկատի սուլթանության մայրաքաղաք Մասկատ նավահանգստային քաղաքը: Նման ձևափոխումն ընդունելի եղավ երկու մասերի համար:

Դրան հետևեցին սկզբունքային փոփոխությունները պետության և իշխանական մարմինների կառուցվածքում՝ հիմք ընդունելով նրանց արդիականացումը և ժամանակակից աշխարհում ընդունված կառավարման ձևերին ու մեթոդներին անցնելը:

Սուլթան Կաբուսն իրականացրեց իշխանության քների՝ գործադիր, օրենսդիր և դատական, տարանջատում, որը մինչ այդ Օմանում գոյություն չուներ: Բայց դա իրականացվեց յուրահատուկ ձևով: Պահպանվեց սուլթանի բացարձակ միապետ լինելու կարգավիճակը՝ դրանից բխող բոլոր իրավունքներով: Սուլթան Կաբուսն Օմանի սուլթանության՝ որպես պետության, ղեկավարն է. Նա որպես վարչապետ գլխավորում է կառավարությունը նրանում զբաղեցնելով նաև պաշտպանության և արտաքին գործերի նախարարների պաշտոնները: Կաբինետի անդամներին նշանակելու իրավունքը պատկանում է սուլթանին.

1981 թ. սուլթան Կաբուսը ստեղծեց Մաջլիս ալ–Շուրա՝ Խորհրդատվական խորհուրդ: Սկզբում այն կազմված էր 45 անդամներից, և բոլորին էլ նշանակում էր սուլթանը: Նա է նշանակում նաև սպիկերին՝ Խորհրդատվական խորհրդի նախագահին. Նա օժտված չէր օրենսդրական լիազորություններով և հանդիսանում էր խորհրդատվական մարմին:

Ինչ վերաբերում է դատական իշխանությանը, ապա հիմնվեց Օմանի Գերագույն դատարանը, որը վերահսկում է արդարադատության բնագավառը. Իսկ արդարադատությունն իրականացվում է աշխարհիկ և իսլամական՝ շարիաթի օրենքների և սովորույթների հիման վրա:

Այդ բոլորով հանդերձ, ինչը պետք է դրական գնահատել, հարկ է նշել. որ Օմանը չուներ հիմնական օրենք՝ գրավոր սահմանադրություն: Հենց նրա բացակայությունը դժգոհության պատճառ դարձավ երկրի ներսում: Ժողովրդական դժգոհության մյուս պատճառը սուլթանի բացարձակ իշխանությունն էր, որը նա չէր ցանկանում կիսել պետական որևէ մարմնի, այսինքն՝ պառլամենտի հետ: Դժգոհություն էր դրսևորվում նաև մուսուլմանական ծայրահեղականների և այն ուժերի կողմից, որոնք դեմ էին կառավարման համակարգում սուլթան Կաբուսի նորամուծություններին: Ռազմաշունչ իսլամական ուժերին սանձահարելու նպատակով սուլթան Կաբուսը 1994 թ. ձերբակալեց 200 օմանցիների:

Սուլթան Կաբուսը, հաշվի առնելով գրավոր սահմանադրություն ունենալու օմանցիների պահանջը, 1996 թ. նոյեմբերի 6–ին հաստատեց «Պետության հիմնական կանոնադրությունը» և այն ժողովրդին ներկայացրեց որպես սահմանադրություն: Ոմանք դա անվանում են Օմանի առաջին գրավոր սահմանադրությունը: Դրա ընդունումից հետո սկսվեց պետական կառուցվածքի և հասարակության արդիականացման նոր փուլը: Նա օմանցիներին երաշխավորում է որոշակի ազատություններ և

իրավունքներ, որոնք, սակայն, սահմանափակված են շարիաթի և սովորութային իրավունքի շրջանակներով:

Փոփոխություններ տեղի ունեցան օրենսդիր մարմնի՝ Խորհրդատվական խորհրդի կառուցվածքում և խնդիրներում: Նրա անդամների թիվը հասցվեց 83–ի, որոնք ընտրվում են ժողովրդի կողմից և ոչ թե նշանակվում սուլթանի կողմից, ինչպես մինչ այդ էր: Սահմանվեցին ընդհանուր ընտրություններ, և ընտրվելու իրավունք ստացան 21 տարին լրացած բոլոր օմանցիները՝ տղամարդիկ և կանայք, բացի զինվորականներից և անվտանգության մարմինների աշխատողներից:

2000 թ. սեպտեմբերին նոր հիմունքներով կայացան Խորհրդատվական խորհրդի առաջին ուղղակի ընտրությունները, որոնց մասնակցեցին Օմանի 100 հազար տղամարդիկ և կանայք: Ընտրված 83 դեպուտատներից երկուսը կին էին: Սահմանվեց, որ Մաջլիս ալ–Շուրան ընտրվում է չորս տարի ժամանակով: Նա ունի սահմանափակ օրենսդիր իրավունքներ և կարող է քննարկել տնտեսական զարգացմանը և սոցիալական ու սպասարկման ոլորտին վերաբերող օրենսդրական ակտեր՝ նախքան նրանց օրենքի ուժ ստանալը: Բայց հիմնականում նա համարվում է խորհրդատու մարմին: Վերջին ընտրությունները կայացել են 2003 թ.:

2000 թ. դեկտեմբերին սուլթանի հրամանագրով Օմանում հիմնվեց Պետական խորհուրդ՝ Մաջլիս ալ–Դավլա, որի բոլոր 48 անդամներին նշանակում է սուլթանը. նրանցից 5–ը կանայք են: Մաջլիս ալ–Դավլայի ստեղծումով Օմանի օրենսդիր մարմինը վերածվեց երկպալատանի պառլամենտի, ընդ որում Պետական խորհուրդը համարվում է բարձրագույն պալատ, իսկ Խորհրդատվական խորհուրդը՝ ստորին պալատ:

Ահա այսպիսին է իշխանության թևերի տարանջատման ընդհանուր պատկերը Օմանում, որ իրականացվեց 1970–2000 թթ. ընթացքում սուլթան Կաբուս իբն Սաիդի նախաձեռնությամբ: Նա, արտաքուստ նման լինելով ժամանակակից աշխարհում ընդունված մոդելներին, այդուհանդերձ, ուներ ընդգծված տարբերություններ, հատկապես օրենսդիր մարմնի իրավասությունների հարցում, որոնք բավականին սահմանափակված էին: Սահմանափակումներ մնացին նաև ազատությունների հարցում, մասնավորապես լեգալ գործունեության ազատություն չտրվեցին քաղաքական կուսակցություններին, արհմիություններին և զանազան միություններին ու կազմակերպություններին:

Վերոնշյալ վերափոխություններն իրագործելիս սուլթան Կաբուսը ձգտում էր դրանք այնպես իրականացնել, որ հաշվի առնվեն ցեղերի,

էթնիկական խմբերի և շրջանների շահերը, գտնել դրանք հավասարակշռելու ձևեր, որը նրան ընդհանուր առմամբ հաջողվեց: Այդ հանգամանքները սուլթանը նկատի էր առնում կառավարությունը և պառլամենտի երկու պալատները ձևավորելու ժամանակ, պետական ապարատը համալրելու ընթացքում և այլ հարցեր լուծելու ժամանակ:

Այդ բոլորը նպաստեց կայունության ամրապնդմանը և սուլթանի հեղինակության բարձրացմանը երկրի ներսում: Դրան նպաստեցին նաև Դուֆարի ապստամբության ավարտը, խաղաղության հաստատումը և նրա ներգրավումը համաօմանյան գործընթացներին: Կայունության ամրապնդմանը նպաստեց նաև այն հանգամանքը, որ սուլթան Կաբուսը հեռատեսորեն ներում շնորհեց նախկին վարչակարգի բոլոր հակառակորդներին, անգամ նրանց, ովքեր մասնակցել էին ապստամբական շարժումներին:

Վերափոխումների մյուս գոտին սոցիալական և տնտեսական ոլորտն էր: Այստեղ սուլթան Կաբուսի դեմ կանգնած էին երեք գլխավոր «թշնամիներ»՝ համաճարակային հիվանդությունները, անգրագիտությունը և աղքատությունը: Սուլթանը լավ էր հասկանում, որ մինչև չհաղթահարվեն այդ երեք «թշնամիները», Օմանը կշարունակի խարխափել միջնադարյան հետամնացության ճիրաններում և չի կարող ոտք դնել արդիականացման ուղին: Եվ նա համարձակորեն ձեռնամուխ եղավ այդ դժվարագույն խնդրի իրականացմանը սկսելով տնտեսական բարեփոխումներից և զարգացումից:

Դրա համար անհրաժեշտ էին մեծաքանակ ֆինանսական միջոցներ, որոնք գտնվեցին երկրի ներսում: Այդ նպատակի համար սուլթան Կաբուսը շրջանառության մեջ դրեց և օգտագործեց նավթից ստացվող եկամուտները, որոնք նավթարդյունահանման և նավթի արտահանման ծավալների մեծացմանը զուգընթաց տարեցտարի աճում էին, երբեմն ֆանտաստիկ արագությամբ: Սուլթանը մեծ ուշադրություն դարձրեց նաև գազի արդյունաբերության զարգացմանը, որը դարձավ ֆինանսական հասույթների մյուս կարևոր աղբյուրը: Օմանին ֆինանսական օգնություն ցույց տվեցին նաև Քուվեյթը և Արաբական Միացյալ Էմիրությունները: Իրենց դերը խաղացին ապստամբության ավարտը և խաղաղության հաստատումը Դուֆարում, որը հնարավորություն տվեց պատերազմական գործողությունների համար նախատեսված ֆինանսական և նյութական հնարավորություններն ուղղել սոցիալ–տնտեսական զարգացման ոլորտ:

Այդ նոր քաղաքականությունը տվեց իր դրական արդյունքները: Նավթի և գազի արդյունաբերության կողքին, որոնք ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցված արդյունաբերական ճյուղեր են, առաջացան նաև նոր ճյուղեր՝ նավթաքիմիական և մետաղամշակման, հիմք դրվեց նաև ինֆորմացիոն տեխնոլոգիաների յուրացմանը և օգտագործմանը: Մեծ թափ ստացավ ենթակառույցների զարգացումը և արդիականացումը: Կառուցվեցին միջազգային տրանսնացիոնալ առաջնակարգ նավահանգիստներ, որոնք դարձան Օմանի տնտեսական դարպասները նպաստելով նրա ներգրավմանը միջազգային առևտրի ոլորտ: Գլխավոր նավահանգիստներն են Միևնա Կաբուսը և Սալալահը: Կառուցվեցին նոր ճանապարհներ, օդանավակայաններ, նավթամուղներ, գազամուղներ և այլն: Օմանում գործում են 136 օդանավակայաններ: Սակայն դրանցից միայն 6–ն են, որ ունեն արդիական թռիչքադաշտ և թռիչքուղի: Նավթամուղի երկարությունը կազմում է 3212 կմ, իսկ գազամուղինը 3754 կմ:

Սեփականաշնորհվեցին ձեռնարկությունները, և սկսվեց նաև տնտեսության դիվերսիֆկացիայի գործընթացը. Օմանը որդեգրեց ազատական շուկայական հարաբերություններ և տնտեսության կառավարման նոր մեթոդներ (մենեջմենթ, մարքետինգ և այլն), որը նրան հնարավորություն տվեց 2000 թ. դառնալ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ:

Տնտեսության և ենթակառույցների զարգացումը հնարավորություն տվեց ստեղծել նոր աշխատատեղեր և զգալիորեն կրճատել գործազրկությունը, թեև նա շարունակում է մնալ բարձր: 2004 թ. տվյալներով գործազրկությունն Օմանում կազմել է 15%: Գործազրկությունը կրճատելու նպատակով Օմանի իշխանությունները տնտեսության ոլորտում ներգրավված օտարերկրյա աշխատողներին սկսեցին փոխարինել տեղացիներով:

Համեմատաբար նվազ են արդյունքները գյուղատնտեսության ոլորտում, որը կապված է երկու հանգամանքի հետ՝ բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները և ցեղային ավագանու ուժեղ դիրքերը գյուղական վայրերում, որոնք շահագրգռված չեն արմատական փոփոխություններով գյուղատնտեսության մեջ, քանի որ դա կարող է խարխլել նրանց տիրապետող դիրքերը: 2000–ականների սկզբներին Օմանում վարելահողերը կազմել են ընդհանուր հողատարածքների ընդամենը 0,12%–ը, իսկ ջրովի հողատարածքները ընդամենը 620 քառ. կմ:

Օմանի տնտեսության մեջ տեղի ունեցած փոփոխությունների պատկերի արտացոլումն է հանդիսանում համախառն ներքին արդյունքի կառուցվածքը: 2004–2005 թթ. տվյալներով ՀՆԱ–ի մեջ գյուղատնտեսության բաժինը կազմել է 3,1%, արդյունաբերությանը՝ 41,1%, սպասարկումներինը՝ 55,8%. Սուլթան Կաբուսի կառավարության վերափոխումների քաղաքականության շնորհիվ արդյունաբերության բաժինը շեշտակիորեն բարձրացել է և մոտենում է համախառն ներքին արդյունքի համարյա կեսին, որը վատ ցուցանիշ չէ: Տնտեսության տեղաշարժերի դրական միտումի մասին է վկայում նաև այն փաստը, որ 2004 թ. ՀՆԱ–ն դրամական արտահայտությամբ կազմել է 38 մլրդ 9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ըստ շնչի՝ 13 հազ. 100 ԱՄՆ դոլար: Թեև այդ թվերով Օմանը բավականին զիջում է Ծոցի հարևան մյուս երկրներին, հատկապես Քուվեյթին և ԱՄԷ–ին, այդուհանդերձ, դրանք ավելի բարձր են, քան աշխարհի շատ ու շատ երկրներում:

Դա խոսում է նաև այն մասին, որ աղքատության մակարդակը Օմանում խիստ նվազել է: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ Օմանի 2004 թ. պաշտոնական վիճակագրության մեջ «Աղքատության շեմից ներքև բնակչություն» սյունակում գրված է «Չկա»

Օմանում կիրառվող վերափոխումների և արդիականացման քաղաքականության մեջ մեծ տեղ է հատկացվում անգրագիտության վերացմանը և ազգային կադրերի պատրաստմանը: Մեծ ծավալներ ընդունեց դպրոցաշինարարությունը և երեխաների ներգրավումը դպրոցական ուսումնառության ոլորտ: Հրապարակված տվյալները ուղղակի տպավորիչ են: Այսպես, օրինակ 1975 թ. Օմանում գործել է 214 դպրոց՝ 56 հազար աշակերտով, իսկ 2002 թ. արդեն գործում էր 1187 դպրոց, որտեղ ընդգրկված էին 629 հազար աշակերտ և 33 հազար 614 ուսուցիչ Պաշտոնական տվյալներով 2005 թ. գրագետ էր Օմանի բնակչության 75,8%–ը:

Ազգային կադրերի պատրաստման գործում մեծ է Կաբուսի անվան Օմանի համալսարանի դերը, որն ունի գրականության և հասարակական գիտությունների, գյուղատնտեսության, առևտրի և տնտեսագիտության, մանկավարժության, ինժեներական, բժշկության և այլ ֆակուլտետներ: Բարձրագույն կրթություն ստանալու համար կառավարության օժանդակությամբ զգալի թվով օմանցիներ են սովորում արտասահմանյան համալսարաններում:

Զգալի տեղաշարժեր կատարվեցին նաև առողջապահության ոլորտում, որտեղ ձևավորվում է համապատասխան առողջապահական համակարգ: Օմանում գործում է 50–ից ավելի հիվանդանոց, որոնք հագեցված են ժամանակակից բժշկական տեխնիկայով և համապատասխան բժշկական անձնակազմով: Բժշկության բնագավառում հիմնական խնդիրներից մեկն է կանխել համաճարակները, նվազեցնել երեխաների մահացությունը և ձգտել երկարացնել կյանքի միջին տևողությունը:

Կաբուսի ներքին քաղաքականության մեջ վերափոխումների և արդիականացման տեսանկյունից շատ կարևոր էր մի շարք ազատությունների կոպիտ սահմանափակումների վերացումը, որ մտցրել և դաժանությամբ կիրառում էր նախկին սուլթանը՝ նրա հայրը: Շատ օմանցիներ, չդիմանալով այդ պայմաններին, հեռացել էին երկրից: Դրանց վերացումից հետո նրանք սկսեցին աստիճանաբար վերադառնալ հայրենիք, մանավանդ այն բանից հետո, երբ նոր սուլթանը ներում շնորհեց և խոստացավ չհետապնդել նրանց, ովքեր հանդես էին եկել նախկին վարչակարգի դեմ: Օմանում արդեն 1970 թ. սկսեցին թույլատրել ռադիոհաղորդումներ, որոնք կազմակերպվեցին անգլիական Բի–Բի–Սի ռադիոընկերության օգնությամբ: Դրանք հեռարձակվում են արաբերեն, պարսկերեն և ուրդուերեն լեզուներով: Դպրոցների ցանցի զարգացումը և գրագիտության կտրուկ աճն անհմաստ, եթե ոչ անհեթեթ էին դարձնում նախկին սուլթան Սաիդ իբն Թայմուրի ժխտողական մոտեցումը գրքի նկատմամբ և այլն: Վերացվեց նաև ստրկությունը:

Այդ բոլորն անհրաժեշտ քայլեր են Օմանի արդիականացման ճանապարհին: Այդ բնագավառում շատ բան է արվել, բայց դեռևս շատ բան էլ կա անելու:

3. Օմանի արտաքին քաղաքականությունը՝ մեկուսացումից անցում ակտիվ միջազգային և տարածաշրջանային քաղաքականության

1970 թ. շրջադարձային եղավ նաև Օմանի արտաքին քաղաքականության բնագավառում, որը նույնպես ենթարկվեց արմատական փոփոխությունների: Մինչ այդ Օմանը մեկուսացված էր արտաքին, այդ թվում և արաբական աշխարհից: Մեկուսացման այդ քաղաքականությունը հետևողականորեն էր իրականացնում հատկապես սուլթան Սաիդ իբն Թայմուրը: Նրա համար միջազգային հարաբերությունները սկս-

վում և վերջանում էին Մեծ Բրիտանիայի հետ հարաբերություններով: Այդ պատճառով էլ Օմանը չէր վայելում որևէ հեղինակություն միջազգային և տարածաշրջանային հարաբերություններում և որևէ կշիռ չուներ:

Դրությունը փոխվեց, երբ Կաբուսը 1970 թ. դարձավ սուլթան և սկսեց վերափոխումների և Օմանի արդիականացման քաղաքականությունը, որն իր ոլորտի մեջ ներգրավեց նաև արտաքին քաղաքականությունը: Լինելով պրագմատիկ գործիչ, նախապատվությունը տալով Օմանի հարաբերությունների ընդարձակմանը աշխարհի տարբեր երկրների հետ և կանգնած լինելով Օմանի դիրքերն արտաքին հարաբերությունների ոլորտում բանակցությունների և փոխզիջումների միջոցով կարգավորելու փորձված սկզբունքի վրա նա բեկում առաջացրեց իր սուլթանության արտաքին հարաբերություններում: Դրա արդյունքում Օմանը կարողացավ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում հաղթահարել քաղաքական մեկուսացումը և դուրս գալ միջազգային լայն ասպարեզ: Մեկուսացման քաղաքականությանը փոխարինելու եկավ պրագմատիկ, իրատեսական քաղաքականությունը, և շատ չանցած սուլթան Կաբուսը ապացուցեց, որ ինքն այդ քաղաքականության մեծ վարպետն է:

Ելակետ ունենալով այն տեսակետը, որ «Օմանը ռեգիոնալ պետություն է» սուլթան Կաբուսը արագորեն դիմեց գործնական քայլերի, որոնց մեջ առաջին հերթին պետք է առանձնացնել երկուսը: Առաջինը՝ Օմանը 1971 թ. ընդունվեց ՄԱԿ–ի անդամ, իսկ երկրորդը՝ այդ նույն թվականին նա անդամակցեց Արաբական պետությունների լիգային: Նա դրանով միանգամից երկու խնդիր լուծեց՝ դրեց համաշխարհային հանրությանը Օմանի անդամակցության լիիրավ անդամ դառնալու հիմքերը՝ մի կողմից, և դարձավ արաբական պետությունների ընտանիքի օրինական անդամ՝ մյուս կողմից:

Դա ունեցավ նաև մեկ կարևոր պատմական նշանակություն: Օմանը դադարեց լինել բրիտանական պրոտեկտորատ, և ամբողջացան նրա անկախությունն ու ինքնիշխանությունը:

Քաղաքական մեկուսացումից դուրս գալը չէր նշանակում հարաբերությունների խզում, սառեցում և կամ սահմանափակում Մեծ Բրիտանիայի հետ: Նա պահպանեց այդ հարաբերություններն իրենց ամբողջ ծավալով և Մեծ Բրիտանիան շարունակում է մնալ Օմանի սուլթանության գլխավոր գործընկերը միջազգային հարաբերություններում: Բայց դրա կողքին սերտ հարաբերություններ ձևավորվեցին արևմտյան, ասիական, աֆրիկյան և ամերիկյան մի շարք պետությունների հետ: Դրանց

շարքում պետք է առանձնացնել հարաբերություններն ԱՄՆ–ի հետ: 1980 թ. սուլթան Կաբուսը՝ առաջինն արաբական երկրներից, ռազմական համագործակցության պայմանագիր կնքեց ԱՄՆ–ի հետ. ԱՄՆ–ն իրավունք ստացավ օգտագործել Օմանի օդանավակայանները և նավահանգիստները, զինվորական վարժություններ իրականացնել, որի դիմաց Օմանը նրանից ստացավ տնտեսական և ռազմական օգնություն: Այդ պայմանագիրը 2000 թ. վերանորոգվեց 10 տարի ժամանակով:

Օմանը համագործակցություն հաստատեց նաև Չինաստանի, Խորհրդային Միության և նրա հաջորդի՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի և այլ երկրների հետ:

Օմանի, ինչպես և արաբական յուրաքանչյուր այլ երկրի համար առանձնահատուկ ոլորտ են հարաբերություններն արաբական երկրների հետ: Օմանը ձգտում է իր քաղաքական, տնտեսական, առևտրական և մշակութային հարաբերությունները զարգացնել նրանց հետ՝ մի կողմից, և պահպանել իր ինքնուրույն մոտեցումները համաարաբական խնդիրների նկատմամբ՝ մյուս կողմից չխուսափելով հարաբերությունների որոշ սրացումից արաբական այս կամ այն երկրի հետ:

1981 թ. Օմանը Ծոցի արաբական մյուս հինգ պետությունների՝ Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի, Բահրեյնի, Կատարի և ԱՄԷ–ի հետ միասին դարձավ Ծոցի համագործակցության խորհրդի այդ յուրատեսակ միջարաբական կազմակերպության, հիմնադիր անդամ, որի աշխատանքներին նա ցուցաբերում է գործունյա մասնակցություն.

Սուլթան Կաբուսի ակտիվ և պրագմատիկ քաղաքականության շնորհիվ Օմանը կարողացավ կարգավորել իր հարաբերությունները ԱՄԷ–ի և Իրանի հետ սահմանների դեմարկացիայի հարցում, որի վերաբերյալ կնքվեցին համապատասխան համաձայնագրեր: Հատկապես պետք է առանձնացնել Հորմուզի նեղուցի վերաբերյալ Իրանի և Օմանի միջև ստորագրված սահմանային պայմանագիրը, որը կարգավորեց երկու երկրների փոխհարաբերություններն այդ ցավոտ խնդրում: Դրա կարևորությունն ավելի է ընդգծվում, եթե հիշեցնենք, որ նավթի համաշխարհային տրաֆիկի երկու երրորդն իրականացվում է Հորմուզի նեղուցով: Եվ Օմանը հավատարիմ մնաց այդ պայմանագրին այն բանից հետո նս, երբ 1979 թ. Իրանում տապալվեց շահական վարչակարգը, և իշխանությունն անցավ այաթոլլահ Խոմեյնիին:

Սուլթան Կաբուսը կարողացավ հաջողություններ գրանցել մի այնպիսի բարդ խնդրում, ինչպես հարաբերությունների կարգավորումը

Հարավային Եմենի՝ Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության հետ: Ինչպես նշել ենք, ԵԺԴՀ–ն երկար ժամանակ օգնություն էր ցույց տալիս Օմանի վարչակարգի հակառակորդներին, այդ թվում և Դուֆարի ապստամբներին. Սուլթան Կաբուսը կարողացավ հասնել այն բանին, որ եմենցիները նվազեցրին, իսկ ապա նաև լրիվ դադարեցրին իրենց օգնությունը օմանցի ապստամբներին, և 1983 թ. դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Օմանի սուլթանության և ԵԺԴՀ–ի միջև: Բայց նրանց միջև սահմանների կարգավորման խնդիր կար, որը դրականորեն լուծվեց 1992 թ., երբ արդեն Հյուսիսային և Հարավային Եմենները միավորվել էին, և ստեղծվել էր Եմենի Հանրապետություն միասնական պետությունը:

Դառնալով արաբական ընտանիքի անդամ սուլթան Կաբուսը, այդուհանդերձ. այնպիսի կարևոր հարցերում, ինչպիսիք են արաբա–իսրայելական փոխհարաբերությունները, արաբա–իսրայելական կոնֆլիկտի կարգավորման խնդիրը կամ պաղեստինյան հարցը և այլն, պահպանում էր իր ինքնուրույն մոտեցումը և լող չէր տալիս համաարաբական ընդհանուր հոսանքով: Նա հրապարակավ պաշտպանեց Իսրայելի հետ հաշտության հասնելու Եգիպտոսի պրեզիդենտ Սադատի ջանքերը և 1978 թ. կնքված Քեմպ Դևիդի պայմանագիրը. չնայած այն խիստ քննադատությանը, որին նա ենթարկվեց արաբական մի շարք երկրներում: Իսկ երբ արաբական երկրների մեծ մասը խզեց դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի հետ, սուլթան Կաբուսը հրաժարվեց դիմել նման քայլի և չմասնակցեց արաբական պետությունների 1978 թ. Բաղդադի գագաթնաժողովին, որտեղ պաշտոնապես դատապարտվեց Սադատը Իսրայելի հետ համաձայնության գալու համար:

Սուլթան Կաբուսը գտնում է նաև, որ անհրաժեշտ են պաղեստինյան–իսրայելական ուղղակի բանակցություններ դա դիտելով պաղեստինյան կոնֆլիկտի կարգավորման լավագույն ճնը: Դրա համար նա նույնպես քննադատության արժանացավ: Եվ երբ Օսլոյի գաղտնի բանակցությունների հիման վրա 1993 թ. համաձայնագիր ստորագրվեց Իսրայելի և ՊԱԿ–ի միջև, Օմանը հանդես եկավ դրա պաշտպանությամբ: Սուլթան Կաբուսն ընդհանրապես Իսրայելի հետ բանակցությունների կողմնակից է և ելնելով այդ մոտեցումից նա իսրայելական պատվիրակությանը 1994 թ. հրավիրեց մասնակցել Օմանում տեղի ունեցած համաժողովին, որտեղ քննարկվեցին ջրի աղազերծման հարցերը: Դրան հաջորդեց սուլթան Կաբուսի հրավերով Իսրայելի վարչապետ

Իցակ Ռաբինի պաշտոնական այցը Օման: Դա պատասխանատու նախաձեռնություն էր, եթե նկատի ունենանք, որ Ծոցի համագործակցության երկրներն առանձին և հավաքականորեն չէին ճանաչում Իսրայել պետությունը:

Կաբուսի սուլթանությունը ժամանակագրական առումով համընկավ պատմական այն ժամանակահատվածի հետ, երբ արաբական աշխարհի մերձավորարևելյան շրջանում տեղի ունեցան ցնցող երևույթներ, որոնցից առաջինը իրանա–իրաքյան 1980–1988 թթ. պատերազմն էր: Ինչպես արաբական մյուս երկրների, այնպես էլ Օմանի առջև կանգնեց պատերազմի հանդեպ կողմնորոշվելու խնդիրը: Արաբական երկրների ճնշող մեծամասնությունը հանդես եկավ ի պաշտպանություն Իրաքի՝ նրան ցույց տալով ռազմական, նյութական և ֆինանսական լայն օգնություն: Պատերազմի սկզբնական փուլում եղավ մի պահ, երբ Օմանը նույնպես Իրաքի կողմն էր, բայց որոշ ժամանակ անց նա փոխեց իր դիրքորոշումը և գրավեց չեզոք դիրք՝ գտնելով, որ դա լավագույնս է համապատասխանում Օմանի շահերին: Հարկ է նշել, որ Օմանը մշտապես զգույշ քաղաքականություն է վարել Իրանի նկատմամբ թե՛ շահի, և թե՛ Խոմեյնիի ու նրա հաջորդների կառավարման շրջանում: Մասկատում լավ են հասկանում Իրանի կարևոր դերը և ռազմատնտեսական հզոր ներուժը, որի հետ խաղ անելը վտանգավոր է: Մյուս կողմից սուլթան Կաբուսը լավ է հիշում այն մեծ օգնությունը, որ Իրանը նրան ցույց տվեց Դուֆարի ապստամբության շրջանում:

Իսկ Քուվեյթի դեմ Իրաքի ագրեսիայի ժամանակ՝ 1990–1991 թթ., Օմանը միացավ ԱՄՆ–ի գլխավորած կոալիցիային և նրա մեջ մտած արաբական այն երկրներին, որոնք դատապարտում էին Իրաքի ագրեսիան, պահանջում Քուվեյթի անկախության և տարածքային ամբողջականության վերականգնումը, և որոնց ջանքերի շնորհիվ Իրաքը պարտություն կրեց, Քուվեյթն ազատագրվեց իրաքյան օկուպացումից ու վերականգնեց իր անկախությունը:

Օմանը, համաձայն ամերիկյան–օմանյան ռազմական համագործակցության պայմանագրի, իր ռազմաօդային և ռազմածովային բոլոր հնարավորությունները դրեց ԱՄՆ–ի տրամադրության տակ Իրաքի դեմ 2003 թ. սկսված պատերազմի և Սադամ Հուսեյնի վարչակարգի տապալման ժամանակ:

Օմանը հետաքրքրություններ ունի նաև միջազգային այլ ոլորտներում: Նա միջազգային մի շարք կազմակերպությունների անդամ է,

վարում է օտար կապիտալ ներդրումներն Օմանի տնտեսության մեջ խրախուսելու քաղաքականություն, զարգացնում է առևտուրը ոչ միայն իր անմիջական հարևան և մերձակա, այլև հեռավոր երկրների հետ: Արտահանման բնագավառում Օմանի գլխավոր գործընկերներն են Չինաստանը, Ճապոնիան, Թաիլանդը. իսկ ներմուծման բնագավառում՝ Ճապոնիան, Իտալիան, Գերմանիան և ԱՄՆ–ը:

Օմանը 1991 թ. դեկտեմբերի 28–ին ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, և երկու երկրների միջև հաստատվել են դիվանագիտական հարաբերություններ: Այդ կապակցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը Մոսկվայում Օմանի Սուլթանության դեսպանությանը 1992 թ. հունվարի 28–ին հղած նամակում նշում էր, որ «Հայաստանի Հանրապետության կառավարությունը երախտագիտությամբ ընդունում է Օմանի կառավարության պատրաստակամությունը երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ՝ ի շահ երկկողմանի համագործակցության և երկու երկրների ժողովուրդների ավանդական բարեկամական կապերի հետագա ամրապնդման»:

Այդուհանդերձ, հայ–օմանական հարաբերությունները գտնվում են դեռևս զարգացման նախնական փուլում, սակայն ունեն մեծ հեռանկարներ:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ՎԵՐԱԴԱՐՁ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՏԵՐԱԲԵՄ: ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ, ՆՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄՆԵՐ

Եվ այսպես...

Ավարտին մոտեցավ «Արաբական երկրների պատմության» քառահատորյակը, որն ընդգրկում է արաբների 1400–ամյա բազմահարուստ և ինքնատիպ պատմությունը՝ VII–XX դարերը: Հետևում մնաց մեր տասնամյակների տքնաջան աշխատանքը: Սկսելով համեմատաբար երիտասարդ հասակում մենք ևս յուրաքանչյուր հատորի հետ տարիքներս առանք, մեծացանք: Ամեն մի հատորը ինքնին լինելով որոշակի փուլ մեր գիտական աշխատանքում, միաժամանակ հրաժեշտի մի կայան էր երիտասարդ տարիքին: Կյանքի ճեպընթացն աննկատելիորեն, բայց անողոք արագությամբ սլանում է առաջ, և յուրաքանչյուր հատոր մի յուրօրինակ զանգ էր, որն ազդարարում էր նոր ժամանակների մոտեցումը: Ժամանակի ընթացքում տքնաջան աշխատանքին ավելացավ անքնությունը: Դրանում նույնպես որևէ արտառոց բան չկա: Կյանքը գնում է բնական հունով: Գիտական մաքառումն էլ իր բնական հունն ունի, և երանի նրանց, ովքեր այդ հունից դուրս չեն նետվում.

Մենք մշտապես ձգտել ենք մնալ այդ բնական հունում՝ առանց երանության ակնկալության: Մեզ մշտապես մտահոգիչը եղել է հասկացված լինելու ցավը, որը գիտությանը նվիրված մարդու մշտական ուղեկիցն է:

Այժմ մեզ մնում է մի վերջին հայացք նետել կատարված աշխատանքի վրա՝ ոչ թե անցած ուղին և մեր ուսումնասիրությունն ամփոփելու միտումով, կարծում ենք դրա անհրաժեշտությունը չկա, որն անխուսափելիորեն կրկնության կհանգեցներ, այլ մեր մտորումները կիսելու մեր հոգնատանջ ընթերցողի հետ՝ արաբների դերի և մերօրյա խնդիրների տեսանկյունից:

Արաբները որպես համահավաք քաղաքական և պետական մեկ ամբողջություն, պատմության թատերաբեմում առաջին անգամ հայտնվեցին VII դարում, երբ անցում կատարեցին «Ջահիլիայից»՝ մթության, խավարի և անգիտության շրջանից, իսլամի դարաշրջանը մարդկությանը պարգևելով մի նոր համաշխարհային կրոն՝ իսլամը: Դրան զուգահեռ նույն դարաշրջանում նրանք ստեղծեցին իրենց պետությունը, որը շատ կարճ ժամանակաշրջանում վերածվեց հզոր կայսրության՝ Արաբական խալիֆայության, որը ձգվում էր Հնդկական օվկիանոսից մինչև Ատլանտյան օվկիանոս՝ ընդգրկելով աշխարհի երեք մայրցամաքները՝ Ասիան, Աֆրիկան և Եվրոպան: Դա իր ժամանակի ամենահզոր կայսրություններից մեկն էր, որը տնօրինում էր աշխարհի շատ երկրների և ժողովուրդների ճակատագիրն ու թելադրում միջազգային համակեցության կանոնները: VII–XVI դարերում աշխարհում չկար մի այնպիսի ուժ, որը հաշվի չնստեր նրա հետ:

Սակայն արաբական կայսրությունն ունեցավ դրամատիկ ավարտ: Նա տկարացավ ներքնապես; աստիճանաբար թուլացավ, տրոհվեց առանձին բեկորների և ընկավ տարածաշրջանում հայտնված զանազան օտար նվաճողների տիրապետության տակ, որի վերջին ակորդը հանդիսացավ օսմանյան տիրապետությունը: Օսմանյան բարբարոսական լուծն արաբների ստեղծած ինքնատիպ և իր նախորդը չունեցող քաղաքակրթության վզին հագցված մնաց ուղիղ 402 տարի՝ 1516–1918 թթ.: Այդ պահից սկսած արաբները դադարեցին անկախ պետական կազմավորում, ինքնուրույն քաղաքական գործոն լինելուց և լրացրեցին նվաճված ու ենթակայության վիճակում հայտնված երկրների ու ժողովուրդների շարքերը: Նրանք անհետացան պատմության թատերաբեմից: Խոսքն այստեղ արաբ ժողովրդի անհետանալու մասին չէ, այլ նրա քաղաքական ինքնուրույն ուժ լինելու մասին: Նա, կորցնելով պետականությունը, դադարեց ներազդել համաշխարհային գործընթացների վրա և հրամայողի ու թելադրողի վիճակից, ինչպես եղել էր նախորդ դարերում, հայտնվեց օտարին ենթակա և նրա հրամանները կատարողի ստորադաս կարգավիճակում: Նա այլևս միջազգային իրավունքի սուբյեկտ չէր: Դա մեծ ողբերգություն էր արաբների համար:

Ողբերգության խորությունն ավելի էր ընդգծվում և վերածվում հուսահատության ի տես այն իրողության, որ նվաճող օսմանցի թուրքն իր աղոթքն անում էր նվաճված արաբի լեզվով՝ արաբերենով, երդվում արաբի ստեղծած սրբազան գրքով՝ Կորանով, և ղեկավարվում արաբի

սահմանած կրոնական օրենքով, որը կոչվում է շարիաթ: Այդ բոլորով հանդերձ արհամարհելով արաբին որպես այդպիսին:

Արաբները, իհարկե, չէին մոռացել իրենց պատմությունը. Նրանք իրենց սրտերում, մտքի և հիշողության ծալքերում անմար էին պահում արաբական էթնիկ ինքնության գաղափարն ու իրենց փառավոր անցյալով հպարտանալու անմեռ զգացմունքը: Դրա առաջին պոռթկումը եղավ XIX դարի կեսերի արաբական վերածննդի՝ Նահդայի շարժումը, որը բորբոքեց արաբիզմի՝ արաբականության կրակը և ինչպես մի ղողանջ ազդարարեց նոր փուլի սկզբնավորումը արաբական ինքնագիտակցության արթնացման ճանապարհին. գիտակցություն, որն այլևս չէր համակերպվում կրավորականության, ենթակայության և ստորադասության կարգավիճակի հետ և քաղաքական թատերաբեմ վերադառնալու լուրջ հայտ հանդիսացավ:

Այդ գաղափարի գործնական իրականացումն սկսվեց 1918 թվականից, երբ կործանվեց Օսմանյան կայսրությունը:

Արաբների նորագույն շրջանի պատմությունը կարելի է համարել պատմության թատերաբեմ կրկին որպես ինքնուրույն ուժ վերադառնալու պայքարի պատմություն: Արաբները քայլ առ քայլ, համառորեն և հետևողականորեն ընթանում էին դեպի այդ երազային նպատակակետը: Դեպի նպատակակետ այդ խմբակային վազքի ընթացքում նրանք մեկը մյուսի հետևից հատեցին վերջնագիծը և կտրեցին կանաչ ժապավենը: 1970–ական թվականների սկզբներին արաբական երկրներն արդեն ազատագրված էին օտարի տիրապետությունից: Եվ նրանք երկրորդ անգամ հայտնվեցին պատմության թատերաբեմում: Ասում ենք «նրանք», որովհետև պատմության թատերաբեմում հայտնվեց ոչ թե մեկ միասնական, այլ 18 անկախ արաբական պետություն.

Այսպիսով, եթե VII դարում արաբները պատմության թատերաբեմում հայտնվեցին անցում կատարելով Ջահիլիյայից դեպի աստվածապետություն, ապա XX դարի երկրորդ կեսերին նրանք կրկին պատմության թատերաբեմ դուրս եկան՝ անցում կատարելով գաղութային վիճակից անկախության կարգավիճակի: Դա պատմական նշանակություն ունեցող շրջադարձ էր արաբների համար և կարևոր իրադարձություն միջազգային հարաբերություններում:

Սակայն դրանով ավարտվում է նմանությունը կամ ընդհանրությունը այդ երկու գործընթացների միջև, որոնք ժամանակային առումով մեկը մյուսից բաժանված են առնվազն տասներեք դարով:

Արաբների վերադարձը պատմության և քաղաքականության թատերաբեմ իրենց անկախ 18 պետություններով միաժամանակ ուրախություն և տխրություն էր նրանց համար: Ուրախություն, քանի որ արաբները կարողացել էին թոթափել օտարի լուծր և ասպարեզում հայտնվել որպես ինքնուրույն ուժ: Տխրություն, որովհետև նրանք չկարողացան ստեղծել մեկ միասնական արաբական պետական կազմավորում՝ խալիֆայության, կայսրության, թագավորության և կամ հանրապետության ձևով: Հետևաբար, նրանց վերադարձը թատերաբեմ տեղի ունեցավ ոչ թե այնպես, ինչպես VII դարում՝ մեկ միասնական պետության տեսքով, այլ իրականացվեց բոլորովին նոր որակով և այլ մակարդակով: Նրանց հայտնությունը քաղաքական բեմահարթակում չկատարվեց միասնության սկզբունքով, այլ իրականացվեց բաժանվածության հիմքի վրա: Այդպիսին էր ՊԱՏՄՈՒԹՅԱՆ վճիռը, քանի որ Նորին Մեծություն Պատմությունը կրկնության ու միօրինակության ոխերիմ հակառակորդն է: Պատմության մեջ ոչինչ նույնությամբ կամ հարազատությամբ չի կրկնվում: Հավանաբար այն պատճառով, որ պատմական ընթացքը, չնայած առանձին խոտորումներին, անգամ հետընթաց շարժումներին, այդուհանդերձ, անկասելիորեն դեպի առաջ սուրացող ընթացք է, և հենց այդտեղ պետք է փնտրել պատմական վերընթացի և պրոգրեսի գաղտնիքը:

Արաբական 18 պետությունների կազմավորումը և նրանց հայտնվելը միջազգային ասպարեզում զգալիորեն փոխեց քաղաքական մթնոլորտն ամբողջ աշխարհում, ծնունդ տվեց նոր հիմնախնդիրների և սահմանեց նոր դերակատարումներ նրանց համար:

Հրապարակի վրա հայտնվեցին գաղափարական–քաղաքական նոր ուղղություններ և հոսանքներ, և արաբները աշխարհին պարգևեցին **նասերիզմը, պանարաբիզմը և արաբական սոցիալիզմն իր տարատեսակներով**՝ «եգիպտական սոցիալիզմ», «եմենական սոցիալիզմ», «բաասական սոցիալիզմ», «ալժիրյան սոցիալիզմ», «թունիսյան սոցիալիզմ», «լիբիական սոցիալիզմ» և այլն, որով ավելի հարստացավ միջազգային զանազան -իզմ–երի երկնապնակը: Դրանք այնպիսի տեսադրույթներ և գործնական քաղաքականության այնպիսի դրսևորումներ էին, որոնք նորություն էին մարդկության պատմության մեջ և իրենց նշանակությամբ դուրս էին գալիս զուտ արաբական շրջանակներից ու որպես երևույթ ներազդում XX դարի երկրորդ կեսի միջազգային զարգացումների վրա: Նրանք ունեին իրենց նվիրյալ, անգամ մոլի պաշտպանները, և անգիջում հակառակորդները ոչ միայն արաբական երկր-

ների ներսում, այլև նրանցից դուրս: Նկատի ունենալով այդ հանգամանքը կարելի է ասել, որ արաբների կողմից առաջ քաշված վերոնշյալ տեսադրույթները ամբողջ 1950–1990–ական թվականներին համաշխարհային քաղաքական օվկիանոսի ալեկոծման, ավելի ճիշտ՝ ալեբախման գլխավոր ազդակներից մեկը դարձան. Եվ պետք է նշել, որ փոթորկված օվկիանոսը դեռևս չի հանդարտվել:

Պատմության թատերաբեմում արաբական մոտ երկտասնյակ անկախ պետությունների հայտնվելով տեղի ունեցավ նս մի կարևոր նորամուծություն՝ **համաշխարհային մասշտաբով նոր կարգավիճակ սահմանվեց իսլամի համար, և նոր իրադրություն ստեղծվեց միջազգային փոխհարաբերություններում:** Իսլամն արաբական երկրներում դուրս եկավ մզկիթներից և ներխուժեց արաբական թագավորական–նախագահական պալատները, կառավարական կաբինետները, կադիների՝ դատավորների գրասենյակները: Նա վերածվեց **ինստիտուցիոնալ ուժի:** Արաբական համարյա բոլոր երկրներում իսլամը սահմանադրորեն հաստատվեց որպես պետական կրոն, իսկ նրա շարիաթական դրույթները դրվեցին արդարադատության իրականացման հիմքում: Իսլամը, ի դեմս 18 արաբական պետությունների, ձեռք բերեց վիթխարի քաղաքական, նյութական և ռազմական ներուժ, պետական ապարատն ու մարմիններն ամբողջապես օգտագործելու բացառիկ հնարավորություններ: Չմոռանանք նշել նաև, որ բացի արաբական երկրներից, Ասիայում և Աֆրիկայում նս կային մի շարք ազդեցիկ իսլամական երկրներ, ինչպես Իրանը, Ինդոնեզիան, Պակիստանը և ուրիշներ, որոնց միավորողը իսլամն է: Արդյունքում տեղի ունեցավ իր բնույթով արմատական, նախադեպը չունեցող երևույթ՝ իսլամը XX դարի կեսերին **զուտ կրոնից և կենսաձևից վերածվեց կրոնաքաղաքական գործոնի,** իսկ գիտության մեջ հայտնվեց **«քաղաքական իսլամ»** հասկացությունը, որն այնուհետև տեղափոխվեց քաղաքականության և միջազգային հարաբերությունների ոլորտը:

Այդ ֆենոմենն ունեցավ իր կազմակերպական ձևավորումը՝ ի դեմս 1960–ական թվականների վերջերին հիմնված Իսլամական կոնֆերանս կազմակերպության: Նրա նախաձեռնողը եղավ Սաուդյան Արաբիա աստվածապետությունը, որի սահմանադրությունը պաշտոնապես Կորանն է, իսկ միջուկը կազմեցին արաբական երկրները: Այդ ազդեցիկ իսլամական կազմակերպությունն իր շարքերում միավորում է աշխարհի բոլոր իսլամական պետությունները՝ մոտ 60 երկիր, այդ

թվում՝ նախկին խորհրդային իսլամական հանրապետությունները: Նրա գլխավոր խնդիրն է գլոբալ իսլամական քաղաքականության մշակումն ու կիրառումը, իսլամական երբեմնի փառքի ու հզորության վերականգնումը՝ ելակետ ունենալով նաև այն տեսակետը, որ բոլոր մուսուլմանական ժողովուրդները կազմում են մեկ ազգ, որը նրանք անվանում են «իսլամական ազգ»:

Ժամանակակից փուլում իսլամական գործոնի ուժեղացումը և վերածումը համաշխարհային երևույթի, իսլամական զանազան կազմակերպությունների ակտիվացումը տարբեր բնագավառներում անհնար է հասկանալ և բացատրել առանց հաշվի առնելու արաբական աշխարհում կատարված պետական և քաղաքական փոփոխությունների:

Արաբների, ավելի կոնկրետ՝ 18 արաբական պետությունների պատմության թատերաբեմ վերադառնալու ուղղակի արդյունք հանդիսացավ **միջազգային հարաբերությունների նոր տեսակի՝ միջարաբական հարաբերությունների ձևավորումը:** Դա միջազգային հարաբերությունների մի յուրահատուկ բնագավառ է, որի առաջացումով հարստացավ «միջազգային հարաբերություններ» հասկացությունը, և ավելի ընդլայնվեցին նրա շրջանակները: Նա ունի իր օրինաչափությունները, կազմակերպական ձևերը, դրսևորումները և նպատակները: Անդամակցելով ՄԱԿ–ին արաբական երկրները միաժամանակ ստեղծեցին Արաբական պետությունների լիգան, որը փակ է ոչ արաբ պետությունների առջև: Դա արաբների համընդհանուր շահերը միջազգային ասպարեզում պաշտպանող, նրանց համահավաք կամքն արտահայտող և նրանց միջև ծագող կոնֆլիկտները համահարթող մի կարևոր մարմին է, որի հետ հաշվի են նստում ինչպես միջազգային կազմակերպությունները, այնպես էլ ժամանակակից աշխարհի ամենաազդեցիկ պետությունները:

Ժամանակակից միջազգային հարաբերություններն անհնար է պատկերացնել առանց միջարաբական հարաբերությունների: Հավելենք, որ միջարաբական հարաբերությունները քաղաքականի հետ միասին ներառնում են նաև տնտեսական, բանկային–ֆինանսական, ռազմական և մշակութային ոլորտները: Իսկ դա ավելի է բարձրացնում միջարաբական հարաբերությունների կշիռն ու կարևորությունը ժամանակակից աշխարհում:

Միջազգային արենայում արաբների քաղաքական կշռի բարձրացմանը և տնտեսական ու ֆինանսական կարևորության ամրապնդմանը

մեծապես նպաստեց **նավթային գործոնը**: Արաբական աշխարհում են կենտրոնացված նավթի համաշխարհային հիմնական պաշարները: Նավթարդյունաբերության խոշոր կենտրոններ են Սաուդյան Արաբիան, Իրաքը, Քուվեյթը, Լիբիան, ԱՄՏ–ն, ինչպես նաև Ալժիրը, Թունիսը, Բահրեյնը, Կատարը, Օմանը և այլն: Մեր օրերում, երբ նավթը ստրատեգիական կարևոր հումք է և դարձել է համաշխարհային տնտեսության, ծովագնացության, ավիացիայի, ռազմական արդյունաբերության և այլ բնագավառների զարգացման թթվածինը, նրա վիթխարի պաշարների կենտրոնացված լինելը արաբական երկրներում, արդյունահանման և արտահանման հսկայական ծավալները հիմնավորապես փոխեցին արաբական երկրների դերակատարումը ժամանակակից աշխարհում: Դա մի հզոր զենք է նրանց ձեռքին, որի օգնությամբ նրանք իրենց կամքն են թելադրում աշխարհի երկրներին: Եթե VII–XVI դարերում արաբ բեդվիններն աշխարհին իրենց կամքն էին թելադրում «Ալլահ աքբար»՝ «Ալլահն ամենամեծն է» աղաղակներով, մերկացրած սրերով և իսլամի կանաչ դրոշների ներքո, ապա XX դարի կեսերից նրանք աշխարհին իրենց կամքն են թելադրում նաև նավթի գործոնի շնորհիվ: Արաբական երկրները, երբ հարկն է, նավթն օգտագործում են որպես պատժամիջոց այն պետությունների նկատմամբ՝ գլխավորապես արևմտյան, եթե գտնում են, որ նրանց քաղաքականությունը հակասում է արաբների ազգային շահերին կամ թշնամական բնույթ է կրում: Իսկ երբ հարկն է, նրանք մեծացնում կամ կրճատում են նավթի արդյունահանման ծավալները, բարձրացնում կամ իջեցնում են նրա համաշխարհային գները: Դա նրանք իրականացնում են ինչպես անհատապես, այնպես էլ **Նավթ արտահանող երկրների կազմակերպության՝ OPEC–ի միջոցով:** Աշխարհում եզակի այդ կազմակերպության ստեղծման, նրա սկզբունքների հաստատման և գործունեության մեջ վճռական դեր են խաղացել և շարունակում են խաղալ արաբական նավթատեր և նավթ արտահանող երկրները, որոնք և կազմում են նրա միջուկը: Դրան զուգահեռ հիմնվեց և գործում է Արաբական նավթ արտահանող երկրների կազմակերպությունը՝ OAPEC–ը:

Արաբական երկրները, որոնք նախկինում դարեր շարունակ իրենք էին կախման մեջ գտնվում օտար երկրներից, նավթային գործոնի շնորհիվ հասան նրան, որ մեր օրերում արդեն մյուս երկրներն են նրանցից կախման մեջ գտնվում:

Հիրավի, դա պատմական նշանակություն ունեցող փոփոխություն է միջազգային ասպարեզում արաբական երկրների դերակատարման մեջ:

Պատկերը թերի կմնա, եթե չավելացնենք, որ նավթից ստացվող ֆանտաստիկ եկամուտների շնորհիվ, որոնք միլիարդավոր դոլարներ են կազմում, արաբական երկրների մեծ մասը կարողացավ **սոցիալ–տնտեսական ոլորտում արդիականացման ուղիով ուղղակի ցատկ կատարել միջնադարից XX դար:** Նավթից ստացվող աննախադեպ շահույթների շնորհիվ արաբական երկրները, համենայն դեպս նրանց գերակշիռ մասը, վերածվեցին **համաշխարհային բանկիրի:** Նրանք իրենք են այժմ կապիտալ խոշոր ներդրումներ կատարում օտար երկրներում, վարկեր տրամադրում աշխարհի տարբեր երկրների և դառնում աշխարհահռչակ արևմտյան զանազան ընկերությունների փայատերեր: Մի 50–60 տարի սրանից առաջ ո՞ւմ մտքով կարող էր նման բան անցնել:

Պատմության գիրկն են անցնում հետամնաց արաբի կերպարը և զարգացման միջնադարյան մակարդակի վրա արաբական երկրների քարացած լինելու իր դարն ապրած ու հնացած տեսակետը:

Արաբական երկրների կրկին հայտնվելը միջազգային թատերաբեմում իրավամբ կարելի է համարել XX դարի պատմաքաղաքական ամենանշանակալի իրադարձություններից մեկը:

Մարդկությունը XXI դարում թևակոխել է իր զարգացման նոր փուլը, և հավատացած ենք, որ նա ականատես կլինի նոր անակնկալների և անսպասելի երևույթների: Տեղի կունենան համաշխարհային մասշտաբով զարմանահրաշ տեղաշարժեր և կծնավորվեն միջազգային նոր կենտրոններ: Վստահ ենք, որ այդ առումով ժամանակն աշխատում է հօգուտ արաբների, և նրանք իրենց նոր խոսքը կասեն: Եվ հաշվի առնելով Ասիայում և Աֆրիկայում երկու օվկիանոսների միջև նրանց զբաղեցրած վիթխարի տարածքը, մեծաթիվ և արագ աճող բնակչությունը, բնական անսպառ ռեսուրսները, առաջին հերթին նավթը, վիթխարի ֆինանսական հնարավորությունները վստահ ենք, որ արաբներն իրենց համապատասխան ներդրումը կունենան այդ գործընթացներում: Եվ բնավ էլ չենք վախենում ֆանտաստիկայի մեջ մեղադրվելուց, եթե ասենք, որ XXI դարում ակնկալվող միջազգային ուժային, ֆինանսական և տնտեսական նոր կենտրոններից մեկը կրելու է **«Արաբական երկրներ»** տիտղոսագիրը:

Մարհաբա՝ բարի գալուստ:

Վերջ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբդ ալ–Ազիզ Աբդ ալ–Ռահման ալ–Սաուդ, 331
Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդ, 329, 331, 332, 350, 351, 365, 366, 373, 382, 387, 388 396, 400
Աբդ ալ–Ազիզ իբն ալ–Ռահման ալ–Ֆեյսալ ալ–Սաուդի, 383
Աբդ ալ–Ազիզ իբն Սաուդ, 608
Աբդ ալ–Ազիզ Սաուդ, 333, 334, 336, 337, 347
Աբդ ալ–Ազմ, 464
Աբդ ալ–Կադր, 409
Աբդ ալ–Հալիկ Տորես, 207, 219
Աբդ ալ–Հալիմ Խադդամ 528
Աբդ ալ–Համիդ ալ–Ղասան, 398
Աբդ ալ–Հաքիմ Ամեր, 493
Աբդ ալ–Հաֆիզ, 181
Աբդ ալ–Ռազակ ալ–Նայիֆ, 648
Աբդ ալ–Ռահման Շահբանդեր, 462
Աբդ ալ–Վահաբ ալ–Հաքիմ, 480
Աբդ ալ–Քերիմ, 194
Աբդ ալ–Քերիմ Նահլաուի, 496
Աբդ ալ–Ֆադիլ ալ–Մազ 561
Աբդալլահ էմիր, 14, 21, 22, 26, 28, 30, 32, 33, 35, 37, 41-43
Աբդալլահ I, 72, 82, 87, 299, 309, 313
Աբդալլահ II, 5, 105, 107-111, 116, 118
Աբդալլահ Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդ, 387
Աբդալլահ ալ–Սաբահ, 606
Աբդալլահ բին Մուհամմադ ալ–Խալիլ, 684
Աբդալլահ թագավոր, 56, 397
Աբդալլահ իբն Աբդ ալ–Ազիզ, 368, 687
Աբդալլահ իբն Ազիզ, 528
Աբդալլահ իբն Իբադ, 680
Աբդալլահ իբն Հուսեյն, 18, 20, 37, 53, 55, 57, 59, 88, 107
Աբդալլահ իբն Հուսեյն ալ–Հաշիմի, 20, 37, 53, 55, 57, 88, 107
Աբդել Քերիմ Կասեմ, 622
Աբդելկադր, 169
Աբդուլ Իլլահ, 37, 73
Աբդուլ Համիդ II, 18, 19 272, 274, 275, 277, 278, 669
Աբդուլլահ ալ–Սալիմ, 621
Աբդուլլահ իբն Սալիմ, 615, 623
Աբդուլլահ Խալիլ, 579, 581
Աբդուլլահ Յուսուֆ ալ–Ղունայմի, 604
Աբու ալ–Հուդա, 45, 63
Աբու Ամար, տես Յասիր Արաֆաթ, 307
Աբու Բաքր, 587, 680
Աբու Մեյզեն, տես Մահմուդ Աբբաս, 326
Աբու Մուսա ալ–Ջարքավի, 111
Աբուդ գեներալ, 574 575, 581-585
Ադիբ Շիշակլի, 483, 484
Աքա ալ–Այուբի, 456, 469
Աքաթուրք, Քեմալ Մուսթաֆա, 423
Աքֆահի գեներալ, 480
Ալա ալ–Դին ալ Դուրուբի, 436
Ալ–Աբու Սաիդ, 679
ալ–Ազհարի, 571, 572, 574, 579
ալ–Բաշիր, 553, 576, 591, 593-595
ալ–Գլաուի, 222, 225, 226, 228
ալ–Դավալիբի, 495, 496
ալ–Դուրուբի, 436
ալ–Ջայադ, 604, 648
Ալի Աբդ ալ–Լաթիֆ, 560, 561
Ալի Աբու Նուվար, 66, 69
Ալի ալ–Ռիկաբի, 432
Ալի Ռիզա ալ–Ռիկաբի, տես ալ–Ռիկաբի, 10 409, 430
Ալի Սուլեյման, 511, 512, 529

Ալլենբի, 10, 283, 407-410, 414, 431, 432, 559, 561, 562
ալ–Գլաու փաշա, 222, 225, 226, 228
ալ–Խալիդի, 68, 69
ալ–Խալիֆա, 604
ալ–Հաքիմի, 467, 480
ալ–Հուդա, 45, 63, 64
Ալյալ ալ–Ֆաս 203, 206
ալ–Ջալահիմա, 604
ալ–Սաբահ 601, 604, 606-620, 627-629 637-639, 647, 649, 650, 653, 655, 664, 669
ալ–Սաբահ Աբդուլլահ 614
ալ–Սաբահ Սհմադ իբն Ջաբր, 607
ալ–Սաբահ դինաստիա, 613, 618, 620, 627, 638
ալ–Սաբահ ընտանիք, 615 617, 627, 637, 639, 669
ալ–Սաբահ կլան, 604, 606, 628, 629
ալ–Սահդ ընտանիք, 698
Սհմադ ալ–Ջաբր, 601, 609, 647
Սհմադ ալ–Սաբահ, 601 608, 611, 612, 649, 650, 653, 655, 664
Սհմադ իբն Ջաբր, 607 615, 616
Սհմադ Հասունի, 552
Սհմադ II իբն Ջաբրի, 608
Սհմադ ալ–Խատիբ, 516, 517
Սհմադ ալ–Սաբահ, 601, 608, 611, 612, 649, 650, 653, 655, 664
Սհմադ Բաբա Սհմադ Սիսքե, 145
Սհմադ Բալաֆրաջ, 203
Սհմադ Բաշիր ալ–Ազմի, 497
Սհմադ Բնեյջարա, 169
Սհմադ Գեդիրա, 244
Սհմադ Դումուդ, 451
Սհմադ Ջավար, 562
Սհմադ Ջաքի ալ–Յամամ, 389
Սհմադ Կադրի, 427
Սհմադ Հասան ալ–Բաքր, 625, 647, 648
Սհմադ Յասին, 313
Սհմադ Շարաբաք, 480
Սհմադ Շուքեյրի, 301, 302
Սհմադ Ուլդ Բնեյջարա, 168
Սհմադ Ուլդ Բուսեհֆ, 166
Սհմադ Ուլդ Դադահ, 176
Սհմադ Ջաբրահիլ, 301
Սհմադ Ջեմալ փաշա, 405
Սհմադ Սալամ Ուլդ Սիդի 168
Սհմեդ Հիլմի, 51
Սմեր մարշալ, 77, 494
Սմին Հաֆիզ, 503-507
Սմին Սահդ, 406, 410, 434
Սնրի դը Ժուվենել, 450
Սունի Աբդ ալ–Հադի, 427
Սսի ալ–Շուրայհ, 336
Սսիֆ Շաուկաթ, 544
Արաֆաթ Յասիր, 91, 261, 301, 306, 307, 309, 317-327
Արիֆ, 227-233, 648
Աֆլակ Միշել, 505, 507

Բաբանա, 141, 142, 145
Բալաֆրաջ, 203, 206
Բալֆուր Արթուր Ջեյմս, 10 47, 278-289, 300, 410
Բահիջ ալ–Խատիբ, 461
Բանդար, 388
Բաշար Ասադ, 111, 403, 529, 534-540, 542, 544, 545
Բաշիր, 497, 553, 576, 591, 593-595
Բասիլ, 528, 535
Բարազի ընտանիք, 440
Բարգես Համուդ ալ–Բարգես, 611, 640
Բեգին Մենահիմ, 292
Բեն Գուրիոն Դավիդ, 49, 295
Բերնարդ Լազար, 278
Բերնշտեյն Էդվարդ, 277
Բլում Լեոն 205, 458
Բոյաջյան Հայկազուն, 446
Բու Ուլդ Աբիդին, 152
Բույաջի Ուլդ Աբիդին, 145, 149
Բույե դը Լատուր, 230
Բուշ Ջորջ, 316, 325-327 542-544, 658, 669
Բուտրուս Ղալի, 556
Բրեժնև, 312, 533

Գամելեն 449
Գիյոմ 226, 230
Գիրշ Մորիս 269
Գլաբ, 27, 32, 33, 36, 41, 55, 65, 66
Գոյբետ, 436
Գորբաչով Միխայիլ 316
Գրանվալ Ժիլբեր, 230
Գուրո, 420, 431-436, 443, 444

Դադահ, 143-156, 159-164, 169, 170, 176
Դառլան, 212, 463
Դավիդ, 266, 292
Դաուդ գեներալ, 85
Դեմիրճյան Կարեն, 649
Դենց, 464-466
Դերեկ Հոպվուդ, 513
դը Գոլ գեներալ, 38, 137, 138, 143, 209, 211-215, 232, 463, 466
դը Մարթել, 454-457, 460
Դրիս Ջիտու, 257

Եփրեմ արքեպիսկոպոս Տոհմունի, 470

Ջահր ալ–Դին, 496, 497
Ջահի ալ–Սամադի, 114
Ջայդ, 15, 19, 434
Ջիյադ Հարիր, 503
Ջուհեյր Մաշարիկա, 528

Էդեր, 281

էլի Ուլդ Սուհամմադ Վալ, 119, 177
էմիր ալ–Այդա, 135
էմիր Սաբահ իբն Սալիմ, 631, 640
էմիր Սաուդ, 334
էմիր Ֆահդ իբն Աբդ ալ–Ազիզ, 311, 361, 368, 373
էմիր Ֆեյսալ, 9, 282, 283, 407-410, 416-418, 426-429
էյզենհաուեր, 68, 74, 353, 488, 579,
էնվեր, 547

Թալալ իբն Աբդալլահ, 57, 106
Թալալ իբն Աբդալլահ ալ–Հաշիմի, 62
Թալեաթ, 547
Թալիբ իբն Ալի, 690
Թակրի Ասալի, 476
Թայա, 169-177
Թայմուր իբն Ֆեյսալ, 681, 684-686, 697
Թաուֆիկ Աբու ալ–Հուդա, 63
Թաջ ալ–Դին, 452, 455, 456, 467
Թարֆա բինք Աբդուլլահ ալ–Շայխ, 336
Թեմպլեր, 68
Թեյֆուր ընտանիք, 440

Ժաբոտինսկի Ջեև, 272
Ժիրո, 212
Ժյուեն, 223-226

Իբն առ–Ռաշիդ, 334
Իհսան Շարաֆ, 475
Իսա իբն Սալիմ ալ–Հարս, 684
Իսմաիլ ալ–Ազհարի, 571-575, 578, 579
Իսմաիլ փաշա, 555

Լակոստ, 230
Լանսինգ, 416
Լավալ, 38, 209, 463
Լի Ստեկ, 559, 561
Լիոտե, 185, 186, 188, 196, 197, 207, 211
Լլոյդ Հենդերսոն, 489
Լլոյդ Ջորջ Դավիդ, 280, 412, 419, 431
Լյուս Վ., 621
Լուկոնին Յու. Վ., 124
Լոուրենս, 409, 413

Խաթիմ Խալիֆա, 575, 585
Խալեդ ալ–Ազմ, 464, 467, 481, 498
Խալեդ Բեկդաշ, 518
Խալիդ թագավոր, 368, 369, 372
Խալիդ իբն Աբդ ալ–Ազիզ, 358, 366, 367, 373
Խոմեյնի այաթոլլահ, 372, 532, 707, 709
Խուան Կարլոս, 256

Կաբարիտ, 117
Կաբուս իբն Սաիդ, 675, 695, 696, 699, 700-709
Կաշմա Իլյաս, 446
Կատրու Ժորժ, 232, 465-467, 471
Կարտեր, 371
Կեյտա, 250
Կլարկ, 36, 37
Կլեմանսո Ժորժ, 414, 419, 427, 428
Կլինտոն Բիլ, 105, 317, 319, 323
Կյուրոս, 266
Կուզբարի, 484, 485, 494-496
Կրեյն Ջ., 416, 418, 419
Կրոմեր, 556

Հաբաշ Ժորժ, 301
Հաբիբ Բուրգիբա, 250
Հազզա ալ–Մաջալ, 65, 74
Հակի ալ–Ազմի, 453, 454
Համդի, 448
Հայդալլահ, 166-171, 175-177
Հայդար Կուզբարի, 494
Հայկազյան Սեդրակ, 446
Հանանո Իբրահիմ, 420, 445, 452
Հաշիմ ալ–Աթասի, 429, 432, 433, 451, 452, 457, 460, 461, 467, 483, 485
Հաշիմի Իբրահիմ, 65, 69
Հաշիմյան դինաստիա, 17, 18, 20, 37, 38, 44, 59, 75, 106, 107, 483
Հաշիմյաններ, 17, 18, 44, 68, 106
Հաջ Ամին ալ–Հուսեյն, 51, 288, 299
Հասան II, 160, 241, 242, 244-255, 528
Հասան ալ–Հաքիմ, 467
Հասան Թուրաբ, 593, 594
Հասան իշխան, 106
Հարիրի, 498, 503, 544, 545
Հաուրանի Ակրամ, 491, 499, 510, 518
Հաֆիզ Ասադ, 86, 111, 498, 507, 510-523, 526-538, 548-551
Հեյկրաֆտ, 281
Հենտիգ, 465
Հերոդոտոս, 266
Հերցլ Թեոդոր, 270-278
Հիտլեր Ադոլֆ, 209, 287, 346
Հիրո Դիլիպ, 377, 632
Հորմա Ուլդ Բաբանա, 141, 142
Հուարի Բումեդիեն, 160
Հուսա բինք Ահմադ ալ–Սուդայրի, 335, 368, 373, 388
Հուսեյն I, 71-74, 77, 79, 84, 85, 87, 90, 92-97, 104-111, 114
Հուսեյն աթ–Թարաունա, 31

Հուսեյն իբն Աբդալլահ ալ–Հաշիմի, 107
Հուսեյն իբն Ալի, 15, 16, 18, 19, 24, 72, 106, 282, 336
Հուսեյն իբն Թալալ ալ–Հաշիմի, 62, 88, 103, 106
Հուսեյն Հիջազի թագավոր, 16-19, 24-26, 336, 416, 425
Հուսնի Զաիմ, 481, 482

Ղազի I, 18
Ղազի Քանաան, 545
Ղալիբ իբն Ալի, 688, 689, 690

Մա ալ–Այնի, 135
Մաավիյա Ուլդ Սիդի Ահմադ Թայա, 169, 171, 174
Մախուսի Իբրահիմ, 515
Մակ–Մահոն, 279, 282, 283, 407
Մահմուդ Աբբաս, 317, 326, 327
Մահմուդ Աբդուլ Ռահման Աբդուլ Ռաուֆ Արաֆաթ ալ–Քուդվան, տես Յասիր Արաֆաթ, 306
Մահմուդ ալ–Այուբի, 519
Մահմուդ Ֆաուր, 420
Մամուն Կուզբարի, 484, 485, 495
Մասումա Մուբարակ, 639
Մարուֆ ալ–Բախիտ, 5, 108
Մարուֆ ալ–Դավալիբի, 495
Մարվան Բուհեյրի, 273-278
Մեիր Գոլդա, 90
Մեծ Մուբարակ, 606
Միթելհաուզեր, 463
Միլներան, 431
Միկոյան Անաստաս, 252
Մոհսեն, 356
Մոյն լորդ, 292
Մուբարակ ալ–Սաբահ, 606, 627
Մուբարակ I, 607
Մուխթար Ուլդ Դադահ, 143, 144, 147, 148, 152, 159
Մուհամմադ մարգարե, 15, 126, 369, 383, 560, 680
Մուհամմադ V, 204, 215, 218, 221, 223-236, 241, 244, 249, 252
Մուհամմադ VI, 178, 253, 255-257
Մուհամմադ Աբդ ալ–Քարիմ ալ–Խաթաբ, 220
Մուհամմադ Աթա ալ–Այուբի, 456
Մուհամմադ Ալի, 555
Մուհամմադ Ալի ալ–Աբիդ, 453
Մուհամմադ ալ–Վազանի, 203, 206
Մուհամմադ Ահմադ Մահջուբ, 587
Մուհամմադ բին Արիֆ, 227-233
Մուհամմադ բին Յուսուֆ, 205, 214, 220, 221, 227-229, 232, 233, 236
Մուհամմադ իբն Աբդ ալ–Ազիզ, 366, 368
Մուհամմադ իբն Աբդ ալ–Քարիմ, 190, 193, 198
Մուհամմադ Լիազիդ, 206
Մուհամմադ Լուլի, 166, 168
Մուհամմադ Խունա Ուլդ Հայդալլահ, 175
Մուհամմադ Մասարի, 390
Մուհամմադ Ումրան, 498, 504
Մուհամմադ Ռեզա Պահլավի, 371
Մուհամմադ Սաիդ ալ–Զազահիրի, 409
Մունիֆ Ռազզազ, 505, 507
Մուստաֆա Սալիհ, 163, 169
Մուստաֆա Թլաս, 515
Մուստաֆա Ուլդ Սալիհի, 163, 165, 166
Մուստաֆա Քեմալ Աթաթուրք, 421, 423-425

Յահյա Համուդ, 306
Յասին ալ–Հաշիմ, 422
Յուսիֆ Ազմա, 435
Յուսուֆ Զուեյն, 506-508, 515
Յուսուֆ Յազբեք, 446

Նաթանյահու Բենյամին, 322
Նազարբեկյան Ավետիս, 276
Նազարբեկյան Մարո, 276
Նագիբ, 572
Նազիմ ալ–Կուդսի, 495-497
Նահիմ Անթակ, 456
Նահսիա, 512, 528
Նահբանի դինաստիա, 678
Նայիֆ իբն Աբդ ալ–Ազիզ, 368
Նայիֆ Հավաթմա, 301
Նաոմի Զոյ Վեյնբերգեր, 513
Նասեր Գամալ Աբդել, 78, 79, 86, 117, 300, 358, 362, 490, 491, 493, 494, 508, 510, 571, 572, 601, 644
Նավարո, 191
Նիմեյրի, 576, 587-594
Նևլինսկի, 274
Նոգես, 205
Նուր ալ–Դին ալ–Աթասի, 515
Նուրի Սաիդ, 71, 73, 436

Շադլի Բենջադիդ, 251
Շակիհ Աբդ ալ–Ազիզ ալ–Բազ, 381
Շարոն Արիել, 324-326
Շիշակլի ընտանիք, 440, 483, 484
Շվարցկոպֆ Նորման, 656
Շուքեյրի Ահմադ, 301, 302, 306

Շուքրի Աշու, 56
Շուքրի Քուաթլի, 451, 468-471, 476, 480, 481, 485, 487, 497, 548

Չերչիլ Ուինստոն, 12, 18, 211-213, 285, 287, 292

Պատրիկ Սիլ, 513
Պետեն, 38, 197, 209, 213, 232 463
Պերես Շիմոն, 317, 319, 320, 322
Պերսի Կոքս, 609
Պիկ, 14, 27
Պիկո, 10 279, 283, 284, 407, 408, 420
Պինո Կ., 234
Պիրլին Ե Դ., 268
Պյուո, 463
Պոնսո Անրի, 451, 452
Պտղոմեոս II Ֆիլադելֆուս, 22
Պրիմո դը Ռիվերա, 194
Պուանկարե Անրի, 412

Ջաբր Ահմադ ալ–Սաբահ, 653
Ջաբր իբն Ահմադ, 640, 650, 664
Ջաբր իբն Ահմադ ալ–Սաբահ, 650, 664
Ջալալ Բայար, 64
Ջամալ Աթասի, 518
Ջամալ Սուֆի, 518
Ջամիլ Մարդամ, 447 456 460, 461, 474
Ջաֆար ալ–Ասկարի, 422, 425
Ջաֆար Մուհամմադ Նիմեյրի, 676
Ջոհարա բինթ Մուսաիդ ալ–Ջիլավի, 335

Ռաբատ Ամմոն, 7
Ռաբին Իցակ, 105, 317, 318, 320, 322, 709
Ռահման Խլեյֆաուի, 517
Ռաշիդ Ալի ալ–Գայլանի, 36-38
Ռաֆիկ Հարիրի, 544, 545
Ռեյգան Ռոնալդ, 311, 312
Ռենե Կոտի, 233
Ռիֆաթ Ասադ, 625-629
Ռիֆաի, 65
Ռոբինսոն Գորդոն, 604
Ռոմել Էրվին, 38, 211, 613, 663
Ռոտշիլդ Էդմունդ, 269, 280
Ռուզվելտ Ֆրանկլին, 211-214, 291, 347, 348

Սաադ Ջաղլուլ, 561, 562
Սաադալլահ ալ–Ջաբրի, 456, 469
Սաբահ Ահմադ ալ–Ջաբր ալ–Սաբահ, 647
Սաբրի Ասալի, 485, 491
Սադաթ Անվար, 370, 521-523
Սադամ Հուսեյն, 111, 378, 532, 533, 542, 647-659, 669, 709
Սադիկ ալ–Մահդի, 587, 592, 593, 598
Սաիդ Աբդ ալ–Ռահման ալ–Մահդի, 574
Սաիդ Աբդուլլահ Խալիլ, 579
Սաիդ ալ–Դին Մուայադ, 447
Սաիդ ալ–Մուֆթի, 65, 66
Սաիդ իբն Թայմուր, 681, 686, 691, 694, 695, 696-698, 705
Սաիդ Ղազի, 498
Սալահ ալ–Դին, 436
Սալահ Բիթար, 499, 502-507, 525
Սալահ Ջադիդ, 498, 506, 510, 514, 515, 527
Սալահ Սալիմ, 572
Սալիհ Ալի, 445
Սալիհ իբն Ալի, 420
Սալիմ Աթրաշ, 444
Սալման, 335, 386
Սամի Հինաուի, 482, 483
Սաուդ Աբդ ալ–Ազիզ, 352
Սաուդ թագավոր, 344, 348, 352, 353, 356, 398
Սաուդ իբն Աբդ ալ–Ազիզ, 351, 353, 354, 365, 366, 369
Սաուդ իբն Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդ, 365, 366
Սաուդ իբն Աբդ ալ–Ազիզ իբն Ռահման ալ–Ֆեյսալ ալ–Սաուդ, 351
Սաուդյան դինաստիա 342
Սաուդյաններ, 17
Սելևկյաններ, 7, 266
Սեմուել Հերբերտ, 286
Սենգոր Լեոպոլդ, 142
Սի Բեքա, 232-234
Սիդիյա, 135, 152
Սիդի Մուխթար, 142
Սիդի Մուխթար Նդիայե, 144, 152
Սիդի Մուհամմադ V բին Յուսուֆ, 204
Սիդի Մուհամմադ բին Յուսուֆ, 205
Սիլվեստրե, 190
Սողոմոն Ժ. Սոլոմոն, 276
Սուբհի ալ–Բարաքաթ, 453
Սուդայրի ընտանիք, 388
Սուդդին Ջալու, 360
Սուլեյման ան–Նաբուլսի, 54
Սուլեյման Իբրահիմ, 196
Սուլեյման Ուլդ Շեյխ Սիդիյա, 152
Սուլթան ալ–Աթրաշ, 445, 447, 484
Սուլթան իբն Աբդ ալ–Ազիզ, 358, 360, 368, 369
Սուլթան Մուհամմադ V, 223, 236

Վալ, 119, 177
Վասֆի Թել, 75, 76

Վեյգան, 444, 463, 465
Վեյվել, 288
Վեյցման Խաիմ, 271, 272, 277, 283, 295
Վենսան Օրիոլ, 221
Վիլսոն Վուդրո, 411, 413, 416, 425, 431, 465
Վինգեյտ 684
Վոլֆ Լյուսյեն, 276

Տեր-Պետրոսյան Լևոն, 114, 551
Տեր-Պետրոսյան Հակոբ, 446
Տիգրան Մեծ, 546
Տոհմունի սրբազան, 475
Տրումեն Հարի, 292
Տրումենի ծրագիր, 54

Ուլդ Քաթրի, 149
Ումար Հասան ալ-Բաշիր, 553, 576, 593, 594
Ուսամա իբն Լադին, 110, 390, 542

Փաշոսյան Արամայիս, 446
Փաշոսյան Մասիս, 446
Փիլ Լորդ, 289

Քամիլ ալ-Կասիբ, 429
Քամիլ ալ-Կուդս, 443
Քամիլ Նասեր, 117
Քաֆաֆյան Ստեփան, 446
Քերզոն, 427, 431
Քիլանի ընտանիք, 440
Քինգ Ֆ., 416, 418, 419
Քոչարյան Ռոբերտ 188

Օլբրայթ Սադելեն, 531
Օմայաներ, 407, 435, 457, 546
Օմար, 680
Օսկանյան Վ., 188
Օսման Թահա, 597
Օսման խալիֆա, 681

Ֆաթիմյաններ, 267
Ֆախրի ալ-Խալիդ, 68
Ֆահդ իբն Աբդ ալ-Ազիզ, 311, 361, 368, 373
Ֆայսալ, 336
Ֆավազ, 356
Ֆավզի ալ-Մուլքի, 63
Ֆարիդ Թահամե, 446
Ֆարիս ալ-Խուրի, 469
Ֆարուկ I, 299, 571
Ֆեյսալ I, 18, 37, 72, 608
Ֆեյսալ II, 18, 38, 71-75
Ֆեյսալ ալ-Դավիշ, 341
Ֆեյսալ թագավոր 358
Ֆեյսալ իբն Աբդ ալ-Ազիզ, 357, 365, 369
Ֆեյսալ իբն Աբդ ալ-Ազիզ ալ-Սաուդ, 365
Ֆեյսալ իբն Հուսեյն ալ-Հաշիմի, 18
Ֆեյսալ իբն Մուսաիդ, 365, 392
Ֆիլիպ Հիթթի, 467
Ֆիլիպ Միքայել դը Նևլինսկի, 274
Ֆոր էդգար, 231, 233, 389
Ֆուադ Շիմալի, 446
Ֆրանկո, 207-211, 234, 235, 256

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբու Դաբի, 162, 349, 670, 686, 687, 689
Աբու Մուսա, 111, 645
Ադանա, 417
Ադեն 412, 686
Ադիս Աբեբա, 588, 590
Ադրար, 130, 135, 136
Ադրարի էմիրություն, 135
Ադրբեջան, 361
Ազատ Ֆրանսիա, 38, 137, 138, 209, 211, 213, 232, 462, 464-467, 470, 481
Ազգերի լիգա 13, 20, 22, 41, 133, 281, 283, 285, 412, 415, 416, 418, 430, 436, 437, 442, 444, 451, 453, 456, 457
Աքենք, 357
ալ-Ալամայն, 38, 39
ալ-Ամարա, 604
Ալ-Աքսա մզկիթ, 55, 286, 287, 323, 324
Ալեյ, 422, 546
Ալեքսանդրետ, 411, 412, 417, 420, 443, 447, 460, 464
Ալեքսանդրետի սանջաք, 443, 460
Ալեքսանդրիա, 62, 77
Ալժիր, 76, 99, 119, 122, 145, 456, 160, 162, 165, 167, 169, 178 180, 188, 208, 220, 238, 249-251, 312, 507, 514, 522, 716
Ալխեսիրաս, 217
Ալ-Կուդս, 48
ալ-Կունեյտրա, 444, 508, 519, 520
ալ-Հուլա լիճ, 420
ալ-Մունթաֆիկ, 604
ալ-Ջադիդա գյուղ, 420
ալ-Ջաուֆ, 334
ալ-Ռաբիղ, 396
ալ-Ռիյադ, 328, 330, 331, 353, 359, 360, 377, 382, 385, 397, 398, 607, 647, 648
ալ-Քսար ալ-Քաբիր, 207
Ակր, 465
Ամերիկայի Միացյալ Նահագներ, 69, 344
ԱՄԷ, 656, 661, 704, 707, 717
ԱՄՀ, 70-77, 99, 353, 491-496, 502, 507, 508, 510, 513
Ամման, 5, 7, 11-13, 22, 23, 27, 29, 31, 45, 62, 64, 68, 71, 73, 85, 88, 93, 98, 101, 110-117
ԱՄՆ, 6, 42, 46, 48, 49, 54, 61, 68, 72-74, 85, 86, 103-105, 109, 111, 117, 120, 175, 179, 209-217,

235, 249, 258, 285, 291-293, 310, 311, 315-319, 325-330, 343, 345-348, 353, 360, 361, 364, 365, 370, 371, 375, 378, 381, 395, 398, 401, 404, 411-419, 425, 431, 478, 484, 488, 489, 509, 519, 521-525, 531-533, 539, 541-545, 554, 577-581, 588, 599, 602, 614, 616, 618, 624, 630-635, 644, 650, 652-658, 661, 664-669, 676, 685-688, 704, 707, 709, 710
Անգլիա, 10-17, 25-29, 32-50, 54, 61, 64, 68, 70, 73, 74, 132, 181, 182, 209-214, 217, 235, 261, 272, 279, 283-285, 288-292, 295, 303, 334, 335, 341, 344, 346, 347, 349, 350, 353, 401, 407-416, 419, 420, 422, 426-432, 463-466, 477, 478, 482, 484, 486, 489, 543, 556-563, 566, 567, 570, 571, 607, 608, 613, 614, 618, 619, 623-625, 644, 661, 667, 683, 685, 686-694, 698, 699
Անդրիորդանան, 7-45, 57, 112, 261, 284-286, 289, 296-298, 302-305, 309, 334, 335, 341, 344, 346, 410, 416, 450, 465, 480
Անվալ, 190, 191, 193
Անտանտ, 279, 332, 405, 406, 423
ԱՊԼ, 624, 643, 696, 690
Աջլուն, 11, 35, 86
Ասիա, 5, 73, 132, 263, 329, 343, 363, 403, 413, 478, 636, 661, 677, 692, 712, 715
Ասիր, 16, 334, 337, 344, 357
Ասորեստան, 266
աս–Սալթ, 11, 22, 23, 31
Ավստրալիա, 401, 658, 661
Ատլանտյան օվկիանոս, 119, 121, 178, 195, 712
Ատլասի լեռներ, 188, 200
Արաբա Վալի, 105
Արաբական Արևելք, 8, 12, 37, 38, 40, 43, 45-48, 102, 111, 122, 123, 279, 344, 412, 419, 422, 459, 463, 502
Արաբական երկրներ, 15, 16, 25, 52, 75, 90, 121, 224, 411, 549, 644, 709, 711, 717
Արաբական լիգա, 39, 624, 625
Արաբական Խալիֆայություն, 8, 23, 267, 678, 712
Արաբական Մաղրիբ, 122
Արաբական Միացյալ Էմիրություններ, տես ԱՄԷ, 43, 329, 378, 653, 658, 671, 675, 679, 702
Արաբական Միացյալ Հանրապետություն, տես ԱՄՀ, 70, 491
Արաբական պետությունների լիգա, տես ԱՊԼ, 6, 39, 49, 50-52, 55, 61, 75, 86, 111, 120, 160, 179, 220, 249, 260, 302, 330, 348, 362, 377, 404, 523, 554, 577, 602, 622, 624, 643, 644, 649, 655, 676, 690, 706, 716
Արաբական Սահարայի Դեմոկրատական Հանրապետություն, 170
Արաբական ֆեդերացիա, 70-73
Արաբիա, 5, 15, 18, 26, 40, 44, 67, 68, 72, 80, 82, 99, 104, 122, 162, 176, 289, 291, 296, 297, 302, 311, 331-354, 357-402, 406, 532, 534, 601, 603, 608, 609, 314, 624, 629, 644, 645, 654-658, 661, 671, 675, 681, 687, 688, 690, 691, 694, 695, 707 715, 717
Արարա, 9
Արգենտինա, 272, 658, 661
Արգին կղզի, 129
Արևելյան Աֆրիկյան Ֆեդերացիա, 565
Արևելյան Երուսաղեմ, 55, 80, 81, 112, 113, 303, 308, 310-313
Արևելյան կամ Հայկական լեգեոն, 9, 405
Արևելյան Պաղեստին, 51, 53, 54, 297
Արևմտյան Ասիա, 5, 263, 329, 403
Արևմտյան ափ, 51, 80-82, 87-95, 110, 113, 261, 262, 304, 308-325, 328
Արևմտյան Գալիլեա 297
Արևմտյան Գերմանիա, 77, 482, 589, 644
Արևմտյան Դարֆուր, 599
Արևմտյան Հայաստան, 546, 671
Արևմտյան Նեգեև, 297
Արևմտյան Սահարա, 119, 160-170, 178, 251
Աքաբա, 9, 24-27, 101, 105, 326
Աքաբա նավահանգիստ, 9, 25
Աքաբայի ծոց, 25, 26
Աֆղանստան, 390
Աֆրիկա, 8, 22, 39, 73, 74, 100, 119, 125, 132, 133, 137-139, 145, 178, 180, 208-214, 220, 249, 252, 272, 363, 478, 553, 569, 577, 599, 613, 661, 663, 678-681, 692, 712, 715

Բաալբեկ, 418, 433

Բաբելոն, 266
Բազել, 271, 273
Բալքա, 11
Բահրեյն, 43, 655, 656, 658, 661, 686, 687, 707, 717
Բաղդադ, 23, 34, 36, 37, 64-66, 71, 72, 89, 99, 353, 448, 465, 485, 539, 605, 607, 614, 622, 625, 643, 645, 646, 649, 652-654, 708
Բանգլադեշ, 658, 661
Բասրա, 605, 606, 609, 622, 680
Բարսելոն, 194
Բեթղեհեմ, 48, 80, 81, 294, 303, 319
Բելգիա, 235, 249, 658, 661
Բեյրութ, 98, 273, 411, 414, 418, 423, 438, 445, 453, 457, 547, 614
Բեռլին, 270, 275, 277, 607
Բյուզանդական կայսրություն 8, 267
Բուբիյան կղզիներ, 601, 654
Բութիմիլիտ, 135
Բուրայմի 350, 687-690
Բուրգան, 611
Բուրունդի, 171, 176
Բրազավիլ, 137, 138

Գալիլեա, 289, 297
Գալիլեի լիճ, 265
Գերմանիա, 38, 77, 103, 136, 137, 181, 208-210, 213, 214, 249, 287, 290, 343-348, 462-465, 482, 567, 568, 588, 606, 607, 613, 614, 643, 658, 661, 661, 699, 707, 710
Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն, տես ԳՖՀ, 699
Գոլան, 80, 81, 91, 303, 310, 509, 520, 521, 531, 538, 539, 542
Գվինեա, 133
Գրանադա, 193
ԳՖՀ, 105, 361

Դակար, 133, 134, 140
Դահոմեա, 133
Դահրան, 347, 348, 352, 353, 360
Դամամ, 345
Դամասկոս, 8-12, 23, 117, 283, 403, 406, 407-409, 414-423, 427-436, 440-459, 464, 465, 468-477, 482, 484-487, 490, 493-496, 499, 508-511, 522-525, 528, 529, 534, 536, 538, 539, 546, 547, 550
Դանիա, 658, 661
Դար ալ–Հանդասա, 273
Դարֆուր, 555, 559, 598, 599
Դեկապոլիս, 22
Դեյր ալ–Զոր, 445, 449, 466, 474, 475, 477, 547
Դերաա, 9, 436, 437, 448, 522
Դիրայա, 331, 332
Դուֆար, 687, 692-698, 702, 706, 709

Եգիպտոս, 7, 8, 12, 22, 23, 36, 38, 39, 43, 44, 49, 51, 52, 56, 61, 67, 68, 70-72, 78, 79, 90, 103-106, 122, 125, 133, 151, 175, 180, 208, 211, 249, 250, 253, 261, 265, 289, 291, 296-305, 321, 326-328, 344, 348, 349, 353, 356-358, 364, 369-371, 407, 439, 468, 477, 480, 485, 486, 489-493, 497, 498, 502, 503, 508, 509, 513, 520-523, 531, 534, 553, 555-562, 565, 567, 570-572, 577, 579-581, 611, 619, 624, 625, 634, 644, 646, 648, 656, 658, 661, 663, 670, 671, 687, 690, 691, 694, 695, 708
Եգիպտոսի Արաբական Հանրապետություն, 125
Եթովպիա, 553
ԵԺԴՀ, 523, 693, 694, 708
Եմեն, 16, 40, 72, 77, 103, 289, 297, 329, 344, 351, 357, 370, 412, 469, 500, 657, 675, 690, 693, 695, 708
Եմենի ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն, տես ԵԺԴՀ, 370, 693
Եմենի Հանրապետություն, 708
Եվրոպա, 102, 103, 109, 130, 189 190, 202, 217, 227, 258, 260, 268, 287, 325, 328, 357, 363, 426, 661, 712
Երևան, 115, 116, 253, 550, 673
Երիկո, 51, 317, 318
Երուսաղեմ, 21, 29, 48, 52 55, 80, 81, 88, 112, 113, 265, 270, 283, 287, 288, 292, 294, 297, 299, 300, 303, 304, 308, 310-313, 318, 321, 324, 327, 418, 509, 522
Եփրատ, 508, 522

Զահիր, 156
Զահլե, 410, 434, 445, 446
Զարկա, 98, 112

էթիեն նավահանգիստ, 158
էրիտրեա, 553
էքս–լե–Բեն, 231-233

Թադլա, 224
Թազա քաղաք, 188, 197, 200

Թազայի միջանցք, 188
Թաիլանդ, 710
Թաիֆ, 17, 350, 354, 534, 655
Թարթուս, 522
Թել Ավիվ, 418
Թել Քոչեկ, 466
Թեհրան, 39
Թիհամ, 344
Թուլկարմ, 319
Թունիս, 103, 122, 180, 208, 220, 250, 308, 523, 656, 717
Թուրքիա, 17, 42, 64, 103, 403, 406, 407, 410, 421-425, 460, 461, 465, 488, 489, 599, 607, 659
Թուրքմենստան, 362
Թրարզա, 130, 131, 135, 145
Թրեյֆին, 136

Ժնև, 445, 521

Ինդոնեզիա, 103, 715
Իսպանիա, 131, 160, 161, 178, 181, 182, 186, 188, 190, 192-199, 207-209, 211, 217, 234, 235, 237, 249, 251, 252, 256, 315, 316
Իսրայել, 5, 49-56, 67, 77-86, 89-93, 104, 105, 110-113, 175, 252, 259, 261, 266, 290, 295-305, 308-328, 361, 364, 370, 371, 374, 375, 394, 403, 480, 482, 489, 508-510, 514, 519-525, 531, 533, 538, 539, 542, 543, 588, 643, 644, 708, 709
Իտալիա, 208-210, 214, 235, 249, 281, 343, 344, 346, 415, 416, 464, 567-569, 613, 614, 710
Իրան, 371, 372, 376, 377, 489, 531-533, 543, 544, 615, 617, 645, 646, 648, 650-652, 654, 669, 671, 681, 694, 695, 707, 709, 715
Իրաք, 5, 7, 10, 12, 16, 18, 20-23, 34-44, 49, 52, 64, 67, 70-76, 79, 80, 89, 99, 104, 111, 122, 133, 169, 175, 283, 284, 289, 297, 298, 300, 310, 321, 329, 334, 335, 341, 344, 346, 373, 376-378, 386, 403, 412, 422, 435, 437, 465, 469, 477, 480, 483, 498, 500-502, 508, 523, 525, 532, 533, 538, 539, 542-550, 601, 605, 606, 608, 609, 611, 312, 317, 620, 622-626, 643-674, 681, 694, 697, 709, 717
Իրաքի Հանրապետություն, 75, 622, 625
Իրբիդ, 11, 31, 85, 86, 112
Իֆնի, 181, 237

Լաթաքիա, 403, 418, 420, 421, 442-445, 454, 458, 460, 461, 484, 489, 496, 511, 512, 522, 524, 525
Լևանտ, 463, 465, 466, 467, 474, 478
Լեհաստան, 160
Լիբանան, 10, 16, 21, 23, 36, 38, 40, 43, 44, 49, 51, 73, 74, 86, 98, 122, 133, 232, 261, 273, 283, 284, 291, 296-302, 308, 310, 316, 348, 403, 407-410, 414-419, 427, 430-432, 437-439, 442-446, 460, 461, 463-467 470-474, 477, 478, 480, 483, 500, 522, 533-537, 543-545, 550, 611, 656, 657, 669-671
Լիբիա, 36, 82, 99, 125, 156, 169, 180, 208, 211, 250, 251, 310, 523, 553, 598, 644, 656, 663, 687, 717
Լիբիայի Արաբական Ժողովրդական Դեմոկրատական Սոցիալիստական Մեծ Ջամահիրիյա, 125
Լոնդոն, 16, 39, 41, 182, 275, 276, 289, 293, 390, 408, 412, 426, 536, 606, 617, 678, 685, 686, 699

Խանիֆրա, 224
Խարթում, 553, 557, 560, 566, 571, 579, 584, 585, 589, 596, 598, 644
Խորհրդային Հայաստան, 113, 549
Խորհրդային Միություն, 42, 46, 49, 74, 114, 151, 293, 310, 336, 343, 487, 488, 513, 521, 533, 549, 577, 655, 694
ԽՍՀՄ, 46, 49, 76, 217, 315, 316, 345, 487, 533

Ծովահենային ափ, 679

Կաաբա, 369
Կահիրե, 12, 18, 20, 39, 75, 79, 151, 220, 253, 299, 300, 307, 318, 357, 358, 491, 493, 494, 523, 556, 561, 572, 580, 614, 624, 656
Կանադա, 401, 658, 661
Կասաբլանկա, 178, 201, 211, 213, 214, 218, 221, 229, 231, 235, 246, 249, 256
Կատար, 43, 99, 354, 362, 386, 390, 656, 658, 661, 686, 687, 707, 717
Կարմիր ծով, 26, 329, 344, 346, 553, 658
Կաֆարինաս, 252

Կենտրոնական Արաբիա, 331, 338, 603, 681
Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, 553, 598
Կիլիկիա, 419, 420
Կիպրոս, 26
Կիսվա գյուղ, 436
Կիրկուկ, 34
Կոնգո, 137, 553
Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, 553
Կոնստանդնուպոլիս, 274
Կորեա 54
Կորսիկա կղզի, 227
Կուբա, 657
Կուշ, 555

Հաբբանիա, 36, 37
Հալեպ, 403, 406, 408-410, 414, 415, 418, 420-426, 431-435, 441-449, 453-456, 459, 464, 465, 469, 472-477, 481, 484, 496, 497, 524, 525, 528, 547, 550
Համա, 409, 420, 433, 440, 453, 456, 467, 472, 474 477, 484, 519, 524, 526, 527
Հայաստան, 113-117, 253, 422, 468, 546-550, 552, 599, 670, 672, 673
Հայաստանի Հանրապետություն, 112, 115, 116, 118, 253, 545, 550, 551, 669, 672, 710
Հայֆա, 34, 112, 418, 437
Հաշիմյան Թագավորություն, 42, 58, 94, 112 114 115
Հաուրան, 436, 445, 449
Հասա, 332, 337
Հասայի շրջան, 332
Հարավային Ամերիկա, 661
Հարավային Դարֆուր, 598
Հարավային Եմեն, 693, 695, 708
Հարավային Լիբանան, 310
Հարավային Սուդան, 565, 583, 586, 589, 591, 596, 597
Հարավարևելյան Ասիա, 636
Հեբրոն, 80, 318
Հերմոն սար, 520
Հիջազ, 9, 11, 14-20, 23-26, 282, 334, 336-339, 342, 405, 407, 411-413, 416, 425, 428, 435, 436, 681
Հյուսիսային Աֆրիկա, 8, 22, 39, 100, 125, 137, 178, 180, 208-213, 220, 553, 613, 663, 678, 681
Հյուսիսային Դարֆուր, 598
Հյուսիսային Եմեն, 351
Հյուսիսային Ռումայլա, 654
Հյուսիսարևմտյան Աֆրիկա, 119
Հնդկական օվկիանոս, 412, 413, 712
Հնդկաստան, 346 465, 617, 636
Հոդեյդա նավահանգիստ, 344
Հոլանդիա, 364, 685
Հոմս, 403, 406, 408, 409, 418, 420, 421, 433, 441, 449, 453, 456, 464, 467, 472, 474, 475, 477, 484, 496, 497, 512, 513, 519, 522, 524, 527
Հորդանան, 6, 8-12, 16, 20, 40, 42-122, 175, 249 259, 261, 264-266, 283, 299-315, 327, 329, 358, 362, 364, 369, 403, 405, 410, 414, 430, 483 489, 508-510, 531, 534, 550, 624, 625, 644, 656, 669-671, 694, 695
Հորդանան գետ, 8, 11, 52, 80, 81, 112, 259, 264, 266, 509
Հորդանանի Արևմտյան ափ, 304, 309, 313
Հորդանանի Հաշիմյան Թագավորություն, 40 42, 46, 55, 58, 88, 93-95, 107, 112, 114-116
Հորմուզի նեղուց, 707
Հուդա, 266
Հունաստան, 658, 661
Հուֆուֆ, 349
Հռոդոս կղզի, 51, 480, 482
Հռոմ, 8, 22, 266

Ղազա, 51, 52, 80, 81, 100, 113, 259, 261, 262, 297, 299, 300, 303, 304, 308, 310-313, 317, 318, 320, 322-328, 362
Ղազախստան, 362
Ղամիշլի, 522
Ղասանյանների պետություն, 8, 23
Ղուտայի օազիս, 450
Ղրիմ, 291
Ղրղզստան, 362

Ճապոնիա, 105 214, 401, 610, 659, 661, 664, 710

Մաան, 9 25, 26, 437
Մաանի շրջան, 24
Մադագասկար, 227, 228, 232, 233
Մադինա, 18, 23, 295, 341, 369, 377
Մադրիդ, 104 161, 182, 193, 197, 235, 315, 316, 375, 531
Մալայզիա, 103
Մալատե, 193
Մալի, 119, 127, 145-147 150, 151, 250 692
Մալիի Հանրապետություն, 145
ՄԱԿ, 6, 42, 43, 48-54 74 78, 79, 82, 87, 88, 119, 120, 144, 146, 151, 161

179, 216, 224-226, 233, 235, 243, 251, 261, 290, 293, 294, 296-298, 302-305, 309, 312, 314, 315, 325, 328, 330, 348, 364, 377, 378, 393, 404, 478, 509, 510, 542, 550, 554, 573, 577, 598, 599, 602, 615, 617, 622-625, 655-660, 663, 666, 676, 677, 688, 691, 692, 706, 716
Մաղրիբ, 122, 203, 205, 220, 242, 249, 250
Մայսալուն, 432, 435, 436
Մայսալունի լեռնանցք, 435
Մաջդ ալ–Անջար, 434
Մասկատ, 350, 675, 678, 679, 682-694, 699, 709
Մասկատի սուլթանություն, 679, 682-686, 688-693, 699
Մավրիտանիա, 121-177, 208, 250, 251, 656, 661
Մավրիտանիայի Իսլամական Ինքնավար Հանրապետություն, 144, 147
Մարակեշ, 178, 188, 200, 201, 207, 222, 225, 229, 231, 256
Մարկադե, 552
Մարոկկո, 91, 122, 123, 145-147, 151, 160-162, 165, 167, 169, 170, 180-258, 308, 450, 528, 645, 656, 658, 661
Մարոկկոյի Թագավորություն, 253
Մարջ Դաբիկ, 406
Մարսել, 412
Մարտնչող Ֆրանսիա, 213, 215
Մաֆրակ, 45
Մելիլլա, 178, 193-195, 237, 252, 632
Մեծ Բրիտանիա, 12-15, 18, 20, 21, 26, 29, 34-37, 41, 46, 47, 52, 55, 64, 72, 85, 103, 105, 211-213, 279-285, 289, 290, 293, 332, 334, 336, 343, 346, 378, 412, 414, 417-419, 468, 483, 555, 556, 558, 559, 562, 563, 566, 568, 577, 578, 606, 607, 614, 621, 623 634, 655-658, 661, 683, 685, 687, 698, 707
Մեծ Թոնբ, 646
Մեծ Մալի, 146, 147
Մեծ Մարոկկո, 145, 147, 162
Մեծ Սելջուկյան կայսրություն, 678
Մեծ Սիրիա, 43-46, 56, 349, 483
Մեսքենե, 547
Մերձավոր Արևելք, 5, 8, 10, 22, 26, 39, 98, 103, 104, 261, 267, 292, 314, 315, 329, 375, 403, 407, 419, 464, 465, 477, 485, 513, 521, 523, 531, 533, 601, 632, 675, 678, 685
Մերսին, 418
Մեքքա, 14-19, 23, 26, 57, 282, 336, 341, 363, 366, 369, 370, 377, 428
Միավորված ազգերի կազմակերպություն, տես ՄԱԿ, 42, 146, 213, 216, 260, 544
Մինա ալ–Ահմադի, 601, 615, 619, 641, 650
Միջագետք, 7, 10, 16, 23, 265, 283, 284, 405, 411, 431, 603
Միջերկրական ծով, 13, 178, 261, 263, 265, 289, 347, 403, 482, 489, 658
Միջին Ատլաս, 188
Միջին Արևելք, 99, 100, 261, 377, 484, 488, 617
Մոնղոլիա, 151
Մոսկվա, 114, 115, 252, 343, 487, 508, 513, 529, 533, 672, 677, 678, 710
Մոսուլ, 23, 36, 419, 465, 605
Մուդրոս, 406

Յալթա, 347
Յամբու, 398
Յաֆա, 112, 281, 288

Նաբաթիական թագավորություն, 7, 8, 22
Նաբլուս, 9, 69, 80, 288, 319
Նազարեթ, 9, 418
Նայրոբի, 596
Նաջդ, 16, 17, 25, 26, 332-337, 342, 351, 357, 412, 450, 607, 608
Նաջրան, 344, 357, 360
Նեգև, 265
Նեղոս, 559, 566, 570, 571, 572, 580, 589
Նիգեր, 133, 150, 658, 661
Նիդերլանդներ, 235, 658, 661
Նիզվան, 683, 690, 691, 699
Նյու Յորք, 224, 226, 291, 309, 390, 539
Նոր գյուղ, 473
Նոր Զելանդիա, 658, 661
Նորվեգիա, 316, 658, 661
Նուակշոտ, 119, 146, 147, 158, 159, 162, 173, 175, 176
Նուբիա, 555

Շատ ալ–Արաբ, 648
Շարմ ալ–Շեյխ, 79, 80, 327
Շարմ ալ–Շեյխ նավահանգիստ, 79
Շեշաուեն, 200
Շթորա, 434
Շվեյցարիա, 103

Չադ, 224, 553, 598
Չեխոսլովակիա, 658

Չինաստան, 160, 378, 653. 657, 658, 661, 707, 710

Պալմիրա, 465
Պալմիրյան թագավորություն, 8
ՊԱԽ, 300, 308, 314, 315, 322, 323
ՊԱԿ, 65, 86, 89, 91, 92, 94, 95, 104, 105, 300-302, 306-325, 522, 523 531, 645
Պակիստան, 617, 636, 658, 661, 715
Պաղեստին, 10, 13, 16, 20, 23, 28, 34, 39, 43, 44, 46-56, 81-95, 105, 110, 112, 249, 252, 259-328, 340, 362, 369, 374, 375, 405, 408, 410, 412, 414, 416-418, 430-432, 437, 464, 465, 483, 522, 644, 645, 656, 657
Պաղեստինի ազգային խորհուրդ, տես ՊԱԽ, 300, 306, 308, 313
Պաղեստինի դիմադրության շարժում, տես ՊԴՇ, 87, 302, 307, 327, 362, 369, 375
Պաղեստինի ժողովրդական խորհուրդ, 83-85
Պայմանագրային Օման, 679, 686
Պարսից ծոց, 13, 329, 332, 344, 346, 348, 601, 613, 615, 619, 621, 645, 648, 672, 686, 687
Պարսկաստան, 266, 412
ՊԴՇ, 302, 307, 309
Պենոն դե Ալհուկեմաս, 252
Պենոն դե Վելեզ դե լա Գոմերա, 252
Պետրա, 7 8
Պերեջիլ, 252
Պորտ Լիոտե, 207, 211
Պորտ Սաիդ, 220
Պորտ Սուդան, 553, 560
Պորտուգալիա, 129, 235
ՊՕԼԻՍԱՐԻՕ, 161, 162 165-168, 251

Ջաբալ, 475
Ջաբալ Ախդար, 681, 691
Ջաբալ Ամալ, 420
Ջաբալ Դրուզ, 427, 444, 445, 447-450, 454, 458, 460, 461, 474, 475, 477, 484
Ջաբալ Շամար, 334, 335. 337
Ջաբալ Սագո, 200
Ջաբալիյա, 312
Ջազիրա, 36, 390, 412, 449, 460
Ջարա, 610
Ջաբադ 219
Ջարաշ, 7
Ջենին, 80, 319
Ջիդա, 18, 336, 347, 354, 362, 363, 397, 654
Ջիզան, 344, 357, 359
Ջորջթաուն, 107

Ռաբաթ, 201, 204, 205, 213, 221, 229, 231, 233, 246, 249, 254, 256, 308, 309, 374
Ռաբբաթ Ամմոն, 22
Ռամալլահ, 319, 325
Ռայյակ 421
Ռաս Թանուր, 345, 349, 360
Ռաֆաթ, 9
Ռաֆահ, 328
Ռեյունյոն կղզի, 199
Ռիգայբատ, 136
Ռիյադ, 329, 331, 332, 354, 360, 361, 378, 383, 386, 398, 399, 608, 649
Ռիֆ, 181, 190-195, 198-200, 220, 525
Ռիֆի Հանրապետություն, 188, 190, 195-199
Ռումինիա, 160
Ռուսաստան, 194, 269, 281, 325, 328, 407, 533, 541, 653, 657, 659, 661, 672, 707

Սալալահ, 691, 699, 703
Սալթ, 11, 22, 23, 31
Սահարա, 119, 160-170, 178, 181, 251
Սամտա, 647
Սայդա, 350, 418
Սան–Ռեմո, 10, 431, 432, 437
Սաուդյան Արաբիա, 5, 18, 26, 40, 44, 67, 68, 72, 80, 82, 99, 104, 122, 162, 176, 289, 291, 296, 297, 302, 311, 331, 332, 335, 336, 339, 342-354 357-402, 469, 485, 486, 528, 532, 534, 601, 608, 609, 614 624, 625, 644, 645, 654-658, 661, 671, 675, 687, 688, 690, 691, 694, 695, 707, 715, 717
Սելևկյան թագավորություն, 7
Սեն Լուի, 131, 132, 136, 140
Սենարի թագավորություն, 555
Սենեգալ, 119, 123, 127 130-133, 140, 141, 146, 150, 153, 165, 173, 658, 661
Սենեգալ գետ, 123, 130 146, 153
Սեուտա, 178, 193, 237, 252
Սեֆրա, 232
Սիբ, 682, 684, 685, 689, 691
Սևիլիա, 193
Սինա, 38, 79, 272, 310
Սինայի թերակղզի, 38, 80, 81, 303, 509
Սիոն սար, 270

Սիրիա, 5, 7-12, 16, 21, 23, 36, 38, 39, 43-46, 49, 51, 56, 61, 66-72, 75-80, 85, 86, 89, 90, 106, 111, 115, 122, 125, 133, 232, 249, 261, 264, 266, 283, 284, 291, 296-303, 310, 311, 316, 321, 348, 349, 353, 356, 358, 364, 369, 404-552, 603, 644, 646, 648, 656-658, 661, 669-671, 690
Սիրիայի Արաբական Հանրապետություն, 125, 495, 507, 517, 534, 536
Սիրիայի Հանրապետություն, 70
Սոմալի, 569
Սուդան, 133, 145, 180, 390, 553-600, 624, 625, 648, 656
Սուդանի Հանրապետություն, 573, 576, 587
Սուեզի ջրանցք, 80, 291, 347, 520
Ստամբուլ, 18, 19, 62, 419, 489

Վադի Հաբիբ, 434
Վադի Մուսա, 9
Վաշինգտոն, 86, 104, 105, 107, 316-319, 327, 364, 539
Վարբա կղզի, 601, 654
Վիշի, 38, 136, 137, 209-211, 462, 463, 466, 482
Վոլտա, 150

Տագանտի էմիրություն, 130
Տանժեր, 182, 183, 195, 211, 217, 218, 225, 230, 231, 234, 235, 237
Տաջիկստան, 362
Տարտուս, 421, 443
Տարֆա, 237
Տետուան, 195, 207, 219, 231, 234
Տիրանի նեղուց, 79, 80
Տրիպոլի, 418, 421, 523

Ուգանդա, 272, 563
Ուզբեկստան, 362
Ումմ Կասր, 647
Ուերգա գետ, 196
Ուջդ, 198, 229
Ուքայրա, 334, 335

Փարիզ, 16, 130, 139, 142, 147, 182, 197, 205, 209, 217, 221, 225, 226, 230, 233, 258, 275, 284, 326, 411-419, 427, 428, 457, 459, 460, 499, 525, 529
Փղոսկրի Ափ, 133, 150
Փոքր Թոնբ, 646

Քալքիլյա, 319
Քանաան, 264, 265, 545
Քաֆի ալ–Լիհա գյուղ, 448
Քեմփ Դևիդ, 92, 523
Քենիա, 272, 553, 569, 596
Քուվեյթ, 43, 82, 99, 104, 111, 162, 180, 249, 298, 329, 331, 334, 341, 344, 346, 362, 373, 377, 378, 386, 532, 533, 601-686, 702, 704, 707, 709, 717
Քուրդահա գյուղ, 511, 512

Օմայան խալիֆայություն, 546
Օման, 329, 620, 656, 658, 661, 675-710, 717
Օմանի իմամություն, 679, 682-685, 688-693, 699
Օմանի ծոց, 658, 675
Օմանի սուլթանություն, 679, 681, 694, 695, 699, 700, 706, 708
Օմդուրման, 553, 560, 568
Օսլո, 105, 316, 319, 322, 708
Օսլո–I, 320, 323
Օսլո–II, 319, 320
Օսմանյան կայսրություն, 15-19, 267, 272, 274, 275, 279, 282, 332, 333, 405, 411, 421, 422, 424, 425, 546, 604-607, 713
Օքսֆորդ, 107

Ֆայլակա կղզի, 601
ՖԱՖ, 133, 134, 136-140
Ֆես, 178, 181, 188, 201, 204, 207, 224, 231, 234, 246, 256, 311, 312
Ֆիլադելֆիա, 7, 22
Ֆիլիպիններ, 617
Ֆրանկֆուրտ, 269
Ֆրանսիա, 10, 11, 16, 17, 21, 25, 38, 44, 49, 67, 103, 105, 119, 129-147, 150, 152, 162, 165, 171, 178, 181-183, 185, 186, 188-190, 195-238, 249, 279, 281, 283, 284, 293, 303, 353, 378, 407-409, 411-422, 426-478, 482, 484, 486, 489, 499, 547, 557, 558, 577, 619, 624, 655-658, 661, 667, 685, 707
Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկա, տես ՖԱՖ, 133, 137, 138
Ֆրանսիական Սուդան, 133, 145

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ[40]

I. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի արխիվ, գ. 1, վ. 7; գ. 2, վ. 3:
Центральный государственный архив Октябрьской революции СССР (ЦГАОР СССР), Москва (ԽՍՀՄ Հոկտեմբերյան հեղափոխության պետական կենտրոնական արխիվ)

1. Фонд 4459, опись 1, дело 232, 234, 235, 238, 669, 1363, 1374, 1824, 1957, 3229, 3998, 4416, 4418, 5580, 8088
2. Фонд 4459, опись 2, дело 126, 414, 815
3. Фонд 4459, опись 24, дело 71, 126, 232

II. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

4. Аграрные реформы в странах Востока, Москва, 1961.
5. Актуальные проблемы Африки, Москва, 1965.
6. Африка. 1961—1965. Справочник, Москва, 1967.
7. Внешняя политика СССР. Сборник документов, т. IV (1935 — июнь 1941г.), Москва, 1946.
8. Внешняя политика Советского Союза в период Отечественной войны. Документы и материалы, т. I, Москва, 1946.
9. Внешняя политика Советского Союза и международные отношения. 1974. Сборник документов, Москва, 1975.
10. Внешняя политика Советского Союза и международные отношения. Сборник документов, Москва, 1987.
11. Вся Азия. Географический справочник. Государственное устройство. Природа. Население. История. Культура, Москва, 2003.
12. **Гальдер Ф.** Военный дневник. Ежедневные записи начальника Генерального штаба сухопутных войск. 1939—1942, т. II. От запланированного вторжения в Англию до начала Восточной кампании (1.07.1940 — 21.06.1941), Москва, 1969.
13. **Гальдер Ф.** Военный дневник. Ежедневные записи начальника Генерального штаба сухопутных войск. 1939—1942. Том III в двух книгах. От начала восточной кампании до наступления на Сталинград (22.06.1941 — 24.09.1942), Москва, 1971.

40 Արաբերենով գրականությունը տրվում է լատինական տառադարձությամբ և հայերեն թարգմանությամբ.

14. **Гальдер Ф.** Военный дневник. Ежедневные записи начальника Генерального штаба сухопутных войск. 1939—1942гг. Том III в двух книгах. От начала Восточной кампании до наступления на Сталинград (22.06.1941 — 24.09.1942). Записи в дневнике. Книга вторая (1.10.1941 — 24.09.1942), Москва, 1971.
15. **Де Голль Шарль.** Военные мемуары, т. I, Москва, 1957; т. II, Москва, 1962.
16. Дипломатический словарь. т. I, Москва, 1960; т. II, Москва, 1961, т. III, Москва, 1964.
17. Документы внешней политики СССР, т. I, Москва, 1957.
18. Документы внешней политики СССР, т. IV, Москва, 1962.
19. Исследовательский центр по изучению Кувейта и его роль в документальном установлении преступного характера Ирака в опровержении его притязаний. Декабрь, 1995.
20. Истоки и история проблемы Палестины. Часть I. 1917—1947. Издание ООН (на русском языке), Нью-Йорк, 1978.
21. История дипломатии, т. III, М—Л, 1945.
22. **Ключников Ю. В., Сабанин А. В.** Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч. II. От империалистической войны до снятия блокады с Советской России, Москва, 1926.
23. **Ключников Ю. В., Сабанин А. В.** Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч. III. От снятия блокады с Советской России до десятилетия Октябрьской революции. Вып. II. Акты дипломатии иностранных государств, Москва, 1929.
24. **Ллойд Джордж Д.** Правда о мирных договорах, тт. I, II, Москва, 1957.
25. Малая энциклопедия стран, Москва, 2004.
26. Материалы по национально—колониальным проблемам, No 3, Москва, 1932,
27. Министерство иностранных дел СССР. СССР и арабские страны. 1917—1960. Документы и материалы, Москва, 1961.
28. Население земного шара, Москва, 1965.
29. ООН. История и истоки проблемы Палестины. Ч. II (1947—1977 гг.), Нью-Йорк, 1979.
30. Переписка Председателя Совета Министров СССР с Президентами США и Премьер—Министрами Великобритании во время Великой Отечественной Войны 1941—1945гг. Том первый. Переписка с У. Черчиллем и К. Эттли (июль 1941 г. — ноябрь 1945 г.), Москва, 1957.
31. Переписка Председателя Совета Министров СССР с Президентами США и Премьер—министрами Великобритании во время Великой Отечественной Войны 1941—1945 гг. Том второй. Переписка с Ф. Рузвельтом и Г. Трумэном (август 1941 г. — декабрь 1945 г.), Москва, 1957.
32. Политические партии. Справочник, Москва, 1981.
33. Резолюция Генеральной Ассамблеи ООН No 181(II) от 22 ноября 1947 г. — Палестинская проблема. Документы ООН и международных организаций и конференций, Москва, 1984.
34. Резолюция Совета Безопасности ООН No 242 от 22 ноября 1967 г. — Палестинская проблема. Документы ООН и международных организаций и конференций, Москва, 1984.

35. Советский Союз на международных конференциях периода Великой отечественной войны 1941–1945 гг. Крымская конференция руководителей трех союзных держав — СССР, США и Великобритания. 4–11 февраля 1945 г., Москва, 1984.
36. Советский Союз на международных конференциях периода Великой отечественной войны. 1941–1945 гг. Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав — СССР, США и Великобритании. 17 июля — 2 августа 1945 г., Москва, 1984.
37. Тегеран, Ялта, Потсдам. Сборник документов, Москва, 1970.
38. Хартия Прогрессивного национального фронта Сирийской Арабской Республики — Современная Сирия, Москва, 1974.
39. A Decade of American Foreign Policy Basic Documents. 1941–1949, Washington, 1950.
40. A Twenty–Five Year Era of Kuwait s Modern Advancement. Prepared by the Information and Research Department, Kuwait Newc Agency (KUNA), Al–Kuwait, 1986.
41. **Abdullah ibn Hussain,** The Memoirs of King Abdullah of Transjordan, London, 1950.
42. Agreement on Desengagement between Israeli and Syrian Forces. May 31, 1974. UN Doc. S/4302/, New York, 1977.
43. Les Allemands en Syrie sous le gouvernement de Vichy, 1942.
44. Asad s Report to the Extraordinary Session of the Fourth Regional Conference, 20–31 March 1969, «Al–Anwar», Beirut, 15 November 1970.
45. British Foreign Office. Sudan: Report by the Governor–General on the Administration. Finances and Conditions of the Sudan in 1945, London, 1948.
46. **Brzezinski Zbignev,** Power and Principle: Memoirs of the National Security Adviser, 1977–1981, New York, 1983.
47. **Davis H.** Costitutions, Electoral Laws, Treaties in the Near East, Durham, 1953.
48. Demarcation of the International Boundary between the State of Kuwait and the Republic of Iraq by the United Nations. Printed by the Center for Research and Studies on Kuwait., al–Kuwait.
49. Department State Bulletin, December 15, Washington, 1952.
50. The Diplomatic Bulletin of the Foreign Ministry of the Republic of Armenia, Yerevan, 1997.
51. The Dipolmatic Bulletin of the Foreign Ministry of the Republic of Armenia, v. 1, No 3, July–September, 1997, Yerevan, 1997.
52. The Diplomatic Bulletin of the Foreign Ministry of the Republic of Armenia, v. 1. No 4, October–December, 1997, Yerevan, 1997.
53. The Diplomatic Bulletin of the Foreign Ministry of the Republic of Armenia, v. 2, No 1, January–May, 1998, Yerevan, 1998.
54. Churchill W. The Second World War, v. III. The Grear Alliance, London, 1950.
55. Documents on American Foreign Relations, v. III, Boston, 1941.
56. Documents on American Foreign Relations, v. IV, Boston, 1942.
57. Documents on American Foreign Relations, v. V, Boston, 1944.
58. Documents on American Foreign Relations, v. VI, Boston, 1945.
59. Documents on American Foreign Relations, v. VII, Boston, 1947.
60. Documents on British Foreign Policy. 1919–1939. 1st Series, v. I, London, 1947.

61. Documents on British Foreign Policy. 1919–1939. 1st Series, v. IV, London, 1952.
62. Documents on British Foreign Polocy. 1919. 1939. 1st Series, v. IX, London, 1952.
63. Documents Concerning Constitutional Developments in the Sudan and the Agreement between the U. K. and the Egyptian Government Concerning Self–Govrnment and Self–Determination for the Sudan, February 1953, London, 1953.
64. Documents on German Foreign Policy (1918–1945). Series D (1937–1945), v. V, Washington, 1953.
65. Documents on German Foreign Policy (1918–1945). Series D (1937–1945), v. VI, London, 1954.
66. Documents on German Foreign Policy (1918–1945). Series D (1937–1945), v. VIII, Washington, 1954.
67. Documents on German Foreign Policy (1918–1945). Series D (1937–1945), v. X, London 1957.
68. Documents on German Foreign Policy (1918–1945). Series D (1937–1945), v. XII, London, 1962.
69. Documents on German Foreign Policy (1918–1945). Series D (1937–1945), v. XIII, London, 1964.
70. Documents on International Affairs. 1939–1946, v. I–II, London, 1954.
71. Documents om International Affairs. 1958, London, 1962.
72. Documents on International Affairs. 1959, London, 1963.
73. The Economic Development of Syria. Report of a Mission Organaized by the International Bank for Reconstruction and Development at the Request of the Government of Syria, Baltimore, 1955.
74. **Eden Sir Anthony.** Full Circle: The Memoirs of the Rt. Hon. Sir Anthony Eden. Boston: Houghton Mifflin, 1960.
75. The Egypr–Israel Peace Treaty. 26 March 1979, Journal of Palestine Studies (JPS) No 32, v. VIII, Summer, 1979.
76. The Essential Middle East A Comprehensive Guide. Dilip Hiro, New York, 2003.
77. Final Political Statement of the Fifteen Session of the Palestine National Council Meeting in Damascus. April 11–12, 1981–JPS No 50, v. X, 1981.
78. Final Statement on the XII Arab Summit Conference at Fez. 9 September 1982. Journal of Palestine Studies, No 46. Winter, 1983.
79. Foreign Relations of the United States. Diplomatic Papers. 1940. v. II, Washington, 1958.
80. Foreign Relations of the United States. Diplomatic Papers. 1941. v. III, Washington, 1959.
81. Foreign Relations of the United States. Diplomatic Papers. 1943. v. IV, Washington, 1964.
82. Foreign Relations of the United States. Diplomatic Papers. 1944, v. V, Washington, 1965.
83. The Gulf: Implications of British Withdrawal, Washington D. C.: Center for Strategic and International Studies, Special Report Series No 8, 1969.
84. Great Britain. Parliamentary Papers. 1920. Treaty Series, Cambridge, 1964.
85. **Hurewitz J.** Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record v. II 1914–1956, New York, 1956.

86. International Documents on Palestine, Beirut, 1971.
87. Journal Officiel de la S. D. N. Paris, Mai–junu, 1937.
88. Kuwait: Statehood and Boundaries. Kuwait Foundation for the Advancement of Sciences, al–Kuwait 1992.
89. Lebanon, Jordan, Iraq. Report on the Umited States Foreign Assistance Programs. Prepared at the Request of the Special Committee to Study the Foreign Aid Program by Hamilton Fish Armstrong, Washington, 1957.
90. The Middle East and North Africa. 1969–1970, London, 1969.
91. The Middle East. From Libya to Iran, London, 2000.
92. The New Industrial Yearbook for the Year 1960. New York, 1961.
93. Onwards to Victory. War Speaches by the Right Hon. Winston Churchull. 1943, London, 1944.
94. The Palestinian–Israeli Peace Agreement. A Documentary Record, Washington, 1994.
95. The Palestine Resolution of the 7th Arab Summit Conference. Rabat, 1974., Journal of Palestine Studies, No 14, Beirut, 1975.
96. Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference, v. V, Washington, 1946.
97. Papers Relating to the Foreign Relations of the Unite States, v. XII, Washington, 1947.
98. The Political Program of the Palestine Liberation Organization, Beirut, 1973.
99. **Puaux G.** Deux Annees au Levant. Souvenirs, Paris, 1956.
100. The Public Papers and Addresses of Franklin D. Roosevelt, v. IX. New York, 1969.
101. The Public Papers and Addresses of Franklin D. Roosevelt, v. XI, 1942, New York, 1969.
102. Rapport sur la Syrie et du Liban (Paris, Annually 1924–1939). Ministere des Affaires Etrangeres de la Republique Francaise, Paris, 1940.
103. Rapport a la Societe des Nations. Sur la cituation de la Syrie et du Liban (Annee 1934), Paris, 1935.
104. Rapport a la S. D. N. — 1936. Ministere des Affaires Etrangeres de la Republique Francaise, Paris, 1937.
105. Rapport sur l'Actitvite de la S. D. N. Documents Officiels. NA–6, Geneve, 1937.
106. Resolutions of the Arab Summit Conference held in Khartum from 20 August–1 September 1967, London, 1967.
107. Societe des Nations. Commission Permanete des mandas, Geneve, 1926.
108. Special Document. The Camp David Agreement for Middle East, Journal of Palestine Studies, No 30, v. VIII, Winter, Beirut, 1979.
109. Statement of Policy by His Majesty's Government in the United Kingdom in Respect od Syria and Lebanon. 8th June–9th September 1941, London 1945.
110. Syria. Geography and History, Damascus, 1955.
111. **Stebbing R.** The United States in World Affairs. Documents on American Foreign Relations. 1954, New York, 1955.
112. United Nations. Economic Dvelopments in the Middle East. 1945–1954, New York, 1955.
113. United Nations. Economic Developments in the Middle East. 1959–1961, New York, 2962.
114. United Nations. Treaty Series, v. 151, New Tork, 1952.

115. United Nations. Treaty Series, v. 222, New York, 1952.
116. The World Bank. The Economic Development of Morocco, Baltimore, 1966.
117. 17 ab 1943–1947. Arbaa sanawat min al–ahdi al–watani, Dimashq, 1947.
17 օգոստոսի 1943–1947. Ազգային դարաշրջանի չորս տարիները, Դամասկոս, 1947:
118. **Munir Takki al–Din.** Al–Jalla'a, Beirut, 1947.
Մունիր Թակի ալ–Դին, Էվակուացիա, Բեյրութ, 1947:
119 Kararat al–majlis al–watani al–falastini. 1964–1974, Beirut, 1975.
Պաղեստինի Ազգային խորհրդի որոշումները, 1964–1974, Բեյրութ, 1975:
120 **Michel Aflaq,** Fi sabili al Ba'th, Beirut, 1963.
Միշել Աֆլաք, Հանուն Վերածննդի, Բեյրութ, 1963:

III. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

121 **Աբրահամյան Ա. Գ.,** Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության. հ Ա, Երևան, 1964, հ. Բ, Երևան, 1967.
122. **Ալպոյաճեան Ա. Ա.,** Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 1, Գահիրե, 1941, հ 2, Գահիրե, 1955.
123 **Աղպաշեան Հ.,** Արաբական ազգային ազատագրական զարթոնքը, Պեյրութ, 1949:
124 Արնելագիտական ժողովածու, հ I, Երևան, 1960:
125. Արևելագիտական ժողովածու, հ. II, Երևան, 1964:
126. **Բայրամյան Ա. Ա.,** Ալեքսանդրետտի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը (1936–1939), Երևան, 1998:
127. **Գասպարյան Ս. Տ.,** Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962:
128. **Եագուպեան Նազարեթ Գ.,** Յանուն երջանկութեան (Յուշեր), Գահիրե, 1960:
129. **Թոփուզյան Հ. Խ.,** Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841–1946), Երևան, 1986:
130. **Թրյան Հ. Կ.,** Պայքար նավթի համար, Երևան. 1957:
131. **Կարամանուկյան Շ. Լ.,** Արաբական պետությունների լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988:
132 **Կարապետյան Ռ. Կ.,** Սիրիա–ամերիկյան հարաբերությունները և խաղաղության գործընթացը Արաբական Արևելքում, Երևան, 1999:
133 **Կարապետյան Ռ. Կ.,** Սիրիա–ամերիկյան հարաբերությունները (1967–1996) Երևան, 2000:
134 **Կարապետյան Ռ. Կ.,** Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն Երևան, 2003:
135 **Հովհաննիսյան Ն. Հ.,** Ազգային–ազատագրական պայքարը Լիբանանում (1939–1958), Երևան. 1967:
136. **Հովհաննիսյան Ն. Հ.,** Հոկտեմբերը և ազգային–ազատագրական շարժման վերելքը Արաբական Արևելքում — Վ Ի Լենինը և Արևելքի ժողովուրդների ազատագրական պայքարը, Երևան, 1970:
137. **Հովհաննիսյան Ն. Հ.,** Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975–1982). Երևան, 1982:
138 **Հովհաննիսյան Ն. Հ.,** Հեղափոխական պրոցեսը արաբական աշխարհում. Երևան. 1990.

139. **Հովհաննիսյան Ն. Հ.,** Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանային գործոն — Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները, Երևան, 2004:
140. **Հովհաննիսյան Ն. Հ.,** Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917–1945), (Հ. Սարգսյանի հեղինակակցությամբ), Երևան, 1975:
141 **Հովհաննիսյան Ն. Հ.,** Նորագույն պատմություն (Գ. Գեղամյանի հեղինակակցությամբ), Երևան, 2001:
142 **Մատէեան Յարութիւն,** Հայության ազգային և գաղափարական հարցերու մասին, Պեյրութ, 1974.
143 Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. III, Արաբական երկրներ, Երևան, 1967:
144. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. VI, Արաբական երկրներ, Երևան, 1974:
145 Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. IX, Արաբական երկրներ, Երևան, 1978:
146. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XV, Երևան, 1989:
147. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVI, Երևան, 1996:
148. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVII, Երևան, 1998:
149 Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVIII, Երևան, 1999:
150. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XIX, Երևան, 2000:
151 Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XX, Երևան, 2001:
152. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXI, Երևան, 2002:
153. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXII, Երևան, 2003:
154. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIV, Երևան, 2005:
155. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXV, Երևան, 2006:
156. **Նաջարյան Ե. Հ.,** Հայ–արաբական մշակութային կապերը (Սիրիա, Լիբանան) 1945–1970 թվականներին, ՄՄԱԵԺ, հ. VI, Երևան, 1974:
157 Յո՞ երթաս հայ սփիւռք, Հալեպ, 1988
158. **Амин Саид,** Восстания арабов в XX веке, перевод с арабского, Москва, 1964.
159. **Андреасян Р., Эльянова А.,** Ближний Восток, нефть и независимость, Москва, 1961.
160. Арабский Восток. История, экономика, Москва, 1970.
161. Арабский Восток и Магриб, Москва, 1977.
162. Арабский мир. Три десятилетия независимого развития, Москва, 1990.
163. Арабские страны. История. Экономика, Москва, 1974.
164. Арабы в борьбе за независимость, Москва, 1957.
165. **Багдаш Халед,** Избранные статьи, Москва, 1970.
166. **Беляев И. П.,** Американский империализм в Саудовской Аравии, Москва, 1957.
167. **Бодянский В. Л., Лазарев М. С.,** Саудовская Аравия после Сауда, Москва, 1967.
168. **Борисов Р. В.,** США: ближневосточная политика в 70—е годы, Москва, 1982.
169. **Брукс Майкл,** Нефть и внешняя политика, Москва, 1949.
170. **Брутенц К. Н.,** Освободившиеся страны в 70—е годы, Москва, 1979.
171. **Вавилов В., Симантовский И.,** Сирия, Москва, 1975.
172. **Валькова Л. В.,** Саудовская Аравия в международных отношениях, Москва, 1979.
173. **Валькова Л. В.,** Саудовская Аравия. Нефть, ислам, политика, Москва, 1987.

174. **Васильев А. М.,** История Саудовской Аравии, Москва, 1982.
175. **Васильев А.,** Факелы Персидского залива. Москва, 1976.
176. **Васильев А. М.,** Персидский залив в эпицентре бури, Москва, 1983.
177. **Васильев Л. С.,** История Востока, 2, Москва, 2001.
178. **Викторов В. П.,** Экономика современной Сирии (проблемы и перспективы), Москва, 1968.
179. **Гатаулин М.,** Аграрные отношения в Сирии, Москва, 1954.
180. **Георгиев А. Г., Озолинг В. В.,** Нефтяные монархии Аравии. Проблемы развития, Москва, 1983.
181. **Герасимов О. Г.,** Саудовская Аравия, Москва, 1977.
182. **Горнунг М. Б; Уткин Г. Н;** Марокко, Москва, 1964.
183. **Григорян Г. М.,** Позиция Сирии в ближневосточном конфликте, Ереван, 1989.
184. **Гриншилдс Томас Х.,** Поселения армянских беженцев в Сирии и Ливане в 1915—1939, Ереван, 1992.
185. **Граядунов Ю. С.,** Новые горизонты Судана, Москва, 1969.
186. **Гурко—Кряжин В.,** Арабский Восток и империализм, Москва, 1926.
187. **Длин Н. А., Зверева Л. С.,** Кувейт, Москва, 1968.
188. **Дмитриев Е. Д.,** Палестинский узел (к вопросу об урегулировании палестинской проблемы), Москва, 1978.
189. **Дмитриев Е. Д.** Палестинская трагедия, Москва, 1986.
190. **Дмитриев Е. Д., Ладейкин В. П.,** Путь к миру на Ближнем Востоке, М, 1974.
191. **Зуев Ф.,** Балканы, Ближний и Средний Восток накануне и в первый период второй мировой войны, Москва, 1950.
192. **Захаров А. М., Фомин О. И.,** Кэмп—Дэвид: политика, обреченная на провал, Москва, 1982.
193. **Ингерсол Р.,** Совершенно секретно. Перевод с английского, Москва, 1947.
194. Ислам в современной политике стран Востока (конец 70—х—начало 80—х годов XX в.), Москаа, 1986.
195. **Исраэлян В. Л.,** Дипломатическая история Великой Отечественной войны. 1941—1945, Москва, 1959.
196. **Исраэлян В. Л., Кутаков Л. Н.,** Дипломатия агрессора, Москва, 1967.
197. **Кечекьян С.,** Мандаты Лиги Наций в странах Ближнего Востока, Баку, 1930.
198. **Киселев В. И.,** Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, Москва, 1988.
199. **Котлов Л. Н.,** Иордания в новейшее время, Миска, 1962.
200. **Кунина А.,** Доктрина Эйзенхауэра, Москва, 1957.
201. **Левин З. И.,** Развитие арабской общественной мысли. 1917—1945, Москва, 1979.
202 **Левин З. И.,** Менталитет диаспоры, Москва, 2001.
203. **Луцкая Н. С.,** Очерки новейшей истории Марокко, (1952—1971), Москва, 1976.
204. **Луцкий В. Б.,** Арабские страны, Москва, 1947.
205. **Луцкий В. Б.,** Проблемы Сирии и Ливана, Москва, 1946.
206. **Луцкий В. Б.,** Национально—освободительная воина в Сирии (1925—1927), Москва, 1964.
207. **Манасерян Л. П.,** Марокко в борьбе за независимость, Ереван, 1969.
208. **Манукян А., Козарез К.,** Капиталистический рынок нефти, Москва, 1953.

209. **Марунов Ю. В., Потемкин Ю. В.,** Арабо—турецкие отношения на современном этапе, Москва, 1967.
210. **Медведко Л. И.,** К востоку и западу от Суэца, Москва, 1980.
211. **Медведко Л. И.** Этот Ближний бурлящий Восток, Москва, 1985.
212. **Меркулов К. А.,** Ислам в мировой политике и международных отношениях, Москва, 1982.
213. **Мирский Г. И.,** Армия и политика в странах Азии и Африки, Москва, 1970.
214. **Мирский Г. И.,** Третий мир. Общество, власть, армия, Москва, 1976.
215. **Мусса Мохамед Мусса Лафи,** Иордания и развивающиеся мировые внешнэкономические связи, Москва, 1992.
216. Новейшая история арабских стран (1917—1966), Москва, 1968.
217. Новейшая история арабских стран Азии (1917—1985), Москва, 1988.
218. Новейшая история стран Азии и Африки. XX век. 1900—1945, Москва, 2001.
219. **Озолинг В. В.,** Саудовская Аравия, Москва, 1968.
220. **Озолинг В. В.,** Экономика Саудовской Аравии, Москва, 1975.
221. **Оганесян Н. О.,** Образование независимой Сирийской Республики (1939—1946), Москва, 1968.
222 **Оганесян Н. О.,** Политика империалистических держав на Арабском Востоке в годы второй мировой войны (1939—1945), Ереван, 1980.
223. **Оганесян Н. О.,** Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Ереван, 1985.
224. **Оганесян Н. О.,** и др. Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока, Ереван, 1986.
225. **Оганесян Н. О.,** Становление и развитие востоковедения в Советской Армении — Востотковедные центры в СССР (Азербайджан, Армения, Грузия, Украина), Москва, 1988.
226. **Павлович М.,** Борьба за Азию и Аффрику, М—Л, 1925.
227. **Пиотровская, И. Л.,** Страны Аравийского полуострова: нефть, финансы, развитие, Москва, 1981.
228. **Поздеева Л. Б.,** Англо—американские отношения в годы второй мировой войны. 1941—1945, Москва, 1969.
229. Политика США на Арабском Востоке. Москва, 1961.
230. Политика Франции в Азии и Африке, (1945—1964), Москва, 1965.
231. Политика Англии на Ближнем и Среднем Востоке, (1945—1966), Москва, 1966.
232. **Примаков Е. М.,** Анатомия ближневосточного конфликта, Москва, 1978.
233. **Примаков Е. М.,** История одного сговора (ближневосточная политика США в 70—х — в начале 80—х годов), Москва, 1985.
234. Проблемы современной советской арабистики. Труды IV всесоюзной конференции арабистов, Ереван, 1985. Выпуск I. Современные политические и социально—экономические проблемы арабских стран, Ереван, 1988.
235. **Пруссакова Н. Г.,** Мусульманские меньшиства в политической жизни стран Востока, Москва, 1990.
236. **Прошин Н. И.,** Страны Аравийского полуострова, Москва, 1958.
237. **Прошин Н. И.,** Саудовская Аравия, Москва, 1964.
238. **Пырлин Е.,** Ближневосточный лабиринт, Москва, 1996.

239. **Пырлин Е. Д.,** 100 лет противоборства. Генезис, эволюция, современное состояние и перспективы решения палестинской проблемы, Москва, 2001.
240. **Рузвельт Эллиот,** Его глазами, перевод с английского, Москва, 1947.
241. **Самыловский И.,** Экспансия американского империализма на Ближнем и Среднем Востоке, Москва, 1955.
242. Саудовская Аравия. Справочник, Москва, 1980.
243. Советский опыт решения национального вопроса и его значение для народов Азии и Африки, Ереван, 1982.
244. Советско–арабские дружественные отношения, Москва, 1961.
245. Современная Азия. Справочник, Москва, 1977.
246. Современная Иордания. Справочник. Москва, 1964.
247. Современный Кувейт, Справочник, Москва, 1971.
248. Современная Мавритания. Справочник, Москва, 1987.
249. Современная Сирия, Справочник, Москва, 1974.
250. Страны Аравии, Справочник, Москва, 1964.
251. Страны Востока. I. Ближний Восток, Москва, 1934.
252. **Тер–Мкртчян Л. Х.** Армяне в странах Арабского Востока, Москва, 1965.
253. **Трошин Ю. А.,** История стран Азии и Африки в новейшее время, Москва, 2004.
254. **Туганова О. Э.,** Политика США и Англии на Ближнем Востоке, Москва, 1960.
255. **Тума Эмиль,** Национально–освободительное движение и проблема арабского единства, Москва, 1977.
256. **Уоринер Д.,** Земельные реформы в странах Ближнего и Среднего Востока (Египет, Сирия, Ирак), Москва, 1958.
257. **Усачев И. Г.,** Джон Фостер Даллес. Политический миф и реальность. Москва. 1990.
258. Характерные черты социально–политического развития арабских стран в 1950–1970–е годы, Ереван, 1980.
259. **Шервуд Р.,** Рузвельт и Гопкинс. Глазами очевидца, т. I–II, Москва, 1958.
260. **Шестопалова З. В.,** Продовольственная проблема и перспективы ее решения в арабских странах.
261. **Abidi A. H.,** Jordan. A Political Study 1948–1957, Delhi, 1966.
262. **Abouchdid E.,** 30 Years of Lebanon and Syria. 1917–1947, Beirut, 1948.
263. **Ahmad Mustafa Abu–Hakim,** Histoire Moderne du Koweit. 1750–1965, France, 1992.
264. **Aita A.,** Le Conflit d'Alexandrette et la Societe des Nations, Damas, 1949.
265. **Andrea Ch.,** La Revolte druze et le insurrection de Damas. 1925–1926.
266. **Antonius G.,** The Arab Awakening, New York, 1946.
267. **Ashford D. E.,** Political Change in Morocco, Princeton, 1961.
268. **Banerji J.,** The Middle East in World Politics, Calcutta, 1960.
269. **Barbouk K. M.,** The Republic of the Sudan: A Regional Geography, London, 1961
270. **Beaujeu–Garnie,** l'Economie du Moyen–Orient, Paris, 1961.
271. **Breslauer G. W.,** Soviet Strategy in the Middle East, Cambridge, 1990.
272. **Brown E.** Hoagland, The Saudi Arabia–Kuwait Neutral Zone, Beirut, 1964.
273. **Bouron N.,** Les Druzes, Histoire des Druzes et de la montange Houranaise, Paris, 1930.
274 **Buckley Ch.,** Five Ventures, London, 1954.

275. **Bullard R.,** Britain and the Middle East. From the Earliest Times to 1950, London, 1951.
276. **Campbell J.,** Defence of the Middle East. Problems of American Policy, New York, 1958.
277. **Calaghe Ch. F.,** The United States and North Africa. Morocco, Algeria and Tunisia, Cambridge, Massachsetts, 1967.
278. Canada and the Third World, Toronto, 1976.
279. **Caplain M.,** Le Moyen–Orient, Paris, 1956.
280. **O'Connor H.,** World Crisis in Oil, New York, 1962.
281. **Cook D. C.,** Kuwait. Miracle on the Desert, Printed in the USA, 1970.
282. **Dawisha A. I.,** Syria and the Libanese Crisis, London, 1980.
283. **Dekmejian H. R.,** Islam in Revolution· Fundamentalism in the Arab World, New York, 1986.
284. **Doodd S.,** A Controlled Experiment on Rural Hygiene in Syria, Beirut, 1934.
285. **Eagleton W.,** The Islamic Republic of Mauritania, Middle East Journal, v. 19, No 1, Washington D. C. 1965.
286. **Enerson R.,** From the Empire to Nation, Cambridge, 1960.
287. **Edmunds C.,** Kurds, Turks, Arabs, London, 1957.
288. **Gaury G. de,** Faisal. King of Saudi Arabia, London, 1966.
289. **Gavan S.,** Kurdistan. Divided Nation of the Middle East, London, 1958.
290. **Gerteiny A. G.,** Mauritania, New York, 1967.
291. **Haddad G.,** Fifty Years of Modern Syria and Lebanon, Beirut, 1950.
292. **Hakima A. A.,** The Rise and Development of Bahrein and Kuwait, Beirut, 1964.
293. **Harold J.,** Kings of Arabia. The Rise and Set of the Turkish Sovereignty in the Arabian Peninsula, London, 1923.
294. Hasan II. King of Morocco, London, 1962.
295. **Himadeh Said,** Economic Organization of Syria, Beirut, 1936.
296. **Hirszowicz L.,** The Third Reich and the Arab World, London, 1966.
297. **Hogarth D. G.,** Arabia, London, 1922.
298. **Hopwood Derek,** Syria. 1945–1986. Politics and Society, London, 1988.
299. **Howard D.,** The Desert King Ibn Saud and His Arabia, New York, 1964.
300. **Hitti Ph.,** History of the Arabs. From the Earliest Times to Present, London, 1951.
301. **Hitti Ph.,** History of Syria. Including Lebanon and Palestine, London, 1951
302. **Hollingworth S.,** The Arabs and the West, London, 1952.
303. **Hoskins Ph.,** The Middle East Problem Area in World Politics, New York, 1956.
304. **Hourani A.,** Syria and Lebanon, London, 1946.
305. **Hourani A.,** Minorities in the Arab World, London, 1947.
306. **Hourani A.,** Arabic Thought in the Liberal Age. 1798–1939, London, 1967.
307. **Hovhannisyan N.,** The Uneven Development of the Arab Countries and Its Consequences (1950s–1970s), Moscow, 1986.
308. **Hovhannisyan N.** The Foreign Policy of Armenia, Yerevan, 1998.
309. **Hovhannisyan N.,** Formation of the Transcaucasian–Middle Eastern Geopolitical Region, Yerevan, 2000.
310. **Humbaraci A.,** Middle East Indictment, London, 1958.
311. **Ihsan Mussa Husaini,** The Moslem Brethern, Beirut, 1956.

312. International Conference on the Effects of the Iraqi Aggression on the State of Kuwait. Under the Patronage of His Highness, Sheikh Jaber al–Ahmed al–Sabah, the Amir of the State of Kuwait. April 2–6, 1994. Research Summaries, State of Kuwait, 1994.
313. **Kamal Abu Jaber,** The Arab Baath Socialist Party. History, Ideology and Organization, New York, 1966.
314. **Kedourie E.,** England and the Middle East. The Destruction of the Ottoman Empire. 1914–1921, London, 1956.
315. **Kerr M.,** The Arab Cold War. 1958–1964: A Study of Ideology in Politics, London, 1971.
316. **Khalil Totah,** Dynamite in the Middle East, 1955.
317. **Kimche J.,** Seven Fallen Pillars. The Middle East in 1945–1952, London, 1953.
318. **Kirk G.,** The Middle East in the War, London, 1954.
319. **Kirk G.,** A History of the Middle East from the Rise of Islam to the Modern Times, London, 1961.
320. **Kirk G.,** Contemporary Arab Politics, London, 1961.
321. Kolonialismus und Neokolonialismus in Nordafrika und Nahost, Berlin, 1964.
322. **Lall A.,** The UN and the Middle East Crisis. 1967, New York, 1970.
323. **Landau R.,** France and the Arabs. Behind the Headlines, No VII, v. XIII, Toronto, 1954.
324. **Landau R.,** The Moroccon Drama. 1900–1955, London, 1956.
325. **Laqueur W. Z.,** Communism and Nationalism in the Middle East, London, 1956.
326. **Laqueur W. Z.,** Middle East in Transition, London, 1968.
327. **Lenczowski G.,** The Middle East in World Affairs, New York, 1957.
328. **Lenczowski G.,** American Presidents and the Middle East, Durham and London, 1990.
329. **Lengyel E.,** The Changing Middle East, New York, 1960.
330. **Longrigg S.,** Syria and Lebanon under French Mandate, London, 1958.
331. **Mac–Callum,** The Nationalist Crusade in Syria, New York, 1928.
332. **Mahmud Riad,** The Sruggle for Peace in the Middle East, London, 1981.
333. **Malik Charles,** The Near East between East and West. The Near East and the Great Powers, Massachusetts, 1951.
334. **Marlow J.,** Arab Natonalism and British Imperialism, London, 1961.
335. **Martin Gilbert,** Atlas of the Arab–Israeli Conflict. The Complete History of the Struggle and Efforts to Resolve It, London, 1993.
336 The Middle East. Ten Years after Camp David. **William Quandt,** Editor, Washington, 1988.
337. **Meyer A.,** Middle Eastern Capitalism, Cambridge, 1959.
338. **Miles S. B.,** The Countries and Tribes of the Persian Gulf, London, 1957.
339. **Mohammed Shafi Aghwani,** The United States and the Arab World, 1945–1952. Aligarh, 1955.
340. **Mounayer N.,** Le regime de la terre en Syrie, Paris, 1929.
341. **Moussa Dib,** The Arab Block in the United Nations, Amsterdam, 1954.
342. **Moussali,** Etude economique sur la Syrie et an Liban, Harisa (Liban), 1933.
343. **Patai R.,** The Kingdom of Jordan, Princeton, 1958.
344 People Without Country. The Kurds and Kurdistan, London, 1980.
345. **Philby J.,** Arabian Days. An Autobiography, London, 1948.

346 **Polk William,** The United States and the Arab World, Cambridge, Massachusetts, 1965.
347. **Quandt W. B.,** Decade of Decisions: American Policy Toward the Arab–Israelj Conflict. 1967–1976, Berkeley, 1977.
348. **Roosevelt K.,** Arabs, Oil and History, New York, 1949.
349. **Salibi Kamal,** Crossroads to Civil War. Lebanon: 1958–1976, New York, 1976.
350. **Seale P.,** Asad. The Struggle for the Middle East. University of California. Berkeley, Los Angeles, 1989.
351. **Seton–Williams M.,** Britain and the Arab States, London, 1948.
352. **Sharabi H.** Governments and Politics of the Middle East in the 20th Century, New York, 1962.
353. **Sharabi H.,** Nationalism and Revolution in Arab World, New York, 1966.
354. **Stark E.,** The Arab Iseland. The Middle East. 1939–1943, New York, 1946.
355. **Upthegrove C.,** Empire by Mandate, New York, 1954.
356. **Vatikiotis P. J.,** Politics and the Military in Jordan. 1921–1957, New York, 1967.
357. **Veou P. du,** Le Disastre D'Alexandrette (1934–1938), Paris, 1938.
358. **Warriner D.,** Land and Poverty in the Middle East, London, 1948.
359. **Watson J. H.,** Mauritania. Problems and Prospects, African Report, February, 1963.
360. **Weinberger N. J.,** Syrian Intervention in Lebanon, New York, 1986
361. **Yale W.,** The Near East. A Modern History, Michigan, 1958.
362. **Zein N. Zein,** The Sruggle for Arab Independence, Beirut, 1960.
363. **Zein N. Zein,** The Emergence of Arab Nationalism, New York, 1973.
364. **Ziadeh N.,** Syria and Lebanon, London, 1957.
365. **Adib Farhat,** Lubnan wa Suriya. Beirut.
Ադիբ Ֆարհաթ, Լիբանանը և Սիրիան, Բեյրութ:
366 **Ahmad Mustafa Abu Haqima,** Tarikh al–Kuwait al–Hadis 1750–1965, Al–Kuwait, 1984.
Ահմադ Մուսթաֆա Աբու Հաքիմա, Քուվեյթի նոր պատմությունը, 1750–1965, Ալ–Քուվեյթ, 1984:
367. **Amil Tuma,** Al–Arab wa Tatawur al–Tarikhiya fi al–Sharki al–Awsat, Haifa, 1962.
Էմիլ Թումա, Արաբները և պատմական զարգացումը Միջին Արևելքում, Հայֆա, 1962:
368 **Amin Said,** Al–Sawura al–Arabiya al–Qubra, 3, Saida
Ամին Սաիդ, Արաբական մեծ ապստամբությունը, հ. 3, Սայդա:
369. **Amin Said,** Al–Duwlat al–Arabiya al–Muttahida, v. III, al–Kahira. 1937.
Ամին Սաիդ, Արաբական միացյալ պետությունը, հ. III, Կահիրե, 1937.
370. **Blikhanuf Sergey,** Kabus bin Said. Sultan Uman. al–Kahira, 2004
Պլեխանով Ս., Կաբուս բին Սաիդ. Օմանի սուլթան, Կահիրե. 2004
371 **Buladyan Arshak,** Tarikh al–Alakat al–Armaniya al–Arabiya, Abu Dabi, 2002.
Փոլադյան Արշակ, Հայ–արաբական հարաբերությունների պատմություն, Աբու Դաբի, 2002.
372 **Ihsan Hindi,** Qifah al–Shaabi al–Suri 1948–1958, Dimashk, 1962.
Իհսան Հինդի, Սիրիական ժողովրդի պայքարը. 1948–1958, Դամասկոս, 1962:
373. **Muhammad Qurd Ali,** Qitab Khattata Sham, Dimashk, 1962.

Մուհամմադ Քուրդ Ալի, Գիրք Շամի (Սիրիայի — Ն. Հ.) պլանավորման մասին 1962:

374. **Najib al–Armanazi,** Muhadarat an Suriya min al Ihtilali hatta al–Jala', al–Kahira, 1954.
Նաջիբ ալ–Արմանազի, Դասախոսություններ Սիրիայի մասին գրավումից մինչև էվակուացիա, Կահիրե, 1954:

375. **Sami al–Qayali,** Siraa fi Sabili al–Kaumiyati al–Arabiyati, Haleb. 1959
Սամի Քայալի, Պայքար հանուն արաբական ազգի. Հալեպ, 1959:

376 **Faris Zarzur,** Maaraq al–Huriya fi Sunya, Dimashk.
Ֆարիս Զարզուր, Ազատագրական պայքարը Սիրիայում, Դամասկոս:

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԵՆԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
THE AUTHOR'S MONOGRAPHIC STUDIES

1. Ազգային–ազատագրական պայքարը Իրաքում (1945–1963), Երևան, 1964. 228 էջ:
   National–Liberation Struggle in Iraq (1945–1963). Yerevan, 1964, 228 p.
2. Ազգային–ազատագրական պայքարը Լիբանանում (1939–1958), Երևան,1967, 331 էջ:
   National–Liberation Struggle in Lebanon (1939–1958), Yerevan, 1967. 331 p
3. Образование независимой Сирийской Республики (1939–1946), Москва, 1968, 118 с.
   Formation of Independent Syrian Republic (1939–1946), Moscow, 1968, 118 p.
4. Հոկտեմբերը և ազգային–ազատագրական շարժման վերելքը Արաբական Արևելքում– "Վ. Ի. Լենինը և Արևելքի ժողովուրդների ազատագրական պայքարը", կոլ. մենագրություն. Երևան, 1969, 276 էջ
   October and Raising of National–Liberation Movement in the Arab East–in "V.I. Lenin and Liberation Movement of the Peoples of East",Col. of Authors. Yerevan, 1969, 276 p
5. Al–Nidal al–Taharuri al–Watani fi–Lubnan (1939–1958), Dar al–Farabi, Beirut, 1974. 191p. (in Arabic)
6. Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917–1946). (Հ. Սարգսյանի մասնակցությամբ), Երևան, 1975. 320 էջ:
   Syria in the Struggle for Independence (1917–1946), Yerevan, 1975, 320 p.
7. Национально–освободительное движение в Ираке (1917–1958), Ереван, 1976, 394 с.
   National–Liberation Movement in Iraq (1917–1958), Yerevan, 1976, 394 p.
8. Политика империалистических держав на Арабском Востоке в годы второй мировой войны (1939–1945), Ереван, 1980, 264 с.
   Policy of Imperialistic Powers in the Arab East During the Second World War (1939–1945). Yerevan, 1980, 264 p.
9. Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975–1982), Երևան, 1982. 79 էջ:
   Lebanese Crisis and Position of the Armenian Community of Lebanon (1975–1982), Yerevan, 1982. 79 p.
10. Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Ереван, 1985, 115 с.
    Relations of the Iraqi Republic with the Countries of Arab East, Yerevan, 1985, 115 p.
11. Активизация ислама: характер, специфика и последствия–"Ислам в политической жизни современного Ближнего и Среднего Востока", кол. авторов, Ереван, 1986, 229 с.

Activization of Islam: Character, Peculanties and Consequences– in "Islam in the Political Life of the Countnes of the Contemporary Middle and Near East", Col. of Authors, Yerevan. 1986, 229 p.

12. Становление и развитие востоковедения в Советской Армении– в "Востоковедные центры в СССР (Азербайджан, Армения, Грузия, Украина)", кол. авторов. Вып. I, Москва, 1988, 128 с.
Formation and Development of the Orientalistics in the Soviet Armenia in "The Orientalistic Centers in the USSR (Azerbaijan, Armenia, Georgia, Ukraine)" Col. of Authors,. Vol I, Moscow, 1988, 128 p.
13 Հեղափոխական պրոցեսը արաբական աշխարհում, Երևան, 1990, 96 էջ.
The Revolutionary Process in the Arab World, Yerevan, 1990, 96 p.
14 Հայաստանի հարակից երկրների պատմություն, հեղ. կոլեկտիվ Երևան. 1992, 239 էջ:
History of the Armenia's Neighboring Countries, Col. of Authors, Yerevan, 1992, p.239.
15 Նորագույն պատմություն (1939–1991), հեղ կոլեկտիվ, Երևան, 1992, 239 էջ:
The Newest History (1939–1991), Col of Authors, Yerevan. 1992, 239 p
16. Арабская историография новой истории Армении– "Новая история Армении в трудах современных зарубежных авторов", кол. авторов, Ереван, 1993, 287 с.
Arab Historiography on New History of Armenia– "New History of Armenia in the Works of Contemporary Foreign Authors", Col. of Authors, Yerevan, 1993, 287 p
17. Նորագույն պատմություն (1939–1995), հեղ. կոլեկտիվ, Երևան, 1996. 224 էջ:
The Newest History (1939–1995), Col of Authors, Yerevan, 1996, 224 p.
18 The Uneven Development of the Arab Countries and Its Consequences (1950–1970s), Moscow. 1986, 10 p.
19 Հայոց ցեղասպանության պատճառների լուսաբանությունը և գնահատականը արաբական ժամանակակից պատմագրության մեջ, Երևան, 1996, 18 էջ.
Elucidation of Reasons of the Armenian Genocide and Its Evaluation in the Contemporary Arab Historiography, Yerevan, 1996, 18 p.
20 Դիվանագիտություն Ֆունկցիաները, մարմինները, ծառայողները, Երևան, 1997, 103 էջ.
Diplomacy. Functions, Bodies, Employees, Yerevan, 1997, 103 p.
21. The Problems of National Security of Armenia in the Middle Eastern–Transcaucasian Geopolitical System. Yerevan, 1997, 12 p.
22. Этнополитические конфликты в Закавказье: их истоки и пути решения, кол. авторов, Мерилендский университет, США, 1997, 177с.
Ethnopolitical Conflicts in the Transcaucasus: Their Roots and Solutions, University of Maryland, USA, 1997, 177 p.
23. Карабахский конфликт. Этапы. Подходы, Варианты решения, Ереван, 1997, 80с.
The Karabakh Conflict. Stages. Approaches. Options of Its Solution, Yerevan, 80 p.
24 Foreign Policy of Armenia, Yerevan, 1998, 108 p.
25. The Karabakh Problem Factors. Criteria Variants of Solution, Yerevan, 1999, 112 p

26 Նորագույն պատմություն (1918–1998) (հեղինակակից Գ Գեղամյան) Հանրակրթական դպրոցի 8–րդ դասարանի դասագիրք Երևան, 1999, 156 էջ
The Newest History (Co–Author G. Geghamyan), Yerevan. 1999, 156 p
27. Նորագույն պատմություն (1939–1998), Հանրակրթական դպրոցի 10–րդ դասարանի համար, հեղ կոլեկտիվ, Երևան, 1999, 223 էջ:
The Newest History(1939–1998), Col of Authors, Yerevan, 1999, 223 p.
28 Formation of Transcaucasian–Middle Eastern Geopolitical System, Yerevan, 2000, 20 p
29. Նորագույն պատմություն Դասագիրք հանրակրթական դպրոցների համար 8–րդ դասարան, Երևան, 2001, 160 էջ:
The Newest History, Yerevan, 2001, 160 p.
30 Պատմություն. Հայոց պատմությունը համաշխարհային պատմության համատեքստում· Դասագիրք հանրակրթական դպրոցի 10–րդ դասարանի համար հեղ կոլեկտիվ, Երևան, 2001, 303 էջ:
History. The Armenian History in the Context of World History, Yerevan, 2001, 303 p.
31. The Armenian Genocide. Armenocide Yerevan 2002 107 p
32 Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Երևան, 2002, 30 էջ:
Armenian Genocide in the Conceptual System of Genocidology Yerevan, 2002, 30 p.
33. Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 2004, 112 էջ:
Iran. The Epoch of Ayatollah Khomeyni, Yerevan, 2004, 112 p
34. Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, 2004, 206 էջ·
35. The Karabakh Problem. The Thorny Road to Freedom and Independence, Yerevan, 2004, 146 p.
36. The Armenian Genocide, Yerevan, 2005. 59 p.
37 Le Genocide Armenien, Erevan, 2005, 62.
38. Der Volkermord an den Armenien. Jerewan, 2005. 66 s.
39. Геноцид Армян, Ереван, 2005, 62 с.
40. The Arabic Historiography on the Armenian Genocide, Yerevan, 2005. 168 p
41 Ermeni Soykirimi Ermenikırım, Istanbul, 2005, 120 p
Genocide of Armenians Armenocide, Istanbul, 2005, 120 p (in Turkish)
42. Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը և եվրատլանտյան համագործակցությունը, հեղ. կոլեկտիվ. Երևան, 2005.78 էջ:
North–Atlantic Treaty Organization and Euro–Atlantic Cooperation, Col. of Authors. Yerevan, 2005, 78 p.
43. Արաբական երկրների պատմություն. Հ I, Արաբները VII դարից մինչև 1516թ., Երևան, 2003, 416 էջ:
History of the Arab Countries. Vol. I, From VII Century to 1516, 416 p.
44 Արաբական երկրների պատմություն. Հ II, Օսմանյան տիրապետության շրջան 1516–1918, Երևան, 2004, 677 էջ:

History of the Arab Countries. Vol. II, Period of Ottoman Domination. 1516–1918, Yerevan, 2004, 677 p.

45 Արաբական երկրների պատմություն. Հ. III, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան. 1918–2005 – Ալժիր, ԱՄԷ, Բահրեյն, Եգիպտոս, Եմեն, Թունիս, Իրաք, Լիբանան, Լիբիա, Կատար. Երևան, 2006, 840 էջ:
History of the Arab Countries. Vol. III The Epoch of Independence and Sovereignty. 1918–2005.– Algeria, UAE, Bahrain, Egypt, Yemen, Tunisia, Iraq, Lebanon, Libya, Katar.Yerevan, 2006, 840 p.

46 Արաբական երկրների պատմություն Հ. IV. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան 1918–2005.– Հորդանան, Մավրիտանիա, Մարոկկո, Պաղեստին, Սաուդյան Արաբիա, Սիրիա, Սուդան, Օման, Քուվեյթ. Երևան, 2007, 768 էջ:
History of the Arab Countries. Vol. IV. The Epoch of Independence and Sovereignty. 1918–2005.– Jordan, Mauritania, Morocco, Palestine, Saudi Arabia, Syria, Sudan, Oman, Kuwait. Yerevan, 2007, 768 p.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ առաջին
ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՇԻՄՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 5
I. ԱՆԴՐՀՈՐԴԱՆԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏՆՎԵԼԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ (1918–1928 թթ.) 7
1. Անհայտությունից՝ էմիրություն 7
2. Անդրհորդանանի էմիրության կազմավորումն անգլիական մանդատի ներքո 9
3. Քաղաքական և սոցիալ–տնտեսական իրավիճակն Անդրհորդանանում բրիտանական տիրապետության հաստատումից հետո (1923–1928 թթ.) 13
4. Հաշիմյան տոհմն արաբական թագավորների մատակարար 14
5 Անդրհորդանանի կարգավիճակի հստակեցումը, պետական սահմանների ճշգրտումն և անգլո–հորդանանյան 1928 թ. պայմանագիրը . . 20
II. ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ: ՄԱՆԴԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՇԻՄՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՈՂԱԿՈՒՄԸ (1928–1946 թթ.) . . 32
1. Իրադրությունն Անդրհորդանանում 1930–ական թվականներին . . . 32
2. Անդրհորդանանը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ (1939–1945 թթ.) 35
3. Բրիտանական մանդատի վերացումը, Անդրհորդանանի ձևական անկախության հռչակումը և վերածումը Հորդանանի Հաշիմյան թագավորության (1946–1948 թթ.) 40
III. ՀՈՐԴԱՆԱՆԸ ՃԱՆՐ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ (1948–1970 թթ.) . 46
1. Պաղեստինի մանդատի վերացումը և բաժանումը հրեական և արաբական պետությունների 46
2. 1948 թ. արաբա–իսրայելական առաջին պատերազմը և Արևելյան Պաղեստինի կցումը Հորդանանին· Աբդալլահ «Ամբողջ Պաղեստինի թագավոր» 49
3. Հորդանանի թագավոր Աբդալլահի իբն Հուսեյն ալ–Հաշիմիի սպանությունը 1951 թ. 53
4. Թալալի կարճատև թագավորության շրջանը և Հորդանանի 1952 թ. սահմանադրությունը 57

5. Իրադրությունը Հորդանանում Հուսեյն իբն Թալալ ալ–Հաշիմիի թագավորության առաջին տարիներին: Քաղաքական պայքարի սրումը (1952–1956 թթ.) 62
6. Սուլեյման ալ–Նաբուլսիի կառավարությունը և նրա առաջադիմական քաղաքականությունը 66
7. Հաշիմյան երկու միապետությունների՝ Հորդանանի և Իրաքի միավորումը և Արաբական ֆեդերացիայի ստեղծումը 70
8. Հորդանանը 1958–1967 թթ. 74
9. 1967 թ. հունիսյան պատերազմը և նրա հետևանքները Հորդանանի համար 78
IV ՀՈՐԴԱՆԱՆՅԱՆ–ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԹՆՋՈՒԿԸ: ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ–ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ–ԱՊԱՀԱՐՋԱՆ (1970–1988 թթ.) . 82
1. 1970 թ. «Սև սեպտեմբերը» 82
2. Միացյալ Արաբական թագավորություն ստեղծելու Հորդանանի թագավոր Հուսեյն I–ի ծրագիրը 87
3. Ապահարզան 91
V ՔԱՂԱՔԱԿԱԿԱՆ ՆՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՐԴԱՆԱՆՈՒՄ. ԱՆՑՈՒՄ ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ (1989–1999 թթ.) 94
1. Պառլամենտական նոր ընտրություններ և ռազմական դրության վերացումը 94
2. Տեղաշարժեր Հորդանանի տնտեսական և սոցիալական ոլորտներում 1980–1990–ական թվականներին 98
3. «Խաղաղության թագավորը» 103
VI. ՀՈՐԴԱՆԱՆԸ 1999–2005 թթ. 105
1. Հուսեյն I–ի մահը· Աբդալլահ II–ը Հորդանանի նոր գահակալ . . 105
2. Հորդանանի ներքին և միջազգային դրությունը (1999–2005 թթ.) . . . 107
3. Միջպետական հարաբերությունները Հորդանանի Հաշիմյան Թագավորության և Հայաստանի Հանրապետության միջև (1991–2005 թթ.) 112

Գլուխ երկրորդ

ՄԱՎՐԻՏԱՆԻԱՅԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 119
I. ՄԱՎՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԷԹՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 121
1. Մավրիտանիան արաբական աշխարհի ծայրագավառ 121
2. Մավր–Մավրիտանիա 123
3. Կրոն՝ իսլամ, ոգիներ և թալիսման 126
II. ՄԱՎՐԻՏԱՆԻԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1918–1960 թթ.) 129
1. Ֆրանսիական գաղութային տիրապետության հաստատումը 129
2. Մավրիտանիան ֆրանսիական գաղութային համակարգում 132

3. Մավրիտանիան անկախ պետության վերածվելու ճանապարհին (1946–1960 թթ.) 138
III. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ ԵՎ ՄԱՎՐԻՏԱՆԻԱՅԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ (1960–1965 թթ.) 144
IV. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՎՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ (1966–1978 թթ.) 152
1. Ներքաղաքական հակասությունները և բարդությունները 152
2. Մավրիտանիայի արխայիկ սոցիալական կառուցվածքը. Դադահը մավրիտանական ազգի «հայր» 156
3. 1978 թ. պետական հեղաշրջումը և Դադահի տապալումը 160
V. ՄԱՎՐԻՏԱՆԻԱՆ XX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ (1978–2005 թթ.) 164
1. Պետական հեղաշրջումների շարքը և իշխանության անցումը զինվորականների ձեռքը (1978–1984 թթ.) 164
2. Մավրիտանիան Մաավիյա Ուլդ Սիդի Թայայի կառավարման տարիներին (1985–2005 թթ.) 171
3. 2005 թ. պետական հեղաշրջումը 176

Գլուխ երրորդ

ՄԱՐՈԿԿՈՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 178
I. ՄԱՐՈԿԿՈՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐՅԱՆ ՇՐՋԱՆԸ (1918–1956 թթ.) 180
1. Մարոկկոյի տրոհումը 180
2. Մարոկկոյում հաստատված կառավարման պրոտեկտորական համակարգը 183
3. Մարոկկոյի «յուրացումը» 187
4. Ապստամբությունը Ռիֆում և Ռիֆի Հանրապետության հռչակումը 190
5. Տեղաշարժեր Մարոկկոյի սոցիալական և քաղաքական դաշտում 1930–ական թվականներին 200
6. Մարոկկոն Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939–1945 թթ.) 208
7. Մարոկկոն հետպատերազմյան առաջին տարիներին (1945–1950 թթ.) ... 217
8. Ֆրանսիական պրոտեկտորատի վերացման պայքարի ավարտական փուլը (1951–1956 թթ.) 221
II. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ, ՄԱՐՈԿԿՈՅԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԵՎ ԱՍԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 231
III. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՐՈԿԿՈՅՈՒՄ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1956–2005 թթ) 236
1. Մարոկկոն Մուհամմադ բին Յուսուֆի կառավարման վերջին տարիներին (1956–1961 թթ.) 236

2. Սահմանադրության ընդունումը և Մարոկկոյի վերածումը բացարձակ միապետությունից սահմանադրական միապետության 241
3. Ներքաղաքական պայքարի սրումը և փոփոխություններ սահմանադրության մեջ (1960–1990–ական թվականներ) 245
4. Մարոկկոյի արտաքին քաղաքական դրությունը 248
5. Քաղաքական կայունության և տնտեսական զարգացման ուղիով (1999–2005 թթ.) 253

Գլուխ չորրորդ

ՊԱՂԵՍՏԻՆ 259
I. ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ԵՐԿԻՐ, ԿՐՈՆՆԵՐԻ ՕՐՐԱՆ ԵՎ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿ 262
II. ԲԱԼՖՈՒՐԻ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆՈՒՄ ՀՐԵԱԿԱՆ ՏՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՐՑԸ 267
1. Պաղեստինը սիոնիստական անուրջների իրականացման հանգրվան . 267
2. «Թեոդոր Հերցլը և հայկական հարցը» 271
3. Բալֆուրի դեկլարացիան 277
III. ՊԱՂԵՍՏԻՆԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՆԹԱՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ. ՀՐԵԱԿԱՆ ՏԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԱՐԱԲԱ–ՀՐԵԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ (1920–1948 թթ.) 281
1. Ազգերի լիգայի կողմից բրիտանական մանդատի հաստատումը Պաղեստինում և Պաղեստինի սահմանների ճշգրտումը 281
2. Քաղաքական և ռազմական դիմակայություն (1923–1939 թթ.) 285
3. Պաղեստինը Երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում: ՄԱԿ–ի որոշումը Պաղեստինը բաժանելու վերաբերյալ և Իսրայել պետության հռչակումը (1939–1948 թթ.) 289
IV. ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԿԱՄ ԱՐԱԲԱ–ՀՐԵԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՉԵՎԱՓՈԽՈՒՄԸ: ՆԱՔԲԱ (1948–1949 թթ.) 295
V. 1967 Թ. ՀՈՒՆԻՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՄԲՈՂՋ ՊԱՂԵՍՏԻՆԻ ԳՐԱՎՈՒՄԸ ԻՍՐԱՅԵԼԻ ԿՈՂՄԻՑ 297
1. Պաղեստինի դիմադրական շարժման կառույցների ստեղծումը 297
2. 1967 թ. հունիսյան վեցօրյա պատերազմը, Պաղեստինի ամբողջ տարածքի գրավումը Իսրայելի կողմից և դրա հետևանքները 301
VI. ՊԱԿ–Ը ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԻԱԿ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ· ՊԱՂԵՍՏԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ 305
1. Յասիր Արաֆաթը պաղեստինյան դիմադրության շարժման ղեկավար . 305
2. ՊԱԿ–ի ճանաչումը Պաղեստինի միակ օրինական ներկայացուցիչ . 307
3. Առաջին ինթիֆադան և Պաղեստինի Ազգային խորհրդի կողմից Պաղեստին պետության հռչակումը (1980–ական թվականներ) 309

VII. ՊԱՂԵՍՏԻՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ (1993–2005 թթ.) 314
1. Պաղեստինի ժամանակավոր ինքնավարության վերաբերյալ իսրայել–պաղեստինյան համատեղ հռչակագիր 314
2. Վաշինգտոնյան կամ Օսլո II համաձայնագիրը և Պաղեստինյան ինքնավարության կայացման գործընթացի խորացումը (1995–2000 թթ.) . 318
3. Պաղեստինի ինքնավարության երրորդ փուլը: Նոր բարդություններ, նոր հուսախաբություններ և նոր հույսեր (2000–2005 թթ.) 322

Գլուխ հինգերորդ

ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 328
I. ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ (1918–1932 թթ.) 330
1. Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդը Սաուդյան Արաբիայի կենտրոնացված պետության հիմնադիր 330
2. Հիջազի թագավորության, Նաջդի սուլթանության և կախյալ երկրների պետական և սոցիալական կառուցվածքը 336
3. «Կուլտուրական վահաբիզմի» քաղաքականությունը: Իխվանների կազմակերպության ջախջախումը և երկրի հետագա կոնսոլիդացիան 338
II. ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ (1930–1940 թթ.) . . 342
1. Սաուդյան Արաբիայի միջազգային դիրքերի ամրապնդումը 1930–ական թվականներին 342
2. Սաուդյան Արաբիան Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939–1945 թթ.) 345
III. ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԱԲԴ ԱԼ–ԱԶԻԶ ԱԼ–ՍԱՈՒԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1945–1953 թթ.) 347
IV. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅՈՒՄ (1945–1975 թթ.) 349
1. Իշխանության համար պայքարը սաուդյան ընտանիքի ներսում (1954–1964 թթ.) 349
2. Սաուդյան Արաբիան Ֆեյսալի թագավորության շրջանում: Վարչակարգի ամրապնդումը, թագավորության դիրքերի ուժեղացումը և իսլամական միջազգային կազմակերպության ստեղծումը (1964–1975 թթ.) . . . 357
V. ԵՐԿՈՒ ՀՈՍԱՆՔՆԵՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ. ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ՆՈՐՄԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅՈՒՄ (1975–1995 թթ.) 365
1. Սաուդյան Արաբիայի զարգացման վերաբերյալ երկու հոսանքների ձևավորումը: 1977 թ. գինված ապստամբությունը Մեքքայում 365
2. «Ֆահդի պլանը»: Միապետի տիտղոսի նոր փոփոխություն: Սաուդյան Արաբիայի դիրքորոշումը իրաք–իրանյան պատերազմում և Իրաքի Քուվեյթ ներխուժման հարցում 372

3. Սաուդյան Արաբիայի պետական կառուցվածքի, մարմինների և նրանց գործառույթների սահմանադրական օրինակարգումը 378
VI. ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ XX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ. ՊՐՈԲԼԵՄՆԵՐ, ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ (1995–2005 թթ.) 386
1. Աբդալլահ իբն Աբդ ալ–Ազիզ ալ–Սաուդը Սաուդյան Արաբիայի վեցերորդ թագավոր 386
2. Ազատությունների և մարդու իրավունքների հիմնախնդիրները· Գլխատում, անդամահատում, ծաղկում 388
3. Սաուդյան Արաբիայի նոր կերպարի ձևավորումը 393

Գլուխ վեցերորդ

ՍԻՐԻԱԿԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 402
I. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՍԻՐԻԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ (1918–1920 թթ.) 404
1. Թուրքական բանակի ջախջախումը և Սիրիայի ազատագրումն օսմանյան տիրապետությունից 404
2. Սիրիայի ազգային առաջին կառավարության ստեղծումը և Ֆեյսալ–Ալլենբի փոխհարաբերությունները 406
3. Արաբական հարցի քննարկումը Փարիզի խաղաղության կոնֆերանսում 410
4. Սիրիական կոնգրեսի գումարումը և «Դամասկոսի ծրագիրը» 415
5. Արևմտյան Սիրիայի օկուպացումը Ֆրանսիայի կողմից (1919–1920 թթ.) 415
6. Քեմալականների կոչերն արաբներին և Սիրիայում ստեղծված իրադրությունից օգտվելու նրանց փորձերի ձախողումը 420
7. Սիրիայի թագավորության հռչակումը: Ֆեյսալը Սիրիայի թագավոր . 425
8. Մայսալունի ճակատամարտը. Սիրիայի թագավորության անկումը և Ֆեյսալի արտաքսումը 431
II. ՍԻՐԻԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐՔՈ (1920–1939 թթ.) 436
1. Մանդատային կառավարման մարմինները և նրանց իրավասությունները ... 436
2. Ֆրանսիայի սոցիալ–տնտեսական քաղաքականությունը ենթամանդատային Սիրիայում 438
3. Սիրիան առանձին մանր պետությունների տրոհելու Ֆրանսիայի քաղաքական խաղերը (1920–1924 թթ.) 442
4. 1925–1927 թթ. համասիրիական ապստամբությունը 444
5. Սահմանադիր ժողովի գումարումը և սիրիական սահմանադրության ընդունումը. Ֆրանս–սիրիական հարաբերությունների հետագա սրումը (1927–1934 թթ.) 450
6. Հակաիմպերիալիստական պայքարի վերելքը: Ֆրանս–սիրիական Բարեկամության և օգնության պայմանագրի ստորագրումը (1934–1939 թթ.) .. 454

III ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ և ՍԻՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄԸ (1939–1946 թթ.) 461
1. Սիրիան Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբում (1939—1941 թթ.) 461
2. Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի զորքերի մուտքը Սիրիա 1941 թ և գեներալ Կատրուի դեկլարացիան 464
3 Սահմանադրության վերականգնումը և պառլամենտական ընտրությունները: Շուքրի Քուաթլին Սիրիայի անկախ հանրապետության առաջին պրեզիդենտ 467
4. Ֆրանսիական մանդատի վերացումը և Սիրիայի անկախության ու ինքնիշխանության ամբողջացումը (1944–1946 թթ.) 469
IV ՍԻՐԻԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ (1946–1958 թթ.) . . 478
1. Իրադրությունը Սիրիայում անկախության նվաճումից հետո և 1948 թ պառլամենտական ընտրությունները 478
2 Զինվորական հեղաշրջումները և բանակի դերի աճը Սիրիայի պետական–քաղաքական կյանքում (1949–1954 թթ.) . . 480
3 Տնտեսական նշանակալի տեղաշարժեր (1946–1957 թթ.) 485
V ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ, ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՓԼՈՒԶՈՒՄԸ (1958–1961 թթ.) 487
VI. ՍԻՐԻԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՈՒՌՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ (1960–ական թվականներ) 494
1. Դրությունը Սիրիայում ԱՄՀ–ի կազմից դուրս գալուց հետո . . . 494
2. Բաաս կուսակցությունը: 1963 թ. մարտի 8–ի բաասական հեղաշրջումը 497
3 1967 թ. հունիսյան պատերազմը և նրա հետևանքները . . 507
VII. ՍԻՐԻԱՆ ՀԱՖԻԶ ԱՍԱԴԻ ՊՐԵԶԻԴԵՆՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1970–2000 թթ.) 510
1 Հաֆիզ Ասադ: «Սարից իջավ նա քաղաք» 510
2 Ուղղիչ շարժումը 513
3 1973 թ. հոկտեմբերյան արաբա–իսրայելական պատերազմը և նրա հետևանքները: Սիրիան ընդդեմ անջատողական գործարքների 519
4. Սիրիայի ներքաղաքական դրության սրումը և «Մուսուլման եղբայրների» խռովարարական ելույթները (1979–1982 թթ) 522
5. Եղբայրը եղբոր դեմ 525
6. Սիրիայի արտաքին քաղաքական դրությունը Հաֆիզ Ասադի կառավարման վերջին տասնամյակում (1990–ական թվականներ) 529
VIII. ՍԻՐԻԱՆ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ (2000–2005 թթ) 533
1. Բաշար Ասադը Սիրիայի նոր պրեզիդենտ և «Դամասկոսյան գարունը» (2000–2001 թթ) 533
2 Սիրիայի զարգացման տնտեսական ասպեկտը (2000–2005 թթ) 538

3. Արտաքին քաղաքական մարտահրավերները 541
4. Սիրիական Արաբական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերությունները (1991–2005 թթ.) ... 544

Գլուխ յոթերորդ

ՍՈՒԴԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 552
I. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ (1918–1956 թթ.) 554
1. Սուդանի կարգավիճակի առանձնահատկությունը 554
2. Գլխավոր նահանգապետ Լի Ստեկի սպանությունը և Ալլենբիի վերջնագիրը 558
3. Անցում ուղղակի կառավարումից անուղղակի կառավարման 562
4. Կոնդոմինիումի վերականգնումը: Անկախության համար պայքարի ավարտական փուլը և Սուդանի անկախության հռչակումը (1936–1956 թթ.) 566
II. ՍՈՒԴԱՆԻ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ 572
III. ՍՈՒԴԱՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԼԵԲԱԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1956–1985 թթ.) 576
1 Արտաքին և ներքին քաղաքականության հիմնախնդիրները և տարածայնությունները նրանց շուրջը (1956–1958 թթ.) 576
2. Գեներալ Իբրահիմ Աբուդի պետական հեղաշրջումը և քաղաքական նոր իրողություններ Սուդանում (1958–1969 թթ.) 580
3. 1969 թ. զինվորական հեղաշրջումը և գեներալ Նիմեյրիի իշխանության հաստատումը: Սուդանի անվանափոխությունը Սուդանի Դեմոկրատական Հանրապետության (1969–1985 թթ.) 586
IV. ՍՈՒԴԱՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ (1985–2005 թթ.) 590
1 Նիմեյրիի տապալումը: Պայքար իշխանության համար Սուդանի քաղաքացիական և զինվորական վերնախավի ներսում: Գեներալ Ումար ալ–Բաշիրը Սուդանի պրեզիդենտ 590
2 Քաղաքացիական պատերազմի ավարտը, Սուդանի հարավի ինքնավարության հռչակումը և փոփոխություններ երկրի կառավարման համակարգում (2002–2005 թթ.) 594
3 Ցեղասպանությունը Դարֆուրում և նրա դատապարտումը ՄԱԿ–ի ու միջազգային հանրության կողմից 597

Գլուխ ութերորդ

ՔՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ 600
I. ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ (1918–1961 թթ.) 602
1. Քուվեյթի պետության կազմավորման գործընթացը և նրա սահմանների ճշգրտումը 602
2. Քաղաքական իրադրությունը և սոցիալ–տնտեսական վիճակը Քուվեյթում (1920–1940–ական թվականներ) 608
3. Քուվեյթը անկախության շեմին (1950–ական թվականներ) 614
II. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՔՈՒՎԵՅԹԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ 619
1. 1899 թ. անգլո–քուվեյթյան պայմանագրի վերացումը և 1961 թ. հունիսի 19–ին Քուվեյթի անկախության հռչակումը 619
2. Իրաքյան սպառնալիքները և իրաք–քուվեյթյան ճգնաժամը 621
3. Մշտական սահմանադրության ընդունումը և կառավարման նոր համակարգի ստեղծումը (1961–1965 թթ.) 625
III. ՔՈՒՎԵՅԹԻ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ: ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 629
1. Տնտեսական զարգացումը և արդիականացումը 629
2. Որակական թռիչք սոցիալական ոլորտում: «Քուվեյթի հրաշքը» 632
3. Քաղաքական զարգացումները. անցում պատերնալիզմից կառավարման արդիական սկզբունքներին 636
IV. ՔՈՒՎԵՅԹԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ 642
1. Միջարաբական հարաբերությունները Քուվեյթի արտաքին քաղաքականության առաջնային ուղղություն 642
2. Իրաք–քուվեյթյան 1973 թ. ռազմական բախումները 644
3. Քուվեյթի դիրքորոշումն իրանա–իրաքյան պատերազմի նկատմամբ (1980–1988 թթ.) 648
V. ԻՐԱՔՅԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ՔՈՒՎԵՅԹԻ ԳՐԱՎՈՒՄԸ. ՄԻՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ (1990–1991 թթ.) 651
1 Պատերազմի պատճառները և Իրաքի դիկտատոր Սադամ Հուսեյնի արկածախնդրային քաղաքականությունը 651
2. Իրաքյան բանակի ներխուժումը և Իրաքի գրավումը 654
3. 1990–1991 թթ. պատերազմի գնահատականի հարցի շուրջը: Ծոցի երկրորդ պատերազմը որպես միևնի համաշխարհային պատերազմ 659
VI. ՔՈՒՎԵՅԹԸ XX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ 663
1. Իրաքյան ագրեսիայի հետևանքների վերացումը 663
2. Իրադրությունը Քուվեյթում XXI դարի սկզբներին 666
3. Քուվեյթի և Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերությունները 668

Գլուխ իններորդ

ՕՍՄԱՆԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆ 674
I. ՕՍՄԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԻՆ՝ ՕՍՄԱՆԻ ԵՎ ՄԱՍԿԱՏԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՕՍՄԱՆԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆ: ԻԲԱԴԻՅԱ 676
1. Անկախության ձեռքբերման և նրա տարեթվի գնահատականի հարցի շուրջը . 676
2. Իբադիյա 678
II ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՈՒՄ (1918–1964 թթ.) 681
1. Օման–Մասկատ հակամարտությունը և Սիբի 1920 թ. համաձայնագիրը 681
2. Իրադարձությունների հետագա զարգացումը: Սուլթան Թայմուր իբն Ֆեյսալի տապալումը 1932 թ. և Անգլիայի դիրքերի ամրապնդումը . . . 684
3. Օմանի իմամության անկախության հռչակումը և պատերազմը Մասկատի սուլթանության և Օմանի իմամության միջև 687
4. Ապստամբությունը Դուֆարում (1963–1975 թթ.) 691
III. ՍՈՒԼԹԱՆ ԿԱԲՈՒՍԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՕՄԱՆՈՒՄ (1970–2005 թթ.) 694
1. 1970 թ. պետական հեղաշրջումը և սուլթանական գահի փոխանցումը Կաբուս իբն Սաիդին 694
2. Վերափոխումներն Օմանում Կաբուս իբն Սաիդի կառավարման շրջանում և Օմանի արդիականացման գործընթացը (1970–2005 թթ.) . 698
3. Օմանի արտաքին քաղաքականությունը՝ մեկուսացումից անցում ակտիվ միջազգային և տարածաշրջանային քաղաքականության . . . 704

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 710

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ . . 718

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ . . 731

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԵՆԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ . . 745

CONTENTS

CHAPTER I
HASHIMITE KINGDOM OF JORDAN 5
I. APPEARANCE OF TRANSJORDANIAN STATE ENTITY ON ARAB POLITICAL ARENA (1918–1928) . . . 7
1. From Obscurity to Emirate 7
2. Formation of Transjordanian Emirate under British Mandate 9
3 Political and Socio–Economic Situation in Transjordan after Establishment of British Domination 13
4 The Hashimite Clan as King Supplier 14
5. Clarification of Jordan's Status, Precision of State Boundaries and British–Jordanian Treaty of 1928 20
II. FROM EMIRATE TO KINGDOM. LIQUIDATION OF MANDATE AND PROCLAMATION OF HASHIMITE KINGDOM (1928–1970) . . 32
1. Situation in Transjordan in 1930s 32
2. Transjordan During the Second World War (1939–1945) 35
3. Liquidation of Mandate, Formal Proclamation of the Transjordan's Independence and Its Transition into Hashimite Kingdom of Jordan (1946–1948) 40
III. JORDAN IN THE PERIOD OF ORDEAL (1948–1970) 46
1. Liquidation of Mandate over Palestine and Division into Jewish and Arab States 46
2. The Arab–Israeli First War of 1948 and Annexation of Eastern Palestine to Jordan. Abdallah "King of Whole Palestine" 49
3 Assassination of King of Jordan Abdallah al–Hashimi in 1951 53
4. The Short Period of the Talal's Reign and Adoption of Constitution in 1952 57
5. Situation in Jordan in the First Period of the Hussein ibn Talal al–Hashimi's Reign Aggravation of the Political Struggle (1952–1956) 62
6. The Government of Suleiman al–Nabulsi and Its Progressive Policy 66
7. Union of Two Hashimite Kingdoms–Jordan and Iraq, and Establishment of Arab Federation 70
8. Jordan in 1958–1967 74

9. The June War of 1967 and Its Consequences for Jordan 78
IV. THE JORDANIAN–PALESTINIAN PROBLEM. CONFRONTATION–IMAGINARY UNION–DIVORCE (1970–1988) 82
1. "Black September" of 1970 82
2. The Plan of the King of Jordan Hissein I on Creation of the United Arab Kingdom 87
3. Divorce 91
V. NEW POLITICAL SITUATION IN JORDAN. TRANSITION INTO PARLIAMENTARY LIFE (1989–1999) 94
1. New Parliamentary Elections and Abolition of State of Emergency ... 94
2. Some Advances in the Economic and Social Fields in 1980–1990s .. 98
3. "King of Peace" 103
VI. JORDAN IN 1999–2005 105
1. The Death of Hussein I. Abdallah II a New King of Jordan . 105
2. Internal and External Condition of Jordan (1999–2005) 107
3. Inter–State Relations Between the Hashimite Kingdom of Jordan and the Republic of Armenia (1991–2005) . 112

CHAPTER II
ISLAMIC REPUBLIC OF MAURITANIA 119
I. PECULARITIES OF POLITICAL, ETHNIC AND RELIGIOUS DEVELOPMENT .. 121
1. Mauritania a Periphery of the Arab World 121
2. Maur–Mauritania 123
3. Religion–Islam. Spirit and Talisman 126
II. MAURITANIA IN THE PERIOD OF FRENCH COLONIAL DOMINATION (1918–1960) 129
1. Establishment of the French Colonial Domination 129
2. Mauritania in the French Colonial System 132
3. Mauritania on the Road of Transformation to Independent State 138
III. PROCLAMATION OF INDEPENDENCE AND FORMATION OF ISLAMIC REPUBLIC OF MAURITANIA (1960–1965) 144
IV. POLITICAL AND SOCIO–ECONOMIC DEVELOPMENTS IN MAURITANIA (1966–1978) 152
1. Internal Political Contradictions and Complications 152
2. The Mauritania's Archaic Social Structure. Daddah "Father" of Mauritanian Nation 156
3. Coup d'Etat in 1978 and Overthrow of Daddah 160

V MAURITANIA AT THE END OF XX AND BEGINNING OF XXI CENTURIES (1978–2005) 164
1. Series of Coup d'Etat and Transfer of Power into the Hands of Military Forces (1978–1984) 164
2. Mauritania During the Years of Ould Sidi Taya's Government (1985–2005) 171
3. Coup d'Etat of 2005 176

CHAPTER III
THE KINGDOM OF MOROCCO 178
I. THE PERIOD OF PROTECTORATE OF THE MOROCCO'S HISTORY (1918–1956) 180
1. Division of Morocco 180
2. The System of Protectorate Established in Morocco 183
3. "Settling" of Morocco 187
4. Uprising in Rif and Proclamation of the Rif Republic 190
5. Advances in Morocco's Social and Political Fields in 1930s 200
6. Morocco During the Second World War (1939–1945) 208
7. Morocco in the Post–War Period (1945–1950) 217
8. The Final Stage of Liquidation of French Protectorate (1951–1956) .. 221
II. LIQUIDATION OF FRENCH PROTECTORATE, RECOGNITION OF MOROCCO'S INDEPENDENCE AND RESTORATION OF ITS WHOLENESS (1956–2005) 231
III. POLITICAL AND ECONOMIC DEVELOPMENTS IN MOROCCO IN THE PERIOD OF INDEPENDENCE (1956–2005) 236
1. Morocco in the Last Years of Muhammad bin Yousuf's Government (1956–1961) 236
2. Adoption of Constitution and Transformation of Morocco from Absolute Monarchy into Constitutional Monarchy 241
3. Aggravation of Inter Political Struggle and Changings in Constitution in 1960–1990s 245
4. The Morocco's International Condition 248
5. On the Way of Political Stability and Economic Development (1999–2005) 253

CHAPTR IV
PALESTINE 259
I. COUNTRY OF PROPHETS, CRADLE OF RELIGIONS, CROSSROAD OF CONFLICTS 262
II. BALFOUR DECLARATION AND THE QUESTION OF MAKING JEWISH HOME 267
1. Palestine as Haven For Realization of Zionist Dreams 267

2. "Theodor Herzl and Armenian Question" . 271
3. The Balfour Declration 277
III PALESTINE A BRITISH MANDATORY TERRITORY. PROCESS OF MAKING JEWISH HOME AND ARAB–JEWISH CONFRONTATION (1920–1948) 281
1. Confirmation of British Mandate by League of Nations Over Palestine and Precision of Palestine's Boundaries 281
2. Political and Military Confrontation (1923–1939) 285
3. Palestine in the Period of the Second World War. The United Nations' Decision on Division of Palestine and Declaration State of Israel (1939–1948) 289
IV. THE PALESTINIAN OR ARAB–JEWISH FIRST WAR AND CHANGING OF THE PALESTINIAN MAP. NAQBA (1948–1949) 295
V. THE JUNE WAR OF 1967 AND OCCUPATION ALL OF PALESTINE BY ISRAEL 297
1 Creation of Structures of the Palestinian Resistance Movement . 297
2 The June Six–Day War. The Occupation of Whole Territories of Palestine by Israel and Its Consequences 301
VI PLO THE ONLY LEGITIMATE REPRESENTATIVE OF PALESTINE. DECLARATION OF THE STATE OF PALESTINE 305
1. Yassir Arafat – Leader of Palestinian Resistance Movement . 305
2. Recognition of PLO as the Only Legitimate Representative of Palestine 307
3. The First Intifada and Proclamation of State of Palestine by the Palestine National Council 309
VII. THE PALESTINE PROVISIONAL AUTONOMY (1993–2005) . . 314
1. Joint Israeli–Palestinian Declaration on Palestine Autonomy 314
2. The Washington or Oslo II Agreement and Deepening of the Process of Palestinian Autonomy (1995–2000) 318
3 The Third Stage of Palesinian Autonomy. New Complications, New Disappointments and New Hopes (2000–2005) 322

CHAPTER V
THE KINGDOM OF SAUDI ARABIA 328
I FORMATION OF KINGDOM OF SAUDI ARABIA (1918–1932) 330
1 Abd al–Aziz al–Saud Founder of the Centralized State of Saudi Arabia 330
2. State and Social Structure of Kingdom of Hijaz, Sultanate of Najd and the Dependent Countries 336
3 Policy of ,Cultural Wahabizmն, Crush of the Ikhvan's Organization and Further Consolidation of the Country 338
II. INTERNATIONAL CONDITION OF SAUDI ARABIA (1930–1940s) 342
1. Strengthening of the International Positions of Saudi Arabia in 1930s 342

2. Saudi Arabia in the Years of the Second World War (1939–1945) ... 345
III. SAUDI ARABIA AT THE FINAL STAGE OF REIGN OF ABD AL–AZIZ AL–SAUD (1945–1953) ... 347
IV. POLITICAL DEVELOPMENTS IN SAUDI ARABIA (1945–1975) . 349
1. Struggle For Power Within the Saudi Family (1954–1964) ... 349
2. Saudi Arabia in the Period of the Feisal's Reign. Reinforcement of the Regime, Strengthening of Positons of Kingdom and Creation of Islamic International Organization (1964–1975) ... 357
V. TWO TRENDS ON THE FURTHER DEVELOPMENT OF KINGDOM. IMPLEMENTATION OF CONSTITUTIONAL NORMS IN SAUDI ARABIA (1975–1995) ... 365
1. Formation of Two Trends on Development of Saudia Arabia. Uprising of 1977 in Mecca ... 365
2. The Fahd Plan. A New Change in the King's Title. The Attitude of Saudi Arabia Towards the Iraq–Irani War and Iraq's Invasion in Kuwait . 372
3 Constitutional Legalization of Saudi Arabia's State Structure, Its Organs and Their Functions ... 378
VI. SAUDI ARABIA AT THE END OF XX AND BEGINNING OF XXI CENTURIES: PROBLEMS. NEW REALITIES AND ADVANCES (1995–2005) 386
1. Abdallah ibn Abd al–Aziz al–Saud the Sixth King of Saudi Arabia 386
2. Problems of Freedom and Human Rights. Decapitation, Amputation, Lashing ... 388
3. Formation of New Image of Saudi Arabia ... 393

CHAPTER VI
THE SYRIAN ARAB REPUBLIC ... 402
I. LIQUIDATION OF TURKISH DOMINATION AND PROCLAMATION OF SYRIAN KINGDOM (1918–1920) ... 404
1. Crushing of Turkish Army and Liberation of Syria From Ottoman Domination ... 404
2. Formation of the First National Government of Syria and Feisal–Allenby Relations ... 406
3. Discussion of Arab Question in Paris Peace Conference ... 410
4. Convention of Syrian Congress and the ‚Damascus Programb ... 415
5. Occupation of Western Syria by France (1919–1920) ... 418
6. The Kemalists Calls to Arabs and Failure of Their Attempts to Use the Situation in Syria ... 420
7. Proclamation of Syrian Kingdom. Feisal– King of Syria ... 425
8. The Maysalun Battle. Fall of Syrian Kingdom and the Feisal's Eviction ... 431

II. SYRIA UNDER THE FRENCH MANDATE (1920–1939) 436
1. The Mandatory Organs and Their Authorities 436
2. Socio–Economic Policy of France in Undermandatory Syria 438
3. The Political Games of France in Division of Syria into Small States . 442
4. All–Syrian Uprising of 1925–1927 444
5. Convention of the Constitutional Council and Adoption of Syrian Constitution. Further Aggravation of French–Syrian Relations (1927–1934) 450
6 Raising of Antiimperialistic Struggle. Signature of French–Syrian Treaty of Friendship and Assistance (1934–1939) 454
III. LIQUIDATION OF FRENCH MANDATE AND ACHIEVEMENT OF POLITICAL INDEPENDENCE OF SYRIA (1939–1946) 461
1. Syria at the Beginning of the Second World War (1939–1941) 461
2. Invasion of the Troops of England and Free France in Syria in 1941 and Declaration of General Catroux 464
3. Restoration of Constitution and Parliamentary Elections. Shuqri Quwatly the First President of Independent Republic of Syria 467
4. Liquidation of French Mandate and Completion of Independence and Sovereignty of Syria (1944–1946) 469
IV. SYRIA IN THE PERIOD OF DESTABILITY, COUP D'ETAT AND DICTATORSHIP (1946–1958) 478
1. Situation in Syria after Achievement of Independence and the Parliamentary Elections of 1948 478
2 Military Revolts and Raising of the Role of Army in the State and Political Life of Syria (1949–1954) 480
3. Significant Advances in Economy (1946–1957) 485
V. UNION OF SYRIA AND EGYPT, FORMATION OF THE UNITED ARAB REPUBLIC AND ITS DISSOLUTION (1958–1961) 487
VI SYRIA IN THE POLITICAL VORTEX (1960s) 494
1 Situation in Syria after Withrawal of UAR 494
2. Baath Party. The Baath Revolt of March 8, 1963 .. 497
3 The June War of 1967 and Its Consequences 507
VII. SYRIA IN THE PERIOD OF HAFIZ ASSAD'S PRESIDENCY (1970–2000) 510
1. Hafiz Assad. "He Came Down From Mountains to City". 510
2. Corrective Movement 513
3. The Arab–Israeli War of October, 1973. and Its Consequences. Syria Against Separate Deals 519
4. Aggravation of Inter Political Conditions in Syria and Rebellious Demonstrations of ‚Muslim Brotherhood (1970–1982) 522
5 Brother against Brother 525

6. External Condition of Syria in the Last Decade of Hafiz Assad's Rule (1990s) 529
VIII. SYRIA AT THE BEGINNING OF XXI CENTURY (2000–2005) ... 533
1. Bashar Assad a New President of Syria and ‚Damascus Spring' (2000–2001) 533
2. Economic Aspect of Syria's Development (2000–2005) 538
3. External Political Chalenges 541
4. Inter–State Relations Between the Syrian Arab Republic and the Republic of Armenia (1991–2005) 544

CHAPTER VII
THE REPUBLIC OF SUDAN 552
I. ON THE ROAD TO ACHIEVEMENT OF INDEPENDENCE (1918–1956) 554
1. Pecularity of Sudan's Status 554
2. Assassination of the General Governor Lee Stack and Ultimatum of Allenby 558
3. Transition From Direct Rule Into Indirect Rule 562
4. Restoration of Condominium. The Final Stage of the Struggle For Independence and Declaration of Independence of Sudan (1936–1956) 566
II. FORMATION OF RULING SYSTEM OF THE INDEPENDENT REPUBLIC OF SUDAN 572
III. SUDAN IN THE PERIOD OF POLITICAL WAVES AND DESTABILITY(1956–1985) 576
1. Main Problems of Foreign and Internal Policy and Dissention Around Them (1956–1958) 576
2. General Ibrahim Abboud's Coup d'Etat and New Political Realities in Sudan (1958–1969) 580
3. Military Coup d'Etat of 1969 and Establishment of the General Nimeiri's Power. Renaming of Sudan into ‚Democratic Republic of Sudan' (1969–1985) 586
IV. SUDAN IN THE SEARCH OF WAYS FOR SOCIO–ECONOMIC DEVELOPMENTS (1985–2005) 590
1. Overthrow of Nimeiri. Struggle for Power within the Civil and Military Elite of Sudan. General Umar al–Bashir President of Sudan 590
2. The End of Civil War. Proclamation of Autonomy of the Sudan's South and Changes in Governing System (2002–2005) 594
3. Genocide in Darfur and Its Accusation by UN and International Community ... 597

CHAPTER VIII
THE STATE OF KUWAIT 600
I. FROM PROTECTORATE TO INDEPENDENCE (1918–1961) 602
1. The Process of Formation of the State of Kuwait and Precision of Its Boundaries 602
2. Political Situation and Socio–Economic Condition in Kuwait (1920–1940s) . 608
3. Kuwait at the Threshhold of Independence (1950s) 614
II. LIQUIDATOIN OF THE BRITISH PROTECTORATE AND PROCLAMATION OF INDEPENDENCE OF KUWAIT 619
1. Denunciation of Anglo–Kuwaiti Treaty of 1899 and Declaration of Independence of Kuwait, June 19, 1961 . 619
2. The Iraqi Threats and the Iraq–Kuwaiti Crisis 621
3. Adoption of Permanent Constitution and Creation of New Ruling System (1961–1965) 625
III. POLITICAL AND SOCIO–ECONOMIC ADVANCES OF KUWAIT. PROCESS OF MODERNIZATION 629
1. Economic Development and Modernization 629
2. Qualitative Jump in the Social Sphere. "The Kuwaiti Miracle" 632
3. Political Developments. Transition From Paternalism to Modern Ruling Principles 636
IV. KUWAIT IN THE POLITICAL VORTEX OF THE ARAB WORLD . . 642
1. Inter–Arab Relations as Dominating Direction of Foreign Policy of Kuwait 642
2. Iraq–Kuwaiti Military Clashes of 1973 644
3. The Kuwait's Attitude Towards the Iran–Iraqi War (1980–1988) 648
V. IRAQI INVASION AND OCCUPATION OF KUWAIT A MINI WORLD WAR (1990–1991) 651
1. The Causes of the War and the Adventurous Policy of the Iraqi Dictator Saddam Hussein 651
2. Invasion of Iraqi Army and Occupation of Kuwait 654
3. On the Evaluation of 1990–1991 War. The Second Gulf War as Mini World War 659
VI. KUWAIT AT THE END OF XX AND BEGINNING OF XXI CENTURIES 663
1. Liquidation of the Consequences of Iraqi Aggression 663
2. Situation in Kuwait at the Beginning of XXI Century . 666
3. Inter–State Relatons Between Kuwait and Armenia 668

CHAPTER IX
THE SULTANATE OF OMAN 674
I. THE HISTORICAL ROAD OF FORMATION OF THE STATE OF OMAN FROM THE SULTANATE OF MASCAT AND OMAN TO THE SULTANATE OF OMAN. IBADIYA 676
1. On the Question of Achievement of Independence and Its Evaluation 676
2. Ibadiya 678
II. POLITICAL SITUATION IN OMAN (1918–1964) 681
1. Oman–Mascat Confrontation and the Sib Agreement of 1920 681
2. The Further Development of Events. Fall of Sultan Taymur ibn Feisal in 1932 and Strengthening of the England's Positions 684
3. Declaration of Independence of Imamate of Oman and the War Between Sultanate of Mascat and Imamate of Oman . . . 687
4. Uprising in Dufar 691
III. THE REGIME OF SULTAN QABOOS AND THE PROCESS OF POLITICAL AND SOCIO–ECONOMIC CHANGES IN OMAN (1970–2005) 694
1. Coup d'Etat of 1970 and Transfer of the Sultan's Throne to Qaboos ibn Said 694
2. Reorganizations in the Period of Ruling of Qaboos ibn Said and the Process of Modernization (1970–2005) 698
3. Foreign Policy of Oman. Transition from Isolation into Active International and Regional Policy 704

INSTEAD OF CONCLUSION . . 710

INDEX 718

SOURCES AND LITERATURE 731

THE AUTHOR'S MONOGRAPHIC STUDIES 745

Նիկոլայ Հովհաննիսյան

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հատոր IV. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան. 1918–2005 թթ.

Nikolay Hovhannisyan

HISTORY OF THE ARAB COUNTRIES

Volume IV. The Epoch of Independence and Sovereignty: 1918–2005

(In Armenian)

"Zangak-97" Press, Yerevan, Armenia. 2007

Николай Оганесян

ИСТОРИЯ АРАБСКИХ СТРАН

Том IV: Период независимости и суверенитета — 1918–2005 гг.

(на армянском языке)

Изд. "Зангак-97", Ереван, 2007 г.

Հրատարակչության տնօրեն՝ է. Ս. Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ա. Ա. Բաղդասարյան
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Ս. Իսկանդարյան
Համակարգչային ձևավորումը՝ Գ. Ա. Հարությունյանի
Քարտեզների պատրաստումը՝ Գ. Ս. Բեգլարյանի
Շապիկի համակարգչային մշակումը՝ Ա. Տ. Հակոբյանի

Տպագրությունը՝ օֆսեթ. Չափսը՝ 60x84 1/16. Թուղթը՝ օֆսեթ.
Ծավալը՝ 48 տպ. մամ. + 2 25 (կավճ.), 43 51 + 2 14 հրատ. մամ., 44 64 + 2 09 պայմ. մամ.
Տպաքանակը՝ 400 օրինակ. Գինը՝ պայմանագրային

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Տպագրված է հրատարակչության տպարանում
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23–25–28,
ֆաքս՝ (+37410) 23–25–95, էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայք՝ www.zangak.am